ՀԱՅՈՑ
ԺԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

947.25„1915"

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՆ ԵՎ ՃԱՆԱՉՈՒՄ

(Նյութերի ժողովածու)

A III 2307

Կազմող, պատասխանատու խմբագիր և առաջաբանի հեղինակ
պատմական գիտությունների դոկտոր՝ ԼԱՎՐԵՆՏԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀՀՊՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ 2005

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63(2Հ) 43
Հ 282

Աշխատությունը հրատարակության է երաշխավորվել
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ Լ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հ 282 Հայոց ցեղասպանություն. - Եր.: ՀՀ ԳԱԱ, Հայոց
ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատ.,
2005. – 652 էջ:

Հայոց ցեղասպանություն. Աշխարհի պետությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում (նյութերի ժողովածու): Կազմող, պատասխանատու խմբագիր և առաջաբանի հեղինակ՝ պատմական գիտությունների դոկտոր Լավրենտի Բարսեղյան:

0503020913
Հ 0176(01)2005 2005թ.

ԳՄԴ 63.3(2Հ)43

ISBN 99941-956-2-X

© Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատ., 2005թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

Ցեղասպանության ճանաչումն ինքնին ցեղասպանության դեմ պայքարի մի հիմնավոր միջոց է, որը մարդու ապահով գոյատևման իրավունքի հաստատումն է:

Ցեղասպանությունը մեծագույն հանցագործություն է մարդկության հանդեպ: Դարերի ընթացքում բազմաթիվ ցեղեր և ժողովուրդներ ենթարկվելով ցեղասպանության, անհետացել են պատմության ասպարեզից: Սակայն դա չի խանգարել, որ ոճրագործությունները շարունակվեն նաև քաղաքակրթության արդի ժամանակաշրջանում:

Ցեղասպանությունները հատկապես ակնառու դարձան 20-րդ դարում: Այդ դարը շատ առումներով ողջամիտ և առաջադիմական լինելով հանդերձ, նաև ցեղասպանության դարաշրջան էր, երբ տարբեր քաղաքական ռեժիմներում ազգայնամոլությունը խլեց միլիոնավոր մարդկային կյանքեր:

Առանց վարանելու կարելի է ասել, որ ցեղասպանությունը 20-րդ դարի քաղաքական զենքն էր:

Փաստորեն քսաներորդ դարում բոնի մահերի հիմնական պատճառը ցեղասպանությունն էր:

Այսօր առանց վարանելու համոզված կարելի է հայտարարել, որ հայերի ցեղասպանության հրեշավոր ծրագիրը մշակվել էր երիտասարդ թուրքերի «*Միություն և առաջադիմություն*» կուսակցության և թուրքական կառավարության ղեկավարների կողմից դեռևս մինչև Առաջին համաշխարհային պատերազմը:

Երիտասարդ թուրքերը ղեկավարվելով պանթուրքիզմի ու պանիսլամիզմի մարդատյաց գաղափարախոսությամբ, իշխանությունն իրենց ձեռքը վերցնելով, փորձեցին իրականացնել Օսմանյան կայսրության տարածքում բնակվող ոչ թուրք ժողովուրդների բոնի ձուլման, տեղահանման ու ցեղասպանության միջոցով համաշխարհային համաթուրանական տերություն ստեղծելու իրենց մտադրությունը:

Առաջին լուրջ փորձը կատարվեց 1909 թվականի ապրիլին, երբ իրագործվեցին Ադանա քաղաքի և շրջակա հայաբնակ վայրերի բնակչության սարսափելի կոտորածները:

Կիլիկիայի այդ տարածքում կանոնավոր թուրքական բանակը բարբարոսաբար ոչնչացրեց ավելի քան երեսուն հազար հայերի:

Չբավարարվելով հայերի կոտորածների առաջին փորձի արդյունքներով, երիտթուրքական կառավարողները 1911 թվականի հոկտեմբերին Սալոնիկում հրավիրված իրենց ժողովում բացահայտ որոշեցին վերջնականապես իրագործել հայերի բնաջնջման ծրագիրն, որպես Հայկական հարցի արմատական լուծում: Սալոնիկի ժողովի հիմնական եզրակացությունն այն էր, որ վաղ թե ուշ պետք է իրականացվեր թուրքական բոլոր հպատակների օսմանացումն, որն ոչ մի դեպքում «*չի կարող իրագործվել խաղաղ ճանով, այն պետք է կատարվի միայն զենքի միջոցով*»:

Թուրքական բռնապետության կառավարման և ռազմական ապարատների միաձույլ և միասնական գաղափարախոսության, ներքին խստացված կարգապահության պայմաններում անհանգիստ և իր պայմաններից դժգոհ հայ փոքրամասնությունը մեծամասնության կողմից

որակվել է ու համարվել «*ներքին թշնամի*», որն իբր ավելի վտանգավոր էր, քան արտաքինը:

«*Մեծ*» քաղաքական նպատակներ հետապնդող թուրքական գաղափարախոսության իրագործմանը ծառայող փիլիսոփայությունն արդարացնում էր բռնությունն ու դաժանությունը:

1914թ. սանձազերծված պատերազմը փոքրամասնություն կազմող և «*ներքին թշնամի*» համարվող հայերի դեմ կառավարողներին գործելու անսահմանափակ հնարավորություններ տվեց, և նպաստեց նրան դիմելու ծայրահեղ բռնությունների, որոնք ընդհանուր համայնապատկերում սկզբնական շրջանում աննկատ մնացին:

Դեռևս 1915թ. փետրվարին երիտասարդ թուրքերի գաղափարական առաջնորդներից դոկտոր Նազըմը կուսակցության կենտրոնական կոմիտեի փակ նիստում հանդես գալով, ուղղակի կոչ արեց. «*Անհրաժեշտ է, որ երկրի վրա ոչ մի հայ չմնա և պետք է վերանա Հայաստան հասկացությունը: Հիմա պատերազմ է, երբեք ավելի լավ հնարավորություն չենք ունենա: Չպետք է ուշադրություն դարձնել մամուլի բողոքներին կամ երկյուղ կրել Մեծ տերությունների միջամտությունից: Կատարվածից հետո այլևս ոչ մի միջամտություն նշանակություն չի ունենա: Գործողությունները պետք է հանգեցնեն հայության ամբողջական ոչնչացմանը և կարևոր է, որ մեկ հայ նույնիսկ չփրկվի: Հավաքաբար ձեզանից ոմանք գազանություն կհամարեն այդքան հեռուն գնալը: Կարող եք հարց տալ, ի՞նչ վնաս են տալու երեխաները, ծերերը, հիվանդները: Կամ գուցե գտնում եք, որ միայն մեղավորնե՞րը պետք է պատժվեն... Աղաչում եմ, պարոններ, թույլ մի գտնվեք: Տեղի մի տվեք զգացմունքայնությանը: Հակառակ դեպքում կործանման կգնանք մենք*»:

Անօգնական ու դիմադրելու անկարող հայ ժողովրդի նկատմամբ երիտասարդ թուրքերի կառավարությունը ձեռնարկեց իսպառ բնաջնջելու քաղաքականություն: Ջոհերին կողոպտելու միջոցով անհրաժեշտություն դարձավ նաև ավարառությունը:

Ապրիլի 24-ին էր, որ հայ մտավորականության սերուցքի կալանմամբ ու նրանց գազանաբար ոչնչացմամբ իր կիզակետին հասավ ցեղասպանության գործողությունների ձեռնարկումն, որը միայն 1915-1916թթ. ընթացքում խլեց մեկ միլիոն կյանք:

1915թ. վերջերին արդեն ողջ Արևելյան Թուրքիան ծածկված էր հազարավոր չքաղված դիակներով: Այսօր էլ Էրզրումից մինչև Սիրիա, Տեր-Զորի ավազուտները ներառյալ, եթե փորձենք բրչի մի հարվածով մաքրել հայերի տեղահանության ողջ ճանապարհի վրայի հողածածկը, ապա մեզ կհառնեն իրենց գերեզմանը չունեցող հարյուր հազարավոր զոհերի գանգերն ու ոսկորները:

Արդեն 1915թ. կեսերին միջազգային հանրությունը քաջատեղյակ էր Հայոց ցեղասպանության մասին: Այն քողարկել հնարավոր չէր: 1915թ. մայիսի 24-ին Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունները միացյալ հանդես եկան հրապարակային նախազգուշացմամբ՝ ուղղված Թուրքիայի կառավարությանը: Այդ հայտարարությունը այսօր կարելի է համարել Հայոց ցեղասպանությունը դատապարտող առաջին միջազգային փաստաթուղթը, որը հրատարակվելով աշխարհի գրեթե բոլոր երկրներում ազդարարեց, որ «*Հայաստանում տեղի են ունեցել հայերի*

կոտորածներ՝ քրդերի և թուրքերի կողմից, օսմանյան իշխանությունների բացահայտ թողտվությամբ, իսկ հաճախ էլ ուղղակի համագործակցությամբ...»:

Առաջին անգամ միջազգային ասպարեզում երեք խոշոր տերությունները հայերի դեմ կատարված ոճրագործությունը որակեցին որպես «մարդկության և քաղաքակրթության դեմ» Թուրքիայի կողմից կատարած նոր հանցագործություններ, որոնց համար «*...անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա՝ տեղական այն իշխանությունների վրա, ովքեր մասնակից են ղարձել նման կոտորածին*»:

Այդ հայտարարությունը շատ ուշ, երեսուներեք տարի անց իր քողարկված արտահայտությունը գտավ 1948թ. դեկտեմբերի 9-ին Միավորված ազգերի կազմակերպության կողմից ցեղասպանությունը կանխելու և պատժելու մասին Կոնվենցիայում:

Ցեղասպանության հետևանքով հայ ժողովուրդը կրեց քանակական և որակական լուրջ փոփոխություններ, Արևմտյան Հայաստանի հայ բնակչությունը զրկվեց Հայրենիքից ու կորցրեց իր բնօրրանը համարվող տարածքներից, ինչպես նաև ունեցվածքից: Լուրջ փոփոխություններ տեղի ունեցավ ժողովրդի կենդանի մնացած մի հատվածի հոգեբանության, նրա հասարակական և քաղաքական մտածելակերպի, հոգևոր կերտվածքի բուն էության մեջ, ինչպես Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում: Հայ ժողովուրդը մասնատվեց երկու մասի: Ողջ մնացած հայերը դատապարտված էին աշխարհով մեկ սփռվելու և թափառական կյանքի, անխուսափելի ուծացման երկրորդ հայրենիքում՝ դեմ առ դեմ կանգնելով աշխարհի քար անտարբերության հանդեպ:

Ցեղասպանությունը վերապրած յուրաքանչյուր հայ, ցեղասպանության զոհ դարձած յուրաքանչյուր ընտանիքի ժառանգորդ, արդարացիորեն պահանջում և ձգտում է իր նկատմամբ կատարված ոճրագործությունների հեղինակների կամ նրանց իրավահաջորդների կողմից ցեղասպանության ճանաչումը: Եվ որքան այս անարդարությունը խորն է և երկար է թաքցվում, այնքան ավելի խորն է նրա ճանաչման ձգտումը և ցանկությունը: Ոչ միայն հայերը, այլև միջազգային ողջ հանրությունը, առաջադեմ մարդիկ արդեն 1915թ. կեսերից փաստաթղթերով և դատապարտող նյութերով ապացուցեցին հայերի ցեղասպանության իրողությունը: 1915-ից առ այսօր պատմագիտությունն ընթերցողների լայն շրջաններին է ներկայացրել ցեղասպանությունը իրականացնող երկրին մեղադրող արխիվային փաստաթղթերը և նյութերը, որոնք պահվում են Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրիայի, Թուրքիայի, Իտալիայի, Բուլղարիայի, ԱՄՆ-ի արխիվներում, աշխարհի համարյա բոլոր երկրների լրատվության միջոցների էջերում:

Ինչպես արդարացիորեն նկատել էր 1984թ. ապրիլի 13-ից 16-ը Փարիզում իր նիստերը գումարած հասարակական Մշտական ժողովրդական դատարանը, թուրքական պետությունը կրում է հատուկ պարտավորություններ, որոնք բխում են ազգերի իրավունքի մասին տարբեր տարիներին ընդունված կանոնադրություններից, հատուկ պայմանագրերից և համաձայնագրերից, որոնց մասնակից էր նաև նա:

Որպես առաջին, հիմնական պարտականություն, Թուրքիայի Հանրապետությունը չպետք է ձգտի կոծկել ու ենթագիտակցել ցեղասպանության իրողությունը, այլ համարձակություն հանդես բերի ընդունելու և հաշվի նստելու փաստերի հետ:

Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն ինքնին նվազագույն հատուցում կհանդիսանա հայ ժողովրդի կրած բարոյական բազմաթիվ անհաշիվ կորուստների դիմաց: Թուրքիայի Հանրապետությունը հաշվի պետք է նստի այն փաստի հետ, որ միջազգային փորձը, որը վերաբերում է կոնկրետ թուրքական պետությանը, հիմնավոր իրավական հիմք է տալիս հաստատելու, որ այս պետության ինքնությունը և անընդհատությունը չի փոխվել երկրի պատմության մեջ եղած փոփոխություններից՝ Օսմանյան կայսրության փլուզումից ի վեր: Փաստորեն Թուրքիայի ոչ տարածքային կորուստները, ոչ էլ քաղաքական համակարգի վերակազմակերպումը չեն եղել այնպիսին, որ տուժվեր նրա շարունակվող ինքնությունն ազգերի իրավունքի տեսակետից: Հետևաբար չի կարելի համարել, թե թուրք կառավարությունները, որոնք հաջողությամբ հրաժարվել են պատասխանատվությունից, նշանակում է արդարացվել են: Միակ եզրահանգումն այն է, որ պատասխանատվությունը մնում է այն պետության վրա, որը ներկայանում է միջազգային հանրության մեջ, այսինքն իր նախորդների նման ներկայիս Թուրքիայի կառավարությունն էլ պարտավոր է ստանձնել այս պատասխանատվությունը, առանց փորձելու մեջտեղ բերելու պետության ընդհատության պատրվակը՝ պատասխանատվությունից խուսափելու նպատակով: Այդ պատասխանատվությունը նախ և առաջ նշանակում է պարտավորված զգալ պաշտոնապես ճանաչելու կատարված ցեղասպանության իրողությունը և հայ ժողովրդի կրած կորուստները:

Միջազգային իրավունքը ցեղասպանության հանցագործության կատարման հետ է կապում նաև նյութական պատասխանատվության կրումը որպես ունեցվածքի վերադարձում և սեփականության այլ իրավունքների վերականգնում (ռեստիտուցիա), ինչպես նաև ֆիզիկական անձանց, այնպես էլ ամբողջ ազգային խմբին պատճառած վնասների և կորուստների փոխհատուցում (ռեպարացիա տոկոսի համարժեքով և հավելումով):

Նյութական պատասխանատվության սահմանումը պայմանավորված է ոչ միայն արդարացիության, ունեցվածքային և սեփականության, այլև այլ խախտված իրավունքների վերականգնման անհրաժեշտությամբ:

Ցեղասպանության համար նյութական պատասխանատվության իրավական իմաստն այն է, որ բռնի զրկմամբ պայմաններ են ստեղծվում ազգային խմբի քայքայման համար, ինչը և հանդիսանում է ցեղասպանության հանցակազմ, ուստի հակազդումն այդ հանցանքին ենթադրում է նախ՝ խախտված իրավունքների վերականգնում, ապա համապատասխան պատժամիջոցների կիրառում հանցանքը գործողների դեմ:

Բոլորը, ովքեր մասնակցել են այդ գործողություններին՝ մասնավոր անձինք, պետություն կազմող ժողովուրդը և պետությունն ինքնին, ենթակա են տնտեսական պատժամիջոցի գործողությանը:

Ցեղասպանության հետևանքով հայերին հասցված նյութական վնասների հատուցման հարցը շատ ավելի վաղ է ծագել, սակայն մի

շարք պատճառներով չի լուծվել: Այսօր նույնիսկ դժվար է պատկերացնել հարկ եղած փոխհատուցման ծավալները:

Հայտնի է, որ հայ ազգաբնակչությանը գոյության միջոցներից զրկելու խնդրով առաջին հերթին զբաղվել է հենց թուրքական պետությունը: Սրա մասին են վկայում արդեն 1915թ. մայիսի 30-ին (նոր տոմարով) այդ նպատակով հայ ազգաբնակչության տեղահանման մասին թուրքական կառավարության որոշումը և տեղահանման մասին ժամանակավոր օրենքի ընդունումը, մի օրենք, որը չներկայացվեց նույնիսկ Թուրքիայի խորհրդարանի հաստատմանը:

Իրավական ուժ չստացած տեղահանման մասին այդ ժամանակավոր օրենքի հիման վրա 1915թ. հունիսի 10-ին ընդունվեց ևս լրացուցիչ օրենք, որը ցուցումներ էր բովանդակում «պատերազմի և քաղաքական արտակարգ պայմանների հետևանքով տեղահանված հայերի թողած շարժական և անշարժ գույքի» հետ վարվելու մասին: Հայերի ողջ ունեցվածքը հայտարարվեց «*լքյալ*» և կալանք դրվեց դրա վրա:

1915թ. սեպտեմբերի 13 (26)-ին ժամանակավոր օրենք ընդունվեց ունեզրկման և բռնագրավման մասին, որով սահմանվում էր տեղահանվածների «*լքյալ*» ունեցվածքի, նրանց բանկային հաշիվների և ավանդների նկատմամբ հայտերի արձանագրման և քննման կարգը:

Հայտնի է, որ հայերը ինքնակամ չէին հրաժարվել իրենց ունեցվածքից, սակայն հենց բուն Թուրքիայում էր ճանաչում գտել հայերի ունեցվածքի և սեփականության «լքյալ» բնորոշումը, որը պետական մարմինների լայն քարոզչության արդյունքն էր:

Թուրքիայում գտնվեցին ողջամիտ մարդիկ, որոնք այս առթիվ հայտնեցին իրենց զայրույթը: Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր Ռիզան հայտարարել էր, բողոքելով, որ «*ոչ ոք իրավունք չունի վաճառել իմ ունեցվածքը, եթե ես չեմ կամենում: Դա արգելված է Սահմանադրության 21-րդ հոդվածով: Եթե մենք սահմանադրական ռեժիմ ունենք, որը գործում է սահմանադրական իրավունքին համապատասխան, դա անել չենք կարող: Կամայականություն է: Բռնել ինձ, դուրս քշել իմ գյուղից, հետո էլ վաճառել իմ ունեցվածքը և սեփականությունը, նման բան երբեք չի կարող թույլատրվել: Դա չի կարող թույլ տալ ոչ գիտակցությունը, ոչ օսմանյան իրավունքը*»:

Ցեղասպանության իրողության բացահայտումը և մերկացումը դժվարացնում է նրանց գործը, ովքեր հակված են թաքցնել ու քողարկել իրենց դիրքորոշումը: Ցեղասպանության բացահայտ և անկողմնապահ հիմնավորումը նպաստում է այն ճանաչելու խնդրին: Կասկած չի հարուցում այն համընդհանուր տեսակետը, ըստ որի ցեղասպանության ոճրի մեղադրանքը մնում է մի առկա իրողություն, որը պետք է բազմակողմանի քննարկվի և եթե այն հաստատվի, ապա պետք է, համապատասխան ձևով և իրապարակայնորեն ճանաչվի պատասխանատու պետությունների կողմից:

Սակայն ժողովուրդների պատմական հիշողությունն ունի հավերժական ծալքեր, որոնց խորքերում ամուր պահպանվում են իրենց մշտապես զգացնել տվող չսպիացած վերքերը: Ենթադրել, թե 1915 թվականի ցեղասպանությունը սոսկ մի սարսափահար հիշողություն է, որը մխրճվել է ու մնացել հայ ժողովրդի պատմական հիշողության մեջ և այսօրվա հայ

մարդու աշխարհընկալման վրա ոչ մի ազդեցություն չի թողել, սխալված կլինենք:

Հավանաբար ժամանակի ընթացքում կվերանան ատելության և վրեժխնդրության զգացումները, բայց քանի դեռ կենդանի են բազմաթիվ հայեր, որոնք ծնվել են Արևմտյան Հայաստանում, որոնց ընտանիքների անդամները, բարեկամներն ու ազգականները զոհ են գնացել ցեղասպանությանը և այսօր էլ խոր վշտով հիշում են կորցրած հայրենիքը, հարազատ ծննդավայրը, եղեռնի զոհերին, չեն մոռանում ժողովրդին հասցված ցավը, որը չի թուլանում և դեռ երկար մնում է:

Պետք է հստակեցվեն մեր նպատակներն ու պահանջները Թուրքիայից, բարոյականից դրանք պետք է տեղափոխվեն միջազգային-իրավական հարթություն:

Մենք պարտավոր ենք այսօր ամբողջ ուժերով հակահարված տալ թուրք և ոչ միայն թուրք, այդ թվում արևմտյան քարոզչությանը, որը հայ ժողովրդի դեմ գործած հանցագործությունը կոծկելու համար զբաղվում է փաստերի ենթագիտությամբ ու պատմական կեղծարարությամբ: Այս իրավիճակը պահանջում է ոչ միայն նրանց պատշաճող պատասխան տալ, այլև գիտական խորությամբ ու փաստարկումներով աշխարհին հասցնել ճշմարտությունը:

Երկար ժամանակ, ցեղասպանության հետևանքով աշխարհով մեկ սփռված հայերը հյուրընկալող երկրներում հարգել են նրանց օրենքները, ընտանիքներ են ստեղծել, զգաղվել են ստեղծագործ աշխատանքով, երկրորդ հայրենիք ձեռք բերելով հզորացրել են այն, լռելով, չեն խոսել մահից ազատվելու համար հարկադրաբար թողած իրենց հողերի մասին: Չեն խոսել իրենց մեռյալների մասին: Սկզբից ընտրել են լռությունը՝ վերապրելու համար, կարծես փորձել են մոռանալ՝ խաղաղություն նոր կյանքում գտնելու համար: Սակայն լքված տան հիշողությունը հավերժ է և սպանված բարեկամների ու ազգականների հիշատակը հնարավոր չէ մոռանալ: Կարող ես լռելայն կրել այդ բեռը, սակայն փոխանցվող հիշողությունը հայրերից որդիներին և ժամանակի ընթացքում մարդու խղճի լռությունը հետզհետե դառնում է անտանելի: Գալիս է ժամանակը, երբ պետք է ընդմիջվի խղճի այդ լռությունը և պետք է հիշել պատմական ճշմարտությունը:

Իտալիայի խորհրդարանի անդամ՝ Ջանկարլո Պալյարինին, որի նախաձեռնությամբ 2000թ. նոյեմբերի առաջին տասնօրյակում Իտալիայի պառլամենտն իր օրակարգն էր մտցրել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, հայտարարել էր, որ «Ճանաչելով հայ ժողովրդի ցեղասպանությունը, Իտալիան և եվրոպական պետությունները, որոնք ապաստան են տվել սակավաթիվ վերապրածների, կճանաչեն նրանց ինքնությունը և վերջապես բարոյական հոգեհանգիստ կմատուցեն ցեղասպանության զոհերին»:

1965թ. Հայոց ցեղասպանության հիսնամյա տարելիցի լայնամասշտաբ նշումը սփյուռքահայ համայնքներում և հայրենիքում խթան հանդիսացավ հետագա տարիների 20-րդ դարի առաջին ցեղասպանության դատապարտման ու նրա պաշտոնական ճանաչման համար աշխարհի առաջավոր ուժերի համախմբման գործում:[1]

[1] Լ. Ա. Քարսեղյան, Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը, Երևան, 1998:

1965թ. ապրիլի 20-ին Ուրուգվայի Ազգային համագումարը Հայոց ցեղասպանությունը դատապարտելու իր որոշմամբ դարձավ աշխարհի առաջին երկիրը:[2]

Երկրորդ հզոր ձայնը, որը հիշեցրեց հայերի ցեղասպանության մասին, հնչեց 1968 թվականին, 64 երկրների և 16 միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրված խաղաղասեր ուժերի Համաշխարհային կոնգրեսում:

Սակայն այս հարցում կարևորագույն նշանակություն ուներ Միավորված Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ) վերաբերմունքը:

Դեռևս 1973 թվականին, երբ ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի ազգային փոքրամասնությունների հանդեպ կիրառվող խտրականության և պաշտպանության ենթահանձնախմբի 26-րդ նստաշրջանում քննարկվում էր ցեղասպանությունները կանխելու և դրա համար պատժելու հարցին նվիրված նախնական զեկուցումը, ներկայացված բանաձևի 30-րդ ենթակետը Օսմանյան կայսրությունում հայերի ջարդը որակավորում էր որպես «20-րդ դարի առաջին ցեղասպանություն»:[3]

Զեկուցումը, որով հանդես եկավ Ռունդայի ներկայացուցիչը, միաձայն ընդունվեց ենթահանձնախմբի քննարկման ժամանակ, 1974թ. ներկայացվեց ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի 30-րդ նստաշրջանին: Թուրքիայի և մի շարք այլ երկրների ներկայացուցիչները պահանջեցին հանել բանաձևի 30-րդ ենթակետը: Զեկուցումը վերադարձվեց վերամշակման: 1978 թվականին ՄԱԿ-ի ենթահանձնախումբը, նորից անդրադառնալով դեռևս 1973 թվականի 30-րդ նստաշրջանին ներկայացված բանաձևի նախագծին, ամբողջությամբ զեկուցումից հանեց ցեղասպանության մասին արձանագրված պատմական մասը, որտեղ հիշատակվում էր նաև հայերի ցեղասպանությունը: Մեկ տարի անց՝ 1979 թվականին նույն բանաձևը ներկայացվեց ՄԱԿ-ի հանձնաժողովի 35-րդ նստաշրջանի քննարկմանը:[4]

Չայների մեծամասնությամբ որոշվեց վերաձևակերպել 30-րդ ենթակետը: ՄԱԿ-ը վեց տարի անց, արդեն վերջին անգամ կրկին հիշեց Հայոց ցեղասպանությունը, երբ 1985 թվականի հուլիսի 2-ին իր հանձնաժողովի 38-րդ նստաշրջանում ընդունած բանաձևի 24-րդ ենթակետում «1915-1916թթ. հայերի օսմանյան ջարդը» որակեց որպես ցեղասպանության օրինակ:

1984թ. ապրիլի 13-16-ը Փարիզում տեղի ունեցավ ժողովուրդների մշտական դատարանի հատուկ նստաշրջանը, որը քննարկեց հայերի ցեղասպանության հարցը: Ընդունվեց հայերի ցեղասպանությունը դատա-

---

[2] **Վարդան Մատթէոսեան**, Հայկական ցեղասպանութեան ճանաչումն Ուրուկուայի կողմէ, «Յառաջ» (Փարիզ), ապրիլի 23, 2004:

[3] **Լ. Ա. Քարսեղյան**, Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն դատապարտման և ճանաչման ժամանակագրությունը (1915-2000թթ.), Երևան, 2001, էջ 27-28; **Լ. Ա. Քարսեղյան**, Տարեգրություն Հայոց ցեղասպանության պաշտոնական դատապարտման և ճանաչման, Երևան, 2004, էջ 41:

[4] **Չաուէն Մսըրլեան**, ՄԱԿ-ի 30-րդ պաբքերութեան ծննդոցը, «Հայկազեան հայագիտական հանդէս», Պեյրութ, 1991, հատոր ԺԱ, էջ 10-27:

պարտող որոշում:[5]

Սփյուռքում հայկական համայնքների ակտիվ գործողության և տարբեր երկրներում սոցիալական-քաղաքական կյանքում հայերի դերի բարձրացման շնորհիվ մի շարք պետություններ ընդառաջ գնացին համայնքների առաջարկություններին՝ հատուկ քննարկման ենթարկել Հայոց ցեղասպանության ճանաչման և Ապրիլի 24-ը հայերի հետ միասնականության օր սահմանելու հարցը:

Դեռևս 1965թ. Մեծ եղեռնի 50-ամյակի նախօրեին Ֆրանսիայի Ազգային ժողովի ձախ թևի պատգամավորները հարցապնդումով դիմեցին կառավարությանը՝ պահանջելով միջազգային չափանիշներով դատապարտել 1915-ի ցեղասպանությունը, այն համարելով որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն և փոխհատուցում տալ հայերին:[6]

1980թ. Կանադայի Քվեբեկի նահանգի Ազգային հանգումարը և Օնտարիո նահանգի խորհրդարանը որոշում կայացրեցին Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին և դիմեցին Կանադայի խորհրդարանին պաշտպանել այն: Առաջարկը պաշտպանություն չգտավ:[7]

1985 թվականի ապրիլի 23-ին Արգենտինայի Ազգային կոնգրեսը միաձայն որոշում ընդունեց հայերի ցեղասպանությունը դատապարտելու մասին: Հանձնարարվեց Արգենտինայի արտաքին գործերի նախարարությանը վարել հայերի ցեղասպանության միջազգային ճանաչմանը և դատապարտմանը նպաստող քաղաքականություն:

1987թ. հունիսի 18-ին Եվրոխորհրդարանը հատուկ բանաձև ընդունեց «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին»՝ պարտադրելով Թուրքիայի կառավարությանը ճանաչել Հայոց ցեղասպանությունը:[8]

1988 թվականի նոյեմբերի 22-ին Հայկական ՍՍՀ Գերագույն խորհուրդը օրենք ընդունեց «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թվականի ցեղասպանության դատապարտման մասին»: Դատապարտելով հայերի ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն, ընդունված օրենքն Ապրիլի 24-ը հայտարարեց հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր: Առաջարկություն ներկայացվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը՝ 1915 թվականի ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու մասին:[9]

1990 թվականի ապրիլի 19-ին Կիպրոսի խորհրդարանը հատուկ բանաձև ընդունեց հայերի ցեղասպանությունը դատապարտելու մասին:

---

[5] Հայոց ցեղասպանության դատապարտումը միջազգային կազմակերպությունների կողմից (1984-1987թթ.), Կազմող և ներածականի հեղինակ **Լավրենտի Քարսեղյան**, Երևան, 1999:

[6] **Լ. Ա. Քարսեղյան**, Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է Հայոց ցեղասպանությունը, Երևան, 1998, էջ 5:

[7] Կանադայի խորհրդարանի 1996թ. ապրիլյան քննարկումները Հայոց ցեղասպանության դատապարտման մասին (պատասխանատու խմբագիր և առաջաբանի հեղինակ **Լավրենտի Քարսեղյան**), Երևան, 1999, էջ 4:

[8] Հայոց ցեղասպանության դատապարտումը միջազգային կազմակերպությունների կողմից...:

[9] **Լ. Ա. Քարսեղյան**, Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն դատապարտման և ճանաչման ժամանակագրություն (1915-2004թթ.), Երևան, 2001, էջ 35:

1995թ. ապրիլի 14-ին Ռուսաստանի Դաշնության Պետական Դուման ընդունեց հայտարարություն «1915-1922թթ. հայ ժողովրդի ցեղասպանության դատապարտման մասին»:

1996 թվականի ապրիլի 25-ին Հունաստանի Խորհրդարանն Ապոստոլոս Կակլամանիսի նախագահությամբ օրենք ընդունեց «Ապրիլի 24-ը որպես Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության հիշողության օր սահմանելու մասին»:[10]

1997թ. ապրիլի 17-ին Նոր Հարավային Ուելսի (Ավստրալիայի) խորհրդարանի օրենսդիր համագումարը որոշում կայացրեց ապրիլի 24-ը հայերի ցեղասպանության հիշատակի օր սահմանելու մասին և առաջարկություն ներկայացրեց Ավստրալիայի դաշնային կառավարությանը՝ ընդունել նույնանման որոշում:[11]

1997 թվականի մայիսի 3-ին Լիբանանի Հանրապետության խորհրդարանը բանաձև ընդունեց ապրիլի 24-ը հայության հետ միասնականության օր հռչակելու մասին:

Միանգամայն այլ է ԱՄՆ-ի կառավարության վերաբերմունքը: Երկարատև պայքարի ընթացքում, որը սկսվել է դեռևս 1975 թվականին և շարունակվում է մինչև այսօր, Միացյալ Նահանգների կոնգրեսի Ներկայացուցիչների պալատին չհաջողվեց հաղթանակի հասնել:

Այնուհանդերձ ԱՄՆ-ի կոնգրեսականների և սենատորների զգալի մասի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը դիտվում է որպես խիստ հրատապ մի հարց, որից նրանք հրաժարվել չեն ցանկանում:[12]

1998թ. մարտի 26-ին Բելգիայի Սենատը որոշում ընդունեց «Թուրքիայում ապրող հայերի 1915թ. ցեղասպանության մասին», որով դիմեց Թուրքիայի կառավարությանը ճանաչել Հայոց ցեղասպանության պատմական ճշմարտությունը: 2000թ. Շվեդիայի խորհրդարանն ընդունեց Հայոց ցեղասպանության ճանաչմանը և դատապարտմանը նվիրված բանաձև:

2000թ. նոյեմբերի 10-ին Հռոմի պապ Հովհաննես-Պողոս Բ-ն ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: Պապի և Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի համատեղ հայտարարության մեջ առաջին անգամ ճշվեց «ցեղասպանություն» բառը:

Նույն տարվա նոյեմբերի 17-ին Իտալիայի խորհրդարանի ստորին պալատը ձայների ճնշող մեծամասնությամբ որոշում ընդունեց, որտեղ հորդորում էր կառավարությանը ճանաչել Հայոց ցեղասպանությունը:[13]

---

[10] Հունաստանի խորհրդարանը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը, Երևան, 1997:

[11] Ավստրալիայի խորհրդարանական քննարկումները Հայոց ցեղասպանության մասին (1997-1999թթ.), Կազմող, առաջաբանի հեղինակ և խմբագիր **Լավրենտի Քարսեղյան**, Երևան, 2001:

[12] **Լ. Ա. Քարսեղյան**, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և թուրքական հակազդեցությունը, Երևան, 2001, էջ 3-20:

[13] Իտալիայի խորհրդարանի Փոքր Պալատում Հայոց ցեղասպանության ճանաչման նախագծի 2000թ. ապրիլի 3-ի քննարկումները, Առաջաբանի հեղինակ և խմբագիր **Լավրենտի Քարսեղյան**, Երևան, 2001:

2001թ. հունվարի 29-ին Ֆրանսիայի պրեզիդենտը և վարչապետը ստորագրեցին օրենք Հայոց ցեղասպանության ճանաչման մասին՝ ելնելով Ֆրանսիայի Ազգային ժողովի ընդունած որոշումից:

Ֆրանսիան աշխարհում առաջին երկիրն է, որը օրենսդրորեն ճանաչեց Հայոց ցեղասպանությունը:[14]

2003թ. դեկտեմբերին Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրներին միացավ նաև Շվեյցարիան:

Պայքարը ցեղասպանության դրսևորումների դեմ, պայքարը Հայոց ցեղասպանության դատապարտման և ճանաչման համար համամարդկային երևույթ է դարձել:

2005թ. ողջ հայ ժողովուրդը և միջազգային հանրությունը կնշեն Մեծ եղեռնի 90-րդ տարելիցը:

[14] Լ. Ա. Քաբսեղյան, Ֆրանսիան Հայոց ցեղասպանությունը օրենսդրությամբ ճանաչած առաջին պետությունն է աշխարհում, Երևան, 2002:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ

I. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1915-1917ԹԹ.)

№ 1

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻ ՃԱՌԻՑ

Պետրոգրադ,
27 հունվարի 1915թ

«...Կայսերական կառավարությունը վերջին տարիներին անշեղորեն ձգտում էր թեթևացնել թուրքահայերի ճակատագիրը, այդ գործում ղեկավարվելով ինչպես ռուսական քաղաքականության անշահախնդիր պատգամներով, այնպես էլ մեր պետական շահերով: Երբ Բեռլինում համոզվեցին Հայաստանի բարեփոխումների ծրագրի իրականացմանը հասնելու մեր մտադրությունների անսասանության մեջ, գերմանական դիվանագիտությունը պատրաստակամություն հայտնեց կնքել մեր աշխատանքը՝ հետին միտք ունենալով արգելակել կյանքում այդ բարեփոխումների ճիշտ իրականացումը...»:

"Русские ведомости", N 22, 28 января 1915г.
РИГАОИ, стр. 7.

№ 2

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ (ԲԱՔՎԻ, ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՆԵՐԻՑ) ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՊԱՊԱՋԱՆՈՎԻ ԵԼՈՒՅԹ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

27 հունվարի 1915

Անցած տարվա հուլիսի 26-ի պատմական նիստին ես, ցավոք, չէի կարող մասնակցել, ելնելով պարագաներից, որոնք ինձնից կախված չէին: Ներկայիս նիստին հաճելի պարտականություն եմ համարում հայ բնակչության ժողովրդական ներկայացուցչի իմ ձայնը միացնել Ռուսաստանը բնակեցնող տարբեր ազգությունների պատգամավորների ձայնին, որոնք ռուս ժողովրդի հետ միասին կազմում են մեկ անբաժանելի օրգանական ամբողջություն: (Ծափահարություններ): Գերմանիայի կողմից մեզ պատերազմ հայտարարելու առաջին իսկ օրվանից Ռուսաստանի հայերը մի մարդու նման կանգնեցին պայքարի հայրենիքի շահերի պաշտպանության իրավունքի և արդարության համար: Հայտարարություններից և խոսքերից գործին անցնելով, չխոսելով առանձին ունևոր անձանցից, որոնք լայնորեն

արձագանքեցին պատերազմի կարիքներին, ամբողջ հայ հասարակությունը, սկսած մայրաքաղաքի և վերջացրած գյուղական բնակչությունով դրան բերեցին իրենց ավանդը: Կատարելով իրենց պարտքը մեծ հայրենիքի առջև և հաճույքով պատերազմ ուղարկելով պահեստայիններին, հայերը գերազանցապես կամավոր մեկնեցին Արևմտյան և Կովկասյան ճակատներ և ձևավորեցին կամավորական ջոկատներ, որոնք մինչև ներկա պատերազմը հաջողությամբ կատարեցին երկամսյա արշավ, գտնվելով առաջին դիրքերում, անընդհատ շփման մեջ լինելով թշնամու հետ: Ջոկատներից մեկի հասցեին կորպուսի հրամանատարներից մեկի գրավոր հավաստմամբ «անձնուրաց ձևով հետախուզություն էին կատարում, ուս ուսի տված մասնակցում էին մարտերին մեր զորքերի հետ, կրելով մեծ կորուստներ, կատարեցին շատ հերոսական գործեր»: (Ծափահարություններ): Ռուսաստանի հայ եղբայրներից իրենց ուժերի սահմաններում հետ չէին մնում նաև Ֆրանսիայի և Անգլիայի հայերը, որոնք նույնպես ձևավորեցին ջոկատներ, մտնելով մեր դաշնակիցների զորքերի կազմի մեջ: Սակայն կամավորական շարժումը դեռևս իր զարգացման սկզբնական փուլում է. զանգվածաբար կամավորներ են գալիս բոլոր տեղերից, նրանց ուղարկում են գրեթե դատարկված լեռնային և դաշտավայրերի ընդարձակ գյուղերը, ուղարկում են խոշոր կենտրոնները և գավառական քաղաքները, նրանք գալիս են Բուլղարիայից, Ռումինիայից և նույնիսկ Ամերիկայից:

Թուրքահայաստանի հայ բնակչությունը նոր գրավված շրջաններում ուրախ դիմավորում էր մեր հաղթանակած զորքերին, օգնում որքան կարող է և ցուցաբերում հանդիսավոր համաժողովրդական ընդունելություն՝ իր հոգևորականության գլխավորությամբ և եկեղեցիների զանգերի ղողանջների ներքո: Դա արդյունք էր հույսի և հավատի Ռուսաստանի հանդեպ, որի դրսևորումներից ժողովրդին չկարողացան հետ պահել որևէ ուժեր, ինչի պատճառն էր տասնյակ հազարավոր գյուղացիների զանգվածային փախուստը, ավելի ստույգ, ամբողջական տեղափոխումը Թուրքիայի տարածքից Ռուսաստան՝ մեր զորքերի նահանջից և վայրենի, արյունարբու քրդական հրոսակախմբերի և թուրքական բանակի մուտքը: Արդյոք սա չէ պատասխանն այն հարցին, թե ինչպե՞ս պետք է Թուրքահայաստանը վերաբերվի Ռուսաստանին: (Ծափահարություններ կենտրոնում և ձախից): Թուրքիայի դեմ պատերազմի եռամսյա ժամանակաշրջանում մեր փառապանծ Կովկասյան բանակը, որը հայրենիքի զոհասեղանին բերեց շատ հերոսների կյանքեր, իրեն դրսևորեց որպես իր նախնիների չխամրող փառքի տեր և նոր փայլուն էջ գրեց իր մարտական պատմության մեջ: (Ծափահարություններ): Ռուսաստանն արդեն գիտի Կովկասյան բանակի և նրա քաջարի սպաների մի շարք փառապանծ անուններ, իսկ մեր զինվորների և կազակների հերոսությունն ու ինքնազոհողությունը հայտնի են ողջ աշխարհին: Ես չեմ կարող լռության մատնել մոխիր դարձած հարյուրավոր վայրերից քրիստոնյաների անհաշվելի զանգվածի փախուստի ժամանակ մեր զինվորների և կազակների մարդասիրության և կարեկցանքի փաստը, որոնք ցուցաբերեցին այդչափ ասպետականություն, հոգատարություն և քնքշանք կանանց և երեխաների նկատմամբ: (Ծափահարություններ և գոչումներ՝ բրավո): Երեխաներին նրանք տասնյակ վերստեր տանում էին ձեռքերի վրա, ձիերով, բեռների, դաշտային խոհանոցների հետ՝ սայլերով: Իր մեծ և զգայուն հոգով ռուս զինվորը ճիշտ հասկացավ,

թե ինչու են քրիստոնյաները գնում Ռուսաստան և ինչն է նրանց տանում այնտեղ: Կովկասի և կովկասյան զորքերի տրամադրությունը կայտառ է և վճռական, բոլորը հավատում են, որ թշնամին պետք է պարտության մատնվի: Չցանկանալով Թուրքիայի հետ պատերազմ և բոլոր միջոցներով խուսափելով հակամարտության առիթից, իմանալով, որ ռազմական գործողությունների տեղափոխումը Թուրքահայաստան սպառնում է այնպիսի սարսափով, որի առաջ խամրում են Բելգիայի և Լեհաստանի արհավիրքները, հայերը Թուրքիայի հետ մարտական գործողություններ սկսելուց հետո մտան պատերազմի մեջ իրենց վաղեմի թշնամու դեմ՝ ժողովրդին բռնկած եռանդի ամբողջ անկեղծ ուժով: Բոլոր մտորումներն ուղղված են պատերազմին և ռուսական զենքի հաջողության համար հայերը լարել են իրենց բոլոր ուժերը՝ բարոյական, ֆիզիկական և նյութական: Այդ անկեղծ հայրենասիրությունը, որն այդքան վառ դրսեվորվեց Գերմանիայի հետ պատերազմի ամենասկզբին, հանդիսանում է հայ ժողովրդի երկու հարյուրամյակների ընթացքում դեպի Ռուսաստանը ձգտելու բնական հետևանքը: Շատ զոհեր են բերվել նրա կողմից, շատ արյուն է թափվել այդ ձգտման ժամանակ դեպի Ռուսաստան: Ռուսաստանի հայերը, մեծ Ռուսաստանի հավատարիմ զավակները, աշխույժ և արի կրում են և կկրեն մինչև վերջ բոլոր զոհողությունները հանուն Ռուսաստանի հզորության: Թուրքահայերը հույսով և հավատով սպասում են իրենց ազատագրմանը և խորին գոհունակության զգացումով կկարդան պարոն արտաքին գործերի նախարարի խոսքերը ռուսական քաղաքականության անշահախնդիր պատգամների և հայ բնակչության համար բարենպաստ ուղղությամբ Հայաստանը բարեփոխելու մասին: Կովկասի հայ բնակչության շրջանում առավել ժողովրդական կարգախոսը, որ թափանցել է նրա բոլոր շերտերը, հետևյալն է՝ Կեցցե՛ ռուսական բանակը, կեցցե՛ հզոր Ռուսաստանը, որը հայերին ազատություն է բերում թուրքական դարավոր լծից: (Բոտն և երկարատև ծափահարություններ):

Սղագրական հաշվետվություն: Պետական Դումա: Չորրորդ գումարում. III նստաշրջան, առաջին նիստ, 27 հունվարի 1915թ., էջ 29-31:
Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий, сост. Ю. Барсегов.
(այսուհետ՝ГАОТОМС), том 1, Москва, 2002, с. 234-235.

№ 3

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՍԱՅԻ (ՎՈՐՈՆԵԺԻ ՆԱՀԱՆԳԻՍ) ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԿՈՎԱԼԵՎՍԿՈՒ ԵԼՈՒՅԹՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

27 հունվարի 1915

Արևելյան քրիստոնյաների ազատագրման իր առաքելությանը հավատարիմ Ռուսաստանն իր վրա վերցրեց Թուրքահայաստանի բարեփոխումների նախաձեռնությունը: Չնայած Գերմանիայի ուժեղ դիմադրությանը, այդ բարեփոխումները, թեկուզև մի փոքր ներողացված ձևով, կյանքի

կոչվեցին 1914թ. հունվարի 26-ին: Այդ համաձայնագիրը, ինչպես իրավացիորեն նկատեց արտաքին գործերի նախարարը, կարևորություն է ներկայացնում իբրև պատմական փաստաթուղթ, և այն հատկապես կարևոր է նաև նրանով, որ Ռուսաստանին հատկացվում է բացառիկ դերակատարում այդ հարցում: Այժմ եկել է թուրքական լծից Հայաստանը լրիվ ազատագրելու ժամանակը: Քաջարի Կովկասյան բանակը, որի հերոսություններով զարմանում է ողջ աշխարհը, Թուրքահայաստանին բերում է վաղուց ցանկալի ազատության լուրը:

Սղագրական հաշվետվություն: Պետական Դումա: Չորրորդ գումարում. III նստաշրջան, առաջին նիստ, 27 հունվարի 1915թ., էջ 39:
ГАОТОМС, т. 1, с. 236.

№ 4

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՍԱՅԻ (ք. ՊԵՏՐՈԳՐԱԴԻՑ) ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՄԻԼՅՈՒԿՈՎԻ ԵԼՈՒՅԹԻՑ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

27 հունվարի 1915

(...) Մենք սպասում ենք առաջադրված խնդիրների իրագործմանն ինչպես տանջված երկրի (Լեհաստանի), որը տառապում է հիմա ամբողջ Ռուսաստանի համար, այնպես էլ մյուս մեզ մոտ ժողովրդի, հայերի համար, որոնք վաղուց ի վեր ձգտում են փրկություն գտնել Ռուսաստանի թևի տակ դարավոր բռնակալից, որի հանդեպ այժմ կատարվում է պատմության դատաստանն անցյալի մեղքերի համար: (Ծափահարություններ և ձայներ՝ բրավո): Մենք գիտենք, որ այդ պատմական խնդիրների լուծումը չի կարող չանդրադառնալ Ռուսաստանը բնակեցնող ժողովուրդների ճակատագրի վրա: Պայծառ հույսերի գիտակցությամբ, որոնք մեր առջև բացում է այդ խնդիրների իրագործումը, վստահությամբ, որ մենք ձեռք ձեռքի տված մարդկության լուսավորյալ ժողովուրդների հետ քայլում ենք դեպի ժողովուրդների խաղաղ իրավական համակեցությունը՝ յուրաքանչյուրի ինքնուրույնության փոխադարձ հարգանքի հիման վրա...

Կեցցե՛ ազատ Ռուսաստանը՝ իր ջանքերով ազատագրված մարդկության մեջ: (Բուռն ծափահարություններ ձախից և կենտրոնում):

Սղագրական հաշվետվություն: Պետական Դումա: Չորրորդ գումարում. III նստաշրջան, առաջին նիստ, 27 հունվարի 1915թ., էջ 51-52:
ГАОТОМС, т. 1, с. 236-237.

№ 5

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՍԱՅԻ ՈՐՈՇՈՒՄԸ «ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԻ, ԱՎՍՏՐԻԱՑԻՆԵՐԻ ԵՎ ԹՈՒՐՔԵՐԻ ԿՂՄԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ, ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԵՎ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆԵՐԻ

ԽԱԽՏՄԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ , ՄԱՄՆԱՎՈՐ ՍԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ԱՆՁԱՆՑ ՀԱՍՑՎԱԾ ՎՆԱՍԻ ՈՒ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՐՁԱՄԱՆ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

29 հունվարի 1915թ.

ՆԱԽԱԳԱՀՈՂ – Պետական Դումայի անդամ Չխենկելի:

ՉԽԵՆԿԵԼԻ – (Կարսի և Քաթումի մարզեր եվ Սուխումի շրջան) – Ես Պետական Դումային ներկայացնում եմ առաջարկ, որն այստեղ ընթերցվեց, և խնդրում եմ այն քվեարկել կետ առ կետ, որովհետև մենք միևնույն ձևով չենք վերաբերում բոլոր կետերին, հատկապես ես նկատի ունեմ վերջին կետը, որտեղ խոսվում է պատերազմող երկրներից մեկի կողմից միջազգային իրավունքի խախտումների մասին: Մենք, անշուշտ, սկզբունքորեն ոչինչ չունենք նման հանճաժողովի ստեղծման դեմ, սակայն այն, մեր կարծիքով, պետք է լինի միջազգային, որպեսզի կարողանա արժանապատվորեն կատարել իր առաքելությունը, որպեսզի կարողանա բոլոր տեղերում հետաքննել միջազգային իրավունքի խախտումները, անկախ այն բանից ում կողմից են դրանք կատարվել...

ՆԱԽԱԳԱՀՈՂ – Կարգադրության 174 հոդվածի հիման վրա, հաշվի առնելով Պետական Դումայի անդամ Չխենկելիի հայտարարությունը, քվեարկությունը պետք է իրականացվի կետ առ կետ: Հարկավո՞ր է կրկին հնչեցնել բանաձևը: (Ձայներ՝ գիտենք, պետք չէ): Այդ դեպքում թույլ տվեք անցնել բանաձևի քվեարկությանը: Քվեարկության եմ դնում առաջին կետը: (Քվեարկություն): Ընդունված է: Քվեարկության եմ դնում երկրորդ կետը: (Քվեարկություն): Ընդունված է: Քվեարկության եմ դնում երրորդ կետը: (Քվեարկություն): Ընդունված է: Քվեարկության եմ դնում բանաձևն ամբողջությամբ: (Քվեարկություն):
Ընդունված է:

Սղագրական հաշվետվություն: Պետական Դումա: Չորրորդ գումարում. III նստաշրջան, առաջին նիստ, 29 հունվարի 1915թ., էջ 285-287: ГАОТОМС, г. 1, с. 237.

№ 6

ՊԵՏՐՈԳՐԱԴԻ ՀԵՌԱԳՐԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

24 մայիսի 1915թ.

Վերջին ամսվա ողջ ընթացքում Հայաստանում կատարվում է հայերի ջարդ քրդերի և թուրքերի կողմից օսմանյան իշխանությունների բացահայտ թողտվությամբ, իսկ երբեմն էլ ուղղակի օժանդակությամբ: Նոր տոմարով ապրիլի կեսերին հայերի ջարդ է տեղի ունեցել Էրզրումում, Դերջանում, Էգինում, Քիթլիսում, Մուշում, Սասունում, Զեյթունում և ամբողջ Կիլիկիայում, գլխովին կոտորվել են Վանի շրջակայքի հարյուր գյուղերի բնակիչները, բուն Վանում հայկական թաղամասը պաշարվել է քրդերի

Ա III 7307

ՀԱՅԿ. ԳԵՆՏՈՍՊՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳՐԱՐԱՆ

կողմից: Միևնույն ժամանակ Կոստանդնուպոլսի թուրքական կառավարությունը բանտարկության և չտեսնված ճնշումների է ենթարկում խաղաղ հայ բնակչությանը:

Ելնելով Թուրքիայի կողմից մարդկության և քաղաքակրթության դեմ կատարված նոր հանցագործություններից, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դաշնային կառավարությունները սրանով հրապարակայնորեն հայտարարում են Թուրքիայի կառավարությանը, որ իրենք այս հանցագործությունների անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա տեղական ներկայացուցիչների վրա, որոնք հանցակից կգտնվեն նման կոտորածին:

АВПР, Политархив, д. 3507, л. 15.
РИГАОИ, стр. 21.

№ 7

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻ ԴԻՄՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻՆ

19 հուլիսի 1915

... Զգալով վերահաս վտանգը, թուրքերը առանձնահատուկ դաժանությամբ հարձակվեցին իրենց իշխանության տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների վրա: Հայերը ենթարկվում են չտեսնված հետապնդումների, որոնք սակայն չեն կորցրել նրանց ոգին, և հայկական ջոկատները արիաբար մեր հետ միասին կռվում են իրենց կեղեքիչների դեմ: Այսպես, Վանում նրանք դիմադրեցին մոտավորապես մեկ ամիս թուրքերի գրոհներին մինչև մեր զորքերի կողմից քաղաքի ազատագրումը: Նման ծանր հանցագործություններ թուրքերի կողմից կատարվել է տեղի հույն բնակչության նկատմամբ, կանանց և երեխաների հանդեպ, ինչը չի կարող չառաջացնել կարեկցանք և ցասում հույն ժողովրդի և նրա կառավարության մոտ:

Стенографический отчет: Государственная Дума: Четвертый созыв. IV сессия, второй созыв, 19 июля 1915г., стр 23:
ГАОТОМС, т. 1, с. 249.

№ 8

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՊԱՊԱՋԱՆՈՎԻ ԵԼՈՒՅԹԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

20 հուլիսի 1915

ՊԱՊԱՋԱՆՈՎ (Բաքվի, Ելիզավետպոլի և Երևանի նահանգներ) – Պարոնայք Պետական Դումայի անդամներ: Պատերազմի առաջին տարվա ընթացքում ես երկրորդ անգամ եմ բարձրանում այս ամբիոն Ռուսաս-

տանում բնակվող բոլոր ազգությունների ռուս ժողովրդի հետ միասնության անհրաժեշտության խորին գիտակցությամբ: Հայ բնակչության կողմից իբրև Պետական Դումա ուղարկված պատգամավոր, իմ պարտքն եմ համարում վկայել հայ ժողովրդի բարձր հայրենասիրական զգացումի և այն մասին, որ չկան զոհաբերություններ, որոնց առաջ նա կանգ կառնի այս պատերազմում հանուն ընդհանուր հայրենիքի փառքի: (Ծափահարություններ աջից, կենտրոնում և ձախից և ձայներ՝ բրավո): Հայերի հայրենասիրական խանդավառությունը ծանր փորձությունների ենթարկվեց անցած տարվա ընթացքում Ռուսաստանի և նրա քաջարի դաշնակիցների հաղթանակի կենսական անհրաժեշտության գիտակցման նրանց տիտանական պայքարում հանուն արդարության և ժողովուրդների իրավունքների և վերածեց ամուր պետական տրամադրության: Գոյության և ազատության համար պայքարի օրերում հայ ժողովրդի մեջ չկան կուսակցություններ և քաղաքական հոսանքներ, բոլորը մի մարդու պես միավորվում են մի խնդրի շուրջ՝ հաղթել թշնամուն: Ձախ հոսանքի, ձախ կուսակցությունների ներկայացուցիչները, որոնք հետապնդվում էին նախորդ կառավարության կողմից, մոռացել են այդ և իբրև կամավորներ ջոկատների կազմում կռվում և արյուն են թափում ընդհանուր գործի համար: Բոլոր այլ առումներով կատարելով պարտքը մեծ հայրենիքի հանդեպ, հայերը դրա հետ մեկտեղ կազմակերպեցին կամավորական ջոկատներ, որոնց մեջ են մտնում անմարդկային կյանքի պայմանների հետևանքով Թուրքահայաստանի տարբեր տեղերից եկածները, որտեղ հողի ամեն մի կտորն առատորեն ջրված է հայկական արյունով: Այդ ջոկատներն ավելի շատ կլինեին և ուժերն ավելի մեծ, եթե իշխանության կողմից դրանց ձևավորման և զարգացման գործում չդրվեին անհասկանալի խոչընդոտներ և չլինեին տատանումներ: Ես շատ կցանկանայի դրանք բացատրել պատահական և հաղթահարելի պատճառներով և ուզում եմ, որ արհեստական արգելքները չբերեն ընդհանուր գործի համար վնասակար հետևանքների: Մենք գիտենք, որ պատերազմի ժամանակ դիվանագիտական քայլերն անօգուտ են և ուժ չունեն և ժողովրդին կարելի է պաշտպանել միայն զենքի ուժով: Թուրքիայի սահմանը մեր կողմից անցնելու օրվանից մինչ այսօր հայկական ջոկատներն ուս ուսի տված կռվում են մեր քաջարի զորքերի կողքին, առաջին դիրքերում մարտնչելով թշնամու դեմ, ցուցաբերելով քաջության և ինքնազոհության բարձր հատկանիշներ, ինչը մեկ անգամ չէ, որ նշվում է մեր հրամանատարների կողմից: Գործուն մասնակցություն ունենալով ներկայիս պատերազմում, հայերը հետապնդում են երկու նպատակներ՝ 1) պարտքի կատարում հայրենիքի առաջ և 2) Հայաստանի ազատագրումը թուրք կեղեքիչներից: Թուրքիայի ներկայիս ղեկավարները, «կարմիր» սուլթանի հայերի նկատմամբ տարվող փորձված քաղաքականության շարունակողները, նրանց (հայերին) դիտում են իբրև Թուրքիայի համար վնասակար և Ռուսաստանի համար օգտակար տարր և հետևողականորեն իրագործում են նրա ֆիզիկական ոչնչացման գաղափարը: Դա ավելի հեշտ է կատարվում այն պատճառով, որ Թուրքահայաստանը, որի տարածքում և նրան հարևան շրջաններում ապրում է շուրջ 3000000 հայ, դարձել է ռազմական գործողությունների թատերաբեմ: Թշնամու ամեն մի նահանջ և մեր հարձակում կամ հակառակն անպատճառ ուղեկցվում է ոչ միայն թալանով, այլև հայ և ընդհանրապես քրիստոնյա բնակչության ոչնչացմամբ: Այն, ինչ

կատարվում էր թուրքական զորքերի կողմից գրավված շրջաններում, անհնար է նկարագրել: Թուրքական իշխանությունների և նրանց գործակալների գազանությունները քրիստոնյաների և հատկապես հայերի նկատմամբ չի կարող պատկերացնել մարդկային երևակայությունը: Ուրմիայում, օրինակ, առանց սեռի և տարիքի խտրականության մորթվեցին մի ամբողջ գյուղի բնակիչներ՝ ներառյալ ծծկեր երեխաները: Տանձուտ գյուղում սվիններով խողխողվեցին և ժայռից անդունդը նետվեցին գյուղի բոլոր տղամարդիկ, բացառությամբ մի քանիսի, որոնք, փախուստի դիմելով, փրկվեցին պատահաբար: Վանի շրջանում, որքանով որ հաջողվեց պարզել, սրի են քաշվել ավելի քան տաս հազար խաղաղ բնակիչներ: Այս իմաստով ստացվել են դեռևս չստուգված լուրեր թուրքական թիկունքից՝ Մուշից, Բիթլիսից, Էրզրումից և այլ վայրերից: Ժողովուրդների ոչնչացման դժոխային աշխատանքն առաջ բերեց Եռյակ համաձայնության տերությունների հայտնի հայտարարությունը, որը հրապարակվել է սույն թվականի մայիսին և կոտորածների համար անձնական պատասխանատվությունը դնում է թուրքական կառավարության անդամների վրա: Այդ բացառիկ դիվանագիտական գործողության առիթով ինձ պարտավորված եմ համարում երախտագիտությունս հայտնել ինչպես մեր, այնպես էլ մեր քաջարի դաշնակիցների կառավարություններին (Ծափահարություններ աջից, կենտրոնում և ձախից): Այդ հայտարարությունը հայերին տալիս է այն երաշխիքը, որ իրենց ճակատագիրը գտնվում է հուսալի ձեռքերում, սակայն ավաղ, այն չունեցավ պատշաճ ազդեցություն: Գահընկեց արված սուլթանի երիտասարդ հետևորդները, գերազանցելով իրենց ուսուցիչներին և շարունակելով բնաջնջման քաղաքականությունը, դիմեցին պայքարի հրեշավոր միջոցների, սկսեցին Հայաստանի ամբողջ շրջանների բնակչության տեղահանությունը դեպի Միջագետք և Սիրիա, նրանց մոխիրների վրա բնակեցվելով իրենց մուհաջիրներին: Սակայն թող Թուրքիայի կառավարիչները հիշեն, որ իրենց հանցագործությունները չեն հասնելու նպատակին, և Ռուսաստանի ու նրա դաշնակիցների օգնությամբ կգա ուժեղ և դիմադրության ընդունակ, հարյուրավոր տարիների ընթացքում ճնշված ու նսեմացած, բայց, միևնույն է, ոգով կայտառ Թուրքահայաստանի վերածննդի ժամը: Միայն այնտեղ, որտեղ հայերը դիմեցին զենքի, ինչպես Վանում և Շատախում, նրանք խուսափեցին ամբողջական ոչնչացումից, պատվով պաշտպանեցին իրենց կյանքն ու ազատությունը: Ամրանալով Վանի միջնաբերդում, հայերը հետ մղեցին թվով գերակշռող թշնամու հարձակումները, իսկ մեր զորքերի օգնության հասնելուն պես հանդիսավոր պայմաններում նրանց հանձնեցին և՛ քաղաքը, և՛ Վանի միջնաբերդը: Բերդի բանալիները հայերի կողմից հանձնվեցին ջոկատի հրամանատարին: Մեր հերոսական զորքերը, խորանալով Թուրքահայաստանում, արյունով ողողեցին երկար ճանապարհը, լեռների վրայով անձնազոհաբար հաղթահարեցին արշավի անվերջ դժվարությունները՝ թշնամու կանոնավոր զորքերի և ամենուրեք ցրված քրդական հրոսակախմբերի անընդհատ մարտերի պայմաններում: Օգնության հասած ռուս եղբայր զինվորներին հայերը դիմավորում էին ուրախ, ծաղիկներով ծածկելով նրանց ճանապարհը դեպի Վան: Ես այժմ չեմ անդրադառնա նրան, թե ինչ և ինչպես է արված շրջանի ուժերի համախմբման և թշնամու նկատմամբ հաղթանակի կազմակերպման համար, սակայն չեմ կարող չշեշտել, որ հայերի հայրե-

նասիրական տրամադրությանը հաճախ չի համապատասխանում տեղական իշխանությունների վերաբերմունքը: Այն ժամանակ, երբ կենտրոնական իշխանությունը հյուտարակում է «Նարնջագույն գիրքը» և հայերի համար բարենպաստ իմաստով այլ քայլեր է կատարում, տեղերում իշխանության ստորադաս մարմինները, որոնք դեռևս ապրում են գոլիցինյան ռեժիմի ժառանգությամբ, մեծամասամբ անընդունակ են բարձրանալ պետական խնդրի բարձրության մակարդակի և շրջանում իրենց քաղաքականությունը վարում են հատկապես բարձրագույն իշխանության անունից: Հայկական ջոկատները կռվում են առանձնահատուկ անբարենպաստ պայմաններում՝ առջևում թշնամին է, որը կատաղած է և խնայել չգիտի հայերին, իսկ հետևում անբարենպաստ քննադատություն է, նեղ խարդավանքներ և կեղծ լուրեր, որոնք ամեն ուրեք տարածվում են անհասկանալի եռանդով: Ընդհանրապես պատկերը Կովկասում տխուր է, հողայն կառավարումը մինչ այժմ չի մտցվել, Կովկասը պահում են գաղութի դրության մեջ և չեն ներքաշում ռուսական մշակույթի բարիքների մեջ: Սակայն ինչպիսին էլ լինեն կյանքի պայմանները Կովկասում, ռուսահայերը կկատարեն իրենց պարտքը մինչև վերջ, կանգ չառնելով զոհերի առաջ, ավելի շատ զոհերի, քան այն, որոնք նրանց կողմից արդեն զոհաբերվել են: Ինչ վերաբերվում է թուրքահայերին, ապա նրանք խզելով կապերը Թուրքիայի հետ, գործնականում ցույց տվեցին և իրենց արյունով հավաստեցին իրենց վերաբերմունքը Ռուսաստանի նկատմամբ: Մյուս կողմից, չնայած մասնավոր կերպով ջոկատներին տրված գովեստի բնորոշումներին, մենք չենք տեսնում, որ Թուրքիայի դեմ Ռուսաստանի պատերազմի տասը ամիսների ընթացքում նրանց դերի մասին հասարակայնությունը տեղյակ պահվեր թեկուզ մեկ անգամ: Այդ իսկ պատճառով գոհունակության զգացումով եմ ես նշում արտաքին գործերի նախարարության խոսքերը հայերի մասին: Սա առաջին բարի, կարեկցական խոսքն էր, որով կառավարության ներկայացուցիչը դիմում էր պատերազմի սարսափներում տառապած ժողովրդին: Իսկ այնտեղ, թշնամու երկրում՝ Թուրքիայում, հաշվի են առնում գործերի այս դրությունը և մինչև ռուսական զորքերի հայտնվելը ձեռք են առնում ծանոթ միջոցները հայ բնակչության, որպես Ռուսաստանի հարազատ և մոտ տարրի, ոչնչացման ուղղությամբ: Եվ արդեն օրերս իմ կողմից ստացվել է հեռագրային հաղորդագրություն հայ գաղթականների նոր զանգվածների մասին, ինչը վկայում է թուրքական իշխանությունների նոր հաշվեհարդարների մասին...

Стенографический отчет: Государственная Дума: Четвертый созыв. IV сессия, второе чтение, 20 июля 1915г., стр 173-176:
ГАОТОМС, т. 1, с. 250-251.
"Баку", №165, 25 июля 1915г.

№ 9

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՍԱՅԻ ՊԱՏԳԱՍԱՎՈՐ Մ. Ի. ՊԱՊԱՋԱՆՈՎԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ. ՍԱԶՈՆՈՎԻՆ

Ձերդ գերազանցություն, մեծարգո Սերգեյ Դմիտրիի,

Ամեն օր ես ստանում եմ հեռագրեր և նամակներ Թուրքահայաստանի հայ բնակչության և մեր սահմաններն անցած գաղթականների սարսափելի վիճակի մասին:

Քառեր չկան այդ իրողությունը փոխանցելու համար, և ականատեսի անկեղծ պատմությունը մինչև վերջ կարող է լսել միայն ամուր նյարդեր ունեցողը:

Մանազկերտի և Մուշի շրջանների հայկական արական ողջ բնակչությունը կոտորված է, Լիզում միմյանց կապկպված 800 տղամարդ խողխողված է, 6-ից 9-ը տարեկան աղջիկները բռնաբարված են, Կոպի, Լիզի ընդարձակ դաշտերում և այլ վայրերում փռված են կանանց և երեխաների դիակներ:

Ես կարող եմ անվերջ շարունակել վերջին օրերի մարտիրոսագրությունը: Ռուսաստանի տարածք են անցել սոված, հիվանդ, ահաբեկված ավելի քան 200000 գաղթական: Նրանք եկել են սարսափելի ճանապարհներով, անանցանելի լեռնանցքներով, ճանապարհը ծածկելով դիակներով: Բոլորը կանայք և երեխաներ են: Գեղեցիկ կանայք և աղջիկները առևանգվել են թուրքերի և քրդերի կողմից:

Ձմռանը եկած 60000 եկածների հետ, գաղթական հայերը ավելի քան 260000-են՝ ոչ ճշգրիտ հաշվարկով:

Հայ հասարակությունն այլևս ի վիճակի չէ խնամել գաղթականներին, ինչպես ահռելի միջոցների անհրաժեշտության և ընդհանրապես բարեգործական օգնության անբավարարության պատճառով, այնպես էլ նրա համար, որ գյուղացիական և քաղաքային դասերը հյուծված են անընդհատ հավաքներից:

Այս պահին գաղթականներին խնամելու վրա ծախսվել է ավելի քան մեկ ու կես միլիոն ռուբլի (բացի ոչ մեծ կողմնակի օգնությունից), կամավորական ջոկատների վրա ծախսվել է շուրջ 700000 ռուբլի, որոշակի գումարներ են ծախսվել Վանում քաղաքացիական կառավարման վրա (Վանը հանձնվել էր քաղաքը ազատագրած հայերին), որոշ քաղաքներում և ռազմական գործողությունների թատերաբեմում հիվանդանոցների վրա և այլն:

Միջոցները սպառվել են: Չգիտեմ, թե Ռուսաստանում որ ազգությունն է այսքան ներդրել պատերազմի մեջ և կրել ավելի շատ զոհեր:

Լայն օգնություն է անհրաժեշտ պետության կողմից, անհրաժեշտ են միլիոններ, որպեսզի տառապյալները չմահանան մեր աչքերի առաջ: Գաղթականների վիճակի բարելավմանն ուղղված միջոցների մասին օրինագիծը արդեն մտցվել է Դումա, և ես մասնակցում եմ դրա քննարկմանն ու արագ ընդունմանը: Սակայն դրա համար ժամանակ է պետք: Իսկ գաղթականները մեռնում են բաց երկնքի տակ՝ կոտորված, սոված, մերկ, մահանալով ուժասպառությունից:

Միայն սննդի կետերի վրա ամեն օր ծախսվում է 30000 ռուբլի:

Թախանձագին խնդրում եմ Ձեզ, մեծարգո Սերգեյ Դմիտրիի, ձեր վրա վերցրեք նախաձեռնությունը և միջոցներ ձեռնարկեք, որպեսզի պե-

տության միջոցներից անմիջապես հատկացվի միլիոնից ոչ պակաս ռուբլի գաղթականների օգնության հայկական կազմակերպությունների տրամադրության տակ, որոնք հիանալի կազմակերպված են և ամբողջ տարի աշխատեցին Ծայրագույն պատրիարքի և Ամենայն Հայոց կաթողիկոսի հովանավորության ներքո:

Այդ կազմակերպություններն են՝

ա) հայկական եկեղեցու սպասավորների մասնակցությամբ եղբայրական օգնություն (Էջմիածնում)

բ) պատերազմից տուժածների օգնության Հայկական Կենտրոնական Կոմիտեն, որը միավորում է հայկական բոլոր բարեգործական և լուսավորչական կազմակերպությունները (Թիֆլիսում)

գ) «Նպաստամատույց» կազմակերպություն, որը ստեղծվել է պատերազմից առաջ՝ բնական աղետներից տուժածներին օգնելու համար:

Իմ պարտքն եմ համարում հայտնել, որ ես չէի ցանկանա, որ հայ գործիչները օգնության համար դիմեին չեզոք պետությունների ներկայացուցիչներին, որոնք արդեն արձագանքել են Բելգիայի, Լեհաստանի աղետներին, եթե գաղթականներին օգնելու անհետաձգելի գործի ընթացքը հապաղի:

Ես գրել եմ իշխան Ն. Բ. Շչերբատովին: Նամակով դիմում եմ նաև իշխան Վ. Մ. Վոլկոնսկուն:

Սեծ իշխանուհի Տատյանա Նիկոլաևնայի կոմիտեն իր Կովկասյան բաժնին փոխանցել է 500000 ռուբլի և Ծայրագույն պատրիարքին տրամադրել է (իմ խնդրանքով) 50000 ռուբլի, քանի որ առաջին օգնությունը ցուցաբերվում է Իգդիրում և Էջմիածնում, ուր գալիս են գաղթականները...

Մ. Ի. Պապաջանով

АВПР, Политархив, д. 3492, лл. 5-6.
РИГАОИ, стр. 55-57.

№ 10

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՍԱՅԻ ՊԱՏԳԱՍԱՎՈՐ Մ. Ի. ՊԱՊԱՋԱՆՈՎԻ ՃԱՌԻՑ

հունվար 1916

- Եվ այժմ, ինչպես և նախկինում, չնայած Հայաստանում թույլ տրված արյունալի սարսափներին, որոնց նմանը աշխարհը չգիտի, բոլոր հայերը լի են հաստատակամ որոշումներով կռվել Ռուսաստանի և նրա քաջարի դաշնակիցների հաջողության համար, որոնք պայքարում են ժողովուրդների իրավունքների ու ազատության համար:

Թուրքական իշխանության սարսափագնու չարագործություններով ճնշված Հայաստանում լուսավոր ճառագայթ է հանդիսանում Էրզրումի գրավումը: Մեր քաջարի կովկասյան զորքերը, հաղթահարելով աննկարագրելի ծանր արգելքներ, հրաշք կատարեցին: Էրզրումի՝ Արևելքի այդ հպարտության և անառիկության անկումը, Կարսի մարզի ճանապարհների

այդ հանգույցի, Վանի ուղղությամբ և ավելի հարավ ու Փոքր Ասիայում այդ ուժեղագույն ամրոցի գրավումը, որը հանդիսանում էր որպես բազա մեր դեմ գործելու համար, ունի ոչ միայն ռազմավարական, այլ նաև քաղաքական նշանակություն: Էրզրումի գրավումը՝ դա բացատրելու այն խոսքը է, որը շարժման մեջ եղած Արևելքում հասկանալի է բոլորին: Վերջին ժամանակներում տեղի ունեցած իրադարձությունները ցույց տվեցին, թե ինչպիսի աղետալի սխալ է հանդիսանում հասարակական այն կարծիքը, իբր Կովկասյան ռազմաճակատը երկրորդային է: (Ձայներ. «Ճիշտ է, ճիշտ է»):

Իմ խորին համոզմամբ, այնտեղ (Կովկասյան ռազմաճակատում) մեր անհաջողությունները կապառնային այնպիսի չլսված բարդություններով, որոնց մասշտաբները դժվար է պատկերացնել: Էրզրումի վերջնական գրավումը և այնտեղ մեր հաստատվելը ոչ միայն կլուծի մեր օգտին Կովկասյան ռազմաճակատի ճակատագիրը, այլև հսկայական ազդեցություն կունենա համաշխարհային պատերազմի հետագա ընթացքի վրա: Կովկասում մեր քաջարի զորքերը արեցին ամեն ինչ, ինչը մարդկային ուժերի սահմաններում էր, որի համար փառք ու պատիվ նրանց: (Ծափահարություններ):

Սակայն Էրզրումի պահպանումը և ամրապնդումը մեր կողմից, դա տակավին մեր ողջ փառավոր բանակի գործն է, դա ողջ երկրի, և ասեմ ավելին՝ դա բոլորիս և յուրաքանչյուրիս առանձին գործն է: (Ձախից ձայներ. «Ճիշտ է»):

Ինչ վերաբերում է հայերին, ապա ինչպես արդեն ասացի, նրանք պատրաստ են իրենց պարտքը կատարել մինչև վերջ: Մենք հավատում ենք Ռուսաստանի և նրա քաջարի դաշնակիցների վերջնական հաղթանակին, մենք հավատում ենք Ռուսաստանի լուսավոր ապագային, մենք հավատում ենք, որ ռուսական արծվի հովանու ներքո հայ ժողովուրդը նորից կվերադառնա ազգային ազատ կյանքին իր հինավուրց հայրենիքի՝ Թուրքահայաստանի սահմաններում, որտեղ հողի յուրաքանչյուր մասը առատորեն ջրված է նրա արյունով և քրտինքով, որտեղ յուրաքանչյուր քար նրա մշակութային բարձր անցյալի մասին է խոսում: (Ընդհանուր ծափահարություններ):

"Армяне и война", № 1, 1916г.
РИГАОИ, стр. 106-107.

№ 11

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Ս. Դ.ՍԱԶՈՆՈՎԻ ԵԼՈՒՅԹԸ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԲԱՑՄԱՆ ՕՐԸ

9 փետրվարի 1916թ.

- Փետրվարի 3-ին ընկավ Էրզրումը: Մեր քաջարի զորքերը առաջ են ընթանում, հաղթահարելով ծանր արգելքները: Վանից մեր զորքերի նահանջելուց հետո ընկած ժամանակահատվածում, թուրքերը տասնապատկել են իրենց դաժանությունները հայերի նկատմամբ:

Ինձ դեռևս նախկինում վիճակվել էր ձեր առջև հիշատակել այդ դժբախտ ժողովրդի չլսված տանջանքների մասին: Դաշնակցային Գերմանիայի բարեհաճ աչքի առջև, թուրքերն, ըստ երևույթին, մտադիր են

իրագործել հայ բնակչության լիակատար բնաջնջման մասին իրենց վաղեմի երազանքը, որը (հայ բնակչությունը) չի ենթարկվում մահմեդական զանգվածի ազդեցությանը և, այդպիսով, արգելք է ծառայում Թուրքական կայսրությունը իրեն տնտեսապես և քաղաքականապես ենթարկելու գերմանական ծրագրերի համար...

"Армяне и война", № 1, 1916г.
РИГАОИ, стр. 106.

№ 12

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ (ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԻՑ) ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՉԽԵԻՉԵԻ ԵԼՈՒՅԹԻՑ

10 փետրվարի 1916

... Որքան ենք մենք առաջ շարժվել այն հարցերի լուծման գործում, որոնք այդքան հստակ դրված էին պատերազմից առաջ, և արդյո՞ք դրանք ճիշտ են հաշվի առնվել մեծ արհավիրքի սկզբում: (...) Անշուշտ, համընդհանուր գնահատական այն ամենին, ինչ կատարված է այժմ ևս չկա պարոնայք, և դա, իմ կարծիքով, պարզվեց բավարար չափով, և դա ամենակարևորն է այժմ մեզ համար, դա հենց այն է, ինչին մարդկությունն իր ողջ պատմության ընթացքում ակնառատես չէր դարձել այնպիսի կեղծիքի և երեսպաշտության, ինչը նկատվում է ներկայումս: Եվ եթե ինչ-որ մեկը համաձայն չէ ինձ հետ, ապա ես կհարցնեի նրան, ո՞ւր անհետացան այն բարձր կարգախոսները, հանուն որոնց և հայտարարվեց այս պատերազմը, ի՞նչ եղան բոլոր այն մեծ սկզբունքները, հանուն որոնց իրագործման այն ամենը, ինչ հազարամյակների ընթացքում նվաճվել էր մարդկության կողմից, դրվեց քարտեզի վրա: Արդյո՞ք հայերը, այդ բազմաչարչար ժողովուրդը, որն ապրում է Թուրքիայում, ամբողջովին չի բնաջնջվել: (Մարկով 2՝ Այո, երիտթուրքերի կողմից): Եվ եթե այս ամենը ճիշտ է, պարոնայք, ապա ես ձեզ հարցնում եմ՝ որտե՞ղ է ժողովուրդների ազատության մեծ սկզբունքը (Ձայներ ձախից՝ կլինի), ազգությունների ինքնորոշումը: Եվ չափազանց կարևոր է իմանալ վերջապես, ո՞վ պետք է ինքնորոշվի, հենց այդ ինքնորոշման ժամանա՞կ պետք է ժողովուրդները հերթով բնաջնջվեն և ոչնչացվեն:

Ստենոգրաֆիական հաշվետվություն: Պետական Դումա: Չորրորդ գումարում. IV նստաշրջան, տասնութերորդ նիստ, 10 փետրվարի 1916թ., էջ 1272-1273: ГАОТОМС, т. 1, с. 275-276.

№ 13

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ Մ. Ի. ՊԱՊԱՋԱՆՈՎԻ ՃԱՌԸ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

8 մարտի 1916թ.

- Կովկասի մարզի կառավարման անառողջ առանձնահատկություններից մեկը հանդիսանում է ազգությունների առանձնացումը, սակայն այս սկզբունքը հաստատապես կյանքի կոչելու համար անհրաժեշտ էր ազգություններից մեկին ընտրելու որպես քավության նոխազ: Այդ հրեշավոր դերը տալիս են հայերին: Նրանց պարբերաբար վարկաբեկում են ընդհուպ մինչև վերջին օրերս: Հայերը հայտարարվեցին անջատողականներ, պետության թշնամիներ: Քաղաքացիական և ռազմական բյուրոկրատիան իրականացնում էր «բաժանիր և տիրիր» հին սկզբունքը և ձգտում էր հայերի վարկաբեկմանը ներգրավել նաև այլ ազգությունների ազգայնամոլ տարրերին:

Համաշխարհային պատերազմը ցույց տվեց, թե որքան էին մոլորվել կովկասյան իշխանությունները հայերի նկատմամբ իրենց հետապնդումներում: Այժմ ռուսական հասարակական կարծիքն արդեն չի կասկածում, թե ում են պատկանում հայերի համակրանքները, և թե որքան քանկ նրանք վճարեցին այդ համակրանքների համար:

Սակայն կովկասյան բյուրոկրատիան խուլ և համր գտնվեց վերջին ժամանակների բոլոր իրադարձությունների նկատմամբ, սկսելով մեղադրանքներ ուղղել հայերի հասցեին՝ նրանց չափից դուրս հայրենասիրության համար, օգտակար լինելու նրանց ցանկության համար: Կարող եք պատկերացնել, թե ինչ էր զգում հայկական հասարակությունը, որն իր բոլոր ուժերը տվեց ռուսական զենքին և որը Թուրքիայի սահմաններում կրեց անհաշվելի կորուստներ: Այդ նույն պահին ռուսական իշխանությունները հայերի վրա դրեցին Կարսի մարզում բնակվող ռուսների դժբախտության պատասխանատվությունը, որը նրանց (ռուսներին) հասցվել էր քրդերի և թուրքերի կողմից: Դրան հետևեց Կարսի գեներալ-նահանգապետի մի շարք հրամանների հրապարակումը, որոնցում հայերը մեղադրվում էին մահմեդականների սպանության, բռնությունների և թալանի մեջ: Գործընթացին տրվեց ազգային գծտության բնույթ և հայ գյուղացիները հայտարարվեցին հարձակվող կողմ: Գյուղացիությունն իր ուսերի վրա կրեց գաղթականության աղետի ողջ ծանրությունը: Գյուղացիությունն ապաստան տվեց գաղթականներին, կերակրեց նրանց: Նա աշխատանքներ էր կատարում նաև կովկասյան ռազմաճակատում՝ փորում է խրամատներ, անցկացնում է ճանապարհներ, չստանալով հաճախ ոչ մի վարձատրություն այն պատճառով, որ տեղական իշխանություններն օգտվում են նրա անգրագիտությունից, լեզվի չիմացությունից:

Կովկասում իշխանության արմատական սխալը կայանում էր նրանում, որ նա այդ գործին մոտ չէր քողնում տեղական հասարակական կազմակերպություններին՝ մահմեդական, վրացական և հայկական: (Ձայներ ձախից՝ «ճիշտ է»): Սակայն նոր կարգախոսների առկայության պայմաններում անհրաժեշտ են նոր մարդիկ, որոնք Կովկասի փոխարքայի սկզբունքը կկիսեն ոչ թե վախից, այլ խղճից ելնելով: Անհրաժեշտ է Կովկասի հարցում վերադառնալ այն հին կառավարման սկզբունքներին, երբ ռուսների հետ միասին Կովկասի կառավարման գործին կցվում էին թե հայերը, թե վրացիները, թե թաթարները և թե այլ ազգությունները: Չնայած տեղական իշխանության կողմից կատարված անավոր գործողություններին և ամեն տեսակի հակագործողություններին, հայերը նախկինի պես շարունակում են իրենց ճանապարհը և կքայլեն այն ճանապարհով, որը

պետք է Ռուսաստանին և նրա դաշնակիցներին հասցնի հաղթանակի: (Ծափահարություններ ձախից):

"Армянский вестник", № 7, 13 марта, 1916г. стр. 11-12.

№ 14

Պ. Ն. ՄԻԼՅՈՒԿՈՎԻ ԵԼՈՒՅԹԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՍԱՅՈՒՄ

11 մարտի 1916թ.

Թուրքական քաղաքականության նպատակն այդ բազմաչարչար ժողովրդի նկատմամբ հայտնի էր Աբդուլ Համիդի ժամանակներից: Այդ նկատակն է՝ նրա (հայ ժողովրդի) ամբողջական ֆիզիկական ոչնչացումը: Միջազգային դիվանագիտության զգուշացման և կանխարգելման բազմաթիվ փորձերից հետո, թուրքերին թվում էր, որ իրենց համար վերջապես եկավ բարենպաստ պահը: 1915թ. ապրիլին Էնվեր փաշան հայտնում է դեսպան Վանգենհայմին, որ Թուրքիայում գոյություն ունի խորին համոզմունք, որ թուրքերի անհաջողությունը Կովկասյան ռազմաճակատում առավել ևս պետք է վերագրվի հայերին, և որ եթե վերջիններս այդքան համառորեն չպաշտպանեին ռուսական շահը Կովկասում, ապա թուրքերի ճանապարհը դեպի Թիֆլիս էապես կթեթևանար: Թուրքերը չեն կարող դա ներել և այդ իսկ պատճառով նման կատաղությամբ նրանք հարձակվում են հայերի վրա: Այս հայտարարության արդյունքում Վանգենհայմը, այդ տրամադրությունների վրա հիմնված, որոշակի ծրագիր է ներկայացնում Բեռլինն 1915թ. ապրիլին: Էնվեր փաշան իրեն հայտնում է, որ թուրքերի պետական շահերը պահանջում են հայերի ամբողջական տեղահանում Հայաստանից և խնդրում, որ Գերմանիան չընդդիմանա դրան, իսկ Վանգենհայմն իր կողմից պաշտպանում է այդ միջոնդդությունը Բեռլինի առջև: Գերմանական տեսակետից, սակայն, ձեռնտու չէր ընդհանրապես ոչնչացնել այդ աշխատասեր և օգտակար ժողովրդին, քանի որ Միջագետքի անապատները, որոնք ձգտում էին բնակեցնել գերմանացիները, հենց կարիք ունեին նման տարրի: Բնակեցնելով Միջագետքը և այնտեղ զբաղվելով երկրագործությամբ, հայ ժողովուրդը նույնիսկ կշահի, կարծում էին գերմանացիները, քանզի հողերն այնտեղ բերրի են, և նրանք շուտով կարող էին հասնել տնտեսական ծաղկման: Դրանից կշահի և՛ պետությունը, և՛ Բաղդադի երկաթգիծը:

Ինչպես տեսնում ենք, միացյալ մարտավարությունը, թուրքականը՝ հայերի տեղահանություն, իսկ գերմանականը՝ նրանց տեղափոխությունն իրենց ապագա գաղութի նոր տարածքների վրա, իրագործվեց նման տխուր հաջողությամբ Թուրքիայում դեռ նախորդ տարի: Այժմ, Էրզրումի և Հայաստանի այլ քաղաքների գրավումով, այդ քաղաքականությանը վերջ է տրված: Ռուսական զորքերն այժմ կանգնած են՝ այդ տարածքի այն մասում, որտեղ բնակչությունն առանց այդ էլ խիտ էր բնակեցված: Էրզրումի գրավումը մեծ տպավորություն թողեց մահմեդական ողջ աշխարհի վրա և չի կարելի թույլ տալ, որպեսզի Էրզրումը կիսի Պերիմխլվի ճակատա-

գիրը: (Ծափահարություններ բոլոր նստարաններից): Ինչպիսի՞ն պետք է լինի հաջորդ քայլը: Թվում է այստեղ կասկած չի կարող լինել: Ռուսաստանին հավատարիմ լինելու համար տուժած քրիստոնյա բնակչությունը պետք է վերականգնվի իր նախկին տեղերում, և Ռուսաստանը, որ դեռևս թուրքական ռեժիմի օրոք խոստացել էր այդ ժողովրդին ինքնավարություն, պետք է իրագործի իր խոստումն այժմ, երբ վիլայեթները զգալի մասով գտնվում են իր ձեռքում: Հայաստանի և հայերի ճակատագիրը մեզ համար թանկ են և մոտ ոչ պակաս, քան պայքարում տուժած այլ ազգությունների ճակատագրերը, որոնք բարեկամ են մեզ և մարտնչել են մեր կողքին: (Ջայներ ձախից՝ «Բրավո»):

Դժբախտաբար, նշաններ կան, որ այստեղ ևս կարող է կրկնվել գալիցյան դյուցազներգության տխուր հիշողությունը հիշեցնող մի բան: Արդեն սկսել են երևալ նաև նախանշանները: Չափազանց թեթև է վերաբերմունքն այն գույքի նկատմամբ, որը թողնվել է բնակիչների կողմից, չգիտես ինչու հայտարարված իբրև պետական ունեցվածք: Ինչո՞ւ ենք մենք հակված սատարելու անուղղելի քուրդ-քոչվորներին և նույնիսկ փորձում նրան դարձնել հողագործ, ի հեճուկս նրա հին զոհի, նստակյաց հողագործի՝ հայի: Տակավին վերջերս քուրդը հայից խլում էր հողը, քշում-տանում նրա կնոջը և աղջկան, սպանում և ոչնչացնում էր նրա ընտանիքը, իսկ այժմ երեկվա այդ թշնամուն մեզ մոտ սկսում են խնամել ինչպես բարեկամի, և նրան ցուցաբերում են բացահայտ նախապատվություն ի համեմատ հնագույն հավատարիմ հայ-բարեկամի: Եկեք չվավերացնենք կազմակերպված թալանի և հողի զավթումը, որը հնարավոր էր միայն հին Թուրքիայում:

... Հիշենք, պարոնայք, հայերի հասցեին Դումբերգի ասած խոսքերը՝ մահացածների զոհերը թող հաշվվեն ողջերին: Եկեք չվավերացնենք հողերի զավթման և կազմակերպված թալանի պտուղները, ինչը հնարավոր էր միայն հին Թուրքիայի հողի վրա: Սակայն, այդուհանդերձ, մենք չպետք է մտածենք բնիկ հայերի հողերը ինչ-որ նորեփրատյան կազակության տարածքի վերածելու մասին: Չշարունակենք թուրքերի գործը, փոխարինելով միայն մահմեդական մուհաջիրներին ռուս վերաբնակիչներով: Գոնե օրենքի և արդարության խախտման վերականգնման այս հանդիսավոր պահին խուսափենք ազգային էգոիզմի այդ նեղ ծրագրերից:

Чалхушьян Г. Красная книга, Ростов-на-Дону, 1919, стр. 105-108.
ГАОТОМС, т. 1, с. 277-278.
"Армянский вестник", № 8, 1916г.
РИГАОИ, стр. 123-124.

№ 15

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ Մ. Ի. ՊԱՊԱՋԱՆՈՎԻ ՃԱՌԸ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

11 մարտի 1916թ.

Մեզ բարեկամ երկրների խորհրդարանները մի քանի անգամ անդրադարձել են Թուրքիայում և Թուրքահայաստանում հայերի դրության քննարկմանը: Պետական Դուման, ելնելով նրանից, որ երկար ժամանակ չէր հավաքվում, մինչև հիմա ուշադրություն չէր դարձնում Թուրքահայաստանում տեղի ունեցող իրադարձությունների վրա: Մինչդեռ այդ իրադարձություններն ավելի շատ պետք է մտահոգեն Ռուսաստանին, քանի որ հայերի կեսն ունի ռուսական հպատակություն և բնական է, որ չի կարող սառնասրտորեն վերաբերվել այն ամենին, ինչ կատարվում է արտասահմանում: Կովկասի հայ բնակչությունը կարիք ունի ձեր բարոյական աջակցությանը՝ շարունակելու համար այն անհավասար պայքարը, որը նա տանում է: Այն, ինչ տեղի ունեցավ Հայաստանում, ենթակա չէ ոչ մի նկարագրության և նույնիսկ անհասանելի է երևակայության համար: Չնայած Բելգիայում, Սերբիայում, Լեհաստանում աղետի առկայությանը, մարդկության ժողովրդական ողբերգության հոմանիշը դարձավ Թուրքահայաստանը: Աշխարհում և ոչ մի ազգ այս պատերազմում այնքան զոհեր չունեցավ, որքան հայերը, և երբեք հայ ժողովուրդը, որը ենթարկվեց անվերջ աղետների, այնքան չկորցրեց, որքան այս տարում: Թուրք արկածախնդիրների հրեշավոր գինարբուքների զոհ դարձավ հարյուր հազարավոր խաղաղ բնակչությունը, գլխավորապես կանայք և երեխաները: Դեռևս Գերմանիայի հետ պատերազմի սկզբին, երբ Թուրքիան դեռ ներքաշված չէր պատերազմի մեջ, թուրքահայերին արվել էին որոշակի առաջարկություններ, ինչպես «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամների, այնպես էլ պաշտոնատար անձանց կողմից: Թուրքահայերին խոստանում էին ոչ միայն կյանքի անձեռնմխելիություն, այլև ինքնավար կառավարում Թուրքահայաստանի և նույնիսկ Կովկասի սահմաններում, որը Թուրքիային խոստացել էր Գերմանիան, եթե նրանք (թուրքահայերը) անցնեն Թուրքիայի կողմը և դավաճանեն Ռուսաստանին: Այդ առաջարկությունները, բնականաբար, մերժվեցին հայերի կողմից և այստեղից էլ սկսվում են բոլոր աղետները: Երիտթուրքական այժմյան քաղաքական գործիչները, ըստ էության, հանդիսանում են կարմիր սուլթան Աբդուլ Համիդի քաղաքականության շարունակողները, որը կայանում էր նրանում, որ Թուրքիայում Հայկական հարցը լուծվի ժողովրդի բնաջնջման ճանապարհով: Դեռևս Թուրքիայի Ռուսաստանի հետ պատերազմից առաջ հայերին սկսեցին մեղադրել Ռուսաստանի օգտին լրտեսության մեջ: Հակահայկական քարոզչության հետ մեկտեղ հայերին սկսեցին բանակ զորակոչել ոչ թե 20-ից մինչև 35 տարեկան հասակում, ինչպես կարգն էր, այլ 18-ից մինչև 48 տարեկանը: Հայկական հասարակության լավագույն տարրերը ու նրանց ղեկավարները, սկսած հայրապետներից և թուրքական խորհրդարանի անդամներից, բանտերն էին նետվել, ոմանք նույնիսկ սպանվել: Այնուհետև սկսեցին զինաթափել և սպանել բոլոր հայ զինվորներին: Պաշտոնապես վավերացվել է, որ մոտ 1800 հայ զինվորներ սպանվել են Դիարբեքիրի մոտ իրենց թուրք ընկերների կողմից: Որոշ գյուղերում սպանում էին ողջ արական բնակչությանը, մյուսներում չէին խնայում նույնիսկ կրծքի երեխաներին և ծերերին: 1915 թվականի մայիսի 20-ին երիտթուրքական կառավարությունը որոշեց ձեռնարկել վերջնական միջոցառումներ և հրապարակեց հայ բնակչության Միջագետք արտաքսելու մասին դեկրետը, հաշվի առնելով, որ նրա մի մասը կզոհվի ճանապարհին, իսկ մյուսը՝ դժվար թե դիմանա Միջագետ-

քի ավազային տոթ տափաստաններում: Սակայն դրանով չսահմանափակվեցին: Կազմվեցին հատուկ ավազակախմբեր, որոնք ճանապարհին վրա էին հասնում նրանց (արտաքսվողներին), թալանում ու սպանում էին: Այդ սոսկալի պատկերի մասին մենք ունենք օտարերկրյա ճանապարհորդների և դիվանագիտական ներկայացուցիչների վկայությունը: Նորվեգուհի Ֆլորա Վեդելը, որը Թուրքահայաստանում եղել էր 1914թ. հոկտեմբերից մինչև 1915թ. ապրիլը և աշխատել էր այսպես կոչված "Deutshe Militer Mission"- ում, հավաստում է, օրինակ, որ իրեն ուղեկցող ժանդարմը պարծենում էր նրանով, որ իր առաջ ոչնչացվել են հայրուրավոր հայեր, որոնց իրեն հանձնարարել էին ուղեկցել: Խարբերդում ամերիկյան հյուպատոսը վկայում է, որ հսկայական թվով դժբախտ նորաբնակներ՝ թվով 3000 մարդ, գլխովին ոչնչացվել էր այդ քաղաքից մի քանի վերստ հեռավորության վրա: Ի հավելումն այս ամենի, թուրքերը բժիշկներ էին ուղարկում գեղեցիկ կանանց ընտրելու համար, որոնք ենթակա էին հարեմ ուղարկվելու:

Այժմ մեր կողմից գրավված շրջաններում գյուղերից ռուսական զորքերին են մոտենում կանայք և երեխաներ, որոնք գերված էին թուրքական և քրդական բնակչության կողմից: Եվ մեր իշխանությունները պետք է ձեռնարկեն բացառիկ միջոցառումներ այդ բնակչության ապաճորտացման համար: Դժբախտաբար, մինչև հիմա այս տեսակետից ոչինչ չի արվել և թուրքերի ու քրդերի հարեմներում ու տներում նախկինի պես բանտարկված են մեծ թվով կանայք և երեխաներ: Թուրքական իշխանությունները սովորության համաձայն հեռվում են այն բանի վրա, որ հայերը իրենք են սադրել այդ սարսափելի աղետները, քանի որ դիմում էին ապստամբության, որը ծրագրվել էր ռուսական և անգլիական դիվանագիտության կողմից: Սակայն այդ մեղադրանքները բացարձակապես ոչնչով հիմնավորված չեն: Սովորաբար, նախքան բնակչության ֆիզիկական բնաջնջմանը դիմելը, թուրքական իշխանությունները նրան զինաթափում են, հատկապես գյուղերում: Եվ գյուղերում զգացին, որ զինաթափումը աղետի սկիզբն է, և մի շարք տեղերում հրաժարվեցին զենքը հանձնելուց և դիմեցին ինքնապաշտպանության: Այդ ինքնապաշտպանությունն է, որ գերմանացիներն անվանում են ապստամբություն, որն ըստ նրանց ծրագրված է մեր դիվանագիտության կողմից: Հայ ժողովրդի հետ պատահած դժբախտության իսկական մեղավորները՝ թուրք կառավարողները և նրանց գերմանացի բարեկամները են, որոնք Թուրքիային թույլ տվեցին դիմել այդ միջոցներին: «Միություն և առաջադիմություն» կուսակցության գործիչները հանդիսացան այդ համակարգի գործնական իրականացման ջատագովները: Էրզրումում, օրինակ, «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամներից մեկը դպրոցներից վերցրեց աղջիկներին և իր բարեկամների հաճույքի համար ընտրեց 10 հայ աղջիկների: Թուրք սպաների դերը «Միություն և առաջադիմություն» կուսակցության դերից ավելի լավ չէր: Տեղի ունեցածի մեղավորությունը ընկնում է նաև «Միություն և առաջադիմություն» կուսակցության գերմանացի բարեկամների վրա: Վաղուց ի վեր հայտնի է, որ Կոստանդնուպոլսում նախարարներն ավելի քիչ ազդեցություն ունեն, քան գերմանական դեսպանները: Եվ, այնուամենայնիվ, բարոն Վանգենհայմը ոչինչ չարեց, որպեսզի դադարեցնի այդ սարսափելի չարագործությունը: Գերմանական մամուլը սատարում էր Կոստանդնուպոլսում իր դիվանագետի տեսակետը, որը հայտարարել էր, որ դա ներքին

գործեր են, և ինքը դրանց մեջ միջամտել չի կարող, իսկ գերմանացի սպաները իրենց պահում էին թուրքերից ոչ լավ: Այսպես, օրինակ, սպաներ Շենգիհ ու Կարլ Վեյթը Էրզրումում ուժով վերցրել և պահում էին հայ ուսումնական հաստատությունների բարձր դասարանների աղջիկներին մինչև իրենց մեկնումը՝ սեպտեմբերին, մեկ այլ սպա մասնակցել էր Քեմախում հայերի կոտորածին, որտեղ սպանվել էր մի քանի հարյուր մարդ: (Կենտրոնից և ձախից բացականչություններ. «Ինչպիսի խայտառակություն»): Գերմանիայի վերաբերմունքը Թուրքահայաստանում կատարված չարագործությունների նկատմամբ հավերժ բիծ կմնա իր մշակույթով այդքան ամբարտավան Գերմանիայի վրա: (Բացականչություններ. «Ճիշտ է»):

Դժբախտաբար, վերջին ժամանակներս կովկասաթուրքական ռազմաճակատում տեղի հայ բնակչության ոչնչացմանը: Հակառակ արևմտյան ռազմաճակատում սահմանված կանոններին, հակառակ առողջ մտածելակերպի պահանջների և քաղաքական հաշվարկների, բնակչությունը վաղօրոք չէր տեղեկացվել, որ մեր զորքերը պետք է նահանջեն: Ընորհիվ դրա, այդ նահանջը հայկական բնակչության վրա նստեց 40000 զոհ: Մեր նահանջի ճանապարհին իշխանությունները ոչ մի միջոց չձեռնարկեցին, որպեսզի գաղթականների անցումը կատարվեր նվազագույն կորուստներով: Անփութության պատճառով, գաղթականներին նշում էին այնպիսի ուղիներ, որոնք կտանեին բնակչության ոչնչացման և միայն անհնազանդությունն էր, որ 40 հազար զոհերը չավելացան ևս մի քանի տասնյակ հազարներով: Հայերին, ինչպես նշվում է տեղերից, ոչ միայն չի ցուցաբերվել օգնություն և պաշտպանություն բռնություններից, այլև իշխանությունների կողմից անտեսվում էր քրիստոնյա բնակչության պաշտպանության հարցը, ինչը Թուրքահայաստանում առիթ տվեց քրդական ցեղերի պարագլուխներին և չերքեզներին շարունակել անպատիժ անկարգություններ կատարել անպաշտպան հայերի նկատմամբ: Կամավորական ջոկատի հերոսներից մեկը, որն անձամբ բազմաթիվ զոհեր կրեց, գրում է. «Ես ափ ի ձեռ իմ 30 ընկերների և բարեկամների հետ, որոնց հետ ես 9 ամիս հուսահատ պատերազմ էի վարում թուրքական կանոնավոր զորքերի դեմ: Եվ ի՞նչ: Իշխանությունները մեզնից խլեցին զենքը, որը մեզ համար մեր սեփական երեխաներից թանկ էր: (Բացականչություններ ձախից… «Խայտառակություն, դա Յանուշկևիչն է»): Հայերին կոտորող քրդական հրոսակախմբերի պարագլուխները ոչ միայն չեն պատժվել, այլև քրդերի զինաթափումը կատարվում էր այնպես, որ հայերի դեմ կռված և հայ բնակչության նկատմամբ ամեն տեսակի գազանություն գործած մարդիկ շարունակում են ազատորեն բնակվել նախկին վայրերում: Դժբախտաբար, մինչև հիմա արտաքին գործերի նախարարությունը, որի ցուցումներով պետք է ղեկավարվեին քիկունքի իշխանությունները, չցուցաբերեց, միգուցե և ոչ իր մեղքով, առողջաբար միջամտություն: Եվ եթե արտգործնախարարությանը պատկաներ մեր կողմից գրավված մարզերի սահմաններում գործողությունների ղեկավարումը, ապա տեղի չէր ունենա այն, ինչը օրերս տեղի ունեցավ Էրզրումում: Այդ ժամանակ գեներալ Յանուշկևիչը կհասկանար, որ չի կարելի արտաքսված, միգուցե մասամբ կոտորված հայերի գույքը համարել թուրքական կառավարությանն անցած անժառանգ գույք: Եթե արտգործնախարարությունը գեներալ Յանուշկևիչին բացատրեր նրա տեսակետի ողջ

սխալականությունը, ապա նա չէր անի նաև իր սխալ եզրակացությունը՝ իշխանություններին թույլ չէր տա այդ գույքը տնօրինել այնպես, ինչպես կամենան, ինչպես վարվում էին թուրքական գանձարանի գույքի հետ: Անշուշտ, հայերի համար դա չնչին կորուստ է, ի համեմատություն նրան, թե ինչ կորուստներ նրանք կրեցին: Սակայն չէ՞ որ Ռուսաստանը ևս կարիք չունի արյունով ներկված այդ ժառանգության:

Ամեն անգամ, երբ Թուրքիայում նկատվում էր ճգնաժամ, բոլորից շատ տուժում էին հայերը և որքան թույլ էր լինում Թուրքիան, այնքան զորեղ էին հարվածները: Սակայն, չնայած կրած զոհերին ու տառապանքներին, հայերը չվհատվեցին և լի են ուժով ու եռանդով շարունակելու համառ պայքարը: 1878թ. հայերը, ձեռք ձեռքի տված ռուսական զորքերի հետ, մարտնչում էին, չնայած դաժան պատժին, որը հետևեց դրան, նրանք երբեք Ռուսաստանի օգնությամբ վերածնման հույսը չէին կորցնում: Հայերը հավատում են, որ այլևս հեռու չէ այն ժամանակը, երբ կիրականանան իրենց երազանքները, երբ կդադարի գոյության համար սարսափով լի կյանքը, երբ հայրենի հողի վրա ոգի կառնեն հնագույն մշակույթի տեր հայ ժողովրդի նիրհող ուժերը: Ռուսաստանի և նրա դաշնակիցների հաղթանակը Թուրքահայաստանին կբերի ազգային կյանքի զարգացում, Գերմանիայի գերիշխանությունը կխեղդի փոքր ժողովրդին: Գերմանիան ձգտում է ճնշել թույլերին, իսկ Ռուսաստանի և նրա դաշնակիցների հաղթանակը, ընդհակառակը՝ նրանց կբերի հարգանք բոլոր ազգությունների իրավունքների նկատմամբ, հնարավորություն կընձեռի նրանց ինքնուրույն տնօրինել իրենց ներքին կյանքը: (Ծափահարություններ բոլոր նստարաններում):

"Армянский вестник", № 8, 1916г.
РИГАОИ, стр. 124-128.

№ 16

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

17 մարտի 1916թ.

1916թ. մարտի 17-ի երեկոյան ժամը 9-ի նիստի արձանագրություն:

Նախագահ՝ նախարարների խորհրդի նախագահ Շտյուրմեր:

Անդամներ՝ ծովային նախարար Գրիգորովիչ, արտաքին գործերի նախարար Սազոնով, ռազմական նախարարի փոխարեն՝ ռազմական նախարարի օգնական, հետևազորի գեներալ Բելյաև, Նորին մեծություն Կովկասի փոխարքայի ներկայացուցիչ պետական քարտուղար Նիկոլսկի:

Նիստին մասնակցում էին՝ արտաքին գործերի նախարարի տեղակալ հոֆմեյստեր Ներատովը, գլխավոր շտաբի գեներալ-զորաքննակարապետ գեներալ-մայոր Լեոնտևը, արտաքին գործերի նախարարության երկրորդ քաղաքական բաժնի խորհրդական Պետրյաևը, նախարարների խորհրդի գործերի կառավարիչ Լոդիժենսկին, Թեհրանի առաքելության առաջին քարտուղար Սինոռսկին:

Խորհրդակցության քննարկման առարկան անգլո-ֆրանսիական առաջարկության քննարկումն էր, որը վերաբերում էր Ասիական Թուրքիա-

յում Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի ապագա տիրույթների և ազդեցության գոտիների սահմանազատման հարցին, նրա բաժանման դեպքում:

Նիստի սկզբում արտաքին գործերի նախարարը շարադրեց անգլո-ֆրանսիական նախագծի հիմնական դրույթները (տես՝ փետրվարի 25-ի հուշագիրը), քարտեզի վրա նշելով ենթադրվող սահմանները: Նրա կողմից բացատրվեց, որ ֆրանսիական նախնական առաջարկները մեր փոքրասիական սահմանների երկայնքով ֆրանսիական տիրույթների մինչև Ուրմիայի լիճ ընդարձակման վերաբերյալ հանդիպեցին արտաքին գործերի նախարարության առարկությանը, որի հետ ֆրանսիական կառավարությունը համաձայնվեց: Այսպիսով նախնական նախագիծը փոփոխվեց Ուրմիայի լճի շրջակայքի շրջանները ֆրանսիացիների կողմից մեզ զիջելու և դրա փոխարեն ֆրանսիական տիրույթների դեպի Փոքր Հայք մեծանալու իմաստով (տես գործին կցված քարտեզը):*

Ծովային և ռազմական նախարարությունների ներկայացուցիչները, ինչպես նաև Նորին կայսերական մեծության Կովկասի փոխարքայի ներկայացուցիչը չառարկեցին նշված համաձայնագրի էության վերաբերյալ, կիսելով արտաքին գործերի նախարարի տեսակետը, որ Արաբական խալիֆաթի ապագա ճակատագիրը և Փոքր Ասիայում ռուսական սահմանից հարավ ընկած շրջանների կազմավորումը, բացառությամբ Պաղեստինում Սուրբ վայրերի, քիչ է առնչվում Ռուսաստանի շահերի հետ: Որոշվեց միայն Ուրմիայի կողմից ռուսական և ֆրանսիական տիրույթների միջև սահմանել այնպիսի սահման, որը կապահովեր կարևորագույն լեռնանցքների, անցումների և ռազմավարական դիրքերի տիրապետումը Ռուսաստանի կողմից:

Ինչ վերաբերում է Փոքր Ասիայում ռուսական արևմտյան սահմանի որոշմանը, ապա արտաքին գործերի նախարարի այն հարցին, թե Սև ծովի որ կետերից ցանկալի և շահավետ կլիներ մեզ համար այն անցկացնել, ծովային նախարարը կարծիք արտահայտեց, որ Ռուսաստանին անհրաժեշտ է հասնել որքան հնարավոր է երկար ափային շերտի տիրապետմանը, և որպես վերջնական կետ նշեց Սինոպը: Գեներալ Քելլաևը կարծիք արտահայտեց, որ նեղ ափամերձ շերտին տիրապետելն, անշուշտ, ցանկալի է, սակայն դա սկզբունքորեն միայն այն դեպքում գործնական արժեք կունենա, երբ այդ շերտը ապահովված կլինի նրա երկայնքին համապատասխան թիկունքային շրջանով, հակառակ դեպքում առանց հենակետերի սահմանի նման երկարացումը երկրի ներսում անցանկալի է, քանի որ առաջ կքաշի չափից դուրս և անարդյունք ծախսեր այն ամրապնդելու համար: Արտաքին գործերի նախարարությունն իր հերթին նշեց, որ դեռևս պատերազմից առաջ ֆրանսիացիներն Անդրկովկասի մեր տարածքին**

---

* Գործում քարտեզը բացակայում է:

** Մինչև 1913թ., Ռուսաստանը, հիմնվելով 1900թ. ռուս-թուրքական երկաթգծային համաձայնագրի վրա, ձգտում էր Ֆրանսիայից հասնել Հյուսիսային Անատոլիայում երկաթգծեր կառուցելուց հրաժարմանը: 1913-1914թթ. ֆրանս-թուրքական և ֆրանս-գերմանական համաձայնագրերի կապակցությամբ, որոնցով նախատեսվում էր երկաթուղային շինարարություն Փոքր Ասիայում, ռուսական կառավարությունը բանակցություններնի մեջ մտավ թուրքական կառավարության, ինչպես նաև մի խումբ ֆրանսիական ձեռնարկատերերի հետ «Տրասպիզոն-Պե-

մոտ շրջաններում երկաթգծեր կառուցելուց հրաժարվելու փոխարեն ստացել են մեր համաձայնությունը Սամսուն-Սվազ գծով* երկաթգիծ կառուցելու արտոնությունը: Սինոպի միացումը մեր տիրույթներին մեզ համար անհրաժեշտություն կառաջացնի ֆրանսիացիներից հասնել վերը նշված արտոնությունից հրաժարմանը, քանի որ նրա ցանկացած ձևով իրականացումը կկատարվի ռուսական պետական տարածքում, ինչն, անշուշտ, անթույլատրելի է: Ֆրանսիացիների այդ արտոնությունից կամավոր հրաժարմանը, որը նրանք չափազանց քանկ են գնահատում, ծայրահեղ դժվար կլինի հասնել:

Խորհրդակցության մասնակիցները լիովին համաձայնվեցին արտաքին գործերի նախարարի արտահայտած դատողությունների հետ, սակայն ցանկություն հայտնեցին, որ ծայրահեղ դեպքում ռուս-թուրքական արևմտյան սահմանի վերջին կետը լինի Սամսունի և Տրապիզոնի միջև ընկած որևէ նավահանգիստ: Առավել հարմար դրա համար ճանաչվեց Օրդու կոչված վայրը: Այդ դեպքում ռուսական սահմանն այդ կետից կուղղվեր մոտավորապես դեպի Գարահիսար (Շաբխանե): Այս հարցում վերջնական որոշման ընդունումից առաջ ծովային նախարարը ցանկություն հայտնեց ներկայացնել հատուկ գրություն: Նորին կայսրության մեծության Կովկասի փոխարքայի ներկայացուցիչը խորհրդակցության ուշադրությունը հրավիրեց այն բանի վրա, որ Հայաստանի բաժանումը երկու մասերի, որոնցից մեկը կանցնի Ռուսաստանին, իսկ մյուսը՝ Ֆրանսիային, կառաջացնի հայերի դժգոհությունը և բողոքները, ինչպես նաև քարոզչություն Կովկասում: Արտաքին գործերի նախարարը բացատրեց, որ նման բաժանումը համապատասխանում է տեղանքի տեղագրական առանձնահատկություններին և հայերի դավանանքին:

Քացի այդ, եթե հնարավոր չէ ստեղծել միասնական Հայաստան, ապա հենց հայերի համար ավելի լավ է, որ իրենց Ռուսաստանից դուրս մնացած մասը պատկանի մշակութային Ֆրանսիային, քան թե Թուրքիային, որը նրանց այդքան դժբախտություններ է պատճառել: Խորհրդակցությունը դրա հետ լիովին համաձայնվեց:

Հաջորդ խորհրդակցությունը նշանակվեց մեկ շաբաթ հետո:

PAT, стр. 172-174.

№ 17

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՍԱՅՈՒՄ

քերիջ-Սվազ-Խարբերդ գծի ցանկացած կետից ռուսական սահմանի ուղղությամբ» երկաթգծերի շինարարության արտոնության իրեն փոխանցելու նպատակով: Դրանով Ռուսաստանը հույս ուներ խանգարել Էրզրումից արևելք, այնինքն ռուսական Անդրկովկասին կից տարածքներում թուրքական ռազմավարական երկաթգծերի կառուցմանը (Տես՝ "Материалы по истории франко-русских отношений", Москва, 1922г.):

* Սամսուն-Սվազ երկաթուղային գծի կառուցման իրավունքը ստացվել էր "Régie génerale des chemins de fer et des travaux publics" ֆրանսիական ընկերության կողմից 1914թ. ապրիլին:

Մոսկվա,
20 մարտի 1916թ.

Արտաքին գործերի նախարարության նախահաշվի քննարկման ժամանակ Պետական Դուման լուրջ ուշադրություն դարձրեց հայկական հարցին: Թե՛ հայ դեպուտատ Մ. Ի. Պապաջանովի ճառում, և թե՛, որ հատկանշական է, Պ. Ն. Միլյուկովի ճառում, հայկական հարցը ստացավ այնպիսի ձևակերպում, որը լրիվ համապատասխանում է հայ ժողովրդի ցանկություններին:

Կադետների (սահմանադրական դեմոկրատներ) կուսակցության ղեկավարը որոշակիորեն հայտարարեց, որ Ռուսաստանը, որը հայերին Թուրքիայում ինքնավարություն էր խոստացել դեռևս թուրքական ռեժիմի օրոք, «պարտավոր է իրականացնել այդ խոստումն» այժմ, երբ հայկական վիլայեթները որոշակի չափով իր ձեռքերում են:

Մենք չունենք դեռևս նման բացարձակ հայտարարություն արտաքին գործերի նախարարի կողմից: Սակայն բավական է և այն, որ Դումայի ամենահեղինակավոր բլոկի քաղաքական գործիչը, որը շատ զգույշ է իր հայտարարություններում, ուղղակի արտահայտվեց Հայկական հարցի նման լուծման օգտին, ինչը և սպասում են հայերը Ռուսաստանից և նրա դաշնակիցներից:

Հայ ժողովրդի համար չափազանց արժեքավոր է, որ Դումայի ամբիոնի բարձրությունից ճանաչվել է ինքնավարության ինքնին սկզբունքը: Պ. Ն. Միլյուկովի և Մ. Ի. Պապաջանովի մի քանի օրերով իրարից բաժանված ճառերը, բացահայտեցին երկու բան՝ առաջին. ինչ իրավունք կարող է իրեն վերապահել, սպասելով Ռուսաստանին, հայ ժողովուրդը, և երկրորդ՝ ինչ հարցերում է Ռուսաստանն, ի դեմս ամենախոշոր ներկայացուցիչների և ազդեցիկ քաղաքական խմբերի, ընդառաջ գնում հայ ժողովրդին:

Պ. Ն. Միլյուկովը ղեկավարվում էր բարձր քաղաքականության նկատառումներով, և այս անգամ դրանք համընկան արյունաքամ լինող, բայց առույգությունը և հույսն ապագայի նկատմամբ պահպանած ժողովրդի ցանկությունների հետ: Այս համընկումը նշանակալից է:

Պ. Ն. Միլյուկովը նաև ակնարկում էր այն բանի վրա, թե ինչ է պետք անել, որ Հայաստանը խուսափի Գալիցիայի ճակատագրից: Դա մոտ ապագայում ամենագլխավոր գործնական խնդիրն է:

Մ. Ի. Պապաջանովը Դումայի առաջև ներկայացրեց Հայաստանի տառապանքները այնպիսի եռանդագին և զգացմունքային ոգևորությամբ, որը հնչում է նրա ճառերում ամեն անգամ, երբ նա խոսում է իր ժողովրդի մասին: Մեր պատգամավորը, որն այսքան տարի ցավում էր նրա համար հոգով, այնքան լավ գիտի նրա տառապանքները, որ իր համար դժվար չէր համոզիչ լինել իր ճառում:

"Армянский вестник", № 8, 1916г., стр. 1-2.

№ 18

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՍԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ Ն. ԾՉԵՊԿԻՆԻ ՀՈԴՎԱԾԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

1916թ. մարտ

Գալիցիայի ժամանակավոր կառավարման օրինակը ռուսական բանակի կողմից նրա գրավման ժամանակ և նույնիսկ պատերազմի ժամանակաշրջանում Լեհաստանի կառավարման մշտական ձևը, կասկած չեն թողնում նրանում, որ ինքն իրեն թողնված կառավարությունն ի վիճակի չէ որևէ այլ բան կատարել, քան իրեն եզակի ծանոթ ոստիկանական կառավարումը՝ Ռուսաստանից հեռացված ծառայողների կադրերի միջոցով:

Ռուսական հասարակության աշխատանքն այդ հարցի վերաբերյալ պետք է կայանա խնդրի լուծման գործում գործնական ուղիների որոնման այնպիսի ուղղությամբ, որպեսզի 1) Հայաստանը միանգամից ստանա մշակութային կառավարում, որը կտրուկ հակադիր լինի թուրքական կարգ ու կանոնին, և որպեսզի 2) ռուսական բանակի կողմից Լեհաստանի ու Գալիցիայի գրավման ժամանակ ստեղծվեր մի նախադեպ, որն արգելեր Լեհաստանում վերադառնալն այն կարգերի, իսկ Գալիցիայում այն կարգերի ներմուծումը, որոնք կիրառվում էին այնտեղ ռուսական կառավարության կողմից:

Ներկայիս տողերը նպատակ ունեն հարցը դնել հասարակական բոլոր կազմակերպությունների առաջ և ամենաընդհանուր գծերով նշմարել այն ուղղությունը, որով պետք է ընթանա այդ հարցի գործնական լուծումը: Ավելին դժվար թե կարելի է պահանջել, առանց տեղական պայմաններին ու ուժերին մոտիկից ծանոթանալու:

Հայաստանում պետք է մտցվի այնպիսի կարգ, որը կհենվի տեղական տարրերի վրա: Դա չի լինի իսկական տեղական ինքնակառավարում կամ ինքնավարություն: Դա պետք է լինի անցումային մի ձև, որը ճկուն կերպով կհարմարվի ռազմական ժամանակի պայմաններին: Կառավարման հիմքում պետք է դրվի աշխարհով մեկ սփռված բոլոր հայ մտավորական ուժերի մասնակցությունը դրան: Անհրաժեշտ է այդ ուժերը հավաքել ու կազմակերպել՝ տեղական կառավարման բոլոր բնագավառներում գործնական ծրագրի կատարման համար: Այդ ուժերը, գործից տեղյակ անձանց հավաստիացմամբ լիովին բավարար կլինեն այդ խնդրի իրագործման համար:

Այդ հույժ անհետաձգելի խնդրի գործնական կատարումն իրենց վրա պետք է վերցնեն զեմստվոները և քաղաքային միությունները: Այդ միությունները նման գործի համար իդեալական գործիքներ չեն հանդիսանում, սակայն սա միակ գործիքն է, որը Ռուսաստանն ունի տվյալ րոպեին: Հանձինս այդ միությունների Ռուսաստանն ունի կազմակերպված հսկայական քաղաքական ուժ, որը գրավել ու շարունակում է գրավել կառավարման ամբողջ բնագավառներ: Այդ միությունները խնդիրների իրականացման համար ունեն անհրաժեշտ հեղինակություն ու վստահություն: Համենայն դեպս, երկիրը ուրիշ գործիքներ չունի, քանի որ խոսքը ոչ թե օրենս-

դրական ուղու մասին է, այլ հայտնի ծրագրի գործնական իրականացման՝ կենսական պայմանների ստեղծման մասին է, այլ ոչ թե օրենսդրական նորմերի:

Առաջինը, որ պետք է անեն միությունները, դա կարճ ժամկետում, հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ համաձայնեցված, կառավարման սխեմայի մշակումն է, չխորանալով դրան սկզբունքային կատարելության հասցնելու մեջ, քանի որ ամեն ինչ հանգում է ոստիկանական համակարգի վոխարինմանը այլ՝ հասարակական բնույթով, որը թույլ է տալիս նաև լայն տեղական նախաձեռնություն և փաստացի հասարակական վերահսկողություն:

Հայաստանում միություններն իրենց վրա պետք է վերցնեն այն նույն խնդիրները, ինչ-որ մյուս ճակատներում՝ պայքար վարակիչ հիվանդությունների դեմ և դրա համար տեղերում կազմակերպեն ամենազանազան հիմնարկություններ (բուժարաններ, հիվանդանոցներ, պարենային կրպակներ, սննդի կետեր) և իրենց ձեռքը վերցնեն տրանսպորտի, բնակչության տնտեսական վիճակի բարձրացման, գրանցման հարցերը և մի ամբողջ շարք գործողություններ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով կապված են սանիտարական խնդիրների հետ: Այդ բոլորի կատարման համար միությունները քաղաքներում, ավաններում, գավառներում և ավելի փոքր գավառային միավորումներում պետք է ստեղծեն վարչական բջիջներ, որոնց կազմի մեջ պետք է մտնի հայկական ողջ մտավորականությունը, որն այժմ սփռված է ամենուրեք: Այդ բջիջները գործի հաջողության համար պետք է օգտվեն տեղական բոլոր առողջ ուժերից:

Այդպիսի բջիջների ստեղծումը միությունների համար իրենից ոչ մի նոր բան չի ներկայացնում: Դժվարը և նորը այդ գործում հանդիսանում է բարեկարգման բնագավառից բարեպատշաճ բնագավառին անցնելու համար գործնական միջոցների հայթայթումը: Այդ միջոցներն այժմ դժվար է նշել, քանի որ այդ գործը զուտ տեղական է և կախված է գործնական սրամտությունից: Սակայն, իմանալով միությունների գործունեության ողջ պատմությունը, դժվար թե կարելի է կասկածել, որ միությունները և նրանց տեղական կազմակերպությունները, հենվելով զինվորական իշխանությունների ու գլխավոր հրամանատարության վստահության վրա, ինչպես նաև Պետական Դումայի օժանդակության վրա, այսպես թե այնպես կկարողանան դա անել:

Անհրաժեշտ է հենց հիմա, առանց որևէ հապաղման անցնել գործի: Գործի կատարման ժամանակ կազմակերպությունները մի շարք արգելքների կհանդիպեն, որոնք անհաղթահարելի են սովորական ժամանակ, սակայն աշխարհի կողմից վերապրող ճգնաժամի ժամանակաշրջանում անհաղթահարելի խոչընդոտներ չկան: Գործնական խնդիրը, եթե այն ճանաչվել է անհետաձգելի, պետք է կատարվի և կկատարվի:

Ն. Շչեպկին

"Армянский вестник", № 8, 1916г.
РИГАОИ, стр. 128-130.

№ 19

ԳԵՆԵՐԱԼ ՅԱՆՈՒՇԿԵՎԻՉԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ Մ. Ի. ՊԱՊԱՋԱՆՈՎԻՆ

10 ապրիլի 1916թ.

"Новое время"-ի մարտի 30-ի համարում հրատարակվեց Կովկասի փոխարքայի ռազմական գծով օգնական, գեներալ Յանուշկևիչի նամակը ի պատասխան Պետական Դումայում հայ պատգամավոր Պապաջանովի ունեցած ճառի: «Պարոն Պապաջանովը Պետական Դումայում մարտի 14-ին ունեցած ճառում երկու անգամ հիշատակեց իմ ազգանունը, կապելով այն իր տեսակետից ռազմական իշխանությունների ոչ ճիշտ գործողությունների հետ հայ բնակչության նկատմամբ ընդհանրապես և Էրզրումի հայ բնակիչների ունեցվածքի հետ մասնավորապես: Ընդորում, նա ափսոսանք հայտնեց, որ արտաքին գործերի նախարարությունն ինձ չի տվել ժամանակին անհրաժեշտ ցուցումներ:

Այնուհետև նա կարծիք արտահայտեց, որ եթե ես ստանայի այդ ցուցումները, ես, իհարկե, կհասկանայի իմ հրամանագրերի ողջ սխալականությունը: Ես սովոր եմ միշտ բացատրություններ տալ կամ պատասխանել սեփական իրական հրամանների և իրական ասված խոսքերի համար, և հնարավոր չեմ համարում պարոն Պապաջանովի հիշված ճառում ասված անհիմն բառերն այժմ թողնել առանց հերքման, ինչը կարող է հասարակությանը և Պետական Դումայի անդամներին հարցի ոչ ճիշտ լուսաբանման տեղիք տալ:

Ի պաշտոնե ես հանդիսանում եմ Կովկասի փոխարքայի ռազմական գծով օգնական և ոչ թե գլխավոր հրամանատար: Փոխարքայի իշխանությունը տարածվում է Կովկասի վարչական տարածքի վրա, իսկ գլխավոր հրամանատարի իշխանությունը տարածվում է պատերազմի ողջ թատերաբեմով մեկ: Որպես օգնական, ոչ մի ինքնուրույն սկզբունքային կարգադրություն անելու իրավունք չունեմ, չստանալով դրա համար հատուկ հրաման: Պարոն Պապաջանովի նշած դեպքերը, եթե անգամ տեղի են ունեցել, կատարվել են պատերազմի թատերաբեմում, այլ ոչ թե Կովկասի սահմաններում: Ընդ որում, դատելով հայտարարության տեքստից, եթե հերոսի նամակում նշված դեպքն անգամ տեղի է ունեցել, ապա, հավանաբար, իմ Կովկաս գալուց առաջ է եղել: Ինչ վերաբերում է հայերի ունեցվածքի հարցին, որն իբր թե ոչ ճիշտ կերպով ռազմական իշխանությունների կողմից բռնագրաված է Էրզրումում, այդ առիթով ես ունեցել եմ անձնական զրույց ինձ այցելած եպիսկոպոս Մեսրոպի հետ: Կասկածելով ինչ-որ ականատեսի կողմից նրա ստացած ասեկոսեների ստույգ լինելու վրա, բանակի համար կարևորություն չներկայացնող, անձնական ունեցվածքի բռնագրավման և օգտագործման մասին, ես հենց եպիսկոպոսի ներկայությամբ կազմեցի և ուղարկեցի հեռագրային հարցում՝ ուղղված համապատասխան պետին, խնդրելով հայտնել, ճիշտ են արդյոք այդ ասեկոսները և ընդգծել նաև առանձին անձանց կողմից մասնավոր ունեցվածքի օգտագործման անթույլատրելիությունը: Կատարված նախաքննությունը կտրականապես մերժեց այդ ասեկոսները: Այդ իսկ պատճառով չեմ կարող ափ-

սոսանք չհայտնել, որ պարոն Պապաջանովը այդքան հեշտ որոշեց Դումայի ամբիոնից ինձ վերագրել մի բան, որի հետ ես տվյալ դեպքում բացարձակապես առնչություն չունեմ»:

Յանուշկևիչ

"Армянский вестник", № 11, 1916г. стр. 17-18.

№ 20

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՊԱՊԱՋԱՆՈՎԻ ԵՎ ԳԵՆԵՐԱԼ ՅԱՆՈՒՇԿԵՎԻՉԻ ՄԱՍԻՆ

1916թ. ապրիլ

Գեներալի նամակը, անկախ դրա բովանդակությունից, հատկանշական է մի տեսակետից, դա այն է, որ նամակի հեղինակը, գեներալ Յանուշկևիչը, չնայած իր բազմաբնույթ զբաղմունքներին և պաշտոնական պարտականություններին, իրեն պարտավոր համարեց պարբերական մամուլում պատասխանի պատվի արժանացնել պատգամավոր Պապաջանովի ճառը:

Կասկած չկա, որ այդ ուշադրությունը ցուցաբերվեց ոչ այնքան հասարակական կարծիքի, որքան Պետական Դումայի նկատմամբ: Կասկածից վեր է, որ եթե պատգամավորի ճառը արտասանվեր ոչ Պետական Դումայում, այլ մեկ այլ, թեկուզև չափից դուրս մարդաշատ, հասարակական ժողովում, դա այն չէր լինի ինչ այս դեպքը նամակի հեղինակ գեներալ Յանուշկևիչի համար:

Պետական Դուման ավելի ու ավելի է վերածվում մի մարմնի, որի ձայնի հետ իրենց պարտավորված են համարում հաշվի նստել նաև մարդիկ, որոնք օժտված են բարձր իշխանությամբ: Հռետորը, որի ճառի դեմ գեներալը հարկ է համարել հանդես գալ առարկությամբ, պարոն Պապաջանովը չէ, այլ Պետական Դումայի անդամ պատգամավորը:

"Армянский вестник", № 12-13, 1916г., стр. 31.

№ 21

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ Մ.Ի. ՊԱՊԱՋԱՆՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԲՈՐԻՍ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՇՏՅՈՒՐՄԵՐԻՆ

Թիվ 118 հեռագրից
28 սեպտեմբերի 1916թ.

... Հայերը համաշխարհային պատերազմի սկզբից ի վեր չդավաճանեցին իրենց դարավոր ավանդույթներին և վճռականորեն կողմնորոշվեցին Ռուսաստանի կողմը, չնայած վերջերս կասկած հարուցող սպառնալիքներին:

Այս պատերազմում ում կողմը լինելու հարցի լուծման ժամանակ հայերը չտատանվեցին, չխորամանկեցին, չեն խաղացել երկակի դեր: Իրենց ֆիզիկական գոյության հրեշավոր վտանգի առաջ հայերը ասպետորեն անվախ և ազնվորեն հակված էին միայն զուտ ռուսասիրական մարտավարությանը:

Ռուսաստանի նկատմամբ իրենց համակրանքի համար թուրքահայերը վճարեցին լեռնային ժողովրդի համընդհանուր տեղահանությամբ Միջագետքի կիզիչ անապատները, խաղաղ բնակչության, կանանց, երեխաների զանգվածային ոչնչացումով և բառացիորեն արյան հեղեղներով: Ոչ մի ազգ ներկա պատերազմում չի կրել ավելի շատ զրկանքներ, քան հայերը:

Պետ. Դումայի պատգամավոր՝ Պապաջանով

АВПР, Политархив д. 3517, лл. 3-4.
РИГАОИ, стр. 193.

№ 22

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՆ ԵՎ ՀԱՅԵՐԸ

Մոսկվա,
13 նոյեմբերի 1916թ

Պետական Դուման կրկին հավաքվեց բացառիկ հանգամանքներում:

Եվ Դումայում հնչած առաջին իսկ խոսքերը երախտագիտության խոսքեր են, ուղղված մեր քաջակորով բանակին, անարգանքի խոսքերը՝ մյուս կողմին ուղղված, որոնք անմիջապես արձագանք ունեցան մեր ողջ երկրում: Պատգամավորների ճառերը՝ մեկը մյուսից վառ, մեկը մյուսից ավելի զայրույթով լի, դրությունը պարզեցրին՝ կասկածանքի ոչ մի տեղ չթողնող որոշակիությամբ:

Երկիրը, մի գուցե, Դումայի գոյության առաջին օրվանից՝ հունիսի 3-ից զգաց, որ ինքը կարող է հպարտանալ իր ներկայացուցիչներով: Քանի որ նրանք ասացին այն ամենը, ինչ որ կարծում էր, ինչ որ զգում էր ժողովուրդը:

Եվ, կրկնում ենք, ոչ միայն ռուս ժողովուրդն էր զգում այդ հանկարծակի ծնված սերտ կապը Դումայի հետ, այլև Ռուսաստանի բոլոր ժողովուրդները:

Նրանք, այդ փոքր ժողովուրդները, չէին մոռացվել պատգամավորների ճառերում, որոնք բնակեցնում են մեր անծայրածիր հայրենիքը, ռուսների հետ հավասարապես իրենց ուսերի վրա տանելով պատերազմի մեծ բեռը, որոնք հաղթանակից սպասում են իրենց ճակատագրի որոշակի բարելավում:

Դուման հիշում է Ռուսաստանի «ժողովուրդների» մասին, և դրա համար «ժողովուրդները» չեն կարող երախտապարտ չլինել Դումային, չեն կարող չզգալ, որ Դուման պայքարում է, իմիջիայլոց, նաև իրենց համար:

Հայ ժողովուրդը, մասնավորապես, առանց տարբերության, թե որ պետությանն են պատկանում իր բազմաչարչար բեկորները, հոգով ռուսական Պետական Դումայի հետ է: Նա չի կարող չզգալ, որ Դումայի հաղթանակից այժմ զգալի չափով կախված է Հայաստանի ամենաղժբախտ որդիների՝ թուրքահայերի ճակատագիրը: Քանզի ինչո՞ւմ է կայանում այն պայքարի գլխավոր իմաստը, որը տանում է Դուման: Այն կայանում է նրանում, որ մեր անզուգական բանակի ճանապարհից հեռացնել ոչ մարտական բնույթի խոչընդոտները, որպեսզի բանակին հնարավորություն տան հանդարտորեն, առանց տագնապի, հետ չնայելով, հասներ հաղթանակի թշնամու հանդեպ:

Գերմանիայի նկատմամբ հաղթանակը Հայաստանին ու հայերին այնպես է հարկավոր, ինչպես այն հարկավոր է ողջ քաղաքակիրթ աշխարհին: Գերմանիայի նկատմամբ հաղթանակը կլինի իրավունքի հաղթանակը նրա բացառման նկատմամբ, մշակույթի հաղթանակը նրա ոչնչացողների նկատմամբ, մարդասիրության հաղթանակը նրա դահիճների նկատմամբ: Միայն Գերմանիայի հանդեպ հաղթանակով կարող է ծնվել նորացված, ազատ Հայաստանը: Եվ, հակառակը, Գերմանիայի հաղթանակը կլինի հայ ժողովրդի լավագույն ապագայի բոլոր հույսերի վերջնական գերեզմանը:

Ահա թե ինչու Դումային, որ այժմ պայքարում է, եթե կարելի է այսպես արտահայտվել, հաղթանակին չընդդիմանալու համար, պայքարում Ռուսաստանի դաշնակիցների հետ ձեռք ձեռքի տված մեր ժամանակների մեծագույն հետաղիմական ուժին՝ գերմանական միլիտարիզմը ջախջախելու իրավունքի համար, հայ ժողովուրդը, գերմանական միլիտարիզմի զոհը, ողջունում է այդ Դումային: Գերմանացիների կողմից խաչված Հայաստանը ողջունում է ռուսական ժողովրդական ներկայացուցչությունը, որը ոգևորում է ռուսական բանակին, պահպանում նրան, նրա մեջ ամրապնդում է գերմանացիների նկատմամբ հաղթանակի հավատը: Քանզի ռուսական բանակի ձեռքում է, ինչպես նաև դաշնակից բանակների ձեռքում են հայ ժողովրդի բոլոր հույսերը:

Իսկ այժմ հայ ժողովուրդը բացի հույսից ոչինչ չունի:

"Армянский вестник", № 42, 1916г.
РИГАОИ, стр. 202-203.

№ 23

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԵՐԻ ՍԱՏՅԱՆԻՑ

N 63 *26 ապրիլի 1917*

Նիստին մասնակցում էին՝ վարչապետ իշխան Գ. Ե. Լվովը, արդարադատության նախարար Ա. Ֆ. Կերենսկին, ֆինանսների նախարար Մ. Ի. Տերեշչենկոն, երկրագործության նախարար Ա. Ի. Շինգարևը, հաղորդակցության ուղիների նախարար Ն. Վ. Նեկրասովը, արտաքին գործերի նախարար Պ. Ն. Միլյուկովը, Սրբազան Սինոդի օբեր-դատախազ Վ. Ն. Լվովը, ներքին գործերի նախարարի տեղակալ Պ. Մ. Շչեպկինը:

Նիստին մասնակցում էր պետական վերահսկիչ Ի. Վ. Գոդնևը:

Նիստը բացվեց ժամը 22-ին:

Լսեցին՝ 10. Ժամանակավոր կառավարության գործերի կառավարչի ներկայացրած զեկուցումը պատերազմի իրավունքով գրավված Թուրքահայաստանի շրջանների կառավարման հարցի մասին:

Որոշեցին՝ Հրապարակել ներքոհիշյալ որոշումը պատերազմի իրավունքով գրավված Թուրքահայաստանի շրջանների կառավարման մասին՝ «Ժամանակավոր կառավարությունը, հիմնվելով Հաագայի 5/8 հոկտեմբերի 1907թ. ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին կոնվենցիայի 42 և 43 հոդվածների վրա, այսուհետ, մինչև Թուրքահայաստանի վիճակի վերջնական որոշակիացումը խաղաղության պայմանագրով, որոշում է՝

Հոդված 1. Թուրքահայաստանի տարածքը, որը զբաղեցված է ռուսական իշխանությունների կողմից, քաղաքացիական ղեկավարման առումով դուրս է բերվում կովկասյան իշխանություններից, ինչպես նաև Կովկասյան ճակատի զինվորական մասերի իրավասությունից և ուղղակիորեն ենթարկվում է Ժամանակավոր կառավարությանը:

Հոդված 2. Հոդված 1-ում նշված իրավասությունների, ինչպես նաև իրավունքների մոտակա իրագործումը Թուրքիայից գրավված շրջանների կառավարման 1916թ. հունիսի 5-ի ժամանակավոր կանոնադրության հիման վրա, որը ներկայացված էր այդ շրջանների ռազմական գեներալ-ցահանգապետին, հանձնվում է Ժամանակավոր կառավարության կողմից նշանակված Թուրքահայաստանի գեներալ-կոմիսարին:

Հոդված 3. Թուրքահայաստանի գեներալ-կոմիսարին կից գործում է քաղաքացիական հարցերով օգնական:

Հոդված 4. Գեներալ-կոմիսարը քաղաքացիական հարցերով իր օգնականի զեկույցի հիման վրա անմիջականորեն Ժամանակավոր կառավարությանն է ներկայացնում իր առաջարկությունները 1916թ. հունիսի 5-ին Թուրքիայի շրջանների կառավարման Ժամանակավոր կանոնադրության մեջ ցանկալի լրացումների և փոփոխությունների մասին:

Մատյանների բնօրինակները ստորագրված են վարչապետի, նախարարների, Սրբազան Սինոդի օբեր-դատախազի և պետական վերահսկիչի կողմից, հաստատված են Ժամանակավոր կառավարության գործերի կառավարչի օգնականի կողմից:

Իսկականի հետ ճիշտ է:
Ժամանակավոր կառավարության գրասենյակի
բաժանմունքի պետ:

ԳԱՐՓ, ֆ. 1779, օп. 2, д. 3, л. 281.
ԳԱՕՏՕՄՀ, т. 1, с. 296-297.

№ 24

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՄԱՏՅԱՆ

N 7 *15 մայիսի 1917*

Նիստին մասնակցում էին՝ վարչապետ Գ. Ե. Լվովը, արտաքին գործերի նախարար Մ. Ի. Տերեշչենկոն, ժողովրդական լուսավորչության նախարար Ա. Ա. Մանույլովը, երկրագործության նախարար Վ. Մ. Չերնովը, արդարադատության նախարար Պ. Ն. Պերեվերզևը, պետական խնամակալության նախարար իշխան Դ. Ի. Շախովսկին, պարենավորման նախարար Ա. Վ. Պեշեխոնովը, աշխատանքի նախարար Մ. Ի. Սկոբելևը, Սրբազան Սինոդի օբեր-նախարար Վ. Ֆ. Լվովը, ներքին գործերի նախարարի տեղակալ Պ. Մ. Շչեպկինը, հաղորդակցության ուղիների նախարարի տեղակալ Ռ. Վ. Լիվերովսկինը, առևտրի և արդյունաբերության նախարարի տեղակալ Վ. Ա. Ստեպանովը և ռազմական նախարարի օգնական Գ. Ա. Յակուբովիչը:

Նիստը բացվեց ժամը 21-45-ին:

Նիստին մասնակցում էր պետական վերահսկիչ Ի. Վ. Գորդեևը:

I Լսեցին - Արտաքին գործերի նախարարի կողմից ներկայացված պատերազմի իրավունքով գրավված Թուրքիայի շրջանների գեներալ-կոմիսարի ղեկավարման դրույթների նախագիծը:

Որոշեցին – Պատերազմի իրավունքով գրավված Թուրքիայի շրջանների գեներալ-կոմիսարին փոխանցել հետևյալ ղեկավարման դրույթները՝

1. Չկանխորոշելով Հայաստանի աշխարհագրական և քաղաքական ապագա սահմանների հարցը, Ժամանակավոր կառավարությունը ներկայումս պատերազմի իրավունքով գրավված Ասիական Թուրքիայի շրջաններից բուն հայկական է համարում Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները:

2. Երկրի տնտեսության զարգացման շահերից ելնելով, ինչպես նաև հանուն արդարության և հայերի իրավունքների վերականգնման, որոնք կոտորածով և տեղահանությամբ ճնշվում են Թուրքիայի կողմից, հարկավոր է անհապաղ միջոցներ ձեռնարկել այդ շրջանները հայերով վերաբնակեցնելու ուղղությամբ, որոնք ընթացիկ պատերազմի և դրան նախորդող տարիներին տեղափոխվել են Ռուսաստանի սահմանները:

Նույն ձևով չպետք է որևէ արգելքներ դրվեն նախկին թուրքահպատակ այն հայերի առջև, որոնք ընդհանրապես ցանկանում են վերադառնալ և բնակվել այդ շրջաններում:

Ելնելով պատերազմի անավարտ լինելու հանգամանքից, ռազմաճակատի գծի հնարավոր տատանումներից և պատերազմի ու տրանսպորտային դժվարություններից, գեներալ-կոմիսարին առաջարկվում է բնակեցումն իրականացնել աստիճանաբար և ծրագրով, որը նախապես կհամաձայնեցվի հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

3. Ինչ վերաբերում է թուրքերին, քրդերին և լազերին, ապա նպատակ չունենալով որևէ դժվարություններ առաջացնել նշված շրջաններում մնացած կամ Ռուսաստանի սահմաններն անցած այդ ազգերի ներկայացուցիչների համար, ցուցաբերելով նրանց օրինական աջակցություն և հովանավորություն, այնուամենայնիվ, բանակի ռազմական ապահովման և հնարավոր ազգային բարդությունները կանխարգելելու նպատակով հարկավոր է այսուհետ, մինչև հատուկ կարգադրությունը, թույլ չտալ նրանցից որևէ մեկի վերադարձը, ովքեր հեռացել էին թուրքական զորքերի հետ:

4. Վարկերի հարցով, որոնք հարկավոր են երկրի և գաղթականների հարցերի կարգավորման, այդ շրջաններում գտնվող բանակին պարենով ապահովելու նպատակով, հարկավոր է զեկուցագրով դիմել Ժամանակավոր կառավարությանը:

Ներկայիս հանձնարարականի իրականացման հետ կապված ձեռնարկվող միջոցառումների մասին հարկավոր է ժամանակ առ ժամանակ զեկուցել Ժամանակավոր կառավարության նախագահին, ինչպես նաև արտաքին գործերի և ռազմական նախարարներին:

II Լսեցին – Որոշ պաշտոնատար անձանց նշանակումների մասին:

Որոշեցին – Նշանակել՝ 1) Կովկասյան ռազմաճակատի մատակարարման գլխավոր վարչության պետ գեներալ-լեյտենանտ Պյոտր Իվանի Ավերյանովին Թուրքահայաստանի գեներալ-կոմիսարի պաշտոնին, ելնելով Ժամանակավոր կառավարության 1917թ. ապրիլի 26-ի որոշումից Թուրքիայից պատերազմի իրավունքով գրավված տարածքների մասին, թողնելով նրան զբաղեցրած պաշտոնին և 2) Բժիշկ Հակոբ Քրիստափորի Զավրիևին նշակել պատերազմի իրավունքով գրավված Թուրքահայաստանի շրջանների գեներալ-կոմիսարի օգնական:

Նիստը փակված է ժամը 1.45:

Վարչապետ՝ իշխան Լվով:
Նախարարներ՝
ռազմական նախարարի փոխարեն գնդապետ Յակուբովիչ
արդարադատության – Պ. Պերեվերզև
արտաքին գործերի – Մ. Տերեշչենկո
հաղորդակցության ուղիների – Ն. Նեկրասով
առևտրի և արդյունաբերության
նախարարի փոխարեն - Վ. Ստեպանով
ժողովրդական լուսավորության - Ա. Մանույլով
ֆինանսների –
երկրագործության – Վ. Չերնով
փոստի և հեռագրատան –
աշխատանքի -
պարենավորման - Ա. Պեշեխոնով
պետական խնամակալության - իշխան Դ. Շախովսկի
Սրբազան Սինոդի օբեր-դատախազ -
Պետական վերահսկող –
Ժամանակավոր կառավարության գործերի
կառավարիչ – (ստորագրությունն անընթեռնելի է)

Նշում:
Ուղղարկված է պատճենահանման:
Հրապարակման՝ 25.V:
Կատարված է՝ հունիսի 3:

ГАРФ, ф. 1779, оп. 2, д. 4, л. 13-14.
ГАОТОМС, т. 1, с. 298-300.

Ա. Կ. ՋԻՎԻԼԵԳՈՎԻ ԾԱՌԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

20 նոյեմբերի 1917թ.

Պարոնայք, ժամանակավոր խորհրդի հայկական խմբի կողմից ես լիազորված եմ արտաքին գործերի նախարարի ճառում նշել մի որոշակի բացթողում, որը վերաբերում է Թուրքահայաստանի դրությանը: Հայ ժողովուրդն առանց կուսակցությունների ու քաղաքական ուղղությունների տարբերության ակնկալում էր արտաքին գործերի նախարարից լսել, որ ռուսական արտաքին քաղաքականությունն այսուհետ վճռականորեն հրաժարվում է հայ ժողովրդի նկատմամբ հին վերաբերմունքից: Հայ ժողովուրդը դա չլսեց արտաքին գործերի նախարարի ճառում, և հայ ժողովուրդը դա չի կարող ընկալել այլ կերպ, քան արտաքին գործերի նախարարության ցանկությունը հայ ժողովրդի նկատմամբ շարունակելու այն նույն քաղաքականությունը, որը ծաղկում էր նախքան հեղափոխությունը:

Հին ռուսական կառավարության քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ կայանում է նրանում, որ Թուրքիան Ռուսաստանի հետ բոլոր բախումներում և նույնիսկ այն պահերին, երբ ոչ մի բախում Ռուսաստանի հետ գոյություն չունի, պետք է թուլացած լինի: Թուրքիայի թուլացման քաղաքականությունն ընդունում էր տարբեր ձևեր, կախված նրանից, թե Ռուսաստանը որքանով էր իրեն ուժեղ զգում: Այս քաղաքականությունը ճիշտ հակառակ էր այն քաղաքականությանը, որը վարվում էր Անգլիայի կողմից մինչև Էդուարդ VII-ը, մինչև Գերմանիայի ռազմավարական շրջափակման գաղափարի առաջացումը, որն սկսվեց Թուրքական կայսրությունում առաջին մեծ արտոնություններ ստանալու պահին: Հին Անգլիայի և նոր Գերմանիայի քաղաքականությունը կայանում էր նրանում, որպեսզի Թուրքիան պահել որպես միացյալ տնտեսական համակարգ, այնպիսի տնտեսական համակարգ, որի նկատմամբ կարող էին օգտագործվել անգլիական և գերմանական կապիտալի ուժերը: Ռուսաստանը, տնտեսական առումով թույլ լինելով, Ռուսաստանը, որը երբեք վստահ չէր այն բանում, որ իր արտադրական ուժերը կգտնեն բավարար կիրառում Թուրքիայում, չէր կարող վարել նմանատիպ քաղաքականություն: Նրա սեփական քաղաքականությունը կայանում էր նրանում, որ թուլացնի Թուրքիային, որպես քաղաքական միասնություն և, հնարավորության սահմաններում, հասնել Թուրքիայի առանձին կտորների անջատմանը նրա տարածքից: Թե որքանով էր այս քաղաքականությունը հետևողականորեն վարվում հին իշխանության կողմից, երևում է նրանից, որ նույնիսկ այն պահերին, երբ ռուսական կառավարությունն ամեն կերպ պայքար էր տանում հեղափոխության դեմ, նույնիսկ այդ ժամանակ Ռուսաստանը պատրաստ էր աջակցել հեղափոխական և ազատագրական հոսանքները Թուրքական կայսրությունում, որպեսզի հասնի իր հիմնական նպատակի՝ Թուրքիայի թուլացման իրագործմանը:

Ալեքսանդր I-ը, Սրբազան միության ստեղծողն ու այդ գաղափարի գլխավոր ներշնչողը, Նիկոլայ I-ը՝ լեգիտիմիզմի սկզբունքների մարգարե-

ներից մեկը, այնուամենայնիվ, պաշտպանում էին հունական հեղափոխությունը և ամեն կերպ աշխատում էին, որ Թուրքիայից ազատվելու իր ձգտման գործում Հունաստանը ստանա Ռուսաստանի աջակցությունն այս կամ այն ձևով: Ալեքսանդր I-ը հովանավորում էր զույգ Իպսիլանտիներին և հետերիստներին, Նիկոլայ I-ը ուղարկեց իր նավատորմը Նավարին: Այս քաղաքականությունը վերջին ժամանակներում ավելի ու ավելի էր հանդիպում ընդդիմության այն լայն միջազգային համակարգի մեջ, որն ստեղծվել էր XIX դարի կեսերից սկսած: Եվ այն պահերին, երբ Ռուսաստանը չէր կարող հույս դնել այն բանի վրա, որ ուղղակի ուժով Թուրքիայից խլի նրա տարածքի այս կամ այն կտորը, Ռուսաստանը պաշտպանում էր ինքնորոշման ազատագրական ձգտումները Թուրքիայում: Այդպես էր վարվում ռուսական քաղաքականությունը Մակեդոնիայի նկատմամբ, այդպես էր վարվում նա նաև Հայաստանի նկատմամբ: Հայաստանի վերաբերյալ ռուսական այն տեսակետը, որ Հայաստանը պետք է լիներ ինքնավար, իր սկիզբը գտնում է 1877 թվականի պատերազմից: Սան-Ստեֆանոյի նախնական համաձայնագրում կար կետ, որտեղ խոսվում էր այն մասին, որ Հայաստանը պետք է ստանա վարչական ինքնավարություն: 1895թ. Ռուսաստանն այլ արևմտյան տերությունների հետ հարց բարձրացրեց այնպիսի լայն բարեռորոգումների մասին, ինչը մոտ էր հայկական շրջաններին ինքնավարություն շնորհելուն: Վերջապես այս պահերից վերջինը 1914թ. հունվարի 26-ի արձանագրությունը, նույնպես բարեռորոգումների հարցը դնում էր այնպես, որ խոսքը բացահայտ գնում էր ինքնավարության մասին:

Իսկ ինչպիսի՞ դեր էին խաղում հենց թուրքահայերը ռուսական կառավարության այս ամբողջ քաղաքական խաղում: Հայերը միշտ եղել են ռուս-թուրքական քաղաքականության զոհը: Զոհ լինելով հենց Թուրքիայի ներսում, հայերն ակամայից պետք է զոհ դառնային նաև ռուսական քաղաքականության համար: Անընդհատ զոհաբերվելով թուրքական պետական անհրաժեշտության զոհասեղանին, դրվելով պանթուրքիզմի գաղափարի զոհասեղանի վրա, Հայաստանը, որը սեպի նման խրված էր թուրքական տարածքում, չարիք էր թուրքական կառավարության աչքի առաջ, և նա վերջին ժամանակներս ձգտում էր բնաջնջել հայ ժողովրդին, որպեսզի դրանով իսկ լուծվեն բոլոր տնտեսական և քաղաքական խնդիրները, որոնք կանգնած էին իր առջև: Թուրքիայի այս քաղաքականությունը բացարձակապես նույնն էր ինչպես հին թուրքական իշխանության, այնպես էլ նոր ղեկավարների՝ երիտթուրքերի մոտ, որոնք կարճատև տատանումից հետո վերադարձան այն ուղու վրա, որի վրա կանգնած էր Աբդուլ Համիդը:

Ռուսաստանի համար հայերը նույնպես եղել են զոհեր, Ռուսաստանը խաղում էր հայկական շահերով այնպես, ինչպես և թուրքական կառավարությունը: Դուք, երևի թե հիշում եք Կոստանդնուպոլսում ռուսական դեսպաններից մեկի՝ իշխան Լոբանով-Ռոստովսկու* չար արտահայտությունը, որն ասում էր, որ ինքը ամենևին դեմ չէ «Հայաստանին առանց հայերի»:

Դուք հիշում եք, որ դեռևս պատերազմից առաջ, երբ արտաքին գործերի նախարարն էր Սազոնովը, հայերի և Հայկական հարցի նկատ-

* Ա. Բ. Լոբանով-Ռոստովսկին Թուրքիայում Ռուսաստանի դեսպան է եղել 1878-1879թթ., իսկ 1895-1896թթ. եղել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարար:

մամբ ռուսական կառավարությունում կար տարօրինակ տատանում, որը թույլ չէր տալիս ռուսական կառավարությանը գտնել անհրաժեշտ քաղաքական գիծը: Եվ այժմ, այն ժամանակ, երբ իշխանությունը պատկանում է արդեն հեղափոխական կառավարությանը, մենք տեսնում ենք արտաքին գործերի նախարարության քաղաքականության մեջ հին արտաքին քաղաքականության մեթոդների արձագանքը, Ռուսաստանի հայ ժողովրդի հանդեպ ունեցած հին վերաբերմունքի արձագանքը: Դեռևս օրերս արտաքին գործերի նախարարությունում քննարկվում էր հայ ռազմագերիների ազատ արձակելու հարցը, որոնք գերի էին վերցվել թուրքական զորքերի կազմում: Այս հարցը առայժմ բացասաբար է լուծվել: Եվ դա այն ամենից հետո, երբ հայերը տվել են տասնյակ հազարավոր կամավորներ, այն ամենից հետո, երբ հայկական զինվորական մասերը ներկայիս դրությամբ կրում են ծանր ռազմավարական խնդրի՝ թուրք-պարսկական թատերաբեմի և այնտեղ գտնվող անցումների պահպանության պատասխանատվությունը: Այժմ, երբ Ռուսաստանում վոխվել են կարգերը, հայերը չեն կարողանում ընկալել, թե ինչպես կարող է պահպանվել Հայաստանի նկատմամբ հին կառավարության քաղաքականության թեկուզև արձագանքը: Դեմոկրատական Ռուսաստանից հայերն սպասում են այլ վերաբերմունք, դեմոկրատական Ռուսաստանից հայերն սպասում են այլ քաղաքականություն Թուրքահայաստանի նկատմամբ: Հայերը հուսով են, որ դեմոկրատական Ռուսաստանը կկարողանա գնահատել և կկարողանա հասկանալ ինքնավարությանն ուղղված այն ծգտումները, որոնք բնորոշ են հայ ժողովրդին, և որոնք հայ ժողովուրդը հռչակում է այն ժամանակից ի վեր, երբ քաղաքանապես սկսեց գիտակցել ինքն իրեն: Դեմոկրատական Ռուսաստանն ապացուցեց, որ ինքն ի վիճակի է լուծել այն խնդիրները, որոնք հին կառավարության ուժերից վեր էին: Դեմոկրատական Ռուսաստանը լուծեց լեհական խնդիրը, որի լուծման վրա անօգուտ չարչարվում էր հին իշխանությունը: Եվ հայերը հույս ունեն, որ հայկական քաղաքականության մեջ, Հայկական հարցի վերաբերյալ ռուսական դեմոկրատիան կկարողանա ցույց տալ արտաքին գործերի նախարարությանը նոր ուղիներ:

Ռուս ժողովրդի պարտքը, ռուսական դեմոկրատիայի արժանապատվությունը հրամայականորեն պահանջում են, որ Հայաստանը չլինի թողնված բախտի քմահաճույքին, որպեսզի Հայաստանի վերաբերյալ տեսակետը, որպես փոքր ժողովուրդների ընտանիքի լիիրավ անդամ, մտցվի արտաքին գործերի նախարարության կողմից նրա քաղաքականության համակարգի մեջ:

Իսկ ինչպե՞ս են ներկայումս հայերը պատկերացնում իրենց ապագա քաղաքական կարգավիճակը: Հայերը կարծում են, որ Թուրքահայաստանի լրիվ ինքնորոշումն է հայկական հարցի լուծման միակ հնարավոր ձևը: Հայերը գտնում են, որ ազատ Հայաստանն իր մեջ պետք է ներառի վեց հայկական վիլայեթները՝ Էրզրում, Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր, Սվազ և Հայաստանի այդ վեց վիլայեթներին պետք է միացվի Կիլիկիայի տարածքը: Դրա հետ մեկտեղ այդ վեց վիլայեթներից և Կիլիկիայից պետք է կտրվեն այն սահմանային մասերը, որոնք արհեստականորեն հայկական շրջաններին 1877թ. պատերազմից հետո, միացվել են այն նպատակով, որպեսզի փոխեն հայկական և ոչ հայկական բնակչության թվային հարաբերակցությունն ի վնաս հայերի:

Ի՞նչ ճանապարհով կարող է վերականգվել ազատ Թուրքահայաստանի նոր տարածքը: Հայ ժողովուրդը գտնում է, որ ազատ Հայաստանը պետք է կազմավորվի միջազգային համաժողովի որոշմամբ: Հայերը հույս ունեն, որ միջազգային վեհաժողովը, որը, վերջապես, վերջ կդնի այս պատերազմին, հայերին կտա անգնահատելի պարգև, որը մի ժամանակ Շվեյցարիան ստացել էր Վիեննայի վեհաժողովից՝ ընդմիշտ չեզոքություն, և որ այդ ընդմիշտ չեզոքությունը Հայաստանին երաշխավորված կլինի բոլոր տերությունների ընդհանուր որոշմամբ: Միջազգային երաշխիքն այս առումով հանդիսանում է միակ ապավենն այն բանի, որ այդ չեզոքությունը երբեք և ոչ մի պայմաններում չի կարող խախտվել: Սակայն հայերը քաջ գիտակցում են, որ հենց հիմա, պատերազմի ավարտից հետո այդ նոր քաղաքական կարգը ներմուծելը շատ դժվար գործ է, ուստի հայերը կարծում են, որ պատերազմի ավարտից հետո, պետք է մտցվի ինչ-որ մի միջանկյալ քաղաքական դրություն, որը նույնպես պետք է երաշխավորված լինի բոլոր տերությունների կողմից: Ի՞նչ ձևով պետք է ապահովվի այն բանի երաշխիքը, որ միջանկյալ այդ դրության ժամանակաշրջանում հայ ժողովուրդը կարողանա անցնել իր ազգային գործի կարգավորմանը և իր քաղաքական կյանքի կարգավորման գործին: Այդ հարցի միակ լուծումը կլիներ մանդատը, որը կտրվեր միջազգային վեհաժողովի կողմից որևէ տերության կամ տերությունների որևէ խմբի, և հայ ժողովուրդը կողջուներ, եթե տերությունը, որին կհանձնվեր այդ մանդատը, լիներ Ռուսաստանի հանրապետությունը:

Կարծում եմ, պարոնայք, որ չեմ հանդիպի ձեր կողմից առարկության, եթե ասեմ, որ հայ ժողովրդի հին դարավոր մշակույթը, Հայաստանի դերն առաջավոր Ասիայում, որպես եվրոպական մշակույթի պաշտպանի, որպես դեմոկրատական հասարակարգի երկրի, որպիսին Հայաստանը եղել է նաև իր ազատ գոյության ժամանակ, երբ նա իրենից ներկայացնում էր անկախ պետություն, և այն ժամանակ, երբ ընկավ թուրքական լծի տակ, իրավունք է տալիս նրան, որ այժմ փոքր ազատ ժողովուրդների ընտանիքում Հայաստանը կարողանա գրավել իր արժանի տեղը: Մեկ այլ պատճառն այն բանի, որ Հայաստանը պետք է ստանա իր նոր ազատ կառավարումը, կայանում է նրանում, որ հանուն մշակույթի և հանուն ազատության, հանուն այն գաղափարների, որոնցով պաշտպանվում էին փոքր ազգությունների իրավունքները, որոնց համար էլ սկսվեց պատերազմը, Հայաստանը տվեց այդքան զոհ: Անհրաժեշտ չեմ համարում վերարտադրել ձեր առջև այն, ինչ կատարվեց 1915թ. Թուրքիայում, անհրաժեշտություն չկա վերականգնել ձեր աչքերի առաջ այն ցնցող դաժանությունները, այն անկարագրելի բարբարոսությունները, որոնք կատարվել են հայերի նկատմամբ: Անհրաժեշտություն չկա նշել նաև այն, որ Ռուսաստանի Հանրապետության սահմաններին անկախ Հայաստանի գոյությունը ոչ մի դեպքում սպառնալիք չի հանդիսանում Ռուսաստանի համար, որ ոչ մի անջատողական ձգտումների մասին ռուսական Հայաստանի կողմից խոսք անգամ լինել չի կարող: Խոսք անգամ լինել չի կարող երկու պատճառով՝ և՛ օբյեկտիվորեն և՛ սուբյեկտիվորեն. օբյեկտիվորեն՝ որովհետև երբեք անջատողականությունը չի առաջացել ուժեղ պետության մեջ, որի փոքր մասը ձգտեր դեպի թույլ պետությունը: Անջատողականությունը միշտ ծնվել է ուժեղ պետության մեջ՝ միշտ սնվելով փոքր պետությունը մաս-մաս անելու երա-

զանքներով: Ահա թե ինչու Ռուսաստանի և Հայաստանի միջև գոյություն չունեն օբյեկտիվ պատճառներ, որոնք կարողանային ձեր մոտ առաջացնել անջատողականության մտավախություն: Չկան նաև սուբյեկտիվ պատճառներ: Հայ ժողովուրդը այնքան երկար և ծանր է իր վրա կրել հին ռեժիմի տիրապետությունը, այնքան երկար է տառապել ցարիզմից և նրա ճնշումներից, որ ռուսահայերից և ոչ մեկի մոտ, որոնք բնակվում են Անդրկովկասի տարածքում, չի կարող միտք առաջանալ նոր Ռուսաստանի դեմ զենք բարձրացնելու մասին կամ քարոզչություն սկսել Ռուսաստանից անջատվելու նպատակով:

"Армянский вестник", № 43-44, 1917г., стр. 3-4.

№ 26

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԴԵԿՐԵՏԸ «ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ» ՄԱՍԻՆ*

29 դեկտեմբերի 1917թ.

Ժողովրդական կոմիսարների խորհուրդը հայ ժողովրդին հայտարարում է, որ Ռուսաստանի բանվորական և գյուղացիական կառավարությունը պաշտպանում է «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն:

Ժողովրդական կոմիսարների խորհուրդը գտնում է, որ այդ իրավունքի կենսագործումը հնարավոր է միայն մի շարք նախնական երաշխիքների ապահովման պայմանով, որոնք անվերապահորեն անհրաժեշտ են հայ ժողովրդի ազատ հանրաքվեի համար:

Ժողովրդական կոմիսարների խորհուրդն այդպիսի երաշխիքներ է համարում՝

1) Զորքերի դուրս բերումը «Թուրքահայաստանի» սահմաններից և հայկական ժողովրդական միլիցիայի անհապաղ կազմակերպումը՝ «Թուրքահայաստանի» բնակիչների անձի և ունեցվածքի անվտանգությունն ապահովելու նպատակով.

2) Տարբեր երկրներում սփռված գաղթական հայերի, ինչպես նաև վտարանդի հայերի անարգել վերադարձը «Թուրքահայաստանի» տարածք.

3) Պատերազմի ժամանակ թուրքական իշխանությունների կողմից բռնի ձևով Թուրքիայի խորքերն արտաքսված հայերի անարգել վերադարձը «Թուրքահայաստանի» տարածք, ինչը Ժողովրդական կոմիսարների խորհուրդը կպնդի թուրքական իշխանությունների հետ հաշտության բանակցություններ վարելիս.

4) «Թուրքահայաստանի» ժամանակավոր ժողովրդական վարչության կազմակերպումն իրականացնել դեմոկրատական հիմունքներով ընտրված հայ ժողովրդի պատգամավորների խորհրդի ձևով:

---

* Դեկրետը հաստատվել է 3-րդ համառուսաստանյան համագումարի կողմից 1918թ. հունվարի 15-ին (28-ին):

Կովկասի գործերի արտակարգ ժամանակավոր կոմիսար Ստեփան Շահումյանին հանձնարարվում է «Թուրքահայաստանի» բնակչությանն ըստ ամենայնի օժանդակել 2-րդ և 3-րդ կետերի իրագործման հարցում, ինչպես նաև ձեռնամուխ լինել խառը հանձնաժողովի ստեղծմանը՝ «Թուրքահայաստանի» տարածքից զորքերի դուրս բերման ժամկետն ու եղանակները սահմանելու համար (կետ 1-ին):

Ծանոթագրություն. «Թուրքահայաստանի» աշխարհագրական սահմանները որոշվում են հայ ժողովրդի դեմոկրատական եղանակով ընտրված ներկայացուցիչների կողմից, հարակից և վիճելի (մահմեդական և այլ) տարածքների դեմոկրատական եղանակով ընտրված ներկայացուցիչների համաձայնությամբ՝ Կովկասի գործերի արտակարգ ժամանակավոր կոմիսարի հետ համատեղ:

Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ
Վ. Ուլյանով (Լենին)
Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսար
Ի. Ջուղաշվիլի (Ստալին)
Ժողովրդական կոմիսարների խորհրդի գործերի կառավարիչ
Վ. Բոնչ-Բրուևիչ
Ժողովրդական կոմիսարների խորհրդի քարտուղար
Ն. Գորբունով

"Декреты Октябрьской революции", т. 1, Партиздат, М., 1933, с. 393-394.
ГАОИ, стр. 491-492.

II. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅՈՒՄ

Ա. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՆԵՐ ԼՈՐԴԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ (1915-1918թթ.)

1. ՁԵԿՈՒՅՑՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

28 հուլիսի, 1915թ.

ՎԻԿՈՆՏ ԲՐԱՅՍ իր զեկուցման մեջ ընդգծել է հետևյալ հարցը.

Հարցնել խորհրդի լորդ նախագահին, թե արդյո՞ք Նորին գերազանցության կառավարությունը որևէ տեղեկություն ունի քրիստոնյա բնակիչների կոտորածների մասին, որոնք, ըստ զեկուցագրերի, իրականացվել են թուրքերի կողմից Զեյթունի, Մուշի, Դիարբեքիրի, Բիթլիսի շրջաններում, և այլուր, որտեղ ապրում են հայեր, որոշ շրջանների բնակիչների զանգվածային տեղահանությունների մասին դեպի Փոքր Ասիայի կենտրոնական մասերը և Միջագետքի անապատային շրջանները, և եթե այս զեկուցագրերը վստահելի են, կառավարությունը որևէ մտադրություն ունի որևէ քայլ ձեռնարկել Հայաստանի քրիստոնյա բնակչության կոտորածից փրկվածներին փրկելու ուղղությամբ:

Ազնվազարմ լորդն ասաց. «Հարգելի լորդեր, չեմ կարող ասել, թե որքանով է հավանական, որ Նորին գերազանցության կառավարությունը որևէ որոշակի և վստահելի տեղեկություն ունենա այն մասին, թե ինչ է իրականում տեղի ունեցել Փոքր Ասիայի արևելյան մասում, Հայաստանում և այլուր, սակայն ինձ հասած տեղեկություններից որևէ կասկած չունեմ, որ տեղի են ունեցել ահավոր կոտորածներ: Այս տեղեկությունները գալիս են մասամբ Ըվեյցարիա և Փարիզ Թիֆլիսից, Պետրոգրադից և Կոստանդնուպոլսից: Ասվում է, որ ամբողջ Հայաստանով մեկ՝ Տավրոսի լեռներում, հյուսիս-արևելքից դեպի ռուսական ու պարսկական սահմանները և հատկապես Զեյթունի, Մուշի, Դիարբեքիրի և Բիթլիսի շրջաններում տեղի են ունեցել զանգվածային կոտորածներ, որին զոհ են գնացել բազմաթիվ հայեր: Հույս ունեմ, որ ինձ հասած տեղեկությունը չափազանցված է, ինչպես հաճախ լինում են Արևելքից ստացված լուրերը, և եթե Նորին գերազանցության տրամադրության տակ կա որևէ տեղեկություն, որը կմեղմացնի տեղեկությունները սարսափների վերաբերյալ, մենք միայն ուրախ կլինենք:

Ըստ ինձ հասած լուրերի զանգվածային մեծ կորուստ է եղել հատկապես Մուշում, մի այլ տեղում կոտորել են բոլոր տղամարդկանց, որոնց կարողացել են բռնել, դուրս են տարել և գնդակահարել են, իսկ կանանց ու երեխաներին՝ թվով 9000 հոգի, տարել են Տիգրիսի ափը, նետել են գետն ու խեղդամահ արել: Նման արհավիրքների մասին զեկուցում են այլ վայրերից, հատկապես Զեյթունից, որտեղ բնակիչները բոլորն են ռազմաշունչ մարդիկ են: Նրանք գրավել էին մի դաշտավայր, որը դժվարամատչ էր, բնակիչներին թուրքերը կանչել էին զինվորական ծառայության, իսկ երբ նրանք սպառնացել էին, թե կդիմադրեն, թուրքերը պատրաստվեցին հարձակվելու Զեյթունի վրա և շարունակեցին գրավել ճանապարհները, որոնք խիստ հսկողության տակ էին, բայց մարդկանց հաջողվեց բավականին

լավ պաշտպանվել: Սակայն ներքևում գտնվող մի քանի քաղաքների թուրք կառավարչից լուր ստացվեց, որ եթե Զեյթունի բնակիչները շարունակեն դիմադրությունը, այդ քաղաքների հայերը կոչնչացվեն: Այս սպառնալիքի տակ զեյթունցիները համաձայնվեցին թուրքերին թույլ տալ բարձրանալ ավելի վերև, որտեղ գտնվում է քաղաքը: Երբ թուրքերը տեղ հասան, անմիջապես բռնեցին բնակիչներին, տարան կանանց ու երեխաներին և այն տղամարդկանց, որոնք չէին հասցրել փախչել լեռները: Չպահելով իրենց խոստումը, թուրքերը չխնայեցին նաև ներքևի գյուղերի բնակիչներին: Ինձ հասած տեղեկություններից ես հասկանում եմ, որ որոշ դեպքերում փաստորեն տեղահանվել է ողջ բնակչությունը, որոնցից ոմանք ուղարկվել են Փոքր Ասիայի կենտրոնական շրջանները, մասնավորապես Անկարայի շրջակայքը, որտեղ նրանց բնակեցրել են ճահճուտ և ախտածին մի վայրում: Մի մասն ուղարկվել է Միջագետք, Դեյր-էլ-Զորի անապատը, որտեղ նրանք հանդիպում են մեծ դժվարությունների ուտելիք գտնելու հարցում և այնտեղ նրանք գտնվում են քոչվոր արաբական ցեղերի հարևանության մեջ:

Որքան գիտեմ, սրանք են փաստերը: Պարզվում է, որ սուլթան Աբդուլ Համիդի նպատակը անել հնարավոր ամեն ինչ քրիստոնյա բնակչության ոչնչացման ուղղությամբ, այժմ իրականացվում է սարսափելի ջանասիրությամբ, իսկ որոշ տեղերում բնակեցնում են երկրի այլ շրջաններից այստեղ բերված մուսուլմաններին՝ լրացնելով այն դատարկ վայրերը, որոնք առաջացել են քրիստոնյաներին ոչնչացնելուց հետո: Իհարկե, այստեղ առաջատար դեր են ունեցել քրդերը, և ձեզանից նրանք, ովքեր հիշում են 1895 և 1896թ. սարսափելի դեպքերը, կհիշեն, որ այն ժամանակ մեղավոր էին քրդերը, և կարիք չկա ասելու, որ ներկայումս նրանց մասնակցությունն ուղեկցվել է բազմաթիվ կանանց բռնաբարություններով: Չգիտեմ, թե հնարավոր է արդյո՞ք որևէ բան անել այս պայմաններում: Դեռևս կարծում եմ, որ ճիշտ կլինի, որ դուք՝ լորդերդ, իմանաք այս փաստերը, և եթե Նորին գերազանցության կառավարությունը կարող է որևէ տեղեկություն հաղորդել, մենք միայն ուրախ կլինենք:

Մոտավորապես երեք ամիս առաջ, երբ թուրքական իշխանությունները սպառնում էին սպանել բազմաթիվ հայերի Եվրոպական Թուրքիայում՝ նկատի ունենալով բազմաթիվ մարդկանց դատապարտումը, որոնց մեղադրում էին «դավադրության» մեջ, մեր Ֆորին Օֆիսը, հավանաբար ընդհանրապես Միացյալ տերությունների կողմից զգուշացրեց նրան, որ այդպիսի հանցագործությունների համար պատասխանատուները մեղավոր կճանաչվեն պատերազմի ավարտից հետո, և ջանք չի խնայվի նրանց արժանիորեն պատժելու համար: Ես չգիտեմ, թե արդյոք որևէ ճնով կարելի է հասկացնել թուրքական կառավարությանը, գուցե թե Ամերիկյան դեսպանության միջոցով, որ նրանց այժմյան վարքը կհիշվի և իր ազդեցությունը կունենա պատերազմի ավարտից հետո Միացյալ տերությունների ձեռնարկած գործողությունների վրա: Եթե որևէ լավ գործ պետք է անենք այդ քայլով, թողնում ենք Նորին գերազանցության կառավարության որոշմանը: Սակայն ամեն դեպքում ես հուսով եմ, որ նրանք այդ հարցը կմտապահեն և հետագա եզրակացության կգան, որ թուրքական կառավարության հասցրած վնասները անփարատելի են, և մենք չպետք է հուսանք, որ ամենախիստ միջոցներից բացի ոչինչ բավարար չի լինի, երբ ժամանակը գա

իրականացնելու վերականգնողական միջոցառումներ՝ ապահովելու համար այդ երկրի դժբախտ քրիստոնյաների անվտանգությունը:

ԿՈՄՄ ԿՐՈՄԵՐ - Հարգելի լորդեր, ես լիովին համակրում եմ և վստահ եմ, որ Նորին գերազանցության կառավարությունը ևս, այն զգացմունքին է, որը ներշնչել է վիկոնտին՝ բարձրացնելու այդ հարցը: Ինչպես գիտենք բոլորս, հայերի ճակատագիրն անցյալում սարսափելի է եղել, գիտենք նաև այն մշտական հետաքրքրությունը, որ նրանց ճակատագրի հանդեպ երկար ժամանակ տածում է ազնվազարմ վիկոնտը: Վախենում եմ, որ նրանց դժվարությունները չեն թեթևացել Թուրքիայում աճող գերմանական ազդեցության հետևանքով, հակված ենք մտածելու ճիշտ հակառակը: Դժվարությունը ինչ անելն է, և խոստովանում եմ, որ ավելի գործնական առաջարկություն անել չեմ կարող, քան այն, ինչ առաջարկում է ազնվազարմ վիկոնտը: Միակ բանը, որ պետք է անել ամերիկյան դեսպանի միջոցով Օսմանյան կառավարությանը նոր զգուշացում տալն է: Ամեն դեպքում, այդ կառավարության ուշադրությունը կրկին այդ դժբախտ ժողովրդի վրա հրավիրելու արդյունքը կունենա և գուցե մի փոքր կթեթևացնի նրանց դրությունը: Վախենում եմ, որ դրանից ավելին մենք անել չենք կարող:

ՔԵՆԹԲԵՐԻԻ ԼՈՐԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ - Հարգելի լորդեր, կարծում եմ պալատը և երկիրը պետք է երախտապարտ լինեն ազնվազարմ վիկոնտին՝ այս հարցը հասարակության ուշադրությանը ներկայացնելու համար, ինչպես արտասահմանում, այնպես էլ մեր երկրում: Որոշ դեպքերում, որոնց վերաբերյալ կարիք չկա անհանգստացնելու լորդերին, ինձ բախտ է վիճակվում հաճախակի հաղորդակցվել այն անձանց հետ, ովքեր գործ են ունենում քրիստոնյաների հետ որոշ չափով այլ միջավայրում, չնայած ոչ շատ տարբեր, որին անդրադառնում է ազնվազարմ վիկոնտը՝ այսինքն քրիստոնյաների հետ, որոնք ապրում են Պարսկաստանի և Թուրքիայի սահմանում՝ Ուրմիայում, որտեղ շատ քրդեր կան: Վերջին մի քանի ամիսների ընթացքում ստացել եմ նամակներ, որոնք տալիս են սարսափելի տեղեկություններ այն իրավախախտումների և կոտորածների մասին, որոնք իրականացնում էին թուրքերն այն ժամանակ, երբ ժամանակավորապես գրավել էին այն տարածքները, որ այժմ ռուսների տրամադրության տակ են: Այդ հաղորդումներում ամենացավալին այն ողբն է, որ բարձրացրել են նրանք, ովքեր գրում են, որ Եվրոպայում կարծես ոչինչ չգիտեն կամ չեն անհանգստանում այդ խնդրի վերաբերյալ: Ես չեմ կարող չենթադրել, որ ազնվազարմ վիկոնտի և ազնվազարմ կոմսի ասածները մի օր ի վերջո կհասնեն նրանց ու նրանց ընկերներին ամենուր, և բոլոր դեպքերում չէ, որ առանց ցանկության գործնական համակրանք է ցուցաբերվում, երբ լսում ենք հաղորդումներ տեղի ունեցած արհավիրքների մասին: Այս պահին ռուսները գրավել են Ուրմիան, նրանց ձեռքում է նաև լեռնան ստորոտում գտնվող հարթավայրը և կարևոր է, որ մեր դաշնակիցն իմանա, որ մենք լարված սարսափով ենք հետևում այն դեպքերին, որոնք տեղի են ունեցել այդ շրջաններում թուրքերի գրաված ժամանակ: Որքան էլ, որ անհետևանք լինի այստեղ այսօրվա ասվածը, այն չի կարող բոլորովին անօգուտ լինել, քանի որ այն ցույց կտա, որ մենք ջանք չենք խնայում հնարավորին չափ ընդլայնելու մեր ազդեցությունը, որպեսզի թեթևացնենք այդ ժողովրդի դրությունը, որի սարսափը գրեթե անհնար է չափազանցնել:

Եթե վիկոնտը ճշտորեն է տեղեկացված իրերի վիճակին, ուրեմն մոտենում է քրիստոնյաների բնաջնջումն այդ շրջանում, որը հուսով ենք, որ հետագայում կգտնվի քրիստոնյաների հսկողության տակ: Լավ է, որ իմացվի, որ մենք կույր չենք բարելավման կարիք ունեցող արհավիրքների հանդեպ և այն անօրինականությունների հանդեպ, որոնք ուզում ենք պատժել:

ՄԱՐԿԻԶ ԿՐՅՈՒ - Հարգելի լորդեր, վշտացած եմ ասելու, որ իմ ազնվազարմ ընկերոջ բարձրացրած խնդրի վերաբերյալ Ֆորին Օֆիսի ունեցած տեղեկություններն այնքան մանրամասն չեն, սակայն համընկնում են նրա ասածների հետ: Վախենում եմ, որ, անկասկած, ընդհանուր փաստերն հենց այնպիսին են, ինչպես նկարագրեց իմ ազնվազարմ ընկերը: Ազնվազարմ վիկոնտը և գերապատվելի գահերեց արքեպիսկոպոսը պալատին հիշեցրեցին, որ մի երկու ամիս առաջ Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունների հետ փոխադարձ համաձայնությամբ բողոք է ներկայացվել մինչև այդ օրը՝ մայիսի 24-ը, տեղի ունեցած կոտորածների կապակցությամբ այն մասին, որ Օսմանյան կառավարության անդամներն ու նրանց բոլոր գործակալները, որոնք, եթե պարզվի, որ փաստորեն ներգրավված են եղել, անձամբ կենթարկվեն պատասխանատվության իրականացված հանցագործությունների համար: Այն ժամանակից ի վեր այդ հանցագործություններն ավելացել են թվով և դաժանությամբ: Ջանգվածային կոտորածներն ու տեղահանությունները իրականացվել են անհրաժեշտ տեղահանման պատրվակով, տեղի են ունեցել օրենքի մի շարք այլ կոպիտ խախտումներ, ինչպիսիք նկարագրում է իմ ազնվազարմ ընկերը: Ի հավելումն, տեղի են ունեցել նման հանցագործություններ Պարսկաստանի սահմանում նեստորական քրիստոնյաների դեմ, դրանց անդրադարձավ գերապատվելի գահերեց արքեպիսկոպոսը: Մենք վստահ ենք նաև, որ ինչպես նշեց ազնվազարմ կոմսը, որ այդ հանցագործություններին հավանություն են տվել, որոշ դեպքերում, նույնիսկ հրահրել են Թուրքիայում գտնվող գերմանացի պաշտոնյաները, որոնց ներկայությունը և ունեցած ազդեցությունը բացարձակ և ակնհայտ անեծք է Թուրքիայի և՛ քրիստոնյա, և՛ մուսուլման բնակչության համար: Այդ պաշտոնյաները ամենացինիկ անտարբերությունն են ցուցաբերել երկրի և այնտեղ բնակվող մարդկանց բարօրության հանդեպ: Ինչպես հայտարարեցին բոլոր ելույթ ունեցողները, ճշմարիտ է, որ պատերազմի ընթացքին հետևող ցանկացած ոք, գիտե, որ ոչ մի անմիջական քայլ չենք կարող ձեռք առնել այս դաժանությունները ճնշելու ուղղությամբ: Այն ամենը, ինչ կարող ենք անել այս պահին կրկնելն է, կրկնել շեշտելով մեր մտադրությունը, ներկայացված ավելի շեշտված մինչ անցնում են շաբաթները, և այս հանցագործությունների մասին բերել նորանոր վկայություններ, որ նրանք, ովքեր պատասխանատվություն կկրեն դրանց համար, թե՛ իրենց ուղղակի մասնակցության, թե՛ դրանք հրահրելու համար, և ավելին, հակված եմ ասելու, որքան ավելի բարձր և ավելի պատասխանատու լինի նրանց գրաված պաշտոնը, այնքան ավելի համապատասխան պատիժ կստանան:

Աղբյուր՝ *1. House of Lords, Hansard (5th series) vol. XIX, 28 July, 1915, col. 774-78, F0371/2488/108070.*
2. British Parliamentary Debates on the Armenian Genocide, 1915-1918 Intruduced by Ara Sarafian and Eric Avebury, London, 2003, pp. 1-4.

2. ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

6 հոկտեմբերի, 1915թ.

ԿՈՄՍ ԿՐՈՄԵՐԸ բարձրացավ կանգնեց հարցնելու.

1. Արդյո՞ք Նորին գերազանցության կառավարությունը ստացել է որևէ տեղեկություն, որը կհաստատի մամուլի այն հայտարարությունը, թե տեղի են ունեցել հայերի զանգվածային նոր կոտորածներ,

2. Արդո՞ք այն հայտարարությունները, որ Գերմանիայի հյուպատոսական պաշտոնյաները մեղսակից են այդ կոտորածներին, ունեն որևէ հիմնավոր վկայություն,

3. Արդո՞ք վերջերս եղել են Դռանը ուղղված հայտարարություններ խնդրի առնչությամբ.

Ազնվազարմ կոմսն ասաց. «Հարգելի լորդեր, իմ կողմից բարձրացված երեք հարցերը բացատրության կարիք ունեն: Վերջին մի քանի օրերի ընթացքում երկիրը ցնցվեց հայերի նոր կոտորածների մասին նոր հաղորդումներից: Նրանք վերսկսել են ավելի մեծ մասշտաբով, քան նրանք, որոնք սարսափահար էին արել ողջ քաղաքակիրթ աշխարհին մի քանի տարի առաջ: Կարդացի, որ զոհերի թիվը հասնում է 800000-ի: Կարծես թե, թիվն անհավանական է, և հուսանք՝ շատ չափազանցված: Ուզում եմ Նորին գերազանցությանը հարցնել, թե արդյոք որևէ վստահելի տեղեկություն ունի և կարող է ասել, թե ինչ է տեղի ունեցել իրականում:

Մամուլում նաև հայտարարվել է, որ գերմանական հյուպատոսության որոշ պաշտոնյաներ մասնակից են եղել այդ արհավիրքներին՝ կազմակերպելով և ոգեշնչելով դրանք: Գրեթե անհավանական է թվում, որ իրեն քաղաքակիրթ կոչող որևէ կառավարություն կամ նրա գործակալները կարող են մասնակից լինել այսպիսի գործողությունների: Այսուս կողմից, ազնվազարմ վիկոնտի՝ լորդ Բրայսի, զեկուցագրից մենք գիտենք, թե ինչպիսին է եղել գերմանական բանակի վարքը Բելգիայում, Ֆրանսիայում, գերմանական զորքերի վերաբերյալ ֆրանսիական կառավարության ներկայացրած ոչնչացնող մեղադրանքներից գիտենք, թե ինչպես են նրանք իրենց պահել այնտեղ: Ավելին, բացի նրանից, թե ինչպիսին կարող է լինել գերմանական կառավարության կարծիքը, մենք վկայություններ ունենք, թե ինչպիսին է առաջադեմ գերմանացիների կարծիքը: Պալատ գալուց անմիջապես առաջ պատահաբար վերցրեցի մի երեկոյան լրագիր և տեսա հատված մի նամակից, որը հարգելի լորդերին ծանոթ տխրահռչակ կոմս Ռևենթլոն ուղղել էր մի գերմանական լրագրի, և այն հիասքանչ կերպով է բնութագրում խնդրի վերաբերյալ գերմանական տեսակետը: Ահա թե ինչ է ասում կոմս Ռևենթլոն.

«Եթե թուրքական իշխանությունները վստահ են, որ հարմար պահն է խիստ միջոցառումներ ձեռք առնել անվստահելի արնախում, վրիժառու հայ տարրերի դեմ, ոչ միայն ճիշտ, այլև նրանց պարտքը կլինի այդպես վարվել: Թուրքիան պետք է վստահ լինի, որ գերմանական կայսրությունը միշտ էլ այն կարծիքին կլինի, որ հարցը վերաբերվում է միայն Թուրքիային»:

Երբ կոմս Ռևենթլոն գրում էր այս տողերը և հայերին անվանում արնախում, կարծում եմ մոռացել էր գայլի ու գառան մասին առակի

բարոյական խրատը: Չեմ պատկերացնում, որ կարող է լինել որևէ վստահելի վկայություն, որն ապացուցի գերմանական կառավարության կամ նրա գործակալների մասնակցությունը այս կոտորածներին: Սակայն, երբ մենք ի նկատի ենք ունենում այժմ Կոստանդնուպոլսում իշխող գերմանական կառավարության հրամայողական ազդեցությունը, ցանկացած մարդ, ով ծանոթ է Արևելքին, կունենա այն կարծիքը, որ գերմանական կառավարությունը բարոյական պատասխանատվությունից չի կարող ազատվել, քանի դեռ չի ապացուցվել, որ իմանալով թուրքական կառավարության գործողությունների այդ հարցում, նա ձեռք չի առել ամենախիստ ու վճռական քայլերը դրանք դադարեցնելու ուղղությամբ:

Ինչ վերաբերվում է երրորդ հարցին, դուք՝ լորդեր, գուցե հիշեք, որ արձակուրդներից առաջ կարճ քննարկումներ եղան հայկական հարցի շուրջ, որոնք սկսեց ազնվազարմ վիկոնտ Բրայսը՝ Լորդերի պալատի նախագահ ազնվազարմ մարկիզը, համակրանքով պատասխանելով ազնվազարմ վիկոնտին, հայտարարեց, որ հենց այն դեպքն է, որ ներկա հանգամանքներում ոչինչ ավելին չի կարելի անել թուրքական կառավարության գործողություններին վերջ դնելու համար և շարունակեց, ասելով, որ Օսմանյան իշխանություններին զգուշացումներ են արվել՝ հիշեցնելով իրենց պատասխանատվությունը և ասելով, որ երբ գա հարմար առիթը, նրանք ապագայում հաշիվ կտան իրենց վարքի համար: Եվ ես կարծում եմ, որ քննարկումների ընթացքում եղավ առաջարկություն ազնվազարմ վիկոնտի կամ իմ կողմից, չեմ հիշում, թե ում կողմից, որ խելամիտ կլինի խնդրի վերաբերյալ զգուշացում կատարել Օսմանյան իշխանություններին ամերիկյան դեսպանության միջոցով կամ այլ կերպ: Ես ուզում եմ Նորին գերազանցության կառավարությանը հարցնել, թե արդյոք կարելի է այդպիսի որևէ բան անել, եթե այո, ապա ինչ արդյունք կունենա այն: Ներկա պահին ես կլինեմ վերջինը, որ ցանկություն կունենամ որևէ հարց տալ արտաքին քաղաքականության վերաբերյալ, որը կարող է անհանգստություն պատճառել Նորին գերազանցության կառավարությանը, սակայն վստահ եմ, որ ազնվազարմ մարկիզը՝ պալատի նախագահն ու նրա գործընկերները կհամաձայնվեն ինձ հետ, որ այս մասնավոր դեպքում ցանկալի է ամենալայն հասարակայնացումը:

Կան բազմաթիվ մասնավոր պատճառներ, թե ինչու է պետք հասարակայնացնել այս փաստերը: Նախ, շատ ցանկալի է բաց չթողնել ոչ մի հնարավորություն մեր երկրի բնակիչներին տեղեկացնելու համար, թե ինչի համար ենք մենք պայքարում: Մենք պայքարում ենք շատ բաների համար, և հուսով եմ, դրանցից մեկը, որին կհասնենք մինչև պատերազմի ավարտը, այն է, որ Հայաստանն այլևս, ինչպես եղել է անցյալում, վախենում եմ նաև հիմա, չի լինի թուրքական սպանդանոց: Երկրորդը, մենք պետք է հիշենք, որ ունենք մոտավորապես 70000000 մահմեդական հպատակներ, որոնք, բնականաբար, համակրում են իրենց կրոնակիցներին և նրանցից ոչ մի վատ բանի չեն սպասի, եթե ապացույց չունենան: Ես համոզված եմ, որ Հնդկաստանի բոլոր կրթված մահմեդականները մեծ սարսափով կհետևեն նրան, թե մենք ինքներս ինչ ենք անում Թուրքիայում տեղի ունեցող դեպքերի առնչությամբ:

ՄԻ ՔԱՆԻ ԱԶՆՎԱԶԱՐՄ ԼՈՐԴԵՐ - Լսե'ք, Լսե'ք:

ԿՈՄՍ ԿՐՈՄԵՐ - Սակայն, նախքան կարծիք կազմելը, նրանք պետք է ունենան տեղեկություն, և երբ ունենան, չեմ կարծում, որ նրանք մեր արարքը համարեն վիրավորանք մահմեդական կրոնի և ուղղամիտ մահմեդականների զգացմունքների հանդեպ, և որևէ ձևով չեն նույնացնի իսլամի նպատակը Կոստանդնուպոլսի կառավարության նպատակի հետ: Կարծում եմ, ցանկալի է ձևավորել նաև եգիպտացիների կարծիքը: Եգիպտացիների այն սերունդը, որը տառապել է թուրքական լծի տակ, այժմ մահանում է, և կարծում եմ, ցանկալի է ներկա սերնդին հիշեցնել, թե ինչ է նշանակում թուրքական լուծ:

Կա մի պատճառ ևս, որի համար հասարակայնացում եմ պահանջում: Վերջին օրերին լսեցի, որ Մերձավոր Արևելքի շատ կարևոր քրիստոնեական մի համայնք վտարանդի արքայազնի հովանավորությամբ և պրոգերմանական ազդեցության տակ պատրաստ է գործելու ոչ միայն լուրջ քաղաքական սխալ, այլև, համարձակվում եմ ասել, կատարելու քաղաքական երախտամոռության ամենաստոր արարքներից մեկը՝ երբևէ հայտնի աշխարհին պատմությունից: Ես չեմ կարծում, որ այն ինչ ասվում է պալատի ներսում կամ նրա պատերից դուրս, կհասնի Բուլղարիայի հասարակությանը: Եթե ճիշտ եմ տեղեկացված, այդ երկրում մամուլի մեծ մասը գերմանացիների ձեռքում է: Միաժամանակ, կարծում եմ, ամեն ինչ պետք է անենք ցույց տալու բուլղարացիներին, թե ինչ միջոցներ են կիրառվում մի այլ կարևոր քրիստոնյա համայնքի դեմ նրանց կողմից, որոնց հետ նրանք մոտ են մտնելու, ես կասեի, մի շատ անբնական համաձայնության մեջ: Բուլղարացիներն իրենք էլ շատ են տառապել թուրքական լծի ներքո, որ գրեթե անհավանական է, որ նրանք չկարեկցեն հայերին, որոնք այժմ տառապում են օսմանյան տիրապետության տակ:

Նախքան նստելը կցանկանայի մի ակնարկ ևս կատարել: Ես թուրքատյաց չեմ և երբեք էլ չեմ եղել: Ես ընդունում եմ թուրք ազգության առնական տղամարդկային հատկությունները և կարծում եմ այս առնչությամբ նրանցից շատերին պետք է կարեկցել: Ես անձամբ հավատում եմ, որ եթե թուրքերը թողնվեին իրենք իրենց, նրանք կցանկանային խաղաղ ապրել Արևմտյան տերությունների և հատկապես Անգլիայի հետ: Դժբախտաբար նրանք ընկել են մի ցեղ խմբավորման ձեռքը, որոնք կանխատեսություն չունեն հասկանալու, որ այս պատերազմի մեջ մտնելով՝ նրանք ընդմիշտ դատապարտել են Օսմանյան կայսրության անկախությունը, որովհետև, հարգելի լորդեր, ես չեմ ժխտում, որ այդ անկախությունը ավելի սպառնալից չի լինի, եթե գերմանացիները հաղթեն այս պայքարում, քան եթե, ընդհանք վերջնականապես կնվաճվեն ինչպես հույս ունեմ և վստահ եմ, կլինի: Սակայն ինչ էլ որ ասելու լինենք մեղմացնելու համար թուրք ժողովրդի գործած սխալները, ոչ մի բառ հնարավոր չէ ասել ի պաշտպանություն թուրքական կառավարության՝ թե' ներկայի, թե' նախորդի: Մեր երկրում կային շատերը, որոնք սուլթանին գահընկեց արեցին, և Երիտթուրքերի իշխանության գալուց հետո բարեխղճորեն կարծում էին, որ մեծ փոփոխություն կառաջանա այն մարդկանց բնավորության մեջ, որոնց Կարլիլն անվանում էր «աննկարագրելի թուրք»: Կային ուրիշները, որ ավելի լավ էին հասկանում Արևելքի խնդիրները, նրանք վատատես էին այդ հարցում և կարծում էին, որ փոփոխությունն արտաքնապես է: Դժբախտաբար, պարզվեց, որ վերջիններս ավելի ճիշտ էին գուշակում: Թույլ տվեք ավարտել՝ ասելով

հետևյալը: Պարզվում է, որ Թուրքիայի ներկայիս կառավարությունը, ճիշտ այնպես, ինչպես նախորդը, ստեղծել է իր կառավարությունը՝ փշրելով իր քաղաքական համակարգի մի մասը: Եթե այսպես է, եթե մենք այլևս ոչինչ չենք կարող անել, մենք կարող ենք նրանց վարքի մասին հայտնել ամբողջ քաղաքակիրթ աշխարհին, մենք կարող ենք զգուշացնել մնացած բոլոր ազգերին, լինեն նրանք քրիստոնյա, մահմեդական, թե հինդու, որ որևէ ձևով կապվելով կամ համակրելով գերամանացիներին և թուրքերին, նրանք սերունդների աչքին ձեռք կբերեն մի բիծ, որը երբեք չի մաքրվի:

ՍԱՐԿԻԶ ԿՐՅՈՒ - Հարգելի լորդեր, ինչպես պալատին հիշեցրեց իմ ազնվազարմ ընկերը, հուլիսի վերջին էր, որ հայերի արհավիրքների հարցը վերջին անգամ նշվեց իմ ազնվազարմ ընկեր լորդ Բրայսի կողմից և ուրախ եմ, որ ի պատասխան՝ ազնվազարմ կոմսին տալիս եմ այնպիսի տեղեկություն, ինչպիսին կարող եմ՝ շարունակելով իմ այն ժամանակվա ասածը: Ես միանգամայն համաձայն եմ ազնվազարմ կոմսի հետ, որ առավելություն է այն, որ մենք մեր տրամադրության տակ ունենք պաշտոնապես հաստատված փաստեր, որոնց մասին պիտի տեղեկացնել աշխարհին: Բաթումի Բրիտանիայի հյուպատոսից ստացել ենք հաղորդագրություններ հիմնականում այն հայտարարություններից, որ տպագրել են Թիֆլիսի լրագրերը, որոնք, իհարկե, հաստատում են իրական փաստերը և նրանք շատ ցավալի են:

ԿՈՄՍ ԿՐՈՄԵՐ - Կարո՞ղ եմ թվական տվյալներ իմանալ ազնըվազարմ մարկիզից:

ՍԱՐԿԻԶ ԿՐՅՈՒ - Սեպտեմբերի առաջին շաբաթն էր: Հյուպատոսը նկարագրում է ցնցող արհավիրքները, որոնք տեղի են ունեցել Սասունի շրջանում, որտեղ բնակչությունը բացարձակ ոչնչացվել է, փրկվել են միայն նրանք, որոնք կարողացել են փախչել: Այդ շրջանն ամբողջովին դատարկվել է: Որոշակի թվով հայտնի բնակիչների հաջողվել է փախչել լեռները, սակայն նրանք, ովքեր չեն կարողացել փախչել, լրիվ կոտորվել են: Հետո սկսեց մեծ թվով հայերի, քաղդեացիների և այլ գաղթականների հոսքն Ուրմիա և Կովկասյան նահանգները: Բազմաթիվ գաղթականներ են եկել Էջմիածին և Երիվանի նահագի այլ մասերը: Նրանք եկել էին հիմնականում Մանազկերտի, Արճեշի շրջաններից և Վանից: Հյուպատոսը հայտարարում է, որ նրանցից 160000 գաղթական անցել է Իգդիրի և Էջմիածնի միջով: Նա ամենասարսափելի կերպով է նկարագրում նրանց վիճակը, նրանց ոչնչացնում է հիվանդությունը, շատերը սովահար են: Նրանք մահանում են ամենաքիչը հարյուր մարդ մեկ օրում: Ոչինչ չի կարելի ասել չափազանց բարձր գնահատելու համար այն ջանքերը, որ արվում է տեղում իրերի սարսափելի վիճակը հաղթահարելու ուղղությամբ: Մոսկվայի Հայկական կոմիտեն, որին օգնեցին բազմաթիվ երիտասարդ կամավորներ Թիֆլիսից և այլ քաղաքներից, շտապեց այդ շրջանը և արեց ինչ հնարավոր էր թեթևացնելու համար խեղճ մարդկանց թշվառությունը: Սակայն կարիք կլինի դեղերի, ինչպես նաև ուտելիքի մեծ պաշարների, այդքան մեծ թվով գաղթականների համար, եթե նրանց վիճակը նյութապես բարելավվի: Հետո, Ելենովկայում և Ախտայում՝ Արարատ լեռից հեռու երկու այլ շրջաններում կան մոտավորապես 9000 գաղթականներ, որոնք ավելի լավ վիճակում չեն, քան մյուսները: Մի զեկուցման մեջ ասվում է, որ մինչև եկող օգնությունը տեղ կհասնի, նրանց կեսը հավանաբար կմահանա: Վշտալի է

հաշվետվությունը Ուրմիայի գաղթականների մասին: Ես թվական տվյալներ չունեմ նրանց քանակի մասին, սակայն ենթադրում եմ, որ նրանք պետք է որ բազմաթիվ լինեն: Տեղի ռուսական հյուպատոսն անում է ինչ կարող է՝ այնտեղ բերելու մի սանիտարական խումբ, որը կօգնի նրանց:

Սրանք սարսափելի փաստեր են, և ես կցանկանայի ասել, թե սրտանց համաձայն եմ այն ամենին, ինչ ասաց ազնվազարմ կոմսը, երբ հայտարարեց, որ այնպիսի միջադեպերը Նորին գերազանցության Հնդկաստանի մուսուլման հպատակների և կրթված մուսուլմանների կարծիքով ոչ քիչ հեղափոխություն են, քան մեզ համար:

Նրանք, իհարկե, ոչ մի կերպ չեն քույլատրվում իսլամի պատգամներով և չեն կարող արդարացվել իսլամի կողմից: Ես համաձայն եմ նաև ազնվազարմ կոմսի ասածների հետ, երբ նա ավելացրեց որ այս բոլոր պատմությունները կցնցեն յուրաքանչյուր եվրոպացու և այն մարդկանց, որոնք այս պահին հակված են կապել իրենց բախտը Թուրքիայի բնակիչների հետ:

Ինչպես կանխագուշակում է իմ ազնվազարմ ընկերը, մենք ոչ մի պաշտոնական պնդում չունենք այն հայտարարությունների վերաբերյալ, թե իբր գերմանացի հյուպատոսական ներկայացուցիչները ոչ միայն սոսկ հետևել, այլև դրականորեն քաջալերել են այս արհավիրքները: Բայց այն հայտարարությունը, որ ազատ կերպով այդ հարցի վերաբերյալ արել են այն ականատեսները Միացյալ Նահանգներից, որոնք կարող են կարծիք կազմել, և իմանալով այն, ինչ մենք գիտենք այլ տեղերից, մենք հակված ենք հայտարարելու, որ չի կարող լինել որևէ անհավանական նախադեպ, քան այս դեպքը: Ազնվազարմ կոմսը իր վերջին հարցին անդրադառնալիս, մեղմացրեց վերջին միջոցառման ժամանակ կառավարության անունից իմ արած այն հայտարարությունը, որ երբ գա հաշվետվության օրը, այն անձինք, ովքեր իրականացրել կամ մասնակցել են այս հանցագործություններին, չեն մոռացվի: Սա, իհարկե, լավ կհիշվի: Պետք չէ կրկնել այն հայտարարությունը, որ արդեն արվել է բոլորի ներկայությամբ և մենք չենք կարծում, թե որևէ առավելություն կառաջանա ուղղակի կամ անուղղակի կերպով խնդրի վերաբերյալ Թուրքիայի կառավարությանն արված զգուշացման փորձից: Նրանք գիտեն մեր կարծիքը և այն անընդհատ կրկնելը, մեր կարծիքով, ոչ մի օգտակար նպատակի չի ծառայի:

ՎԻԿՈՆՏ ԲՐԱՅՍ - Քանի որ Նորին գերազանցության կառավարությունն, անշուշտ, ի վիճակի չի եղել ստանալ, բացի մեկ կամ երկու երկրամասերից, ինչպես օրինակ Թիֆլիսի հյուպատոսից՝ Կրոմերի մեջբերմամբ, որևէ տեղեկություն այն մասին, թե ինչ է կատարվում Հայաստանում և Ասիական Թուրքիայում, ճիշտ են համարում որոշ լրացուցիչ տեղեկության հրապարակումը, որ հասել է ինձ բազում աղբյուրներից, աղբյուրներ, որոնց ես կարող եմ հավատալ, չնայած ակնհայտ պատճառներով չեմ կարող նրանց այստեղ հիշատակելով, իմ տեղեկատուներին վտանգի ենթարկել: Հաղորդագրությունները գալիս են տարբեր կողմերից, բայց իրենց էությամբ համընկնում, և փաստորեն լրացնում են մեկը մյուսին:

Անցել է այն ժամանակը, երբ որևէ վնաս կարող է հասցվել հրապարակայնությամբ, և որքան ամբողջական հրապարակայնություն տրվի իրադարձություններին, որոնք տեղի են ունեցել, այնքան ավելի լավ կլինի,

որովհետև այն ձեռք է բերում այս կոտորածների, եթե դրանք չեն ավարտվել, խափանման գոյություն ունեցող միակ հավանականությունը:

Վշտացած եմ ասելու, որ նման կարգի տեղեկությունը, քանի որ հասել է ինձ մի շարք երկրամասերից, գալիս է ցույց տալու, որ բազմաթիվ եղանակներով զոհվածների քանակը, որոնց վրա ես կհենվեմ, շատ մեծ է: Այդ թիվը ընդունված է համարել 800000: Չնայած հուսալով, որ այդ թիվը հեռու է նշվածից, ես չեմ կարող հանդգնել այն հայտարարելու անհավանական նրա համար, որ այնտեղ եղել է կյանքի բնաջնջում ամբողջ երկրով մեկ՝ Պարսկաստանի սահմանից մինչև Մարմարա ծովը, մինչև այժմ միայն Էգեյան ծովափի շատ քիչ թվով քաղաքներ են փրկվել: Դա այդպես է, որովհետև իրականացված քայլերն այնքան խնամքով կանխամտածված և պարբերաբար իրագործված են մի այնպիսի դաժան ներգործությամբ, որոնք անցյալում հայտնի չէին թուրքերին: Կոտորածները հանդիսանում են մի քաղաքականության արդյունք, որը, որքան կարող եղանք պարզել, նախագծվել է այն անպատկառ արկածախնդիրների հրոսակախմբի կողմից, որն այժմ տնօրինում է Թուրքական կայսրության կառավարությունը: Նրանք տատանվում էին գործողության մեջ դնելու այն, մինչև չհամոզվեցին, որ եկել է նպաստավոր պահը և թվում է, որ այդ պահը ապրիլ ամսի մոտերքն էր: Դա այն պահն էր, երբ այս հրամանները հրահանգավորվեցին, հրամաններ, որոնք բոլոր դեպքերում իջեցվեցին Կ.Պոլսից և որոնց ծառայողները գտան պարտավոր ի կատար ածելու՝ աշխատանքից հեռացման սպառնալիքի ներքո:

Գոյություն չուներ հայ քրիստոնյաների նկատմամբ մահմեդական ցասման պոռթկում: Ամեն ինչ կատարվեց կառավարության ցանկությամբ և ոչ կրոնական ֆանատիզմով, այլ պարզապես, որովհետև նրանք ցանկացան քաղաքական պատճառներով ազատվել ոչ մահմեդական տարրից, որը վնասում էր կայսրության միատարրությանը և կազմում մի տարր, որը չէր կարող մշտապես հնազանդվել կեղեքմանը: Այն ամենը, ինչի վերաբերյալ ես տեղեկացել եմ, հաստատում է այն, ինչ արդեն ամենուր ասվել է, որ գոյություն չունի պատճառ հավատալու, որ այս դեպքում, ընդհանրապես գործել է մահմեդական ֆանատիզմը: Որքանով կարելի է հասկանալ, չնայած գործընթացում իրերի բնական ավելի ստորին երևույթները ողջունվեցին և օգտագործվեցին բոլոր հնարավորությունները կողոպուտի համար, որոնք տվեցին բռնագաղթն ու ջարդը, ավելի բարեխոհ մահմեդականների կողմից այս կոտորածները դիտվեցին ավելի շատ սարսափով, քան համակրանքով: Անհավատալի կլինի ասել, որ նրանք հաճախ փորձել են խոչընդոտել, բայց բոլոր հանգամանքներում չեմ կարծում, որ նրանք հավանություն են ցուցաբերել թուրքական կառավարության վարքագծի նկատմամբ:

Գոյություն չունի որևէ պատվիրան իսլամում, որն արդարացնում է այն արյունահեղությունը, որը ոճրագործվեց: Ինձ մի շարք հեղինակավոր ապացույցի հիման վրա ասվել է, որ մահմեդական բարձր իշխանությունները, իսկ սրանք շատ ավելի սոսկալի են: Որոշ դեպքերում նահանգապետները լինելով բարեպաշտ և մարդասեր մարդիկ, մերժեցին գործադրել այն հրամանները, որոնք իրենց էին հասել, և ջանացին դժբախտ հայերին տալ այն պաշտպանությունը, որ կարող էին: Լսել եմ անհապաղ փոխա-

րինված նահանգապետների երկու դեպքի մասին, որոնք մերժել են ենթարկվել հրամաններին:

Ինչպես ասացի, գործընթացը չափազանց համակարգված էր: Յուրաքանչյուր քաղաքում ամբողջ հայ բնակչությունը տուն առ տուն խուզարկությամբ դատարկվում էր: Տղամարկանց մի մասը նետվում էր փողոց, որտեղ նրանք սպանվում էին, երբեմն կտտանքով. տղամարդկանց մյուս մասը, կանանց և երեխաների հետ, դուրս էին բերվում քաղաքից: Երբ նրանք մի փոքր հեռավորություն էին անցնում, առանձնացվում էին, տղամարդիկ տարվում էին որոշ բարձր վայրեր, որտեղ զինվորներն ու քուրդ ցեղերը, որոնք կանչված էին սպանությանն աջակցելու համար, մարդկանց այն աշխարհ էին ուղարկում գնդակահարմամբ կամ սրահարմամբ: Կանայք, երեխաներն ու ծեր տղամարդիկ ամենաստորակարգ զինվորների (նրանցից շատերը՝ հենց նոր դուրս եկած զնդաններից) ուղեկցությամբ, քշվում էին դեպի նախատեսված հեռավոր հանգրվանները, երբեմն՝ Փոքր Ասիայի կենտրոնական անկենդան շրջանները, իսկ ավելի հաճախ՝ Տեր-Զոր նահանգի ընդարձակ անապատը, որն ընկած է Հալեպից արևելք՝ Եփրատի ուղղությամբ: Նրանք զինվորների կողմից օրեցօր քշվում էին առանց ճանապարհը շեղելու, բոլորը ոտքով, ծեծված կամ թողնված մեռնելու, եթե չէին կարողանում համաքայլ ընթանալ քարավանի հետ. շատերն ընկնում էին ճանապարհին և շատերը՝ մեռնում սովից: Թուրքական կառավարության կողմից նրանց ուտելիք չէր տրվում, և նրանք արդեն թալանվել էին այն ամենից, ինչ ունեին: Ոչ քիչ կանայք մերկացվեցին և հարկադրվեցին քայլել այդպիսի պայմաններում՝ կիզիչ արևի ներքո: Մայրերից շատերը խելագարվեցին և դեն նետեցին իրենց երեխաներին՝ այլևս ի վիճակի չլինելով տանել նրանց: Քարավանների երթուղին նշմարվում էր դիակների շարքով, և կարծում եմ հարաբերականորեն քչերը հասան իրենց նպատակատեղին, որոնք սահմանվել էին իրենց, իրենց իսկ համար. անկասկած նախընտրելի, որովհետև շատ քիչ հեռանկար գոյություն ուներ, որ որևէ մեկը կկարողանա գոյատևել իր բաժին փորձություններից: Այս բռնագաղթի վերաբերյալ ես ունեցել եմ մանրամասն հաղորդումներ, որոնք կրում են ներքուստ ապացույց լինելու արժանահավատություն: Ինձ մի ամերիկացի ընկեր ասել է, որը վերջերս է վերադարձել Կ.Պոլսից, որտեղ լսել է հաղորդումներ, որոնք ամբողջովին հաստատում են այն ինչ հասել է ինձ, և իրեն ցնցել է այն հարաբերական հանգստությունը, որով այդ վայրագություններին մասին պատմել են իրեն նրանք, ովքեր առաջնահերթ տեղեկություն ունեին դրանց մասին: Հանգամանքներ, որոնք մենք համարում ենք դժվար հավատալի, Թուրքիայում քիչ զարմանք են հարուցում: Կոտորածը օրակարգային էր 1876թ. Արևելյան Ռումելիայում և 1895-1896թթ.՝ Ասիական Թուրքիայում:

Երբ հայ ազգաբնակչությունը դուրս քշվեց իր տներից, կանանցից շատերը չսպանվեցին, այլ առանձնացվեցին ավելի նվաստացուցիչ ճակատագրի համար: Նրանք մեծ մասամբ գերվեցին թուրքական սպաների և քաղաքացիական ծառայողների կողմից և հանձնվեցին իրենց հարեմներին: Մնացածը վաճառվեցին շուկայում, բայց միայն մահմեդական գնորդներին, որպեսզի հետագայում ուժի միջոցով դարձվեին մահմեդական: Նրանք այլևս չեն տեսնի իրենց ծնողներին և ամուսիններին, այս քրիստոնյա կանայք մի հարվածով դատապարտվեցին ստրկության, ամոթի և ուրա-

ցության: Մեծ թվով տղաներ ու աղջիկներ վաճառվեցին ստրկության, երբեմն տաս կամ տասերկու շիլլինգ արժեքով, մինչ այլ դեռատի տղաները բաժանվեցին դերվիշներին՝ տարվելու որևէ դերվիշական մենաստան և այնտեղ հարկադրվելու դառնալ մահմեդական:

Տալով մի օրինակ՝ թե ինչպիսի հաստատուն և անխիղճ եղանակով էին կոտորածներն իրագործվում, կարելի է բավարարվել բերելով մի օրինակ Տրապիզոնի դեպքի մասին: Դեպքը հաստատվում է իտալական հյուպատոսի կողմից, որը ներկա էր, երբ իրագործվեց. իր երկիրն այն ժամանակ պատերազմ չէր հայտարարել Թուրքիային: Կ.Պոլսից հրամաններ եկան, որ Տրապիզոնի բոլոր քրիստոնյա հայերը պետք է սպանվեն: Մահմեդականներից շատերը փորձեցին փրկել իրենց քրիստոնյա հարևաններին և իրենց տներում առաջարկեցին քաքստոցներ, բայց թուրքական իշխանություններն անդրդվելի էին: Ենթարկվելով այն հրահանգներին, որոնք ստացել էին, նրանք փնտրելով գտան բոլոր քրիստոնյաներին, հավաքեցին միասին և բշտեցին նրանց մեծ ամբոխը Տրապիզոնի փողոցներով, անցան բերդամասը՝ դեպի ծովի եզերք: Այնտեղ նրանք բոլորը բարձրացվեցին առագաստանավեր, տարվելով որոշակի հեռավորության Սև ծովի վրա, դեն նետվեցին այնտեղ տախտակամածից և խեղդվեցին: Գրեթե ամբողջ հայ ազգաբնակչությունը 8000-10000, ոչնչացվեց, ոմանք այս, ոմանք մորթվելու և ոմանք էլ այլ ձևերով: Դրանից հետո, որևէ այլ պատմություն դառնում է հավաստի, և ցավում եմ ասելու, որ բոլոր պատմությունները, որոնք ես ստացել եմ, պարունակում են սարսափի նմանատիպ տարրեր՝ որոշ դեպքերում սաստկացած ցնցող կտտանքի պատմություններով: Բայց ամենախղճալի դեպքերը նրանց մասին չէ, որոնց թշվառությունն ավարտվեց արագ մահով, այլ այն դժբախտ կանանց, ովքեր, իրենց ամուսինների սպանվելուց և շատերը բռնաբարվելուց հետո, դուրս բերվեցին իրենց դեռահաս երեխաների հետ սպանվելու անապատներում, որտեղ նրանք չունեին կենսամիջոց և որտեղ նրանք դարձան իրենց շրջակայքի վայրի արաբ ցեղերի զոհը: Թվում է, որ ամբողջ ազգի երեք չորրորդը կամ չորս հինգերորդը երկրի երեսից սրբվել է և անկասկած Լենկ Թեմուրի ժամանակից սկսած պատմության մեջ այնպիսի դեպք չի եղել, որտեղ արձանագրված լինի մի այսպիսի սարսափելի և մեծ չափի հասնող հանցագործություն:

Թույլ տվեք ավելացնել, քանզի դա որոշ կարևորություն է ներկայացնում, այն արդարացումները, որոնք, ինչպես մենք ենք հասկանում, գերմանական կառավարությունն առաջ է քաշում: Հաստատվում է, որ նրանց Վաշինգտոնի դեսպանը, երբ խոսում էր «խռովությունների ճնշման վերաբերյալ» իրենց դաշնակիցներ հանդիսացողների վարքի մասին, նշել է, որ հիմք չկա խորհրդածության համար, որ այնտեղ իրոք որևէ ապստամբություն է եղել հայերի կողմից: Զգալի քանակությամբ հայ կամավորականներ կռվել են ռուսների կողմից Կովկասյան բանակում, բայց նրանք, ինչպես ես եմ տեղեկացվել, ծագում էին Անդրկովկասի հայ ազգաբնակչությունից: Կարող է պատահել, որ մի քանի հայեր անցել են սահմանը, կռվելու իրենց Անդրկովկասի հայ եղբայրակիցների կողքին Ռուսաստանի համար, բայց բոլոր դեպքերում, կամավորական զորամիավորումը, որը պատերազմի առաջին փուլում հիանալի ծառայություն մատուցեց ռուսական բանակին, կազմվել է Կովկասի ռուսահայերից: Որտեղ էլ, գրեթե ամբողջապես անզեն, հայերը կռվել են, կռվել են ինքնապաշտպանության

համար, պաշտպանելու իրենց այն սրիկաների դաժանությունից, որոնք մարմնավորում են այն ինչ հայտնի է որպես երկրի կառավարություն: Թուրքական կառավարության վարքագծի համար գոյություն չունի ոչ մի արդարացում ցանկացած հիմնավորվածությամբ, ինչպես գերմանական թերթերն ու իշխանություններն են պնդում: Ջարդի ու բռնագաղթի նրանց քաղաքականությունն անբարոյական է և առանց դրդապատճառի: Թվում է, որ դա միայն այն սկզբունքի իրագործումն, որ մի անգամ հայտարարվել է Աբդուլ Համիդի կողմից. «Հայկական հարցից ազատվելու միջոցը՝ հայերից ազատվելն է», և բնաջնջման քաղաքականությունը իրագործվեց ավելի շատ կատարելությամբ և ավելի մեծ արնախում ամբողջականությամբ (քան Աբդուլ Համիդի ժամանակ էր) թուրքական ներկա վարչակազմի ղեկավարների կողմից. նրանք բնութագրում են իրենց որպես Միություն և Առաջադիմություն կոմիտե: Կարծում եմ, որ դեռևս գոյություն ունեն մի շարք վայրեր, որտեղ հայերը քշված դեպի լեռները, պաշտպանում են իրենց, դրսևորելով այնքան լավագույնս, որքան կարող են: Մոտավորապես 5000-ը հասնեցին վերջերս ֆրանսիական հածանավերի կողմից սիրական ափից և այժմ փոխադրվել են Եգիպտոս, և նրանք պատմում են մեզ, որ Սասունի բարձունքներում և Հյուսիսային Սիրիայում, հնարավոր է նաև Կիլիկիայի լեռներում, դեռևս կան մի քանի խմբեր, շատ սահմանափակ զենքի և ռազմամթերքի պաշարով, քաջաբար պաշտպանելով իրենց քշնամիներից այնքան լավագույնս, որքան կարող են: Ուստի ամբողջ ազգը դեռ բնաջինջ եղած չէ, որքանով վերաբերում է լեռների այս փախստականներին և նրանց, ովքեր փախել են Անդրկովկաս, և ես հուսով եմ, որ մենք բոլորս անկեղծորեն համաձայն ենք, որ ցանկացած ջանք պետք է թափել, ուղարկելու համար օգնություն այս դժբախտ վերապրածներին, որոնցից հարյուրավորներն ամեն օր տանջամահ են լինում կարիքից և հիվանդությունից: Դա այն ամենն է, ինչ մենք այժմ կարող ենք անել Անգլիայում, թույլ տվեք անել այդ և անել արագորեն:

Առայժմ ես ի վիճակի չեմ եղել ձեռք բերելու որևէ վավերացված տեղեկություն այն ասվածի վերաբերյալ, որը կապված է այս կոտորածները գերմանական ծառայողների կողմից ուղղություն տրվելու և քաջալերելու հետ, ուստի խնդրո վերաբերյալ ճիշտ չի լինի որևէ կարծիք արտահայտելը: Բայց լիովին պարզ է, որ այս հնագույն ժողովրդի մնացորդին փրկելու միակ հնարավորությունը պետք է գտնել երկրագնդի հասարակական կարծիքի արտահայտման մեջ, հատկապես չեզոք պետությունների, որոնք հնարավոր է, կարող են գործի դնել որոշ ազդեցություն անգամ գերմանական կառավարության վրա և ստիպել նրան կատարելու միակ քայլը, որով կոտորածներին կարող են վերջ տրվել: Նրանք մինչև այժմ կարծրասիրտ հանդարտությամբ եղել են դիտորդի դերում: Թող նրանք այժմ ասեն թուրքական կառավարությանը, որ իրենց կողմից պատրաստել են արժանվույնս պատիժ, և որ գոյություն ունեն որոշ հանգամանքներ, որը երկրագնդի անպատված կարծիքը չի հանդուրժի:

Աղբյուր՝ *1. House of Lords, Hansard (5th series) vol. XIX, 6 October, 1915, cols. 994-1004, F0371/4288/143621.*
2. British Parliamentary Debates on the Armenian Genocide, 1915-1918 Intruduced by Ara Sarafian and Eric Avebury, London 2003, pp. 5-13.

3. ԹՈՒՐՔԻԱ (ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ)

12 հոկտեմբերի, 1915թ.

1. ՊՐՆ. ԱՆԵՎՐԻՆ ՈՒԻԼՍՈՆԸ հարցրեց Արտաքին գործոց նախարարության պետական քարտուղարին, թե կարող է նա որևէ տեղեկություն հաղորդել Թուրքիայում հայերի տեղահանությունների և կոտորածների մասին և թե արդյոք նա որևէ պաշտոնական տեղեկություն ունի, որն ապացուցի, որ մի քանի հարյուր հազարավոր հայեր, մեծ մասամբ կանայք, երեխաներ և տարեցներ են սպանվել վերջերս ըստ թուրքական կառավարության ծրագրի:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ (ՍԸՐ Է. ԳՐԵՅ) - Խնդրի վերաբերյալ Նորին գերազանցության կառավարության տակ եղած ամբողջ տեղեկությունը տեղ է գտել Մարկիզ Կրյուի հայտարարության մեջ, որն արվեց ի պատասխան Կոմս Կրոմերի հարցին: Կարող եմ միայն հիշեցնել այդ հայտարարությունը պատվարժան անդամին: Այն ավելի հեռու է գնում, քան հարցի պատասխանը, ուստի չի կարդացվի պալատում: Կատարվածի վերաբերյալ կարող է լինել միայն սարսափի և վրդովմունքի զգացում:

Աղբյուր՝ *1. House of Commons, Hansard (5th series) vol. LXXIV, 12 October, 1915, cols. 1165-1166, F0371/2488/140654.*
2. British Parliamentary Debates on the Armenian Genocide, 1915-1918 Intruduced by Ara Sarafian and Eric Avebury, London 2003, p. 13.

4. ՀԱՅԱՍՏԱՆ (ԿՈՏՈՐԱԾՆԵՐ)

21 հոկտեմբերի, 1915թ.

1. Ի նկատի ունենալով գերմանական կառավարության հրաժարականը, արտահայտելու համար իր դժգոհությունը Թուրքիային՝ Հայաստանում տեղի ունեցող քրիստոնյաների համակարգված և զանգվածային կոտորածների կապակցությամբ, հրամանատար Բելերը հարցրեց Արտաքին գործոց նախարարության պետական քարտուղարին, թե արդյոք ինքը կարող է հայտարարել, որ որևէ չեզոք պետություն քայլեր է կատարում իրադրությունը փրկելու և Ասիական Թուրքիայում գտնվող ամերիկյան միսիոներական հիմնարկները պաշտպանելու ուղղությամբ:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԽՔԱՐՏՈՒՂԱՐ (ԼՈՐԴ Ռ. ՍԵՍԻԼ) - Ես չգիտեմ, թե ինչ քայլեր կարող են ձեռնարկված լինել այս ուղղությամբ: Վատիկանն ազնիվ ու բազմաթիվ դիմումներ է հղել Թուրքիայի կառավարությանը՝ դադարեցնելու կոտորածները, իսկ Ավստրո-Հունգարիայի կառավարությանը՝ ճնշում գործադրելու թուրքական կառավրության վրա նույն խնդրի կապակցությամբ:

Աղբյուր՝ *1. House of Commons, Hansard (5th series) vol. LXXIV, 21 October, 1915, cols. 1970.*
2. British Parliamentary Debates on the Armenian Genocide, 1915-1918 Intruduced by Ara Sarafian and Eric Avebury, London 2003, p. 14.

5. ՀԱՅԵՐԻ ԱՐՀԱՎԻՐՔՆԵՐԸ

16 Նոյեմբերի, 1915թ.

ՊՐՆ. Ա. ՈՒԻԼԻԱՄՍ - «Ես չեմ կանգնել շարունակելու համար այս հարցի քննարկումը, որը, կարծում եմ, լիովին քննարկվեց: Ես կանգնել եմ բարձրացնելու մի այլ խնդիր, որում մեր երկրի զինված ուժերը մեծ գործ ունեն անելու, և որի նկատմամբ մեր երկիրը, որպես ամբողջություն, ունի ազգային մեծ պատասխանատվություն, որն առաջանում է նրա արտաքին քաղաքականության պատմությունից: Այս տարվա հոկտեմբերի 6-ին եղան քննարկումներ Լորդերի պալատում, որը չափազանցություն չլինի ասելը, սարսափի ալիք առաջացրեցին ոչ միայն մեր, այլև բոլոր քաղաքակիրթ երկրներում:

Ընթերցասեր ու գիտակից մարդկանց մեծամասնությունը այդ ժամանակ առաջին անգամ հասկացավ, որ վերջին հինգ ամիսների ընթացքում տեղի է ունեցել պատմության մեջ ամենամեծ կոտորածը: Այդ քննարկման ժամանակ, որն ընթացքի մեջ դրեց լորդ Կրոմերը, և որին մասնակցեցին լորդ Բրայսը, լորդ Կրյուն և այլոք, ներկայացվեցին այնպիսի մերկ փաստեր, որպիսին երբեք աշխարհը չէր տեսել: Եղել էին մեծ նվաճողներ, որոնք կոտորել էին հազարավոր, գուցե մինչև միլիոն մարդու, բայց նրանք տեղի էին ունեցել բազմաթիվ տարիների ընթացքում: Թուրքական իշխանավորներին հինգ ամսվա կարճ ժամանակահատվածում հաջողվեց բնօրրաններից արմատախիլ անել մի ամբողջ ազգի: Նրանք այսպես վարվեցին ոչ թե հազարների կամ տասնյակ հազարների, այլ հարյուրավոր հազարների հետ: Հաշվարկներից մեկի համաձայն հինգ ամսում սպանվել է հինգ հարյուր հազար մարդ, մինչդեռ մի այլ հաշվարկով՝ մինչև ութ հարյուր հազար: Սրանից առաջ էլ են եղել հայերի կոտորածներ: Տաս տարի առաջ սպանվել է երեսուն հազար, դրանից տաս տարի առաջ՝ հարյուր հազար հայ: Սակայն այն ժամանակ աշխարհը ցնցող այդ կոտորածներն անէական են դառնում սրանց համեմատ, որոնց միջով անգիտակցաբար անցնում ենք վերջին վեց-յոթ ամիսների ընթացքում: Քննարկումներից հետո հետագա մանրամասներ են ստացվել շատ աղբյուրներից՝ գերմանացի ու շվեյցարացի միսիոներներից, փախչող գաղթականներից, Ասիական Թուրքիայում բնակվող եվրոպացիներից և ամեն տեսակի աղբյուրներից, և բոլորը ամենազարմանալի կերպով լրացնում են մեկը մյուսին, բոլոր փաստերն այնպես են համընկնում իրար, որ եթե նույնիսկ չես հավատում այս կամ այն մանրամասնին, պատկերացնում ես, թե ինչպիսին է եղել իրադարձությունների շղթան: Դրանք ընդհանուր հաղորդումներ չեն, դրանք հաղորդումներ են տարբեր շրջաններից, որտեղ նկարագրվում է, թե ինչ է տեղի ունեցել որոշակի տեղում որոշակի պահին, տրվում են ինչպես տուժածների, այնպես էլ հանցագործությունները կատարողների անունները:

Մինչ այդ միանգամայն անկասկած է, որ դեպքի բազմաթիվ փաստերը հաստատված են, իսկ փաստերը նրանք են, որ մայիս ամսին կամ այդ օրերին գործադիր իշխանության՝ «ավազակախմբի» կողմից, ինչպես նրանց անվանում է լորդ Բրայսը, և որն իրեն այժմ անվանում է Թուրքիայի կառավարություն, համակարգված կերպով հրահանգ ուղարկվեց Թուրքիայի գրեթե բոլոր այն կենտրոններին, որտեղ հայեր կային: Վստահ եմ,

ճիշտ կլինեմ, եթե ասեմ, որ գուցե հրահանգներն ուղարկված լինեն գրեթե հիսուն վայրեր, և ընդունվեց միատեսակ ծրագիր: Տվյալ կենտրոնի հայերին կարճ ժամանակում հավաքում էին միասին, երբեմն մի քանի ժամերի ընթացքում: Որոշ դեպքերում, երբ ժամը նշանակված էր, ժանդարմները հայտնվում էին այդ պահից առաջ և մարդկանց հանում էին անկողնուց: Երբեմն տալիս էին քիչ ավելի երկար ժամանակ, մինչև տաս կամ տասերկու օր, բայց վստահ եմ, որ ոչ մի անգամ երկու շաբաթից ավելի չի տրվել: Ձինվորական տարիքի տղամարդիկ չէին, որ մեկուսացվում էին: Ոչ բոլորովին: Ձինվորական տարիքի տղամարդիկ արդեն ծառայում էին թուրքական բանակում, չէին ծառայում միայն նրանք, ովքեր ազատված էին բանակից ըստ թուրքական օրենքի: Այս անգամ հավաքվեցին ծառայության չգնացած տասնհինգից յոթանասուն տարեկան տղամարդիկ և մեծ մասամբ գնդակահարվեցին: Ավելի տարիքով տղամարդկանց, կանանց ու երեխաներին կարգադրվեց պատրաստվել երկար ճանապարհ գնալու: Սա տեղի ունեցավ ոչ թե մի քաղաքում, այլ գրեթե բոլոր այն քաղաքներում, որտեղ հայերը կարևոր դիրք ունեին: Այն տեղի ունեցավ ոչ թե ինչ-որ մի ազգի ինչ-որ պաշտոնյաների ֆանատիզմի պատճառով: Այն տեղի ունեցավ կենտրոնական իշխանության հրահանգներին ենթարկվելու պատճառով:

Այս մարդիկ դուրս բերվեցին ժանդարմների կողմից որոշ չափով բանտարկյալների հսկողությամբ, ոճրագործների, որոնց հանել էին զնդաններից որոշակի նպատակով՝ բռնագաղթվող հայերի այս խմբերին ուղեկցելու համար: Մարդկանց թույլատրվեց իրենց հետ վերցնել շատ քիչ վող, և շատ քիչ սնունդ տրվեց նրանց ճանապարհորդության ընթացքում: Որոշ դեպքերում նրանց թույլատրվեց վարձել սայլեր, որոնք ղեկավարվում էին նրանց կողմից և որոնց մեջ տանում էին իրենց ունեցած-չունեցածը: Բազում դեպքերում այս սայլերը ճանապարհորդությունից մի քանի ժամ կամ մի քանի օր հետո ետ էին վերադարձվում դատարկված, իսկ մարդկանց պարտադրվում էր քայլել ոտքով: Երբեմն, երբ նրանք անցնում էին մի քանի օրվա ճանապարհ, լքվում էին իրենց պահակախմբերի կողմից և նրանց ասվում էր, որ կարող են շարունակել գնալ ինքնուրույն: Հետո, երբ նրանք անցած էին լինում մի քանի մղոն, քրդերի խմբերը հարձակվում, կողոպտում և սպանում էին նրանց, բռնաբարում կանանց, վերցնում երեխաներին անարգում և ահաբեկում էին նրանց: Երբեմն նրանց չէին լքում, այլ ժանդարմներն ու հանցագործ պահակախմբերն իրագործում էին իրենց կամքը նրանց նկատմամբ՝ ցանկացած ձևի գազանությամբ և հեշտասիրությամբ: Երբ նրանք ժամանում էին քաղաք, վաճառում էին կանանց ու աղջիկներին հարեմներին, իսկ երեխաներին՝ այն թուրքական ընտանիքներին, որոնք ցանկանում էին տղաներ ու աղջիկներ՝ աշխատելու իրենց գյուղական տնտեսություններում և դաստիարակվելու որպես մահմեդականներ, անգամ երեխաներին և վաճառում էին հասարակաց տներին: Այդպես շարունակվեց նրանց ուղիղ քշելով, մարդկանց սովից ճանապարհին կորցնելով, շատ դեպքերում բացարձակապես մերկ, թալանելով նրանց հագուստները. երեխաներ՝ ծնված ճամփեզրերին և մայրեր՝ որոնց կարգադրված էր բարձրանալ և շարունակել գնալ այնքան, մինչև մեռնեն: Երեկոյան կանայք բռնաբարվում էին գողերի և սրիկաների կողմից, որոնք գալիս էին ճամբար և վերջապես, երբ նրանք հասնում էին Եփրատ գետին,

կանայք բազմաթիվ դեպքերում նետվում էին գետն այն պատճառով, որ մահվան միջոցով կարող էին փրկվել տղամարդու անգթությունից:

Այսպիսով, սկզբում ճանապարհվողների գուցե միայն մեկ երրորդը, գուցե ավելի քչերն էին հասնում նշանակված վայրը: Թուրքական իշխանություններն այդ վայրերը հումորով անվանում էին գյուղատնտեսական գաղութներ: Նրանք իրականում վայրեր էին ահավոր ճահիճներում, որոշ դեպքերում՝ անապատներում, որտեղ չկար ջուր կամ մշակության որևէ հնարավորություն, որտեղ նույնիսկ թշվառ արաբները, որոնք այնտեղ գոյատևում են անհիշելի ժամանակներից, հաճախ մեռնում էին սովից: Նրանք (հայերը) տեղ էին հասնում հյուծված, իսկ նրանք, ովքեր դեռ չէին մահացել, շուտով մեռնում էին: Սա էր հայերի ճակատագիրը իրարից հեռու գտնվող քաղաքներում: Ես չեմ խոսում Հայաստանի հայերի մասին: Կա շատ մեծ տարբերություն: Հեռավոր քաղաքներում հայերը մեծ մասամբ արհեստավորներ, վաճառականներ, կոշկակարներ կամ հմուտ վարպետներ են: Նրանք շատ կիրթ են, նրբաճաշակ դաստիարակությամբ, արտակարգ կերպով շատ առաջ այդ երկրի մահմեդական բնակչությունից: Նրանք կրեցին իրենց բաժին հասած բոլոր տառապանքները, սովոր լինելով նրբաճաշակության, նյութական ապահովվածության և կրթվածության: Հայաստանի հայերը այլ վիճակում էին: Նրանք իրենց սեփական երկրում էին, մեծ մասամբ նրանք գյուղացիներ էին, իսկ նրանք, ովքեր մնում են, նույնպես գյուղացիներ էին և մշակում էին իրենց դաշտերն ու ապրում դրանց տվածով:

ՊՐՆ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՊՐՆ. ՈՒԻԹԼԻ) - Ես պետք է ասեմ պատվարժան անդամին, որը ներկա քննարկման օրակարգի հարցը այնքանով է կապված այն խնդրի հետ, որքանով որ պատվարժան անդամը կարծում է, որ կարող է կամ պետք է անի Բրիտանական կառավարությունը և ընդհանուր նկարագրությունը, որ տալիս է նա, ավելի լայն է, քան կառավարության հնարավորությունը: Նա սկսեց ասելով, որ անելու է մի առաջարկություն, որը կարող է անել կառավարությունը: Խնդրի այդ մասն այսօր տեղին է:

ՊՐՆ. Տ.Պ. Օ 'ԿՈՆՆԵՐ - Կարո՞ղ եմ հարգանքով Ձեզ ասել, սըր, որ սրանք արդեն արվել են մեզ հետ պատերազմի մեջ գտնվող երկրներից մեկի կողմից, դրանք արդեն թույլատրվել, եթե արդեն չեն ներդրվել մի ուրիշ թշնամի երկրի կողմից, կառավարության համար հնարավոր է ներկայացնել այս խնդիրները որպես պատճառներից մեկը մեծ գումար պահանջելու, որպեսզի պատերազմը հաջողությամբ ավարտվի և վերջապես, հրավիրելով հասարակության ուշադրությունը, և' մեր երկրում և' չեզոք երկրներում, մենք կարող ենք օգնել կառավարությանը ձեռնարկելու այնպիսի քայլեր, որն անհրաժեշտ կլինի որոշ չափով մեղմացնելու այս մարդկանց վիճակը: Այս պատճառներով ես խստորեն դիմում եմ Ձեզ, եթե Ձեր կարգապահության զգացումը թույլ տա, քննարկման շրջանակում սահմանափակել այնքանով, որքան հնարավոր է:

ՊՐՆ.ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ - Ես ոչ մի ձևով խնդիրը օրակարգից չեմ հանում: Եթե անդամներն այդ տպավորությունը ստացան, ինձ անշուշտ սխալ հասկացան: Ես միայն ասում էի, որ այն պետք է կապված լինի ինչ-որ մի բանի հետ, որ կառավարությունը չի արել բայց կարող էր անել:

ՊՐՆ. Ա. ՈՒԻԼԻԱՄՍ - Ես շատ եմ ուզում հետևել Ձեր ասածին: Եթե ես խախտել եմ օրակարգը, համոզված եմ այն կվերագրեք իմ փորձին և այս խնդիրներում իմ հմտության ցանկությանը: Իմ տեսակետն այն է, որ կան երկու դասի մարդիկ նրանց մեջ և նրանք տարբեր դիրքերում են: Ես ուզում էի հիմնավորել, որ այս երկու դասի մարդկանց համար կա մի բան, որ մեր կառավարությունը կարող է անել հիմա և շնորհիվ պատմական պատասխանատվության, որ առաջ է գալիս անցած տարիների քաղաքականությունից, պետք է անի: Հուսով եմ, կտեղավորվեմ օրակարգում՝ տանելով իմ հարցն այդ ուղղությամբ: Հայերը, որոնք ենթարկվել են տեղահանության, տառապանքների և դանդաղ մահվան, ինչպես նկարագրեցի, որոշ չափով դեռևս ապրում են որպես գաղթականներ թուրքական կայսրության տարբեր վայրերում: Ես առաջարկում եմ, որպեսզի մեր կառավարությունն օգտագործի իր լավագույն միջոցները՝ բանակը, նավատորմը կամ այլ ուժերը, փրկելու այս ժողովրդին, որտեղից որ հնարավոր է: Օրինակ, ֆրանսիական նավատորմի մի նավ, տեսնելով մի մեծ կարմիր խաչ, հետախուզությամբ հայտնաբերեց, որ կային 4000 հայեր, որոնք ապաստանել էին լեռներում՝ Անտիոքի և Ծովի միջև: Այնտեղ նրանք հին զենքերով պայքարում էին իրենց գերազանցող ուժերի դեմ, որոնք փորձում էին բնաջնջել իրենց: Ֆրանսիական նավին հաջողվեց այդ 4000 մարդկանց տանել և ափ իջեցնել Եգիպտոսում, որտեղ նրանք բոլորը կամ մեծ մասը ազատվեցին այն ճակատագրից, որ սպառնում էր նրանց: Չնայած մանրամասնորեն նկարագրում եմ նման վիճակում գտնվող այլ հայկական խմբավորումներ, կցանկանայի խնդրել Նորին գերազանցության կառավարությանը՝ հավաստիացնելու մեզ, որ այն իր ուժերի ներածին չափով է: Ասիական Թուրքիայի ափերին շրջող մեր նավերով և մեր զորքերով, որոնք մոտենում են այս սարսափելի արհավիրքների թատերաբեմերին՝ Բաղդատ գնալիս, ամեն ինչ անի ներգրավելու այս խմբավորումներին, որոնք հերոսաբար պայքարում են իրենց ճնշողների դեմ:

Կցանկանայի ուշադրություն հրավիրել այլ դասի հայերի վրա, ովքեր փրկվել են և գտնվում են թուրքական կայսրությունից դուրս: Թուրքական կայսրության ներսում փաստորեն ոչ մի հայ չի մնացել: Սա բառացիորեն ճշմարիտ չէ, իհարկե, բայց կան շատ քչերը: Պատերազմի սկզբում այստեղ հավանաբար կար 1200000 կամ 1500000 հայ: Եթե ճիշտ է, որ սպանվել է 500000 կամ 800000 հայ, ուրեմն Ռուսաստան, Եգիպտոս, Բուլղարիա և այլուր փախած գաղթականները կկազմեն Թուրքիայի հայ բնակչության մոտավորապես կեսը: Համեմատաբար, Թուրքիայում մնացել է միայն մի երկու հազարը: Նրանցից շատերը պայքարում են իրենց կյանքի համար: Անմիջապես Հայաստանում թուրք իշխանությունները տեղահանության քաղաքականություն չհետապնդեցին: Նրանք վարվեցին շատ ավելի պարզ՝ ուղղակի կոտորեցին: Զորքերն ու ժանդարմները ուղղակի հարձակվեցին մարդկանց վրա իրենց գյուղերում և ֆերմաներում: Այնտեղ, որտեղ մարդիկ լեռներում կամ գյուղական խմբերում դիմում էին ինքնապաշտպանության, թուրքերը հրետանի էին ուղարկում նրանց դեմ և լիովին ոչնչացնում էին նրանց: Հայերից շատերին հաջողվեց փրկվել ռուսական զորքերի հովանավորությամբ: Պատերազմի ընթացքում բախտի վայրիվերումների ժամանակ Ռուսաստանն առաջխաղացում և նահանջ ունեցավ, կրկին առաջ գնաց մինչև Հայաստան: Այս տեղաշարժերի ընթացքում

բազմաթիվ հայեր, որ խույս էին տվել զանգվածային կոտորածից, ռուսական զորքերի ետևից ուղղվեցին Կովկաս: Ասում են, այնտեղ այժմ կա 180000 գաղթական: Երեսուն հազարը մահացան անցյալ օգոստոսին, իսկ 70000-ը հավանաբար Կովկասով կրկին վերադարձան Հայաստանի այն շրջանները, որոնք հիմա Ռուսաստանի տիրապետության տակ են, կամ գնացել են Պարսկաստանի այն շրջանները, որոնք որոշ չափով ռուսների պաշտպանության տակ են:

Այս մարդկանց համար ես կրկին պահանջում եմ Նորին գերազանցության կառավարությանը որոշել, թե արդյոք մեր հյուպատոսների միջոցով, գուցե գումարով կամ այլ ձևով, կարող ենք որևէ բան անել՝ օգնելու այս մարդկանց փրկվել ոչնչացումից: Ամեն շաբաթ նրանցից մեռնում են հարյուրավորները, ես կասեի՝ հարյուրավորներն օրեկան: Այս երկրում մենք անում են հնարավոր ամեն ինչ նրանց օգնություն ուղարկելու համար: Միացյալ Նահանգներում նրանց օգնելու համար հանգանակություն է հավաքվում:

Նրանց հայրենակիցները Ռուսական Կովկասում կատարում են օրինակելի աշխատանք՝ օգնության միջոցով: Նրանք կատարում են հսկայական զոհաբերություններ և աշխատում են ջանասիրաբար: Բայց քանակն անհաշիվ է: Մեր երկիր են անցել, մենք գիտենք, մոտավորապես 100000 բելգիացի փախստական, լավ, 200000, բայց անգամ մեծ, հարուստ երկրի համար, ինչպիսին մերն է, այն ստանձնելը, մեծ խնդիր համարվեց: Եթե հաշվի առնենք Ռուսաստանում ապրող հայերի փոքր քանակությունը, երևի 1500000 և նրանց սահմանափակ պաշարները, կարծում եմ, կարող ենք ասել, որ նրանք վարվել են վեհանձնորեն: Կարող ենք ասել հետևյալը փախստականների փրկության մեջ ազգային և կրոնական զանազանություն չի արվում: Անգամ որոշ մահմեդական փախստականներ, որոնք ճանապարհ էին գտել դեպի Ռուսական Կովկաս, փախչելով պատերազմի սարսափներից, օժանդակվում են այնպես, ինչպես քրիստոնյա փախստականները: Մի ազգ, որ կարող է այդ անել իր սեփական հոգեվարքի պահին, տալիս է վեհանձն քաղաքության մի շատ գեղեցիկ երաշխիք:

Ուզում եմ հստակ ասել, որ Նորին գերազանցության կառավարությանը դիմում եմ այս հարցով ոչ թե որպես մի ազգի կամ կրոնի խնդիր: Միայն հայերը չեն, որ տառապել են այս կերպ, միայն հայերը չեն, որ մեր կառավարության տված օգնության կարիքն ունեն: Շատ շրջաններում շատ են տառապել նաև շատ հույներ: Ասորի քրիստոնյաները նույնպես շատ տառապանքների են ենթարկվել: Նրանք փախել են թուրքական զորքերի ահաբեկչությունից: Մի քանի օր առաջ Թավրիզից Նորին գերազանցության հյուպատոսը հեռագրել էր, 25000 ասորի գաղթականներ մոտեցել են իր քաղաքին, իսկ 10000-ից ավելին շուտով կգան: Նա ասում է, քանի դեռ օգնությունը չի ստացվել, շատերը կզոհվեն:

Դրանք միայն քրիստոնյաներ չեն: Ակնհայտորեն, երկրի բոլոր առաջադեմ տարրերի բնաջնջման այս գործընթացը, որը կոչվում է երկրի օսմանացում, տարածվում է քրիստոնյաներից այն կողմ: Սիոնիստ հրեաները որոշ պատճառներով կասկածվում էին լուսավորիչ ուժ լինելու մեջ և նրանք նույնպես ահաբեկված են: Այդտեղից իմ վերջին լուրերն այն է, որ մեր ժամանակի մեծագույն կրոնական ուսուցիչը որը ո՛չ քրիստոնյա է ո՛չ հրեա, այլ մի մարդ, որը ներկայացնում է ձևավոխված մահմեդականու-

թյան մի տեսակ, կամ մի ավելի ընդարձակ կրոն՝ ընդգրկող մահմեդականություն և այլ կրոններ, Աբդուլ-Բահա Աբբասը, մի մարդ, որին մեզանից շատերը պատիվ են ունեցել ունկնդրել Լոնդոնում մի քանի տարի առաջ, մի ծեր մարդ, որն իր ողջ կյանքը ծախսել է բարի գործ կատարելու վրա, բռնի կերպով տարվել է իր տնից՝ Կարմել Լեռից (այժմ՝ Հայֆա-Իսրայել) դեպի Նազարեթ: Ի՞նչ է պատահել նրան կատարելապես անհայտ է, բայց չափազանց հավանական է, որ վատագույնն է տեղի ունեցել նրա հետ: Սա պատերազմ է Օսմանյան կայսրության բոլոր՝ ավելի խելացի, բարեփոխիչ տարրերի դեմ:

Ներկայացնելու համար այս սարսափելի իրադարձությունների թվարկումը, կխնդրեի Նորին գերազանցության կառավարությանն այս խնդիրը ներկայացնող ազնվազարմ լորդին ասել մեզ, որ կառավարության բոլոր ուժերը, բանակը, նավատորմը, հյուպատոսական ծառայությունը, կօգտագործվեն օգնելու համար այս երկու դասի մարդկանց, նրանց, ովքեր գաղթել են Ռուսաստան և այլուր, և նրանց ովքեր պաշտպանվում են՝ փրկելու համար իրենց կյանքը Թուրքիայի տարածքում, իսկ մենք պետք է չմոռանանք, որ ականատեսն ենք աշխարհիս երբևէ հայտնի ամենամեծ կոտորածին: Այդ իսկ պատճառով, կարծում եմ մեր պարտքն է ամեն ինչ զոհաբերել և գործադրել բոլոր ջանքերը թեթևացնելու նրանց տառապանքները և փրկելու մի քանի հազարներին մահից, որ անշուշտ տեղի կունենա մինչև մեր օգնությունը տեղ հասնի:

ՊՐՆ. Տ.Պ. Օ 'ԿՈՆՆԵՐ - Ես պատրաստվում եմ մի քանի պահանջներ ներկայացնել կառավարությանը, սակայն վախենում եմ, որ նրանց բոլորին այն չի կարող համաձայնվել: Ես գումար եմ ուզելու: Ես պահանջելու եմ ռազմական նավատորմի աջակցություն, նաև դիվանագիտական օգնություն: Կարող եմ ասել որ հայերի կոտորածների մասին պատմությունից հետո, որոնք պատկերավոր ներկայացրեց ինձանից առաջ ելույթ ունեցած պատվարժան ընկերը, բոլորը կհամաձայնվեն ինձ հետ, որ կառավարությունից պահանջված գումարն անհրաժեշտ է և օգտագործվելու է այս պատերազմում: Ես նորից չեմ պատմի այն, ինչ պատմեց իմ պատվարժան ընկերը: Ոչ ոք ավելի լավ չէր կարող պատմել: Կարելի է ավելացնել մեկերկու պատմություն, օրինակ, սարսափելի պատմությունը կանանց մասին, որոնք հուսահատության մեջ ճանապարհին իրենց երեխաներին նետել են ջրհորի մեջ, որպեսզի նրանց չհոշոտեն գազանները, չմեռնեն սովից կամ զոհվեն: Պատմությունն այնքան սարսափելի է, որ մարդ ցնցվում ու զարմանում է, որ քսաներորդ դարում հնարավոր է, որ գոյություն ունենա այսպիսի դաժանություն որևէ ժողովրդի մեջ կամ որևէ ժողովրդի դեմ: Ես ուզում եմ հատկապես դիմել ազնվազարմ լորդին՝ խնդրելով որոշ գումար այն գումարից, որի համար մենք քվեարկելու ենք, գթասրտության և աջակցության այնպիսի գործերի համար, ինչպիսին արեց ֆրանսիական նավը՝ փրկելով այնքան շատ խեղճ մարդկանց: Բայց հիմնական կետը, որի վրա կառուցել եմ իմ դիմումը այն է, որ ազնվազարմ լորդը և այն մեծ բաժինը, որ ներկայացնում է նա, ջանքեր ներդնեն, որպեսզի, եթե հնարավոր է, վերջ դրվի այս հոգեվարքին և եթե հնարավոր է, կմեղմացվեն մարդկանց տառապանքները:

Ես չեմ դիմում ազնվազարմ լորդին, որպեսզի նա քուրքական կառավարությանը որևէ զգուշացում անի: Մենք թուրքական կառավարության

հետ պատերազմում ենք, որն, իմ կարծիքով, այս պատերազմի ամենամեծ ապացույցներից ու արդարացումներից մեկն է, և ես հույսով եմ, որ պատերազմի ավարտը այլ բաների հետ միասին վերջ կդնի նաև այս անգութ բռնատիրությանը: Չեմ կարծում, որ կարող եմ ազնվորեն խնդրել ազնվազարմ լորդին դիմել Գերմանիային: Այս ամբողջ գործում կա տիպիկ գերմանական մի բան: Կա մի մեծ նմանություն Բելգիայի գերմանացիների և Հայաստանի թուրքերի միջև և սա է համակարգն ու քաղաքականությունը, որ մակերեսային ականատեսն ընկալում է որպես սոսկ եզակի կամ անհատական արյան կիրք: Քանի որ ազնվազարմ լորդը գիտե շատ ավելի լավ, քան ես, քանի որ նա հնարավորություն ունի տեսնել փաստաթղթեր, որ ես չեմ տեսել, որ այդ շարժումը տեղի է ունեցել միաժամանակ հիսուն կենտրոններում և հավանաբար ենթարկվում էր թուրքական կայսրության կենտրոնական ազդակին, կենտրոնական հրամանին: Ինչպես ասացի, ես չեմ խնդրում ազնվազարմ լորդին որևէ զգուշացում անել Գերմանիային: Չեմ կարծում, որ նա պատերազմի ընթացքում կարող է որևէ զգուշացում անել որևէ թշնամի պետության: Ինչպես գիտե յուրքաքնչյուրը Գերմանիայում և որ շատ կարևոր է, յուրաքանչյուրն Ամերիկայում, որ այս կոտորածները չէին կարող տեղի ունենալ առանց գերմանական կառավարության լուռ համաձայնության, թողտվության կամ գոնե լռության:

Մենք գիտենք, թե այս մասին ինչ է մտածում Գերմանիայի կառավարությունը: Այս արհավիրքներից՝ հազարավոր տղամարդկանց սառնասիրտ, զանգվածային սպանությունից և հազարավոր կանանց, աղջիկների ու երեխաների դաժան ու ավելի ցավալի կոտորածից չորս ամիս անց գերմանական կայսրության կանցլերը Գերմանիայի խորհրդարանում կարողացավ հայտարարել, որ Գերմանիան ստեղծել է վերածնված Թուրքիան: Յուրաքանչյուրը գիտե, որ այդ ամբողջ շրջանում ամենաքիչը մեկ կամ գուցե երկու սերունդ չի եղել բնակչության որևէ կենտրոն, կամ որևէ հայկական բնակավայր, որտեղ չլիներ գերմանացի հյուպատոսների ակտիվ, ջանասեր, համառ քարոզչությունը: Կոտորածների կենտրոններից յուրաքանչյուրում կար մի գերմանացի հյուպատոս, որը գիտեր երկիրը, գուցե նաև լեզուն, իհարկե, ճանաչում էր թուրք իշխանավորներին և, իհարկե, նրանց հետ լավ հարաբերությունների մեջ էր: Եթե այդ հյուպատոսներից մեկը բարձացներ մատը, նա կարող էր վերջ դնել կոտորածին: Ոչ էլ խնդրում եմ ազնվազարմ լորդին հարցում անել գերմանացիների կարծիքի մասին: Եթե ես ավելի ազատ լինեի այս քննարկման անհրաժեշտ սահմանների մեջ, ես կարող էի մեջբերում անել գերմանական մամուլից այն մասին, թե ինչ են ասել նրանք այդ մասին: Գուցե ազնվազարմ լորդը թույլ կտա ինձ որոշ բարյացակամություն, որպեսզի կարդամ մի հատված այն հեղինակից, որի վերաբերյալ կարող եք վստահ լինել, որ ցանկացած արհավիրք նա կարող է ոչ թե ներել կամ մեղմացնել, այլ գովերգել, և այդ մարդու անունը Ռևենթլո է: Նա գրում է, «Եթե դատարանը անհրաժեշտ համարի, որ հայերի ապստամբությունը կարող է շարունակվել կամ պետք է ջախջախվի, որպեսզի բացառվի դրա կրկնության բոլոր հնարավորությունները, ուրեմն այս սպանություն կամ արհավիրք չէ, այլ միայն արդարացուցիչ ու անհրաժեշտ միջոցառում»:

Անցյալ գիշեր ինձ խնդրեցին բնորոշել գերմանական միլիտարիզմը, ահա սա է սատանայական ոգու բնորոշումը, որով նա արտահայտում է

իր կարծիքը և արդարացնում 800000 մարդկային էակների, սակայն ոչ միայն տղամարդկանց, այլև հազարավոր կանանց ու երեխաների կոտորածը: Իմ պատվարժան ընկերոջ զեկուցման մեջ կա մի կետ, որին կուզենայի անդրադառնալ: Ճշմարիտն ասած, այն ընդհանրապես Հայկական հարցի քննարկումն է: Մնացած պատվարժան անդամների նման ես այստեղ եմ երեսունհինգ տարի, և անշուշտ քառորդ դար կամ երեսուն տարի առաջ աթոռից լսել եմ լորդ Բրայսին, որը նկարագրում էր, թե ինչպես էին տեղի ունեցել արհավիրքները, ավելի վատ, քան որևէ դեպք աշխարհում՝ 300000-ի կոտորածը Աբդուլ Համիդի կողմից, մի քանի տասնյակ հազարների կոտորածն Առաջադիմություն և Հեղափոխություն կոմիտեի կողմից, բայց ահա մենք ունենք 800000-ից ավելի մարդկանց կոտորածը: Ահա թե ինչի վրա եմ ուզում կանգ առնել՝ այնքան շատ է գրվել հայերի մասին, որ շատերը հակված են կարծելու, թե նրանք այնպիսի մի ցեղ են ինչպես քրդերը, որ բնակվում են Փոքր Ասիայում և այլ շրջաններում: Բոլոր նրանք, ովքեր կարդացել են պատմությունը, գիտեն, որ հայերը քաղաքակրթության ու քրիստոնեության պատմության մեջ ամենահին, զարգացած և ամենահպարտ ազգերից մեկն են: Եվ չնայած այս կոտորածներին ու հետապնդումներին, նրանք միշտ էլ եղել են քրիստոնեության հիմնաքարը և ջրբաժանը քրդերի հարձակումների դեմ: Դուք լսել եք այն կանանց պատմությունը, ովքեր վաճառվել են թուրքական հարեմներին: Երկու երիտասարդ աղջիկներ վաճառվեցին մի թուրքի 3 շիլինգ 6 պենսով, իսկ նրանցից ոմանք վաճառվեցին պոռնկության: Ո՞վքեր են այս կանայք: Պալատում չկա որևէ տղամարդ, որքան էլ բարձր դիրքի լինի նա, որն իր ընտանիքում ունենա աղջիկներ ավելի բարեկիրթ, ավելի քաղցր, ավելի ազնվազարմ, ավելի քաղաքակիրթ ու զարգացած, քան այս կանայք են: Այս մեծ պայքարում մենք ունենք մի ուժեղ երկիր, որը կանգնած է իր ամբողջ ուժով, որն իր քաղաքացիների բնույթով և նրանց մարդասիրական մեծ զգացումով կարող է հաղթահարել այս խնդիրը և փրկել ողջ մնացածներից ոմանց, և այդ երկիրը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներն են: Կարող եմ քաջալերել ազնվազարմ լորդին՝ դիմելու այդ մեծ երկրի կառավարությանը, նկատի ունենալով այն փաստը, որ այս կոտորածներն Ամերիկայում առաջացրեցին այնպիսի սարսափ ու համակրանքի բռնկում հայերի հանդեպ, որպիսին չի եղել աշխարհի պատմության մեջ որևէ տառապող կամ ճնշված ազգի նկատմամբ: Ես նամակագրական կապ ունեմ Հայկական կոմիտեի[1] անդամների հետ, և նրանք ասում են, որ Շվեյցարիայում՝ մի այլ չեզոք երկրում, կա ուժեղ զգացում, որին ազնվազարմ լորդը կարող է դիմել համակրանքի ու պաշտպանության համար՝ փորձելով վերջ դնել այս արհավիրքներին: Ես հանդիպել եմ առաջադեմ ու կիրթ շատ շվեյցարացիների, որոնցից ոմանք փաստորեն գնացել են Հայաստան և հիմնել են հաստատություններ ու որբանոցներ այդ ազգից փրկվածների համար: Մենք բազմաթիվ ցնցող ու հուզիչ վկայություններ ունենք այս սարսափների ու արհավիրքների մասին այն մարդկանցից, ովքեր տեսել են այդ կոտորածները: Հայաստանում տեղի ունեցած կոտորածների մասին եղած տեղեկությունների մի մասը ստացել ենք գերմանացի քույրերից: Ազնվազարմ լորդին այս կապակցությամբ դիմումի համար կարող եմ տալ մի այլ հիմնավորում: Մենք փորձել ենք որևէ բան անել Հայաստանում:

Շատ բարյացակամ անգլիացիներ, որոնք հիմնականում կապված են բարեկամների ընկերության հետ, մեծ գումարներ են ներդրել Հայաստանի բնակիչներին ճգնաժամային պահերին, բայց Հայաստանի համար ամենից շատ բան արել են ամերիկացիները: Ցանկացած մարդ, ով ճանապարհորդում է Մերձավոր Արևելքում, Եգիպտոսում, Հայաստանում, գիտե, որ բարեգործական գործակալությունների մեծ մասը ամերիկյան միսիաներն են: Նրանք հիմնականում, կարծում եմ, ամբողջությամբ պատկանում են բողոքական համայնքներին և տարբերություն չեն դնում կրոնների միջև: Ես չեմ պատրաստվում վիճաբանել որևէ մեկի հետ, որը ներվում է տառապյալներին ծառայելուն: Այդ պատճառով ինձ համար նույնն է ինչ, եթե այն լիներ Հռոմի կաթոլիկ եկեղեցու միսիան: Կարծում եմ, նրանք ունեցել են առնվազն հիսուն վայրերում կրթական օջախներ քրիստոնեության և հայ ժողովրդի բարոյական դաստիարակության համար և տվել են հիանալի արդյունք: Կարծում եմ, չեմ ձանձրացնի պալատին եթե կարդամ մի փոքր հատված: Կարող եմ ասել, որ մեջբերում եմ այն մի պամֆլետից՝ «Հայերի արհավիրքները, ազգի ոչնչացումը» վերնագրով: Կարծում եմ յուրաքանչյուր անդամ ունի մի օրինակ: Ես պահանջում եմ, որ նրանք կարդան այս գիրքը և տարածեն այն, որովհետև այն երբևէ գրված ամենացնցող և ամենարտահայտիչ դիմումներից մեկն է: Ազնվազարմ լորդի ձեռքն ամրացնելու համար ուզում եմ դիմել Ամերիկային՝ բերելու անմիջական հարևանության, մի փոքրիկ օրինակով քանի դեռ պաշտոնական օրենքները թույլ են տալիս ամերիկյան միսիոներներին և թույլ կառավարչին աշխատել կողք-կողքի:

ՊՐՆ. Տ.Պ. Օ 'ԿՈՆՆԵՐ - Խոսելով կոտորածների մասին ես մեջ եմ բերում ամերիկյան քոլեջի նախագահին, որը տալիս է այս (Եփրատի Քոլեջ, Խարբերդ) քոլեջի ուսանողների և դասախոսների ցուցակը: Ազնվական լորդը իր առջև բրոշյուր ունի, իսկ դա գտնվում է 100-րդ էջի վրա: Պառլամենտը կունկդրի հետևյալը. «Համախորդներ՝ աղջիկ ուսանողների մոտավորապես երկու երրորդը և տղաների վեց յոթերորդը սպանվեցին, աքսորվեցին մահմեդական տներ: Պրոֆեսորներ՝ չորսը կորած, երեքը, ինչպես եզրակացվում է սպանված»:

Ցանկանում եմ խոսք ասել այս պրոֆեսորներից մեկի կամ երկուսի մասին: Պրոֆեսոր Բ.-ն ծառայել է քոլեջում երեսուներեք տարի, սովորել Միչիգանի համալսարանում՝ Էն Էրբորում, որը, կարող եմ տեղեկացնել պառլամենտին, հանդիսանում է Միացյալ Նահանգների ամենամեծ կրթական հաստատություններից մեկը: Եզրակացնում եմ, որ մյուս պրոֆեսորը սովորել է Պրինստոնում՝ Միացյալ Նահանգների մեկ այլ համալսարանում: Մյուս պրոֆեսորը սովորել է Էդինբուրգում: Նա հանդիսանում է հոգեբանության և բարոյագիտության պրոֆեսոր: Նա ենթարկվեց կտտանքի: Նրա մատի եղունգները դուրս քաշվեցին արմատներից, իսկ ինքը սպանվեց կոտորածներից մեկում: Վերցնում եմ պրոֆեսոր Է.-ի դեպքը: Նա ծառայել էր քոլեջում մոտավորապես տասնհինգ տարի: Սովորել է Կորնելում և Յելում՝ Միացյալ Նահանգների երկու մեծ ուսումնական հաստատություններում և կենսաբանության պրոֆեսոր էր: Այս (Եփրատ) քոլեջի պրոֆեսորները, որոնց նախագահը Միացյալ Նահանգների քաղաքացի էր, ստացել էին իրենց ուսումը աշխարհի մեծ համալսարաններում և հատկա-

պես Միացյալ Նահանգների համալսարաններում. նրանք կոտորվեցին, տանջվեցին և հալածվեցին:

Այժմ դուք ունենք անմիջական հարևանության պատկերը՝ ամերիկյան միսիայի՝ ազնիվ և թուրք կառավարիչի՝ ահավոր և սատանայական աշխատանքները: Իմ կարծիքով, այսօր չկա մի ուժ, որը կարողանա այնքան ուժեղ ազդեցություն ունենալ այս զզվելի ու սարսափելի հարցի ապագայի վրա, քան Միացյալ Նահանգների կառավարությունը: Ես վստահ չեմ, թե արդյոք մեր երկրի Ֆորին Օֆիսը կկարողանա դիվանագիտության կանոնների համաձայն ուղղակիորեն դիմել Միացյալ Նահանգների կառավարության նախագահին, բայց գիտեմ, որ այստեղ ազնվազարմ լորդը և մենք կարող ենք դիմել Միացյալ Նահանգների մարդասեր ու բարյացակամ ժողովրդի համակրանքին ու հովանավորությանը՝ այս թշվառ ու ճնշված մարդկանց օգնելու համար:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՏԵՂԱԿԱԼ ԼՈՐԴ Ռ. ՍԵՍԻԼ - Պառլամենտը շատ հափշտակված ուշադրությամբ լսեց երկու շատ բարձր կարգի ելույթներ՝ նկարագրող այն սարսափելի դեպքերը, որոնք վերջերս տեղ են գտել Հայաստանում և, իսկապես, խոսելիս այս ամբիոնից, ինձ համար շատ քիչ բան կա ավելացնելու նրան, ինչ իմ հարգարժան ընկերներն արդեն ասել են պառլամենտի յուրաքանչյուր կողմից: Պատմությունը սարսափելի է: Պառլամենտը կվերհիշի, որ նախքան պատերազմը սկսվելը, անցած տարվա փետրվարին տերությունները ստիպել էին թուրքերին ընդունել բարեփոխման միջոցառում, որը կարծում եմ, կարող էր առաջացնել որոշ էական բարելավում և անվտանգություն այս դժբախտ ժողովրդի համար: Ես չեմ գնա դեպի նրա մանրամասները, բայց այնտեղ պետք է լինեին երկու գեներալ-կոմիսարներ, որոնք պետք է ունենային որոշ լիազորություններ, որոնք, իմ կարծիքով, արժեքավոր կլինեին, բայց այն պահին, երբ բռնկվեց պատերազմը և անգամ նախքան Թուրքիան միանար մեր թշնամուն, նա հրաժարվեց այս բարեվոխումը ընդունելու բոլոր պահանջներից հենց որ հասկացավ, կամ ավելի ճիշտ՝ հենց որ Միությունն և Առաջադիմություն կուսակցությունը (անհրավացի է ասել Թուրքիան) հասկացավ, որ կարող է ապահով կերպով նախաձեռնել սարսափելի ծրագիրը, որի արդյունքը մենք տեսնում ենք ներկա պահին: Կարծում եմ, գրեթե առանց չափազանց երկյուղի, կարող է ասվել, որ երկրագնդի պատմության մեջ ոչ մի ավելի սարսափելի ոճիր չի իրագործվել: Իմ նախորդ ընկերը թվարկեց միջադեպերից մի քանիսը: Ես չեմ պատրաստվում վիշտ պատճառել պառլամենտի անդամներին, իսկապես, նպատակ չկա այդպես անելու, մանրամասնություններին ավելացնելով այն, ինչ դժբախտաբար տեղի է ունեցել: Բավական է ասել, որ այս հանցագործություններից ոչ մի սարսափի, անարգանքի կամ սպանդի տարր չէր բացակայում: Դա ոչ միայն ազգի սպանդ ու բնաջնջում էր, այլ սպանդ՝ երևակայելի ամենադաժան հնարավոր հանգամանքների ներքո:

Որքան գիտեմ, սարսափի միայն մեկ ամոքում գոյություն ունի և դա այն է, որ ոչ մի առումով կրոնական շարժում չէր: Դա մահմեդական զգացմունքի որևէ մոլեռանդ պոռթկում չէր: Որևէ նման կարգի երևույթ չէր: Մենք ցանկացած պատճառ ունենք հավատալու,·և ես կարծում եմ, որ աշխարհի բոլոր մասերի բարեպաշտ մահմեդականները դիտել են այն սարսափները, որոնք տեղի են ունեցել Հայաստանում, այնպիսի կշտամբանքով, որքան և

մենք: Այն որևէ կրոնական հետապնդման և ատելության նմանություն չուներ: Քրիստոնեության դեմ զգացմունքը ընդհանրապես չթափանցեց դրա մեջ: Բայց հենց նույն կացության մեջ, որը մի տեսանկյունից կարող է ողջունվել մեր կողմից, մեկ այլ տեսանկյունից վատթարացնում է այն ամենը, ինչ տեղի է ունեցել: Սա կանխամտածված ոճիր է, որոշված շատ վաղուց: Սա այն անձանց կշռադատված քաղաքականության մասն է, որոնց լորդ Բրայսն այնքան արդարորեն կոչեց «մարդասպան սրիկաների հրոսակախումբ, որը ներկա պահին իշխում է Կ. Պոլսում»: Նրանցից մեկը (Թալեաթը) ավելի քան մեկ պարագայում, ինձ միայն այս պահին ասվեց, պարծեցել է մի ընդհանուր ընկերոջ մոտ, որ ինքն ու իր ընկերները վեց ամսվա ընթացքում ավելին են արել, քան Աբդուլ Համիդը: Դա երկար քննարկված, կշռադատված քաղաքականություն է՝ ոչնչացնելու և երկրի երեսից ջնջելու հայերի գոյությունը: Այն համակարգված կերպով իրագործվում է: Այն կարգադրվել է վերևից և երբ, այդպես եղավ մեկ կամ երկու անգամ, տեղական ցահանգապետները մտահոգվել էին խնայելու որոշ երեխաների կամ մեղմացնելու գործողության սարսափների աստիճանը, նրանք անգթորեն հրահանգավորվեցին շարունակելու գործը, և հավատում եմ, որ մեկ կամ երկու դեպքերում նրանք հեռացվեցին աշխատանքից՝ չիրականացնելու համար այդ բավարար եռանդով:

Գոյություն ունի մեկ այլ հանգամանք ևս, որը պարտավոր եմ հիշեցնել պառլամենտին: Դա ոչ միայն կանխամտածված էր: Ոչ մի սադրանք չի եղել: Դա առաջադրվել է այն ամենի, ինչ անբարոյական է, կողմնակցի՝ կոմս Ռևենթլոի (Ֆրեդերիկ) կողմից, որ սա պարզապես խռովության և ապստամբության կոպիտ ճնշում է: Այնտեղ ոչ մի ապստամբություն, խռովություն, ոչ մի նման բան չի եղել: Այն առաջադրվել է Ամերիկայում, իբր այս երկրի գործակալները հայերին սադրել են ինտրիգների՝ նրանց գրգռելով ապստամբության օրինական միապետի դեմ, և այս երկիրը պատասխանատու է արդյունք հանդիսացած սարսափների համար: Ես լիովին համոզված եմ, որ պառլամենտը կհավատա ինձ, երբ ես հավաստիացնեմ, որ ոչ մի կարգի ճշմարտություն գոյություն չունի այդպիսի անհիմն պնդման համար: Հայերին ապստամբություն բորբոքելու ոչ մի սադրանք այս երկրի կողմից չի եղել: Ոչ մի փորձ չի եղել նրանց իրենց տերերի դեմ բարձրացնելու, չնայած պառլամենտը հեշտությամբ կտեսնի, որ եթե որևէ այսպիսի փորձ եղած էլ լիներ, իրագործված ոճիրները ներողամտությունից և կամ անգամ արդարացումից շատ հեռու են: Բայց անգամ այս ողորմելի ներողությունը առանց հիմքի է: Ոճիրը կշռադատված է ոչ թե հայ ազգը պատժելու, այլ ոչնչացնելու համար: Դա միակ նպատակն էր, դրա միակ պատճառը:

Պրն. ներկայացուցիչը բավականին բարի էր նշելու համար, որ չնայած իրականացված այս սարսափելի հանցագործությունների քննարկումը կարգով էր, անհրաժեշտ էր գործ ունենալ այն գործնական առաջարկության հետ, որ արվել է հայ ժողովրդից մնացածների վիճակը թեթևացնելու և նրանց փրկելու համար: Իմ պատվարժան ընկերներն արեցին մի քանի առաջարկներ: Իմ պատվարժան ընկերները արեցին մի քանի առաջարկներ: Իմ պատվարժան ընկերը (պրն. Ա. Ուիլիամսն) առաջարկեց, որ մենք ցուցում տանք նավատորմին, որ եթե իրենք հնարավորություն ունենան, փրկեն գաղթականների խմբերին: Ես չգիտեմ, որ Բրիտանիայի նավաստին որևէ ցուցումի կարիք չի ունենա:

ՊՐՆ. Ա. ՈՒԻԼԻԱՄՍ - Թույլ տվեք փնտրել հնարավորությունները:

ԼՈՐԴ ՌՈԲԵՐՏ ՍԵՍԻԼ - Ես միանգամայն վստահ եմ, որ եթե նրանք հնարավորություն ունենան, պատրաստ կլինեն օգտվել նրանից: Ճիշտ ասվեց, որ ֆրանսիական նավատորմը ունեցավ հնարավորություն և փրկեց 4000 հայերի: Ես միանգամայն համոզված եմ, որ եթե այսպիսի հնարավորություն ունենա Բրիտանիայի հրամանատարը, նա միայն ուրախ կլինի կրկնել ֆրանսիացի կոլեգաների օրինակը: Պատվարժան պարոնը խնդրեց ինձ կառավարության անունից ասել, որ մենք պետք է օգտագործենք բանակի և նավատորմի և հյուպատոսական ծառայության յուրաքանչյուր աղբյուր հայերին օգնելու և փրկելու համար: Ես համոզված եմ, որ իմ պատվարժան ընկերն ինձ սխալ չի հասկանա, եթե ես այսպիսի դիմում ներկայացնեմ բանակցություններում: Վերջին հաշվով հայերի ամենամեծ պաշտպանությունը կլինի մեր հաղթանակն այս պատերազմում, դրան կուղղվեն մեր բոլոր ջանքերը: Մեր բանակը, նավատորմը և մեր բոլոր ուժերը պետք է ուղղված լինեն ոչնչացնելու մեր թշնամուն, որտեղ էլ որ նրան գտնենք, մինչև նա կընդունի խաղաղության բանակցությունները, որոնք ընդունելի կլինեն դաշնակիցների համար: Բայց պետք է պարզ լինի, որ առաջին հերթին մենք մեր աչքի առաջ պետք է ունենանք այդ խնդիրը, և միանգամայն համոզված եմ, որ եթե որևէ հնարավորություն ընծեռնվի օգնելու հայերին՝ հյուպատոսների կամ մեր ուժերի միջոցով որևէ գործնական ձևով, կառավարությունը կզգա, որ շատ ազնիվ կլինի օգտագործել մեր ուժերն այդ գործում:

Պալատին ասելու համար կա մի փոքր խնդիր, որ մենք արդեն արել ենք: Կա մի առաջարկ: Մենք հեռագրել ենք Միջագետքում մեր ուժերի հրամանատարին (գեներալ Նիքսոն) և խնդրել ենք նրան կապվել արաբական ցեղերի հետ՝ խնդրելով նրանց հնարավորին չափ օգնել այս դժբախտ գաղթականներին: Սա արդեն արվել է և հուսով եմ, արդյունք կտա: Իմ պատվարժան ընկերը (պրն. Տ. Պ. Օ' Կոները) մի ուրիշ դիմում է ներկայացրել չեզոք պետություններին և նա փաստորեն նշել է Միացյալ Նահանգների և Շվեյցարիայի հանրապետության կառավարությունները:

ՊԱՐՈՆ Տ. Պ.Օ' ԿՈՆԵՐ - Ես արել եմ բացթողում, որը կցանկանայի լրացնել, ես կվերադառնամ որոշ դիմումների, որոնք արել եմ Պապին, և նա արդեն միջամտել է այդ խնդրին:

ԼՈՐԴ ՌՈԲԵՐՏ ՍԵՍԻԼ - Ուրախ եմ, որ ինձ ընդհատեցիք: Այն ինձ հնարավորություն տվեց ասելու, կասեի ամեն դեպքում, որ մարդկությունը երախտապարտ է Նորին սրբություն Պապին այն քայլերի համար, որ նա ձեռնարկել է հայերի անվտանգությունն ապահովելու համար: Նա արել է ամենախիստ զգուշացումը, և եթե դրանք մնացել են առանց հետևանքի, այդ այն պատճառով է, որ քարից դժվար է գթություն սպասելը: Բայց ինչ վերաբերվում է Միացյալ Նահանգների և Շվեյցարիայի հանրապետությունների կառավարություններին արված դիմումներին, որ այդ երկու պետություններից, որն էլ որ ճիշտ համարի դիմել Գերմանիայի կառավարությանը, ոչ ոք ավելի ուրախ չի լինի և ոչ ոք ավելի սրտանց չի ողջունի այդ քայլը, քան մեր երկիրը: Ի վերջո, մենք չենք, որ նրանց պիտի թելադրենք կամ առաջարկենք նրանց պարտականությունն այս դեպքում: Յուրաքանչյուր կառավարությունն ինքը պետք է որոշի, թե ինչ պետք է անի այլ պետության վերաբերյալ, բացի այն դիմումներից, որոնք արվում են

այլ կառավարության անունից: Չնայած ես պատրաստ եմ միանալու իմ պատվարժան ընկերոջը, որն արտահայտեց այն միտքը, որ յուրաքանչյուր երկիր ինքը պետք է որոշի ինչ կարելի է անել հայերի համար, չեմ կարծում, որ մեր կառավարության համար ճիշտ կլինի սրանից ավելին անել:

Իմ պատվարժան ընկերն ասաց և ճիշտ էլ ասաց, որ մենք չենք, որ պետք է զգուշացում անենք գերմանացիներին: Այն կլինի անօգուտ, և մենք այն չենք անի: Բայց ի վերջո նրանք միակ ժողովուրդն են, որ կարող են դադարեցնել կոտորածը և փրկել հայերին, եթե ուզենան: Շատ հետաքրքիր պամֆլետում կարդացի, որ ոչ մի բավարար ապացույց չկա, և չի կարող ներկայացվել գերմանացիների ուղղակի մասնակցության վերաբերյալ, բայց գերմանացիների անուղղակի մասնակցությունը կասկածից դուրս է: Նրանց պաշտպանում է ոչ միայն կոմս Ռևենտլոն, բայց ինչպես կարդացել եմ գերմանական թերթերից մեկում, Շվեյցարիայում ապրող մի գերմանացու հաղորդագրությունից բացի, ոչ մի բողոք կամ այդպիսի մի բան չի տպագրվել գերմանական թերթերում: Ոչ միայն սա, խիստ կհնչի, սակայն ճշմարիտ է, որ գերմանական միլիտարիզմի կրեդոն տրամաբանորեն տանում է այսպիսի հանցագործությունների: Ոչ մի րոպե թույլ մի տվեք մեզ մոռանալ, թե ինչ սարսափելի է, չնայած այն կարող է գրավիչ կերպով է ներկայացվում, գերմանական միլիտարիզմը: Նշանակում է, որ այն ամենը, ինչ ծառայում է պետության շահերին, արդարացված է: Պետությունը դրվում է մի տեղ, որը շրջապատված է այլ ազգերի մեջ կրոնով և բարոյականությամբ: Եթե դու ընդունում ես այն, եթե դու ընդունում ես, որ այսպես կոչված ձևական հայրենասիրությունը արդարացում է ցանկացած հանցագործության համար, ազգի ետզարգացման համար սահման չի կարող լինել նրանց համար, ովքեր ընդունում են այս հավատը: Մեր երկրում, հուսով եմ, մենք երբեք չենք ընդունի այս մտածողությունը: Մենք համաձայն ենք, գոնե ես ամբողջ սրտով, մահից առաջ Էդիթ Քեյվըլի ասածի հետ. «Միայն հայրենասիրությունը բավարար չէ»:

Սա մի բան է, որ կարող էր ասել մեծ հայրենասերը և նա այդպիսին էր: Սա ասվել է մեծ հայրենասերի կողմից, և հիմնավոր ճշմարտություն է, որ միայն հայրենասիրությունը բավարար չէ և այդ պատճառով է, որ գերմանացիները չեն հասկացել և անտեսել են այդ ճշմարտությունը, որ նրանք մեղսակից են նաև այս հանցագործությանը, և քանի դեռ նրանք չեն լքել իրենց պաշտամունքը, նրանք կիջնեն ավելի ներքև քան հիմա են:

ՍԱՅՈՐ ԼԵՅՆ-ՖՈՔՍ - ...Ես ոչինչ չեմ ուզում ասել հենց նոր մեր լսած երեք հետաքրքիր զեկուցումների ճշմարիտ լինելու մասին, բայց նրանք լսելով՝ մարդ չի կարող չմտածել, որ ինչպես ճշտորեն ասաց Արտաքին գործոց նախարարության ներկայացուցիչը, քանի դեռ մենք չենք կարողացել հաղթել պատերազմում, օգուտ չկա Հայկական հարցի վերաբերյալ ներկայիս քննարկումից, որովհետև այժմ մենք լրիվ կորցրել ենք նրանով զբաղվելու իրական հսկողությունը:

Աղբյուր՝ 1. *House of Commons, Hansard (5th series) vol. LXXV, 16 November 1915, col. 1770-1776.*

2. British Parliamentary Debates on the Armenian Genocide, 1915-1918 Intruduced by Ara Sarafian and Eric Avebury, London 2003, pp. 14-28.

6. ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

21 դեկտեմբերի, 1916թ.

ՊՐՆ. ԱՆԵՎՐԻՆ ՈՒԻԼԱՄՍԸ (անճամբ հասցեատիրոջը) հարցրեց Արտաքին գործոց նախարարության պետական քարտուղարին, թե արդյոք Նորին գերազանցության կառավարությունը վերջերս որևէ զեկուցագիր կամ տեղեկություն է ստացել այս պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրության հայ բնակիչների հանդեպ վերաբերմունքի մասին, բացի արդեն եղածից:

ԼՈՐԴ Ռ. ՍԵՍԻԼ - Նորին գերազանցության կառավարությունը վստահելի աղբյուրից տեղեկություն է ստացել վերջերս, որն ավելի մանրամասն վկայություն է տալիս համակարգված դաժանությունների ու բռնությունների վերաբերյալ, որ ցուցաբերվել է իրենց տներից տեղահանված բազմաթիվ հայերի նկատմամբ: Վկայությունը ցույց է տալիս, որ այս մարդկանց ոչնչացնելու համար թուրք պաշտոնյաները դիմել են տարբեր մեթոդների՝ սով, վարակիչ հիվանդություններ, տարիքավոր տղամարդկանց, կանանց, երեխաների ստիպողական երթ, վերջապես, աշխատանքային գումարտակների կոտորած՝ չենթարկվելու պատրվակով:

ՊՐՆ. ՈՒԻԼԻԱՄՍ - Արդյո՞ք պատվարժան պարոնը կհրատարակի և շրջաառության մեջ կդնի այս տեղեկությունը:

ԼՈՐԴ Ռ. ՍԵՍԻԼ - Կարծում եմ, այո: Ինձ թվում է այդ հնարավոր կլինի և անպայման կարվի:

ՊՐՆ. Տ. Պ. Օ' ԿՈՆՆԵՐ - Կարո՞ղ եմ հարցնել ազնվազարմ լորդին, թե արդյո՞ք նա կարող է ներկայացնել որևէ ապացույց, որ գերմանական կառավարությունը երբևէ բողոքած լինի՝ թուրքական իշխանությունների կողմից հայերին կոտորելու համար:

ԼՈՐԴ Ռ. ՍԵՍԻԼ - Ոչ, սըր: Որքան գիտեմ, այդպիսի ոչ մի բողոք չի եղել:

ՊՐՆ. Տ. Պ. Օ' ԿՈՆՆԵՐ - Միթե՞ ճիշտ չեմ, ասելով, որ այս կոտորածներն ու այլ միջոցառումները պաշտոնապես պաշտպանել է գերմանական ռայխստագը:

ԼՈՐԴ Ռ. ՍԵՍԻԼ - Վստահ եմ, որ նրանք պաշտպանել են դրանք և կասկած չկա, որ Գերմանական կառավարությունը ուժ կունենար վերջ դնելու բռնություններին, եթե ուզեներ, բայց չի արել:

ՊՐՆ. ԷԴՎԻՆ ԿՈՐՆՎԱԼԸ հարցրեց Արտաքին գործոց նախարարության պետական քարտուղարին, թե արդյոք կա որևէ պաշտոնական տվյալ սպանված հայերի թվաքանակի մասին, և թե արդյոք այդ հարցի վերաբերյալ որևէ հաղորդագրություն է փոխանակվել Միացյալ Նահանգների և Բրիտանիայի կառավարությունների միջև, եթե այո, կարող է արդյո՞ք նա որևէ տեղեկություն տալ պալատին դրանց վերաբերյալ:

ԼՈՐԴ Ռ. ՍԵՍԻԼ - Ցավում եմ, որ տվյալ պայմաններում տեղի ունեցած կոտորածի պատճառով հնարավոր չէ ձեռք բերել որևէ պաշտոնական տվյալ սպանվածների թվի մասին, և ոչ էլ մենք ենք ստացել կամ Միացյալ Նահանգների կառավարությանը որևէ հաղորդագրություն ենք

ուղարկել այդ մասին: Վախենում եմ, որ անհնար է որևէ օգտակար բան անել այս սարսափելի իրադարձությունների ուղղությամբ:

Աղբյուր՝ *1. House of Lords, Hansard (5th series) vol. LXXXVIII, 21 December 1916, col. 1636-1637.*
2. British Parliamentary Debates on the Armenian Genocide, 1915-1918 Intruduced by Ara Sarafian and Eric Avebury, London 2003, pp. 28-29.

7. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱԼԱՏ

6 նոյեմբերի, 1917թ.

1917թ. նոյեմբերի 6-ին համայնքների պալատում տեղի ունեցած քննարկումների ընթացքում, արտաքին գործերի նախարար ԱՐԹՈՒՐ ԲԱԼՖՈՒՐԸ դիմելով որոշ պացիֆիստների ասաց.

- Դուք պետք է հիշեք, որ սա մի պատերազմ է, որը չնայած ոչ մեր մեղքով, գործնականում տարածվեց ոչ միայն Եվրոպայի, այլ Ասիայի մեծ մասի վրա: Արդյո՞ք հարգարժան ջենտելմենները հետաքրքրություն չունեն, օրինակ, Թուրքական կայսրության այն տարրերի նկատմամբ, որոնք տառապել և տառապում են ոչ միայն անհիշխանության, այլ նաև ամենադաժան և բարբարոսական բռնապետության ներքո: Արդյո՞ք Հայաստանը ոչինչ է: Արդյո՞ք Արաբիան ոչինչ է: Նրանք խոսում են ժողովրդավարացման մասին, որն անգնահատելի է, երբ վերաբերում է որոշ աստիճանի առաջադեմ պետությունների: Դա հուսալի կառավարման երաշխիք է: Բայց դուք չեք կարող ժողովրդավարացնել Թուրքիան: Դա բավականին անհնար կլինի: Բավական հասկանալի է. դրա վերաբերյալ մենք փորձնական ապացույց ունենք: Թուրքիան և դաշնակից ազգերը բռնական ձևով ընկած են դաժան կառավարության ներքո: Պատմությունը ցույց է տալիս, որ ինչպես էլ ցնցեք, նրանք բռնականոն կերպով նորից բյուրեղանում են բացարձակ ձևի որոշ իշխանության մեջ: Վերցրեք Թուրքիան: Ի՞նչ պատահեց: Սուլթանը տապալվեց, և մենք կարծեցինք, որ ունենալու ենք ժողովրդավարացված Թուրքիա: Մենք գիտենք, թե դեպի ուր այն շրջվեց: Այն դարձել է այնքան կենտրոնացված, այնքան տգետ և բարբարոս և ավելի քիչ ընդունակ, քան համենայն դեպս սարսափելի մեծ սուլթանի օրոք էր, որը կառավարեց այդ ազգը: Պետք է արդյո՞ք մեզ համար անտարբերության փաստ դառնա այն, որ Հայաստանը պետք է ետ վերադարձվի, ինչպես հարգարժան ջենտելմենները ցանկանում են վերադարձնել նրան իրենց բանաձևով, Թուրքիայի իշխանության ներքո: Ես չեմ ցանկանում քանդել իսկական թուրքական համայնքը՝ կազմված թուրքերից, թուրքերին սազական ձևով, թուրքերին կառավարող: Հակառակը, մեր հաստատուն նպատակը ո՛չ թուրք ազգերին թուրքական իշխանությունից ազատագրումն է: Բոլորդ միասին թույլ մի տվեք մեզ մեր տեսողությունից, որպես մեր նպատակներից մեկը, որին մենք պարտավոր ենք ձգտել, այն պարտականության դուրս թողնելը՝ թուրքական իշխանությունից այն ազգերի ազատումը, որոնք թուրք չեն, բռնության են ենթարկվել թուրքերի կողմից և որոնք, կարծում եմ, կբարգավաճեն եթե դրվեն իրենց սեփական ավանդույթների և իշխանության ներքո, եթե միայն նրանց տրվի հնարավորություն...:

Ի՞նչն է իմպերիալիստական, ցանկության մեջ՝ տեսնելու Լեհաստանն անկախ, Հայաստանն ազատագրված թուրքերից, Էլզաս Լոթարինգիան՝ վերամիացած Ֆրանսիային, տեսնելու, որ Իտալիան ունենալու է իր սեփական ազգը, լեզուն և քաղաքակրթությունն ընդգրկող տարածությունը:

Աղբյուր *1. "The New Armenia", vol. X, No. 2, February, 1918, New York.*
2. Հայոց ցեղասպանության դատապարտումը Մեծ Բրիտանիայի խորհրդարանում (1915-1918թթ.) կազմեց Տ.Սարուխանյանը, Երևան, 2000թ., էջ 32-33.

ԼԼՈՅԴ ՋՈՐՋ – Հայաստանը, ինչպես յուրաքանչյուրը պետք է տեսնի ժողովուրդների ազատության գործադրությունը: Անհատական դավաճանությունները մեկ անգամ ևս ապացուցում են, որ յուրաքանչյուր ժողովուրդ պետք է ապրի իր հայրենիքի մեջ, ինքնուրույն, որպեսզի խաղաղություն վայելի:

Հայերը պետք է վերգտնեն իրենց անկախությունը: Շատ կարևորություն չունի, երբ արդար սկզբունքների գործադրման համար այս կամ այն երկիրը ենթարկվի տակնուվրայությունների, մանավանդ երբ խնդիրն ավազակների երկրի մասին է, որտեղ գերմանական յաթաղանը գործում է գահաժառանգ իշխանի վրա, ինչպես նաև նախկին սուլթանի (զարմացական բացականչություններ) և որտեղ արքայասպանությունն արքայասպանության այնպիսի վարպետությամբ է հաջորդում, որ բեղինյան հոտ է զգացվում: Ճշմարիտ սոսկումի զգացումով է, որ դիտում ենք ոճիրի միջոցով այն երկրի առաջադիմությանը, որը Պրուսիայի հետ իր դաշինքից առաջ միայն տգիտություն ուներ: Պարոննե՛ր, այդ երկիրը, միայն այնտեղ ապրողների շահի համար պետք է անդառնալիորեն Եվրոպական մայր ցամաքից դուրս նետվի, քանի որ վճռապես անընդունակ է արևմտյան քաղաքակրթության համար (ծափեր):

Հետո գալիս է իսրայելցի ժողովուրդը, որի մասին կփորձեմ ամբողջ ուժով շեշտել Միացյալ Նահանգների նախագահի գովեստները, որոնք այնքան են ճշմարիտ, որ լիովին արժանահավատ են (խանդավառություն լորդերի օթյակի մեջ): Մեծ Բրիտանիան արդեն հայտնում է իր դիտավորությունը Պաղեստինում: Անգլիայի, Ֆրանսիայի և մյուս դաշնակիցների անունից ձեզ պետք է հաղորդեմ մեր որոշումը՝ իսրայելցիները պետք է ստանան ժողովրդի բոլոր իրավունքները ամենալայն ձևով (ծափեր): Թուրքիայի առևտուրը, առանց այդ տարրի, որին պետք է շնորհվի կարողունակության շքանշանը, պետք է ոչնչանար: Հայերն ու իսրայելցիները ավելի շատ իրավունք ունեն կյանքի և պետք է մեր պաշտպանությունը ունենան, քան նրանք, ովքեր տգետ հալածիչներ են (երկարատև ծափահարություններ և հավանության շարժումներ ամբողջ դահլիճով մեկ):

Նրանք ոչ միայն մեր, այլ նաև չեզոքների պաշտպանությունը պետք է վայելեն, որոնց զգացմունքները, մեր հակառակորդների հետ համեմատած, ամեն բացատրությունից վեր է: Այդ չեզոքներից բոլորն էլ պետք է մեր կողմը անցնեին, եթե մեզ անհրաժեշտ լիներ նրանց օգնությունը:

Աղբյուր *1. Ենովք Արմեն, Լօյտ Ճօրճի հռչակավոր ճառը եվ Հայկական Խնդիրը անգլիական Խորհրդարանին մէջ, Կ.Պոլիս, 1919, էջ 6-7:*
2. Հայոց ցեղասպանության դատապարտումը Մեծ Բրիտանիայի խորհրդարանում (1915-1918թթ.) Երևան, 2000թ, էջ 33-34.

8. ՀԵՏԱՁԳՈՒՄ
ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ, ՎԱՐՉԱՊԵՏԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

20 դեկտեմբերի, 1917թ.

ԴԵՎԻԴ ԼԼՈՅԴ ՋՈՐՋ - Ահա այն բառերը, որ համարձակվում եմ օգտագործել Միջագետքի և գաղութների վերաբերյալ (Գլազգոյում ելույթի ժամանակ):

«Թե ինչ տեղի կունենա Միջագետքի հետ պետք է թողնել Խաղաղության կոնգրեսին, երբ այն գումարվի, բայց կա մի բան, որ երբեք չպիտի տեղի ունենա: Այն երբեք չպիտի վերադարձվի թուրքերի քայքայիչ բռնատիրությանը: Լավագույն դեպքում, այն եղել է այդ հանրաճանաչ երկրի հոգաբարձուն՝ քաղաքակրթության կողմից: Ահ, ի՞նչ հոգաբարձու: Նա կեղծ էր իրեն վստահված երկրի հանդեպ, իսկ հոգաբարձությունը պետք է հանճնվի ավելի լավատեղյակ և ավելի արդարացի ձեռքերի, որին կընտրի կոնգրեսը, որը կլուծի աշխարհի հարցերը: Այդ նույնը վերաբերվում է նաև Հայաստանին, մի երկրի, որը ներծծված է անմեղների արյունով, և կոտորվել է մի ժողովրդի կողմից, որը կոչված էր պաշտպանել նրան»:

Սա վերաբերվում է Միջագետքին: Այժմ կանդրադառնամ գաղութների հարցին և սա է այն հայտարարությունը, որ արել եմ այն ժամանակ.

«Ինչ վերաբերվում է Գերմանիայի գաղութներին, այդ խնդիրը պետք է կարգավորի Խաղաղության միջազգային կոնգրեսը: Թույլ տվեք նշել, որ մեզ քննադատողները ասում են, իբր մենք գրավել ենք գերմանացիներով բնակեցված տարածքները, կարծես թե մենք Տևտոնական ժողովրդին ենթարկել ենք Բրիտանական իշխանությանը: Երբ հասնենք այն հարցի կարգավորմանը, թե ովքեր են լինելու այս ոչ քաղաքակիրթ հողերի հոգաբարձուն, դուք պետք է հաշվի առնեք այդ ժողովրդի զգացմունքները, թե ինչպիսի վստահություն է ներշնչվել անկիրթ ուղեղներին գերմանական իշխանության կողմից, որը նրանք կրել են, արդյոք նրանք ուզում են նորից վերադառնալ նախկին տերերի մոտ, թե ավելի կգերադասեն իրենց ճակատագիրը վստահել ուրիշներին՝ ավելի արդարացի և, կարող եմ վստահ ասել, ավելի կիրթ ձեռքերին, քան նրանք, ովքեր ղեկավարում էի իրենց մինչև այսօր: Ցանկություններն ու այդ մարդկանց հետաքրքրությունները պետք է գերիշխող լինեն նրանց ապագա կառավարության հարցը կարգավորելիս»:

Սրանցից որի՞ն մարտահրավեր կնետեն պատվարժան պարոնայք: Մի՞թե առաջարկվում է, թե արաբներն ուզում են վերադառնալ թուրքերի իշխանության ներքո, թե ոչ, եթե նույնիսկ նրանք չեն ուզում, մենք նրանց պիտի վերադարձնենք: Կամ հայերին, որոնք ենթարկվել են ահաբեկչության ու կոտորածի, մի՞թե մենք կասենք «Հանուն միջազգային բարոյականության և խաղաղության և մարդկանց միջև բարի կամքի, վերադարձ», իսկ ինչ վերաբերվում է Գերմանիայի գաղութներին, որոնց մասին այնպիսի պատմություններ են պատմվում, որ մարդ ցնցվում է, մի՞թե մենք կարող ենք այս թշվառ, անօգնական մարդկանց, որոնք խնդրում, աղերսում են չվերադառնալ գերմանացիների մոտ, ասել «Այո, մենք կվերադարձնենք,

ուզում եք, թե ոչ»: Մի՞թե սա է պահանջը: Օգուտ չկա քննադատելուց, քանի դեռ չգիտենք, թե ինչ է այն: Ինչ՞ է այն: Մարդկանց ցանկությունը, զգացմունքը Եվրոպայի սպիտակների հետ լինելն է, ոչ թե թշվառ սևերի, ոչ թե արաբների:

Աղբյուր՝ 1. *House of Commons, Hansard (5th series) vol. C, 20 December 1917, col. 2220.*
2. British Parliamentary Debates on the Armenian Genocide, 1915-1918 Intruduced by Ara Sarafian and Eric Avebury, London 2003, pp. 29-30.

9. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱԼԱՏ

11 հուլիսի, 1918թ.

ՊՐՆ. ԲԱԼՖՈՒՐԸ 1918թ. հուլիսի 11-ին համայնքների պալատում պատասխանելով պն. Ռամսեյ Մակդոնալդի հարցադրմանն ասաց. «Նորին գերազանցության կառավարությունը լուրջ համակրանքով և հիացմունքով է հետևում Կովկասում հայերի իրենց ազատության և արժանապատվության համար պաշտպանության քաջ դիմադրությանը: Ես կցանկանայի հարգարժան անդամին հղել դաշնակից տերությունների ղեկավար պետական անձանց այն հրապարակային հայտարարություններին՝ ի պաշտպանություն հայկական հարցի ինքնորոշման սկզբունքով լուծման»:

Աղբյուր *1. Aram P. Aivazian, Usurped By Genocide and Treachery: Documentary – Protest of a Survivor, Montreal, 1992, p. 214.*
2. Հայոց ցեղասպանության դատապարտումը Մեծ Բրիտանիայի խորհրդարանում (1915-1918թթ.), Երևան, 2000թ., էջ 34-35.

10. ԲԱՔՎԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ (Հայկական ուժը)

Հինգշաբթի, 24 հոկտեմբերի, 1918թ.

ՍԱՅՈՐ ՋՈՐՋ ՊԻԼԸ հարցրեց արտաքին գործերի նախարարին, թե արդյո՞ք նա ի վիճակի է տրամադրելու որևէ տեղեկություն գեներալ Դյունսթերվիլի կողմից Բաքվի վերջին էվակուացիայի ժամանակ տեղի հայկական ուժի բարյացկամության կամ այլ կերպ՝ նրա գործողության վերաբերյալ:

ԼՈՐԴ Ռ. ՍԵՄԻԼ – Կարող է թվալ, որ հասարակական կարծիքի մեջ գոյություն ունի որոշ չափի թյուրիմացություն, Բաքվի հանձնման առնչությամբ, տեղական հայկական ուժի՝ թշնամու հետ բանակցությունների մեջ մտնելու գործողության հետ կապված: Այժմ, Նորին գերազանցության կառավարությունը տեղեկացվել է, որ հայերի կողմից այս բանակցությունները նախաձեռնվել են գեներալ Դյունսթերվիլի խորհրդով, երբ նա տեսավ, որ քաղաքի անկումը վերահաս է, և ուստի, այս տեսակետից ոչ մի կշտամբանք չի ընկնում հայերի գործողությունների վրա:

ՊՐՆ. ԱՆԵՎՐԻՆ ՈՒԻԼԻԱՄՍ – Ինչպե՞ս այդ զեկուցումը տարածվեց այս երկրում. այդ դեպքի վերաբերյալ դառնալով տարածվող՝ այս հարցում կշտամբելով հայերին:

ԼՈՐԴ Ռ. ՍԵՍԻԼ - Ես վախենում եմ, որ չկարողանամ պատասխանել այդ հարցին առանց ծանուցման: Ուրախ եմ, որ ունեմ այս հնարավորությունը՝ դարձնելու խնդիրը բացարձակապես հասկանալի:

ՊՐՆ. ԲԼԻՍ – Փաստ չէ՞ այն, որ հայերը թուրքական արշավանքի ընթացքում մատուցեցին քաջարի ծառայություն դաշնակցային դատին:

ԼՈՐԴ Ռ. ՍԵՍԻԼ – Ես հավատում եմ, որ դա ճշմարիտ է: Անտարակույս, դաշնակիցների դատը մի նշանակալի պարտք ունի հայերի գործողությունների նկատմամբ:

ՊՐՆ. ՀՈՋ – Կարո՞ղ է արդյոք, ազնվական լորդը Բաքվի ուժերի ապահովության վերաբերյալ, մեզ որևէ տեղեկություն տալ:

ԼՈՐԴ Ռ. ՍԵՍԻԼ – Հայկական ուժերի, թե՞ բրիտանական:

ՊՐՆ. ՀՈՋ - Բրիտանական:

ԼՈՐԴ Ռ. ՍԵՍԻԼ - Բրիտանական ուժն ապահով է:

Աղբյուր *1. "Parliamentary Debates House of Lords, November 13, 1918. House of Commons, October 23,24,30,31 November 6,1,12,14,18 1918. Armenia. London", p. 8.*
2. Հայոց ցեղասպանության դատապարտումը Մեծ Բրիտանիայի խորհրդարանում (1915-1918թթ.) Երևան, 2000թ., էջ 46.

11. ԶԻՆԱԴԱԴԱՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ. ԹՈՒՐՔԻԱ

Հինգշաբթի, 7 նոյեմբերի, 1918թ.

ՍԱՅՈՐ ՉԵՓԼԸ հարցրեց արտաքին գործերի նախարարին, թե արդյո՞ք Թուրքիայի հետ զինադադարի հոդվածներում որևէ պայման վերապահվել է Հայաստանի նկատմամբ և արդյո՞ք որևէ նախազգուշական միջոցառումներ են ձեռնարկվել երաշխավորելու այնտեղ կոտորածների վերակրկնման դեմ:

ԼՈՐԴ Ռ. ՍԵՍԻԼ – Թուրքիայի հետ զինադադարի բոլոր պայմանները դարձել են հրապարակային:

ՊՐՆ. ԱՆԵՎՐԻՆ ՈՒԻԼԻԱՄՍԸ հարցրեց արտաքին գործերի նախարարին, թե արդյո՞ք Հայաստանի առնչությամբ անհանգիստ քողի և Թուրքիայի հետ զինադադարի 24-րդ հոդվածի սահմանափակ բովանդակության տեսանկյունից, Նորին գերազանցության կառավարությունը կարող է մեզ հավաստիացնել, որ Հայաստանը, ներառելով Փ. Հայքը կամ Կիլիկիան, չեն մնա թուրքական իշխանության կամ ինքնիշխանության որևիցե ձևի ներքո:

ԼՈՐԴ Ռ. ՍԵՍԻԼ - Ես խնդրում եմ իմ հարգարժան ընկերոջը հիմք ընդունել այն պատասխանները, որոնք խնդրո վերաբերյալ ես տվեցի իմ հարգելի ընկերոջը երեկ, որոնց ես որևէ լրացում չունեմ:

ՊՐՆ. Ռ. ԿՈՒՊԵՐ - Արդյո՞ք փաստարկ է, որ որևէ պայման գոյություն չունի հատկապես Հայաստանի վերաբերյալ, քան այն, որը հրապարակվել է:

ՊՐՆ. ԲՈՆԱՐ ԼՈՈՒ – Հրապարակվածների ետևում գոյություն չունեն որևէ այլ պայմաններ:

Աղբյուր *1. "Parliamentary Debates House of Lords, November 13, 1918. House of Commons, October 23,24,30,31 November 6,1,12,14,18 1918. Armenia. London". p. 10.*
2. Հայոց ցեղասպանության դատապարտումը Մեծ Բրիտանիայի խորհրդարանում (1915-1918թթ.), Երևան, 2000թ., էջ 50.

12. ՀԱՅԱՍՏԱՆ

12 նոյեմբերի, 1918թ.

ՊՐՆ. ՌԱՄՍԵՅ ՄԱԿ ԴՈՆԱԼԴԸ հարցրեց Արտաքին գործոց նախարարության պետական քարտուղարին, թե արդյոք նա հետևում է այն դիմադրությանը, որ ցուցաբերում են հայերը Թուրքական բանակին, որը ձգտում է տապալել Հայաստանի Հանրապետությունը՝ որպես հետևանք այդ հանրապետության հայտարարության, որ չի ընդունի Բրեստ-Լիտովսկի պայմանագրի դրույթները Հայաստանի վերաբերյալ, և արդյոք դաշնակից կառավարությունները հանձն կառնեն անելու ինչ կարող են, երբ պատերազմից հետո գա որոշելու, որ Հայաստանի ապագան կորոշվի ինքնորոշման սկզբունքի համաձայն:

ՊՐՆ. ԲԵԼՖՈՐ - Այո, սըր, Նորին գերազանցության կառավարությունը անկեղծ համակրանքով է հետևում հայերի արի դիմադրությանը՝ ի պաշտպանություն իրենց ազատության և պատվի, և անում հնարավոր ամեն ինչ նրանց օգնելու համար: Ինչ վերաբերվում է Հայաստանի ապագային, ես կանդրադառնամ պատվարժան անդամի հայտարարությանը, որ դաշնակից տերությունների առաջատար պետական գործիչներն արել են հոգուտ կարգավորման այն սկզբունքների, որ նա մատնանշեց:

Աղբյուր՝ *1. House of Commons, Hansard (5th series) vol. 108, 12 November 1918, col. 473.*
2. British Parliamentary Debates on the Armenian Genocide, 1915-1918 Intruduced by Ara Sarafian and Eric Avebury, London 2003, pp. 30-31.

13. ԼՈՐԴԵՐԻ ՊԱԼԱՏ
ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ԿԻԼԻԿԻԱ

Չորեքշաբթի, 13 նոյեմբերի, 1918թ.

ՎԻԿՈՆՏ ԲՐԱՅՍԸ բարձրացավ հարցնելու Նորին գերազանցության կառավարությանը, թե արդյո՞ք նրանք հաշվի կառնեն,կարգ ու կանոնի պահպանման համար օկուպացիայի նպատակահարմարությունը Հայաստանի և Կիլիկիայի շրջաններում, որտեղ խռովությունները մեծամասամբ հավանական են ծագելու, կամ գոնե այս շրջաններ առանձնացված զորքեր ուղարկել՝ նկատի ունենալով հետևյալ փաստերը.

1. Վերջին զինադադարի պայմանների համաձայն թուրքական բանակի ապառազմականացումը ազատ է արձակում զինված մարդկանց մի մեծ քանակություն, հավանական դառնալու խաղաղասեր բնակչության համար վտանգի աղբյուր, քանի որ վերը նշված երկրամասերում սնունդը հատկապես ավելի սակավ է:

2. Այն, որ վերջին կոտորածների քրիստոնյա փախստականները, որոնք ցանկանում են վերադառնալ իրենց տները և ցանել իրենց դաշտերը հաջորդ բերքահավաքի համար, չեն կարող վարվել այդպես այդ երկրամասերի ներկա անիշխանության պայմաններում:

3. Այն, որ քրիստոնյա կանանց մի մեծ քանակություն, որոնք կոտորածների ժամանակ գերվեցին և թուրքական պաշտոնյաների կողմից հրապարակավ վաճառվեցին ստրկության թուրքական հարեմներ, չեն կարող ազատվել այս ստրկությունից առանց եվրոպական պաշտոնյաների իշխանության և գործողության:

Ազնվական վիկոնտն ասաց.

- Միլորդնե՛ր, ես նպատակ չունեմ այս հարցի վերաբերյալ որևէ ձևով ձեր ուշադրությունը դարձնել Փոքր Ասիայի տարածքների, որոնք մինչև այժմ պատկանել են Օսմանյան կայսրությանը, վերջնական տնօրինման վրա: Ես ավելի շատ ցանկանում եմ Ձերդ պայծառափայլ լորդերի ուշադրությունը դարձնել մի անմիջական հրատապ հարցի, և այս տարածքների հետագա ճակատագրի գլխավոր հարցի վերաբերյալ ես չեմ ծավալվի այնչափ, որքան ասելով հետևյալը: Նորին գերազանցության կառավարությունը տվել է մեզ հավաստիացումներ կամ նմանատիպը տրվել են դաշնակից պետությունների կառավարությունների կողմից, որ թուրքերի տիրապետությունն ամբողջապես կվոխարինվի և կոչնչացվի այն շրջաններում, որտեղ բնակչության մեծ մասը քրիստոնյա է, այնպես որ այս գարշելի կառավարությունը, որը հանդիսացել է Արևմտյան Ասիայի վեցդարյա նզովքը, այլևս ոչ մի հնարավորություն չի ունենա ճնշելու կամ կոտորելու իր քրիստոնյա հպատակներին: Նորին գերազանցության կողմից արված հայտարարությունները այնքան անկեղծ և կրկնվող են եղել, որ չեմ կարծում անհրաժեշտ է անել ավելին, քան ասել, որ մենք դրանք ի գիտություն ենք ընդունել մեծ բավարարվածությամբ: Հիրավի, Նորին գերազանցության կառավարությունը չէր կարող հայտարարել իր նպատակը որևէ այլ ձևով. ինչպես իրենք, այնպես էլ մենք գիտենք, թե որքան ուժեղ է հասարակական զգացումը այս երկրում և որքան ուժեղ է նաև այդ նույն զգացումը Ամերիկայի Միացյալ Նահանգներում, մի երկիր, որն արևելյան քրիստոնյաների համար ավելի շատ բան է արել, քան երբևէ որևէ այլ ժողովուրդ:

Ապա, միլորդնե՛ր, ես գալիս եմ այն հարցին, որը բարձրացրել եմ Առաջարկության ծանուցման մեջ: Ես այս ծանուցումը ամբողջական տեսքի եմ բերել, որպեսզի կարողանամ ժամանակ խնայել, առանց այդքան շատ մտնելու մանրամասների մեջ, որն այլ կերպ պետք է ստիպված լինեի անել: Ուստի, ես պարզապես կմեկնաբանեմ այն կետերը, որոնք բարձրացված են իմ ծանուցման մեջ և կխնդրեմ Նորին գերազանցության կառավարությանը նկատի առնել այն բացառիկ հրատապությունը, որ այդ հարցը ունի. հրատապության պատճառները առաջադրվում են այն բառերի մեջ, որոնք ես օգտագործել եմ: Քննարկվող խնդրի առաջին մասում ես հարցնում եմ Նորին գերազանցության կառավարությանը, թե արդյո՞ք

հաշվի կառնի, Հայաստանի և Կիլիկիայի շրջաններում, որտեղ անկարգապահությունը մեծամասամբ հավանական է ծագելու, կարգ ու կանոնի պահպանման համար օկուպացման նպատակահարմարությունը: Թուրքերի հետ կնքված զինադադարով գոյություն ունի մի կետ, համաձայն որի, եթե անկարգություն ծագի դաշնակից տերությունները կարող են այդ շրջաններն օկուպացնելու համար զորք ուղարկել: Մեծ զարմանքի էր արժանացել այն, որ դաշնակից կառավարությունների կողմից Թուրքիային շնորհված պայմանները պետք է լինեին ավելի մեղմ, քան նրանք, որոնք շնորհվեցին, օրինակի համար, Ավստրիային, և կարծում եմ, որ այդ զարմանքն անբնական չէր, որովհետև թուրքերը բացարձակապես գտնվում էին դաշնակիցների ողորմության ներքո: Նրանք կատարելապես անօգնական էին: Նրանց բանակի մեծ մասը շրջապատվել էր և դյուրին կլիներ դաշնակից տերություններին նրանց հատկացնելու ցանկացած բան, որը հարմար էին կարծում:

Ինչպես իրազեկ են Ձերդ պայծառափայլ լորդերը, ներկա թուրքական կառավարությունը ընդգրկում է որոշ քանակությամբ մարդիկ, որոնք եղել են այն ցնցող կոտորածների (որոնք տեղի ունեցան 1915 թվականին) մեղքի գործընկերները: Ձերդ պայծառափայլ լորդերից նրանք, ովքեր ցանկանում են թարմացնել իրենց հիշողությունը, կարող են դիմել Կապույտ գրքին, որը տպագրվել է արտաքին գործերի նախարարության կողմից 1916թ., որի մեջ դուք կգտնեք արձանագրություններ այն սարսափելի կոտորածների, որոնք ամենուրեք ծանուցվում են պատմության մեջ, որքան էլ փորձվել են չտրվել հավանության կամ արդարացվել: Ոչ միայն Թալեաթ փաշան, ոճրագործների մեջ, որոնք այդ պահին ստեղծեցին Միություն և Առաջադիմություն կոմիտեն, ամենաանհանգավորը, այլ և մի շարք անձինք, որոնք դեռևս գոյություն ունեցող թուրքական կառավարության անդամ են, պետք է կրեն այդ կոտորածների մեղքը: Լինելով այդպիսին, զարմանալի է, որ նման կառավարությունից պահանջվեց ամեն ինչ, բացի անվերապահ անձնատուր լինելուց:

Դրանից ես անցնում են նրան, թե ինչ պետք է կատարվի այժմ: Անհիշխանությունն այս երկրամասերի խրոնիկական պայմանն է: Երբ զինադադարն ազդարարեց, որ եթե անկարգություն ծագի, դաշնակից տերությունները պետք է ազատ լինեն զորքեր ուղարկելու, մոռացված է թվում այն, որ այս երկրամասերը միշտ գտնվում են անկարգության մեջ: Եվ որ եթե որևէ արտակարգ բան ծագի, դա կարող է լինել մի կարևոր պահ՝ եղած արդյունք լուրջ չարիքների, նախքան լուրերը հասած կլինեն դաշնակից հրամանատարներին, որպեսզի իրավունք տան նրանց ուղարկել զորքեր, որոնք կպահանջվեն ճնշելու համար այդ անկարգությունները:

Ես պնդում եմ Նորին գերազանցության կառավարությանը, որ ամենամերձակա հնարավոր ժամանակաընթացքում զորքեր ուղարկելու համար, գոյություն ունի լուրջ փաստարկ: Բայց բավականին կարող եմ հասկանալ, որ անգամ Միջագետքի բանակը, որը ոչ երկար ժամանակ է, ինչ ընդգրկվել է թուրքերի դեմ ակտիվ ռազմական գործողությունների մեջ, հնարավոր է ի վիճակի չի եղել, փոխադրամիջոցի կամ նմանատիպ այլ պատճառներով, այդ պահին վատնել բոլոր ուժերը, որը կպահանջվեր Հայաստանն ընդգրկող ընդարձակ շրջանները (վեց վիլայեթները) և Կիլիկիան օկուպացնելու համար: Դա պետք է այդպես լիներ, այդ պահին բոլոր

դեպքերում էլ համոզվածորեն հնարավոր կլիներ առանձնացնել բավականաչափ ուժեր Միջագետքի բանակից և միգուցե նաև այն ուժից, որը հիմա զավթում է Հյուսիսային Սիրիան և ուղարկել բրիտանացի սպաների ներքո այն կետերը, որոնք մեծ մասամբ եղել են հավանական խլրտման օջախ կամ որոնք իշխել են այս երկրամասերի միջև հաղորդակցության գլխավոր ուղղությունները:

Ես համարձակվում եմ ենթադրել, որ անկարգությունն այդ շրջաններում միշտ խրոնիկական է: Չերդ պայծառափայլ լորդերից նրանք, ովքեր հետևել են նրանց վերջին քսան կամ երեսուն տարվա պատմությանը, գիտեն, որ դա ենթադրելի է: Բայց ներկայումս իրադրությունը բացառապես վտանգավոր և դժվարին է: Թուրքական բանակը հենց նոր է ապառազմականացվել: Թուրքական բանակը վերջին չորս տարիների ընթացքում ներգրավվել է քրիստոնյաների կոտորածի և կողոպուտի մեջ, որտեղ էլ որ կարողացել է նրանց գտնել: Այդ բանակը հիմա ազատվել է անգամ այնպիսի թույլ վերահսկողությունից, որն իրականացնում էին սպաները, և զորքերը, հավանաբար իրենց զենքերով, ազատ են արձակվել թափառելու այս երկրամասերում և թալանելու ու կոտորելու այնտեղ, որտեղ որ կամենան: Հետևապես գայթակղությունը, դա պետք է ընդունել, ավելի մեծ է քան սովորաբար, որովհետև կա սննդի շատ մեծ սակավություն և միայն բնական է, որ զենքերը ձեռքերին սոված զինվորները պետք է փորձեն վերցնել այն, ինչ էլ որ գտնեն դժբախտ գյուղացիությունից, որի միջով նրանք կարող են անցնել: Ուստի, ներկայումս գոյություն ունի ցանկացած պատճառ հավատալու, որ այս վիթխարի տարածությունը, ձգվելով Սև ծովի հարավարևելյան մասից այնքան հեռու, որքան Լևանտի[4] հյուսիս-արևելյան մասը, գտնվում է անկարգապահ հրոսակախմբերի ձեռքում, որոնք բռնություններ են գործադրում ամենուր, որտեղ կարող են գտնել մարդկանց և որոնց նկատմամբ էլ հանցանքներ են կատարում և կողոպտում ցանկացածին, որը սնունդ կամ որևէ այլ բան է թողել:

Ամենքը, ով ծանոթ է այս երկրամասերին գիտե, թե ինչ է պատահում, երբ բանակը հանկարծակիորեն ազատ է արձակվում, հատկապես այնպիսի բանակը, ինչպիսին այս է: Ես կարող եմ նշել, որ միայն հենց նոր Փարիզից մի հեռագրի կրկնօրինակ եմ ստացել, որը ուղարկվել է Անդրկովկասի տարածաշրջանից և որը հաստատում է, որ երկու թուրքական դիվիզիաներ՝ 5-րդը և 15-րդը, դեռ են նետել իրենց թուրքական համազգեստները և միացել այնտեղ գոյություն ունեցող թաթարական ուժերին, որոնք գործում էին Քաքվի շուրջ, և այդ թաթարական ուժերի հետ միասին ոճրակոծում են քրիստոնյաների գյուղերը և գլխավորապես շարունակում են պարտիզանական պատերազմը, որը բնականաբար ծագում է, երբ զինվորները ազատվում են կարգապահությունից և դեռևս ունեն բշնամի, որոնց նկատմամբ պետք է ազատություն տան իրենց կամքը: Ես, անշուշտ, չեմ համարձակվում հաստատել այս հեռագրի իսկությունը, թերևս մի նմանատիպ բան ստացվել է Նորին գերազանցության կողմից, բայց ես ցանկանում են նրանց ուշադրությունը գրավել այն հայտարարության վրա, որովհետև դրա համար որևէ անհավատալի բան չկա, և այն առաջադրում է հետագա արդարացում, թե ինչու զորքերը, որքան հնարավոր է շուտ, պետք է առանձնացվեն օկուպացնելու համար խնդրո երկրամասը: Այդ տարածքը, ո-

քան կարող եմ ընկալել հեռագրից, թվում է, որ Քաքվից հարավ ընկած շրջանն է՝ Քաքվի և Ենգելիի միջև,Կասպիականի ափին:

Երկրորդ կարծիքը, որ ես ցանկանում եմ արտահայտել այն է, որ քրիստոնյա փախստականները, ովքեր խուսափել են վերջին կոտորածներից և ցանկանում են վերադառնալ իրենց տները և ցանել դաշտերը հաջորդ բերքահավաքի համար, չեն կարող վարվել այդպես, այդ երկրամասերի ներկա խառնաշփոթ պայմաններում: Երբ, մոտավորապես 1915թ. կեսերին, հայերի ոտքի կանգնմամբ, թուրքերը դուրս քշվեցին Վանից, ռուսները միացան նրանց (հայերին), և փախստականների մի մեծ քանակություն վերադարձավ: Հետևապես թուրքական բանակը մեծապես սաստկացել էր: Հայերը, որոնք ամենախիզախ կերպով կռվել էին թուրքերի դեմ, տեղահանվեցին ռուսների հետ Վանից և պարտավորվեցին գնալ դեպի ռուսական տարածք, և փախստականները գնացին նրանց հետ: Սա ցույց է տալիս մի երկրի վերագրավման փորձի վտանգավորությունը, երբ այն դեռևս գտնվում է անիշխանության պայմաններում: Այս փախստականները շատ մեծ քանակությամբ գոյություն ունեն այնտեղ, ինչ համարվում էր Կովկասի ռուսական տարածքներ: Նրանցից բազում հազարավորները օգնություն են ստացել այս երկրի և Միացյալ Նահանգների գթասիրտ անձանց ճվիրատվությունների միջոցով: Գոյություն չունի որևէ այլ բան, քան այն, որ նրանք միանգամից ցանկանում են վերադառնալ իրենց լքյալ բնակավայրերը, վերակառուցել իրենց տները և մեկ անգամ ևս ցանել իրենց դաշտերը: Անհրաժեշտությունը մեծ է այդ վայրի համար. այդ տարածքներում եղել է լուրջ սով, վերջին երկու կամ երեք տարիների ընթացքում, և սովն ավելի ու ավելի կսաստկանա, եթե չքույլատրվի դաշտերը վարել հիմա: Այնտեղ մի հարաբերականորեն խղճուկ բնակչություն է՝ գյուղատնտեսական աշխատանք կատարելու համար և, ուստի, բոլորի բարեկեցության համար մեծագույն կարևորություն է հանդիսանում, ինչպես մահմեդական, այնպես էլ քրիստոնյա բնակչության համար, որպեսզի կարգ ու կանոնը որքան հնարավոր է շուտ վերականգնվի, և դաշտերը սկսեն մշակվել: Հարցն իսկապես հրատապ է, քանզի մինչև մարդիկ չկարողանան ժամանակին վերադառնալ վաղ ցանքի, հաջորդ տարի բերք չի լինի և սարսափելի սով կհետևի:

Երրորդ, քրիստոնյաների մի մեծ քանակություն, որոնք կոտորածների ժամանակ գերվել և վաճառվել են ստրկության թուրքական հարեմներ՝ թուրք պաշտոնյաների կողմից չեն կարող ազատվել այդ ստրկությունից առանց եվրոպական պաշտոնյաների իշխանության և գործողության: Երբ մեծ կոտորածները շարունակվում էին 1915 թ., և երբ տղամարդիկ դուրս էին քերվում քաղաքից և մորթվում այնպես, որ մի շարք խորխորատներ լեռներում դեռևս լի են նրանց կմախքներով. երիտասարդ կանայք կամ գերվեցին և յուրացվեցին թուրքական պաշտոնյաների և զինծառայողների կողմից կամ տարվեցին շուկա և վաճառվեցին ամենաբարձր գնորդին: Ավելի տարիքավոր կանայք քշվեցին ճանապարհների երկայնքով և համարյա բոլորը տանջամահ եղան զրկանքից և սննդի կարիքից՝ մինչև հասան իրենց հեռավոր, սիրիական անապատի նպատակատեղին: Այդ երիտասարդ կանայք, որոնք գերվեցին՝ տարվելու և հանճնվելու ամենագարշելի ստրկության թուրքական հարեմներ, դեռևս մաշում են այնտեղ իրենց թշվառ գոյությունը: Նրանք հաշվվում են հավանաբար հազարնե-

րով: Նրանք չեն կարող ազատվել առանց եվրոպական սպաների և զորքերի ներկայության: Եվ համոզվածորեն Ձերդ պայծառափայլ լորդերի մեջ չկա մեկը, որը չհամակրի այդ դըժբախտ կանանց, իրենց ծնողներից և ամուսիններից վերցված, բռնադատված մի ճակատագրի, որը նրանք ատում են, պարտավորված կոչելու իրենց մահմեդականներ և դարձած իրենց հարստահարիչների բռնության առարկան: Համոզվածորեն, մարդկության ամենաբարձրագույն պարտականությունն է այն, որպեսզի մենք միանգամից ջանանք ազատել նրանց, նախքան այն կդառնա ավելի դժվար, քանի որ տարեցտարի, ամսեամիս այն կդառնա ավելի դժվար:

Ես կարող եմ ավելացնել, որ նմանատիպ ճակատագրի են արժանացել մի մեծ քանակությամբ տղաներ: Ավելի տարիքավորները՝ տասներկու կամ տասներեք տարեկանից բարձր, նրանք ովքեր կարող էին գիտակցել, առանց բացառության սպանվեցին: Ավելի երիտասարդները հանձնվեցին դերվիշներին և տարվեցին դաստիարակվելու մահմեդական մենաստաններում որպես մահմեդականներ, դաստիրակվեցին ատելու իրենց ծնողների ճակատագիրը, կրթվեցին ատելու իրենց ծնողներին և առանց որևէ հույսի՝ տեսնելու իրենց ծնողներին մեկ անգամ ևս: Այդ դժբախտ տղաներից դեռևս շատերը կարող են փրկվել, բայց ինչպես կանանց դեպքում, ցանկացած անցնող ամիս նրանց փրկությունը դարձնում է ավելի դժվար: Ուստի, հուսով եմ, որ դուք կգտնեք, որ այս հարցերում գոյություն ունի շատ լուրջ փաստարկ գործելու համար և որ այն դառնում է դաշնակից տերությունների վրա դրված մարդկության պատասխանատվությունը և պարտքը, անելու այն, ինչ կարող են՝ փրկելու ստրկության մեջ գտնվող մարդկանց և ապահովելու այն փախստականների անվտանգությունը, ովքեր ցանկանում են վերադառնալ և փորձել վերականգնել իրենց տները և հաղորդել մի տեսակ բարգավաճման երանգ այն երկրամասերին, որոնք ամայացվել են:

Ես միայն այսօր խնդրի վերաբերյալ մի հեռագիր եմ ստացել, որը չնայած ուղղակիորեն չի առնչվում իմ հարցին, այն աստիճան հետաքրքիր է, որ ես կհիշատակեմ և կխնդրեմ Նորին գերազանցության կառավարության ուշադրությունը նրա նկատմամբ: Ես հենց նոր ստացել եմ այն Ժնևի կոմիտեից, որը վերջին երեք տարիների ընթացքում հավաքել է ևվիրատվություններ գթասիրտ շվեյցարացի քաղաքացիների կողմից որպես օգնություն և ուղարկել այն հայ փախստականներին: Դրա իսկությունը հաստատվում է քաղաքի ամենաբարձր ընտանիքներից մեկին պատկանող ժնևցի մի ճշանավոր պարոնի և մի ամերիկացի միսիոների կողմից, որը երկար ժամանակ ծառայել է Աղանա քաղաքում: Հեռագիրն ասում է. «Ես աղերսում եմ ձեր ուշադրությունը դարձնել այն փաստին, որ շատ հայ որբեր և բռնագաղթված կանայք մի շարք վայրերում անճնվիրացորեն հոգ են տարվել գերմանացի միսիոներների կողմից»:

Նրանք անվանում են վայրերը, բայց անուններն այնքան վնասված են հեռագրի մեջ, որ այն ամենն ինչ կարողացա անել, կռահելն է, որ դրանցից մեկը Խարբերդն է: «Մենք վախենում ենք, որ սարսափելի վիշտ կարող է պատճառել, եթե այդ միսիոներները հարկադրվեն լքել, մինչև նոր օգնության ուժը կկարողանա ժամանել և ստանձնել աշխատանքը: Մենք կհուսանք, որ կշնորվի որոշ հապաղում, մինչև հնարավոր լինի համաձայնություններ կայացնել»:

Կարծում եմ, Ձերդ պայծառափայլ լորդերը ուրախ կլինեն լսել, որ ոչ միայն Ասիական Թուրքիայի ամերիկյան միսիոներներն են իրենց լավագույնս դրսևորել, մեղմացնելու համար այն ամբողջ վիշտը, որը նրանք կարողացան գտնել, այլ նաև այս գերմանացի միսիոներներն արեցին ամենաուժեղ ներկայացումները գերմանական կառավարությանը, աղերսելով նրան՝ հարկադրել թուրքերին դադարեցնել կոտորածները, ներկայացնելով նրան, որ Գերմանիայի անունն ու վարկը կարատավորվի և կանարգվի բոլոր ժամանակների համար, եթե գերմանական կառավարությունը կանգնի այդ կոտորածների կողքին և պարզվի, որ լուռ համաձայնություն է տվել այն կոտորածներին, որոնք թուրքերը իրականացնում էին:

Այս կոչերը բախվեցին խուլ ականջների: Հանգուցյալ գերմանական կառավարությունը, ուրախ եմ կոչելու այն հանգուցյալ, ոչ միայն մերժեց որևէ քայլ կատարել, դադարեցնելու կոտորածները, այլ նաև արգելեց դրանց վերաբերող որևէ տեղեկության հրապարակումը Գերմանիայում: Նրանք թաքցրեցին միսիոներների զեկույցը, և իրենց լավագույնս դրսևորեցին թաքցնելու այդ ամենը գերմանացի ժողովրդի իմացությունից կամ շրջանառության մեջ դրեցին քրիստոնյաներին զավթիչներ ներկայացնող կեղծ պատմություններ: Ես հույս ունեմ, որ Նորին գերազանցության կառավարությունը կզգա, որ անպատշաճ կլինի, եթե այս գերմանացի միսիոներները վնասվեն իրենց գթասիրտ աշխատանքում, և կարգադրություններ պետք է տրվի ցանկացած զորքերի, որը կարող է զավթել երկիրը, որ միսիոներներին պետք է թույլատրել շարունակել այն աշխատանքը, որը երաշխավորվում է իմ նկարագրած ձևով, մինչև որ օգնության ուժը կարողանա հասնել: Ուրախ եմ լսել, որ Ամերիկյան Օգնության Կոմիտեն, որն այդքան շատ բան է արել թեթևացնելու արևելյան քրիստոնյաների վերջին երեք տարիների տառապանքները, պատրաստվում է ուղարկել մի մեծ օգնական ուժ, բավարար դրամական միջոցներով՝ վախստականներին օգնելու համար: Անշուշտ, նրանց համար անվտանգ չի լինի անցնել երկրով, կամ փորձել բաժանել այդ միջոցները, մինչև չկարողանան ունենալ այնպիսի պաշտպանություն, ինչպիսին կտրամադրեր բրիտանական զորքերի մուտքը:

Գիտեմ, որ Նորին գերազանցության կառավարության համար դժվար կարող է լինել այն հարցերին պատասխանելը, որոնք ես տվեցի: Հավանաբար նրանից կպահանջվի կապվել ղրսի զինվորական իշխանությունների հետ և կարող է դժվար գտնել, անելու ավելին, քան նախաձեռնելու տալ հոգատար և համակրելի ուշադրության այն փաստերին, որոնք ես ջանացի մեկնել Ձերդ պայծառափայլ լորդերի և նրա առջև: Ինչևէ, հուսով եմ, որ կանեն այդ՝ ընդունելով խնդրո կարևորությունը և, ուստի, վստահորեն թողնում եմ խնդիրը նրանց ձեռքերում:

ՔԵՆԹԲԵՐԻԻ ԼՈՐԴ-ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ – Միլորդնե՛ր, ես կխնդրեմ, որպեսզի թույլ տաք ինձ մի քանի բառ ասել այս հարցի վերաբերյալ, որովհետև հանգամանքները հանգեցրել են ինձ այդ տարածքների որոշ քրիստոնյաների հետ սերտ կապի, որոնց ազնվական վիկոնտը ակնարկեց, չնայած, թերևս իմ հարաբերությունները ավելի սերտ են եղել նրանց հետ, ովքեր ընկած են այն շրջանից մի քիչ դեպի հարավ և արևելք, որոնց հիշատակեց լորդ Բրայսը: Ես խոսում եմ Թուրքիայի և Պարսկաստանի միջև սահմանամերձ՝ Վանի, Ուրմիայի և այլ, գլխավորապես բողոքական

քրիստոնյաների և նրանց հետ մի որոշ քանակությամբ հայերի մասին: Այս մարդկանց հետ ես գտնվում եմ հաստատուն կապի մեջ և տարօրինակ է ասել, անգամ պատերազմի ընթացքում, այն վճռակամությունն ու հաստատակամությունը հաղթահարելու դժվարությունները, որոնք քնորոշ են եղել նրանց պատմությանը, նրանք ունեցել են ոչ միայն հաղորդակցության ուղիներ, այլ նաև գաղտնի գործակալներ, որտեղով այլ գաղտնի էմիսարների չի հաջողվել անցնել:

Չի կարող օգտագործվել որևէ բառ, որը կարող է լինել ավելի ուժեղ, նկարագրելու համար այն սարսափները, որոնց մասին պատմել են ինձ նշված տարածքների քրիստոնյաները, որոնց հիշեց ազնվական վիկոնտը. զորքերի անցնելուն հաջորդող կանանց ու աղջիկների սակարկության բարբարացումը, ծեր կանանց արտաքսումը և աղջիկների, որպես հոտ, վաճառքը: Տղամարդկանց մեծ մասը կոտորվեց, բայց նրանք, որոնք ազատ էին արձակվել, հաջողության հասան, մեծ քաջությամբ ջախջախելով այն թուրքական և քրդական ուժերը, որոնք փորձում էին հաղթահարել նրանց: Ես, ինչպես ցանկացած ոք, հասկանում եմ այն բացառիկ դժվարությունը, որը կարող է ունենալ կառավարությունը՝ տալու ներկա հարցի վերաբերյալ մանրամասն պատասխաններ կամ խոստումներ. բայց այն ինչ ինձ միշտ զարմացրել է այդ տարածաշրջանի վերաբերյալ, հանդիսանում է որոշ արված հավաստիացումների և որոշ արտահայտությունների այն փաստը, որ մենք չենք մոռանում նրանց, և որ օգնությունը կհասնի նրանց, որտեղ այն հնարավոր է, կգտնի իր ուղին դեպի այս մարդիկ այն ճանապարհով, որը ենթադրվում է անհնարին և մի մեծ անտարբերություն է դառնում նրանց նկատմամբ: Պետք չէ կարծել, որ այս երկրում կազմակերպված հանրահավաքները, այս պալատում օգտագործված փաստարկները կամ կառավարության կողմից արված հայտարարությունները կանցնեն այս մարդկանց կողքով: Այլ նրանք կանցնեն միջով: Նորից և նորից պարզվել է, որ նրանք ավելի բան գիտեն այս ամենի մասին, քան կարելի է հնարավոր կարծել. և ցանկացած բան, որ մենք կարող ենք ասել, հավաստիացնելու, որ նրանք չեն մոռացվել, կարող է անգրնահատելի արժեք լինել այն մարդկանց համար, որոնք կրել են ցանկացած կարգի անպատմելի բռնություններ և սարսափներ և որոնք հիմա ենթարկվում են զորացրված, անխոհեմ և սնունդ փնտրող զինվորների բռնություններին:

Մենք երախտիքի մի մեծ պարտք ունենք ամերիկյան այն միսիոներներին, ովքեր մնացել են իրենց դիրքերում այն դժվարություններով հանդերձ, որոնք կարող էին դուրս քշել գրեթե ցանկացածի: Նույնը վերաբերում է անգլիացի միսիոներներին, և մենք պարտավոր ենք ընդունել՝ գերմանացի միսիոներներին: Չի կարող կասկած լինել այն դժվարությունների մասին, որոնց նրանք ստիպված են եղել հակադրվել: Ես զգացի, որ չեմ կարող լուռ մնալ, այլ պետք է հաստատեմ լորդ Բրայսի ասած ցանկացած բառը, որպես ի լրում նրա, ինչ ուղղակիորեն կամ անուղղակի կբխեր այն ամենից ինչ կարող էր ասվել, դեռ ավելին այն ամենից, ինչ կարող էր արվել՝ ցույց տալու համար, որ մենք չենք մոռացել այս ժողովրդին:

ԿՈՄՄ ԿՐՈՒՖՈՐԴ – Միլորդնե՛ր, ես մանրամասն կերպով չեմ կարող պատասխանել լորդ Բրայսի կողմից բարձրացված հարցերին, բայց ընդհանուր բառերով կարող եմ ազնվական վիկոնտին հավաստիացնել, որն իմ կարծիքով ինքը բավարար կիամարի: Խնդիրը, որը նա բարձրաց-

րեց, հանդիսանում է այն, ինչ ներկա պահին ընդգրկում է Նորին գերազանցության կառավարության իր դաշնակիցների հետ խորհրդակցության լուրջ ուշադրությունը: Ես ցավում եմ, որ հստակ գործողության հայտարարությունը, որը կարող է ազնվական վիկոնտի նկարագրած իրադրության տեսանկյունից անհրաժեշտ կամ ցանկալի լինել, չի կարող արվել այս պահին, բայց ես ուրախությամբ օգտվում եմ այս հնարավորությունից հավաստիացնելու նրան, որ Նորին գերազանցության կառավարությունն ամբողջությամբ զգոն է ընդգրկված ազգային և մարդասիրական շահերի նկատմամբ և որոշել է որևէ ջանք չխնայել՝ ապահովելու համար հայերի արդար պահանջների ամբողջական բավարարումը:

Աղբյուր *1. "Parliamentary Debates House of Lords, November 13, 1918. House of Commons, October 23,24,30,31 November 6,1,12,14,18 1918. Armenia. London", p. 1-7.*
2. Հայոց ցեղասպանության դատապարտումը Մեծ Բրիտանիայի խորհրդարանում (1915-1918թթ.) Երևան, 2000թ., էջ 35-45.

14. ՄԻԱՎՈՐՎԱԾ ՖՈՆԴԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

Երկուշաբթի, 18 նոյեմբերի, 1918թ.

ՊՐՆ. ԱՆԵՎՐԻՆ ՈՒԻԼԻԱՄՍ – Պառլամենտի ղեկավարը հիշեցրեց մեզ, որ մինչ Եվրոպան լայն չափով գտնվում է հեղափոխության մեջ, մենք այս երկրում համեմատաբար երջանիկ դրության մեջ ենք՝ չնայած այս պատերազմում հանդուրժած մեծ փորձություններին և տառապանքներին: Ես բարձրացա խնդրելու պառլամենտին արձանագրելու որոշ ուշադրություն աշխարհի այն մասերի նկատմամբ, որոնք գտնվում են անսահմանորեն ավելի վատ պայմաններում, քան եվրոպական մայրցամաքի մեծ մասը: Կարծում եմ, որ պատշաճ է դառնում մեզ, մեր երջանիկ վիճակում, կիսել մեր մտածմունքները պատերազմի այս դժբախտ տառապողների հետ: Ես ցանկանում եմ ուշադրություն դարձնել այն ազգերին, որոնք մինչև օրս եղել են թուրքական անիշխանության ենթակա, մասնավորապես՝ հայ ազգի և Հայաստան կոչված երկրի վրա: Հայերը հանդիսանում են շատ բարձր հատկանիշներ ունեցող ժողովուրդ, որոնք անկասկած, տառապել են իրենց արևելյան հարևաններից և ողջ տեղեկատվությունը, որ ես հնարավորություն եմ ունեցել ստանալ նրանց մասին, այն է, որ նրանց ունակություններից, աշխատասիրությունից և բարձր հատկանիշներից կարելի է շատ բան սպասել: Նրանք սերնդե-սերունդ, ժամանակ առ ժամանակ տառապել են կոտորածներից, և թուրքերի ձեռքից եկած ցանկացած անիշխանության ձևից և տառապել են հատկապես, որովհետև նրանք գոհունակ չէին, ինչպես մի ավելի ցածր ազգ կարող էր գոհ լինել՝ ապրելու թուրքական անօրինականության ներքո: Նրանք ունեին ձգտումներ և ցանկացան բարեփոխումներ, և դա իրենց թուրք տերերի աչքերում հանդիսանում էր նրանց մեծ մեղքը:

Նրանք տառապել են նաև մեծ տերությունների անգործությունից: Կար մի ժամանակ, երբ Ռուսաստանն ազատագրած կլիներ նրանց թուր-

քական անօրինակություններից, բայց Մեծ Բրիտանիան թույլ չտվեց: Կար նաև մի ժամանակ, երբ Մեծ Բրիտանիան ազատագրած կլիներ նրանց թուրքական անիշխանությունից, և Ռուսաստանը այդ չթույլատրեց, և գոյություն ուներ նաև մի ժամանակ, երբ Անգլիան և Ռուսաստանը երկուսով ազատագրած կլինեին նրանց, բայց չթույլատրեց Գերմանիան: Եվ այսպես շարունակվել է տարեցտարի, սերնդե-սերունդ, և կորցնելով 30000, հետո՝ 50000, և վերջին մի քանի տարիներին գնահատվում է, որ նրանք կորցրել են 800000 տղամարդ, կին և երեխա այս պատերազմի սկզբից սկսված կոտորածներում. կոտորածներ վերջին ժամանակներս, որովհետև կարծում էին, որ նրանք համակրանք ունեն Անտանտի տերությունների՝ մեր և մեր դաշնակիցների նկատմամբ: Տվյալ ազգի մնացորդը այս պատերազմի ողջ ընթացքում փառահեղորեն կռվել է լեռներում և անապատային տեղանքներում և այժմ, երբ զինադադար է կնքվել Թուրքիայի հետ, գոյություն ունեն մեծ թվով փախստականներ, բռնագաղթվածներ, տղամարդիկ, կանայք և երեխաներ, որոնք դուրս են բերվել իրենց տներից և տեղակայվել Հյուսիսային Սիրիայի և Եփրատ գետի ավելի վերին մասերի համակենտրոնացման ճամբարներում:

Հարց է ծագում, ի՞նչ է նախատեսվում անել այս փախստականներին սովից և մահից փրկելու համար: Մինչ այս պահը ես խոսել եմ միայն հայերի մասին, բայց չեմ ցանկանում սահմանափակել մեր համակրանքները կամ կարեկցանքն ու պարտքի զգացումը պարզապես հայ ազգի նկատմամբ: Այն հիմնադրամը, որի հետ ես ավելի մասնակիորեն եմ կապված, առաջին հերթին սահմանափակվել է հայերով և կոչվում է Հայ փախստականների Լոնդոնի քաղաքագլխի հիմնադրամ:[3] Ես չեմ ենթադրում, որ այս երկրի ժողովրդի համակրանքը պետք է սահմանափակվի հայ ազգի մարդկանցով, բայց նրանք հանդիսանում են ամենաաչքի ընկնող և ամենատառապող մասը և այն տարածքի հետ կապված ժողովուրդը, որն անհիշելի ժամանակներից հայտնի է որպես Հայաստան, և հանդիսանում է այն տարածքը, որի վրա ներկա պահին ես կցանկանայի հրավիրել Նորին գերազանցության կառավարության ուշադրությունը: Բոլոր ազգերի և տարբեր հավատք ունեցող բռնագաղթվածների և փախչողականների զանգվածը Ասիական Թուրքիայում ներկայումս այնքան մեծ է, որ նրանց հետ գործ ունենալն ու նրանց կյանքի փրկությունը հանդիսանում է պրոբլեմ՝ ամբողջապես դուրս անհատական կարեկցանքի հասանելիությունից և պահանջում է կառավարության գործողությունը: Կարծում եմ, որ կառավարության գործողությունը պահանջվում է այն բոլոր երկրներում, որոնք տանջահարվել են պատերազմով՝ փրկելու համար այս երկրների բնակիչներին սովամահությունից: Մենք գիտենք, որ մեր թշնամիների երկրները՝ Գերմանիան և Ավստրիան, կունենան օգնության կարիք, որպեսզի ժողովուրդը խուսափի սովամահությունից: Մենք գիտենք, որ մեր որոշ դաշնակից երկրները, ինչպես Սերբիան, կպահանջեն օգնություն ոչ ավելի քիչ, քան հայերը և որ այնպիսի չեզոք տարածք, ինչպիսին Հոլլանդիան է այս կամ այն ճանապարհով օգնություն կպահանջի: Սա գրեթե աշխարհով մեկ սփռված հիմնախնդիր է և որոշակիորեն այնպիսին է, որ տարածվում է Եվրոպայի մեծ և Մերձավոր Ասիայի ավելի ընդարձակ մասերի վրա, և այն ամբողջապես անհատական գթասրտության հասանելիությունից դուրս է:

Ես ցանկանում եմ հրավիրել կառավարության ուշադրությունը այս հարցի վրա և հայցնել, թե ինչպե՞ս են նրանք հանդուրժում այսպիսի հիմնախնդիրները, քանի որ այն ազդում է այնքան շատ երկրների և ժողովուրդների վրա, իսկ ավելի մասնակիորեն ի՞նչ են նրանք անում Ասիական Թուրքիայում և հայ ժողովրդի համար: Ես գիտեմ, որ բոլոր անհատական հիմնադրամները, որոնք սկսել են գործ ունենալ այս մեծ հանգամանքի փոքր մասերի հետ, չեն հանգստացնելու իրենց ջանքերը, բայց ցանկալի կլինի, որպեսզի նրանք կոորդինացվեն և նրանք համապատասխան կերպով կարող են կոորդինացվել, երբ կառավարությունը գա, ստանձնի և վերցնի գործողության այն պատասխանատվությունը, որը բացարձակապես անհրաժեշտ է փրկելու այս ժողովրդին սովամահությունից: Այս տարբեր հիմնադրամները ավելին անելու համար կարող են աշխատել համատեղ, որպեսզի վերականգնեն այս ժողովրդին մի քիչ երջանկության և բարգավաճման աստիճանի: Կարող եմ ասել, որ ամենևին չթուլացնելով մեր ջանքերը, մենք արդեն գործակալներ ունենք դեպի Արևելք տանող ճանապարհին՝ ստանձնելու համար այն աշխատանքը, որը միայն վերջերս է հնարավոր դարձել: Տեղեկացված եմ նաև մեկ այլ փաստով, որի վրա կցանկանամ հրավիրել ազնվական լորդի ուշադրությունը. դա այն է, որ մեծ թվով հայեր և այլ փախստականներ գալիս են Փոքր Ասիայի հարավից դեպի Սիրիայի հյուսիսային մասերը և Միջագետք՝ երկրներ, որոնք գրավված են բրիտանական բանակի կողմից: Մենք լսել ենք այստեղ գտնված 5000-ի և այլուր գտնված 50000-ի մասին, և բանակը, ես հավատում եմ, օգնության է հասնում նրանց, հիրավի, հավատում եմ, որ միայն բանակն է, որ ուժ ունի ներկա պահին նրանց օգնելու: Փոխադրամիջոցի, կազմակերպման ու քաղաքացիական գրասենյակների բացակայության հասարակ փաստը՝ կապված մեր և ֆրանսիական կառավարության հետ, պետք է դժվարին խնդիր դարձնի անհապաղ որևէ բան անելը, և ես ուրախ եմ հավատալու, որ այս հարցում բանակն այդքան շատ բան է արել: Ես պետք է պնդեմ ազնվական լորդին, որ չնայած բանակը կարող է միջամտել և անել այս աշխատանքը բարձրացվող անհրաժեշտությամբ, այնտեղ ավելին է պահանջվում, քան այդ: Այնտեղ զգացվում է մեծ կազմակերպության կարիք և կարծում եմ, դժվար թե համարվի, որ դա պարզապես պետք է լինի ռազմական կազմակերպությունը:

Գոյություն ունի այլ հանգամանք ևս: Բանակն, անշուշտ, երկար չի համարվի ուժեղ բանակ և ուստի միայն ընդունելի է սպասել, որ այնտեղ մեր բանակների քանակը աճելու փոխարեն ավելի շուտ կնվազեցվեն, որոշ միավորումներ դուրս կբերվեն, թողնելով միայն որոշ կայազորներ և, անշուշտ, այս ամենը չի առաջացնի փոխադրամիջոցի դյուրացումներ և մինչև նոր համաձայնություններ կայացվեն, այս չքավոր մարդկանց սնունդ և այլ անհրաժեշտություններ բերելու և նրանց վերականգմանն օգնելու համար այնտեղ ավելի քիչ փոխադրամիջոց կլինի: Հույս ունեմ, որ ազնվական լորդը ի վիճակի կլինի ասել մեզ, որ արտաքին գործերի նախարարությունը կհասկանա, որ պատերազմական նախարարության հրահանգավորմամբ՝ զորքերի դուրս բերմամբ, ոչինչ չի արվում այս շրջաններում փոխադրումը նվազեցնելու և կարիքը թեթևացնելու համար: Գոյություն ունի մեկ այլ դժվարություն, և դա ֆինանսների հարցն է: Ես չեմ ուզում թերագնահատել այդ: Ես գիտեմ, ներկա պահին աշխարհի բոլոր

մասերում մենք ունենք դրամական մեծ գումարների խնդրագրեր, և Ասիական Թուրքիայում գոյություն ունեցող չքավորության հետ համապատասխան կերպով գործ ունենալը, անկասկած, կպահանջի նշանակալի միջոցներ: Ես կասկած չունեմ, որ ԱՄՆ-ը և ֆրանսիական կառավարությունը կկամենան մասնակցել այս գործին՝ անհրաժեշտ դրամ փնտրելուն: Անշուշտ, գործին առնչվող երեք կառավարությունների միջև հանգամանքների կարգավորումը անհրաժեշտորեն ժամանակ կխլի, բայց ես հուսով եմ, որ իրական աշխատանքը կատարելիս ոչ մի կասեցում չի թույլատրվի: Համոզված եմ, կարող ենք հավատալ, որ մեր դաշնակիցները կստանձնեն և իրենց մասնակցությունն ամբողջապես և մեծահոգաբար կբերեն, և միևնույն ժամանակ, մենք պարտավոր ենք շարունակել, լինել տեղում՝ ամենայն հնարավոր արագությամբ հետամուտ լինելով այս աշխատանքին: Կասկած չունեմ, որ այս հարցում կառավարությունը գործում է, և ցանկանում եմ միայն ազնվական լորդից հավաստիացում ստանալ, որ այն այնքան գործուն և այնքան շատ մանրամասն է, որքան նա կարող է ասել մեզ, թե ինչ են նրանք անում այս հարցում:

Իսկ հիմա, ցանկանում եմ այս մարդկանց կյանքը փրկելու շատ կարևոր հարցից անցնել Հայաստան անվամբ հայտնի երկրի կառավարության հարցին: Մեզ մի քանի անգամ ասվել է, որ Նորին գերազանցության կառավարությունը թույլ չի տալու հպատակ ազգերի նկատմամբ, թուրքական անիշխանության շարունակությունը, որոնց մինչև օրս նրանք համարել են թշվառ: Օգտագործված բառը եղել է «անիշխանությունը»: Ենթադրում եմ, որ երբ մեզ ասվեց, որ թույլ չենք տալու այս ժողովրդի նկատմամբ թուրքական անիշխանության շարունակությունը, նշանակում է, որ մենք երբևէ թույլ չենք տալու թուրքական իշխանության ցանկացած ձևի շարունակությունը և այսուհետև նրանց չի շնորհվելու թուրքական բարեփոխված իշխանություն: Համոզված եմ, որ ազնվական լորդը ի վիճակի կլինի ասել մեզ, որ «անիշխանություն» բառի մեջ այդպիսի իմաստ չկա, և որ մենք կարող ենք ապավինել Փոքր Ասիայի հպատակ ազգերին, որոնք այդքան երկար ժամանակ թուրքական իրավակարգի կողմից համարվել են ողորմելի, թուրքական իրավակարգի ամբողջական վերացման գործում:

Գոյություն ունի մի տեսակետ, որի վերաբերյալ ես հետագա հավաստիացում կցանկանայի, և որի վերաբերյալ ես ավելի շատ կասկած ունեմ: Այն վերաբերում է թուրքական սյուզերենության հարցին: Կասկած չունեմ, որ թուրքերը կվտրձեն և կպահպանեն սյուզերենությունն այս ազգերի, իսկ մասնավորապես հայերի նկատմամբ: Ես հավատում եմ, որ Նորին գերազանցության կառավարությունը և մեր դաշնակիցները մեկ պահ անգամ չեն հանդուրժի որևէ նման առաջարկություն: Ոչ մի հնարավոր բարիք դրանից չի բխի թե՛ Թուրքիայի, թե՛ որևէ մեկ ուրիշի համար, այլ ավելի շատ չարիք կարող է դրանից բխել, որովհետև որտեղ էլ որ Թուրքիան ունեցել է սյուզերենության ամենահասարակ ձևը, օրինակ Եգիպտոսում, օգտագործել է այն դավադրություններ և խարդավանքներ բարձրացնելու համար, գործադրելու և ետ վերադարձնելու իր սկզբնական իշխանությունը և վերաներմուծելու այն բռնությունը, որից այդ շրջանները փրկվել էին: Ես հավատում եմ, որ Նորին գերազանցության կառավարությունը կդիտարկի ոչ միայն թուրքական իշխանության վերացումը, այլ նաև թուրքական սյուզերենության արմատի և ճյուղավորության ոչնչացումը: Ուստի, ենթադրում

եմ, որ Հայաստանը կազատվի թուրքական իշխանությունից և սյուզերենությունից: Ինքս ինձ հարցնում եմ, թե ինչպիսի տարածք է այն լինելու: Սա բացառիկ կարևորության խնդիր է: Սա սկզբունքային հարց է: Այս պատերազմում մենք կռվել ենք, որպեսզի ցույց տանք, որ միջազգային իրավունքը գահ է բարձրացվել որպես ազգերի միջև գերագույն իշխանություն, և հուսով եմ, որ թուրքական կառավարության հետ գործ ունենալիս մենք չենք մոռանա այդ նույն մեծ սկզբունքն ու ձգտումը: Գիտեմ, ասվելու է, որ Հայաստան կոչվող երկիրն այժմ հարաբերականորեն քիչ հայեր է իր մեջ ընդգրկում, բայց այն մնում է տեսանելի: Այս մարդիկ ունեն վիթխարի խիզախություն ու տոկունություն, և նրանցից շատերը թաքնվել են հեռավոր վայրերում՝ լեռներում, և փրկել իրենց այս պատերազմի ընթացքում: Նրանք դուրս կգան: Նրանցից հազարավորները գնացել են Ռուսաստան, Պարսկաստան և Եգիպտոս: Նրանք կվերադառնան իրենց տները: Ընդհանրապես, անկասկած է, որ եթե ամբողջ հայերը հավաքվեն, Հայաստանում կլինեն շատ քիչ քանակությամբ: Բայց եթե անգամ այդպես լինի, ես ամենաուժեղ հնարավոր կոչն եմ հղում Նորին գերազանցության կառավարությանը, չընդունել դա որպես պատճառ՝ Հայաստանի տարածքը և սահմանները սահմանափակելու համար: Անել այդպես, կնշանակի խրախուսել կոտորածը: Ասել, որ մենք կսահմանափակենք Հայաստանը, ամբողջական Հայաստան ճանաչելու փոխարեն, որ մենք կկենտրոնացնենք հայ բնակիչներին և կճանաչենք միայն մի փոքր մասը՝ թողնելով երկրի մնացած մասը թուրքերին, որովհետև մնացած բնակչությունը մեծապես մահմեդական է, կլինի խրախուսել կոտորածը և թուրքերին ասել. «Տարեց տարի դուք փորձել եք ոչնչացնել հայ ժողովրդին: Դուք հիմա այնքան եք հաջողել, որ մենք ճանաչում ենք, որ այս տարածքի մեծ մասը, որտեղ պետք է հայեր լինեին, միայն չնչին չափով է բնակեցված նրանց կողմից, և մենք նպատակ չունենք պահանջելու այն որպես Հայաստան, այլ կենտրոնացնելու ենք հայ ժողովրդին, իսկ այս տարածքը թողնելու ձեզ»:

Հայաստանն ընդգրկում է վեց վիլայեթներ կամ նահանգներ, մինչև Փոքր Ասիայի հյուսիս արևելքը, և Կիլիկիան, որը հենց այն կետն է, որտեղ Սիրիան և Փոքր Ասիան հատվում են և որն իջնում է դեպի Միջագետք: Այս նահանգներն իրար հետ կազմել են Մեծ և Փոքր Հայքերը: Ես խնդրում եմ, որպեսզի նրանց համար սահմանվի պետություն կամ կառավարություն այս կամ այլ անվամբ և որպեսզի որևէ տերության, որպես աշխարհի մեծ տերությունների մանդատատու, տրվի ազատություն կառավարելու այս տարածքը մինչև այն պահը, երբ նրանք հնարավորություն կունենան ստեղծել ինքնակառավարման որևէ ձև: Այն երկրի մեծ մասում, որտեղից հայերը քշվել են, թուրքերի կողմից պարբերաբար բնակեցվում են մահմեդական գաղթականներով: Այդպես շարունակվել է պատերազմի ընթացքում: Դա բնավ պատճառ չէ, որպեսզի երկիրը թողնվի թուրքական կառավարման ներքո: Եթե այդ երկրամասերի սկզբնական տերերը չգտնվեն, ես ոչինչ չեմ ասում մահմեդականների տիրապետման թողնելու դեմ: Ես որևէ նախապաշարմունք չունեմ մահմեդականների դեմ: Մենք այս կայսրության հսկայական քանակությամբ մահմեդական քաղաքացիներ ունենք, նրանք երջանիկ և բավարարված քաղաքացիներ են: Եթե Հայաստանում լավ կառավարում հաստատվի, մահմեդականները, ինչպես էլ նրանք եկած լինեն այդտեղ, կշահեն ճիշտ այնքան, որքան քրիստոնյա

բնակիչները: Ես խնդրում եմ, որ ամբողջ տարածքը համարվի մեկ միավորում, և որպեսզի Կիլիկիան չտարանջատվի հյուսիս-արևելյան վիլայեթներից: Ես կանեմ մեկ բացառություն: Կան (այն ինչ կոչվում է Հայաստան) որոշ մասեր, որոնք Թուրքիայի կողմից միացվել են վեց վիլայեթներին, հայերի նկատմամբ որպես ամբողջություն, արհեստականորեն գերակշռություն ստեղծելու համար: Դրանք բնակեցվել են քրդերի և մահմեդական այլ ազգությունների կողմից և ամրացվել են մահմեդականների տոկոսադրույքը բարձրացնելու, իսկ հայերի համեմատական տոկոսը նվազեցնելու համար: Ոչ ոք չի առարկի այս բացառապես մահմեդական շրջանների անջատմանը, բայց խոսելով վեց վիլայեթների՝ իրենց սկզբնական և համապատասխան տարածքի մասին, ես շատ եմ խնդրում, որպեսզի նրանց և Կիլիկիային վերաբերվեն որպես մեկ միասնության, և այն կառավարվի մեծ տերություններից որևէ մեկի՝ Ամերիկայի, Ֆրանսիայի կամ մեր կողմից, որպես մեծ տերությունների մանդատառու, հաստատելու համար իրենց որոշված կառավարությունը և աստիճանաբար մարզելու ժողովրդին մինչև այն կետը, երբ նրանք ի վիճակի կլինեն կառավարել իրենց:

Մենք չենք խնդրում մեկ ազգի արտոնությունը մյուս ազգերի նկատմամբ: Ճիշտ է, կլինեն մեծ դժվարություններ, ունենալով որոշ քոչվոր և կողոպտիչ ցեղերի ներկայություն, որոնք անհիշելի ժամանակներից եղել են քոչվոր և կողոպտիչ: Երկիրը կառավարելու կոչվածների խնդիրը կլինի սահմանափակել այս ցեղերին իրենց սեփական շրջաններում և տեսնել, որ ոչ մի կողոպուտ չի թույլատրվում: Երբ դուք ունենաք երկրում հաստատված առանձին կառավարություն, հայերը ետ կվերադառնան աշխարհի բոլոր մասերից՝ Ռուսաստանից, Պարսկաստանից, Ամերիկայից և նրանք նորից բնակություն կհաստատեն իրենց հայրերի երկրում: Հայրենադարձության այդ ամբողջ գործը կպահանջի մի վիթխարի կազմակերպում: Անհատական գթասրտության և ճիգի ուժերից վեր է լինելու դրա արդյունավետ իրագործումը, և հավատում եմ, որ որևէ խոստում կունենանք Նորին գերազանցության կառավարությունից, որ ինքը կօգտագործի իր ուժը՝ ծառայողներին և զինվորներին՝ տեսնելու, որ իրենց հայրերի տները վերադարձող մարդիկ բնակեցնում են երկիրը օրինականորեն, այնպես, որ նրանք կարողանան ամփոփել այն ինչ մշտապես հանդիսացել է ազգի մեծ զբաղմունքը՝ գյուղատնտեսությունը, որ մեկ անգամ ևս կմշակեն և կլրացնեն այդքա՜ն շատ տառապող հողը: Ես կհիշեցնեմ իմ ազնվական ընկերոջը, որ երբ Հունաստանն ազատագրվեց Թուրքիայից, թուրքական բռնապետությունը և կոտորածները նվազեցրել էին դժբախտ երկրի բնակչությունը 400000 մարդու, ինչպես գնահատվեց այդ ժամանակ: Այժմ, Հունական թագավորության բնակչությունը 5000000 է: Սա ցույց է տալիս, թե ինչպես է ազգը ապաքինվում, երբ թուրքական տաղտկալի անիծյալ իշխանությունը փոխարինվում է, և մարդկանց հնարավորություն է տրվում մշակել իրենց հողերը և հետամուտ լինել իրենց արտադրություններին, փախստականներին՝ վերադառնալ աշխարհի ամենահեռավոր մասերից:

Ես կցանկանայի մատնանշել, որ զինադադարի պայմանների առնչությամբ շատ հիասթափություն գոյություն ուներ, որովհետև Հայաստանի որևէ մասի օկուպացման վերաբերյալ ոչ մի հոդված չստեղծվեց, մինչև խառնաշփոթ չծագելու պահը: Ավելի իմաստուն կլիներ ձեռնարկել նախազգուշական քայլեր և օկուպացնել որոշ ռազմավարական կետեր,

այնպես, որպեսզի ենթադրվեր, որ ոչ մի անօրինականություն չի ծագելու: Այն ծրագրի իրագործման համար, որ ես ուրվագծեցի, անհրաժեշտ կլինեն ոչ միայն այդ ռազմավարական կետերը, այլև ամբողջ երկրի օկուպացումը: Ես պարզապես ի մի կբերեմ և կասեմ, որ խնդրում եմ Նորին գերազանցության կառավարությանը ճանաչել, որ այս երկիրը պարտական է Հայաստանին, որովհետև ի թիվս այլոց, ավելի քան քառասուն տարի առաջ մենք կանխեցինք Հայաստանին ազատագրվել թուրքական բռնապետությունից Ռուսաստանի կողմից: Եթե մենք դա կատարած չլինեինք, այն սարսափելի տառապանքները, որոնք իրականացան հետո, չէին իրականանա: Ուստի մենք նրանց նկատմամբ պարտք ունենք: Մենք նրանց հանդեպ մի հաջորդական պարտք ունենք, որովհետև այս պատերազմում նրանք արիաբար կռվեցին մեր համար: Այս պարտքերը որոշ չափով հատուցելու համար՝ ես խնդրում եմ, որպեսզի մենք կազմակերպենք այս մարդկանց սովամահությունից փրկելու համար անհրաժեշտ, իսկ մի քիչ անց՝ մեթոդաբար, անհրաժեշտ ապահովության միջոցառումներ՝ հաջողությամբ վերադառնալու այս ժողովրդին իրենց հայրենի երկիրը, և որ մենք պետք է ճանաչենք Հայաստանը, որպես մի մեծ տարածք, չնվազեցված ջարդերի քաղաքականությամբ և կառավարենք երկիրը մեծ տերություններից մեկի միջոցով, որպես բոլոր մեծ պետությունների մեկի մանդատատու, մինչև այն ժամանակը, երբ այս մարդիկ սովորեն կառավարելու իրենց սեփական գործերը, դրսևորելու ազատ և բարգավաճ ազգի մեկ այլ օրինակ:

ՊՐՆ. ԲԼԻՍ - Ես շատ քիչ բառեր կցանկանայի ավելացնել ի ժանդակություն այն ամենի, ինչ հարցի վերաբերյալ իմ հարգարժան ընկերը հենց նոր ասաց: Ես ցանկություն չունեմ կրկնելու հայ ժողովրդի տառապանքների պատմությունը, բայց ինձ կարևոր է թվում, որ մենք պետք է պարզ կերպով մեր մտքերում պահենք որոշ ընթացիկ փաստեր՝ հասկանալու համար ներկա դրությունը: Մենք, Անգլիայում, թերևս, կարող ենք հասկանալ, թե ինչպիսին են եղել բելգիացիների տառապանքները գերմանացիների կողմից իրենց երկրի զավթման ընթացքում: Նրանք, ինչպես և մենք, եվրոպացիներ են: Մենք կարող ենք երևակայել նրանց հոգնած քայլերն այն ճանապարհների երկայնքով, որոնք ծանոթ են մեզ: Դեպքը բացարձակապես տարբեր է մի հեռու երկրում՝ հայերի հետ կապված: Դա միայն նրանք են, ովքեր մագլցեցին լեռները, կտրեցին անցան իրենց հովիտները, ովքեր ապրել են իրենց հյուղակներում, գյուղերում և քաղաքներում և ո՞վ է ճանաչում այն ժողովրդին, որ կարողանա հասկանալ, թե ինչպիսի սարսափելի են եղել նրանց տառապանքները վերջին տարիների ընթացքում: Ինչպիսի՞ն են այս հարցի իրական փաստերը: 1915թ. սկզբին թուրքական ճահանգներում հայկական բնակչությունը կազմում էր մոտ 2000000 մարդ, կամ հավանաբար՝ 1800000: Այդ տարվա գարնանը, Էնվեր բեյի և Թալեաթ փաշայի կառավարման ներքո, սահմանված կարգով կոտորածներ և բռնագաղթ կազմակերպվեց՝ քաղաք առ քաղաք, իրենց զինվորականության մասնակցությամբ: Առաջին հերթին, երիտասարդ տղամարդիկ քաղաքում կամ գյուղում կանչվեցին ճահանգապետարաններ, հետո դուրս բերվեցին քաղաքից և այնտեղ սպանվեցին: Մնացած կանայք, ծեր տղամարդիկ ու կանայք ունեին մի քանի օրվա ողորմածություն: Նրանց հրամայվեց բռնագաղթել և նրանք բռնագաղթվեցին: Մենք

պետք է հիշենք, որ այս կանանցից յուրաքանչյուրը մինչ բռնագաղթը ուներ իրեն առաջարկված այլընտրանք՝ քայլել դեպի անծանոթ անապատ կամ հրաժարվելով իր հավատքից՝, ընդունել իսլամ: Ի վեհությունն իրենց հավատքի, այս կանայք, չնայած նրան, որ իրենց մարմինները կարող էին կեղտոտվել իրենց գերողների անասնականությամբ, նախընտրեցին անգամ այդ ճանապարհը, քան իրենց հայրերի հավատից հրաժարվելը:

Այս մարդկանց մոտ 600000-ը հաջողեց խույս տալ իրենց թուրք կառավարիչներից, մնացած 600000-ը կամ հնարավոր է ավելին, բռնագաղթվեց և սպանվեց: Այնտեղ մնացին մեկ այլ 600000, որոնք բռնագաղթվեցին, և սրանց մի մասն արդեն, մենք ենթադրում ենք, սկսում է վերադառնալ: Նրանց որոշ մասը, մենք հասկանում ենք, հասել էր մեր ռազմաճակատների գծերին, որտեղ նրանք բոլորը լավ և ապահով են: Նրանց որոշ մասը հասնում է ավելի մեծ քաղաքներ, որտեղ նրանք կարող են կամ չեն կարող սնունդ գտնել, բայց նրանց մեծ մասը փնտրում է ապաստան իրենց սեփական հյուղակների և գյուղերի ավերակներում, բայց մենք անտարակուսորեն գիտենք, որ այնտեղ նրանց սովամահություն է սպասում: Երկար ժամանակ է, որ սերմ չի ցանվել, անասնահոտը դուրս է քշվել, ամբողջ երկրամասում ցորենի կամ բրնձի ոչ մի խանութ չկա, և այս մարդկանց ոչինչ չի սպասում, բացի բացարձակ կարիքից և սովամահությունից: Ուտելիքը, պատերազմը սկսվելուն պես, անգամ մեծ ծովափնյա քաղաքներում, ինչպիսիք են Կ. Պոլիսը և Իզմիրը, եղել են հասանելի միայն անմատչելի գներով, բայց վերջին ամիսների ընթացքում, Ավստրիայի ու Բուլղարիայի հետ Գերմանիայի երթևեկության դադարեցումից սկսած, սննդամթերք, ինչպիսիք են թեյը, սուրճը, պահածոյացված առարկաները, անհասանելի են ցանկացած գնով: Եթե սա մեծ ծովափնյա քաղաքների իրողությունն է, ինչ պետք է լինի երկրի հեռավոր մասերում: Փախստականները, որոնք դանդաղորեն վերադառնում են դեպի իրենց հին տները, հանդիսանում են դեմոբիլիզացված և ազատ արձակված զինվորականության նեղության և ոչնչացման առարկան: Պատերազմի ընթացքում մենք լսել ենք շատ լավ բաներ «մաքուր կովող թուրքերի» մասին: Դա կարող է, կամ չի կարող փաստ լինել, բայց որոշակիորեն շատ քիչ պարզություն գոյություն ունի ազատ արձակված թուրք զինվորի մասին, որն ազատության մեջ թափառում է երկրով մեկ, հատկապես, երբ նա գործ ունի անօգնական և աղքատության հասած ժողովրդի հետ: Ժողովուրդ, որը վերադառնում է հինավուրց իր հողերը, հողեր, որ զավթված են թուրքերի կողմից: Ես հիշում եմ, թե ինչպես թուրքական պատերազմից հետո մահմեդական փախստականները Անատոլիայի բազմաթիվ մասերում մեքենայություններ էին անում և զավթում սեփականազրկված գյուղացիների հողերը, որոնք չունեն գոյատևման համար մնացյալ որևէ միջոց: Այս ժողովրդի խղճուկ և բարձիթողի վիճակն է, որ բարձրաձայն կոչում է Անգլիային՝ ներկա պահին գալու իրենց փրկությանը: Մենք նաև պետք է հիշենք այն քաջարի օգնությունը, որ տվեցին մեզ հայերն այս պատերազմի ընթացքում: Ես հավատում եմ, որ նրանք նեցուկ են եղել և ամբողջապես իրենց սեփական միջոցներով հավաքագրել են նշանակալի ուժեր, իրականացրել հիանալի ծառայություն՝ թուրքերի դեմ կռվելով Փոքր Ասիայի արևելյան մասերում: Ես համոզված եմ, որ Տրապիզոնի և Էրզրումի գրավումը մեծապես նրանց ջանքերի շնորհիվ էր: Նրանք ետ պահեցին թուրքերին Կովկասից ընդհուպ մինչև Բաթու-

մի գրավումը: Շատ հայեր գտնվեցին ռուսական շարքերում, նրանք կռվում են Լեհաստանում և նշանակալից քանակությամբ բրիտանական, ամերիկյան, ֆրանսիական ռազմաճակատի բանակներում են: Զինվորական գործերի մասին, ես շատ քիչ գիտելիք ունեմ, բայց ինձ թվում է, որ ինչպես Բելգիան դարձավ գլխավոր ճանապարհ գերմանացիների համար դեպի Ֆրանսիա և ինչպես Սերբիան դարձավ միջանցք նրանց Թեոլիճ-Քաղդադ երկաթուղու համար, այդպես էլ Հայաստանը և Կովկասը ձևավորվեցին դեպի Կենտրոնական Ասիա և Հնդկաստանի սահմանները տանող ուղղության մայրուղին:

Ապագայի հետ կապված ես խստորեն ատում եմ «բուֆերային պետություն» տերմինը, բայց միևնույն ժամանակ և նախընտրելիորեն էական եմ կարծում, որ ազատ և ուժեղ քրիստոնյա պետություն պետք է ստեղծվի Հայաստանում և Կովկասում: Ես բավականին լավ գիտեմ այդպիսի պետություն ստեղծելու դժվարությունների մասին, որտեղ բնակչության պարունակությունն այնքան խառն է՝ հայեր, թուրքեր, քրդեր, թաթարներ և այլ ազգեր, բայց վերջին թուրանական շարժման առնչությամբ, ապագա խաղաղության համար կարևոր է, որպեսզի մի անկախ պետություն ստեղծվի արևմուտքում՝ Անատոլիայի թուրքերի և միևնույն լեզվով խոսող, դեպի ավելի արևելք, այլ ժողովուրդների միջև՝ թուրքերի հետ նույն լեզվով խոսող և ընդհանուր կրոն ունեցող: Մենք նրանց միջև մի պետության կարիք ունենք՝ երաշխավորելու Կենտրոնական Ասիայի ապագան և նաև երաշխավորելու համար դեպի Հնդկաստանի հյուսիսային սահմանները տանող մայրուղին: Անգլիան, ճնշված և տառապող ազգերի հանդեպ իր բոլոր ավանդույթներով և համակրանքով, այս պահին չի կարող չլսել իրեն ուղղված այս ժողովրդի աղերսանքը: Ո՞րն է լինելու ապագայի ուղին: Ես համարձակվում եմ առաջարկություն անել, որ թվում է ինձ, ճիշտ լուծում է, որ մի փոքր ուժ ուղարկվի այդ շրջանի ռազմավարական կամ կարևորագույն կետերը գրավելու համար, այսինքն՝ հինգ կամ վեց տարբեր վայրեր, ներառյալ Տրապիզոնը, Էրզրումը, Կարսը և Վանը: Եթե դուք, այնքանով որքանով զինադադարի պայմաններն են թույլատրում, մի փոքր ուժ ուղարկեք գրավելու այդ կենտրոնները, նրանք ոչ միայն կերաշխավորեն հայերին, որոնք վերադառնում են դեպի իրենց տները, այլ նաև կկարողանան կառավարել օգնության աշխատանքը և կազմավորել երկրի հետագա բնակեցման սկզբնակետը և կորիզը: Հուսով եմ, որ այս իրադարձությունների համար կառավարությունն այս երեկո կտա մեզ որոշ հավաստիացումներ:

ՍԸՐ ՋՈՐՋ ԳՐԻՆՎՈՒԴ – Քանի որ սա վերջին իրադարձությունն է, որի վերաբերյալ ես հնարավորություն կունենամ դիմել այս պառլամենտին, հուսով եմ, որ հարգարժան անդամները համբերատար կլինեն իմ նկատմամբ, եթե ես մի քանի խոսք ասեմ այն խնդրո վերաբերյալ, որի հանդեպ ես միշտ մեծ հետաքրքրություն եմ ունեցել: Անգամ սկսած 1879-80թթ., երբ հնարավոր եղավ իմ աղքատիկ կարողության ներածին չափով, պաշտպանել մեր արտաքին քաղաքականության գլխավոր առանցքային սկզբունքը, որպեսզի թուրքերը վտարվեն Եվրոպայից և նաև Ասիայի ցանկացած տարածքից, երբ կարելի լինի դա անել, և երբ հնարավորություն ծագի, նրանց ետ պահել քրիստոնյա համայնքների նկատմամբ ունեցած տիրապետությունից: Ես չպաշտպանեցի դա, հիմք ընդունելով, որ թուրքը մահմեդական է, իսկ այդ հպատակները՝ քրիստոնյա: Մենք գիտենք, որ մի

շարք վայրերում մահմեդականները, օրինակ՝ մուրսերն Իսպանիայում, ի վիճակի են եղել տալ գերազանց կառավարիչներ, բայց թաթարական ցեղից եկող մահմեդական թուրքը, իսկ պատմությունը ապացուցել է, որ նա ի վիճակի չէ հպատակ քրիստոնյա ազգերին տալ անգամ մի պարկեշտ նահանգապետարան: Նրա իշխանությունը կոչվել է «կազմակերպված ավազակություն»: Ես կկոչեի այն «Ջզվանք ու բարձիթողություն՝ տիրող այնտեղ, որտեղ այն չպետք է տիրապետի»:

Տասնմեկ տարի առաջ, երբ պառլամենտում մենք քննարկում էինք մակեդոնական հարցը, ես օգտագործեցի հետևյալ բառերը. «Ես միայն ցանկանում եմ, որ մենք պն. Գլադստոնի հետ կարողանայինք ասել, որ թողեք թուրքերը տանեն իրենց նախատիճքը միակ հնարավոր ձևով, այսինքն՝ տանելով իրենց, թողեք նրանց գնալ ունեցած-չունեցածով... Դա այն առաջնային մտադրությունն է, որ մենք նախատեսել ենք: Որևէ մեկը, որն օրվա այս պահին հավատ ունի թուրքական խոստումների նկատմամբ, կույր է պատմության բոլոր դասերի հանդեպ»:

Ես վախենում եմ, որ անգամ այդ ամենից հետո, որոշ հարգարժան անդամներ հավատ կտածեն թուրքական խոստումներին, ուստի գտնում եմ, որ խոսելով այդ տարվա՝ 1907թ. Հատկացումների Օրենքի մասին, Արևելյան Նոթինհեյմի անդամը (Մըր Գ. Դ. Ռիսը), որի արևելյան հարցերի վերաբերյալ բարձր հեղինակությանը կցանկանայի դիմել, և որը հետագայում Մոնտգոմերի Բորոհսի լիբերալ անդամն էր, խստորեն հանդիմանեց ինձ նրա համար, ինչ ես այդ պահին ասացի: Ես ցավում եմ, որ հարգարժան անդամն իր տեղում չէ լսելու համար, բայց քանի որ ես բացակա էի, երբ նա քննադատեց ինձ այդ խնդրո վերաբերյալ, ուրեմն որևէ անհավասարություն գոյություն չունի: Նա ասաց. «Պետերբորոուի հարգարժան անդամն անցած գիշեր արտահայտել է ամենաուժեղագույն հակաթուրքական զգացում, որն այնքան սովորական և այնքան հաճախակիորեն է արտահայտվել այդ պառլամենտում: Նա ցանկանում էր, որպեսզի այս խնդիրն ավելի հանդարտ և չափավոր կերպով քննարկվի: Փաստացի տեսանկյունից, այն մեզ համար ամենամեծ հետաքրքրությունն էր: Մենք իրականում ունենք առավել մահմեդական հպատակներ, քան Թուրքիայի սուլթանը, որը մահմեդականների կողմից վերաբերվում է ամենամեծ հարգանքով ու ակնածանքով և նաև՝ երկրպագմամբ: Ամենացանկալին կլիներ այն, որպեսզի այս հարցերը քննարկելիս, սուլթանի մասին խոսվեր մեծ հարգանքով, և որպեսզի այն ատելությունը, որ ոմանք ունեն նրա նկատմամբ, քողարկվեր: Ինքն իր կողմից չի կիսում այդ ատելությունը»:

Դրանք խոսքեր էին՝ ասված Աբդուլ Համիդի մասին, որը պրն. Գլադստոնի կողմից խարազանվել էր, որպես «մեծ մարդասպան», և որը գլխավորապես հայտնի էր որպես «Անիծված Համիդ»: Նա կայզեր ընկերն էր. նա եղբայրացավ և լավ հարաբերություններ հաստատեց գերմանական կայզեր հետ, և նրանց իրար հետ տեսան քանցուկ քայլելիս: Ես հանդիպեցի հարգարժան անդամին, որն ավելացրեց հետևյալը. «Նա ծանոթացել էր մահմեդականների և նրանց լեզուների հետ և հավատացած էր նրանց, որպես մի ամբողջություն, ամենագերազանց ազգը լինելու մեջ»:

Դար ապրի՛ր, դար սովորի՛ր: Ես միշտ կարծել եմ, որ մահմեդականը տերմին է, որը մատնանշում է կրոնը, այլ ոչ թե ազգությունը, ինչևէ, այլ կերպ մեզ ասվում է հարգարժան անդամի հեղինակության մասին:

Բոլոր դեպքերում ևս գիտեր, որ մահմեդական հնդիկները ու մահմեդական արաբները կատարելապես ցանկություն ունեին կռվել բրիտանական կայսրության համար օսմանյան թուրքի դեմ, չնայած նրանք մահմեդական տերություն են:

Այնուհետև, գալով Հայաստանի ընդարձակ հարցին, մենք հիշում ենք 1895 և 1896 թվականների այն սարսափելի կոտորածները, սակայն դրանք պատճեչվեցին անկարևորությամբ՝ նախքան այն, ինչ կատարվեց այս պատերազմի ընթացքում: Գերմանացիները մեղավոր են ամենազարհուրելի և անասելի հանցագործություններում, բայց գոյություն չունի այնպիսի զարհուրելի և անասելի հանցագործություն ինչպիսին հայերի, ամենահնարավոր բարբարոսության և վայրագության հանգամանքների ներքո, մեծաքանակ կոտորածն է: Ցանկացած ոք զգում է, որ այս երկիրը տվյալ հարցում մեծ չափով պատասխանատվություն ունի, որովհետև մենք պատասխանատու էինք Բեռլինի պայմանագրի, Կիպրոսի կոնվենցիայի համար և մենք պատասխանատու էինք հայերին թուրքերին ետ վերադարձնելու համար մի այնպիսի պայմանագրով, որը շատ նմանատիպ պայմաններ ունի Բրեստ-Լիտովսկի հետ: Հարցն, իհարկե, նրանում է, թե ինչ պետք է արվի ապագայում: Պարզ է, որ ոչ մի հավատ չպետք է տածվի թուրքերի կողմից տված ցանկացած խոստմանը: Ես հնարավոր եմ համարում, որ համընդհանուր կերպով կընդունվի, որ թուրքերի տիրապետությունը Հայաստանում բոլոր ժամանակների համար պետք է ավարտված լինի: Առաջարկվել է, որ այնտեղ պետք է լինի հայկական պետություն՝ վեց վիլայեթներն ու Կիլիկիան ընդգրկող, դաշնակից մեծ տերությունների պաշտպանության ներքո, նրանցից մեկը, գործելով որպես բոլոր պետություններին մանդատատու, մի քանի տարվա ժամկետով, բոլոր դեպքերում կազմակերպելու և կառավարելու է այդ պետությունը: Դա մի հարց է, որը կքննարկվի բարձր իշխանությունների կողմից, երբ լուծվի խաղաղության հարցը: Հավատում եմ, որ զինադադարի պայմաններից մեկն այն է, որ եթե անկարգություն ծագի, դաշնակիցները պետք է զորքեր ուղարկեն գրավելու այդ տարածքի մի մասը: Ես չգիտեմ, թե որքանով է դա ճիշտ, բայց մեզ ասվել է, որ այնտեղ կա և եղել է մեծ անկարգություն, և թուրքերը միանալով թաթարական զորքերին, որոնք նրանց ազգակիցներն ու բարեկամներն են, որոշ տեղերում տակավին փորձում են հետևել հին թուրքական քաղաքականությանը՝ քաղաքականություն, որը հանդիսացել է հայ ազգի, հայկական հարցի սպանողը:

Եթե դա այդտեղ է, հուսով եմ, որ մենք ի վիճակի կլինենք, եթե արդեն միջոցառումներ չեն ձեռնարկվել, վերջ տալ դրան՝ այդ երկիր զորքեր ուղարկելով: Հավատում եմ, ճշմարիտ է այն, որ եթե չլիներ այս պատերազմում հայերի համառ դիմադրությունը, թուրքերը կարող էին անցնել Պարսկաստան և շրջանցել բրիտանական բանակները Միջագետքում:

Ուստի, պատմության և այս պատերազմից բխող ցանկացած պատճառի համար, մենք կանգնած ենք դատապարտվածության՝ օգնելու հայերի թշվառ մնացորդներին, և ես կարծում եմ, որ առկա է ավելի մեծ քանակություն, քան մարդկանց թվում է, որովհետև Անդրկովկասում կա հայերի ստվար քանակություն, որոնք կվերադառնան ետ, երբ անվտանգություն հաստատվի: Հուսով եմ, որ ազնվական լորդը ի վիճակի կլինի մեզ հավաստիացում տալ, որ եթե այդ լուրերը ճշմարիտ են, և այս թուրքական

բռնությունները դեռևս շարունակվում են Հայաստանի որոշ մասերում՝ զորքերը կարող են ուղարկվել գլավելու երկիրը: Ես կարծում եմ, մենք պարտական ենք հայերին և պարտական ենք արդարության առջև:

ՄԱՅՈՐ ՊԻԼ - Ես ոչինչ չեմ ասի կոտորածների մասին: Թողեք պարզ քննարկումը բավարարի, այնքան, որքան տևել է մարդկության պատմությունը և այնքան, որքան այն կարող է տևել, ոչ մի հանցագործություն այնչափ նողկալի չէ, և հուսով եմ, չի լինի այդչափ նողկալի, որքան եղել են Հայաստանում վերջին վայրագությունները: Եվ ոչ էլ վերջին զինադադարի պայմաններին հղում կանեմ, չնայած որոշ տեսանկյունից այն դժբախտաբար այնպես է կազմվել, որ 24 հոդվածով սուր անհանգստություն է ստեղծել հայերի բարեկամների մեջ, այն հիմնավորմամբ, որ այդ երկրի ստեղծումը ներկայումս թվում է վնասված և որ այն կլինի ավելի ուշ՝ նախքան կծագի խաղաղության կոնֆերանսը և վայրագությունները կդադարեցվեն:Հիրավի, մենք շատ ուրախ կլինենք ստանալ ազնվական լորդից ղեկավարի հավաստիացում, որը կբավարարի այս հարցի վերաբերյալ մեր անհանգստությունները: Այն ինչի հետ կցանկանամ գործ ունենալ, սկզբունքորեն Հայաստանի ապագա կազմակերպումն է: Ինձ թվում է, որ այն ամբողջապես կախված է Մերձավոր Արևելքում մեր ամբողջ քաղաքականությունից և որ այն իսկապես խարխլվում է այն հարցին, թե ո՞վ պետք է լինի Կ.Պոլսի տերը: 1917թ. հունվարին դաշնակիցների կողմից այս հարցի վերաբերյալ մենք ստացանք ամենաբավարար հայտարարությունը: Դա հայտարարվեց այն առթիվ, որ քաղաքակիրթ աշխարհը գիտեր, որ դաշնակցային նպատակների այդ մասը հանդիսանում է օսմանյան կայսրության Եվրոպայից վոնդելը, որն անտարակույս այնքան օտար է արևմտյան քաղաքակրթությանը: Դա ամենաբավարար այն տեսակետն էր, որը ես կիսում եմ: Բայց այդ ընդունելի հեռանկարն ամբողջապես խափանվեց այս տարվա սկզբից այս երկրի և, ես ենթադրում եմ, նաև այլ երկրների, պատերազմի նպատակներն արտահայտող պրեմիեր-մինիստրի խոսքում: Նա ասաց. «Մենք ոչ էլ կռվում ենք Թուրքիային զրկելու Փոքր Ասիայի հարուստ և փառահեղ հողերից, որոնք իրենց բնակչությամբ գերազանցապես թուրքական են»: Թվում էր, որ նա այնքան շատ է կարևորություն տալիս այդ հարցին որ ավելի ուշ, իրերն ավելի պարզ դարձնելով, նույն խոսքի մեջ ասաց. «Մենք չենք առարկում թուրքական կայսրության պահմանմանը, իրենց մայրաքաղաքում կենտրոնացող թուրքական ազգի հայրենիքում»: Ուստի բացարձակապես պարզ է, որ այնքան, որքան պահպանվում է գոյություն ունեցող կառավարության հայտարարված քաղաքականությունը, թուրքերը չպետք է վոնդվեն, և թուրքական իշխանությունը պետք է մնա կենտրոնացված այնտեղ, ինչը պրեմիեր-մինիստրը բնութագրեց որպես Կ. Պոլիսը կենտրոն ունեցող ազգի հայրենիք:

Ես իսկապես տիրապետեցի ինձ, երբ կարդացի այդ հայտարարությունը: Ես հայրենասիրական պատճառներով չբննադատեցի այն պատերազմի ընթացքում, որը գրեթե բացականչում էր լորդ Բիքոնսֆիլդի բառերը, երբ վերջինս վերադառնում էր Բեռլինի պայմանագրի ստորագրումից. «Թուրքիան մեկ անգամ ևս գոյություն ունի Եվրոպայում»: Ուստի, ինձ թվում է, որ մենք այնքան ենք պարտավորվում չվնասել Կ. Պոլսի փչացած պալատական արտոնյալներին, չվնասել Լևանտի այլասերված աղբահորը, որ կենտրոնացնում ենք թուրքական ինտրիգը: Եթե դա այդպես է,

ինձ թվում է, որ մենք Մերձավոր Արևելքում մեր ամբողջ քաղաքականության համար կունենանք երկու ուղղակի և շատ ցավալի հետևանքներ: Առաջին հերթին, եթե դուք նայեք Արաբիային, մենք փորձում ենք նպաստել Հեջազի թագավորի՝ Մեքքայի շեյխի ուժն ու ազդեցությունը: Մենք փորձում ենք սկսել և կազմավորել, ինչ ես ճշմարտորեն կարող եմ կոչել պանարաբական քաղաքականություն, որպես հակադրություն Միության և Առաջադիմության կոմիտեի պանիսլամիզմի: Կամ կարելի է այլ բան ասել, քննելով այն հոգևոր տեսակետից, որ մենք ետ ենք սովորեցնում սուննի իսլամը օսմանյան դպրոցից: Բայց վախենում եմ, որ եթե մենք պատրաստվում ենք թողնել Միությունն և Առաջադիմություն կուսակցությանը հսկելու՝ Կ.Պոլիսը, ապա այդ քաղաքականությունը ցնորք է: Մեր բոլոր ջանքերով կպարզենք, որ ավելին չենք արել, քան ստեղծել ենք մի կրոնապետություն Արաբիայում՝ կիսով չափ թաղված արաբական ավազի մեջ: Բայց եթե մեր մերձավորարևելյան քաղաքականության մյուս մասը հանդիսանում է մի շարք երիտասարդ ազգությունների հիմնումը և նրանց պետությունների շնորհումը, որքան դուք թուրքական ինտրիգի և գերակշռության կիզակետը թողնեք Կ. Պոլսում, այնքան այս երիտասարդ անկախ պետությունների կյանքը, ինչպիսին օրինակ Հայաստանն է, անհնարին է, իսկ ձեր քաղաքականությունը՝ երազ: Միջազգային ֆինանսական շատ ուժեղ ազդեցություններ, հանդիսանում են Կ. Պոլսում այս ուժերի գոյության շարունակության պաշտպան: Բայց ուրախ եմ կարծելու, որ չկան այնքան իրավասու և, հավատում եմ, այնքան պատրաստակամ պետական անձինք, պայքարելու այս ազդեցությունների դեմ և այդ հարցի հետ գործ ունենալու, որքան նույն հարգարժան ջենտելմենը (պրն. Բալֆուր) և ազնվական լորդը (Լորդ Ռ. Սեսիլ): Ուստի շատ ուրախ կլինեմ, եթե մենք ունենանք որոշ հայտարարություն այն հարցի վերաբերյալ, որը ես այդքան երկար բարձրացրեցի:

Ես կցանկանայի մի քանի րոպե քննարկել այն, ինչ կարող է լինել Հայաստանի կազմակերպումը, և թերևս հնարավոր է առաջաբան կցեմ այն դիտողությանը, որ ես բավարար չեմ համարում հայկական հարցի լուծման հնարավորությունը, այնքան ժամանակ, որքան Կոստանդնուպոլսի հարցը մնում է անբավարար: Առաջին կետը կարծում եմ այն է, որ մեծ թվով մարդիկ ասում են, թե Հայաստանը հողին է հավասարեցված, և ուստի, ընդհանրապես չկա հայկական հարց: Այնքանով, որքանով ես կարող եմ դատել, Ասիական Թուրքիայում, նախքան պատերազմը գոյություն ուներ մոտավորապես 1800000 հայ: Վեց հարյուր հազարը կոտորվել է, 600000-ը դարձել է մահմեդական կամ թաքնվում է երկրում, կաթոլիկ կամ բողոքական հայերը չեն վնասել և մնացած 600000-ը աքսորվել է: Ուստի ինձ թվում է, որ գոյություն ունի հայերի կորիզ, և մենք կարող ենք ապավինել 1200000 հայերին, որոնք, կարծում եմ, կարող են ձևավորել Հայաստանի վերահաստատված պետության մի շատ բավարար միջուկը: Միայն ցանկանում եմ ավելացնել, որ որքանով ես կարող եմ դատել, վեց վիլայեթներում կար մոտավորապես 400000 քուրդ: Կարծում եմ, այդ քրդերից ոմանք ոչնչացվել են այս պայքարի ընթացքում, և հետևաբար ոչ մի պատճառ չեմ տեսնում, թե ինչու հայերը, եթե նրանք ետ վերադառնան, բավարար կերպով ի վիճակի չեն լինի բնակեցնել իրենց պետությունը: Առաջին վտանգի հետ, որը սպառնում է Հայաստանին, ես չեմ ուզում առնչվել: Երկրորդ վտանգն այն է, որ նա կարող է բաժանվել մասերի: Կցանկանայի հա-

վաստիացում ստանալ հատկապես այդ կետի վերաբերյալ: Որոշ հարգարժան ջենտելմեններ կարող են ժպտալ այսպիսի բան պատահելու հավանականության վրա, բայց մենք տակավին ստիպված ենք վերհիշել, երբ կարդում ենք 1917թ. մարտին բոլշևիկների կողմից հրապարակված հուշագիրը, ըստ որի 1916թ. գարնանը գոյություն է ունեցել գաղտնի պայմանագիր՝ ուժի մեջ մտած Ֆրանսիայի, Բրիտանիայի և Ռուսաստանի միջև, կարծեմ, Հայաստանի իրական բաժանման մասին: Չնայած, կարծում եմ՝, թերևս ես չեմ ծանրաբեռնում բավական ճշգրտորեն իմ հիշողությունը, որ հողվածները ենթադրում էին՝ Ռուսաստանը պետք է ստանա Էրզրումի, Բիթլիսի և Վանի վիլայեթները: Հայաստանի մնացած մասը, Ադանայից և Ալեքսանդրետից մինչև ռուսական նոր պետության սահմանը, պետք է մնար Ֆրանսիայի ձեռքում: Ուստի, հայերին սպառնացող երկրորդ վտանգն այն է, որ նրանք կարող են բաժանվել երկու մասի, ինչպես դա արվել է գաղտնի պայմանագրում: Ես համոզված եմ, որ այն ամենին, ինչ ազնվական լորդն ասաց, որ այս երկիրը միշտ հետևում է իր պայմանագրերին, բայց ես ուրախ կլինեմ լսելու, որ այդ մեկին մենք չենք վերաբերելու որպես կենսական կարևորության: Կարծում եմ, որ նոր հայկական պետությանը, որին մենք հույս ունենք հանել ծանծաղուտից, սպառնում է մի երրորդ վտանգ, և դա այն է, որ նա կարող է վերածվել միլլեթ կոչվածի: Նրանք, ովքեր կարդացել են Թուրքիայի պատմությունը, գիտեն, որ միլլեթները սկիզբ են առել մեծ սուլթան Մահմուդ II-ից: Նա կազմակերպում էր Թուրքիայի ազգերին հոգևորական հսկողության ներքո, և այդ ժողովրդին կազմակերպում էր եկեղեցու հովանու ներքո, և միայն երեկ ես կարդում էի Հայաստանի մի շատ մեծ բարեկամի առաջարկությունն առ այն, որ ապագայում հայերը պետք է կազմակերպվեն նույն եղանակով:

Ես պնդում եմ, որ դրա համար գոյություն ունեն հսկայական խոչընդոտներ: Առաջին հերթին նրանք չեն ունենա տարածքային կարգավիճակ, նրանք կունենան ժողովուրդների ամբողջական բաժանում: Նրանք չեն ունենա աշխարհագրական կարգավիճակ, և ի թիվս այլոց, չեն ունենա գործադիր իշխանություն և, չունենալով գործադիր իշխանություն, չեն ունենա անվտանգություն: Նրանք կդառնան, եթե համարձակվեմ վերհիշել Բիսմարկի արտահայտությունը. «Նրանք կդառնան մերձավորարևելյան լճի պղպջակը»: Հուսով եմ, որ ազնվական լորդից կլսենք, որ սա կառավարության որոշումը չէ: Կամ մի հաջորդ լուծում, որն առաջարկվել է, և որի վերաբերյալ ես կցանկանայի խոսք ասել: Դա թուրքական հարցի լուծումն է՝ զուգորդված սուլթան Մահմուդ II-ի քաղաքականության հետ, որն իշխել է XIX դարի սկզբներին: Նրա ծրագիրը հանդիսացել է Թուրքիայի բազմաթիվ ազգերին մեկ կենտրոնական կառավարության ներքո միացումը: Այդ քաղաքականությանը հետևել են նրանք, ովքեր հաջորդեցին իրեն և տակավին մեծապես առաջադրվում են, մինչդեռ թուրքական կայսրության որոշ մասերում, օրինակ, ռումինացիների, հույների, բուլղարացիների համար, որոնք բոլորը թուրքական տեսանկյունից հանդիսանում են անհուսալի իրրեղեռնքիստներ[4], այն չէր կարող կիրառվել: Այն դյուրըմբռնելիորեն լավ կերպով կարող էր կիրառվել հայերի նման մի ազգի նկատմամբ, որոնք որոշ տեսանկյունից անքակտելիորեն կապված են թուրքական արդյունաբերության, ֆինանսների և թուրքական պետության ողջ կյանքի հետ և որոշ վայրերում ամենուրեք ցրված են ամբողջ երկրամասով մեկ: Ես պնդում եմ,

չնայած գոյություն ունեցող հզոր փաստարկների ի պաշտպանություն այդ լուծման, որ այդ քաղաքականությունը բացարձակապես վերացվել է Աբդուլ Համիդի 40-ամյա կառավարմամբ: Այդ մարդն ինքն իրեն առաջադրեց՝ վերացնել Մահմուդի քաղաքականությունը: Նա գլուխեց ազգերին իրար դեմ, և այն ինչ ձեռնարկվեց նրա կողմից, մեր դարաշրջանում ավարտվեց Թալեաթ փաշայի կողմից: Աբդուլը Մերձավոր Արևելքի Մետերնիխն էր, իսկ Թալեաթը՝ Մարատը: Հայկական հարցի դեռևս մեկ լուծում է մնում, և դա Եվրոպայի երաշխիքն է: Երբ ես ասում եմ այդ, իմ առջև ծագում է ջարդված, բռնադատված և բռնաբարված երաշխիքների մի մեծ բազմություն, մի ամբողջ շարք: Գոյություն ուներ Սան Ստեֆանոյի պայմանագիրը, որը ծվատվեց Բեռլինում: Դա Բեռլինի 1878 թվականի փուչ պայմանագիրն էր: Կար 1880 թվականին տերությունների համատեղ նոտան, որը նետվեց նրանց երեսին: Կար 1895 թվականի համաձայնագիրը, որը երբեք չիրագործվեց և՝ 1908 թվականի փուչ սահմանադրությունը: Կար ևս մի դատարկ՝ 1914 թվականի համաձայնագիրը, որը պայթեցվեց մասերի եվրոպական պատերազմը սկսելուն պես, և ամենավերջում կարող եմ ավելացնել մի համաձայնագիր, որը նույնպես պետք է դարձնել փուչ՝ 1916 թվականի գաղտնի պայմանագիրը:[5] Եվրոպական երաշխիքների ամբողջ բազմության և շարքի երեսից կարող ենք արդյո՞ք որևէ բան հուսալ եվրոպական համերգից: Մենք ոչինչ չենք կարող հուսալ, մինչև չիրագործենք այն աշխատանքը, որի հետ հակառակ նստարանի ազնվական լորդն այնքան հարգարժանորեն հաղորդակցվում է, ես նկատի ունեմ այն, որպեսզի եվրոպական համերգն ուղղենք դեպի Ազգերի Լիգա, ինչևէ, որովհետև եվրոպական համերգի համաձայնությունները եղել են փուչ, համենայն դեպս կարող ենք ասել, որ նրանց բնորոշ չի եղել բարյացակամության մի որոշ բաղադրատարր:

Մենք ցանկանում ենք, որպեսզի համայն մարդկության մատուցվող բարի կամքը լինի ուժեղ և կազմակերպված, ինչպես արտահայտվեց այդ մեծ քաղաքականության մեջ: Գոյություն ունի մի հարց, որը դեռևս պետք է տրվի. ենթադրյալ Ազգերի Լիգան ստեղծվել է, և Մերձավոր Արևելքում կազմավորվել են այս նոր պետությունները, նրանք պետք է պաշտպանվեն բազում տերությունների, թե՞ մեկի կողմից: Լավ, մենք բավականաչափ միջազգային հսկողություն ենք ունեցել:

Մենք բավականին շատ այդ ամենը տեսել ենք Եգիպտոսում, և ուստի շատ ավելի լավ կլիներ Հայաստանում ունենալ Եվրոպայի մանդատատու մեկ տերություն: Կլինի՞ այդ տերությունն Անգլիան: Մեծապես հուսով եմ, որ ոչ՛, չնայած շատ եմ ակնկալում այն ժամանակը, երբ նա կդառնա մանդատատու Միջագետքում: Կլինի արդյո՞ք այդ տերությունը Ֆրանսիան: Մենք այդ չենք կարող սպասել նրանից, որովհետև նրա միջոցները հյուծված են, իսկ ժողովրդի ուժը՝ հատված: Կլինի՞ դա բալկանյան պետություններից մեկը: Համոզված եմ, որ Հունաստանի մեծ պետական գործիչ Մ. Վենեզելոսը չափազանց շրջահայաց է, ցանկանալու վերցնել այդ մեծ խնդիրը: Կլինի՞ դա Բուլղարիան: Ո՛չ: Ինչ վերաբերվում է Սերբիային և Ռումինիային՝ նրանց ձեռքերը շատ զբաղված են: Սնացել է միայն մեկ տերություն: Դա այն տերությունն է, որն անցյալ սեպտեմբերին Հայաստանում աստիճանաբար ներշնչել է հույսի և առաջադիմության գաղափարներ. ես նկատի ունեմ Ամերիկայի Միացյալ Նահանգները: Ես մտա-

բերում եմ այն փաստը, որն այնքան վաղ էր՝ 22 տարի առաջ, երբ ես պատիվ ունեցա, եթե կարող եմ ներող լինել անձնական հիշողության համար, Հավարդենում խոսել հանգուցյալ պրն. Գլադստոնի հետ: Դա 1896թ. սեպտեմբերն էր: Կարծում եմ, որ 1896թ. սեպտեմբերն էր, երբ իրենց գագաթնակետին հասած այն սարսափելի վայրագությունները Հայաստանում, որոնք հողին հավասարեցրեցին հայ ժողովրդի 100000-ին: Ես եկել էի տեսնելու մեծ պետական գործչին այլ հարցով, բայց գտա նրան Հայաստանի մասին մտորումներով տարված: Նա ասաց ինձ, որ երբ երիտասարդ էր, մեծ հետաքրքրություններ տածում Իտալիայի ազատության նկատմամբ, այնպես որ իր ծեր հասակում իր առաջին պարտքը, համարում է Հայաստանի մարտիրոսացած ժողովրդին օգնելը: Նա ավելացրեց մի արտահայտություն, որը, կարծում եմ կարող եմ կրկնել. «Բոլոր ազգերի պատմության մեջ չի եղել այնպիսի անհանգստակիր պատմություն, ինչպիսին հայ ժողովրդի պատմությունն է»: Ես եզրափակում եմ այնտեղից, որտեղից սկսեցի. որ այս խնդրում հարցադրումն ու արմատն այն է, թե ով պետք է լինի Կ. Պոլսի տերը և արդյո՞ք դա պետք է լինի այլասերված պալատական արտոնյալների այն խումբը, որն այդքան երկար անարգել է իրեն, կամ արդյո՞ք դա պետք է լինի մի ավելի անարատ և ավելի լավ ազդեցություն: Հուսով եմ, որ խնդրի վերաբերյալ մենք մի ավելի բավարար հավաստիացում կունենանք, քան այն, ինչ հայտարարվեց մեզ այս տարվա հունվարին, այն ամենի վերաբերյալ, ինչ ընկած է խնդրի իրական միջուկում և հիմքում: Եզրափակման մեջ կարող եմ փոփոխել, կամ վերաստեղծել հռոմեացի մի ծեր պետական գործչի արտահայտությունը. «articulus stantis aut cadentis Armenia. Կանխել իրավիճակը, այլապես Հայաստանը խորտակված է»:

ՊՐՆ. Ջ. ՍՊԻՐ – Խնդրում եմ պառլամենտի հանդուրժողականությունը հասցեագրելու նրան այն խոսքերը, որոնք կարտոնվեմ ասել այս պալատում, նրա մեջ շատ տարիների ծառայությունից հետո և տալ ջերմ աջակցություն այն ելույթներին, որոնք արտասանվել են՝ ուղղված կառավարությանը, որ թուրքական գործերի կայանալիք լուծման մեջ, Թուրքիան Հայաստանի կառավարման հարցում չպետք է հետագա ազդեցություն և տիրապետություն ունենա: Իմ ընտրողների անունից ցանկանում եմ ասել, որ նրանք ուրախությամբ կրեցին պատերազմի հսկայական տառապանքները և կրեցին իրենց այս մեծ պատերազմի՝ արդարության և քաղաքակրթության շահերի համար մասնաբաժինը, որն ավարտվեց այդքան հաղթական կերպով, բայց եթե Թուրքիային թույլատրվի պահպանել որևէ իշխանություն Հայաստանի նկատմամբ, ես համոզված եմ, իմ ընտրողները խորապես կհիասթափվեն: Պատերազմի ընթացքում տեղի են ունեցել ողբերգություններ և իրականացվել կտտանքներ, բայց ոչինչ այնքան շատ չցնցեց իմ ժողովրդին, որքան Թուրքիայի հազարավոր հայերին ծով տանելու և նրանց ջուրը նետելով, խեղդելու արարքը: Հայերի կոտորածի այս ողբերգությունը նորից և նորից ծագել է, և մարդկության հետաքրքրությունների այն պահն է, որպեսզի այն դադարեցվի: Չնայած չեմ կարծում, որ կառավարությունը հավասարապես ցանկանում է պաշտպանել հայերին, ես համարձակվում եմ նրանց անունից, որոնց ներկայացնում եմ, ամենահարգալից կերպով ասել, որ եթե Հայաստանի նկատմամբ Թուրքիայի իշխանության մի նշույլ պահպանվի, նրանք կհիասթափվեն: Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա կցանկանայի ուժի մեջ դրված տեսնել պրն. Գլադս-

տոնի պաշտպանած սկզբունքը, այսինքն՝ Թուրքիան ունեցած-չունեցածով պետք է դուրս գետվի Եվրոպայից: Ես մեծ քաղաքականության հմուտ դատավոր չեմ այդ հարցի վերաբերյալ անառարկելի տեսակետ արտահայտելու համար, բայց որքան ավելի է սահմանափակված լինի Թուրքիայի տիրապետությունը, այնքան ավելի լավ կլինի մարդկության համար: Ես կցանկանայի մի բարձր գնահատականի խոսք ասել մեր կառավարության արարքի վերաբերյալ Պաղեստինի հետ կապված: Մենք մեծապես գնահատում ենք կառավարության գործողությունը՝ բրիտանական ժողովրդի հաղթանակն այդ երկիրը թուրքերի ձեռքերից շահելու մեջ, և հրեաներին քաջալերելը՝ վերադառնալու իրենց հայրենիք, և ես լրջորեն հուսով եմ, որ նրանց ուժերը ապագայում դեռ կօգտագործվեն այդ ուղղությամբ:

Մի խոսք՝ Ազգերի Լիգայի առնչությամբ: Մենք չենք ցանկանում այս սարսափելի պատերազմի կրկնությունը: Գիտեմ, որ դա մի շատ դժվարին խնդիր է, և կառավարության նկատմամբ ունեմ ամբողջական վստահություն, որ նրանք իրենց կողմից ամեն ինչ կանեն՝ լուծելու համար երկրագնդի շահերը, բայց մենք, մեզանից նրանք ովքեր սահմանափակ գիտելիք ունեն մեծ քաղաքականության մասին, չեն կարող օգնել մտածելով, որ երբ դաշնակից ազգերը միացան և կատարեցին իրենց արյան և դրամական զոհաբերությունները հաղթելու այս պատերազմում, որ նույն համակցումը կարող է ձևավորվել, որպեսզի կանխվի մի այնպիսի աղետ, ինչպիսին այս պատերազմի կրկնությունն է: Ես համոզված եմ, որ ներկա հանգամանքներն առանձնահատուկ կերպով համապատասխանում են և այդ նպատակի կատարման համար հնարավոր բնույթի են: Ես բավականին լավ կերպով գիտեմ այն հայտարարություններից, որոնք կատարել են կառավարության անդամները, որ նրանք չեն կորցնի զգոնությունը այս կարևոր զարգացման նկատմամբ: Անգամ մեր՝ սահմանափակ և համեստ գիտելիքներով գիտենք, որ հիմնախնդրում գոյություն ունեն նշանակալի դժվարություններ, բայց կարծում ենք, որ ձախողել ենք ավարտել այն ամենը, ինչի համար պայքարել ենք այս պատերազմում, մինչև չհիմնվի մի լիգա, որը կկանխի այս աղետի և ողբերգության կրկնությունը:

Հայաստանի վերաբերյալ կցանկանայի ավելացնել, որ այդ երկրում մոտավորապես 500000 քրիստոնյաների կոտորածից հետո, ոչ մի մեղքի համար, բացի նրանից, որ թուրքերը կամեցան ոչնչացնել այդ ժողովրդին, մենք իրավունք ունենք կառավարությունից սպասել, որպեսզի ոչ մի իշխանության նշույլ չթույլատրվի մնալ նրանց ձեռքերում, ովքեր բավականին լավ ապացուցել են, որ անընդունակ են՝ արդար և քաղաքակիրթ կերպով գործ ունենալու իրենց իշխանության ներքո գտնվող որևէ ազգության նկատմամբ:

ՊՐՆ. ՀՅՈՒԳ ԼՈՈՒ – Պատիվ ունեմ պատկանել կուսակցության, որի ամենանվազագույն ավանդույթներից է եղել այն, որ երկար տարիներ իրենք համակցել են բոլոր երկրամասերի ազատության դատին և այս քննարկումը պատշաճ չի լինի ավարտել առանց այս նստարաններից բարձրացող որևէ թույլ ձայնի: Ես չեմ կարող հավակնել մի գիտելիքի, որ իմ ընկերներից շատերն ունեն արտաքին քաղաքականության մասին, կամ մի այնպիսի գիտելիքի իմացության, որն ինձ հնարավորություն կտա առաջադրել կամ էլ քննադատել որոշակի քաղաքականություն և որոշակի լուծումներ: Ես պարզապես ցանկանում եմ նույն ջենտելմեններին՝ արտաքին

գործերի նախարարի օգնականին, տալ մի հարց, որը մեզանից անգամ ամենաանտեղյակը կարող է տալ և, կարծում եմ, որի պատասխանը մենք իրավունք ունենք սպասել: Կառավարության ներկայացուցիչները դիտավորյալ կամ ոչ դիտավորյալ, թուրքական տիրապետության շարունակման առնչությամբ օգտագործեցին բառեր, որոնք համենայն դեպս ենթակա են երկու մեկնաբանության: Ինձ տրված վերջին պատասխանի մեջ, արտաքին գործերի նախարարը ասաց, որ Նորին գերազանցության կառավարության նպատակը միշտ եղել է Հայաստանում թուրքական անիշխանության վերջ տալը: Դա հիանալի, և ես կասկած չունեմ, որ ճշմարիտ արտահայտություն է, բայց չեն կարող չհիշել, որ ճիշտ նմանատիպ արտահայտություն մինչև պահս բազմիցս օգտագործվել է բազմաթիվ առիթներով և փաստորեն չի կանխվել այնպիսի սարսափների կրկնությունը, ինչպես վկայակոչվել է այս բանաձևի նախաձեռնողների և ելույթ ունեցողների կողմից: Ես ուզում եմ, որպեսզի ազնվական լորդը բավականին ազնվորեն ասի. այո՛ կամ ո՛չ, երբ նա խոսում է թուրքական անօրինականությանը վերջ տալու մասին, արդյո՞ք նա նկատի ունի թուրքական տիրապետության վերջ տալը: Կարծում եմ, որ իսկապես ճիշտ է, որպեսզի մենք բավականին անկեղծորեն և պարզորեն իմանանք, թե արդյոք դա այդպես է: Ճիշտ է, որ որոշակի և շատ խորիմաստ տեսանկյունից երկուսն էլ նույն բանն են, որովհետև թուրքական իշխանությունը միշտ եղել է անիշխանություն, բայց «թուրքական իշխանության ավարտ» արտահայտությունն այնքան հաճախ է քողարկել այդ իրական իշխանության շարունակությունը: Ես չեմ հավատում, որ օրվա այս պահին որևէ մեկը կարող է ցանկանալ, որպեսզի Թուրքիան ցանկացած հպատակ ժողովրդի նկատմամբ շարունակի մնալ որպես կառավարող: Թուրքն ունի շատ արժանիքներ: Թուրքական գյուղացին համարվում է, նրանց կողմից ովքեր գիտեն նրան, որպես մարդկության մեջ ամենաարդարը, բարյացկամն ու աշխատասերը, իսկ թուրքական զինվորը համարվում է ջենտելմեն և մաքուր կռվող: Ես չգիտեմ թե միշտ է արդյոք դա այդպես, բայց որոշակի կերպով թուրքական կառավարության վերաբերյալ, բոլորից զատ ասելու որևէ բան գոյություն չունի: Թուրքի իշխանությունը յուրաքանչյուր երկրում եղել է աներեր: Ենթադրում եմ, որ մեզնից բոլորն առանց բացառության անհանգստության մի առատություն է կրել այս վերջին չորս տարիների ընթացքում, և մի պահ անգամ երբեք չենք կարծել, որ հնարավորությունը հոդս է ցնդեցրել այն, ինչ մենք սիրել ենք: Ընդհակառակը, մենք քաջալերվել ենք այն մտքով, որ նրանք, որոնց համար կրում էինք այդ անհանգստությունը, կռվում են վերջ տալու համար բռնապետությունն աշխարհում: Այդ խնդիրը, որչափ վերաբերում է Արևմտյան Եվրոպային, ուրախությամբ իրագործվում է: Ես ձեզ աղերսում եմ, թույլ մի տվեք, որ այն մնա անավարտ այնտեղ, որտեղ բոլոր ժամանակների ամենահին և այլասերված չարիքը նզովել է աշխարհի ամենահիանալի երկրները:

ՊՐՆ. ՊՈՆՍՈՆԲԻ – Կցանկանայի միանալ նրանց, ովքեր ելույթ են ունեցել, հույս արտահայտելով, որ վերջիվերջո Հայաստան դժբախտ երկիրը կդառնա մի երկիր, որտեղ նա կկարողանա ապրել անվտանգության մեջ: Ես չեմ կարծում, որ ամբողջ աշխարհում մի ուրիշ ազգ լինի, որը տառապել է այնքան, որքան այս դժբախտ ժողովուրդն է տառապել: Իմ հարգարժան ընկերը, որը նստում է իմ կողքին, իր շատ հետաքրքիր ելույթի

մեջ անդրադարձավ այն բոլոր դատարկ փորձերին, որոնք երկրագնդի այդ հատվածում կատարվել են շտկելու համար թուրքական անիշխանությունը: Երբ խաղաղ ժամանակ, Եվրոպայի համերգը իրար հետ ներդաշնակորեն աշխատելու միջոցով բավականաչափ ի վիճակի չէր գործ ունենալ այդ խնդրի հետ, բավականաչափ անընդունակ հաստատելու գործերի այնպիսի դրություն, որը հնարավորություն կտար հայ ժողովրդին ապրել հանդուրժելի պայմաններում, տեսնելով այն իրարանցումը, որի մեջ այսօր գտնվում է աշխարհը, մի մտավախություն է առաջանում, թե արդյո՞ք ավելի մեծ հաջողություն կուղեկցի տերությունների ջանքերին: Զգում եմ վստահություն, որ թուրքի իշխանությունը աշխարհի այդ մասում ո՛չ օսմանյան ազգության պատկանող հպատակ ազգությունների նկատմամբ, այսուհետև չի կարող հանդուրժվել: Ինչպես ասաց իմ հարգարժան ընկերը (պև. Հյուգ Լոուն), դա թուրքական զինվոր, թուրք գյուղացի չէ, այլ թուրքական կառավարությունն է, որ այլասերված է և որի նկատմամբ չի կարելի հավատ տածել: Ես շատ լավ հիշում եմ, որ պառլամենտի իմ առաջին ելույթում, այդ պահին՝ 11 տարի առաջ, արտահայտեցի ծանրակշիռ կասկածներ այն ամենի հաջողության նկատմամբ, ինչ հայտնի էր որպես թուրքական հեղափոխություն: Ես չհավատացի թուրքին՝ որպես կառավարող, և հետագա տարիներին մենք տեսանք, որ այս ձախողումը դարձել է ավելի ու ավելի արտահայտված: 1895թ. ես Կ.Պոլսում էի և այնտեղ մեծ զվարճություն էր, որովհետև Եվրոպայի համերգը և համերգը ներկայացնող դեսպանները ստիպել էին սուլթան Աբդուլ Համիդին համաձայնվել հայկական բարեռորագումների ծրագրին: Աբդուլ Համիդը հանդիսանում էր ամենաճկուն և ամենախորամանկ դիվանագետներից մեկը, որը երբևէ եղել է Եվրոպայում: Նա ճշգրիտ կերպով գիտեր այն պահը, երբ Եվրոպայի համերգի մեքենայի առաջ քար գցել և հարկադրել տարբեր տերություններին հրաժարվել մեկը մյուսից: Նա կհամաձայնվեր բարեռորոգումներին՝ առանց ամենափոքր մտադրության դրանք իրագործելու: Այդ ժամանակի պայմաններից մեկն այն էր, որ քրիստոնյա մեծամասնություն ունեցող վիլայեթը պետք է ղեկավարեր քրիստոնյա նահանգապետն ու վերահսկիչը: Դրանից շատ քիչ անց Աբդուլ Համիդը հոգ տարավ տեսնելու, որ գոյություն չունի ոչ մի քրիստոնյա մեծամասնություն որևէ վիլայեթում. մշտապես դիմեց իր Էլդիզ պալատից գործադրվող կոտորածի մեթոդին: Այս ժողովրդի ապագայի համար մենք չենք ցանկանում երկիմաստություն և կասկած: Ինչ վերաբերում է Մերձավոր Արևելքի այլ ժողովուրդներին, այնտեղ կարող են լինել մրցակցություններ այն բանում, թե ով կտիրապետի տարածքի այս կամ այն մասին: Կանխավայելում եմ այս հարցերը մտավախությամբ, բայց հայերի հետ կապված, բոլոր երկրների մարդկությունը կհամաձայնվի, որպեսզի իրենց բողոքի առիթները բավարարվեն:

Քանի որ ազնվական լորդը՝ (լորդ Ռ. Սեսիլը) արտաքին նախարարության ներկայացուցիչը, այստեղ է, կցանկանայի բարձրացնել բացառիկ կարևորության մի հարց: Ես կարծում եմ, որ նստաշրջանի ավարտին մնացած երկու օրվա սահմաններում և մեր առջև երկրի կոչի համաձայն, մենք պարտավոր ենք կառավարությունից ունենալ մի շատ պարզ հայտարարություն այն մասին, թե ո՞րն է մեր քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ: Ամենացավալին այն է, որ այս պահին մեզնից տեղեկատվություն պետք է թաքցվի, թե իրականում ինչ է անում մեր ռազմարշավախում-

բը Ռուսաստանի հյուսիսում, ո՞րն է մեր մտադրությունը բոլշևիկյան կառավարության նկատմամբ և արդյո՞ք համալրումներ և նշանակալի համալրումներ ուղարկվում են դեպի երկրագնդի այդ հատվածը: Ես զարմացա հարցերի այն քանակությամբ, որ գոյություն ունի երկրում խնդրո առարկայի վերաբերյալ: Ժողովներում, որոնք ես ձեռնարկել եմ վերջերս, ես ունկնդիրներից ստացա համառ հարցեր այն մասին, թե ո՞րն է մեր քաղաքականությունը Ռուսաստանում և ե՞րբ է նախատեսվում Ռուսաստանից մեր ռազմարշավախմբի դուրս բերումը: Չեմ ցանկանում վերադառնալ ռուսական հեղափոխության նկատմամբ մեր վերաբերմունքի հենքին: Դա ամենաճախորդալի մի վերաբերմունք էր: Եթե մենք նպաստեինք այն շարժմանը, որը տապալեց ցարին, մենք կարող էինք դրանից զարգացնել ժողովրդավարության մի ձև, որը կդառնար հսկայական արժեք աշխարհի համար: Բայց մենք դրան սառը ուշադրություն ցույց տվեցինք և չբավարարվեցինք դրանով, միևնույն ժամանակ ականատես եղանք զգացմունքների, որոնք գալիս էին ռուսական հեղափոխությունից՝ տարածվող ինչպես անտառային կրակը և անցնող բոլոր երկրներին, և երբ ջահեր են տապալվում, և կրակի կայծերը հասնում են անգամ դեպի Արևմուտքի շատ հեռավոր վայրերը, չբավարարվելով այս ամենի ամայացնող արդյունքների ականատեսությամբ, ինչը կոչվում է «բոլշևիզմ», մենք իրականում, բամբասանքի հետ կապված, որը թվում է շատ լավ հիմքեր ունի, շարունակեցինք բորբոքել զգացմունքը բոլշևիկյան կառավարության դեմ՝ Ռուսաստանում մեր գործողությամբ: Ես իսկապես կարծում եմ, որ հիմա, երբ Կենտրոնական տերությունների հետ մենք զինադադար ունենք, հիմա, երբ եկել է խաղաղությունը և ռազմական գործողությունը դադարեցված է, եթե ժողովուրդը հավատա, որ մեր զինվորները ճմռանը կուղարկվեն արկտիկական շրջաններ, հանուն մի կառավարության հետ վեճի բորբոքման, ինչևէ որքան շատ էլ մենք համաձայն չենք նրա հետ, որը ձևավորվում և ղեկավարվում է անցումային փուլը մեծագույն դժվարությամբ, մեր ժողովրդի զայրույթը չափազանց մեծ կլինի: Ինչպիսի սխալներ էլ որ ռուս մարդիկ կատարում են, թույլ տվեք գտնել նրանց իրենց փրկությունը առանց արտաքին միջամտության, և ես հույս ունեմ, որ ազնվական լորդը հիմա, որովհետև մենք այնքան քիչ ժամանակ ունենք մեր տրամադրության տակ, նախքան նիստի ավարտը կտա որոշ տեղեկություն ամոքելու համար այն երկյուղները, որոնք գոյություն ունեն, և եթե նա կարողանա ասել մեզ, որ կառավարությունը որոշում է կայացրել Ռուսաստանից ռազմարշավախմբի դուրս բերման վերաբերյալ, ապա այսօր այս երկրում չի կարող ավելի ողջունելի լուր լինել:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ (ԼՈՐԴ ՌՈԲԵՐՏ ՍԵՍԻԼ) – Ստիրլինգի հարգարժան անդամի եզրահանգող դիտողությունները բարձրացրեցին մի հարց, որը ես առաջինն եմ ընդունել, որ հսկայական կարևորության է, բայց որի մասին իմ խոսելը առանձնահատուկ կերպով դժվար է, որովհետև այն ներառում է ոչ այնքան դիվանագիտական, որքան ռազմական քննարկումներ: Հարգարժան պարոնն ինքն անձամբ կտեսնի, որ ինձ համար բավականին անհնարին է տալ որևէ երաշխիք կամ նախաձեռնություն այն մասին, արդյո՞ք մեր ռազմական գործողությունը Ռուսաստանում պետք է, թե չպետք է իրականացնա, առանց որոշ չափով նախնական խորհրդակցությունների ունենալու նրանց

հետ, ովքեր պատասխանատու են այդ երկրում ռազմական գործողությունների համար:

ՊՐՆ. ՊՈՆՍՈՆԲԻ - Գտնվո՞ւմ ենք արդյոք մենք նրանց հետ պատերազմի մեջ:

ԼՈՐԴ Ռ. ՄԵՍԻԼ - Ես չասացի, որ գտնվում ենք: Ես ասացի, որ եղել են ռազմական գործողություններ:

ԳՆԴԱՊԵՏ ՎԵՋՎՈՒԴ – Ի՞նչ են դրանք, ռազմական գործողություններ արտաքին գործերի նախարարության և պատերազմական նախարարության միջև:

ԼՈՐԴ Ռ. ՄԵՍԻԼ - Դա ես կարող եմ ասել. կառավարությունն ամբողջապես իրազեկ է այն քննարկումներին, որոնք հարգարժան անդամն առաջ քաշեց, դրանց վերաբերյալ շատ մեծ ձգտումներ ունի և մեծ պատերազմի ավարտին այս երկիրը որոշակիորեն մտադիր չէ խճճվելու լուրջ պատերազմական գործողությունների մեջ: Չընկնելով առաջ, որը ես չեմ կարող և խոստովանում եմ, որ կլսեի հարգարժան անդամի ելույթը ավելի համաձայնությամբ, եթե նրանում չլսեի որոշ դատապարտումներ՝ այսպես կոչված Ռուսաստանի կառավարության իրական գազանային նախաձեռնությունների մասին: Դա ոչ միայն նրանց մեծ հանցանքն է մարդկության և լավ կառավարության դեմ, որը հարգարժան անդամը կարող է մտածել որ գլխավորապես ռուսների գործն է, այլ նրանք առաջին հերթին իրագործել են հանցանքներ այս երկրի դեմ, որը, եթե իրականացված լիներ որևէ սովորական քաղաքակիրթ կառավարության կողմից, ավելի քան կարդարացնեին զենքի միջոցով փոխհատուցում փնտրող այս երկրին: Ի թիվս այլոց, նրանք առանց արդարացման Պետերբուրգում սպանել են մեր ռազմածովային սպաներից մեկին, որը կատարում էր իր պարտքը՝ պահպանելով դեսպանատունը անիրավասու անձանց մուտքից: Սա միայն մեկն է այն բազում գործողություններից, որը կատարել են նրանք:

ՊՐՆ. ՔԻՆԳ – Մենք որևէ դեսպանատուն չենք ունեցել:

ԼՈՐԴ Ռ. ՄԵՍԻԼ - Դա լիովին ոչ տեղին դիտողություն է և ոչ միայն այդպիսին, այլ հանգամանքներն իրականում սարսափելի բնույթի էին: Գոյություն ունեն շատ բրիտանացի հպատակներ Մոսկվայում և Պետերբուրգում, որոնց դեմ նրանք իրագործել են այլ հանցագործություններ, որոնք իսկապես, օգտագործելով մի հայտնի արտահայտություն, կարող էին ցնցել մարդկությունը: Ուստի, չնայած ես կարծում եմ, որ մենք ստիպված և պարտավոր ենք հաշվի առնել առաջնակարգ կերպով այս երկրի մարդկանց շահերն ու ցանկություններն, արդեն երբ մենք գործ ունենք այս խնդրի հետ, ճշմարիտ է ասել, որ որպես այդպիսին բոլշևիկյան կառավարությունը լիազորված չէ որևէ ուշադրության բրիտանական կառավարության կողմից: Անցնում եմ հիմա այն հարցին, որն այս երեկո հանդիսացել է գլխավորը: Անհրաժեշտություն չեմ համարում կառավարության անունից արտահայտել լիակատար համաձայնություն այն ամենի հանդեպ, ինչ ես լսեցի հայ ժողովրդի նկատմամբ հանակրանքի արտահայտություններում և դատապարտման մեջ այն անհավատալի բռնությունների, որոնց նրանք երթարկվել են թուրքերի կողմից և՛ վերջերս, և՛ նախկինում: Անշուշտ, ճանաչում ենք այն հսկայական պահանջները, որոնք ցանկացած տեսանկյունից ունեն հայերն ինչպես այս, այնպես էլ Եվրոպայի այլ քաղաքակիրթ երկրներից՝ օգնության և պաշտպանության վերաբերյալ, և եթե

ես չընդարձակվեմ այն սարսափների, և այն տառապանքների մասին, որոնք իրականացվել են այնտեղ, որի միջով անցել են հայերը, դա համակրանքի անհրաժեշտությունից չէ, այլ որովհետև առարկան այնքան լավ հայտնի է և, հավատում եմ, որ քրիստոնական կառավարության զգացմունքները խնդրո վերաբերյալ հավասարապես հայտնի են:

Կան երեք ընդարձակ հարցեր, որոնք տրվեցին ինձ: Առաջինն ինձ հարցրեցին, թե արդյոք մենք կհամաձայնվեինք թեթևացնել հայերի անհապաղ կարիքները, ձեռնարկել որևէ քայլ՝ կերակրելու այս սովամահ լինող հայերին և ապահովելու նրանց ճնշող անհրաժեշտությունները: Իմ հարգարժան ընկերը, որը քննարկման սկզբին բարձրացրեց այս հարցը կընդունի, որ սա մի հսկայական և դժվարին խնդիր է: Գրեթե ողջ աշխարհն աղերսում է սնունդ և օգնություն, և մենք ստիպված ենք քննել բոլոր մարդկանց պահանջները համատեղ՝ որպես մի մեծ հարցի մաս: Ամբողջ աշխարհում սովն ու թշվառությունը հանդիսանում են այն խնդիրներից մեկը, որը ներկա պահին ամենաշատն է կլանում Նորին գերազանցության կառավարության ուշադրությունը: Այնքանով, որքանով վերաբերում է Հայաստանին, կառավարությունը հուսով է, որ զինվորական իշխանություններն ի վիճակի կլինեն անհապաղ կերպով որոշ քայլեր կատարել: Ի լրումն նրա, որ Սննդի հանձնաժողովը, որը միջազգային կամ միջդաշնակցային մարմին է և ներկայացնում է բոլոր դաշնակիցներին, հանձնարարվել և այժմ քննարկում է, թե ինչպես կառավարությունը ամենաարդյունավետ կերպով կարող է թեթևացնել այս մարդկանց դրությունը: Չեմ կարող ճշգրտորեն ասել, թե ինչ են նրանք արդեն արել, բայց անկասկած նրանք կատարում են բոլոր հնարավոր քայլերը և գիտեմ, որ Հայաստանը ակնհայտորեն հրավիրված է նրանց ուշադրությանը, որպես նրանց քննարկման պահանջներից առաջինը: Վախենում եմ, որ դրան որևէ բան ավելացնել չեմ կարող, խնդիրն այնպիսին է, որ պետք է ժամանակ խլի և պետք է զարգանա այլ ազգաբնակչության հետ կապակցության մեջ:

Կան այլ շրջաններ, Լեհաստանը և այլ վայրեր, որոնք պետք է քննարկվեն միևնույն ժամանակ: Ինձ հարցրեցին, թե ինչպիսի միջոցառումներ են կատարվել կամ պետք է կատարվեն, չհաշված իր ապագա կառավարությունը, հայ ժողովրդի անհապաղ պաշտպանության համար: Զինադադարի պայմանների վերաբերյալ կատարվեցին որոշ քննադատություններ: Կարծում եմ, որ այս խնդրի վերաբերյալ շատ խիստ մոլորություններ են եղել: Առաջին հերթին թուրքերի կողմից ներկայումս ներկայված և ներքակալված հայերի համար ստեղծվել է հայրենադարձության համար հոդված և այդ հարցում հայերը առանձնացվել են մնացած բոլոր ազգերից և դրվել նույն պայմանների ներքո, ինչպես մեր սեփական պատերազմական բանտարկյալները: Ես մոռացել եմ ճշգրիտ կետերը, բայց կարծում եմ, որ զինադադարի 5-րդ և 16-րդ հոդվածներով համաձայնություն է կայացված: 5-րդ հոդվածով պայման կա գլխավորապես թուրքական ուժերի դուրս բերման համար, Կիլիկիայի երկրամասի այն բոլոր կողմերից, ուր ներկայումս պահանջվում է կարգ ու կանոն պահպանելու համար: Այդ հարցը չպետք է մոռացվի և բավական համոզված լինելու համար, որ թուրքերը ի վիճակի չեն լինելու վերադառնալ, ամբողջ երկաթուղային կապը Հայաստանի և Կ.Պոլսի միջև բոլորը միասին կկտրվի, և կարծում եմ, որ այս տեսակետից մի կարևոր խնդիր է ետ պահել թուրքական զինվորին

Հայաստանից դուրս այնքան հեռու, որքան հնարավոր է: Ձեր տնօրինման ներքո է, համենայն դեպս ինձ այդպես է ասվել, ձեր պնդած Կիլիկիայի ամենակարևոր ստրատեգիական կետերից մեկը և այդ կետը պետք է գրավվի առանց որևէ հապաղման, որը, կարծում եմ, ապահովվում է զինադադարի 10-րդ հոդվածով: Նրանում գոյություն ունի ընդհանուր լիազորություն օկուպացնելու ռազմավարական կետերը ամենուրեք, ուր ծագում է դաշինքի անվտանգությանը սպառնացող իրավիճակ: Ուստի բավականին հասկանալի է, որ եթե անկարգապահության և անհանգստության նման մի բան լինի, դաշնակից ուժերի լիազորությունների սահմանում կլինի ցանկացած ռազմավարական կետի գրավումը:

ՍԸՐ Գ. ԳՐԻՆՎՈՒԴ – Փաստ չէ՞ հանդիսանում այն, որ թուրքերը հիմա այնտեղ կոպիտ են վարվում հայերի հետ:

ԼՈՐԴ Ռ. ՍԵՍԻԼ - Եթե դա այդպես է, անկասկած գործողություն կկատարվի: Ես տեղեկություն չունեմ, որ դա այնպես է, ինչպես մենք տեսել ենք հանրային մամուլում: Այն հոդվածի մեջ, որը ես հենց նոր հղեցի, գոյություն ունի մի լիազորություն, որը, ես համոզված եմ, կգործադրվի այնքանով, որքանով ռազմական նկատառումները թույլ են տալիս օկուպացնել ցանկացած անհրաժեշտ ռազմավարական կետ Հայաստանում: Դրանք հայերի անհապաղ պաշտպանության մասին գլխավոր սկզբունքներն են: Կարող եմ հավաստիացնել խորհրդարանին, որ այս հարցում կառավարությունը խորապես լուրջ է: Նրանք զգում են, ես հուսով եմ, որ մարդկության պահանջները, բավականաչափ առանձին այն պահանջներից որ իրենք են զգում, կենթարկվեն և ճշգրիտ կերպով իրենց կենթարկեն երկրի զայրույթին, եթե հետագայում նրանք թույլ տան վայրագություններ Հայաստանում, երբ նրանք ռազմական միջոցներով հնարավորություն ունեն կանխել դրանք: Գոյություն ունեին երկու կամ երեք հետաքրքիր և կարևոր հարցեր Հայաստանի ապագա կառավարության վերաբերյալ: Մի հարգարժան անդամ ասաց, որ խնդրի հիմքը հանդիսանում է Կ. Պոլսից թուրքական կառավարության վտարումը: Ես բավականաչափորեն ընդունում եմ, որ շատ խիստ պատճառ կա այդ ասելու համար, բայց միևնույն ժամանակ իմ հարգարժան ընկերը չպետք է մոռանա, որ ամենից զատ Կ.Պոլիսը գերակշռորեն թուրքական է: Սա մի հանգամանք է, որ խնդրի հետ գործ ունենալուց պետք է նկատի առնվի, եթե չպետք է կեղծենք այն բոլոր խոստումները, որ կատարել ենք այս հարցի վերաբերյալ:

ՊՐՆ. ԱՆԵՎՐԻՆ ՈՒԻԼԻԱՄՍ – Կարող է արդյո՞ք նույն հարգարժան ջենտլմենն ասել, որ Կ.Պոլսում թուրքերը հիսուն տոկոս են կազմում:

ԼՈՐԴ Ռ. ՍԵՍԻԼ - Ես տեղեկացված եմ, որ գոյություն ունի ավելի քան հիսուն տոկոս: Գոյություն ունի հույների, օսմանյան հույների, հունական հույների մի քանակություն, բայց, կարծում եմ, որ ամենահեղինակավոր աղբյուրները դասում են թուրքերին որպես մեծամասնություն: Չեմ ենթադրում, որ այնտեղ եղել է որևէ ճշգրիտ վիճակագրություն: Իմ հարգարժան ընկերը մեջ բերեց պրեմիեր-մինիստրի այս տարվա հունվարի կատարած հայտարարությունը, ներողություն եմ խնդրում ասելու համար, որ իմ առջև այդ հայտարարության բառերը չունեմ: Կարծում եմ, կարող եմ ասել, որ դա բրիտանական կառավարության անունից, պրեմիեր-մինիստրի կողմից արված մի միջազգային հայտարարություն էր, բայց այդ պահից անց շատ իրադարձություններ են տեղի ունեցել և չեմ կարծում, որ այս կա-

ռավարությունը պարտավորված է այդ հայտարարության տառի առջև: Իմ կողմից ճիշտ չի լինի շարունակել, հարցը պետք է քննարկվի խաղաղության կոնֆերանսում: Բրիտանական կառավարության կողմից ճիշտ չի լինի գնալ խաղաղության կոնֆերանս, նման հարցի՝ շատ մեծ հետաքրքրություն ունեցող հարցի վերաբերյալ նախօրոք ասելով, որ այս է լուծումը, որը մենք պատրաստել ենք և մտադիր ենք ունենալ և անգամ՝ նախքան հնարավորություն ունենալու քննարկել այն մեր դաշնակիցների հետ: Բայց նրանք ազատ են և պարտավորված չեն որևէ լուծման: Կարծում եմ, որ յուրաքանչյուրը կհամաձայնվի, որ ինչ էլ որ արվի, երկու բան որոշակի է: Մենք չենք կարող թույլատրել այն կործանարար ուժերին, որոնք գերակշիռ են եղել Կ. Պոլսում, մնալ տիրապետող, ինչպես գերիշխող կառավարություն Կ. Պոլսում: Եվ պետք է ապահովենք, որպեսզի Դարդանելն ու Բոսֆորը բացարձակապես ազատ լինեն: Փաստորեն, ես հավատում եմ, Բոսֆորի ամրոցներն այս պահին գտնվում են դաշնակիցների ուժերի հսկողության տակ: Իմ հարգարժան ընկերը կընդունի, որ եթե մենք կարող ենք անցնել Սև ծովով, ապա՝ Կ. Պոլսի տեխնիկական սուվերենությունը վերածվում է ավելի քիչ կարևորության: Դուք կարող եք մեծ ուժ ստանալ Կ. Պոլսից իր աշխարհագրական դիրքի համար: Դա այն գլխավոր կետն է, որն անջատում է Սև ծովից և նրանից այն կողմ գտնվող երկրների ամբողջ մուտքը: Մի անգամ նրանով անցնելը հեղինակություն է, որ թողնվել է նրան՝ մի կարևոր համաշխարհային նավահանգիստ: Ես շատ հեռու եմ գտնվում մերժելուց, որ սա շատ կարևոր հարց է: Կ.Պոլսի հետագա կառավարման հարցին կառավարությունը կմոտենա բացարձակապես շրջահայացորեն. մինչդեռ կարծում եմ, որ այդ հարցի հետ գործ ունենալիս, նկատառումները պետք է ծնվեն մտքում: Գոյություն ուներ կատարված մեկ այլ առաջարկություն Հայաստանի ապագա կառավարման վերաբերյալ: Իմ հարգարժան ընկերը՝ Դոնեգալի անդամը (Պն. Լոուն) ասաց, որ հուսով է, որ Ազգերի Լիգան որպես գործիք կօգտագործվի Հայաստանի հետագա կառավարման համար: Այդ հարցում ես կխոսեմ իմ անունից և հրապարակայնորեն արդեն ասել եմ և չեմ հրաժարվում դա նորից կրկնել, որ շեշտվածորեն կարծում եմ դա այն հարցերից մեկն է, որը մենք պետք է վերահսկենք և պարտավոր ենք պատշաճորեն այս կամ այն ձևով հանձնարարել Ազգերի Լիգային: Դա հատկապես կարծում եմ, որ պետք է փաստ լինի, բայց այդ հարցի մասին խոսելիս չեմ կարող հավակնել դառնալու կառավարության հռետորը: Ես խոսում եմ իմ սեփական տեսակետի մասին:

ԳՆԴԱՊԵՏ ՎԵՋՎՈՒԴ – Կընդգրկե՞ք արդյոք Փոքր Հայքը:

ԼՈՐԴ Ռ. ՍԵՄԻԼ - Ես խոսում եմ միայն ընդհանուր պայմանների մասին: Հայաստանի նոր կառավարության տարածության մասին, որքա՞ն այն կարող է լինել, ես մի խոսք կասեմ: Քննարկման ընթացքում շատ քիչ խոսվեց Հայաստանի նոր պետության սահմանների մասին: Ամբողջապես ընդունում եմ դիտողությունների այն ուժը, որ չպետք է թույլ տանք թուրքերի չարագործություններից՝ նվազեցնելու հայերի հայրենաժառանգությունը: Դա ընդհանուր սկզբունք է: Ես ընդունում եմ մեծ ուժն այն ամենի, ինչ հարգարժան անդամն ասաց, որ չպետք է լինի Հայաստանի բաժանում, և որ նրան պետք է վերաբերվել որպես մեկ ամբողջության: Ասելով այդ ամենը, կարծում եմ, որ պարտավոր չենք գնալ հեռուն և փորձենք քարտեզի

վրա նկարել այն սահմանները, որը կլինի այս սկզբունքների գործադրման արդյունք: Այն ամենը, ինչ կասեմ, հետևյալն է. իմ հարգարժան ընկերը՝ Դոնեգալի անդամը, հարցրեց ինձ, թե արդյո՞ք կառավարությունը, ասելով որ կազատի Հայաստանը թուրքերի անօրինակությունից, իր մտքի մեջ որոշ վերապահություններ է ունեցել, նշանակող, որ նրանք թույլ կտան շարունակել օրինակությունը, բայց ոչ՝ անիշխանությունը: Այնքանով որքանով ես առնչվում և այս հարցում հավատում եմ, որ խոսում եմ կառավարության անունից, խորապես հիասթափված կլինեմ, եթե Հայաստանում թողնվի թուրքական կառավարման որևէ ծվեն և ստվեր:

ՊՐՆ. Հ. ԼՈՒՒ – Որտեղ էլ որ թուրքերն իշխե՞ն:

ԼՈՐԴ Ռ. ՍԵՍԻԼ – Գոյություն ունի որոշ ցրված ազգաբնակչություն, ցրված իսկապես թուրքական երկրում, որոնց համար կարող է անհնարին լինի առանձին կառավարության ապահովումը, բայց ընդհանուր առմամբ մեր խնդիրը ամբողջ ազգաբնակչության ազատությունն է. միայն հայերը չեն, դրանք քրդերն են, արաբները, հրեաները, հույները, նրանք բոլորը լիազորված են մեր օգնությանը: Ինչ վերաբերում է Հայաստանին, ես իմ տեսակետները շատ անսխալ բառերով տվեցի: Ինչ վերաբերում է արաբներին, ես ճշգրտորեն կարող եմ նույն բանը ասել: Ինչ վերաբերում է քրդերին, ես հույս ունեմ նույն արդյունքին: Որքանով վերաբերում է հույներին, անկասկած, նրանք իրավունք ունեն մեր պաշտպանությանը, բայց ինչպես գիտի նույն հարգարժան ջենտլմենը, խնդիրը դժվարին է, քանի որ նրանք սփռված են ծովափի ամբողջ երկայնքով և կարծում եմ, որ նրանք պետք է օգտվեն պաշտպանությունից:

ՊՐՆ. Հ. ԼՈՒՒ – Նպատակն ու մտադրությունը կլինի՞ նույնը:

ԼՈՐԴ Ռ. ՍԵՍԻԼ – Որոշակիորեն՝ այո՛, որքանով առնչվում է Հայաստանին: Անշուշտ դա միակ բանն է, ինչը վերաբերում է բրիտանական կառավարությանը: Դա ես անձնապես անհրաժեշտ եմ կարծում, որովհետև կիսում եմ այն ամբողջական տեսակետը, որն արտահայտվեց, որ այս խնդրում թշնամին թուրքական կառավարությունն է: Հավատում եմ, որ դա ճշմարիտ է, և այն ապացույցը որքանով ես եմ քննել այդ, որ Հայաստանի վայրագություններից յուրաքանչյուրը չի եղել մեկուսացած ավազակների և պատահական վայրագության արդյունք, այլ բոլոր դեպքերում կարգադրվել է Կ. Պոլսից. որչափ ես գիտեմ: Սա այն կենտրոնական փաստն է, որի միջոցով մենք պետք է գործ ունենանք իրադրության հետ: Թուրքական քաղաքականությունն ամբողջ ընթացքում եղել է անկարգապահություն ստեղծելը և հետո այն ճնշելը: Դա կրոնական հարց չէ: Օրինակ, արաբները միշտ պաշտպանել են հայերին, և երբ մենք հասանք Հալեպ, գտանք այնտեղ արաբների պաշտպանության ներքո ապրող մի խումբ հայերի: Նման ձևով, հավատում եմ, որ պատճառ չկա, թե ինչու քրդերն ու հայերը չպետք է լիովին լավ ապրեն իրար հետ, եթե մեկ անգամ թուրքական ազդեցությունը վերացվի: Արդեն նշաններ կան, որ քրդերն ու հայերը պատրաստվում են պայմաններ ստեղծել և համաձայնվել ապրել իրար հետ: Բայց թուրքական քաղաքականության առանձնահատկությունը եղել է իրենց հպատակ ազգերի միջև ցանկացած բաժանման բորբոքումը՝ նրանց ավելի պակաս ուժեղ դարձնելու և նաև արդարացնելու համար որևէ վայրագություն, որը նրանք ընտրել են իրագործելու բոլոր ժամանակներում: Ուստի ամբողջապես համաձայն եմ, որ թուրքական կառավարու-

թյունն իրեն բացահայտել է բացարձակապես անկարողունակ՝ կառավարելու ցանկացած հպատակ ազգի, և հիմա, ես հավատում եմ, որ նրա օրերը ավարտին են և հուսով եմ, որ երբեք չի թույլատրվելու սկսել այն նորից:

Կան հայտանիշեր, որ անգամ հիմա թուրքերը չեն սովորել իրենց դասը, որ անգամ հիմա նրանք ցուցադրում են նշաններ՝ շարունակելով իրենց հին հապաղման քաղաքականությունը, բարձրացնելով մի անհավանական պտղաբեր առարկություն որևէ գործընթացի նկատմամբ, որը կարծես թե առաջացնում է տևական բարելավում, և եթե նրանք հնարավորություն ունենային, անկասկած կփորձեին յուրաքանչյուր չար դիտավորություն՝ լարելու համար մեկ արևմտաեվրոպական ազգին մյուսի դեմ: Բայց ես համարձակվում եմ ասել և ասել ամբողջ պատասխանատվության զգացումով, որ այդ օրերը վերջացել են, և թուրքերը բացարձակ սխալ կկատարեն, եթե չհասկանան, որ իրենց հապաղման ուժն ու բարեփոխման դիմադրությունը վերջապես ավարտված է: Նրանք հիմա բացարձակապես մեր իշխանության ներքո են, և միակ եղանակը, որով նրանք կարող են հուսալ ստանալու գթասրտություն և սիրալիրություն կլինի այն, որ նրանք ցուցադրեն, որ իսկապես շտկել են իրենց գործելակերպի միջոցները, կշտապեն իրականացնել զինադադարի պայմանները, որոնց հետ նրանք համաձայնվել են և այլ պայմաններ, որոնք նրանց կշնորհվեն հաղթողների արդարադատությամբ՝ առանց որևէ տատանման, առանց որևէ խուսափման ջանքի, որոնք անշուշտ կհարկադրվեն նրանց:

ԳՆԴԱՊԵՏ ՎԵՋՎՈՒԴ – Քաղաքականության հեգնանքներից, թերևս, մեկն այն է, որ նկատի ունենալով մեծ մասի օժանդակությունը, կոալիցիոն կառավարությունը պետք է լինի պրեմիեր-մինիստրի անձնավորության պատճառով, որքան էլ քիչ է կոալիցիոն կառավարության օժանդակությունը լիբերալ կուսակցությունից, այդ օժանդակությամբ պարտականն է իր շարքերում ազնվական լորդի, որ հենց նոր խոսեց, ներկայությունը: Հաճելի է ի վիճակի լինել կարծելու, որ մենք ճգնաժամային ամիսներին մեր առջև մի մարդ ունենք, որը ես հավատում եմ ձևավորում է այն, ինչը քաղաքականության լիբերալ ուղղությունն է: Ժողովուրդների ինքնորոշումը, Ազգերի Լիգայի, որպես տարածքային հեղինակության, օգտագործումն այն պետություններին օժանդակելու, որոնք այլ կերպ ստիպված կլինեն պաշտպանվել, իմ կարծիքով հանդիսանում են ապագա խաղաղության կոնֆերանսի աշխատանքի ամենակարևոր նշումները, և ես հավատում եմ, որ դրանք հուսալի ձեռքերում են: Ես միայն մի քիչ անհանգստացա, որ հայկական հարցը կարող է լուծվել ռազմավարի բաժանման հիմունքով: Տասնութերորդ դարում դա կլիներ շատ գայթակղիչ լուծում, բայց չեմ կարծում, որ կլինի այդպես քսաներորդ դարի համար: Կարող է պատահել, որ մենք ունեցել ենք ամբողջությամբ իրագործված գաղտնի պայմանագրեր: Դա, կարծում եմ, նույնպես ցավալի կլիներ: Դա կնշանակի այս երկու լուծումներից մեկը, ոչ այն լուծումը ներկայացված պրեզիդենտ Վիլսոնի կամ ազնվական լորդի կողմից, այլ լուծում, որը կարող է տանել դեպի հետագա պատերազմների, դեպի այլ մարդկանց պատկանող, ովքեր ապրում են այդտեղ, տարածքների հափշտակմանը:

Բայց դեռևս գոյություն ունի մի վտանգավոր արատ, որը ցանկանում եմ մեկնել արտաքին գործերի նախարարությունը ներկայացնող ազնվական լորդի առջև, դա այն կրքոտ ցանկությունն է, որը մարդկային

բնությունը պետք է անհրաժեշտաբար ներշնչի այս երկրի զինվորական խմբին՝ շարունակել ռազմական գործողություններ այնտեղ, որտեղ կգտնի օկուպացման վայր: Ակնհայտ է, որ այդ զգացմունքը պետք է լինի, և ես չեմ ցանկանում տեսնել արտաքին գործերի նախարարության այս հարցում պատերազմական նախարարության հետ կայուն գիծ իրագործելիս: Մենք ունենք Արխանգելսկից վերադարձող և լրացուցիչ համալրում պահանջող գեներալներ. պատահաբար անցած օրը, երրորդ կարգով, ես ճաշասպարհորդում էի մարդկանց հետ, որոնք ասացին, որ պահեստազորի ջոկատներն ուղարկվում են Արխանգելսկ՝ հանդերձավորված մորթե վերարկուներով, մորթե կոշիկներով և մորթե անդրավարտիքներով, ամեն մարդու համար 150 ֆունտ ստերլինգ արժողությամբ, երկու տարվա պայմանագրով և երեք տարվա վճարմամբ: Չեմ ենթադրում, որ դրա մեջ մի ճշմարիտ բան կա, բայց այն ինձ ստիպեց կարծել, որ այս անորոշ արշավանքները շարունակելու համար գոյություն ունի հնարավորություն: Միևնույն ժամանակ գիտենք, որ մի ոմն հռչակավոր գեներալ Ֆինլանդիայից այստեղ է, կամ գալիս է այստեղ: Թերթերում մենք տեսնում ենք, որ Ֆինլանդիան օկուպացնող գերմանական զորքերը պետք է դուրս բերվեն և նրանց տեղը զբաղեցվեն բրիտանական զորքերի կողմից: Մենք լավ գիտենք, որ այս արշավանքները մինչև արմատը փտած են, և այդ կարգի արշավանքները՝ հիմնված այնպիսի փաստարկների վրա, որոնք զինվորականությունը գրեթե պարտական է առաջադրելու, պետք է վերջ տրվի: Ֆինլանդիայի դեպքում գոյություն ունեն այլ պատճառներ, որոնք կարծում եմ պետք է դարձնեն արտաքին գործերի նախարարությանն ավելի ուշադիր այն ամենի նկատմամբ, ինչ իրենք իրականացնում են: Մենք գիտենք, որ Ֆինլանդիայի ներկա կառավարությունը իշխանության է բերվել ուժի կույտ օգտագործմամբ, Կարմիր գվարդիայի հարյուր հազարավորների կոտորմամբ և այն՝ որ պահպանում է ներկայումս այնտեղ իր իշխանությունը միայն գերմանական սվիններով: Բրիտանական բանակի, որ կռվել է այս պատերազմում ազատության համար, անբարենպաստ օգտագործումը կլինի պրոլետարիատի ճնշումը և ճնշման արյունոտ իրավակարգի հավերժացումը:

Աղբյուր՝ *1. House of Commons, Hansard (5th series) vol. CXI, 18 November 1918, col. 3239-3270.*
2. British Parliamentary Debates on the Armenian Genocide, 1915-1918 Intruduced by Ara Sarafian and Eric Avebury, London 2003, pp. 31-54.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Անգլադառնում է Հայերի արհավիրքների կոմիտեին (AAC), որը հետագայում վերակազմվեց Հայերի և ասորիների օգնության կոմիտե (ACASR):

[2] Լույդ Ջորջի հայտարարությունները պատերազմական իրավիճակի լայն քննարկումների մասն էին: Այստեղ ներկայացվում են Հայկական հարցի վերաբերյալ նրա մեկնաբանությունները :

[3] Հայ փախստականների Լոնդոնի քաղաքագլխի հիմնադրամը (Armenian Refugees Lord Mayor's Fund) ստեղծվել է 1915թ. հոկտեմբերին: 1915-1923թթ. ընթացքում համարվել է Մեծ Բրիտանիայի ամենաազդեցիկ հայանպաստ կազմակերպությունը: Այդ են հուշում հիմնադրամի փոխնախագահների անունները՝ Քենթերբերիի և Յորքի արքեպիսկոպոսներ, կարդինալ Բորն, լորդ Բրայս, լորդ Քերզոն, Լոնդոնի, Հիրֆորդի, Էլիի, Օքսֆորդի և Սաութհուրքի եպիսկոպոսներ, տիկին Ֆրեդերիկ Գավենտիշ և այլն: Հիմնադրամը հիմնականում զբաղվում էր ավիրստվությունների հանգանակության կազմակերպմամբ և այդ միջոցները ի նպաստ Հայոց ցեղասպանության մազապուրծ եղած տեղահանվածների, սովյալների և որբերի բաշխմամբ: Միայն 1920թ. հիմնադրամը ուներ շուրջ 5000 կանոնավոր ավիրատուներ: Իր ստեղծման առաջին չորս ամիսների ընթացքում հանգանակել էր շուրջ 37000 ֆունտ ստեռլինգ գումար:

[4] Իրրեղենտիստ՝ եղել է Իտալիայում կուսակցության անդամ կամ կողմնակից, որի ծրագրային նպատակն է հանդիսացել Իտալիայի վերամիավորումը ազգագրական և լեզվաբանական հայտանիշների հիման վրա:

[5] Խոսքը գնում է Անտանտի տեղությունների միջև Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում կնքված, գաղտնի համաձայնագրի մասին, որը պատմության մեջ մնաց Ֆրանսուա Ժորժ Պիկոյի և անգլիացի Մարկ Սայքսի անվամբ՝ Սայքս-Պիկոյի համաձայնագիր:

Բ. ԼՈՐԴԵՐԻ ՊԱԼԱՏ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅԱԳԻՐ
(հատոր 599, թիվ 65)
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ԱՊՐԻԼԻ 14 1999Թ.

15. ՀԱՅԿԱԿԱՆ ՋԱՐԴ, 1915Թ.
5:30-ին

ԲԱՐՈՆՈՒՀԻ ՔՈՔՍԸ հարցումով դիմեց Նորին Սեծության կառավարությանը. արդյո՞ք այն չի վերաևայելու իր նախկին որոշումը՝ չճանաչել որպես ցեղասպանություն 1915 թվականին Թուրքիայի կողմից հայ ժողովրդի նկատմամբ կատարած գործողությունները:

ՏԻԿԻՆ ՔՈՔՍՆ ասաց - Ազնվագույն լորդեր, ես չափազանց շնորհակալ եմ բոլոր նրանց, ովքեր մասնակցում են այս քննարկումներին՝ նվիրված մի թեմայի, որն այսօր էլ ողբերգականորեն հրատապ է: Ազնվագույն բարոնուհի տիկին Սայմոնսը մեզ տեղեկացրեց, որ հարգելի պատճառով չի կարող հանդես գալ կառավարության կողմը ներկայացնողի դերում, և ես շնորհակալություն եմ հայտնում ազնվագույն բարոնուհի տիկին Ռամսեյին նրան փոխարինելու համար:

Միավորված Ազգերի Կազմակերպության կողմից 1948 թվականին ընդունած «Ցեղասպանության հանցագործության կանխման և պատժելիության մասին» Կոնվենցիան ցեղասպանության ամենաընդունված սահմանումներից է: Այդ փաստաթղթի 2-րդ հոդվածը առանձնացնում է հինգ չափանիշներ: Ցեղասպանություն են համարվում հետևյալ գործողությունները. ազգային, էթնիկական, ռասայական (ցեղային) կամ կրոնական խմբերի ամբողջովին կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ, այդ խմբերի անդամների սպանությունը:

1915 թվականին Թուրքիայում հայերի նկատմամբ զանգվածային և մշտական հարձակումները լայնորեն ընդունված և պատմականորեն անհերքելի փաստ է: Մի փոքր հետո ես կբերեմ առաջին չափանիշին համապատասխանող օրինակներ:

Առկա է նաև հինգերորդ չափանիշը. հայ երեխաներին բռնի կերպով տեղափոխում էին թուրքական պետությանը պատկանող որբանոցներ՝ նախապես թուրքացնելու մտադրությամբ:

Նրանք, ովքեր ցանկանում են պաշտպանել Թուրքիային, առաջարկում են տարբեր արդարացումներ: Այսպես, ընդունելով, որ հայերի ջարդը տեղի է ունեցել, ոմանք պնդում են, որ այն չի եղել պաշտոնական քաղաքականության հետևանք: Սակայն պատմական վկայությունները ցույց են տալիս, որ 1915-1916 թվականների մշտական և զանգվածային սպանությունները ավելին էին, քան պարզապես ջարդը կամ դաժանությունը: Դրանք կանխամտածված պետական հանցագործություններ էին, որոնցում ներգրավված էին բանակը, ոստիկանական ուժերը, տարածքային և տեղական իշխանությունները, ինչպես նաև հանցագործները, որոնց հատուկ արձակել էին բանտերից մարդկանց սպանելու նպատակով:

Ցեղասպանությունը սկսվեց էթնիկական մշտական «գլխատումներով»՝ Կոստանդնուպոլսի հայկական համայնքի մտավորական և քաղա-

քական առաջնորդների ձերբակալումներով, կտտանքներով և տեղահանումներով: Նրանցից շատերը սպանվեցին երկրի խորքում: Նույն ճակատագրին արժանացան նաև հայերի առաջնորդները գավառական կենտրոններում: Քաղաքականության մյուս տարրերից էր օսմանյան բանակում ծառայող հայերի տեղափոխումը աշխատանքային ջոկատներ, որտեղ նրանցից շատերը մահացան անտանելի պայմաններից և քաղցից՝ ճիշտ այնպես, ինչպես նացիստներն էին ոչնչացնում մարդկանց աշխատանքի միջոցով: Կենդանի մնացածներին հետագայում նույնպես սպանում էին:

Մնացած բնակչության մշտական տեղահանումները շարունակվեցին 1915 թվականի մարտ ամսից մինչև աշուն, ընդ որում կանանց և երեխաների հետ համեմատած դրսևորվեց տարբեր մոտեցում տղամարդկանց նկատմամբ: Տղամարդկանց, որպես կանոն, առանձնացնում և սպանում էին, կանանց, երեխաներին և ծերերին ստիպում էին բռնել ամայի լեռնային վայրեր տանող երկար ճանապարհները, որոնց նշանակետը մահն էր: Նրանց, ովքեր կենդանի էին մնացել և հասել Հալեպ, ստիպում էին շարժվել դեպի Միջագետքի անապատները՝ ոչնչացման վերջին հանգրվանը. ոմանք մահանում էին համակենտրոնացված ճամբարներում, որտեղ տասնյակ հազարավոր մարդիկ թողնված էին առանց սննդի և տանիքի, մյուսներին լցնում էին քարյուղ պարունակող քարանձավները, որտեղ հայերին կենդանի այրում էին:

Գոյություն ունեն ականատեսների բազմաթիվ վկայություններ, որոնցում ամենայն մանրամասնությամբ նկարագրվում են հայերի մշտական տանջանքները: Ժամանակը թույլ է տալիս անել միայն մեկ հղում: Գերմանական դեսպան Վանգենհայմը, որը քաջ հայտնի էր իր հակահայկական հայացքներով, Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանը 1915 թվականի հուլիսի 7-ին ուղարկված իր նամակում խոստովանվում է, որ հայերի այսպես կոչված տեղահանումները այլևս չեն կարող արդարացվել ռազմական անհրաժեշտության տեսանկյունից, նրանք հետևանք էին երիտթուրքերի կողմից իրականացվող ցեղասպանության: Նա գրել էր. «Արդեն այն փաստը և այն ձևը, որով այդ տեղահանումները իրագործվում էին, վկայում են, որ կառավարությունը մտադիր է վերացնել հայերի ցեղը թուրքական կայսրությունից»:

Սպանված հայերի թիվը տատանվում է, համաձայն պահպանողական բրիտանացիների բերած 800000-ից մինչև Գերմանական դեսպանության մեկ ու կես միլիոնը: Քանի որ գերմանացիները, լինելով թուրքերի դաշնակիցը, ավելի մոտ էին Օսմանյան կայսրության պաշտոնական տեղեկատվությանը, նրանց հաշվարկները կարելի է համարել առավել հավանական:

Ոչնչացման մեթոդներից շատերը զարմանալիորեն հիշեցնում են նրանց, որոնք հետագայում կիրառվեցին ողջակիզման ժամանակ: Դրանցից էին բժշկական փորձերը, որոնց ենթարկում էին հայ տղամարդկանց, հիմնականում զինվորներին, ախտահանման համար նախատեսված՝ պատմության մեջ առաջին գազային խցիկները Տրաբզոն քաղաքում, որոնցում սպանում էին հայ երեխաներին, կանանց հաճախակի դարձած խմբակային բռնաբարումները և տանջամահ անելը: Շատ քաղաքներում իշխանությունները հատուկ նվագախմբեր էին վարձում, որպեսզի նրանք

իրենց բարձր ձայնով խլացնեին տանջանքի խցիկներից լսվող զոհերի ձայները:

Ողջակիզման հետ մեկ այլ զարհուրելի զուգահեռ՝ զոհերի տեղափոխումը կենդանիների համար նախատեսված վագոններով: Կենտրոնական Անատոլիայի հայերին տեղափոխել էին ոչխարներ առաքող վագոններով, որոնցում հնարավոր էր մնալ միայն թեքված դիրքում:

Հայերի ցեղասպանության ահավոր մանրամասները հաստատված են բազմաթիվ զեկուցագրերում: Դրանցից են Ֆրանսիայի, Ավստրո-Հունգարիայի և Բրիտանիայի դիվանագիտական աղբյուրները, ինչպես նաև Թուրքիայում գտնվող հումանիտար ծառայությունների հաշվետվությունները, կամ նաև ցեղասպանություններից փրկված հայերի բազմաթիվ՝ սարսափազդու անմիջական վկայություններ: Եվ միգուցե առանձնահատուկ նշանակություն ունեն այն խիզախ թուրք գիտնականների զեկուցագրերը, որոնք բողոքում են պաշտոնական Թուրքիայի հանցագործ լռության դեմ և պահանջում են ցեղասպանության ընդունումը:

Ազգային և միջազգային շատ մարմիններ արդեն ճանաչել են հայերի ցեղասպանությունը՝ երբեմն ի հակառակ Թուրքիայի եռանդուն բողոքներին: Դրանց թվում՝ Եկեղեցիների Խորհրդի ընդհանուր ժողովը, 1983թ., Միացյալ Ազգերի Կազմակերպության՝ Մարդու Իրավունքների Հանձնաժողովը, որը չնայած Թուրքիայի բողոքին, 1985թ. ընդունեց այս դարի ցեղասպանության հանցագործությունների կանխման և պատժելու վերաբերյալ վերանայված փաստաթուղթ, նշելով դրանց շարքում նաև հայկական ցեղասպանությունը. Եվրոպառլամենտը, որը 1987թ. որոշում կայացրեց Հայկական հարցի քաղաքական լուծման մասին: Որոշումը հաստատեց, որ Թուրքիան կարող է դառնալ Եվրոպական համայնքի անդամ միայն կատարելով հետևյալ երկու պայմանները. ընդունել հայկական ցեղասպանությունը որպես պատմական իրողություն և պաշտպանել Թուրքիայում բնակվող ազգային փոքրամասնությունների, մասնավորապես քրդերի մարդկային իրավունքները:

Աշխարհի շատ երկրների՝ Արգենտինայի, Ռուսաստանի Դաշնության, Կիպրոսի Հանրապետության, Հունաստանի, Բելգիայի պառլամենտները, Ֆրանսիայի ասամբլեան ճանաչեցին հայկական ցեղասպանությունը, չնայած այն բանին, որ Ֆրանսիայի սենատը վախենալով Թուրքիայի սպառնալիքից՝ չեղյալ համարել մի շարք խոշոր առևտրային պայմանագրերը, հրաժարվեց մտցնել իր օրակարգի մեջ համապատասխան հարցի քննարկումը:

Ունանք առարկում են՝ արդյո՞ք կարևոր կամ օգտակար է անցյալին դիմելը, ավելի լավ չէ՞ նայել միայն դեպի առաջ: Կարծում եմ, այս առարկությունն արմատապես սխալ է: Արտակարգ կարևոր է, որպեսզի այս ցեղասպանությունը ճանաչվի՝ կարևոր է հայերի, իրենց՝ թուրքերի, ինչպես նաև Բրիտանիայի համար:

Նախ, ինչ վերաբերում է հայերին, ապա, մի ազգ, որը տառապել է այս դարի առաջին ցեղասպանությունից, հարկադրված է նաև դիմակայել իր մեծագույն ողբերգության՝ Թուրքիայի և միջազգային հանրության շատ անդամների կողմից այն ժխտելու հարվածին ու վիրավորանքին: Դեռ ավելին, հայերի պայքարը ցեղասպանությունը ճանաչելու համար և այն էներգիան, որն օգտագործվում է պատմությունը Թուրքիայի կողմից վերա-

նայելու փորձերին դիմակայելուն, ջլատում է ուժերն ու միջոցները և շեղում առաջնահերթ խնդիրներից: Եվ չի կարող լինել որևէ հիմք ներման և հաշտության համար՝ առանց Թուրքիայի պատրաստակամությանը՝ ընդունել այս պատմական իրողությունը:

Ցեղասպանության ճանաչումը կարևոր է նաև Թուրքիայի համար: Թաներ Աքչամը՝ առաջին թուրք գիտնականը, որն ընդունել է պատմական այդ ճշմարտությունը, նշել է, որ Թուրքական հանրապետությունը կառուցվել է սպանված հայերի դիակների վրա: Այս հանցագործության հիշատակման արգելքն այն հանգամանքն է, որը խանգարում է Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականության առողջ զարգացումներին: Անցյալ անեծքից ազատվելու և ժողովրդավարության բարձրունքներին հասնելու համար Թուրքիան պետք է ճանաչի Հայկական ցեղասպանությունը:

Արտաքին հարաբերություններում դա կբերի Թուրքիային և նրա հարևան երկրներին միջազգային հարգանք և հիմք կծառայի չափազանց օգտակար միացյալ ձեռնարկումներին: Ես արդեն նշել եմ, որ ցեղասպանության ճանաչումը նախապայման է Թուրքիայի՝ Եվրոմիությանը անդամակցելուն: Ճանաչումը կնպաստի նաև հարևան երկրների հետ վստահության, համագործակցության և քաղաքական կայունության ամրապնդմանը: Այսպես, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հայերը կարող էին համոզված լինել, որ պակաս հավանական է դարձել այն վտանգը, որ նրանք զոհ կդառնան ագրեսիվ պանթուրքիզմի՝ թուրք-ազերիների վերածնված քաղաքականությանը:

Տնտեսական համագործակցությունը և քաղաքական կայունությունը պետք է համապատասխանի տարածաշրջանում ապրող բոլոր մարդկանց շահերին: Իսկ դա անհնար է քանի դեռ թուրքերը շարունակում են ժխտել ճշմարտությունը, ապավինել կեղծիքին և քանի դեռ հայերը շարունակում են կրել եղեռնի հետ կապված տանջանքները:

Թուրքիան պետք է նաև հասկանա, որ շարունակելով ժխտել պատմական իրողությունը, նա վնասում է իր բազմաթիվ քաղաքացիների շահերին: Սի քանի տարի առաջ ինձ բախտ վիճակվեց այցելել Թուրքիա՝ առողջապահության թեմաներով դասախոսություններ կարդալու նպատակով: Ես հանդիպեցի այնտեղ շատ գործընկերների, որոնք դարձան իմ լավագույն բարեկամները: Նրանք բոլորը լավատեղյակ էին ցեղասպանությանը, միանգամայն ընդունում էին այն և ցանկություն հայտնում, որ իրենց կառավարությունն անի այնպես, որպեսզի նրանք զգան իրենց Թուրքիայի ազնիվ քաղաքացիներ և հաշտության հիմքի վրա բարիդրացիական հարաբերություններ հաստատեն իրենց հարևան հայերի հետ: Քանի դեռ ճշմարտությունը չի հաստատվել, շատ ազնիվ և սկզբունքային մարդիկ Թուրքիայում հարկադրված են համբերությամբ տանել նման անառողջ իրադրությունը ի վնաս իրենց սեփական հոգեվիճակի, ինչպես նաև միջազգային խաղաղության և արդարության:

Շատ կարևոր է ճանաչել այս ցեղասպանությունը Միացյալ Թագավորության կառավարության համար, քանի որ դրանով նա կապացուցի իր հարգանքը և նվիրվածությունը մարդու իրավունքների և բարոյականության նորմերի վրա հիմնված՝ իր իսկ կողմից որդեգրված արտաքին քաղաքականությանը: Դրանով մեր կառավարությունը կհետևի այն երկրների լավ օրինակներին, որոնք արդեն ընդունել են Հայկական ցեղասպանու-

թյունը: Այլապես Միացյալ Թագավորությունը կմնա այն երկրների ամոթալի շարքում, որոնք տարիներ շարունակ և հետևողականորեն թույլ են տալիս որպեսզի այլ կարգի շահերը խափանեն նրանց նվիրվածությունը ճշմարտությանն ու արդարությանը:

Այս դարը հիրավի ցեղասպանությունների դար էր՝ սկսած Աֆրիկայի հարավ-արևմուտքում գերմանացիների ռազմական հանցագործություններից, շարունակվելով Ռուանդայում և Բալկաններում՝ ներկայացված Կոսովոյի սարսափելի օրինակով: Եթե ազգերին թույլ է տրվում իրագործել ցեղասպանություն՝ մնալով անպատիժ և թաքցնելով իրենց մեղքը կեղծիքների և ժխտումների տակ, ապա իրական վտանգ կա, որ խրախուսված դրանից՝ մյուս դաժան ռեժիմները ցեղասպանության նոր փորձեր կարող են ձեռնարկել:

Վերջերս կայացած քննարկումների ժամանակ՝ նվիրված Աղրբեջանի փորձերին՝ էթնիակական զտումների միջոցով հեռացնել հայերին իրենց պատմական հայրենիքից՝ Լեռնային Ղարաբաղից, ես հիշատակեցի Հիտլերի հրեշավոր հռետորական հարցը Լեհաստանում՝ հրեաների և լեհերի նկատմամբ ցեղասպանության քաղաքականությունն իրագործելու նախօրեին. «Ո՞վ է այժմ հիշում հայերի մասին»:

Եթե այսօր մենք չխոսենք հայկական ցեղասպանության մասին և եթե մեր կառավարությունը չընդունի այդ պատմական փաստը, ապա մենք հրաժեշտ կտանք այս աննախադեպ ցեղասպանությունների դարին, թողնելով մեր խղճի վրա այս բիծը, կթևակոխենք նոր հազարամյակը թողնելով այդ ստվերը մեր ազգային պատվի և ազնվության վրա, և դրանով իսկ հնարավոր դարձնելով գալիք հնարավոր ցեղասպանությունները: Ուրեմն մենք պարտավոր ենք՝ հանուն մեր սեփական ազգի, հանուն հայ և թուրք ժողովուրդների և գալիք սերունդների ճանաչել այս ցեղասպանությունը և ես հուսով եմ, որ այսօր մեր կառավարությունը կտա այդ մասին իր հավաստիքները:

ԿՈՍՍ ՇԵՆՈՆ - Ազնվագույն լորդեր, նախ ես պետք է հայտարարեմ իմ շահը՝ որպես Բրիտանական-հայկական պառլամենտական խմբի նախագահ: Ես կարճ եմ խոսելու: Իմ ասելիքը քիչ բանով է տարբերվում քննարկվող հարցի վերաբերյալ հարգարժան բարոնուհի, տիկին Քոքսի խոսքից:

Իր հիանալի խոսքի մեջ ազնվագույն բարոնուհին մանրամասներ բերեց 1915-1918թթ. սարսափելի դեպքերից: Չեմ կասկածում, որ մյուս ազնվագույն լորդերը նույնպես կխոսեն այդ մասին: Հետևաբար, ես չեմ վատնի իմ ժամանակը՝ անդրադառնալով հարցի այդ կողմին: Նշեմ միայն, որ հայկական ցեղասպանությունը պատմական փաստ է՝ հաստատված բազմաթիվ վկայություններով: Չկա ու չի կարող երբևիցե լինել որևէ փաստարկ՝ որը կհերքի այդ իրողությունը:

Ինչպես նշեց հարգարժան բարոնուհի՝ տիկին Քոքսը, այն, ինչ տեղի է ունեցել 1915 թվականին, համարժեք է այն բանին, ինչն այժմ կատարվում է Կոսովոյում՝ այն տարբերությամբ միայն, որ 1915-ի եղեռնը ավելի մեծ չափի էր: Քննարկվող հարցի բուն էությունն այն է, որ Նորին Մեծության Կառավարությունը այսքան երկար տարիներ համառորեն չի ընդունում այդ պատմական փաստը: Թերևս բանը «ցեղասպանություն» (գենոցիդ) բառի ծագումնաբանության մեջ է: Ես միանգամայն ընդունում եմ, որ

1915-1918 թվականներին այդ բառը դեռևս հայտնի չէր և այդ իսկ պատճառով չէր կարող գործածվել ժամանակի համապատասխան դեպքերը անվանելու համար: Այնուամենայնիվ, ինչպես բացատրեց ազնվագույն բարոնուհին, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, 1948 թվականին, Միացյալ Ազգերի Կազմակերպությունը ընդունեց «ցեղասպանություն» հասկացության սահմանումը: Այն միանգամայն հասկանալի է: Պարզապես դա՝ մարդկանց և նրանց մշակույթի ոչնչացման մտադրությունն է: Այն, ինչ տեղի է ունեցել 1915-1918 թվականներին, ամբողջովին համապատասխանում է այդ սահմանմանը: Այդ բառը այժմ լայնորեն կիրառվում է նմանատիպ հանցագործությունները անվանելու համար: Ես մեկ այլ հետևություն էլ եմ անում հարգարժան բարոնուհու խոսքից: Նկարագրելով ներկա իրավիճակը Կոսովոյում, մեր արտգործնախարարը վերջերս նույնպես անդրադարձավ այս խնդրին՝ մամուլում լույս տեսած իր հոդվածում: Ադոլֆ Հիտլերը, որին հղում կատարեց ազնվագույն բարոնուհին, ընդմիշտ կմնա որպես ցեղասպանության մեծագույն հեղինակություն: Նա գիտակցում էր, որ այն, ինչ ինքն էր պատրաստվում անել, ճիշտ այն էր, ինչ արդեն արել էին հայերի նկատմամբ: Ո՞վ է Նորին Մեծության Կառավարությունը, որն անտեսի այս հեղինակությանը:

Այժմ մենք ապրում ենք մի ժամանակ, երբ պետք է դադարենք խուսափել կամ տատանվել այս հարցում ճիշտ դիրքորոշում դրսևորելու մեջ: Մենք պետք է վճռական լինենք այս կարգի դժվարությունները հաղթահարելու մեջ: Մենք պետք է դադարենք օգտագործել այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են «դժբախտ ջարդերը»: Դա պարզապես ցեղասպանություն էր: Պատահածը պարզ է, սահմանումը պարզ է, և այդ երկուսի իմաստը միանգամայն համընկնում է:

Եկեք չհետևենք այն տեսությանը, որ երբեմն առաջ են քաշում ապացուցելու, որ հայկական ցեղասպանությունը չէր կազմակերպվել Օսմանյան Թուրքիայի կառավարության կողմից, որ դա փոքրաթիվ քաղաքական կուսակցության գործն էր: Երբ այն տեղի ունեցավ՝ բանակը և ոստիկանությունը և աշխարհազորը՝ հիմնականում քրդերը, որոնք այսօր բողոքում են այն բանից, ինչը թուրքերն առաջին անգամ արել էին այն օրերին հայերի նկատմամբ, այդ բոլորը գործի էին դրվել միաժամանակ: Դա տեղի չէր ունեցել հաջորդաբար: Այդ ամենը ցույց է տալիս, որ ցեղասպանությունը կարող էր կազմակերպված լինել միայն կենտրոնական կառավարության կողմից:

Մենք երբեք չպետք է ընդունենք Նյուրնբերգում հնչած այն միտքը՝ թե իբր Երկրորդ համաշխարհային պատերազմի օրերին իրագործված ողջակիզումը կամ համակենտրոնացման ճամբարները և այլն մի խումբ մերժվածական նացիստների գործն էր: Դրանում ընդգրկված էին ողջ պետությունը և հատկապես կառավարությունը: Նույնն է եղել նաև տվյալ դեպքում, որի համար կան ապացույցներ: Օսմանյան Թուրքիայի կառավարությունը պատերազմից հետո սկսեց տեղեկացնել Ամերիկայի կյանքի ապահովագրման ընկերություններին, որ իրենց երկրի պայմանագրերի տերերը այժմ մահացած են և որ վճարումները պետք է արվեն թուրքական պետությանը: Ո՞րն է այն պատճառը, որը մղում է Նորին Մեծության Կառավարությանը ժխտելու այս տրամաբանությունը, փաստը և պատմությունը:

ԼՈՐԴ ՊԻՐՍՈՆ - Ազնվագույն լորդեր, ընդհուպ մինչև այս քննարկման սկիզբը ես համոզված չէի, որ կկարողանամ մասնակցել նրան, ուստի և հանձեցի իմ անունը ցուցակից: Այդ մասին ես գրել եմ ազնվագույն լորդ Մոնսոնին: Հնարավոր է, որ ես ցանկանամ մի քանի րոպեով զբաղեցնել ազնվագույն լորդերի ուշադրությունը՝ ելույթների միջև ստեղծված որևէ արանքում: Բայց քանի որ ես հանել եմ ազգանունս, ազնվագույն լորդերը կունենան մի փոքր ավելի ժամանակ, և ես նրանց հաջողություն եմ ցանկանում:

ԼՈՐԴ ՄՈՆՍՈՆ - Ազնվագույն լորդեր, ես շնորհակալ եմ Լորդ Պիրսոնի տված բացատրության համար: Հավանաբար չեմ ստացել նրա նամակը, սակայն բոլոր դեպքերում, այժմ ես ունեմ մի փոքր ավելի ժամանակ:

Ես ներողություն եմ խնդրում արագ խոսք վերցնելու և, թերևս ոչ բավարար պատրաստված լինելու համար, ինչը անկասկած նույնպես պարզ կդառնա: Ես վերադարձել եմ Ալենտեխոից երկուշաբթի ուշ երեկոյան, որպեսզի մասնակցեի երեկ կայացած կարևոր քննարկմանը: Միայն այն ժամանակ ես պատահականորեն ծանոթացա այս քննարկմանը ելույթ ունեցողների ժամանակավոր ցուցակին, որից դատելով ես ենթադրեցի, որ կա հնարավոր վտանգ, որ այսօրվա քննարկումը կարող է լինել փոքր-ինչ միակողմանի: Ես ասում եմ դա որպես մեկը նրանցից, ով մշտապես հիացել է ազնվագույն բարոնուհի, տիկին Քոքսով և բոլոր այն խոսնակներով, ովքեր հիմնականում անցնում են այս հարցում նրա կողմը:

Գիտակցելով ինձ տրված ժամանակի սղության պատճառով հարցի պարզունակեցման վտանգը, թերևս փորձեմ ներկայացնել նրա ողջ պատկերը: Դատելով վերջին 600 տարվա գերակշռող ստանդարտներից, բացառությամբ, իհարկե, քսաներորդ դարի երկրորդ կեսի, Օսմանյան կայսրությունն ընդհանուր առմամբ բնութագրվում էր որպես պլյուրալիստական և հանդուրժողական՝ ավելի քան քրիստոնեական Եվրոպայի շատ երկրներ:

Տասնյակ հազարավոր իսպանական հրեաներ՝ վտարվելով Ֆերդինանդի և Իզաբելի կողմից 1492 թվականին, հյուրընկալվեցին Օսմանյան կայսրությունում: Նրանք բնակություն հաստատեցին Կոստանդնուպոլսում, Սալոնիկում և այլուր, որտեղ նրանք բարգավաճեցին: Չնայած այն բանին, որ այդ կայսրությունում ոչ-մահմեդականները որոշակի իմաստով համարվում էին երկրորդ կարգի քաղաքացիներ (ինչպես արաբները Իսրայելում, հրեաները նախապատերազմյան Լեհաստանում, հռոմեական կաթոլիկները Հոլանդիայում՝ իր ժամանակին և բողոքականները Ֆրանկոյի Իսպանիայում), նրանց այնուամենայնիվ՝ չնչին բացառությամբ, չէր կարելի դասել երրորդ կամ չորրորդ կարգի քաղաքացիների թվին: Երկրի կարգերին ենթարկվելու և հնազանդ լինելու պայմաններում, հայերը և մյուս քրիստոնյաները կարող էին հասնել մինչև բարձր վարձատրվող պաշտոններին կամ առևտրի միջոցով դրամագլուխ կուտակել:

Այս դարի առաջին տասնամյակում հանդես եկան երիտթուրքերը, որոնց հեգնանքով անվանեցին «առաջադիմականներ»: Նրանց փիլիսոփայությունը ներառում էր էթնիկական և մշակութային մաքրման-զտման գաղափարը, որը կարելի էր իրականացնել միայն բնակչության՝ տարբեր միջոցներով տեղահանման միջոցով: Միևնույն ժամանակ հայերը տար-

ված էին՝ ողջ աշխարհում տարածված ազգայնամոլական գաղափարախոսությամբ:

Այնուհետև եկավ Առաջին համաշխարհային պատերազմը: Օսմանյան կայսրության գործերը վատացան: Ինչպես միշտ, սկսեցին փնտրել քավության նոխազին: Հինգերորդ շարասյան լրտեսներին տեսնում էին ամենուր՝ հիշեք թե ինչ պատահեց շվոթված իտալացի մատուցողներին 1940 թվականին Լոնդոնում կամ ճապոնական ծագումով դժբախտ ամերիկացիներին Կալիֆորնիայում 1942-ին: Վերջապես մեղադրյալները գտնվեցին՝ առաջին հերթին հայերը:

Թե ինչ տեղի ունեցավ հետո՝ մենք բոլորս լավ գիտենք, չնայած պետք է խոստովանեմ. ես չգիտեի, որ ամեն ինչ եղել է այդքան սարսափելի վատ, ինչպես նկարագրեց ազնվագույն բարոնուհին: Պատահածը, այնուամենայնիվ, իրոք սարսափելի էր: Ես չեմ ձգտում ավելի մեղմ ձևով ներկայացնել հայերի տանջանքները: Այնուամենայնիվ ես գտնում եմ, որ դա ցեղասպանություն չէր, ինչպես այդ բառը շատերն են հասկանում: Այն, օրինակ, անհամեմատելի է Չինաստանի փորձին՝ հիմնովին վերացնել տիբեթցիների ինքնությունը և մշակույթը: Ավելի նվազ է նման այն նացիստների փորձին՝ սկսած 1942 թվականից՝ վերացնել հրեաների ցեղն աշխարհի երեսից:

Թերևս թվարկեմ տարբերություններից մի քանիսը: Հրեաները միշտ եղել են գերմանական լավ քաղաքացիներ և խիզախորեն կռվել են հանուն Գերմանիայի՝ Առաջին համաշխարհային պատերազմի օրերին, ընդ որում նրանցից շատերը արժանացել էին Երկաթե խաչ շքանշանին, մինչդեռ հայերից ոմանք, չնայած ոչ բոլորը, տրամադրված էին Թուրքիայի իշխանությունների դեմ: Դրա համար, անշուշտ, կային հասկանալի պատճառներ: Հրեաները երբեք վրեժ չեն լուծել Գերմանիայի քաղաքացիներից, մինչդեռ այն հազվագյուտ դեպքերում, երբ հայերին առիթ էր ընծեռնվում՝ ինչպես, օրինակ, Առաջին համաշխարհային պատերազմի վերջին ռուսների՝ արևելյան Թուրքիա ներխուժելու ժամանակ, նրանց թերևս կրկին հասկանալի պատճառով փոխհատուցում էին մահմեդական բնակչությանը:

Առավել կարևոր է այն, որ հրեաներին հետապնդում էին ամենուր՝ ինչպես Գերմանիայում, այնպես էլ մայրցամաքի նրա կողմից զավթած երկրներում, անգամ պատերազմի վերջին օրերին Եվրոպայում, մինչդեռ դաժանությունները հայերի նկատմամբ սահմանափակվում էին հիմնականում արևելյան և կենտրոնական Անատոլիայի սահմաններում: Հայկական համայնքի հիմնական մասը Կոստանդնուպոլսում և շրջակայքում բռնության ենթարկվեց: Անճամբ ես ունեցել եմ մեկ հայ բարեկամ, որի ծնողները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ապրել էին Կոստանդնուպոլսում:

Ավելին, չնայած այն բանին, որ Օսմանյան կառավարության կողմից՝ հայերի բռնագաղթը Ռուսաստանի սահմանամերձ շրջաններից դեպի Սիրիա անկասկած հանգեցրեց ահավոր տանջանքների (ճիշտ այնպես, ինչպես Երկրորդ համաշխարհային տարիներին ճապոնական ռազմագերիներին և եվրոպական ու ասիական խաղաղ բնակչությանը՝ բռնի երթերի ընթացքում), մահվան դեպքերը գաղթի առավել պատահական, քան հիմնական նպատակն էին:

Միևնույն ժամանակ, քրդերի և Թուրքիայի այլ բնակիչների կողմից հազարավոր հայերի սպանությունը չէր կազմակերպված կառավարության կողմից՝ չնայած որ կառավարությունը, ես դա ընդունում եմ, կարող էր ավելի աչալուրջ լինել այդ հարցում: Այդ ջարդերը մասամբ հետևանք էին կրոնական ատելության՝ ինչպիսին եղել է 150 կամ ավելի տարիներ Բալկաններում: Հիշեք թե ինչպես էին ուղղափառ և կաթոլիկ քրիստոնյաները սպանում միմյանց Հարավսլավիայում՝ սոսկ սխալ խաչակնքվելու պատճառով, մասամբ էլ տնտեսական առավել հաջողակ խմբերի նկատմամբ վրդովմունքի, ինչը համեմատելի է չինական փոքրամասնության դեմ՝ պարբերաբար բռնկվող ատելության հետ Հարավ-արևելյան Ասիայում, որտեղ գերակշռում է մահմեդական բնակչությունը:

Չնայած այն փաստին, որ Թուրքիայում այսօր ապրողներից ոչ մեկը մեղավոր չէ 1915 թվականի դեպքերի համար և որ մեղքը միայն մի կողմինը չէ, ես նույնպես ցանկանում եմ, որպեսզի Թուրքիայի բարեկամները ու մտերիմները որոշակի ցանկություն հայտնեին անմեղ զոհերի նկատմամբ, եթե ես կարող եմ այդպես արտահայտվել, հրապարակայնորեն՝ ինչպես շատերս անում են անձնապես: Ես նույնպես կցանկանայի, որպեսզի նրանք դադարեին պնդել, որ հայերը Անատոլիայում նորեկներ են՝ ճիշտ այնպես, ինչպես բախտի քմահաճույքով սերբերն են պնդում, որ ալբանացիները նորեկներ են Կոսովոյում:

Ինչևէ, որպես մեկը, ով բազմիցս եղել է Թուրքիայում վերջին 45 տարիների ընթացքում, ես կարող եմ հավաստիացնել Լորդերի Պալատին, որ մենք երբեք չենք կարող ստիպել այնպիսի հպարտ մի ժողովրդի, ինչպիսիք թուրքերն են, փոխել նրանց հայացքները՝ թափ տալով նրանց վրա մեղադրող մատը, ավելի դժվար է հասնել նույն նպատակին՝ որակելով նրանց նախնիներին որպես Պոլ Պոտի կամ Հիտլերի նմանակներ:

ԿՈՍՍ ԿԱՐԼԱՅԼ - Ազնվագույն լորդեր, ես իմ շնորհակալությունն եմ հայտնում ազնվագույն բարոնուհի, տիկին Քոքսին՝ այս հարցը ներկայացնելու համար: Այն հանգամանքը, որ մենք քննարկում ենք նշված ահավոր դեպքերը՝ դրանից մոտ երեք քառորդ դար հետո, վկայում է նախ, որ այս կղզիների բնակիչները խորապես ցավում են բուն ցեղասպանության փաստի կապակցությամբ: Երկրորդը՝ դա հաստատում է այն ջերմ բարեկամությունը, որ երկար տարիներ եղել է բրիտանական և հայ ժողովուրդների միջև և այն, որ մենք պաշտպանել ենք նրանց՝ այդ ահեղ դեպքերի ժամանակ: Այն նաև տուրք է հարգարժան բարոնուհու և կոմս՝ լորդ Շեննոնի արիության ու համառության, որոնցով նրանք անդադրում աշխատել են ի շահ հայերի:

Ես սկսում եմ արտահայտել իմ հիացմունքը թուրք ժողովրդի արժանիքների հանդեպ՝ մի ժողովրդի, որը մեր արժանապատիվ հակառակորդն էր Գալիպոլի թերակղզում 1915 թվականին, երբ այդ դաժանությունները տեղի ունեցան, որը մեր դաշնակիցն էր Կորեայում և մեր գործընկերը NATO-յում, որին ես պատիվ եմ ունեցել ծառայել:

Ես պետք է պատմեմ ձեզ մի իրական պատմություն Կորեական պատերազմից: Ամերիկյան, բրիտանական և թուրք մի խումբ զինծառայողներ չինացիներին գերի էին ընկել: Նրանց պահում էին ստորացուցիչ և սարսափելի պայմաններում: Նրանցից մի քանիսը ենթարկվել էին կտտանքների: Տասնիննամսյա, իսկ ոմանց համար ավելի երկար գերու-

թյունից հետո նրանք ազատվեցին: Կյանքի հետագա տարիներին նրանցից շատերը տառապում էին հոգեկան և ֆիզիկական խախտումներից:

Դաշնակիցների համար հետաքրքիր էր նշել, որ ի համեմատ ամերիկացիների և բրիտանացիների, թուրքերը տարան այդ ամենն ավելի թեթև: Երբ նրանց հարցրին ի՞նչն է պատճառը, ի՞նչ առավելություն ունեին ամերիկացիների և բրիտանացիների նկատմամբ, նրանք պատասխանեցին. «Չինացիները մեզ ավելի լավ էին վերաբերվում, քան մեր սեփական ժողովուրդը»: Կարծում եմ դա թուրքական հոգեբանության վառ օրինակ է:

Այնուամենայնիվ, ես բոլորովին էլ հիացած չեմ՝ 1974 թվականին Կիպրոսում թուրք որոշ ղեկավարների և պաշտոնական անձանց վարքով, երբ նրանք ներխուժեցին այդ կղզին, չնայած ես չէի կարող այն ժամանակ քննադատել նրանց, քանի որ ես նույնպես ծառայում էի Միացյալ Ազգերի դրոշի ներքո: Ես նույնպես չեմ հիացած նրանց կողմից մարդու իրավունքների խախտման վերջին դեպքերի կապակցությամբ: Հուսով եմ, որ մենք ավելին կիմանանք այդ մասին իմ հարգարժան բարեկամ և ազգակից լորդ Օվբերիից:

Ես խորապես հարգում եմ հայ ժողովրդին: Թևակոխելով երրորդ հազարամյակ, մենք պետք է հիշենք, որ Հայաստանն առաջին պետությունն էր աշխարհում, որն ընդունեց քրիստոնեությունը: Հայերը վերապրած ժողովուրդ են: Լինելով Օսմանյան և Սովետական կայսրությունների կազմում, նրանք, այնուամենայնիվ, գոյատևեցին, որպեսզի 1991 թվականի սեպտեմբերի 21-ին նորից ձեռք բերեն ազատություն և ստեղծեն անկախ պետություն: Տա Աստված, որ նրանք մնան այդպիսին՝ նրանք միանգամայն արժանի են դրան:

Ինչպես հիշեցրեց մեզ հարգարժան բարոնուհի՝ տիկին Քոքսը. «ցեղասպանություն» (genocide) տերմինը ստեղծվել է 1948 թվականին: Այդ տարվանից ուժի մեջ մտավ ցեղասպանության կանխման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան: Ես չեմ խնդրում ձերդ գերազանցություններին չեղյալ համարել այն, եթե անգամ այդ տերմինները մենք նոր ենք լսում: Ես գերադասում եմ սահմանել «ցեղասպանությունը» որպես մեծ մասշտաբի սպանություն: Ես օգտագործում եմ «մեծ» բառը խորը հեգնանքով և հակակրանքով, հաշվի առնելով այն 600000 մարդկանց, բոլորը խաղաղ բնակիչներ, որոնք զրկվեցին կյանքից 1915-ին:

Ոմանք առարկում են, ասելով, որ այն ժամանակ պատերազմ էր և որ այդ դեպքերը ինչպես և մեր օրերին, անխուսափելի են պատերազմում: Սակայն 1915 թվականի դեպքերը տեղի են ունեցել և դա ցեղասպանություն էր: Եկեք ընդունենք այդ փաստը: Մյուսները պնդում են, որ դա մեր դարի առաջին ցեղասպանությունն էր և կարևոր է, որպեսզի մենք ճանաչենք այն, չհաշտվենք ու չմոռանանք: Սակայն ես կարծում եմ, որ մեր իսկ պետությունը մոտ է եղել ցեղասպանություն իրագործելու մինչև 1915 թվականը: Հիշեցնում եմ Ձերդ գերազանցություններիդ, որ 1901 թվականից ի վեր Հարավային Աֆրիկայում՝ երկրորդ բուրական պատերազմի օրոք 4000 կին և 16000 բուր ազգի երեխաներ են անհետացել 8000 բետոնե խցերում՝ կոչված համակենտրոնացված ճամբարներում:

Այդ ժամանակի բրիտանական կառավարությունը որոշակի պատասխանատվություն պետք է կրի այդ դեպքերի համար, որոնք իրագործել են իր իսկ պաշտոնյաները իր անունից: Ընդունենք, որ դա բիծ է մեր հեղի-

նակության վրա: Դա առիթ դարձավ, որպեսզի իմ կուսակցության ղեկավարը, սըր Հենրի Կեմպբել-Բաներմանը հարց բարձրացներ. «Ե՞րբ է լինում, որ որևէ պատերազմը նման չէ պատերազմի»: Նրա սեփական պատասխանը հետևյալն էր «Երբ այն տարվում է բարբարոսական մեթոդներով»:

Ես հուսով եմ, որ թուրքական, բրիտանական և մյուս կառավարությունները 1915 թվականի դեպքերը Հայաստանում կճանաչեն որպես ցեղասպանություն՝ եթե անգամ նրանք չկարողանան իրենց ստիպել դա անել հրապարակավ: Սակայն, ինչպես ավելի վաղ ես ասել եմ նախարարին, ես գերադասում եմ նայել առաջ, ոչ թե ետ, քանի որ մենք մտնում ենք նոր հազարամյակ և ես համոզված եմ, որ հարգարժան բարոնուհին նույնպես կցանկանա անել նույնը, երբ նա հանդես կգա պաշտոնական փաստաթղթով:

Քնակչության վիճակագրությունը երբեմն կարող է օգտակար ուղեցույց լինել: Այսօր 3,7 միլիոն հայեր ազատորեն ապրում են իրենց հայրենիքում, 5,3 միլիոն հայեր, սփյուռքի մի մասը, ապրում են արտերկրում, բոլորը ազատության մեջ: Մեր բախտը բերել է, որ այդ 5,3 միլիոնից 10000 մարդ ապրում ու աշխատում են ազատորեն մեր հայրենիքում՝ Լոնդոնում, Մանչեստերում և այլուր: Նրանք ծառայում են մեր հասարակությանը որպես բժիշկներ, իրավաբաններ և բիզնեսմեններ: Մենք շնորհակալ ենք այն ամենի համար, ինչ նրանք անում են այստեղ և ես դիմում եմ տիկին նախարարին, այժմ, երբ Հայաստանը ազատ ու անկախ է, նորից վերադարձնենք հայ ժողովրդին մեր երախտագիտությունը՝ տալով ավելին, քան տվել են մեզ այդ 10000 հայերը:

Ես անում եմ մի քանի առաջարկություններ, որոնք հարգարժան բարոնուհին կարող է հաշվի առնել: Առաջինը. մենք պետք է ուշադիր քննարկենք և արագորեն արձագանքենք Հայաստանի կառավարության ամեն մի խնդրանքին՝ ուղղված նրանց անկախությունը և նոր ձեռք բերած ժողովրդավարական համակարգը պահպանելուն: Այնուհետև մենք պետք է ցույց տանք նրանց հարևաններին, որ մենք չենք հանդուրժի, որպեսզի նորից կրկնվի այն, ինչ տեղի է ունեցել դարի սկզբին:

Երկրորդը. արդյո՞ք Նորին Մեծություն Կառավարությունը չի օգտագործելու ԵԱՀԽԿ-ի միջոցով իր ազդեցությունը՝ Լեռնային Ղարաբաղի շուրջ տարվող վեճը արդար և երկարատև խաղաղությամբ պսակելու նպատակով, ինչը վերջ կտա տարածաշրջաններում տիրող անառողջ մթնոլորտին և անհանգստությանը:

Երրորդ. արդյո՞ք հնարավոր չէ անհապաղ բացել Երևանում բրիտանական հյուպատոսարան: Ինչո՞ւ պետք է ութ տարի անցնի, որպեսզի դա հնարավոր դառնա:

Չորրորդ. Արդյո՞ք հնարավոր չէ՝ հազարամյակի մուտքը նշելու համար աջակցել Բրիտանիայում Հայ բարեկամների ընկերությանը, որը ցանկանում է Լոնդոնի տնտեսագիտության դպրոցում կամ Լոնդոնի համալսարանում՝ Արևելյան և Աֆրիկյան ուսումնասիրությունների դպրոցում հաստատել Հայկական ուսումնասիրությունների ամբիոն:

Վերջապես, մենք Հայաստան ենք ուղարկել 7 միլիոն ֆունտ ստեռլինգ արժողությամբ ապրանքներ և որոշակի քանակ ետ ստացել: Շուտով գալու է երրորդ հազարամյակը: Հարգարժան բարոնուհին կարող է չցան-

կանա, որպեսզի Կառավարությունը վերանայի իր նախկին որոշումը՝ չընդունել 1915 թվականին հայերի դեմ թուրքերի գործողությունները որպես ցեղասպանություն: Ափսոս, եթե նա շարունակի իր մշտական պնդումը: Ինչևէ, հարգարժան նախարարին և Արտգործնախարարությանը արժե հիշեցնել բիբլիական հանրահայտ պատմությունը: Այն վերաբերում է կնոջը, որին մեղադրում էին ամուսնական դավաճանության մեջ: Քրիստոսին հրավիրեցին դատել նրա վարքը կամ գուցե ճիշտ է ասել՝ զանցանքը: Դրա փոխարեն նա ասաց կնոջը, որ գնա ու էլ մեղք չգործի: Ես հուսով եմ, որ գալով այս երեկո Dispatch Box* նախարարը բարձրաձայն և հստակորեն կդիմի թուրքական և մյուս երկրների կառավարություններին, որոնք հետապընդել կամ ցեղասպանության են ենթարկել իենց հարևաններին՝ օրինակ նախկին Խորհրդային Միությանը՝ Մերձբալթյան երկրներին՝ Էստոնիային, Լատվիային և Լիտվային, «երբեք այլևս չկրկնեք դա նորից» կոչով:

ՎԻԿՈՆՏ ՎԵՎԵՐԼԻ - Ազնվագույն լորդեր, պարզապես ես չէի խրարուսի կառավարությանը դիմել նման միջոցի: Ո՞րտեղ և ինչո՞վ է անցյալի չար արարքների ճանաչումն ավարտվելու: Պատերազմի այն տարիներին ահավոր չափերի տանջանքներ են ապրել մասնակից բոլոր կողմերը:

Անշուշտ, ես ընդունում եմ, որ հայերը տառապել են: Սակայն պաշտոնական ճանաչումը կստեղծեր վնասակար և վիճահարույց նախադեպ, որը միայն կսրեր առանց այն էլ անկայուն իրավիճակը: Մենք պետք է հիշենք նաև, որ պատմությունը հիմնականում կամ միշտ մեկնաբանվում է միտումնավոր ձևով և այդ իսկ պատճառով անվստահելի է և հակասական:

Աշխարհն այսօր էականորեն այլ է, սակայն այն դեռևս հեռու է խաղաղ լինելուց: Հայաստանը բարեկամների կարիք ունի և առաջարկվող միջոցը միայն կհանգեցներ միմյանցից հարևանների օտարացմանը: Բարեբախտաբար մենք թևակոխում ենք ռեգիոնալիզմի՝ այն է ռեսուրսների փոխադարձ օգտագործման և փոխադարձ պատասխանատվության դարաշրջանը: Դրա հետ է կապված ապագայի մեր լավագույն հույսը:

Իմ կարծիքով առավել կարևոր խնդիր է՝ երբ ենք մենք ունենալու պարզ ուղեցույցներ՝ ազգերի ինքնորոշման և տարածքային անձեռնմխելիության իրավունքների միջև գոյություն ունեցող հակասության և ուրիշ պետության գործերին միջամտելու վիճելի խնդրի վերաբերյալ: Ես գտնում եմ, որ դա մի խնդիր է, որը մենք պետք է լուծենք նոր աշխարհակարգ հաստատելու ընթացքում:

ԼՈՐԴ ՔԻՖԵՆ - Ազնվագույն լորդեր, ինչպես և կոմս լորդ Շեննոնը, ես ևս Անգլո-հայկական ընկերության անդամ եմ և ինձ համար հաճելի է լինել այդ դերում՝ այն խորը հարգանքի պատճառով, որ ես տածում եմ հայ ժողովրդի, նրա պատմության և քրիստոնեական արժեքների ավիրվածության հանդեպ: Այդ ենթատեքստում ես հիացած եմ իմ թանկագին բարեկամ՝ բարոնուհի Քոքսի ելույթի բուն էությամբ: Նա ներկայացրեց մեզ Առաջին համաշխարհայինի տարիներին հայ ժողովրդի տանջանքների նկարագիրը, որը չափազանց տպավորիչ էր և որի նպատակն է արթուն պահել մարդկանց խիղճը ողջ աշխարհում:

---

* Լորդերի պալատում պաշտոնական փաստաթղթերը ներկայացնելու սրահ:

Ես պետք է օգտագործեմ ինձ տրված կարճ ժամանակը ոչ թե քվարկելու համար հայերի տանջանքները վկայող փաստեր, այլ ասելու, որ այս Պալատում մենք ապրում ենք անցյալի արձագանքների ազդեցության տակ: Մենք ապրում ենք Բալկաններում մրցակցող կողմերի իշխանության և դաժանության խորը բրիտանական հոգսով: Մենք ապրում ենք Գլադստոնի և Միղլոթյան կամպանիայով, բաշի-բոզուկներով, ինչպես նաև այն ժամանակների Եվրոպայի հարավ-արևելքում Թուրքիայի գերակայության խնդրի հետ կապված խորը անհանգստությամբ: Սա մի առիթ է լոկ հիշեցնելու մեզ այդ մասին, որ քանի մենք չենք ապրում մեր պատմությամբ, չենք լիցքավորվում այն զգացումով, որ թելադրում են նրա մեթոդները, ապա մենք զրկում ենք մեզ որևէ հարցի հասարակական քննարկման գլխավոր աղբյուրից:

Ճշմարտությունն այն է, որ ցեղասպանությունը, ջարդերը և վայրագությունները տասնամյակներ շարունակ բնորոշ են եղել Եվրոպայի այդ մասի և Ասիայի համար: Ես դա չեմ ասում ինչ-որ ինքնագոհության զգացումով, այլ միայն ի նշան վրդովմունքի ու տագնապի, որ զգացել են Գլադստոնն ու նրա սերունդը աշխարհի այդ մասի նկատմամբ: Դա միայն Բրիտանիայի՝ դեպի Հնդկաստան տանող ճանապարհի հարթելու խնդիրը չէր: Ըստ էության դա ճիշտ ժամանակին հնչած ուղերձ է, երբ մենք քննարկում ենք արտաքին քաղաքականության մեջ բարոյականության տեղը և այն գործողությունների, որոնք կարող են նպաստել այդպիսի քաղաքականության հաստատմանը, այն է՝ այսօրվա վերջին բոլոր նրանք, ովքեր իրականացնում են էթնիկական զտում կամ ցեղասպանություն, ճանաչվեն որպես այդպիսիք իրական քաղաքականության շրջանակներում, քանի որ մենք չենք կարող ապրել անընդհատ կրկնվող հեղափոխությունների, վերահաշտեցումների և վեճերի աշխարհում:

Կա իրական քաղաքականություն այս ամենի վերջում և ես հաճույքով եմ նշում, որ այս քննարկումը հանգեցրեց Թուրքիայի դիրքորոշման պարզաբանմանը, ինչպես նաև Հայաստանի, որի համակրողն ու պաշտպանն եմ ես:

Ես դա ասում եմ, քանի որ այն բախումներից հետո, որ տեղի են ունենում այժմ Բալկանյան երկրներում, ուշ թե շուտ կհաստատվի որոշակի ապրելածև և վիճակներից ոչ մեկին չի կարելի հասնել օգտագործելով լոկ խաչակիրներին հատուկ ոգևորվածությունը: Օրվա վերջին, մենք պետք է՝ անկախ նրանից, թե ինչքանով տհաճ կլինի այն շունչը, որից տառապելու են մեր հարևանները, մենք պետք է նստենք և քննարկենք տվյալ հարցը, հավատալով, որ կան ավելի հաճելի բաներ, քան օդային ռմբակոծումները:

ԼՈՐԴ ՊԻՐՍՈՆ - Ազնվագույն լորդեր, ինչպես արդեն զգուշացրել էի, ես կվերցնեմ միայն մի քանի րոպե Ձերդ գերազանցությունների ժամանակից՝ օգտագործելով կարճ ընդմիջումը: Պետք է ասեմ, որ ես, ինչպես միշտ, չափազանց ազդված եմ այս ողբերգության պատմության՝ իմ հարգարժան բարեկամ, տիկին Քոքսի նկարագրումից: Ես կարծում եմ, որ հարգարժան լորդ Մոնսոնի կողմից դա մեծահոգություն էր, երբ նա ասաց, որ հայկական ցեղասպանությունը չի համարում «ցեղասպանություն» բառի այն իմաստով, ինչպես դա հասկանում է մարդկանց մեծամասնությունը և երբ նա ազնվորեն խոստովանեց, որ ծանոթ չէր իմ ազնվագույն բարեկամ՝ տիկին Քոքսի մեջ բերած փաստերին: Ինձ մի փոքր շփոթեցրեց ազնվա-

գույն վիկոնտ, լորդ Վեվերլիի դիրքը, երբ նա հարցրեց՝ որտե՞ղ է ավարտվելու անցյալի չարագործությունների ճանաչումը՝ եթե Միացյալ Թագավորության կառավարությունը ընդունի ճշմարտությունը հայկական ցեղասպանության մասին: Պետք է ասեմ հարգարժան վիկոնտին, որ ես առևտրական գործընկերներ ունեմ Թուրքիայում: Ես չգիտեմ նրանցից որևէ մեկին, որը չգերադասեր, որ նրա կառավարությունը ծերբազատեր իրեն այդ սարսափելի դեպքերից: Ուրեմն ես հարցնում եմ նրան, ինչպես իհարկե նաև տիկին նախարարին, որը պետք է պատասխան տա կառավարության անունից. ի՞նչ վնաս կա խոստովանության մեջ: Արդյո՞ք այն միշտ չի նշանակում հոգու մաքրում: Եթե դա տեղի ունենա և եթե մեր կառավարությունը խրախուսի այդ քայլը, դա կունենար չափազանց առողջարար նշանակության ողջ տարածքի համար:

ԼՈՐԴ ՕՎԲԵՐԻ - Հարցն այն չէ արդյոք 1915-1916 թվականների դեպքերը տեղի են ունեցել, այլ այն՝ արդյոք դրանք կարող են սահմանվել որպես «ցեղասպանություն»: Այս երեկո մենք լսեցինք այս հարցին տրված տարբեր պատասխաններ, տարաբնույթ պատասխաններ ենք ստացել նաև մեր նախարարներից: Օրինակ, նրանցից մեկը՝ Ջոյս Կուինը մեկ այլ տեղ ասել է, որ այսօրվա կառավարության գործը չէ գնահատել անցյալի դեպքերը՝ ժամանակակից արժեքների և մոտեցումների տեսանկյունից նրանց դատապարտելու նպատակով: Ես թույլ եմ տալիս ինձ չհամաձայնել նրա հետ: Նա մոռանում է Սանտայանայի ասացվածքը. «Նրանք, ովքեր մոռանում են անցյալը, դատապարտված են կրկնելու այն»:

Նա նույնպես մոռանում է, որ ցեղասպանության մասին կոնվենցիան, որից մեջբերումներ արեց ազնվագույն բարոնուհին. «ընդունում է, որ պատմության բոլոր փուլերում ցեղասպանությունը մեծագույն կորուստներ է հասցրել մարդկությանը»:

Ազնվագույն բարոնուհի՝ տիկին Քոքսը, ինչպես նաև ազնվագույն կոմս՝ լորդ Շենոնը հիշեցրին Հիտլերի տխրահռչակ դիտողությունը. «Ո՞վ է այսօր խոսում հայերի ոչնչացման մասին»:

Ես ընդգծում եմ «ոչնչացում» բառը: Հիտլերը անշուշտ տեղյակ էր հայկական ցեղասպանության մասին և օգտագործում էր այն որպես օրինակ: Այսպիսով դա մեր գործն է՝ դատապարտել այդ հանցագործությունները այսօր:

Համապատասխանաբար, ազնվագույն բարոնուհի՝ տիկին Սայմոնսը միանգամայն այլ կարծիքի է: Նա ասում է, որ իրենց հսկողության տակ գտնվող հայերին վերացնելու մասին՝ թուրքական կառավարության հատուկ որոշման վկայության բացակայության պայմաններում Բրիտանական կառավարությունը երբեք չի դիտել այն տարիների դեպքերը որպես ցեղասպանություն: Մինչդեռ այն ժամանակ ոչ ոք չի կասկածել դրանում: Կառավարության հանրահայտ Կապույտ գրքում (Blue Book) 1916 թվականին վիկոնտ Բրայսը նկարագրում է քննարկվող դեպքերը որպես «մի փորձ՝ տեղահան անել մի ամբողջ ժողովուրդ, առանց հաշվի առնելու տարիքն ու սեռը, որի դժբախտությունը եղել է նրանում, որ պատկանել է մի կառավարության, որը զուրկ է եղել խղճից ու գթասրտությունից»:

Թուրքերը մերժում են այդ վկայությունները, որակելով դրանք որպես պատերազմի քարոզչություն, սակայն վկայությունների մեծ մասը պատկանում է չեզոք կողմին, որոշ մասը՝ Թուրքիայի դաշնակից երկրների

քաղաքացիներին, այդ թվում գերմանացիներին, իսկ մնացած ամենաէականը՝ ցեղասպանության վերապրածներին: Կապույտ գրքի վկայությունները հաստատվել և հարստացել են բազմաթիվ այլ աղբյուրների շնորհիվ, ներառյալ այն նյութերի, որ կուտակվել են պատերազմի հանցագործությունների դատավարություններից՝ կայացած 1918 թվականին դաշնակիցների հաղթանակից հետո:

Դժբախտաբար, Բրիտանիան մասամբ մեղավոր էր, ինչպես պարոն Լլոյդ Ջորջն է նշում իր հուշերում՝ «1915 թվականի ողջակիզում»-ի մեջ: Բրիտանիան ապահովեց 1878 թվականի Բեռլինի պայմանագրով ռուսական զորքերի դուրս բերումը Թուրքիայի հայկական գավառներից: Եվրոպական պետությունները պարտավորված էին ապահովել այդ գավառներում հայերի անվտանգությանն ուղղված միջոցառումների վերահսկողությունը: Սակայն երբ եկավ փորձառության պահը՝ 1894 թվականի Սասունի ջարդերը և հաջորդ երկու տարիներին հետևած բազմաթիվ կոտորածները, մենք թեքեցինք նրանցից մեր երեսը:

Եթե լորդ Մոնսոնը ցանկանում է խորանալ այդ երևույթի պատմության մեջ, նա պետք է սկսի ոչ թե 1915 թվականից, այլ ցեղասպանության նախադեպերից, որոնք տեղի են ունեցել դրանից շատ տարիներ առաջ: Սուլթան Աբդուլ Համիդը ժամանակի Միլոշևիչն էր, որը վարպետացել էր արևմտյան պետությունները միմյանց դեմ տրամադրելու մեջ և մտածում էր միայն այն մասին, թե մինչև ո՞ւր կարող էր հասնել գնալով այդ ուղղությամբ: Սասունը, եթե կամենում եք, Եվրոպայի կամքի փորձությունն էր՝ ինչպես մի դար անց դարձավ Սրեբրենիցան: Քսանչորս գյուղերի բնակչությունը գրեթե ամբողջովին ոչնչացված էր: Գելիգիզանում երիտասարդներին կապում էին միմյանց և կենդանի հրկիզում: Մեկ այլ գյուղում 60 կանանց լցրել էին եկեղեցու մեջ, բռնաբարել խմբով և սպանել: Ընդհանուր առմամբ Աբդուլ Համիդի ջարդերի երկու տարիների ընթացքում սպանվել էր մոտ 200000 հայեր, միևնույն ժամանակ օսմանյան իշխանությունները հայտնաբերեցին իրենց համար, որ եվրոպացիները մրցելով միմյանց հետ իրենց զայրույթն արտահայտելու մեջ, երբեք գործը չէին հասցնում միջամտելուն: 1894-1896 թվականների ջարդերը, այսպիսով, փորձ էր՝ երկու տասնամյակ անց կազմակերպած ցեղասպանության համար՝ ճիշտ այնպես, ինչպես դաժանությունները Բոսնիայում անխուսափելիորեն հանգեցրին այսօր Կոսովոյում տեղի ունեցող ցեղասպանությանը: Այդ զուգահեռը Կոսովոյի հետ նշեց ինչպես ազնվագույն բարոնուհին, այնպես էլ լորդ Շեննոնը:

Երբ 1908 թվականին իթթիհադականները գրավեցին իշխանությունը, կոտորածները դեռ շարունակվում էին: 1909 թվականի Ադանայի ջարդերում զոհվեց 25000 մարդ: Նոր կառավարությունը այնուհետև ակտիվացրեց «Հատուկ կազմակերպությունը» որպես ռազմականացված զորամաս, որը ղեկավարում էին կադրային սպաներ և որի պարտականությունն էր վերահսկել և չեզոքացնել ներքին թշնամուն: Նրանք սկսեցին հավաքել տվյալներ հայ ղեկավարների մասին, որոնց պետք էր ոչնչացնել: Ինչպես արդեն ասվեց, պատերազմի բռնկումը հնարավորություն տվեց իթթիհադականներին իրականացնելու ցեղասպանության հետ կապված իրենց պլանները: Գերմանացիները գիտեին ինչ է տեղի ունենում, սակայն կայզերը հրամայեց ողջ ռազմական և դիվանագիտական անձնակազմին պա-

հել լռություն՝ ռազմական գործողություններին չխանգարելու համար: Մինչդեռ գերմանական դեսպան Վանգենհայմը, որից արդեն մեջբերում էր արել ազնվագույն քարոզուհի՝ տիկին Քոքսը, նշել է, որ «Հայերին արմատապես վերացնելու քաղաքականության իրականացումը հետևանք էր միջազգային համայնքի կողմից խրախուսվող վերափոխումների իրականացման փորձերի»:

Դաշնակիցները չէին կասկածում, թե ով է մեղավոր այդ ամենի համար: 1915 թվականի մայիսի 24-ին նրանք հրապարակեցին համատեղ հայտարարություն, որը մեղադրում էր «օսմանյան իշխանություններին՝ ջարդերը խրախուսելու և հաճախ՝ իրագործմանը օգնելու մեջ», ապա նշվում էր. «Հաշվի առնելով Թուրքիայի այդ նոր հանցագործությունները մարդկության և քաղաքակրթության հանդեպ, դաշնակից երկրների կառավարությունները հրապարակայնորեն հայտարարում են, որ նրանք անձնապես պատասխանատու են համարում օսմանյան կառավարության բոլոր անդամներին և նրանց այն գործակալներին, ովքեր ներգրավված են եղել այդ ջարդերի մեջ»:

Հայ առաջնորդների ձերբակալությունները 1915 թվականի ապրիլին կազմակերպել էր ինքը՝ կառավարությունը: 1915 թվականի մայիսին ներքին գործերի նախարարությունը հրապարակեց տեղահանումների մասին ժամանակավոր օրենք, համաձայն որի իրենց տներից պետք է վտարվեր Օսմանյան կայսրության ողջ հայ բնակչությունը, այլ ոչ միայն նրանք, ովքեր ապրում էին Արևելյան Անատոլիայում, ինչպես կարծում է ազնվագույն լորդ Մոնսոնը: Սա նույնպես կառավարության արած գործն էր: Ծառայության տարիքի բոլոր հայ տղամարդիկ զորակոչված էին բանակ: Որոշ ժամանակ աշխատանքային վաշտերում օգտագործելուց հետո, նրանց գրեթե բոլորին սպանել են՝ ստիպելով մի մասին գերեզման փորել իրենց իսկ համար: Սա նույնպես իրագործել էին կառավարությունը և նրա ղեկավարները:

Պատերազմից հետո դաշնակիցները որոշում կայացրին այն մասին, թե ինչպես պետք է կիրառվեն մարդկային օրենքները և հասարակական խղճի թելադրանքները՝ պատերազմի ընթացքում խաղաղ բնակչության հանդեպ հանցագործության նկատմամբ, այնուհետև կազմվեց դատարան՝ այդ հանցագործությունները դատապարտելու նպատակով: Բրիտանացիները ձերբակալեցին ռազմական հանցագործությունների մեջ մեղադրվող 118 անձանց, մինչդեռ ֆրանսիացիներն ու իտալացիները՝ հուսալով օգուտ քաղել քեմալիստների կողմն ընդունելուց, սաբոտաժի ենթարկեցին միջազգային դատական ընթացքը:

Այնուամենայնիվ իթթիհադի պարագլուխները հեռակա կարգով մահվան դատապարտվեցին իրենց իսկ՝ թուրքերի կողմից: Հիմնական, ինչպես նաև Ստամբուլի հսկողության տակ երկրով մեկ անցկացված դատավարությունների ընդհանուր եզրակացությունն այն էր, որ տեղահանումների իրական նպատակը՝ Օսմանյան կայսրության տարածքում ողջ հայ բնակչության ոչնչացումն էր:

Ջերդ գերազանցությունները հավանաբար հանդիպել են "Observer" ամսագրի՝ Սուրբ Ջատկի կիրակնօրյա համարում Թոմաս Բերգենթալի կյանքի մասին ուշագրավ մի ակնարկ: Փրկվելով Աուշվիցի և Ջախսենհաուզի համակենտրոնացված ճամբարների գերությունից, նա դարձավ Ամե-

րիկայի Միացյալ Նահանգներում ականավոր իրավաբան: Նա ասում է, որ մարդկանց կյանքի վերադարձնելը ամենևին չի նշանակում մեղավորներին պատժել: Նա ասում է նաև. «Ազգը պարտավոր է դիմակայել իր անցյալին՝ ընդունելով բոլոր այն սխալները, որ կատարվել են նրա անունից»: Ժամանակից Թուրքիայի կողմից անցյալին դիմակայելու բացակայությունը անդրադառնում է ոչ միայն ցեղասպանության վերապրածների թոռների և ծոռների վրա, դա նաև այն հիմնական խնդիրներից է, որը խոչընդոտում է Թուրքիային՝ Եվրոպայի լիարժեք մասը դառնալուն և հայկական պետության հետ՝ այն ամենի, ինչ մնացել է հայ ժողովրդին իր պատմական տարածքից, խաղաղ և վստահության պայմաններում ապրելու: Մշտապես չցանկանալով ասել ողջ ճշմարտությունը այդ սարսափելի հանցագործության մասին և տալ նրա իսկական անունը, մենք նպաստում ենք, որ նրա չարիքը շարունակի սնել նոր սերունդներին:

ԼՈՐԴ ՄՈՆՍՈՆ - Ազնվագույն լորդեր, ազնվագույն լորդ Օվբերիի հայտնությունները չափազանց հետաքրքրիր են և ես, իհարկե, ի զորու չեմ հնարավորին չափով վիճարկել դրանք: Այնուամենայնիվ, նա պետք է համաձայնի, որ բոլոր այդ դեպքերը տեղի են ունեցել Օսմանյան կայսրությունում, այլ ոչ թե այսօրվա Թուրքիայի Հանրապետությունում: Կարո՞ղ է նա ենթադրել, որ այսօրվա ավստրիական կառավարությունը պետք է մեղանչի 85 տարի առաջ՝ խորվաթ աշխարհազորայինների նկատմամբ կատարած դաժանությունների համար:

ԼՈՐԴ ՕՎԲԵՐԻ - Պարոնայք, ես կոչ եմ անում հարգարժան լորդին զուգահեռ անցկացնել ժամանակակից գերմանական կառավարությունների հետ, որոնք ընդունել են Հիտլերի կողմից կատարած չարագործությունները, չնայած որ պատասխանատու չեն դրանց համար:

ԼՈՐԴ ՄՈՅՆԻՀԵՆ - Պարոնայք, ես շնորհավորում եմ իմ հարգարժան բարեկամին, տիկին Քոքսին՝ այսօրվա քննարկումն ապահովելու համար: Պարտքի այն զգացումն ու ցնծությունը, որ նա ցուցաբերում է օրվա կարևորագույն խնդիրների նկատմամբ, գրեթե չունի իր նմանը: Ինչպես ասաց իմ ազնվագույն բարեկամը, այսօրվա քննարկումը ողբերգականորեն տեղին է: Վեճն այն մասին, թե արդյոք որևէ հանցագործություն ինքնին արդարացնում է ցեղասպանության դաժան սահմանումը, մշտապես լինելու է Ջերդ գերազանցությունների Պալատի ծայրահեղ հետաքրքրության առարկան: Սակայն ընթացիկ իրադարձությունները առավել ընդգծեցին դրա կարևորությունը: 20-րդ դարի ավարտին մենք ականատես ենք դաժանությունների, ջարդերի, մարդկային տանջանքի ու վշտի, որոնք քիչ բանով են տարբերվում նրանից, ինչը ահ ու սարսափ էր ազդում դարասկզբին: Մեզ շարունակում են տանջել միևնույն հարցերը. իրո՞ք անցած ութ տասնամյակները, որ տարել են անմեղ մարդկանց այդքան կյանքեր, քիչ բան են սովորեցրել և արդյո՞ք մենք ավելի մոտ ենք այն պահին, երբ վերջ կտրվի մարդու ատելությանը մարդու նկատմամբ: Երբ մենք տեսնում ենք ինչ է կատարվում այս տարի Կոսովոյում, թվում է՝ քիչ բան ենք սովորել, որպեսզի մարդկության դեմ անցյալ հանցագործությունները կարողանային ծառայել հաջորդների կանխմանը:

Լայնածավալ բանավեճերը և այս կարգի քննարկումները խնդրո առարկայի վերաբերյալ իրոք կարևոր են:

Քանի դեռ հայերը ողջ աշխարհում նշում են ամենամյա Հայկական Հիշատակի Օրը, ոչ ոք չի կարող ժլատել, ինչպես իմ հարգարժան բարեկամ, լորդ Քիֆենը ասաց, որ 1915-1923 թվերին հայ ժողովուրդը ապրել է անասելի չափերի ողբերգություն: Կասկած չկա, որ 1915 թվականի գարնանը սկիզբ առած իրադարձությունները ցանկացած չափանիշներով հանցագործություն են մարդկության դեմ՝ երբ Կոստանդնուպոլսում ավելի քան 200 հայ հասարակական, քաղաքական, մտավորական առաջնորդներ ձերբակալվել, աքսորվել և հետագայում ոչնչացվել են: Դրան հաջորդած բյուր հազարավոր հայերի անողորմ բռնագաղթը և ջարդերը մինչև այսօր էլ համարվում են այս դարի ամենասև էջերը: Ինչպես արդեն ասվեց, ջարդերի ընթացքում սպանված հայերի քանակը գնահատվում է 600000-ից մինչև մեկ և կես միլիոն մարդ:

Այնուամենայնիվ, նախքան բրիտանական կառավարության կողմից այդ դեպքերը որպես ցեղասպանություն ճանաչելը, անհրաժեշտ է պատասխանել երեք առանցքային հարցերի: Առաջինը. արդյո՞ք հայկական ջարդերը ներկայացնում են իրենցից այն, ինչ այսօր մենք հասկանում ենք «ցեղասպանության» տակ: Երկրորդը. արդյո՞ք այդքան հայերի մահը Օսմանյան կայսրության ղեկավարների սիստեմատիկ և պաշտոնական լիազորված քաղաքականության բաղադրիչ մասն էր: Երրորդը. ո՞րն է այն սահմանը, մինչև ուր կարող են տարածվել 1999 թվականին Բրիտանիայի կառավարության քայլերը՝ 1915 թվականի դեպքերը վերագնահատելու ուղղությամբ և ի՞նչ գործնական նպատակի կարող են ծառայել նման քայլերը:

Իմ հարգարժան բարեկամ տիկին Քոքսը ակնարկեց ցեղասպանության առավել տարածված սահմանումը՝ այն, որ նշված է 1948 թվականի դեկտեմբերի 9-ին Միացյալ Ազգերի Կազմակերպության կողմից ընդունված՝ ցեղասպանության կանխման և դատապարտման մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածում:

Համաձայն կոնվենցիայի՝ դատապարտելի է ոչ միայն ցեղասպանությունը որպես այդպիսին, այլ նաև ցեղասպանության նպատակով դավադրությունը, ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը, ցեղասպանության փորձը և մասնակցությունը դրանում: Ինչպես ասաց իմ հարգարժան բարեկամը, հիշյալ կոնվենցիայում ցեղասպանություն է համարվում որևէ ազգային, էթնիկական, ցեղային կամ կրոնական խմբի անդամների սպանությունը, այդ խմբերի մասնակիցներին մարմնական կամ հոգեկան վնաս պատճառելը, որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների կանխամտածված ստեղծում՝ նախատեսված նրա ամբողջովին կամ մասնակի ոչնչացման համար, միջոցներ՝ նախատեսված այդ խմբի ներսում ծննդաբերության կանխարգելմանը, ինչպես նաև մարդկային մի խմբից՝ ամբողջովին կամ մասնակի ոչնչացման նպատակով երեխաներին բռնի կերպով մեկ այլ խումբ տեղափոխելը: Դա հենց այն սահմանումն է, որն օգտագործված է 1969 թվականի Ցեղասպանության ակտի (Genocide Act) մեջ:

Այսպիսով կարևոր է հարցում անել Կառավարություն՝ պարզելու համար՝ արդյոք 1969 թվականի ցեղասպանության մասին Ակտի համաձայն Հայկական ջարդերը այսօր կարող են համարվել ցեղասպանություն:

Իմ ազնվագույն բարեկամ տիկին Քոքսը նկարագրեց 1915 թվականի խորապես ազդեցիկ դեպքերը, այն դաժան ու անմարդկային վերաբեր-

մունքը բազմաթիվ հայերի նկատմամբ՝ բռնագաղթի մահվան արշավների ընթացքում, համակենտրոնացված ճամբարներում: Կան հաշվարկներ, համաձայն որոնց հայկական բնակչության հավանաբար կեսը բռնի կերպով տեղահան էր արվել իրենց հայրենիքից՝ Օսմանյան կայսրության հյուսիս-արևելքից: Իմ հարգարժան բարեկամը առաջարկեց իրեն հատուկ պերճախոսությամբ ու անկեղծությամբ, 1915 թվականին հայ ժողովրդի նկատմամբ կատարվածը ճանաչել որպես ցեղասպանություն: Չնայած համոզիչ փաստարկներով, նա և մյուս հարգարժան լորդերը վկայակոչեցին մի շարք միջազգային և ազգային ատյաններ, կազմակերպություններ, որոնք արդեն արել են դա՝ այդ թվում Եվրոխորհրդարանը, Եկեղեցական Խորհրդի գլխավոր ասամբլեայան և էլի մի քանի պառլամենտական մարմիններ: Իմ հարգարժան բարեկամը քաջատեղյակ է նախկին կառավարության դիրքին: Միանգամայն տեղին է պահանջել ներկա կառավարությունից, որպեսզի այն բացատրի և արդարացնի իր քաղաքականությունը:

Իմ նախորդների դիրքը արձագանք է եղել այն դիրքի, որ ընդունել են նախկին բրիտանական կառավարությունները, որոնք միշտ դատապարտել են 1915 թվականի ջարդերը: Մենք միշտ հպարտացել ենք մեր սերտ կապերով հայ ժողովրդի հետ, այն հանգամանքով, որ 1890 թվականների ջարդերի ժամանակ Գլադստոնը ընդունեց նրանց կողմը: Այդ կապերը ամրապնդվեցին, երբ 1916 թվականին բրիտանական կառավարությունը Կապույտ գրքում հրապարակեց «ամբողջական և հավաստի արձանագրությունը» այն ամենի, ինչ տեղի էր ունեցել 1915 թվականին:

Այնուամենայնիվ, նախապատրաստելով այս քննարկմանը, ես նկատեցի, որ նախկին բրիտանական կառավարության որոշումը՝ չճանաչել 1915 թվականի իրադարձությունները որպես ցեղասպանություն, պայմանավորված է նրանով, որ չկան ապացույցներ՝ հաստատող այն հանգամանքը, որ այն ժամանակվա թուրքական կառավարությունը հատուկ որոշում էր կայացրել իրենց երկրում ապրող հայերի ոչնչացման մասին: Ինչպես նկատեց ազնվագույն լորդ Օվբերին, սա մնում է որպես ազնվագույն բարոնուհի, տիկին Սայմոնսի տեսակետը: Կարո՞ղ է, ուրեմն, նախարարը հաստատել, որ կարիք կա պահանջել նոր ապացույցներ, որպեսզի կառավարությունը փոխի իր դիրքը:

Նստած այս աթոռներին, մենք, իհարկե, համակրանքով ենք համակված դեպի այն ճշմարտությունը, ինչը կունենա հայ ժողովրդի համար այս 80-ամյա ողբերգության ճանաչումը որպես ցեղասպանություն: Սակայն բոլոր կառավարությունները պարտավոր են զգուշորեն գնահատել անցյալի իրադարձությունները՝ որոշելու համար ինչպիսի պաշտոնական մոտեցում է այսօր պահանջվում: Բիտանիայի վարկանիշը որպես ցեղասպանություն և պստերազմի հանցագործությունների դեմ հետևողական պայքարողի գրեթե չունի իր հավասարը: Գտնվելով այստեղ, մենք ամբողջովին հաստատում ենք 1951 թվականին Գլխավոր Ասամբլեայում արած հայտարարությունը այն մասին, որ ցեղասպանությունը՝ «ցնցում է մարդկության խիղճը, մեծ կորուստներ պատճառում մարդկային բնությանը և հակասում է բարոյական օրենքին և Միացյալ ազգերի ոգուն ու նպատակներին»: Սա այն բառերն էին, որոնք կրկնեց 1993 թվականի մայիսին Արդարադատության միջազգային դատարանը իր դատավճռում՝ Ցեղասպանության հանցագործության կանխման ու պատժելիության մասին կոնվեն-

ցիայի կիրառման կապակցությամբ (Բոսնիա-Հերցոգովինա ընդդեմ Հարավսլավիա – Սերբիայի և Չերնոգորիայի):

Մեր երկրի՝ միմյանց հաջորդող բոլոր կառավարությունները աջակցել են Բոսնիայի կոնֆլիկտին մասնակցող հանցագործներին դատապարտելու նպատակով՝ Հաագայում պատերազմի հանցագործությունների դատարանի ստեղծմանը: Մենք գլխավոր դերն ենք ստանձնել Ռուանդայում ցեղասպանության մեղավորներին դատելու նպատակով կազմակերպված հայցողների և դատավորների պատրաստման գործում: Եվ բոլորովին վերջերս նախագահ Միլոշևիչը և նրա գործընկերները նախազգուշացվել են, որ նրանք անձնապես պատասխանատվության են ենթարկվելու Կոսովոյում էթնիկական զտումի հետ կապակցվող հանցագործությունների համար: Հետևապես, ես կարծում եմ, որ շատ օգտակար կլիներ իմանալ՝ ինչ չավով է ընդունում տիկին նախարարը՝ Չերդ գերազանցությունների մի քանիսի կողմից այսօր առաջադրած փաստարկները՝ ապացուցելու համար, որ ոչ մի հիմք Թուրքիային և Հայաստանին միմյանց ներելու, վերջնականապես հաշտեցնելու չի կարող լինել առանց Թուրքիայի կողմից ջարդերի՝ պետականորեն հովանավորված ցեղասպանության ճանաչման, քանի դեռ Թուրքիան քաքցնում է ճշմարտությունը, իսկ Հայաստանը՝ տառապում լուծում չգտած աղետից:

Ինչպե՞ս է գնահատում նախարարը այն մտավախությունը, որ եթե կառավարությունը համաձայնի հայտարարել մահմեդական օսմանյան կառավարության գործողությունները հայ քրիստոնյաների դեմ որպես ցեղասպանություն, չնայած այն բանի, որ եղածի ճշգրիտ նկարագրությունը և բառի տեղին օգտագործելը հավանաբար կարող է բացել հին վերքը և վերակենդանացնել 84-ամյա ողբերգությունը: Եթե դա այդպես է, ապա ըստ կառավարության՝ ինչպիսի՞ն կարող են լինել այդ պարագայում հետևանքները: 1923 թվականին հայ ժողովրդին զրկել էին անկախության երազանքից՝ զոհաբերելով իրական քաղաքականության և քաղաքական նպատակահարմարության զոհասեղանին: Չնայած դրան, աշխարհով մեկ ափռված հայերը տասնամյակներ շարունակ վառ են պահել Հայաստանը անկախ տեսնելու տենչը և 1991 թվականին նրանց երազանքն իրականացավ: Այսօր Հայաստանը ազատ, ինքնիշխան պետություն է՝ կենդանի հուշարձան բոլոր նրանց, ովքեր զոհվեցին 84 տարի առաջ, միևնույն ժամանակ՝ կայուն գրավական այն բանի, որ նման ողբերգությունը այլևս երբեք չի կրկնվի:

Այսօր ես սպասում եմ հարգելի նախարարից հավաստիացումն այն բանի, որ Միացյալ Թագավորությունը կշարունակի կարևորագույն տեղ հատկացնել ազատ Հայաստանի պատմական կայացմանը՝ կրկնապատկելով Կովկասյան տարածաշրջանում խաղաղության և կայունության մեր ձգիրվածությունը՝ խաղալով միջազգային հանրության հետ միասին ակտիվ դեր՝ Լեռնային Ղարաբաղի շուրջ Ադրբեջանի և Հայաստանի միջև շարունակվող կոնֆլիկտի արդար և երկարատև հանգուցալուծման ուղիների որոնման մեջ՝ մի խնդիր, որին մենք բազմիցս անդրադարձել ենք վերջին տարիների ընթացքում:

Միջազգային հանրությունը պարտավոր է աջակցել Կովկասյան տարածաշրջանում բարեփոխումներին, ժողովրդավարությանը, տնտեսական զարգացմանը և ինտեգրացիոն գործընթացներին, զորակցել ժամա-

նակակից քաղաքական և տնտեսական հաստատություններին և օգնել էներգակիրների զարգացման, արևելք-արևմուտք հաղորդակցման միջանցքի ստեղծմանը և, ամենակարևորը, օգնել լուծելու կոնֆլիկտները այդ՝ դեռևս անկայուն տարածաշրջանում: Այսպիսով, այս ողբերգության ժառանգությունը և 1915 թվականին զոհվածներին արժանի հուշարձանը պետք է լինի մեր վճռակամությունը՝ չհանդուրժել մարդկության դեմ հանցագործությունները և թույլ չտալ, որպեսզի չարը երբևէ հաղթանակի:

ԲԱՐՈՆՈՒՀԻ ՌԱՍՄՍԵՅ - Պարոնայք, ես շնորհակալ եմ ազնվագույն բարոնուհի՝ տիկին Քոքսին այս քննարկումը նախաձեռնելու համար և ես բաժանում եմ հարգարժան լորդ Մոյնիհենի և մյուս լորդերի զգացմունքները, երբ նրանք գովասանքով էին խոսում այն մասին, թե ինչպիսի եռանդով է նա պաշտպանում այն գործը, որին հավատում է: Հարգարժան բարոնուհին քաջ հայտնի է ինչպես այս Պալատում, այնպես էլ նրանից դուրս, որպես մի շարք ազգերի, այդ թվում ոչ պակաս չափով հայերի խաթարված շահերի պաշտպան:

Այս քննարկման մյուս մասնակիցների հետ միասին ես լսել եմ նրա կրքոտ ելույթը մարտի 17-ին Լեռնային Ղարաբաղի հարցին ևվիրված քննարկմանը, որը ներկայացնում էր ազնվագույն վիկոնտ՝ լորդ Վեվերլին: Տիկին Քոքսը և մյուս լորդերը, այդ թվում ազնվագույն լորդ Օվբերին պարբերաբար գրավոր դիմումներ են հղել նախարարներին՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արևելյան Անատոլիայում հայերի ցնցող սպանությունների և բռնագաղթի մասին: Ազնվագույն բարոնուհին դրանց վերաբերող մի քանի դաժան մանրամասներ բերեց նաև այսօր, որոնց լրացնելու եկան մյուս զեկուցողների ելույթները:

Նորին Մեծություն կառավարության դիրքը, որի մասին խնդրեց պարզաբանում անել ազնվագույն բարոնուհին, կարծում եմ, քաջ հայտնի է և հասկանալի, սակայն, իրոք, այն արժե կրկնել այսօր մեկ անգամ ևս: 1915-1916 թվականների ջարդերը դատապարտել են այն ժամանակվա Բրիտանական կառավարության կողմից, որը գնահատել է այդ տարիներին հայ ժողովրդի կրած տանջանքները որպես պատմական չափերի հասնող ողբերգության: Բրիտանական այսօրվա կառավարությունը, ինչպես և իր նախորդները, ոչ մի բանով իր համոզմունքներում չի տարբերվում այդ տեսակետից, ոչ էլ ձգտում է ժխտել կամ նվազեցնել այդ ողբերգության աստիճանը: Դա իրոք սարսափելի, ահավոր մի ողբերգություն էր, ինչպես նշեց իր խոսքի մեջ հարգարժան կոմս՝ լորդ Շենոնը և մյուսները: Ես հավաստիացնում եմ նրանց, որ մենք ոչ մի կերպ չենք շեղվում այդ դեպքերին տրված վերլուծությունից, սակայն իրենց ենթակայության տակ գտնվող հայերին ոչնչացնելու մասին Օսմանյան վարչակազմի կողմից հատուկ որոշման անհերքելի վկայության բացակայության պատճառով բրիտանական կառավարությունները 1915-1916 թվականների դեպքերը որպես «ցեղասպանություն» չեն ճանաչում: Շատ ուրիշ կառավարություններ՝ և ես այստեղ պետք է ասեմ Ձերդ գերազանցություններիդ, չնայած այն հայտարարություններին, որ արվեցին այսօր՝ նրանց մեծամասնությունը կանգնած է նման դիրքերում: Շատ քչերն են նրանցից օգտագործում «ցեղասպանություն» բառն այդ ողբերգական դեպքերն անվանելու համար: Մեր կարծիքով, նրանք իրավացի են այդպես վարվել, քանի որ այսօրվա կառա-

վարությունների գործը չէ քննարկել 80-ամյա վաղեմություն ունեցող դեպքերը՝ նրանց վերաբերյալ դատավճիռ կայացնելու նպատակով:

Այդ ամենն իրավական և պատմական քննարկման խնդիրներ են և ազնվագույն լորդ Մոնսոնը տվեց մեզ մասնագիտական և մանրամասն՝ միանգամայն այլ բացատրություն քան այն, ինչը ներկայացված էր այսօր հնչած մյուս ելույթներում: Այդ դեպքերը տեղի են ունեցել 20-րդ դարի առաջին երկու տասնամյակի ընթացքում՝ Եվրոպայում և նախկին Օսմանյան տարածքներում զանգվածային և դրամատիկական հեղաշրջումների ժամանակ: Թողնում եմ Ձերդ գերազանցություններիդ դատելու՝ արդյոք պետք է, որ այն երկրներին, որոնք ներգրավված չէին քննարկվող դեպքերի մեջ, դարձնեին այսօրվա քաղաքական վիճաբանության առարկա:

Ազնվագույն բարոնուհին, ազնվագույն լորդեր Շեննոնը, Օվբերին և Մոյնիհենը նշեցին միջազգային իրավունքի մեջ ցեղասպանության հասկացության կողավորումը, ինչը տեղի չի ունեցել մինչև 1948 թվականի «Ցեղասպանության հանցագործության կանխման և պատժելիության մասին» կոնվենցիան, որն ուժի մեջ է մտել 1951 թվականի հունվարի 12-ին: Այն ժամանակ չէր որոշված՝ արդյո՞ք կոնվենցիայի հասկացությունները կարող են կիրառվել հետադարձ կարգով և այս կապակցությամբ ես պետք է ասեմ ազնվագույն կոմս՝ լորդ Շեննոնին, որ Նյուրնբերգյան դատավարությունները վերաբերում էին ողջակիզման հետ առնչվող հանցագործություններին, այն է՝ պատերազմի հանցագործություններին կամ հանցագործություններին մարդկության հանդեպ: Դա հենց ողջակիզման ապացույցն էր, որն առաջ եկավ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում և նրանից հետո և Նյուրնբերգյան տրիբունալի աշխատանքի շնորհիվ, ինչը հանգեցրեց միջազգային իրավունքի մեջ ցեղասպանության կոդավորմանը:

Այնուամենայնիվ, եկեք նայենք իրավական և պատմական խնդիրներից այն կողմ: Հարգարժան բարոնուհի՝ տիկին Քոքսի նկատմամբ մեծագույն հարգանք տածելով, ես դիմում եմ Լորդերի պալատին. ինչպիսի՞ն կլինի այս կամ մեկ այլ կառավարության կողմից 1915-1916 թվականների դեպքերը որպես ցեղասպանություն ճանաչելու գործնական արդյունքը: Որևէ արտասահմանյան կառավարություն՝ ընդունելով բաց դիրքորոշում այնպիսի վիճելի և զգայուն խնդրի վերաբերյալ, ինչպիսին էին 84 տարի առաջ կայացած դեպքերը, էականորեն դժվարեցնելու է իր կարողությունը՝ եթե նա կամենում է մնալ բոլոր կողմերի բարեկամը, օգնել տարածաշրջանին իրականացնել իր ներուժը: Իսկ ո՞վ է շահելու, եթե մենք ընդունենք այդպիսի դիրքորոշում: Ինչպես պարզաբանեց ազնվագույն վիկոնտ՝ լորդ Վեվերլին՝ սա է խնդիրը: Այդպիսին էր նաև ազնվագույն լորդ Մոյնիհենի մոտեցումը հարցին:

1915-1916 թվականների դեպքերը մնում են որպես ցավագին խնդիր և որպես լարվածության աղբյուր երկու երկրների՝ Հայաստանի և Թուրքիայի Հանրապետությունների միջև, որոնց հետ մենք պահպանում են հիանալի հարաբերություններ: Ինչ վերաբերում է մեզ, մենք կարծում ենք, որ գերադասելի է նայել առաջ, այլ ոչ ետ: Մենք հուսով ենք, որ այս երկու երկրները ընդունակ կլինեն հաղթահարել պատմության դառը ժառանգությունն ի շահ իրենց սեփական և տարածաշրջանի, ինչպես նաև միջազգային հանրության շահերի: Մենք պնդելու ենք, որ նրանք այդպես վարվեն:

Երկու երկրների հարաբերությունների բարելավումը, որին իմ համոզմամբ անկեղծորեն ձգտում են երկու կողմերը՝ հարավային Կովկասում կոնֆլիկտների լուծման հետ մեկտեղ, որի մասին ակնարկեց ազնվագույն լորդ Մոյնիհենը, կվերափոխեին ողջ տարածաշրջանը՝ ճանապարհ հարթելով դեպի նորովի բարգավաճող, ժողովրդավարական և կայուն տարածքի կայացումը: Ես վստահեցնում եմ ազնվագույն լորդ Մոյնիհենին, որ ինքը և կառավարությունը տեսնում են իրերը միևնույն լույսի ներքո: Մարտի 17-ի քննարկման ընթացքում ազնվագույն լորդերից շատերը խոսում էին տարածաշրջանի նման ապագայի մասին: Ինչպես իմ ազնվագույն բարեկամ՝ տիկին Սայմոնսը բացատրեց, կառավարությունը ցանկանում է կատարել իր դերը այդ նպատակին հասնելու համար:

Ազնվագույն կոմս՝ լորդ Կառլայսլը բարձրացրեց մի շարք յուրահատուկ հարցեր: Ես կփորձեմ համառոտակի անդրադառնալ դրանց, սակայն ես պատրաստվում եմ ավելի ընդարձակ ձևով անդրադառնալ այդ թեմային գրավոր: Նա հարցրեց Հայաստանի անկախությանը աջակցելու մասին: Մենք Հայաստանի հավատարիմ բարեկամներն ենք և մենք աջակցում ենք նրա անկախությանը՝ համագործակցելով Հայաստանի հետ՝ նաև ՆԱՏՕ-ի համագործակցության հանուն խաղաղության ծրագրի սահմաններում: Նա հարցրեց՝ արդյո՞ք մենք աշխատելու ենք լուծել Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտը ԵԱՀԿ-ի միջոցով: Ես կարող եմ վստահորեն հավաստիացնել նրան, ինչպես դա արեց մարտի 17-ին իմ բարեկամ՝ ազնվագույն տիկին Սայմոնսը, որ կառավարությունը լի է վճռականությամբ՝ ԵԱՀԿ-ի միջոցով լուծել այդ կոնֆլիկտը: Ազնվագույն կոմսը հարցրեց նաև Բրիտանական խորհրդի մասին: Բրիտանական խորհուրդը ակտիվորեն գործում է տարածաշրջանում, այդ թվում Հայաստանում, սակայն Երևանում կենտրոն բացելու համար անհրաժեշտ են միջոցներ: Դա կապված չէ Խորհրդի կամ Կառավարության կողմից ցանկության բացակայությունից: Նա հարցրեց՝ աջակցե՞ն ենք արդյոք Հայկական ուսումնասիրություններին ամբիոնի բացելուն: Ես որոշակիորեն դնելու եմ այդ հարցը համապատասխան նախարարների առջև:

Սա միակ պառլամենտը չէ, որտեղ դրվել է հայ ժողովրդի տառապանքների հարցը: Ազնվագույն բարոնուհի՝ տիկին Քոքսը ակնարկեց Եվրոպական պառլամենտը: Թերևս ես փորձեմ բացատրել Եվրոպապառլամենտին անդամակցելու հարցը: Այն պայմանները, որոնք պետք է կատարեն Եվրոպապառլամենտի անդամության բոլոր հայացողները, այդ թվում Թուրքիան, հաստատվել են 1993 թվականին Կոպենհագենում՝ Եվրոխորհրդի կողմից: Չափանիշները ներառում են ժողովրդավարության ապահովման կայուն հաստատություններ, օրենքի գերակայունություն, մարդու և փոքրամասնությունների իրավունքների և հարգանքի ապահովում: 1998 թվականի նոյեմբերին Եվրոպական Խորհուրդը Թուրքիայի անդամակցության հայցի վերաբերյալ նշեց այն էական թերությունները, որ գոյություն ունեն այդ բնագավառներում: Սակայն Խորհուրդը չի առաջարկել որևէ լրացուցիչ պայման՝ կապված հայկական ցեղասպանության ճանաչման հետ: Եվրոպապառլամենտը կարող է իր թույլտվությունը տալ Թուրքիային Եվրամիության անդամ դառնալու համար, սակայն չկա չափանիշների որևէ համալիր, որը կարող էր հիմք ծառայել թույլ տալու կամ չտալու իր համաձայնու-

թյանը: Դա կլինի տվյալ ժամանակին Եվրոպառլամենտի խնդրո առարկա: Հուսով եմ, որ ես պարզաբանեցի այս հարցը:

Ազնվագույն բարոնուհի՝ տիկին Քոքսը ակնարկեց նաև Ֆրանսիայի օրինակը: Կարծում եմ, արժե հիշել այդ կապակցությամբ Ֆրանսիայի՝ մի երկրի, որը ինչպես և մենք, բարիդրացիական հարաբերությունների մեջ է Թուրքիայի և Հայաստանի հետ, արտաքին գործերի նախարար Հյուբեր Վեդրինի խոսքերը: Վերջերս, խոսելով ֆրանսիական Սենատում, նա նշեց իր կառավարության մտավախությունը, որ 1915 թվականի դեպքերը որպես ցեղասպանություն ճանաչելը առաջին հերթին կարող է ծառայել նրանց շահերին, «ովքեր նպաստում են մեկուսացմանը, ավտորիտար ազգայնականությանը և առաջադիմությունից ու ժողովրդավարությունից հրաժարվելուն՝ առավել քան կոնֆլիկտին վերջ դնելու և ատելությունը հաղթահարելուն»: Ես գիտեմ, որ ազնվագույն բարոնուհի՝ տիկին Քոքսը և նրա համախոհները, որոնք արտահայտվեցին այսօր քննարկվող հարցի շուրջը, համարում են իրենց Նորին Մեծության կառավարության հետ մեկտեղ կոնֆլիկտների և ատելության հակառակորդ և երբեք գիտակցաբար չեն նպաստի դրանց:

Ես ցանկանում եմ ակնարկել մի խնդիր, որ առաջ էր քաշել հարգարժան բարոնուհի Քոքսը, լորդ Մոնսոնը և որը հիշատակել էին նաև մեկ թե երկու ազնվագույն լորդեր: Թուրքական իշխանությունները չեն ժխտում 1915-1916 թվականներին տեղի ունեցած կոտորածները: Վեճը գնում է այն մասին, թե ի՞նչ չափի են եղել դրանք և ո՞վ է դրանց համար պատասխանատու: Ինչպես ես արդեն նշել եմ, մենք հուսով ենք, որ հայկական և թուրքական կառավարությունները կհարթեցնեն այդ հարցի վերաբերյալ իրենց վերաբերմունքը:

Ազնվագույն լորդեր Բիֆենը և Օվբեհի իրավացիորեն մեզ կոչ արեցին ուսումնասիրել անցյալը: Եկեք, սակայն, չդառնանք անցյալի գերիները: Եկեք միավորենք մեր ջանքերը, փորձելով ապահովել այնպիսի իրավիճակ, որպեսզի 1915-1916 թվականների ողբերգությունը և մեր օրերին Կոսովոյում ծավալվող սարսափները (այս տեղին զուգահեռը անցկացրեց ազնվագույն լորդ Մայնհիենը) երբեք չկրկնվեն: Միջազգային հանրությունը այսօր ավելի քան երբևիցե պատրաստ է ակտիվորեն զուգակցել խոսքն ու գործը: Նախկին Հարավսլավիայում և Ռուանդայում այս տասնամյակում տեղի ունեցող ահավոր դեպքերը հանգեցրին ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի կողմից միջազգային դատավարությունների կազմակերպմանը՝ հանցագործությունների համար պատասխանատուներին դատելու նպատակով: Անցյալ տարի միջազգային հանրությունը պատմական որոշում կայացրեց՝ միջազգային մշտական գործող քրեական դատարան ստեղծելու մասին: Մենք հպարտ ենք, որ Բրիտանիան հիմնական դերը խաղաց դրանում: Մենք հուսով ենք, որ դա կստիպի նրանց, ովքեր մտադիր են մարդկության դեմ հանցագործություն կատարել, կրկնակի անգամ մտածել: Մենք չպետք է մոռանանք անցյալի զոհերին, բայց մենք պետք է նաև միավորենք մեր ջանքերը, որպեսզի մյուսները չտառապեն միևնույն պատճառով:

Ազնվագույն բարոնուհի՝ տիկին Քոքսի՝ այդպիսի անկեղծությամբ և պերճախոսությամբ առաջադրած փաստարկների նկատմամբ մեծագույն հարգանք տածելով հանդերձ, կառավարությունը կարծում է, որ

ճիշտ, կառուցողական մոտեցումը հայ ժողովրդի կրած դաժանության պատմական ժառանգության նկատմամբ, կլիներ մի խնդիր մեզ համար՝ համոզել տարածաշրջանի ժողովուրդներին նայել դեպի ապագան, որ նշեցին ազնվագույն վիկոնտ, լորդ Վեվերլին, լորդ Կառլայսլը և լորդ Ռիֆենը, և այն, որ մենք պետք է օգնենք այդ ժողովուրդներին կառուցել իրենց ապագան:

Մենք չենք առաջարկում, որպեսզի որևէ կողմը մոռանա անցյալը կամ չքաղի նրանից դասեր: Ես չեմ կասկածում, որ Հայաստանի և Թուրքիայի ժողովուրդները կարող են դա անել: Մենք պետք է ժամանակ տանք նրանց՝ լուծելու միմյանց միջև այն խնդիրները, որոնք առայժմ բաժանում են նրանց: Մենք կարող ենք և պետք է աջակցենք նրանց դրանում և օգնենք նրանց միջև վստահություն հաստատելուն: Մենք չենք կարողանա հանդես գալ երկու երկրներին օգնող բարեկամի դերում, եթե ընդունենք էականորեն քաղաքական դիրք մի այնպիսի հարցում, որն այսքան զգայացունց է երկուսի էլ համար:

III. ՄԵՔՔԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԱԼ-ՀՈՒՍԵՅՆ ԻԲՆ ԱԼԻԻ ՀՐՈՎԱՐՏԱԿՆ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԻ

Ռաջաբի 18 1336թ. (18 ապրիլի 1917թ.)

ՀԱՇԵՄԱԿԱՆ ԴԻՎԱՆ

ՀԱՆՈՒՆ ԳԹԱՌԱՏ ԵՎ ՔԱՐՅԱՅԱԿԱՄ ԱՍՏԾՈ

ՄԵՆՔ ԵՐԱԽՏԱՊԱՐՏ ԵՆՔ ՄԻԱՅՆ ԱՍՏԾՈՒՆ ԵՎ ՈՉ ՄԵԿԻՆ, ՔԱՅԻ ԱՍՏԾՈՒՑ

Արաբական երկրների և Մեքքայի առաջնորդ Ալ-Հուսեյն Իբն Ալիի և մեծափառ ու պատվարժան արքայազուներ Ֆայզալի և Աբդ ալ Ազիզ ալ-Ջարբայի կողմից Աստծո ողջություններն ու գթությունն և օրհնանքը: Այս նամակը գրվել է Իմմ Ալ-Քուրայից 1336թ. Ռաջաբի 18-ին, գոհունակություն հայտնելով Աստծուն և ոչ մեկին նրանցից բացի: Մենք հայցում ենք Աստծո ողորմությունը ձեր ընտանիքների և համախոհների համար: Մենք տեղեկացնում ենք, որ նրա շնորհիվ մենք ողջ և առողջ ենք, ուժեր և հավատով լի:

Մենք աղոթում ենք Աստծուն, որ գթառատ լինի մեր ու ձեր հանդեպ: Այն, ինչ մենք խնդրում ենք ձեզ՝ պաշտպանել և հոգ տանել ձեր տարածքների սահմանների և ցեղերի մեջ ապրող հակոբինյան հայ համայնքից յուրաքանչյուրին, օգնել նրանց իրենց բոլոր գործերում և պաշտպանել նրանց այնպես, ինչպես կանեք ինքներդ ձեզ, ձեր ունեցվածքի ու երեխաների համար, տալ նրանց այն ամենը, ինչի կարիքը նրանք կունենան, անկախ նրանից, թե նրանք կմնան նույն տեղում, թե կգնան տեղից-տեղ, որովհետև նրանք մուսուլմանների պաշտպանած մարդիկ են և նրանց մասին մարգարե Մուհամեդը (թող Աստված տա նրան իր օրհնանքն ու խաղաղությունը) ասել է. «Ով էլ նրանցից թեկուզ մի պարան վերցնի, ես նրա հակառակորդը կլինեմ դատաստանի օրը»: Սա ամենակարևորն է, որ խնդրում եմ անել և հուսով եմ, որ կանեք՝ նկատի ունենալով ձեր վեհանձնությունն ու հաստատակամությունը, այն անպատասխան չեք թողնի:

Թող Աստված լինի Ձեր ու մեր պաշտպանը, հաջողություն բերելով ձեզ:

Աստծո կամոք ու օրհնությամբ թող խաղաղություն լինի առ ձեզ:

Ալ-Հուսեյն Իբն Ալի

The Armenian Genocide. Documents and Declarations, Compiled with an Introduction by Harut Sassounian, 1995, Los Angeles, p. 63.

IV. ՀԱՅ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐԻ ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

1. 4 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1918Թ.

ԱՐԹԻՆ ՊՈՇԿԵՉԵՆՅԱՆ – Ներքին գործերի նախարարը խորհրդարանին հայտնեց, որ կառավարությունն արդեն գործի է անցել, բանն էլ այդ է, կառավարությունից շնորհակալ ենք: Ձեռնարկը կեղծ չէ, լուրջ է, բայց սրա հաջողության համար ժամանակ է պետք: Եթե նույնիսկ այս վերքերը բոլորովին չբուժվեն, մաղթենք, որ կառավարությունը որոշ չափով ջանք պետք է կատարի այս ուղղությամբ: Եթե ես կառավարությունը լինեի, ես էլ այս չափ կանեի (ծափահարություններ):

ՍԱՏԹԵՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ - Բաժանում եմ Արթին էֆենդիի հայրենասեր զգացումները, բայց ստիպողական մի հարց կա: Խնդիրն իր պարզամիտ բացատրության պես մի խնդիր չէ, ես այս գրավոր դիտողությունն օսմանյան ազգի անունով հղեցի: Մի օսմանցու զգացած սրտացավությամբ է, որ այստեղ խոսում եմ: Այս ժամանակավոր օրենքները և ոչ մի ձևով չեն համընկնում Սահմանադրության դրույթների հետ... ես այսօր Երեսփոխանական ժողովի անդամների ունեցած խղճմտանքից, իրենց սրտի մաքրությունից չեմ տարակուսում: Այսպես ավելորդ եմ համարում անդրադառնալ այն պայմաններին, որոնց ժողովուրդը ենթարկվեց այս օրենքների գործադրության պատճառով: Ես շատ պաշտոնակիցներիս՝ իրենց վշտակցությունն արցունքոտ աչքերով բացատրությունը տեսա, տեսա ուրիշներին, որոնց աչքերը լցված, խոսեցի այս մասին, որով հարկ չկա այս բաները մոլեռանդությանը վերագրելու: Հանուն մարդկության, ձեր խղճերին եմ դիմում, անցյալի իրադարձությունները մեզ բոլորիս լացեցրին: Իմ կարծիքով, առանց կրոնների և ցեղի խտրականության, օջախներ են մարվել և կրակի ծխերը տակավին բարձրանում են. այսօր ահագին թվով կանայք այստեղ, այնտեղ թափառում են: Մեր կառավարությունը այս ուղղությամբ շատ է անհանգստանում, շատ է խորհում, բայց ինչպես ասացի, խնդիրը դյուրին ընդգրկվող մի խնդիր չէ... Ես միայն խնդրում եմ, որ նկատի ունենալով խնդրի չափից ավելի լրջությունը, կառավարությունը մի կարևոր ծրագրով փարատելու է գործը: Ես գիտեմ, որ օսմանցու անունը մրոտող այս վատ իրադարձության մեջ, թե՛ պատմականորեն, թե՛ ներկայիս, թե՛ ապագայի ըմբռնումով, հանցագործություններից անմասն մնացողների թիվը քիչ չէ, թող նրանք էլ այս արարքից մաքրազերծվեն:

... Մենք փափագում ենք մաքուր սրտերով փարվել մեր կառավարությանը, միայն թե կուզենք տեսնել գործնական քայլեր և իրագործումներ: Արդարության նպատակով կատարվող քայլերի համար բացատրություն պահանջելը ես կառավարության և ժողովրդի դեմ ուղղված հարձակում եմ նկատում և խնդրում եմ, որ իմ մադթանքներին մաքուր սրտով զորակցեք: Թող կառավարությունը բացահայտ և իրական մի ծրագրով գործել սկսի և շուտով դրա ապացույցը տա: Ողջ քաղաքակիրթ աշխարհը, մարդկությունը և նույնիսկ մեր բոլորի տերն ու տիրակալը հանդիսացող Քարձրյալ Աստվածը մեզնից այս է սպասում:

ՆԱԽԱԳԱՀ (ՀՈՒՍԵՅԻՆ ՋԱՀԻԹ) – Հարցի ընկալման մասին այսքան բացատրություններից հետո ցանկացողները թող ձեռք բարձրացնեն: Ընդունվեց:

ՖԵԹՀԻ ԲԵՅ (ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ) – Թույլ տվեք մի քանի խոսքով պատասխանեմ: Արթին էֆենդու հայտարարության համար շնորհակալությունս եմ հայտնում, Նալբանդյան էֆենդու տածած զգացումների համար էլ պարտական եմ շնորհակալություն հայտնել: Մեկ և վճռական ծրագրով իմ հրապարակ մտնելը կցանկանաս: Ներկա պայմանների մեջ վճռական մի ծրագիր տարագրյալներին իրենց տեղերը վերադարձնելուց զատ այլ բան չի նշանակում: Սրա գործադրության եղանակը և այդ եղանակը ձեր կարծածին չափ մի դյուրին գործ չէ:

Տարագրված մարդիկ, կկարողանա՞ն այսօր իրենց վերադարձած տեղերի մեջ օթևան գտնել, տաք ապուր խմել... Արդարև կառավարությունը այս գործն աստիճանաբար իրականացնելու կողմնակից է, և պետք է աստիճանաբար իրականացնի... ավերված գյուղերը նորոգելը և դրանք կրկին բնակելի վիճակի վերածելը ոչ կառավարության, ոչ էլ ուրիշ որևէ մեկի կարողության սահմանների մեջ եղած բան է, որով նորոգության այս հարցը ժամանակին պետք է թողնել: Գալով անօրինականություններին, բռնաբարքների և զուլումի հարցին, որևէ մեկը, որևէ մի պաշտոնյա այս իմաստով հանցապարտ կդիտվի և եթե մենք դրա մասին արդեն դատաքննական մի թղթածրար ունենք, ես ձեզ վստահեցնում եմ, որ մենք նմաններին դատի պետք է հանձնենք և արդեն հանձնելու վրա ենք, և եթե կառավարության իմացությունից դուրս մնացած հանցագործներ կան, ինչպես ես նախապես ասացի, զանգատի ճանապարհը բոլորի համար բաց է: Գանգատվել ցանկացողները թող պաշտպանեն իրենց իրավունքը, սա անհրաժեշտ է:

Նմանները թող դիմեն մեզ և մենք կձեռնարկենք քննությունը, և եթե կասկածելիների պատասխանատվությունները հաստատվեն, նմաններին էլ առանց վարանելու դատի կտանք: Ես անելու մեկ այլ գործ չեմ տեսնում:

ՄԱՏԹԵՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ – Ես առաջարկում եմ, որ կառավարությունն այս ուղղությամբ քննություն սկսելը իր պարտականությունը համարի:

ՖԵԹՀԻ ԲԵՅ - Այս պարտականությունը կառավարությունը արդեն ստանձնել է ու քննություններ և ուսումնասիրություններ էլ ձեռնարկել է, սակայն ձեր առաջարկությունը միանգամից հնարավոր չէ իրագործել: Չնայած ամեն ինչ մեկ անգամից քանդելը դյուրին է, բայց վերահաստատելը դյուրին գործ չէ: Այսօր երկրի մեջ իշխանությունը միանգամից չենք կարող ուժաթափ անել, բայց աստիճանաբար պիտի անենք: Կուզեմ ձեզ վստահեցնել, որ կառավարությունը ոչ մեկի իրավունքները նվազագույն չափով իսկ ոտնակոխ անելու կողմնակից չէ: Բոլոր իրավունքները վերահաստատելու փափագողներ ենք: Ջուլում և բռնություն գործած պաշտոնյաներին չպետք է թողնենք, որ օրենքի ճիրաններից ազատվեն:

ՄԱՏԹԵՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ – Մեծ ակնկալություններով մեր շնորհակալությունն ենք հայտնում:

ՆԱԽԱԳԱՀ – Հաջորդ քննարկվելիք հարցը: Պատերազմի ժամանակ գործադիր իշխանության դեմ ելածների հանդեպ զինվորական մարմինների կողմից որդեգրված միջոցներին առնչվող օրենքը:

ՖԵԹՀԻ ԲԵՅ – Պարոններ, այս ժամանակավոր օրենքը մեր ներկա ժամանակներին անհարիր մի օրենք լինելուն, ես Բարձր ժողովից կխնդրեմ, որ որպես պարտադիր խնդիր, այս օրենքը ժամ առաջ վերացնենք, կարծում եմ ավելորդ ուրիշ խոսք ասելու հարկ չկա:

ՖՈՒԱՏ ԲԵՅ (ԵՐԵՍՓՈԽԱՆ) - Պարոններ, կառավարության այս օրենքը հետ կանչելու համար իմ հատուկ շնորհակալությունն եմ հայտնում, սակայն դրա նման և դրանից ավելի հոռի և մեր դարի ոգուն հակոտնյա ուրիշ շատ օրենքներ կան, խնդրում եմ, որ դրանք էլ մեկ առ մեկ հետ կանչվեն:

ՖԵԹՀԻ ԲԵՅ – Հետ կանչել չենք կարող, պետք է ժողովը որոշի դրանց վերացման մասին:

ԱՐԹԻՆ ՊՈՇԿԵՋԵՆՅԱՆ – Ես այս օրենքը քննարկման ենթարկելու մասին լուր չունեի... միայն ժխտելով այն, բավականանալիք մի օրենք չէ այն: Թահսին բեյի (երեսփոխան Թոկատից) ասածի պես, այն պետք է մերժվի պատճառաբանությամբ և փաստերով: Որքան հիշում եմ, Սահմանադրական նոր վարչակարգի որդեգրումից հետո ամեն ջանք կիրարկվեց, որպեսզի այդ օրենսդրային հիմնակառույցը կարելի եղածի չափով անթերի լիներ: Երկար փնտրտուքներից հետո իրավագետները կանգ առան ընդամենը մեկ հոդվածի վրա, և իբր թե Սուլթանի հեղինակությունը ամրապնդելու համար այդ հոդվածի մեջ մտցրեցին մի պայման, որով Սուլթանին իրավունք էր վերապահվում պետության անվտանգությունը վտանգող յուրաքանչյուր անձի: Սակայն ինչի արժանացավ 1915-ի ժամանակավոր օրենքը: Ոչ թե մի անձ երկրից աքսորելու, այլ հարկ եղած ժամանակ բնաջնջելու գյուղերը, գյուղաքաղաքները և քաղաքները, մեկ տեղից վերցնելու և մեկ այլ տեղ տեղափոխելու իրավասություն էր տրվել: Ո՞ւմ, մի հրամանատարի, որը կպատահեր՝ հարյուրապետ, կամ հազարապետ լիներ: Սրանց մեջ կային նաև շատ նորելուկներ, որոնք միանգամից դիրքի բարձրացում էին ստացել: Այժմ խորհեք, ինչպես կպատահի, որ 113-րդ հոդվածի դեմ մեղանչողները մի հոդվածով ենթարկվում էին մի սպայի հսկայական լիազորությանը... Անցյալում մեկ այլ օրենքի մի առաջարկություն ևս ծնվեց: Կարծեմ լքյալ գույքերի օրենքն էր... Դրա մերժումով էլ գործը չի ավարտվի: Սա մի դանակ է, մի կացին, որը շատ չարիքների պատճառ հանդիսացավ: Մենք այս դանակը, այս կացինը բթացնելով չենք կարող դարմանել բռնարարքների հասցրած վնասները: Սա սոսկալի մի դանակ է, որի վրա տակավին անմեղ արյունները կմնան, սա սոսկալի մի կացին է, որի քանդած, ոչնչացրած տների հաշիվը չկա: Այս երեք տողանոց հոդվածը ահավոր մի բան է:

Այժմ այդ օրենքը թե ըստ ձևի, թե ըստ էության ապօրինի համարելով, այն փաստորեն պետք է ժխտենք:

Այս ժխտման հետ միասին, հարկ է պատժել բոլոր նրանց, որոնք օրենքին ապավինելով երկիրը կործանեցին: Այս մեր պահանջը պետք է լինի: Նույնպես պետք է պատժել այն մարդկանց, որոնք այդ օրենքը հանցագործ դիտավորությամբ հղացան և գործադրեցին, գործը միայն զինաթափելով չի ավարտվի: Իմ ցանկությունն այս է: (Տեղից ձայներ՝ համաձայն ենք ձեզ հետ):

ՄՆՀՄԵԴ ԷՄԻՆ (ԵՐԵՍՓՈԽԱՆ ՏՐԱՊԻԶՈՆԻՑ) - Այո, այս օրենքի կիրարկումի ընթացքում երկրի մեջ մի կարգ ոճիրներ տեղի ունե-

ցան և սրանից առաջ Էմմաուելիտ էֆենդու հղած գրությունն էլ այս իրողությունից էր բխում... ես սրանից առաջ հայտարարել էի, որ մինչև կառավարությունը չխոստանա երկրի մեջ կատարված բոլոր հանցագործությունները հետաքննել և դրանց պատասխանատուներին պատժելու միջոցներ ձեռնարկել, ես այդ կառավարությանը վստահության քվե չպետք է տայի: Այո, իրոք երկրի մեջ իրագործված հանցագործությունները հետաքննության ենթարկելը և պատասխանատուներին պատժելն արդարության պահանջն է և թե այս ժողովը, և թե այս ազգն ամբողջովին համաձայն են այդ պահանջների հետ: Բայց հարցի քննարկման դեպքում, ես խնդրում եմ ձեզնից, եղած անօրինականությունը իր գործածից ավել ցույց չտաք: Արդարև, երբ անօրինականությունը չափազանցված ներկայացվի, նոր անօրինականություն գործած կլինի: Անօրինականությունը ինչ տարողություն որ ունենա, այն պետք է հիմնավորել և դրա վրա կանգ առնել:

Մի անարդարություն մեկ այլ անարդարությամբ բառնալու փորձը անընդունելի է: Ես Էմմաուելիտ էֆենդուն այստեղ չափազանցնողի դերի մեջ եմ տեսնում:

Այո, պարոններ, ես էլ եմ ասում, որ մեր պետական պաշտոնյաներ շատ ընտանիքների, կանանցով և երեխաներով ոչնչացրեցին և նրանց ունեցվածքը կողոպտեցին... որքան որ հայեր այսօր կպակասեն, եթե նկատի ունենանք իրենց բնակչության նախապատերազմյան 1200000 թիվը, որից պետք է պակասեցնել վերապրողների թիվը, նրանք բոլորն էլ ոչնչացվեցին և սպանվեցին և նրանց ունեցվածքն էլ ավարի մատնվեց: Այս մասին և ոչ մի կասկածանք: Ես էլ եմ փափագում և պահանջում եմ, որ հանցավորները պատժվեն:

Սա այսպես լինելով հանդերձ Էմմաուելիտ էֆենդու հայտարարությունը թե պարզապես հայ լինելու համար ոչնչացվեցին, ես չեմ կարող ընդունել և կարծում եմ, որ հայ պաշտոնակիցներս էլ չեն ընդունի:

ԱՐԹԻՆ ՊՈՇԿԵԶԵՆՅԱՆ – Ապա ինչո՞ւ ոչնչացվեցին:

ՄԵՀՄԵԴ ԷՄԻՆ – Պետք է բացատրեմ Արթին էֆենդի, հարցը նրանց հայ լինելու համար չէր ոչնչացվելը:

ՆԱԽԱԳԱՀ – Մեհմեդ էմին պեյ, խնդրում եմ ձեր խոսքերը պահել սահմանված կարգի սահմաններում:

ՀԱՍԱՆ ՖԵՀՄԻ (ԵՐԵՍՓՈԽԱՆ ՍԻՆՈՊԻՑ) – Այո, պարոնայք, հարցը կրկին չբորբոքեցնենք:

ՄԵՀՄԵԴ ԷՄԻՆ – Իմ բուն նպատակը Էմմաուելիտ էֆենդուն, հարցը չափազանցված կերպով ներկայացված լինելը բացահայտելն էր: Նա նույնպես չհիշեց արաբների դեմ կայացրած և մահապատիժ սահմանած դատավճիռները, ինչպես և թուրքերի դեմ եղած անօրինականությունները, որոնք չեն հիշվում նրա գրության մեջ:

ՆԱԽԱԳԱՀ – Նրանք, ովքեր այս ժամանակավոր օրենքի մասին եղած դատողությունները բավարար են համարում, թող բարձրացնեն ձեռքերը (տեղերից բարձրանում են ձեռքեր): Քավարար են: Քանի որ բավարար համարեցիք, ապա ներկայումս խնդրո առարկա է այդ օրենքի ընդունելը կամ մերժելը: Այս առնչությամբ կա այն մերժելու գրավոր առաջարկություն: Բայց նախ դրական քվեարկության միջոցին պետք է դիմեմ, որով ժամանակավոր օրենքի ընդունելի լինելը պետք է քվեարկվի: Եթե քվեները դեմ լինեն, օրենքը մերժված կհամարվի: Այս ժամանակավոր օրենքն ամ-

բողջովին ընդունելի համարողները թող հաճեն իրենց ձեռքերը բարձրացնել (տեղերից մեծամասնությունը՝ բացասական ձայներ)։ Չի ընդունվում։ Հետևաբար ժամանակավոր օրենքը համեմատական քվեարկությամբ մերժվում է, որով օրենքի առանձին բաժինների համար քննարկելու կարիք չկա։

ԱՐԹԻՆ ՊՈՇԿԵԶԵՆՅԱՆ – Բայց հիմնավորված փաստարկումների ձևով չմերժվեց։

ՖՈՒԱՏ ԲԵՅ - Ես մերժումը ձևակերպելու համար մի գրություն էի ձեզ ներկայացրել։

ՆԱԽԱԳԱՀ – Մերժման համար ձևակերպում չկա, կամ կընդունվի, կամ էլ կմերժվի։

ՖՈՒԱՏ ԲԵՅ – Բայց այստեղ մի խնդիր կա։ Այս օրենքը ինչ աստիճանի ընդունելի օրենք է։ Խորհրդարան մուտք գործեց իբրև գոյություն չունեցող օրենք, քանի որ Սահմանադրությանը հակասող օրենք է։

ՄԵՀՄԵԴ ԷՄԻՆ – Ճիշտ է, ճիշտ է, ավելի լավ կլիներ գոյություն չունենար։

ՆԱԽԱԳԱՀ – Եթե կարտոնեք, նշեմ առաջիկա նիստի օրակարգը. օրենսդրական առաջարկ զինվորականների գործած ոճիրների քննության և դատապարտման, պատերազմի ժամանակ տեղի ունեցած ապօրինությունները քննող մարմին ընտրելու մասին։

2. 18 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1918Թ.

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ՀՈՒՍԵՅԻՆ ՋԱՀԻԴ

ԱՐԹԻՆ ՊՈՇԿԵԶԵՆՅԱՆ – Պարոններ, գիտեք, որ զինադադար կնքվեց։ Հաշտություն բուրող արևն էլ իր գլուխը բարձրացրեց հորիզոնի վրա։ Շուտով հաղթած և պարտված ազգերը սեղանի շուրջը պետք է հավաքվեն։ Ես կասեմ, որ մենք դատարկ ձեռքերով չգնանք այդ սեղանի գլուխը։ Անհրաժեշտ է մեզ պաշտպանելու, մեր իրավունքները պահպանելու համար կարող ներկայացուցիչներով զինվել։ Բացահայտ խոսենք։ Պարոններ, դուք գիտեք, որ թուրք ազգը այսօր քաղաքական ասպարեզում և քաղաքակիրթ աշխարհի առջև գտնվում է ամբաստանյալի դիրքում (տեղից ձայներ՝ Ատված մի արասցե)։

Թույլ տվեք բացատրել։ Նախ լսեք ինձ, հետո առարկեք, նույնիսկ ծեծեք ինձ, եթե փափագում եք (տեղից ձայներ՝ երբեք), բայց ինձ լսեք։ Այսօր մենք դեմ հանդիման գտնվում ենք մի մեծ ոճրի, որը Օսմանյան պատմության ամենատխուր և ամենաարյունալի մեկ էջն է ներկայացնում։ Երկինքը և երկիր դղրդացնող այս վիթխարի ոճիրը, ինչպես գիտեք, հայկական կոտորածը, հայկական ողբերգությունն է։ Սրա համար թուրք ազգը ամբաստանվում է, սակայն բուն ամբաստանյալը թուրք ազգը չէ, այլ թուրք կառավարությունը, նախորդ վարչակազմը (տեղից ձայներ՝ բրավո)։ Բայց հարց պիտի տրվի, որ ազգն ի՞նչ է, կառավարությունը՝ ի՞նչ։ Մի՞թե երկուսն էլ նույն բանը չեն։ Այս ժողովի մեջ մի քանի անգամ ասվեց, որ ազգը և կառավարությունը նույն բանն են և ոչ միայն այս ժողովի մեջ, այլև Եվրոպայի ամենաակնառու մարդկանց բերաններից էլ նույն խոսքը ելավ։ Սակայն սա սխալ և թյուր մի արտահայտություն է։ Իրոք, ազգը՝ ուրիշ բան,

կառավարությունը՝ ուրիշ բան... ես պնդում եմ, որ թուրք ազգին ամբաստանելու տոն տվող այդ հսկա ոճիրը նախկին վարչակազմինն է, ավելի ճիշտ՝ չեթեական վարչության կողմից գործածված: Թուրքերի վզին կախված ամբաստանության այս շղթայի ամենաահավոր օղակը առնչվում է հայկական ողբերգությանը: Կենտրոնում գտնվող փոքրիկ մի խմբի կողմից կատարված արարք է սա: Հատուկ կազմակերպության նման միավորների գործակցությամբ այդ խմբակի գավառային ստորադաս կազմակերպությունը գլխավորեց այս ոճիրը, որի իրագործման համար գործի լծվեցին կուսակալներ, փոխկուսակալներ, շրջանային կառավարիչներ, գավառային ոստիկանության սպաներ, ոստիկանապետեր և շարքային ոստիկաններ:

Ես ճանաչում եմ շատ ազնիվ և բարեմիտ, ինչպես և մարդասեր, աստվածավախ և բարեգործ թուրքերի, որոնք այդ ողբերգության ընթացքում ինձ հետ արյունոտ արցունքներ են թափել և անիծել են չարագործներին (ձայներ տեղերից՝ բրավո): Սրանք միայն հասարակ մարդիկ է՞ին: Կան այնպիսի քաղաքներ, որոնք թուրքական հարազատ քաղաքներ են: Այս քաղաքների մահմեդական բնակչությունը ամբողջ երկրի ներսում կառավարության տված հրամանին դեմ ծառացավ ի փրկություն դժբախտ հայ հայրենակիցների, որոնք ենթարկվել էին տեղահանության զուլումին: Սակայն հաջողություն չունեցան այդ դաժան հրամանը հետ կանչելու, իրենց նպատակն իրականացնելու համար և ստիպված ենթարկվեցին կառավարության հրամանին, քանի որ այդ կառավարությունը սպառնաց իր տան առջև կախաղան հանել որևէ մահմեդականի, որն այդ հրամանի իրագործման դեմ հանդես կգար:

Ահա Կարինի բնակչությունը, կան նաև քաղաքներ, որոնց բնակչությունը ոչ միայն պատսպարեց հայ համաքաղաքացիներին, այլև այնտեղ հասած կեղեքված այլ հայ բեկորները: Ահա Կոնիան, ահա Կոնիայի հարազատ, բարեմիտ թուրք, իսկապես հարազատ՝ թուրք եղած կրոնասեր մահմեդականները:

ԱԼԻ ՀԱՅԴԱՐ ԲԵՅ (ԿՈՆԻԱՅԻՑ ԵՐԵՍՓՈԽԱՆ) – Շնորհակալ եմ, Արթին էֆենդի:

ԱՐԹԻՆ ՊՈՇԿԵՋԵՆՅԱՆ (շարունակելով) – Եղբայր, ասածս շնորհակալության արժանի մի բան չէ: Ճիշտը իրականությունը ասելը յուրաքանչյուր մարդու պարտականությունն է, մի քանի հրեշների և ճիվաղների գործած ոճրի համար մի ամբողջ ազգ ամբաստանելը կխորհեմ, որ չեթեամիտ մի վարմունք է:

Այլ որակավորում չեմ գտնում... բայց պետք է հարցնել, արդյոք ժողովրդից ոչ մեկը չմասնակցեց այս չարագործությանը: Այո, մի շարք տեղերում խուժանը և ցածր դասակարգի մարդիկ մասնակցեցին կառավարության կողմից ուղարկված չեթեների արած ոճրային գործողություններին:

Սրանք իրենց արարքների հետևանքները կշռադատելու և չափելու անկարող հասարակ մահկանացուներ էին:

Երբ ոչխարի հոտը մի ճահճի մեջ կգտնվի, դրա մեղավորները ոչխարնե՞րն են, թե ոչ նրանց առաջնորդող հովիվը: Ես պնդում եմ, որ եթե մի շարք տեղերում սրանք ոճիրներին մասնակցել են, ապա հանցանքը պետական պաշտոնյաներինն է:

Պարոններ, աշխարհի բոլոր կողմերում, նույնիսկ ամենաքաղաքակիրթ երկրների մեջ, ստորին դասակարգի մարդկանց սրտերի խորքում հրեշային մոլուցքներ են նիրհում: Այդ մոլուցքները թմբիրի մեջ են: Եթե ազդեցիկ մեկը չգա և չգրգռի, այդ կատաղությունը թմբիրի մեջ կմնա, բայց երբ անպատիվ մարդիկ գան և հրահրեն և վայրագ բնազդները արթնանան, այն ժամանակ խառնակությունները և սադրանքները թափ կառնեն և փոթորիկը կպայթի: Այդ մարդիկ ինչու՞ այդպիսի գրգռություններ կանեն, որովհետև բնականոն և խաղաղ պայմաններն իրենց գործին հարմար չէին: Առևտուր չէին կարող անել և շահել, քանի որ խաղաղ պայմանների մեջ շահելը միայն պատվավոր մարդկանց գործն է: Անպատիվ մարդիկ խառնակություն են փնտրում, ջուրը պղտորում են որպեսզի ձուկ որսան: Գայլը մառախոտային եղանակ է սիրում, այդ խուժանին գործի դնողներն էլ ահա այդ գայլերն են:

Աշխարհի մեջ դավանանքների տեսակներ կան, կրոնների և լեզուների այլազանություն կա և տակավին չգիտեմ ուրիշ ինչ տարբեր բաներ կան: Մինչև որ խուժանները չհասկանան, որ այս այլազանությունները պետք չէ արգելակեն մարդկանց մեջ եղբայրության զգացումների ծլարձակումը կամ մինչև որ մարդիկ ի վիճակի չլինեն ասելու համար, որ «իմ ազգը մարդկությունն է», մարդկությունը դատապարտված է այդ հրեշային մոլուցքների թիրախը լինելու: Մինչև որ սադրիչները նրանց չգրգռեն, այդպիսի խուժանները ի վիճակի չեն բռնարարքներ և հարձակումներ սարքել:

Կրկին անգամ ասում եմ, հայերի դեմ գործադրված նախճիրն արդյունքն է հատուկ կազմակերպության և չեթեական դրույթին սանձազերծած հրեշային մոլուցքների:

... Ես ճանաչում եմ մի կուսակալի, որը տոգորված լինելով Աստծո՝ մարդու շնորհած ամենայն վսեմ արժանիքներից մեկով, այսինքն գթասիրությամբ, նախընտրեց վերջնականորեն հրաժարվել պետական պաշտոնավարությունից, քան թե գործադրել այս ոճիրը: Ճանաչում եմ նաև մի ուրիշ փոխկուսակալի, որը հանրային ծառայության տեսակետից կարող է մրցել որևէ մեկի հետ: Նրանց անունները մեկ առ մեկ թվարկելու հարկ չկա, խոսքս երկարացնելու համար: Իրականություն է սակայն այն, որ նրանց թիվը որոշակի է և սահմանափակ, իսկ մյուս կողմից, մեծ է այն կուսակալների ու փոխկուսակալների թիվը, որոնք դաժանորեն վարվեցին:

ՄԵՀՄԵԴ ԷՄԻՆ – Դրանց թիվն էլ սահմանափակ է:

ԱՐԹԻՆ ՊՈՇԿԵԶԵՆՅԱՆ – Դրանց թիվը սահմանափակ չէ, ձեր իմացածից շատ ավելի է, եթե նրանց անունները ընթերցեմ, թերևս գիշեր լինի: Կարճ խոսքով պետական բոլոր պաշտոնյաները ոճրին չմասնակցեցին, սակայն նրանց մեջ կան շատ բռնակալներ և վեճը նրանց շուրջը պետք է գնա: Թուրքի անպարտ արձակվելը սրանց պատժելով պիտի պայմանավորվի: Այս է իմ գրավոր դիմումիս գլխավոր կետը: (Ձայներ տեղերից՝ ամփոփիր ասելիքդ):

Թույլ տվեք ասեմ: Ես ձեր գլուխը արդեն շատ չեմ ցավեցնի, սրանից հետո միայն մեկ անգամ ամբիոն կբարձրանամ:

ՄԵՀՄԵԴ ԷՄԻՆ – Խոսիր, Արթին էֆենդի, խոսիր, ինչ որ գիտես:

ԱՐԹԻՆ ՊՈՇԿԵԶԵՆՅԱՆ – Պարոններ, կա մի կառավարիչ, որը հպարտացել էր ասելով՝ «իմ շրջանս քար ու քանդ արեցի», երբ նրա կողքին գտնվող թուրքերը նրա երեսին քքել էին:

Ես այդ անձի ով լինելը չգիտեմ և այդ խոսքերը ես իմ ականջներով չեմ լսել: Ես միայն այսքանը գիտեմ, որ իսկական հայերի բնօրրան և հայրենիք, հայի բուն եղող մի քանի նահանգներ կան, որտեղ ներկայումս ոչ մեկ հայ, այլև քրիստոնյա մեկ ասորի կամ մեկ քաղդեացի գտնել հնարավոր չէ: Յոթանասուն, ութսուն հազար հայ ունեցող թշվառ նահանգի մեջ յոթանասուն, ութսուն հայ հնարավոր չէ գտնել: Իմ փափկասուն և անուշ հայրենիքս՝ Հալեպը թշվառ հայերին պատսպարան տալու և հյուրասիրություն անելու գործի մեջ չթերացավ:

... Օրերից մեկ օր, հայերի հետ ինչ-որ խնդիր ունեցող մի անհնձյալ, որը այդ տեղերով անցնելիս տեսել էր հայերի հանդեպ այս հոգատար վերաբերմունքը և այստեղ, մայրաքաղաք գալով տեղեկացրել էր: Սրա հիման վրա այդ գավառապետին իր աշխատանքից հանեցին և նրա փոխարեն բերեցին չափից ավելի չար մարդ ասած մի արարածի: Ես այդ մարդուն չեմ ճանաչում, բայց մեր ազնվասիրտ երկու պաշտոնակիցներին նա խոստովանել էր, որ կաթնակեր երեխաներից մինչև յոթանասուն, ութսուն տարեկան հայերի, այսինքքն 70-ից 80 հազար հայերի ոչնչացրել է: Այս խոսքի վրա այնտեղ գտնվող պետական մի քննիչ նրա երեսին թքել է: Ես նրա բերանից այս խոսքը չեմ լսել, և այդ մարդուն էլ չեմ ճանաչում, բայց այս փաստը հաստատ է, որ Դեյր Զորի և Ռաս-ուլ-Այնի միջև գտնվող տարածության մեջ գայլերի և թռչունների հոշոտումներից ավելացած հայերի ոսկորներից բլուրներ են առաջ եկել... Այժմ բացատրությունս հետևյալն է. «Մենք հաշտության սեղանին անպատրաստ չգնանք» ասեցինք, որպեսզի ապացուցենք թե մենք էլ օտար չենք արդարության գաղափարին և արդարադատության գործընթացին, պետք է որոշ քայլեր անել: Օրինակի համար պետք է բռնել այդ մարդկանց և շուտափույթ, բայց միայն դատավարությունից հետո և արդարադատության վրա հիմնված պատժել նրանց: Սրանք տակավին ազատ և համարձակ շրջում են, լսեցի որ մեկ-երկու հոգի ձերբակալվել են:

ՄԵՀՄԵԴ ԷՄԻՆ – Միայն մեկ անձ է ձերբակալվել:

ԱՐԹԻՆ ՊՈՇԿԵԶԵՆՅԱՆ – Ձերբակալվածներից մեկ կամ երկուսի լինելը չգիտեմ, բայց շատերի ազատ և համարձակ շրջելը գիտեմ: Հիմա կառավարությանը պետք չէ խորհուրդ տալ, որ սրանց դեմ անհանգստները իբրև անձնական դատախազ, դատարանին դիմեն: Այդպիսի անձնական դատախազներ որտեղ կարելի է գտնել: Դրանցից շատերի ընտանիքները վերացել են, տղամարդիկ, կանայք և երեխաները ամբողջովին ոչնչացվել են: Կառավարությունը հատուկ պաշտոնյաներ ունի, դատախազներ ունի, որոնց պարտականությունն է փնտրել և հավաքել հանցագործության փաստերը և հանցագործներին բռնելով նրանց դատի տալ... Այժմ պարոններ, անհրաժեշտ է, որ այս հանցագործություններին մասնակցող պաշտոնյաները պատժվեն: Հաշտության ժողովը հավաքվելու վրա է:

Ինչպես ցույց տվեցի, այնտեղ դատարկ ձեռքերով չգնանք:

ՕՍՄԱՆ ՍԱԻԲ ԲԵՅ (ՊՈԼՍԻՑ ԵՐԵՍՓՈԽԱՆ) - Այդ ժողովին Վանից եկող մահմեդականներ էլ պիտի գնան: Արդեն բավական է:

ԱՐԹԻՆ ՊՈՇԿԵԶԵՆՅԱՆ – Միայն այս հրեշներին պատժելով գործը չի վերջանա: Նրանց թիկունքում կանգնած մարդկանցից ստորին և սրիկա անձերն էլ պետք է պատժվեն և վնաս կրողներին հատուցում պետք է տալ:

Գույքի պես այստեղ այնտեղ բաժանված անարատ և գեղեցիկ կույսեր կան, նույնիսկ նրանցից ոմանք այստեղ՝ Պոլսում մի խումբ մարդկանց մոտ են գտնվում (դահլիճում աղմուկ է բարձրանում): Այդ անմեղ կույսերը տակավին սրա, նրա մոտ շարունակում են թաքցվել: (Դահլիճում իրարանցում է սկսվում):

ԻՀՍԱՆ ՔԵՅ (ԵՐԵՍՓՈԽԱՆ ՍԱՐԴԻՆԻՑ) – Վանից տարված մահմեդական կանանց մոռացա՞ր, Աստծո մարդ: Ամոթ քեզ (դահլիճում իրարանցում և աղմուկ):

ԱՐԹԻՆ ՊՈՇԿԵԶԵՆՅԱՆ (շարունակելով) – Այս մարդկանց պատիժը չենք պահանջում: Նրանք, ովքեր կույս աղջիկներին թաքցնում են իրենց մոտ, անամոթաբար վայելում են որոշակի պաշտպանություն: Չեզ բոլորին մարդասիրության և արդարամտության ոգու կոչ եմ անում:

ԻԼՅԱՍ ՍԱՍԻ ԷՖԵՆԴԻ (ԵՐԵՍՓՈԽԱՆ ՄՈՒՇԻՑ) – Օրակարգից դուրս եք խոսում, եթե այս նյութի մասին պետք է խոսենք, ապա խորհրդարանի ծրագրային խնդիրը չի կարող կարգավորվել:

ԱՐԹԻՆ ՊՈՇԿԵԶԵՆՅԱՆ (շարունակելով) – Այստեղ խորհրդարանի պատվանդանն է: Այստեղ ոչ Մուշն է, ոչ էլ Բիթլիսը (դահլիճում աղմուկ է): Փառք Աստծո, արդարության արևը ծագեց: Պարոններ, այստեղ «Հոմ սքուլ» անունով վսեմ անգլիական մի դպրոց կա: Այդտեղի շրջանավարտ մի խումբ կույսեր, կրթված աղջիկներ, այսօր մի խումբ քրդերի, խուժանի մարդկանց գրկերում պառկած, նրանց հաճույքներին զոհ են գնում: Նրանք տակավին այդ վիճակի մեջ են գտնվում: Այս պատճառով ով լաց չի լինի:

ԻԼՅԱՍ ՍԱՍԻ – Իրականությունը մի քողարկիր: Մենք էլ ենք անիծում այդպիսի արարքներ կատարողներին:

ԱՐԹԻՆ ՊՈՇԿԵԶԵՆՅԱՆ – Ես այդ անողներին չեմ ասում թե քուրք ազգն է:

ԻԼՅԱՍ ՍԱՍԻ – Իրականությունը մի քողարկիր: Այսօր իմ հայրենիքը արյան և թշվառության մեջ խեղդողը ահա քո այդ ընկեր կոչված Վանի երեսփոխանն է: Դրանց մասին խոսիր:

ԱՐԹԻՆ ՊՈՇԿԵԶԵՆՅԱՆ – Նրան ինչու՞ դատի չտվեցին: Նրա հանդեպ դատաստան պետք է լիներ:

ԻԼՅԱՍ ՍԱՍԻ – Այս իրողություններն էլ բացահայտիր, իրականությունն արևի պես արտացոլիր: Ձինված կարգով Ռուսաստանին օգնության հասնող երեսփոխանները...

ԱՐԹԻՆ ՊՈՇԿԵԶԵՆՅԱՆ – Այս հսկա 600 տարեկան պետությունը ոչնչացնողները հայտնի են, թող Աստված պատժի հայրենիքի դավաճաններին:

ՀԱՍԱՆ ՖԵՀՄԻ (ԵՐԵՍՓՈԽԱՆ ՍԻՆՈՊԻՑ) – Պարոն նախագահ, պետք է խոսեմ օրակարգի մասին:

ՆԱԽԱԳԱՀ – Եթե աղմուկը այսպես շարունակվի, ստիպված պետք է լինեմ նիստը դադարեցնել:

ԱՐԹԻՆ ՊՈՇԿԵԶԵՆՅԱՆ (շարունակելով) – Իմ գրավոր դիմումը հետևյալ նպատակներն է հետապնդում: Առաջին. հանցագործ պաշտոնյաների և անհատների պատժամիջոցների հաստատումը: Երկրորդ. սրա և նրա մոտ գտնվող հավաշտակված և ստրկացված կանանց և որբերի հավաքելը: Երրորդ. նրանց սնուցման կազմակերպումը կառավարության կող-

միջ: Չորրորդ. նրանց գույքի և ունեցվածքի վերադարձնելը և հինգերորդ՝ նրանց կրած վնասների հատուցումը:

3. 9 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1918Թ.

Նիստը նախագահում էր խորհրդարանական ժողովի փոխնախագահ Հուսեյին Ջահիքը: Նա պատգամավորներին տեղյակ պահեց օրերս մահացած Մուշից երեսփոխան Գեղամ Տեր-Կարապետյանի կողմից գրված հարցապնդման մասին, որը ժողովին էր ներկայացրել Սեբաստիայից երեսփոխան Տիգրան Պարսամյանը:

ՏԻԳՐԱՆ ՊԱՐՍԱՄՅԱՆ – Պարոն նախագահ, պահանջում եմ ընթերցել:

ՆԱԽԱԳԱՀ – Ես կներկայացնեմ համառոտ կերպով:

ՏԻԳՐԱՆ ՊԱՐՍԱՄՅԱՆ – Ոչ, պարոն, մեր ընդունված կարգի համաձայն պետք է ընթերցել:

ՆԱԽԱԳԱՀ – Պարոն, ինչպես հիմա ասացի, մենք հաստատուն ընդունված կարգ չունենք: Ընդհանուր ժողովին համառոտ կարգով պարունակությունը կհայտնեմ. հայերի գույքերը գրավվել են, նրանց բնակավայրերում ուրիշներ են տեղավորվել, այս կետը բողոքի առիթ է տվել, հարց է տրվում թե կառավարությունը ինչ է մտածում այս մասին: Այս հարցապնդումն անհրաժեշտ է ուղարկել համապատասխան նախարարություն:

ՏԻԳՐԱՆ ՊԱՐՍԱՄՅԱՆ – Այս հարցապնդումն արտասովոր է և ամեն պարագայում պետք է ընթերցվի:

ՆԱԽԱԳԱՀ – Լավ, կարդացեք, պարոն:

ՏԻԳՐԱՆ ՊԱՐՍԱՄՅԱՆ – Կարդում է հարցապնդումը:

«Երեսփոխանական ժողովի Վսեմ նախագահությանը.

Սրանից առաջ թուրք և օսմանցի կառավարական պաշտոնյաները և լուսամիտ մտավորականները կրկին անգամ իրենց վշտակցությունը հայտնեցին և տակավին հայտնում են համաշխարհային այս պատերազմի ժամանակ մեր երկրում կատարված ավերումների և հատկապես անմեղ հայ ազգի դեմ իրագործված զուլումների համար: Դրանից հետո տեղի ունեցող խորհրդարանային ժողովների ընթացքում մեր մեծարգո ընկերներից ոմանք մեզ հետ կատարված այս մեծ աղետի վերաբերյալ իրենց հարցապնդումների մեջ կոտորված հայերի թիվը մեկ միլիոն ցույց տվեցին, երբ այդ մասին վիճաբանությունները սկսվեցին: Սակայն մահմեդական այլ մեծարգո ընկերներ պնդեցին, որ նահատակների թիվը հազիվ 100 հազարի կհասնի: Իմ հիվանդության շարունակվելու պատճառով հարցապնդումիս հողումը դժբախտաբար հետաձգվում էր: Ես կարծում եմ, որ բոլորի վկայության պես, շեշտվող բուն հարցը նահատակներին դեմ լինելով հանդերձ, անմեղների կյանքի դեմ գործված ոճիրն է. և տարակուսանքից դուրս է, որ բոլոր գանգատները այս անիրավության դեմ են, այլապես, մարդ կարող է վստահ լինել, որ միայն Ճանիկի (Սամսոն), արևելյան Գարահիսարի, Տրապիզոնի և Կերասունի մեջ ոչնչացված հայերի թիվը 100 հազարի է հասնում:

Այո, կրկնում եմ. հարցը կոտորածի տարողությունը չէ, այլ պարզապես օրենքի և խղճի ձայնին ներհակ եղող անարդարությունը: Զոր

օրինակ. ինչու՞ անմեղ և որևէ ձևով պատասխանատու չհանդիսացող մարդիկ կոտորվեցին: Ջինվոր ունեցող ընտանիքներն ըստ օրենքի չպետք է աքսորվեին, բայց եկեք տեսեք, որ հայկական նահանգների մեջ հայ ընտանիք չմնաց: Ինչպես պատահեց, որ արևելյան նահանգներում, այսինքն Կարինի, Սեբաստիայի, Խարբերդի, Վանի, Տիգրանակերտի նահանգների և Ուրֆա գավառի մեջ բնակվող բոլոր հայերին տեղահան անելով, բնաջնջելուն հավասար ջիհատ հայտարարվեց և մեկ ու կես միլիոնից ավելի հայեր ցիրուցան եղան, կոտորվեցին ու ոչնչացան: Իմ ընտրական տարածքում գտնվող Մուշի, Բիթլիսի և դրանց ենթակա գավառներում գործադրվեցին պատմության կողմից մինչև այդ չարձանագրված վայրագություններ և բռնություններ:

Մուշ գյուղաքաղաքում թե տեղացի և թե դրսից ու շրջակայքից բերված անմեղ հայերը համատեղ հրանոթային ռմբակոծման ենթարկվեցին, այրվեցին և բնաջնջվեցին, մնացածներն էլ այդ կողմերում ոչնչացվեցին: Գյուղաքաղաքից զատ, Մշո դաշտի գյուղերից շատերը նույնպես հրանոթածգության մատնվեցին և հարձակումների ենթարկվելով ցիրուցան եղան:

Այս ընդհանուր ջարդի հետևանքով այդ շրջանի բոլոր հայերի շարժական և անշարժ գույքը և ազգային ու կրոնական տեսակետից նվիրական համարվող վանքերի և նման կառույցների ու եկեղեցիների մեջ պահված շատ հնավանդ առարկաներ քանդվեցին և ոչնչացվեցին և բոլոր արժեքավոր իրերը կողոպտվեցին, և այնտեղ բնակվող վանականները սպանվեցին ու ոչնչացվեցին: Այս ահավոր բռնարարքներից հետո կենդանի մնացած, կոտորակված թվով զավակներին բռնի կերպով կրոնափոխ անելով այստեղ-այնտեղ ցրեցին:

Նրանց ինչ աստիճանի թշվառության մեջ գտնվելը բոլորիս հայտնի է: Արևելքից գաղթած եկվորների համար հատկացված միլիոններից հայերին ոչ մի բաժին չհանվեց, այլ նաև խոսվում է, որ նյութական օգնությամբ դրսից բերված գաղթականներին ուղարկել են հայերի բնակված վայրերը, նրանց այնտեղ տեղավորելու համար:

Դարեր ի վեր հայ ազգին պատկանող և օսմանյան արքաների կողմից հրովարտակային առանձնաշնորհներով վավերացված լինելով, իրենց նվիրական հայրենիքը հանդիսացող Արևելյան նահանգներում գտնվող կալվածքների և հողերի վրա ըստ վերջին զրույցների, կառավարական պաշտոնյաների կողմից ուրիշ մարդկանց են տեղավորում: Իրենց հարազատ հայրենիքի մեջ կատարված ընդհանուր ջարդից ճողոպրած և զանազան տեսակի թշվառությունների մեջ իրենց գոյությունը քարշ տվող հայ ազգի մնացորդներին և հայ անհատներին պատկանող կալվածքները և հողերն իրենց հին տերերից խլելու և կողոպտելու հետամուտ բոլոր ձեռնարկների դեմ իմ բոլոր ուժով բողոքում եմ և հարցնում եմ կառավարությանը՝ թե ինչն է նրա մտադրությունը այս հարցի կապակցությամբ:

Մշո երեսփոխան՝ Գեղամ Տեր-Կարապետյան»:

4. 12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1918Թ.

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ՀԱԼԻԼ

ՄԱՏԹԵՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ (ԵՐԵՍՓՈԽԱՆ ՍԻՍ-ԳՈՉԱՆԻՑ) – Պարոնայք, գիտենք, որ խնդրո առարկա նյութը այսօր ողջ մարդկությանը զբաղեցնող նյութերից բոլորից կարևորն է: Այս կապակցությամբ ժողովից պիտի խնդրեմ, որ այս բեմից արտասանված խոսքերը զգուշությամբ և շրջահայացորեն ձևակերպվեն:

Մեծապատիվ մարմնից էլ պիտի խնդրեմ, որ ցանկանա համբերությամբ և չափավոր դիտի այս բոլորը:

Ինչպես հայտնի է ազգությունների հարցը երկար ժամանակ զբաղեցրել է այս երկրին և շատ դեպքերի էլ պատճառ է դարձել: Ես էլ իբրև հայ ազգին պատկանող մեկը, ցանկանում եմ կրկնել, որ իմ արտասանած խոսքերը չպետք է դիտել որպես ազգի ունեցած վշտից կամ վրեժխնդրությունից բխած և թուրքերին ուղղված անարգանք և թշնամություն: Ինչպես տեղյակ եք, այս վիրավոր ազգը վերջին ժամանակներս ստացած վերքերի պատճառով իր մահվան անկողնու մեջ ցավերից գալարվելիս ակնկալում է, որ իր հարազատ զավակները իրենց հանճրածանոթ դատը ինքնավստահ կերպով կպաշտպանեն: Այս իսկ պատճառով իմ խոսքերը ընդունեցեք իբրև մարդկային զգացումներից բխող խոսքեր: Ձեզ վստահեցնում եմ, որ այդ իմաստով պիտի խոսեմ:

ՆԱԽԱԳԱՀ – Ներեցեք, գրավոր դիմումի մեջ հիշատակվող հարցաքննությունը վերաբերում է Չաթալճայի և Էտիրնեի տեղահանությանը:

ՄԱՏԹԵՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ – Ոչ, ընդհանուրին է վերաբերում: Պարոնայք, իբրև հրատապ խնդիր, դժբախտաբար ես էլ պետք է արտահայտվեմ այս ոճիրների շղթայի մի շարք փուլերի մասին:

Այն պահին, երբ այս օրենքը՝ տեղահանությա՞ն օրենքը, ջարդի՞ օրենքը հորինվեց, այդ նույն պահին ձեռնարկվեցին այդ ցավագին գործողությունները: Այստեղից հայ ազգի բոլոր մտավորականներին հավաքելով Անատոլիայի խորքերը տարան և այնտեղ ոչնչացրեցին: Համառոտ բացատրեմ: Անատոլիայի նահանգներում բնակվող հայերին դեպի հարավ ուղարկելու պատրվակով Անատոլիայի բոլոր ճանապարհների վրա, զեփյուռներով հարուստ հովիտների մեջ բրասի պես կտրվեցին: Այդ վայրերը գերեզմանոց դարձան:

Այո, պարոնայք, մայրերին, եղբայրներին սպանեցին, քույրերին, մայրերին առևանգեցին, մայրիկ գոչող, լացող, կաթ ուտող երեխաներին Սև ծովի ափերը, Եփրատ և Տիգրիս գետերի հոսանքների մեջ լցնելով, վայրագություններ կատարեցին, որոնք ներողների չարագործությունների վրա ստվեր գցեցին:

Պարոնայք, սրանք հազար ու մի գիշերների պատմվածքները չեն: Անտարակույս նմանապես պատահած իրադարձություններ են, որոնց համար այս մեծաշուք մարմինը պետք է խղճա և լաց պիտի լինի: Մի ազգի հնադարյան կրոնաշունչ հաստատությունները և նրանց պարունակությունը ոչնչացվեցին, պղծվեցին և ավարի մատնվեցին: Ազգային առաքինությունների հետ չկապակցված այս ոչնչացումները անտեղի իրագործվեցին: Ազգային հարստությունը ոչնչացվեց:

Երբ այս գործողությունները ծրագրավորված կերպով այսպես կատարվում էին ես Աղանայում էի գտնվում: Նույնիսկ իմ ընտանեկան պարագաներում, եղբորս աքսորեցին: Պարոն նախագահը գիտի, այդ ժամանակ իրեն էի դիմել: Իմ՝ աքսորի ծանուցագիրը, այսինքն՝ մահավճիռս էլ էր

եկել: Ընտանիքիս հետ աքսորվելու վրա էի, երբ վերջում միջնորդություն եղավ: Կենտրոնական մարմնի՝ այսինքն կառավարության հետ հանդիպեցին: Երեսփոխանիներին բացառելը որոշելով, մեզ ազատ արձակեցին: Վերջապես ճանապարհ ընկանք: Իմացեք, թե այս ճանապարհների վրա ինչերի ականատես եղա: Սակայն վստահ եղեք, որ ես բոլորից քիչը տեսա: Այդ ճանապարհների վրա, ամեն մացառի տակ հանդիպում էի մահվան ճիրանների մեջ գալարվող մի երեխայի կամ մի ծերունու: Մահվան բազմազան տեսակներ այնտեղ տեսա: Տեսնում էի, թե ինչպես ոստիկանների մտրակները մայրերին իրենց զավակներից, կանանց իրենց երեխաներից կանջատեին: Կսկիծներով լի այս տեսարանները դիտելով Պոլիս հասա: Այնպիսի մի հոգեվիճակ ունեի, որը անկարող եմ նկարագրել:

Մահաց ոգի, մարված մորալ: Մեր ներկայիս մեծապատիվ նախագահին դիմելով, ասեցի՝ մեզ մարդկությանը ներկայանալու երեսատեղ չմնաց, սրանից հետո երեսփոխան մնալն ի՞նչ իմաստ ունի, հրաժարվել եմ ցանկանում: Հուզվեց և իրադրությունը անպատշաճ համարեց և ոչ հարմար գտավ իմ հրաժարականը: Ասաց, դյուռն լավ նշանակություն չեն տա, շարունակեք: Այս ձևով մնացի. Կարճ խոսքով, պարոններ, երկրի բոլոր կողմերում կատարվեց մի ազգ բնաջնջելու տարողություն ունեցող այս ոճիրը: Հանցագործները որքա՞ն են: Քի՞չ են, շա՞տ են, ես նրանց համար քանակ և սահման չպետք է որոշեմ, միայն խնդրի այն կարևոր կետի մասին կարծիքս պետք է հայտնեմ: Ազգերը իրենց գերիշխանությունը արտահայտելու համար գործադիր մարմին են ընտրում և իշխանությունը նրան են հանձնում: Այդ մարմինն ազգի անունից գործելով, լավ կամ վատ իր հեղինակությունն է գործադրում: Ահա այս տեսակետից է, որ այս երկրի մեջ կիրարկվող իշխանությունը թուրքական իշխանություն է: Չնայած որոշմամբ իրագործված այս զուլումների դեմ եղող թուրքեր կարող էին լինել, սակայն այդ զուլումները թուրքական ծագմամբ են եղել:

ՄԵՀՄԵԴ ԷՄԻՆ – Քավ լիցի, քավ լիցի, հանուն զուլումի են եղել, զուլում կատարողներին կանիծենք:

ՍԱՏԹԵՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ – Թույլ տվեք, Էմին էֆենդի: Այս չարագործներն ասում են երեքից հինգն են, որը ուղեղիս չի հասնում, այս գործը երեքից հինգ հոգի չեն կարող կատարել: Բայց գանք խնդրի հիմնական կետին: Մի ազգի համար այս նվիրական իրավունքը տնօրինող մարդկանց մոտ հարկ է փնտրել գովելի արժանիքներ: Խոհեմություն և չափազանց մեծ զգուշություն պահանջող որոշումներ կայացնելու հարցում: Այս վիճակն ազգի համար օրինակ կարող է ծառայել: Իրոք, այս արարքների հեղինակները պոռալով ասում էին, թե թուրք տիրապետության վրա նստած էինք շարժվում, մեր ուժը բխում է թուրքական սվիններից: Սրանք ուրանալ չենք կարող և դժբախտաբար պետք է ասեմ, որ այս բաները կատարողները թուրք ազգին պատկանող անհատներ են: Բայց թե քանի՞ հոգի, այս արդարությունը մեջտեղ պետք է հանի: Վերջապես, հանրային կարծիքը և զոհված ազգերը այս բոլորի հաշիվը պիտի պահանջի թուրքերից և թուրքերը այդ հաշիվը պետք է տան: Չարատավորված ձեռքեր ունեցող թուրքերը պնդում են և այս հաշվետոմարը ցույց են տալիս և առանց իրենց անձը կամ դիրքը նկատի ունենալու, պատժվելու արժանի եղողներին պատժում են, արդարադատություն են հանդես բերում: Սրանցի հետո միայն աշխարհին կարող են ներկայացնել իրականությունը:

ՄԵՀՄԵԴ ԷՄԻՆ – Այդ բոլորն արդարակորով կառավարությունից ենք սպասում:

ՍԱՏԹԵՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ – Պարոն, բացատրեմ միտքս: Դուք զոհեր եք, թուրքերն էլ զոհեր են ասում, բայց թուրքերի զոհված լինելու իրողությունը մի տիրող ազգի զոհաբերման իրողություն է... Հայերը անասունների հոտերի նման քշվեցին և սպանվեցին: Անշուշտ, որ թուրքերի զոհվելն էլ ընդունում եմ, միայն թե ձևերի մի տարբերություն կա: Կա վեհորեն մեռնելու և կա ցվաստացուցիչ մահվան եղանակ: Թուրքերն իրենց սահմաններին մոտ հերոսաբար մեռան, բայց հայերը ստորացուցիչ ձևով սպանվեցին:

ՔՅԱԶՄ ԲԵՅ (ԵՐԵՍՓՈԽԱՆ ՊԻԿԱՅԻՑ) – Եղերգություն միք անի, մի դարման, մի դարման ասեք:

ՍԱՏԹԵՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ – Այո, պարոններ, այս առթիվ հանուն թուրքերի շատ ոճիրներ գործվեցին, այդ էլ գիտեմ: Ճանաչում եմ նաև առանձին անձանց, որոնք այս ոճիրների շնորհիվ միլիոններ շահեցին, որոնք շատերին սպանեցին, Աղանա գալով, անձամբ իմ երեսփոխանության դեմ սպառնացին, ոտքերիս օճառ սահեցրին, միլիոններ շահեցին, բայց սրանք մի շարք անձնական խնդիրներ են: Ամենակարևոր հարցը ըստ իս, թուրք ազգի անունով այս հաշիվը պահանջելն է մեր այս մեծահարգ ժողովի խողովակով: Ես սիրտս կբացեմ, հոգեպես էլ իրոք համոզված եմ, որ թուրքերի մեջ ոճիրներին մեղսակից չդարձած հատվածներ կան: Բայց ո՞վ ումից պետք է զանազանվի: Հայտնի բան է, որ այս երկրի մեջ Օսմանյան թուրք Մահիկի դրոշն է ծածանվում: Այդ դրոշի փառքն ընդունելը չի նշանակում այս ցավալի արարքների պատասխանատվությունից խուսափել:

ՄԵՀՄԵԴ ԷՄԻՆ – Օսմանականության Մահիկը:

ՍԱՏԹԵՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ – Մեր՝ իբրև ազգի ներկայացուցիչների, աշխարհին տեղյակ պահելիս պետք է, որ մենք այս ոճիրների հեղինակներին այս ձևով պատժելու ենք, եթե նույնիսկ նրանց թիվը 100 հազար լինի: Այս պայմանների ներքո, կարծում եմ, որ կարելի կլինի ընդհանուր ներում շնորհել: Բոլորից անվթար և ճիշտ ճանապարհն էլ, կխորհեմ, այս է: Վստահ եղեք, ես այս խոսքերը անկեղծ սրտով եմ ասում...

Meclisi Mebusan Zabit Ceridesi (Խորհրդարանի գործառնությունների արձանագրություններ), Devre 3 (ընտրական երրորդ ճատաշրջան), İçtima Senesi 5 (հինգերորդ ճատաշրջան), cilt 1 (առաջին հատոր), Onbirinci Inikad (11-րդ նիստ), 4 նոյեմբերի 1334 (1918), էջ 95, 100, 109, 18 նոյեմբերի 1334 (1918), էջ 143, 11 դեկտեմբերի 1918, էջ 285-301, 13 դեկտեմբերի 1918, էջ 322. Վահագն Տատրյան, Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով, Երևան, 1995, էջ 7-102:

V. ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ «ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ ՓԱՓԻՇԱՀԻ 1335Թ. (1919) ՄԱՐՏԻ 8-Ի ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐԱՍԱՆՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նախագահ՝ գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշա,
անդամներ՝ գեներալ-մայոր Զեքի փաշա,
գեներալ-մայոր Մուստաֆա փաշա,
գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա,
գնդապետ Ռեջեբ Ֆերդի բեյ,
Գերագույն դատախազ՝ Մուստաֆա Նազըմ բեյ:

ԱՌԱՋԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
1335թ. (1919), ապրիլի 27, երկուշաբթի

ԴԱՏԻ ՏՐՎԱԾ ՆԵՐԿԱ ԳՏՆՎՈՂ ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ – Սայիդ Հալիմ փաշա, Խալիլ բեյ, Ահմեդ Նեսիմի բեյ, Իբրահիմ բեյ, [Քյուչյուկ] Թալաաթ բեյ, Ռիզա բեյ, Միդհատ Շյուքրի բեյ, Զիյա Գյոքալփի բեյ, Քեմալ բեյ, Ջեվադ բեյ, Աքիֆ բեյ:

ՀԵՌԱԿԱ ԿԱՐԳՈՎ ԴԱՏԻ ՏՐՎԱԾ ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ – Թալաաթ էֆենդի, Էնվեր էֆենդի, Ջեմալ էֆենդի, դոկտ. Նազըմ էֆենդի, դոկտ. Բեհաէդդին Շաքիր էֆենդի, դոկտ. Ռուզուհի էֆենդի, Ազիզ էֆենդի:

ՆԱԽԱԳԱՀ – Փաստաբան էֆենդիներ, ռազմական ատյաններում, ավելի ճիշտ ռազմական արտակարգ ատյաններում մեղադրյալների պաշտպանությունը դյուրացնելու կամ անհրաժեշտ դեպքում նրանց օժանդակելու համար օրենքը երբևէ չի ստիպել և ընդհանրապես անհրաժեշտ էլ չի եղել դատավարության ընթացքում դատապաշտպանների ներկայությունը: Այնպես որ, այս դատավարության բացարձակ արդար և անշահախնդիր ընթացքը վկայակոչելու համար ռազմական ատյանը թույլատրեց, որ այն ընթանա դռնբաց: Այնուհանդերձ, ստիպված ենք ձեզ զգուշացնելու, որ այս թույլտվությունը չշարաշահեք և մինչև հարցաքննության ավարտը հակառակ օրենքի որևէ միջամտություն չկատարեք և բացարձակ լուռ մնալով՝ ունկնդրեք:

(*Դիմելով դատական քարտուղարին*)

- Խնդրեմ կարդացեք մեղադրական եզրակացությունը:

(*Մեղադրական եզրակացությունն ընթերցում է դատական քարտուղար Շեֆիք բեյը*):

ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մանրամասն քննարկեցինք հարցաքննության վերաբերող փաստաթղթեր, ինչպես նաև ռազմական ատյանի գլխավոր դատախազության վերոհիշյալ որոշումը, որը վերաբերում է լուծարքի ենթարկված «Միություն

և առաջադիմություն» կուսակցության նախագահ՝ Սայիդ Հալիմ փաշայի, Մեջլիսի գլխավոր խորհրդի անդամներ Թալաաթի, Ջեմալի, Իբրահիմի, Շյուքրիի, Խալիլի, Ահմեդ Նեսիմիի, կուսակցության գլխավոր քարտուղար Միդհատ Շյուքրիի, կենտրոնական կոմիտեի անդամներ՝ Ստամբուլի պատգամավոր Քեմալի, Զիյա Գյոքալփի, դոկտ. Ռուզուհիի, Քյուչյուկ Թալաաթի, ինչպես նաև նույն կոմիտեի անդամներ և «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի ղեկավարներ դոկտ. Բեհաէդդին Շաքիրի, դոկտ. Նազըմի, Ռիզայի և նույն կազմակերպության գործադիր կոմիտեի անդամներ՝ նախկին հասարակական անվտանգության տնօրեն Ազիզ բեյի և մայրաքաղաքի նախկին պարետ Ջևադ բեյի դատաքննությանը:

Դատական փաստաթղթերը վկայում են, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն միաժամանակ բաղկացած է եղել երկու հատուկ կազմակերպություններից, որոնցից մեկը գործել է հրապարակայնորեն՝ կուսակցության ներքին կանոնադրության և ծրագրի համաձայն, իսկ մյուսը գործել է ընդհատակյա և գաղտնի հրահանգներով: Փաստերը, որոնք հաստատում են այդ կոմիտեի վերոհիշյալ ազդեցիկ ղեկավարների պատասխանատվությունը, վկայում են, որ կոմիտեն, նրա իրավական դեմքը, մեղադրվում է օրինազանցության, չարաշահումների և մի շարք կոտորածներ կատարելու հանցանքով: Ստորև բերված փաստարկները լիովին ապացուցում են նրանց գործադրած հանցագործությունների չափը:

Անցած 1330 (1914) թվականի հուլիսին կուսակցության ազդեցիկ ղեկավարների, այդ թվում ներկայումս զինվորական շարքերից վտարված, փախուստի մեջ գտնվող Էնվերի, Ջեմալի, Թալաաթի և մյուս գործընկերների մասնակցությամբ, տեղի ունեցած խորհրդակցությունից անմիջապես հետո, երբ պատերազմ հայտարարվեց, նրանք ձգտեցին օգտագործել այն առիթը, որ Եվրոպան զբաղված է համաշխարհային պատերազմով և աշխատեցին ահաբեկությամբ, բռնի ուժով լուծել այնպիսի հարցեր, որոնք կարելի է հարթել հանդարտորեն, արդար և առողջ բանականությամբ: Այդպիսով, իրենց ճակատագրական գործունեությամբ ստեղծեցին անվերջ խռովահույզ վիճակ՝ խիստ ծանրացնելով ժողովրդի կացությունը:

Արտաքուստ նրանք այնպես էին ձևացնում, թե իբր պայքարում են ազգային շահերի համար, մինչդեռ իրականում հետապնդում էին միայն իրենց անձնական շահը և պատերազմի հետ կապված ծանր հոգսեր ստեղծելով՝ աշխատում էին լռեցնել ժողովրդին: Իրենց նենգ դիտավորությունները իրականացնելու համար նրանք ի վերջո կարողացան երկիրը ներքաշել համաշխարհային պատերազմի մեջ: Ռազմական գործողությունների ընթացքում, իրենց գաղտնի ծրագրերն իրականացնելու համար, սկսեցին աշխուժացնել գաղտնի կոմիտեների գործունեությունը: Այսպես, հանցագործներին բանտերից ազատ արձակելով, ստեղծվեց «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ն, որն իր գաղտնի հրամաններն ու հրահանգները ստանում էր Ստամբուլում ստեղծված հատուկ կոմիտեից, որի կազմի մեջ մտնում էին հասարակական անվտանգության տնօրեն Ազիզ բեյը, կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներ Աբիֆ և դոկտ. Նազըմ բեյերը: Կոմիտեի որոշումները հաստատվում և կյանքի էին կոչվում ռազմական շտաբի կամ Ստամբուլի պարետ Ջևադ բեյի կողմից:

[«Թեշքիլաթ-ը մահուսե»-ի] գործակալներին և ընդհանրապես նրա գործունեության շրջաններն առաքվում էին հսկայական գումարներ:

Դոկտ. Բեհաէդդին Շաքիրը «Թեշքիլաթ-ը մահուսե»-ի ղեկավարներին տվել էր ծածկագրի բանալին, տրամադրել ավտոմեքենաներ, դրամական մեծ գումարներ և այլ անհրաժեշտ զինամթերք: Այս ճևով նա սկսել էր գաղտնապես իրագործել «Միություն և առաջադիմություն» կուսակցության ծրագրերը:

Առանձին շրջաններ ուղարկված այս կազմակերպության գործակալներից մի քանիսը, իրենց ղեկավարների ցուցումներով, ինչպես նաև «Միություն և առաջադիմություն» կուսակցության այլ վայրերի կոմիտեների ներկայացուցիչներն ու պետական պաշտոնյաները, իբրև թե կուսակցության հրամանները կատարելու մղումով, կամ էլ որոշ մարդկանց գործադրած հարկադրանքի ներքո, առանց ազգի և հավատքի խտրականության, սկսեցին ժողովրդին կոտորել, կողոպտել, ունեցվածքն այրել և շատերին տանջամահ անել: Չնայած որ ահաբեկման սլաքը հիմնականում ուղղված էր հայերի դեմ, այնուհանդերձ տուժեցին նաև [կայսրության] այլ տարրերն ու մեծ թվով թուրքեր:

Ներկա հետաքննության գլխավոր հարցն այն է, որ հայերի տեղահանության ընթացքում, տարբեր ժամանակներում և զանազան վայրերում տեղի ունեցած հանցագործությունները և հատկապես յուրաքանչյուր հանցագործության նկատմամբ օրենքի հիման վրա կատարված քննությունները ցույց են տալիս, որ դրանք ոչ թե սահմանափակ կամ տեղական բնույթ են ունեցել, այլ կանխամտածված իրականացվել են վերոհիշյալ անձերից բաղկացած և միասնական ուժ հանդիսացող «հատուկ կենտրոնի» բանավոր հրահանգներով և գաղտնի հրամաններով: Գրավոր ապացույցների, փաստաթղթերի և հավաստի վկայությունների հետաքննության արդյունքը հետևյալն էր: «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարների կողմից սկզբնական շրջանում պատերազմական գործողություններին մասնակցելու համար ստեղծված «Թեշքիլաթ-ը մահուսե»-ն, ինչպես պարզ երևում է մեղադրական փաստաթղթերից, բացառապես գաղտնի բնույթ էր կրում, և նրա բուն նպատակը հանցագործ արարքներ կատարելն էր: Այդ գաղտնի ցանցը ղեկավարում էին կենտրոնական կոմիտեի անդամներ՝ դոկտ. Նազըմը, Բեհաէդդին Շաքիրը, Աթիֆը, Ռիզան և հասարակական անվտանգության նախկին տնօրեն Ազիզ բեյը: Սրանցից Բեհաէդդին Շաքիր բեյի կենտրոնն Էրզրում քաղաքն էր, որտեղից նա ղեկավարում էր արևելյան վիլայեթների ուժերը: Ազիզ, Աթիֆ և Նազըմ բեյերը գործում էին Ստամբուլում, որոնց արարքները հաստատում և կյանքի էր կոչում մայրաքաղաքի պարետ Ջևադ բեյը: Բեհաէդդին Շաքիր բեյին ուղղված N 150 գաղտնի կարգադրությունը բովանդակում է հետևյալը. «Կոմիտեն պահանջում է, որպեսզի գալաթացի Խալիլը պատժվի: Ավանդագրված դրամը վերցվելու է փոստատնից և անհրաժեշտության դեպքում բաժանվելու է բնակչությանը» (տե՛ս գործ N 10, փաստաթուղթ N 1):

Այս փաստաթուղթը ստորագրել են Ազիզ, Աթիֆ և Նազըմ բեյերը և վավերացված է Ջևադի ստորագրությամբ: Ներքևում գրված է նաև «Դրդապատճառը՝ խարդավանք. դրամ հավաքելն է»: Վերոհիշյալ կարգադրության հետ ուղարկված է նաև մի ծածկագիր հեռագիր «Ա. Ջևադ» ստորա-

գրությամբ, որտեղ ասված է. «Արդվին, Բեհաէդդին Շաքիր բեյին, վերծանել անճամբ»:

Խալիլ, Նազըմ, Աթիֆ և Ազիզ բեյերի ստորագրություններով Միդհատ Շյուքրի բեյին ուղղված N 59 գրությունը ցույց է տալիս, որ փախուստի մեջ գտնվող Էնվեր բեյի հորեղբայր Խալիլ փաշան, Ստամբուլի պարետ եղած ժամանակ, նույնպես ընդգրկված է եղել «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի մեջ, որ տվյալ կազմակերպությունը ներքին կապ է ունեցել «Միություն և առաջադիմություն» կուսակցության հետ: Այդ ապացուցվում է նաև Խալիլ բեյի Իզմիտի քաղաքագլխին ուղարկած N 67 հեռագրով, որտեղ խոսվում է կալանավորներին բանտից ազատելու, առաջնորդներ նշանակելու և այլ ծրագրերի մասին (տե՛ս գործ N 10, փաստաթուղթ N 4):

1330 (1914) թվականի նոյեմբերի 16-ին Խալիլ բեյի՝ ռազմական գերատեսչությանն ուղղված N 68 գրությունից պարզվում է, որ կործանիչ սարքերն ուղարկված են «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի համար: Այս կազմակերպության վերաբերող թղթապանակներում գտնվում են նաև համանման այլ փաստաթղթեր:

Հետաքննությունից պարզվում է նաև, որ «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ին և կուսակցության կենտրոնական կոմիտեի վերաբերող կարևոր գրությունները մեջտեղից վերացված են: Հավաստի ապացույցները վկայում են նույնպես, որ Թալաաթ բեյի պաշտոնանկությունից առաջ ներքին գործերի մինիստրությունից հասարակական անվտանգության նախկին տնօրեն Ազիզ բեյին ուղղված հրահանգներն ու այլ կարևոր թղթակցությունները ետ չեն վերադարձվել (տե՛ս գործ N 31): Պարզվում է նաև, որ կուսակցության կենտրոնական կոմիտեն, դեռևս պատերազմ հայտարարելուց առաջ, նպատակադրված է եղել պատերազմի մեջ մտնելու: Այս պարագան անհերքելիորեն հաստատվում է 1330 (1914) թվականի օգոստոսի 17-ի կուսակցության գլխավոր քարտուղար Միդհատ Շյուքրի բեյի ստորագրությունը կրող գրությունից, որն Էրզրումի քաղաքագլխի միջոցով հանձնվել է Բեհաէդդին Շաքիր բեյին:

Դիարբեքիրում տեղի ունեցած խոշտանգումներն ու կոտորածները տեղի են ունեցել փախուստի մեջ գտնվող Թալաաթ բեյի դրդմամբ: Այն հաստատվում է [Տեր]-Զորի մութասարիֆ Ալի Սուադ բեյի կողմից հիշյալ Թալաաթ բեյին ուղարկված ծածկագիր հեռագրի բովանդակությունից, ուր խոսվում է վալիին և կոմիսար Մեհդուհին իր համահարզի հետ մահապատժի ենթարկելու անհրաժեշտության մասին: Վերծանված պատասխան ծածկագիր հեռագրում կա «ի պահ դնել» նշումը (Գործ N 8, փաստաթուղթ N 1):

Ներքին գործերի մինիստրության հատուկ գրասենյակի պետ Իհսան բեյը հաստատում է, որ այն ժամանակ, երբ ինքը գտնվելիս է եղել Քիլիսի կայմակամի պաշտոնում, Ստամբուլից Հալեպ գործուղված Աբդուլլահադ Նուրի բեյը հայտարարել է, որ «տեղահանման հիմնական նպատակը [հայերի] ոչնչացումն է» և ավելացրել է նաև, որ ինքն այդ հարցով կապի մեջ մտնելով Թալաաթ բեյի հետ, նրանից ուղղակի ստացել է կոտորածի հրաման, որ նա [Թալաաթը] ճգտել է համոզել իրեն, որ դա՛ է երկրի փրկությունը (Տե՛ս հարցաքննության փաստաթղթերը, էջ 15):

Բալուի քաղաքագլուխ Մյուֆիդ բեյը 1331 (1915) սեպտեմբերի 11-ի թվագրությամբ ներքին գործերի մինիստրության ուղարկած ծածկագիր հեռագրով հաղորդել է, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության

Բրուսայի պատասխանատու քարտուղար դրկտ. Միդհատ բեյը դեռևս Բալուի պատասխանատու քարտուղար եղած ժամանակ, Չանկըրիից դեպի Բալուի մութասարիֆություն ուղարկած հեռագրով հայտնել է, որ Անկարայի վիլայեթից աքսորված հայերի ընդհանուր թիվը հասել է 61000-ի, որ այդ տեղահանությունը ընդհատակահարմար է նախ տեղի մահմեդականների թիվը կայունացնելու, մյուս կողմից էլ, այն հետագայում ընդաստավոր կլինի Բալուի համար (Գործ N 8, փաստաթուղթ N 2): Այս փաստը վկայում է, որ տեղահանությունը ռազմական կամ կարգապահական միջոցառում չի եղել, այլ այն տեղի է ունեցել զուտ կոմիտեի ցանկությամբ և նախաձեռնությամբ, ինչից և ներշնչվել է Միդհատ բեյը:

Կարճ ժամանակով Չանկըրիում գտնվող այս անձը հեռվից չէր կարող տպավորություն ունենալ Անկարայի վիլայեթի բնակչության մասին: Նա սխալ կարծիք ուներ նաև իր վիլայեթի բնակչության մասին: Չանկըրիի մտնում է Կաստամոնուի մեջ և այդտեղի մահմեդականները շրջակա վայրերում տեղի ունեցող դեպքերին վերաբերվել են ատելությամբ: Նույնիսկ մի օր, մի խումբ մեծամեծներ և ավագանիներ իրենց մյուֆթիի հետ դիմել են քաղաքագլուխ Ռեշիդ փաշային հետևյալ խոսքերով. «Շրջակա վիլայեթներից հայերին իրենց երեխաներով միասին մորթվող անասունների նման քշում են դեպի լեռները և այնտեղ կոտորում: Մենք չենք ուզում, որ մեր վիլայեթում այդպիսի բան կատարվի: Մենք վախենում ենք աստծո ցասումից: Պետությունը ոչ թե դաժանությամբ է կառավարվում, այլ բանականությամբ: Խնդրում ենք, որպեսզի մեր վիլայեթում այսպիսի կոտորած տեղի չունենա»: Այս անձինք արտասվալի աչքերով հեռացել են քաղաքագլխի մոտից, խոսք առնելով, որ իրենց վիլայեթում նման արաք չկատարվի (Այս մասին արձանագրված է վկայությունների երկրորդ մասի 15-րդ էջում):

Ստորև բերվում է Էրզրումի վիլայեթի վալի Թահսին բեյի 1331 (1915) հուլիսի 15-ի թվագրությամբ ծածկագիր հեռագիրը, ուր խոսվում է «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի և նրա հետ համագործակցող ժանդարմների կողմից հայերի հանդեպ գործադրված բռնությունների և վայրագություններ մասին. «Ֆայիք անունով մի լեյտենանտ տիրացել է Արաբյանի չորս աղջիկներին, իսկ լեյտենանտ Քյամիլ էֆենդին հափշտակել է 1863 լիրա գումար, 35 բեռ ապրանք և մեծ քանակությամբ գոհարեղեն: Դրամի հափշտակությունը և կանանց հանդեպ գործադրված բռնությունները չափազանց ամոթալի և քաջության հետ ոչ մի առնչություն չունեցող երևույթներ են: Անհրաժեշտ է այդ վայրագություններին վերջ տալ, հատկապես «Թեշքիլաթ-ը մահսուսե» անվան տակ բոլոր կողմերում դեգերող հրոսակներին: Խարբերդի վալին հաղորդում է, որ բոլոր ճանապարհները լի են կանանց և երեխաների դիակներով, որոնց չեն հասցնում թաղել: Լավ կլինի, որ մենք պաշտպանենք մեր անցյալի քաջության նկարագիրը» (Գործ N 8, փաստաթուղթ N 4): Փախուստի մեջ գտնվող Թալաաթ բեյին ուղղված այս հեռագիրը պահվում է մեջլիսի 5-րդ բաժնի թղթապանակում: Այս հեռագիրը հաստատում է [Տեր]-Զորի քաղաքագլուխ Ալի Սուադ բեյի վերոհիշյալ ծածկագիր հեռագրում արտահայտված գաղտնի նպատակները:

Ստորև բերվում է Էրզրումի «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի նախագահ Բեհաէդդին Շաքիր բեյի ստորագրությամբ Խարբերդի վալի Սաբիթ բեյին

և Նազըմ բեյին ուղղված ծածկագիր հեռագրի բովանդակությունը, որի ֆոտոպատճենը գտնվում է N 9 գործում:

«Եղբայր իմ, մեզ պարզորոշ տեղեկացրեք, այդտեղից ուղարկվող հայերին զտո՞ւմ եք, թե՝ ոչ: Վտանգավոր մարդկանց, որոնց վտարման ու աքսորի մասին հայտնել եք, ոչնչացնո՞ւմ եք, թե ճամփու եք դնում»:

Այս փաստը ցույց է տալիս, որ մինչև այսօր փախուստի մեջ գտնվող վերոհիշյալ Ռեսնելի Նազըմ բեյը, այդ ժամանակ «Միություն և առաջադիմություն» կուսակցության Խարբերդի քննիչ-լիազորը լինելով, գաղտնի կապ է ունեցել «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի հետ և զբաղվել է հայերի բնաջնջման գործով:

Սամսոնի պատասխանատու քարտուղար Ռյուշդի բեյի ստորագրությամբ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեին ուղղված հեռագիրը, ինչպես նաև Միդհատ Շյուքրի բեյի կողմից «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի ներկայացուցիչ՝ դոկտ. Նազըմին հասցեագրված 1330 (1914) դեկտեմբերի 16-ի թվագրությունը կրող հետևյալ բովանդակությամբ հեռագիրը՝ «55 հոգուց բաղկացած չեթեների 5-րդ խումբը Թուխթա աղայի գլխավորությամբ մոտորային նավով ուղարկեք», լիովին հաստատում է, որ կուսակցության կոմիտեն կապված է եղել «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի հետ և այլ վայրերում գտնվող նրա մասնաճյուղերը վաղուց ի վեր զբաղված են եղել հրոսակախմբեր պատրաստելու գործով:

«Միություն և առաջադիմություն» կուսակցության Բալըքեսիրի քննիչ-լիազոր Մուսայի ստորագրությամբ 1330 (1914) նոյեմբերի 20-ի թվագրությամբ Միդհատ Շյուքրի բեյին և դոկտ. Նազըմին հասցեագրված նամակների բովանդակությունից լիովին բացահայտվում է, որ կուսակցության կենտրոնական կոմիտեն համագործակցել է ներքին գործերի մինիստրության հետ՝ հրոսակախմբեր պատրաստելու գործում:

Կուսակցության Բրուսայի ներկայացուցչի 1330 (1914) թվականի դեկտեմբերի 19-ին կենտրոնական կոմիտեին ուղարկված գրությունը նույնպես հաստատում է, որ բանտերից դուրս բերված հանցագործներն ու ավազակները ընդգրկվելու են «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի մեջ: Եվ այս կապակցությամբ սկզբնական շրջանում ջանք գործադրվեց միամիտ մարդկանց համոզելու, որ այդ ավազակախմբերն իբրև թե մասնակցելու են պատերազմական գործողություններին: Մինչդեռ վերոհիշյալ ապացույցներն ու բոլոր փաստաթղթերը ցույց են տալիս, որ այդ հրոսակախմբեր ստեղծված էին տեղահանված [հայերի] քարավանները կոտորելու և ոչնչացնելու նպատակով:

Լիովին ապացուցված է, որ այդ կոտորածները տեղի էին ունենում Թալաաթ, Էնվեր և Ջեմալ բեյերի անմիջական հրամաններով և գիտությամբ (գործ 11): 1331 (1915) հուլիսի 21-ի թվագրությունը կրող Թալաաթ բեյի ծածկագիր հեռագիրը, որն ուղղված է Դիարբեքիրի, Խարբերդի, Ուրֆայի և [Տեր]-Զորի վալիներին և մութասարիֆներին, հրահանգում է ճանապարհներին մնացած դիակները թաղելու, լքյալ գույքն այրելու և ընդհանրապես դիակները ծորերը, գետերը և լճերը չգցելու մասին:

Չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ բեյի 1331 (1915) հուլիսի 1-ի թվագրությամբ Դիարբեքիրի վալիին ուղղված մի այլ հեռագրից եզրակացվում է, որ Եփրատ գետի հարավային մասում, ջրի երեսին հայտնվող դիակները կարող են ապստամբական շարժման ընթացքում սպանված

հայեր լինեն, ուստի պահանջվում է, որ դրանք հավաքվեն և թաղվեն իրենց բնակավայրերում (գործ 11, փաստաթուղթ N 3):

Ի պատասխան Ջեմալ բեյին, 1331 (1915) հուլիսի 3-ի թվագրությամբ «անճամբ» նշումը կրող հեռագրում ասված է. «Եփրատն առնչություն չունի մեր վիլայեթի հետ, հավանական է, որ այդ դիակները գալիս են Էրզրումի և Խարբերդի կողմերից: Այստեղ, ապստամբության ընթացքում սպանվածների դիակները գցվում են ամայի վայրերում գտնվող խոր քարայրները կամ էլ այրվում են: Թաղելը բացառված է»:

[Տեր]-Զորի նախկին մութասարիֆ Ալի Սուադ բեյը հիշյալ լիվան ուղարկվող հայերի ճակատագրի մասին տեղեկություն տալով, նշել է, որ Հալեպի հեռագրական գործակալությունում աշխատող «Թասվիր-ի էֆքյար» թերթի նախկին թղթակից Ակյահ բեյը [Տեր]-Զորի մութասարիֆ Սալիհ Զեքի բեյի հետ զրուցելիս հարցրել է. «Քո մասին ասում են, որ տաս հազար հայ ես ոչնչացրել, ճի՞շտ է»: Ի պատասխան այդ հարցումի, Զեքի բեյը պարծենալով ասել է. «Ես նամուս ունեմ, տաս հազարը ի՞նչ է, որ, մի քիչ վերև բարձրացիր» (տես գործ 6 և 14, փաստաթուղթ N 4, ինչպես նաև գործ 11, փաստաթուղթ N 1):

Խարբերդի վալիի կողմից Մալաթիայի մութասարիֆին ուղարկված ծածկագիր հեռագրի առաջին մասում հաղորդվում է, որ ճանապարհներին շատ մեծ թվով դիակներ կան, և նրանք կարող են վտանգավոր հետևանքներ ունենալ: Խորհուրդ է տրվում զգուշացնել ներքին գործերի մինիստրությանը, որպեսզի վճռական քայլեր ձեռնարկվի այս հարցն անուշադրության մատնող պաշտոնյաներին պատժելու համար: Նշվում է նաև, որ անհրաժեշտ է մի քանի ազդեցիկ ղեկավարների տրամադրության տակ բավարար թվով ժանդարմներ նշանակել՝ սահմանի ներսում գտնվող բոլոր դիակները թաղելու համար: 1331 (1915) սեպտեմբերի 15-ի թվագրությամբ Ռեշիդի կողմից ներքին գործերի մինիստրությանն ուղարկված ծածկագիր հեռագրում նշվում է, որ Դիարբեքիրից արտաքսված հայերի քիվը հասնում է հարյուր քսան հազարի, որը ցույց է տալիս կատարվող գործողության ծավալն ու նշանակությունը (գործ 12, փաստաթուղթ N 1):

Երրորդ բանակի հրամանատար Մահմուդ Քյամիլի ստորագրությունը կրող հեռագրում նշված է, որ հայերից որևէ մեկին հովանավորող մահմեդականը մահապատժի է ենթարկվելու իր բնակավայրում, և տունն էլ հրդեհվելու է: Եթե հովանավորողը պետական պաշտոնյա լինի, ապա գործից վտարելով՝ դատվելու է զինվորական դատարանով: Իսկ եթե զինվորական լինի, ապա որպես հանցագործ՝ կանգնելու է ռազմական բարձր ատյանի առաջ, (գործ 13, փաստաթուղթ N 1): Այս խստությունները ցույց են տալիս, թե ինչու տվյալ վայրի մահմեդականները և մանր պաշտոնյաները չէին կարողանում տեղի ունեցող գազանությունների առջևն առնել:

Տրապիզոնի նախկին պատգամավոր Հաֆիզ Մեհմեդ բեյի տված ցուցմունքից (գործ N 15) բացահայտվում է, թե ինչպես հայերին Սև ծովի ափերին նավ նստեցնելով խեղդամահ են արել: Նույնիսկ այս ողբերգության մասին, երբ ինքը հայտնել է Թալաաթ բեյին, վերջինս ոչ մի քայլ չի ձեռնարկել [Տրապիզոնի] վալի Ջեմալ Ազմիի նկատմամբ: Այս հանգամանքն առավել ևս ծանրացնում է Թալաաթ բեյի հանցագործությունը:

Էրզրումի վալի Մյունիր բեյի 1331 (1915) դեկտեմբերի 14-ի թվագրությունը կրող ծածկագիր հեռագիրը (գործ N 16) ցույց է տալիս, որ հա-

կառակ նախկին վալի Թահսին բեյի գործադրած ջանքերին, Էրզրումից Քըղիի ճանապարհով ուղարկված հայերի քարավանները կոտորածի են ենթարկվել կենտրոնական կոմիտեի անդամ Բեհաէդդին Շաքիր բեյի կազմած հրոսակախմբերի և դերսիմցիների կողմից:

Ջեմալ Ասաֆ բեյի գրավոր ցուցմունքի մեջ (գործ N 18) նշված է, թե ինչպես տեղահանվածները կոտորածի են ենթարկվել քուրդ Ալոի ավազակախմբերի կողմից, որը կազմակերպել էր Չանկըրիի կուսակցության նախկին պատասխանատու քարտուղար, այժմ առևտրական Ջեմալ Օղուզ բեյը: Այս հանգամանքը ևս ցույց է տալիս, թե ինչպես կենտրոնական կոմիտեն այս խնդրում համագործակցել է կուսակցության [շրջանային] ներկայացուցիչների հետ:

Հատկապես ուշադրության արժանի տեղեկություններ կան գնդապետ Խալիլ Ռիջայի բեյի ընդարձակ տեղեկագրում, որը կազմված է որոշակի անուններով և փաստացի վկայությունների հիման վրա (տե՛ս գործ N 2, էջ 1): Այսպես, Անկարայի տեղահանության ընթացքում «Միություն և առաջադիմություն» կուսակցության տեղական ակումբի վարիչի մոտ ուղարկելով Թայիբ անունով մեկին, կենտրոնական կոմիտեն հրահանգել է, որպեսզի պաշտոնից հեռացվեն զինվորական առողջապահության հայ ծառայողները: Սեմդուհ Շևքեթ բեյը և նրա եղբայր Ռաֆեթ բեյը, այդ ժամանակամիջոցին Անկարայում լինելով, գործակցել են կենտրոնական կոմիտեի հետ և ձեռք բերել հսկայական կարողություն: Տեղեկագրում նշվում է, թե ինչպես կուսակցության ներկայացուցիչ-քարտուղար Նեջատի բեյը միջամտել է Անկարայի տեղահանության գործին և այդ խնդրում իր եռանդուն մասնակցությունն է ունեցել նաև հիշյալ վիլայեթի նախկին ոստիկանապետ մաճաստրցի Բեհաէդդին բեյը:

Այն ժամանակ, երբ տեղի ռազմական դատարանը մեղադրական գործ է հարուցել վերոհիշյալ Բեհաէդդին բեյի նկատմամբ, նրան շտապ կանչել են Ստամբուլ: Հակառակ ներքին գործերի մինիստրության ներկայացրած պահանջին, նրան վերաբերող հետաքննության փաստաթղթերը մնացել են տեղում: Հետագայում նրա գործը քննարկվել է ռազմական մինիստրությունում, և այդպիսով վերջինս ազատվել է դատաքննությունից:

Հետաքննության արդյունքների համաձայն, նրանք, ովքեր քննադատել և չեն մասնակցել կատարվող ողբերգություններին, համարվել են հայրենիքի դավաճաններ, իսկ [մաճաստրցի] Բեհաէդդինի նման ակտիվ գործիչներն արժանացել են չափից ավելի հովանավորության: Նույնիսկ ներքին գործերի նախկին մինիստր Թալաաթ բեյը հիշյալ [մաճաստրցի] Բեհաէդդին բեյին հատուկ ծանուցագրով ծառայության է ուղարկել արևելյան զորքերի օպերատիվ զորախմբի հրամանատար Վեհիբ փաշայի մոտ: Միաժամանակ նա աշխատել է Սամսոնի ռազմական ատյանում, այնուհետև նոր նշանակում ստանալով, մեկնել է անհայտ ուղղությամբ (նրա մասին տրված ցուցմունքները գտնվում են Վեհիբ փաշային վերաբերող թղթապանակում):

Փաստերը ցույց են տալիս, որ Կաստամոնուի վալի Ռեշիդ փաշան ծածկագիր հեռագիր է ստացել Բեհաէդդին Շաքիր բեյից, ուր նշված է եղել, որ հայերի տեղահանության հարցը խիստ անհրաժեշտություն է (տե՛ս գործ N 2, էջ 13): Իսկ կուսակցության Կաստամոնուի քարտուղար Հասան Ֆեհմի էֆենդին, չնայած, որ իր ժամանակին զգուշացրել է [ներքին գործե-

րի] մինիստրությանը տեղի ունեցող տեղահանության, կոտորածի և այլ վայրագությունների մասին, սակայն նրա գործադրած ջանքերը մնացել են ապարդյուն:

«Միություն և առաջադիմություն» կուսակցության գումարած մի ժողովում նախագահը թաքրիր է ներկայացրել Թալաաթ բեյին, ուր նկարագրված են եղել հայերի հանդեպ գործադրված դաժանություններն ու կոտորածները, և այս կապակցությամբ պահանջել է դատաքննության ենթարկել կուսակցության մի շարք շրջանային պատասխանատու քարտուղարների, այդ թվում դոկտ. Ռեշիդին, Ջեմալ Ազմիին, Սաբիթին, Մուամմերին, Աբիֆին և կալանատների ընդհանուր տնօրեն Իբրահիմ բեյին: Մինչդեռ Թալաաթ բեյը մի կողմ է շպրտել այդ թաքրիրը, ակնարկելով, որ այն պահվի:

Իզմիրի պատգամավոր Իհսան Օննիկ էֆենդիի ցուցմունքում նշված է, որ ինքն Իզմիրի «Սպորտինգ կլուբի» մեջ Թալաաթ բեյին ասել է, որ դոկտ. Նազըմը և իր գործընկերներն են իսկական բռնություն գործադրողները, Թալաաթը պատասխանել է. «Ես այս տեղացիներին մյուսների նման կենթարկեի նույն ճակատագրին» (տե՛ս գործ N 3):

Վեհիբ փաշայի վկայության մեջ (տե՛ս գործ N 7, էջ 3) նշվում է, որ հայերի նկատմամբ կատարված վայրագություններն ու կոտորածները, նրանց ունեցվածքի թալանն ու կողոպուտը որոշված է եղել «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից: Եվ այդ կոտորածների, ինչպես նաև բոլոր գազանությունների իրագործման համար, Բեհաէդդին Շաքիր բեյը երրորդ բանակի շրջանում պատրաստել է հատուկ մարդասպաններ և անձամբ ղեկավարել նրանց: Նույնիսկ պետության ղեկավարները ենթարկվել են Բեհաէդդին Շաքիրի հրամաններին և հրահանգներին: Երրորդ բանակի կողմից կատարված բոլոր բռնությունների, խարդավանքների և բանսարկությունների մտահղացողը նույնպես եղել է Բեհաէդդին Շաքիրը: Նրա կողմից հավաքագրված մարդկանց մի մասը եղել են մահապատժի ենթակա հանցագործներ, իսկ մի մասն էլ՝ արնախում ժանդարմներ... Գրավոր բերված բոլոր ցուցմունքները մեղադրական հավաստի ապացույցներ են՝ ուղղված «Միություն և առաջադիմության» կուսակցության կենտրոնական կոմիտեի և մեջլիսի անդամների դեմ:

Հարցաքննության վերաբերող փաստաթղթերի 6-րդ էջում նշված է, որ Սուլեյման Նազիֆ բեյը Բաղդադից դեպի Դիարբեքիրի սահմանամերձ շրջանները գալու ժամանակ դիակների գարշահոտությունից փակել է քիթը: Երբ Ջեմալ փաշան հարցում է կատարել Թալաաթ բեյին Կոնիայի նախկին վալի Ջելալ բեյին Հալեպից հեռացվելու մասին, վերջինս պատասխանել է, որ հայկական հարցին վերաբերող իր տեսակետը համընկնում է կենտրոնական կառավարության տեսակետի հետ, որ դոկտ. Նազըմի կողմից ուղարկված պատգամավոր Ալի Ռիզայի նշանակման հարցը վճռված է եղել կենտրոնական կոմիտեում մանրամասն քննարկվելուց հետո:

[Ջելալ բեյի] հեռացման պատճառն այս ձևով բացատրվելուց հետո, երբ [Ջեմալ փաշան] այս հարցի վտանգավորության մասին Ստամբուլում զգուշացրել է Թալաաթին և Նազըմին, նրանք պատասխանել են, որ

դա անհրաժեշտ է և օգտակար: Դոկտ, Նազըմը նույնիսկ ասել է, որ այս նախաձեռնությունը վերջնականապես կլուծի արևելյան հարցը:

Հայրի էֆենդին իր վկայության մեջ նշում է, որ ինքն ամեն ջանք գործադրել է այդ բոլորը կանխելու, բայց և այնպես տեղահանության և կոտորածին հակառակվելու համար իրեն ևս հեռացրել են պաշտոնից (հարցաքննության թղթապանակ, էջ 17): Քաղաքացիական հետաքննության հանձնաժողովի նախկին տնօրեն Համիդ բեյի տված ցուցմունքից պարզվում է, որ Անկարայի նախկին վալի Մազհար բեյը հեռացվել է պաշտոնից, իսկ Դիարբեքիրի վալին ոչնչացրել է իր երկու կայմակամներին այն բանի համար, որ նրանք դեմ են եղել [հայերի] տեղահանությանը, ինչպես նաև արաբների դեմ գործադրվող բռնություններին ու սպանություններին:

Հարցաքննության վերաբերող թղթապանակի 34, 38, 43 էջերում տրված է ֆինանսների մինիստրության եկամուտի բաժնի ընդհանուր տնօրեն Լութֆի բեյի ցուցմունքը, որը վերաբերում է կուսակցության Տրապիզոնի պատասխանատու քարտուղար Նայիլ բեյի գործունեությանը, ինչպես նաև Տրապիզոնում կատարված ողբերգությանը և նրա պատասխանատուներին:

Բեհաէդդին Շաքիր բեյի Էրզրումից Անթալիայի մութասարիֆին ուղարկած ծածկագիր հեռագրում նշված է. «Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Սիվասի, Տրապիզոնի շրջաններում ո՛չ մի հայ չի մնացել, բոլորն արտաքսվել են Մոսուլի և [Տեր]-Զորի կողմերը: Իսկ դուք ի՞նչ եք անում Անթալիայում»:

Անթալիայի նախկին մութասարիֆ Սաբուր Սամի բեյն իր բացատրագրում (հարցաքննության թղթապանակ, էջ 44) նշում է, որ այս հեռագրի պատճենն ինքն ուղարկել է Թալաաթ բեյին, բայց ոչ մի պատասխան չի ստացել: Անկարայի տեղահանության և այդ տեղի կուսակցության պատասխանատու քարտուղար Նեջատի բեյի մասին Ռաղի բեյի տված տեղեկությունները բավարար ապացույցներ են այդ ամբաստանությունը հաստատելու համար:

Բեհաէդդին Շաքիր բեյը ներքին գործերի մինիստր Թալաաթ բեյի միջոցով ծածկագիր հեռագիր է ուղարկել կենտրոնական կոմիտե: «Թեշքիլաթ-ը մահսուսե-ի փաստաթղթերի թղթապանակներից մեկում հայտնաբերված և 69 համարի տակ վերծանված այդ հեռագրի հակառակ կողմում, որպես պատասխան, գրված է հետևյալը. «Քանի որ այլևս այդտեղ գործ չունեք, Արդվինից առավել կարևոր մի պաշտոն ստանձնելու համար շտապ շարժվեք դեպի Տրապիզոն: Այստեղից մեկնող Յակուբ Ջեմիլ բեյը ձեզ կբերի անհրաժեշտ հրահանգն ու առաջադրանքը»:

Այս [հեռագիրը] լիովին հաստատում է նրանց միջև գոյություն ունեցող ներքին կապն ու համագործակցությունը:

Սեղադրվող մինիստրները հարցաքննության ընթացքում պատճառաբանել են, որ իրենց գործն ըստ պաշտոնավարության լսվելու է ոչ թե ռազմական ատյանում, այլ սահմանադրական սկզբունքով կազմված գերագույն դատարանում: Ավելորդ է բացատրել, որ նրանց կողմից հիշատակված 92-րդ հոդվածը «մինիստրի կամ մինիստրների խորհրդի անդամի պաշտոնավարությամբ» վերաբերում է քաղաքական հանցագործությանը: Սահմանադրական օրենսգրքի 33-րդ հոդվածի համաձայն մինիստրներին սովորական հանցագործություն կատարելու կամ մասնակցություն ունե-

նալու դեպքում ոչ մի արտոնությունից օգտվելու իրավունք չի վերապահվում: Նման հանցագործությունները քննելու հարցը մտնում է սովորական դատարանների իրավասության մեջ: Արտակարգ դրություն հայտարարված շրջաններում քաղաքացիական օրենքների և դատարանների փոխարեն իրավասություն են ձեռք բերում ռազմական ատյանները:

Սպանությունների և բռնագրավումներին վերաբերող հոդվածների հաստատումը մտնում է ռազմական ատյանի իրավասության մեջ և ըստ մեղադրական եզրակացության բովանդակության, պաշտոնի հարցում ոչ մի վերապահություն չի կատարվելու:

Այսպիսով, մեղադրյալների դատապաշտպանների կողմից առաջ քաշված դատական անհիրավասության հարցը վերացվում է: Վերևում բերված փաստերի ու վկայությունների հիման վրա դոկտ. Բեհաէդդին Շաքիր, դոկտ. Նազըմ, Աթիֆ, Ռիզա, Ջևադ, Ազիզ, Էնվեր, Ջեմալ և Թալաաթ բեյերը, որպես հանցագործության անմիջական մասնակիցներ՝ մեղադրվում են քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին կետով և 171-րդ հոդվածով: Սայիդ Հալիմ փաշան, Միդհատ Շյուքրի, դոկտ. Ռուզուհի, Քյուչյուկ Թալաաթ, Զիյա Գյոքալփ, Քեմալ Ահմեդ Նեսիմի, Շյուքրի, Իբրահիմ, Խալիլ բեյերը, չնայած որ անմիջական մասնակցություն չեն ունեցել կատարված հանցագործություններին, բայց գիտակցաբար համագործակցելով անուղղակիորեն մասնակցել են վերոհիշյալ հանցագործություններին, որի համար էլ մեղադրվում են քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի երկրորդ մասով: Մեղադրյալների դատաքննության գործը ներկայացվում է Ստամբուլի կայսերական ռազմական ատյանին, իսկ մեղադրական փաստաթղթերի մանրամասն հետաքննությունը՝ նույն ատյանի դատախազությանը:

10 ռեջեբ 1337թ. [1919թ. ապրիլի 12]

ՆԱԽԱԳԱՀ - «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամներ հանդիսացող այս անձինք ընդհանուր ժողովի և կենտրոնական կոմիտեի որոշմամբ ընթացան սխալ ճանապարհով և, հատկապես, օգտվելով համաշխարհային պատերազմի ճգնաժամից, իրենց մոլի նպատակներն ու տհաճ թվացող հարցերը ճգտեցին իրագործել հապճեպորեն և դաժանությամբ: Ո՛չ մի ողջամիտ մարդ չէր կարող համաձայնվել նրանց գործադրած այդ արարքների հետ: Նրանք արտաքուստ ցույց էին տալիս, թե իբր պաշտպանում են ազգային շահերը և ապահովում երկրի ամբողջականությունը, մինչդեռ իրականում իրենց նախաձեռնած գործողություններով մեծ դժվարություններ ստեղծեցին պետության քաղաքականության և տնտեսության ասպարեզում: Այդ ձևով ընդհանուր զորահավաքի կապակցությամբ բոլոր կողմերում հայտարարված արտակարգ դրությունից օգուտ քաղելով, սկսեցին ժողովրդին բարոյապես ճնշել, բռնություններ գործադրել և մեծ դժվարություններ ստեղծել պետության կառավարման գործում: Խոսքի ազատության նշույլն անգամ չէր մնացել: Ժողովուրդին հասված վնասը չափ ու սահման չուներ: Մյուս կողմից, իրենց դիվային ծրագրերն իրականացրին իրենց իսկ կազմակերպած մարդասպան հրոսակախմբերի միջոցով: Գործադրված դաժան արարքները ոչ միայն առնչություն չունեն օսմանյան օրենքների և կանոնադրությունների հետ, այլև անհամատեղելի են մեր հավատքին: Բնական է, որ այդ բազում բռնություններն

ու վայրագությունները խոր ատելություն առաջացրին մարդկանց սրտերում: Արդ, որպես անմիջական մասնակիցներ, դուք ևս մեծ դեր եք խաղացել այդ հանցագործությունները գործադրելու խնդրում, որի համար էլ մեղադրվում եք: Ուշադիր եղեք, այդ մեղադրանքը բացահայտվելու և ապացուցվելու է դատախազի կողմից (խոսքը ուղղելով դատախազին)՝ խնդրեմ:

ԴԱՏԱԽԱԶ ՄՈՒՏԱՖԱ ՆԱԶՄԻ ԲԵՅ - Դատարանում ներկա գտնվողների և բացակաների ամբաստանությանը վերաբերող քրեական հոդվածները պարզաբանված են մեղադրական եզրակացությունում: Իսկ մեղադրանքին վերաբերող բոլոր փաստաթղթերն ու վկայություններն անվանական կարգով դասավորված են թղթապանակների մեջ: Ես կարծում եմ, որ ավելորդ ժամանակ չվատնելու համար անհրաժեշտություն չկա այդ բոլորի վրա կրկին կանգ առնելու և այսօրվա համար նշանակված դատաքննությունը հետաձգելու հաջորդ օրվան: Հարցաքննության ընթացքում ճշմարտությունը բացահայտվել է կատարելապես: Այնուհանդերձ դատաքննության կարևորության և նրա միայն արդարության վրա հիմնվելու փաստն ապացուցելու նկատառումով ուզում եմ մի քանի խոսք ևս ավելացնել: Հայտնի է, որ ազգերի համատեղությունը, պետությունների գոյատևումն ուղղակի առնչվում են իրավունքի, արդարության և հավասարության կատարյալ ապահովության հետ: Հետևաբար, մի երկրում իրավունքի և արդարության առկայությամբ է պայմանավորված այդ երկրի հասարակական կյանքի գոյատևումը: Այդ գործոնների բացակայության դեպքում հասարակությունը չի կարող հարատևել: Տարիներ ի վեր Օսմանյան կայսրության մեջ տարբեր ազգությունների առկայությունը մեծ դժվարություններ է հարուցել և դժբախտաբար երբեմն նրանք իրար հետ բախվելով, արյունալի էջեր են արձանագրել նրա պատմության մեջ: Օսմանյան օրենսդրության, օսմանցու խղճին անհարիր այնպիսի հանցագործություններ են տեղի ունեցել, որոնք երբևէ չէին կարող ընդունվել սուլթանության և մեծն խալիֆայության կողմից: Օսմանյան օրենքները, որոնց թարգմանն եմ ես այսօր, երբեք չեն կարող հանդուրժել և ներել այդ բոլորը: Օսմանյան տարածքում անպատիժ մնացած հանցագործություններն պատժվելու են օսմանյան օրենքի համապատասխան հոդվածներով: Պիտի հատուցվի զոհ գնացած անմեղ մարդկանց արյունը և արդարություն տեղչացող օսմանյան ժողովուրդներն ի վերջո պիտի հասնեն դրան: Իրականում օսմանյան տարածքում գտնվող երկրները ծարավի են արդարության: Դարերի ընթացքում իսլամի բոլոր ավանդույթների աստիճանաբար թուլացման հետևանքով այդ երկրները չեն կարողացել ինչպես հարկն է օգտվել նրա իրավական կանոններից: Իրավունքն ու արդյսրությունը վերականգնելու ներշնչանքով է, որ մահմեդականները, քրիստոնյաները և բոլոր ազգությունները ամեն կերպ նեցուկ են կանգնել 1918 թվականի սահմանադրությանը: Չնայած այն բանին, որ բոլոր մտավորականներն ու գիտակից մարդիկ իրենց ուժերով ջանացին վերահաստատել սահմանադրությունը, ավա՜ղ, արդարության ու իրավունքի պաշտպանության փոխարեն երկրում ծայր առան անթիվ անհամար վատ երևույթներ, որոնց հետևանքով էլ օսմանյան ազգությունները սկսեցին իրարից մեկուսանալ: Հուսախաբ եղան նաև բազմաթիվ հայրենասեր անձինք: Սահմանադրության հռչակումից հետո «Միություն և առաջադիմություն» կուսակցության թելադրանքով կատարված սպանությունները, ավերածությունները, վայրագությունները, չա-

րաշահումները ծանր հետևանքներ թողեցին ժողովրդի վրա: Օսմանյան պետության համար մեծ աղետ եղան նաև համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած արյունահեղություններն ու կոտորածները:

Բարբարոսաբար իրականացված կոտորածները, անարգ չարաշահումները, դժբախտաբար, նույնպես վերագրվում են «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեին, նրա պլենումներին և «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի գործունեությանը: Եվ այս անօրինավորությունները դատի են տրված ոչ թե միևիստրի պաշտոնում գտնվելու համար, այլ «Միություն և առաջադիմություն» կուսակցության մեջ ղեկավար դիրք ունենալու և կենտրոնական կոմիտեի անդամ լինելու հանգամանքով: Կոտորածների և չարաշահումների հետևանքով օսմանցիների արժանապատվության վրա ընկած արյունոտ հետքերը, օսմանցիների ճակատը մրոտած սև բծերը կարելի է ջնջել միմիայն արդարության գրչով: Եվ այս ձևով ջնջելու համար նրանց դեմ հայտարարվում է ջիհատ: Պատժվելու են հանցագործություն կատարած մահմեդական թե քրիստոնյա անձինք: Դատախազությունը չի կոչված միակողմանի հետաքննություն կատարելու: Բոլոր դատախազությունների նման մենք ևս պատրաստ ենք բողոքները քննարկելու և լսելու տուժած կողմից գանգատները: Լինի մահմեդական կամ քրիստոնյա օսմանցու թափած արյունն անհատույց չի մնալու: Այդ աղետալի բախումների ընթացքում, մահմեդական սպանող քրիստոնյա օսմանցիների նկատմամբ նույնպես հետաքննություն եմ կատարելու: Այնպես որ, հանցագործները պատժվելու են, և արկածախնդրական պատերազմի պատճառով անմեղ մարդկանց կորցրած արյունը հատուցվելու է այս բարձր ատյանում: Ամբողջ մահմեդական աշխարհի խալիֆ, օսմանցիների փադիշահ՝ Նորին մեծություն Մեհմեդ խանը հաստատակամորեն վճռել է, որ լիովին վերականգնվի իսլամի արդարությունը: Նույն նպատակն է հետապնդում նաև ներկայիս կառավարությունը: Մի խոսքով, օսմանյան ազգությունները խորը վստահություն են տածում իրենց փադիշահի արդարացի որոշման և այս Բարձր ատյանի արդարադատ գործունեության նկատմամբ: Համոզված ենք, որ դատական այս հանձնաժողովը գործադրելու է իր բոլոր կարողությունները՝ հիմնվելով միմիայն խղճի և արդարության վրա: Բնական է, որ արդար դատարանի վրա չի կարելի քաղաքական վրեժխնդրության նկատառումներով ճնշում գործադրել և կամ վերապահումներ անել: Ո՛չ մի պետություն կամ քաղաքակիրթ ժողովուրդ օսմանյան պետությունից և դատարանից ցայսօր չեն պահանջել և չեն էլ կարող պահանջել, որպեսզի պատժի ենթարկված հանցագործն արդարացվի: Սեզանից պահանջվում է հանուն մարդկային իրավունքի պաշտպանության գործադրել արդարադատությունը: Նույնիսկ մեծն խալիֆները հարգանքով գլուխ են խոնարհել իսլամի արդարադատության առաջ: Օսմանյան դատարանի և դատավորների առաջ նույն վերաբերմունքը պիտի ունենան նաև միևիստրներն ու վեզիրները:

Մեղադրական եզրակացությունում ցույց տրված և անմիջական իրենց հեղինակությամբ կատարված հանցագործությունների համար մեղադրվում են դոկտ. Բեհաէդդին Շաքիրը, Նազըմը, Աքիֆը, Ռիզան, Ջևադը, Ազիզը, Էնվերը, Ջեմալը և Թալաաթը: Այդ հանցագործություններին անուղղակիորեն մասնակցություն ունենալու համար մեղադրվում են Միդհատ Շյուքրին, դոկտ. Ռուզտիհն, Քյուչյուկ Թալաաթը, Զիյա Գյոքալփը,

Քեմալ բեյը, Սայիդ Հալիմ փաշան, Ահմեդ Նեսիմին, Շյուքրին, Իբրահիմը և Խալիլը: Օսմանյան արդարադատության հիման վրա պահանջում եմ սրանց ենթարկել դռնբաց դատաքննության:

(*Նախագահից ձայն է խնդրում դատապաշտպան Զելալեդդին Արիֆ բեյը*):

ՋԵԼԱԼԵԴԴԻՆ ԱՐԻՖ ԲԵՅ – Տվյալ դատաքննության՝ այս բարձր ատյանի իրավասության մեջ մտնելու հարցը, ըստ օրենքի քննարկելու անհրաժեշտություն է զգացվում: Հայտնի է, որ Սայիդ Հալիմ փաշան, Խալիլ, Նեսիմի, Իբրահիմ և Շյուքրի բերեյը միևիստրներ են եղել նախկին կառավարության մեջ: Եթե ուշադրություն դարձնենք սահմանադրության պետական միևիստրների վերաբերող 31 և 33-րդ հոդվածներին, ապա կտեսնենք, որ միևիստրների և այլ պետական բարձր պաշտոնների հետ առնչվող դատական գործերը քննարկվելու են միմիայն գերագույն դատարանում, իսկ պաշտոնից դուրս իրենց անձին վերաբերող դատական գործերը կարող են լսել ընդհանուր դատարաններում: Սահմանադրության 23-րդ հոդվածն ասում է. «Յուրաքանչյուր անձի դատական գործը լսվելու է միմիայն օրենքով հաստատված դատարաններում»: Այսպիսով, միևիստրների գործը, օրենքի նշված այդ կետերի համաձայն, պետք է լսվի գերագույն դատարանում:

ԴԱՏԱԽԱԶ՝ ՄՈՒՍՏԱՖԱ ՆԱԶՄԻ ԲԵՅ – [Դատապաշտպանների] կողմից առաջ քաշված պաշտոնի և իրավասության հարցի մասին ես ևս ուզում եմ հայտնել իմ տեսակետը (*ձայներ՝ չի լսվում*): Այս դատաքննությունը ռազմական ատյանում կամ սահմանադրության մեջ նշված գերագույն դատարանում լսելու հարցը բխում է այդ հանցագործությունները պաշտոնավարության ընթացքում կատարելու կամ չկատարելու հանգամանքից: Ինչպես բացահայտվեց մեղադրական եզրակացությունում, ցույց տրված հանցագործությունները տեղի են ունեցել ոչ թե պաշտոնավարության բերումով, այլ կենտրոնական կոմիտեի, ինչպես նաև նրա պլենումների գործադրած հանցագործություններին մասնակից դառնալու հանգամանքով: Հետևաբար այս դատավարությունը պաշտոնավարության հիման վրա մեկնաբանելու խնդիրը բացառված է: Խմբակային հանցագործության մասնակից դառնալու Իբրահիմ բեյի խնդիրը դեռևս պարզորոշ չէ: Մեզ տեղեկացրին, որ միևիստրների խորհրդից մի շարք վաստաթղթեր հանձնվելու են դատախազությանը: Դատաքննության ընթացքում հանցանքի միմիայն պաշտոնավարության հետ կապ ունենալը եթե հաստատվի, ապա այդ ժամանակ տվյալ կետին ուշադրություն կդարձվի: Այլ դեպքում պաշտոնի և իրավասության հարցը բնավ օրակարգի հարց չի կարող դառնալ, քանի որ առկա վաստերը վկայում են, որ այդ դատավարությունը մտնում է ձեր իրավասության մեջ: Մեղադրական եզրակացությունում փաստերը ցույց են տալիս, որ գործադրված հանցագործություններն անձնական բնույթ են ունեցել: Եթե դատավարության ընթացքում [հարցն] այլ բնույթ ընդունի, ապա այդ հանգամանքը նկատի կառնվի:

ՆԱԽԱԳԱՀ – Մենք մեր վճիռը կհայտնենք անհրաժեշտ քննարկումից հետո:

Takvim-i Vekai, 27 Nisan 1335 (1919) № 3510 (Have).

2. ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ ՓԱԴԻՇԱՀԻ 1335Թ. (1919) ՄԱՐՏԻ 8-Ի ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐԱՍՏԱՆՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նախագահ՝ գեներալ-լեյտենանտ Նազըմ փաշա,
անդամներ՝ գեներալ-մայոր Ջեքի փաշա,
գեներալ-մայոր Մուստաֆա փաշա,
գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա,
գնդապետ Ռեջեբ Ֆերդի բեյ,
Գերագույն դատախազի օգնական՝ Ֆերիդին բեյ:

ԱՌԱՋԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
1335թ. (1919) հունիս 3

ԴԱՏԻ ՏՐՎԱԾ ՆԵՐԿԱ ԳՏՆՎՈՂ ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ – Սայիդ Հալիմ փաշա, Հայրի էֆենդի, Մուսա Քյազիմ էֆենդի, Խալիլ բեյ, Ահմեդ Նեսիմի բեյ, Իսմայիլ Ջանփոլատ բեյ, Աբբաս Հալիմ փաշա, Իբրահիմ բեյ, Ալի Մյունիֆ բեյ, Շյուքրի բեյ, Մուստաֆա Շերեֆ բեյ, Քեմալ բեյ, Ռիֆաթ բեյ, Հյուսեյն բեյ:

ՀԵՌԱԿԱ ԿԱՐԳՈՎ ԴԱՏԻ ՏՐՎԱԾ ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ – Թալաաթ էֆենդի, Էնվեր էֆենդի, Ջեմալ էֆենդի, դոկտ. Նազըմ բեյ:

Նկատի ունենալով, որ վերոհիշյալներն անկախ իրենց կամքից չեն կարող ներկայանալ [դատարան], առայժմ նրանց հանդեպ հարուցված դատաքննությունը կարճվում է: Առնտրի և հողագործության մինիստրը՝ Մուստաֆա Շերեֆ բեյի մասին առ այսօր որևէ տեղեկություն չկա: Ուստի, մինչև նրա ներկայանալը, դատավարությունն ըստ օրենքի հետաձգվում է:

ՆԱԽԱԳԱՀ – Կարդացե՛ք մեղադրական եզրակացությունը:

ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

... Ոմն գալաթացի Խալիլի մահվան վճիռը բովանդակող փաստաթղթերից պարզ երևում է, որ կենտրոնական կոմիտեի անդամները, նրա [շրջանային] պատասխանատու քարտուղարներն ու ներկայացուցիչներն անիրավասու ընդգրկված են եղել կուսակցության պարագլուխների գաղտնի խմբավորման կազմում: Իսկ մեջլիսի ընդհանուր կազմը բաղկացած է եղել կենտրոնական կոմիտեի անդամներից, մինիստրներից և մի քանի պատգամավորներից: Այդպիսով, մեջլիսի անդամների կարևոր մասը, եթե բաղկացած լինի կուսակցության նման գաղտնի խմբավորում ունեցող պարագլուխներից, ապա լիովին ակներև կդառնա նրա բուն էությունը: Հատկապես մեղադրյալ Իսմայիլ Ջանփոլատ բեյի խոստովանությունից պարզ երևում է, որ կառավարությանը վերաբերող հարցերը համախակի քննարկման նյութ են դարձել կուսակցության կենտրոնական կոմիտեում: Այս պարագան ցույց է տալիս, թե ի՞նչ աստիճանի ազդեցություն է ունեցել կենտրոնական կոմիտեն և ինչպե՞ս է միջամտել պետական գործերին:

Ձեռնարկվող միջոցառումներին, ընթացիկ քննարկումներին և ընդունված որոշումներին վերաբերող, և որպես ապացույց հանդիսացող ար-

ձանագրություններն անհետացնելու և կամ թաքցնելու երևույթից կարելի է եզրակացնել, որ կենտրոնական կոմիտեն և ընդհանուր մեջլիսը զանազան թաքուն գործերով համագործակցել են իրար հետ: Հատուկ օրենքի համաձայն, այլ վայրեր տարագրվողների քարավանները ենթարկվել են հատուկ նպատակով կազմակերպված հրոսակախմբերի հարձակումներին և ոչնչացվել, իսկ նրանց ունեցվածքն ու կահկարասին ենթարկվել կողոպուտի: Եվ այս [արարքները] երկիրը հասցրել են ծայրաստիճան խռովահույզ և տագնապալի մի իրավիճակի: Իսկ կառավարությունը ոչ միայն չի պատժել և արգելել այդ կոտորածներն ու կողոպուտները սանձազերծող հանցագործներին, այլ ընդհակառակը, պաշտոնից հեռացրել, այն վալիներին ու մութասարիֆներին, որոնք պատասխանատվությունն իրենց վրա հանձն առնելով, հրաժարվել են գործադրել այդ տեղահանությունները ու կոտորածները:

Մի առանձին համայնք կազմող ամբողջ ժողովրդին այդ ձևով կոտորելը, բնաջնջելը և ունեցվածքի հափշտակությունը մտահղացվել և իրագործվել է կուսակցության այդ գաղտնի խմբավորման արնախում [մարդկանց] կողմից: Եվ այդ խմբավորման պարագլուխներն են եղել կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներ՝ Բեհաէդդին Շաքիր, դոկտ. Նազըմ, Ռիզա և Աթիֆ բեյերը: Ձեռք բերված և վերծանված ծածկագիր հեռագրերից պարզվում է, որ այդ չարագործ հանձնախումբն իշխող դիրք է ունեցել պետության վրա, իսկ կառավարությունն էլ պարզ խաղալիք էր դարձել նրանց անարգ մտահղացումներն իրագործելու խնդրում:

Նախկին մեծ վեզիր Իզզեթ փաշայի ռազմական մինիստրությունից հրաժարական տալու դրդապատճառը նույնպես հանդիսացել է պետական կառավարման մեջ մի ահաբեկչական ներքին ուժի ազդեցության արդյունքը: Սահմանադրության սկզբունքները կատարելապես ոտնահարված այդ տարօրինակ պետության մեջ, երբ Էնվեր և Ջեմալ էֆենդիները նշանակվեցին ռազմական և ծովային մինիստրների պաշտոններում, կառավարության ղեկը կատարելապես անցավ նրանց իշխանության ձեռքը: Այդպիսով, մեծ ազդեցություն բանեցնելով օրինական կառավարության վրա, սկսեցին բացահայտորեն գործադրել իրենց քմահաճ ցանկությունները ու նպատակները:

«Միություն և առաջադիմություն» [կուսակցության] կետրոնական կոմիտեի անդամ և նենգ մտահղացումների ու հիմնական ծրագրերը կյանքի են կոչվել նախկին մեծ վեզիր Թալաաթ էֆենդիի, Էնվերի և Ջեմալի կողմից: Ի սկզբանե կուսակցության որոշումների իրագործմանը հոգեպես և ամբողջ էությամբ նվիրվել են նաև նախկին մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան, նախկին շեյխ ուլ-իսլամ Հայրի էֆենդին, հանրակրթական նախկին մինիստր Շյուքրի բեյը, արդարադատության նախկին մինիստր Խալիլ բեյը, պետական խորհրդի նախկին նախագահ Իբրահիմ բեյը, արտաքին գործերի նախկին մինիստր Ահմեդ Նեսիմի բեյը և պարենավորման նախկին մինիստր Քեմալ բեյը: Ինչպես վերևում մանրամասն բացահայտվեց, սրանց սերտ համագործակցությունն առաջ է բերել մի ահաբեկչական ուժ, որը և գերիշխել է օրինական կառավարության վրա: Այսպիսով, ժողովրդի մեջ վախ ու սարսափ տարածելով՝ երկրի կառավարումը բռնի ուժով շեղել են իր օրինական ընթացքից: Վերոհիշյալ հանցագործ արարքներն առնչվում են կայսերական քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 5-րդ մասի

և 45-րդ հադվածի բովանդակության հետ: Այդ մեղադրանքով էլ նրանց գործը դատաքննության է ենթարկվում ռազմական արտակարգ ատյանում:

Նախկին շեյխ ուլ-իսլամ Մուսա Քյազիմ էֆենդին և հասարակական աշխատանքների նախկին մինիստր Աբբաս Հալիմ փաշայի կողմից կատարված հանցագործության աստիճանը դեռևս չի բացահայտված: Փոստի և հեռագրատան նախկին մինիստր Հյուսեյն Հալիմ բեյի, Ալի Մունիֆ բեյի և Մուստաֆա Շերեֆ բեյի մինիստրի պաշտոնում ավելի ուշ նշանակվելու, ինչպես նաև Իսմայիլ Ջանփոլատ բեյոն իր վարած պաշտոնում կողմնակի միջամտություններից դժգոհություն հայտնելով՝ հեռանալու հանգամանքները, հիմք են տալիս կարճելու նրանց նկատմամբ հարուցված դատական գործը:

Կալանքի տակ գտնվող մյուս անձանց նկատմամբ այլ հանցանշանակներ չլինելու դեպքում ազատ արձակման պահանջ է ներկայացվելու:

1335թ. (1919) մայիսի 22

ՈՐՈՇՈՒՄ

Տարբեր աստիճաններով դատաքննության ենթարկելու որոշում է կայացվել «Միություն և առաջադիմություն» կուսակցության այն անդամների և ղեկավարների նկատմամբ, որոնք ամբաստանվել էին մայրաքաղաքում և այլ վայրերում կանխամտածված կերպով կազմակերպված կոտորածների, կողոպուտի, գյուղերի ավերման, տների ու մարդկանց հրկիզման, բռնաբարության և այլ դաժանաբարո հանցագործությունների համար:

Փախուստի մեջ գտնվող մեղադրյալներ՝ Թալեաթ, Ջեմալ և Էնվեր էֆենդիների և նրանց մյուս մեղսակիցների նկատմամբ 1919թ. ապրիլի 12 թվագրությունը կրող մեղադրականի հիման վրա կատարված դատաքննության ընթացքում, ռազմական արտակարգ ատյանն իրազեկ դարձավ տեղի ունեցած այլ հանցագործություններին ևս, և քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի հիման որոշվեց մանրակրկիտ հետաքննություն կատարել փախուստի մեջ գտնվող հիշյալ մեղադրյալների, նրանց մեղսակիցների, այդ թվում մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշայի, Խալիլ, Իբրահիմ, Քեմալ, Ահմեդ Նեսիմի, Ահմեդ Ծյուքրի բեյերի, ինչպես նաև նախապես դատարան չներկայացած մյուս մեղսակիցների նկատմամբ: Դատաքննության ենթարկելու այս պահանջը հաստատվել էր նաև գլխավոր դատախազության 1335 (1919) թվականի մայիսի 3-ի մեղադրական եզրակացությամբ: Այսպիսով, հանձնախումբը մանրակրկիտ քննարկեց հարցաքննության ցյուրերն ու ներկայացված մեղադրականները:

Հայտնի է, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը ստեղծվել էր քաղաքական նպատակներով և այդ ուղղությամբ կազմվել էր մի կանոնադրություն: Կուսակցությունը քաղաքական ուղղությունից բացի ունեցել է նաև լեգալ և անլեգալ զանազան կազմակերպություններ: Օրինակ՝ «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ն ստեղծվել է [կուսակցության] ամենաազդեցիկ անդամներ՝ դոկտ. Նազըմի, Աթիֆի, Բեհաէդդին Շաքիրի և նրանց մյուս գործընկերների ամենասերտ աջակցությամբ: Բացի այդ, կենտրոնա-

կան կոմիտեի անդամ Քեմալ բեյի և նրա գործընկերների մասնակցությամբ կազմվել է նաև մի «պարենային հանձնախումբ»:

Վերոհիշյալ մեղադրականում մանրամասն նկարագրված է կուսակցության կենտրոնական կոմիտեի և նրա հանձնախմբերի գործունեությունը և այստեղ այդ բոլորը վերստին կրկնելու անհրաժեշտությունը չկա: Որպես ապացույց բերված գրություններից պարզվում է, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն իր գաղտնի նպատակներն ու ծրագրերը բոլոր ազգերի նկատմամբ հետևողականորեն իրագործելու համար դիմել է ահաբեկչական տարբեր միջոցների: Նույնիսկ իր գաղափարներին և ծրագրերին հակառակվող անձանց նկատմամբ կայացրել է մահապատժի վճիռ, ինչպես օրինակ՝ գալաթացի Խալիլը և մյուսները: Իսկ նրանց պաշտոնում նշանակել է իր մտերիմ կուսակցականներին: Եվ այդպես, օգտվելով պատերազմական իրավիճակից բխող արտակարգ դրությունից՝ ննջգ խարդավանքներով դիզել հսկայական հարստություն:

«Թանին» թերթի 1332 [1917] թվականի սեպտեմբերի 24-ի 2809 համարում համագումարին վերաբերող նյութերից բացահայտորեն երևում է, որ կուսակցությունն իր վրա էր վերցրել Ստամբուլի պարենավորման բոլոր հարցերը: Եվ զարմանալի չէ, որ այդ նախաձեռնություններից հետո ժողովուրդն ընկավ ծայրաստիճան թշվառության և ծանր կացության մեջ: Մեկ տարվա ընթացքում հավաքված 700000 լիրա փոխառության գումարը ևս օգտագործվեց կուսակցության քմահաճ ծախսումների համար:

«Միություն և առաջադիմություն» կուսակցության հանցագործ արարքներից մեկն էլ կենտրոնական կոմիտեի մտահղացմամբ և որոշմամբ կազմված տեղահանության օրենքն էր, և դրա գործադրման հետևանքով Օսմանյան կայսրության բոլոր կողմերում առաջ եկած ողբերգությունը: Լիովին ապացուցված է, որ արևելյան բոլոր վիլայեթներում տեղի ունցած տեղահանությունը կյանքի էր կոչվել «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավար անդամներից կազմված «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի հանձնախմբի կողմից, որի նախագահն այդ շրջանում Բեհաէդդին Շաքիր բեյն էր: Իսկ այդ խնդրի իրագործման համար էլ Բեհաէդդին Շաքիր բեյն օգտագործել էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարներին, լիազորներին և քննիչներին:

Այսպիսով «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը, անտեսելով երկրի գործադիր իշխանությունների իրավասությունները, ահաբեկչական ուժի միջոցով, իր ձեռքն է վերցրել երկրի ամբողջ կառավարումը և երբեմն մի առանձին ժողովրդի, երբեմն էլ ամբողջ Օսմանյան կայսրության ժողովուրդների նկատմամբ իրագործել իր կործանարար նպատակներն ու ծրագրերը: 1324 (1908) թվականից ի վեր երկրում տեղի ունեցող տարօրինակ իրադարձությունները և հատկապես բալկանյան պատերազմի ընթացքում առաջ եկած ողբերգական դեպքերը նրանց մոլի տենչանքների իրականացման արդյունքը հանդիսացան:

Կուսակցությունն իր քաքուն նպատակներն ու ծրագիրն իրագործելու համար Էնվեր բեյին նշանակեց ռազմական մինիստրի պաշտոնում: Իսկ նախկին մեծ վեզիր Ահմեդ Իզզեթ փաշայի քանիցս հրաժարական տալը նույնպես առնչվում է կուսակցության ահաբեկչական գործունեության հետ: [Հայերի] տեղահանության ընթացքում մի շարք վիլայեթների

հատուկ հրահանգներ տալու գաղափարը նույնպես կուսակցության կենտրոնական կոմիտեի մի քանի անդամների չարաճճենգ մտահղացումների արդյունքն է: Եվ վերջապես, նրանց օրինազանց գործարքները հաստատվում են Էրզրումի վալի Թահսին բեյի տված ցուցմունքներով, ինչպես նաև մի շարք պաշտոնատար անձանց, այդ թվում Յոզղաթի մութասարիֆ Ջեմալ բեյին, Կաստամոնուի վալի Ռեշիդ փաշայի և Անկարայի վալի Մազհար բեյին պաշտոնազրկելու ապացույցներով:

Գ-ավառներում կատարած իր ահաբեկչական արարքներին զուգընթաց կուսակցությունը սերտ միջամտություն է ունեցել նաև կենտրոնական կառավարության գործունեությանը: Պետական մինիստրների ընդհանուր մեջլիսի մեջ խցկել է իր ազդեցիկ անդամներին և անիրավասու մասնակցել զանազան հարցերի քննարկումներին: Այսպես, ընդհանուր մեջլիսում մասնակցել է Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը կնքելու հարցի քննարկմանը: Կանոնավորապես միջամտել է պարենային հարցի քննարկումներին և սահմանել յուրահատուկ հսկողություն: Կարծիքներ է փոխանակել պատերազմական իրավիճակի հետ առնչվող հարցերում, և ինչպես բացահայտվեց մեղադրյալների մի քանիսի խոստովանություններից, երկրի համար կենաց մահու նշանակություն ունեցող համաշխարհային պատերազմին մասնակցելու խնդրում իր ծրագրերն իրագործելու համար կուսակցության պարագլուխները հավաքվել են մեծ վեզիրի ծովեզրյա դղյակում և կայացրել վերջնական վճիռ:

Կուսակցության ասպարեզ գալուց հետո, գործադրված արտակարգ բռնություններին զուգընթաց, զանազան պատրվակներ են ստեղծել երկրի ժողովուրդներին թշնամացնելու ուղղությամբ: Հետևանքը եղել է այն, որ մահմեդական և ոչ մահմեդական տարրերը ստիպված լքել են իրենց բնակավայրերը և գաղթել այս ու այն կողմ: Դարերից ի վեր հաշտ ու խաղաղ ապրող Անատոլիայի ժողովուրդների մեջ սերմանել են փոխադարձ թշնամանք և ոխակալություն: Եվ այս իրավիճակը ստեղծողներն ու գործադրողներն եղել են կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներն ու նրանց հետ համագործակցող շրջանային պատասխանատու քարտուղարները: Լիովին ապացուցված է, որ [կայսրության] բոլոր տարրերի միջև փոխադարձ ոխակալության խորացումը բխել է կենտրոնական կոմիտեի ընդունած որոշումներից և կատարած գաղտնի գործարքներից:

Այստեղ ընթերցված նախորդ [մեղադրականից] ևս պարզվեց, որ կուսակցությունն իր թաքուն նպատակներն ու ծրագրերն իրականացնելու համար դիմել է ամեն մի միջոցի և այդ ասպարեզում կարողացել է բռնությամբ իրեն ենթարկել կառավարության գործադիր մարմիններին և ինքնիշխանության հասնել՝ պետության մեջ մի նոր պետություն ստեղծելու մոլուցքով տարված:

Այսպիսով, օրինական կառավարության մեջ մի առանձին ահաբեկչական ուժ ստեղծելու, կառավարությունն իր օրինական ուղուց շեղելու, և այլ հանցագործություններ կատարելու համար բավարար չափով հանցանշանների առկայության հիման վրա, ստորև նշված անձինք մեղադրվում են քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի համաձայն՝ 55-րդ հոդվածի վերջին մասով: Այդ թվում կուսակցության գլխավոր նախագահ, ց'այսօր փախուստի մեջ գտնվող Թալաաթ փաշան, ինչպես նաև ընդհանուր մեջլիսի անդամներ՝ նույնպես փախուստի մեջ գտնվող Էնվեր և Ջե-

մալ էֆենդիները: Կալանքի տակ գտնվող և դատաքննություն ավարտված նախկին մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան, ինչպես նաև մեջլիսի անդամներ՝ Հայրի և Մուսա Քյազիմ էֆենդիները, Քեմալ, Շյուքրի և Իբրահիմ բեյերը և Աբբաս Հալիմ փաշան:

Սրանցից Իբրահիմ բեյը, նույնպես դատաքննության է ենթարկվելու նշված հոդվածներով, բայց նկատի են առնվելու նրա հանցանքը մեղմացնող դրդապատճառները, այն է՝ կուսակցության մեջ նրա ունեցած պասսիվ դիրքը: Ալի Մյունիֆ բեյը նույնպես կմեղադրվի վերոհիշյալ հոդվածների հիման վրա, բայց հաշվի կառնվի, որ իր ուղևորության ընթացքում, Աղանայից անցնելու ժամանակ նա պաշտոնապես առնչություն չի ունեցել Աղանայի վիլայեթի տեղահանությունից զերծ մնացած հայերի մի մասի տարագրության հետ:

Այս խնդրում հանձնաժողովը նկատի կառնի ներքին գործերի մինիստրությունից առաքված հեռագրերը և կուսակցության ջանքերով տեղի ունեցած տեղահանության մանրամասնությունները:

Մեղադրյալներ Խալիլ և Ահմեդ Նեսիմի բեյերի դատաքննության ընթացքում նույնպես հաշվի են առնվելու ամբաստանությունը մեղմացնող հետևյալ պարագաները. առաջինի դատաքննության ընթաքում անհրաժեշտ է նկատի առնել, որ պատերազմի սկզբում, մեջլիսի նախագահ լինելով հանդերձ, նա չի մասնակցել ընդհանուր ժողովի քննարկումներին: Չի մասնակցել նաև տեղահանության քննարկմանը, իսկ տեղի ունեցած ողբերգությունների ընթացքում գտնվել է Եվրոպայում: Ահմեդ Նեսիմի բեյը, այդ դեպքերի ընթացքում նույնպես եղել է Եվրոպայում: Դատաքննության չենթարկելու որոշում էր կայացվել մինիստրի պաշտոնում հետագայում նշանակված Իսմայիլ Ջանփոլատի նկատմամբ, քանի որ նա ընհանրապես դեմ է եղել կատարվող այդ ողբերգություններին: Համաձնման որոշում էր կայացվել նաև Հաշիմ, Մուստաֆա Շարեֆ և Ռիֆաթ բեյերի նկատմամբ:

Այնուհանդերձ, քննարկման ընթացքում տեղի ունեցած տարաձայնությունների պատճառով նախագահությունն որոշեց բոլորին անխտիր ներկայացնել ռազմական ատյանին:

1335թ. (1919) մայիսի 26

3. ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ ՓԱԴԻՇԱՀԻ 1335Թ. (1919) ՄԱՐՏԻ 8-Ի ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նախագահ՝ գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշա,
անդամներ՝ գեներալ-մայոր Զեքի փաշա,
գեներալ-մայոր Մուստաֆա փաշա,
գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա,
գնդապետ Ռեջեբ Ֆերդի բեյ:

ԴԱՏԻ ՏՐՎԱԾ ՆԵՐԿԱ ԳՏՆՎՈՂ ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ – Նախկին շեյխ ուլ-իսլամ Մուսա Քյազիմ էֆենդի, նախկին շեյխ

ուլ-իսլամ Էսադ էֆենդի, նախկին սենատի նախագահ Ռիֆաթ բեյ, նախկին փոստի և հեռագրատան մինիստր Հյուսեյն Հաշիմ բեյ:

ՀԵՌԱԿԱ ԿԱՐԳՈՎ ԴԱՏԻ ՏՐՎԱԾ ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ – Նախկին [մեծ] վեզիր Թալաաթ փաշա, նախկին ռազմական մինստր Էնվեր էֆենդի, նախկին ծովային մինիստր Ջեմալ էֆենդի, նախկին հանրակրթական մինիստր դոկտ. Նազըմ բեյ, նախկին ֆինանսների մինիստր Ջավիդ բեյ, փոստի և հեռագրատան նախկին մինիստր Օսկան էֆենդի, նախկին առևտրի և հողագործության մինիստր Սուլեյման Էլբիստանի էֆենդի, նախկին առևտրի և հողագործության մինիստր Մուստաֆա Շերեֆ բեյ:

ԴԱՏԱՎՃԻՌ

Սույն դատավարության ընթացքում լսեցին մեղադրող և պաշտպանվող երկու կողմերին, մանրակրկիտ ուսումնասիրվեցին և հետաքննվեցին նաև բոլոր դատական փաստաթղթերը:

Թեև մեղադրյալները և նրանց դատապաշտպանները ջանացին ուրանալ գործադրված հանցագործությունները և պահանջեցին ազատություն, այսուհանդերձ 1335 (1919) մայիսի 3, 20, 22 և հունիսի 9, 10, 25 թվագրությամբ մեղադրական եզրակացություններով [բացահայտվեց] լուծարքի ենթարկված «Միություն և առաջադիմություն» կուսակցության իրավական դեմքը և հաստատվեց նրա մեղավորությունը կատարված բազմաթիվ հանցագործությունների մեջ:

[Կուսակցության] իրավական դեմքն արտահայտող ընդհանուր մեջլիսի հիշյալ անդամները մեղսակցություն են ունեցել գործադրված հանցագործություններում, ուստի հայց էր հարուցվել լսելու նրանց դատական գործը և որոշելու նրանց պատժի չափը: Կուսակցության հիմնադրումից ի վեր, եթե ծանր ու թեթև արվի նրա ծավալած գործունեությունը, ապա այսօր էլ կարելի է նկատել հեղափոխությունից առաջ մի շարք անձանց մոտ հանդես եկած հայրենասիրական զգացումների առկայությունը: Այս կապակցությամբ անհրաժեշտ է համառոտակի կանգ առնել հեղափոխությունից հետո տեղի ունեցած դեպքերի և ծավալված գործողությունների վրա:

Ազատության և արդարության անհամբեր սպասող օսմանցիները 1324 (1908) թվականի հուլիսի 9-ին Ռեսնեի լեռներից զուլալ ջրի նման բխած ազատությունն ընդունեցին երկնային սպեղանու տեղ և եկան այն ընդհանուր համոզմունքին և հավատքին, որ միայն այդ միջոցով կարելի է բուժել զուլումի և կեղեքումի վերքերը: Այդ ցասկոտ հեղեղի հոսքը մինչև իր բնական տեսքի գալը, մխիթարեց բոլորին, իսկ նրա ազդեցության ոլորտն անարգել տարածվեց բոլոր վայրերում՝ արդարության և ազատության հույս ներշնչելով Օսմանյան կայսրության բոլոր շրջանների ժողովուրդներին: Եվ մերթ ընդ մերթ լսվող այդ հոսանքի հաճելի ելևէջներն ուժ ու եռանդ էին տալիս բոլորին:

Մինչդեռ, անցած ժամանակի ընթացքում կատարված քաղաքական հանցավոր սխալների հետևանքով Օսմանյան կայսրության բազմաթիվ երկրամասեր, տարբեր պատրվակներով ձեռքից գնացին: Եվ այդ ուղղությամբ բավականին ջանքեր գործադրվեցին, որպեսզի այդ բոլորը վերագրվի նախկին կառավարության վարած սխալ քաղաքականությանը:

Կատարվում էր սպանված հույսերի ճիշտ հակառակը: Չկար մի իսկական նախաձեռնություն, որպեսզի ի չիք դարձներ տեղի ունեցող այդ բազմաթիվ աղետները:

Չնայած որ ազատության հաստատումից հետո անցել էր բավականին ժամանակ, այնուհանդերձ երկիրը լավ հիմքերի վրա դնելու համար չկար մի որոշակի ուղղություն: Դեռ ավելին, իրար հաջորդող [հողային] կորուստները, Իտալիայի և բալկանյան պատերազմների ցավալի հետևանքներն ազատության կարոտ ժողովրդի համար առավել շատ վիշտ ու մտատանջություն էին պատճառում: Ազգային կարիքների համար նրանց մտահղացած ծրագրերը մնացին սոսկ որպես նախաձեռնություն, իսկ նենգ նպատակներն իրացնելու համար նրանց մի մասը կանգնեց բոլորովին սխալ ուղու վրա: Այդ հուսաբեր շարժումը, որը զուլալ ջրի նման ազատություն էր բերելու ժողովրդին, սկսեց երկրի մի մասը քայքայել, իսկ մյուս մասն էլ հասցնել ամբողջովին ամայացնելու ցավալի վիճակին: Եվ սրանց մոտ ծագեցին իր նման չունեցող անհմաստ մտքեր: Հետևանքն եղավ այն, որ երկրի կառավարումն իր ուղուց շեղելով՝ սկսեցին զբաղվել անօրեն բախտախնդրություններով: Եվ այդպես, տևական խարդավանքով զբաղվող այդ մոլորյալ անձերից ստեղծվեց մի գործադիր հանճնաժողով, որն ենթարկելով իրեն օրինավոր կառավարության մինիստրների խորհրդին, աստիճանաբար երկրի ամբողջ կառավարումը վերցրեց իր ձեռքը: Այսպես [կուսակցության] պարագլուխները սողոսկելով մեջլիս՝ սկսեցին իրագործել իրենց ծրագրերն ու նպատակները:

24-26 թեշրին-ի սանի 1334 [1918թ. նոյեմբերի] թվագրությամբ պատգամավորների մեջլիսի 5-րդ մասնաճյուղի արձանագրության մեջ ֆինանսների մինիստր Ջավիդ բեյի ելույթից հասկացվում է, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության գործադիր կոմիտեն երկրին և ժողովրդին վերաբերող կենսական հարցերը քննարկելու խնդրում կատարել է վերին աստիճանի անհանդուրժելի գործարքներ: Պատերազմ հայտարարելու խնդրում անհրաժեշտ չի համարել տվյալ հարցը գոնե քննարկել պատգամավորների մեջլիսում, մինչդեռ, վեհապետներն անգամ տարակուսել են նման հարցում անմիջական վճիռ և հրամաններ արձակել: Նույնիսկ ընդդիմադիր անձինք, որոնք ինչ-որ չափով համակրություն են ունեցել կուսակցության նկատմամբ, քննադատել են նրա այդ ընթացքը, քանի որ իրենց հեռատեսությամբ կռահել են, որ գործերի նման կառավարումն ի վերջո կունենա վատ հետևանքներ:

Հայտնի է, որ հեղափոխության սկզբնական շրջանում ակամայից հայտարարված արտակարգ դրությունը բավականաչափ երկար տևեց և կուսակցության ղեկավար կազմից մի խմբավորում հարձակվելով Բարձրագույն Դռան վրա՝ սպանեց ռազմական մինիստր Նազըմ փաշային, նրա թիկնապահին և այնուհետև լուծարքի ենթարկեց Ջյամիլ փաշայի կաբինետը և կազմեց «Միություն և առաջադիմություն» կուսակցության կաբինետը: Փորձառու, պատվավոր և կարող պաշտոնյաները հեռացվեցին և նրանց տեղ նշանակվեցին կուսակցության անդամները, որոնց քմահաճ կառավարումն ոչնչով չէր տարբերվում ինքնակալության շրջանից: Ինչ խոսք, որ բռնապետությունից դժգոհ էին բոլորը, հատկապես, դժգոհ էին ոչ մահմեդական տարրերը: Նամանավանդ՝ մեզ բոլորիս խաղաղություն, ապահովություն և արդարություն բերող սահմանադրության հարցում, հայ

ժողովրդի գործադրած և ունեցած խորը համոզմունքը նրանք ճիշտ չհասկացան և սկսեցին առաջ քաշել [հայերի] նախկին ազգայնական տենչանքների աճման պատճառաբանություններ, երկպառակություններ ու ոխակալություն սերմանել այլ տարրերի միջև, և նույնիսկ ազգայնական և ցեղային հարցեր առաջ բերել մահմեդական ժողովուրդների միջև:

Օսմանցիներին հասցված վնասն ակնհայտ էր: Հետևաբար, կատարված հարցաքննությունը, մանրամասն հետաքննությունը, մեղադրական եզրակացությունը և ստորև շարադրված ռազմական ատյանի հինգ հոդվածները լիովին հաստատում են «Միություն և առաջադիմություն» կուսակցության՝ նրա իրավական դեմքին վերաբերվող հանցագործությունները և մենք բոլորս համոզված ենք, որ կուսակցության պարագլուխներն իրենց անհանդուրժելի արարքներով արատավորեցին հիշյալ կուսակցության անունը:

Այսպիսով, գործադրված հանցագործ արարքները չեն կարող վերագրվել կուսակցության բոլոր անդամներին, այլ հիշյալ հանցագործությունների հետ առնչություն կամ մասնակցություն ունեցողներին և նրանց հանդեպ է, որ գործադրվելու են օրենքի պահանջները:

Պաշտպանության ընթացքում դատապաշտպանը նշեց, որ քաղաքական կուսակցությունների առկայությունը բխում է սահմանադրության անհրաժեշտությունից, որ այսօր էլ մեր երկրում գոյություն ունեն այլ կուսակցություններ և վերջապես այն հայտարարությունը, որ «Ազատություն և համաձայնություն» կուսակցությունը «Միություն և առաջադիմություն» կուսակցության նման ունի կենտրոնական կոմիտե, ընդհանուր ժողով և մասնաճյուղեր, որ այդ կուսակցության ղեկավարները ևս հրավիրվում են մեջլիսներին: Այդ մասին եզրակացնելով՝ անհրաժեշտ է նշել հետևյալը: Սահմանադրությամբ կառավարվող պետություններում կուսակցությունների գոյությունը, եթե անհրաժեշտություն է, բացարձակապես չի կարող միջամտել կառավարության գործերին: Ազգային ժողովներում մեծամասնություն կազմելու իրենց նպատակն իրականացնելուց հետո, վստահության արժանացած կաբինետներին պետք է կատարելապես ազատ թողնեն և բոլորովին չխառնվեն նրանց գործունեություններին: [Կուսակցությունները] կարող են միայն ջանք գործադրել կազմվող օրենքներն իրենց ծրագրերին հարմարեցնելու խնդրում և իրենց դուր չեկող կաբինետները ցրելու համար, ոչ թե սպառնալիքներ, այլ գուցե չվստահելու ջանքեր գործադրեն:

Ինչ վերաբերում է մեր երկրի կուսակցություններին մինչև օսմանյան ազգային ժողովի բացվելը, քանի որ հայտնի է, թե որ կուսակցությունն է ձայների մեծամասնություն հավաքել, ուստի այն չի կարող իր ազդեցությունը պարտադրել կամ միջամտել կառավարության գործադիր կոմիտեի աշխատանքներին, սահմանադրության դրույթները խախտել և կամ էլ օրենքները փոփոխել: Այսպիսի անօրեն արարքներ կատարելու դեպքում պարզ է, որ յուրաքանչյուր կուսակցություն նման վախճան է ունենալու: Այսպիսով, դատավարության ընթացքում վերոհիշյալ դատապաշտպանի ելույթը զուրկ է ամեն մի հիմքից:

Նախապես հայտարարված հինգ հոդվածները հետևյալներն են:

Առաջին. Ռազմական ատյանի դատավարության վերջում բացահայտվեց, որ Տրապիզոնում, Յոզղաթում, Բողազլյանում և այլուր տեղի ունեցած կոտորածները կազմակերպվել և գործադրվել են «Միություն և

առաջադիմություն» կուսակցության պարագլուխների կողմից: Դատապաշտպանության ընթացքում նշվեց, որ այդ կոտորածների մասին իբրև թե նրանք տեղեկացել են գործադրվելուց հետո: Մինչդեռ, լիովին բացահայտվեց, որ այդ մասին իրազեկ դառնալուց հետո էլ ոչ մի միջոց չեն ձեռնարկել այդ կոտորածները կանխելու համար:

Երկրորդ. [Մեջլիսի] ընդհանուր նախագահ, նախկին [մեծ] վեզիր Սայիդ Հալիմ փաշայի՝ մեջլիսին հղած զեկուցագրի բովանդակությունից պարզվել է, որ նա պատերազմի սկզբում կենտրոնական կոմիտեի անդամներին իր ծովեզրյա ապարանքը հրավիրելով՝ հայտնել է պատերազմին մասնակցելու վտանգավորության մասին և բացատրել, որ պետության համար առավել նպաստավոր դիրքորոշումը չեզոքությունն է, բայց չի կարողացել համոզել նրանց: Միևնույն ժամանակ «Միություն և առաջադիմություն» կուսակցության պատասխանատու ներկայացուցիչներից Ռիզա բեյը հարցաքննության ժամանակ խոստովանեց, որ պատերազմ հայտարարելուց առաջ Տրապիզոնում կազմակերպված չեթեների խմբին հարձակման նպատակով ուղարկել է Ռուսաստանի խորքերը:

Ստույգ հաստատված է, որ պատերազմը հայտարարվել է առանց մեջլիսի որոշման: Տվյալ ժամանակի ֆինանսների մինիստր Ջավիդ բեյը, հասարակական աշխատանքների մինիստր Չյուրյուք Սուլի Մահմուդ փաշան, փոստի և հեռագրատան մինիստր Օսկան էֆենդին և առևտրի մինիստր Սուլեյման Էլբիստանի էֆենդին հրաժարականի խնդրանք են ներկայացրել այն պատրվակով, որ պատերազմ հայտարարելու որոշումը կայացվել է «Միություն և առաջադիմություն» կուսակցության ցանկությամբ, այլ ոչ թե մինիստրների խորհրդում:

Երրորդ. Քերված վկայությունների արձանագրությունից եզրակացվում է, որ նախկին մեծարգո վեզիր Ահմեդ Իզզեթ փաշայի ռազմական մինիստրությունից հրաժարական տալը տեղի է ունեցել կուսակցության միջամտության ընթացքում տեղի ունեցած վեճերից հետո:

Չորրորդ. «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի նախաձեռնությամբ Ստամբուլի պատգամավոր Քեմալ բեյը պարենավորման հարցերով նշանակվել է պաշտոնի և այնուհետև նրա պաշտոնավարությունը հաստատվել է ընդհանուր ժողովում և համագումարում: [Քեմալ բեյի] կողմից ստեղծվել են նախ առևտրական հանձնախմբեր, հետո մի քանի ընկերություններ և հաստատություններ: Այսպիսով, առևտրական գործերի մենավաճառությունն իրենց ձեռքն առնելով՝ սկսել են բռնագրավել ժողովրդի ունեցվածքը և հանձնել վերոհիշյալ ընկերություններին և մի շարք անձանց: Այս պարագան պատճառ է հանդիսացել օսմանցիների աղքատացման, հուսահատության և նույնիսկ մահվան: Վերջապես այդ բոլորը նպաստել են երկրի պաշտպանողական ուժի թուլացմանը: Կառավարական մի շարք պաշտոնների նշանակումը տեղի է ունեցել «Միություն և առաջադիմություն» կուսակցության Ստամբուլի կենտրոնի միջամտությամբ: Այս բոլորի մասին հայտնի է դարձել 1332թ. [1916] համագումարում ընդունված բանաձևի բովանդակությունից, ինչպես նաև այս խնդրին վերաբերող քաղաքային տեսչությանն ուղարկած ներփակ գրությունից:

Հինգերորդ. Երբ սենատում քննարկվում էր Շարիաթական դատարանն արդարության մինիստրություն փոխադրելու հարցը, շեյխ ուլ-իսլամ

Քյազիմ էֆենդին ասել է. «Իմ կարծիքը մի հարցնեք, կուսակցությունն այսպես է ուզել, ուրեմն՝ այսպես էլ պիտի լինի»: Դատավարության ընթացքում այս խնդրի արծարծումը ցույց է տալիս կուսակցության՝ պետական գործերին միջամտելու փաստը:

Վերևում բերված հինգ հոդվածները և զանազան տարաձայնություններով տեղի ունեցած քննարկումներն ու նրանցից բխած եզրակացությունները ցույց են տալիս, որ պետության կարևոր գործերի մի մասը կյանքի է կոչվել իրենց իսկ նպատակների և մտադրությունների համաձայն և անմիջական միջամտությամբ, առանց հաշվի առնելու պետության միևիստրների կարծիքն ու տեսակետը: Հետաքննությունը ցույց տվեց, որ օսմանյան պետության օրենքներն ստեղծվել են «երեքի զորությամբ» և այդ օրինազանցությունը կատարվել է ահաբեկչական ուժ գործադրելու միջոցով: Այսպիսով, վերոհիշյալ հանցագործ արարքների անմիջական հեղինակներն են «Միություն և առաջադիմություն» կուսակցության իրավական դեմքն արտահայտող նրա պարագլուխներն ու ընդհանուր մեջլիսի անդամները: Այդ թվում՝ փախուստի մեջ գտնվող նախկին մեծ վեզիր Թալաաթ փաշան, նախկին ռազմական մինիստր՝ այժմ զինվորական շարքերից վտարված Էնվեր փաշան, նախկին ծովային մինիստր՝ նույնպես զինվորական շարքերից վտարված Ջեմալ էֆենդին և նախկին հանրակրթական մինիստր դոկտ. Նազըմ էֆենդին, որոնց անմիջական հեղինակությամբ կատարվել են այդ հանցագործությունները: Տվյալ հանցագործություններին անուղղակիորեն մասնակցել են նաև հիշյալ մեջլիսի անդամներից նույնպես փախուստի մեջ գտնվող նախկին ֆինանսների մինիստր Ջավիդ բեյը, ինչպես նաև առևտրի և հողագործության մինիստր Մուստաֆա Շերեֆ բեյը: Բացահայտված է, որ կատարված հանցագործություններում իրեն մեղսակցությունն է ունեցել նաև նույն ընդհանուր ժողովի անդամներից՝ դատարանում ներկա գտնվող նախկին շեյխ ուլ-իսլամ Մուսա Քյազիմ էֆենդին:

Թեև դատապաշտպանը և դատախազն իրենց ելույթներում նշեցին նրա առաքինի, լավ հատկանիշները, կրոնական գիտելիքները, բարձր նկարագրի մասին և տարակուսանք հայտնեցին հիշյալ կոտորածների հղացման և մասնակցության հարցում նրա ունեցած դերին, այնուհանդերձ հաստատվեց, որ հեղափոխությունից հետո նա եղել է հիշյալ կուսակցության կարևոր պարագլուխներից մեկը և ունեցել է մեծ ազդեցություն:

Արդ, դատախազի և դատապաշտպանի նման զարգացած անձնավորությունները, եթե հարկադրաբար լավ կարծիք են արտահայտում նրա նկատմամբ և կուսակցության գործունեությունը համարում օրինական, ապա բնական է, որ բոլորովին թյուր կարծիք պիտի ստեղծվեր նաև ոչ բավարար կրթություն ստացած տգետ մարդկանց մոտ: Հայտնի է, որ Մուսա Քյազիմ էֆենդին ղեկավարել է «Միություն և առաջադիմություն» կուսակցության կրոնագիտական մասնաճյուղը: Երբ հարցում եղավ շարիաթի պատվիրաններին հակառակ կատարված արարքների ու քարոզների վերաբերյալ, նա պատասխանեց, որ նման արարքների նշաններ չկան, որ ինքը տվյալ խնդրին վերաբերող իր քարոզներում հավանություն չի տվել: Սակայն խոստովանեց նաև, որ հիշյալ արարքի (տեղահանության և կոտորածի) արգելման համար էլ գործնական ոչ մի միջոց չի ձեռնարկել: Իսկ դատավարության ընթացքում նրա արած այն համեմատությունը, որ «Մի-

ության և առաջադիմության» կուսակցությունից դուրս գալը նշանակում է իսլամի կրոնից հրաժարվել, չի կարող համընկնել նրա առաքինի, լավ նկարագիր ունենալու մտքի հետ: Այս պարագան նույնպես համարվում է ծանրացուցիչ գործոններից մեկը: Հարցաքննությունից և հետաքննությունից պարզվեց, որ վերոհիշյալն առավելաբար զբաղված լինելով կուսակցության կրոնագիտական հարցերով, ուղղակի չի գտնվել հիշյալ կոտորածների բուն կազմակերպիչների շարքում, այնուամենայնիվ նա ունեցել է անուղղակի մասնակցություն:

Այսպիսով, լիովին բացահայտվում է, որ կոտորածի գործադրման որոշումը հիմնականում համաձայնեցվել է երեքի միջև:

Հետաքննության ընթացքում սենատի նախկին նախագահ Ռիֆաթ բեյի, «Միության և առաջադիմության» կուսակցության քննարկումներին մասնակցելու հարցը չհաստատվեց: Պարզվեց նաև, որ հիշյալ կոտորածների գործադրման խնդրում ինքը մասնակցություն չի ունեցել: Այսպիսով, բոլորի համաձայնությամբ նա անմեղ ճանաչվելով՝ ազատ է արձակվում: Բացահայտվեց նաև, որ վոստի և հեռագրատան նախկին մինիստր՝ Հաշիմ բեյը, Բեռլինում գտնվելու ընթացքում, առանց իր համաձայնության նշանակվել է [մինիստրի պաշտոնում] և Ստամբուլ վերադառնալուց հետո, ինքնաբերաբար անցել է պաշտոնի: Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ մինիստրի պաշտոնում նրա նշանակվելը զուգադիպել է «Ռթթիհատի» կաբինետի վերջին տարիների գործունեության հետ: Ըստ իր խոստովանության, երեք անգամ ներկա է գտնվել ընդհանուր մեջլիսի խորհրդակցություններին, որտեղ կանոնադրությունից դուրս քննարկումները չեն եղել և, ինքն էլ մնալով սոսկ ունկնդրի դերում, գործունյա մասնակցություն չի ցուցաբերել: Այս արդարացուցիչ հանգամանքն նրա անմեղությանը տեղիք տալով՝ ձայների մեծամասնությամբ որոշվեց նրան ևս ազատ արձակել:

Վերոհիշյալ [մեղադրյալների] պատժի չափը քննարկելու ընթացքում նկատի առնվեց, որ Թալաաթի, Էնվերի, Ջեմալի և դոկտ. Նազըմի կատարած հանցագործ արարքները չափազանց ծանր են, ուստի որոշվեց նրանց դատել կայսերական քաղաքացիական քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի առաջին կետով: Ջավիդի, Մուստաֆա Շերեֆի և Մուսա Քյազիմի համար նկատի առնվեց հիշյալ հոդվածի երկրորդ և նույն կայսերական օրենսգրքի 55-րդ հոդվածի վերջին մասերը, ուր ասված է.

«Մի խումբ անձնավորություններ մի ոճրագործություն կամ հանցանք խմբովին կատարելու դեպքում, կամ մի խումբ անձնավորություններ բազմաթիվ արարքներից բաղկացած մի ոճրագործություն կամ հանցանք գործելիս, ոճրագործության ընթացքում նրանցից յուրաքանչյուրն այդ արարքներից որևէ մեկը կամ մի քանիսը կատարելու դեպքում նույնպես գործակից են համարվում և պատժվում են իսկական հանցանք կատարողի նման»:

«Սահմանադրությունը, կառավարության ձևն ու էությունը, կամ վսեմ սուլթանությունում գոյություն ունեցող կարգերը բռնի կերպով փոխելու կամ հեղաշրջելու նախաձեռնության մեջ գտնվող անձնավորությունների գործունեությունը հաստատվելու դեպքում սահմանվում է մահապատիժ»:

«Մի ոճրագործության կամ հանցագործության անուղղակի մասնակցություն ունեցած անձնավորությունները, օրենքի չբացահայտված

մասերում, պատժի են ենթարկվում հետևյալ կերպ. եթե գլխավոր հանցագործին մահապատիժ կամ ցմահ տաժանակիր աքսոր է սահմանվում, ապա մեղսակիցներին 10 տարուց ոչ պակաս ժամանակավոր բանտարկություն...»:

Օրենսգրքում առկա այս հոդվածների հիման վրա Թալաաթը, Էնվերը, Ջեմալը և դոկտ. Նազըմը դատապարտվում են մահվան, իսկ Ջավիդը, Մուստաֆա Շերեֆը, Մուսա Քյազիմը 15-ական տարի ժամկետում աքսորի: Փախուստի մեջ գտնվողներին զրկել քաղաքացիական իրավունքներից, իսկ բռնագրավված ունեցվածքի հարցում գործել համաձայն օրենքի: Վերոհիշյալ Ռիֆաթ և Հաշիմ բեյերին վերաբերող անմեղության որոշումն ընդունված է իրենց պաշտոններից բխած հանգամանքների բերումով և հետագայում գերագույն դատարանում ենթակա չէ քննության:

Հետաքննությունը բացահայտեց նաև, որ փոստի և հեռագրատան նախկին մինիստր Օսկան էֆենդին և առևտրի նախկին մինիստր Սուլեյման Էլբիստանի էֆենդին երկար ժամանակ Եվրոպայում գտնվելու պատճառով, հնարավոր չի եղել նրանց հրավիրել դատաքննության: Հավանաբար, իրազեկ լինելու դեպքում էլ նրանք [Ստամբուլ] վերադառնալու հնարավորությունը չէին ունենա:

Սույն դատավճիռը միաձայն ընդունվեց ի բացակայություն Թալաաթ, Էնվեր, Ջեմալ, դոկտ. Նազըմ, Ջավիդ, ինչպես նաև Մուստաֆա Շերեֆ, Օսկան և Սուլեյման Էլբիստանի էֆենդիների, իսկ իրենց ներկայությամբ՝ Ռիֆաթ, Հաշիմ և Մուսա Քյազիմ բեյերի:

5 թեմմուզ 1335թ.
[1919թ. հուլիսի 5]

Ռազմական արտակարգ
ատյանի նախագահ՝ սպայակույտի գեներալ-լեյտենանտ
Մուստաֆա Նազըմ բեյ Ահմեդ

Ռազմական արտակարգ
ատյանի անդամ՝ սպայակույտի գեներալ-մայոր
Ալի Նազըմ

Ռազմական արտակարգ ատյանի անդամ՝
հետևակային գնդապետ Ռեջեբ Ֆեդդի բեյ Մեհմեդ Ալի

«Այս դատավճռին մասնակից լինելով հանդերձ՝ ես այն համոզմունքին եմ, որ մեղադրյալ Հաշիմ բեյն անուղղակի կերպով մասնակցություն է ունեցել նշված հանցագործություններին, քանի որ իր ցուցմունքներն ու առկա ապացույցները այդ են վկայում»:

Ռազմական արտակարգ ատյանի անդամ՝
սպայակույտի գեներալ-մայոր Մեհմեդ Զեքի:

«Կենտրոնական կոմիտեի կողմից ձեռնարկված կոտորածների հարցում Մուսա Քյազիմ էֆենդին իրեն անմեղ է համարում, նկատի ունենալով, որ ինքը ծառայել է հիշյալ կենտրոնից՝ կրոնի և կրոնագիտության պարտականություններից ելնելով: Ես կողմնակից եմ նրանց հետ, ովքեր հաստատում են հանցագործության հետ նրա ունեցած առնչությունը, քա-

ևի որ գործադրված հանցագործություններին ո՛չ մեկի նկատմամբ նա արգելք չի հանդիսացել և նույնիսկ չի հեռացել իր պաշտոնից: Հաշիմ բեյի ցուցմունքներից ևս բացահայտվում է, որ նա նույնպես կապված և հավատարիմ է եղել հիշյալ կենտրոնին և վերոհիշյալ հանցագործությունների կատարման ընթացքում ո՛չ մեկի դեմ չի պայքարել: Մինչդեռ դատաքննության օրերին նա իրեն արդարացնում էր, որ ինքն առնչություն չի ունեցել հիշյալ կենտրոնի կատարած հանցագործ արարքների հետ: Ես նույնպես կողմնակից եմ նրանց հետ, որոնք դատապարտում են նրան անուղղակի մասնակցություն ունենալու մեղադրանքով»:

Ռազմական արտակարգ ատյանի անդամ՝
սպայակույտի գեներալ-մայոր Մուստաֆա
բեյ Ազիզ Սուլեյմանի:

Հաստատվում է.
Դատավճռի սույն արձանագրությունը վավերացված է ռազմական արտակարգ ատյանի անդամների կնիքներով:

5 թեմմուզ 1335թ.
[1919թ. հուլիսի 5]

[կնիք]
ՌԱԶՄԱԿԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ
ԱՏՅԱՆ

[ստորագրություն]
ՆԱԶԸՄ

Ռազմական արտակարգ ատյանի արձանագրական հանձնախմբի պետ՝ Աբիդին Դավեր:

Takvim-i Vekayi, 5 Temmuz 1335 (1919) № 3604.

4. ՌԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նախագահ՝ գեներալ-մայոր Էսադ փաշա,
անդամներ՝ գեներալ-մայոր Մուստաֆա Քերիմ փաշա,
գեներալ-մայոր Իսմայիլ Հաքքը փաշա,
գնդապետ Սուլեյման Շաքիր բեյ:

ԴԱՏԻ ՏՐՎԱԾ ՆԵՐԿԱ ԳՏՆՎՈՂ ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ – Մանիսայի պատասխանատու քարտուղար Ավնի բեյ, Բեյօղլուի պատասխանատու քարտուղար Հասան Սելահեդդին բեյ, Էսկիշեհիրի պատասխանատու քարտուղար դոկտ. Բեսիմ Զուհդի բեյ, Բրոսայի պատասխանատու քարտուղար դոկտ. Միդհատ բեյ, Սիրգունի պատասխանատու քարտուղարի տեղակալ Ջևդեթ բեյ, Հալեպի պատասխանատու քարտուղար Ջեմալ բեյ, Էդիրնեի քննիչ Աբդուլ Ղանի բեյ, Կոնիայի պատասխանատու քարտուղարի տեղակալ Աբդուլ Քադիր էֆենդի, Կաստամոնուի

պատասխանատու քարտուղարի տեղակալ Հասան Ֆեհմի էֆենդի, Կարահիսարի սանիտարական հանձնաժողովի նախկին նախագահ Ակյան բեյ, Կարահիսարի նախկին պաշտոնյա Հայրեդդին բեյ:

ԴԱՏԱՎՃԻՌ

Սույն դատավարության ընթացքում լսեցին մեղադրող և պաշտպանվող երկու կողմերին, մանրակրկիտ ուսումնասիրվեցին և հետաքննվեցին բոլոր դատական փաստաթղթերն ու արձանագրությունները:

Պարզվեց, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության պատասխանատու քարտուղարներն ու լիազորները զինադադարից անմիջապես հետո, գրեթե երկրի բոլոր շրջաններում ծավալել են երկպառակտչական քայքայիչ գործունեություն, սանձարձակորեն սկսել են խռովություններ առաջացնել ժողովրդի մեջ, խանգարել մարդկանց անդորրը: Հայրենիքը հասցրել են կործանման եզրին:

Հետաքննչական փաստաթղթերի հիման վրա ներքին գործերի մինիստրությունը հավանություն էր տվել նրանց կալանքի տակ առնելու և Ստամբուլի ռազմական ատյանի քննությանն ուղարկելու որոշմանը:

Վերոհիշյալ պատասխանատու քարտուղարների և լիազորների հարցաքննություններից պարզվեց, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը, ամբողջ երկրի կառավարումն իր ձեռքը վերցնելուց հետո, երկիրը ներքաշել է համաշխարհային պատերազմի մեջ, կատարել տեղահանություններ, կոտորածներ և կողոպուտ: Միևնույն ժամանակ զբաղվել է առևտրի չարաշահումներով, և այլ անօրեն գործարքներով քայքայել է Օսմանյան կայսրության հզորությունը, երկիրը հասցրել ծայրաստիճան թշվառության...:

Տեղահանված հայերի մի քանիսի բնակարաններն ակումբի վերածելով կահավորել են լքյալ գույքով: Ընտրությունների ընթացքում փոխանակ արդար մոտեցում ունենալու, բռնել են անիրավությունների ուղին և, ուժի դիրքից ելնելով, բազմիցս միջամտել են կառավարության գործերին և ճնշումներ գործադրել ժողովրդի վրա: Հակառակ այս ահաբեկչական քաղաքականությանը, սակավաթիվ են եղել այն մարդիկ, որոնք համարձակվել են օրինականությունը պաշտպանել, սակայն [կենտրոնական կոմիտեի անդամները] տարբեր ձևերով սպառնացել են նրանց: Եվ, վերջապես, սահմանադրությունը խախտելով՝ ստեղծել են նման չունեցող բմահամ կառավարություն:

Նայնաստ հավաքելիս և ներքին փոխառության տոմսեր վաճառելիս պատասխանատու քարտուղարները, կառավարության աչքի առաջ չարաշահելով իրենց դիրքը, բռնություններ են գործադրել և հակառակ օրենքի, կալանավորել, բանտարկել են այնպիսի մարդկանց, որոնք հանդգնել են բողոքել հավելյալ արժեքով վաճառք կատարողների դեմ:

[Պատասխանատու քարտուղարները] մասնակցել են պետության գործերին միջամտող «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կատարած վնասաբեր հանցագործություններին: Նրանք հատկապես մասնակցել են տեղահանություններին, կոտորածներին և հափշտակված, կողոպտված ապրանքների շնորհիվ դիզել հսկայական հարստություն: 1331 (1915) թվականի մայիսի 14-ին տեղահանու-

թյանը վերաբերող հրապարակված ժամանակավոր օրենքն օգտագործել են անձնական շահույթ ձեռք բերելու նպատակով: Վերջնականապես բացահայտված է, թե ինչպես վերոհիշյալ պատասխանատու քարտուղարներից և լիազորներից մի քանիսը նպաստել և օժանդակել են կենտրոնական կոմիտեի ծրագրին և իրենց մասնաճյուղերում հավաքագրված մարդասպանների և այլ հանցագործների միջոցով կազմակերպել են հայերի կոտորածը և կողոպտել նրանց ունեցվածքը: Զբաղվել են հարստահարությամբ և տիրացել նրանց լքյալ գույքին:

Մյուս դատավարությունների ընթացքում նշվեց, որ կենտրոնական կոմիտեի անդամ և «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի նախագահ Բեհաէդդին Շաքիր բեյն Էրզրումից՝ Խարբերդի պատասխանատու քարտուղար, այժմ փախուստի մեջ գտնվող Ռեսնելի Նազըմ բեյին առաքված ծածկագիր հեռագրում գրել է. «Չեր միջոցով ուղարկվող հայերը ոչնչացվում են՞, թե ոչ»: Իսկ Յոզղաթի լիվայում և Բողազլյանի կազայում տեղի ունեցած կոտորածի փաստաթղթերից, ինչպես նաև մեր ռազմական ատյանում տեղի ունեցած դատաքննություններից բացահայտվեց, որ Անկարայի պատասխանատու քարտուղար Նեջատի բեյի կողմից Յոզղաթի նախկին մութասարիֆ Ջեմալ բեյին առաջարկված է եղել չհակառակվել հայերի բնաջնջման խնդրին: Իսկ վերոհիշյալ Ջեմալ բեյի պաշտոնանկությունից հետո Բողազլյանի կայմակամ, ներկայումս կախաղան բարձրացված Քեմալը նշանակված էր եղել Յոզղաթի մութասարիֆի պաշտոնին:

Բերված փաստերից պարզորոշ երևում է, որ Կաստամոնուի շրջանի հայերը, ընդհանուր բնակչության թվի հետ համեմատած, շատ քիչ տոկոս են կազմել, և տեղահանության օրենքի համաձայն նրանք չպետք է ենթարկվեին տարագրության: Այնուհանդերձ, այն ժամանակ, երբ Կաստամոնուի վալի Ռեշիդ փաշան, ըմբոստանալով տեղահանության դեմ պնդել է, հետևյալ խոսքերով՝ «Ես իմ ձեռքերս արյան մեջ չեմ թաթախի», վերջինս իսկույն հեռացվել է պաշտոնից՝ նույն Կաստամոնուի պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմի էֆենդիի նախաձեռնությամբ և առաջարկով, իսկ նրա տեղ նշանակվել է Աթիֆ բեյը, որը և եռանդագին իրագործել է տեղահանությունը և պատճառ հանդիսացել ողբերգական իրադարձությունների:

Այս նույն ձևով էլ Միդհատ բեյը, գնալով Ստամբուլ, ըմբոստության համար հեռացնել է տվել պաշտոնից Բալուի մութասարիֆի տեղակալ Ալի Իլմի բեյին: Իսկ Բալուի տեղահանության ընթացքում պատասխանատու քարտուղար դոկտ. Միդհատ բեյը ժողովրդին հորդորել է, ասելով, որ «հայերին չենք ուզում» և իր հրահանգով և ներգործությամբ իրականացվել է Բալուի տեղահանությունը:

Ահա այս ձևով և օրենքի բուն ոգուն հակառակ, տեղահանությունը համատարած կերպով ծավալվել է բոլոր շրջաններում և առաջ բերել ողբերգական ծանր իրավիճակ: Բոլոր ապացույցներն ու փաստերը լիովին հաստատում են, որ կոտորածներն անմիջականորեն իրականացվել են «Միություն և առաջադիմություն» կուսակցության ստեղծած «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի կողմից, իսկ պատասխանատու քարտուղարներն իրենց մասնակցությամբ նպաստել ու հեշտացրել են այդ գործը:

Այսպիսով, կատարված հանցագործությունները բոլոր ամբաստանյալներին հավասար չափով չի կարելի վերագրել: Նրանց մասնակցու-

թյան չափն ու աստիճանը բացահայտելու համար անհրաժեշտ եղավ ուշադրություն դարձնել յուրաքանչյուրի առանձին կատարած հանցանքին:

Ըստ վկաների տված ցուցմունքի, Կաստամոնուի նախկին վալի Ռեշիդ փաշան հեռացվել է իր պաշտոնից նույն Կաստամոնուի պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմի էֆենդիի նախաձեռնությամբ: Հասան Ֆեհմի էֆենդին մահմեդական ժողովրդին շարունակաբար հրահրել է հայերի դեմ, ասելով, որ մեր վալին ամբողջ հայության վալին է, ավելի ճիշտ անհավատների վալին է: Այսպիսի զառանցագին խոսքերով խռովություններ է սերմանել ժողովրդի մեջ. միջամտել է պետական պաշտոնյաների գործերին և նույնիսկ համարձակվել է իր անձնական նախաձեռնությամբ նրան վտարել պաշտոնից և վիլայեթից էլ հեռացնելու պահանջով ծածկագիր հեռագիր է ուղարկել ներքին գործերի մինիստրություն:

Մի այլ վկա՝ զորացրված մայոր Իսմայիլ Հաքքը բեյը հայտնել է, որ ըստ իր լսածի, Հասան Ֆեհմի բեյը եղել է այն անձնավորություններից մեկը, որոնք յուրացրել են [հայերի] լքյալ գույքից բավականաչափ արժեքավոր ապրանքներ:

Մեկ ուրիշի, հանգուցյալ մարշալ Ասաֆ Փաշազադե Ջեմալ բեյի վկայությամբ, Հասան Ֆեհմի էֆենդու տան մեջ և ակումբի հրկիզման ընթացքում ի հայտ եկած ապրանքներն անհերքելի ապացույց են, թե նա ինչպիսի չարաշահումներ է թույլ տվել լքյալ գույքի կողոպտման խնդրում: Իսկ տեղահանությունը գործադրվել է նրա և վալի Աթիֆ բեյի սերտ համագործակցությամբ:

Մի այլ վկայի՝ Վահիդ էֆենդիի ցուցմունքով, նույնպես ապացուցվում է, որ Հասան Ֆեհմի էֆենդին եղել է տեղահանության անմիջական կազմակերպիչն ու գործադրողը և լքյալ գույքի կողոպտիչներից մեկը:

Իններորդ կանոնավոր զորագնդի հրամանատարությունից թոշակի անցած և այնուհետև կայմակամի պաշտոնը ստանձնած Խուրշիդ բեյի զեկուցագրում նշված է, որ Հասան Ֆեհմի էֆենդին միջամտել է պետական գործերին, իսկ Աթիֆ բեյը վալիության պաշտոնը ստանձնելուց հետո [Կաստամոնուի վիլայեթի] ամբողջ կառավարումը վերցրել է իր ձեռքը:

Կաստամոնուի նախկին ժանդարմական գումարտակի հրամանատար մայոր Մուստաֆա Շերեֆ բեյը, որն այսօր գտնվում է Սիլիֆկեի ժանդարմական գումարտակի հրամանատարությունում, տեղահանության վատ հետևանքները կանխազգալով գժտվել է Աթիֆ բեյի հետ: Մի այլ վկայությամբ պարզվում է, որ Հասան Ֆեհմի բեյը հանգուցյալ Իզզեթ բեյին ասել է. «Հայության տեղահանությանն արգելք հանդիսանալու համար պատմությունը և ապագա սերունդն անիծելու է քեզ»: Այստեղ նույնպես հաստատվում է, որ Հասան Ֆեհմի բեյը եղել է տեղահանության անմիջական կազմակերպիչն ու հրահրողը:

Մի այլ վկայության մեջ, Զևդետ և Սելիմ էֆենդիները հայտնում են, որ Հասան Ֆեհմի բեյը միջամտել է լքյալ գույքի հանձնաժողովի գործունեությանը: Այդ գույքը ամուրդի հանելուց առաջ նա հանձնախմբի անդամների ընկերակցությամբ մտել է նշանակված խանութները և իրեն անհրաժեշտ իրերն իր մարդկանց միջոցով պարկերի և կողովների մեջ լցնելուց հետո ուղարկել է իր բնակարանը: Միմիայն այս արարքից հետո նա թույլատրել է խանութները բացել և ամուրդի ենթարկել լքյալ գույքը: Նրանք հայտնում են նաև, որ Հասան Ֆեհմի էֆենդիի այդ գործարքին արգելք

հանդիսանալը անիմաստ էր, քանի որ տվյալ ժամանակ նա մեծ ազդեցություն ուներ վալիի [Աթիֆ բեյի] վրա:

Կաստամոնուում հանրահայտ անձնավորություններ Հաջի Թեվֆիկ բեյը, մեջլիսի նախկին գլխավոր քարտուղար Քեսիմ բեյը, ուսուցիչ Մեհմեդ էֆենդին, առևտրական Ահմեդ էֆենդին, փաստաբան Իզզեթ էֆենդին և կայմական Ջեմալ բեյն իրենց ցուցմունքներում նույնպես հաստատում են Հասան Ֆեհմի բեյի կատարած բռնություններն ու չարաշահումները, ինչպես նաև պետական գործերին նրա ունեցած բացահայտ միջամտության փաստերը:

Բալուի, իսկ ավելի ուշ Բրուսայի պատասխանատու քարտուղար դռկտ. Միդհատ բեյի մասին նշված է, որ դեռևս Բալուում պատասխանատու քարտուղար եղած ժամանակ կառավարության որոշման համաձայն հայությունը զերծ էր մնալու տեղահանությունից, քանի որ բնակչության ընդհանուր թվի համեմատ հայերը քիչ տոկոս էին կազմում: Սակայն իր անձնական նախաձեռնությամբ նա ժողովրդի մեջ ատելություն է սերմանել՝ «հայերին չենք ուզում» նշանաբանով: Իսկ երբ Բալուի մութասարիֆի տեղակալ Ալի Իլմի բեյը հակառակվել է տեղահանության իրագործմանը, [դռկտ. Միդհատը] նրան հեռացրել է պաշտոնից: Այսպիսով, նա նպաստել է տեղահանության գործադրմանը և պատճառ հանդիսացել նրա ողբերգական հետևանքներին: Այս բոլորը պաշտոնապես արձանագրված է Բալուի մութասարիֆության տեղեկագրում: Նույնիսկ Բրուսայում գտնվելու ընթացքում նա իր կամքն է թելադրել կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներին, միջամտել պատգամավորների ընտրություններին, իսկ Կեմլիկում հանգանակություն հավաքելիս՝ [բնակչությունը] պաշտոնապես բողոքարկել է նրա անօրինական վարմունքի դեմ:

«Միություն և առաջադիմություն» կուսակցության Էդիրնեի քննիչ Աբդուլ Ղանի բեյի մասին նշված է, որ ըստ Էդիրնեի վիլայեթի 1335 (1919) հուլիսի 27, 30 թվագրությունը կրող տեղեկագրի բովանդակության, Քըրք Քիլիսեի և Դեմիր Քոյոյի պատգամավորների ընտրության ընթացքում [Աբդուլ Ղանի բեյը] ազդել է պետական պաշտոնյաների վրա և նույնիսկ միջամտել վիլայեթի կառավարչության գործերին: Նա յուրացումներ է կատարել ազգային պաշտպանության բյուջեից և յուրացրել [բնակչությունից] հավաքված նպաստը:

Էդիրնեի դատական քննիչի կողմից արձանագրված հարցաքննության ընթացքում Արթին (Հարություն) և Հովհաննես Ալթունյանները, Ալեքսան Սարաֆյանը, Խաչիկ Կյուրծյանը և մյուսները վկայություն են տվել, որ հայության ոչնչացման նպատակը հետապնդող տեղահանության խնդրում Աբդուլ Ղանի բեյն եռանդագին ազդեցություն է գործել բոլորի վրա: Տեղահանության ընթացքում նա զինված չեթեների հետ շրջագայել է ամենուր: Ոստիկանատնից դուրս բերվող հայերից բռնագրավել է նրանց փողերը: Գազազյան եղբայրների կտորեղենի խանութը 1000 լիրայով գնել է իր որդու՝ Հայրուլլահի համար: Միևնույն ժամանակ հայերի լքյալ գույքը շատ չնչին գումարով վաճառել է իր համախոհներին:

Հիշյալ Աբդուլ Ղանի բեյի հարցաքննության տեղեկագրում նշված է, թե իբր նա դիմել է վալիին՝ հայերին տեղահանության չենթարկելու, մինչդեռ Ավետիսյան և Ալբսանյան էֆենդիները իրենց տված վկայության մեջ հայտնել են, որ տեղահանության բուն նպատակն եղել է հայության

ոչնչացումը, և Աբդուլ Ղանի բեյը, լինելով մարդկային առաքինություններից զուրկ մի անձնավորություն, մեծ ազդեցություն է գործել տեղահանության խնդրում, որ նա գործարքի մեջ ազդեցություն է գործել տեղահանության խնդրում, որ նա գործարքի մեջ մտնելով տեղի առևտրականների հետ, դիզել է մեծ հարստություն: Թեև այլ վայրերում տեղահանվողներին քիչ թե շատ պայմանաժամ են տվել, Էդիրնեում տեղահանվողներից դրամն ու թանկարժեք իրերը վերցնելուց և ապրուստի միջոցներից զրկելուց հետո, առանց պայմանաժամի քշել են դեպի Թեքֆուր լեռը: Դատաքննության ընթացքում Աբդուլ Ղանի բեյի տված ցուցմունքի համաձայն, իբր [տեղահանությունը] եղել է Էդիրնեի գրավվման ժամանակ [թուրքերի մոտ] առաջ եկած վրեժխնդրության զգացման հետևանքով: Ըստ նրա հայտնած տեղեկության, Էդիրնեում տեղահանությունն իբր տեղի է ունեցել մի գիշերվա ընթացքում, այն էլ՝ մեկ քարավանով: Մինչդեռ Էդիրնեից եկած մեր հարցումի պատասխանագրում, ասված է, որ տեղահանությունը տեղի է ունեցել երեք քարավանով, որոնք ուղարկել են մինչև Տեր-Զոր:

Այնպես որ, այս խնդրում ևս նրա տված կեղծ ցուցմունքը ակներև է: Վերոհիշյալ մեղադրյալներ՝ Հասան Ֆեհմի, դոկտ. Միդհատ, Աբդուլ Ղանի, Ավնի, դոկտ. Բեսիմ Զուհդի, Հասան Սելահեդդին, Ջեմալ, Մյունիր, Ջևդեթ և Աբդուլ Քադիր էֆենդիների և բեյերի ամբաստանությանը վերաբերող նյութերը ցույց են տալիս, որ նրանք շեղվել են կառավարության օրենքից և այդպիսով վտանգել երկրի ներքին ապահովությունը...:

Հասան Ֆեհմի էֆենդու, դոկտ. Միդհատ և Աբդուլ Ղանի բեյերի ամբաստանության վերաբերող նյութերը, ինչպես պարզաբանվեց վերևում, հաստատում են, որ նրանք, իրազեկ լինելով կենտրոնական կոմիտեի կատարած անօրինական գործարքներին և այն նախաձեռնողների բուն նպատակներին, նպաստել և անուղղակիորեն մասնակցել են կոտորածի և կողոպուտի խնդրում կատարված հանցագործություններին:

Ներքին փոխառության պարտատոմսեր թողարկելիս Ավնի բեյը ևս ընդգրկվել է հանձնաժողովի կազմի մեջ: Մի շարք մարդկանց, այդ թվում Հերդեմին, մանիսացի Հաջի Հասանին, Իսմայիլին և Սարուխան գյուղից Մեհմեդին կանչելով՝ հանձնաժողովի առաջ, ծեծել են և հակառակ օրենքի՝ բանտարկել: Այնուհետև պարտադրել են նրանց կարողությունից բարձր ներքին փոխառության պարտատոմսեր: Այդ մասին վկայություն են տվել թե՛ լսողները, թե՛ տուժողները, իսկ նա խոստովանել է, որ ընդգրկված է եղել այդ հանձնաժողովի կազմի մեջ:

Այսպիսի անօրինական գործարքներով պատասխանատու քարտուղարները հանդգնել են կառավարության աչքի առաջ կատարելու նման արարքներ: Իսկ Ավնի բեյը, բերված գրավոր վկայությունների համաձայն, ձայների մեծամասնությամբ հանցավոր է ճանաչվում, քանի որ լինելով ազդեցիկ մարդկանցից մեկը՝ ծեծել է, ստորացրել և հակառակ օրենքի կալանավորել մարդկանց: Ինչ վերաբերում է Բեսիմ Զուհդի բեյի արարքներին, ինչպես բացահայտվեց հարցաքննության ընթացքում, Ռաֆայել Շիրինյան էֆենդիից վերցրած գորգերը ոչ թե բռնության հետևանք է, այլ՝ սովորական առևտրական գործարք, քանի որ հետագայում այդ գորգերը վերադարձվել են տիրոջը:

Takvim-i Vekayi, 9 Ocak 1336 (1920) № 3772.

5. ՅՈԶՂԱԹԻ, ՏՐԱՊԻԶՈՆԻ, ԲՅՈՒՐՈՒՔ ԴԵՐԵԻ ԵՎ ԽԱՐԲԵՐԴԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ ՓԱԴԻՇԱՀԻ 1335Թ. (1919) ՄԱՐՏԻ 8-Ի ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նախագահ՝ գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշա,
անդամներ՝ գեներալ-մայոր Զեքի փաշա,
գեներալ-մայոր Մուստաֆա փաշա,
գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա,
գնդապետ Ռեջեփ Ֆերդի բեյ:

ՅՈԶՂԱԹԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Դատաքննության ենթակա մեղադրյալների անունները – Յոզղաթի մութասարիֆի տեղակալ և Բողազլյանի կայմակամ Քեմալ բեյ: Յոզղաթի ժանդարմական պետ, մայոր Թեվֆիկ բեյ:

ԴԱՏԱՎՃԻՌ

Սույն դատավարության ընթացքում լսեցին մեղադրող և պաշտպանվող երկու կողմերին, մանրակրկիտ ուսումնասիրվեցին և հետաքննվեցին նաև բոլոր դատական փաստաթղթերը:

Մեղադրյալները և նրանց դատապաշտպանները ջանացին ուրանալ կատարված հանցանքը և պահանջեցին ազատ արձակել: Բայց իսլամի բարձր դրույթները, օսմանյան օրենքներն ընդհանուր են բոլոր հպատակների համար և պաշտպանում են նրանց կյանքն ու պատիվը, ունեցվածքը, և հասարակական իրավունքները հավասարապես: Եվ այս բոլորի անխափան գործադրումը կատարելապես մտնում է պետության պաշտոնյաների պարտականությունների մեջ:

Մեղադրյալներ՝ Յոզղաթի մութասարիֆի տեղակալ և Բողազլյանի կայմակամ Քեմալ բեյը, ինչպես նաև Յոզղաթի ժանդարմական պետ մայոր Թեվֆիկ բեյն իրենց պաշտոնավարության ընթացքում, առանց ուշադրություն դարձնելու պաշտոնապես հաղորդված հրամանների բացառություններին, տեղահանության են ենթարկել նույնիսկ թուլակազմ կանանց, անչափահաս երեխաներին՝ ոտնահարելով նրանց անձնական իրավունքները: Ունեցվածքն ու դրամը կողոպտելուց հետո, նրանց քարավանները ճամփու են դրվել կյանքի ապահովության բոլոր միջոցներից զուրկ: Նույնիսկ, մի շարք ստոր մարդկանց գաղտնի հրահանգները կատարելով, ոչ միայն ուշադրություն չեն դարձրել նրանց կյանքն ապահովելու խնդրին, այլ, ընդհակառակը, ամուր կապելով բոլոր տղամարդկանց ձեռքերը՝ զրկել են նրանց ինքնապաշտպանության բոլոր հնարավորություններից: Եվ այդպես՝ կանխամտածված կերպով առիթ են տվել, որ այդ ողբերգությունը գործադրվի: Մեղադրյալները նույնիսկ ուշադրություն չեն դարձրել սպանությունները կանխելու իրենց վերադասի հորդորանքներին և պատասխա-

նատու պաշտոնյաների վրա ինչ-որ պատահական մարդկանց ղեկավար նշանակելով, գաղտնաբար շարունակել են իրագործել իրենց բարբարոսական արարքները: Նրանց միջոցով կատարված այդ կոտորածներն ու կողոպտուները, իսլամի դրույթներով էլ մեծ մեղք և հանցանք համարվելով, անհարիր են մարդկության և քաղաքակիրթ աշխարհի սկզբունքներին:

Վկաների համոզիչ ցուցմունքները, բարձրաստիճան զինվորականության միջև կատարված պաշտոնական թղթակցությունների և հեռագրերի բովանդակությունը, մեղադրյալների մանրակրկիտ հարցաքննությունը, ինչպես նաև քարավաններում գտնվող կանանց ու երեխաներին իրենց ամուսիններից կանխամտածված անջատումը լիովին բացահայտում է մեղադրյալների կատարած հանցանքն ու նենգ նպատակները, թեև դատապաշտպանները և մեղադրյալներն իրենց վերջին խոսքերում նշեցին, որ իբրև թե մի շարք թեթևամիտ կուսակցությունների հրահանգով և Օսմանյան կայսրության մյուս կողմերում գտնվող իրենց հայրենակիցների դրդումով, հատկապես հակառակորդի կողմից գրավված վայրերում, հայերն անցել են թշնամու կողմն ու միացել ապստամբական շարժումներին: Այս բացատրությունները չեն կարող կատարված վայրագությունները արդարացնելու համար հիմք ծառայել, որովհետև եթե հայ ժողովրդի մի մասը երբեմն միացել է այդ շարժումներին, ապա մյուս մասը տարբեր ձևերով արտահայտել է իր հավատարմությունը [իշխանություններին]:

Այնպես որ, յուրաքանչյուր պետական պաշտոնյայի համար, անկախ իր ազգայնական զգացումներից և անձնական վրեժխնդրությունից, ստիպողական անհրաժեշտություն է գործողագութ հոր նման, առանց ցեղային և կրոնական խտրականության, պաշտպանելու իրեն ավանդված բնակչության զգացումներն ու իրավունքները:

Քեմալ բեյն իր պաշտոնական խոսքում արծարծեց այն միտքը, թե իբր Յոզղաթում կատարված այդ արարքները բխել են Վանի, Էրզրումի և Բիթլիսի կողմերում մահմեդականների դեմ հայերի ցուցաբերած վատ վերաբերմունքից: Սինչդեռ, օրենքի և խղճի տեսակետից, ապստամբական շարժման հետ ոչ մի առնչություն չունեցող Յոզղաթի հայ բնակչության նկատմամբ գործադրված վրեժխնդրությունն ու անձնական ոխակալությունն անհամատեղելի են վերոհիշյալ մտքի հետ: Փաստերը վկայում են, որ հայերին կոտորելու համար նա նույնիսկ ոտքի է հանել ոչ միայն իր տրամադրության տակ գտնվող սանջակի թուրքերին, այլև կոչ է արել բոլոր մահմեդականներին՝ ոտքի կանգնել հայ ժողովրդին իսպառ ոչնչացնելու համար:

Իր ձեռքով գրված փաստաթղթերից մեկում, նա, անպաշտոն երեք մարդկանց վերահսկիչ նշանակելով, քարավաններն առաջնորդող պաշտոնապան պահապանների վրա, ստիպել է վերջիններին, որպեսզի հնազանդվեն և ենթարկվեն նրանց հրամաններին: Բոլորովին կասկած չի հարուցում, որ նրանց տված հրահանգի հիման վրա էլ քարավաններն ենթարկվել են կոտորածի: Այս և այլ հավաստի ապացույցները հօդս են ցնդեցնում մեղադրյալների փաստաբանների դատապաշտպանությանը վերաբերող ջանքերը:

Քաղաքացիական քրեական օրենսգրքի 56-րդ հոդվածի հիման վրա նրանց դատելու դատախազության պահանջարկը [դատական հանձնախմբի] կողմից հավանության չարժանացավ: Հանձնաժողովը միաձայն

որոշեց մեղադրյալներին դատապարտելու քաղաքացիական քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածով:

Պատժի չափը քննարկության նյութ դառնալուց հետո որոշվեց. ըստ կատարված հանցագործության երկուսին էլ առանձին-առանձին դատել 45-րդ հոդվածի հիման վրա «հանցագործության անմիջական մասնակցություն ունենալու» մեղադրանքով:

Քեմալ բեյը տվյալ սանջակի ամենաբարձր պաշտոնատար անձը լինելով, ինքն է կազմակերպել [Յոզղաթի հայության] կոտորածն ու ունեցվածքի կողոպուտը և հանդիսանում է գլխավոր հանցագործը, քանի որ ինքն է նշանակել մի շարք անպաշտոն մարդկանց, որպեսզի ուղեկցեն քարավանները և միևնույն ժամանակ ստիպել է քարավանի պաշտոնական առաջնորդ Շյուքրի չավուշին, որ նա հնազանդվի և կատարի նրանց հրամանները:

Առկա հանցանշանների համաձայն, վերոհիշյալ Թեվֆիկ բեյը կոտորածի և կողոպուտի իրականացման խնդրում անուղղակի մասնակցություն ունենալու համար դատապարտվեց 45-րդ հոդվածով, իսկ գլխավոր հանցագործ Քեմալ բեյը՝ կայսերական ռազմական քրեական օրենսգրքի 171-րդ և կայսերական քաղաքացիական քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածների հիման վրա:

Այսպիսով, [դատարանը] միաձայն վճիռ կայացրեց, որ Քեմալ բեյը դատապարտվում է մահվան՝ ըստ 171-րդ հոդվածի, ուր ասված է. «Եթե մի խումբ մարդիկ կանխամտածված ճնշում բանեցնելով, զինված կամ անզեն, խորտակելով դռներն ու ցանկապատերը՝ կողոպտեն և կամ փչացնեն պարենամթերքը, վաճառքի ապրանքները... դատապարտվում են մահվան», ինչպես նաև կայսերական քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածով, ուր ասված է. «Կանխամտածված սպանություն կատարողները, կամ իրենց մերձավոր ազգականներին, լինի հայր կամ պապ, մայր կամ տատ, առանց կանխամտածվածության սպանողները մահվան են դատապարտվում»: Իսկ Թեվֆիկ բեյը դատապարտվում է 15 տարվա տաժանակիր աքսորի, վերոհիշյալ 45-րդ հոդվածի երկրորդ մասի հիման վրա, ուր ասված է. «Եթե գլխավոր հանցագործին մահապատիժ կամ ցմահ տաժանակիր աքսոր է սահմանվում, ապա նրա մեղսակիցներին՝ 10 տարուց ոչ պակաս ժամանակավոր բանտարկություն»:

6 ռեջեբ 1337թ.
(1919թ. ապրիլի 8)
Նազըմ, Զեքի, Մուստաֆա, Ալի Նազըմ, Ռեջեբ Ֆերդի

Ռազմական արտակարգ ատյանի արձանագրող
հանձնախմբի պետ՝ Աբդիդին Դավեր

Takvim-i Vekayi, 8 Nisan 1335 (1919) № 3617.

6. ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նախագահ՝ գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշա,

անդամներ՝ գեներալ-մայոր Զեքի փաշա,
գեներալ-մայոր Մուստաֆա փաշա,
գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա,
գնդապետ Ռեջեբ Ֆերդի բեյ:

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՏԻ ՏՐՎԱԾ ՆԵՐԿԱ ԳՏՆՎՈՂ ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ – Տրապիզոնի հարկային տեսուչ Մեհմեդ Ալի բեյ, Տրապիզոնի ոստիկանապետ Նուրի բեյ, Տրապիզոնի [գաղտնի] գործակալության տեսուչ Մուստաֆա էֆենդի, Տրապիզոնի ժանդարմերիայի քննչական տեսուչի օգնական՝ կայմակամ Թալաաթ բեյ, Տրապիզոնի հյուրանոցի տնօրեն Նիազի էֆենդի, Տրապիզոնի առողջապահության տեսուչ Ալի Սայիբ բեյ:

ՀԵՌԱԿԱ ԿԱՐԳՈՎ ԴԱՏԻ ՏՐՎԱԾ ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ – Տրոպիզոնի վալի Ջեմալ Ազմի բեյ, [կուսակցության Տրապիզոնի պատասխանատու քարտուղար Նայիլ բեյ]:

ԴԱՏԱՎՃԻՌ

Սույն դատավարության ընթացքում լսեցին մեղադրող և պաշտպանվող երկու կողմերին, մանրակրկիտ ուսումնասիրվեցին և հետաքննվեցին նաև բոլոր դատական փաստաթղթերը:

Մեղադրյալները և նրանց դատապաշտպանները ջանացին ուրացնել կատարված հանցանքը և պահանջեցին ազատ արձակել: Բայց իսլամի բարձր դրույթները, օսմանյան օրենքներն ընդհանուր են բոլոր հպատակների համար և պաշտպանում են նրանց կյանքն ու պատիվը, ունեցվածքը և հասարակական իրավունքները հավասարապես: Եվ այս բոլորի անխափան գործադրումը կատարելապես մտնում է պետության պաշտոնյաների պարտականությունների մեջ:

Մեղադրյալներ՝ Տրապիզոնի նախկին վալի Ջեմալ Ազմի բեյը, ինչպես նաև «Միություն և առաջադիմություն» կուսակցության Տրապիզոնի պատասխանատու քարտուղար Նայիլ բեյը սերտորեն համագործակցել են ստացված գաղտնի հրամանագրերն իրականացնելու գործում: Արտաքուստ նրանք իբրև թե գործել են տեղահանության օրենքի հիման վրա, մինչդեռ այդ գաղտնի հրահանգների համատեղ իրականացումը համարձակություն է տվել նրանց՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հայերին կոտորելու և բնաջնջելու:

Մի շարք հանցագործ, անառակ մարդկանցից և նույն մակարդակի մի քանի ժանդարմներից նրանց կազմած հրոսակախմբերն իբրև թե ուղեկցելու էին տեղահանված հայերի քարավանները: Մինչդեռ շտապ տեղահանության ենթարկված և պաշտպանության միջոցներից զուրկ հայերի քարավանները քաղաքից հեռացվելուց հետո, ամայի վայրերում տղամարդկանց առանձնացրել են կանանցից և վերոհիշյալ հանցագործներից կազմված չեթեների հրոսակախմբերը հարձակվելով՝ կողոպտել են նրանց իրերը և այնուհետև աներևակայելի դաժանությամբ սպանել և բնաջնջել

բոլորին: Իսկ խեղճ կանանց մի այլ վայր տանելով՝ հափշտակել են նրանց զարդեղեններն ու շորերը և ենթարկել բռնաբարության: Այնուհետև ամիսներով ճանապարհներին քարշ գալուց հետո, շատերը մահացել են՝ բոլորովին հյուծված, տառապալի ուղևորությունից, սովից և ծարավից: Իսկ [ողջ] մնացածներին Էրզինջանի ճանապարհով ուղարկել են հեռավոր վայրեր:

Տրապիզոնում մնացած կանանց ու երեխաների մի մասին իբրև թե պաշտպանելու պատրվակով տեղավորել են հիվանդանոցներում և դերվիշների տներում: Այնուհետև, ծովային ճանապարհով այլ վայրեր տեղափոխելու նպատակով, խմբերով նստեցրել են նավերը և տեսադաշտից հեռու ծովի խորքերը տանելով՝ գցել են ջուրը և խեղդելով ոչնչացրել բոլորին: Այս դատավարության վերջին նիստում պարզվեց և մենք բոլորս համոզված ենք, որ կոտորածն ու կողոպուտը մտահղացված է եղել ոչ թե Տրապիզոնում, այլ նրա սահմաններից դուրս, այն էլ կանոնավոր ու խիստ կազմակերպված:

Վերոհիշյալ մեղադրյալներից հարկային տեսուչ Մեհմեդ Ալի էֆենդին, վաղեմի ծանոթ լինելով վալի Ջեմալ Ազմի բեյին, սերտ համագործակցել է նրա հետ, կատարել նրա հրամանները և նպաստել վալիի կատարած չարագործություններին և այդ ողբերգական արարքների իրականացմանը: Իսկ վալի Ջեմալ Ազմի բեյն օգտագործել է նրան, նկատի ունենալով, որ նա սերտորեն առնչություն ունի լքյալ գույքի, գոհարեղենների, ռազմական արտակարգ հարկային պաշտոնյաների, ռազմական շինությունների, կապի հանձնաժողովների, զինվորական, հեռախոսային և անձնագրերի ստուգման տեսչությունների, ինչպես նաև «Կարմիր մահիկ» հիվանդանոցի և «Կանանց ընկերության» հետ:

Մեհմեդ Ալի բեյի թույլտվությամբ հայ կանանց և աղջիկներին իբրև թե «պատսպարման» քողի տակ հապճեպորեն հավաքել են մարդասիրական նպատակներով կառուցված հիվանդանոցում, դերվիշների տներում և այնուհետև հայրենասիրական գործ կատարած լինելու պատրվակով, որպես աղախին և կին օգտագործելու նպատակով՝ բաժանել տարբեր մարդկանց տները: Եվ այդպես, նրա մեղքով շատերը կուսապղծվել և ենթարկվել են այլևայլ բռնությունների: Այդ դժբախտներին տվյալ վայրերում հապճեպորեն հավաքելու և կարճ ժամանակամիջոցում քաղաքից դուրս հանելու, կուսապղծելու և այլ բռնությունների ենթարկելու մասին գոյություն ունեն հավաստի վկայություններ: Նույնիսկ իրենից ստորադաս հարկային տեսչության քննիչը բազմիցս գրավոր և բանավոր զգուշացրել է, որ իր պաշտոնի հետ առնչություն չունեցող այդ ստոր գործերի մեջ խառնվելը կարող է ունենալ խիստ վտանգավոր հետևանքներ: Իսկ նա (Մեհմեդ Ալի էֆենդին) բոլորովին կարևորություն չտալով դրան, գիտակցաբար շարունակել է օժանդակել հիշյալ Ջեմալ Ազմի բեյի քաղաքի ներսում կատարած անմարդկային, դաժանաբարո բոլոր հանցագործություններին:

Ոստիկանապետ Նուրի էֆենդին, որն այլ պաշտոնատար անձնավորությունների հետ նշանակվել է հետևելու քաղաքի կարգուկանոնին, միևնույն ժամանակ ընդգրկված է եղել տեղահանության կազմակերպման, գաղտնի ոստիկանության և գոհարեղենների պահպանության հանձնաժողովների մեջ: Նրան է հանձնարարվել հավաքելու, գրանցելու տեղահանված հայերի լքյալ գույքը: Սինչդեո նա ոչ մի գործնական միջոց չի ձեռ-

ճարկել լքյալ գույքի պահպանման հարցում: Ավելին, նրա թույլտվությամբ հայերի լքյալ գույքի պահեստավորումը կատարվել է անվստահելի մարդկանց միջոցով, անկազմակերպ և առանց «դաֆթար» կազմելու: Այսպիսով, նրա մեղավորությամբ լքյալ գույքը համփշտակվելով մատնվել է կատարյալ կորստի:

Չնայած որ նա այդ ապրանքների գողության մեջ մեղադրվող մի քանի պաշտոնատար անձնավորությունների ուղարկել է ռազմական ատյանի հետաքննության, այնուհանդերձ ոչ մի պաշտոնական կամ անպաշտոն միջոց չի ձեռնարկել Ջեմալ Ազմի բեյի և նրա պաշտոնակատարների արարքները սանձահարելու, ինչպես նաև սաստելու այն ոստիկաններին և ժանդարմներին, որոնք օգտվելով «գիշերային պարետային ժամից», զբաղվել են թալանով և հափշտակությամբ: Նա նույնիսկ ականատես լինելով այդ ողբերգական տեսարանին՝ ոչ մի արգելք չի հարուցել, երբ ժանդարմները և ոստիկանները քաղաքում մնացած կանանց և երեխաներին խեղդելու նպատակով նավ բարձրացնելով՝ տարել են ծովի խորքերը:

Ըստ նրա տված ցուցմունքի, իբրև թե խորապես ազդվելով իր ներկայությամբ կատարված մի շարք դեպքերից, քաշվել է իր սենյակը և այն աստիճան հուզմունք ապրել, որ նույնիսկ չի կարողացել միաոժամանակ դուրս գալ փողոց: Այդ բոլորով հանդերձ, նա աչք է փակել վալիի կատարած արարքներին և նույնիսկ քաջություն չի ունեցել կամովին հեռանալու և պաշտոնը զիջելու մեկ ուրիշին, որը գուցե կարողանար կանխել այդ հանցագործությունները:

[Գաղտնի ոստկանության] գործակալ Մուստաֆա բեյը, միաժամանակ զինվորական լինելով, կարողացել է վաղուց ի վեր շահել Ջեմալ Ազմի բեյի համակրանքը և սերտ հարաբերություն հաստատել նրա հետ: Օգտվելով այդ մտերմությունից, Մուստաֆա բեյը ձեռք է բերել զինվորական շատ կարևոր պաշտոններ, ինչպիսիք են նավահանգստային և առևտրական զինվորական տեսչությունները: Մուստաֆա բեյը կարողացել է նաև իր պաշտոնավարությունն երկարաձգել շնորհիվ Ջեմալ Ազմի բեյին ենթակա զինվորական հրամանատարների աջակցության և կենտրոնական կառավարության հովանավորության: Հայերից հափշտակված գույքի տեղափոխության ընթացքում նա, չարաշահելով իր պաշտոնը, զինվորական փոխադրական միջոցները տրամադրել է վալիին և նրա պաշտոնակատարներին:

Նրան պաշտպանելու միտումով վկայություն տվողները նշեցին, որ նա լավ հարաբերության մեջ գտնվելով վալիի հետ, իբր կարողացել է մի շարք հայերի ազատել տեղահանությունից: Լինելով քաղաքի մեծահարուստներից մեկը, իր անձնական շահի համար չի զոհաբերել իր պատիվը: Նույնիսկ վալի Ջեմալ Ազմի բեյի ագահ բերանը փակելու համար, իրեն հանձնված գանձարկղի զարդեղենն ու դրամն առանց հաշվարկի տրամադրել է նրան և նյութական վնաս կրել:

Նուրի բեյի, Մեհմեդ Ալիի և գործակալ Մուստաֆա էֆենդիի օգտին տրված այդ վկայությունները, ինչպես նաև նրանց դատապաշտպանների կողմից առաջ քաշված պարզաբանումները, իրականության հետ ոչ մի առնչություն չունեն և բոլորովին անհիմն են:

Այսպիսով, [ռազմական ատյանը] միաձայն որոշում կայացրեց, որ ոստիկանապետ Նուրի էֆենդին, [գաղտնի ոստիկանության] գործակալ

Մուստաֆա բեյը, իրենց պաշտոնավարության ընթացքում կատարած չարաշահումների համար հանցավոր են ճանաչվում: Վալի Ջեմալ Ազմի բեյը, [կուսակցության] պատասխանատու քարտուղար Նայիլ բեյը, [հարկային տեսուչ] Մեհմեդ Ալի էֆենդին մեղադրվեցին կայսերական քաղաքացիական քրեական օրենգրքի 45-րդ հոդվածով:

Տեղի ունեցած խորհրդակցությունից հետո [ատյանը] Ջեմալ Ազմի և Նայիլ բեյերին ճանաչեց որպես հանցագործության անմիջական մասնակից և պատժի չափ սահմանեց վերոհիշյալ 45-րդ հոդվածի առաջին մասը, ուր ասված է.

«Մի խումբ անձնավորություններ մի ոճրագործություն կամ հանցանք խմբովին կատարելու դեպքում, կամ մի խումբ անձնավորություններ բազմաթիվ արարքներից կազմված մի ոճրագործություն կամ հանցանք գործելիս, ոճրագործության ընթացքում նրանցից յուրաքանչյուրն այդ արարքներից որևէ մեկը կամ մի քանիսը կատարելու դեպքում, նույնպես գործակից են համարվում և պատժվում են ուղղակի հանցանք կատարողի նման»:

Մեհմեդ Ալի էֆենդին, հանցագործությանն անուղղակի կերպով մասնակցություն ունենալու համար մեղադրվում է վերոհիշյալ հոդվածի երրորդ մասով, ուր ասված է.

«Որևէ հանցագործության կամ ոճրագործության իրականացմանն ինչ-որ ձևով օժանդակողները, այսինքն՝ սպառնալիքով կամ խարդավանքով գործարքի մեջ մտնել, դրամ կամ նվեր տալ, պաշտոնը չարաշահելով ազդեցություն բանեցնել. զենք, այլևայլ գործիքներ կամ միջոցներ հայթհայթելով նախապատրաստական գործունեություն ծավալել, ինչ-որ ձևով հանցագործությանը նպաստել, դատապարտվում են այդ հանցագործությանը կամ ոճրագործությանն անուղղակի մասնակցություն ունենալու մեղադրանքով»:

Ջեմալ Ազմի և Նայիլ բեյերը դատապարտվում են կայսերական զինվորական քրեական օրենգրքի 171-րդ և քաղաքացիական քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածներով: Հիշյալ 171-րդ հոդվածում ասված է.

«Եթե մի խումբ մարդիկ, կանխամտածված ճնշում բանեցնելով, զինված կամ անզեն՝ խորտակելով դռներն ու ցանկապատերը կողոպտեն կամ փչացնեն պարենամթերքը, վաճառքի ապրանքները... դատապարտվում են մահվան»:

170-րդ հոդվածում ասված է.

«Կանխամտածված սպանություն կատարողները կամ իրենց մերձավոր ազգականներին, լինի հայր կամ պապ, մայր կամ տատ, առանց կանխամտածվածության սպանողները մահվան են դատապարտվում»:

Այս հոդվածների հիման վրա վերոհիշյալ Ջեմալ Ազմի և Նայիլ բեյերը դատապարտվում են մահվան, իրենց ունեցվածքի բռնագրավումով:

Մեհմեդ Ալին վերոհիշյալ քաղաքացիական քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի ստորև բերված երկրորդ մասի հիման վրա դատապարտվում է 10 տարվա բանտարկության.

«Մի ոճրագործության կամ հանցագործության անուղղակի մասնակցություն ունեցած անձնավորությունները, օրենքի չբացահայտված մասերում, պատժի են ենթարկվում հետևյալ կերպ, եթե գլխավոր հանցագործին մահապատիժ կամ ցմահ տաժանակիր աքսոր է սահմանվում, ապա մեղսակիցներին՝ 10 տարուց ոչ պակաս ժամանակավոր բանտարկություն»:

[Գաղտնի ոստկանության] գործակալ Մուստաֆա էֆենդին, ոստիկանապետ Նուրի բեյը ստորև բերված քաղաքացիական քրեական օրենսգրքի 172-րդ հոդվածի հիման վրա, դատապարտվում են մեկական տարվա բանտարկության և երկուական տարի ժամկետով պաշտոնազրկման:

«Օրենսգրքում լուսաբանված հոդվածներից բացի, ինչ ձևով էլ պատահած լինի, պաշտոնը չարաշահող անձնավորությունն իր պաշտոնավարության աստիճանի համաձայն դատապարտվում է (...) մինչև երեք տարի բանտարկության: Եթե մեղմացնող հանգամանքներ լինեն, 15-ից (...) ոչ պակաս ժամկետով բանտարկություն է հասնում, կամ էլ 5-ից մինչև 100 լիրա տուգանք: Բոլոր դեպքերում տևապես կամ առժամյա պաշտոնազրկումը պարտադիր է»:

Պաշտոնական հայտնված է, որ մեղադրյալ Նիազի էֆենդին ծովից հայտնաբերված ինքնաշարժ տորպեդները հավաքելու և տեղափոխելու նպատակով երկու անգամ մոտորային նավով մեկնել է Ստամբուլ, որտեղ նավը վերանորոգելու համար որոշ ժամանակ մնացել է այնտեղ: Այնուհետև նրա Տրապիզոն վերադարձը չի համընկնում հայերի տեղահանության տարեթիվի հետ: Նրա առնչությունը տեղահանության, կոտորածի և լքյալ գույքի հափշտակման հետ բավարար ապացույցներով չի հաստատվում: Միայն պարզվում է, որ Ջեմալ Ազմի բեյի կարգադրությամբ լքյալ գույքի մի մասն աճուրդով և էժան գնով ծախելու համար հանձնվել է հիշյալին: Այս վաճառքը և էժան գնով ծախելու պարագան զուգադիպել է պատերազմի ամենավտանգավոր ժամանակամիջոցին, այսինքն՝ ռմբակոծության շրջանին: Բացի այդ, Ջեմալ Ազմի բեյի կարգադրությամբ այդ ինքնաշարժ տորպեդների տեղափոխման խնդիրն ընդհատել է վերոհիշյալ վաճառքի աշխատանքները: Փաստեր չկան նաև, որ նա կաշառք կամ շահույթ ձեռք բերելու նպատակով գործարքի մեջ մտած լինի որևէ մեկի հետ: Քրեական օրենսգրքում չկա նաև մի հոդված, որը դատապարտեր աճուրդի հետ կապված նրա գործունեությունը: Հետևաբար՝ նա պատասխանատվությունից դուրս է մնում, քանի որ չի մասնակցել կոտորածին, կողոպուտին և ընդհանրապես տեղի ունեցած այլ հանցագործություններին:

Կատարված հանցագործություններին չի մասնակցել նաև կայմակամ Թալաաթ բեյը: Դատարանում տրված մի շարք վկայությունների համաձայն, «սովորութային հարկերի» հավաքման հանձնախմբում իր պարտականությունները կատարել է առանց չարաշարումների:

Այսպիսով, [կայմակամ] Թալաաթ և Նիազի բեյերը վերոհիշյալ հանցագործությունների հետ առնչություն չունենալու պատճառով, բանտից ազատ են արձակվում: Մեղադրյալ՝ առողջապահության տեսուչ Ալի Սայիք բեյի նկատմամբ որոշակի հանցանշան չլինելու պատճառով՝ դատաքննությունը կարճվում է:

[Ռազմական ատյանի] միաձայն որոշումը հրապարակվեց բոլորի ներկայությամբ, իսկ Ջեմալ Ազմի և Նայիլ բեյերի նկատմամբ՝ հեռակա կարգով:

1919թ. մայիսի 22

Նազըմ, Զեքի, Մուստաֆա, Ալի Նազըմ, Ռեջեբ Ֆերդի

Ռազմական արտակարգ ատյանի արձանագրական

հանճնախմբի պետ՝ Աբիդին Դավեր

Takvim-i Vekayi, 22 Mayis 1335 (1919) № 3616.

7. ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ ՓԱԴԻՇԱՀԻ 1335Թ. (1919) ՄԱՐՏԻ 8-Ի ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐԱՍԱՆՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նախագահ՝ գեներալ-լեյտենանտ Մուստաֆա Նազըմ փաշա,
անդամներ՝ գեներալ-մայոր Զեքի փաշա,
գեներալ-մայոր Մուստաֆա փաշա,
գեներալ-մայոր Ալի Նազըմ փաշա,
գնդապետ Ռեջեբ Ֆերդի բեյ:

ԲՅՈՒՅՈՒՔ ԴԵՐԵԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՏԻ ՏՐՎԱԾ ՆԵՐԿԱ ԳՏՆՎՈՂ ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ – Բյույուք Դերեի նախկին ոստիկանապետ Քերիմ բեյ, Բյույուք Դերեի մուխտար Ջելալ էֆենդի, Բյույուք Դերեի երևելի մարդկանցից սալոնիկցի Ռեֆիկ Հըֆզը բեյ, Բյույուք Դերեի բնակիչ՝ Հաֆըզ Մահմուդ էֆենդի:

ԴԱՏԱՎՃԻՌ

Սույն դատավարության ընթացքում լսեցին մեղադրող և պաշտպանվող երկու կողմերին, մանրակրկիտ ուսումնասիրվեցին և հետաքննվեցին նաև բոլոր դատական փաստաթղթերը:

Մեղադրյալներ՝ Բյույուք Դերեի նախկին ոստիկանապետ Աբդուլ Քերիմ բեյը, սալոնիկցի Ռեֆիկ բեյը, Ռիզալի Ջելալ և Հաֆըզ Մահմուդ էֆենդիները, նշված շրջանի ոչ մահմեդական բնակչության տեղահանության համար կառավարության կողմից նշանակված որոշակի պայմանաժամը թաքցնելով, իրենց անձնական շահը և նենգ մտադրություններն իրականացնելու միտումով՝ տեղահանվողներին հատկացրել են շատ կարճ ժամանակամիջոց: Այդպիսով, տեղահանվողները ստիպված են եղել իրենց ունեցվածքը, կահկարասին թողնել և հեռանալ: Այնուհետև նրանց լքյալ գույքը կողոպտել են, իսկ թաքցրած ապրանքները հայտնաբերել հատուկ գործիքներով և յուրացրել:

Վերոհիշյալ մեղադրյալներից Աբդուլ Քերիմ և Ռեֆիկ բեյերը, մարդկային խղճմտանքի նշույլն անգամ չունենալով, կողոպուտի և հափշտակության են ենթարկել տեղահանվողների լքյալ գույքը: Նույնիսկ յուրացնելու ագահությամբ տարված, եռանդագին ջանքեր են գործադրել հայտնաբերելու համար թաքցված ապրանքները:

Հիշյալ մեղադրյալներից Աբդուլ Քերիմ բեյն իր պաշտոնավարության ընթացքում պարտավոր էր հետևել իսլամի վսեմ դրույթներին, օսմանյան օրենքներին, և առանց խտրականության պաշտպանել բոլորի կյանքն ու պատիվը, ունեցվածքն ու հասարակական իրավունքները, բայց պատերազմական դյության և զինվորական տեսանկյունից անհրաժեշտ համար-

վող տեղահանության գործում ոչ մի միջոց չի ձեռնարկել ապահովելու շարժական և անշարժ գույքը: Իր պաշտոնավարության ընթացքում հանդես է բերել կատարյալ անփութություն, անտարբերություն և, մեծ վնաս հասցնելով, կորստի է մատնել տեղահանվողների շարժական և անշարժ գույքը:

Ինչ վերաբերում է Ռեֆիկ բեյին, նա կառավարության կողմից երբևէ արտոնություն կամ իրավունք չի ունեցել խառնվելու տեղահանության գործին, սակայն բարձր խավի մարդկանց հետ սերտ շփում ունենալով, կատարել է քաղաքացիական պաշտոնատար անձնավորությունների և սպայական անձնակազմի իրավասություններին վերաբերող մի շարք առաջադրանքներ: Այսպիսով, ականատեսների վկայությունները, ինչպես նաև դատաքննության նյութերը լիովին հաստատեցին նրա կողմից թույլ տրված մարդկային ամենատարրական իրավունքների ոտնահարման փաստերը: Այնպես որ, դատախազության կողմից հիշյալին ազատ արձակելու փաստարկը, ինչպես նաև դատապաշտպանների ներդրած ջանքերը համոզիչ չեն և չեն կարող ընդունելի համարվել: Լիովին բացահայտվեց, որ Աբդուլ Քերիմ բեյը չարաշահել է իր պաշտոնը, իսկ Ռեֆիկ բեյն առանց արտոնության և իրավունքի խառնվել է պաշտոնատար անձնավորությունների գործերին, և, կատարելով մի շարք գործարքներ, դարձել է մեղսակիցների մեղսակիցը:

Աբդուլ Քերիմ բեյի հանցանքն առնչվում է կայսերական քաղաքացիական քրեական օրենսգրքի 102, իսկ Ռեֆիկ բեյինը՝ նույն օրենսգրքի 130-րդ հոդվածների հետ: Այդ հոդվածներում ասված է.

«Պետական պաշտոնյաներից որևէ մեկն իր պարտականությունները կատարելու ընթացքում, եթե առանց էական պատճառի անփութություն և անտարբերություն ցուցաբերի և կամ առանց էական պատճառի չկատարի օրենքի ուժից բխած իր վեյադասի հրամանը, ապա իր պաշտոնի աստիճանի համեմատ պատժի է ենթարկվում երեքից մինչև 100 լիրա տուգանքով: Եթե անփութության և անտարբերության հետևանքով և կամ օրենքի ուժից բխած վերադասի հրամանը չկատարելու դեպքում վնաս հասցվի պետության շահերին, ապա պաշտոնի աստիճանի համեմատ կալանքի է վերցվում (...) մեկ շաբաթից մինչև երեք տարի ժամկետով և ժամանակավորապես կամ մշտապես զրկվում է իր զբաղեցրած պաշտոնից: Կատարված այդ արարքների ընթացքում, եթե որևէ մեկին անձնական վնաս հասցվի, ապա մեղադրյալը տուժի է ենթարկվում այլ պատժամիջոցներով»:

«Պետության կողմից արտոնություն և իրավունք չունեցող որևէ մեկն ինքնուրույնաբար քաղաքացիական պաշտոնատների և զինվորականության հետ գործարքի մեջ մտնելու և կամ նրանց գործերին միջամտելու դեպքում բանտային պատժի է ենթարկվում երեք ամսից ոչ պակաս ժամկետով»:

Այս հոդվածներից բխած օրենքի ուժի համաձայն, Աբդուլ Քերիմ բեյը, կալանքի տակ վերցվելու օրվանից 1919թ. (փետրվարի 13), պատիժ է կրելու մեկ տարի բանտարկության ժամկետով և մեկ տարի էլ զրկվելու է իր պաշտոնից:

Ինչ վերաբերում է Ռեֆիկ բեյին, դատաքննության ժամանակ բացահայտվեց, որ ինքը ձկնաբուծարան ունենալու անհրաժեշտությունը չի

ունեցել, սակայն թարմ ծուկ ուտելու համար, իբր վարձակալել է Ալկո և Օմեր էֆենդիներին պատկանող ձկնաբուծարանը: Մինչդեռ իրականում այդ ձկնաբուծարանի համաձայնագիրն ակամայից դարձել է իր անունով: Այնուհետև, դրանով էլ չբավարարվելով, 35 լիրա վարձակալության արժեքի դիմաց, տիրացել է ամբողջ ձկնաբուծարանին, որի արժեքն ուղևորներով և այլ եկամուտներով կազմել է մոտ 18000 լիրա: Այս ծանրացուցիչ հանցանքը նկատի առնելով՝ Ռեֆիկ բեյը նույնպես կալանքի վերցվելու օրվանից (1919թ. ապրիլի 22) ձայների մեծամասնությամբ դատապարտվեց երկու տարի ժամկետով բանտարկության:

Ջելալ և Հաֆիզ Մահմուդ էֆենդիներին վերաբերող ամբաստանությունն օրինականապես չապացուցվեց, ուստի ձայների մեծամասնությամբ որոշվեց նրանց ազատ արձակել:

Ըստ օրինականության, դատաքննության են ենթարկվելու նաև այն անձինք, որոնք օժանդակել են վերոհիշյալ հանցավոր գործարքներին:

Դատավճիռն ընթերցվեց բոլորի ներկայությամբ:
1919թ. մայիսի 24
Նազըմ, Ջեքի, Ալի Նազըմ, Մուստաֆա, Ռեջեբ Ֆերդի

Ռազմական արտակարգ ատյանի արձանագրող
հանձնախմբի պետ Աբիդին Դավեր:

Takvim-i Vekayi, 22 Mayis 1335 (1919) № 3618.

8. ՌԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նախագահ՝ գեներալ-մայոր Էսադ փաշա,
անդամներ՝ գեներալ-մայոր Իհսան փաշա,
գեներալ-մայոր Մուստաֆա Քերիմ փաշա,
գեներալ-մայոր Իսմայիլ Հաքքը փաշա,
գնդապետ Սուլեյման Շաքիր բեյ:

ԽԱՐԲԵՐԴԻ ԿՈՏՈՐԱԾԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԵՌԱԿԱ ԿԱՐԳՈՎ ԴԱՏԻ ՏՐՎԱԾ ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԻ Ա-ՆՈՒՆՆԵՐԸ – «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի նախագահ դոկտ. Բեհաէդդին Շաքիր, «Միություն և առաջադիմություն» կուսակցության Խարբերդի պատասխանատու քարտուղար Ռեսնելի Նազըմ բեյ:

Դատի տրված ներկա գտնվող մեղադրյալների անունները - Դերսիմի նախկին պատգամավոր Հաջի Բալյուս-զադե, Սեհմեդ Նուրի բեյ, Խարբերդի հանրակրթական նախկին տեսուչ Ֆերիդ բեյ:

Սույն դատավարության ընթացքում լսեցի մեղադրող և պաշտպանվող երկու կողմերին, մանրակրկիտ ուսումնասիրվեցին և հետաքննվեցին բոլոր դատական փաստաթղթերը: Կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ մեղադրյալ դոկտ. Բեհաէդդին Շաքիր բեյը, որպես «Հատուկ կազմակերպության» նախագահ, Ստամբուլից դուրս գալով, սկսել է շրջագայել Տրապիզոնի, Էրզրումի և այլ վիլայեթներում: Միևնույն ժամանակ բանտերից դուրս բերված ոճրագործներից և այլ հանցագործներից կազմված հրոսակախմբերի գլուխն անցնելով՝ տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում կոտորել է տեղահանված հայերին և նրանց ունեցվածքն ենթարկել կողոպուտի: Նա իր նենգ ծրագրերն իրագործելու համար, այն վայրերը, ուր տեղի ունեցան այդ ողբերգական դեպքերը, ուղարկում էր նաև անտեղյակ և դյուրահավատ այնպիսի մարդկանց, որոնք միանում էին վերոհիշյալ «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ին՝ ակամա ատելությամբ և կամ շահույթ ստանալու մոլի ցանկությամբ համակված: Իր պարտականությունները կատարելու ընթացքում հաճախ բանավոր կարգադրություններ և երբեմն էլ ծածկագիր գաղտնի հրահանգներ է ուղարկել [այս ու այն կողմ] և «Թեշքիլաթ-ը մահսուսե»-ի հրոսակախմբերին օգտագործել է իր անմիջական հրամանատարության ներքո՝ հայերին կոտորելու և բնաջնջելու նպատակով:

Հիշյալ Բեհաէդդին Շաքիր բեյը «Միություն և առաջադիմություն» կուսակցության Խարբերդի պատասխանատու քարտուղար, այժմ փախուստի մեջ գտնվող մեղադրյալ Ռեսնելի Նազըմ բեյին Խարբերդի վալի Սաբիհ բեյի միջոցով Էրզրումից ուղարկած 1915 մայիսի 4-ի թվագրությունը կրող ծածկագիր հեռագրով հարցնում է.

«Մեզ պարզորոշ տեղեկացրեք, այդտեղից ուղարկվող հայերին զտո՞ւմ եք, թե՞ ոչ: Վտանգավոր մարդկանց, որոնց վտարումն ու աքսորումն եք հայտնել, ոչնչացնում ե՞ք, թե՞ ճամփու եք դնում»:

«Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կնիքը կրող թղթապանակի փաստաթղթերի մեջ գտնվող ծածկագիր հեռագրերից մեկում Էրզրումի վալի Մյունիր բեյը հայտնում է.

«Քաղդիի ճանապարհով Էրզրումից ուղարկված հարուստ հայերի քարավանները, հարձակման ենթարկվելով Բեհաէդդին Շաքիր բեյի կազմած հրոսակախմբերի և դեբսիմցիների կողմից, կոտորվել են, իսկ նրանց ունեցվածքը՝ կողոպտվել»:

Կաստամոնուի նախկին վալի Ռեշիդ փաշան հայտնում է, որ ինքը հիշյալ Բեհաէդդին Շաքիր բեյից ծածկագիր հեռագիր է ստացել տեղահանության մասին: Իսկ Վեհիբ փաշան հայտնում է, որ «Հայերի կոտորածն ու բնաջնջումը, ինչպես նաև ունեցվածքի հափշտակումն ու կողոպուտը նախապես վճռվել էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից, որ երրորդ բանակի շրջակայքում արնախում հրոսակախմբերի կազմակերպողն ու ղեկավարողը Բեհաէդդին Շաքիր բեյն է»:

Անթալիայի նախկին մութասարիֆ Սաբուր Սամի բեյը հայտնում է, որ Բեհաէդդին Շաքիր բեյն Էրզրումից ուղարկած ծածկագիր հեռագրով հետևյալ հարցումն է արել:

«Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Սիվասի, Տրապիզոնի շրջաններում ոչ մի հայ չի մնացել, բոլորն արտաքսվել են Մոսուլի և [Տեր]-Զորի կողմերը, իսկ դուք ի՞նչ եք անում Անթալիայում»:

Ռազմական ատյանի արձանագրություններում հավաստի փաստարկներով բերված մի շարք վկայություններում ևս հաստատվում են վերոհիշյալ ողբերգական իրադարձությունների ընթացքում Բեհաէդդին Շաքիր բեյի և նրա համախոհների համատեղ կատարած հանցագործությունները:

Ինչ վերաբերում է փախուստի մեջ գտնվող մեղադրյալ Ռեսնելի Նազըմ բեյին, ռազմական ատյանի երեք անդամները նրան ևս մեղսակից ճանաչեցին վերոհիշյալ ողբերգությունների մեջ, քանի որ տեղահանության ընթացքում նա սերտորեն համագործակցել է Բեհաէդդին Շաքիր բեյի հետ: Դա ապացուցվում է Նազըմ բեյին ուղղված 1915 մայիսի 4-ի թվագրությամբ վերահիշյալ հեռագրի բովանդակությամբ, ինչպես նաև Խարբերդի վալի Սաբիհ բեյի, [կուսակցության] կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Միդհատ Շյուքրի բեյի և այլ վկաների կատարած հայտարարություններից: Ուշագրավ փաստարկ է նաև այն հանգամանքը, որ դատական հետաքննության նախօրեին նա թաքնվեց և ց'այսօր գտնվում է փախուստի մեջ:

Բացի այդ, փաստաթղթերի մեջ գտնվող մյուս թղթակցությունների բովանդակությունից ևս հասկացվում է, որ նա մասնակցություն է ունեցել հիշյալ ողբերգություններին:

Օրենքի տեսանկյունով, հիշյալ հանցագործության ընթացքում Նազըմ բեյն իսկական մեղսակիցների նման որոշակի հանցանշան չի թողել, բայց Բեհաէդդին Շաքիր բեյի հետ նրա ունեցած թղթակցությունները և վկաների ցուցմունքները հաստատում են, որ նա անուղղակի մասնակցություն է ունեցել տվյալ հանցագործությանը, քանի որ նա գիտակցորեն օժանդակել է այդ ողբերգության մեղսակիցներին:

Այսպիսի իրավիճակում, օրենքի պահանջներից ելնելով՝ ձայների մեծամասնությամբ որոշում կայացվեց, որ Նազըմ բեյն ենթակա է դատապարտման՝ հանցագործությանն անուղղակիորեն մասնակցություն ունենալու ամբաստանությամբ: Վերոհիշյալների կատարած հանցագործության պատժի չափը որոշվեց հետևյալ կերպ: Քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի թելադրանքով, 170-րդ հոդվածի հիման վրա Բեհաէդդին Շաքիր բեյը դատապարտվեց մահվան, իսկ Ռեսնելի Նազըմ բեյը նույն օրենսգրքի 45-րդ հոդվածի երկրորդ մասով՝ 15 տարվա տաժանակիր աքսորի: Բռնագրավված ունեցվածքը տնօրինվելու է ըստ օրենքի: Նազըմ բեյը զրկվում է նաև քաղաքացիական իրավունքից:

Մյուս մեղադրյալներն են Դերսիմի նախկին պատգամավոր Մեհմեդ Նուրի բեյը և Խարբերդի նախկին հանրակրթական տեսուչ՝ Ֆերիդ բեյը: Տրված վկայության համաձայն Մեհմեդ Նուրի բեյի ագարակի շրջակայքում գտնվող Հոլովենկ գյուղի հայությունը նույնպես ենթարկվել է տեղահանության և կոտորվել: Հայերին գյուղից տեղահանելու ընթացքում [Մեհմեդ Նուրի բեյը] ժանդարմների ներկայությամբ ասել է. «Ձեր բոլորին ուղարկելու են Կեմիկլի գյուղը, իսկ այստեղ ցանելու են գարի»: Այդ իրադարձությունների մեղադրանքով նրան ուղարկել էին ռազմական ատյանի հարցաքննության: Դատաքննության ժամանակ տիկին Մարգարիտն ամ-

բաստանելով նրան՝ ասաց, որ տեղահանության ընթացքում Մեհմեդ Նուրի բեյն երբ եկել է Հոլովենկ գյուղը, իրենց թախանձագին խնդրանքը մերժելով, ասել է. - «Դուք գնալու եք ձեր ամուսինների գնացած վայրը, այստեղ ես գարի եմ ցանելու»: Նա հայտնել է նաև հետևյալը. «Ով որ իր ունեցվածքը Կարապետի տանը թողնի, կարող է երեք ամիս հետո գալ և վերցնել»: Այս մասին իբր մի ազդագիր է փակցրել պատին և այնուհետև իր ձին նստելով՝ հեռացել:

Մի այլ գանգատվող՝ Գասպար Մովսիսյանը, որը տեղահանության ժամանակ գտնվել է Ստամբուլում, հաստատեց տիկ. Մարգարիտի տված վկայությունը և ասաց, որ Մեհմեդ Նուրի բեյը դրամ է շորթել շատերից, որ Կարապետի տանն, իրոք մի ժանդարմի միջոցով կարմիր թերթիկներ է կնքել տվել: Մի շարք կանանց պաղատագին խնդրանքը նա մերժել է և «այս գյուղում գարի եմ ցանելու տալու» ասելով՝ ձի է նստել և հեռացել: Նրա գնալուց հետո չեթեների հրոսակախմբերը սրընթաց հարձակվել են գյուղի վրա: Հիշյալի Կարապետի տան պատի վրա Մեհմեդ Նուրի բեյի թողած ազդագրի մասին տեղյակ չլինելը տարակուսանքի առիթ տվեց: Այդ կապակցությամբ Կարապետը դատաքննության ընթացքում հայտարարեց, որ [Գասպար Մովսիսյանը] սուտ է ասում, որ Մեհմեդ Նուրի բեյն իրոք իր տան ճակատին մի ազդագիր փակցրել է, որ ինքը, թաքնվելով Մեհմեդ Նուրի բեյի չիֆթլիքում, ազատվել է տեղահանությունից և մինչև վերջ նրա տանը մնալով՝ փրկվել մահից: Նա հայտնեց նաև, որ ինքը չի նկատել, թե Մեհմեդ Նուրի բեյի քեհնակալ Ասըմ բեյը հայերից հափշտակված ապրանքը տեղափոխել է Մեհմեդ Նուրիի բնակարանը: Ինչ վերաբերում է Մեհմեդ Նուրի բեյի՝ բանտում փող վերցնելու հարցին, այն կարող է այլ տեսանկյունից ուշադրության արժանանալ:

Չնայած որ տվյալ ժամանակ կառավարությունը հրամայել էր արձակել այն մասին, որ տեղահանված հայերին իրենց տանը պատսպարող մարդկանց մահվան պատիժ է սպառնում, այնուհանդերձ Մեհմեդ Նուրի բեյը համարձակվել էր Հոլովենկ գյուղի բնակչության մի մասին թաքցնել իր չիֆթլիքում և փրկել մահից: Այս հարցում բոլորովին չեզոք կողմ հանդիսացող ամերիկացի միստր Ռեքսը նույնպես հայտնեց, որ տեղահանության ընթացքում Մեհմեդ Նուրի բեյը բավականաչափ թվով հայերի կարողացել է ազատել՝ պատսպարելով իր ագարակում: Դա հաստատվեց նաև մյուս վկաների ցուցմունքներով:

Կառավարության կողմից կազմակերպված համընդհանուր տեղահանության և կոտորածին մասնակցելու խնդրում ստույգ հանցանշաններ չլինելու պատճառով հանրակրթական տեսուչ Ֆերիդ բեյն ազատ է արձակվում: Մեհմեդ Նուրի բեյը նույնպես անմեղ է ճանաչվում, նկատի ունենալով, որ նա առնչություն չի ունեցել Հոլովենկ գյուղի հայ բնակչության տեղահանության և կոտորածի խնդրում: Նրա քեհնակալ Ասըմ բեյը, հայերի ունեցվածքը տեղափոխելու և Մեհմեդ Նուրի բեյի տանը պահելու ամբաստանությունից անմեղ է ճանաչվում:

Այսպիսով ռազմական ատյանի միաձայն որոշումը հրապարակվեց Մեհմեդ Նուրի բեյի և Ֆերիդ բեյի ներկայությամբ, իսկ Քեհաէդդին Շաքիր և Ռեսնելի Նազըմ բեյերի նկատմամբ՝ հեռական կարգով:

13 կաննունի սանի 1336թ. Մուստաֆա Քեռիմի, Իհսան
(1920թ. հունվարի 13)

«Մենք միանալով այս դատավճռին, այն կարծիքին ենք, որ մեղադրյալ Ռեսնելի Նազըմ բեյը նույն աստիճանի հանցագործ է, ինչ Բեհաէդդին Շաքիր բեյը»:

Սուլեյման Շաքիր, Իսմայի Հաքքը, Էսադ:

Takvim-i Vekayi, 13 Ocak 1336 (1920) № 3771.
«Հայերի ցեղասպանությունն ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի», Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրություններով Ա. Հ. Փափազյանի, Երևան, 1989:

VI. ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

1. ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՆԱՏԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՔԱՆԱՉԵՎԸ
20 ԱՊՐԻԼԻ 1965թ., ԹԻՎ 13926
ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՎԱ ՍԱՍԻՆ

Սենատը և Ներկայացուցիչների Պալատը համատեղ Գլխավոր ասամբլեայում ընդունեցին բանաձև՝

ՀՈԴՎԱԾ 1

Առաջիկա ապրիլի 24-ը հայտարարվում է «Հայ նահատակների հիշատակի Օր»՝ նվիրված 1915թ. այդ ազգության կոտորածներին զոհ գնացած ներկայացուցիչներին:

ՀՈԴՎԱԾ 2

Պաշտոնական ռադիոծառայությունների կայանները պետք է այդ օրը իրենց հաղորդումների մի մասը նվիրեն վերոհիշյալ ազգության զոհերի հիշատակին:

ՀՈԴՎԱԾ 3

Հայկական ծագում ունեցող քաղաքացիներին, որոնք հանդիսանում են պետական ծառայողներ, թույլատրվում է այդ օրը աշխատանքի չներկայանալ:

ՀՈԴՎԱԾ 4

Մոնտեվիդեոյի շրջանի թիվ 156 երկրորդ աստիճանի դպրոցը անվանակոչել «Հայաստան»:

Legistative Power. Law N 13926. Senate chambers in Montevideo, the 20th of April, 1965.

2. ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆՍՏԱՇՐՋԱՆ

10 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1970թ.

Նախագահում է պարոն ներկայացուցիչ
դոն Վաշինգտոն Գարսիա Ռիխոն (փոխնախագահ)

6. Հայաստանի անկախությունը. (Սևրի պայմանագրի իրագործումը). (հաղորդագրության պատճեն)

Օրակարգի քննարկման է ներկայացվում մեկ հարց՝ «Հայաստանի անկախությունը: Սևրի պայմանագրի իրագործումը (հաղորդագրության պատճեն)»:

ՊԱՐՈՆ ՆԱԽԱԳԱՀ - Ջեկուցողն է պարոն պատգամավոր Մասեբան, որին մնացել է 29 րոպե ժամանակ:

Խոսքը տրվում է պարոն պատգամավոր Մասերային:

ՊԱՐՈՆ ՄԱՍԵՐԱ - Վերջերս ափսոսանքս էի հայտնում, որ Ներկայացուցիչների Պալատում, կարծես պատրաստ էր արագ հավանության տալուն հաղորդագրության այս պատճենն, սակայն ես ինձ պարտավորված եմ համարում, անկասկած, մասնակցել այս հարցի քննարկմանը, որովհետև ճշմարտությունն այն է, որ նրանում ոչ մի բան պարզ չեմ տեսնում:

Կրկին ներողություն եմ խնդրում պարոնայք պատգամավորներիից, որ կարծում են, թե սա մի հարց է, որ կարող էր լուծվել շատ արագ, սակայն քանի դեռ ինձ մոտ կասկածները չեն պարզեցվում, խոստովանում եմ, որ պատրաստ չեմ լինի որոշում կայացնել:

Ի՞նչ է սա, որ առաջարկվում է այս հաղորդագրության պատճենի մեջ: Համաձայն այս տեքստի, որ տրամադրությանս տակ ունեմ, վերաբերում է ՄԱԿ-ից պահանջել նրա պարունակության իրագործումը, ասում եմ ստույգ կերպով, սա Սևրի պայմանագիրն է, որ ստորագրվեց 1920թ. օգոստոսի 10-ին, այլ կերպ ասած, հիսուն տարի առաջ:

Խոստովանում եմ, երբ ուսումնասիրեցի այս խնդիրը, առաջինը, որ զգացի, եղավ մոլորվածության զգացումը: Ի՞նչ է նշանակում սա: Ու՞մ համար է այն: Ի՞նչ տարածքների մասին է խոսքը: Պետք է տեղեկացնեմ, որ այս խնդրում իմ անիրազեկության բացերը մեծ են ինչպես ծովերը: Փաստորեն, իրականում ոչինչ չգիտեի այս խնդրից: Ընթերցելուց մի քիչ անհանգստացա, սակայն կարող եմ ասել, որ չկարողացա բավականին առաջ գնալ և կարծում եմ, որ ներկա գտնվող պատգամավորները, որոնք շատ են, լույս կսփռեն այս առթիվ: Ասում եմ անկեղծորեն, ես մի շարք հարցեր կտամ, որ բնականաբար կառաջանան և կարծում եմ, որ կպարզաբանվեն դրանք: Մասնավորապես վստահում եմ պարոն պատգամավոր Գուտիերես Ռուիսի խոսքին, որը որոշակի ձևով մեր մասնագիտացված մարդն է միջազգային գործերում, որքանով, որ համապատասխան հանճախմբի նախագահն է: Նա հավանաբար, կկարողանա վերացնել կասկածները, որ ես դեռ շարունակում եմ կրել: Այնուամենայնիվ առաջխաղացումը Ներկայացուցիչների Պալատում հաղթահարվեց, շատ սպառիչ բացատրություններ տրվեցին այս խնդրի վերաբերյալ, իմ կարծիքն այն է, որ հարցը պետք է քննարկվեր միջազգային հարցերի հանճախմբում, հատկապես, որ այնտեղ վերլուծում ստանար և հետո հնարավոր լիներ զեկուցմամբ հանդես գալ: Ճշմարտությունն այն է, որ այնտեղ այն բացակայում է: Խոսքը վերաբերվում է միայն մի հաղորդագրության պատճենի մասին, հիմնավորումների մի կարճ ցուցադրմամբ, որը մեզ թույլ է տալիս քվեարկել ողջ գիտակցությամբ՝ կողմ կամ դեմ:

Ինչու՞ համար է մեր այս մոլորվածությունը: Միջազգային մի պայմանագիր, ընդհանրապես մի խճճված հարց: Սակայն այս պայմանագրից անցել է հիսուն տարի, կես դար: Եվ ինչպիսի հիսուն տարի: Այս հիսուն տարիներին ողջ աշխարհում և մասնավորապես աշխարհագրական այն շրջանում, որին վերաբերվում է այս պատճեն, տեղի ունեցան հսկայական փոփոխություններ:

Այն իրավիճակը որ տիրում է այժմ, կարող ենք ասել, որ գործնականորեն համեմատելու տեղ չկա, այն բանի հետ, որ գոյություն ուներ 1920 թվականին:

Ինչ վերաբերում է Սևրի պայմանագրի իրագործմանը, հարց է առաջանում. ի՞նչ տեսքով, ի՞նչ ձևով, ինչպիսի քաղաքական ավարտով: Որովհետև մենք չենք խաբում մեզ: Սովորաբար միջազգային պայմանագրերը ունեն քաղաքական որոշակի ավարտ, մատնանշում են ճշգրիտ կողմը, գործում են հօգուտ որոշակի շահերի, լինում են, սովորաբար մյուս շահերին հակառակ: Իրադրության մեջ ստեղծված այդքան արմատական փոփոխությունները տեղի են ունենում նույն պայմաններում, ինչպես որ կարող է ասվել պարզապես, որ այն ներկայացնում ենք այժմ, ինչպես կկարողանայինք կատարել հիսուն տարի առաջ: Սա է իմ կասկածների առանցքը և վստահեցնում եմ բացարձակապես, որ այն չգիտեմ: Անկեղծ ասած, այս անհստակությանը չունեմ պատասխան, և հիմա ես կբացատրեմ մի քիչ ավելի մանրամասն:

Չեմ ցանկանում չափազանցնել այս խնդրում, սակայն մտքումս է մի զուգահեռ, որն ինչպես բոլոր զուգահեռները վստահաբար սխալ է և վիճարկելի: Հնարավոր է, որ Կառլոմագնո կայսրն իր դարաշրջանում այն բոլոր պայմանագրերի մեջ, որ կնքեց, կլինի ինչ որ մեկը, որ մասնակիորեն կհամարվի օգտակար, պատկերացնենք Լյուքսեմբուրգի ժողովրդի համար: Ամբողջությամբ հնարավոր է, այն չեմ անտեսում: Բայց ինձ հարց եմ տալիս: Օգտակար լինելու համար Լյուքսեմբուրգի ժողովրդին օրինական կլիներ պահանջել մի պայմանագրի հավելված ասելով. «Ութ հարյուր թվականին Կառլոմագնոյի կողմից կնքված պայմանագիրը իսկական է»: Բացատրություն տալու ոչ մի դժվարություն չկա: Չի կարող պատահել, օրինակ, որ Կառլոմագնոյի դարաշրջանի այս պայմանագիրը նկատի ունենար եվրոպական ընդհանուր շուկան, կամ երկու Գերմանիաների գոյությունը, կամ էլ ինչ որ մի բան պետք է երևար այս փաստաթղթի օգտագործումը ներկա ժամանակաշրջանում:

Կրկնում եմ, որ ոչ մի կասկած չունեմ, այն օրինակը, որ բերում եմ չափազանցված է և ինչ որ ձևով եթե այն առաջարկում եմ այսպես, բացառապես այն բանի համար է, որ պարզ երևա, որ այս նյութի մեջ չի կարող պարզապես ասվել. «Այս պայմանագիրը լավն էր, իրագործենք այն: Հարկավոր է տեսնել, երբ լավ կլինի, ինչու և ինչ հանգամանքներում, կորոշենք, հնարավոր է արդյոք, կամ ոչ, այժմ օգտագործել այն»:

Ճշմարտությունն այն է, որ հիսուն տարին փոքր ժամանակաշրջան չէ, երբ խոսքը վերաբերվում է այսքան անհանգստացնող ժամանակահատվածին:

Անկասկած ցանկանում եմ, որ բացարձակապես պարզ դառնա, որ կան բաներ, որ ամբողջությամբ դուրս են ողջ այս քննարկումից: Առաջին հերթին ընդգծում եմ համակրանքը հայ ժողովրդի նկատմամբ: Խոսքը վերաբերվում է հին մշակույթ ունեցող ժողովուրդներից մեկին, որի հնագույն մշակութային ավանդույթները, չնայած իր հարաբերական փոքրաթիվ լինելուն՝ պահպանվեց իսկապես մի հիանալի կենսունակությամբ:

Առաջինն այն է, որ մեզ ներշնչում է համակրանք և ուղղորդում ինչ որ ձևով դեպի բարենպաստ մի զգացողություն:

Երկրորդը, որ վիճաբանությունից նույնպես դուրս է, այն է, որ այս ժողովուրդը անմարդկային ձևով տառապել է՝ սարսափելի հետապնդումներ, մասնավորապես այն, որ վերաբերում է այս խնդրին, իսկական ցեղասպանություն է՝ իրագործված 1915 թվականին թուրքերի կողմից: Անկասկած այն ներշնչում է մեզ մեծագույն համակրանք և մեր գերագույն համերաշխությունը:

Երրորդը, որ ամբողջությամբ համաձայն ենք և ընդհանրապես հանդես ենք գալիս հայ ժողովրդի ինքնորոշման օգտին, ինչպես աշխարհի բոլոր ժողովուրդների դեպքում: Եղել է և կա, կատարելապես հայտնի է մարքսիզմ-լենինիզմի պայքարի և մասնակիորեն լենինիզմի քաղաքական մեծ խմբավորումներից մեկը, որը ստեղծեց ազգերի ինքնորոշման պաշտպանության հարցի կոմունիստական կուսակցության ողջ քաղաքականության մի կենտրոն: Մասնակիորեն հայ ժողովրդի վերաբերյալ կրկնում եմ, որ սովորաբար, հիմնականում պատրաստ ենք դրական համարել ինքնորոշման նրա ձգտումները, սակայն դա նույնպես լենինիզմի անաճճահատկությունն է, միշտ, որ այն ուսումնասիրում ենք որոշակիորեն, այսպես ասած, տեսնենք, ինչպես կլինի այս ինքնորոշումը, և ոչ որպես վերացական խնդիր՝ անջատված լինելով կենդանի իրականությունից:

Ինչպիսին է այժմյան իրադրությունը: Արդյոք գոյություն ունի այն, որ կարողանայիք անվանել ավանդական կամ պատմական հայկական տարածք: Չգիտեմ, ինչպես այն անվանել, չնայած այս գործերում միշտ սահմանները բանականին առածգական են, որովհետև իրականությունն այն է, որ ժողովուրդների, ազգերի, պետությունների տարածքները կարևորություն չեն ներկայացնում, սակայն նշում ենք, որ գոյություն ունի քիչ թե շատ համապատասխան սահմանում, որ կարող է կոչվել հայկական ավանդական տարածք, որն այսօր մաս է կազմում Խորհրդային Միության՝ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: Առաջին խնդիրը: Ավանդական այս տարածքի հաշվի առնելու մյուս մասը միացված է այն տարածքին, որ այժմ կոչվում է Թուրքիա: Կարծում եմ, որ կա ուրիշ մաս, բացարձակապես վստահ չեմ, որ պատկանում է, լավ չգիտեմ, Պարսկաստանին թե Իրաքին, կարծում եմ՝ առաջինին: Կրկնում եմ, վստահ չեմ, թե իսկապես ավանդական Հայաստանի մի մասը պատկանում է այս երկու երկրներից ինչ որ մեկին: Հնարավոր է, որ մեր գործընկեր պարոն պատգամավոր Աչէ Էչարտը, որը վերջերս դահլիճում էր, Ներկայացուցիչների Պալատի այս հարցերով, որ կապ ունեն արաբական ժողովուրդների և այլոց հետ, նշեց, որ ավարտում է դահլիճ գալը, կարող է մեզ տեղեկացնել այս խնդրի մասին: Նրան հարգում եմ, բայց կասկածներ ունեմ, թե իսկապես հայկական ավանդական տարածքի մի մասը պատկանում է Իրաքին թե Պարսկաստանին: Կարծում եմ, որ այո, չնայած ամբողջությամբ վստահ չեմ, սակայն թողնենք, ներառյալ այս մասը մի կողմ, որը պակաս կարևոր է և ավելի վիճարկելի կամ կասկածելի:

Հիմա ես հարցնում եմ, Սևրի պայմանագրի այս հավելվածը ներառում է մտադրություն՝ առանձնացնելու Խորհրդային Միությունից Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը: Խոստովանում եմ, որ այն պարզ չեմ տեսնում: Այսօր հեռախոսազանգ ստացա, ուրուգվացի ծագումով մի հայից, որն ինձ տեղեկացրեց, որ այդպես չի եղել, չգիտեմ, ինչու՞ կասկածել նրա ասածը, սակայն ճշմարտությունն այն է, որ

երբ ստորագրվեց 1920 թվականի պայմանագիրը, ոչ մի կասկած չի հարուցում, որ նպատակներից մեկն էր՝ անջատել Խորհրդային Միության սահմաններից Հայաստանի մասը, որը նրա կազմի մեջ էր:

Կրկնում էր, որ այս այն զգացումը չէ, որով փորձ է արվում իրականացնել այժմ Սևրի պայմանագիրը, սակայն իմաստ կունենար կատարել մի ճշգրիտ պարզաբանում այս հարցում: Բոլոր դեպքերում, քող ինձ ներվի, այս ենթադրությունը ղեկավարում է ինձ, սակայն կրկնում եմ, որ իմ անիրազեկությունը, բոլոր այս հարցերի վերաբերյալ չափազանց մեծ է և ոչինչ ավելի չեմ կարող անել, քան հարցեր տալ՝ հույս ունենալով, որ ինչ որ մեկը կկարողանա լուսաբանել...

ՊԱՐՈՆ ՍԻԳԱՆԴԱ - Թույլ տվեք ընդհատել Ձեզ:

ՍԵԳՈՐ ՄԱՍԵՐԱ - Այո պարոն պատգամավոր:

ՊԱՐՈՆ ՆԱԽԱԳԱՀ (ԳԱՐՍԻԱ ՌԻՒՈ) - Պարոն պատգամավորը կարող է ընդհատել:

ՊԱՐՈՆ ՍԻԳԱՆԴԱ - Պարոն նախագահ, պարոն պատգամավոր Մասերան պնդում է, որ ինչ որ մեկը նրան պարզաբանի, բայց ես, որ ստորագրվածներից մեկն եմ, նրան ոչինչ չեմ լուսաբանի, քանի որ նա տեղեկացված է, և նրան կհանգեցնի եզրակացությունների, որ ցանկանում է ընդունել այս նախածեռնության առջև և նա կունենա իր տեսակետը, որը կապացուցի իր դիրքորոշումը: Պարզապես ցանկանում եմ նշել, որ այս պահին այն պետական մարմնի կողմից քննարկման մեջ է և որ խնդրվում է, որ մեր երկրի Արտաքին գործերի նախարարությունը լինի Ուրուգվայի Ներկայացուցիչների Պալատի պարզաբանողը հարմար առիթով Միացյալ Ազգերի Կազմակերպությունում, որպեսզի իրագործվի Սևրի պայմանագիրը:

Պարոն պատգամավոր Մասերան կարող է կազմել շատ հարցեր, որովհետև նա մի եռանդուն մարդ է, որը երբեք չի գալիս դադիճ՝ խնդրելու մի ծրագրի շուրջ քննարկումներ կատարել, որը տեղեկացված չլինի համապատասխան հանճնաժողովի կողմից: Նա երբեք չի գալիս՝ միջնորդելու մի գործընթաց, որը չէր կարող քննարկված չլիներ անհրաժեշտ ձևով հանճնաժողովներում, սրանում նա ունի ավանդույթ, որն իրեն պատիվ է բերում: Սա նրա տեսակետի հետևանքն է, երբ խնդրում է հանճնաժողովի մի զեկուցում: Սակայն այս պահին խնդրվում է, որ մեր երկիրը իր համերաշխությունը հայտնի այն ժողովրդին, որը զոհ դարձավ մի ահավոր անարդարության, որը տեղի ունեցավ կանխամտածված ձևով 1915 թվականին, Համաշխարհային առաջին պատերազմի ժամանակ: Այդ իրադրության առիթով ՄԱԿ-ում, այն ժամանակվանից, որ չէին գործում այս անվամբ (Վերսալի Կոնգրեսից հետո) զետեղեցին մի պայմանագրի ստորագրություն, որն իր ավարտն ունեցավ 1920 թվականին: Անցավ հիսուն տարի և հավանաբար պատահմամբ հայտարարվեց իրագործումը: Եթե իրագործված չլիներ, ոչ ոք ոչինչ չէր ասի: Այն երկրները, որ ստորագրեցին այս պայմանագիրը, պայմանավորվեցին սահմանների անցկացում, արաբական գավառների զիջումը, Եգիպտոսի ազատագրումը, Սիրիայի և Միջագետքի հանճնումը, Հունաստանում Զմյուռնիայի գոտու հետ հանճնումը, Հայաստանի անկախությունը և այս շրջանին վերաբերող մի շարք խնդիրներ:

Այս պայամանագիրը ստորագրեցին բոլոր դաշնակից տերությունները՝ Բելգիան, Չեխոսլովակիան, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Հունաս-

տանը, Իտալիան, Ճապոնիան, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան: Այն երկրները, որ ստորագրեցին պայմանագիրը, նրանցից ոմանք հարևանություն ունեին Թուրքիայի հետ, ուստի որոշեցին, որ պայմանագիրը կճանաչվի այն մասով, որը վերաբերում էր Հայաստանին, նրա ինքնիշխանությանը: Միաժամանակ նախագահ Վիլսոնին վերապահվեց նրա սահմանների գծման իրավունքը:

Նախագահ Վիլսոնը՝ սահմանազատելով, նոյեմբերի 22-ին որոշում կայացրեց, որն ընդունվեց շահագրգիռ երկրների կողմից: Սա նշանակում է ոչ ավել ոչ պակաս՝ Հայաստանի ճանաչումը Թուրքիայի կողմից, որպես ազատ անկախ պետության, ինչպես արդեն եղել էր դաշնակից ուրիշ պետությունների կողմից:

Այստեղ չենք քննարկում Սևրի պայմանագիրը: Սա քնական ոլորտ չէ դրա համար: Ոչ մի առաջարկ չենք անի նրա փոփոխության վերաբերյալ: Պարզապես մենք հետաքրքրված ենք իսկական ջերմությամբ մի ժողովրդի հանդեպ, որը մշտապես դարձավ ավելի ուժեղ տոտալիտար երկրների նվաստացման զոհը, որ չճանաչեցին ավելի թույլ երկրների արժեքը և իրավունքը:

Որքանով որ մենք թույլ երկիր ենք և չունենք մեր սահմաններում զինված պաշտպանության հնարավորություններ, որ մեզ մշտապես երաշխավորի մեր սեփական ինքնիշխանությունը, մենք պետք է դիտենք համամասն երկրների իրավիճակը համերաշխության և բարձր նվիրվածության զգացումով, որը նորմալ է, որովհետև հարկավոր է քննել իրավիճակը համամասն երկրների տեսակետից, որովհետև մենք պետք է հասկանանք, որ այդ երկրների հետ պետք է պայքարենք միասին: Սակայն գործընթացը, որ պետք է կատարեն ՄԱԿ-ում, այն չի ընթանում մեր հաշվին, փոքրիկ առնչություն անգամ չենք ունենա այս պայմանագրի հետ, ոչ կարծիք կհայտնենք որևէ հոդվածի վերաբերյալ և ոչ էլ որևէ բանի մասին, որ փոփոխվում է:

Միակ բանը, որ այստեղ հայտարարում ենք այն է, որ հարգվի մի երկրի իրավունքը, որն անարգվեց, հողին հավասարվեց, որն ունեցավ 1,5 միլիոն զոհեր Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և հետագայում այս նահատակների սերմերը վերածեցին և դարձան այս պահին հինգ միլիոն բնակչությամբ մի ազգ և մի աշխատասեր ժողովուրդ, որն արժանանում է մեր համակրանքին և մեր կատարյալ ինքնակայությանը, որով էլ պայմանավորված է նրա կյանքը:

Այս դատողություններով հանդերձ, ինձ թվում է, որ սա մի ընդհանուր գործողություն է, որպեսզի մի ազատ խորհրդարան բարեխոսի մի ժողովրդի համար, որը ձգտում է, որ հարգվի նրա ազատությունը և նրա իրավունքը: Կրկնում եմ, որ խոսքը չի վերաբերվում փոփոխելու Սևրի պայմանագիրը: Նրա արդիականությունը և ողջ մնացածը չի ընթանում մեր հաշվին:

ՊԱՐՈՆ ՄԱՍԵՐԱ - Ներողություն եմ խնդրում ասելով, որ պարոն պատգամավոր Սիգանդան իմ կարծիքով ոչինչ չլուսաբանեց:

Ներկայացուցիչների Պալատը ընդառաջ է գնում հավանության տալուն կամ մերժմանը և պահանջում է, որ Ուրուգվայն ԱԳՆ-ի միջոցով ներկայացնի ՄԱԿ-ի առջև և հայտարարի միջազգային այդ կազմակերպությանն այն դրույթները, որոնցով հնարավոր կլինի իրագործել այս պայ-

մանագիրը, կրկնում եմ ևս մեկ անգամ Սևրի պայմանագրի բովանդակությունը, որի հիսուն ամյակը նշվեց վերջերս:

Ուրեմն, խոսքը չի գնում այն մասին, որ պատգամավորը, որ խոսում է, լինի կողմ, դեմ կամ ինչպես լինի, այլ իմանա, որ Ներկայացուցիչների Պալատը պատկերացում ունի այն մասին, ինչ քվեարկում է և ինչու համար:

ՊԱՐՈՆ ԳՈՒՏԻԵՐԵՍ ՌՈՒԻՍ - Թույլ տվեք ընդհատել:

ՊԱՐՈՆ ՍԱՍԵՐԱ - Եթե ինձ թույլ տրվի ավարտել այս մասով, անմիջապես թույլ կտամ ընդհատել: Արդյունքը հնարավոր է իմ սեփական անիրազեկության սխալներով լինի: Հնարավոր է, որ մյուս պատգամավորները և Ներկայացուցիչների Պալատի մնացած բոլոր անդամները ունենան բացարձակապես պարզ դատողություններ այս հարցի մասին և չունենան ոչ մի կասկած այն մասին, որ ցանկանում են քվեարկել կողմ կամ դեմ: Ես դրանք չունեմ, հայտարարում եմ համեստորեն, ես այն կկրկնեմ տարբեր առիթներով զեկուցումների ընթացքում և կկազմեմ կոնկրետ հարցեր:

Սա է իմ ելույթի իմաստը և ոչինչ ավելի: Ընդհանուր առմամբ հանճնաժողովի համաձայնությունից հետո, ինչպես որ հարկն է, եթե չհստակեցվեն հարցերն այս դահլիճում: Սակայն սա ոչ մի կապ չունի: Այն ասում էի վերջերս, նորից եմ կրկնում. համերաշխությամբ է, որ մեզ արժանանում է հայ ժողովուրդը, որին համակրում ենք ամբողջությամբ, ներառյալ՝ հիանում նրանով:

Երբ առաջին անգամ եղանք Խորհրդային Միությունում, անձնական մի անբարյացակամություն խանգարեց ճանապարհորդել դեպի Հայաստան: Սակայն ուրիշ ընկերներ, որ մեզ հետ էին, այցելեցին և վերադարձան հմայված և զարմացած:

Մի քիչ առաջ ասում էի և նույնպես կրկնում եմ, որպեսզի չմնա ոչ մի կասկած այս հիմնական հարցերի վերաբերյալ, եթե խոսքը վերաբերում է մի մոտեցմանն ընդհանրապես, այսինքն՝ ժողովրդի ինքնորոշման իրավունքին, հավանաբար համաձայնվենք:

Միշտ համաձայն եղանք այս տեսակի մոտեցման հետ: Սակայն այստեղ խոսքը չի վերաբերում սրան կամ չի վերաբերում միայն սրան: Խոսքը վերաբերում է կոնկրետ միջազգային մի պայմանագրի իրագործմանը:

Իհարկե, մենք չենք բանավիճի, եթե հարկավոր է ձևափոխել այն, այսպես թե այնպես, սակայն պետք է իմանանք, որ սա այն է, ինչ քվեարկում ենք, քանի որ խնդրվում է, որ իրագործվի այսպիսի պայմանագիրը:

Ուրեմն սա է պայմանագիրը և ոչ ուրիշը: Պետք է իմանանք, ինչ է նշանակում և սա է այն, որ ներկայացնում ենք:

Ավելի ուշ, երբ տամ որոշ պատմական փաստեր իմ զեկուցման մեջ, բացարձակապես պարզ կդառնա, եթե նույնիսկ ենթադրում եմ, որ ինչ որ պատգամավոր կհասկանա մի պարզ հիշողությամբ այն ինչ եղել է 1920 թվականին, այդ պատճառով այս պայմանագիրը, ուրիշ այլ գործերի մեջ, ունեցավ կարևոր նշանակություն Խորհրդային Միության դեմ: Չեմ ասում, որ ովքեր հայտարարում են այժմ նրա իրագործումը, պահպանում են այս տեսակետը, սակայն ինձ հաճելի կլինի իմանալ անպայման: Ինձ հաճելի կլինի իմանալ Սևրի պայմանագրի իրագործումը այս պահին չի նշանա-

կում արդյոք ագրեսիա, եթե նույնիսկ լինի դիվանագիտությամբ, Խորհրդային Միության դեմ: Կցանկանայի համոզված լինել դրանում:

Թույլ եմ տալիս այժմ ընդհատել, որ ինձ խնդրել էր պարոն պատգամավոր Գուտիերես Ռուիսը

ՊԱՐՈՆ ՆԱԽԱԳԱՀ (ԳՈՒՏԻԵՐԵՍ ՌՈՒԻՍ) - Պարոն պատգամավորը կարող է ընդհատել:

ՊԱՐՈՆ ԳՈՒՏԻԵՐԵՍ ՌՈՒԻՍ - Այնքան պարզ է ասել պարոն պատգամավոր Մասերաև, որ նրա անհանգստությունները տրամաբանական են ներկայացված և հասկանալի, քանի որ հիսուն տարի առաջ իրադարձությունները տարբեր էին այժմյան իրականության նկատմամբ:

Հավանաբար խնդրի հիմնական դժվարությունն այն է, որ ներկայացուցիչների այս պահը չի ընդգծում Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությանը, որ 1920 թվականից սկսած Թուրքիայի հետ պատերազմում նեցուկ կանգնած ԽՍՀՄ-ի բանակի կողմից ներխուժեց Հայաստան և հետո ժողովուրդների ինքնորոշման կողմից հաստատվեց Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը:

Կարծում ենք հասկանալ մի քիչ օրինաչափ, որ պարոն պատգամավոր Մասերան անհանգստանում է, տրամաբանում, անկաշկանդ է, հետևողական...

(Ռեգլամենտի զանգ)

ՊԱՐՈՆ ՆԱԽԱԳԱՀ (ԳԱՐՍԻԱ ՌԻԽՈ) - Կանոնակարգով նախատեսված ժամը լրացավ: Նիստն ավարտված է:

Republica Oriental del Uruguay, Diario de Sesiones de la Camara de Representantes, XL[a] legislatura, cuarto periodo ordinario, 124[a] sesion, numero 1578, tomo 603.

3. ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՆԱՏՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԲԱՆԱՁԵՎԸ

(54-րդ նստաշրջան, 9 օգոստոսի 1972թ.)

Նախագահում է պարոն սենատոր դոն Ագուստին Ս.Կապուտին
(առաջին փոխնախագահ)

Քարտուղարությունը վարում են դոկտոր Խոսե Պաստոր Սալվանյաչը և դոն Մարիո Ֆարաչիոն

ՆԻՍՏԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

6. ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ: 52-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՆՇՈՒՄԸ

ՊԱՐՈՆ ՌԱՍ – Շատ կարճ կցանկանայի անդրադառնալ վաղվա օրվան՝ օգոստոսի 10-ին, երբ լրանում է Սևրի պայմանագրի 52-րդ տարելիցը:

Սա միջազգային հատուկ կարևորության մի իրադարձություն է՝ 1920թ. տեղի ունեցած Սևրի պայմանագիրը: Շատ անհրաժեշտ է տեսնել տառապած և ազատության սիրահար մի ժողովրդի ճակատագրի ինքնորոշումը, որը հայ ժողովուրդն է:

Ուրուգվայում հայ համայնքը շատ աշխատասեր է, ազդեցիկ և արդյունավետ կերպով նպաստում է մեր երկրի զարգացմանը: Երկար տարիներ է, ինչ նա կենտրոնացնում է իր ուժերը այլ ազգերի համայնքների հետ միասին՝ իրագործելու համար այն ճգտումը, որին հասնում է հայ ժողովուրդը, միանգամից և ամբողջությամբ տեսնելու իր հստակ ճակատագիրը:

Բնականաբար այս անհանգստությունը և նախաձեռնությունը համապատասխան արձագանք գտան մեր երկրի ակտիվ ուժերի շրջանակներում, հասարակական կարծիք ձևավորելիս և խորհրդարանում նույնպես:

Անցյալ տարի Ներկայացուցիչների Պալատը ներկայացրեց հաղորդագրության մի պատճե գործադիր իշխանությանը՝ հայտնի դարձնելով իր նպատակն այն մասին, որ առաջարկվի ՄԱԿ-ին վերոհիշյալ պայմանագրի իրագործման անհրաժեշտությունը:

Օգտվելով առիթից, որ այսօր լրանում է մեկ տարի առաջ Սևրի պայմանագիրը վավերացնելու Ներկայացուցիչների Պալատի կամքը, Սենատին կոչ եմ անում, որ գործադիր իշխանությունում նույնպես ձևավորվի ցանկություն՝ ՄԱԿ-ին առաջարկելու Սևրի պայմանագրի իրագործման անհրաժեշտությունը:

Ոչինչ ավելի:

ՊԱՐՈՆ ՄԻՇԵԼԻՆԻ - Խոսք եմ խնդրում նույն հարցով հանդես գալու:

ՊԱՐՈՆ ՆԱԽԱԳԱՀ (ԿԱՊՈՒՏԻ) - Խոսք ունի պարոն սենատորը:

ՊԱՐՈՆ ՄԻՇԵԼԻՆԻ - Կարծում եմ, որ պարոն սենատոր Ռատը միանգամայն տեղին է առաջարկում այս խնդիրը: Իմ ելույթը կլինի շատ կարճ, քանի որ այլ սենատորներ նույնպես ցանկանում են խոսք վերցնել: Այն ամենը, ինչ հայտարարում է վավերացնելու համար պարոն սենատորը, նրա դիրքորոշման հետ համամիտ եմ:

Մեր հասարակական գործունեության բազմաթիվ տարիների ընթացքում սովորեցինք ճանաչել և գնահատել այն, ինչ իրենից ներկայացնում է այս համայնքը և հասկացանք, որ նա արժանապատվորեն ողջ այս ժամանակաշրջանում հաղթահարեց իր հսկայական վիշտը:

Այն հիշատակումը, որ կատարեց պարոն սենատոր Ռատը Սևրի պայմանագրի վերաբերյալ, կարծում եմ չափազանց օգտակար է և, հնարկե, կբարձրացվեն համապատասխան առաջարկներ արտաքին գործերի նախարարությանը, գործադիր իշխանությունը կտա անհրաժեշտ հանձնարարականներ ՄԱԿ-ի պատվիրակությանը՝ այս պայմանագրի դրույթների իրագործման նպատակով:

ՊԱՐՈՆ ՕՐՏԻՍ - Թույլ կտա՞ք պարոն նախագահ:

ՊԱՐՈՆ ՆԱԽԱԳԱՀ (ԿԱՊՈՒՏԻ) - Խոսք ունի պարոն սենատորը:

ՊԱՐՈՆ ՕՐՏԻՍ - Պարոն նախագահ, ցանկանում եմ արտահայտել իմ նպաստող տեսակետը ևս պարոն սենատոր Ռաուի առաջարկին, որովհետև այսքան մերին նման հայ ժողովուրդը պատկերացումներով, զոհաբերության և հերոսության մի իսկական օրինակ է պատմության ընթացքում: Նա ենթարկվեց իսկական նվաստացումների, հրեշավոր սպանու-

թյունների, որոնք վտխակերպվեցին սարսափի դասական տարբերակների՝ աշխարհի պատմության ողջ ընթացքում:

Երբ հավանություն տրվեց և ստորագրվեց Սևրի պայմանագիրը, հայերը նվաճեցին իրենց անկախությունը, որ թվում էր շատ սերունդերի համար մի երազ, դժբախտաբար այդ անկախությունը տևեց մոտ երկու տարի և երկրի տարածքը նորից բաժանվեց և երկու հզոր տերություններ զավթեցին Հայաստանի կեսը: Այդ օրվանից հայ ժողովուրդը ղեկավարվում է՝ լինելով մի ժողովուրդ իր ողջ մշակութային, կրոնական և ավանդական բնորոշումներով: Նա չունի տարածք, որտեղ արմատավորվի և տրաբանական է, որ հայերն աշխարհով մեկ սփռվեցին: Մեր երկրում կա մի շատ վտքր գաղութ՝ ուշադրության արժանի անհատականություններից կազմված: Նրանք պայքարում են բոլոր միջոցներով, որպեսզի հնարավոր լինի մի օր իրականացնել այն երազանքը, որ երբեմն ունեցել են իրենց ձեռքերում, իսկ հետո այն անհետացավ:

Ներդրումը, որ մեր երկիրը կարող է իրագործել միջազգային կազմակերպություններում քիչ է, սա մեկ այլ փոքր ազգի ձայնն է: Բոլոր դեպքում այն միջազգային համերաշխության և հարգանքի է արժանի:

Երբեմն, այո, մեր երկիրը արձագանքեց հայկական այս մղումներին:

Կարծում եմ, որ այս հիշարժան օրը նպատակահարմար է, որ գործադիր իշխանությունը համառորեն պնդի այն մտադրությամբ, որ ինչ որ մի օր արդարությունը կտիրի աշխարհում և հայերին նորից ետ կվերադարձնեն իրենց տարածքը:

ՊԱՐՈՆ ԷՌՈ - Թույլ կտա՞ք:

ՊԱՐՈՆ ՆԱԽԱԳԱՀ (ԿԱՊՈՒՏԻ) - Խոսք ունի պարոն սենատորը:

ՊԱՐՈՆ ԷՌՈ - Պարոն նախագահ, ես հիշում եմ, մեկ տարի առաջ էր, որ մասնակցեցի հայ համայնքի կողմից կազմակերպված մի միջոցառմանը Սոիս քաստրոնում: Այդ առիթով հիշատակվում էր այս ժողովրդի համար շատ տխուր իրադարձության մի նոր տարեդարձ:

1920թ. ստորագրվեց Սևրի պայմանագիրը, որին մասնակցեցին տասնչորս երկրներ: Անցավ հիսուներկու տարի և այս աշխատասեր համայնքը կապվեց մեր երկրին իր լավագույն կողմերով և համածայն որոշ փաստերի կազմում է երեսուն հազար մարդ, վաղը նա կնշի վերոհիշյալ իրադարձության մի նոր տարեդարձ: Այս իրողությունների կարևորությունը պետք է գիտակցվի գործադիր իշխանության կողմից: Այստեղից է, որ մենք կուղեկցենք այն առաջարկին, որ կներկայացնի պարոն սենատոր Ռատը, ինչպես ժամանակին մենք տվեցինք մեր քվեն օրենսդրական մի նախագծի՝ փառաբանելով այս ժողովրդին: Իսկ այժմ ներկայացնում ենք ներառյալ մի լրացուցիչ հոդվածը, որ քննարկվեց Ներկայացուցիչների Պալատում, որով տրվում էր «Հայաստան» անունը մի հանրակրթական դպրոցի, որպեսզի այս մեծարումը ունենա բարձրարժեք իմաստ՝ ներկայանալու դպրոցների հաշվեցուցակում, որ հազարավոր երեխաներ ժամանակի ընթացքում կարողանան հուզմունքով ըմբռնել այն, որ նրանց կպատմեն իրենց ուսուցիչները այս ժողովրդի մշակույթի մասին:

Ես չեմ թափանցի հայ ժողովրդի մշակութային համակարգի ոլորտ և ոչ էլ կնշեմ այն ներդրումների չափը, որ նա իրագործեց բացառապես մարդկության մշակութային զարգացման գործում:

Միանում ենք ներկայացված առաջարկին և այս կարճ ձևակերպումներով վստահ ենք, որ միջազգային շրջանակներում Ուրուգվայը կպարտավորվի անել ամեն ինչ, որպեսզի այս ծգտումները հիսուն տարի անց իրագործվեն և հայ ժողովուրդը հասկանա, որ արդարության մասին դատողությունները չեն անհետանում հասարակությունից:

Սա մեր հավաստումն է՝ արտահայտելով ոչ միայն հուզական փաստարկներ: Երկար ժամանակ է, որ պահպանում ենք ջերմ հարաբերություններ շատ հայերի հետ մեր երկիր իրենց ժամանումից ի վեր, մի բարեկամություն առանց վնասների և ընդհատումների:

ՊԱՐՈՆ ՏԵՌԱ - Թույլ կտա՞ք պարոն նախագահ:

ՊԱՐՈՆ ՆԱԽԱԳԱՀ (ԿԱՊՈՒՏԻ) - Խոսք ունի պարոն սենատորը:

ՊԱՐՈՆ ՏԵՌԱ - Պարոն նախագահ, պարզապես ասվածին միանալու համար, որ արտահայտեցին մեր գործընկերները, մենք նույնպես զգում ենք մեծ համակրանք և սատարում ենք հայ ժողովրդի ճակատագրին այն չափով, որ հնարավոր է, և այն օրվան, որ այսօր արժանի է ուշադրության, որ այստեղ նշվում է:

ՊԱՐՈՆ ԿՈՍՏԱՆՍՈ - Թույլ կտա՞ք պարոն նախագահ:

ՊԱՐՈՆ ՆԱԽԱԳԱՀ (ԿԱՊՈՒՏԻ) - Խոսք ունի պարոն սենատորը:

ՊԱՐՈՆ ԿՈՍՏԱՆՍՈ - Պարոն նախագահ, հակիրճ արտահայտում ենք մեր սատարումը պարոն սենատոր Ռատի կողմից ներկայացված առաջարկին՝ վկայակոչելով այս ձևով նախկինում համերաշխությամբ ընդունված մի դիրքորոշում ազնվաբարտ հայ ժողովրդի վերաբերյալ:

ՊԱՐՈՆ ՍՈՌԻԺԱ ԴԵ ՍԱՆ ՄԱՐՏԻՆ - Թույլ կտա՞ք պարոն նախագահ:

ՊԱՐՈՆ ՆԱԽԱԳԱՀ (ԿԱՊՈՒՏԻ) - Խոսք ունի պարոն սենատորը:

ՊԱՐՈՆ ՍՈՌԻԺԱ ԴԵ ՍԱՆ ՄԱՐՏԻՆ - Ես կարճ կասեմ պարոն նախագահ: Կարծում եմ, որ Սևրի պայմանագիրը, հակառակ բոլոր ժամանակների, ամենաանհավատալի և ցնցող անարդարություններից մեկն է, երբ կատարվեցին կամայականություններ միջազգային իրավունքի շրջանակներում: Ստորագրվեց մի պայմանագիր, որին նեցուկ կանգնեցին եվրոպական երկրները համարյա միաբանորեն՝ ներառյալ Թուրքիան և Հայաստանը: Մտորագրեցին այս պայմանագիրը Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, Բելգիան, Հունաստանը, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան: Մի քանի ամիս անց այս պայմանագիրը չեղյալ հայտարարվեց և հոժարակամությամբ կորցրեց իր արժեքը:

Արդեն անցել են շատ տարիներ և ինչպես ասաց պարոն սենատոր Օրտիսը, ամենաանհավատալի, ամենաարյունալի արարքներից մեկն է, որ մարդկության հետ պատահեց, այն է՝ 1915 թվականի սարսափելի կոտորածը, որի ժամանակ թուրքերի ձեռքերով զոհվեցին 1,5 միլիոն հայեր:

Պարոն նախագահ, այս խոսքերով ցանկանում եմ հայտնել իմ աջակցությունը ընթացող նախաձեռնությանը, որով Ուրուգվայը ՄԱԿ-ում հնարավորություն է ունենում տալ նպաստող քվե Հայաստանի Հանրապետությանը: Ես հայտնում եմ իմ հարգանքը ոչ մարդաշատ, սակայն համախմբված ու աշխատասեր մի գաղութի հանդեպ, որը որպես պարգևատրում միացավ մեր հասարակությանը և ներգրավվեց մեր երկրի հաստատություններում իր համակրանքով ու աշխատանքով:

Դրա համար պարոն նախագահ, հայտնում եմ իմ ընդհանուր աջակցությունն այս նախաձեռնությանը, որ այսքան արտահայտչորեն ձևակերպեց պարոն սենատոր Ռատը:

ՊԱՐՈՆ ԲԵԼՏՐԱՆ - Թույլ կտա՞ք պարոն նախագահ:

ՊԱՐՈՆ ՆԱԽԱԳԱՀ (ԿԱՊՈՒՏԻ) - Խոսք ունի պարոն սենատորը:

ՊԱՐՈՆ ԲԵԼՏՐԱՆ - Պարոն նախագահ, կանոնակարգային տեսակետները, որոնք ուշադրության արժանացան, չխոչնդոտեցին իհարկե, տալ մեր հավանությունը պարոն սենատոր Ռատի կողմից ներկայացրած առաջարկին: Տրվեցին այս առաջարկին սատարելու հիմնավորումները:

Կցանկանայի ընդգծել մեկ այլ ասպեկտ: Այն կարծիքները, որ հնչեցին Սենատի տարբեր ներկայացուցիչների կողմից, հարկավոր է փոխանցել տարագիր այս ժողովրդին, որը ճանաչեց ամենատանջալի թոհուբոհով անցածը: Ժողովրդավարության սիրահար, ազատությունը հարգող մի փոքր ժողովուրդ հավատում է իր դատա-իրավական ապրումներին և այսօր, այսքան արտասովոր մի օր, նրանց համար վերականգնվում է ամբողջական համերաշխությունը, որի միջով անցնում է հիացմունքի մի խոր զգացում դեպի մի համայնք, որը ճանաչեց իսկայական կամայականություններ՝ չկորցնելով իր իսկական և սեփական ուժի բնույթը, ազգային պատկանելիության կենսունակ զգացումը:

Այս բառերով միանում եմ պարոն սենատոր Ռատի կողմից ձևակերպված առաջարկին:

ՊԱՐՈՆ ՄԵԴԵՐՈՍ - Թույլ կտա՞ք պարոն նախագահ:

ՊԱՐՈՆ ՆԱԽԱԳԱՀ (ԿԱՊՈՒՏԻ) - Խոսք ունի պարոն սենատորը:

ՊԱՐՈՆ ՄԵԴԵՐՈՍ - Պարոն նախագահ, մենք նույնպես խանդավառ կերպով միանում ենք պարոն սենատոր Ռատի կողմից ձևակերպած առաջարկին:

Մեզ թվում է շատ նպատակահարմար, որ Ուրուգվայը՝ մի փոքր երկիր, որի անվտանգությունը հիմնավորված է միջազգային իրավունքով, ՄԱԿ-ում իր ներկայացուցչության միջոցով ելույթ ունենա՝ պաշտպանելով Հայաստանի ինքնավարությունը և ազատությունը:

Հայաստանը մի մեծ պատմական ժողովուրդ է, որն ապրեց ինչպես ուրիշ փոքր ժողովուրդներ, մի իսկական ազգային ողբերգություն՝ իր ազատության կորուստը: Ուրուգվայը կարող է հանդես գալ հօգուտ այդ ժողովրդի, որովհետև մեր երկիրը՝ պաշտպանելով այս գործընթացը, պաշտպանվում է այս ձևով:

Այդ պատճառով, մեզ թվում է, որ պարոն սենատոր Ռատի առաջարկը շատ ճիշտ է և մեր խմբակցության անունից հայտնում ենք մեր համերաշխությունը:

ՊԱՐՈՆ ԿԱՌԵՐԵ ՍԱՊՐԻՍԱ - Թույլ կտա՞ք պարոն նախագահ:

ՊԱՐՈՆ ՆԱԽԱԳԱՀ (ԿԱՊՈՒՏԻ) - Խոսք ունի պարոն սենատորը:

ՊԱՐՈՆ ԿԱՌԵՐԵ ՍԱՊՐԻՍԱ - Պարոն նախագահ, շատ քիչ է մնում հետագայում նշելու համար, որ պարոն սենատորներն ընդլայնված կերպով աշխատեցին այս խնդրի վրա: Միայն ցանկանում ենք արտահայտել մեր զորակցությունը մեր սեկտորի անդամ պարոն սենատոր Ռատի նախագծին:

Կարծում ենք, որ տեղին է, որ նախագիծը ձևակերպի պարոն սենատոր Ռ-ատը: Այն կներկայացվի ՄԱԿ-ի առջև, որպես Ուրուգվայի այս Սենատի կողմից առաջարկ:

Խնդրում եմ նույնպես, որ այսօր արտահայտված խոսքերն ընդունվեն միջազգային հարցերի հանճնաժողովում, որպեսզի վաղը հրավիրվի մի խորհրդակցություն արտաքին գործերի նախարարի ներկայությամբ՝ փորձելով ամրագրել խնդիրը Ռիո դե լա Պլատայի իրավասության ներքո: Կարծում եմ, որ հարցը կարող է ուշադրության արժանանալ հանճնաժողովում պարոն սենատորի կողմից առաջարկված ձևով:

Համառոտակի ցանկանում ենք ավելացնել, որ այս առաջարկը հանդիսանում է միջազգային գործի հիմքը, որ վարում են պարոնայք սենատորները, մի սրտագին համերաշխության արտահայտությամբ, Ուրուգվային շատ կապված հայ գաղութի նկատմամբ, մի գաղութ, որ շատ հոգեհարազատ է իր ավանդություններով, աշխատանքով և պայքարով:

Սփռված լինելով ողջ երկրով մեկ, առանց որևէ կասկածի, հայերն իրենց արգասավոր գործողություններով նպաստեցին մեր երկրի բարօրությանը:

Այժմ գտնվում ենք Սևրի պայմանագրի իրագործման կեսդարյա հատվածամասում և բացի դրանից, սա մի հանգամանք է, որ մենք մեծարում ենք այս համայնքին, որն այնքան մոտ է մեր սրտերին շատ տարիներ ի վեր:

Այդյունքում ծավալվեց առաջարկը այն իմաստով, որ պարոն սենատոր Ռ-ատի կողմից արտահայտված խոսքերը նույնպես ընդունվեն միջազգային հարցերի հանճնաժողովում:

ՊԱՐՈՆ ՍՈՆՏԱՆԵՐ - Թույլ կտա՞ք պարոն նախագահ:

ՊԱՐՈՆ ՆԱԽԱԳԱՀ (ԿԱՊՈՒՏԻ) - Խոսք ունի պարոն սենատորը:

ՊԱՐՈՆ ՍՈՆՏԱՆԵՐ - Միանում եմ պարոն սենատոր Ռ-ատի կողմից ձևակերպված առաջարկին և դատողություններին, որ արտահայտվեց հայ ժողովրդի մասին:

Պարոն նախագահ, թերևս տեղեկացնեմ, որ մեզ միավորում է փոխադարձ համակրանքը հայ համայնքի տարբեր անդամների նկատմամբ: Առիթ ունեցա մասնակցել այս համայնքի անդամների կողմից իրականացված հավաքույթներից մեկին, որտեղ ինձ նվիրվեց մի գրքույկ, որը բացի իր գեղարվեստական արժեքին, պարունակում է շատ հնարամիտ արտահայտություններ: Սա փոխադարձ հարգանքի վկայություն է, որ մենք տածում ենք միմյանց նկատմամբ: Այն պաշտամունքին, որ ենթարկվում է այս զոհաբերած ժողովուրդը՝ սպասելն է, որ մի օր նա նորից կգտնի իր սեփական ճակատագիրը:

ՊԱՐՈՆ ՆԱԽԱԳԱՀ - Եթե չեն ներկայացվում այլ կարծիքներ, ապա քվեարկում ենք պարոն սենատոր Ռ-ատի առաջարկը պարոն սենատոր Կառերե Սապրիսայի լրացումի հետ միասին:

Քվեարկման արդյունքը՝ 21-ից 21-ը: Դրական: Միաձայն:

Republica Oriental del Uruguay, Diario de Sesiones de la Camara de Senadores, 54ª Sesion Ordinaria, 9 de agosto 1972, numero 55, tomo 278.

VII. ԿԻՊՐՈՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

1. ՔԱՆԱՁԵՎ 36
24 ապրիլի 1975թ.

Ներկայացուցիչների պալատը թուրքական անցյալ վարչակարգի կողմից հայ ժողովրդի դեմ գործած ցեղասպանության 60-ամյակի առթիվ որոշում է հետևյալը՝

1. Իր միահամուռ համակրանքն է արտահայտում բոլոր հայերի նկատմամբ, ովքեր հիշատակում են այդ սարսափելի ոճիրը և սգում իրենց հայրենիքի կորստի և սպանված եղբայրների համար:

2. Համարում է, որ թուրքական վարչակարգի կողմից կատարված հայերի ջարդերը և արտաքսումը չի կարելի արդարացնել ոչ մի օրենքով և պատրվակով: Թուրքական վարչակարգը պարզապես կենտրոնացավ Փոքր Ասիայում ապրող հայերի ոչնչացման ու բնաջնջման և նրանց տների ու սեփականության թալանի վրա: Հայերը լինելով հնագույն և ազնիվ մի ժողովուրդ, խաղաղասիրական և ստեղծագործական նկատելի ձեռքբերումներով, չեն սադրել կամ վնասել որևէ մեկին:

3. Համոզված է, որ այն հայերը, որ ապաստան գտան և ապրում են Կիպրոսում, միշտ եղբայրական կապրեն Կիպրոսի ժողովրդի հետ: Հայերը դարձյալ դժվարություններ և ծանր փորձություններ են կրել թուրքական վարչակարգի կողմից 1963թ. և այսօր: Ներկայումս Կիպրոսը տառապում է նույն դժվարություններով և իրական ողբերգությամբ՝ թուրքական ներխուժման հետևանքով:

4. Մեծ հարգանքի և համերաշխության հաղորդագրություն է ուղղում աշխարհի բոլոր մասերում ապրող հայերին:[1]

2. ՔԱՆԱՁԵՎ 74
29 ապրիլի 1982թ.

Ներկայացուցիչների պալատը,

1915թ. սկսած և թուրքական անցյալ վարչակարգի կողմից կազմակերպված հայ ժողովրդի ցեղասպանության տարելիցի կապակցությամբ՝

1. Սարսափով նշում է և անկեղծորեն դատապարտում հայ ժողովրդի հանդեպ կատարված ոճիրը, որը բնութագրվում է որպես ցեղասպանություն և որն արմատախիլ արեց հայերին իրենց նախնիների հողերից:

2. Պաշտպանում է հայ ժողովրդի անխախտ իրավունքների լիարժեք վերականգնումը:

3. Ընդգծում է երկարատև բարեկամական համակեցությունը և եղբայրական համագործակցությունը Կիպրոսի հայերի հետ, ինչպես նաև

---

[1] Ներկա բանաձևն առաջադրվել է Ներկայացուցիչների պալատի հայկական կրոնական խմբակցության ներկայացուցիչ դոկտոր Անդրանիկ Աշճյանի կողմից: Հաստատվել է միաձայն: Բանաձևի մեկ օրինակը պահվում է Հայոց ցեղասպանության թանգարանում:

նրանց ներդրումը մեր երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում:

4. Համարում է այս համակեցությունն իբրև Կիպրոսի բոլոր ժողովուրդների խաղաղ համակեցության իրական հնարավորության ակներևություն՝ անկախ լեզվի, կրոնի կամ ազգային ծագման:

5. Միաժամանակ անհրաժեշտ է համարում դատապարտել նույն ոճիրը, որը կատարվեց Կիպրոսի ժողովրդի հանդեպ՝ 1974թ. թուրքական ներխուժումից հետո:[2]

3. ԲԱՆԱՁԵՎ 103
19 ապրիլի 1990թ.

Բոլոր քաղաքական ուժերի համաձայնությամբ,

Ներկայացուցիչների պալատը որոշում է ներքոհիշյալը՝

1. Նշել հայ ժողովրդի ցեղասպանության սարսափները և անկեղծորեն դատապարտել այն, որն արմատախիլ արեց հայերին իրենց նախնյաց հողերից:

2. Հետևել հայ ժողովրդի անխախտ իրավունքների լիարժեք վերականգնմանը:

3. Ընդգծել երկարատև բարեկամական համակեցությունը և եղբայրական համագործակցությունը Կիպրոսի հայերի հետ, ինչպես նաև նրանց ներդրումը երկրի քաղաքական, տնտեսական, հասարակական և մշակութային կյանքում:

4. Որոշում է, Ապրիլի 24-ը հռչակել Հայ ժողովրդի ցեղասպանության ազգային հիշատակի օր:[3]

---

[2] Ներկա բանաձևը ներկայացվել է և միաձայն հաստատվել Արտաքին գործերի խորհրդարանական հանձնաժողովի կողմից: Բանաձևի մեկ օրինակը պահվում է Հայոց ցեղասպանության թանգարանում:

[3] Նույն տեղում:

VIII. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ ԿԱՆԱԴԱՅՈՒՄ

1. ԿԱՆԱԴԱՅԻ ՕՆՏԱՐԻՈ ՆԱՀԱՆԳԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ 27 մարտի 1980թ.

Օնտարիո նահանգի օրենսդրական ժողովը միաձայն որոշեց, որ՝

ՆԵՐԿԱ ԺՈՂՈՎԸ Օնտարիոյի ժողովրդի անունից խնդրում է Կանադայի Կառավարությանը պաշտոնապես ճանաչել և դատապարտել գազանությունները, որոնք Թուրքիայի կառավարությունն իրագործեց հայ ժողովրդի հանդեպ, որը դարձավ հետապնդումների և ցեղասպանության զոհ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին,

ՆԵՐԿԱ ԺՈՂՈՎԸ Օնտարիոյի ժողովրդի անունից կոչ է անում Կանադայի Կառավարությանը սահմանված կարգով առաջարկությամբ դիմել ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեային՝ ճանաչել և դատապարտել հայերի ցեղասպանությունը և արտահայտել կտրուկ անհամաձայնություն այդ գործողությունների առիթով, դրանք գնահատելով որպես բարեկեցության և քաղաքացիների հիմնարար իրավունքների ոտնահարում, որոնք ներկայումս դրսևորվում են ՄԱԿ-ի մարդու իրավունքների Հռչակագրում,

ՆԵՐԿԱ ԺՈՂՈՎԸ Օնտարիոյի ժողովրդի անունից երաշխավորում է Կանադայի Կառավարությանը, որպեսզի նա այսուհետև յուրաքանչյուր տարի ողջ Կանադայում ապրիլի 24-ը հայտարարի հիշատակի Օր հայ համայնքի համար, քանի որ հայ ժողովուրդը բազմաթիվ տարիների ընթացքում այդ օրը հիշում է իր հայրենակիցների մասին, որոնք զոհ դարձան այդ հանցագործություններին:

Геноцид армян. Документы и комментарий, М., 2003, том 2, часть 1, стр. 661.

2. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԿԱՆԱԴԱՅԻ ՔՎԵԲԵԿ ՆԱՀԱՆԳԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ 10 ապրիլի 1980թ. ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

ՊԱՐՈՆ ԿՈՒՏՅՈՒՐ – Որպեսզի արձագանքել պահանջագրին, որը ներկայացվել է տասը հազար քաղաքացիների կողմից հայերի ցեղասպանության 65-րդ տարելիցի կապակցությամբ, ես ներկայացնում եմ հետևյալ առաջարկությունը՝ «Որպեսզի ներկա ժողովը, հայերի ցեղասպանության 65-րդ տարելիցի առիթով, որը նշվում է ապրիլի 24-ին, դատապարտի որպես Թուրքիայի կողմից այդ դժբախտ ժողովրդի նկատմամբ իրականացված բարբարոսական ակտ, որը հակասում է մարդու կոլեկտիվ և անհատական իրավունքների պահպանության հիմնարար սկզբունքնե-

րին, և կոչ անի քվեբեկցիներին յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ը նշել որպես այդ իրադարձության տարելից, հայ համայնքի հետ համերաշխաբար»:

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ – Համաձայն եք՞ Դուք այս առաջարկության հետ: Համաձայնություն կա:

ՊԱՐՈՆ ԿՈՒՏՅՈՒՐ – Կարճ ասած, պարոն նախագահ, պահանջագրի կիզակետը, որի մասին արդեն ասվեց, նիստի սկզբում, շարադրում է գլխավոր խնդիրն այդ առաջարկության: Ես կցանկանայի միայն ընդգծել հետևյալը: Պետությունների զգուշավոր և հանցագործ լռությունը 1915-1918թթ. հայերի բնաջնջման մասին, հանդիսանում է խայտառակություն մեր հարյուրամյակի այսպես կոչված քաղաքակիրթ երկրների համար: Հենց այդ կարգի լռությունն անկասկած նպաստեց այդ կարգի այլ գործողությունների իրականացմանը, ներառյալ Կամբոջայում տեղի ունեցած տխուր դեպքերը:

Ինչպես այդ մասին հիշատակում է պահանջագիրը, հայերի ցեղասպանության անպատժելիությունը և միջազգային հանրության անտարբերությունը բերեցին այն բանին, որ նոր ժամանակների առաջին ցեղասպանությունը օրինակ ծառայեց նման դեպքերի իրագործման համար այլ երկրների բնակչության նկատմամբ:

Պարոն նախագահ, ցանկանանք, որպեսզի քվեբեկցիները պահպանեն զգացմունքայնությունը մարդկային դրամաների նման տեսակների նկատմամբ և շարունակեն արտահայտել իրենց համերաշխությունն այդ դեպքի կապակցությամբ և իրենց ներդրումն ունենան այդպիսի գործողությունների կանխմանն ու մերկացմանը և հատկապես թեթևացնելու դրանցում զոհերի մասնակցությունը:

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ – Խոսքը տրվում է Մոն-Ռուալայից պատգամավոր Ջոն Կիաչչիային:

ՊԱՐՈՆ ԿԻԱՉՉԻԱ - Պարոն նախագահ, խորը և եղբայրական ցավակցություններով դեպի հայ ժողովուրդը, նրա որդիների ու աղջիկների նկատմամբ Լիբերալների կուսակցությունը պաշտպանում է ներկայացված առաջարկությունը, որը վերաբերում է հայ ազգի ջարդերին Քվեբեկի պատմական համատեքստում: Կուսակցությունն անում է այդ մեծ պատրաստակամությամբ, քանի որ հայերի ցեղասպանությունը կատարվել է կույր ազգայնամոլության անունից և ուղղվել էր մեկ այլ էթնիկական խմբի դեմ, այլ ժողովուրդների դեմ, որը երջանիկ էր պահպանել իր ինքնությունը: Հայերի ցեղասպանությունը պետք է քվեբեկցիներին հիշեցնի, թե ինչ ծայրահեղությունների կարող է բերել կույր ազգայնամոլությունը:

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ – Կարելի՞ է համարել, որ տեղաշարժերի գործերի պարոն մինիստրի առաջարկությունն ընդունվել է:

ՁԱՅՆԵՐ ՏԵՂԵՐԻՑ – Ընդունվել է:

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ – Առաջարկությունն ընդունված է:

Геноцид армян. Документы и комментарий, М., 2003, том 2, часть 1, стр. 661-662.

3. ԿԱՆԱԴԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԱՍԱՅՆՔՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ 23 ապրիլի 1996թ.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ 134, N 031,(երկրորդ նստաշրջան)

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ԺԻԼԲԵՐ ՊԱՐԵՆ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝ «ՄԱՐԴՈՒ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԻՐ ՄԵՐՁԱՎՈՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ»

ՄԻՇԵԼ ԴԱՎԻՈՒԼԸ (Աւնքսիք,Կվեբեկի խմբակցություն) առաջարկում է 1995թ. հայերի ցեղասպանության 81-ամյա տարելիցի կապակցությամբ սահմանել և ամեն տարվա ապրիլի 20-ից 27-ը նշել մարդու կողմից իր մերձավորի նկատմամբ կատարած հանցագործությունների հիշատակի շաբաթ:

- Պարոն նախագահող, թույլ տվեք ներկայացնել Պալատի քննարկմանն անցյալում տեղի ունեցած մարդկության դեմ հանցագործությունների հիշատակի շաբաթ սահմանելու առաջարկությունը, որով Կանադայի կառավարությունը վերջապես կճանաչեր հայերի ցեղասպանությունը: Սա անհրաժեշտ է, ապագայում նման հանցագործությունների կանխման համար: Այս առաջարկության ընդունման պահը խորհրդանշական է. ապրիլի 15-ին ամբողջ աշխարհի հրեական համայնքները, իսկ նրանց հետ նաև տարբեր դավանանքի մարդիկ, նշել են Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին նացիստական ռեժիմի 6 միլիոն զոհերի հիշատակի օրը: Իր հերթին, վաղը, հայկական համայնքը կհիշի 1915թ. ապրիլի 24-ին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած ցեղասպանության 1,5 միլիոն զոհերին: Օգտվելով առիթից, ցանկանում եմ ողջույնի խոսքով դիմել Մոնրեալի և մեր երկրի այլ շրջանների հայկական համայնքներին: Մեծագույն հարգանքի է արժանի հայերի վճռակամությունը սեփական մշակույթը մոռացության չմատնելու, պահպանելու և ցեղասպանության միջազգային ճանաչմանը հասնելու գործում: Հիշատակի շաբաթի սահմանումը թույլ կտա մեր երկրի ժողովուրդներին արտահայտել իրենց հարգանքը այն ժողովուրդներին, որոնք անցյալում ենթարկվել են մասսայական բնաջնջման, հատկապես, հայկական և հրեական համայնքներին:

Արդեն առաջին անգամը չէ, որ այս Պալատում խոսվում է մարդկության դեմ կատարված հանցագործությունների մասին: Անցյալ տարվա ապրիլի 3-ի նիստին Դոն Վալեյ-Նորդի պատգամավորն արդեն առաջադրել էր իմ կողմից այսօր ներկայացվածին համարժեք առաջարկություն:

Ցավոք, Հալիֆաքսի պատգամավորը, որը նաև հանդիսանում էր քաղաքացիության և ներգաղթի հարցերով նախարարի խորհրդարանական քարտուղարը, դեմ եղավ այդ առաջարկության ընդունմանը, բացատրելով իր դիրքորոշումը նմանատիպ փաստաթղթերում ընդհանուր տեր-

միևնաբանության գործածման նպատակահարմարությամբ, չնշելով կատարված հանցագործությունների տեղը և կոնկրետ ժամանակահատվածը: Նրա դիրքորոշումը ես բացատրում եմ պատմության սարսափելի դասերի չիմացությամբ, նաև, միջազգային մասշտաբներով մարդու իրավունքների պաշտպանության գործում կառավարության քաղաքական կամքի բացակայությամբ, որի ներկայացուցիչներից մեկն էր հանդիսանում նաև նա:

Հուսով եմ, որ կառավարության պատգամավորները և ընդդիմությունը կաջակցեն այսօր ներկայացված առաջարկությանը: Մենք կոչ ենք անում կառավարությանը հստակ դիրքորոշում մշակել մարդու իրավունքների պաշտպանության հարցում՝ դիրքորոշում կանադական ավանդույթների ոգով և պաշտոնապես ճանաչել 1915թ. հայերի ցեղասպանությունը:

Բնակչության մեծամասնությունը բազմիցս լսել է հոլոքոստի՝ հրեական ջարդերի մասին: Մեր ծնողները, վերապրելով 2-րդ համաշխարհային պատերազմը, մեզ պատմել են նացիստների վայրագությունների մասին: Մեզնից շատերը դիտել են «Շինդլերի ցուցակը» ֆիլմը: Սակայն, քանի՞ մարդ գիտե Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կատարված ցեղասպանության մասին: Այնինչ, Օսմանյան կառավարության հրամանով սպանվել էր 1,5 միլիոն հայ, հարյուր հազարավոր մարդիկ աքսորվել են: Այս հանցագործության անպատժելիությունը հետագայում լուրջ հետևանքներ ունեցավ: Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին Հիտլերը, դիմելով ՍՍ-ին, ասել է. «Ո՞վ է այսօր հիշում հայերի ցեղասպանության մասին»:

Պաշտոնական ընդդիմությունը ընդունում է հայերի ցեղասպանությունը և ցանկանում, որպեսզի նույնն էլ անի համայնքների պալատը:

Մեջբերեմ պատմական տեղեկանք.

Օսմանյան կայսրությունը հիմնադրվել է 14-րդ դարում, թուրքերի կողմից Կ. Պոլսի գրավումից հետո: Կայսրությունն ընդգրկում էր Միջին Արևելքի մեծ մասը և Հյուսիսային Աֆրիկան: Նրա տարածքում բնակվում էին մեծ թվով քրիստոնյաներ, այդ թվում հույներ և հայեր, որոնք ակտիվ մասնակցություն ունեին արևմուտքի հետ առևտրում:

Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուն պես, Օսմանյան իշխանությունների վերաբերմունքը քրիստոնյա քաղաքացիների հանդեպ դարձավ խիստ թշնամական: Նրանց կասկածում էին իրենց կյանակիցներին աջակցելու մեջ, որոնց հետ Թուրքիան պատերազմում էր երկու ռազմաճակատներում. արևելքում՝ ռուսների, իսկ արևմուտքում՝ ֆրանկո-բրիտանական զորքերի դեմ: Սկսվում են հետապնդումները, ձերբակալությունները, խոշտանգումները և վերջապես մասսայական տեղահանություններն ու ջարդերը: Տեղահանության քողի տակ Օսմանյան իշխանությունները կյանքի էին կոչում իրենց գլխավոր նպատակը՝ հայերի մասսայական բնաջնջումը:

Ցավոք, դաշնակից պետությունները հիմնականում զբաղված էին Միջին Արևելքում, Սիրիայում, Իրաքում, Պաղեստինում, նախկին Օսմանյան տիրույթների բաժանմամբ, ոչ թե քսաներորդ դարի առաջին ցեղասպանության հեղինակների վտանգազերծմանը:

Միայն 1948-ին միջազգային օրենքով պաշտոնապես սահմանվեց «ցեղասպանություն» տերմինը: Հիշեցնում եմ, որ 1948թ. ընդունված Կոն-

վենցիայում ցեղասպանությունը որակավորվում է որպես մարդկության դեմ ծանրագույն հանցագործություն, որը ստորագրել է նաև Կանադան: Առավել զարմանք է առաջացնում մեր կառավարության չկամությունը հայերի ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու հարցում: Այս դիրքորոշումը անընդունելի է և համընկնում է նրանց շահերի հետ, ովքեր ցանկանում են մոռացության մատնել ցեղասպանության սարսափելի հանցագործությունները:

Հենց միջազգային հանրության անտարբերությունն ու պասսիվությունն էր 1915թ. հայերի ցեզասպանության պատճառը, որ հետագայում հնարավոր դարձրեց ամբողջ ժողովուրդների նկատմամբ մի շարք հանցագործությունների իրականացումը:

Բացի հրեաների ցեղասպանությունից, որի մասին քիչ առաջ խոսեցի, կցանկանայի հիշատակել պատերազմը Նիգերիայում 1967-1970թթ., որի ընթացքում սովից ու կարիքից զոհվեց մեծ քանակությամբ քաղաքացիական բնակչություն: 1978թ. Կամբոջայում կարմիր քխմերները դեպի ճամբարներ քշեցին իրենց բոլոր ընդդիմախոսներին: Նրանցից 1,5 միլիոնը այդպես էլ չվերադարձան, իսկ տարիներ անց հայտնաբերվեցին հսկայական գերեզմանոցներ: Հետագայում Կամբոջայի կառավարությունը քանգարան կառուցեց, որտեղ հավաքվել են կամբոջացիների դեմ տեղի ունեցած ցեղասպանության ապացույցները:

Հեռուստակոմունիկացիայի դարաշրջանում մենք դարձանք շատ ողբերգությունների ականատեսը: Մենք անզոր եղանք կանխել ողբերգությունը Ռուանդայում, էթնիկական մաքրումը Բոսնիայում: Կուզենայի դիմել Պալատի պատգամավորներին հետևյալ հարցով. դեռևս որքա՞ն կարող ենք նման ողբերգություններ թույլ տալ: Ի՞նչ կարող ենք անել մենք, այդ հանցագործությունները կանխելու համար: Լինելով Պալատի պատգամավոր, ես մեկ անգամ չէ, որ քննադատել եմ կառավարությանը, հայկական ցեղասպանության ճանաչման հարցի նկատմամբ իրենց դիրքորոշման համար: Քիչ չէ այն, որ կառավարությունը ամեն կերպ աշխատում է ազատվել այդ խնդրից, վերջերս էլ այն արգելեց Մոնրեալում ցեղասպանության զոհերի հուշարձանի կառուցումը: Ինչպես ասում են հայկական ազգային կոմիտեի ներկայացուցիչները, Մոնրեալի քաղաքապետը մեղադրել է հուշարձանի կառուցման նախագծի տապալման մեջ միջազգային համագործակցության նախարարին՝ Պապինո-Սեն Միշել շրջանի պատգամավորին: 1990թ. Թուրքիայի դեսպանը նամակ է ուղղել Դորեի քաղաքապետին, որտեղ ասվում էր հայերի ցեղասպանության զոհերի հուշարձանի կանգնեցման աննպատակահարմարության մասին:

1988թ., դեռ նախորդ կառավարության օրոք, արտաքին գործերի նախարարության բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը դիմել է Օտտավա քաղաքի դպրոցների խորհուրդ, դպրոցական դասագրքերում հայերի ցեղասպանության մասին բոլոր հիշատակումները հանելու պահանջով: Այդ պաշտոնյան, պատասխանելով մամուլի ներկայացուցիչների հարցերին, ասել է, որ կանադական կառավարությունն այդ կերպ է գործում, Թուրքիայի հետ ունեցած տնտեսական և առևտրական կապերից ելնելով:

1991թ. մարդու իրավունքներին նվիրված հուշարձանի կառուցման ժամանակ մի շարք օտարերկրյա կառավարությունների ճնշման տակ, այդ մոնումենտի նախագծից հանվեցին երկու հուշատախտակներ, նվիրված

հայերի ցեղասպանությանը և Տյանշանմեն հրապարակի իրադարձություններին: Ներկա կառավարությունը ժառանգել է նախկին տխուր ավանդույթները՝ քաղաքական և տնտեսական շահերի առաջնությունը մարդու իրավունքների հարգման հարցերի նկատմամբ: Երկար տարիների ընթացքում Կանադան վայելել է հիանալի համբավ մի երկրի,որը պաշտպանել է մարդու իրավունքները ոչ միայն իր երկրում, այլ նաև միջազգային մասշտաբներով: Ցավոք, Սոմալիի վերջին իրադարձությունները վնաս հասցրեցին մեր հեղինակությանը: Կանադացիները ցանկանում են, որպեսզի կանադական կառավարությունը իր քաղաքականության մեջ առաջնորդվի մարդու իրավունքների հարցերի գերակշռման սկզբունքով՝ մյուս բոլոր հարցերի նկատմամբ: Դա չի նշանակում, որ պետք է դադարեցնել առևտրական կապերն այն երկրների հետ, որտեղ խախտվում են մարդու իրավունքները: Սակայն նրանց հետ առևտուրը չպետք է խանգարի մեզ քննադատելու այդ երկրների կառավարություններին: Բերեմ մեր կառավարության կողմից մարդու իրավունքների խախտումներն անտեսող մի քանի օրինակներ: Ծոցում, Իրաքի հետ պատերազմից հետո, Կանադան մասնակցեց Հյուսիսային Իրաքի քուրդ բնակչության պաշտպանության գործողությանը, որոնք պարբերաբար ենթարկվում են արյունալի գրոհների Սադամ Հուսեյնի կառավարության կողմից: Միևնույն ժամանակ ռազմածակատի մյուս կողմում, մի քանի կիլոմետր այն կողմ, թուրքական կառավարությունը հետապնդում է հարյուրավոր քրդերի: Սակայն Թուրքիան մեր դաշնակիցն է, և մենք աչք փակեցինք դրա վրա: Ի՞նչ է, կան լավ քրդեր, որոնք ունեն մեր պաշտպանության իրավունքը և վատ քրդեր, որոնց ճակատագիրը մեզ համար միևնո՞ւյնն է:

Չինաստան կատարած կառավարության պաշտոնական այցի ժամանակ, ինչպես նաև պատասխան այցելության ընթացքում, ոչ մի խոսք չասվեց Տյանշանմեն հրապարակում դեմոկրատական ազատությունների համար պայքարող չինացիների ռեպրեսիաների և ջարդերի մասին: Ոչ մի խոսք չասվեց Տիբեթի ժողովրդի հարկադրական ձուլման մասին: Ես կոչ եմ անում կանադական կառավարությանը, պաշտոնապես ընդունել հայերի ցեղասպանության պատմական իրողությունը, որպեսզի մեր հարգանքը մատուցենք անցյալի բոլոր զոհերին և ցույց տանք հետագայում նմանատիպ ողբերգություններ թույլ չտալու մեր վճռակամությունը: Ի դեպ, մի շարք երկրների կառավարություններ արդեն ճանաչել են հայերի ցեղասպանությունը:

1984թ. ապրիլի 16-ին ժողովուրդների մշտական տրիբունալը ընդունեց հետևյալ բանաձևը. «Հայերի ցեղասպանությունը հանդիսանում է մարդկության դեմ կատարված անմարդկային հանցագործություն, որի պատասխանատվությունը պետք է իր վրա վերցնի թուրքական պետությունը»:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովը 1985թ. օգոստոսի 20-ի նիստում, Օսմանյան կայսրությունում հայերի մասսայական ջարդերը որակեց որպես ցեղասպանություն: Հայերի ցեղասպանությունը ճանաչել են Արգենտինայի խորհրդարանը, Ուրուգվայի ազգային ասամբլեան:

1987թ. հունիսի 18-ին Եվրախորհուրդը ճանաչեց հայերի ցեղասպանությունը որպես պատմական փաստ, և նշեց, որ թուրքական կառա-

վարության կողմից ցեղասպանությունը ճանաչելու մերժումը խոչընդոտում է Թուրքիայի ընդունմանը Եվրոպական համագործակցության շարքերը:

1995թ. ապրիլի 22-ին Ռուսաստանը ճանաչեց հայերի ցեղասպանությունը՝ խստորեն դատապարտելով նրա կատարողներին:

1994թ. ապրիլի 24-ին Իսրայելի պետությունը պաշտոնապես դատապարտեց հայերի ցեղասպանությունը՝ չնայած, որ Թուրքիան նրա ռեգիոնալ դաշնակիցն է: Արտաքին գործոց պետական քարտուղարն ասել է. «Մենք կտրականապես դեմ ենք այդ իրադարձությունների քողարկման փորձերին, որոնք արվում են, ելնելով քաղաքական իրադրության ըմբռնումից»: Սա վկայում է Իսրայելի պետության քաղաքական արիության մասին:

Ոչ վաղ անցյալում, ԱՄՆ-ի սենատի հանրապետական մեծամասնության առաջնորդ Բոբ Դոուլը՝ նախագահական ընտրությունների հանրապետական թեկնածուն, դատապարտեց Թուրքիայի հայերի ցեղասպանությունը ժխտող դիրքորոշումը և հայտարարեց. «Ես, ինչպես նաև իմ շատ գործընկերներ, կոչ ենք արել նախագահ Քլինտոնին՝ ճանաչել հայերի ցեղասպանությունը, որպես մարդկության դեմ ծանրագույն հանցագործություն, ինչպես դա անում էր 1992թ. նախագահական ընտրությունների ժամանակ»:

Վերջապես, ցանկանում եմ ընդգծել, որ Կվեբեկի ազգային ասամբլեան և Օնտարիոյի խորհրդարանը, որոնք ներկայացնում են Կանադայի բնակչության 60 տոկոսը, 1980թ. պաշտոնապես ճանաչել են հայերի ցեղասպանությունը և կոչ են արել Կանադայի խորհրդարանին նույնն անել բոլոր կանադացիների անունից: Հուսով եմ, որ այս կոչը, վերջապես կլսի նաև կառավարությունը:

Պետք է արդարացի լինել գերմանական կառավարության նկատմամբ, որն իր վրա վերցրեց նացիստական ռեժիմի տարիներին հրեաների ցեղասպանության բարոյական պատասխանատվությունը և փոխհատուցման պատերազմական տուգանքների առաջարկը: Գերմանական քրեական օրենսգիրքը նախատեսում է սանկցիաներ՝ այդ պատմական իրողությունը ժխտող դեմքերի և կազմակերպիչների նկատմամբ: Վերջերս, ռուսական կառավարությունը համարձակություն ունեցավ իր վրա վերցնել 1940թ. Խատինի անտառում 4500 լեհ սպաների ոչնչացման պատասխանատվությունը: Հերթը Թուրքիայինն է:

Պալատի պատգամավորներից շատերը բազմիցս արտահայտվել են հայերի ցեղասպանության կապակցությամբ: Ժամանակն է, խոսքերից անցնել գործի: Կոչ եմ անում բոլոր պատգամավորներին կողմ քվեարկել իմ կողմից ներկայացված առաջարկությանը:

ՍԱՐԳԻՍ ԱՍԱՏՈՒՐՅԱՆ (Դոն Վալեյ-Նորդ, լեբերալ կուսակցություն)

Պարոն նախագահող, ես ուշադիր լսեցի Աունթսիքի պատգամավորի ելույթը: Օգտվելով առիթից, ցանկանում եմ շնորհակալություն հայտնել իր ելույթի համար և նշել, որ կտրականապես համաձայն չեմ նրա մի շարք արտահայտությունների հետ: Իր ելույթում պատգամավորը ասաց, որ Մոնրեալի քաղաքապետը խոստացել է հուշարձան կանգնեցնել 1915թ. հայերի ցեղասպանության զոհերի համար:

Այնուհետև պատգամավորը մեղադրեց ֆեդերալ կառավարությանը այն բանում, որ նրանք խանգարեցին այդ նախագծի իրականացմանը: Կոչ եմ անում պատգամավորին հետ վերցնել իր խոսքերը, քանի որ նրա մեղադրանքը չի համապատասխանում իրականությանը: Հուշարձանների կառուցումը կամ քանդումը կառավարության իրավասությունից դուրս է: Կառավարությունը մեղավոր չէ այն բանում, որ քաղաքապետը չի կատարում իր խոստումները:

ՄԻՇԵԼ ԴԱՎԻՈԼ (Առնքսիք, Կվեբեկի խմբակցություն)

Պարոն նախագահող, շնորհակալություն եմ հայտնում պատգամավորին նրա մեկնաբանության համար:

Ցեղասպանության զոհերի հուշարձանի կանգնեցման կապակցությամբ կուզենայի հիշեցնել Մոնրեալի քազաքապետի հոդվածի մասին "The Gazette" թերթում: Բավական է միայն ասել, որ կանադական կառավարությունը խուսափում է «ցեղասպանություն» բառի գործածումից: Այն խոսում է վայրագության, ողբերգության մասին, բայց ոչ ցեղասպանության: Մինչդեռ ռուանդական իրադարձությունները կառավարության կողմից որակվեցին, որպես «ցեղասպանություն», սակայն Հայաստանի դեպքում այդ տերմինի վրա վետո է դրված: Այսօր, ձեզ հնարավորություն է տրվում կողմ քվեարկել իմ կողմից ներկայացված առաջարկությանը՝ «ցեղասպանություն» տերմինի գործածման օգտին: Եթե դուք որոշեք ձևափոխել առաջարկությունը, հանելով «ցեղասպանություն» բառը, դիմակները կընկնեն, հետևությունները թող անեն հայերը և կանադացիները:

ԷԼԵՆԻ ԲԱԿՈՊԱՆՈՍ (Սեն-Դենի, լիբերալ կուսակցություն)

Պարոն նախագահող, թույլ տվեք շնորհակալություն հայտնել ընդդիմության պատգամավորներին, պալատում նրանց առաջարկության ներկայացման համար: Ինչպես նա, ես էլ կուզենայի հիշեցնել, որ Դոն Վալեյ-Նորդի պատգամավորը արդեն ներկայացրել է համայնքների պալատի քննարկմանը նմանատիպ առաջարկություն: Մոնրեալի քաղաքապետի հոդվածները դեռ ոչնչի մասին չեն ասում, ապացույցներ են պետք: Ցանկալի կլիներ, որպեսզի հարգելի ընդդիմության պատգամավորը գրավոր կամ բանավոր ապացույցներ ներկայացներ մեզ այն մասին, որ կառավարության որևէ անդամ խոչընդոտել է հուշարձանի կառուցմանը: Ոչ մի ապացույց չկա: Մոնրեալի քաղաքապետ՝ պարոն Բրուքը, պետք է պատասխան տա հայկական համայնքի առջև իր խոսքերի համար: Մենք լիովին աջակցել ենք հուշարձանի կառուցման գաղափարին:

ՄԻՇԵԼ ԴԱՎԻՈԼ

Իսկապես հուշարձանի կառուցման պատասխանատվությունն ընկնում է Մոնրեալի քաղաքապետի վրա: Սակայն, երբ թուլության օրինակը բխում է այնպիսի բարձրագույն ատյանից, ինչպիսին կառավարությունն է՝ լիբերալ, թե պահպանողական, հայերի ցեղասպանության ճանաչումը մերժող, արդյո՞ք իրավունք ունենք կշտամբել որևէ մեկին համարձակության բացակայության մեջ:

Անցյալ տարի, Դոն Վալեյ-Նորդի պատգամավորը Պալատի քննարկմանը առաջադրեց նմանատիպ առաջարկություն, սակայն խորհրդարանական քարտուղարը մերժեց քվեարկման դնել առաջարկության ընդունման հարցը:

ԷԴԻ ՖՐԱՅ (Կանանց հարցերով պետական քարտուղար, Լիբերալ կուսակցություն)

Պարոն նախագահող, թույլ տվեք շնորհակալություն հայտնել Աուենթսիքի պատգամավորին իր կողմից ներկայացված առաջարկության համար: Առաջարկության մեջ շոշափված խնդիրները խիստ կարևոր են, դա հավասարության գաղափար է, իրենց իրավունքների համար ճնշված ժողովուրդների պայքարն է: Ես պաշտպանում եմ պատգամավորի կողմից ներկայացված առաջարկության սկզբունքները, սակայն կուզենայի առաջարկել հետևյալ ուղղումը:

1. «Հայերի ցաղասպանություն» բառերը փոխարինել «Հայկական ողբերգությունը, որը հանգեցրեց 1,5 միլիոն մարդու ոչնչացմանը»:

2. «1915թ.» տարեթվից հետո ավելացնել «ի հիշատակ մարդկության դեմ հանցագործությունների»:

Ես կուզենայի ընդլայնել առաջարկության սահմանները, որպեսզի այն վերաբերվի ազատության և արդարության համար պայքարող բոլոր ժողովուրդներին:

Ես ցանկանում եմ, որպեսզի Պալատը ճանաչի հայ ժողովրդի սիստեմատիկ ջարդերի փաստը, որ տեղի ունեցավ 1915թ. Օսմանյան կայսրությունում: Եվ ապրիլի 24-ը հայտարարվի անմեղ զոհերի հիշատակի սգո օր: Ապրիլի 15-ը մենք արդեն նշում ենք, որպես հոլոքոստի օր, սգալով միլիոնավոր հրեա զոհերի համար:

Ապրիլի 27-ը խորհրդանշում է ապարտեիդի տապալումը, ռասայական խտրականության վերացումը, Հարավ-Աֆրիկյան հանրապետությունում հավասարության և ազատության գաղափարների հաղթանակը: Իմ կողմից առաջարկված ուղղումով, ես կուզենայի հարգանքի տուրք մատուցել այդ և ուրիշ ժողովուրդների զոհերի հիշատակին, որոնք երբևիցե ենթարկվել են հետապնդման՝ կանանց, ծերերի, ողբացած երեխաների, այն բոլորի, ովքեր ստորացվել, հետապնդվել կամ սպանվել և բանտարկվել են, դավանանքի, մաշկի գույնի կամ էլ սեռական կողմնորոշման պատճառով:

Սահմանափակել քննարկվող առաջարկության սահմանները մեկ ժողովրդի ողբերգությամբ, կնշանակի կորցնել երբևիցե ջարդերի և հետապնդումների ենթարկված բոլոր ժողովուրդների անմեղ զոհերի հիշատակի օր սահմանելու առիթը: Իր մերձավորի նկատմամբ մարդու դաժանության դրսևորման ամոթալի պատմությունը երբեք ընտրովի չի եղել : Ապրիլի 15-ի, 24-ի և 27-ի նման ողբերգությունները, որ մենք հիշում ենք, չեն սահմանափակվում մեկ կրոնով, ռասայով, էթնիկական խմբով: Կանանց, տղամարդկանց և երեխաների ոչնչացումը միայն նրա համար, որ ցանկանում են հարգել իրենց աստծուն, հարևանների հետ ապրել հավասարության, եղբայրության, արդարության և միմյանց նկատմամբ հարգանքի սկզբունքներով, դա ողբերգություն է, որի համար պետք է ամաչի ողջ մարդկային ցեղը:

Աուենթսիքի հարգելի պատգամավորի մտցված առաջարկությունը լիովին համապատասխանում է Կանադայի ժողովրդի արժանիքներին:

Մեր երկրի դռները միշտ էլ բաց են եղել բռնակալության և դեսպոտական ռեժիմի ծանրությունը կրած մարդկանց համար: Կանադան ոչ միայն հռչակում է արդարության սկզբունքները, հարգանք տարբեր ազգու-

թյունների և դավանանքի մարդկանց նկատմամբ, այլ նաև ակտիվորեն մասնակցում է կյանքում այդ իդեալների իրականացմանը:

Մեր օրենքները երաշխավորում են ռասաների և էթնիկական խմբերի, մեր երկիրը բնակեցնող տարբեր մշակույթի և դավանանքի ժողովուրդների իրավահավասարությունը:

Խոսքը երբեք չի գնացել ձուլման մասին, ընդհակառակը, բոլոր էթնիկական խմբերը օգտվում են ինքնատիպ զարգացման լիակատար ազատությամբ: Մեր երկիրը ձևավորվել է մեծ թվով էմիգրանտներից և տեղաբնիկների հետ կողքկողքի ապրող փախստականներից: Երկրագնդի տարբեր անկյուններից, այստեղ հայրենիք գտած մարդիկ, ստեղծեցին մի հասարակություն, որի գլխավոր արժեքը հավասարությունն է, ազատությունն ու հանդուրժողականությունը, կոնֆլիկտների խաղաղ կարգավորման սկզբունքը: Մեր ազգը բացառիկ է, այսպես ասած, համամոլորակային և մենք իրավունք ունենք դրանով հպարտանալ: Այդ իմաստով, մենք օրինակ ենք հանդիսանում ամբողջ աշխարհի համար: Սա մի երկիր է, որտեղ տիրում են խաղաղությունը և օրենքը, երկիր, որտեղ տարբեր ազգերի մարդիկ ապրում են իրար հետ ներդաշնակության, փոխհամաձայնության և փոխադարձ հարգանքի մեջ: Այստեղ՝ Կանադայում, սույն առաջարկության ընդունումը կարող է նեցուկ հանդիսանալ իրենց իրավունքների համար պայքարող այլ ժողովուրդների համար:Նրանք կգիտակցեն, որ մեր երկրում ամեն ոք ազատ է հարգել իր աստծուն: Բոլորս հավասար ենք օրենքի առջև, պաշտպանված ենք սահմանադրությամբ ամեն տեսակի դիսկրիմինացիաներից, իրավունք ունենք օգտվել մեր համագործակցության առավելություններից: Եթե մենք ցանկանում ենք փոխել աշխարհը, մոտեցնել այն օրը, երբ տարբեր ազգության և դավանանքի մարդիկ կգոյակցեն խաղաղության և փոխադարձ հարգանքի մեջ, մենք պետք է միշտ հիշենք բռնապետության սարսափները, ժողովուրդների կոտորածները, որոնք կատարվել են ռասայական ատելության և կրոնական անհանդուրժողականության պատճառով:

Մենք քննարկում ենք ամեն տարվա ապրիլի 20-ից 27-ն ամեն գոհերի հիշատակի շաբաթվա սահմանման առաջարկը, մասնավորապես, հայերի, որոնց մասին մենք այսօր խոսում ենք:

Մենք միշտ հանդես ենք գալիս ի պաշտպանություն ազատության և արդարության, քննադատելով այն երկրների առաջնորդներին, որտեղ խախտվում են մարդու իրավունքները: Ամենևին էլ պատահական չէ, որ նման առաջարկությունը քննարկվում է կանադական խորհրդարանի համայնքների պալատում: Ինչպես ասել է ՍԱԿ-ի 50-ամյակի օրերին գլխավոր քարտուղար Բութրոս Ղալին մեր պրեմյեր-մինիստրին, աշխարհը միշտ հույսով է նայել Կանադային, որպես մի երկրի, որի բոլոր քաղաքացիները ապրում են փոխադարձ հարգանքի մեջ:

Չհիասթափեցնենք աշխարհը: Հավատարիմ մնանք մեր ողջ աշխարհում բացառիկ ազգամիջյան քաղաքականության սկզբունքներին:

ՓՈԽՆԱԽԱԳԱՀՈՂ

Ուղղումը գտնվում է ուսումնասիրման փուլում: Շուտով քարտուղարությունը կհայտնի իր որոշումը:

ՌԵՎԼ ՄԵՆԱՐ (Օշլագա-Մեզոնյով, Կվեբեկի խմբակցություն)

Պարոն նախագահող, ես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել մեր գործընկերոջը, ազգային քաղաքականության և սոցիալական արդարության հարցերին նվիրված նրա զգացմունքային ելույթի համար: Այնուամենայնիվ, կուզենայի համոզվել, արդյո՞ք ճիշտ եմ հասկացել նրա ելույթի էությունը: Նա կիսում է բոլոր պատգամավորների անհանգստությունը բռնությունների առիթով, որոնցով լի է մեր դարը:

Ես կուզենայի ճշտել, արդյո՞ք անընդունելի է նա համարում յուրաքանչյուր բռնություն, ինչքան էլ որ այն քողարկված լինի:

Ինձ համար պարզ չեն կանադական քաղաքականության որոշ նրբերանգները: Չեմ կասկածում, որ մեր գործընկերը կաշխատի պարզաբանել դրանք ինձ համար:

Կանադական կառավարությունը 500 հազար դոլար է հատկացրել նախկին Հարավսլավիայում մարդու իրավունքների պաշտպանության ատյանի ստեղծման համար: Այդ միջազգային տրիբունալը կանցկացնի նախկին Հարավսլավիայում կատարված ռազմական հանցագործությունների քննություն: Այն բաղկացած կլինի իննը դատավորներից, որոնցից մեկը կանադացի է:

Մենք գիտենք ռուանդական իրադարձությունների նկատմամբ կանադական կառավարության դիրքորոշումը: Թե՛ այդ և թե՛ մյուս դեպքում, կանադական կառավարությունը, առանց վարանելու, խոսում է ցեղասպանության մասին: Ցանկալի կլիներ, պարզաբանել, ինչու՞ մի դեպքում նմանատիպ իրադարձությունները կարելի է բնութագրել այդ բառով, իսկ մի այլ դեպքում՝ ոչ: Ցեղասպանությունը, դա բռնության գագաթնակետն է: Ինչու՞ կանադական կառավարությունը, խոսելով 1915թ. Հայաստանի իրադարձությունների մասին, որոնք ունեն ցեղասպանության բոլոր նշանները, խուսափում է այդ տերմինի գործածումից: Ինչո՞վ բացատրել այդ ընտրովի մոտեցումը:

ՏԻԿԻՆ ՖՐԱՅ

Պարոն նախագահող, պատգամավորը բավականին պարզորոշ արտահայտվեց այն մասին, որ Կանադան ակտիվորեն պաշտպանել է իր սկզբունքները այն երկրներում, որտեղ կատարվել են հանցագործություններ մարդկության դեմ՝ Ռուանդայում, Բոսնիայում և այլուր: Մենք ստորագրում ենք պատգամավորի առաջարկության տակ: Խոսքը գնում է միայն որոշ տերմինների փոխարինման մասին: Ավելին, մենք ցանկանում ենք ընդլայնել առաջարկի սահմանները, հիշատակի շաբաթը նվիրելով պատմության ընթացքում տուժած բոլոր մարդկանց: Այդ կերպով ենք նշում հոլոքոստը ապրիլի 15-ին, այդպես ենք տոնում ապրիլի 27-ին Ապարտեիդի վախճանը:

ՋԻՄ ՄԻԼԻ (Կալգարի-Կենտրոն, ռեֆորմիստական կուսակցություն)

Պարոն նախագահող, կուզենայի հարցնել պատգամավորին, թե ինչու՞ է իր ուղղման մեջ առաջարկում հանել «ցեղասպանություն» տերմինը:

ՏԻԿԻՆ ՖՐԱՅ

Պարոն նախագահող, մենք առաջարկում ենք փոխարինել «հայերի ցեղասպանություն» արտահայտությունը «հայկական ողբերգությունը, որը հանգեցրեց 1,5 միլիոն մարդու ոչնչացմանը» նախադասությամբ: «Ցեղա-

սպանություն» տերմինը շատ կտրուկ է: Մենք գտնում ենք, որ անընդունելի է այս դեպքում նրա գործածումը: Մենք միայն վավերացնում ենք 1,5 միլիոն մարդու ոչնչացման փաստը: Մենք աջակցում ենք առաջարկությանը և ուզում ենք ընդլայնել նրա շրջանակները:

ԲՈՔ ՄԻԼՍ (Ռեդ-Դիր, ռեֆորմիստական կուսակցություն)

Պարոն նախագահող, այն ամենը, ինչ մենք այժմ լսեցինք, միայն բառախաղ է, ոչ ավել: Մեկ անգամ չէ, որ ես նման բանավեճերի դեմ ելույթ եմ ունեցել: Բնականաբար, մենք բոլորս էլ դատապարտում ենք այս կամ այն երկրի կառավարության կողմից կազմակերպված ցեղասպանությունը՝ ժողովրդի մասսայական ոչնչացումը: Մենք պետք է այդ մասին բարձրաձայն հայտարարենք ամբողջ մարդկությանը:

Ես աջակցում եմ ներկայացված առաջարկությանը, որը դատապարտում է ցեղասպանությունը, որպես ազգային քաղաքականության մեջ օգտագործվող գործիք: Քանի որ առաջարկված ուղղումը անվիճելի չէ, ուզում եմ իմ ուղղումը ներկայացնել ձեր քննարկմանը: Ես ներկայացնում եմ Ռեֆորմիստների կուսակցությունն արտաքին քաղաքականության հետ առնչվող հարցերում:

Շատ կարևոր է արտահայտել աշխարհին այսօր քննարկվող խնդրի նկատմամբ մեր վերաբերմունքը:

Ցեղասպանությունը, դա կրակոց է ողջ մարդկության սրտին: Ամբողջ մարդկությունը տառապում է, երբ որևէ երկրի իշխանությունները, եսասիրաբար, հետապնդելով որոշակի քաղաքական նպատակներ, ժողովուրդներին հալածանքի են ենթարկում:

Նրանք, ովքեր իրականացրել են ցեղասպանությունը, հաճախ փորձում են մեղքը գցել իրենց զոհերի վրա կամ էլ ժխտում են պատմական փաստերը: Պետք է գիտենալ պատմությունը: Մենք պարտավոր ենք ճշմարտությունը հասցնել մեր երեխաներին: Հուսով լինենք, որ նրանք ապագայում թույլ չեն տա նման հանցագործություններ:

Պատմությունը կրկնվում է, եթե նրանից դասեր չեն քաղում: Դրանում մենք հնարավորություն ունեցանք համոզվել վերջերս, Ռուանդայի և նախկին Հարավսլավիայի հայտնի իրադարձությունների ժամանակ, որոնց զոհը դարձան հարյուր հազարավոր, եթե ոչ միլիոնավոր մարդիկ:

Ամենացավալին այն է, որ հարյուր տարի անց պատմաբանները այս իրադարձությունները կդիտեն միայն որպես երկու դրվագ՝ մեր դարում կատարված ցեղասպանությունների երկար շղթայում:

Գոյություն ունի հայերի ցեղասպանությունը, որին նվիրված է այսօր ներկայացված առաջարկությունը: Կա հոլոքոստը՝ նացիստների կողմից կատարված հրեաների ցեղասպանությունը:

Մենք պետք է հավասարաչափ խոսենք ստալինիզմի զոհերի, Նանկինգի, Չինաստանի իրադարձությունների մասին, Կենտրոնական և Հարավային Ամերիկայում բազմաթիվ մարդկանց անհետացման մասին, Ռուռունդիայի, Եթովպիայի կոտորածների և այլնի մասին:

Ինչպես արդեն ավելի վաղ ասեցի, դա վերաբերում է մեր մոլորակը բնակեցնող բոլոր մարդկանց:

Թվարկված բոլոր իրադարձությունները, տիեզերական մասշտաբի արհավիրքներ են: Ես կարծում եմ, որ հենց դրա համար էլ Պալատը պետք

է աջակցի այն առաջարկությանը, որը դատապարտում է մարդկության դեմ կատարված հանցագործությունները:

Այս առաջարկության քննարկումը ցույց է տալիս, որ պատգամավորները լի են վճռակամությամբ անել ամեն հնարավորը, որպեսզի ապագայում կանխեն նման հանցագործությունների կատարումը:

Այսօր պատգամավորները կխոսեն դարասկզբին կատարված հայերի ցեղասպանության մասին: Արտահայտելով համաձայնություն, ցանկանում եմ ասել, որ այդքան էլ լավ չեմ ծանոթ Հայոց պատմությանը:

Իմ ելույթում ուզում եմ շոշափել այլ հարցեր, որոնց ես ավելի լավ եմ ծանոթ, և որոնք նույնպես առնչվում են ցեղասպանության խնդիրների հետ: Խոսենք Երկրորդ համաշխարհային պատերազմի հոլոքոստի մասին: Անհավանական է , բայց գտնվում են մարդիկ, որ ժխտում են հրեական ցեղասպանության փաստը: Եվրոպայում ապրող հրեաները դարեր շարունակ տառապել են անհանդուրժողականությունից և անարդարությունից: Ատելությունը գագաթնակետին հասավ Հիտլերի իշխանության գալուն պես: Նացիստական ռեժիմի տարիներին Գերմանիայի բոլոր փորձաճնքների և դժբախտությունների մեջ մեղադրվում էին հրեաները: Նացիստական քարոզչությունը մշտապես անմարդկայնացնում էր հրեաների կերպարը: Այդպես, հրեաների ոչնչացման հրեշավոր գաղափարը դարձավ Գերմանիայի խնդիրների վերջնական լուծումը:

Ցավոք, մարդկության պատմության մեջ տխուր ավանդույթ է դարձել մարդկանց վարկաբեկումը, որը նախորդում էր նրանց ոչնչացմանը և մասսայական լրատվական միջոցների կողմից թշնամու կերպարի ստեղծումը: Մեր օրերում հեռուստատեսության և այլ լրատվական միջոցների օգտագործումը, դա բազմաթիվ ահաբեկչական խմբերի ռազմավարության կարևոր մասնիկն է: Մենք պետք է գիտակցենք, որ լրատվական միջոցները կարող են ծառայել մարդատեացության գաղափարների քարոզչությանը:

Անհրաժեշտ է այնպիսի նորմեր հաստատել, որոնց շնորհիվ միջազգային հանրությունը հնարավորություն կունենա ծանոթանալ կոնֆլիկտի երկու կողմերի դիրքորոշման հետ, և ոչ միայն, ասենք, CNN-ի լրագրողների մեզ մատուցած վարկածը: Պետք է պայքարել մի շարք պետությունների կողմից մասսայական ինֆորմացիայի միջոցների մանիպուլյացիաների դեմ:

Հոլոքոստն ակներևաբար ցույց տվեց, թե ինչի կարող է հանգեցնել միջազգային հանրության անտարբերությունը: Հրեաները վկայում էին, որ բազմաթիվ եվրոպական պետություններ փակում էին իրենց առջև դռները: Նման վարվելաձևը ազատ արձակեց նացիստների ձեռքերը, վճռորոշ դեր խաղալով ավելի քան վեց միլիոն հրեաների ճակատագրերում:

Ակնհայտ է, որ միջազգային հանրությունը այլևս չի կարող լռել, երբ կատարվում են նման հանցագործություններ:

ՏԻԿԻՆ ՌԻՆԿԵՏ-ՄԱԼԿԵ (Փոխնախագահ)

Ներողություն եմ խնդրում պատգամավորից, որ ընդհատում եմ նրան, սակայն նա ասաց, որ ցանկանում է առաջարկության մեջ իր ուղղումը մտցնել: Ուզում եմ տեղեկացնել նրան, նախկին ուղղումի առիթով քարտուղարության կողմից ընդունված որոշման մասին: Թույլ տվեք հրապարակել այդ որոշումը (ընթերցում է):

Պետական քարտուղարի առաջարկած ուղղումը ընդունելի է:

Բ. ՍԻԼՍ

Ես առաջարկում եմ ուղղումը փոփոխել հետևյալ կերպ՝ «ողբերգություն» բառից առաջ ավելացնել «ցեղասպանություն» բառը՝ «ցեղասպանության ողբերգություն»:

ՌԻՆԿԵՏ- ՄԱԼԿԵ (Փոխնախագահ)

Պատգամավոր Միլսի առաջարկած ուղղումն ընդունելի է և այն ընդունվեց:

ՄԻՇԵԼ ԴԱՎԻՈԼ (Աուճքսիք, Կվեբեկի խմբակցություն)

Ուզում եմ շնորհավորել պատգամավորին նրա ուղղման առիթով: Ինչպես և կարելի էր սպասել, կառավարությունը փոխարինեց «ցեղասպանություն» տերմինը «ողբերգություն» բառով: Դա մեզ համար անընդունելի է:

ՖԻԼԻՊ ՊԱՐԵ (Լուի-Էբեր, Կվեբեկի խմբակցություն)

Շնորհակալ եմ այսքան տխուր հարցի՝ ցեղասպանության խնդրի առիթով վիճաբանություններին մասնակցելու հնարավորության համար: Խոսքը գնում է հայերի ցեղասպանության մասին, ինչպես նաև մյուս այլ ցեղասպանությունների մասին, որոնք արդեն կատարվել են, և դեռ այսօր էլ կատարվում են: Ես լսեցի պատգամավորի ելույթը, որտեղ նա ասաց, որ ցեղասպանության խնդիրը վերաբերում է մեզ բոլորիս: Լիովին նրա հետ համաձայն եմ: Ամենից առաջ, դա մարդու իրավունքների հարցն է, և այն պետք է վերաբերվի մեզ բոլորիս:

Լինելով Կվեբեկի խմբակցության անդամ, ես այսօր առավոտ ուրախ էի լսել, թե ինչպես ընդդիմության առաջնորդը ներկայացրեց այժմ քննարկվող առաջարկությունը: Իմ կարծիքով ոչ քիչ կարևոր է այն փաստը, որ կուսակցության ղեկավարը հստակ և ոչ երկիմաստ շարադրում է իր դիրքորոշումը, այսպիսի բարդ հարցի վերաբերյալ:

Անցյալ շաբաթ, գործընկերներիս հետ միասին, որոնք ներկայացնում էին քաղաքական կուսակցությունների բոլոր երանգները, մասնակցեցի հասարակական զարգացման հարցերին նվիրված նիստին:

Ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները հույս ունեին, որ լիբերալների կառավարության պրեմյեր-մինիստրը, երկամյա իշխանության գլուխ գտնվելուց հետո, վերջապես ելույթ կունենա մարդու իրավունքների պաշտպանության մասին:

Ավաղ, դա տեղի չունեցավ: Հիշենք, առաջին ասիական շրջագայության ընթացքում պրեմյեր-մինիստրի արտասանած բառերը. «Ես կարող էի ելույթ ունենալ մարդու իրավունքների մասին, սակայն ես գերադասում եմ շուկաներ բացել, զարգացնել առևտրական կապերը: Վաղ թե ուշ պատնեշը կտապալվի»: Ինչքա՞ն սպասենք, մինչև պատնեշը քանդվի՞, հիսու՞ն տարի: Այս բառերը վկայում են այն մասին, որ ներկայիս կառավարությունն ուշադրությունից դուրս է պահում այնպիսի կարևոր հարց, ինչպիսին մարդու իրավունքներինն է: Մենք ոչնչի չենք հասնի, եթե աչք փակենք դեմոկրատական զարգացման ու մարդու իրավունքների պահպանման հետ կապված սկզբունքների վրա՝ ելնելով երկրների տնտեսական զարգացմանն աջակցելու ցանկությունից:

Այսօր շատ խոսվեց Կամբոջայի կարմիր քխմերների հարյուր հազարավոր զոհերի մասին, Ռուանդայում մասսայական կոտորածների մասին: Միգուցե ոչ բավարար չափով ասվեց Սուդանի, այդ մոռացված աֆ-

րիկյան երկրի մասին, որտեղ արդեն տաս տարի է շարունակվում է պատերազմը Հյուսիսի և Հարավի միջև, որի զոհերը դարձան միլիոնից ավել մարդ: Պատմությունը, ցավոք, կրկնվում է, և մենք ոչինչ չենք սովորում:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, պետությունների ղեկավարները հավաքվեցին Սան-Ֆրանցիսկոյում, որպեսզի հիմնադրեն ՄԱԿ-ը: Այնտեղ նրանք հայտարարեցին. «Պատերազմներ այլևս չպետք է լինեն»: Չեմ կասկածում, որ նրանք անկեղծ էին: Այնուամենայնիվ, պատերազմները առ այսօր մնում են մարդկության համար որպես պատուհաս:

Խոսելով ցեղասպանությունների և մարդու իրավունքների մասին, չի կարելի շրջանցել այնպիսի լուրջ խնդիրը, ինչպիսին անպատժելիությունն է: Ինչու՞ են կրկնվում ցեղասպանությունները: Կարծում եմ, դրա պատճառներից մեկը կայանում է նրանում, որ միջազգային հանրությունը մինչև այժմ չի գտել արդյունավետ միջոցներ ցեղասպանությունների մեղավորների պատժման համար: Որպես օրինակ բերեմ վերջին 3-4 տարվա Հաիթիի իրադարձությունները: Այդ ժամանակամիջոցում սպանվել է 3-ից 4 հազար մարդ: Ի՞նչ պատիժ կրեց գեներալ Սեդրասը: Նրա գրպանները լցրեցին փողով և ասեցին. «Կարող եք անպատիժ թողնել երկիրը»: Նույնը տեղի ունեցավ հաջորդ՝ Դյուվալյեի ռեժիմի օրոք: Երկար տարիներ շարունակ բռնապետները խեղդում էին Հաիթիի ժողովրդին, և այդ հանցագործությունները մնացին անպատիժ:

Նախկին Հարավսլավիայում էթնիկական մաքրումների մեղավորները փայլում են հեռուստախցիկների առջև, իսկ միջազգային հանրությունն անզոր է որևէ բան ձեռնարկել: Կարելի է բերել և այլ օրինակներ: Ցավալի է, որ Կանադան հարաբերություններ է պահպանում այն երկրների հետ, որտեղ գործադրվում են խոշտանգումները: Բերեմ Չինաստանի օրինակը, որտեղ սիստեմատիկ կերպով խախտվում են մարդու իրավունքները և հետապնդվում են քաղաքական այլախոհները...

Նիգերիայում այլախոհներին ոչնչացնում են: Նիգերիան թույլ երկիր է և Կանադան, ժամանակ առ ժամանակ, նրա դեմ կիրառում է տնտեսական սանկցիաներ: Սակայն նույնը կարվի՞ Չինաստանի, Ինդոնեզիայի կամ Վիետնամի նկատմամբ: Քաղաքականությունը հաճախ ունի երկակի բարոյախոսություն:

Վերջերս, միջազգային համագործակցության նախարարից ստացա մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ մի փաստաթուղթ: Փաստաթղթում գրված է. «Ուժեղացնել քաղաքացիական բնակչության դերը պետական որոշումների ընդունման գործում: Համախմբել ժողովրդական մարմինները: Աջակցել մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններին: Պետական քաղաքականության մեջ առաջնությունը տալ մարդու իրավունքների հարցերին»:

Այն ժամանակ, երբ արտասանվում են գեղեցիկ ճառեր, կազմվում են կանոնավոր փաստաթղթեր, կանադական կառավարությունը իր արտաքին քաղաքականության մեջ հետապնդում է միայն մեկ նպատակ՝ առևտրական կապերի զարգացումը: Առևտուրն ամեն ինչից կարևոր է: Շատ տխուր է, որ Կանադայի արտաքին քաղաքականությունը կորցրել է այն ամենը, ինչ կազմում էր մեր երկրի պարծանքը՝ օգնության զարգաց-

ման ծրագիրը, խաղաղության միսիան, մարդու իրավունքների պաշտպանությունը: Կառավարությունը ուղղակիորեն թևաթափ է եղել:

ՍԱՐԳԻՍ ԱՍԱՏՈՒՐՅԱՆ (Դոն Վալեյ-Նորդ, լիբերալ կուսակցություն)

Տիկին նախագահող, խոսելով Մոնրեալում հուշարձանի կանգնեցման մտադրության մասին, Աունքսիքի պատգամավորը հայտարարեց, որ ֆեդերալ կառավարությունը, դիմադրելով հուշարձանի կառուցմանը, խանգարեց այդ նախագծի իրականացմանը:

Կարող է պատահել, որ Կվեբեկի պրեմյեր-մինիստրը՝ իրենց կուսակցության նախկին ղեկավարը, իր գործընկերոջ՝ Մոնրեալի քաղաքապետի հետ համագործակցելով, այնուամենայնիվ կկառուցեն հուշարձանը: Ի՞նչ կարող է ասել պատգամավորը այս առիթով:

Ֆ. ՊԱՐԵ

Տիկին նախագահող, զվարճալի է հետևել որոշ պատգամավորներին նրբանկատ հարցերի քննարկման ժամանակ, որոնց վերաբերյալ իրենց կառավարությունը հրաժարվում է մշակել այս կամ այն դիրքորոշումը: Ամեն անգամ լսում ենք նույնը. «Ինչու՞ Կվեբեկի կառավարությունը որևէ բան չի ձեռնարկել»: Ինչու՞ պետք է նախաձեռնությունը միշտ սկիզբ առնի Կվեբեկից: Մի՞թե այս Պալատը և կառավարությունը ընդունակ չեն ժամանակ առ ժամանակ որոշումներ ընդունել: Բայց ոչ, միշտ գործում է նույն ռեֆլեքսը՝ պետք է, որ դա արվի Կվեբեկի իշխանությունների կողմից: Նման դիրքորոշումը խոսում է կառավարության թուլության մասին:

ՍԱՐԳԻՍ ԱՍԱՏՈՒՐՅԱՆ

Տիկին նախագահող, ես միայն ուզում եմ, որպեսզի պատգամավորը պարզեցնի իրադրությունը, ասի, ինչքա՞ն վող է հարկավոր հուշարձանի կառուցման համար: Ցավոք, պետք է ասեմ, որ մեր դիմադիր կողմի խոսքերը շատ բան չարժեն:

Մի քանի տարի առաջ Կվեբեկը ընդունեց ցեղասպանությունը դատապարտող մի բանաձև: Կվեբեկի պրեմյեր-մինիստրը մի քանի ամիս առաջ Կվեբեկում կամ Մոնրեալում, կարևոր չէ թե որտեղ, պետք է հուշարձան կանգնեցներ: Հուշարձանն անպայման չէ, որ Մոնրեալում պիտի կառուցվեր: Ինչու՞ պատգամավորը չի ցանկանում Կվեբեկի պրեմյեր-մինիստրի հետ զրուցելու պատասխանատվությունը իր վրա վերցնել, որպեսզի նա կառուցի հուշարձանը բոլոր կվեբեկցիների անունից: Դա բոլորիս համար օրինակ կծառայեր: Սիգուցե, դրանից հետո մենք կկարողանայի՞նք հուշարձան կանգնեցնել Օտտավայում, բոլոր կանադացիների անունից:

Ֆ. ՊԱՐԵ

Տիկին նախագահող, եթե լսենք Դոն Վալեյ-Նորդի պատգամավորին, այն տպավորությունն է ստեղծվում, որ նա պատրաստվում է տեղափոխվել Կվեբեկ, և այնտեղ դնել իր թեկնածությունը, տարածելով իր ազդեցությունը Կվեբեկի կառավարության վրա: Թվում է, թե դա իր շաիերի միակ գոտին է: Կվեբեկի կառավարությունը արդեն ընդունել է այսօր քննարկվող առաջարկության նման մի բանաձև: Կվեբեկի կառավարությունը դասերի կարիք չունի, առավել ևս լիբերալ կուսակցությունից:

ԵԼԵՆԻ ԲԱԿՈՊԱՆՈՍ (Սեն Դենի, լիբերալ կուսակցություն)

Տիկին նախագահող, ես համարյա արտասուքը աչքերիս լսում եմ, թե ինչպես են ընդդիմության պատգամավորները այսօր պաշտպանում

Կվեբեկի էթնիկական համայնքներից մեկի իրավունքները: Մենք հիշում ենք, որ վերջերս հանրաքվեի ժամանակ նրանք ապացուցում էին, որ իրենց պարտության պատճառներից մեկը Կվեբեկի էթնիկական համայնքներն էին: Եվ այսօր, պաշտոնական ընդդիմության նախկին ղեկավարը չի հրաժարվում իր խոսքերից: Հետաքրքրական է, որ այսօր նրանք իրենց ցույց են տալիս որպես հայկական համայնքի մոլի պաշտպաններ: Այստեղ է գտնվում իմ գործընկերը՝ Դոն Վալեյ-Նորդի պատգամավորը, որն իսկապես պաշտպանում է հայկական համայնքի շահերը:

Ծիծաղելի է, որ մեր երկիրը մասնատել ցանկացող կուսակցությունը փորձում է մարդու իրավունքների պաշտպանության դաս տալ մեր կառավարությանը:

ՍԱԴԼԵՆ ԴԱԼՖՈՆ ԳԻՐԱԼ (Լավալ-Կենտրոն, Կվեբեկի խմբակցություն)

Տիկին նախագահող՝ ապրիլի 24-ին լրանում է 1915-ի հայերի ցեղասպանության 81-ամյա տարելիցը: 20-րդ դարի այս առաջին ցեղասպանությունը, որին հետևեցին ուրիշները, մինչ այժմ չի ճանաչվել կանադական կառավարության կողմից:

Ես պաշտպանում եմ մարդու կողմից իր մերձավորի նկատմամբ անմարդկային վերաբերմունքի դրսևորման հիշատակի շաբաթ սահմանելու առաջարկությունը, որը կնշվի յուրաքանչյուր տարվա ապրիլի 20-ից 27-ը: Օգտվելով առիթից, ուզում եմ ողջունել և արտահայտել իմ մեծ համակրանքը հայ ժողովրդի 1540 ընտանիքներին, որոնք ապաստան գտան Կվեբեկում և ակտիվորեն մասնակցում են մեր միության զարգացմանը:

1915թ. ապրիլի 24-ը ժողովրդի ցեղասպանության սկիզբն է, որ իրականացվեց թուրքական կառավարության կողմից: Միլիոնից ավել մարդիկ ոչնչացվեցին, հարյուր հազարավորները՝ բռնագաղթվեցին:

Սա իրենց ազգային իրավունքները պաշտպանող ժողովուրդների նկատմամբ իրականացված մի շարք ցեղասպանություններից առաջինն էր: Դրան հետևեցին հոլոքոստը, Ռուանդայի և Բուրունդիայի կոտորածները, բոսնիական իրադարձությունները: Այդ բոլոր օրինակները վկայում են, որ պետությունները հաճախ իրենց նպատակներին հասնելու համար օգտագործում են ուժը և բռնությունը:

Միջազգային հանրությունը միաձայն դատապարտեց Ադոլֆ Հիտլերի նացիստական ռեժիմը, որը իրականացրեց հրեա ժողովրդի ցեղասպանությունը: Միջազգային Նյուրնբերգյան տրիբունալը ռազմական հանցագործությունները դիտեց որպես մարդկության և քաղաքակրթության դեմ կատարված հանցագործություններ: Հայերի ցեղասպանությունը մնաց անպատիժ: Մինչդեռ, որոշ պետություններ և կազմակերպություններ ճանաչել են այդ ցեղասպանությունը:

1980թ. ապրիլի 10-ին Կվեբեկի ազգային ասամբլեան միաձայն ընդունեց հայերի ցեղասպանությունը դատապարտող մի բանաձև: Նույն 1980թ. այդ ձևով վարվեց և Օնտարիոյի օրենսդրական համաժողովը:

Սկսած 1980թ., 16 տարվա ընթացքում, կանադական բնակչության երկու երրորդը ճանաչեց ցեղասպանությունը, որին զոհ դարձավ հայ ժողովուրդը:

1987թ. ընդունած հայերի ցաղասպանությունը դատապարտող բանաձևով Եվրոխորհրդարանը հայտարարեց, որ «...ներկայիս թուրքական

կառավարության հրաժարումը ճանաչել ցեղասպանությունը, ինչպես նաև այդ երկրի կողմից միջազգային իրավունքների վերջին խախտումները՝ լուրջ խոչընդոտներ է ստեղծում Եվրոպական միության կազմը Թուրքիայի հնարավոր ընդունման համար»: Ինչի՞ է սպասում մեր կառավարությունը, որպեսզի պաշտոնապես ճանաչի հայերի ցեղասպանությունը և դատապարտի այդ պատմական փաստը:

Այսօր մենք նշում ենք ցեղասպանության 81-ամյա տարելիցը: Կանադան ունի մարդու իրավունքների և ժողովրդավարության պաշտպանի կերպար: Կանադան պետք է դատապարտի այդ ցեղասպանությունը, ինչպես դատապարտեց հոլոքոստը: Վերջում ցանկանում եմ հիշեցնել, որ Կանադան այն երկրներից է, որոնք ստորագրել են 1948թ. նոյեմբերի 2-ի Միջազգային Կոնվենցիան՝ ցեղասպանության հանցագործությունները կանխելու և պատժելու մասին: Այդ Կոնվենցիան ուժի մեջ է մտել 1950թ. դեկտեմբերի 2-ից: Ցեղասպանության հանցագործությունը չունի վաղեմության ժամկետ, և դեռ ուշ չէ, որպեսզի կանադական կառավարությունը միանա հայերի ցեղասպանությունը դատապարտած մյուս երկրներին: Ներկայացված առաջարկության առիթով քննարկումներում առաջնությունը պետք է տրվի մարդու իրավունքների հարցերին: Մեր վարքագիծը չպետք է թելադրվի տնտեսական շահերով: Ընդունելով առաջարկությունը, Պալատը ցույց կտա իր նվիրվածությունը մարդու և ժողովուրդների իրավունքների պաշտպանությանը:

ՄՈՐԻՍ ԲԵՐՆՅԵ (Մեգանտիկ-Կոնտոն-Ստանսիդ, Կվեբեկի խմբակցություն)

Տիկին նախագահող, նախ և առաջ կուզենայի հարց տալ գործընկերոջս: Ավելի ուշ կշարադրեմ տեսակետս քննարկվող խնդրի շուրջ: Ցանկալի կլիներ լսել նրա պատասխանը հետևյալ հարցիս. «Ինչպե՞ս պետք է համադրենք մարդու իրավունքների պաշտպանության խնդիրը և միջազգային առևտրի հարցերը, ինչպես նաև առևտրական պայմանագրերի հաստատումը»: Ես ծանոթ եմ նրա տեսակետին, սակայն ցանկալի կլիներ լսել իր պատասխանը:

ԴԱԼՖՈՆ ԳԻՐԱԼ

Տիկին նախագահող, շնորհակալություն եմ հայտնում գործընկերոջս, իր հարցի համար: Դա պրոբլեմային հարց է: Ինչի՞ն նախապատվություն տալ՝ առևտրին, որից կախված է մեր միության բոլոր անդամների բարօրությունը, թե՞ մարդու իրավունքների պաշտպանությանը: Ի՞նչն է կարևոր: Շատ բարդ հարց է, և նրա լուծումը, փոխզիջումների ոլորտն է: Այդ կոնտեքստով ես կցանկանայի դիմել կանադական կառավարությանը՝ խնդրանքով, ավելի ուշադիր լսել ընդդիմության ձայնը: Անկեղծորեն հավատում եմ, որ երրորդ հազարամյակի շեմին Կանադան կլինի լիդեր՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում:

ՍԱՐԳԻՍ ԱՍԱՏՈՒՐՅԱՆ (Դոն Վալեյ-Նորդ, լիբերալ կուսակցություն)

Տիկին նախագահող, ես երջանիկ եմ այս կարևոր հարցի քննարկմանը մասնակցություն ունենալու համար:

Շնորհակալություն եմ հայտնում Աունքսիքի պատգամավորին, իր կողմից մտցված առաջարկության համար:

Մարտի 20-ին ես տեղեկացրեցի Պալատին անցյալ տարի իմ կողմից ներկայացված առաջարկությունը նորից քննարկման դնելու մտադրությանս մասին: Նամակս թվագրված էր 1996թ. մարտի 20-ով, սակայն այժմ հարցապնդմանս պատասխան չեմ ստացել: Անցյալ տարի, ներկայացնելով առաջարկությունս, ես խորհրդակցեցի բազմաթիվ պատգամավորների հետ, այդ թվում նաև Աունքսիքի պատգամավորի հետ: Ես հուսով էի, որ մինչ իր առաջարկությունը մտցնելը, նույնը կանի և նա: Դա թույլ կտար խուսափել քայֆայականությունից և ստանալ բոլոր կուսակցությունների աջակցությունը: Շատ եմ ափսոսում, որ պատգամավորը չարեց դա և տեղյակ պահեց ինձ և մյուս շահագրգռված անձանց միայն վերջին պահին, այսինքն՝ կիրակի օրը, երեկոյան ժամը 9-ին: Հուսով եմ, որ բոլոր կուսակցությունները ճիգեր կգործադրեն այս հարցի լուծման համար: Այդ հարցը վերաբերվում է ոչ միայն Կվեբեկի խմբակցությանը, ռեֆորմիստական կուսակցությանը կամ լիբերալներին: Այն վերաբերում է բոլոր կանադացիներին, և ես կասեի, մոլորակի բոլոր բնակիչներին: Ես կուզենայի ընթերցել անցյալ շաբաթվա վերջին, Կանադայի հայկական համայնքներին ուղղված պրեմյեր-մինիստրի նամակը:

«Ես երջանիկ եմ ողջունել և փոխանցել լավագույն ցանկություններս Կանադայի հայկական համայնքի բոլոր անդամներին 1915թ. հայկական ողբերգության 81-ամյա տարելիցի առիթով: Կառավարությունը և ամբողջ կանադական ժողովուրդը սգում են Օսմանյան կայսրության տապալումով ավարտված պատերազմի տարիներին հայ ժողովրդի բազմաթիվ զոհերի համար: Մեր ցավակցություններն ենք հայտնում հայկական համայնքին: Կանադայում ապաստան գտած բազմաթիվ հայեր հարստացնում են մեր հասարակությանը: Անկեղծորեն հույս ունեմ, որ անցյալի հիշողությունները կօգնեն մեզ գիտակցել տարբեր ազգության մարդկանց նկատմամբ հարգալից և հանդուրժողական վերաբերմունքի ամբողջ կարևորությունը, ինչի շնորհիվ Կանադան ողջ աշխարհի ժողովուրդների համար դարձել է հույսի աղբյուր: Խնդրում եմ ընդունել լավագույն ցանկություններս»:

Կուզենայի նաև մեջբերել առաջիկա նախագահական ընտրությունների թեկնածու ամերիկյան սենատոր Դոուլի ուղերձը: Ուղերձը թվագրված է ապրիլի 22-ով:

«Ապրիլի 24-ը՝ 1915թ. հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օրն է, որի ժամանակ տեղահանությունների, խոշտանգումների և հետևողական ոչնչացման քաղաքականության արդյունքում սպանվել էին 1,5 միլիոն հայեր: Միանում եմ ԱՄՆ–ի հայկական համայնքի անդամներին և լալիս եմ նրանց հետ այդ ողբերգության անմեղ զոհերի համար»:

Այս հարցը շատ կարևոր է, հատկապես, հայկական ծագումով կանադացիների համար: Ասացվածքն ասում է. «Չդատապարտելով հանցագործությունը, մենք խրախուսում ենք այն»: Հոլոքոստ, Կիպրոս, Բուրունդիա, Կամբոջա, Հարավային Աֆրիկա, Ռուանդա... Շատ կարևոր է սահմանել մարդկության դեմ կատարված բոլոր հանցագործությունների հիշատակի շաբաթ:

Վստահ եմ, որ Պալատի բոլոր պատգամավորները համաձայն են դրա հետ: Ի՞նչ պետք է անել: Պատգամավորները կարող էին անձնապես գրել Օտտավայում թուրքական կառավարության ներկայացուցչին կամ էլ

անմիջականորեն դիմել Թուրքիայի կառավարությանը առաջարկությամբ՝ ճանաչել հայերի ցեղասպանությունը: Հուսով եմ, մոտակա տարիներին նույնը կանեն և մյուս երկրները: Թուրքիան պետք է ճանաչի իր սխալները, ինչպես դա արեց Գերմանիան և բանակցություններ սկսի Հայաստանի Հանրապետության հետ, որպեսզի կարգավորի այդ խնդիրը:

Նյուրնբերգյան դատավարության ժամանակ, խոսելով նացիստների գործած հանցագործությունների մասին, ամերիկյան դատավոր Ռոբերտ Ջեքսոնն ասաց. «Այդ հանցագործությունները անընդունելի են»: Խոսքը գնում է հոլոքոստի մասին:

Նա նկատի ուներ ոչ այնքան զոհերի թիվը, որքան մարդկանց ծրագրավորված և կազմակերպված ոչնչացման փաստը՝ ըստ ազգային պատկանելության:

1915-ին նույնը տեղի ունեցավ: Կաբինետի կողմից որոշում ընդունվեց՝ ոչնչացնել Օսմանյան կայսրությունում ապրող բոլոր հայերին: Առաջին համաշխարհային պատերազմը հարմար պատրվակ էր: Հարմար առիթ: Մարդասպանների ձեռքերը ազատված էին: Հայ տղամարդիկ բանակ զորակոչվեցին և ուղարկվեցին ռազմաճակատ՝ դաշնակիցների բանակի հետ կռվելու համար: Դա հարված էր քիկունքից: Մյուս կողմից, հայերը մարտնչում էին դաշնակիցների բանակի շարքերում: Նրանք հույս ունեին, որ հաղթանակից հետո Հայաստանը անկախություն կնվաճի; 1918 թվականին Հայաստանը, իրոք, անկախության հասավ, սակայն ելնելով միջազգային քաղաքականության որոշ նրբություններից, այդ երջանիկ շրջանը երկարատև չէր: Այդ տարիներին, արևմտյան երկրները ձգտում էին ձեռք բերել առավել շատ քաղաքական կապիտալներ: Մարդու իրավունքները մոռացվել էին: Կրկին դիմում եմ ընդդիմության գործընկերներիս կոչով՝ չփորձել նման հարցերի քննարկման ժամանակ օգուտ քաղել:

Վերջացնեմ, Դեր-Էլ-Զոր այցելությանս ժամանակ արտասանված բառերով. «Անգամ հիմա, մեր օրերում, բավական է մի թեթև ավազը փորել, որպեսզի գտնվեն մարդկային ոսկորներ: Դեր-Էլ-Զորը հարող գետը կանադացի հայերի և ամբողջ աշխարհի հայերի համար պատմական է հանդիսանում: Նրա ջրերում իրենց հանգիստը գտան հազարավոր սպանվածներ: Վերադառնալով այստեղ, ես մտովի տեղափոխվում եմ 1915 թվականը»:

Հույս ունեմ, որ բոլոր պատգամավորները միաձայն կդատապարտեն անցյալ տարիների հանցագործությունները, որպեսզի այլևս մեր մոլորակի վրա չլինեն ցեղասպանություններ, խտրականություններ և կոտորածներ:

ՄԻՇԵԼ ԴԱՎԻՈԼ (Առնքսիք, Կվեբեկի խմբակցություն)

Տիկին նախագահող, ես ցանկանում եմ մի հասարակ՝ հարց տալ պատգամավորին: Ես գիտեմ, որ նա միշտ եղել է իր համայնքի շահերի պաշտպանը: Մեկ անգամ չէ, որ իր ելույթում նա հիշատակում է մարդկանց, որոնք 1915թ. իրադարձությունները բնութագրում են որպես ցեղասպանություն:

Կառավարության ուղղման մեջ «ցեղասպանություն» տերմինը փոխարինվել է «ողբերգություն» բառով: Ռեֆորմիստական կուսակցության կողմից կրկին ներկայացված ուղղումն առաջարկում է «ցեղասպանություն» բառը նորից մտցնել առաջարկի տեքստի մեջ: Ես ուզում եմ հարցնել

պատգամավորին, համաձա՞յն է նա, որ 1915թ. իրադարձությունների մասին խոսելիս, պետք է օգտագործել «ցեղասպանություն» բառը:

ՍԱՐԳԻՍ ԱՍԱՏՈՒՐՅԱՆ

Տիկին նախագահող, ինչպես իմ ելույթում արդեն ասել եմ, լավ կլիներ, եթե պատգամավորն ինձ տեղյակ պահեր իր ծրագրերի մասին: Եթե նա խորհրդակցեր ինձ հետ, մենք կկարողանայինք միասնականորեն, բոլորին բավարարող նախագիծ պատրաստել: Ցավոք պիտի կրկնեմ, որ նա այդ չարեց: Մենք այս դրության մեջ հայտնվեցինք Կվեբեկի խմբակցության գործելակերպի պատճառով և ոչ կառավարության քաղաքականության մեղավորությամբ: Կվեբեկի խմբակցությունը, ռեֆորմիստների կուսակցությունը և մեր կուսակցությունը կարող էին միասնականորեն պատրաստել և ներկայացնել տվյալ առաջարկությունը: Մենք հենց այդ ենք ուզում, այդպես ես գործել եմ անցյալ տարի և մտադրված էի նույնն անել նաև այս տարի: Ցավում եմ որ իրադարձությունները այլ սցենարով զարգացան:

ԷԼԵՆԻ ՔԱԿՈՊԱՆՈՍ (Սեն-Դենի, լիբերալ կուսակցություն)

Տիկին նախագահող, ես կուզեյայի սկսել հայկական համայնքի ներկայացուցիչներին ողջունելուց, նաև բոլոր կանադացի հայերին, որոնց հետ երկար տարիներ հաճույք եմ ունեցել աշխատել:

Ես այսօր պատիվ ունեմ ներկայացնել այդ համայնքի մի մասին, որը ներկա է Պալատի այսօրվա նիստին: Նաև ուզում եմ շնորհավորել Դոն Վալեյ-Նորդի իմ գործընկերոջը, այդ համայնքի և լիբերալների կառավարության անդամին, այս հարցի ուղղությամբ կատարված աշխատանքի համար: Ես, ինչպես և նա, ցավում եմ, որ Կվեբեկի խմբակցության պատգամավորը խաղում է համայնքի զգացմունքների վրա: 20-րդ դարը դարձավ երկու համաշխարհային պատերազմների և տեղային բազմաթիվ կոնֆլիկտների վկա: Այսօր շատ երկրներում մարդկության դեմ հանցագործություններ են կատարվում: Դրանք երկրներ են, որտեղ գործադրվում են տանջանքների կիրառումը, տեղահանությունը, իրենց քաղաքացիական բնակչության ոչնչացումը:

Մենք ականատեսներն ենք այն բանի, թե ինչպես են հալածվում փոքրամասնությունները ռասայական, կրոնական պատկանելության պատճառով: Այդ անմարդկային գործողությունները շարունակում են տեղի ունենալ, նման հանցագործությունները դատապարտող ժնևյան կոնվենցիային հակառակ:

Նյուրնբերգյան դատավարությունն առաջինը դատապարտեց մարդկության դեմ կատարված հանցագործությունների հեղինակներին: Այդ հանցագործությունները իրենց մեջ ներառում են պատերազմից առաջ կամ նրա ժամանակ քաղաքացիական բնակչության դեմ ձեռնարկած ոչնչացումը, տեղահանությունը, սպանությունները և այլ անմարդկային միջոցառումները, ինչպես նաև կրոնական, ռասայական ու քաղաքական նկատառումներից ելնելով հետապնդումները:

Միջազգային հանրությունը ճանաչեց հոլոքոստը, նշելով ամեն տարի զոհերի հիշատակի օրը: Չնայած դրան, մենք շարունակում ենք ապրել մի աշխարհում, որտեղ մինչև այժմ կիրառվում է էթնիկական մաքրումների գործելակերպը, ինչի մասին վկայում են նախկին Հարավսլավիայում կատարված վերջին իրադարձությունները: Կարո՞ղ ենք մենք լինել միջազ-

գային հանրության ակտիվ անդամ և թույլ տալ նման հանցագործություններ: Կարծում եմ, որ ոչ: Մենք պետք է միջազգային մակարդակով հայտարարենք, որ մարդկության դեմ հանցագործություններն անընդունելի են: Կարող է պատահել, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին օսմանյան թուրքերի կողմից իրականացված հայերի ցեղասպանությունը որպես ազգային քաղաքականության գործիք, հանդիսանում է ցեղասպանության առավել սարսափելի օրինակներից մեկը: Ամենատխուրն այն է, որ ի տարբերություն Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ տեղի ունեցած հրեաների ցեղասպանության, համաշխարհային հանրությունը չփորձեց ոչ դատապարտել ռազմական հանցագործությունները, ոչ էլ ձևականորեն ընդունել, որ կոտորածը տեղի է ունեցել:

Դուք կհարցնեք, ինչու՞ է այդքան կարևոր 80 տարի առաջ կատարված իրադարձության ճանաչումը:

Մենք պետք է միշտ հիշենք, որ անցյալի սխալները կկրկնվեն, եթե դրանից դասեր չքաղենք:

Փորձենք երևակայել, ի՞նչ կլիներ, եթե այդ տարիներին միջազգային հանրությունը դատապարտեր այդ հանցագործությունը: Տեղի կունենա՞յի Երկրորդ համաշխարհայինի սարսափները: Կարող է պատահել, որ ոչ: Մենք ոչ կարող ենք վերակենդանացնել մեռյալներին, ոչ էլ փոխել անցյալը, սակայն անհրաժեշտ է սահմանել հիշատակի շաբաթ, ինչպես անցյալ տարվա ապրիլին առաջարկում էր Դոն Վալեյ-Նորդի իմ կոլեգան: Ապագա սերունդները պետք է իմանան անցյալի ողբերգական իրադարձությունները, որպեսզի ապագայում թույլ չտան դրանց կրկնությունը: Եվրոպական միության որոշ երկրներ, մասնավորապես Իտալիան, Ֆրանսիան, Իսրայելը, իսկ վերջերս նաև Ռուսաստանը, խորհրդարանական մակարդակով, պաշտոնապես ճանաչել են այդ ցեղասպանությունը սակայն համաշխարհային հանրությունը անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկել, որպեսզի դատապարտի մարդկության դեմ կատարված այդ սարսափելի հանցագործությունները: Մեր կառավարությունն ընդունում է այդ ողբերգական միջադեպը, որի զոհերն են դարձել օսմանյան թուրքերի ձեռքով ընկած 1,5 միլիոն մարդ:

Մենք գիտակցում ենք միջազգային հանրության բոլոր անդամների կողմից այդ ողբերգության ճանաչման անհրաժեշտությունը: Ահա թե ինչու մենք կողմնակից ենք մարդկության դեմ իրականացված հանցագործությունների հիշատակի շաբաթ սահմանելու առաջարկությանը:

Մեր երկիրը ունի մարդու իրավունքների ջատագովի համբավ: Կանադացիները դատապարտում են ցեղասպանությունը և բռնությունը, որպես պետական քաղաքականության մեջ օգտագործվող գործիք: Վերը թվարկած սարսափելի հանցագործությունները հանդուրժանոթ են: Սակայն ոչ բոլորը գիտեն ևս մեկ ողբերգության մասին, որը տեղի է ունեցել 1922 թվականին Փոքր Ասիայում:

Առաջին համաշխարհային պատերազմի վերջին, Փոքր Ասիայի շրջանում, ներկայիս Թուրքիայի արևմտյան մասում, բնակվում էին մոտ երկու միլիոն հույներ: Հույները այստեղ բնակություն են հաստատել երեք հազարամյակի ընթացքում: 1922թ. հույները, ինչպես և հայերը ու Թուրքիայի մյուս ազգային փոքրամասնությունները դարձան էթնիկական մաքրման քաղաքականության զոհերը: Այդ ողբերգական տարվա ամռան

ընթացքում, Փոքր Ասիայում, ներկայիս Թուրքիայի հիմնադիր Մուսթաֆա Քեմալի բանակը ոչնչացրեց 600 հազար հույների: Մեկ ու կես միլիոն մարդ ստիպված էին թողնել իրենց տները և ապաստան գտնել Հունաստանում: Այդ գործողությունները եզակի և ինքնաբուխ բնույթ չէին կրում,այլ հանդիսանում էին նոր թուրքական պետության կողմից սառնասրտորեն, կանխամտածված էթնիկական մաքրման քաղաքականության տրամաբանական ավարտը:

Այդ քաղաքականության ընթացքում թուրքական պետության կողմից ավերվել են հունական եկեղեցիներ, դպրոցներ և անգամ քաղաքներ: Օտարերկրյա դիվանագետներ, լրագրողներ, նաև հազարավոր մարդիկ դարձան այդ բարբարոսության վկաները, սակայն միջազգային հանրությունը ոչինչ չարեց, որպեսզի դատապարտի այդ հանցագործության մեղավորներին:

Սիացյալ նահանգները, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Իտալիան նավատորմ և զորքեր ունեին Առաջավոր Ասիայում, սակայն այդ պետությունները չցանկացան խառնվել իրադարձություններին: Այդ երկրների մերժումը դատապարտել թուրքական կառավարության դաժան ակցիաները, հետագայում ոգևորեցին մյուս ցեղասպանությունների կազմակերպիչներին և հեղինակներին: Անպատիժ ագրեսիան ծնում է նոր հանցագործություններ: Արդեն չորս տարի է, ինչ մենք դառնում ենք նախկին Հարավսլավիայի ցնցող աղետների ականատեսները: Բոլոր ռազմական գործողությունները ուղեկցվում են քաղաքացիական բնակչության կոտորածներով, տարածքների էթնիկական մաքրմամբ: Ռազմական հանցագործությունների տրիբունալը, որտեղ ներկայացված է նաև Կանադան, ներկայումս ուսումնասիրում է այդ ողբերգական իրադարձությունների հանգամանքները:

Այդ հետաքննությունը, անկասկած, ի հայտ կբերի նախկին Հարավսլավիայում տեղի ունեցող իրադարձությունների ողբերգական և տխուր իրողությունը: Բռնությունները չեն դադարում: Որպեսզի դրանում համոզվենք, բավական է դիտենք Սոմալիում, Ռուանդայում և Կամբոջայում տեղի ունեցող իրադարձությունները: Բոլոր այս դեպքերում էլ ոչնչացումն ու բռնի տեղահանությունը հանդիսանում են այդ պետությունների կողմից որդեգրած քաղաքականության բաղկացուցիչ մասը: Օտար պետությունները աչք են փակում կատարվող հանցագործությունների վրա:

Որակելով այդ պատմական իրադարձությունները, որպես հանցագործություն մարդկության դեմ, մենք հայտարարում ենք այդ վայրագությունների անընդունելիության և անթույլատրելիության մասին: Հանդիսանալով խորհրդարանականներ, մենք պետք է կոչ անենք միջազգային հանրությանը կրկնապատկել ջանքերը, մարդկության դեմ հանցագործությունները կանխելու համար:

Հետագայում ևս Կանադան կգլխավորի միջազգային հանրության բոլոր անդամների միջև խաղաղության պահպանման գործը համաշխարհային ասպարեզում: Մենք պաշտոնական ընդդիմության խրատների կարիքը չունենք: Բոլորս էլ գիտենք ընդդիմության գլխավոր նպատակը, որը միջազգային մակարդակով այդքան հարգված մեր երկիրը մասնատելն է: Կրկնում եմ, մեզ պետք չեն ընդդիմության դասերը: Ինչպես ասաց Դոն

Վալեյ-Նորդի իմ կոլեգան, մեր ընդդիմախոսների բառերը շատ բան չարժեն:

Կվեբեկում վերջին հանրաքվեի ժամանակ, մենք համոզվեցինք էթնիկական համայնքների նկատմամբ ընդդիմության հարգանքի իրական արժեքի մեջ:

Ես ապրել եմ Կվեբեկում, մեծացել այնտեղ և երկար տարիներ պայքարել ռասիզմի ու խտրականության բազմաթիվ նշանների դեմ:

ՕՍԼԱՆԴՈ ՆՈՒՆՅԵՍ (Բուրասա, Կվեբեկի խմբակցություն)

Տիկին նախագահող, ես մեծ ուշադրությամբ լսեցի Սեն-Դենիի կոլեգայի ելույթը: Պե՞տք է ասեմ, որ Կվեբեկի իշխանությունները հարգում են փոքրամասնությունների իրավունքները: Սա շատ բաց միություն է: Կարող եմ ինձ բերել որպես օրինակ: Ես ֆրանսալեզու պատգամավոր չեմ, ընտրվել եմ էթնիկական համայնքների ներկայացուցիչների և ֆրանսալեզու ընտրողների մեծ մասի կողմից: Ինձանից առաջ ելույթ ունեցող պատգամավորը ցեղասպանությունը որակեց որպես «ողբերգական» միջադեպ: Դա շատ ավելին է, քան ողբերգական միջադեպը: Սա 1,5 միլիոն մարդու ոչնչացումն է, 500 հազար մարդու բռնագաղթը, բազմաթիվ եկեղեցիների ու վանքերի ավերումը, դա հայերի սփռումն է գրեթե ողջ աշխարհով մեկ: Զարմանում եմ, որ Կանադայի կառավարությունը մերժում է այդ ցեղասպանության ճանաչումը, որը պաշտոնապես ճանաչվել է մյուս երկրների կողմից, մասնավորապես Լատինական Ամերիկայի երկրների՝ Ուրուգվայի և Արգենտինայի կողմից: Կոլումբիայում հուշարձան է կառուցված և այլն: Դա անընդունելի է մի երկրի համար, որը հռչակում է մարդու իրավունքների պաշտպանությանը և ժողովրդավարությանն իր ներքին կյանքի մասին: Համարձակվում եմ հարցնել գործընկերոջս, թե ինչպե՞ս կարող է նա բացատրել կանադական կառավարության կողմից համառորեն դրսևորվող չկամությունը ճանաչելու այդ ցեղասպանությունը, ինչպես որ այն կա:

ԷԼԵՆԻ ԲԱԿՈՊԱՆՈՍ (Սեն-Դենի, լիբերալ կուսակցություն)

Տիկին նախագահող, այժմ ես կրկին կկարդամ ընդդիմության պատգամավորի համար մեր կողմից Պալատին առաջարկված ուղղումը. «...հայերի ողբերգությունը, որը հանգեցրեց 1,5 միլիոն մարդու ոչնչացմանը»: Կանադական կառավարությունը երբեք չի ասել, որ չի ճանաչում այդ կոտորածը: Ինչ վերաբերում է Կվեբեկի նահանգի ժողովրդավարությանը, ուզում եմ հիշեցնել ընդդիմության իմ գործընկերոջը, որ հենց Կանադան է ճանաչվել որպես առավել ժողովրդավարական, հանդուրժողական ու ազատ երկիր: Մեր կառավարությունը միշտ էլ իր պաշտպանության տակ է վերցրել նրանց, ովքեր չեն կարողացել իրենց պաշտպանել: Կրկին ասեմ, որ այն միշտ էլ ճանաչել է 1,5 միլիոն հայերի ոչնչացման փաստը:

ՍԱՐԳԻՍ ԱՍԱՏՈՒՐՅԱՆ (Դոն Վալեյ-Նորդ, լիբերալ կուսակցություն)

Տիկին նախագահող, ինձ շատ դուր եկավ Սեն-Դենիի պատգամավորի ելույթը: Սեն-Դենիում բնակվում են հայկական ծագումով բազմաթիվ կանադացիներ: 1939թ., երբ Ադոլֆ Հիտլերը զավթում էր Եվրոպան, ոչնչացնելով տարբեր երկրների հրեաներին, նրան հարցրեցին, թե ինչպե՞ս կարծագանքի ապագա սերունդը հոլոքոստին՝ նրա կողմից արծակված ցեղասպանությանը: Նա պատասխանեց. «Ո՞վ է այսօր հիշում Հայաստանում կատարված վայրագությունների, հայերի ցեղասպանության մասին»:

Կարծում եմ, պատգամավորը կհամաձայնվի ինձ հետ, որ եթե աշխարհը ժամանակին դատապարտեր հայերի ցեղասպանությունը, 67 տարի անց չէր լինի թուրքական զորքերի կողմից Հյուսիսային Կիպրոսի զավթումը:

ԷԼԵՆԻ ԲԱԿՈՊԱՆՈՍ

Տիկին նախագահող, ինչպես արդեն ասացի իմ ելույթում, մենք երբեք չպետք է մոռանանք պատմությունը: Ես համոզված եմ, որ եթե այդ տարիներին աշխարհը դատապարտեր հայկական ողբերգության մեղավորներին, ապա չէին լինի կիպրոսյան իրադարձությունները:

ՍՈՐԻՍ ԲԵՐՆՅԵ (Մեգանտիկ-Կոնտոն-Ստանստիդ, Կվեբեկի խմբակցություն)

Տիկին նախագահող, երջանիկ եմ մասնակցելու մտքերի փոխանակմանը: Այսօրվա քննարկումները դրդված են Աունթսիքի իմ կոլեգայի ներկայացրած առաջարկով: Այդ առաջարկությունը լիովին համընկնում է 1994թ. Դոն Վալեյ-Նորդի պատգամավորի կողմից ներկայացված առաջարկի հետ: Փոքր-ինչ զարմացած եմ Դոն Վալեյ-Նորդի և Սեն-Դենիի մեր գործընկերների ռեակցիայից, որոնք մեղադրում են ընդդիմությանը իրենց շահադիտական նպատակների հետապնդման մեջ:

Կրկնեմ՝ այսօրվա առաջարկության տեքստը բառ առ բառ համընկնում է մեկ տարի առաջ Դոն Վալեյ-Նորդի պատգամավորի առաջարկած տեքստի հետ:

Դոն Վալեյ-Նորդի լիբերալ-պատգամավորի առաջարկությունը հենց իր կուսակցության ճնշման տակ, 1994-ին հանվեց քվեարկությունից: Պաշտոնական ընդդիմությունը, գիտակցելով այդ խնդրի կարևորությունը, որոշել է կրկին վերադառնալ Պալատում այդ հարցի քննարկմանը: Այդ որոշումը թելադրված է նաև անհանգստությամբ, որ կառավարությունը մարդու իրավունքների պաշտպանության խնդրին է նայում միջազգային առևտրի շահերի պրիզմայի միջով:

Ցանկանում եմ խոսել կանանց հարցերով պետական քարտուղարի կողմից առաջարկված ուղղման մասին: Ուղղման մեջ առաջարկված է «ցեղասպանություն» բառը փոխարինել «ողբերգություն» բառով: Մեր լիբերալ գործընկերները գերադասում են խոսել ողբերգության, այլ ոչ թե ցեղասպանության մասին: Չեմ կարծում, որ կարելի է համեմատել այս երկու տերմինները:

Ամեն օր, ճանապարհներին վթարների, դժբախտ պատահարների հետևանքով զոհվում են մարդիկ: Առավոտյան թերթում ես կարդացի Մոնտերեժիում տեղի ունեցած ավտովթարի մասին հաղորդումը: Այնտեղ զոհվել են երեք երիտասարդներ: Լրատվության վերնագիրը սկսվում էր «ողբերգություն» բառով: Ողբերգություն ընտանիքի, բարեկամների, ընկերների համար...

Անցյալ շաբաթ, ապրիլի 18-ին, Օկլախոմա-Սիտիի ողբերգության մասին լուրը տարածվեց ողջ աշխարհով մեկ, որտեղ պայթյունի հետևանքով զոհվեց մոտ 200 մարդ:

Չնայած այդ միջադեպերի լրջությանը, ողբերգականությանը, անկեղծ լինենք, կարելի՞ է համեմատել այդ դժբախտությունները մի ամբողջ ժողովրդի կազմակերպված ոչնչացման հետ:

"La ruse" բառարանում «ողբերգություն» բառի երկու բացատրություն է տրված: Կարծում եմ, բառերը պետք է ունենան մեկ իմաստ: Ասում են,որ օրենսդիրը այնպես է խոսում,որ ոչինչ չասի: Պատահական չէ, որ կանանց հարցերով պետական քարտուղարը կառավարության անունից առաջարկում է իր ուղղման մեջ «ցեղասպանություն» բառը փոխարինել «ողբերգություն» բառով: Դրա ետևում կանգնած է այլ ենթատեքստ, քան ընդդիմության կողմից առաջ քաշված առաջարկության շրջանակներն ընդլայնելու ցանկությունը: Ի՞նչ է նշանակում «ողբերգություն» բառը: Ի՞նչ բացատրություն է տալիս "La ruse"-ը:

Գրական իմաստով դա «թատերական բեմադրություն է, որի այուժեն կառուցված է պատմական փաստերի կամ առասպելի հիման վրա և զարգանում է դրամայի օրենքներով»:

Կարծում եմ, որ «ողբերգություն» բառով կառավարությունը ցանկանում է քողարկել իրական դրությունը: Ցեղասպանությունը, դա ժողովրդի կազմակերպված ոչնչացումն է: Սա միևնույն բառը չէ: Կրկնում եմ, բառերը պետք է ունենան մեկ իմաստ:

Ոչինչ չի մնում, քան հետևություն անել, որ կառավարությունը ցանկանում է պակասեցնել, նվազեցնել այս դարասկզբին հայերի վերապրած իրադարձությունների կարևորությունը:

Արդյո՞ք կարելի է համեմատել ողբերգության հետ ժողովրդի ռասայական ու կրոնական պատկանելության պատճառով 1,5 միլիոն մարդու ոչնչացումը, 500 հազար մարդու տեղահանությունը, երկու հազար եկեղեցու ավերումը:

Կառավարությունը ցանկանում է, որպեսզի մարդու իրավունքները հարգող և ժողովրդավարության օրինակ հանդիսացող կանադական խորհրդարանը, մեր Պալատն այս իրադարձությունները որակեն որպես «ողբերգություն»: Սա անհեթեթություն է:

Իմ գործընկերները այսօր արդեն հարց են դրել թե ինչու՞ կանադական կառավարությունը, առանց տատանվելու խոսում է Ռուանդայի ցեղասպանության մասին և այդքան վճռականություն է ցուցաբերում հայկական հարցի նկատմամբ:

Աունքսիքի գործընկերները արդեն խոսել են այն մասին, որ կանադական կառավարությունը երկար տարիներ շարունակ, տարբեր մակարդակով առևտրի զարգացման վերաբերյալ բանակցություններ է վարում թուրքական կառավարության հետ:

Ներկա կառավարության ընտրման պահից, նրա կողմից բազում որոշումներ են ընդունվել, որոնք վկայում են մարդու իրավունքների հարցերի նկատմամբ առևտրական շահերի գերակայության մասին:

Հիշեցնում եմ, մի շարք ասիական երկրներ կատարած կառավարական այցելության մասին, որի ընթացքում պրեմյեր-մինիստրը համառորեն պնդում էր այդ տարածաշրջանի երկրների հետ առևտրական կապերի ընդլայնման անհրաժեշտության վրա:

Բոլոր կանադացիները, այդ թվում նաև պաշտոնական ընդդիմության ներկայացուցիչները, գիտակցում են երկրի տնտեսական զարգացման գործընթացում արտաքին առևտրական կապերի ընդլայնման մեծ դերը: Սակայն, արդյո՞ք կարելի է հասնել դրան ամեն գնով: Այդ դեպքում կարելի՞ է արհամարհել մեր հիմնարար սկզբունքները, մասնավորապես,

մարդու իրավունքների հարցը: Հավանաբար ոչ, և հենց այդպիսի պատասխան կուզենար ստանալ ընդդիմությունը կառավարությունից: Մենք կուզենայինք կտրական «ոչ» լսել և ոչ միայն մեր Պալատում, այլ նաև նրա պատերից դուրս: Այո, Կանադան միջազգային առևտրի համար բաց երկիր է: Կանադան ցանկանում է վերացնել միջազգային առևտրի զարգացմանը խոչնդոտող արգելքները: Սակայն վարչապետի, արտաքին գործոց նախարարի, կառավարության, բոլոր պատգամավորների իրավունքի և իրավասության տակ է՝ պնդել մարդու իրավունքների հետ կապված հարցերի գերակայության վրա:

Ես գիտեմ, որ իմ ժամանակը լրանում է և վերջում ցանկանում եմ ասել, որ մենք իրավունք չունենք զբաղվելով բառախաղությամբ՝ նենգափոխել հասկացությունները: Պետք է իրերը կոչել իրենց անուններով: Եթե խոսում ենք ցեղասպանության մասին,ապա մենք խոսում ենք հենց ցեղասպանության մասին: Բառերը պետք է ունենան իմաստ, մեկ նշանակություն, և հենց այդ կտրվածքով էլ պետք է դիտել և ընդունել այսօր ներկայացված առաջարկությունը:

ՍԱՐԳԻՍ ԱՍԱՏՈՒՐՅԱՆ

Տիկին նախագահող, երկու ժամվա ընթացքում արդեն երրորդ անգամն եմ դիմում Կվեբեկի խմբակցության պատգամավորներին կոչով, համապատասխանեցնելու իրենց բառերն ու գործողությունները: Արդյո՞ք նա պարտավորվում է Պալատին բայեխոսել Կվեբեկի վարչապետի՝ Կվեբեկի խմբակցության նախկին ղեկավարի առջև, Մոնրեալում կամ Կվեբեկում 1915թ հայերի ցեղասպանության զոհերին նվիրված հուշարձանի կանգնեցման համար: Այո՞, թե՞ ոչ:

ՄՈՐԻՍ ԲԵՐՆՅԵ

Տիկին նախագահող, հիշեցնում եմ Դոն Վալեյ-Նորդի պատգամավորին,որ արդեն 1980թ. Կվեբեկը ճանաչել է հայերի ցեղասպանությունը: Ինձ թվում է, որ Աունթսիքի իմ գործընկերը արդեն պատասխանեց Դոն Վալեյ-Նորդի պատգամավորին: Մոնրեալի քաղաքապետարանը քաղաքագլխի գլխավորությամբ, մտադրված էր կառուցել հայերի ցեղասպանությանը նվիրված կոթողը:

Ընտրարշավի ժամանակ, արտաքին առևտրի նախարարի ճնշման հետևանքով, Մոնրեալը ստիպված էր հրաժարվել այդ գաղափարից: Մինչ այժմ Մոնրեալի քաղաքագլուխը չի հերքել կառավարության անդամներից մեկի հակազդեցության հետևանքով նրա չիրականացված նախագծի մասին տեղեկատվությունը: Պատճառ չեմ տեսնում, թե ինչու Մոնրեալը, Կվեբեկի կառավարությունը, որոնք արդեն ընդունել են հայերի ցեղասպանությունը, պետք է հրաժարվեն մեր ժողովրդին, ամբողջ աշխարհին այդ հանցագործության մասին հիշեցնելու գաղափարից՝ կանգնեցնելով ցեղասպանության զոհերի հուշարձանը: Մենք պնդում ենք, որ 1915թ. իրադարձությունները պետք է դիտվեն որպես ցեղասպանություն՝ ժողովրդի նպատակաուղղված, սիստեմատիկ ոչնչացում:

Դոն Վալեյ-Նորդի պատգամավորը իր ելույթում հիշատակում է Հոլոքոստը՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հրեա ժողովրդի ցեղասպանությունը:

Այսօր քննարկվող առաջարկության նպատակն է հայերի ցեղասպանության ճանաչումը: Մենք դատապարտում ենք մարդկության դեմ

կատարված այդ հանցագործությունը, և ես վստահ եմ, որ, և պաշտոնական ընդդիմությունը, և Կվեբեկի կառավարությունը ողջունում են հուշարձանի կառուցման գաղափարը:

ՖԻԼԻՊ ՊԱՐԵ (Լուի-Էբեր, Կվեբեկի խմբակցություն)

Տիկին նախագահող, ես կուզենայի զուգահեռ անցկացնել միջազգային ամնիստիայի նախագահի խոսքերի և վարչապետի արտահայտության միջև ու խնդրել իմ գործընկերոջը մեկնաբանել: Պյեր Սանեն՝ միջազգային ամնիստիայի նախագահը, Օտտավա կատարած իր վերջին այցելության ժամանակ ասաց հետևյալը. «Մարդու իրավունքների պաշտպանության և հարգանքի համար պայքարը պետք է կրի գլոբալ և համապարփակ բնույթ, առանց որի այն նախապես պարտության կմատնվի»: Այժմ տեսնենք, թե ինչ է ասել վարչապետը իր առաջին ասիական այցելության ժամանակ. «Ես կարող էի ճառեր արտասանել մարդու իրավունքների մասին, սակայն գերադասում եմ բացել շուկաներ, զարգացնել առևտուրը: Վաղ թե ուշ պատնեշները կտապալվեն»: Արդյո՞ք կարող է իմ գործընկերը պատասխանել, թե ե՞րբ կտապալվեն պատնեշները: Հարյուր տարի անց, թե՞, կարող է պատահել երկու հարյուր տարի անց:

ՄՈՐԻՍ ԲԵՐՆՅԵ

Տիկին նախագահող, Լուի-Էբերի իմ գործընկերոջ հարցը շատ արդիական է: Իմ ելույթի սկզբում ես խոսում էի այն մասին, որ կառավարության քաղաքականությունում առևտրական շահերը գերակշռում են մարդու իրավունքների պաշտպանության հարցերի նկատմամբ: Վարչապետի քիչ առաջ բերված խոսքերը դրա հրաշալի ապացույցն են: Սա անընդունելի է և չեմ վախենում ասել ամոթալի: Ժամանակին քիչ մեղադրանքներ չէին առաջ քաշվում նախորդ՝ պահպանողականների կառավարության հասցեին:

Չնայած դրան, կարծում եմ բոլոր պատգամավորները կհամաձայնվեն ինձ հետ, որ պարոն Մալրունին միշտ առաջնությունը տվել է մարդու իրավունքների խնդիրներին: Հիշեցնում եմ, որ դա եղել է պահպանողականների կառավարության օրոք. մեր քաղաքական լեզվով ասած՝ «աջերի» կառավարության: Ներկա կառավարությունը, որն իրեն անվանում է լիբերալ, իր որոշումներում առավել «աջ» է:

Վարչապետի խոսքերը,որոնք մեջբերվեցին Լուի-Էբերի գործընկերոջ կողմից, անկասկած լսվել են ողջ աշխարհում: Եթե մենք թողնենք դրանք առանց ուշադրության, ապա սպառնալիքի տակ կդրվեն մեր իրավունքների և ազատությունների ապագան: Դրա համար էլ այսօր ներկայացրեցինք այս առաջարկությունը: Մենք ցանկանում ենք, որպեսզի բոլոր պատգամավորները, որոնք իրենց ելույթներում շոշափում են մարդու իրավունքների խնդիրները, կողմ քվեարկեն մեր առաջարկությանը, սրանով իսկ կոչ անելով կառավարությանը՝ լինել առավել ուշադիր մարդու իրավունքների պաշտպանության մարդասիրական հարցերի նկատմամբ:

Մ. ԼԻՆՔՔԼՆ

Կարո՞ղ եմ ես հարց տալ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ցավում եմ, հարցերի և մեկնաբանությունների ժամանակը սպառվել է:

Ջ. ՊԵՏԵՐՍՈՆ (Ուիլլոուդեյլ, լիբերալ կուսակցություն)

Տիկին նախագահող, ես երջանիկ եմ արտահայտվել այսօր քննարկվող առաջարկության առիթով և շնորհավորել Աւնքսիքի պատգամավորին 1915թ. հայերի ցեղասպանությունը ճանաչելու նրա նախաձեռնության համար:

Հայկական ողբերգության՝ 1,5 միլիոն մարդկանց ոչնչացման 81-ամյա տարելիցի և մարդկության դեմ կատարված այլ հանցագործությունների առիթով ցանկանում եմ պաշտոնապես հայտարարել, որ մեր կուսակցությունը պաշտպանում է ամեն տարի՝ ապրիլի 20-ից 27-ը, իր մերձավորի նկատմամբ մարդու կողմից իրականացված հանցագործությունների հիշատակի շաբաթ սահմանելու և նշելու առաջարկությունը: Կիրակի օրը պատիվ ունեցա մասնակցել Տորոնտոյի հայկական համայնքի կողմից կազմակերպված արարողությանը: Երկու և կես ժամվա ընթացքում մենք հիշում էինք 1915թ. ցեղասպանությունը: Ինձ վրա մեծ տպավորություն թողեց մեծ թվով երիտասարդների ներկայությունը, նրանց ելույթները: Ցեղասպանության հիշատակը կազմում է նրանց կյանքի և մշակույթի անբաժանելի մասը: Առաջին անգամ չէր, որ մասնակցում էի նման միջոցառմանը: Լինելով պատգամավոր՝ բազմիցս հանդիպել եմ հայկական համայնքի իմ ընկերների հետ:

Դոն Վալեյ-Նորդի պատգամավորն առաջինն էր, որ հաղորդակից դարձրեց ինձ հայ ժողովրդի պատմությանը: Լինելով հայկական համայնքի նախագահը, նա համայնքի մյուս անդամների հետ միասին, մասնավորապես Տորոնտոյից ժամանած Արիս Բաբիկյանի հետ, որը ներկա է գտնվում Պալատի այսօրվա նիստին, պատմել են ինձ այդ սարսափելի ողբերգության՝ 1,5 միլիոն հայերի ոչնչացման մասին, միմիայն այն պատճառով, որ նրանք հայ էին: Այս ողբերգության արձագանքն ապրում է յուրաքանչյուր հայի հոգում, որտեղ էլ որ նա բնակվի: Ինչու՞ նրանք չեն կարող մոռանալ 81 տարի առաջ կատարված ողբերգությունը: Պատասխանը պարզ է: Ոչ մի անգամ թուրքական կառավարությունը չի ընդունել իր պատասխանատվությունը ցեղասպանության համար: Ինչպե՞ս կարող են լռության մատնել այդ պատմական փաստը կոտորածից փրկված մարդիկ, նրանց բարեկամները, երեխաները և թոռները, եթե այդ հանցագործությունների հեղինակները չեն ճանաչել իրենց մեղքը: Պետք է արիություն ունենալ ճշմարտության աչքերին նայելու համար և ոչ թե գլուխը թաքցնել ավազի մեջ: Ցեղասպանության ժխտումը՝ նրա զոհերի հիշատակի վիրավորանքն է: Այստեղ ամեն ինչ պարզ է: Այս ողբերգությունը տեղի է ունեցել: Հայերի ցեղասպանությունը պատմական փաստ է: Ինչու՞ ենք մենք տատանվում սատար կանգնել մեր եղբայրներին ու քույրերին՝ ճանաչելով այս հասարակ ու պարզ ճշմարտությունը: Պատասխանները պետք է փնտրել աշխարհի իրական քաղաքականության մեջ: Կարող է պատահել, որ գոյություն ունեն պատճառներ՝ որոնց մասին մեր կողմից ցանկալի չէ խոսելը: Օգտվելով պատգամավորի մանդատից՝ ես հրապարակավ դրել եմ հայերի ցեղասպանության ճանաչման հարցը: Այդ ճանաչումը դեռ քիչ հավանական է կամ էլ այն չի կարող արտահայտվել այնպես, ինչպես ցանկալի կլիներ:

Այսպես թե այնպես,ես մտադիր եմ սատարել այդ առաջարկությունը՝ մեր կուսակցության կողմից ներկայացված ուղղումով: Կարող է պատահել, մի օր հնարավորություն կգտնենք ճանաչելու այն, ինչպես դա արել

են մի շարք երկրներ, և որ 1,5 միլիոն հայերի ոչնչացումը իսկապես եղել է 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը:

Ինչու՞ է այդքան կարևոր խոսել ութսունամյա վաղեմություն ունեցող իրադարձության մասին: Հիշեցնեմ միայն, որ այն տարիներին, երբ պատրաստվում էր հրեաների ոչնչացման ծրագիրը, Հիտլերը հայտարարեց. «Ո՞վ կարող է ինձ կանգնեցնել: Ո՞վ է այսօր հիշում հայերի ցեղասպանությունը»:

Ահա թե ինչու չի կարելի մոռանալ: Եթե չնայենք պատմական իրողության աչքերին, չսովորենք անցյալի սխալների վրա, դա կնշանակի բարենպաստ հող պատրաստել նման հանցագործությունների համար:

Մենք վկաներն էինք բոսնիական ողբերգության, երբ մարդկանց սպանում էին այլ էթնոսի, այլ դավանանքի պատկանելու համար: Մենք տեսել ենք թե ինչպես են պատերազմներ ծագում՝ ազգային, ռասայական, կրոնական հողի վրա: Այս ամենը խորապես հակասում է մեր խորհրդարանի բոլոր կուսակցությունների, բոլոր պատգամավորների կողմից հարգված սկզբունքներին:

Կանադայում մենք ունենք ոչ միայն մարդու իրավունքների կանոնադրություն, այլ նաև իրավունքների խարտիա, որն արգելում է ռասայական, կրոնական, սեռական, տարիքային և այլ հատկանիշներով որևիցե խտրականություն:

Միջազգային մակարդակով Կանադան ստորագրել է մարդու իրավունքների ոլորտում բազմաթիվ փաստաթղթեր և պայմանագրեր: Ինչ վերաբերում է այսօրվա իրադրությանը Թուրքիայում, ապա պետք է նշել, որ թուրքական կառավարությունը պատերազմ է վարում Քրդական Բանվորական Կուսակցության (ՔԲԿ) դեմ, որը ձգտում է ստեղծել իր անկախ պետությունը: Թուրքական կառավարությունը ՔԲԿ-ի դեմ պայքարում գործի է դնում դաժան պատժամիջոցներ: Միանգամայն ակնհայտ է, որ Թուրքիայում տեղի են ունենում մարդու իրավունքների կոպիտ խախտումներ:

Օգտվելով միջազգային հանրության անդամի իրավունքից, Կանադան դատապարտել է այդ խախտումները: Անջատողականության խնդիրները պետք է լուծել քաղաքական,այլ ոչ թե ռազմական ճանապարհով: Հույս ունենք, որ մեր դաշնակիցների և թուրքական կառավարության հետ համագործակցելով կկարողանանք այդ ուղղությամբ առաջընթացի հասնել:

Երկու օր առաջ, հայերի ցեղասպանության ութսունամյա տարելիցի կապակցությամբ տեղի ունեցած հրաշալի արարողությանը, որի մասին ես ավելի վաղ խոսեցի, ինձնից բացի ներկա էին Դոն Վալեյ-Նորդի պատգամավորը, Սկարբորուգի պատգամավորը և սենատոր Խայդասը: Մենք բոլորս էլ հուզված էինք արարողությանը տիրող մթնոլորտով, հուզված՝ 1915թ. ցեղասպանությունը ճանաչելու, արդարությանը հասնելու երիտասարդների վճռակամությամբ: Նրանք ռազմատուգանքներ և միջազգային դատ չեն պահանջում: Նրանք միայն ուզում են, որպեսզի աշխարհը ճանաչի իրենց ժողովրդի վերապրած տառապանքները, որպեսզի աշխարհը ճանաչի հայերի ցեղասպանությունը: Այսօր, քննարկվող առաջարկությունը և մեր կուսակցության կողմից փոքր-ինչ ձևափոխված ուղղումը, դա դեռ միայն քայլ է՝ սակայն քայլ ճիշտ ուղղությամբ: Կարող է պատահել, դա բոլորովին այն չէ, ինչին կցանկանայինք միանգամից հասնել, սակայն մենք

հետագայում էլ ջանքեր կգործադրենք, որպեսզի հասնենք ավելինին: Շնորհավորում եմ Դոն Վալեյ-Նորդի պատգամավորին իր բոլոր ջանքերի համար, շնորհավորում եմ նաև առաջարկությանը սատարող Պալատի բոլոր պատգամավորներին:

ԻԱՆ ՄԱՔՔԼԵԼԼԱՆ (Էդմոնտոն, ռեֆորմիստական կուսակցություն)

Պարոն նախագահող, ես չեմ կասկածում, որ Ուիլլոուդեյլի պատգամավորը իր ելույթում անկեղծ էր, ի դեպ, ինչպես նաև այսօր Պալատում ելույթ ունեցող բոլոր պատգամավորները:

Այնուամենայնիվ, ինձ թվում է,որ այստեղ առկա է որոշ թերկասկածում: Խմբակցությունը, իսկ մինչ այդ նաև Կվեբեկի կուսակցությունն արդեն 1980 թվականին առաջադրել է հայերի ցեղասպանությունը ճանաչելու հարցը: Ութսունական թվականների սկզբում Կվեբեկի և Օնտարիոյի իշխանություններն այդ հարցի վերաբերյալ միաձայն բանաձև են ընդունել:

Սինչ այդ, քննարկելով այդ հարցը, ֆեդերալ կառավարությունը, թվում է թե, ջանում է նվազեցնել նրա նշանակալիությունը: Սրանով կարելի է բացատրել նաև լիբերալների այսօրվա ուղղումը, որով առաջադրում են հանել առաջարկությունից «ցեղասպանություն» տերմինը: Կարծում եմ սա կոչված է դարձնել առաջարկը առավել ընդունելի, մասնավորապես Թուրքիայի համար, մի երկրի, որի հետ մենք պահպանում ենք վոխշահավետ առևտրական հարաբերություններ:

Ի՞նչ է մտածում այս առիթով Ուիլլոուդեյլի պատգամավորը:

Ջ. ՊԵՏԵՐՍՈՆ

Պարոն նախագահող, ես չեմ կարող տալ այնպիսի պատասխան, որը կբավարարեր ինչպես Էդմոնտոնի պատգամավորին, այնպես էլ ինձ: Իմ կարծիքով, մենք պետք է հարմար պահ ընտրենք, որպեսզի ցեղասպանությունն անվանենք ցեղասպանություն: Ցավոք, կառավարությունները հաճախ արձագանքում են այս կամ այն իրադարձություններին ոչ այնքան արագ, որքան մենք կցանկանայինք: Միշտ չէ, որ անմիջապես կարելի է հասնել ցանկալիին: Սա ես հասկացա Պալատում իմ աշխատելու տարիներին: Հռոմը մեկ օրում չէր կառուցվել և առավել ևս մեկում չէ նորովի վերակառուցվել: Այս հարցում մենք փոքր քայլերով ենք առաջ ընթանում, քայլ առ քայլ ենք առաջ շարժվում: Միգուցե դա ոչ բավարար չափով է գոհացնում: Ինչևիցե, նկատի ունենալով միջազգային պարտավորությունները, արտաքին ճնշումը...

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հարգելի գործընկերներ, քանի որ արդեն ժամը 14.00-ն է, մենք անցնում ենք պատգամավորների հայտարարություններին:

Պալատը կրկին անցնում է առաջարկության և նրա ուղղումների ուսումնասիրմանը:

ԻԱՆ ՍԱՔՔԼԵԼԼԱՆ (Էդմոնտոն, ռեֆորմիստական կուսակցություն)

Պարոն նախագահող, իմ ելույթից առաջ կուզենայի մի քանի խոսքով տեղեկացնել մարդկանց, որոնք մեր մտքերի փոխանակման ընթացքին հետևում են հեռուստատեսությամբ և արձակել են մեր քննարկումների սկիզբը:

Խմբակցությունը առաջարկել է Կանադայի կառավարությանը դատապարտել 1915թ. թուրքերի կողմից իրականացված հայերի ցեղասպանությունը: Լիբերալները, ցանկանալով հանել խմբակցության կողմից մտցված առաջարկությունից «ցեղասպանություն» բառը, ներկայացրեցին իրենց ուղղումը: Լիբերալները համաձայն են, որ ցեղասպանությունը տեղի է ունեցել, սակայն ելնելով քաղաքական նկատառումներից, չեն ցանկանում գործածել այդ տերմինը: Մեր հերթին, մենք էլ առաջադրեցինք մի ուղղում, որը կրկին մտցնում է «ցեղասպանություն» բառը, ցանկանալով պահպանել խմբակցության կողմից ներկայացված առաջարկության նախկին տեքստը: Այսօրվա քննարկումները չափազանց կարևոր են: Թեև այդ իրադարձությունները վաղուց են տեղի ունեցել և նույնիսկ երկրագնդի մյուս ծայրում, նրանք ամեն օր դիպչում են մեզ բոլորիս և յուրաքանչյուրիս՝ առանձին:

Մի քանի տարի առաջ ես հրավիրված էի ճաշկերույթի: Այնտեղ ես ծանոթացա մի տղամարդու հետ, որը այժմ վաթսուն տարեկան է: Նա պատմելու հոյակապ ձիրք ուներ և մեզ տեղեկացրեց իր կյանքի հետ կապված մի շարք պատմությունների հետ: Նրա անունն էր Ջեկ Կոեն: Նա պատմեց մեզ իր մանկության մասին, որն անցկացրել էր Մոնրեալի մանկատներից մեկում, իր կրտսեր եղբոր հետ: Նա չորս տարեկան էր, երբ մի անգամ տեսավ մի մարդու, որն եկել էր այնտեղ երեխա ընտրելու համար: Ինքնապահպանման բնազդից և ընտանեկան ապահով ապաստարան գտնելու ցանկությունից մղված, երկու եղբայրները էլ նետվեցին դեպի տղամարդը և կպան նրանից՝ չթողնելով անգամ քայլ անել: Ջեկը զարմանալի տաղանդով և հումորի մեղմ զգացումով կարողանում էր վերարտադրել իր մանկության ողբերգական էջերը: Մենք ծիծաղում էինք, երբ նա նկարագրում էր կնոջ զարմանքը, որը մեկ աղջկա փոխարեն՝ ամուսնու կողքին տեսավ երկու տղաների (տղամարդը Էդմոնտոնից ժամանել էր Մոնրեալ, որբ աղջիկներից մեկին որդեգրելու նպատակով):

Մենք ծիծաղում էինք, սակայն հոգու խորքում սգում որբուկների ողբերգությունը: Ջեկի և իր եղբոր նման հազարավոր երեխաներ ողջ մնացին մահվան ճամբարներում: Ջեկի ծնողները մորթվել էին թուրքերի կողմից, իսկ երեխաները երջանկություն ունեցան կենդանի մնալու: Ի՞նչ ընդհանրություն ունի այս պատմությունը այսօր քննարկվող հարցի հետ: Անկախ որևէ պատճառի, ինչի համար կառավարությունը չի ցանկանում ընդունել այս առաջարկությունը, որտեղ առկա է «ցեղասպանություն» բառը, չի կարելի ժխտել ցեղասպանությունը: Այն ժամանակ, երբ Կվեբեկը և Օնտարիոն դեռ 1980 թվականին միաձայն ընդունեցին բանաձև, որով կոչ էին անում թուրքական կառավարությանը ճանաչել պատմական փաստերը՝ մեր կառավարությունը ձգտում էր լռության մատնել ճշմարտությունը: Վստահ եմ, որ այդ դիրքորոշումը խորթ է բոլոր կանադացիներին: Վստահ եմ նաև. որ նշված ճշմարտության քողարկումը և թաքցնումը ներկայիս թուրքերի մեծամասնությանը հոգեհարազատ չէ: Պատմությունը պետք է ընդունել այնպես, ինչպիսին որ այն կա: Ես կուզենայի մի փոքր էքսկուրս կատարել դեպի անցյալը, հատկապես նրանց համար, ովքեր ոչ բավարար չափով են ծանոթ հարցի նախապատմությանը: Իրադարձությունները սկսվել էին ոչ թե 1915-ին. այլ շատ ավելի վաղուց՝ 19-րդ դարի վերջին: Հայերը իրենց հողի վրա բնակվում էին մոտ 3000 տարի: Թուրքերի երևան

գալով՝ սկսվեցին հայերի տանջանքները և ոչնչացումը: Իրադրությունը սրվեց 19-րդ դարի վերջին: 1915-ին, 16-ից մինչև 60-ն տարեկան բոլոր տղամարդիկ զորակոչվեցին: Յուրաքանչյուր պատմություն ունի երկու կողմ: Համաձայն թուրքերի, հայերը միացել են ռուսներին,իրենց դեմ համատեղ պայքարի համար: Թուրքերի տեսանկյունից սա էլ հանդիսացավ հայերի մասսայական բռնագաղթեցման պատճառը: Զոհերի քանակի մասին գոյություն ունեն տարբեր տվյալներ: Սակայն որքանո՞վ է կարևոր իմանալ սպանվել են 1,5 միլիոնը, թե 800000-ը: Սարսափելին հենց ցեղասպանության փաստն է: "Petit Kobert"-ը ցեղասպանությունը սահմանում է որպես «Կարճ ժամանակահատվածում էթնիկական խմբի կազմակերպված և մեթոդական ոչնչացում»: Մարդկանց ոչնչացումը՝ ցեղասպանություն է, դա ծանրագույն հանցագործություն է: Անթույլատրելի է բառախաղով զբաղվել: Ցեղասպանությունը, դա ցեղասպանություն է:

1915թ. ապրիլի 24-ը՝ թուրքերի կողմից իրականացված հայերի ցեղասպանության ելակետն է: Այդ օրը Թուրքիայի ներքին գործերի նախարարը հայտարարել է, որ հիսուն տարի անց միակ ողջ մնացած հայը կդառնա քանգարանային ցուցանմուշ:

Այսօր Թուրքիայում՝ իրենց ծագման երկրում, մնացել են 30-ից 50-ն հազար հայ, որոնց մեծ մասը բնակվում է Ստամբուլում: Միայն թուրքական իշխանությունների թույլտվությամբ հայերն իրավունք ունեն վերականգնել իրենց եկեղեցիները ու դպրոցները:

Հոլոքոստի նախօրյակին Հիտլերը հայտարարել է, «Ո՞վ է այսօր հիշում հայերի մասին»:

Հայերի ցեղասպանությունը հիմք հանդիսացավ ապագայում նմանատիպ այլ հանցագործությունների համար: Այն հիմք ծառայեց եվրոպական իրեաների մասսայական ոչնչացման համար: Այսօր, ներկա ժամին աշխարհում կատարվում են բազմաթիվ սարսափելի հանցագործություններ: Սրանց ակունքը՝ հայերի ցեղասպանության ժխտումն է:

Ո՞վ կխոսի բոլոր զոհվածների անունից: Ո՞վ կխոսի ապագա ցեղասպանությունների զոհերի անունից, եթե մենք չենք ճանաչում անցյալի հանցագործությունները, չենք հարգում իրենց՝ զոհերի հիշատակը: Մենք գիտենք, որ չենք կարող կասեցնել ժամանակի ընթացքը և հետ վերադառնալ: Մենք գիտենք,որ Կանադան կապեր է պահպանում Թուրքիայի հետ և հասկանում ենք, որ ներկայիս թուրքերի գերակշռող մասը ոչ մի ընդհանրություն չունի 1915թ. իրադարձությունների հետ, և ինչպես նաև մենք՝ գտնում են,որ այդ իրադարձությունները նույնքան սարսափելի են:

Իրենց մեծամասնությամբ մարդիկ լավն են, սակայն աներեսը աշխարհում շարունակվում են կատարվել հանցագործությունները: Թվում է, թե մենք այդպես էլ չսովորեցինք դասեր քաղել մեր սխալներից: Մեր օրերում էլ Կանադայում գտնվում են հոլոքոստը ժխտող մարդիկ: Նրանք ասում են, որ նման բանն անհնարին է: Ինչպե՞ս կարող է մարդկությունը այդքան դաժան լինել: Ինչպե՞ս կրթված մարդիկ կարող էին իրականացնել այդ սարսափելի հանցագործությունները հրեաների հանդեպ: Կարող է պատահել պատճառը նրանում է, որ մենք չենք հավատում նրան, ինչին չենք ցանկանում հավատալ: Մենք ապրում ենք ազատ հասարակությունում, որտեղ մարդիկ կարող են խոսել այն, ինչ ցանկանում են: Սակայն պատմությունն արտագրող մարդկանց՝ ռևիզիոնիստներին պետք է հա-

կաղրել ճշմարտությունը, պատմության մեջ տեղի ունեցած իրական փաստերը: Վերջացնեմ հետևյալ մտքով: Մենք մի ընդհանուր մարդկային ընտանիք ենք: Եվ անկախ մեր սեռից, մաշկի գույնից, սեքսուալ կողմնորոշումից մենք բոլորս էլ հանդիսանում ենք ընդհանուր արարչի զավակները: Նվաստացնել մեզնից մեկին, նշանակում է նվաստացնել բոլորին: Ամեն անգամ, երբ խախտվում են մարդու իրավունքները, երբ ռևիզիոնիստները ժխտում են պատմական փաստերը, փորձում են փոխակերպել դրանք, պատկառելիության քող գցելով պատմության անհրապույր փաստերի վրա, մենք բոլորս պետք է ոտքի կանգնենք և այդ փորձերին հակադրենք պատմական ճշմարտությունը: Սա պետք է մեզ, սա պետք է մեր երեխաներին:

ՍԱՐԳԻՍ ԱՍԱՏՈՒՐՅԱՆ

Պարոն նախագահող,ես ուշադիր լսեցի ռեֆորմիստ պատգամավորի ելույթը: Ուզում եմ հարցնել նրան,թե ինչու՞ է ցեղասպանությունից հետո՝ 81 տարի անց, թուրքական կառավարությունը ժխտում 1915թ. կատարված հանցագործությունները: Ինչու՞ Թուրքիան չհետևեց Գերմանիայի օրինակին, ընդունելով իր պատասխանատվությունը:

Այս հարցի վերաբերյալ Համայնքների Պալատի, կանադական խորհրդարանի այս կամ այն որոշումից անկախ, պատասխանատվության խնդիրը չի կարգավորվի: Թուրքիայի կառավարությունը պետք է ճանաչի իր պատասխանատվությունը: Ինչու՞ 81 տարի անց, Թուրքիան հրաժարվում է իր վրա վերցնել 1915թ. իրադարձությունների պատասխանատվությունը:

Ի. ՄԱՔՔԼԵԼԼԱՆ

Պարոն նախագահող, այդ հարցը անմիջականորեն վերաբերվում է այսօրվա մեր քննարկումներին:

Այն լուսաբանում է հեղհեղուկ իրավիճակը, որում գտնվում է կառավարությունը:

Ես համոզված եմ, որ մեր ընդդիմախոսների մեծ մասը միանգամայն համաձայն են առաջարկությունում «ցեղասպանություն» բառի գործածման հետ, սակայն բացահայտ աջակցել առաջարկությանը իր նախնական տեսքով, նրանց խանգարում են գեոքաղաքական և նույն պլանի այլ շահեր: Որքան հասկանում եմ, Թուրքիան իր խնդիրների լուծման ճանապարհին առաջ կընթանար, եթե ճանաչեր հայերի ցեղասպանությունը:

Երեք տարի առաջ Թուրքիան դիմել էր Եվրախորհուրդ, նրա կազմի մեջ ընդունվելու խնդրանքով: Խնդրանքը մերժվել էր Թուրքիայի կողմից 1915թ. ցեղասպանությունում իր պատասխանատվությունը ճանաչելու ժխտման պատճառով: Այդպիսին է Եվրախորհուրդ ընդունվելու պայմանը, որը Թուրքիան չի ցանկանում ընդունել: Թուրքիան ժխտում է ժողովրդի մասսայական ոչնչացման փաստը և խոսում է միայն պատերազմական զոհերի մասին:

Թուրքերը պնդում են,որ հայերը մարտնչում էին ռուսների հետ, և դրանով իսկ հանդիսանում էին Թուրքիայի թշնամիները, իսկ նրանք, ովքեր զոհվել են ձմեռային բռնագաղթի ժամանակ, մարտնչում էին ռուսական բանակի շարքերում:

Թուրքերը երկյուղում են, որ ընդունելով իրենց պատասխանատվությունը նրանք կկանգնեն պահանջատիրության փաստի առջև:

Ենթադրում եմ, լավագույնը, ինչ կարող է անել Թուրքիան, ապա դա ասել. «Մենք սխալ ենք եղել: Այլևս սա երբեք չի կրկնվի: Սա գիծ է մեր պատմության վրա: Մենք ընդունում ենք, որ դա սարսափելի է»: Հենց այդպես էլ վարվեց Գերմանիան: Անցյալ շաբաթվա վերջին ես ներկա էի մի հարսանյաց հանդեսի: Մտապահվեցին կնքահոր բառերը, ուղղած հարսին և փեսային. «Երբեք մի մոռացեք յոթ պարզ բառեր՝ ես ցավում եմ, ներիր ինձ, ես քեզ սիրում եմ»: Ինձ թվում է, եթե Թուրքիայի կառավարությունն ասեր հայերին. «Մենք ցավում ենք, ներեք մեզ և թող միասին խաղաղ ապրենք», սա կլիներ առաջին քայլը դեպի փոխադարձ ըմբռնում:

ՄՈՐԻՍ ԲԵՐՆՅԵ (Մեգանտիկ-Կոնտոն-Ստանստիդ, Կվեբեկի խմբակցություն)

Պարոն նախագահող, դուք ասացիք, որ ես մեկ րոպե ունեմ հարցի կամ կարճ մեկնաբանության համար: Ցանկանում եմ արտահայտվել Դոն Վալեյ-Նորդի պատգամավորի հարցի առիթով, որ ուղղված էր Էդմոնտոնի պատգամավորին: Հետաքրքրական է որ այդ հարցը նա տվեց ռեֆորմիստների կուսակցությունից մեր գործընկերոջը, ավելի շուտ նա պետք է դիմեր այդ հարցով կառավարությանը:

Հենց կառավարության ներկայացուցիչը՝ կանանց հարցերով պետական քարտուղարը առաջարկեց ուղղումը, որում խոսվում է ոչ թե ցեղասպանության, այլ հայերի ողբերգության մասին: Ինչ վերաբերում է թուրքական կառավարության վրա ճնշում գործադրելու անհրաժեշտությանը, որպեսզի այն ճանաչի հայերի ցեղասպանությունը, դրանում ես միանգամայն համաձայն եմ Դոն Վալեյ-Նորդի պատգամավորի հետ: Այնուհետև ուզում եմ Էդմոնտոնի իմ գործընկերոջը շնորհավորել իր ելույթի համար: Հաճախ, ռեֆորմիստ-պատգամավորներին լիբերալները ներկայացնում են որպես աջ կողմնորոշման մարդկանց: Ի դեպ, մարդու իրավունքների կոմիտեի անդամ իմ գործընկերոջ ելույթը հստակ և միանշանակ բացահայտեց նրա դիրքորոշումը մարդու իրավունքների հիմնահարցերի նկատմամբ:

Ես կուզենայի իմանալ պատգամավորի և իր կողմից ներկայացված կուսակցության կարծիքը հետևյալ հարցի վերաբերյալ: Արդյո՞ք պետք է, որ Կանադան զոհ գնա իր սկզբունքներին, ելնելով իր արտաքին առևտրի շահերից, գնա զիջումների մարդու իրավունքների հարցերում:

Ի. ՄԱՔՔԼԵԼԼԱՆ

Պարոն նախագահող, ես շնորհակալություն եմ հայտնում պատգամավորին իր սիրալիր խոսքերի համար:

Որևիցե երկրում մարդու իրավունքների հարցում իրադրությունը դեպի լավը փոխելու միակ միջոցը, դա նրա հետ երկխոսության մեջ մտնելն է:

Մարդու իրավունքների պահպանման գործում, որոշակի իրադրություններում միայն համագործակցելով այլ երկրների հետ կարելի է հասնել առաջադիմության: Եթե գոյություն ունի գեթ մի փոքր հնարավորություն բարերար ազդեցություն ունենալ երկրներից մեկում մարդու իրավունքների իրավիճակի վրա, որտեղ այդ ոլորտում ամեն ինչ չէ,որ բարեհաջող է, մենք պետք է պահպանենք և զարգացնենք նրա հետ կապերը,այդ թվում նաև առևտրական: Իսկ եթե որևէ կառավարություն, վարչակարգ բոլորովին հրաժարվում են մարդու իրավունքների հարգման և պահպանման

սկզբունքներից, մենք բարոյական իրավունք ունենք դադարեցնել որևէ հարաբերություններ այդ երկրի հետ:

ՖՐԵՆՍԻՍ Գ. ԼԵՓԼԱՆ (Արտաքին գործերի նախարարի խորհրդարանական քարտուղար, լիբերալ կուսակցություն)

Պարոն նախագահող, այսօր մենք քննարկում ենք Հայաստանում 1915թ. ապրիլյան ողբերգական իրադարձությունների վերաբերյալ կարևոր հարցը: Առաջարկվում է սահմանել և ամեն տարին նշել մարդկության դեմ իրականացված հանցագործությունների հիշատակի շաբաթ:

Այսօր ներկայացված առաջարկության նախագծում օգտագործված է «ցեղասպանություն» տերմինը: Այս տերմինը գործածության մեջ է մտել ոչ այնքան վաղուց, 1948թ, երբ ընդունվել է ցեղասպանության մասին միջազգային Կոնվենցիան:

Ներկայիս թուրքական կառավարությունը՝ Օտոմանյան կառավարություն չէ , որի վրա է ընկած կոտորածի պատասխանատվությունը: Իսկ «ցեղասպանություն» տերմինը ենթադրում է ցեղասպանության վերաբերյալ միջազգային Կոնվենցիայի կողմից վավերացված որոշակի պարտավորություններ:

Ես ողջունում եմ այսօրվա առաջարկությունը, քանզի այն պարտավորեցնում է մեզ, կանադացիներիս, խորհել պատմության դասերի մասին: Դժվար է անգամ պատկերացնել, թե ինչ դրական կողմեր կարելի է առանձնացնել այդ սարսափելի իրադարձություններից, որոնցով նշանավորվել է մեր դարի առաջին կեսը: Միլիոնավոր անմեղ զոհերի, այդ թվում ևև 1915-ի ապրիլին ոչնչացված հայերի մասին մտքերն անընդհատ հետապնդում են մեզ: Սակայն, կարող է պատահել, որ այդ դժբախտների մահը և տանջանքներն իզուր չէին: Նրանց խիզախությունը, մեր խղճի խայթը հանգեցրին նրան, որ մարդու իրավունքների ճանաչումը դարձել է պարտավորություն բոլոր պետությունների համար: Սա իր արտահայտությունը գտավ 1948թ ՄԱԿ-ի կողմից ընդունված մարդու իրավունքների համապարփակ Հռչակագրում: Այս փաստաթուղթը շարադրում է մարդու իրավունքները, և ինչը շատ կարևոր է, պետությունների պարտավորությունները, որոնք պետք է հարգեն և պաշտպանեն այդ իրավունքները:

Մարդու իրավունքների խախտումները վերաբերվում են մեզ բոլորիս, որտեղ էլ որ դրանք տեղի ունենան՝ խոչընդոտում են մարդկության առաջընթացին: Մարդու իրավունքների մասսայական, սիստեմատիկ կերպով կատարվող խախտումները սպառնալիք են ներկայացնում մեր բոլորի անվտանգության համար:

Արտաքին գործերի նախարարը որքան կարելի է լավ քննութագրեց իրադրությունը ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեում. «Եթե մենք վանենք մեր հայացքը մարդկային սարսափելի տանջանքներից, եթե մենք չընդդիմանանք մասսայական լրատվական միջոցների մարդատեացության քարոզչությանը, եթե մեզ չի կարող անհանգստացնել ընչազուրկ երեխաների ճակատագիրը, եթե մենք ոտքի չկանգնենք դեսպոտների, բռնակալների դեմ, եթե մենք չդատապարտենք հեղինակության հավակնող վարչակարգերի դաժան գործողությունները, որոնց իշխանությունը հիմնված է ահաբեկչության և զենքի վրա, ապա վաղը մենք կբախվենք շատ ծանր հետևանքների հետ»:

Որպեսզի խուսափենք ողբերգություններից, որոնք տեղի են ունենում աշխարհի տարբեր տարածաշրջաններում և որոնց մասին այսօր խոսվում է Պալատում, բոլոր կանադացիների շահերից է բխում մարդու իրավունքների խախտման դեմ պայքարը:

Հայկական կոտորածի ժամանակներից, որը տեղի է ունեցել ութսուն տարի առաջ, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում հասել են վիթխարի առաջընթացի:

Մարդու իրավունքների վերաբերյալ հռչակագրի ընդունումից հետո, ստորագրվել են բազմաթիվ միջազգային պայմանագրեր: Այս փաստաթղթերի տարրապատկերը շատ ընդգրկուն է՝ ցեղասպանության խնդիրներից և խոշտանգումների կիրառումից մինչև հաշմանդամների, երեխաների և կանանց իրավունքների հարցերը: Բայց և այնպես, պետք է խոստովանել, որ դեռ շատ ավելինը պետք է կատարվի նրա համար, որպեսզի այսուհետև չխախտվեն մարդու իրավունքները:Նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի փորձը վկայում է այն մասին, որ առ այսօր մարդկությունը տառապում է բարբարոսական և անմարդկային գործողություններից: Կանադայի կառավարությունը համակված է վճռականությամբ՝ գտնել այդ խնդիրների լուծումները:

Լինելով մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում միջազգայնորեն ճանաչված առաջնորդ՝ Կանադան անում է ամեն հնարավորը, որպեսզի կյանքի կոչի թղթի վրա ընդունված որոշումները: Մարդու իրավունքների հարցերում Կանադան զգալի դեր է խաղում այնպիսի կազմակերպություններում, ինչպիսիք են ՄԱԿ-ը, «Կոմմոնուէլտ»-ը, «Ֆրանկոֆոնիա»-ն, Ամերիկյան պետությունների կազմակերպությունը, ԵԱՀԽ-ն:

Վերջին տարիներին առավել նշանակալից իրադարձություններից մեկը հանդիսացավ մարդու իրավունքներով զբաղվող գերագույն կոմիսարի պաշտոնի հիմնադրումը ՄԱԿ-ում: Որպես ՄԱԿ-ում մարդու իրավունքներով զբաղվող բոլոր հիմնարկությունները համաձայնեցնող, գերագույն կոմիսարը պարտավոր է ապահովել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում նրանց աշխատանքների առավելագույն արդյունավետությունը:

Այս պաշտոնի հիմնադրումը արդեն տվել է իր պտուղները: Անմիջապես ռուանդական ճգնաժամից հետո գերագույն կոմիսարը կարողացավ մոբիլիզացնել և այնտեղ ուղարկել դիտորդների մի խումբ՝ այդ երկրում մարդու իրավունքների խախտումներ թույլ չտալու նպատակով:

Չնայած լուրջ խնդիրներին, դիտորդների առաքելությունը ոչ քիչ չափով նպաստել է ռուանդացիների դրության բարելավմանն ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ փախստականների ճամբարներում: Կանադան մեծ դեր խաղաց այդ առաքելության նախապատրաստման և իրականացման գործում: Ռուանդայում առաքելության գործունեությանը աջակցելու համար վերջերս արտաքին գործոց նախարարը հայտարարեց 500000 դոլարի չափով լրացուցիչ մուծման մասին: Նա հայտարարեց նաև 300000 դոլարի մուծման մասին նախկին Հարավսլավիայում նույնանման ծրագրի համար:

Մարդու իրավունքների հարցերով ՄԱԿ-ի գերագույն կոմիսարի կողմից դիտորդների հրատապ առաքումը դեպի գոյացող բախումների տարածաշրջաններ պետք է նպաստեն մարդու իրավունքների խախտում-

ների արգելմանը, այդ տարածաշրջաններում իրավապաշտպան խնդիրների լուծմանը: Այդ առաքելությունները ենթադրյալ, հնարավոր բախումներում խաղում են նաև կանխիչ և նախազգուշացնող դեր:

Մարդու իրավունքների պահպանման ՄԱԿ-ի ծրագրերի ոչ պակաս կարևոր մասնիկն է հանդիսանում իրավապաշտպանական արժեքների ոգով զինվորականների և ոստիկանների ուսուցումը: Որպեսզի այդ քննագավառում ՄԱԿ-ի գործունեությունը լինի ավելի արդյունավետ, անհրաժեշտ է, որ համաշխարհային հանրությունը ավելի շատ միջոցներ տրամադրի ՄԱԿ-ի ծրագրերին:

Կանադան պետք է համոզի մյուս երկրներին մարդու իրավունքների հարցերով ՄԱԿ-ի գերագույն կոմիսարի գործունեությանը աջակցելու անհրաժեշտության մեջ: Այս ամենից բացի, միջազգային հանրությունը պետք է հասկացնի մարդու իրավունքների խախտումների հեղինակներին, որ այսուհետև չի հանդուրժելու բռնությունները:

Նախկին Հարավսլավիայում և Ռուանդայում ռազմական հանցագործությունների հետաքննման համար ստեղծված ատյանների առաջին և շատ կարևոր քայլն է հանդիսանում այդ ուղղությամբ: Որոշ մեղադրյալների դեմ արդեն ներկայացվել են մեղադրանքները: Վերը նշված ատյանների ստեղծման ողջ կարևորությամբ հանդերձ, այդ մարմինները կրում են ժամանակավոր բնույթ: Արդյո՞ք մեր քաղաքական կամքը բավարար կլիներ մշտապես գործող ատյանների ստեղծման համար,որպեսզի այսուհետև չթույլատրվեն նույնանման հանցագործությունները:

Միջազգային հանրությունը քննության է ենթարկում ռազմական հանցագործությունների հետաքննության համար մշտատև միջազգային ատյանի հիմնադրման հնարավորությունը, որպեսզի խուսափի յուրաքանչյուր բախումից հետո անհապաղ որոշում որոնելու անհրաժեշտությունից:

Տվյալ հարցի վերաբերյալ բանակցությունները վարվում են ՄԱԿ-ի հովանու տակ:

Չնայած բանակցությունների ընթացքում առաջացող դժվարություններին, Կանադան, որը ակտիվ մասնակցում է դրանց, լավ արդյունքների հույս ունի: Այդ ատյանի պերճախոս վկայությունը կլինի միջազգային հանրության վճռականությունը, վերջ դնելու բարբարոսությանը և պատժել նրանց, ովքեր վիրավորում են միլիոնավոր մարդկանց գիտակցությունը:

Կանադան Հայաստանի բարեկամն է: Այդ պետությունը չորս տարեկան է և մենք ձգտում ենք օգնել նրան՝ հայկական պետության հիմնադրման օրից առաջացած բազմաթիվ խնդիրների լուծման մեջ: Մասնավորապես, Կանադան օգնություն ցուցաբերեց Հայաստանին 1988 թվականին Լենինականի շրջանում տեղի ունեցած երկրաշարժի հետևանքները վերացնելու գործում:

Կանադան փորձում է նաև օգնել այդ տարածաշրջանի զարգացմանը արգելակող ղարաբաղյան կոնֆլիկտի լուծման գործընթացում:

Ես երկար խոսեցի մարդու իրավունքների մասին: Ջարդերը, էթնիկական մաքրումները և 1915թ. հայկական ողբերգության նման այլ սարսափելի գործողությունները ունեն ընդհանուր պատճառ, դա մարդու իրավունքների խախտումն է: Եթե իր ժամանակին միջազգային հանրությունը, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություն-

ները ձեռնարկելիս անհրաժեշտ միջոցներ նմանատիպ գործողությունների կանխման համար, ապա դժվար թե տեղի ունենային Ռուանդայի և նախկին Հարավսլավիայի վերջին իրադարձությունները: Մենք բոլորս պարտական ենք հանցագործությունների զոհերի հիշատակի առջև, և մեր պարտքն է թույլ չտալ նման գործողությունները ապագայում: Ես միանում եմ Կվեբեկի խմբակցության առաջարկությանը:

Նույն ժամանակ, որպեսզի բոլորին պատշաճը հատուցենք և ամենից առաջ հայերին, որոնք պատերազմի տարիներին տառապել են իրենց ազգային պատկանելության պատճառով, ես խնդրում եմ Պալատին և կառավարությանը սատարել ուղղմանը, որը առաջարկում է սահմանել ապրիլի 20-ից 27-ը իր մերձավորի նկատմամբ մարդու կողմից կատարած հանցագործությունների հիշատակի շաբաթ:

ՄՈՐԻՍ ԲԵՐՆՅԵ (Մեգանտիկ-Կոնտոն-Ստանստիդ, Կվեբեկի խմբակցություն)

Պարոն նախագահող, ես ուշադիր լսեցի Կապ-Բրետոն-Այլենդ-Կանսոնի իմ գործընկերոջ ելույթը: Նա հիշատակեց Կանադայի բազմաթիվ խաղաղ նախաձեռնությունների մասին: Իր ելույթի վերջում նա խոսեց Հայաստանի նկատմամբ Կանադայի տածած մեծ բարեկամական զգացմունքի մասին, սակայն նրա վերջին խոսքերն արտացոլեցին կառավարության դիրքորոշում, այսօր քննարկվող հարցի վերաբերյալ: Իսկ այդ դիրքորոշումը կայանում է նրանում, որպեսզի նվազեցնի 1915թ. իրադարձությունների կարևորությունը, չխոսվի իրերի իրական դրության մասին, այսինքն 1915թ. ցեղասպանության մասին:

Իմ գործընկերը խոսում էր 1914-1918թթ. պատերազմի մասին, որպես մի ամբողջ ժողովրդի ոչնչացման միակ դրդապատճառի:

Իմ հարցը վերաբերում է արտաքին առևտրին: Արդյո՞ք պետք է որ Կանադան, ելնելով արևտրի շահերից, հրաժարվի իր սկզբունքներից, առևտրական պայմանագրեր կնքելով այն երկրների հետ, որոնց կառավարությունները մշտապես խախտում են մարդու իրավունքները:

ՖՐԵՆՍԻՍ ԼԵԲԼԱՆ (Կապ-Բրետոն-Այլենդ-Կանսո)

Պարոն նախագահող, ես շնորհակալություն եմ հայտնում Կվեբեկի խմբակցության իմ հարգելի գործընկերոջն իր հարցի համար: Կանադան չի ժխտում 1915թ. ցեղասպանությունը: Սակայն ինչ վերաբերվում է «ցեղասպանություն» բառին, ապա միջազգային իրավունքում սա շատ յուրահատուկ տերմին է և այն սահմանվել է այդ իրադարձություններից ավելի ուշ: Կանադայի կառավարությունը գտնում է, որ չի կարելի պատմության ընթացքում ավելի վաղ տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները որակել «ցեղասպանություն» բառով, քանզի այդ տերմինը միջազգային իրավունք է մտել այդ իրադարձություններից շատ ավելի ուշ:

Իհարկե, մենք ապրում ենք անկատար աշխարհում և պատմության ընթացքում քիչ չեն եղել դեպքերը, որոնք վկայում են իր մերձավորի նկատմամբ մարդու անգութ վերաբերմունքի մասին: Անհրաժեշտ է ստեղծել օղակներ, որոնք ապագայում թույլ չեն տա այդպիսի ողբերգությունների կրկնությունը, և Կանադան գտնվում է այդ շարժման ավանգարդում:

Մենք ցանկանում ենք, որպեսզի ամենից առաջ անկյունաքար դարձվի հարգանքը դեպի մարդու իրավունքները, լինի դա Հարավսլավիայում, Ռուանդայում, թե երկրագնդի ցանկացած անկյունում: Պատմու-

թյան դասերը չպետք է անհետք անցնեն, ողբերգությունները չպետք է կրկնվեն: Հենց այդ սկզբունքների վրա է հիմնված Կանադայի կառավարության քաղաքականությունը՝ մարդու իրավունքների հարգման սկզբունքների վրա:

Ամբողջ աշխարհի հետ միասին մենք պետք է մեխանիզմներ մշակենք, սադմնային վիճակում խնդիրները լուծելու համար: Մենք պետք է կոահենք ողբերգական իրադարձությունները, որոնք առ այսօր, ցավոք, տեղի են ունենում աշխարհի տարբեր տարածաշրջաններում: Հույս ունենք, որ ժամանակի հետ միջազգային հանրությունը, միավորելով իր ջանքերը, վերջ կդնի այդ նախադեպերին:

ՍԱՐԳԻՍ ԱՍԱՏՈՒՐՅԱՆ (Դոն Վալեյ-Նորդ, լիբերալ կուսակցություն)

Պարոն նախագահող, իհարկե, ես լիովին պաշտպանում եմ այս առաջարկությունը: Արդյո՞ք չի համաձայնվի ինձ հետ արտաքին գործոց նախարարի խորհրդարանական քարտուղարը, որ հաշվի առնելով երկու հարևան երկրների՝ Հայաստանի և Թուրքիայի աշխարհագրական դրությունը, լավագույնը ինչ կարող է անել Թուրքիան, ապա ընդմիշտ լուծել այդ խնդիրը, հաստատելով բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ Հայաստանի հետ:

Այս կոնֆլիկտը գայթակղության քար է հանդիսանում այդ ռեգիոնի տնտեսական զարգացման ճանապարհին: Արդյո՞ք համաձայն է ինձ հետ խորհրդարանական քարտուղարը, որ եթե Թուրքիան ընդուներ իր պատասխանատվությունը,ապա դա կբարելավեր Թուրքիայի և Հայաստանի փոխհարաբերությունները և կնպաստեր Հայաստանի Հանրապետության զարգացմանը:

ՖՐԵՆՍԻՍ ԼԵԲԼԱՆ (Կապ-Բրետոն-Այլենդ-Կանսո)

Պարոն նախագահող, ես չեմ կարող Թուրքիայի անունից պատասխանել այդ հարցին: Հուսով եմ, որ Թուրքիայի կառավարությունը պատրաստ է անել ամեն անհրաժեշտը, որպեսզի բարելավի իր հարաբերությունները հարևանների հետ, այդ թվում նաև Հայաստանի:

Այսօր Հայաստանը, ինչպես և Թուրքիան պետություն է: Ես հույս ունեմ, որ կազմակերպություններում, որոնց անդամներն են նրանք հանդիսանում, ԵԱՀԽ-ում և այլ եվրոպական կառույցներում, ՄԱԿ-ում համատեղ աշխատանքի շնորհիվ, այդ երկրները հաշվի չառնելով ողբերգական անցյալը, հանուն զարգացման և առաջընթացի կձգտեն հասնել փոխադարձ համաձայնության: Ընականաբար, Կանադան կաջակցեր այդ նախաձեռնություններին: Մենք կոչ ենք անում երկու կողմերին բարելավել փոխհարաբերությունները և հաղթահարել երկու ժողովուրդների միջև եղած պատմական կոնֆլիկտը:

ՄԻՇԵԼ ԳՈՏՅԵ (Կվեբեկի խմբակցություն, ընդդիմության առաջնորդ)

Պարոն նախագահող, ես խորապես զգացված եմ Աունթսիքի պատգամավորի առաջարկությամբ, որն արդեն երկար տարիներ շարունակ ակտիվ գործունեություն է ծավալում հայկական համայնքում:

Կցանկանայի խոսել «մարդկության դեմ հանցագործություն» սահմանման մասին: Այս առիթով ուզում եմ մեջբերել Դոն Վալեյ-Նորդի լիբերալ պատգամավոր Սարգիս Ասատուրյանին, որը անցյալ տարվա ապրի-

չին ներկայացրել է այսօրվանին համարժեք առաջարկություն: Այս արտահայտությունն առաջին անգամ գործածվել է 1945-ին Լոնդոնյան Խարտիայում: Մարդկության դեմ ռազմական կամ այլ հանցագործությունները իրենց դասակարգումն են ստացել Նյուրնբերգյան միջազգային դատավարության ժամանակ: Միջազգային ռազմական ատյանի կանոնակարգի վեցերորդ կետի համաձայն, մարդկության դեմ կատարած հանցագործությունների իրենց մեջ են ներառում սպանությունը, ստրկացումը, բռնագաղթեցումը և քաղաքացիական բնակչության դեմ այլ անմարդկային գործողությունները, որոնք կատարվել են պատերազմից առաջ կամ ժամանակ, ինչպես նաև քաղաքական, ռասայական, կրոնական դրդապատճառներով հետապնդումները:

Քաղաքացիական բնակչության դեմ հանցագործությունները սարսափեցնում են: Այս փաստաթղթի չոր ու ցամաք բառերի հետևում կանգնած են մարդկային ճակատագրերը:

1984թ. ապրիլի 16-ին ժողովուրդների մշտական ատյանը հաստատել է, որ 1915-16թթ. կատարվել է հայերի ցեղասպանությունը: Այնինչ, ՄԱԿ-ը դեռ չի ճանաչել հայերի ցեղասպանությունը: Կվեբեկի արդարադատության նախկին նախարար Հերբերդ Մարքսը 1948թ. մայիսի 23-ի "Le Devior" օրաթերթում գրել է. «... ՄԱԿ-ում քաղաքական կառավարության միջամտության պատճառով պաշտոնապես դեռ չի ճանաչվել հայերի ցեղասպանությունը»: Սակայն հանրահայտ է, որ 1,5 միլիոն հայ ոչնչացվել է: Լռությունը պետք է խախտվի և այդ իրադարձությունները, ինչպես նաև հրեաների դեպքում, պահանջում են պատմական ճանաչում: Արդեն 1996թ. 120-ից ավելի ժողովուրդներ ենթարկվում են ճնշման և բռնությունների, իրենց բոլոր դրսևորումներով՝ քաղաքական, կրոնական, ռասայական: Այդ կոնֆլիկտներում ռազմական միջոցների, բանակի օգտագործումը պետք է գործնականում բացառվի և դատապարտվի երկրագնդի բոլոր ժողովուրդների կողմից: Ելնելով իր ժողովրդավարական իդեալներից, Կանադան պետք է օրինակ ծառայի և շարունակ պնդի բախումների խաղաղ, քաղաքակիրթ, ժողովրդավարական մեթոդներով կարգավորման վրա: Այդ քաղաքակիրթ մեթոդները հանդիսանում են մարդու իրավունքները հարգող ժողովուրդների զինանոցում առկա միջոցների բաղկացուցիչ մասը: Կանադան պետք է նպաստի կոնֆլիկտների լուծմանը ոչ թե զենքի՝ այլ ոգու ուժով:

Խուսափելով ցեղասպանությունների զոհերի հիշատակի շաբաթ սահմանելուց, մասնավորապես, 1915թ. հայերի ցեղասպանության, Կանադան սրանով իսկ ոգևորում է պատմական փաստերի մոռացության արատավոր քաղաքականությանը: Այդ խորհրդանշական ժեստը նշանակալից կլիներ ողջ միջազգային հանրության համար և հերթական անգամ կապացուցեր, որ Կանադան գտնվում է մարդու իրավունքների թունդ պաշտպանների շարքում և առևտրական շահերից վեր է դասում համամարդկային արժեքները:

Ցավոք, մեր արտաքին քաղաքականությունը բոլոր հիմքերն է տալիս ենթադրելու, որ կառավարությունը թույլ չի տա մեր կողմից առաջադրված առաջարկի շարունակումը: Սրա ապացույցն է մեր առաջարկում ուղղում մտցնելը, այս տարի Մոնրեալում ցեղասպանության զոհերի հուշարձանի կանգնեցման արգելումը, իր առևտրական պարտնյորների հետ

կառավարության վարքագիծը: Մեր առաջարկության մերժումը՝ բիզնեսի անունից մարդու իրավունքների ոտնահարում է:

Ապա ինչպե՞ս բացատրել վարչապետի լռությունը չեչենական կոնֆլիկտի առիթով, որը անհամար տառապանքներ բերեց քաղաքացիական բնակչությանը:

Մարդկային ազատությունների պաշտպանությամբ հայտնի կազմակերպությունները այնպիսին, ինչպիսին է «բժիշկներ առանց սահմանների», այս կոնֆլիկտը անվանեցին «աշխարհում բոլոր պատերազմներից ամենավատը»:

Լռությունը, մոռացությունը ոչնչի չի պարտավորեցնում: Կոնֆլիկտների լուծման ռազմական մեթոդները բռնության խրախուսման ամոթալի ձևերից է: Այդ նկատառումներից ելնելով, մենք, Կվեբեկի խմբակցությունը, ճնշում ենք գործադրում ներկայիս կառավարության վրա, որպեսզի այն պաշտոնապես սահմանի իր մերձավորի նկատմամբ մարդու կողմից կատարած հանցագործությունների հիշատակի շաբաթ՝ հայերի ցեղասպանության 81-ամյա տարելիցի առիթով:

Միայն այդ դեպքում մենք կարող ենք խոսել Կանադայի մասին, իբրև մի երկրի, որը ռեալ կերպով պաշտպանում է մարդու իրավունքները:

Մենք հիշում ենք հայերի ցեղասպանությունը, և մենք ցանկանում ենք, որպեսզի ամբողջ Կանադան հիշի դրա մասին: Ահա թե ինչու մենք առաջ քաշեցինք այդ առաջարկը: Սա հայ ժողովրդի բարեկամության, նրա պատմության նկատմամբ հարգանքի հարցն է:

ՍԱՐԳԻՍ ԱՍԱՏՈՒՐՅԱՆ

Պարոն նախագահող, միայն հաճելի է լսել, թե ինչպես է վարժվում հռետորական արվեստում ընդդիմության ղեկավարը, շոշափելով այնպիսի կարևոր քնագավառ, ինչպիսին մարդու իրավունքներն են:

Ես արդեն երեք անգամ է դիմում եմ Կվեբեկի խմբակցությանը հարցով, արդյո՞ք կարող են նրանք ստանալ իրենց նախկին ղեկավար, Կվեբեկի վարչապետ պարոն Լուսյեն Բուշարի թույլատվությունը հուշարձանի կառուցման համար: Հուշարձանի կանգնեցման նախագիծը կասեցվել էր Մոնրեալի քաղաքապետի կողմից, որը ժամանակին խոստացել էր կառուցել հուշարձանը և այս կերպով ձեռք բերել հայերի ձայները: Արդյո՞ք կարող է ընդդիմության ղեկավարը պարտավորություն վերցնել Պալատի առջև, որ նա կդիմի Կվեբեկի վարչապետին Մոնրեալում կամ Կվեբեկում 1,5 միլիոն հայերի հիշատակի առթիվ՝ մեր առաջին ցեղասպանության զոհերի հուշարձանը կառուցելու խնդրանքով:

ՄԻՇԵԼ ԳՈՒՅԵ

Պարոն նախագահող, ինչպե՞ս կարելի է, օգտվելով այսօրվա քննարկումներից, ջանալ փոխադրել պատասխանատվությունը ֆեդերալ կառավարությունից Կվեբեկի վարչապետի վրա: Միայն կասեմ պատգամավորին, որ նա պարտավոր էր, օգտվելով այս քննարկումներից, ասել իր կուսակցությանը, որ Կվեբեկի խմբակցության կողմից ներկայացված առաջարկությունը հարգանքի տուրք է մատուցում հայ ժողովրդին, վկայում է մեր բարեկամության մասին, ինչի մասին խոսել եմ ավելի վաղ: Այս առաջարկությունն իրեն քուլացնող ուղղումների կարիք չունի: Լինելով ծագումով հայ, պատգամավորը պարտավոր էր համոզել իր կուսակցությանը, որ մենք չենք կարող համաձայնվել մեր առաջարկի ձևափոխման հետ:

Մենք կուզենայինք կանխապես ապահովել նրա պաշտպանությունը, կառավարության աջակցությունը, որպեսզի առաջարկությունը ընդունվի ամբողջությամբ, որպեսզի չվախենանք խոսել հենց հայերի ցեղասպանության մասին, այլ ոչ թե հայկական ողբերգությունների մասին:

Մեր Պալատի կանոններն իմանալով, կարող եմ կանխագուշակել իրադարձությունները, ասելով, որ եթե մենք աջակցենք ռեֆորմիստների կուսակցության ուղղմանը, որտեղ խոսվում է հայկական ցեղասպանության ողբերգության մասին, կառավարությունը դեմ կքվեարկի: Մենք ցանկանում ենք, որպեսզի Առնքսիքի պատգամավորի կողմից մտցված առաջարկությունը թուլացնելու նպատակով բառախաղով չզբաղվեն: Շատ կարևոր է, որպեսզի Պալատը միանշանակ արտահայտվի հայերի ցեղասպանության ճանաչման փաստի մասին: Սա կլինի հայ ժողովրդի նկատմամբ մեր հարգանքի խոստովանությունը:

ՌԵԱԼ ՄԵՆԱՐ (Օշլագա-Մեզոնյոֆ,Կվեբեկի խմբակցություն)

Պարոն նախագահող, այսօր պաշտոնական ընդդիմությունը ցանկանում է պարզ արտահայտել իր վերաբերմունքը անքույլատրելի, անհանդուրժելի, մարդկային համակեցություն համընդհանուր վրդովմունքը, զայրույթն առաջացնող մեծագույն դրամայի՝ ցեղասպանության նկատմամբ: Շատ տխուր պահ ենք այսօր ապրում Կանադայի քաղաքական կյանքում, քանզի այսուհետև պարզ է,որ խորհրդարանում կան նաև երեսպաշտներ: Կան մարդիկ,որոնք ունեն երկու լեզու: Սա չափազանց տխուր է, քանի որ մենք, որպես խորհրդարանականներ բաց ենք թողնում առիթը, միաձայն արտահայտել մեր վերաբերմունքը բռնության նկատմամբ:

Հայ ժողովրդի պատմությունը՝ կենդանի մնալու անդադար երկարամյա պայքարի պատմություն է:

Պատմական Հայաստանը, Մեծ Հայաստանը տարածվել է Սև ծովից մինչև Միջագետքի, 300000 քառակուսի կիլոմետր տարածության վրա: Հայաստանը անկախ պետություն է եղել մինչև 1045թ., այսինքն մինչև միջնադար: Պատմագրությունը վկայում է, որ Հայաստանը պահպանել է անկախությունը մինչև միջին դարեր, շնորհիվ իր կրոնի, լեզվի, հայերի հողի նկատմամբ կապվածության: Մեկը մյուսին հետևող երեք վարչակարգերի սկիզբ դրեցին բռնագաղթերի, հայկական համայնքի ցեղասպանությանը:

Հիշենք Համիդ 2-րդի վարչակարգը: Հիշենք վարչակարգը, որը սկզբում այդքան շատ հույսեր էր ներշնչում, թվում էր, թե ուներ լիբերալ, ժողովրդավարական վարչակարգի բոլոր հատկանիշները: Ես խոսում եմ երիտթուրքերի կառավարության մասին, որոնց օրոք էլ տեղի ունեցան 1915-1917թթ. իրադարձությունները, որի ընթացքում ոչնչացվել են 1,5 միլիոն հայեր:

Աշխատենք հասկանալ, թե ինչ է տեղի ունենում այսօր խորհրդարանում: Մենք ունենք պատգամավոր Առնքսիքում դեմոկրատորեն ընտրված, որը սերտորեն կապված է հայկական համայնքի հետ:

Մենք ունենք պատգամավոր, որը այսօր մեզ պատմեց 20-րդ դարի առաջին ցեղասպանության մասին: Պատգամավորը մեզ կոչ է անում հիշել: Հիշել, որպեսզի թույլ չտանք նախկին սխալները: Կառավարությունն առանց տատանվելու հատկացրեց 500000 դոլար, որպեսզի նպաստի նախկին Հարավսլավիայում ռազմական հանցագործությունների հետաքննության ատյանի հիմնադրմանը:

Ատյանը բաղկացած է իննը դատավորից, որոնցից մեկը կանադացի է: Լավ եմ հիշում այդ առիթով ներգաղթի հարցերով նախարարի խորհրդարանական քարտուղարի ելույթը:

Այն ժամանակ շատերը, առանց տատանվելու խոսում էին ցեղասպանության մասին: Այդպես էր նաև Ռուանդայում վերջին իրադարձությունների ժամանակ. չէին վախենում անվանել իրերը իրենց անուններով: Պատգամավորի խոսքը չպետք է մակերեսային լինի: Եվ այսօր պետք է խոսել ոչ թե ողբերգության, ոչ թե ողբերգական միջադեպի մասին, այլ հենց ցեղասպանության մասին:

Ապա ինչպե՞ս բացատրել կառավարության անվճռականությունը, նրա երեսպաշտ ճիգերն այսօր ներկայացված առաջարկության նշանակալիությունը նվազեցնել տարբեր տեսակի ուղղումներով: Մենք լավ գիտենք, որ Թուրքիան Միջին Արևելքի միջին զարգացում ունեցող պետություն է: Մենք նաև գիտենք, որ Թուրքիան կարևոր դեր է խաղում իր տարածաշրջանում: Ինչպես էլ լինի,մեր կառավարությունը տեղի է տալիս պատասխանատու քայլի առջև, չի վճռում անվանել իրերն իրենց անուններով: Դուք կարծու՞մ եք հայերը բավարարված են կանադական կառավարությամբ: Դուք կարծում եք, որ մարդու իրավունքների պաշտպանության համար պատասխանատու միջազգային կազմակերպությունները հավանություն են տալիս մեր կառավարության քաղաքականությանը: Իհարկե, ոչ:

Մի քանի օր առաջ ես մասնակցեցի Ժնևում հրավիրված մարդու իրավունքների հարցերով կոնֆերանսին, որը տեղի էր ունենում ՄԱԿ-ի հովանու տակ:

Կոնֆերանսում շատ էր խոսվում մարդու իրավունքների հարցերով միջազգային կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցելու Կանադայի ցանկության և պատրաստակամության մասին:

Ապա որտե՞ղ է կառավարության այդ ճառերի և այսօրվա գործելակերպի համապատասխանությունը:

Ցանկանում եմ իմ ելույթը ավարտել, հիշեցնելով ձեզ մի չափազանց կարևոր իրադարձության մասին: 1984թ. ապրիլին ժողովուրդների մշտական ատյանը քննության է ենթարկել հետևյալ երեք հարցերը՝ եղե՞լ է արդյոք հայ ժողովուրդը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ իրականացված կոտորածի, բռնագաղթի զոհ:

Երկրորդ հարցը՝ արդյո՞ք կարելի է այդ իրադարձությունները որակել որպես ցեղասպանություն:

Երրորդը՝ ինչպիսի՞ն են այդ իրադարձությունների հետեվանքները:

Պատասխանն էլ հենց իմ եզրակացությունն է:

Ժողովուրդների մշտական ատյանը, որի անդամներից յուրաքանչյուրը կարող էր նախագահել Արդարադատության միջազգային Պալատում, եզրակացրել է. «Հայ ժողովրդի հիմնարար իրավունքները՝ անհատական և կոլեկտիվ, համաձայն միջազգային իրավունքի, պետք է հարգվեն ու ճանաչվեն»:

Պարոն նախագահող՝ համաձայն 1948թ. դեկտեմբերի 9-ի Կոնվենցիայի, հայ ժողովրդի ոչնչացումը բռնագաղթի և կոտորածի ճանապարհով, կազմում է ցեղասպանության ծանրագույն հանցագործությունը:

Միջազգային իրավունքը արտահայտվել է, դուք ծանոթ էք պաշտոնական ընդդիմության տեսակետին և տվյալ խնդրի նկատմամբ նրա նա-

խաճեռնությանը: Հերթը կառավարությանն է: Մենք իրավունք ունենք սպասել նրանցից շատ ավելի քաջություն:

ՄՈՐԻՍ ԲԵՐՆՅԵ (Մեգանտիկ-Կոնտոն-Ստանստիդ, Կվեբեկի խմբակցություն)

Պարոն նախագահող, ես ուշադրությամբ ունկնդրեցի Օշլագա-Մեզոնյոֆի իմ գործընկերոջը: Շնորհակալություն եմ հայտնում նրան իր ելույթի համար, որտեղ նա խոսում էր «ցեղասպանություն» տերմինի գործածման օրինաչափության մասին, փոխարեն «1915-1916թթ. հայ ժողովրդի վերապրած ողբերգական իրադարձությունները», ինչպես պնդում է լիբերալների կուսակցությունը:

Ես կուզենայի հիշեցնել այն, ինչի մասին խոսել եմ այսօր առավոտյան և հարց տալ իմ գործընկերոջը...

Ռ. ՄԵՆԱՐ

Եվ ընկերոջը:

ՄՈՐԻՍ ԲԵՐՆՅԵ

Եվ,իհարկե, ընկերոջը: Այսօր առավոտյան խոսել եմ Կանադայի կողմից իր խոսքերի և արարքների համապատասխանեցման անհրաժեշտության, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության հարցերի նկատմամբ նրա դիրքորոշման միանշանակության մասին: Ուսումնասիրելով լիբերալ կուսակցության կողմից առաջարկված ուղղումը՝ հարցեր եմ ծագում: Ինչպես հենց նոր ասաց գործընկերս, տվյալ ուղղման նպատակն է ավազեցնել մեր առաջարկի սրությունն ու նշանակությունը: Եթե մենք ցանկանում ենք, որպեսզի մարդու իրավունքները հարգվեն ողջ աշխարհում, ապա մեր դիրքորոշումը պետք է շարադրենք պարզ, հստակ և միանշանակ:

Ուզում եմ գործընկերոջս մի հարց տալ, որը շատերին է հետաքրքրում: Հարցը վերաբերվում է մարդու իրավունքներին և միջազգային առևտրին: Արդյո՞ք կառավարությունը պետք է պահպանի և զարգացնի առևտրական կապերն այն երկրների հետ, որտեղ խախտվում են մարդու իրավունքները:

Ռ. ՄԵՆԱՐ

Պարոն նախագահող, շնորհակալություն եմ հայտնում Մեգանտիկ-Կոնտոն-Ստանստիդի պատգամավորին իր փայլուն հարցադրումների համար: Անտարակույս, պետք է աներկբա պատասխան տալ այնպես,ինչպես կպատասխանեիք դուք, պարոն նախագահող: Ոչ մի պարագայում էլ այնպիսի չարչիական հարցերն, ինքպիսին արտաքին առևտուրն է, չպետք է գերակշռեն մարդու իրավունքների խախտման խնդիրների նկատմամբ: Կարծում եմ, Պալատում բոլոր ներկաները համաձայն են, որ արտաքին առևտուրը հանդիսանում է միջազգային կյանքի կարևորագույն բաղադրամասը: Իր պատմության ողջ ընթացքում Կանադան զարգացել է առևտրի շնորհիվ: Սակայն մենք չպետք է մոռանանք մարդու իրավունքների հարցերի առաջնության մասին այնպես, ինչպես դա անում է 1993թ. հոկտեմբերից լիբերալների կառավարությունը:

ԲԻԼ ԳՐԵԽԱՄ (Ռուլդեյլ, լիբերալ կուսակցություն)

Պարոն նախագահող, երջանիկ եմ ելույթիս ժամանակը կիսել Սկարբորուգ-Ռուժ Ռիվերի պատգամավորի հետ:

Այսօրվա բանավեճը պետք է վարենք պատմական տեսանկյունից: Ես օժանդակում եմ խորհրդարանական քարտուղարի կողմից առաջարկված ուղղմանը:

Ուղղումը դիտարկում է այդ մարդկային ողբերգությունը՝ պատմության պրիզմայի միջով և միաժամանակ կոչ է անում մեզ՝ քաղաքագետներիս, ազգային և միջազգային մասշտաբներով անել ամեն հնարավորը, այլևս նման ողբերգությունները թույլ չտալու համար: Եվ սրանում է կայանում կառավարության ուղղման իմաստը, այսօրվա քննարկումների իմաստը: Շնորհավորում եմ Կվեբեկի խմբակցությանը նրա համար,որ քննարկման են դրել, իմ կարծիքով, չափազանց կարևոր այս առաջարկությունը:

Միաժամանակ ցավալի է, որ Օշլագա-Մեզոնոֆի պատգամավորը մեղադրում է կառավարությանը նրանում, որ այն վտրձում է խառնել ներկայացված առաջարկը Թուրքիայի հետ ունեցած առևտրական և այլ շահադիտական հարաբերությունների հետ: Այդ առիթով կուզենայի մի քանի դիտողություններ անել:

Խոսքը գնում է վիթխարի մասշտաբներ ունեցող մարդկային ողբերգության մասին, թերևս համեմատելի միայն Ռուանդայի, Կամբոջայի և Գերմանիայի ժողովուրդների ջարդերի հետ: 20-րդ դարի ոճրագործությունների ցուցակը շատ մեծ է: Այն բարդ աշխարհում, որտեղ մենք ապրում ենք, անհրաժեշտ է Նոր Կտակարանի հարցը տալ. «Ո՞վ է իմ մերձավորը»:

Երեկ դրանք հայերն էին,ավելի ուշ՝ Եվրոպայի հրեաները, իսկ հետո՝ ռուանդացիները, կամբոջացիները և բոսնիացիները:

Հեռանալով միջազգային հանրության խնդիրներից՝ մենք կորցնում ենք քաղաքագետի մեր մանդատը: Այնուամենայնիվ, մենք՝ որպես պատգամավորներ, պարտավոր ենք ընդունել կշռադատված որոշումներ, որոնք լավագույնս կհամապատասխանեն ժամանակակից աշխարհի իրողություններին: Ահա թե ինչու եմ աջակցում այս ուղղմանը:

Մենք ունենք միջազգային ինստիտուտների կարիքը, հատկապես ՄԱԿ-ի կազմակերպությունների: Եվ մեր կառավարությունն ակտիվ օգնություն է ցուցաբերում նրանց:

Անարդարացի է Կվեբեկի խմբակցության կշտամբանքը կառավարության հասցեին, որ նրանք ոչինչ չեն ձեռնարկում ցեղասպանությունները կանխելու համար: Կանադան քիչ ջանքեր չի գործադրում աշխարհի բազմաթիվ տարածաշրջաններում անվտանգությունն ապահովելու համար: Մեր խաղաղարար զորքերը, կատարելով խաղաղության պահպանման դժվարին խնդիրը, գտնվում են Բոսնիայում, Հայիթիում:

Այս կոնկրետ միջոցառումները ներկայացնում են խնդրի մեկ կողմը: Մյուս կողմը միջազգային մարմնի ստեղծման անհրաժեշտությունն է, որն օժտված կլինի իրավաբանական լիազորություններով ցեղասպանությունների հեղինակներին և ռազմական հանցագործներին դատապարտելու համար: Այդ ուղղությամբ արդեն որոշակի քայլեր են ձեռնարկվում, սակայն իրադրությունը դեռ սաղմնային վիճակում է:

Միջազգային իրավունք դասավանդելով՝ ես սովորեցրել եմ, որ միջազգային իրավունքի հիմունքները հաստատվել են Նյուրնբերգյան դատավարության կողմից: Պետք է խոստովանել, որ այդ հիմունքները, որոնք Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո հաղթողների

կողմից ներկայացվել են պարտվողներին, համապարփակ չէին: Կանադան ակտիվ մասնակցություն է ունեցել մարդու իրավունքներն այսօր պաշտպանող միջազգային իրավունքի սկզբունքների և հիմունքների հետագա զարգացմանը:

Մաքգիլի համալսարանում դասավանդող իմ գործընկեր պրոֆեսոր Խամֆրեյը եղել է մարդու իրավունքների համապարփակ հռչակագրի հեղինակներից մեկը: Ծառայելով խաղաղարար զորքերի շարքերում, աշխատելով ՄԱԿ-ի կազմակերպություններում, զանազան միջազգային կոմիտեներում՝ հազարավոր կանադացիներ իրենց լուման են ներդնում միջազգային իրավունքի զարգացման գործում:

Պետք է շարունակել աշխատանքները այդ ուղղությամբ և սահմանել միջազգային քրեական ատյան: Ես կուզենայի, որպեսզի Կվեբեկի խմբակցությունը խոսեր այդ հարցի մասին: Ինչպիսի՞ դասեր կարող ենք քաղել Հայաստանի ճակատագրից: Այդ դասերը կայանում են միջազգային իրավական մարմինների ստեղծման անհրաժեշտության մեջ, որոնք ընդունակ կլինեն լուծել նման կարգի խնդիրները:

Կարծում եմ հայերը, թուրքերը և կանադացիներն երախտապարտ կլինեին ոչ թե մեր լեզվաբանական բանավեճերի, այլ կոնկրետ քայլերի համար, որոնք ուղղված կլինեին միջազգային կազմակերպությունների ստեղծմանը և կհամապատասխանեին ժամանակակից աշխարհի իրողություններին:

Հուսով եմ՝ բոսնիական հանցագործությունների հետաքննության համար ստեղծված ատյանը սկիզբ կդնի այդ գործընթացին:

Հույս ունեմ,որ երբևիցե այս Պալատում հնարավոր կլինի քննարկել այնպիսի օրենքների ընդունումը, որոնք թույլ կտան մարդու իրավունքների խախտման դեպքում, անկախ դրա կատարման վայրից, դատական գործ հարուցել: Նման օրենքներ գործում են ԱՄՆ-ում: Եվ մեզ՝ խորհրդարանականներիս, առաջիկայում դեռ շատ անելիքներ են սպասվում:

Ինչպես անկեղծորեն ասաց խորհրդարանական քարտուղարը, մենք չենք կարող ցեղասպանության առիթով որևիցե հայտարարություն անել Թուրքիայի անունից: Սա պետք է անի ինքը՝ Թուրքիան: Սակայն, որպես քաղաքագետներ, մենք պետք է անենք ամեն հնարավորը, որպեսզի չկրկնվեն այդ սարսափելի ողբերգությունները: Դա լավագույնն է, ինչ կարող ենք անել Հայաստանի և մեր համաքաղաքացիների՝ հայերի համար: Այս կամ այն փաստաթղթի տերմինաբանության առիթով բանավեճի փոխարեն պետք է կոնկրետ քայլեր ձեռնարկել այդպիսի հանցագործությունները թույլ չտալու համար:

Ինչպես արդեն խոսվել է, մենք ապրում ենք անկատար աշխարհում: Ավելի վաղ, մենք՝ կանադացիներս էլ խնդիրներ ունեինք մարդու իրավունքների բնագավառում, սակայն այդ հարցում առաջ ենք ընթանում և շարունակում առաջադիմել: Այսօր իրավունքների մեր խարտիան երաշխավորում է մարդու անհատական իրավունքները: Միջազգային մասշտաբով Կանադան առաջատար դեր է խաղում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Կանադայում գործում են ֆեդերալ մարմիններ, որոնք պատասխանատվություն են կրում մեր երկրի բոլոր շրջանների բազմաթիվ համայնքների կարիքների և պահանջմունքների համար, դեռ չենք խոսում իր մարմինների աշխատանքը համաձայնեցնող ֆեդերալ կառա-

վարության մասին: Մեր ֆեդերալ մարմինները լավագույն գրավականն են այն բանի, որ Կանադայում երբեք չեն կատարվի նման կարգի ողբերգություններ:

Կվեբեկի խմբակցության ներկայացուցիչները, որոնք առաջադրել են այսօր մեր կողմից քննարկվող առաջարկությունը, հարց են տալիս, թե ինչպիսի դասեր կարելի է քաղել հայկական ողբերգությունից: Իմ կարծիքով այդ հարցի լավագույն պատասխանը կլիներ համամարդկային արժեքների վրա հիմնված միջազգային քաղաքական ինստիտուտների ստեղծումը: Մեր երկիրը հարգված է ամբողջ աշխարհում, քանզի մենք արդեն կատարել ենք այդ քայլը՝ ստեղծելով մեր ֆեդերալ մարմինները:

Ես գիտեմ, որ ժամանակը սպառված է: Վերջացնեմ հետևյալ մտքով: Կառավարության կողմից առաջադրված ուղղումն իր հիմքում պահպանում է Կվեբեկի խմբակցության առաջարկի ոգին, սակայն այն անհամեմատ համակողմանի է, ավելի մասշտաբային և ընդգրկում է մարդու իրավունքների պաշտպանության հարցի բոլոր ասպեկտները: Մեր երկրի քաղաքականությունը հիմնված է հանդուրժողականության վրա: Սա ֆեդերալ պետություն է, որը հարգում է իր բոլոր քաղաքացիներին, լինեն դրանք հայեր կամ որևիցե այլ երկրից գաղթածներ:

ՍՈՐԻՍ ՔԵՐՆՅԵ

Պարոն նախագահող, ամենից առաջ ցանկանում եմ շնորհավորել գործընկերոջս իր ելույթի համար: Լիովին համաձայն եմ նրա բոլոր թեզերի հետ, բացառությամբ հիարկե,այն, ինչ նա ասում էր իր գործընկերոջ՝ կանացց հարցերով պետական քարտուղարի ուղղման առիթով: Արդեն մեկ անգամ չէ,որ մենք նշում ենք կառավարության ուղղումն ոչ այլ ինչ է, եթե ոչ 1915-1916թթ. հայ ժողովրդի վերապրած ողբերգական իրադարձությունների նշանակալիությունը նվազեցնելու ևս մի փորձ, իրերը չկոչել իրենց անուններով, չհիշատակել այդ իրադարձությունները՝ որպես ցեղասպանություն:

Միջազգային իրավունքի զարգացումը թույլ է տալիս մեզ այսօր բազմակողմանիորեն գնահատել և վերլուծել նման իրադարձությունները: Փաստերը վկայում են, որ 1915-1916թթ. իրականացվել է հայ ժողովրդի ցեղասպանությունը կամ ցեղասպանության փորձը:

Ես բացարձակապես համաձայն եմ գործընկերոջս հետ, որ Կանադայում պահպանվում են մարդու իրավունքները: Սա ճանաչվել է միջազգայնորեն և պաշտոնական ընդդիմությունն էլ է ընդունում,որ ինչ վերաբերվում է մարդու իրավունքներին,ապա մեր երկրի քաղաքացիներն օգտվում են բոլոր առավելություններից: Սակայն հենց այդ պատճառով էլ կարծում եմ,որ այսօր ընդունվող որոշումը պետք է լինի հստակ և միանշանակ, բոլոր տեսակի երկիմաստություններն ու նրբերանգները բացառող: Այն պետք է վերաբերվի ինչպես հայերի ցեղասպանությանը, այնպես էլ մեր մոլորակի վրա կատարված և կատարվող մարդկության դեմ բոլոր ոճրագործություններին: Արդյո՞ք կարող է իմ գործընկերն ասել մեզ, թե միջազգային առևտրի շահերից ելնելով, Կանադան որքան զիջումների պետք է գնա մարդու իրավունքների պաշտպանության հարցերում:

Մ. ԿԻԼԳՈՐ (Նախագահողի տեղակալ)

Ես խնդրում եմ Ռուդեյլի հարգելի պատգամավորին իր պատասխանը տեղավորել այն ժամանակի մեջ, որը մնացել է նրան հարցերի և մեկնաբանությունների համար:

Բ. ԳՐԵԽԱՄ

Պարոն նախագահող, երջանիկ եմ մասնակցել պաշտոնական ընդդիմության առաջարկի առիթով ծավալված քննարկումներին:

Քննարկումների թեման է իր մերձավորի նկատմամբ մարդու դաժանությունը, մասնավորապես՝ 1915թ. հայերի ցեղասպանությունը:

Լիբերալ կուսակցության պատգամավորները փաստարկելով «ցեղասպանություն» տերմինի գործածման աննպատակահարմարությունը, ուղղում են առաջարկել:

Հեշտ չէ գտնել անցյալի իրադարձությունները դասակարգող լավագույն միջոցը: Այդ խնդրի վերաբերյալ Պալատի երկու կողմերն էլ շարադրեցին իրենց տեսակետները: Իսկապես բարդ է դասակարգել ութսունամյա վաղեմություն ունեցող իրադարձությունները:

Ինչևիցե, ես արդեն որոշում եմ ընդունել: Ինձ չեն հետաքրքրում հարցի տեխնիկական կողմերը, դա թողնում եմ ուրիշներին: Անկեղծ ասած՝ 81 տարի անց փաստաբաններն այստեղ այլևս գործ չունեն:

Հայերի ցեղասպանության մասին առաջին անգամ իմացա մոտ 12 տարի առաջ: Ծագումով հայ մի ընկեր ունեի: Ծանոթանալով նրա ընտանիքի հետ՝ շատ բան իմացա այդ ողբերգության մասին: Մոտավորապես նույն ժամանակ հոդված կարդացի անգլիական "Encounter" քաղաքական, փիլիսոփայական և պատմական հանդեսում: Սա հետաքրքիր և օբյեկտիվ հոդված էր, որը նվիրված էր հայոց ցեղասպանության զոհերի քանակի վերաբերյալ եղած տարբեր կարծիքներին:

Հոդվածը, որին ծանոթացա, միանգամայն օբյեկտիվ էր: Այս հարցի շուրջ եղած կարծիքները հակասական են և այժմ էլ՝ արդիական: Ինչևիցե, խոսքը գնում է մեծ ողբերգության մասին: Այն եղել է մեր դարաշրջանի առաջին ցեղասպանությունը: Եվ ես ընդունում եմ այդ: Անկախ քվեարկության արդյունքներից, նրանից, թե ինչ տեսքով կընդունվի առաջարկի վերջնական տարբերակը՝ ես ցանկանում եմ, որպեսզի կանադացիներն իմանան այն մասին, թե ինչ է տեղի ունեցել 1915 թվականին:

Ես մի քանի անգամ մասնակցել եմ 1915թ. ապրիլյան իրադարձությունների ամենամյա հիշատակի օրվան: Իհարկե բոլորն էլ գիտեն, որ կոտորածի հեղինակները մեկ օրվա՝ 1915թ. ապրիլի 24-ի ընթացքում են ոչնչացրել 1,5 միլիոն մարդ: Ցեղասպանությունն իրականացվել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, որին զոհ գնացին միլիոնավոր մարդիկ: Հպարտությամբ ուզում եմ նշել, որ իմ հայրենակիցներից ոմանք մասնակցություն են ունեցել ցեղասպանության զոհերի ճակատագրում:

Կոտորածի տարիներին ծնողներին կորցրած մեծ քանակությամբ որբեր 1921 թվականին ուղարկվել են Կանադա: Նրանց տեղավորել էին Օնտարիոյում՝ Ջորջթաունից ոչ հեռու: Նրանց հենց այդպես էլ անվանում էին՝ «Ջորջթաունի երեխաներ»: Նրանք դպրոց էին հաճախում և աշխատում ֆերմաներում: Վերջերս Տորոնտոյի հայկական համայնքը նրանց պատվին կազմակերպել էր շնորհհանդես, որին մասնակցեցի նաև ես: Սա շատ հուզիչ էր:

Այդ մարդիկ արդեն շատ ծեր էին: Նրանցից շատերը ժպտում էին, սակայն նայելով կնճիռներով ակոսված նրանց ձեռքերին և դեմքերին, ես պատկերացրեցի, թե ինչ են վերապրել նրանք 81 տարի առաջ:

Մենք բոլորս էլ կարող ենք խոսել ողբերգության կամ ցեղասպանության մասին, սակայն եկեք խորհենք, թե ինչպես կարող էր նման բան կատարվել և խնդրենք Աստծուն, որպեսզի դա այլևս չկրկնվի:

Ցեղասպանության արդյունքում հայերի մեծ մասը, թողնելով իրենց պատմական հայրենիքը, ապաստան գտավ Միջին Արևելքում, Արևելյան Եվրոպայում, ինչպես նաև Կանադայում, որտեղ նրանք ստեղծեցին իրենց համայնքները: Ոմանք փախուստի էին դիմում, իսկ ոմանք էլ՝ բռնի տեղահանվում:

Կանադայի բազմամարդ համայնքի ներկայացուցիչներն ավելի շուտ ոչ թե Կանադայի հայերն են, այլ՝ հայկական ծագումով կանադացիներ:

Չի կարելի դիտել անցյալի այդ ողբերգությունը ներկա օրերից անջատ: Մարդը սպանել է և այժմ էլ շարունակում է սպանել: Եղել է Առաջին համաշխարհային պատերազմը, եղել է ռուսական հեղափոխությունը, նրանք խլել են միլիոնավոր կյանքեր:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ցեղասպան գերմանական համակենտրոնացման ճամբարներում ոչնչացվել են միլիոնավոր հրեաներ, գնչուներ և քաղաքական այլախոհներ:

Կոմունիստական հեղափոխությունը Չինաստանում ցեղասպանություն չէր, սակայն նրան զոհաբերվեցին միլիոնավոր կյանքեր:

1947-1948թթ. Հնդկաստանի մասնատման ընթացքում՝ Պակիստանի և Հնդկաստանի միջև սահման անցկացնելու ժամանակ, սպանվեց երկու միլիոն մարդ: Սա սարսափելի ողբերգություն էր:

Իսկ վերջերս, մենք դարձանք Ռուանդայում և Բոսնիայում իրականացված ահավոր կոտորածների վկաները:

Այսօր քննարկվող առաջարկի գլխավոր նպատակն է ճանաչել այն, ինչ պատահեց 1915-ին Հայաստանում: Խոսքը գնում է միայն այն մասին, որ կանադացիները գիտակցեն այս իրադարձությունների ողջ դրամատիզմը:

Կարծում եմ պատմության դասագրքերը ոչ բավարար չափով են լուսաբանում այդ պատմական իրադարձությունները: Միգուցե ես սխալվում եմ: Ներողություն եմ խնդրում, եթե այդ իրադարձություններին նվիրված ոչ բոլոր գրքերն ու հոդվածներն եմ կարդացել: Կանադայում իմ ուսուցման երկար տարիների ընթացքում ոչ ոք չի խոսել այդ կոտորածի մասին: Ցավում եմ, որ մենք բավարար ջանքեր չենք գործադրում պատմության որոշ տեսակետների վերաբերյալ մեր ուսանողներին ավելի ամբողջական գիտելիքների մատուցման հարցում:

Ինչ վերաբերում է այս առաջարկությանը, որտեղ հիշատակվում է 1,5 միլիոն սպանվածների մասին,կարծում եմ, որ մենք պետք է խուսափենք ծայրահեղություններից:

Հուսով եմ՝ մենք ճանապարհ կգտնենք հաշտեցնելու ընդդիմության առաջարկությունը կառավարության ուղղման և իրենց ենթաուղղումն առաջարկած ռեֆորմիստական կուսակցության դիրքորոշումների հետ, միահամուռ կերպով կմշակենք ու կընդունենք առաջարկության տեքստը:

ՔԵՅԹ ՄԱՐՏԻՆ (Էսքիմալք-Ջուաո դե ֆուքա, ռեֆորմիստական կուսակցություն)

Պարոն նախագահող, շնորհակալություն եմ հայտնում պատգամավորին իր հոյակապ ելույթի համար:

Այսօրվա բազմաթիվ ելույթներում մենք խոսել ենք աշխարհի տարբեր տարածաշրջաններում՝ Հայաստանում, Կամբոջայում, Ռուանդայում, Բուրունդիայում և այլուր իրականացված ցեղասպանությունների մասին:

Մենք սգում ենք այդ ողբերգությունները: Սակայն ի՞նչ ենք արել, որպեսզի ապագայում կանխենք ցեղասպանությունները:

Արդյո՞ք այդ առթիվ պատգամավորն ունի կոնստրուկտիվ գաղափարներ,թե ինչպես կարող է Կանադան աշխատել միջազգային հանրության իր պարտնյորների հետ միասին, որպեսզի կանխվեն ցեղասպանությունները:

ԴԵՐԵՔ ԼԻ

Պարոն նախագահող,ես շնորհակալություն եմ հայտնում այս հարցի համար: Վստահ եմ, որ օրենսդիրների դերում հանդես եկող պատգամավորները պատրաստ են անել իրենց ուժերի չափով ամեն հնարավորը, որպեսզի ապագայում բացառեն նման կարգի ողբերգությունների մասին խոսելու անհրաժեշտությունը:

Ուզում եմ մեջբերել հնդկական խորհրդարանի պատգամավորներից մեկի՝ մի անգամ ինձ ասված բառերը: Մի հարցի շուրջ բանավեճի ժամանակ այդ խորհրդարանականն ասաց, որ ուժին պետք է ուժով պատասխանել: Ես համարում եմ, որ ցեղասպանության վտրճերին անհրաժեշտ է ուժ հակադրել:

Միացյալ Ազգերի Կազմակերպությունը պետք է ավելի շատ ուշադրություն դարձնի արագ արձագանքման ուժերի ստեղծման առաջարկին:

Եթե մենք շարունակենք դեռ հիսուն տարի էլ փիլիսոփայել, քննարկել, թե ինչպիսի միջոցառումներ է պետք ձեռնարկել այդպիսի ողբերգություններ թույլ չտալու համար, ապա կրկին ականատես կլինենք այնպիսի ջարդերի, ինչպիսիք տեղի են ունեցել Ռուանդայում, Կամբոջայում, և չենք կարողանա սրան ոչինչ հակադրել: Այս խնդրի միակ լուծումն արագ արձագանքման ուժերի ստեղծումն է ցեղասպանության վտրճերն արմատախիլ անելու և խաղաղ բնակչությանը պաշտպանելու համար:

ՍԻԾԵԼ ԴԱՎԻՈՒԼ (Աունթսիք, Կվեբեկի խմբակցություն)

Պարոն նախագահող, պատասխանելով գործընկերոջս հարցին, հարգելի պատգամավորը խոսեց այսօրվա առաջարկության խորհրդանշության մասին: Ես փոքր-ինչ շփոթության մեջ եմ, քանզի ինձ համար սա շատ ավելին է, քան ուղղակի խորհրդանիշ:

Միայն ձեռնամուխ լինելով հայերի ցեղասպանության ուսումնասիրման աշխատանքներին՝ ես ուշադրություն դարձրեցի հրեաների մասսայական ոչնչացման նախօրեին Ադոլֆ Հիտլերի կողմից արտասանված այս բառերին. «Ո՞վ է այսօր հիշում հայերի ցեղասպանության մասին»:

Աշխարհի բոլոր բռնապետները պետք է գիտակցեն, որ իրենց ոճրագործությունները միջազգային հանրության կողմից անպատիժ չեն մնա: Ահա թե ինչու են Կվեբեկի խմբակցության անդամներն ու ռեֆորմիստները պնդում առաջարկությունում «ցեղասպանություն» տերմինի գործածման անհրաժեշտությունը:

«Ողբերգություն» բառը թուլացնում է ողջ իմաստը: Կոչ եմ անում պատգամավորներին ավելի խորը թափանցել մեր առաջարկության իմաստի մեջ և միանալ մեզ՝ կողմ քվեարկելով առաջարկությանը իր նախնական տեսքով:

ԴԵՐԵՔ ԼԻ

Պարոն նախագահող, ես համաձայն եմ համարյա այն ամենի հետ, ինչ ասաց պատգամավորը: Շնորհավորում եմ նրան՝ ներկայացված այս առաջարկության համար: Ես չեմ խոսել առաջարկության «խորհրդարձության մասին, ավելին, ես այդպես չեմ էլ մտածում: Այսօրվա նախաձեռնության նպատակը միանգամայն կոնկրետ ու պարզ է:

Իսկ ինչ վերաբերում է տերմինաբանության առիթով ծավալված բանավեճերին, ապա ես արդեն ասել եմ,որ մտադրություն չունեմ դրանց մասնակցելու: Ես շատ վաղուց մշակել եմ իմ վերաբերմունքը 81 տարի առաջ կատարվածի նկատմամբ և միայն ցանկանում եմ, որպեսզի Պալատն ընդունի այս իրադարձությունների վերաբերյալ ընդունելի բանաձև:

ՄՈՂ ԴԵՔՅԵՆ (Լավալ-Էստ, Արևելյան Լավալ, Կվեբեկի խմբակցություն)

Պարոն նախագահող, ցանկանում եմ ելույթ ունենալ պաշտոնական ընդդիմության կողմից այսօր բարձրացված՝ հայերի ցեղասպանությանը նվիրված, այս շատ կարևոր հարցի առիթով: Մեր քննարկումների նպատակն է հարկադրել Կանադայի կառավարությանը պաշտոնապես ճանաչել 1915թ. ցեղասպանությունը: Մարդկության դեմ կատարված այս հանցագործությունը չպետք է մոռացվի:

Իր այս նախաձեռնությամբ Կվեբեկի խմբակցությունը առաջարկում է, որպեսզի ցեղասպանության 81-ամյա տարելիցի առթիվ կառավարությունը սահմանի և յուրաքանչյուր տարվա ապրիլի 20-ից 27-ը նշի իր մերձավորի նկատմամբ մարդու կողմից կատարված հանցագործությունների հիշատակի շաբաթ ու հայտարարի, որ այդ ոճրագործությունը պետք է դատապարտվի ողջ մարդկության կողմից:

Կվեբեկի խմբակցության նախաձեռնությունը լիովին համապատասխանում է լիբերալ կուսակցության անդամ Դոն Վալեյ-Նորդի պատգամավորի կողմից 1995թ. ապրիլին ներկայացված առաջարկի ոգուն: Ցավոք իր որոշ գործընկերների հակազդեցության պատճառով առաջարկը չդրվեց քվեարկության:

Սրանով կառավարությունը ստվեր գցեց մեր երկրի՝ որպես մարդու իրավունքների պաշտպանի համբավի վրա:

Մենք հանդիսանում ենք մեր կառավարության քաղաքականության ուղղության տարօրինակ փոփոխման ականատեսները: Լիբերալների կառավարության վարքագիծը վշտացնում է: Լիբերալ պատգամավորները, ներկա լինելով ընդդիմության պաշտոնական ճաշկերույթին, առանց տատանվելու խոսում էին Պալատի կողմից հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտության մասին: Վերադառնալով իշխանության գլուխ՝ լիբերալների մտադրությունները փոխվեցին: Մարդու իրավունքների խնդիրներն արդեն առաջնակարգ բնույթ չեն կրում, և շատ հաճախ նրանք ենթարկվում են տնտեսական շահերին:

Քոլորովին վերջերս արտաքին կապերի նոր նախարարը ճնշում գործադրեց Մոնրեալի քաղաքագլխի վրա, որպեսզի վերջինս հրաժարվի

հայերի ցեղասպանության զոհերի հուշարձանի կանգնեցման իր մտադրությունից: Եվ այսօր «ցեղասպանություն» տերմինը «ողբերգական իրադարձություններ» բառերով վոխարինելու փորձերում երևում է նախարարի ցանկությունը՝ ժխտել հենց ցեղասպանության փաստը կամ ծայրահեղ դեպքում՝ նվազեցնել այդ ոճրագործության մասշտաբները: Սրանում է կայանում լիբերալների կառավարության գաղափարը:

Աումնքսիքի պատգամավորի՝ իմ գործընկերոջ և ընկերոջ առաջարկին աջակցելու իրենց մերժումով լիբերալ կառավարությունը կգործի առավել ծայրահեղական ուժերի օգտին, որոնք ցանկանում են մոռացության մատնել պատմական հիշողությունը: Այն պետք է պաշտպանի կվեբեկցիների և ընդհանրապես կանադացիների հիմնարար արժեքները և ոչ թե նրանց հակառակ գնալ:

Քարեբախտաբար արդեն երկար տարիներ Կվեբեկի և Օնտարիոյի կառավարություններն իրենց քաղաքականությամբ պաշտպանում են մարդու իրավունքների համապարփակ սկզբունքները: 1980թ. երկու գավառական կառավարություններն էլ պաշտոնապես ճանաչել են հայերի ցեղասպանությունը և նույնն են պահանջում ֆեդերալ կառավարությունից, պահանջում են արդեն 16 տարի: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովուրդը ենթարկվել է Օսմանյան կառավարության հետապնդումներին:

Օսմանյան կայսրությունում ոչնչացվել են 1,5 միլիոն հայեր, իսկ 500000-ից ավել մարդ բռնագաղթեցվել է: Անթույլատրելի է լռել այդ մասին:

Եթե մենք ուզում ենք, որպեսզի անպատժելիությունը չդառնա ժողովուրդների նոր դժբախտությունների պատճառ (մեր հիշողությունում դեռ թարմ են վերջին ոճրագործությունների օրինակները), Կանադայի խորհրդարանն արդեն այսօր պետք է ճանաչի, որ ցեղասպանությունը, որի զոհը դարձավ հայ ժողովուրդը, հանդիսանում է այս դարի ամենամեծ ողբերգություններից մեկը: Պետք է խուսափել մեղմածություններից, բառերը պետք է իրենց իրական իմաստով արտացոլեն իրադարձությունները:

Նման հանցագործությունների վրա աչք փակելու, ժամանակի ընթացքում դրանք մոռացության մատնելու փոխարեն՝ անհրաժեշտ է իրերն անվանել իրենց անուններով և միջազգային ճշմում գործադրել Թուրքիայի վրա, որպեսզի այն վերջապես ընդունի իր պատասխանատվությունը ցեղասպանության համար:

Ավելի վաղ ես խոսել եմ այն մասին, որ մարդու իրավունքների նկատմամբ կառավարության դիրքորոշումն առաջացնում է ճնշող տպավորություն: Կառավարության քաղաքականության մեջ գլխավորը արտաքին առևտրական կապերի զարգացումն է: Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կենտրոնի կողմից կազմակերպած հարցազրույցի ժամանակ, կանադացի արտահանողների միության նախագահը հատուկ ընդգծեց, որ մարդու իրավունքների և արտաքին առևտրի հարցերն իրար չեն հակասում: Դեռ ավելին, նա ավելացրեց, որ ելնելով սեփական շահերից՝ ձեռնարկությունները պետք է ինքնուրույն կառուցեն իրենց արտաքին տնտեսական կապերը:

Տվյալ դեպքում կառավարության առաջնությունները հակասում են բոլոր կվեբեկցիների և կանադացիների արժեքների սանդղակին:

Վերջերս Կանադայի արտաքին քաղաքականության տարբեր տեսակետների առիթով անցկացվել է հասարակական կարծիքի հարցում: Կվեբեկցիների 53 տոկոսը և կանադացիների 48 տոկոսը պատասխանել են, որ պետության արտաքին քաղաքականության մեջ առավել մեծ նշանակություն են տալիս մարդու իրավունքների պաշտպանությանը: Կվեբեկում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրները համարվում են ավելի կարևոր, քան առևտրի զարգացումը: Քարեբախտաբար Կվեբեկի և Կանադայի բնակչությունն ապացուցեց, որ շատ ավելի կարեկցանքով է վերաբերվում ահաբեկչության զոհ դարձած ժողովուրդներին, քան նրանց կառավարությունը: Կվեբեկցիների և կանադացիների արժեքներն արտացոլված են մարդու իրավունքների համապարփակ Խարտիայում: Նրանք պետք է ոգևորեն բոլոր կանադացի քաղաքագետներին իրենց միջազգային ասպարեզում: Հավասարության, արդարության, հիմնարար իրավունքների հարգման գաղափարները միասնական են տարբեր մշակույթների, լեզուների և մայրցամաքների համար և չեն ենթարկվում ժամանակի ազդեցությանը:

Օրինակ՝ դժվար չէ առևտրական կապեր զարգացնել Չինաստանի՝ մի երկրի հետ, որտեղ համատարած խախտվում են մարդու իրավունքները: Ես հրաժարվում եմ հավատալ, որ ապրել բռնատիրական վարչակարգի իշխանության ներքո չինացիների մտածելակերպն է: Ճիշտ այդպես էլ չեմ կարող ընդունել այն միտքը, որ կինը պետք է ունենա ոչ հավասար իրավունքներ տղամարդու հետ՝ միայն կրոնական համոզմունքներից ելնելով:

Մեկ այլ օրինակ՝ Կանադայի կառավարությունը, առևտուր անելով այս կամ այն պարտնյորի հետ, պարտավոր է արձագանքել, եթե տվյալ երկրում օգտագործվում է մանկական աշխատանքը: Կառավարությունն ունի բարոյական իրավունք պաշտպանել և ապահովել մարդու իրավունքները: Սա նրա միջազգային գործունեության սկզբունքային մոտեցումներից մեկն է:

Վերջում կուզ եմ անում գործընկերներիս աջակցել Աունթսիքի պատգամավորի առաջարկությանը՝ իր մերձավորի նկատմամբ մարդու կողմից կատարված ոճրագործությունների հիշատակի շաբաթ սահմանելու մասին: Այսպիսով մենք ամեն տարի կհիշեինք անցյալի սխալները, և Կանադայի կերպարը կհամապատասխաներ կվեբեկցիների և կանադացիների արժեքների սանդղակին:

ՍԱՐԳԻՍ ԱՍԱՏՈՒՐՅԱՆ (Դոն Վալեյ-Նորդ, լիբերալ կուսակցություն)

Պարոն նախագահող, ես ցանկանում եմ հարց տալ Սկարբորուգ-Ռուժ Ռիվերի պատգամավորին:Նույն հարցը հասցեագրում եմ Կվեբեկի խմբակցության իմ գործընկերոջը: Հարցն այդ վերաբերվում է ցեղասպանության և հոլոքոստի պատմության դասավանդմանը դպրոցներում: Սակայն ուզում եմ նախապես հայտարարություն անել: Այս հարցով ես զբաղվում եմ 1965-ից, այսինքն, արդեն 31 տարի: Այսօրվա յոթժամյա քննարկումների ընթացքում ոչ մի անգամ չօգտագործվեց «այսպես կոչված» բառերը, և սա առաջին անգամ է այս տարիների ընթացքում: Երախտապարտ եմ Պալատին և պատգամավորներին, որ այսօրվա բանավեճի ժամանակ ոչ մի անգամ չարտասանվեց «այսպես կոչված» արտահայտությունը: Ոչ

որ այսօր չժխտեց որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իրականացվեց մեր հարյուրամյակի առաջին ցեղասպանությունը, որի զոհերը դարձան 1,5 միլիոն մարդիկ:

Բացարձակապես համոզված եմ, որ Կանադայի և ամբողջ աշխարհի հայերը պատրաստ են անել այն, ինչ արեցին հրեաները Հոլոքոստից հետո: Եթե թուրքական կառավարությունը ճանաչի ցեղասպանությունը, ապա նրանք կներեն, սակայն երբեք չեն մոռանա: Հանցագործության զոհերն այսօր պատրաստ են ներել, եթե նրանց խնդրեն, սակայն երբեք չեն մոռանա ցեղասպանությունը, չեն մոռանա, որպեսզի այն չկրկնվի: Վերադառնամ իմ հարցին: Արդյո՞ք համաձայն է պատգամավորը, որ ցեղասպանությունը կամ ինչպես էլ որ այն անվանեն՝ մարդկության դեմ կատարված ոճրագործություն, ողբերգական իրադարձություններ, կոտորած, պետք է դառնա դպրոցական ծրագրում դասավանդման առարկա,որպեսզի երիտասարդ սերունդը լավ իմանա անցյալը: Լավ իմանալով պատմությունը՝ չես համարձակվի կրկնել նրա սխալները: Մենք հույսեր ենք կապում դրա հետ, սակայն խնդիրը նրանում է, որ պատմությունն անընդհատ կրկնվում ու կրկնվում է:

ՄՈՂ ԴԵԲՅԵՆ

Պարոն նախագահող, ես շնորհակալություն եմ հայտնում Դոն Վալեյ-Նորդի պատգամավորին իր հարցի և մեկնաբանության համար: Պարոն նախագահող, լիովին համաձայն եմ նրա բոլոր մեկնաբանությունների հետ՝ բացառությամբ մեկի: Նա ասաց, որ ոչ ոք չի ժխտում հայերի ցեղասպանության փաստը: Իսկապես, ոչ ոք չի ժխտում դա: Սակայն ես հարց եմ տալիս,եթե ոչ ոք չի ժխտում,որ ցեղասպանությունը տեղի է ունեցել, ապա ինչու՞ են մերժում պաշտոնապես այն ճանաչել: Ահա թե ինչու չեմ կարող հասկանալ լիբերալ պատգամավորների վարքագիծը:

Ինչ վերաբերվում է աշխարհում տեղի ունեցած ցեղասպանությունների պատմությունը Կվեբեկում և Կանադայում դասավանդելու անհրաժեշտության հարցին, ես լիովին համաձայն եմ դրա հետ: Որպես դպրոցներում երկարամյա աշխատանքի փորձ ունեցող մանկավարժ՝ կարող եմ ասել, որ շատ կարևոր է անցյալի ողբերգական բոլոր սխալներն ընդգրկող պատմության դասավանդումը: Մեր երեխաները պետք է իմանան պատմությունը:

ՍՏԵՖԱՆ ԲԵՐԺԵՐՈՆ (Վերշեր, Կվեբեկի խմբակցություն)

Պարոն նախագահող, պետք է խոստովանեմ, որ ինձ համար դժվար է ելույթ ունենալ այսօր Աուշքսիքի պատգամավորի՝ իմ գործընկերոջ նախաձեռնության առիթով: Դժվար է ոչ թե այն պատճառով,որ ես համաձայն չեմ նրա առաջարկության հետ, բոլորովին ընդհակառակը, որովհետև քննարկման թեման այդքան տխուր է: Այնուամենայնիվ, ես որոշեցի ելույթ ունենալ, քանզի վստահ եմ, որ ներկա և ապագա սերունդները չպետք է մոռանան այդ ողբերգության մասին:

Ո՞վ չի լսել դարասկզբին կատարված բռնությունների և վայրագությունների մասին, որոնց զոհը դարձավ հայ ժողովուրդը: Անկասկած դա ցեղասպանություն էր հենց այն իմաստով, որը սահմանել է ՄԱԿ-ը 1948-ին: Այս բառը փոխարինելու յուրաքանչյուր փորձ կեղծ է և երեսպաշտ:

Ցեղասպանությունը դա ազգային, էթնիկական, կրոնական հողի վրա մի խմբավորման կողմից կազմակերպված մարդկանց սիստեմատիկ ոչնչացումն է:

Հայ ժողովուրդը ցեղասպանության զոհ դարձավ: Ծանր է, սակայն անհրաժեշտ է հիշել 1915թ. ապրիլի 24-ին սկիզբ առած ողբերգական իրադարձությունները: Հենց այդ օրը սկսվեց հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, մեր դարի առաջին ցեղասպանությունը՝ իր զոհերի քանակով առավել շոշափելիներից մեկը: 1,5 միլիոնից ավել անմեղ խոշտանգվածներ, քանդված եկեղեցիներ ու հուշարձաններ, վերանվանված քաղաքներ: Հանցագործները ցանկանում էին ջնջել պատմական հիշողությունից այդ ժողովրդի մասին ամեն տեսակի հիշատակում:

Այս իրադարձությունները ինքնաբուխ չէին, սրանք իրենցից ներկայացնում էին մանրակրկիտ պատրաստված, կազմակերպված գործողություն, որը մեթոդաբար իրագործվում էր կյանքում: Կվերեկի խմբակցությունը համոզված է, որ հայերի ցեղասպանությունը պետք է հավերժ մնա մարդկային հիշողության մեջ: Դուք կհարցնեք, թե ինչու. որպեսզի մեր նմանների կողմից կազմակերպված այդ ողբերգությունը չկրկնվի:

Երբեմն կարող է թվալ, որ ցեղասպանությունը բացառիկ երևույթ է, սակայն սա, ցավոք, այդպես չէ: Մենք չենք կարող և չպետք է մոռանանք, որ 1915 թվից մեր մոլորակի վրա կատարվել են բազմաթիվ արյունալի հանցագործություններ: Ինչպես մոռանալ հրեաների և գնչուների ճակատագրի մասին հիտլերյան վարչակարգի տարիներին, 1975 թվին կամբոջացիների տանջանքները կարմիր քխմերների օրոք, կամ էլ 1994-ին 500000 թութսիների Ռուանդայում: Արդյո՞ք հնարավոր է մոռանալ քաղաքացիական բնակչության էթնիկական մաքրումների գործողությունները նախկին Հարավսլավիայում: Կամ էլ չինացիների կողմից կիրառվող բռնությունները Տիբեթի բնակչության նկատմամբ, Ինդոնեզիայի ահաբեկչական վարչակարգը Արևելյան Տիմորում: Բերված օրինակները, իսկ դրանց ցուցակը կարելի է շարունակել, շատ պերճախոս են: Այդ օրինակների հետևում կանգնած են միլիոնավոր սպանվածներ, բռնագաղթվածներ, փախստականներ, առանց ընտանիքի և հայրենիքի մնացածներ:

Մարդու իրավունքների հարցերով ՄԱԿ-ի Գերագույն կոմիսարի տվյալների համաձայն, վտրկվելով պատերազմներից և հետապնդումներից, այսօր իրենց երկրների սահմաններից դուրս ապրում են 27 միլիոնից ավել մարդ: Այդ թիվը՝ 27 միլիոն, արդեն վկայում է ինքն իր մասին:

Ամեն օր սարսափով արձանագրում ենք հերթական բռնության բարբարոսական կիրառումը: Արդյոք ե՞րբ մարդը կգիտակցի սեփական սխալները: Այդ ցեղասպանություններում ամենասարսափելին այն է, որ շատ հաճախ հանցագործությունների հեղինակները մնում են անպատիժ: Ո՞վ կպատասխանի այդ մահերի, տանջանքների համար:

Ցեղասպանությունը ծավալուն հանցագործություն է,այն չի կարող կազմակերպվել և իրականացվել առանձին անհատների կողմից: Անհրաժեշտ է պետության ղեկավարների մասնակցությունը կամ էլ, ծայրահեղ դեպքում, նրանց համաձայնությունը:

Հաճախ անցյալում ցեղասպանությունների կազմակերպիչներն իրենց գործունեության համար ոչ մի պատասխանատվություն չեն կրել: Մեզ բոլորիս կարելի է շնորհավորել 1993թ. ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի

կողմից «Լա Խեյ» միջազգային ատյանի հիմնադրամի կապակցությամբ, որը հետաքննեց նախկին Հարավսլավիայում կատարված հանցագործությունները: Դա քայլ է ճիշտ ուղղություններով: 1995թ. հիմնադրվեց մեկ ուրիշ միջազգային ատյան, որն այս անգամ կհետաքննի հանցագործությունները Ռուանդայում:

Այս երկու ատյաններն էլ նոր են ստեղծվել և քիչ փորձ ունեն, սակայն հուսով ենք, որ շուտով ձեռք կբերեն չարը պատժելու իրական հնարավորություններ:

Հետաքննելով նախկին Հարավսլավիայում կատարված հանցագործությունները՝ ատյանը կայացրեց մոտ 50 մեղադրանք, այդ թվում նաև բոսնիական սերբերի առաջնորդներ Ռադովան Կարաջիչի և Ռադկո Մլադիչի նկատմամբ: Խնդիրն այսօր այլ երկրներում ապաստարան գտած կամ էլ պետության հովանավորութան տակ գտնվող անձանց դատելու անհնարինության մեջ է և դրա հետ ատյանը բախվեց նախկին Հարավսլավիայում և Ռուանդայում: Ռազմական հանցագործությունները չպետք է անպատիժ մնան: Միջազգային հանրությունը, այդ թվում նաև Կանադան, իրավաբանական և հոգեբանական պարտք ունեն. գտնել ու պատժել հանցագործներին: Գոյություն ունեն նաև առաջարկներ Միջազգային դատարանին տրամադրել լիազորություններ՝ ինտերպոլի օգնությամբ կասկածյալներին բռնելու համար, որտեղ էլ որ նրանք գտնվեն:

Այսօր Կվեբեկի խմբակցությունը նորից կրկնում է իր այն միտքը, որն արտահայտվել է Դեյտոնում՝ խաղաղության համաձայնագրերի ստորագրման ժամանակ: «Լա Խեյ» միջազգային ատյանը պետք է շարունակի իր աշխատանքը և դատապարտի ռազմական հանցագործներին: Շատ կարևոր է, որ ատյանն իր գործունեության ընթացքում պահպանի անկախությունը, որպեսզի ցեղասպանությունը իրականացնելու մեջ մեղադրվող անձանց համար պատժի հետաձգումներ և ամեն տեսակի ներումներ պահանջող որոշ կուսակցությունների կողմից ճնշման չենթարկվի:

Մենք գիտենք, որ Կանադան երկար տարիների ընթացքում համաշխարհային առաջնորդներից մեկի համբավն է վայելել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Այդ հոյակապ համբավի հիմքերը դրեցին Կանադայի նախկին վարչապետներ Լեստեր Բ. Պիրսոնը, որը 1957թ. ՄԱԿ-ի խաղաղարար ուժերի ստեղծման իր նախաձեռնության համար ստացավ խաղաղության Նոբելյան մրցանակը, ինչպես նաև Ջոն Դիֆենբեյկերը՝ մարդու իրավունքների պաշտպանը, որը 1961թ. դուրս եկավ Հարավային Աֆրիկայում այդ տարիներին տիրող Ապարտեիդի վարչակարգի դեմ:

Կվեբեկի խմբակցությունը համոզված է,որ Համայնքների Պալատը վերջապես պարտավոր է վերջնականապես ճանաչել հայերի ցեղասպանությունը: Առաջարկության մերժումը կհաստատի մեր ամենավատ կասկածները մարդու իրավունքների հարցերի նկատմամբ լիբերալ-մեծամասնության վերաբերմունքի մասին:

Թուրքիայի հետ բարգավաճող առևտուրը չպետք է պատճառ դառնա պատմական փաստերի վրա աչք փակելու համար:

Արդեն 1980թ. Օնտարիոյի օրենսդրական ասամբլեան ճանաչել է հայերի ցեղասպանությունը, իսկ 1985թ. իր հերթին, Կվեբեկի ազգային ասամբլեան նույնպես ճանաչեց ցեղասպանությունը: 1995թ. ապրիլին ռու-

սական խորհրդարանը ևս ճանաչեց հայերի ցեղասպանությունը: Ապա ինչի՞ է սպասում լիբերալ մեծամասնությունը:

Միջազգային տնտեսական կապերի բուռն զարգացման դարաշրջանում առանձնապես է կարևորվում մարդու իրավունքների պաշտպանության հարցը: Լիբերալների իշխանության գալու ժամանակներից Կանադայի արտաքին քաղաքականությունը, որի հիմնական շեշտը միշտ էլ դրվել է մարդու իրավունքների պաշտպանության հարցերի վրա, կրել է որոշ փոփոխություններ: Առաջին պլան են մղվել առևտրական շահերը: 1994թ. ապրիլին, ելույթ ունենալով այս Պալատում, վարչապետն ասել է. «Մեր քաղաքականությունը միշտ էլ ուղղված է եղել մարդու իրավունքների պաշտպանությանը, և մենք այդ հարցը բարձրացնում ենք այն բոլոր երկրներում, որոնց հետ ունենք առևտրական կապեր»:

Սակայն վերջին կառավարական այցն ասիական երկրներ ցույց տվեց, թե որքան քիչ ուշադրություն է հատկացնում կառավարությունը մարդու իրավունքների խնդիրներին:

Ահա թե ինչու ինձ հատուկ ողջ եռանդով և ավյունով աջակցում եմ յուրաքանչյուր տարվա ապրիլի 20-ից 27-ը մարդկության դեմ կատարված ոճրագործությունների հիշատակի շաբաթ նշելու առաջարկությանը: Համայնքների Պալատը և լիբերալ մեծամասնությունը պետք է պաշտոնապես ճանաչեն 1915թ. ցեղասպանությունը, որպեսզի նորից չկրկնվեն նման ողբերգությունները:

Վերջում կուզենայի ողջույնի խոսքերով դիմել ծագումով հայ բոլոր մեր հայրենակիցներին՝ իրենց հրաշալի լեզվով: (Պատգամավորը խոսում է հայերեն):

ԷՆԴԻ ՍԿՈԹԹ (Ֆրեդերիքթոն-Յորք-Սաքբարի, լիբերալ կուսակցություն)

Պարոն նախագահող, ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Աունթսիքի պատգամավորին Պալատի քննարկմանն առաջադրված իր առաջարկի համար: Իր կողմից բարձրացված հարցերն ունեն մեծ նշանակություն և համընդհանուր հետաքրքրություն են ներկայացնում:

Պատմության մեջ դաժանությունը միշտ էլ լայն աշխարհագրություն է ունեցել, որն ընդգրկել է զանազան երկրներ և ժողովուրդներ: Երբ իրենց էթնիկական ծագման, կրոնի և ռասայի պատճառով զոհվում են անմեղ տղամարդիկ, կանայք և երեխաներ, դա ողբերգություն է ողջ մարդկության համար:

Մենք՝ կանադացիներս, պետք է գիտակցենք այդ իրողությունը: Ժամանակին Կանադայում ապաստարան գտած մեր հայրենակիցներից շատերն եղել են անմարդկային պատերազմների և կեղեքումների զոհերը:

Դժբախտություն վերապրած մարդկանց մենք պետք է օգնենք մեր կարեկցանքով, բուժենք նրանց խորը հոգեկան վերքերը: Աշխարհի տարբեր անկյուններից Կանադա ժամանած բազմաթիվ ներգաղթյալների համար մեր երկիրը դարձավ մի վիթխարի ապաստարան:

Կանադան բացառիկ երևույթ է հանդիսանում մշակութային, էթնիկական, կրոնական և լեզվական խմբերի իր բազմազանությամբ, և մենք հպարտանում ենք դրանով:

Մենք կամենում ենք կառուցել արդար միասնական հասարակություն, որը հիմնված կլինի ժողովրդավարության, իրավահավասարության

և իր բոլոր անդամների նկատմամբ վոխադարձ հարգանքի սկզբունքների վրա՝ նրանց էթնոսի, կրոնի, լեզվի և մշակույթի ողջ բազմազանությամբ հանդերձ:

Ինչպիսի՞ք են այդ հասարակության բաղադրամասերը: Առանձնացնենք երեք հիմնականները՝ սոցիալական արդարությունը, հասարակական կյանքում բոլոր քաղաքացիների մասնակցությունը և ինքնության զգացումը: Ինչպե՞ս կառուցել այդ երեք սկզբունքները միավորող հասարակությունը:

Մենք առաջարկում ենք բոլոր կանադացիներին հնարավորություն տալ մասնակցել մեր հասարակության կառուցմանը և օգտվել նրա բոլոր առավելություններից՝ անկախ նրանց էթնիկական ծագումից, կրոնից և ռասայից:

Կանադական խճանկարը պարտադրում է մեզ զգուշորեն վերաբերվել այն կազմող մշակույթների բազմազանությանը: Նրանց նկատմամբ հարգալից վերաբերմունքը մեր ավանդույթն է: Մենք հասկանում ենք, որ մշակույթների բազմազանությունը մեր հարստությունն է: Մեր հասարակության կառուցման համար բոլորին ներգրավելու նպատակով մենք աշխատում ենք կառավարության տարբեր մակարդակների կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների և անհատ կանադացիների հետ:

Արդյոք ո՞րն է մեր գործողությունների հիմնական շարժառիթը: Հաստատելով բոլոր կանադացիների իրավահավասարության սկզբունքները՝ մենք ապահովում ենք մեր ապագա բարեկեցությունը: Մենք այդ անում ենք, որովհետև Կանադան իր բազմազանությանը մնացած ողջ աշխարհի հայելին է: Հուսով ենք, որ մեր բազմազանության մեջ իրենց արտացոլումը տեսնելով՝ մյուս երկրները կհետևեն խաղաղության, փոխադարձ ըմբռնումի և արդարության մեր օրինակին:

Մեր երկրի հիմնադրման պահից այս բազմազանությունը կանադացիների համար դարձել է ամենօրյա իրողություն:

Եվ այսօր, երբ աշխարհի տարբեր տարածաշրջաններում կրոնական և ազգային բախումները խլում են բազմաթիվ կյանքեր, մեր երկիրը փարոս է հանդիսանում այն մարդկանց համար, որոնք ճաշակել են ցեղասպանության և տգիտության սարսափները: Մենք հարգանքի և հանդուրժողականության տիպար ենք հանդիսանում, որն այդքան պակասում է աշխարհի տարբեր տարածաշրջաններում: Սա նշվել է նաև Հարավ-Աֆրիկյան հանրապետության նախագահ Նելսոն Մանդելայի կողմից: Կանադացիներին ուղղված իր դիմումում նախագահ Մանդելան նշում էր Կանադայում մարդու իրավունքների հարգման երկարամյա ավանդույթի փաստը և հույս էր հայտնում, որ մեր ճիգերը շարունակելու են «հարստացնել ողջ մարդկությունը»:

Կառավարությունը վարում է հասարակության կառուցման հետևողական քաղաքականություն՝ հիմնված հետևյալ սկզբունքների՝ սոցիալական արդարության, հասարակական կյանքում բոլոր քաղաքացիների մասնակցության, մեր բոլոր հայրենակիցների միասնության և իրավահավասարության վրա՝ հուսալի պաշտպան հանդիսանալով բռնակալության ու կեղեքման դեմ: Այդ սկզբունքներն են,որ միավորում են բոլոր կանադացիներին՝ որպես մեկ միասնական ազգ:

Հիշենք, թե ովքեր ենք մենք և որտեղից ենք եկել, սակայն չմոռանանք, որ Կանադայի ապագան կախված է մեզնից, միահամուռ աշխատելու մեր ընդունակությունից:

Մենք ապրում ենք և պետք է ապրենք բազմազան հասարակությունում: Մեր խնդիրը նրանում է, որպեսզի այդ զանազանությունը ծառայի բոլորին: Հենց դրա շնորհիվ էլ Կանադան ողջ աշխարհում տեղի ունեցող կեղեքումների և բռնությունների զոհերի փարոսն է հանդիսանում:

Ծագումով հայ բոլոր կանադացիների համար ապրիլի 24-ը հուզումնալից օր է: Այդ օրը նրանք հիշում են անցյալի ողբերգական և վշտալի իրադարձությունները: Կանադայի կառավարական շրջաններն այդ սգո օրը միշտ էլ արտահայտել են իրենց անկեղծ կարեկցանքը: Մինչդեռ այսօր ներկայացված առաջարկն իր սկզբնական ձևակերպումով ոչ այնքան ճշգրիտ է արտահայտում Կանադայի դիրքորոշումը:

Կանադական կառավարությունը չի ժխտում այն ողբերգական իրադարձությունները, որոնք ցնցեցին հայ ժողովուրդը: Բոլոր հայերի հետ միասին, մասնավորապես նրանց, ովքեր Կանադայում գտան իրենց երկրորդ հայրենիքը, կառավարությունը սգում է 1915 թվականի ողբերգական իրադարձությունների զոհերի համար:

Ի հիշատակ անմարդկային վերաբերմունքի զոհ դարձած հայերի, հրեաների, բոսնիացիների, կամբոջացիների և այլ ժողովուրդների, ինչպես նաև գեյերի, լեսբուհիների, գունավորների՝ ես կոչ են անում Պալատին աջակցել և ընդունել կանանց հարցերով պետքարտուղարի կողմից առաջարկված ուղղումը:

ՏՈՆԻ ԻԱՆՆՈ (Թրինիթի-Սպադինա, լիբերալ կուսակցություն)

Պարոն նախագահող, ի նշանավորումն հայերի ցեղասպանության հիշատակի, Աունքսիքի պատգամավորի առաջարկության առիթով երջանիկ եմ ելույթի համար խոսք վերցնել:

Երևի իմ գործընկեր Աունքսիքի պատգամավորը հիշում է, որ 1995թ. ապրիլի 3-ին Դոն Վալեյ-Նորդի պատգամավորը հանդես եկավ պառլամենտական նախաձեռնությամբ և առաջադրեց թիվ 282 առաջարկը: Այդ առաջարկությունն էր սահմանել ու յուրաքանչյուր տարվա ապրիլի 20-ից 27-ը նշել իր մերձավորի նկատմամբ մարդու կողմից կատարված ոճրագործությունների հիշատակի շաբաթ: Ահա այդ առաջարկի տեքստը. «Պալատը համարում է, որ կառավարությունը պարտավոր է սահմանել յուրաքանչյուր տարվա ապրիլի 20-ից 27-ը իր մերձավորի նկատմամբ մարդկանց դաժան վերաբերմունքի հիշատակի շաբաթ, որպեսզի կանադացիները հիշեն, որ մի խումբ անձանց կամ որևէ երկրի կողմից իրականացվող ցեղասպանությունը՝ որպես ազգային քաղաքականության գործիք, հանդիսանում է ոճրագործություն մարդկության դեմ և այն պետք է դատապարտել ու չի կարելի մոռացության մատնել»:

Այս պահին, երբ մենք հիշում ենք հայերի ցեղասպանության ողբերգությունը, պատահական չէ, որ ես խոսեցի մարդկության դեմ կատարված հանցագործության մասին: Ցեղասպանության տարիներին այդ դժբախտները՝ կանայք, երեխաները և ծերերը չէին կարողանում հասկանալ, թե ինչու են իրենց կոտորում ու մահվան դատապարտում:

Գ-ավառական քաղաքներից ուղարկված բրիտանացի զինվորների հեռագրերը, Թուրքիայում ամերիկյան դեսպան և ականատես Հենրի Մոր-

գենքաուի վկայությունը խոսում են այն մասին, որ հայերի ոչնչացումը ծրագրված ու կազմակերպված է եղել կենտրոնական կառավարության կողմից:

Իր մերձավորի նկատմամբ մարդու կատարած ոճրագործությունների հիշատակման շաբաթը վերաբերվում է ոչ միայն թուրքական իշխանությունների կողմից ոչնչացված 1,5 միլիոն հայերին: Ապրիլի 20-ից մինչև 27-ը ընկած ժամանակահատվածը պատգամավորն ընտրել է նաև այն պատճառով, որ ապրիլի 19-ը և 20-ը եղել են հոլոքոստի՝ նացիստների կողմից հրեաների ոչնչացման սկիզբը: Իսկ ապրիլի 27-ը Հարավային Աֆրիկայում վերջ դրեց Ապարտեիդի վարչակարգին, և հարավաֆրիկացիների համար հաստատեցին քվեարկման հավասար իրավունքներ. մեկ մարդը՝ մեկ ձայն սկզբունքով:

Պատմությունն ամփոփում է իր մերձավորի նկատմամբ մարդու դաժանության սարսափելի օրինակները: Հոլոքոստի ժամանակ, ամբողջ Եվրոպայով ցրված համակենտրոնացման ճամբարներում ոչնչացվել են վեց միլիոն հրեաներ: Նացիստները ոչնչացրեցին մեկ միլիոնից ավել գնչու, հոմոսեքսուալիստների և այլ փոքրամասնությունների, որոնք անընդունելի համարվեցին հիտլերյան Երրորդ Ռեյխի պարագլուխների համար: Հոլոքոստը մերժվում է Աստծո և մարդու կողմից: Այն փոքրածավալ աշխարհի կործանում էր:

Հիտլերի և նրա կամակատար կառավարության համար հրեաները քաղաքական խնդիր էին հանդիսանում, որը փորձեցին լուծել Գերմանիայի արտաքին ու ներքին մակարդակով: Նացիստները կիրառում էին մասսայական ահաբեկչության, հարկադրական աշխատանքների, սովամահության, բռնի արտագաղթի, բռնագաղթի և ճնշման այլ ձևեր, որոնք հետապնդում էին միայն մեկ նպատակ՝ բնաջնջել հրեաներին:

1975թ., հնգամյա քաղաքացիական պատերազմի արդյունքում Կամբոջայում իշխանության եկան հաղթանակած Կարմիր քխմերները: Նրանք դատարկեցին բոլոր քաղաքները՝ ներառյալ մայրաքաղաք Ֆնոմ Փեյնը, որտեղ կուտակվել էին մոտ երեք միլիոն փախստականներ: Նրանցից շատերը սպանվեցին, իսկ մնացածները՝ բռնագաղթվեցին:

Յուրաքանչյուրն, ով Փոլ Փոթի և ոչ այդքան մեծ կոմունիստ ղեկավարների խմբի տեսակետից հնարավոր վտանգ էր ներկայացնում իրենց կողմից ստեղծվող իդեալական պետության համար, ոչնչացվում էր: Մահապատժի ենթարկվածների շարքում էին բանակի սպաները, պետական պաշտոնյաները, մտավորականները, բժիշկներն ու մանկավարժները:

1979թ.՝ Կարմիր քխմերների վարչակարգի վերջին ամիսներին, գոհերի թիվն ավելացավ:

Երկպառակտչական պատերազմի մի այլ, ավելի թարմ օրինակը Ռուանդան է: Աշխարհի անհոգությունը հնարավոր դարձրեց հարյուր-հազարավոր մարդկանց ոչնչացումը:

Ցեղասպանությունը Ռուանդայում սկսվեց 1994թ. ապրիլին: Դրան նախորդել էր պատերազմը թութսիների՝ ռուանդական հայրենասիրական ճակատի պարտիզանական ջոկատների և հութուների կառավարության միջև: Մինչ այդ էլ Ռուանդան Աֆրիկայի առավել աղքատ երկրներից մեկն էր:

Այդ պատերազմի արմատները գնում են դեպի 1959-1966թթ., երբ հութուները տապալեցին դարեր շարունակ թագավորած թութսիների միապետությունը: Այդ սպանդաճոցում սպանվեցին 20-ից մինչև 100 հազար թութսիներ, որը բրիտանացի փիլիսոփա Բերթրան Ռասսելի խոսքերով «Նացիստների ձեռքով հրեաների ոչնչացումից հետո ամենադաժանն էր»: Մոտ 150 հազար թութսիներ փախան Ուգանդա, Բուրունդիա, Տանզանիա և Զաիր:

Իսկ վերջին ջարդերը սկսվեցին 1994թ. սեպտեմբերին՝ Ռուանդայի նախագահ Ժուվենալ Հաբյարիմանի ավտովթարից զոհվելուց հետո: Այդ սպանդի ժամանակ ամենամոտավոր հաշվումներով 500 հազար մարդ ոչնչացվեց, ինչը և ստիպեց ՄԱԿ-ին նախաքննություն անցկացնել ու մեղադրանքներ ներկայացնել ցեղասպանության մեջ:

Մասսայական բռնագաղթեցումներ, այսպես կոչված էթնիկական մաքրումներ, այս ամենը տեսել ենք նախկին Հարավսլավիայում: Այժմ անկախ դիտորդներն արդեն ազատ են հետաքննություններ անցկացնել՝ ողբերգությունների չափերը ցույց տալու նպատակով:

Ինչպե՞ս կարող ենք մենք պնդել, որ ապրում ենք քաղաքակիրթ աշխարհում, երբ յուրաքանչյուր տասնամյակ նշանավորվում է հերթական սարսափելի հանցագործությամբ: Մենք պարտավոր ենք դատապարտել անցյալի, ներկայի և ապագայի բոլոր հանցագործությունները: Մենք պարտավոր ենք անել այդ՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելով, և թույլ չտանք ռևիզիոնիստներին սրբագրել պատմությունը:

Կանադան հանդուրժող երկիր է: Նրա բնակչության կեսից ավելին այլ ծագում ունի: Ես շատ եմ հավատում, որ մենք ապրում ենք իր հանդուրժողականությամբ աչքի ընկնող հասարակությունում, որտեղ հարգվում են այլազգիները և իշխում է օրենքը: Կարծում եմ՝ մենք պարտավոր ենք անել ամեն ինչ, որպեսզի օգնենք Միավորված Ազգերի Կազմակերպությանը միջազգային մարմինների ստեղծման գործում՝ մարդկության դեմ կատարված ոճրագործությունները դատապարտելու համար:

Ես հուսով եմ, որ մենք կաջակցենք համընդհանուր խաղաղության հաստատմանը մեր երկրագնդի վրա:

ՖԻԼԻՊ ՊԱՐԵ (Լուիս-Էբերթ,Կվեբեկի խմբակցություն)

Պարոն նախագահող, ուշադիր լսեցի գործընկերոջս: Նա մի միտք արտահայտեց, որ մարդկության դեմ կատարվող ոճրագործությունները կանխելու և բախումներին ակտիվ միջամտելու նպատակով ՄԱԿ-ը պարտավոր է նոր ճանապարհներ գտնել:

Կարծում եմ Կանադայի կառավարությունը գտնվում է փոքր-ինչ երկիմաստ դրության մեջ:

Ապրիլի 11-ին Միջազգային Ամնիստիայի նախագահ Պյեր Սանյեն գտնվում էր Օտտավայում: Նրա այցը կապված էր մարդու իրավունքների և առևտրական հարցերի հետ:

Իր ելույթի ընթացքում նա նշեց. «Մարդու իրավունքների պաշտպանության համար տարվող պայքարը պետք է կրի բազմակողմանի և մեծածավալ բնույթ, այլապես այն կանխապես պարտության կմատնվի»:

Կարո՞ղ է այդյոք բացատրել իմ գործընկերը,թե ինչպե՞ս է մարդու իրավունքները ոտնահարող երկրների հետ առևտրական կապեր հաստա-

տող մեր վարչապետը մտադրված իրականացնել մարդու իրավունքների պաշտպանությունը նույն այդ երկրներում:

Սակայն պետք է հիշեցնեմ 1994թ. այս Պալատում վարչապետի ասած բառերը. «Ես իհարկե կարող էի ամպագոռգոռ ճառեր արտասանել մարդու իրավունքների մասին, բայց նախընտրում եմ շուկաներ բացել և զարգացնել առևտուրը: Վաղ թե ուշ պատնեշները կտապալվեն»: Արևելյան Լավալի իմ գործընկերը հիշատակեց, որ Կանադայի Արտահանողների միությունը երազում է այն մասին, որ իրենց լիակատար ազատություն տրվի նաև այն երկրների հետ, որտեղ չեն հարգվում մարդու իրավունքները:

Մի՞թե կառավարությունը կարծում է, որ մարդու իրավունքների պահպանման խնդիրը կլուծվի կախարդական փայտիկի մեկ շարժումով:

Տ. ԻԱՆՆՈ

Պարոն նախագահող,մարդու իրավունքների ոլորտում կառավարության ղեկավարն ինքնուրույն է որոշում իր քաղաքականությունը: Կարծում եմ՝ նա ճիշտ դիրքորոշում է ընտրել:

Մեկուսացումը չի կարող նպաստել մեր գաղափարների քարոզմանը: Վերցնենք օրինակի համար Չինաստանը: Հավատացած եմ, որ փոխշահավետ տնտեսական և մարդասիրական կապերի ամրապնդման հետ, մասնավորապես կրթության ոլորտում, չինացիներն ավելի լավ սկսեցին հասկանալ մեր երկիրը, մեր արժեքներն ու գաղափարները:

Որպես օրինակ կարող եմ բերել անցյալ կիրակի չինական արհմիութենական շարժման քառասուն ներկայացուցիչների հետ իմ հանդիպումը: Կանադայում իրենց կարճատև այցելության ընթացքում նրանք բազմաթիվ հանդիպումներ ունեցան մեր արհմիութենական գործիչների հետ: Կարճ ժամանակահատվածում նրանք շատ բան սովորեցին: Զրուցելուց ինձ հետ՝ չինացիները նշում էին մեր հասարակության հանդուրժողականությունը և փոխադարձ հարգանքի ոգին: Իմ այն հարցին, թե ինչ կցանկանային նրանք ընդօրինակել մեր փորձից, չինացիները պատասխանեցին. «Մեզ վրա մեծ տպավորություն թողեց արհմիութենական կազմակերպությունների, գործարար աշխարհի և կառավարության միջև տիրող պարտնյորական հարաբերությունները»:

Նրանց կարծիքով նման պարտնյորությունը զգալի չափով կարող էր բարելավել չափազանց ցածր աշխատավարձ ստացող չին բանվորների և ծառայողների դրությունը:

Մենք պետք է շարունակենք փոխշահավետ կապերը, մեր փորձի և գաղափարների փոխանակումը: Համաշխարհային տնտեսական զարգացման, աստելլիտային հաղորդակցության դարաշրջանում դժվար է անգամ պատկերացնել մեկուսացված Չինաստանը: Չինացիները սկսում են տեսնել ու գիտակցել, թե ինչպես է ապրում աշխարհը:

Հենց այս կապերի, փոխշահավետ հարաբերությունների զարգացումը կդարձնի միջազգային հանրությունն ավելի ազատ և թույլ կտա միահամուռ ուժերով պայքարել տարբեր տեսակի խտրականությունների դեմ: Ես համոզված եմ դրանում:

ՔԵՅԹ ՄԱՐՏԻՆ (Էսքիմալք-Ժուան դե Ֆուքա, ռեֆորմիստական կուսակցություն)

Պարոն նախագահող, արդեն հիսուն տարի է, ինչ աշխարհը վերականգնվում է մարդկության պատմության առավել արյունալի բարեվիճակների շարքում:

Այդ ընթացքում համաշխարհային հանրությունը ձգտում է ստեղծել միջազգային կառույցներ, որպեսզի կանխվեն նման ողբերգությունները: Այդպես են ծնվել ՄԱԿ-ը, Բրեթոն Վուդսի համաձայնագիրը:

Ցավոք, այդ հիսուն տարվա փորձը ցույց տվեց,որ արյունալի բախումների, ցեղասպանությունների կանխման համար քիչ է արվել: Աշխարհը չկարողացավ կանխել պատերազմները Չեչնիայում, Անգոլայում, Կամբոջայում և Ռուանդայում:

1915թ. հայոց ցեղասպանության, հոլոքոստի, Կամբոջայի մասին խոսելու, մեր երկրի վրա նման պատմական իրադարձությունները կանխելու համար Աստծո առջև մեղանչելու փոխարեն՝ ավելի լավ է մտածենք այն մասին, թե ինչ է այսօր տեղի ունենում աշխարհում և ինչ կարելի է անել, որպեսզի վաղը թույլ չտանք ապագա բախումներն ու ողբերգությունները:

Հյուսիսային և Հարավային Կորեաների միջև մղվող պայքարը աշխարհի ամենալարված գոտիներից մեկն է: Այդ հակամարտությունը կարող է վերածվել միջուկային ընդհարման: Մենք տեսնում ենք Սուդանի, Ռուանդայի, Բուրունդիայի իրադարձությունների կրկնության հնարավորությունը: Քենիայում բնակվող քելենջիների ցեղը ոչնչացնում է կիկույու ցեղի իր հակառակորդներին: Նույնն է կատարվում Նիգերիայում օհոնի ցեղի հետ: Մենք գիտակցում ենք նաև, որ Չինաստանի և Թայվանի միջև տեղի ունեցող հակամարտությունը վաղը կարող է խլել միլիոնավոր կյանքեր: Նույնն է տեղի ունենում Տաջիկստանում:

Թրքական Քրդստանի և թուրքական խորհրդարանի քուրդ անդամներն, առանց քննության ու դատի, նետվել են բանտեր, որտեղ և խոշտանգվել են: Մենք նաև Միջին Արևելքի իրադարձությունների ականատեսներն ենք: Մեր խորհրդարանը խիստ բողոք հայտնեց այս տարածաշրջանում տեղի ունեցող ողբերգությունների կապակցությամբ, և հույս ունենք, որ այդ բարոյալքված երկրներում վերջապես կհաստատվի խաղաղությունը: Սակայն դրա համար նախադրյալները քիչ են, եթե միայն ավելի եռանդուն միջոցներ չձեռնարկենք այդ ուղղությամբ:

Սրանք վաղվա ընդհարումներն ու ցեղասպանություններն են: Այս խնդիրները պետք է այսօր լուծել, որպեսզի խուսափենք միլիոնավոր զոհերից, ամայացած երկրներից:

Այն խոսքերը, որոնց չեն հետևում կոնկրետ գործողությունները, անիմաստ են: Հուսով եմ, որ այսօրվա քննարկումների արդյունքում կլինեն կոնկրետ միջոցառումներ, որոնք ուղղված են ցեղասպանությունների կանխարգելմանը: Անցյալի ցեղասպանությունների անմեղ զոհերը մեզնից իրական գործողություններ են պահանջում:

Ավելի վաղ, Պալատում ես խոսել եմ այն մասին, որ իրավիճակը բավականին բարդ է: Դժվար է կանխել ընդհարումները, դժվար, բայց՝ հնարավոր: Գոյություն ունեն ընդունված որոշումներ, որոնք կարելի է օգտագործել և Կանադան պետք է որոշ իրավիճակներում իր վրա վերցնի առաջնորդի դերը:

Ավելի դյուրին է կանխել բախումները, քան վերջ դնել սրանց, երբ նրանք արդեն բռնկվել են: Ընդհարումները, սկիզբ առնելով, վարակում են սերունդները էթնիկական ատելությամբ: Կոնֆլիկտային իրադրությունները պետք է լուծել սաղմնային վիճակում: Սա հնարավոր է: Դա մի խնդիր է, որը պարտավոր է լուծել մեր երկիրը՝ մեզ նման մտածող այլ ժողովուրդների հետ միասին: Այս խնդրի լուծումը կապված չէ մեծ ծախսերի հետ, ընդհակառակը, այն թույլ կտա մեզ ամեն տարի տնտեսել միլիարդավոր դոլարներ:

Մենք պետք է ուսումնասիրենք կոնֆլիկտների արմատները: Անհրաժեշտ է սահմանել կանխարգելման մի համակարգ, որի աշխատանքներին պետք է մասնակցեն ոչ կառավարական կազմակերպությունները, խաղաղության համար պայքարող երկրները, ՄԱԿ-ի դիվանագետ-դիտորդները: Այս խմբերը պետք է տեղեկություններ ուղարկեն Նյու-Յորքում գտնվող ՄԱԿ-ի ճգնաժամային իրադրությունների հարցերով կենտրոն, որտեղից լրատվությունը պետք է տրվի Անվտանգության Խորհրդին, ոչ այն, որը գոյություն ունի այսօր, այլ վերակառուցված:

Կոնֆլիկտային իրադրությունը թուլացնելու համար Անվտանգության խորհուրդը կառաջարկի ոչ ռազմական բնույթ ունեցող նախաձեռնություններ: Որպեսզի արմատապես կանխվեն հնարավոր ընդհարումները, ՄԱԿ-ը պարտավոր է ձեռնարկել հետևյալ դիվանագիտական քայլերը: Օգտագործելով ստացված տեղեկությունները՝ նրանք պետք է հերքեն կոնֆլիկտի սկզբնական փուլում տարածվող առասպելները: Բավական է հիշել նախկին Հարավսլավիայում, Ռուանդայում կամ Բուրունդիում տեղի ունեցող ողբերգությունները: Իրադարձությունների ողբերգական վախճանի առաջին նշաններից էր իրենց հակառակորդի դեմ ուղղված ատելության քարոզչությունը: Դրան հնարավոր է խանգարել:

Միացյալ Ազգերի Կազմակերպությունը դրա համար ունի բոլոր անհրաժեշտ մեխանիզմները, որոնք ցավոք դեռ լրիվ չեն գործում: Հուսով եմ, որ ՄԱԿ-ում գտնվող մեր ներկայացուցիչ պարոն Ֆռուլերն անհրաժեշտ քայլեր կձեռնարկի այդ ուղղությամբ:

Կոնֆլիկտների կանխման համար օգտագործելով միջազգային ֆինանսական մեխանիզմները, մենք կարող ենք տնտեսական ճնշում գործադրել հակամարտող կողմերի վրա: Այդ նպատակով պետք է բարեփոխել միջազգային ֆինանսական կազմակերպությունները՝ տրամադրելով նրանց լայն լիազորություններ:

Գոյություն ունեն միջամտության մի քանի հնարավոր միջոցներ՝ ընդհարվող կողմերի նկատմամբ տնտեսական պատժամիջոցների կիրառում, ժողովրդավարական մեխանիզմների ստեղծման համար տնտեսական և տեխնիկական օգնության ցուցաբերում, աջակցություն նորաստեղծ ժողովրդավարական կառավարություններին:

Սակայն տնտեսական պատժամիջոցներից չպետք է տառապեն կոնֆլիկտների անմեղ զոհերը:

Ցավոք հազվադեպ է կիրառվում ներգործության մի այլ մեթոդը, դա այն անձանց հաշվեհամարների սառեցումն է, որոնց գլխավորությամբ ոտնահարվում են իրենց համաքաղաքացիների իրավունքները: Այս մեթոդը շատ արդյունավետ է և կարող է կիրառվել այնպիսի անձանց նկատմամբ, ինչպիսիք են գեներալ Աբաշան Նիգերիայից, պարոն Մոյին Քենիայից և

այլոք: Սառեցնելով նրանց ֆինանսական հաշվեհամարները՝ կարելի է փոխել նրանց վարքագիծը:

Սակայն առաջնային խնդիրներից է ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի վերակառուցումը: Իր այսօրվա կառույցների առկայության դեպքում վերը թվարկված միջոցները ոչ մի արդյունք չեն տա: Առաջարկում եմ, որպեսզի Անվտանգության Խորհրդի աշխատանքներին մասնակցեն տնտեսական առավել զարգացած 32 երկրները: Ոմանք կասեն, որ դա արդարացի չէ: Սակայն հայտնի է այն սկզբունքը՝ ով վճարում է, նա էլ պատվիրում է երաժշտությունը: Միգուցե սա արդարացի չէ, սակայն, ամեն դեպքում, ավելի լավ է, քան ներկա իրավիճակը: Պետք է նաև հրաժարվել վետոյի իրավունքից: Անվտանգության Խորհրդի որոշումները պետք է ընդունվեն ձայների երկու երրորդով: Այս բոլոր վտիտխությունները անհրաժեշտ են: Մենք չենք կարող կիրառել 40-ական թվականների միջազգային բարեփոխումների մոդելը, որովհետև այսօրվա համաշխարհային գերքաղաքական իրադրությունը բոլորովին նման չէ 1945 թվականին: Ներկայիս կառույցները սահմանափակում են մեր հնարավորությունները՝ խաղաղությանը աջակցելու և ցեղասպանությունները կանխելու գործում:

Ոմանք կապացուցեն, որ ուժային միջոցները, որոնց մասին ես հիշատակեցի, չեն կարող օգտագործվել ոչ օրինական լինելու պատճառով: Սա այնքան էլ ճիշտ չէ: ՄԱԿ-ի ընդունած մարդու իրավունքների հռչակագիրն ազդարարում է անհատի հիմնարար իրավունքների գերակայությունն ազգային շահերի նկատմամբ: Այլ կերպ ասած, միջազգային իրավունքը պաշտպանում է առանձին վերցրած մարդու շահերը, այլ ոչ թե պետության ամբողջականությունը: Սա վերակառուցման կարևոր դրդապատճառներից է:

Հնարավոր ընդհարումներին արագ արձագանքելն արդարացված է նաև տնտեսական տեսակետից: Աշխարհի այս կամ այն տարածաշրջաններում խաղաղության պահպանման համար հատկացվող ծախսերի վերջին հինգ տարվա վիճակագրական տվյալները հաստատում են այդ: Այս ծախսերն այնքան մեծ են, որ հետագայում մեր միջոցները չեն բավականացնի: Ընդհարումները պետք է կանխել և կասեցնել հենց նրանց զարգացման սկզբից:

Կանադայի ֆինանսական միջոցները սահմանափակ են: Կգա այն օրը, երբ մենք չենք կարողանա աջակցել մեր խաղաղարար ուժերին, որոնք արդեն երկար տարիներ պատվով կատարում են իրենց պարտքը: Միանգամայն վստահ եմ, որ Կանադան չի կարող գործել միայնակ: Նրա դիրքորոշումն ու կշռադատված դիվանագիտական նախաձեռնություններն արդարացված են և վայելում են միջազգային ճանաչում ու հեղինակություն: Ի տարբերություն աշխարհի շատ այլ երկրների, Կանադան աչքի է ընկնում արդար ու անաչառ մոտեցմամբ: Մենք պարտավոր ենք միավորել խաղաղության պահպանման հարցերով զբաղվող միջազգային կառույցների ամրապնդման ջանքերը մեր ձգտումները կիսող այն երկրների հետ, ինչպիսիք են Նոր Զելանդիան, Ավստրալիան, Նորվեգիան, Շվեդիան, Նիդեռլանդները և Բելգիան: Կրկնում եմ՝ մենք չենք կարող գործել միայնակ:

Հիսուն տարվա ընթացքում տեղի ունեցան բազմաթիվ արյունալի կոնֆլիկտներ: Միջազգային հանրությունն անընդունակ եղավ կանխել

դրանք: Սակայն որոշ հարցերում մենք առաջադիմել ենք և այնուամենայնիվ, մեզ չհաջողվեց կասեցնել ցեղասպանությունները:

Մենք կարող ենք ու պարտավոր ենք գործել: Այժմ ես արտահայտեցի մի շարք դիտողություններ, որոնց, հուսով եմ՝ ուշադրություն կդարձնի արտաքին գործոց նախարարը:

Եթե նախապես չկանխենք այդ բախումները, ապա արդյունքում կունենանք ավերված երկրներ, մեծ թվով փախստականներ: Կտրուկ կաճեն այլ երկրներին օգնության և սոցիալական ծրագրերի համար կատարվող ծախսերը: Այդ ծախսերի աճը վերաբերվում է մեզ բոլորիս, և մենք պարտավոր ենք կանխել դրանք: Միջոցները պետք է ներդնենք հենց այժմ, որովհետև ապագա ծախսերը շատ անգամ կգերազանցեն մեր այսօրվա ներդրումները:

Պաղեստինյան հաշտության բանակցությունների ժամանակ ելույթ ունեցողներից մեկն ասաց, որ խաղաղությունը դա այն է, երբ որդին հողին է հանձնում իր ծնողներին, իսկ պատերազմը՝ երբ ծնողները թաղում են իրենց զավակներին: Հուսով եմ, որ ապագայում կհասնենք նրան, որպեսզի ծնողները զրկված լինեն հուղարկավորման արարողության անհրաժեշտությունից:

ՍԻՇԵԼ ԴԱՎԻՈՒԼ (Առևթսիք, Կվեբեկի խմբակցություն)

Պարոն նախագահող, ցանկանում եմ շնորհավորել պատգամավորին իր ելույթի և միջազգային իրավունքի իր իմացության համար, ինչպես նաև իր կողմից արված միջազգային կառույցները վերակառուցելու հրաշալի առաջարկության համար: Այժմ, երբ մեր քննարկումները մոտենում են ավարտին, ես կուզենայի հիշեցնել հարգարժան պատգամավորներին, որ մեր նիստին ներկա են Կանադայի հայկական համայնքի և Հայկական Ազգային կոմիտեի որոշ ներկայացուցիչներ: Ես ողջունում եմ նրանց: Եվ ինչպես քիչ առաջ ասաց պատգամավորը, խոսքերն առանց գործերի ոչինչ չարժեն:

Մի քանի րոպեից մենք քվեարկությունը կարտահայտենք մեր վերաբերմունքն իմ կողմից ներկայացրած առաջարկության նկատմամբ: Այսօր մենք շատ ենք խոսել հայոց և ընդհանրապես մարդկության պատմության մասին, սակայն յուրաքանչյուր բառ պետք է ունենա իր իմաստը: Այս առիթով ցանկանում եմ ողջունել իմ կուսակցության այն պատգամավորներին, որոնք դեմ են «ցեղասպանություն» բառը փոխարինել ավելի ընդհանուր և անորոշ «ողբերգական իրադարձություններ» հասկացությամբ:

ՔԵՅԹ ՄԱՐՏԻՆ (Էսքիմալթ-Ջուան դե ֆուքա, ռեֆորմիստական կուսակցություն)

Պարոն նախագահող, մենք փորձում ենք զուգահեռներ անցկացնել 1915թ. Հայաստանում կատարված ողբերգության և այն իրադարձությունների միջև, որոնք տեղի են ունենում աշխարհում այսօր ու կարող են պատահել ապագայում:

Հուսով եմ, որ առաջարկությունը հետապնդում է ոչ միայն այս ողբերգության զոհերին հիշատակելու և սգալու նպատակը, այլ նաև օգտագործել ուրիշ ցեղասպանությունների՝ Եվրոպայում տեղի ունեցած հոլոքոստի, Կամբոջայում Փոլ Փոթի բռնատիրական վարչակարգի կողմից իրականացված ցեղասպանության փորձը, նրա համար, որպեսզի Կանադան և

համաշխարհային հանրությունը կանխեն նման ոճրագործությունները ապագայում:

Ինչպես ավելի վաղ ասացի, անցյալի ցեղասպանությունների զոհերի թափած արյունը մեզնից պահանջում է կոնկրետ գործողություններ: Մենք բոլորս պատմությունից պետք է դասեր քաղենք և աշխարհի բոլոր ժողովուրդների համար միասին կառուցենք ավելի լավ, ավելի խաղաղ ու հանգիստ ապագա:

ՄԱՌԼԵՆ ԿԱՏՐԱԼ (Օստավա-Վեստ, լիբերալ կուսակցություն)

Պարոն նախագահող, այսօրվա քննարկումները տեղի են ունենում շատ բարձր մակարդակով և շոշափում են կարևոր հարցեր ոչ միայն մեր երկրի համար, այլ նաև՝ ողջ մարդկության: Ես գնահատում եմ գործընկերոջս այն դիտողությունը, որ ավելի լավ է գործել, քան խոսել անցյալի իրադարձությունների մասին:

Ցանկանում եմ ըստ արժանվույն գնահատել իմ գործընկեր՝ Դոն Վալեյ-Նորդի պատգամավորին, որը դեռ անցյալ տարի էր ներկայացրել այսօրվա առաջարկության նմանօրինակը:

Արդյո՞ք համաձայն է ինձ հետ պատգամավորը, որ մարդկության դեմ կատարվող հանցագործությունները բազմազան են: Դրանք և ռազմական հանցագործություններն են, և մի ժողովրդի կողմից մյուսի ոչնչացումն է: Այս բոլորը ողբերգություններ են:

Ես գերադասում եմ առաջարկված ուղղումով ձևակերպումը: Այն ավելի լայն է շոշափում մարդկության դեմ հանցագործությունները և այդ հանցագործությունների ողջ ողբերգականությունը: Ինքս ինձ հարց եմ տալիս, թե ինչու է պատգամավորն ուզում սահմանափակվել «ցեղասպանություն» հասկացությամբ:

ՔԵՅԹ ՄԱՐՏԻՆ

Պարոն նախագահող, ես համարում եմ, որ այս առաջարկը շոշափում է ոչ միայն ցեղասպանության հասկացությունը, ինչպես պնդում է իմ ընդդիմախոսը, այլ նաև բոլոր մարդկային ողբերգությունները, որոնք մինչ այժմ էլ տեղի են ունենում:

Ցեղասպանության առիթով այսօրվա մեր քննարկումները ծառայում են որպես յուրատեսակ ցատկահարթակ մարդկային այլ ողբերգությունների քննարկման համար: Մենք քննարկում ենք ոչ միայն անցյալի իրադարձությունները, այլ նաև մեր օրերի ոճրագործությունները: Պետք է կարողանալ կանխատեսել ողբերգական իրադարձությունների հնարավոր զարգացումը: Ավելի լավ է կանխել դրամաները, քան անդրադառնալ նրանց հետևանքներին: Ես կուզեցայի, որպեսզի բոլոր պատգամավորները միավորվելով ներկայացնեն իրենց առաջարկությունները Արտաքին Գործերի Կոմիտեին կամ էլ արտաքին գործոց նախարարին:

Կոնֆլիկտային իրադարձությունների լուծման, մարդկային ողբերգությունների կանխման գործում Կանադան կարող էր առաջնային դեր խաղալ:

Այսօր մենք ապրում ենք ժողովրդավարական հասարակությունում և ավելի շատ հնարավորություններ ունենք մեր գաղափարները կենսագործել կյանքում: Չեմ կասկածում, որ այսօր հնչած որոշ գաղափարներ իրենց կիրառումը կգտնեն կյանքում, և այն մեծ խնդիրները, որոնց մասին խոսում էր իմ հարգարժան գործընկերը, նույնպես հնարավոր կլինի լուծել: Այս գա-

ղափարները միջազգայնացնելով՝ Կանադան կկարողանա հանդես գալ առաջատարի դերում:

ՖԻԼԻՊ ՊԱՐԵ (Լուիս-Էբերթ,Կվեբեկի խմբակցություն)

Պարոն նախագահող, ես էլ եմ ցանկանում շնորհավորել և շնորհակալություն հայտնել Էսքիմալ-Ժուան դե Ֆուքայի պատգամավորին նրա ելույթի համար: Իր ճառում նա կարողացավ համակողմանիորեն և համապարփակ բազմաթիվ տեսակետներից լուսաբանել այնպիսի կարևոր մի հարց, ինչպիսին մարդու իրավունքների բնագավառն է:

Կարծում եմ, որ այսօրվա քննարկումները շոշափեցին շատ հարցեր, որոնք մեծ նշանակություն ունեն մարդկության ապագայի համար: Ճիշտ է, շատ բաների մասին չհասցրեցինք խոսել:

Այսօր առավոտյան մեքենայում ռադիոյով նորություններ էի լսում: Հաղորդում էին, որ մոլորակի վրա գոյություն ունեն միլիոնից ավել ռումբ և, որպեսզի դրանք ոչնչացվեն, հազարամյակներ կպահանջվեն: Իսկ ինչն է ամենից շատ ապշեցնում իր հիմարությամբ.դա այն է, որ ռումբերը շարունակվում են արտադրվել: Երեկ երեկոյան Ռադիո-Կանադա կայանով ես լսեցի մի այլ հաղորդում Լիբերիայի յոթ-ութ տարեկան երեխաների մասին, որոնց թույլատրվում է մասնակցել գնդակահարություններին:

Ռեֆորմիստական կուսակցության իմ գործընկերը խոսում էր Անվտանգության Խորհրդի բարեփոխման անհրաժեշտության մասին: Կարծում եմ՝ հենց դրանում է այսօր քննարկվող խնդիրների լուծումը:

Վերջում կուզենայի դիմել հետևյալ հարցով: Գործընկերը խոսում էր տնտեսական պատժամիջոցների՝ որպես ներգործության լծակներից մեկի մասին: Արդյոք չի՞ կարծում նա, որ իր արտաքին քաղաքականությունում առևտրական շահերով առաջնորդվող Կանադայի կառավարությունը չի գնա նման քայլի:

ՔԵՅԹ ՍԱՐՏԻՆ (Էսքիմալթ-Ջուան դե ֆուքա, ռեֆորմիստական կուսակցություն)

Պարոն նախագահող, շնորհակալություն եմ հայտնում պատգամավորին իր հարցի համար: Միանգամայն համաձայն եմ նրա հետ, որ կառավարությունը նախապատվությունը տալիս է առևտրական շահերին մարդու իրավունքների հարցերի նկատմամբ:

Սինչդեռ այս խնդիրները միանգամայն համատեղելի են: Կառուցողական տնտեսական համագործակցությունը հնարավոր է միայն խաղաղության պայմաններում: Եթե չկա խաղաղություն, չեն կարող լինել առևտրական կապեր: Այսպիսով,այս երկու տեսակետները կազմում են մեկ միասնական ամբողջություն: Ենթադրում եմ, որ միջազգային հանրությունը և գործարար շրջանները շահագրգռված են խաղաղության պահպանման մեջ:

ՕՍՎԱԼԴՈ ՆՈՒՅՆԵՍ (Բուրասսա,Կվեբեկի խմբակցություն)

Պարոն նախագահող, ուրախ եմ, որ հնարավորություն ունեմ մասնակցել Հայոց ցեղասպանության առիթով ծավալված քննարկումներին: Ողջունում եմ Մոնրեալի հայկական համայնքի իմ բարեկամներին, որոնք ներկա են գտնվում նիստին:

Ցայն՝ և Տորոնտոյի:

ՕՍՎԱԼԴՈ ՆՈՒՅՆԵՍ

Այո, Տորոնտոյի և ողջ Կանադայի իմ բարեկամներին:

Անկասկած, ես միանգամայն սատարում եմ Կվեբեկի խմբակցության առաջարկությանը՝ 1915թ. ապրիլի 24-ին սկիզբ առած հայերի ցեղասպանության 81-ամյա տարելիցի առիթով սահմանել և ամեն տարի ապրիլի 20-ից 27-ը նշել մարդու կողմից իր մերձավորի նկատմամբ կատարված ոճրագործությունների հիշատակի շաբաթը:

Չեմ կարող նաև աջակցել կառավարության ուղղմանը: Խոսքը գնում է հենց ցեղասպանության, այլ ոչ թե ողբերգության մասին: 1,5 միլիոն մարդու ոչնչացումը ցեղասպանություն է և ոչ թե ուղղակի ողբերգություն: Շնորհավորում եմ իմ գործընկեր Առնքսիքի պատգամավորին իր կողմից կատարված աշխատանքի համար:

Ինչպես դուք գիտեք, ես ծնունդով Լատինական Ամերիկայից եմ, մի տարածաշրջան, որը վերապրել է շատ բռնատիրական վարչակարգեր և քաղաքացիական պատերազմներ, որոնք խլեցին հազարավոր կյանքեր, մի տարածաշրջան, որտեղ ոտնահարվել են մարդու ամենահասարակ իրավունքները: Այս պատճառով էլ այսքան դյուրազգաց եմ հայ ժողովրդի վերապրած ողբերգության նկատմամբ: Դարեր շարունակ այս ժողովուրդը հետապնդումների և բռնությունների զոհ դարձավ: Սակայն գագաթնակետն եղավ 1915-1917թթ. ցեղասպանությունը, որի ընթացքում ոչնչացվեցին 1,5 միլիոն հայեր՝ տղամարդիկ, կանայք և երեխաներ: Այդ ոճրագործությունն իր դաժանությամբ գերազանցում է ամեն տեսակի երևակայություն: Պետք է ավելացնել նաև, որ խոսքը գնում է քաղաքացիական բնակչության մասին՝ անզեն և անպաշտպան:

Մեր պատմության այդ ողբերգական ժամանակաշրջանի ընթացքում քանդվել են 2000-ից ավել եկեղեցիներ, 200-ից ավել վանքեր, կես միլիոն մարդ արտաքսվեցին և ապաստան գտան այլ երկրներում: Դժբախտաբար հանցագործության մեջ մեղավորները պատիժ չկրեցին, չեղան նաև ռազմատուգանքներ:

Այսօր հայերը սփռված են ամբողջ աշխարհով մեկ, հատկապես շատ են ԱՄՆ-ում, Կանադայում, Եգիպտոսում, Իրաքում, Իրանում, Ֆրանսիայում, Լիբանանում, Սիրիայում և այլուր: Սակայն նրանց կեսը բնակվում են Հայաստանում: Վաթսուն հազար հայ ապրում է Կանադայում, նրանցից 25000-ը՝ Կվեբեկում:

Իբրև վտարանդի և քաղաքացիության ու ներգաղթի հարցերով զբաղվող պաշտոնական ընդդիմության ներկայացուցիչ, ես ողջունում եմ ծագումով հայ մեր բոլոր հայրենակիցներին:

Երջանիկ եմ նաև նշել նրանց բացառիկ ներդրումը Կանադայի և Կվեբեկի զարգացման գործում: Սա շատ ներդաշնակ և ակտիվ համայնք է: Նրա ներկայացուցիչներն զբաղված են մեր հասարակության բոլոր բնագավառներում՝ տնտեսության, մշակութային, առևտրական, քաղաքական, սոցիալական և հասարակական ոլորտներում:

Ցանկանում եմ նաև ողջույններս հղել Դոն Վալեյ-Նորդի իմ գործընկերոջը՝ այս Պալատում ծագումով հայ առաջին պատգամավորին: Դուք գիտեք, որ ես նույնպես առաջին լատինա-ամերիկյան ծագումով պատգամավորն եմ Կանադայում:

Հայկական համայնքը շատ լավ է կազմակերպված: Այն ունի իր դպրոցները, եկեղեցիները, մշակութային կենտրոնները: Հայերը կարողացել են պահպանել իրենց լեզուն, մշակույթը և հոգևոր արժեքները:

Անցյալ կիրակի ես մասնակցեցի ցեղասպանության 81-ամյա տարելիցի առիթով կազմակերպված արարողությանը: Սգո հանդեսն անցկացվում էր Սեն-Լորա քաղաքի Ալեք Մանուկյան դպրոցում: Շատ հուզվեցի, երբ ութսունհինգամյա մի ծերունի, որը հրաշքով փրկվել էր կոտորածի տարիներին, ծաղկեպսակ դրեց ցեղասպանության նահատակների հիշատակին:

Ես հպարտանում եմ նրանով, որ Կվեբեկի կառավարությունը և Ազգային ասամբլեան, ինչպես նաև Օնտարիոն, Ռուսաստանը, Իսրայելը և Եվրախորհրդարանը ճանաչել են հայերի ցեղասպանությունը: Յանկանում եմ նաև հատուկ նշել ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված սգո հանդեսին մասնակցած Ուրուգվայի նախագահի դիրքորոշումը:

Իր հերթին Միացյալ Ազգերի Կազմակերպության վտրգրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցերով և խտրականությունների դեմ պայքարի Կոմիտեն 1985թ. օգոստոսի 29-ին ընդունեց բանաձև, որը 1915թ. հայերի ոչնչացումը որակավորեց որպես ցեղասպանություն:

Իսկ ինչ վերաբերվում է Կանադայի կառավարությանը, ապա այն միայն արձանագրում է. «Օսմանյան կայսրության փլուզումով ավարտված պատերազմի տարիներին ոչնչացվել են մեծ թվով հայեր և կառավարությունն իր ցավակցությունն է հայտնում հայկական համայնքին»:

Հուսով եմ, որ ժողովրդավարական ավանդույթներ ունեցող և մարդու իրավունքները հարգող Կանադան պաշտոնապես կճանաչի հայերի ցեղասպանությունը: Ինչի՞ է սպասում Կանադայի կառավարությունը, որպեսզի ընդունի այդ որոշումը՝ այսքան սպասված հայերի, կվեբեկցիների, ինչպես նաև բոլոր կանադացիների կողմից:

Անգամ ԱՄՆ-ի նախագահական պաշտոնին հավակնող սենատոր Բոբ Դոուլը քննադատում է Թուրքիային՝ հայոց ցեղասպանության փաստը ժխտելու համար:

Ուզում եմ նաև հավաստիացնել, որ աջակցում եմ Մոնրեալում հայ նահատակների հիշատակին նվիրված հուշարձանի կանգնեցման նախագծին: Խոսքը գնում է Պյեր Բուրկիի վարչության խոստումին՝ Մարսելեն-Վիլսոն զբոսայգում Անրի-Բուրգասսի և Աքադիի ծառուղիների հատման տեղում կոթողի կանգնեցման մասին:

Այդ հուշարձանի կառուցման աշխատանքները սկսվել են դեռ 1995թ. ապրիլի 22-ին, սակայն հետագայում, հավանաբար, Թուրքիայի և Կանադայի կառավարությունների ճնշման տակ դադարեցվեցին: Մինչդեռ պետք է նշել, որ նման հուշարձաններ կանգնեցված են աշխարհի տարբեր քաղաքներում, մասնավորապես Ֆրանսիայի քաղաքներում, Լիբանանում, ԱՄՆ-ում, Շվեյցարիայում, Սիրիայում, Կոլումբիայում, Արգենտինայում, ինչպես նաև Կանադայում՝ Տորոնտոյում և Սեն-Լորանում: Գոյություն ունի նաև Լոս-Անջելեսում Հայոց ցեղասպանության թանգարանի ստեղծման նախագիծ:

Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ նշել, որ անհանգստացնում է մարդու իրավունքների ոլորտում տիրող իրադրությունը: Միջազգային Ամնիստիայի տվյալների համաձայն մինչ այժմ հարյուրից ավել երկրներ կիրառում են կտտանքների պրակտիկան: Մարդու հիմնարար իրավունքները խախտվում են Լիբերիայում, Ալժիրում, Ինդոնեզիայում, Չինաստա-

նում և այլուր: Չնայած նրան, որ Լատինական Ամերիկայում մարդու իրավունքների ոլորտում ընդհանուր առմամբ իրադրությունը փոքր-ինչ բարելավվել է, Միջազգային Ամնիստիան և Համասամերիկյան հանճաժողովը նշում են որոշ երկրներում խոշտանգումների կիրառման, բռնությունների, ճմշումների, տեղաբնակների բռնի տեղահանությունների, մարդկանց առևանգման դեպքեր:

Այս Պալատում պարտավոր են դատապարտել մարդու իրավունքների պաշտպանության նկատմամբ Կանադայի կառավարության հակասական և ոչ հետևողական քաղաքականությունը:

Ընդդիմության շարքերում գտնվելով՝ լիբերալները շատ էին խոսում այս թեմայով, իսկ այսօր, իշխանության գալով, նրանք առևտրական շահերը վեր են դասում մարդու իրավունքների խնդիրներից:

Այս կառավարությունը ոչ մի կերպ չի տարահամոզում կանադական այն ընկերություններին, որոնք ներդրումներ են կատարում մարդու իրավունքները խախտող երկրներում: Պետք է հետևել Եվրոմիության այն նախաձեռնությանը, որն արգելում է երեխաների ձեռքով գործված գործերի արտահանումը:

Առևտրական գործարքներ ստորագրելիս, Կանադայի կառավարությունը՝ որպես անհրաժեշտ նախապայման, պետք է դնի մարդու իրավունքների պահպանումը: Պետք է ասել, որ ռեպրեսիվ կառավարությունները անկայուն են, ինչը հնարավոր վտանգ է ներկայացնում ներդրված միջոցների և առևտրական կապերի զարգացման համար:

Շնորհակալություն եմ հայտնում հայկական համայնքին նրա համար, որ ամեն տարի նրանք հիշեցնում են մեզ ցեղասպանության այս տխուր տարելիցի մասին: Իրենց լեզվին, մշակույթին և ավանդույթներին հավատարիմ լինելու, իրենց խիզախության և պայքարելու կարողության համար նրանք հիացմունքի են արժանի:

Հայերը չեն մոռացել և երբեք չեն մոռանա այդ ողբերգությունը: Կուզենայի ընդգծել նաև հայերի այն հաստատակամությունը, որով նրանք փորձում են համոզել համաշխարհային հանրությանը նրանում, որ վերականգնվի արդարությունն իրենց ժողովրդի նկատմամբ: Ես ողջունում եմ ծագումով հայ բոլոր հայրենակիցներիս և հայտնում նրանց իմ ցավակցությունն ու համերաշխությունը:

ՍԱՐԳԻՍ ԱՍԱՏՈՒՐՅԱՆ (Դոն Վալեյ-Նորդ, լիբերալ կուսակցություն)

Պարոն նախագահող, օգտվելով առիթից, ցանկանում եմ շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ովքեր մասնակցեցին քննարկումներին: Կանադայի պատմության ընթացքում սա առաջին անգամն էր, որ այսքան մանրամասն քննարկվում է այդ հարցը:

Ցանկանում եմ նաև շնորհակալություն հայտնել այն բոլոր կուսակցություններին, որոնք մասնակցեցին մտքերի փոխանակմանը՝ Կվեբեկի խմբակցությանը, ռեֆորմիստներին և լիբերալ կուսակցություններին: Ցավում եմ, որ NDP-ն (Նոր Դեմոկրատական Կուսակցություն) և Պահպանողական կուսակցությունը չկարողացան մասնակցել այսօրվա մեր քննարկմանը:

Կարծում եմ՝ պետք է հոտնկայս մեկ րոպե լռությամբ հարգել ցեղասպանության զոհերի հիշատակը:

ՆԱԽԱԳԱՀՈՂԻ ՏԵՂԱԿԱԼ (Պ. ՔԻԼԳԵՐ)

Քանի որ արդեն ժամը 18-անց է 27 րոպե, ես դադարեցնում եմ մտքերի փոխանակումը և քննարկվող հարցը դնում քվեարկության:

Նախ քվեարկության եմ դնում ուղղման ուղղումի հարցը: Արդյոք համաձա՞յն է ընդունել Պալատը ուղղման ուղղումը:

ՁԱՅՆԵՐ՝ համաձայն ենք:

ՁԱՅՆԵՐ՝ ոչ:

ՆԱԽԱԳԱՀՈՂԻ ՏԵՂԱԿԱԼ (Պ. ՔԻԼԳԵՐ)

Ովքեր կողմ են ուղղման ուղղումի ընդունմանը, թող ասեն «այո»:

ՁԱՅՆԵՐ՝ այո:

ՆԱԽԱԳԱՀՈՂԻ ՏԵՂԱԿԱԼ (Պ. ՔԻԼԳԵՐ)

Իսկ ովքեր դեմ են, թող ասեն «ոչ»:

ՁԱՅՆԵՐ՝ ոչ:

ՆԱԽԱԳԱՀՈՂԻ ՏԵՂԱԿԱԼ՝

Իմ կարծիքով՝ բացասական պատասխան տվողները ավելի շատ են: Ներս հրավիրեք պատգամավորներին:

ԹԻՎ 38 ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ուղղման ուղղումն ընդունելու համար քվեարկել է 93 պատգամավոր, դեմ՝ 118, 8 պատգամավոր քվեարկությունից ձեռնպահ է մնացել: Այսպիսով, քվեարկման դրված ուղղման ուղղումը մերժվել է:

ՆԱԽԱԳԱՀՈՂԻ ՏԵՂԱԿԱԼ (Պ. ՔԻԼԳԵՐ)

Ուղղման ուղղումը հայտարարում եմ մերժված:

Քվեարկման հետևյալ հարցը ուղղման վերաբերյալ է:

պ. ՊԵՏԵՐՍՈՆ

Պարոն նախագահող, այս հարցի վերաբերյալ ես կքվեարկեմ այնպես, ինչպես և կառավարությունը:

տիկին ԲԱՔՈՊԱՆՈՍ

Պարոն նախագահող, ես կքվեարկեմ ուղղման ընդունման համար:

պ. ԱՍԱՏՈՒՐՅԱՆ

Պարոն նախագահող, ես կքվեարկեմ ինչպես կառավարությունը:

պ. ԻԱՆՆՈ

Պարոն նախագահող, ես նույնպես կքվեարկեմ ինչպես կառավարությունը:

Պ. ԹԵԼԵԳԴԻ

Պարոն նախագահող, ես կքվեարկեմ ինչպես կառավարությունը:

Պ. ՎԱԼԵՐԻ

Պարոն նախագահող, ես կքվեարկեմ ինչպես կառավարությունը:

պ. ԼԻ

Պարոն նախագահող, ես կքվեարկեմ կառավարության ուղղման համար, ինչպես և կառավարությունը:

տիկին ԲԱՄՅԵ

Պարոն նախագահող, ես կքվեարկեմ ինչպես կառավարությունը:

պ. ԿԱՆՆԻՍ

Պարոն նախագահող, ես աջակցում եմ այդ ուղղմանը:

պ. ՓԵՐԻԿ

Պարոն նախագահող, ես կքվեարկեմ կառավարության նման:

ՆԱԽԱԳԱՀՈՂԻ ՏԵՂԱԿԱԼ (Պ. ՔԻԼԳԵՐ)

Արդյոք կարո՞ղ եմ հարցնել նոր դեմոկրատական կուսակցության (NDP) ներկայացուցիչներին, թե ինչպես կքվեարկի իրենց կուսակցությունը:

պ. ՌԻԼՍ

Պարոն նախագահող, մենք կքվեարկենք ինչպես և կառավարությունը:

պ. ԲԱԴՈՒՐԻԱ

Պարոն նախագահող, ես դեմ կքվեարկեմ ուղղման ընդունմանը:

Քվեարկության դրված ուղղումը ընդունված է:

ԹԻՎ 39 ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կողմ՝ 129 պատգամավոր:

Դեմ՝ 93:

Ձեռնպահ՝ 8:

ՆԱԽԱԳԱՀՈՂԻ ՏԵՂԱԿԱԼ

Ուղղումը հայտարարում եմ ընդունված:

Հաջորդ քվեարկությունը վերաբերվում է ուղղումով ճևափոխված հիմնական առաջարկությանը: Հարցը հետևյալն է. պարոն Մենարի կողմից աջակցություն ստացած պարոն Դավիոլն առաջարկել է՝

«Պալատը կայացնում է. 1915թ. ապրիլի 24-ին տեղի ունեցած և 1,5 միլիոն մարդկային կյանք խլած հայերի ողբերգության 81-ամյա տարելիցի առիթով, ինչպես նաև մարդկության դեմ գործած այլ ոճրագործությունների կապակցությամբ, յուրաքանչյուր տարվա ապրիլի 20-ից 27-ը հայտարարել և նշել իրենց մերձավորների նկատմամբ մարդկանց դաժան վերաբերմունքի հիշողության շաբաթ»:

Արդյոք համաձա՞յն եք ընդունել ուղղումով փոփոխված այս առաջարկությունը:

ՁԱՅՆԵՐ՝ Այո:

ՆԱԽԱԳԱՀՈՂԻ ՏԵՂԱԿԱԼ (Պ. ՔԻԼԳԵՐ)

Առաջարկությունը հայտարարում եմ ընդունված:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ Է:

4. ԿԱՆԱԴԱՅԻ ՍԵՆԱՏԻ ՆԻՍՏ
29 մարտի 2001թ.
ՍԵՆԱՏՈՐ ՇԻՐԼԻ ՄԵՅԽՅՈՒՅԻ ԵԼՈՒՅԹԻՑ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԽՏԵԼՈՒ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՊԱՐՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգարժան սենատորներ, այսօր ես խոսք վերցրեցի, որպեսզի քննարկվի շատ լուրջ հարց. Օսմանյան կայսրության կառավարության կողմից 1915թ. և 1918թ. ժամանակաշրջանի միջև հայ ժողովրդի նկատմամբ իրագործված ցեղասպանության... Գոյություն ունի հիմնավորման հսկայական նյութ այն բանի ապացույցի, որ օսմանյան իշխանություններն գիտակցաբար փորձում էին ոչնչացնել և հայ ժողովրդին վտարել այն հողից, որի վրա նրանք ապրում էին համարյա երեք հազար տարի: Սա նշանակում է ցեղասպանություն... Չնայած փաստաթղթային ապացույցների հսկայական նյութերի, այդ թվում Գերմանիայի և Օսմանյան կայս-

րության արխիվներից, և չնայած նրանց, ովքեր փրկվեցին ջարդերից, գրավոր վկայություններին և օտարերկրյա միսիոներների, ինչպես նաև այդ ժամանակ Օսմանյան կայսրությունում աշխատող դիվանագիտական ծառայողների հրապարակված հաղորդումներին, Թուրքիայի կառավարությունն այսօր ժխտում է, թե այդպիսի իրադարձություններ երբևիցէ տեղի են ունեցել: Նա պնդում է, որ երկրում ընթանում էր քաղաքացիական պատերազմ, որի ժամանակ զոհվեցին և թուրքերը, և հայերը, որ հայերն ապստամբեցին իշխանության դեմ, որը բերեց զինված ընդհարումների և զոհերի: Անվիճելի ապացույցների դիմաց նրանք ընդունում են, որ տեղի է ունեցել ինչ-որ տեղահանություն, բայց որի ժամանակ զոհվել է ընդամենը 300 հազար մարդ: Այլ խոսքերով, նրանք ժխտում են տեղի ունեցածը, նենգափոխում են իրողությունը և մեղքը գցում զոհերի վրա:

Զարմանալի է, որ նրանք, ովքեր ժխտում են պատմական փաստը, չեն կարողանում կոնկրետ բացատրել, թե ով է ղեկավարել ապստամբությունը և ովքեր են այդ ապստամբները, եթե երիտասարդ մարդկանց զգալի մեծամասնությունը կանչվել էր Օսմանական բանակ և այդ պատճառով չէր կարող մասնակցություն ունենալ ապստամբությանը կամ էլ քաղաքացիական պատերազմում: Եթե ելնենք բնակչության հաշվառման արդյունքներից, ապա նրանք չեն կարող բացատրել, թե որտեղ կորան այդ 1,5 միլիոն հայերը ոչ քիչ 2,5 տարվա ընթացքում... Մենք պետք է ճանաչենք հայերի ցեղասպանությունը, որպեսզի աշխարհին ցույց տանք, որ չի կարելի փաստի ժխտման օգնությամբ հրաժարվել: Եթե մենք քույլատրենք, որպեսզի հայերի ցեղասպանությունը ենթարկվի այսօր ժխտման, դրանով իսկ մենք չենք քույլատրում արդյոք նրանց, ովքեր ժխտում են հոլոքոստը, մի քանի տարի հետո անպատիժ շարունակեն տարածել այդպիսի կեղծիքը:

1st session, 37th Parliament of Canada. Debates of the Senate (Hansard). Volume 139. Issue 20. March 29, 2001, Ottawa.

5. ԿԱՆԱԴԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԻՑ 1 հունիսի 2001թ. ԿՈՉԵՐ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԽՏԵԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

ՄԱԴԼԵՆ ԴԵԼՖՈՆ-ԺԻՐԱԼ – 1,5 միլիոն մարդ սպանվեց, անհետ կորան հայերի ցեղասպանության տարիներին: Դա կառավարության կանխամտածված գործողություն էր, որը որոշել էր ոչնչացնել այդ ժողովրդին...

Ես գտնում եմ, որ Կանադայի նման երկիրը, որը բոլոր միջազգային վեհաժողովներում հանդես է գալիս որպես մարդու իրավունքների պաշտպանի դերում, պարտավոր է խղճի պահանջով ճանաչել հայերի ցեղասպանությունը... Կանադայում երկու նահանգներ ճանաչել են հայերի ցեղասպանությունը: Նրանց հաշվին գալիս է Կանադայի ազգաբնակչության շուրջ 60 տոկոսը: Ես խոսում եմ Օնտարիոյի և Քվեբեկի մասին: Այսպիսով Կանադայի ազգաբնակչության 60 տոկոսը ընդունում է, որ հայերի ցեղասպանությունն իրողություն է և պիտի ճանաչվի:

ԲԻԼԼ ԲԼԷՅԿԻ - Ես կոչ եմ անում թուրքական կառավարությանը հրաժարվել խուլ պաշտպանության իր գրաված դիրքից և հասկանա, որ ցեղասպանությունն անվանի ցեղասպանություն է, որը նշանակում է սկսել վերքերի և հաշտեցման գործընթացը, որը մենք բոլորս կցանկանայինք տեսնել հայերի և Թուրքիայի մեծամասնության միջև: Դա կլիներ գործընթացի սկիզբը, որը վերջնական արդյունքում իրենց երկրին կբերի հսկայական օգուտ: Ես նշում եմ նաև, որ ոչ շատ վաղուց կանադական կառավարությունը, երբ խոսքը գնում էր մեր մասնակցության մասին Կոսովոյի իրադարձություններին, շատ արագ օգտագործեց «ցեղասպանություն» բառը, որը բնորոշում է էթնիկական մաքրումը, որը տեղի էր ունենում այդ նահանգում: Նա դեմ չէր «ցեղասպանություն» բառի օգտագործմանը, որպեսզի նկարագրեր այն, ինչ տեղի էր ունենում այնտեղ և բացատրեր, թե ինչու ինքը ցանկանում էր այդ կապակցությամբ ինչ-որ բան ձեռնարկել: Իսկ ինչու ցանկություն չի դրսևորում համարժեք բառով անվանել այն, ինչ տեղի է ունեցել շատ վաղուց, իրադարձություն, որը բացահայտ կրում էր այդպիսի բնույթ և իրագործվեց այնպիսի ծավալներով, որն արժանի է ճշգրիտ բնորոշման: Երբեմն թուրքական կառավարությունը հայտարարում է, որ երկրում ընթացել է քաղաքացիական պատերազմ, կարծես այդ արդարացնում է տեղի ունեցածը... Այն փաստը, որ ինչ-որ իրադարձություն կրում է քաղաքացիական պատերազմի բնույթ, դեռևս չի նշանակում, թե տեղի չեն ունենում դեպքեր, որոնք նույնպես կրում են ցեղասպանության բնույթ:

37th Parliament of Canada. 1st session. Hansard. Number 070. Friday, June 1, 2001. Геноцид армян. Документы и комментарий, М., 2003, том 2, часть 1, стр. 832-833.

6. ԿԱՆԱԴԱՅԻ ՍԵՆԱՏԻ ԲԱՆԱՁԵՎԸ
13 հունիսի 2002թ.
ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

ՔԱՆԻ ՈՐ 1915թ. ապրիլի 24-ին Օսմանյան Թուրքիայի իշխանությունները առանց ինչ-որ պատճառի կամ հիմնավորմամբ ձերբակալեցին և հետո մահապատժի ենթարկեցին Ստամբուլի հայկական համայնքի 2300 ավելի նշանավոր ղեկավարների միայն նրանց ռասայական և կրոնական պատկանելիության պատճառով, դրանով իսկ 20-րդ դարի առաջին ցեղասպանության սկիզբը դրեցին,

ՔԱՆԻ ՈՐ օգտագործելով Առաջին համաշխարհային պատերազմը որպես քող իր գործողությունների համար, Օսմանյան Թուրքիայի իշխանությունները կարգադրեցին և իրագործեցին Հարավային Անատոլիայի և Կիլիկիայի վեց նահանգներում բնակվող հայերի մշտական ջարդերը, այդ տարածքներում հայերի ներկայությունն իսպառ բնաջնջելու փորձը,

ՔԱՆԻ ՈՐ օսմանյան Թուրքիայի իշխանությունները կոտորածներից հետո կենդանի մնացածներին տեղահանեցին իրենց տներից և հարազատ հողերից,

ՔԱՆԻ ՈՐ պատմական փաստերը հստակ վկայում են այն մասին, 1915-1918թթ. տեղ գտած դեպքերը, որոնք բերեցին Արևելյան Անատոլիայի

և Կիլիկիայի հայ ազգաբնակչության կոտորածներին ու տեղահանությանը, նշանակում են ցեղասպանություն, ինչպես այդ ձևակերպված է միջազգային սովորութային իրավունքով և ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժի մասին 1948թ. դեկտեմբերի 11-ի ՄԱԿ-ի Հռչակագրով,

ՔԱՆԻ ՈՐ Թուրքիայի Հանրապետության կառավարությունը խեղաթյուրում է պատմական փաստերը և ժխտում է հայերի ցեղասպանության փաստը,

ՔԱՆԻ ՈՐ Արգենտինայի, Բելգիայի, Ֆրանսիայի, Հունաստանի, Իտալիայի, Լիբանանի, Ռուսաստանի, Շվեդիայի, Ուրուգվայի խորհրդարանները, Եվրոխորհրդարանը և Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը դատապարտել են Օսմանյան կայսրությունում հայ ազգաբնակչության կոտորածները և ճանաչել են, որ դա ցեղասպանություն է նշանակում,

ՔԱՆԻ ՈՐ հայերի ցեղասպանությունը ճանաչվել են նաև Քվեբեկի Ազգային Ասամբլեայի, Օնտարիոյի օրենսդրական Ասամբլեայի և Կանադայի Եկեղեցիների Խորհրդի կողմից,

ՔԱՆԻ ՈՐ ցեղասպանությունը վերապրած հազարավոր հայեր և նրանց սերունդները ներկայումս ապրում են Կանադայում որպես կանադական քաղաքացիներ և հարստացնում են Կանադայի բազմազգ մշակութային ժառանգությունը,

ՔԱՆԻ ՈՐ Կանադան մի երկիր է, որը հպարտանում է օրենքի գերակայությամբ և մարդու իրավունքների ու ազատության հարգանքով,

ՔԱՆԻ ՈՐ ապրիլի 24-ը դարձել է կանադական հայերի և ընդհանրապես ողջ աշխարհում հայկական ծագում ունեցող մարդկանց համար խորհրդանշական տարեթիվ,

ՔԱՆԻ ՈՐ հայերի ցեղասպանության մասին հարցի լուծումը կարող է օգնել նաև Հարավային Կովկասի մի շարք հնագույն հակամարտությունների խաղաղ կարգավորմանը,

ՈՐՈՇՎՈՒՄ Է, որ այս պալատը կոչ է անում Կանադայի կառավարությանը՝

ա) ճանաչել հայերի ցեղասպանությունը և դատապարտել պատմական ճշմարտության խեղաթյուրման կամ ժխտման ամեն մի փորձ, երբ այն կներկայացվի ինչ-որ ավազ, քան ցեղասպանությունն է, քան մարդկության դեմ կատարված հանցագործությունը, և

բ) ապագայում, յուրաքանչյուր տարի ողջ Կանադայում ապրիլի 24-ը նշել որպես 1,5 միլիոն հայերի, որոնք դարձան քսաներորդ դարի առաջին ցեղասպանության զոհեր, հիշատակի օր:

Motion N 44. Debates of the Senate. (Hansard). 1st session 37th Parliament . Volume 139. Issue 124. Thursday, June 13, 2002.
Геноцид армян. Документы и комментарий, М., 2003, том 2, часть 1, стр. 858.

7. ԿԱՆԱԴԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԱՍԱՅՆՔՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԻՍՏ 12 փետրվարի 2003թ. ԵԼՈՒՅԹՆԵՐ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ԽՈՍՆԱԿԻ ՏԵՂԱԿԱԼ – Պալատն այժմ կանդրադառնա խորհրդարանի անդամների անհատական առաջարկությունների քննարկմանը, ինչպես նախատեսված է այսօրվա աշխատակարգում:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՍՎԵՆԴ ՌՈԲԻՆՍՈՆԸ (Քարնաբի-Դուգլաս ընտրական մարզ: Նոր դեմոկրատական կուսակցություն) ներկայացրել է թիվ 137 բանաձևը, որտեղ ասվում է. «Համայնքների պալատը գտնում է, որ կառավարությունը պետք է՝

ա) ճանաչի հայերի ցեղասպանությունը և դատապարտի այդ պատմական ճշմարտության ժխտման կամ խեղաթյուրման յուրաքանչյուր փորձ, քանի որ այն հանդիսանում է ոչ այլ ինչ, քան ցեղասպանություն, մարդկության դեմ հանցագործություն, և բ) այսուհետև յուրաքանչյուր տարվա ապրիլի 24-ը ողջ Կանադայում սահմանել 1,5 միլիոն հայերի, որոնք դարձան 20-րդ դարի առաջին ցեղասպանության զոհեր, հիշատակի օր»:

ՆԱ ՀԱՅՏԱՐԱՐԵՑ – Պարոն խոսնակ, այսօրվա երեկոյան քննարկումները վերաբերում են ճշմարտությանը: Այսօրվա երեկոյան քննարկումները վերաբերում են պատվասիրությանը: Այսօրվա երեկոյան քննարկումները վերաբերում են այն բանին, որպեսզի ասվի ճշմարտությունը 20-րդ դարի պատմության ամենասև բծի մասին, առաջին ցեղասպանության, ցավալին նրանով, որ այն ոչ միայն ցեղասպանություն էր, բայց առաջին ցեղասպանությունը 20-րդ դարում, հայերի ցեղասպանությունը, 1,5 միլիոն հայերի ցեղասպանությունը, որոնք զոհվեցին, երբ այդ ժամանակվա Օսմանյան կայսրության բանակը բռնի ուժով նրանց տեղահանեց Արևելյան Թուրքիայից:

Այն ժամանակվանից, երբ այդ հարցը քննարկվեց վերջին անգամ Համայնքների պալատում, տեղի ունեցան մի շարք նշանակալից դեպքեր, ինչպես Կանադայում, այնպես էլ միջազգային ասպարեզում՝ հայերի ցեղասպանության ճանաչման ճանապարհին: Անցյալ տարվա հունիսի 13-ին կանադական Սենատը համարյա միաձայն՝ երեսունհինը ձայները «կողմ» և մեկ ձայնով «դեմ», բանաձև ընդունեց, որն առաջարկվել էր սենատոր Շիրլի Մէյխյուի կողմից, պաշտպանվել սենատոր Սետլակվիի և պարզություն մտցնելու համար՝ լրացվել սենատոր Ջոն Լինչ Ստաունտոնի կողմից: Սենատի բանաձևը համապատասխանում է այն բանաձևին, որը ներկայացվել է այսօր Համայնքների պալատին...

Եթե մեր խորհրդարանի Սենատը կարող է ձեռնարկել այսպիսի կարևոր և համարձակ, և իրոք, վաղուց հասունացած քայլ, իհարկե, մենք, որպես Կանադայի ժողովրդի ընտրյալ ներկայացուցիչներ, կարող ենք կատարել այդ նույն բանը...

Ինքը՝ արտաքին գործերի մինիստրը հրաժարվում է հաստատել և ճանաչել հայերի ցեղասպանությունը: Երբ անցյալ տարվա աշնանը ես հարցում ներկայացրեցի Սենատին այդ պատմական և փաստորեն համարյա միաձայն բանաձևի ընդունման մասին, որը կոչ էր անում ճանաչել հայերի ցեղասպանությունը, նա իրեն չստիպեց ասել՝ այս, եկեք ասենք ճշմարտությունը:

Դրա փոխարեն, նա խոսում էր սարսափելի ողբերգության մասին: Իհարկե, դա ողբերգություն էր, բայց դա ավելին էր, ավելի մեծ, քան ողբերգությունը: Դա ցեղասպանություն էր, և մենք պարտավոր ենք այն անվանել այնպես, ինչպես նա կա: Սա ամենաքիչն է, որ մենք կարող ենք անել, որպեսզի հարգենք հիշատակը նրանց, ովքեր մահացան և բոլոր դեպքերում մահացան այնպիսի սարսափելի, ողբերգական և ահավոր պայմաններում, ամենաքիչը, որ մենք կարող ենք անել, դա ճշմարտություն ասելն է:

Մենք միայնակ չենք այն ճանաչելու: Ինչպես ես նախկինում արդեն հիշատակեցի, այդ ուղղությամբ տեղ է գտել զգալի առաջընթաց:

Քսան տարի առաջ, 1980թ. մարտին Օնտարիո նահանգի Օրենսդրական ժողովը բանաձև ընդունեց, որտեղ ճանաչվում և դատապարտվում էին «Թուրքիայի կառավարության կողմից իրագործված գազանություններ հայ ժողովրդի նկատմամբ, որը հետապնդումների և ցեղասպանության զոհ էր»...

1980թ. ապրիլի 10-ին Քվեբեկի նահանգի Ազգային ժողովը միաձայն բանաձև ընդունեց, որը դատապարտում էր հայերի ցեղասպանությունը և նահանգի ազգաբնակչությանը կոչ էր անում այդ դեպքերը հիշատակել ապրիլի 24-ին: Բանաձևում ասվում էր. «Հայերի ցեղասպանության 65-րդ տարելիցի առթիվ, որն իրականացվել էր Թուրքիայում 1915թ. ապրիլի 24-ին, Ժողովն օգտվում է առիթից, որպեսզի դատապարտի այդ բարբարոսական ակտն այդ դժբախտ ժողովրդի նկատմամբ, որը խախտեց մարդու անհատական և կոլեկտիվ իրավունքների սկզբունքները, և Ժողովը հրավիրում է քվեբեկցիներին նշել այդ իրադարձությունն յուրաքանչյուր տարվա ապրիլի 24-ին, որպես հայ համայնքի հետ համերաշխության արտահայտություն»: Այս բանաձևն ընդունվեց Քվեբեկի Ազգային ժողովի կողմից համարյա քսաներեք տարի առաջ:

Եթե Քվեբեկի Ազգային ժողովը և Օնտարիոյի Օրենսդրական ժողովը և այնպիսի երկրների ազգային խորհրդարանները, ինչպես Արգենտինայի, Կիպրոսի, Ֆրանսիայի, Հունաստանի, Իտալիայի, Լիբանանի, Ռուսաստանի, Շվեդիայի և Շվեյցարիայի և ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատը երկու անգամ, 1975 և 1984թթ., կարող էին ձեռնարկել այդպիսի կարևոր քայլ, ապա ինչու մեր կառավարությունը չի կարող այդպես հանդես գալ:

Որպեսզի ոչ մի կասկած չլինի ցեղասպանության բնույթի վերաբերյալ, և այն պատճառով, 1915թ. տեղ գտած դեպքերը՝ Օսմանյան Թուրքիայում 1,5 միլիոն հայերի կոտորածը համապատասխանում է ցեղասպանության բնորոշման միջազգային ճանաչմանը, ես կմատնանշեմ մի միջազգային ուսումնասիրություն, որը հրատարակվել է միայն վերջերս, մի քանի օր առաջ: Այդ ուսումնասիրությունը կատարվել է անցման շրջանի արդարության հիմնախնդիրների Միջազգային կենտրոնի կողմից, որը գտնվում է Նյու Յորքում: Այդ հետազոտական կենտրոնը եկել է այն եզրակացության, որ անկասկած 1915թ. օսմանյան հայերի զանգվածային սպանությունները և տեղահանությունը համապատասխանում են չորս հիմնական չափանիշների, որոնք բերվում են ՄԱԿ-ի 1948թ. ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի Հայտարարագրում:

Այդպիսի եզրակացության են հանգել նաև բազմաթիվ ականավոր գիտնականներ:

Ի՞նչն է խանգարում մեր կառավարությանը ճիշտ հանդես գալուն:

Ես գտնում եմ, որ դժբախտաբար, դրա պատճառը հանդիսանում է նավակը չճոճելու նրա ցանկությունը, որի մեջ է գտնվում Թուրքիան, ՆԱՏՕ-ի գծով մեր դաշնակիցներից մեկը և կարևոր գործակիցը մեր տնտեսական և առևտրական հարաբերություններում:

Որպես ամոթանք, այդ հարաբերությունները ստիպում են մեր կառավարությանը չխոսել ճշմարտության մասին:

Մենք գիտենք, որ թուրքական կառավարությունը երկար տարիների ընթացքում, անփույթ վերաբերմունք ցուցաբերեց մի շարք բնագավառներում միջազգային իրավունքի նկատմամբ, խոսքը գնում է Հունաստանի հետ շարունակվող վեճին, Կիպրոսի անօրինական բռնազավթման շարունակությունը, քրդերի իրավունքների կոպիտ խախտումները Թուրքիայում, մարդու իրավունքների անհարգալից վերաբերմունքը թուրք ժողովրդի և անհարգալից վերաբերմունքը լրագրողների նկատմամբ:

Կոպիտ ճնշման դրսևորման վատթարագույն օրինակ է հանդիսանում լրագրողների սպանությունը Թուրքիայում և բանտում Լեյլի Զանի՝ պատգամավորի բանտում գտնվելը, որի միակ հանցանքը կայանում է նրանում, որ հանդես էր եկել քուրդ ժողովրդի իրավունքների պաշտպանությամբ...

Ես այսօր այստեղ կոչ եմ անում իմ գործընկերներին, ովքեր ներկայացնում են բոլոր կուսակցությունները Պալատում, չմոռանալ այդ ցեղասպանությունը, ասել ճշմարտությունն այն մասին, ինչ տեղի է ունեցել, հարգել նրանց հիշատակը, ով մահացել է:

«Ազարատ» ֆիլմի ցուցադրության ժամանակ ես հանդիպեցի մահացած հայերի ժառանգորդների ընտանիքների մի քանի անդամների հետ: Նրանք արցունքներն աչքերին խոսում էին իրենց տանջանքների մասին և այն ցավի, որ իրենց երկրի, Կանադայի, պետությունը պատրաստ չէ ասել ճշմարտությունը ցեղասպանության մասին:

Ամփոփելիս ես ցանկանում եմ նորից կոչ անել Պալատի անդամներին պաշտպանել այս բանաձևը և նկատի ունենալով այս հարցի հիմնարար կարևորությունը և այն փաստը, որ Սենատը նույնպես կարծիք է հայտնել նրա մասին, ես կցանկանայի խնդրել հիմա Պալատի միասնական համաձայնությունն այդ կարևոր բանաձևի՝ այսօրվա քննարկումների ավարտն անցկացնել քվեարկությամբ:

ԽՈՍՆԱԿԻ ՏԵՂԱԿԱԼ – Համընդհանուր համաձայնություն կա՞ այս հարցում:

ՈՐՈՇ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ – Համաձայն ենք:

ՈՐՈՇ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ – Ոչ:

ՋԵՅՍՈՆ ԿԵՆՆԻ (Կալգարի ընտրական մարզ, Հարավ-Արևելք կուսակցություն, Կանադական ալյանս) – Պարոն խոսնակ, ինձ համար հաճելի է մասնակցել այդ բանաձևի քննարկմանը, քանի որ, ինչպես մենք գիտենք, ով պատմությունից դասեր չի քաղում, ստիպված է կրկնել այն:

Ցավոք, այս է 20-րդ դարի տխուր պատմությունը, որը Հովհաննես Պողոս Երկրորդ Պապն անվանեց արցունքի հարյուրամյակ:

Դա հարյուրամյակ էր, երբ ազգայնամոլության և տոտալիտարիզմի գաղափարախոսները, ատելության գաղափարախոսությունը զանգվածային սպանությունների տեխնոլոգիայի համադրմամբ կարողացան անց-

յալ հարյուրամյակում հնարավոր դարձնել ցեղասպանությունները, որոնք բերեցին մարդկային անհմաստ տանջանքներ: Ցեղասպանության առաջին օրինակը հայերի 1915թ. ցեղասպանությունն էր:

Անցյալ տարի ես հանդես եկա այդպիսի բանաձևի պաշտպանությամբ և շարադրեցի պատմական փաստեր, որոնք վերաբերում էին հայերի ցեղասպանությանը, որոնք ես համարում եմ պատմական վիճակագրության չենթարկվող փաստեր: Ափսոս, կարծիքներ կան թուրքական համայնքի և թուրքական կառավարության կողմից, որոնք հաստատում են, թե 1915 և 1916թթ. տեղի ունեցածը Անատոլական թերակղզում առաջին պատերազմի և քաոսի ողբերգական հետևանք էր, որ ողբերգությունները տեղի ունեցան երկու կողմերում և ամենուր տեղի էին ունենում նման բաներ:

Սակայն այդ պնդումները չեն համապատասխանում փաստերին: Դա ափսոսանքի արժանի է: Մեկ բանում ես ցանկանում եմ չհամաձայնվել Սվենդ Ռոբինսոնի հետ. ես գտնում եմ, որ թուրք ժողովուրդը և թուրքական կառավարությունն այսօր անում են ամեն հնարավորը, որպեսզի երկրում մտցնեն մարդու իրավունքի նորմեր և ժողովրդավարության սկզբունքներ, որոնք պետք է ողջունել և պաշտպանել:

Ես վճռականորեն պաշտպանում եմ մեր թուրք բարեկամներին որպես դաշնակիցների ՆԱՏՕ-ի գծով, և մեր ընդհանուր արժեքների պահապանողների:

Ցույց տալ 1915 թվականի ցեղասպանության իրողությունը, չի նշանակում նվազեցնել մեր ներկայիս բարեկամությունը Թուրքիայի ժողովրդի, Կանադայի թուրք էմիգրանտների և թուրքական պետության հետ:

Այն բանի փոխարեն, որպեսզի վերադառնալ դեպի անցյալը և մեջբերումներ կատարել պատմական աղբյուրներից, որոնց վերաբերյալ, ցավոք տարվում են անվերջանալի վեճեր, ես որոշեցի մի քանի րոպե ծախսել և մեջբերումներ կատարել այն ժամանակվա կանադական զանգվածային տեղեկատվության միջոցներից, երբ տեղի էր ունենում հայերի ցեղասպանությունը:

Ես ցանկանում եմ մտովին ձեզ դնել այն ժամանակվա մարդկանց տեղը, ովքեր ուբսունհինգ տարի առաջ նստել էին այս Պալատում, երբ տեղի ունեցավ ողբերգությունը: Ես ցանկանում եմ, որպեսզի մենք պատկերացնենք, թե ինչպես մենք կարող էինք արձագանքել, եթե կարդայինք լրագրողների հաղորդումների վերնագրերը, որոնք ես ընթերցում եմ այսօր երեկոյան:

Ես պետք է մեջբերումներ կատարեմ ոչ թե կրճատված հաղորդումներից, այլ ուղղակի թերթային հոդվածների իսկական ֆոտոպատճեններից՝ Կանադայի զանգվածային տեղեկատվության առաջատար միջոցներից, որոնք հիմնված են փաստերի վրա, որոնք ստացվել են առաջին ձեռքերից, ականատեսների վկայություններն են, Թուրքիայում և նրան հարող շրջաններում 1915 և 1916թթ. աշխատող, զանգվածային տեղեկատվության միջոցների արևմտյան թղթակիցների ստուգված և հաստատվող հաղորդումները:

Այդ պատահական ընտրությունը, որը թույլատրում է մեզ շոշափել այդ ժամանակի պատմական իսկական պատկերը, և ոչ թե իմանալ պատմաբանների կարծիքը, հայերի պաշտպանների կարծիքը, ոչ իմ անձնական կարծիքը, այլ դեպքերի իրական պատմական նկարագրությունը, որը

տվել են այդ ժամանակ Հայաստանում գտնված և տեսած կանադացիները:

«Լե Դրուա» լրագրի 1915թ. հուլիսի 19-ին հոդվածը վերնագրված է «Քրիստոնյաների կոտորածները»: 1915թ. օգոստոսի 4-ին թերթը տպագրեց ևս մեկ հաղորդում, «Հայերի կոտորածները» խորագրով, որտեղ մանրամասն նկագրվում էր ցեղասպանության սկիզբը: 1915թ. սեպտեմբերին «Աքսյոն կաթոլիկ» թերթը «Հայերի կոտորածը» հոդվածում գրում է. «Արյունոտ սպանդի սարսափելի տեսարաններ են տեղի ունենում Թուրքիայի ներքին շրջաններում: Օգնության համար դիմում են հույներին: Թուրքերը նորից սկսեցին սիստեմատիկ ոչնչացնել հայերին ողջ կայսրությունում: Մեզ հայտնի դարձան հաղորդագրություններ արյունոտ սպանդի ահավոր տեսարանների մասին: Կանանց բռնաբարում են կամ վաճառում իբրև ստրուկներ, տղամարդկանց մորթում են»:

Մոնրեալյան «Լյա Պրեսսը» 1915թ. սեպտեմբերի 21-ին հաղորդեց. «Մորթվել են 100000 հայեր: Շվեյցարիայի բողոքական եկեղեցու ժողովը, որն այժմ ընթանում է Նուպտալեյում, որոշեց ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնին հեռագիր ուղղել հայերին թուրքերից պաշտպանելու համար: Շվեյցարիայի հայ գաղթականները գտնում են, որ արդեն իրենց համաերկրացիներից 100000 մորթվել են»:

«Կանադա» թերթը 1915թ. սեպտեմբերի 22-ին «Աննկարագրելի գազանություններ» վերնագրով տեղադրել է հետևյալ հաղորդագրությունը. «Քրիստանական նախկին դեսպան վիկոնտ Բրայսն ասում էր թուրքական կառավարության կողմից կատարված զզվելի գործողությունների մասին, որը հայ քրիստոնյաների ոչնչացման նպատակ էր հետապնդում: Զորակոչի հասակի տղամարդիկ սառնարյուն մորթվեցին: Երիտասարդ հայ կանանց գողանում են և ուղարկում թուրքական հարեմներ: Բնակչության մնացած մասին, ծերերին և երեխաներին վերաբնակեցնում են Փոքր Ասիայի գոյությունը պահպանելու համար անբարենպաստ վայրերում, իսկ ուրիշներին՝ Սիրիայի և Եփրատ գետի միջև ընկած անապատում: Շատերին ճանապարհին սպանում են, և բոլորը վաղ թե ուշ մահանում են»:

«Լե Դեվուար» թերթը 1915թ. հոկտեմբերին «Հայերը մորթվել են» խորագրով հայտնում է. «Վիկոնտ Բրայսի տվյալներով Հայաստանում սպանվել է մոտ 800000 մարդ: Դա գիտակցված կանխամտածված ոչնչացում է, որն իրականացվում է թուրքական կառավարության կողմից»: Ես քաղվածաբար մեջբերում կատարեմ այդ ժամանակի անգլիալեզու թերթերից: Վանկուվերի «Դեյլի պրովինս»-ը 1915թ. փետրվարի 23-ին գրում է. «Դիակները թողնվել են փողոցներում շների համար որպես կեր»:

Տորոնտոյում հրատարակվող «Դեյլի ստար» թերթը 1915թ. ապրիլի 26-ին գրել է. «Սոսկալի են հայերի սպանդի հետևանքները: Մուսուլմանների կողմից կազմակերպված ջարդերի հետևանքով տասը գյուղեր դատարկվեցին: Ամենուր արյան առվակներ են: Մայրերն իրենց մանկիկներին ետևցին գետ, որպեսզի նրանք սովից չմահանային»:

Օտտավայի «Իվնինգ ջորնել»-ը 1915թ. հուլիսին հաղորդում է. «Թուրքերը բշեցին դեպի Տիգրիս գետի ափերը 10 հազար քրիստոնյա հայերի, գնդակահարեցին բոլորի և նրանց դիակները ետևեցին գետը»:

Վիննիպեգի «Ֆրի պրեսս»-ը 1915թ. օգոստոսի 20-ին գրել է. «Թուրքերը մորթում են: Սարսափելի բռնություն է իրագործվում Բիթլիսի հայերի

նկատմամբ»: Թերթը հայտնում է համարյա 1000 կանանց ու երեխաների սպանության մասին:

Ներկայիս «Գլոբ էնդ մեյլ» թերթի նախորդը՝ «Գլոբ» թերթը 1915թ. օգոստոսի 26-ին գրում է. «Թուրքերը մեկ անգամից մորթեցին 14000 մարդու... Տրապեզունդում բնակվող 14000 կաթոլիկ հայերից և բողոքականներից փրկվեցին միայն 100 մարդ»:

Կարելի է անվերջ շարունակել... Հաղորդագրություններում պատմվում է այն մասին, թե ինչպես մարդկանց կենդանի վիճակում այրում էին և կամ էլ մաշկազերծ անում, ծնողների աչքի առջև երեխաներին ամորձատում էին կամ անդամահատում: Խոսքը չի գնում պատմական բնույթի քննարկումների մասին: Դրանք կանադական մամուլում առաջին ձեռքերից ստացված հավաստի հրատարակումներն են:

Երբ մարդիկ հարցնում են ինչու պետք է այս դեպքում Պալատը որոշի իր դիրքորոշումը, թե պատմական վեճի առնչությամբ, ապա պետք է ասել. հատկապես այն բանի համար, որ պատմությունը նշանակություն ունի:

Թույլ տվեք ինձ ավարտել իմ ելույթն իմ հարգելի գործընկերոջ բառերով, որն այստեղ ներկայացնում է Մոնտ Ռոյալ ընտրական մարզը: Նա գրել է. «Հայերի ցեղասպանությունը ծառայում է մեզ համար կարևոր և անհրաժեշտ, երկակի բնույթով դաս: Առաջինը՝ հանցագործ անտարբերության վտանգը, լռության դավադրությունը: Իրականում մենք վկան ենք ցնցող անտարբերությանը դեպի դարասկզբի էթնիկական մաքրմանը, վերջին հիսուն տարիների անհանելի ցեղասպանություններին, մինչև Ռուանդայի բառերով աննկարագրելի ցեղասպանությունը: Այդ պատճառով էլ մենք պատասխանատվություն պետք է կրենք այն բանի համար, որպեսզի քանդվեն անտարբերության պատերը, վերջ տալ լռության դավադրությանը, որտեղ էլ այն կլինի: Հայերի ցեղասպանության դեպքում անտարբերությունը ոչ միայն դրսևորվեց, բայց և շարունակվեց այդ ժամանակներից և այդ պատճառով Հիտլերի հնչանավոր ճառը ինքնստինքյան հաղիսանում է անտարբերության և լռության մեկնաբանությունը: Ինչպիսի մեծամասնությամբ Հիտլերը հայտարարեց, ո՞վ է հիշում հայերին:

Մի՞թե անտարբերությունը հիշողության, ինչպես նաև անմիջական սպանության նկատմամբ ճանապարհ չի հարթում դեպի հաջորդ սպանությունները»:

Մենք բոլորս այժմ հենց այդ պատմական հատվածում հիշում ենք հայերին: Եկեք այդ հաստատենք ներկա բանաձևն ընդունելով:

ԷՅԼԻՆ ԿԵՐՐՈԼ (Արտաքին գործերի մինիստրի խորհրդարանական քարտուղար, Լիբերալ կուսակցություն) – Պարոն խոսնակ... Բարնաբի-Դուգլաս ընտրական մարզից խորհրդարանի մեծապատիվ անդամը (Սվենդ Ռոբինսոն) հանդես եկավ 1914-1925թթ. ողբերգական դեպքերի առթիվ, երբ փլուզվեց Օսմանյան կայսրությունը: Իրոք, փլուզումն ուղեկցվում էր բազմաթիվ մարդկանց վախճանով և ունեցավ այնպիսի խոր հետևանքներ հայ համայնքի, ինչպես նաև տարածաշրջանի այլ համայնքների համար: Այս հարցի առթիվ հանդես եկան նաև համայնքների պալատի այլ անդամներ ևս դեռևս նախորդ քննարկումների ժամանակ:

Աշխարհի այդ շրջանը, անկասկած վերապրեց պատմության հատկապես մի ահավոր ժամանակաշրջան, որը նշանավորվեց բազմաթիվ գա-

գանություններով և հսկայական ցավերով: Անկախ այն բանից, թե խոսքը գնում է պրեմյեր-մինիստրի ուղերձին հայկական ծագումով կանադացիներին, 1915թ. հայերի ողբերգության տարեդարձի առթիվ, կամ նախորդ քննարկումների ժամանակ եղած ելույթներին կամ արտաքին գործերի մինիստրի պատասխաններին, պատգամավորների հարցերին, կառավարությունն արտահայտեց իր խորը ցավակցությունը և գթասրտությունը հայ ժողովրդին այն բանի համար, որ նա ապրեց այդ ժամանակաշրջանում, որի մասին գնում է խոսքը:

Կառավարությունն ընդգծեց այն նշանակությունը, որը մենք տալիս ենք պահպանության այդ մարդկային ողբերգության մասին, մեր կոլեկտիվ գիտակացության հիշողությանը: Ես կցանկանայի հատկապես ընդգծել, որ հայերի ողբերգության առթիվ քննարկումների ժամանակ 1996թ. համայնքների պալատը բանածև ընդունեց, որը սահմանեց յուրաքանչյուր տարի ապրիլի 20-ից 27-ի շաբաթը նշել որպես մարդկանց կողմից մեկը մյուսի նկատմամբ անմարդկային վերաբերմունքին զոհ դարձածների հիշատակի շաբաթ:

Մենք ցանկանում ենք նաև հիշատակել, որ 1999թ. հունիսի 10-ին, Կանադայի կառավարության դիրքորոշումն այդ դեպքերի կապակցությամբ հանգամանալից խորհրդատվությունից հետո, որը ներկայացրեց Խոլտոնի մարզից Խորհրդարանի մեծարգո անդամ, արտաքին գործերի մինիստրի Խորհրդարանական քարտուղարը, որը հանդես եկավ արտաքին գործերի մինիստրի անունից: Նա հայտարարեց. «Մենք հիշում ենք այն աղետները, որոնց ենթարկվեց հայ ժողովուրդը 1915 թվականին: Այդ ողբերգությունն իրագործվեց ազգային խմբի ոչնչացնելու մտադրությամբ, որի ժամանակ հարյուրավոր հայեր ենթարկվեցին գազանությունների, այդ թվում զանգվածային ջարդերի ու տեղահանության: Թող այդ ժամանակաշրջանի մասին հիշողությունն օգնի բուժել վերքերը, և նաև օգնի մեր օրերում ժողովուրդների և համայնքների հաշտեցմանը և հուշի մեզ մեր կոլեկտիվ պարտքի մասին համընդհանուր խաղաղության օգտին համատեղ աշխատելու համար»: Ափսոս, մենք չենք կարող վերափոխել անցյալը: Մենք ինչ կարող ենք և պետք է մշտապես կատարենք, դա շատ համառ աշխատելն է, որպեսզի կառուցենք խաղաղ ապագան և հասնել համբերության բոլոր մարդկանց համար... Կանադան իր օրինակով ցույց է տալիս մնացած աշխարհին ոչ միայն այն, որ տարբեր մշակույթի տեր մարդիկ կարող են ապրել համատեղ համաձայնությամբ և ծաղկեն, այլ նաև այն, որ այդ կարգով հանդես գալով մենք ձեռք ենք բերում հիանալի, հարստացնող և նշանավոր փորձ որպես առանձին անհատներ, այնպես էլ մշակութային, հավասարապես և տնտեսական մակարդակի վրա գտնվող ամբողջական մի երկիր:

Կանադան ձգտում է հաստատել պոզիտիվ, ընդգրկող և արդյունավետ հարաբերություններ տարածաշրջանի բոլոր երկրների, ներառյալ Թուրքիայի և Հայաստանի հետ: Իրոք, հաշտեցման հասնելով, կայուն և ծաղկող տարածաշրջանը կարող է նպաստել շահագրգռված երկրների կողմից անմիջական սահմանափակումներից դուրս պոզիտիվ զարգացմանը:

Յուրաքանչյուրը շահում է դրանից, այդ թվում նաև Կանադան: 1915թ. ողբերգական դեպքերն ընդգծում են և հիշեցնում մեզ ժողովուրդների նկատմամբ համբերատարության և հարգանքի կարևորության խրա-

խուսումը, նպատակ ունենալով հասնել նրան, որպեսզի չկրկնվեն անցյալի ողբերգական դեպքերը, նման նրանց, որոնք բերեցին հայ ժողովրդի սարսափելի կորուստներին: Մենք հրավիրում ենք նաև կողմերին, որոնց դա վերաբերում է, նայել ապագային, քանի որ անցյալի դեպքերը չպետք է կանգնեն հաշտության ճանապարհին...

Կառավարությունը հրաժարվում է պառակտում մտցնել: Նա հրաժարվում է արթնացնել հին ատելությունը և նորից բացել նոր վերքեր: Կառավարության դիրքորոշումը բերում է նրան, որպեսզի ստեղծվի համբերության և հաշտեցման սկզբունքներով երկիր, որը ապագային է դիտում և կառուցում է արտասահմանում և այստեղ Կանադայի սահմաններից ներս այնպիսի հարաբերություններ, որոնք մեզ առաջ են տանում, չղեկավարվելով քաղաքական մոտիվներով, որպեսզի նորից ծնի և ստեղծի ատելություն և փլուզում:

Ես շատ հպարտանում եմ կառավարության դիրքորոշմամբ, որը դրսևորում է նշանակալի համարձակություն այն ուղու վրա, որին մենք շարունակում ենք հետևել:

ՖՐԱՆՍԻՆ ԼԱԼՈՆԴ (Մերսյեր ընտրական մարզ, Քվեբեկյան խմբակցություն) – Պարոն խոսնակ, ես հույս ունեմ համոզել խորհրդարանային քարտուղարին այս հարցում կառավարության դիրքորոշումը փոխելու անհրաժեշտության մեջ:

Համայնքների պալատում շատ է ասվել հայերի ցեղասպանության ճանաչման պաշտպանության մասին: Ես չեմ ցանկանում կրկնել բոլորը, բայց ցանկանում եմ պատմել մի հոդվածի մասին, որը կարդացել եմ և որի բովանդակությունը ես պետք է բաժանեմ իմ գործընկերների միջև:

Այդ հոդվածը հանդիսանում է նոր դրսևորումների էությունը, որոնք ցուցադրում են թուրք և հայ պատմաբանները, ովքեր ցանկանում են ցեղասպանության ճանաչումը. ես կրկին Խորհրդարանական քարտուղարի ուշադրությունն ուղղում եմ այդ նույն կարևոր հարցի վրա, բայց նույնպես ցանկանում եմ դրանից առաջ գնալ և օժանդակել երկու համայնքների միջև երկխոսությանը և նաև երկու երկրների միջև...

Հոդվածի հեղինակը, որի մասին ես պետք է խոսեմ, հանդիսանում է Թաներ Աքչամը. նա ներկայումս աշխատում է, որքան ես հասկանում եմ, Տորոնտոյում՝ Զորյան ինստիտուտում: 2001թ. հուլիսին «Մոնդ դիպլոմատիկ» հեղինակավոր ամսագիրը հրատարակեց նրա «Թուրքիայի մանրակրկիտ մոռացված պատմությունը» հոդվածներից մեկը: Ես ցանկանում եմ Խորհրդարանական քարտուղարի ուշադրությունը հրավիրել, որ այդ հոդվածը գրվել է այն բանից հետո, երբ Ֆրանսիայի համար ծագեցին լուրջ խնդիրներ Թուրքիայի հետ Ֆրանսիայի Ազգային Ժողովի և Սենատի կողմից հայերի ցեղասպանությունը ճանաչելուց հետո:

Հեղինակը հիշեցնում է, մեզ, որ Անկարայում ֆրանսիական դեսպանը հրավիրվել էր թուրքական կառավարության կողմից: Տեղի ունեցան ցույցեր, և ֆրանսիական ապրանքները բոյկոտի ենթարկվեցին: «Հայերի ցեղասպանության ճանաչումը Փարիզի կողմից առաջ բերեց հասարակայնության բողոքը և պաշտոնական վերաբերմունքը» գրել է նա: Ես հիշում եմ, տեսել և կարդացել եմ այդ մասին:

Պարոն Աքչամը նաև գրել է. «Փաստորեն, Թուրքիայի կողմից այդ արյունալի սպանդի ճանաչումը ստիպելու էր նրան ճանաչել նաև, որ մի

քանի հերոսներ, ովքեր օգնեցին կառուցել ներկայիս Թուրքիայի պետությունը, նույնպես մարդասպաններ էին»: Հենց այս է նա բացատրում ողջ հոդվածի մեջ... Նա շարունակում է. «Ինչու է «գենոցիդ» տերմինն այդքան զայրույթ առաջ բերել: Այդպիսի ընկալումն ավելի դժվար է հասկանալ, երբ Թուրքիան կարող էր, եթե ցանկանար ճանաչել, որ սպանդը տեղի է ունեցել, հայտարարելով այդ մասին, որ ինքն այդ բանի համար պատասխանատվություն չի կրում: Երկրի հիմնադիր Մուսթաֆա Քեմալը բազմիցս հանդես է եկել այդ հարցի շուրջ, դատապարտելով այն, որը նա անվանեց ամոթալի ջարդեր, և կոչ արեց պատժել մեղավորներին: Օսմանյան «Իթթիհադ վե թերակկի» (Միություն և Առաջադիմություն կուսակցության) առաջնորդներին, ովքեր կազմակերպել էին ջարդերը, 1926թ. դատապարտեցին, չնայած դատավարությունները վերաբերում էին այլ հանցագործություններին: Նրանցից ոմանք մահապատժի ենթարկվեցին: Այդ փաստերի լույսի տակ Թուրքիան կարող էր ափսոսանք հայտնել հայերի դեմ կատարված հանցագործությունների համար և բացատրություն տար, որ այդ գործողությունները իրականացվել էին Օսմանյան պետության, այլ ոչ Հանրապետության կողմից»:

«Հիշողության կոլեկտիվ կորուստը, որով տառապում է երկիրը, հանդիսանում է յուրաքանչյուր հանրային քննարկման ճանապարհի գլխավոր արգելքներից մեկը... Հիշողության այդ ընդհանուր կորուստը ելնում է այն փաստից, որ թուրքերի պատմական գիտակցությունը տասնամյակների ընթացքում կաթվածահար է եղել:

Հանրապետության հիմնադիրները բառացի պայթեցրին երկրի կապերն անցյալի հետ»:

... Այդ պատճառով էլ Աքչամն առաջարկում է, և դա այն է, որին ես ձգտում եմ, որպեսզի ցեղասպանությունը ճանաչվի և որպեսզի միաժամանակ ձեռնարկվեին ջանքեր թուրքերին հասկանալու և օգնելու իր պատմությունն այլ լույսի տակ դիտելու, հաշտվելու մտադրությամբ:

ԲԻԼԼ ԿԼԻՅԶԻ (Կամբերլենդի ընտրական մարզ, Առաջադեմ-պահպանողական կուսակցություն) – Պարոն խոսնակ, ինձ համար հաճելի է կրկին հանդես գալ այս հարցի առնչությամբ: Այն առաջ է գալիս բավական հաճախակի: Փաստորեն, այն արտասահմանյան գործերի կոմիտեում քննարկվել է ոչ վաղ անցյալում, երբ կոմիտեին ներկայացվեց մեր կողմից պաշտպանվող բանաձևը: Այդ բանաձևը նախատեսում էր համայնքների պալատ ներկայացնել հայերի ցեղասպանության մասին հարցը, այն հաշվով, որպեսզի մենք կարողանային քննարկել այն: Բանաձևը ստացավ մեր կոմիտեի հավանությունը, բայց հետո այս կամ այն պատճառով կոմիտեի Լիբերալ կուսակցության անդամները դեմ քվեարկեցին այդ հարցը Պալատի քննարկմանը ներկայացնելու համար...

Մենք հսկայական կարեկցանք ենք զգում, բոլոր այն մարդկանց նկատմամբ, ովքեր զոհվեցին ահավոր իրադարձությունների արդյունքում, որոնք տեղի ունեցան համարյա ութսունութ տարի առաջ: Մենք ցանկանում էինք, որպեսզի այդ հարցը դառնա համայնքների պալատի լիարյուն քննարկման առարկա և դրվի քվեարկության, որը սակայն տեղի չունեցավ լիբերալների պատճառով...

ՄՈՐԻՍ ՎԵԼԼԱԿՈՒՐ (Սասկատուն-Վանուսկեվին ընտրական մարզ, Կանադական ալյանս կուսակցություն) – Պարոն խոսնակ, ես չեմ

ցանկանում ժխտել, որ անցյալ հարյուրամյակի սկզբին Արևելյան Անատոլիայում տեղի ունեցավ մարդկային ողբերգություն, սակայն վերագրել պատմությանը և ներկայացնել այդ ողբերգական դեպքերը որպես մեկ էքնիկական խմբի ցեղասպանություն, հանդիսանում է ոչ ճշմարտացի միլիոնավոր մարդկանց հանդեպ, ովքեր մահացան տարածաշրջանում այդ ժամանակաշրջանի ընթացքում:

Հայերի ցեղասպանության հավանական հիմնավորումներին չեն բավարարում այն միևնույն ապացույցները, որոնք պահանջվում են ցեղասպանության հանցագործության կանխազգուշացման և դրա համար պատժի մասին 1948թ. Հռչակագրով:

Փաստորեն, մի քանի օսմանցիներ դեռևս այն ժամանակ կանգնեցին դատարանի առջև ցեղասպանության մեղադրանքով և արդարացվեցին: Այն բանից հետո, երբ օսմանցիները պարտություն կրեցին Առաջին համաշխարհային պատերազմում, բրիտանացիները Մալթայում ստեղծեցին ատյան Օսմանյան կայսրության պատասխանատու դեմքերին ջարդերի ու հանցագործությունների համար դատելու նպատակով, որոնք իբր իրականացվել էին հայերի նկատմամբ, ցեղասպանության մեղադրանքով:

Չնայած այն բանին, որ Օսմանյան կայսրությունը դաշնակիցների, բրիտանացիների և ամերիկացիների կողմից բռնագրավված էր, և ամեն մի պահանջվող ապացույց գտնվում էր ձեռքի տակ և հեշտ մուտք ունեին, դատարանը բոլոր մեղադրյալներին արդարացրեց ապացույցների բացակայության պատճառով: Փաստորեն, նա, ով հավաքել էր վկայություններն ու փաստաթղթերը, հայ էր: Վերջապես դատախազը հայտարարեց, որ բացակայում են բավարար ապացույցները և ինքը չի կարող շարունակել վարել այդ գործը: Այն վլուզվեց ապացույցների բացակայության պատճառով: Բոլոր 114 մեղադրյալներն արդարացվեցին և երկու տարի չորս ամիս կալանքի տակ գտնվելուց հետո ազատ արձակվեցին:

Ես պետք է նաև ուշադրություն հրավիրեմ կասկածելի և վնասաբեր մի քանի աղբյուրների վրա, որոնք այսօր Պալատում մեջբերվում էին: Այդ լրագրողներից մի քանիսն իրադարձությունների վայրում չեն եղել և նրանց տեղեկատվության աղբյուրը, հատկապես դեսպան Հենրի Մորգենթաուն, որին հաճախ վկայակոչում են, ինչ-որ չափով կանխակալ է: Այդ մարդը, որն իրոք գտնվում էր այնտեղ պրեզիդենտ Վիլսոնի կարգադրությամբ: Նրա գրագրությունները պրեզիդենտ Վիլսոնի հետ վկայում է այն մասին, որ նրա ձգտումների մեջ էին մտնում նորությունների և հաղորդումների համադրումը, որը ԱՄՆ-ին կհրահրեր մտնել պատերազմի մեջ: Նրա ներկայությունն այնտեղ հիմնականում հետապնդում էր քաղաքական մեծ չափերի, այլ ոչ հումանիստական նպատակներ:

Մենք կարող էինք կանգ առնել այն քվաքանակի վրա, որն այստեղ դարձավ քննարկման առարկա:

Այդ ժամանակաշրջանում, հավանաբար 600000 անբախտ հայեր սպանվեցին, բայց ոչ 1,5 միլիոն, որը հաճախ հիշատակվում է: Իրականում, պատմաբան և ժողովրդագետ դոկտոր Ջաստին Մակարտին բացատրում է, որ սպանվել է 600000 պակաս մարդ: Անհրաժեշտություն չկա վեճի մեջ մտնել քվակազմի վերաբերյալ, սակայն քվերը զգալիորեն բարձրացվել են:

Ես ցանկանում եմ ուշադրություն հրավիրել այն խոսքերի վրա, որոնց հաճախ հիշատակում են, իբրև Հիտլերի կողմից ասված, բայց փաստորեն մտածված և կեղծված մեջբերում է: Այդ խոսքերը չկան Նյուրնբերգի դատավարության սղագրության մեջ: Այն չի պահպանել կասկածելի մեջբերումը: Այդ խոսքերը ներկայացվում են Ասոշիէյտեդ Պրեսս (Բեռլինում) գործակալության բյուրոյի վարիչի կողմից, Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, որը չի կարող հավաստի աղբյուր հանդիսանալ և փաստորեն այդ խոսքերը հաճախ նորից ու նորից կրկնում են:

Բավական է ասել, որ դա ողբերգական ժամանակ էր, բայց մենք համաձայն չենք հիմնական գնահատականի հետ: Իրականում այնտեղ գտնվում էին ահաբեկիչներ, դաշնակցական և հնչակյան պարտիզաններ, և նրանց համախոհները քաղաքացիական բնակչությունից, որոնք ընդհանուր խոստովանությամբ, կազմակերպել էին հեղափոխական խմբեր և պատերազմ էին մղում իրենց սեփական պետության դեմ: Նրանք ակտիվ քաղաքական միավորման մեջ մտան ռուսական զորքերի հետ, որը բերեց նրանց տեղահանությունը, ովքեր գտնվում էին պատերազմական գոտում: Տեղի ունեցավ տեղահանություն, որի ընթացքում նաև ինչ-որ սարսափելի դեպքեր, որը մենք չենք կարող անվանել ցեղասպանություն: Ես կարծում եմ, որ այդ դեպքում մենք չենք հասնում ՄԱԿ-ի Հռչակագրի չափանիշներին:

ՍՎԵՆԴ ՌՈԲԻՆՍՈՆ – Պարոն խոսնակ, ինչ վերաբերում է խորհրդարանական քարտուղարի կարծիքներին, կարելի է միայն հուսալ, որ նա ընդունում է ճշմարտության բացահայտման կարևորությունը և որպեսզի մենք նույնպես հանդես գայինք ինչպես նրա Սենատի գործընկերները: Սենատոր Մէյխյուն և այլ կուսակցություններ ներկայացնող մի շարք այլ նշանավոր սենատորներ, ձայների գերակշռող մեծամասնությամբ արտահայտվեցին ցեղասպանության իրագործման պատմական փաստի ճանաչման օգտին: Դա ոչ միայն ուղղակի ողբերգություն էր: Դա ցեղասպանություն էր: Եվ համայնքների պալատը պետք է համաձարկություն դրսևորի, շիտակություն և պատվախնդրություն և տեղի ունեցածը կոչի այնպես, ինչպես այն եղել է:

Պարոն խոսնակ, չնայած այսօրվա քննարկումները կարող են ավարտվել ոչնչով, ես ցանկանում եմ հավաստել Ձեզ և նրանց, ովքեր լսում են մեր քննարկումները, որ մենք շարունակելու ենք հանդես գալ այդ հիմնարար կարևոր հարցի շուրջը, մինչև որ Կանադայի խորհրդարանի երկու պալատները չճանաչեն 1,5 միլիոն հայերի ցեղասպանությունը որպես իրողության փաստ:

ԽՈՍՆԱԿԻ ՏԵՂԱԿԱԼ – Ժամանակը, խորհրդարանի անդամների անհատական առաջարկությունների քննարկման համար, սպառվել է: Քանի որ բանաձևը պաշտպանություն չստացավ, քվեարկության անհրաժեշտ առարկա դառնալու համար, ապա հարցը հանվում է օրակարգից:

37th Parliament. 2nd session. Edited. Hansard. Number 058. Wednesday, February 12, 2003.

Геноцид армян. Документы и комментарий, М., 2003, том 2, часть 1, стр. 860-868.

8. ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՍԱՅՆՔՆԵՐԻ ՊԱԼԱՏ
20-21 ԱՊՐԻԼԻ 2004
M-380 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ՝
«ԹՈՂ ՊԱԼԱՏՆ ԸՆԴՈՒՆԻ 1915թ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏԻ ԱՅԴ ԱՐԱՐՔԸ՝ ՈՐՊԵՍ ՍԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՐՈՒԹՅՈՒՆ»

Ներկայացված Լավալ-Սանտղի պատգամավոր տիկին Մաղլեն Դալֆոն-Գիղալի կողմից

Պալատը վերսկսում է M-380 առաջարկության ուսումնասիրությունը՝ ընդհատված փետրվարի 25-ին:

ՏԻԿԻՆ ՖՐԱՆՍԻՆ ԼԱԼՈՆԴ (ՄԵՐՍԻԵ, BQ) - պարոն նախագա'ի, վաղո առաջին անգամ պատգամավորները կկարողանան քվերակությամբ արտահայտվել այդ կարևոր հարցի վերաբերյալ, նույնիսկ եթե չորրորդ անգամն է, երբ նման առաջարկությունը ներկայացված է այս պալատում:

Արդ, ես զարմացա, տեսնելով իմ փոստում միջազգային առևտրի և արտաքին գործերի նախարարի մի նամակը, ուղղված պատգամավորներին, որտեղ մեզ հրամայում են կողմ չքվեարկենք պատգամավորի կողմից ներկայացված առաջարկությանը: Անկեղծ ասած, դա ինձ զարմացրեց և մի քիչ էլ ապշեցրեց, հատկապես, որ նա մեկն է կառավարության նախարարներից, որը մեծ կարևորություն է տալիս այն ամենին, ինչ մտածում և ցանկանում են պատագամավորները: Այսպիսով, ես զարմացա:

Այդուհանդերձ, նամակը երկրորդ անգամ կարդալուց հետո, ես ինձ շնորհավորեցի, որ նա այն ինձ է ուղարկել, ասեմ ձեզ, թե ինչու: Իր երրորդ պարագրաֆում նա հետևյալն է ասում.

Կառավարության կողմից հաստատված քաղաքականությունը 1999թ. հունիսին Պալատում արված հայտարարության մեջ՝ ի նպաստ հաշտեցման. «Մենք հիշում ենք 1915թ. հայ ազգաբնակչության հանդեպ իրագործված ջարդերը: Այդ ողբերգությունն առաջացել էր ազգային խմբի, հարյուր հազարավոր հայերի ոչնչացմամբ, որոնք զոհ դարձան ամեն տեսակ դաժանությունների, ներառյալ զանգվածային տեղահանությունները և կոլեկտիվ սպանությունները...»:

Ո՞վ երբևէ չի կարդացել «ցեղասպանության» սահմանումը ցեղասպանություն ոճրի կանխման և դրա պատժելիության մասին կոնվեցիայում: Հասկանալի է, որ ցեղասպանության բոլոր տարրերը հստակ նշված են նախարարների հայտարարության մեջ: Այդ սահմանման մեջ ասվում է, որ այն «գործողություն է՝ կատարված ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբի մասամբ կամ ամբողջովին վերացնելու մտադրությամբ»: Դա այն է, ինչ վերջերս ենք լսել նախարարի խոսքերից, կամ ավելի շուտ գրչից:

Ես ցանկանում եմ հիշատակել այդ առաջարկությունը: Շնորհավորում եմ իմ գործընկերուհուն Լավալ-Սանստղից՝ այն առաջադրելու համար: Ի՞նչ է ասվում այդ առաջարկության մեջ: Այնտեղ ասվում է.

«Թո'ղ Պալատն ընդունի 1915թ. Հայոց ցեղասպանությունը և դատապարտի այդ գործողությունը՝ որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն»:

Գոյություն ունեն նոր, արդիական տարրեր, որոնք մեզ թույլ են տալիս հստակորեն, առավել բարենպաստ կեցվածք ընդունել այս առաջարկության հանդեպ:

Նկատենք առաջին տարրը: Վերջերս Հաագայի միջազգային դատարանի վճռաբեկ պալատը որոշում է սահմանել, վերաբերող Մ. Կրստիկին, որի համար 1995թ. հուլիսին 7000-8000 մուսուլմանների մահվան համար պատասխանատու գտնելու փաստը, բավարար չէր , որ այն անվանվի ցեղասպանություն: Այսպիսով Վճռաբեկ պալատը հստակ կերպով փաստեց, որ այդ պաշտպանությունն օրինական չէ և ընդունում է, որ այն ցեղասպանություն է:

Ես կարծում եմ, որ մենք այստեղ հասկանում ենք այդ որոշման ամբողջ կարևորությունը, որը, հետևելով փորձագետներին, ընդլայնում է ցեղասպանության հասկացությունը:

Մեկ այլ հետաքրքիր նորություն է հաստատվում: Շատերի կողմից հարգված Նյու Յորք Թայմս թերթը վերջերս է փոխել իր հոդվածագրերին և լրագրողներին վերաբերող գլխավոր ուղղությունները: Ես չունեմ դրա ֆրանսերեն տարբերակը, քանի որ դա Նյու Յորք Թայմսն է: Ես ձեզ այն անգլերեն կկարդամ:

«Ցեղասպանություն» բառի գիտական բնորոշման ուշադիր ուսումնասիրությունից հետո մենք որոշեցինք ընդունել այդ տերմինը 1915թ. և մոտակա տարիներին թուրքերի կողմից հայերի զանգվածային ոչնչացման վերաբերյալ: «Հայոց ցեղասպանություն» արտահայտությունը կարելի է օգտագործել ազատ և պետք չէ որակավորել «ինչպես կոչում են հայերը» և այլ դարձվածքներով»:

Այն, ուրեմն, մեկ այլ կարևոր տարր է, և հավելեմ, որ Բոստոն Գլոբը նույն կերպ էր արել մեկ տարի առաջ:

Այժմ հարցեր կան բարձրացնելու: Ինչու՞ չընդունել Արտաքին գործերի նախարարի 1999 թվականին արված հայտարարությունը, որը համարժեք է ասելու. «Ցեղասպանություն տեղի է ունեցել»: Ինչու՞ այն չընդունել: Դա համարժեք է սահմանմանը:

Ինչու՞ այն կապառնար Կանադայի հետ Թուրքիայի հարաբերություններին, Կանադայի թուրք քաղաքացիների հարաբերություններին ուրիշների հետ: Նախևառաջ պետք է ասեմ, որ դա լավագույն փաստարկը չէ, սպառնալիքն արտահայտվել է ամենուրեք, բայց երբեք չի կիրառվել, մինչդեռ բազմաթիվ խորհրդարաններ բազմաթիվ երկրներում հաջորդաբար ընդունել են նման բանաձևեր:

Ինչո՞վ այդ առաջարկությունը հարձակում կգործեր Թուրքիայի վրա: «Թուրքիա» բառը չի արտաբերվում, հակառակ այն առաջարկությանը, որն առաջադրվել է ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատին: Այդտեղ «Թուրքիա» բառը չկա:

Արդյո՞ք չի կարելի հիշատակել Մուստաֆա Քեմալին՝ Թուրքիայի 1923թ. հանրապետության հիմնադրին, հիշենք՝ ցեղասպանության տարեթիվը, որի մասին խոսվում է 1915 թվականն է, որը բազմիցս, հարյուրավոր անգամներ դատապարտել է ջարդերը: Վերջիններս տեղի չունեցան քողարկված: Բազմիցս նա դրանք որակեց ստորություններ՝ պահանջելով որ մեղավորները պատժվեն:

Հիշատակեմ, որ Թուրքիայի հանրապետությունը ստեղծվեց միայն 1923 թվականին: Այսօրվա և նախորդ տարիների թուրքերը կկարողանային ասել. «Ահա դա Օսմանյան կայսրությունն էր: Ճգնաժամի պահ էր: Մենք կարեկցում ենք հայերին և ընդունում, որ նրանք ցեղասպանության զոհ դարձան»: Ինչպե՞ս գործել այլկերպ:

Ցանկանում եմ ավելացնել, որ եթե «ցեղասպանություն» բառը չի հիշատակվում 1948 թվականից առաջ, բանն այն է, որ այն չէր օգտագործվում այդ նպատակով: Ես նույնիսկ նայել եմ իմ հին՝ 1932թ. առաջին անգամ հրատարակված Լարուս բառարանում, այն հետաքրքիր է պատմաբանի համար՝ «Շոահի հայտարարության առաջարկության պաշտպանների կողմից օգտագործված բառ»:

Ինձ համար բավարար հիմքեր չկան քվեարկել այն առաջարկության դեմ, որը վաղը ձեր առջև կլինի: Ես արդեն հիշատակել եմ այն սահմանումը, որն էականում տվել է Արտգործնախարարը: Ճիշտ կլինի ասել այն, «ինչն անվանվում է Հայոց ցեղասպանություն»:

Քվեբեկի և նույն Կանադայի այլ վայրերի Ազգային ժողովը և Սենատը, առավել կոշտ ձևերով ընդունել են այդ առաջարկությունը: Այդուհանդերձ, արդյո՞ք դա անհրաժեշտ ճանաչումը չէ, այն տղամարդկանց և կանանց հետնորդների համար, որոնց տառապանքները ծայրահեղ մեծ էին և ժամանակին ընդունված բազմաթիվ ականատեսների կողմից: Այդ ուղղությամբ արված փոքր հետազոտությամբ էլ կարելի է գտնել ինչ-որ բան:

Ինչպե՞ս այս առաջարկության օգտին քվեարկելու փաստը կկարողանար հետածգել Հայաստանի և Թուրքիայի միջև մերձեցումը: Շոահի ընդունումն իսկապես չի խանգարել Եվրոպայի և Գերմանիայի միջև արտակարգ մերձեցմանը:

Ապագան չի կարող կառուցվել մոռացության վրա: Մեզ թվում է, որ այս դեպքում, ապագան անցնում է այս կշիռ ունեցող փաստերի ընդունման միջով, որոնք հակված են դեպի այս հարցը:

Ինչ վերաբերում է հաշտեցմանը, հարկավոր կլինի շրջվել դեպի ապագան, երբ անցյալը հանգիստ նիրհի:

ՊԱՏՎԵԼԻ ԴԱՆ ՍԱԿԹԻԳ (ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ) - Պարոն նախագահ, ակնհայտ է, որ ես պետք է ունենամ իմ գործընկերոջ համաձայնությունը, որն առաջարկություն է ներկայացրել հետևյալ փոփոխությունն ընդունել տալու համար: Ես այն կկարդամ անգլերեն:

- Ես խնդրում եմ միաձայն հանձայնվել փոխելու առաջարկությունը՝ օգտագործելով հետևյալը.

«Պալատը հիշում է 1915թ. հայ ժողովրդի գլխին թափված աղետը: Այս ողբերգությունը կատարվել է ազգային խմբի ոչնչացման մտադրությամբ, որի ժամանակ հարյուր հազարավոր հայեր ենթարկվել են այնպի-

սի արհավիրքների, ինչպիսիք են տեղահանությունները ու կոտորածները: Թող այդ շրջանի հիշատակը նպաստի վերքերի ապաքինմանը, ինչպես նաև այսօրվա ազգերի ու համայնքների միջև համաձայնությանը, իսկ մեզ՝ բոլորիս, հիշեցնի մեր պարտքը հանուն աշխարհի խաղաղության մեր համատեղ աշխատանքի մասին»:

ՏԻԿԻՆ ՄԱԴԼԵՆ ԴԱԼՖՈՆ-ԳԻՂԱԼ (ԼԱՎԱԼ- ՍԱՆՏՂ) - Պարոն նախագահ, իմ պատկերացմամբ ինձ է վերապահված ընդունել կամ մերժել: Ես ցանկանում եմ ձեզ ասել, որ այս խորհրդարանում երկու պաշտոնական լեզու կա: Ես հավասարապես ցանկանում եմ ձեզ ասել, որ անընդունելի եմ համարում, որ այս փոփոխությունը չի կազմվել ֆրանսերեն և անգլերեն լեզուներով, հաշվի առնելով այն ահռելի ռեսուրսները, որ ունեն կառավարությունն ու նաև պատգամավորները թարգմանություն կատարելու համար:

Այնուամենայնիվ, ես լավ հասկացա: Ափսոսում եմ, բայց պարզ է, որ թարգմանությամբ կամ առանց թարգմանության ես չեմ կարող ներառել այդ փոփոխությունն իմ առաջարկության մեջ:

ՆԱԽԱԳԱՀԻ ՕԳՆԱԿԱՆ (ՊՐՆ. ՌԵԺԻՆԱԼԴ ԲԵԼԵՐ) - Ես կարծում եմ, որ խնդիրը վերջերս է կարգավորվել:

ՊԱՏՎԵԼԻ ԵԼԵՆԻ ԲԱԿՈՊԱՆՈՍ (ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՌԼԱՄԵՆՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ [ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ) - Պարոն նախագահ, իսկապես ինձ համար մեծ պատիվ է այսօր խոսք վերցնել՝ այս պալատում նորից մեկ անգամ հաստատելու իմ գործընկերոջ կարևոր առաջարկությունը: Պետք է խոստովանեմ, որ ես շատ երջանիկ եմ տեսնել, թե մինչև որ կետն է Հայկական հարցը առաջընթաց ունեցել, այն պահից, ինչ իմ նստավայրն այս պալատում է:

Ես միշտ հաճույքով եմ խոսել հօգուտ այն առաջարկությունների, որոնք ներկայացվել են Համայնքների պալատում՝ խորհրդարանականներից պահանջելով ընդունել Հայոց ցեղասպանությունը, որովհետև ես իսկապես հավատում եմ, որ մենք պետք է փորձենք օգտակար լինել՝ ընդունելով սխալը և խոսելով դրա դեմ:

Ավելի կարևորը, սակայն ես համարեցի այսօր խոսելը, որովհետև ես ցանկանում եմ Հայոց ցեղասպանությունը վերապրողներին, որոնց հանդիպել եմ անձամբ Մոնրեալում և իմ ընտրատարածքում, վստահեցնել, որ կյանքից հեռանան՝ իմանալով, որ այնպիսի մարդիկ, ինչպիսին մենք ենք՝ խորհրդարականներս, պայքարում ենք հանուն ճշմարտության և վերջ տալու համար այն սարսափներին, որ իրենք կրեցին և եղան ականատեսը և որոնք իրենց հետապնդեցին ամբողջ կյանքում: Ես նայել եմ նրանց աչքերի մեջ, և նրանք միայն խնդրում են մեզ ընդունել այն, ինչ տեղի է ունեցել և կոչել այն իր իսկական անունով՝ Հայոց ցեղասպանությամբ:

Մենք ուզում ենք վստահեցնել նրանց, որ թուրքական կառավարությունը կընդունի Հայոց ցեղասպանությունն ու մյուս արհավիրքները և քայլ կկատարի դեպի համաձայնություն, որը ուզում ենք բոլորս ապագայում:

XX դարը ծնեց երկու համաշխարհային պատերազմ, ինչպես նաև պատմական կոնֆլիկտների բազմազանություն: Չնայած դրան՝ մարդկության դեմ հանցագործություններն անցյալի ոճիր չեն, բայց շարունակում

են լինել չափազանց մեծ թվով երկրների ճակատագիրը, երկրներ, որոնք իրենց քաղաքացիական ազգաբնակչությանը պարտադրում են տանջանք, ստրկություն և զանգվածային տեղահանություն: Այսօր մենք ականատես ենք քաղաքական, ռասայական կամ կրոնական տարբեր կարծիքների հիմքի վրա ազգային փոքրամասնությունների ոչնչացմանը:

Մինչև այսօր շարունակվում են անմարդկային անընդունելի արարքները, չնայած այն փաստին, որ Ժնևի կոնվեցիան դատապարտում է դրանք: Նույնիսկ, չնայած, միջազգային հանրությունն ընդունել է, որ այդպիսի գործողությունները չպետք է կատարվեն, մենք դեռևս շատ հեռու ենք այդ նպատակին հասնելուց: Ներկայիս իրադարձությունները վկայում են նման գործողություններն ու պահանջում մեր զգոնությունը:

Նյուրեմբերգի պատերազմական հանցագործությունների դատարանը, որը նշանակվել էր հատկապես բարձրաստիճան նացիստների, Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած արհավիրքների առնչությամբ, առաջին անգամ մարդկության դեմ կատարված հանցագործությունների մեղավորների հետաքննության համար: Այս հանցագործությունները բնորոշվում են Լոնդոնի խարտիայի 6-րդ հոդվածով և ընդգրկում են սպանություն, ոչնչացում, ստրկացում, տեղահանություն և այլ անմարդկային գործողություններ պատերազմից առաջ և դրա ընթացքում ընդդեմ խաղաղ բնակչության կամ հետապնդումներ քաղաքական, ազգային ու կրոնական պատճառներով:

Չնայած ոչ բոլոր հանցագործություններն են դատապարտվել, միջազգային համայնքն ընդունել է Հոլոքոստը և ամեն տարի նշում է այն, ինչպես մենք արեցինք Կանադայում անցյալ շաբաթ, այնպես որ աշխարհում յուրաքանչյուրը կիհշի այս ողբերգությունը և այն այլևս չի կրկնվի: Չնայած դրան, մենք դեռևս ապրում ենք մի աշխարհում, որտեղ տեղի են ունենում էթնիկական զտումներ, ամենավերջին օրինակները նախկին Հարավսլավիայի հանրապետության և Ռուանդայի դեպքերն են:

Այդ չարագործությունները մարդկության դեմ իրագործված հանցագործությունների օրինակներ են, բայց դժբախտաբար, անցյալում կան բազմաթիվ չարագործություններ և դա դեռ մեր օրերի դեպքն է: Ոմանք լավ ծանոթ են: Մյուսները, ինչպես այն աղետը, որը տեղի ունեցավ Փոքր Ասիայում 1922 թվականին, քիչ են:

Առաջին համաշխարհային պատերազմի վերջին մոտ երկու միլիոն հույներ էին ապրում Փոքր Ասիայի շրջանում, այժմյան Թուրքիայի արևմտյան կողմում: Հույներն ապրում էին այդ շրջանում 3000 տարուց ավելի: 1922թ. այդ մարդիկ, ինչպես հայերը և այլ ազգային փոքրամասնություններ, զոհ դարձան XX դարի էթնիկ մաքրազտման ծեռնարկին:

Հայոց ցեղասպանությունը, որ տեղի ունեցավ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, գուցե ցեղասպանության ամենավառ օրինակն է, որպես օսմանյան թուրքերի ազգային քաղաքականության գործիք: Հայոց ցեղասպանությունն առանձնահատուկ օրինակ դարձնողն այն է, որ, ի տարբերություն հրեա ժողովրդի ցեղասպանության, որը տեղի ունեցավ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, միջազգային հանրությանը պատերազմի հանցագործներին չդատեց կամ նույնիսկ պաշտոնապես չընդունեց, որ տեղի են ունեցել այդ կոտորածները:

Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժի կոնվենցիան ցեղասպանությունը բնորոշում է որպես «գործողություն, որը կատարվում է ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբին ամբողջությամբ կամ մասամբ ոչնչացնելու նպատակով»: Պարզ է, որ այս բնորոշումը կիրառելի է հայերի դեմ կատարված չարագործությունների դեպքում:

Քանի որ ՄԱԿ-ի կոնվենցիան ընդունվեց 1948թ.՝ Հայոց ցեղասպանությունից 30 տարի անց, ամբողջ աշխարհի հայերն իրենց երկրների կառավարություններից պահանջում են պաշտոնապես ընդունել Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ իրենց դեմ իրականացված հանցագործությունը: Այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ֆրանսիան, Արգենտինան, Հունաստանը, Ռուսաստանը, Շվեդիան, Իտալիան և Բելգիան, պաշտոնապես ընդունել են Հայոց ցեղասպանությունը:

2003թ. նոյեմբերի 28-ին Քվեբեկի Ազգային ժողովն ընդունեց Հայոց ցեղասպանության հիշատակման օրվան վերաբերող առաջարկությունը, ներկայացված Ազգային ժողովի իմ գործընկերոջ՝ պարոն Իվան Բորդոլոյի կողմից, որը նահանգային պատգամավոր է: Ես շատ երախտապարտ եմ այն ջանքերի համար, որ նա կատարել է տաս տարվա ընթացքում, ինչ մենք միասին աշխատում ենք:

Հայկական հարցն առաջադրելու մեր ջանքերի շնորհիվ մենք միջազգային հանրությանը հիշեցնում ենք, որ այս տիպի պատմական ողբերգական իրադարձությունները չեն կարող պարզապես մոռացվել կամ ժխտվել: Ես հուսով եմ, որ որպես մի միասնություն, միջազգային հանրությունն անհրաժեշտ քայլեր կձեռնարկի դատապարտելու համար մարդկության դեմ այս սարսափելի գործողությունները և կընդունի օսմանյան թուրքերի կատարած չարագործություններն այնպես, ինչպես կա՝ ցեղասպանություն:

Բազմաթիվ երկրներ, ինչպես Իտալիան, Ֆրանսիան և Իսրայելը կայացրել են խորհրդարանական որոշումներ, որոնք պաշտոնապես ընդունում են Հայոց ցեղասպանությունը:

- Մարդիկ կարող են հարցնել, թե ինչու՞ է այդքան կարևոր ընդունել մի իրադարձություն, որը տեղի է ունեցել ավելի քան 80 տարի առաջ: Մենք միշտ պետք է հիշենք, որ նրանք, ովքեր անտեսում են պատմությունը, դատապարտված են կրկնելու այն: Եկեք պարզապես մտածենք, եթե միայն միջազգային հանրությունը այնպես վերաբերվեր դրան, ինչպես պետք է արած լիներ ժամանակին: Տեղի կունենային արդյո՞ք Երկրորդ համաշխարհային պատերազմի արհավիրքները: Հավանաբար՝ ոչ:

Համայնքների պալատի քննարկումներից մեկի ժամանակ այն ժամանակվա Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և Մերձավոր Արևելքի քարտուղարը, կրկնելով Կանադայի կառավարության դիրքորոշումն, ասաց.

«Մենք հիշում ենք 1915թ. հայ ժողովրդի գլխին թափված աղետը: Այս ողբերգությունը կատարվել է ազգային խմբի ոչնչացման մտադրությամբ, որի ժամանակ հարյուր հազարավոր հայեր ենթարկվել են այնպիսի արհավիրքների, ինչպիսիք են տեղահանություններն ու կոտորածները:

Թող այս շրջանի հիշատակը նպաստի վերքերի ապաքինմանը, ինչպես նաև այսօրվա ազգերի ու համայնքների միջև համաձայնությանը,

իսկ մեզ՝ բոլորիս, հիշեցնի մեր պարտքը հանուն աշխարհի խաղաղության մեր համատեղ աշխատանքի մասին»:

Չնայած ֆեդերալ իշխանությունը ցեղասպանությունն ընդունում է որպես «աղետ» կամ «ողբերգություն», շատ խորհրդարանականներ, նաև ես, համաձայն չենք այդ դիրքորոշման հետ և շարունակում ենք աշխատել ցեղասպանության ընդունման ուղղությամբ:

Ես իրոք հավատում եմ, որ համատեղ աշխատանքով մենք կարող ենք և կհասնենք մեր նպատակին՝ Կանադայի, ի վերջո, նաև Թուրքիայի կառավարությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը: Այս պատճառով, ես սերտորեն աշխատել եմ կանադահայ համայնքի, Համայնքների պալատի ու Սենատի իմ գործընկերների հետ Կանադայի կառավարությանը՝ իմ կառավարությանը, համոզելու համար ընդունել Հայոց ցեղասպանությունը: Ես սա անում եմ և՛ վերապրողների, և՛ ինձ ընտրողների, և՛ հայկական ծագում ունեցող բոլոր կանադացիների համար:

Տարիների աշխատանքն ու համաձայնեցված ջանքերը Հայկական հարցի համար 2002թ. բերեցին նշանակալից առաջընթաց, որն սկսեց 2002թ. մայիսին առաջին անգամ Կանադայի խորհրդարանականների Հայաստան կատարած այցելությունից: Ինձ պատիվ վիճակվեց այցելել Հայաստան պատվիրակության կազմում, որը ձևավորվել էր Կանադա-Հայաստան խորհրդարանական բարեկամության խմբի կողմից: Իմ գործընկերը՝ Բրեմփթընի կենտրոնի խորհրդարանականը, հայկական ծագում ունեցող կանադացի է և ծնվել է Սիրիայում՝ Հալեպում, այս հարցի համար պալատի առաջատար պայքարողներից է: Ես կրկին ուզում եմ շնորհավորել նրան:

Այս ուղևորությունն ուժեղացրեց իմ արդեն հաստատուն նվիրվածությունն այս հարցին այն բանից հետո, երբ հնարավորություն ունեցա այցելելու Երևանի Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող թանգարան և հանդիպելու մի քանի հայ քաղաքական գործիչների ու գործընկերների: Խորհրդարանական փոխանակման պատասխան այցելությունը Կանադա տեղի ունեցավ անցյալ աշնանը:

2002թ. հունիսի 13-ին Կանադայի Սենատն անցկացրեց այդ առաջարկությունը, արված իմ գործընկեր ու բարեկամ պատվարժան Շիրլի Մահյուի կողմից, կոչ էր անում Կանադայի կառավարությանը պաշտոնապես ճանաչել «ցեղասպանություն» բառը, քան թե այդ իրադարձությունը պարզապես կոչել «հանցագործություն մարդկության դեմ» կամ «արհավիրք», ինչպես գրված էր Համայնքների պալատի նախկին բանաձևի մեջ:

Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ մի այլ շատ կարևոր քայլ կատարվեց, երբ 2002թ. նոյեմբերի 27-ին Համայնքների պալատի արտաքին գործերի և միջազգային առևտրի մշտական կոմիտեն անցկացրեց մի պատմական առաջարկություն, որը կոչ էր անում ընդունել Հայոց ցեղասպանությունը:

Բրեմփթընի կենտրոնի անդամը ներկայացրեց այս առաջարկությունը, որտեղ ասվում էր.

«Որ կոմիտեն կոչ անի Համայնքների պալատին ճանաչել Հայոց ցեղասպանությունը, որը սկսվեց անցյալ դարասկզբին օսմանյան թուրքերի կողմից Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ»:

Մենք տարիների ընթացքում շատ գործեր ենք կատարել այս հարցն առաջ տանելու ուղղությամբ և պահանջելու մեր գործընկերներից ընդունել բանաձև այս խնդրի վերաբերյալ:

Խորհրդարանի բոլոր անդամներին խնդրում եմ պաշտպանել առաջարկությունը: Ես անշուշտ ձայն կտամ հօգուտ նրա: Ես նաև շատ հպարտ եմ, որ Ահունցիկի իմ ընտրատեղամասում ունենք հուշարձան նվիրված Հայոց ցեղասպանությանն ու, փաստորեն, բոլոր ցեղասպանություններին: Այն կառուցվել է Մոնրեալ քաղաքի կողմից: Ես խնդրում եմ իմ բոլոր գործընկերներից պաշտպանել անդամի պատվարժան ջանքերը: Նա դժբախտաբար հեռանալու է մեզնից ու պալատից: Ես քաջալերում եմ մեր բոլոր գործընկերներին այնպես անել, որ արդարությունն իրականանա և սխալն ընդունվի:

ՊՐՆ. ՍՏՈԿՎԵԼ ԴԵՅ (ՕԿԱՆԱԳԱՆ-ԿՈՒԿԻՀԱԼԱ) - Պարոն նախագահ, այսօր այս հարցը քննելիս նախ կարևոր է, թե ինչպես ենք մենք ընկալում այն, թե ինչ էր այն և ինչ է տեղի ունեցել, հասկանանք, թե ինչ չի եղել: Իրականում, այսօրվա առաջարկության առնչությամբ, ինձ համար կուզենայի հստակեցնել, թե ինչ չէ այն: Այս առաջարկությունը փոխհատուցման պահանջ չէ: Այս առաջարկությունը վրիժառության պահանջ չէ: Իրականում այն բացեիբաց դատապարտում է վրիժառությունն ու նրանց, ովքեր փորձում էին ինչ-որ կերպ որևէ ձևով վրեժ լուծել:

Երբ մենք վերանայում ենք պատմության ընթացքում տեղի ունեցած սարսափազդու իրադարձությունները, մենք ընդունում ենք, որ պետք է մասնակից լինենք համաձայնության գործընթացին: Եթե վերանայում ենք նույնիսկ Երկրորդ համաշխարհային պատերազմը, մտորում եմ այն փաստի մասին, որ իմ երկու պապերն էլ ծառայել են: Պապերիցս մեկը գերի էր ընկել որպես Հոնկոնգի վետերան և չորս տարի անցկացրել էր տառապանքների մեջ: Նա երբեք լիովին չապաքինվեց այդ տառապանքից և ի վերջո մահացավ դրա հետևանքով: Այդ պատճառով երբեք չունեցա նրան տեսնելու հաճույքը, չնայած դրան, երբեք չեմ կարող մասնակցել վրիժառության ու բարկության գործընթացին: Ես պետք է մասնակցեմ այն գործընթացին, որը տանում է դեպի համաձայնություն ու ներում:

Սա վրիժառության ու փոխհատուցման պահանջ չէ: Առաջարկությունն այսօրվա Թուրքիայի ժողովրդի կամ կառավարության դատապարտում չէ: Ես հասկանում եմ, որ կա կառավարությունը ներկայացնողների կողմից դյուրազգացության դրսևորում առաջարկության հանդեպ:

Մուսուլման ազգերին վերաբերող զեկուցման մեջ, որը նոր է ավարտել պալատի արտաքին գործերի կոմիտեն, մենք փաստորեն այսօրվա Թուրքիային ուղղված մեր առաջարկության մեջ խորհուրդ ենք տալիս, ասելով, որ Կանադան կքաջալերի Թուրքիայի կառավարությանը մուսուլմանական աշխարհում լինել ժողովրդավարության ու զսպվածության ձայնը և շարունակել բարեփոխումներ իրականացնել ժողովրդավարության ու մարդու իրավունքների բնագավառներում: Մենք ընդունում ենք այն:

Այս հանրապետությունն առաջացել է 1923թ. Աթաթուրքի իշխանության ներքո: Նրա իսկական անունը Մուստաֆա Քեմալ էր: Նրան վերանվանեցին Աթաթուրք, որը նշանակում է թուրքերի հայր: Ժամանակի իսլամական խալիֆաթը տապալվեց 1923թ.: Սկսեց զարգանալ ժամանակակից մի երկիր, չնայած միակուսակցական երկիր էր, սակայն Երկրորդ

համաշխարհային պատերազմից հետո դարձավ երկկուսակցական, և իմիջիայլոց ՆԱՏՕ-ի անդամ առաջին և միակ մուսուլմանական ազգը:

Շատ ողջունելի կողմեր ունի հատկապես այսօրվա կառավարությունը: Փաստորեն մեր առաջարկություններից մեկն այն է, որ նրանց վարչապետ Ռեջիպ Էրդողանն այցելի Կանադա, ելույթ ունենա խորհրդարանում, և այլ խնդիրների հետ միասին պատմի մուսուլմանական աշխարհում երկրների միջև ուժեղացող կապերի մասին:

Երբ ես քննարկումներ եմ ունենում Թուրքիայի դեսպանի հետ, ես փորձում եմ մեղմացնել նրա անհանգստությունը, թե ճանաչումը որևէ կերպ կանդրադառնա նրա ժողովրդի կամ կառավարության վրա: Այդպես չէ, սակայն կարևոր է, որ ասվի այն, ինչ տեղի է ունեցել: Այն պետք է ասվի և կոչվի այնպես, ինչ եղել է: Մենք չենք կարող փնտրել մեղմացուցիչ բառեր մի երևույթի մասին, որը ոչ այլ ինչ էր, քան ցեղասպանություն, ինչպես այն անվանում են 126 հոլոքոստագետներ ու պատմաբաններ: 2000թ. մարտի 7-ի իրենց դատավճռում նրանք ասել են.

«Առաջին համաշխարհային պատերազմում տեղի ունեցած Հայոց ցեղասպանությունն անվիճելի պատմական փաստ է և հետևաբար, մենք արևմտյան ժողովրդավարական կառավարություններից պահանջում ենք նույնպես ընդունել այն հենց այդպիսին»:

1997թ. հունիսի 13-ին ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան ասել է, որ «վերահաստատում է, որ 1915թ. Թուրքիայում հայերի զանգվածային սպանությունը ցեղասպանության դեպք է, որը համապատասխանում է ՄԱԿ-ի ցեղասպանության կանխարգելման և պատժելիության կոնվենցիային»:

Պրոֆեսոր Ռոջեր Սմիթը կառավարման պրոֆեսոր է Ուիլյամ և Մերի քոլեջում: Նա պատմաբան է և ցեղասպանագետների ասոցիացիայի նախկին նախագահ: Նա ասել է. «Իհարկե, գիտնականներն այժմ համակարծիք են, որ Հայոց ցեղասպանությունը, որն առաջին լայնամասշտաբ ցեղասպանությունն էր XX դարում, 1945թ. ի վեր տեղի ունեցած ցեղասպանություններից շատերի նախատիպն էր: Հայերի դեպքում տեղի ունեցած սխեմաներից շատերը կրկին ու կրկին ի հայտ եկան XX դարում»:

Աշխարհի տարբեր առաջնորդներ են խոսել այդ մասին: Ռոնալդ Ռեյգանը, լինելով Միացյալ Նահանգների նախագահը, ասել է. «Նման դրանից առաջ տեղի ունեցած հայերի ցեղասպանությանը»: Նա խոսում էր Հայոց ցեղասպանության և Հոլոքոստի մասին: Ջերալդ Ֆորդը՝ Միացյալ Նահանգների նախկին նախագահը, նույնպես խոսել է այդ մասին և իր խոսքում ասել. «Խառը զգացմունքներով մենք նշում ենք թուրքերի կողմից հայ ժողովրդի ցեղասպանության 50-րդ տարելիցը»: Ուինստըն Չերչիլը ընդունել է այն և խոսել պատմության այդ ամոթալի ժամանակի մասին, իսկ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքն անձամբ ընդունել և մեկնաբանել է այն:

Մուստաֆա Արիֆը՝ 1918-1919թթ. Թուրքիայի ներքին գործերի նախարարն, ասել է.

«Դժբախտաբար պատերազմի շրջանի մեր առաջնորդները, ոգևորված ավազակության ոգով, տեղահանության օրենքն իրականացրեցին այնպիսի եղանակով, որը կարող էր գերազանցել ամենաարնախում

ավազակների հակումները: Նրանք որոշեցին բնաջնջել հայերին և իրոք բնաջնջեցին նրանց»:

Նա հատուկ ուշադրությամբ նշեց. «Այս որոշումը կայացրեց երիտթուրքերի կենտրոնական կոմիտեն և իրականացվեց կառավարության կողմից: Հայերի դեմ իրականացված արհավիրքները մեր երկիրը վերածեցին հսկայական սպանդանոցի»:

Այդ դեպքում մենք ինչու՞ ենք շարունակում: Այն տեղի է ունեցել: Մենք բավականին շատ ենք լսել այն արհավիրքների մասին, որ ժամանակին տեղի են ունեցել մահվան երթերի, կոտորածների, բռնաբարությունների, շատ դեպքերում նաև բռնի դավանափոխությունների հետևանքով:

Այն ժամանակ սրանք էին օրվա գլխավոր թեմաները բրիտանական և ամերիկյան մամուլում: Այն ժամանակ գրվում էին գրքեր: Գրքեր գրվում են նաև այսօր: Մեր Ատոմ Էգոյանը՝ մի կանադացի, այդ մասին նկարել է մի ֆիլմ, որը կոչվում է «Արարատ»: Նյու Յորք Թայմսի վերջին ամենահաջողված գիրքը Պիտեր Բալաբյանի «Այրվող Տիգրիս»-ն է:

Այն ժամանակներից ի վեր այս իրադարձությունը ներկայացվել է մանրամասնորեն, լինելով օրվա գլխավոր թեմաներից: Հետաքրքիր է նշել, որ այն ժամանակ Միացյալ Նահանգներում և ողջ աշխարհում գիտեին, որ այն տեղի է ունենում: Եվ այն իրականում լայն արձագանք գտավ: Մարդիկ փորձում էին գումարներ ուղարկել: Մարդիկ փորձում էին միջամտության ուղիներ գտնել:

Սակայն միջամտությունը տեղի չունեցավ: Ես ցանկանում եմ անդրադառնալ այդ փաստին: Աշխարհն այդ ժամանակ տեղյակ էր: Մարդիկ ցնցված էին: Սակայն միջամտություն չեղավ, որովհետև գոյություն ուներ ընդհանուր կարծիք, որ այն տեղի էր ունենում ինքնավար պետությունում:

Ես պետք է նշեմ, որ այս ցեղասպանության ճանաչման կարևորությունը կօգնի մեզ այսօր փորձելու լուծել այն հարցը, թե երբ ճիշտ կլինի աշխարհի խաղաղասեր ազգերի համար դադարեցնել մի այլ ինքնավար երկրում տեղի ունեցող ցեղասպանությունը: Ընդունելով ազգային պետությունների կարևորությունը, կլինի արդյո՞ք որևէ կետ, որով հնարավոր լինի միջամտել՝ դադարեցնելու համար ցեղասպանությունը:

Մենք դեռ փորձում ենք լուծել այդ հարցը: Աշխարհին չհաջողվեց լուծել Ռուանդայի մահվան դաշտերի հարցը: Մենք վերջերս նշեցինք Ռուանդայում տեղի ունեցած սրտակեղեք, ավերիչ իրադարձությունների տարելիցը: Մեր գեներալն այնտեղից փորձում էր զգուշացնել, որ կար միջամտության կարիք: Խաղաղասեր ազգերը դեռ փորձում են լուծել այդ դժվար խնդիրը:

Այսօր Սուդանում տեղի են ունենում անպատմելի արհավիրքներ, և մենք դեռևս փորձում ենք պայքարել: Դրանց մի մասը կապված է այն փաստի, որոշման և ընդունման հետ, որ ժամանակ առ ժամանակ մարդկային էակները կարող են ցեղասպանություն գործել, չնայած մենք դժվարությամբ ենք ընդունում սա: Մենք դժվարությամբ ենք ընկալում, որ մարդ էակը կարող է կատարել սա: Ես փորձում եմ լավատես լինել մարդու բնույթի նկատմամբ և տալիս եմ այս հարցերը: Ինչպե՞ս կարող են սրանք տեղի ունենալ: Ինչպե՞ս կարող էր սա պատահել հայերի հետ: Ինչպե՞ս կարող էին սրանք պատահել ուրիշների հետ:

Վերջերս մենք նշեցինք XX դարում կամ պատմության մեջ երբևէ տեղի ունեցած ամենասարսափելի իրադարձություններից մեկի՝ Հոլոքոստի տարելիցը, եթե կարող եմ օգտագործել այս բառը: Դրա մի մասը մեր ընդունելու պակասությունն է, որ որպես մարդկային էակներ, մենք չենք ցանկանում ընդունել, թե մարդ էակը կարող է կատարել այն ուրիշների նկատմամբ, սակայն մենք պետք է ընդունենք այն:

Դրա ընդունումը կնպաստի, որպեսզի մենք ճանաչենք այն, եթե այն կրկին տեղի ունենա մարդկության պատմության ընթացքում, ինչպես նաև կստիպի մեզ գործել՝ հնարավորինս կանխարգելելու նրա կրկին տեղի ունենալը: Այդ պատճառը, որ այդքան կարևոր է, որպեսզի այն ընդունվի: Այդ է պատճառը, որ այն պիտի կոչվի այնպես, ինչ եղել է՝ ցեղասպանություն, ապահովելով և զգոն պահելով մեզ այն փաստի հանդեպ, որ այն կարող է կրկին տեղի ունենալ, որ մարդկային էակներն այն կարող են կատարել մեկը մյուսի հանդեպ:

Որպես այս պալատի անդամներ, մենք պետք է հաստատուն լինենք և ընդունենք այս առաջարկությունը՝ չօգտագործելով մեղմացուցիչ բառեր, այլ օգտագործել ճշգրիտ բառը և կոչել այն ցեղասպանություն: Գուցե այդ դեպքում, երբ որևէ մեկը հետագայում ահազանգի, 1913թ. Թուրքիայի դեսպան Հենրի Մորգենթաուի նման, և մենք կլսենք: Մենք տեղյակ կլինենք, որ այն տեղի է ունեցել, մենք տեղյակ կլինենք, որ այն կարող էր կրկին տեղի ունենալ և մահերի անհավանական թիվը մինչև 1,5 միլիոն իզուր չէր լինի: Այսօր, հանուն այն մարդկանց, ովքեր դարձան բնաջնջման թիրախ, հանուն նրանց կյանքի ու մահվան, նրա անվանումն այնպես, ինչպես կա, հուսով ենք, կարող է ծառայել ի պատիվ այն բանի, ինչի միջով անցան նրանք, ինչպես նաև կանխարգելելու համար հետագա արհավիրքները:

ՆԱԽԱԳԱՀԻ ՕԳՆԱԿԱՆ (ՊՐՆ. ՌԵԺԻՆԱԼԴ ԲԵԼԵՐ) - Ես չորս, հավանական է նաև հինգ պատգամավորների ցուցակ ունեմ, որոնք ցանկանում են խոսք վերցնել այս թեմայի վերաբերյալ: Ես գիտեմ, որ նախագահությունն ի վիճակի չէ պատգամավորներից պահանջել սահմանափակել իրենց դիտողությունները, յուրաքանչյուրին հինգ րոպե, սակայն ձեզ խնդրում եմ հնարավորության սահմաններում մեկնաբանությունների մեջ հակիրճ լինել: Ես կջանամ հնարավորինս շատ պատգամավորների ձայն տալ:

Ձայն է տրվում Սակվիլ Մուսկոդոբոյթ Վելի-Իստըն Շքյի պատվելի պատգամավորին:

ՊՐՆ. ՊԻՏԵՐ ՍՏՈՅԵՐ (ՍԱԿՎԻԼ - ՄՈՒՍԿՈԴՈԲՈՅԹ ՎԵԼԼԻ - ԱՐԵՎԵՅԼԱՆ ԱՓ) - Պարոն նախագահ, ես ուզում եմ պալատին և ինձ լսող բոլոր մարդկանց հիշեցնել, որ եթե Համայնքների պալատն ուզում է քննարկել այս հարցը, եկենք քննարկենք այն հիմա և առաջ տանենք այն:

Ինձ մոտ ես ունեմ մի տեղեկություն այն մասին, որ Օնտարիոյի օրենսդիր մարմինն այդ հարցը քննարկել է 1980թ.: Կվեբեկի ազգային ասամբլեան նույնպես այդ հարցը քննարկել է 1980թ. ապրիլին: Կանադայի առաջադիմական պահպանողական կուսակցությունը 1984թ. հուլիսի 23-ին հայտարարել է, և ես մեջ եմ բերում պրն. Ստիվընսից, որն ասել է. «Մենք առաջարկություն ենք անելու ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեային, որպեսզի

այն ճանաչի և դատապարտի Հայոց ցեղասպանությունը և գարշանք արտահայտի նման գործողությունների դեմ»:

Կանադայի լիբերալ կուսակցությունը 1984թ. հրաժարվեց առանձնացնել տարվա մեջ մի օր, նշելու համար այնպիսի իրադարձություն ինչպիսին Հայոց ցեղասպանությունն է: NDP կուսակցությունն այդ մասին խոսեց 1989թ. դեկտեմբերին: Այն շարունակվում է ու շարունակվում:

Եվ ահա 2004թ. է, բայց մենք դեռևս խոսում ենք այդ մասին: Այսօր, եթե մարդիկ դեռևս հետևելիս չլինեին քննարկմանը, նրանք շատ կշփոթվեին տեղի ունեցողի վերաբերյալ:

Ես նամակ ունեմ Թուրքիայի դեսպանից: Մի տեղ նա գրում է, որ թուրքերի և հայերի միջև տեղի ունեցածի ճշմարիտ պատմությունը կորոշեն հստակ ուղեղ ունեցող ուսումնասիրողները: Հենց այն փաստը, որ հայերն այդքան համառորեն ձգտում են, որ պալատն ընդունի ցեղասպանությունը հաստատող առաջարկությունը, անշուշտ վկայում է, որ այն չի եղել:

Ես նամակ ունեմ Կանադայի հայկական ազգային կոմիտեից: Այնտեղ ասվում է. «Ես համոզված եմ Ձեր արձագանքում: Դուք միշտ էլ ընդհանուր հասկացողություն եք հանդես բերել Հայոց ցեղասպանության պատմական փաստի վերաբերյալ: Խնդրում եմ արժանիորեն պաշտպանել M-380 առաջարկությունը»:

Մի այլ նամակ ստացել եմ Արտաքին գործոց նախարարից, որտեղ ասվում է, որ մենք պետք է զգույշ լինենք այդ անելիս: Մեկն ասում է՝ ոչ, մյուսն՝ այո, երրորդը զգույշ եղեք որևէ բան անելիս:

Ես զրուցեցի Բրեմփթընի կենտրոնից պատվարժան անդամի հետ և հասկացա, որ այս քննարկումն անհանգիստ ժամանակ կլինի իր, ընտանիքի և նախնիների համար:

Իմ կնոջ հորաքույրն ամուսնացած է Կալիֆորնիայի Սակրամենտո քաղաքից մի հայի հետ: Նա ասել է, որ չի հավատում, թե կապրի այնքան, որ տեսնի այն օրը, երբ ներկայիս Թուրքիան ընդունի այն, ինչ տեղի է ունեցել 1915թ.:

Ես շատ հստակորեն ասում եմ, որ մենք պետք է կոչենք այն այնպես, ինչպես կա: Այն ցեղասպանություն էր՝ մի խումբ հիանալի մարդկանց զանգվածային կոտորած: Նրանց սպանում էին ցանկացած պատճառով: Մենք դեռ կարող ենք երկար քննարկել, բայց նրանց սպանել են ու կոտորել:

Փաստն այն է, որ ոչ ոք ներկայիս Թուրքիայի կառավարությանը չի մեղադրում այն բանի համար, որ տեղի է ունեցել 1915թ.: Համայնքների պալատում մենք ընդամենն ընդունում ենք, որ այդ ողբերգությունը տեղի է ունեցել: Մենք այն հստակորեն կոչում ենք այնպես, ինչ եղել է:

Կա մի բանաստեղծություն, որ գրել են Լորնե Շիրինյանն ու Ալան Ռևայթհորնը: Ես այն ասում եմ, որովհետև բանաստեղծությունը բազմիմաստ է: Ես ծնվել եմ Հոլանդիայում, և իմ ծնողներն ու ավագ եղբայրն փրկվել են Կանադայի զոհաբերության շնորհիվ: Այդ ժամանակ Գերմանիայի նացիստական վարչակարգը Եվրոպայի ժողովուրդներին, այդ թվում նաև հրեաներին, սարսափելի արհավիրքներ պատճառեց: Մենք վերջերս նշեցինք հրեական Հոլոքոստի հիշատակի օր:

Երբ այսօր աշխարհի որևէ վայրում մարդկային խմբերին անհանգստացնեն, կոտորեն, սպանեն կամ որևէ ձևով պատվազրկեն իրենց

ազգային, կրոնական, էքսիկական կամ ցանկացած այլ պատկանելիության համար, մենք, որպես Կանադայի խորհրդարանականներ, պետք է դեմ կանգնենք դրան:

Մենք ցեղասպանությունը պետք է հիշենք հանուն հետևյալ բանաստեղծության.

Մենք պետք է հիշենք,
Հիշենք ու սովորենք,
Հիշենք ու պատմենք
Բայց նաև հիշենք ու ապրենք:
Վերջին տողն ամենակարևորն է՝
Եվ մի օր հիշենք ու ներենք:

Այս փոքրիկ բանաստեղծությունը եզրափակում է մեր ամբողջ քննարկումը: Մենք առաջարկում ենք վերապրող հայերի ճանաչումը: Հավանաբար նրանցից շատերը ողջ չեն, սակայն նրանց երեխաներին, որ այստեղ են և գիտեն իրենց նախնիների պատմությունները, կարող ենք մեկընդմիշտ ասել, որ հիշում ենք թե ինչ է պատահել, այնպես, որ կարող ենք կանխարգելել այս կարգի արհավիրքները, եթե նրանք երբևէ կրկին տեղի ունենան:

Պալատում ոչ ոք և ոչ էլ որևէ մեկը նրանցից, ում հետ զրուցել եմ, որևէ ակնարկ չի արել այն մասին, որ Թուրքիայի կառավարությունը պատասխանատու է եղածի համար: Մենք պարզապես առաջարկում ենք մեր օգնությունը Թուրքիայի կառավարությանն ու հայ ժողովրդին համաձայնության գալու հարցում, հաստատելու բարեկամական հարաբերություններ և աշխատելու հանուն ընդհանուր և երկարատև խաղաղության այնպես, որ մի օր հիշենք ու ներենք:

ՊՐՆ. ՄՈՐԻՍ ՎԵԼԼԱԿՈՏ (ՍԱՍԿԱՏՈՒՆ ՎԱՆՈՒՍԿԵՎԻՆ) - Պարոն նախագահ, այսօր ծանր սրտով մենք այստեղ քննարկում ենք շատ դժվար, տխուր և ողբերգական իրադարձություններ, որ տեղի են ունեցել անցյալ դարի սկզբներին՝ 1915թ.: Ինձ շատ է անհանգստացնում այն փաստը, որ մենք դրսի բախումները շատ կանխամտածված և հաշվարկված ձևով բերում ենք այստեղ:

Ես միշտ էլ հետաքրքրություն եմ հանդես բերել էքսիկական բախումների նկատմամբ, լինի դա Սիերա Լիոնեում, թե այլուր: Այն ինչ անում ենք այստեղ առանց զգուշության և ուշադրության, որը պետք էր, որոշ չափով անհանգստացնող է, ինչպես նաև այն փաստը, որ դա տեղի է ունեցել շատ տարիներ առաջ, երբ պատմության մեջ տեղի էին ունենում դեպքեր, որ վիճելի են: Դրա վերաբերյալ կա երկու տարբեր դիրքորոշում:

Նաև այն, ինչ մենք հակված ենք տեսնելու ավելի հաճախ, և այս առանձին դեպքում, երբ այն բարձրացվում է կրկին ու կրկին, դրա մի դիրքորոշումն է: Հետո մենք ուշադրություն ենք դարձնում բախումների խնդրի վրա, որ հույներն ունեցել են թուրքերի հետ: Մի անդամ այսօր խոսում էր այդ տեսակետից: Մենք բոլորս այդ բախումները բերում ենք այստեղ: Ես չեմ կարծում, թե դա օգտակար կլինի: Ես չեմ կարծում, թե կառուցողական կամ արդյունավետ կլինի այստեղի համար: Ես կարծում եմ, որ և՛ հայ, և՛ թուրք ժողովուրդների համար շատ ավելի լավ կլինի, եթե նրանք համաձայնության գան և աշխատեն այդ ուղղությամբ: Երկու կողմից էլ եղել են կյանքի կորուստներ և դրա համար պետք է ափսոսալ:

Ես զրուցել եմ թուրքական համայնքից առանձին մարդկանց հետ, որոնք կցանկանային տեսնել առանձին մարդկանց հայ համայնքից, և այդ առաջարկը ես արեցի մի մարդու ու հարցրեցի, թե արդյոք կարող են նրանք համապատասխանաբար համաձայնության գալ անցյալի կոտորածների ու սարսափելի ողբերգությունների շուրջ: Այս անհատը մերժեց: Հուսով եմ, որ այն չի անդրադառնա կամ բնորոշ չէ ամբողջ հայ ժողովրդին: Հուսամ, որ դա ճիշտ չէ, բայց գիտեմ այս միակ դեպքից, որ հրավերքը եղավ, եղավ նաև ուղղակի մերժում:

Մենք կարիք ունենք արագ անդրադարձ կատարելու պատմությանը՝ իմանալու համար, որ այդ ժամանակ Օսմանյան կայսրությունը ճգնաժամ էր ապրում: Փաստորեն, դա կայսրություն էր, որն ակնհայտորեն նաև բարեգործական երկիր էր: Եթե նայենք պատմությանը, կհասկանանք, որ թույլ հսկողություն էր թույլատրվում ամբողջ կայսրությունով մեկ: Նրանք ապաստան էին տվել հրեաներին այն ժամանակ, երբ վերջիններս զանգվածաբար վտարվել էին Իսպանիայից: Սա մշակութային ժառանգության տեսակ է, որով պետք է հպարտանալ: Այն որոշ չափով հակասում է հայերի այն բողոքներին, թե թուրքերը էթնիկ զտման պատերազմ էին վարում:

Օսմանյան կայսրության սահմաններում բնակվող բազմաթիվ էթնիկ խմբերից որևէ մեկը մինչ այսօր արդյո՞ք ներկայացրել է որևէ բողոք ցեղասպանության մասին: Փաստորեն Կանադայի մեր հույն հարևաններից շատերն ասել են մեզ, որ օսմանցիներն իրենց ապաստան են տվել այն բախումների ժամանակ, որ այդ ընթացքում տեղի էին ունենում Եվրոպայի քրիստոնյաների, ուղղափառների և կաթոլիկների միջև:

Հետադարձ հայացք նետելով պատմությանը, երբ Ռուսաստանը Արևելքից, և Մեծ Բրիտանիան հրահրում էին Օսմանյան կայսրության հիմնական էթնիկ խմբերից մեկին՝ հայերին, ապստամբել օսմանցիների դեմ կայսրության արևելյան մասում: Մենք այն անհատներն էինք, որ բավականին վայրագ ձևով ղեկավարեցինք հայ ահաբեկչական խմբերին: Եկեք անկեղծ լինենք: Ես վտանգի եմ ենթարկվում այս ասելով, որովհետև գիտեմ, որ կարող է վրիժառություն լինել խոսողների դեմ: Դրանք եղել են մեր երկրում: Քաղաքական սպանություններ են եղել 80-ական թվականներին մեր երկրում և աշխարհի այլ վայրերում՝ կազմակերպված հայ ահաբեկչական խմբերի կողմից: Ես ինձ հանգիստ չեմ զգում նույնիսկ այստեղ, երբ խոսում եմ այդ խնդրի մասին:

Այս հայ ահաբեկիչներն այն ժամանակ ուժեղացրել էին իրենց գործողությունները Թուրքիայի հայ և մուսուլմանական բնակավայրերի միջև լինում էին հազվադեպ բախումներ: Երբ 1915թ. ռուսական բանակը ներխուժեց Արևելյան Անատոլիա, հայկական ահաբեկչական խմբերը ռուսական բանակի հետ միասին սկսեցին համակարգված հարձակումներ կատարել օսմանյան զորքերի, ինչպես նաև իրենց մուսուլման համերկրացիների դեմ: Ի հավելումն հարձակումների, հայկական խմբերը ռուսներին օգնում էին կտրելու ներխուժած զորքերի հետ պայքարող օսմանյան բանակի մատակարարման ուղիները:

Այս համգամանքների ներքո օսմանյան կառավարությունը որոշեց պատերազմական քատերաբեմում ապրող հայերին տեղափոխել կայսրության այլ նահանգներ: Որոշման հիմքը երկկողմանի էր՝ կանխար-

գելել միջհամայնքային կոտորածները, պահելով երկու կոնֆլիկտային համայնքներն իրարից հեռու և դադարեցնել հայերի կողմից ռուսներին ցույց տրվող օգնությունը:

Այդ ժամանակ եղան թշնամանք, սով, հիվանդություններ, ավազակություն և այլն: Այն շատ ծանր անդրադարձավ Արևելյան Անատոլիայի համայնքների վրա:

Անմեղ քաղաքացիներ զոհվեցին այն գաղթի ժամանակ, որը տեղի ունեցավ շատ դաժան ձմեռվա պայմաններում, դրանք պատերազմի անկանխատեսելի հետևանքներն էին: Սակայն չի կարելի առանձնացնել ո՛չ թուրքերի և ո՛չ էլ հայերի տառապանքները: Այն ողբերգական և տխուր ժամանակ էր պատմության մեջ: Այս ցավալի տառապանքները միայն մի մասն են այն ողբերգության, որին ենթարկվեց Անատոլիայի ողջ բնակչությունը:

Ես կարող եմ դեռ երկար շարունակել, սակայն ուզում եմ ժամանակ թողնել մյուսների համար: Ես բավական անհանգստանում եմ, երբ լսում եմ հայտարարություններ ցեղասպանության նման դեպքերի մասին, որ տեղի են ունենում ամբողջ աշխարհում: Ընդհանրապես մենք հետևում ենք ոմանց, որպեսզի նրանց պատասխանատվության ենթարկենք Հաագայի կամ ցանկացած այլ միջազգային դատարանում: Եթե այն այսօր ընդունվի, ես իրոք չգիտեմ, թե ով պետք է պատասխանատվության ենթարկվի կամ հետապնդվի:

Մյուս անհանգստությունն այն է, թե երբ այն կանցկացվի այլ երկրներում: Հետաքրքիր է նշել այն երկրները, որոնք ընդունել են այն՝ ո՛չ Միացյալ Նահանգները, ո՛չ Միացյալ թագավորությունը, ո՛չ էլ ՄԱԿ-ը: Նրանք երբեք չեն ընդունել որևէ առաջարկություն կամ բանաձև այդ մասին: Այլ երկրներ հնարավոր է ունեցել են իրենց հիմնավոր դրդապատճառներն այդ անելու համար: Ֆրանսիայում, հատկապես, երբ որպես արդյունք անցկացվում էր այս կարգի որևէ օրենք, դատական գործ էր հարուցվում նրանց դեմ, ովքեր հարցականի տակ էին դնում այն: Այժմ դատական գործ է հարուցվել մի պրոֆեսորի դեմ, որովհետև նա տարբերվել է հայերի տեսակետից պատմության այս ողբերգական շրջանի վերաբերյալ:

Սրանով ուզում եմ ավարտել: Հուսով եմ, որ պալատի բոլոր անդամները, երբ վաղը նրանք քվեարկելու կլինեն, կհիշեն, որ հաճախ մենք լսել ենք միայն մի կողմին: Այն ժամանակ կային հայեր, ովքեր փորձում էին անկայունացնել կայսրությունը: Նրանք արևելքում համագործակցում էին ուղղափառ ռուսների հետ: Այդ ժամանակ տեղի էին ունենում շատ ողբերգական վայրագ դեպքեր: Պատերազմը սարսափելի է: Պատերազմը տգեղ է:

Այնուամենայնիվ սխալ է պատմության այս ժամանակաշրջանում, այսքան տարիներ հետո քննարկել այդ կոնֆլիկտն այստեղ: Մենք պետք է թողնենք այդ հարցերը պատմաբաններին, որպեսզի նրանք բանակցություններում համաձայնության գան, թե ինչպիսին են եղել իրական փաստերը: Սակայն հստակ համաձայնություն չկա: Ցեղասպանություն բառը հստակորեն չափազանց խիստ է օգտագործելու համար տեղի ունեցած այն ողբերգական դեպքերի համար, որոնց ենթարկվեց հայ ժողովուրդը, ինչպես նաև թուրք ժողովուրդը:

Ես ավարտում եմ այստեղ և ժամանակ եմ թողնում մյուսների համար:

ՊՐՆ. ՌԵՎԼ ՄԵՆԱՐ (ՕՇԵԼԱԳԱ - ՄԵԶՈՆՆՅՈՎ) - Պարոն նախագա'հ, թույլ տվեք ինձ անմիջապես շնորհակալություն հայտնել իմ գործընկերոջը՝ Լավալ-Սանտղի պատգամավորին, իր նախաձեռնության համար: Այս առաջարկության և քննարկման բովանդակության մեջ ինչ-որ բան կա, որն ինձ դուր է գալիս: Քննարկման սկզբում ես կողմ էի լսել խորհրդարանական գործընկերներին: Ես կարծում եմ, որ մեր գործընկերն իրավացի է, ի վերջո, հիշատակել պատմության վերականգնման կարևորությունը: Իրականում, առաջարկությունը, որի վերաբերյալ մեզ կոչ է արվել վաղը քվեարկել, նպատակ չունի մեղադրական բնույթ ընդունել կամ այնպես անել, որ մարդիկ նստեն մեղադրյալի աթոռին:

Ես հանդիպել եմ թուրքական համայնքի բազմաթիվ անդամների: Ես ցանկանում եմ, իմիջիայլոց, որ իմ գալիք ճամփորդությունն ինձ դեպի Թուրքիա տանի: Ես գիտեմ, որ թուրքական համայնքի ներսում կան խաղաղության ջատագով մարդիկ, ինչպիսիք հայերն են, քվեբեկցիները, ֆրանսիացիները, վերջապես, բոլոր նրանք, ովքեր ապրում են այս Երկիր մոլորակի վրա:

Սինչդեռ, սխալ կլիներ չցանկանալ ճանաչել 1915 թվականին և դրան նախորդող տարիների գործելակերպը: Դա մի դարաշրջան է, որի համար ժամանակակից Թուրքիան իրեն պատասխանատու չի զգում: Մենք շատ լավ գիտենք, որ նրանք ցանկանում են հայերի հետ կառուցողական և դրական երկխոսություն ստեղծել:

Պատմական հիշողության վերականգնումը հաշվի առնելով է, որ Բրիան Մյուլրոնին ներողություն էր խնդրում ճապոնական համայնքից: Պատմության վերականգնումը հաշվի առնելով է, որ Շառլեսբուրգի մեր գործընկեր Ժակ-Կաբրիեն մյուս պալատի մի սենատորի հետ գիրք է հրատարակել Հոլոքոստի հիշատակման վերաբերյալ: Պատմական այդ հիշատակումն հաշվի առնելով է, որ Վերշերես-Լե-Պատղիոտի պատգամավորն առաջարկություն է ներկայացրել ակադիենների տեղահանության վերաբերյալ: Դա նշանակում է, որ ցանկալի է ժամանակ վերցնել, հիշատակելու համար, որ եղել են տառապանքներ և պատմական պայմաններ, որոնք թույլ են տալիս անվանել ցեղասպանություն բառը:

Ցեղասպանություն, դա նշանակում է ինչ-որ բան միջազգային իրավունքում: Այն նույն նշանակությունը չունի, ինչ ողբերգությունը: Իհա'րկե, այն նույն նշանակությունը չունի, ինչ պատուհասը, որ մեզ էր առաջարկում խորհրդարանական քարտուղարը: Պատմական վերականգնման այս գործընթացում մեզ պետք է իրերը հիշել և կոչել իրենց անունով:

Որովհետև մենք սիրում ենք խաղաղությունը, որովհետև մենք հավատում ենք հաջող երկխոսությանը, որովհետև մենք թուրքական համայնքին գնահատում ենք իր իսկական արժեքով, կարծում եմ, որ վաղը բոլոր խորհրդարանականները կկատարեն այն, ինչ Արգենտինան, Բելգիան, Կիպրոսը, Ֆրանսիան, Հունաստանը, Իտալիան, Լիբանանը, Ռուսաստանը, Շվեդիան, Շվեյցարիան, Ուրուգվայը, Վատիկանը և Եվրոխորհրդարանը կատարեցին, այսինքն պահանջել հիշել, որ 1,5 մլն հայ տղամարդիկ և կանայք իրենց կյանքը թողեցին պատմական ճնշումների համատեքստում:

Ակնհայտորեն, դրանք անցյալ դարասկզբին կրած ճնշումներն էին: Այն պետք է հիշել և խուսափել, որ նման իրադարձություններ չիրագործվեն, կամ, ի վերջո, նման իրադարձություններ հնարավոր չլինեն ապագայում:

Ես կարծում եմ, որ Մերսիեի արտաքին գործերի գծով Քվեբեկի բլոկի պատգամավորն այն վկայակոչել է: Նույնքան կարևոր է, որ միջազգային համերաշխության արժեքները, միջազգային արդարադատություն հասկացությունը երբևէ ներկայացվեն: 1945 թվականին Սան Ֆրանցիսկոյում հիմնադրվեց ՄԱԿ-ը: Իմիջիայլոց, Սան Ֆրանցիսկոյում կանադական պատվիրակության մեջ երկու խորհրդարանականներ կային, որոնք Կանադայի վարչապետներ են եղել: Այնտեղ էին նաև Վիլյամ Լիոն Մակենզի Կինգը և Լուի Ստեֆեն Սենտ-Լորանը:

ՁԱՅՆ - ՋՈ ԿԼԱՐԿ

ՊՐՆ. ՌԵԱԼ ՄԵՆԱՐ - Կալգարիի պատգամավորը և նախկին վարչապետը չափազանց երիտասարդ էր մի պատվիրակության անդամ լինելու համար, բայց դա չէր խանգարում նրա միջազգային մեծ համոզմունքին:

Ես ցանկանում եմ ասել, որ 1945թ., երբ մենք ընդունեցինք ՄԱԿ-ի կանոնադրությունը, Սան Ֆրանցիսկոյի որոշումներում կար արդարադատության միջազգային դատարանի գաղափարը:

Մեզ, առավել մոտ՝ կա միջազգային քրեական դատարանի այս գաղափարը: Ի՞նչ է այդ նշանակում և ի՞նչ միջոց է այն տալիս, եթե առավել ազգային մակարդակում, որպես խորհրդարանականներ, մենք ունակ չենք հիշատակել փաստերն այնպիսին, ինչպիսին նրանք կան՝ առանց սիրալիր լինելու, դրական կառուցողական հեռանկարով:

Չեմ կարծում, երբ Լավալ-Սանտղի պատգամավորը ներկայացրեց առաջարկությունը, նա ցանկանում էր ևս մեկ անգամ մեղադրանքներ անել, խստորեն դատապարտել համայնքների, որ նա ցանկանում էր այնպես անել, որ մարդիկ ստիպված լինեն կրել իրենց չվերապահված պատմական մի բեռ:

Մենք շատ լավ գիտենք, որ բոլոր պայմանները կան, որ թուրքական ներկայիս կառավարությունը հեռանա այն իրադարձություններից, որոնք տեղի ունեցան այն ժամանակ, երբ գոյություն ուներ Օսմանյան կայսրությունը, և երբ, ինչպես ասվեց, գոյություն չուներ նույնիսկ ժամանակակից Թուրքիան, որը պետք է հիմնադրվեր Մուստաֆա Քեմալ փաշա Աթաթուրքի կողմից 1923 թվականին:

Եվս մեկ անգամ հաշվի է առնվում խաղաղության այս տեսլականը: Որովհետև կարծում ենք, որ հնարավոր է երկխոսություն կառուցել, որ հարկ է փաստեր հիշատակել:

Երեկ ես մասնակցում էի Շառլեսբուրգի պատգամավոր Ժակ-Կարտիեի գրքի շնորհանդեսին, որը նշում էր 1945թ. իրագործված Հոլոքոստի կարևորությունը:

Արդյո՞ք դա նշանակում է, որ երբ հիշատակում ենք Հոլոքոստը, մենք կարծում ենք, որ գերմանացիները ռազմատենչ են: Իհա՛րկե ոչ: Արդյո՞ք դա նշանակում է, երբ Բրիան Մյուլրոնին ներողություն է խնդրում ճապոնական համայնքից նրա որոշ համաքաղաքացիների անօրինական ներկայման համար, որ կանադացիները ռազմատենչ են: Իհա՛րկե ոչ:

Մենք, որպես խորհրդարանականներ, հրաժարվում ենք այդ քայլը կատարել: Իրականում, որոշ մարդիկ մեզ ասում են, որ եթե մենք ճանաչենք 1915 թվականի ցեղասպանությունը, ապա մենք խստորեն կդատապարտենք որոշ խմբերի: Դա չէր մեր և Լավալ-Սանտղի պատգամավորի մտադրությունը: Այսպիսով, այդ բոլոր պատճառների համար մեզ հարկ կլինի վաղը պաշտպանել Լավալ-Սանտղի պատգամավորի կողմից ներկայացված առաջարկությունը:

ՆԱԽԱԳԱՀ - Քանի որ Օշելագա-Մեզոննյովի հարգարժան պատգամավորն ավարտեց իր միջամտությունը, Լավալ-Սանտղի հարգարժան պատգամավորն այժմ պատասխանի իրավունք ունի հինգ րոպեի ընթացքում:

ՏԻԿԻՆ ՄԱԴԼԵՆ ԴԱԼՖՈՆ - ԳԻՂԱԼ (ԼԱՎԱԼ - ՍԱՆՏՂ) - Պարոն, նախագա՛հ, առանց հուզմունքի չէ, որ ես խոսք եմ վերցնում քննարկումների երկու ժամը փակելու համար, որի նպատակն է ճանաչել 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը:

Այդ հուզմունքն այնքան մեծ է, որ ինձ թույլ է տալիս ձեզ հետ կիսել այն հարգանքը, որ ես տածում եմ հայ ժողովրդի հանդեպ գնահատանքի արժանի այն համառության համար, որով նա պահանջում է այդ ցեղասպանության ընդունումը՝ չնայած հաճախ հարցականի տակ դրված սոցիալ-քաղաքական հրամայականների ազդեցությանը: Կապվածությունն իրենց ինքնությանն ու պատմությանը օրինակ է ծառայում մեզ բոլորիս համար:

1993 թվականից ի վեր բազմիցս 1915 թվականի ցեղասպանության վերաբերող քննարկումը Համայնքների պալատի խորհրդարանականների ուշադրության տակ է առնվել: Սինչդեռ, միայն մեկ քննարկում է հաստատվել քվեարկությամբ: Այն առաջարկվել է Քվեբեկի բլոկի պատգամավոր՝ պրն. Միշել Դավիոյի կողմից 1996թ. ապրիլի 23-ին քվեբեկական բլոկի ընդդիմության օրվա շրջանակում, որն այն ժամանակվա պաշտոնական ընդդիմությունն էր: Առաջարկության բնագիրը ընթերցվում էր հետևյալ կերպ.

«Թող պալատը 1915թ. ապրիլի 24-ի Հայոց ցեղասպանության 81-րդ տարելիցի կապակցությամբ ընդունի յուրաքանչյուր տարվա ապրիլի 20-27-ը որպես մարդկային էակի և իր նմանի հանդեպ անմարդկային վերաբերմունքի հիշատակման շաբաթ»:

Բազմաթիվ փորձություններից հետո առաջարկությունը վերջապես քվեարկվեց Համայնքների պալատում. «Հայոց ցեղասպանությունը» ճանաչելու փոխարեն բավարարվում էին խոսել «Հայոց ողբերգության» մասին: Պաշտպանությունը միաձայն եղավ: Ոմանց համար այն ճիշտ ուղղությամբ քայլ էր, մյուսների համար այն ամենալավն էր:

37-րդ օրենսդրության սկզբից ի վեր չորրորդ անգամն է, որ առիթ ունենք քննարկել այս կարևոր հարցը, որ ես ուրախ եմ, որ առաջարկության վերաբերյալ քվեարկությունը վրա հասավ ճիշտ, և ես այստեղ կրկնում եմ 1996թ. ապրիլի 23-ի առաջարկության բնագիրը՝ «Մարդկային էակի և նրա նմանների հանդեպ անմարդկային վերաբերմունքի հիշատակման շաբաթվա» ընթացքում: Իրականում, առաջին անգամ է, որ մենք առիթ կունենանք քվեարկության միջոցով հստակ արտահայտվել պատմության ճանաչման օգտին: Պաշտպանելով M-380 առաջարկությունը՝ մենք

մերը կդարձնենք Էտիեն Ժիլսոնի գաղափարը պատմության իմաստի վերաբերյալ, և ես մեջբերում եմ.

«Պատմությունից ազատվելու համար չէ, որ մենք այն ուսումնասիրում ենք, մենք այն ուսումնասիրում ենք ողջ անցյալը հօդս ցնդելուց փրկելու համար, առանց որի այն կխեղդվեր, դա արվում է այն բանի համար, որ առանց պատմության չի լինում անցյալ և այն միակ ներկան, որից դուրս ոչինչ գոյություն չունի»:

Այս խորհրդարանի համար ճիշտ ժամանակն է միանալ բազմաթիվ և ոչ ամենափոքր խորհրդարաններին, որոնք ճանաչում են Հայոց ցեղասպանությունը Կանադայի Սենատի օրինակով, որը 2002 թվականի հունիսի 13-ին սենատոր Շիրլի Մահոյի նախաձեռնությամբ ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող առաջարկությունը: Իմիջիայլոց, ինձ հաճույք է պատճառում ընդգծել, որ 2003թ. դեկտեմբերին Քվեբեկի Ազգային ժողովը միաձայն օրենք ընդունեց ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության հիշատակի օր հռչակելու մասին:

Ինչպե՞ս բացատրել, որ մի երկիր, ինչպիսին Կանադան է, այդքան հպարտ իր կարեկցող և արդարամիտ արժեքներով, առավել նախընտրում է մեղմ կեցվածք ընդունել, քան քաջություն ունենալ իրերն իրենց անուններով կոչելու համար:

Հայոց ցեղասպանությունը XX դարի առաջին ցեղասպանությունը եղավ, դժբախտաբար, այն միակը չեղավ: Բազմաթիվ պատմաբաններ, իմիջիայլոց XX դարը որակում են որպես ցեղասպանությունների դար, դա դառը և անհանգստացնող իրականություն է: Եթե նկատի առնենք այն իրադրությունը, որը ներկայումս համարժեք է Սուդանին, թվում է, թե մենք չենք քաղել անցյալի բոլոր դասերը:

Այժմ, երբ աշխարհը դարձել է մի գլոբալ գյուղ, կարևոր է ընդունել, որ մենք բոլորս պատասխանատվության մեր մասն ենք կրում: Ինչպես 1998թ. մարտի 24-ին արտահայտվեց պրն. Ռոբերտ Քոչարյանը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետը, մեջբերում եմ.

«Ցեղասպանությունը միայն հայ ժողովրդի ողբերգությունը չէ, այն ամբողջ մարդկությանն է»:

Ավարտելով այս սեղմ ելույթը՝ թույլ տվեք ձեզ ասել, թե որքան եմ ցանկանում տեսնել այս Պալատի խիզախությունն իր համոզմունքներում: Գալիք ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության 89-րդ տարելիցն է: Ինչ վերաբերում է ինձ՝ ես շուտով կթողնեմ քաղաքական կյանքը: Ոչինչ ինձ առավել հաճույք չէր պատճառի նախքան իմ մանդատը վայր դնելը, որքան կարողանալ ցնծալ հայ ժողովրդին ամենագեղեցիկ նվերը պարգևելու իմ ձևին, որն է իր պատմության ճանաչումը:

Էմիլ Հենրիոն գրում էր. «Մահացածներն ապրում են այնքան, քանի դեռ կան կենդանի մարդիկ, որ մտածեն նրանց մասին»:

Մենք բոլորս էլ հիշողության պարտականություն ունենք: Շնորհակալություն եմ հայտնում ձեր աջակցության և համերաշխության համար, որ դուք կցուցաբերեք հայ ժողովրդի հանդեպ M-380 առաջարկության քվեարկությամբ:

ՆԱԽԱԳԱՀ - Քանի որ ժամը 18.56 րոպե է, քննարկմանը հատկացված ժամանակը սպառված է: Հետևաբար առաջարկության քվեարկման ժամանակն է: Պալատը ցանկանում է ընդունել առաջարկը:

ՁԱՅՆԵՐ. կողմ

ՁԱՅՆԵՐ. դեմ

ՆԱԽԱԳԱՀ. Նրանք, ովքեր պաշտպանում են առաջարկը, թող կողմ քվեարկեն.

ՁԱՅՆԵՐ. կողմ

ՆԱԽԱԳԱՀ. Նրանք, ովքեր դեմ են առաջարկությանը, թող քվեարկեն դեմ.

ՁԱՅՆԵՐ. դեմ

ՆԱԽԱԳԱՀ. Իմ կարծիքով դեմերը գերազանցում են:

Եվ հիմք պատգամավորից ավել վեր կացան:

ՆԱԽԱԳԱՀ - Կանոնադրության 93-րդ հոդվածի համաձայն՝ քվեարկությունը տեղափոխվում է մինչև 2004թ. ապրիլի 21-ը՝ մինչև պատգամավորական գործերի համար նախատեսված ժամանակահատվածը:

2004թ. ապրիլի 21-ին պալատը քվեարկեց՝ ամփոփելով ապրիլի 20-ի առաջարկությունը:

Կանադայի համայնքների պալատը ձայների 153 կողմ, 68 դեմ, մեծամասնությամբ քվեարկեց Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին M-380 առաջարկության օգտին, որն արձանագրում է. «Կանադայի խորհրդարանը ճանաչում է 1915թ. Հայոց ցեղասպանությունը և դատապարտում է այն որպես մարդկության դեմ իրագործված ոճիր»:

"Horizon", vol. 9, No. 49 (447), 3 mai 2004.

IX. ՄՇՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՏՅԱՆ

Հիմնադիր՝ ԼԵԼԻՈ ԲԱՍՍՈ
Նախագահող՝ ՖՐԱՆՍՈՒԱ ՌԻԳՈ *(Բելգիա)*
Գլխավոր քարտուղար՝ ՋԻԱՆՆԻ ՏՈՆՅՈՆԻ *(Իտալիա)*
Գլխավոր քարտուղարություն՝ Իտալիա,Հռոմ, 00180,
ՎԻԱ ԴԵԼԼԱ, *Դոգանա Վերջինա, 5*
Փոխնախագահներ՝ ՌՈՒԹ ՖԸՐԱԹ *(Հարավ-Աֆրիկյան Հանրապետություն)*
ՄԱԿՈՏՈ ՕԴԱ *(Ճապոնիա)*
ԱՐՄԱՆԴՈ ՈՒՐԻԲԵ *(Չիլի)*
ՋՈՐՋ ՈՒՈԼԴ *(ԱՄՆ)*

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՄԵՋ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՄՇՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՏՅԱՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

ՄԱԴՋԻԴ ԲԵՆՇԻԿ - *Ալժիր, Ալժիրի համալսարանի միջազգային օրենքի պրոֆեսոր*
ԺՈՐԺ ԿԱՍԱԼԻՍ – *Ֆրանսիա, աստվածաբան, Փարիզի աստվածաբանության բողոքականների ինստիտուտի պրոֆեսոր*
ՀԵՐԱԼԴ ԷԴԵԼՇՏԱՄ – *Շվեդիա, նախկին դեսպան Չիլիում և Ալժիրում*
ՌԻՉԱՐԴ ՖՈԼՔ - *ԱՄՆ, միջազգային օրենքի պրոֆեսոր, Փրինսթոնի համալսարան*
ՔԵՆ ՖՐԱՅ - *Ավստրալիա, պառլամենտի անդամ*
ԱՆԴՐԵԱ ՋԻԱՐԴԻՆԻ – *Իտալիա, Հռոմի համալսարանի միջազգային օրենքի պրոֆեսոր*
ՍԻՆ ՄԱՔԲՐԱՅԴ - *Իռլանդիա, իրավաբան, խաղաղության միջազգային կոմիտեի պրեզիդենտ, խաղաղության Նոբելյան և Լենինյան մրցանակների դափնեկիր, արդարադատության համար ամերիկյան մեդալի դափնեկիր*
ԼԵՈ ՄԱԹԱՐԱՍՍՈ – *Ֆրանսիա, Փարիզի դատարանի փաստաբան*
ԱԴՈԼՖՈ ՊԵՐԵՋ ԷՍՔՈՒԻՎԵԼ - *Արգենտինա, խաղաղության Նոբելյան մրցանակիր, Լատինական Ամերիկայում արդարադատության և խաղաղության ծառայության գլխավոր կոորդինատոր*
ՋԵՅՄՍ ՊԵՏՐԱՍ - *ԱՄՆ, Նյու-Յորքի պետական համալսարանի սոցիոլոգիայի պրոֆեսոր*
ՖՐԱՆՍՈՒԱ ՌԻԳՈ - *Բելգիա, Լուվենի կաթոլիկ համալսարանի իրավունքի ֆակուլտետի պրոֆեսոր*
ԱՋԻՏ ՌՈՅ – *Հնդկաստան, տնտեսագետ և լրագրող*
ՋՈՐՋ ՈՒՈԼԴ - *ԱՄՆ, Հարվարդի համալսարանի կենսաբանության վաստակավոր պրոֆեսոր, ֆիզիոլոգիայի և բժշկության Նոբելյան մրցանակիր*

ՄՇՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՏՅԱՆԸ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎ Է ՀՐԱՎԻՐԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԱՊՆԴՄԱՄԲ՝

Փոքրամասնությունների Իրավունքների Պաշտպանության Խումբ (Ֆրանսիա, Փարիզ)

Կուլտուրական Գոյատևում (Քեմբրիջ, Մասաչուսեթս, ԱՄՆ)

Սպառնալիքի տակ գտնվող ժողովուրդների ընկերություն (Գյոթինգեն, Արևմտյան Բեռլին),

ՈՐՈՆՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ ՊԱՐԶԱԲԱՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՐՑԵՐԸ՝

1.Հաստատվա՞ծ է, որ հայ ժողովուրդը Օսմանյան կայսրության ներսում եղել է բռնագաղթերի, կոտորածների և այլնի զոհ,

2.Այս փաստերը որակվո՞ւմ են որպես «ցեղասպանություն»՝ համաձայն 1948 թվին ընդունված ցեղասպանության ոճիրը կանխելու վերաբերյալ միջազգային համաձայնագրի, և, հետևաբար, դրանց վրա տարածվո՞ւմ է «Պատերազմի հանցագործությունների և մարդկության դեմ գործած ոճիրների ենթատմամբ վաղեմություն չտարածվելու» մասին 1968 թվի համաձայնագրի իրավասությունը,

3.Ելնելով այդ փաստերից, ի՞նչ հետևություն է արվում միջազգային հասարակության և շահագրգիռ կուսակցությունների կողմից:

Ատյանի նախագահը հայտարարեց, որ այս առաջարկությունն ընդունելի է ըստ կանոնադրության 11-րդ կետի, և այդ մասին տեղեկացվեց թուրքական կառավարությանը՝ համաձայն 14 և 15 կանոնակետերի: Թուրքական կառավարությանը առաջարկվել էր ներկայացուցիչներ կամ գրավոր փաստաթղթեր ուղարկել իր տեսակետը ներկայացնելու համար: Քանի որ թուրքական կառավարությունը չպատասխանեց այդ խնդրանքին, Ատյանը որոշեց արձանագրությանը կցել երկու փաստաթուղթ, որ պարունակում էին թուրքական կողմի փաստարկները՝ ի պաշտպանություն հայերի ցեղասպանության փաստի հերքման:

1984 թվի ապրիլի 13-16-ը Փարիզում, Սորբոնում Ատյանը մասնական ունկնդրություն կազմակերպեց,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ

1948 թվի դեկտեմբերի 10-ին ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հայտարարագիրը,

1948 թվի դեկտեմբերի 9-ին ընդունված ցեղասպանության ոճիրը կանխելու և պատժելու վերաբերյալ համաձայնագիրը,

Միջազգային օրենքի հանճնախմբի ձևակերպած և 1951 թվին Միավորված Ազգերի Կազմակերպության գլխավոր ասամբլեայի ընդունած նյուրնբերգյան սկզբունքները,

1968 թվի նոյեմբերի 26-ի՝ մարդկության դեմ գործած ոճիրների և պատերազմական հանցագործությունների ենթատմամբ վաղեմություն չտարածվելու վերաբերյալ համաձայնագիրը,

1976 թվի հուլիսի4-ին Ալժիրում ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հայտարարագիրը,

1979 թվի հունիսի 24-ին Բոլոնիայում ընդունված Մշտական ժողովրդական ատյանի օրինադրույթները,

ԼՍԵԼՈՎ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՂՈՐԴԱԳՐԵՐԸ՝

ՌԻՉԱՐԴ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - *ԱՄՆ, Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր, «Հայկական հարցը 1878-1923թ.թ.»,*

ԺԵՐԱՐ Ժ. ԼԻՊԱՐԻՏՅԱՆ - *ԱՄՆ, Մասաչուսեթս, Քեմբրիջ, «Արդի հայկական հետազոտությունների և փաստագրման Զորյան ինստիտուտի տնօրեն և պատմաբան, «Երիտթուրքական շարժման ցեղասպանություն գործելու մտադրությունը և գաղափարախոսությունը»,*

ՔՐԻՍՏՈՖԵՐ ՈՒՈՔԵՐ - *պատմաբան և գրող, «Հայերի ցեղասպանության առնչվող բրիտանական աղբյուրները»,*

ԹԵՍՍԱ ՀՈՖՄԱՆ - *Ազատ համալսարան (Արևմտյան Բեռլին), «Հայերի ցեղասպանությանն առնչվող ավստրիական և գերմանական աղբյուրները»,*

ԻՎ ԹԵՐՆՈՆ – *պատմաբան և գրող, «1915-1916 թվերին Օսմանյան կայսրության ներսում կատարված հայերի ցեղասպանությունը»,*

ՋՈ ՎԵՐՀՈՎԵՆ – *Լուվենի կաթոլիկ համալսարանի պրոֆեսոր, «Հայ ժողովուրդը և միջազգային օրենքը»,*

ՏԻԳՐԱՆ ԿՈՒՅՈՒՄՋՅԱՆ – *Ֆրեզնո, Կալիֆորնիայի պետական համալսարանի պրոֆեսոր, «Հայկական պատմական հուշարձանների ոչնչացումը»,*

ԼՍԵԼՈՎ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԵՂԵՌՆԸ ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐԻ ՏՎԱԾ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

պարոն Քաբկեն Ինջիքարյան (Ֆրանսիա)
տիկին Հայկուհի Բոյաջյան (Միացյալ Նահանգներ)
պարոն Արամ Կյուրեղյան (Ֆրանսիա)
պարոն Պոլ Նահապետյան (Միացյալ Նահանգներ)

ԼՍԵԼՈՎ՝

Լոս-Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր Լեո Կուպերի հաղորդագրությունը՝ նվիրված ցեղասպանության գաղափարին, որը գործադրվել է հայերին բնաջնջելիս,

Միավորված Ազգերի Կազմակերպության մարդու իրավունքների բաժանմունքի նախկին ղեկավար, պրոֆեսոր Թեո Վան Բովենի հուշագրությունը հայերի կոտորածների վերաբերյալ՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնախմբում հարցի քննարկման ընթացքի մասին,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ՝

Այն բազմաթիվ փաստաթղթերը, որ ներկայացրել են զեկուցողները ի պաշտպանություն իրենց հաղորդագրությունների՝ ներառյալ բրիտանական և մասնավորապես գերմանական աղբյուրներից ստացված փաստաթղթերը,

Ամերիկյան աղբյուրներից ստացված կարևոր և հարուստ փաստագրերը,

Երիտթուրքերի 1919 թվի դատավարությանն առնչվող փաստավավերագրերը և 1921 թվին Բեռլինում, Շաուլոտենբուրգում կայացած՝ Սողոմոն Թեհլերյանի դատավարության փաստաթղթերը,

Անկարայի արտաքին քաղաքականության ինստիտուտի «Հայկական խնդիր. ինը հարց, ինը պատասխան» վերնագրով փաստաթուղթը, որն արտահայտում է Թուրքիայի ներկայիս քաղաքականության տեսակետը,

1984 թվի հունվարին Փարիզի Ատյանին Անկարայի համալսարանի պրոֆեսոր Աթաուլի տված վկայությունը որը կրկնում է թուրքական կառավարության բերած փաստարկները:

1. Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Մարդու իրավունքները ոտնահարող ամենահիմնական սպառնալիքը ցեղասպանության ոճիրն է: Քրեական իմաստով ավելի ծանր բան չկա, քան իր յուրահատուկ էթնիկական ինքնությունն ունեցող ժողովրդին սիստեմատիկորեն բնաջնջելու կանխամտածված պետական քաղաքականությունը: Մշտական ժողովրդական ատյանը ցեղասպանության այս որակումը հիմնավորում է 1976 թվի հուլիսի 4-ին Ալժիրում ընդունված Մարդու իրավունքների հայտագրի օրինադրույթներով:

Ալժիրյան հայտագրի առաջին կետի համաձայն՝ «ամեն մարդ իրավունք ունի ապրելու, համաձայն երկրորդ կետի՝ «ամեն մարդ իրավունք ունի հարգելու իր ազգային և մշակութային ինքնությունը», համաձայն երրորդ կետի՝ «ամեն մարդ իրավունք ունի խաղաղ ապրել իր երկրում և այնտեղ վերադառնալ՝ եթե իրեն վտարեն այնտեղից»: Եվ վերջապես չորրորդ կետը ուղղակիորեն առճակատում է ցեղասպանության իրողությանը՝ «Ոչ ոք իր ազգային կամ մշակութային ինքնության պատճառով չպետք է ենթարկվի սպանության, չարչարանքի, հալածանքի, բռնագաղթի, աքսորի կամ այնպիսի կենսապայմանների, որոնք սպառնում են մարդու ազգային ինքնությանը կամ ամբողջությանը»:

Ավելին, հարց է առաջանում, թե ինչու պետք է Ատյանը հայ ազգի հարցապնդումը քննարկի կատարված ցեղասպանությունից շատ տարիներ անց: Վերջապես, բողոքն ընդդեմ կոտորածի և բնաջնջման արձանագրվել է 60-70 տարի առաջ՝ 1915 թվին: Ատյանը համոզված է, որ իր պարտականությունների մեջ մտնում է պատմական բողոքների վավերացումը՝ եթե դրանք երբեք, ինչպես հարկն է,,են դրվել արդարադատության առջև և երբեք հարկ եղած ձևով չեն ճանաչվել գործին առնչվող կառավարության կողմից:

Այս դեպքում հայերի այս բողոքների քննարկումը և գնահատումը հատկապես ստիպողական են, 1915 թվից ի վեր թուրքական պետության յուրաքանչյուր կառավարություն հրաժարվում է ճանաչել ցեղասպանությանն առնչվող պատասխանատվության մեղադրական ակտը:

Վերջին միջազգային ֆորումներում և ակադեմիական հավաքներում թուրքական կառավարությունը ջանքեր է թափում ձախողելու հայերի ցեղասպանության հետաքննումը և ճանաչումը: Բացի դրանից, Թուրքիայի ներկայիս կառավարությունը չի ճանաչում հայ ժողովրդի բնաջնջման վերաբերյալ այս բազմաթիվ լուրջ մեղադրանքները: Ընդհակառակը. լրացու-

ցիչ մեղադրանքները Թուրքիայի ներկայիս կառավարությանը մղում են շարունակել բնաջնջման քաղաքականությունը:

Այս տեսակետից հատկապես տեղին են հայկական մշակույթի հուշարձանների և կրոնական կոթողների նկատմամբ ոչնչացման և սրբապղծման վերաբերյալ մեղադրանքները: Ատյանը ընդունում է այն տեսակետը, որ ցեղասպանության ոճրի մեղադրանքը մնում է մի առկա իրողություն, որը պետք է քննարկվի և եթե հաստատվի, ապա պետք է պատասխանատու պետության ղեկավարների կողմից համապատասխան ձևով և հրապարակավ ճանաչվի: Ցեղասպանության ոճրի տուժվածները լիազորված են հատուցման, անգամ ժամանակի այս հսկա հոգսից հետո: Թեև այդ հատուցումը անվերապահորեն պետք է արտացոլի ներկա հանգամանքները:

Այստեղ նաև տեղին է հայազգի եղեռնապուրծների և նրանց ժառանգների վերաբերմունքը: Ամեն մարդ արդարացիորեն պահանջում և ձգտում է հեղինակների կողմից այն ոճիրների և անարդարությունների պաշտոնական ճանաչմանը, որոնք կատարվել են իր նկատմամբ: Ինչքան այս անարդարությունը խորն է և երկար է թաքցվում, այնքան ավելի խորն է նրա ճանաչման այս փափագը: Ատյանը ցավով նշում է, որ ճանաչման այս ուրացումից առաջացող ֆրուստրացիան ըստ երևույթին հանգեցնում է թուրք դիվանագետների և մյուսների դեմ տեռորիստական գործողություններին դիմելուն: Ատյանը հույս ունի թեթևացնել հայ իրականության հետ համաձայնության գալու կոնստրուկտիվ ընթացքը, որը կարող է կանխել հնարավոր կոնֆլիկտների առաջացումը:

Հաճախ դրանում հանցավոր պետությունը պատասխանատվությունից խուսափում է մյուս պետությունների և կազմակերպությունների օգնությամբ՝ ներառյալ ՍԱԿ-ը: Հայերի դեպքի ապշեցուցիչ առանձնահատկությունն այն է, որ մի շարք պետություններ պատասխանատվությունից խուսափելու նպատակով աշխարհաքաղաքական պատճառով միանում են թուրքական կառավարությանը, որպեսզի անգամ այս վերջին օրերին ձախողեն կորուստների հատուցման իրավական հետաքննությունը և դատավճիռը:

Մշտական ժողովրդական ատյանը որպես արդարադատության մարմին պարտավոր է որոշ չափով կանխել պետությունների բարոյական և քաղաքական ձախողումները: Ատյանը հետաքննել է հայերի բողոքները՝ ուղղված միջազգային հանրության երկար լռությանը և հատկապես հեղինակավոր արևմտյան այն պետությունների հանցակցությանը (բացառությամբ Ֆրանսիայի), որոնք թուրքական կառավարության հետ ունեն բազմաթիվ տնտեսական, քաղաքական և ռազմական կապեր:

Ատյանը գործում է նաև այն պատճառով, որ այն խորապես առնչվում է մեր աշխարհում ցեղասպանության տարածմանը և նրա հանդեպ եղած վերաբերմունքին: Որպես Ատյանի անդամներ մենք հավատում ենք, որ եղեռնի իրողության բացահայտ և անկողմնապահ փաստահիմնավորումը նպաստում է այն ճանաչելու խնդրին: Եղեռնի իրողության բացահայտումը և մերկացումը կդժվարացնի նրանց գործը, ովքեր հակված են թաքցնել իրենց դիրքորոշումը: Կիսելով եղեռնի զոհերի վիշտը՝ Ատյանը նեցուկ է կանգնում նրանց տառապանքների արժանապատվությանը և աջակցում է նրանց շարունակվող պայքարին: Անկասկած, ցեղասպանու-

թյան ճանաչումն ինքնին ցեղասպանության դեմ պայքարի մի հիմնավոր միջոց է: Դրա ճանաչումն միջազգային օրենքի հովանու տակ գտնվող մարդու ապահով գոյատևման իրավունքի հաստատումն է:

2. ՓԱՍՏԵՐ

1. ՊԱՏՄԱԿԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արևելյան Անատոլիայում և Կովկասում հայ ժողովրդի գոյությունը հաստատվում է մեր թվարկությունից առաջ 6-րդ դարից սկսած: Երկու հազարամյակի ընթացքում հայ ժողովրդի կյանքում իրար են հաջորդել անկախությունն ու վասալությունը: 14-րդ դարում հայոց վերջին թագավորության անկման հետ ընդհատվեց ալբայական դինաստիայի ժառանգությունը: 4-րդ դարի սկզբից հայերը ընդունեցին քրիստոնեությունը որպես պետական կրոն և ստեղծեցին իրենց սեփական այբուբենը՝ որոնք երկուսն էլ հայերին տվեցին ազգային ինքնություն և նրանք իրենց հավատի պատճառով սկսեցին հալածվել բազմաթիվ զավթիչների կողմից: Հայերի զբաղեցրած աշխարհագրական դիրքը գտնվելով ստրատեգիական խաչմերուկներում, հատկապես խոցելի էր, այնուամենայնիվ, հայերը կարողացել էին մինչև առաջինն աշխարհամարտը ստեղծել և պահպանել իրենց լեզուն, մշակույթը և կրոնը իրենց պատմական տարածքի վրա, որ թուրքերն իրենք անվանում էին Էրմենիստան:

Հայոց վերջին թագավորության անկումով Հայաստանի մի զգալի մասն ընկավ թուրքական տիրապետության տակ, իսկ արևելյան շրջաններն անցան սկզբում Պարսկաստանի, այնուհետև ռուսների իշխանության տակ, որոնք զավթեցին դրանք 19-րդ դարում:

Մյուս կրոնական փոքրամասնությունների նման,հայ համայնքը կամ միլլեթը օսմանյան կայսրության ներսում ուներ կրոնական և մշակութային ինքնավարություն և քիչ թե շատ խաղաղ ապրում էր կայսրության դասական ժամանակահատվածում՝ թեև որպես երկրորդ դասի (ռայա) քաղաքացիներ:

Սակայն 19-րդ դարում կայսրության անկման հետ, պայմաններն աստիճանաբար ավելի վատացան և դրությունը դարձավ ճնշող: Բնակչության աճը, Ռուսաստանից ու Բալկաններից թուրք փախստականների վերադարձը, ինչպես նաև քոչվոր ցեղերի (քրդեր, չերքեզներ և այլն) նստակեցությունը խարխլեց բնակչության հաշվեկշիռը և մեծացրեց հողի համար մրցակցության պայքարը՝ առաջ բերելով ագրարային սեկտորում բազմաթիվ պրոբլեմներ: Արդյունքը եղավ հայ ժողովրդի (մեծ մասամբ գյուղացիներ և հողագործներ) ճակատագրի վատթարացումը: Կայսրության հնացած կառուցվածքը դժվարացնում էր արդիականացումն ու բարեփոխումները: Ռեֆորմի մի քանի փորձեր (ժամանակակից բանակի ստեղծումը, հարկի գանձումը ղրամով) ավելի քայքայեցին գյուղացիությունը: Միևնույն ժամանակ Բալկաններում ազգային հուզումների առաջացումն աննշեղորեն տանում էր դեպի Օսմանյան տիրապետության տակ գտնվող ժողովուրդների անկախության: Կայսրությունը գնալով քայքայվում էր՝ դատելով հենց միայն արտաքին պարտքերից:

1878 թվից սկսած, ռուս-թուրքական պատերազմից հետո, Հայկական հարցը դարձավ արևելյան հարցի մի գործոնը: 1878 թվի Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ կետի համաձայն մի շարք բարեփոխումներ պետք է կատարվեին ռուսական երաշխավորության տակ գտնվող հայկական շրջաններում: Ինչևիցե, ելնելով դաշնակից կողմերի փոփոխումից, 1878 թվի Բեռլինի պայմանագիրը Թուրքիային ազատեց իր պարտավորությունների մի մասից և Մեծ Բրիտանիային հանձնարարեց վերահսկել ռեֆորմները, բայց դրանք երբեք չիրագործվեցին: Հայ հանրության ներսում սկսեց զարգանալ հեղափոխական շարժումը (դաշնակ և հնչակ կուսակցությունները):

1894 թվի Սասունի ապստամբությունից հետո մոտ 300000 հայ կոտորվեց արևելյան նահանգներում և Կոստանդնուպոլսում՝ Սուլթան Աբդուլ Համիդի հրամանով: Կենտրոնական պետությունների բողոքներն հանգեցրին ռեֆորմների, ավելի շատ խոստումների, բայց դրանք դարձյալ երբեք չիրականացան:

Ֆիդայիների պայքարը շարունակվում էր: Նոր դարագլխին հայ հեղափոխականները նույնպես սկսեցին համագործակցել երիտթուրքերի կուսակցությանը՝ կազմելու համար կայսրության ֆեդերացիայի ծրագիր: 1908 թվի սահմանադրական հեղափոխությունից հետո երիտթուրքերի գաղափարախոսությունը ենթարկվելով տարբեր գործոնների ազդեցության (ճնշում իշխանությունների կողմից, արտաքին ազդեցություններ, արմատական թևի ճնշում), սկսեց զարգանալ դեպի բացարձակ նացիոնալիզմ, որը դրսևորվեց պանթյուրքիզմի և թուրանիզմի միջոցով: Ոչ հեղափոխությունը, ոչ էլ 1909 թվին Աբդուլ Համիդի տապալումը չվոխեցին արևելյան նահանգների հայերի վիճակը (Ադանայի կոտորածներ) և Անտանտի երկրները նորից դրեցին ռեֆորմի պահանջները: Այս պահանջները վերջապես լավեցին 1914 թվի փետրվարին և երկու կուսակալներ նշանակվեցին նրանց գործողություններին վերահսկելու համար: Թուրքական կառավարության կողմից այս նշանակումները համարվեցին անընդունելի միջամտություն:

Առաջին աշխարհամարտի սկզբին թուրքական կայսրությունը չէր կողմնորոշվել ՝ որ կողմին միանալ: 1914 թվի նոյեմբերի սկզբին Գերմանիայի ճնշման տակ Թուրքիան միացավ կենտրոնական պետություններին: Սա հայերին դժվար կացության մեջ դրեց: Կենտրոնական պետությունները գրավեցին մի տարածք, որը Թուրքիան համարում էր անհրաժեշտ՝ իրագործելու համար իր թուրանական իմպերիալիստական ձգտումները՝ կապված Անդրկովկասի և Միջին Ասիայի ժողովուրդների հետ: Բացի դրանից հայ ժողովրդի բաժանումը Օսմանյան կայսրության (2000000 հայ) և Ռուսաստանի (1700000 հայ) միջև անխուսափելիորեն նշանակում էր, որ ժողովրդի երկու հատվածները հայտնվել էին հակադիր կողմերում: 1914 թվի օգոստոսին Էրզրումում կայացած Հայ հեղափոխական դաշնակցության 8-րդ կոնգրեսում դաշնակ կուսակցությունը մերժեց ռուսահայերի ներսում քայքայիչ գործունեություն կատարելու երիտթուրքական պահանջը: Պատերազմի սկզբից տաճկահայերը ընդհանուր առմամբ գործում էին որպես հավատարիմ հպատակներ՝ թուրքական բանակի դրոշի տակ: Ռուսահայերն իրենց հերթին, ինչպես հարկն է, հավաքագրվեցին ռուսական բանակի մեջ և ուղարկվեցին եվրոպական ճակատում կռվելու: Պատերազմի ա-

ռաջին ամիսների ընթացքում ռուսահայերը զինվորագրվեցին կամավորական ջոկատների մեջ, որոնք գործում էին որպես ցարական բանակի սկաուտներ, որպես ռուսահայերի պատասխանն այն ծրագրին, որ թուրքերը ներկայացրել էին Էրզրումում հայերին մի քանի ամիս առաջ: Էրզրումի մերժումը և այս կամավորական գնդերի կազմավորումը երիտթուրքերի կողմից օգտագործվեցին որպես հայերի կողմից դավաճանության ապացույց: Էնվերը, որը նշանակվել էր թուրքական բանակի գերագույն հրամանատար, հաջողացրեց ձմռան կեսին ճեղքել-անցնել Անդրկովկասը, սակայն Սարիղամիշում պարտություն կրեց ռուսական բանակից (ինչպես նաև եղանակի պատճառով): Թուրքական 3-րդ բանակից (90000) մնաց ընդամենը 15000: Կովկասում կրած պարտության հետևանքով սկսվեցին հակահայկական ձեռնարկումներ:

2. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1915 թվի հունվարից սկսած, հայ զինվորներին և սպաներին զինաթափ արեցին, վերախմբավորեցին աշխատանքային բրիգադներում (500-1000 մարդ), որպես բեռնակիրներ գործի դրվեցին ճանապարհավերանորոգման աշխատանքներում, հետո քիչ-քիչ տարան հեռավոր շրջանները և կոտորեցին: Ապրիլից հաջողությամբ սկսվեց ծրագրի իրագործումը փուլային հաջորդականությամբ: Ազդանշան տրվեց կոտորածը սկսել ապրիլի սկզբին Զեյթունում՝ անմիջական ստրատեգիական կարևորություն չունեցող մի շրջանում: Դրանից անմիջապես հետո բնաջնջման գործողություններն հասցվեցին սահմանային գավառներ:

Վանի հայերի ինքնապաշտպանությունը դարձավ բնաջնջման հիմնական պատրվակ: Վանի վալի Ջևդեթը կողոպտեց հայկական հեռավոր գյուղերը և քաղաքի ինքնապաշտպանությունը կազմակերպած Վանի հայերին: Նրանց փրկեց Կովկասի հայ կամավորներով առաջնորդվող ռուսական բանակի ճեղքումը: Մայիսի 18-ին Վանն առնելուց հետո ռուսները շարունակեցին առաջխաղացումը, սակայն հունիսի սկզբին նրանց կանգնեցրեց թուրքերի հակահարձակումը: Վանի վիլայեթի հայերը այսպիսով կարողացան հետ քաշվել և խուսափել կոտորածից:

Երբ Վանի ինքնապաշտպանության լուրը հասավ Կոստանդնուպոլիս, Միություն և առաջադիմություն (իթթիհատ) կոմիտեն օգտվեց այդ առիթից: Մոտ 650 մտավորականներ՝ գրողներ, բանաստեղծներ, փաստաբաններ, բժիշկներ, հոգևորականներ և քաղաքական գործիչներ ձերբակալվեցին 1915 թվի ապրիլի 24-25-ին, որ հաջորդ ամիսներին սրի քաշվեցին ու կոտորվեցին: Այսպիսով իրագործվեց ժամանակի հայ ամբողջ մտավորականության կանխամտածված ոչնչացման ծրագիրը:

Ապրիլի 24-ից սկսած, համաձայն ճշգրիտ աղյուսակի, կառավարությունը հրաման արձակեց բնաջնջել արևելյան վիլայեթների հայերին: Քանի որ Վանը դեռևս գրավված էր ռուսական բանակի կողմից, գործողություններն իրագործվեցին 6 վիլայեթներում՝ Տրապիզոնում, Էրզրումում, Բիթլիսում, Դիարբեքիրում, Խարբերդում, Սվազում: Ծրագրի իրականացումը հանձնարարվեց «Հատուկ կազմակերպության» ջոկատներին, որոնք կազմված էին հանցագործներից և դատապարտյալներից: Նրանց վարժեցրել և սպառազինել էր Միություն և առաջադիմություն կոմիտեն: Քեհա-

յեդդին Շաքիրի գլխավորած այդ կիսապաշտոնական կազմակերպությունը ենթարկվում էր միայն իթթիհատի կենտրոնական կոմիտեին: Կոստանդնուպոլիսը հրահանգներ էր տալիս վալիներին, գայմագամներին, ինչպես նաև տեղի հատուկ ջոկատների անդամներին, որոնք ազատորեն գործելու իրավունք ունեին, տեղափոխել կամ ազատ արձակել ցանկացած անվճռական ժանդարմի կամ սպայի: Գործադրվող մեթոդները, տրված հրամանները,որոնց հիման վրա դատարկվում էին քաղաքները և ընտրվում էին տեղահանվողների քարավանների համար ճանապարհներ, այս ամենը հաստատում են, որ գոյություն ուներ մի կենտրոնացված հրամանակետ, որը ղեկավարում էր ծրագրի իրագործումը: Բնաջնջման հրամաններն արձակվում էին հրապարակավ կամ ուղարկվում էին ամեն քաղաք ու շրջան, որոնք ընտանիքներին երկու օր էին տալիս մի քանի անձնական իրեր հավաքելու համար. նրանց ունեցվածքը բռնագրավում էին կամ անմիջապես զեղչով վաճառում: Առաջին բռնագաղթը ընդհանուր առմամբ նշանավոր մարդկանց՝ հայ քաղաքական կուսակցությունների անդամների, հոգևորականների,և երիտասարդների ձերբակալությունն էր, որոնց բռնի ուժով ստիպեցին կեղծ խոստովանություններ ստորագրել. այնուհետև մեկ-մեկ հոշոտեցին: Աքսորյալների քարավանները համալրվում էին ծերունիներով, կանանցով և երեխաներով: Ավելի հեռավոր գյուղերում ընտանիքներին կոտորում էին, իսկ նրանց տները վառում էին կամ զավթում: Սև ծովի ափին և Տիգրիսի երկայնքով Դիարբեքիրի մոտ նավերը բեռնվում էին զոհերով և ջրասույզ էին արվում: 1915 թվի մայիսից մինչև հուլիս թուրք զինվորներն ու ժանդարմները թալանեցին ու կողոպտեցին արևելյան գավառները, այդ գործին մասնակցում էին նաև Հատուկ կազմակերպության հրոսակները՝ չեթե անվան տակ: Թուրքական ղեկավարությունը հանդուրժում էր այս թալանը, կողոպուտը, կոտտանքը և սպանությունները, մինչդեռ հայերի կողմից որևէ դիմադրության փորձ գազանաբար պատժվում էր:

Գործողությունները հնարավոր չէր թաքցնել: Միսիոներներից տագնապի լուր ստանալով, Անատանտի տերությունները թուրքական կառավարությունից պահանջեցին մայիսի 24-ից վերջ տալ կոտորածին, որի համար նրանք կառավարության անդամներին համարեցին անձամբ պատասխանատու: Թուրքական կառավարությունը բնաջնջումը պաշտոնական դարձրեց արձակելով մի հրամանագիր,որտեղ որպես պատրվակ հայերը մեղադրվում էին դավաճանության, դիվերսիայի և տեռորիստական գործունեության մեջ: Տեղահանումը, փաստորեն, բնաջնջման քողարկված ձևն էր: Ամենաուժեղներին կոտորում էին նախքան բռնագաղթը: Սովը, ծարավը և կոտորածը հնձում էին տեղահանվողների զանգվածները: Ճանապարհների երկայնքով կիտված էին հազարավոր դիակներ: Անշունչ մարմինները կախված էին ծառերից և հեռագրասյուներից. խոշտանգված մարմինները լողում էին գետերն ի վար կամ ողողում էին ափերը: Արևելյան վիլայեթների 1200000 հայ բնակչությունից մոտ 300000-ը կարողացավ ռուսական օկուպացիայից օգտվելով հասնել Կովկաս՝ մնացածները տեղում կոտորվեցին ու բնաջընջվեցին, կանայք ու երեխաները (մոտ 200000 հոգի) առևանգվեցին: Հալեպի աքսորավայր հասան 50000-ից էլ պակաս եղեռնապուրծներ:

1915 թվի հուլիսի վերջին կառավարությունն սկսեց տեղահանել Անատոլիայի և Կիլիկիայի հայերին՝ բնակչությանը աքսորելով ճակատից

հեռու գտնվող շրջաններ,որտեղ հայերի ներկայությունը թուրքական բանակի համար վտանգ չէր ներկայացնում: Բռնագաղթվողները հարավ էին քշվում զանգվածներով, որոնք հիմնվում էին ճանապարհին: Բռնագաղթի մնացորդներին Հալեպից քշում էին դեպի Սիրիայի անապատները (հարավից) և Միջագետք (հյուսիսից): Սիրիայում վերախմբվածների ճամբարները խփվում էին Համայում, Հոմսում և Դամասկոսի մոտ: Այս ճամբարները պատսպարեցին մոտ 120000 գաղթականների, որոնց մեծ մասը պատերազմից հետո, 1919 թվին, հայրենադարձվեցին Կիլիկիա: Եփրատի մյուս ափով հայերը քշվեցին դեպի Դեր-Էլ Զոր, մոտ 200000-ը հասան իրենց աքսորակետին: 1916 թվի մարտից մինչև օգոստոս Կոստանդնուպոլսից հրամաններ եկան ոչնչացնելու երկաթուղու երկարությամբ և Եփրատի ափերի ճամբարներում մնացած հայերին:

Այնուամենայնիվ, մի քանի հայեր մնացել էին Թուրքիայում: Գավառներում մի քանի հայ ընտանիքներ (մեծ մասամբ բողոքականներ և կաթոլիկներ) մահից փրկվեցին ամերիկյան միսիոներների և Առաքելոց Նվիրակի շնորհիվ: Որոշ դեպքերում հայերը փրկվեցին թուրք սպաների կտրուկ միջամտության շնորհիվ կամ նրանց թաքցրին թուրք կամ քուրդ բարեկամները: Կոստանդնուպոլսի և Իզմիրի հայերը նույնպես փրկվեցին կոտորածից: Վերջապես եղան դիմադրության դեպքեր (Ուրֆա, Շապին-Գարահիսար, Մուսալեռ):

Այսպիսով, ներառյալ Ռուսաստանում ապաստան գտածները, եղեռնի մնացորդների թիվը 1916 թվի վերջին հաշվում էր 600000՝ 1914 թվի 1800000 ընդհանուր բնակչությունից՝ ըստ Ա. Թոյնբիի: Արևելյան Անատոլիայում հայ ամբողջ ազգաբնակչությունը ոչնչացավ: Կոտորածից մի քանի մնացորդներ ապաստան գտան Սիրիայում և Լիբանանում, իսկ մնացածները հասան Ռուսահայաստան: 1918 թվի ապրիլին շրջանցելու համար Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կետերը՝ ըստ որի բոլշևիկյան Ռուսաստանը պետք է Թուրքիային զիջեր Քաթումը, Ղարսը և Արդահանը, Անդրկովկասն անկախ հռչակվեց՝ կազմելով կարճատև ֆեդերացիա,որը ստիպված էր 1918 թվի մայիսին բաժանվել երեք հանրապետությունների՝ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի:

1918 թվի նոյեմբերին կրած իր պարտությամբ Թուրքիան ճանաչեց Հայկական պետությունը՝ անգամ հաջորդ տարի նրան զիջեց Ղարսի և Արդահանի վիլայեթները: Բազմաթիվ առիթներով դաշնակից՝ բոլոր կառավարություններն իրենց ներկայացուցիչներ Լոյդ Ջորջի, Քլեմանսոյի, Վիլսոնի և այլնի արված հայտարարություններում հանդիսավորապես խոստացան երաշխավորել, որ արդարություն կիրագործվի «ճահատակված հայ ժողովրդի» նկատմամբ:

1920 թվի ապրիլին Սան-Ռեմոյի խորհրդաժողովը Միացյալ Նահանգներին առաջարկեց ընդունել հայկական մանդատ և անկախ Միացյալ Նահանգների որոշումից, պրեզիդենտ Վիլսոնը պետք է որոշեր Հայկական պետության սահմանները, և Թուրքիայի հետ խաղաղության պայմանագիրը պետք է նրան ճշանակեր որպես Թուրքիա-Հայաստան սահմանի միջնորդ դատավոր:

Սևրի պայմանագիրը (1920 թվի օգոստոսի 10), որը ճանաչեց Հայկական պետությունը և վավերացրեց պրեզիդենտ Վիլսոնի գծած սահմանները, այնուամենայնիվ, չլուծեց վիճելի հարցը: Այս պայմանագիրը, որ կա-

ռավարության կողմից ստորագրվել էր Կոստանդնուպոլսում և որը Անատոլիայից մեծ բաժին էր հասել իտալացիներին, անգլիացիներին, ֆրանսիացիներին, ինչպես նաև չէր անտեսել հույներին Էգեյան ծովում, Մուստաֆա Քեմալի կողմից անընդունելի էին և նա մերժեց այն: Հայ հեղափոխական դաշնակցության առաջնորդությամբ Հայաստանի Հանրապետությունը շուտով մոլորվեց քեմալական հարձակման և բոլշևիկյան Ռուսաստանի մեջտեղում: Երբ 1920 թվի նոյեմբերի 20-ին պրեզիդենտ Վիլսոնը պաշտոնապես շարադրեց նոր պետության տարածքային սահմանները, հանրապետությանը մնացել էր ընդամենը մի քանի օր: Ղարսի և Արդահանի վիլայեթները հետ վերցվեցին Թուրքիայի կողմից (Ալեքսանդրապոլի պայմանագիր) և այն, ինչ մնաց Հայաստանից (մոտ 30000 քառ. կմ) 1920 թվի դեկտեմբերի 2-ին խորհրդայնացվեց:

1923 թվի հուլիսի 24-ին մեծ տերությունների և Թուրքիայի նոր կառավարության կողմից ստորագրվեց Լոզանի պայմանագիրը՝ առանց Հայաստանը հիշատակելու կամ հայերի իրավունքները նշելու: Հայկական հարցը փակված էր:

3. ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ

Դատարանը հայտնում է 1915-1916 թվականներին իրագործված ցեղասպանության առնչվող դատավճիռը:

Դատարանը նկատի է առնում, որ վերոհիշյալ փաստերը կազմվել են իրական և ներդաշնակ ապացույցների հիման վրա: Այդ ապացույցները ներկայացվել են և վերլուծվել են Ատյանի կողմից լսված տարբեր հաղորդագրություններում, որոնց կցվել են բազմաթիվ փաստագրեր:

Այդ աղբյուրների համարյա սպառիչ մատենագիտությունը ներկայացրել է պրոֆեսոր Ռ. Գ. Հովհաննիսյանը՝ «Հայերի սպանդը» (Քեմբրիջ, Մասաչուսեթս, 1981): Չհաշված թուրքական արխիվները, որոնք անմատչելի են, հիմնական փաստաթղթերը հետևյալն են՝

- Գերմանական արխիվները, որոնք Գերմանիայի կարգավիճակի տեսակետից՝ որպես օսմանյան կայսրության դաշնակցի, ամենակարևորներն են: Մանավանդ նշելու արժանի են Յոհաննես Լեփսիուսի, դոկտոր Արմին Վեգների, «Գերմանական օգնության միության» բարեգործական կազմակերպության, դոկտոր Յակոբ Կանցլերի, լրագրող Շթյուրմերի, դոկտոր Մարտին Նիեպագեի, միսիոներ Էրնսթ Քրիստոֆելի և գեներալ ֆոն Սանդերսի տված տեղեկությունները, ականատեսների վկայությունները: Գեներալ ֆոն Սանդերսը պատմեց, թե իր վճռական անձնական միջամտության շնորհիվ ինչպես է փրկվել Զմյուռնիայի և Անդրիանապոլսի հայ բնակչությունը:

- Գերմանական դիվանագիտական և հյուպատոսական անձնակազմի տված տեղեկությունները, ովքեր եղել են Էրզրումում, Հալեպում, Սասունում և այլուր, հայերի անհետացման հանգամանքների ականատեսները:

- Ամերիկյան արխիվները,որ նույնպես պարունակում էին շատ ընդարձակ նյութեր ի հաստատումն վերը նշվածների (միսիոներներ, կոնսուլներ և բարեգործներ), հայտնած տեղեկությունների, Պետական դեպարտամենտի «1910-1919 թվեր, Թուրքիայի ներքին գործեր, ռուսական

պրոբլեմներ» նյութը և Կոստանդնուպոլսում Ամերիկայի դեսպան Հենրի Մորգենթաուի հիշողությունները:

- Այս իրադարձությունների վերաբերյալ բրիտանական իշխանության Կապույտ գիրքը՝ հրատարակված 1916 թվին վիսկոնտ Բրայսի կողմից:

- Երիտթուրքերի (իթթիհատիստների) դատավարության արձանագրությունները Օսմանյան կայսրության անկմանը հետևած թուրքական կառավարության ներկայացրած մեղադրանքների վերաբերյալ:

Այդ դատավարության ժամանակ, որ տեղի ունեցավ 1919 թվի ապրիլից մինչև հուլիս, թուրքական կառավարությունը հավաքել էր բնաջնջումների և կոտորածների վկայությունները և դրանց պատասխանատուներին դատեց մեծ մասի բացակայությամբ՝ ռազմադաշտային դատարանով: Դատարանը դատապարտեց մեղադրյալներից շատերին՝ ներառյալ Թալեաթին, Էնվերին և Ջեմալին, որոնք հեռակա կարգով մահվան դատապարտվեցին:

Ատյանին ներկայացվեցին տեղեկություններ եղեռնից փրկված չորս անձանց կողմից, որոնք այդ դեպքերի ժամանակ փոքր են եղել:

4. ԹՈՒՐՔԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ

Ատյանը քննել է թուրքական փաստարկները, որ կցվել էին ներկայացված փաստաթղթերին: Հայերի ցեղասպանությունը ճանաչելու թուրքական կառավարության մերժումը գլխավորապես հիմնված է հետևյալ փաստարկների վրա՝ սպանվածների ավելի ցածր թիվ, հայ հեղափոխականների պատասխանատվությունը, հակամեղադրանքներ, կանխամտածվածության ժխտում:

1914 թվին Օսմանյան կայսրության ներսում ապրող հայերի թիվը տարբեր հաշվարկներով եղել է 2100000՝ ըստ հայոց պատրիարքարանի, 1800000՝ ըստ Ա. Թոյնբիի և մոտ 1300000՝ ըստ թուրքերի: Չնայած զոհերի թվի տարբերությանը՝ հայերը և համարյա արևմտյան բոլոր փորձագետները համաձայնվում են այն բանում, որ բնաջնջվել է բնակչության մոտ մեկերրորդը: Թուրքերը բողոքում են, որ «տեղահանության» հետևանքները շատ ավելի փոքր մասշտաբի են եղել, որն ավարտվել է հայ ազգաբնակչության 20-25 տոկոսի անհետացմամբ՝ համաձայն պատերազմական ժամանակաշրջանի խղճուկ պայմանների:

Թուրքական պետությունը մատնանշում է նաև մուսուլմանական կողմի ունեցած ծանր կորուստները: Այս փաստարկը ուզում է անտեսել այն փաստը, որ հայերը համարյա ամբողջությամբ անհետացել են Անատոլիայից: Թուրքիայի բնակչությունն այժմ համարյա 45 միլիոն է, որից հայերը 100000-ից էլ պակաս են:

Պատասխանատվությունից խուսափելու նպատակով թուրքական կառավարությունը հայտարարում է, որ հայերը պատերազմի ժամանակ խռովություն են բարձրացրել և դավաճանության կոչ են արել: Այնուամենայնիվ, Ատյանը գտավ, որ Օսմանյան կայսրության ներսում հայերի կողմից միակ զինված գործողությունները եղել են Մասունի ապստամբությունը և Վանի ինքնապաշտպանությունը 1915 թվի ապրիլին:

Թուրքիայի առաջ քաշած հաջորդ փաստարկն այն է, թե ավելի շուտ հայերն են ցեղասպանություն ձեռնարկել թուրքերի հանդեպ: Ճիշտ է, որ հայերի բնաջնջումից և կոտորածից ավելի քան մեկ տարի անց թուրքական մի քանի գյուղեր ավերվեցին հայերի կողմից: Ատյանը նկատի է առնում, որ այդ գործողությունները, թեև հանցապարտ, չեն կարող համարվել ցեղասպանություն: Ավելին, Ատյանը նշում է, որ այդ գործողություններն իրագործվել են հայերի սպանդից որոշ ժամանակ անց:

Վերջապես թուրքական պետությունը ժխտում է կանխամտածվածության մեղադրանքը՝ հերքելով ներքին գործոց միհիստր Թալեաթի կողմից ուղարկված հինգ հեռագրերի իսկությունը, որը հաստատվել էր 1921 թվին Բեռլին-Շառլոտենբուրգում Սողոմոն Թեհլերյանի դատավարությանը հրավիրված փորձագետների կողմից: Երիտթուրքերի կառավարության՝ մարդկության դեմ գործած ոճիրների կատարման առումով՝ Թեհլերյանը Թալեաթին սպանելու համար արդարացվել է: Գերմանիայի դեսպան Վանգենհեյմը իր կողմից 1915 թվի հուլիսի 7-ին՝ որպես իրադարձությունների կանխամտածվածության վկայություն, թողել է հետևյալը՝ «այս հանգամանքները և այն ձևը, որով իրագործվում է բնաջնջումը, այն փաստի ապացույց է, որ կառավարությունն, անկասկած, հետապնդում է Օսմանյան կայսրության ներսում հայաջնջման նպատակ»:

(Թշնամու կողմից գրավվելու վտանգից հեռու գտնվող գավառներում կոտորածների չափերին վերաբերվող նամակը «1914-1918թթ., Գերմանիա և Հայաստան», հավաքածու N106, որը գտնվում է Վիլհելմշտրասեի արխիվներում և հրապարակվել է Լեփսիուսի ամսագրում):

1971 թվին Միավորված Ազգերի Կազմակերպության մարդու իրավունքների հանձնախումբը խտրական գործողությունների դեմ պայքարի և փոքրամասնությունների պաշտպանության գծով իր ենթախմբին հանձնարարեց ձեռնարկել «ցեղասպանության ոճիրը կանխելու և պատժելու հարցի քննարկումը»՝ այդ գործում ընդգրկելով անկախ փորձագետների:

1973 և 1975 թվերին հատուկ թղթակիցների կողմից ենթախմբին ներկայացված երկու ժամանակավոր հաղորդագրությունների 30-րդ պարբերությունում ասվում էր,որ «ներկա ժամանակներում ուշադրություն պիտի դարձվի բավականին առատ փաստագրության առկայությանը, որը վերաբերում է հայերի կոտորածին. դա դիտվում է որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն»:

1979 թվին ներկայացված վերջնական տեղեկագրության մեջ վերոհիշյալ 30-րդ պարբերությունը բաց էր թողնված:

Հանձնաժողովի նախագահը նշեց, որ այդ բացթողումը բողոքի այնպիսի ալիք է բարձրացրել, որի չափերը հեղինակը գուցե չէր նախատեսել: Այդ պատճառով նախագահը թղթակցին խորհուրդ տվեց հաղորդագրությունը ներկայացնելուց առաջ ի նկատի ունենալ վերոհիշյալ պարբերության բացթողման առաջ բերած ռեակցիան և հայտարարությունները:

Հատուկ թղթակիցն այլևս չվերակազմեց իր տեղեկագրությունը, և ենթախորհուրդը համաձայն տնտեսական և սոցիալական խորհրդի 1983 թվի 33-րդ բանաձևի, մի ուրիշ թղթակից նշանակեց՝ ցուցում տալով, որ ցեղասպանության ոճրի կանխման և պատժի հարցի ուսումնասիրումը հիմնվին վերանայի և այդ մասին տեղյակ պահի: Ատյանը գտավ, որ թուրքական պատվիրակությունը, մերժելով վերոհիշյալ 30-րդ պարբերությունը,

փաստորեն բերեց հետևյալ փաստարկները՝ «Վկայակոչված փաստերը պատմական ճշմարտության խեղաթյուրում են: Ցեղասպանություն տերմինը չպետք է կիրառվի, քանի որ դրանք կոտորածներ չէին, այլ պատերազմական գործողություններ: Եվ, վերջապես, որ դրանք շատ վաղուց են կատարվել և դարասկզբի դեպքերին վերադառնալը կնպաստի թշնամություն բորբոքելուն»:

Ինչ մնում է առաջին երկու կետերին, որ վերաբերում են փաստերին և օրենքին, ապա Ատյանն արդեն քննարկել է դատավարությանը ներկայացրած փաստարկները և համոզված է, որ դա նպաստել է բավարարելու մարդու իրավունքների հանձնախմբի ցանկությունը. այն է, օգնել ենթախմբին՝ կատարելու իր առաջադրանքը՝ հաշվի առնելով իրեն ներկայացված բոլոր նյութերը: Ինչ վերաբերում է երրորդ կետին, ապա ատյանը կարող է միայն հայտնել, որ վերոհիշյալ 30-րդ պարբերության ընդունման մերժումը շատ հեռու է լարվածությունը մեղմելուց և առաջացրել է բուռն ռեակցիա:

3. ԸՍՏ ՕՐԵՆՔԻ

1. Հայ ժողովրդի իրավունքների վերաբերյալ

Ատյանը նշում է, որ հայ ազգաբնակչության խմբերը,որ դարձել են կոտորածների և այլ գազանությունների զոհեր՝ որակվում են որպես ժողովուրդ՝ ազգերի իրավունքի տեսակետից: Այսօր այդ ժողովուրդն ունի ինքնորոշման իրավունք՝ համաձայն Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության 152 կետի և 1976 թվի հուլիսի 4-ին Ալժիրում ընդունված մարդու իրավունքների համընդհանուր պայմանագրի կետերի: Միջազգային հանրությանը և, մասնավորապես, Միավորված Ազգերի Կազմակերպությանը հանձնարարված է բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկել ապահովելու համար այս հիմնական իրավունքի գործադրումը՝ հաշվի առնելով, որ նրա գլխավոր խնդիրն այդ իրավունքից արդյունավետորեն օգտվելն է:

Ատյանը ցանկանում է շեշտել այն հատուկ պարտավորությունները, որ դրված են թուրքական պետության առջև՝ համաձայն ազգերի իրավունքի ընդհանուր կանոնադրույթների և հատուկ պայմանագրերի, որոնց նա մասնակից էր և որոնց թվագրությունը մոտ հարյուր տարի հետ է գնում: Ատյանը այդ կապակցությամբ հատուկ ուշադրություն է դարձնում այն փաստին, որ համաձայն Բեռլինի պայմանագրի 61-րդ կետի, վերոհիշյալ պետությունը 1878 թվին պարտավորվել էր Օսմանյան կայսրության ներսում հայ ժողովրդին տալ իրավակարգ, որը կապահովեր նրա իրավունքների ընդլայնումն անվտանգության մթնոլորտում՝ միջազգային հանրության վերահսկողության տակ:

Ատյանը նաև նշում է, որ ինքնորոշման խոստումները, որ տրվել են հայ ժողովրդին Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ՝ չեն իրագործվել, մինչդեռ միջազգային հանրությունը անհրավացիորեն հանդուրժել է հայկական պետության վերացումը, որը սկզբունքորեն պարզո-

լոշ ճանաչվել էր դաշնակից ու միացյալ տերությունների և անձամբ Թուրքիայի կողմից՝ համաձայն Բաթումի պայմանագրի:

Այս պետության՝ որպես միջազգային հանրության անդամի, Օսմանյան կայսրության մեջ գոյատևման իրավունքը ճանաչված շրջանակներում չի ուսումնասիրվել և հայ ազգաբնակչության ընդամենը խաղաղ գոյատևելու իրավունքը չի կարող համարվել արդյունավետ, երբ խեղդում են հայ ժողովրդի իրավունքները կամ հանգստացնում են միջազգային հանրությանը՝ հայ ժողովրդի հանդեպ ունեցած իրենց պատասխանատվության տեսակետից:

Ատյանը արձանագրում է, որ ժողովրդի ճակատագիրը երբեք չի կարող համարվել բացառապես ներքին գործ. թեկուզ և բարի տրամադրված սուվերեն պետությունների քմահաճույքների առարկա: Հայ ժողովրդի հիմնական իրավունքներն ուղղակիորեն առնչվում են միջազգային հանրությանը, որը լիազորված է և պալտավոր է ապահովել այդ իրավունքների հարգումը, մանավանդ, երբ դրանք բացահայտորեն անտեսվում են իր անդամ որևէ պետության կողմից: Հենց այս մասնավոր դեպքում այս եզրակացությունն ավելի ևս հիմնավորվում է այն փաստով, որ նախքան Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրությամբ ազգերի ինքնորոշման իրավունքի որոշակի հաստատումը՝ հայ ժողովրդի իրավունքները արդեն ճանաչվել էին միջազգային հանրության ներկայացուցիչների վերահսկողության տակ գտնվող շահագրգիռ պետությունների կողմից:

2. Ցեղասպանության առնչությամբ

1. Ցեղասպանության մեղադրանքին առնչվող ընդհանուր անհրաժեշտ կանոններ.

Ըստ ցեղասպանության ոճրի կանխման և պատժի վերաբերյալ համաձայնագրի, որը 1948 թվի դեկտեմբերի 9-ին ընդունվել է Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից, ցեղասպանությունը «Միջազգային օրենքով ոճիր է»՝ անկախ նրանից, թե իրագործվում է խաղաղ պայմաններում, թե պատերազմի ժամանակ (1-ին կետ): Ցեղասպանություն համարվում է ամեն մի գործողություն որն իրագործվում է բնաջնջման մտադրությամբ, ամբողջովին կամ մասամբ, ազգային, բարոյական, ռասայական կամ կրոնական խմբի հանդեպ՝ հետևյալ դեպքերում՝

ա) խմբի անդամների սպանությունը.

բ) խմբի անդամներին պատճառած լուրջ մարմնական կամ հոգեկան հարված.

գ) կյանքի խմբակային պայմաններին կանխամտորեն հասցված հարված, այն հաշվով, որ հասցնի դրա ֆիզիկական ոչնչացմանը՝ ամբողջապես կամ մասնակիորեն.

դ) հարկադիր միջոցների նախատեսում, որով կանխվում են ծնունդները խմբի ներսում.

ե) մի խմբի երեխաներին բռնի տեղափոխելը մի ուրիշ խումբ (2-րդ կետ).

Համաձայն 3-րդ հոդվածի, պետք է պատժվեն հետևյալ գործողությունները՝

ա) ցեղասպանությունը.

բ) ցեղասպանություն գործելու գաղտնի համաձայնությունը.

գ) ցեղասպանության ուղղակի և մասսայական հրահրումը.

դ) ցեղասպանություն կատարելու փորձը.

ե) մասնակցությունը ցեղասպանությանը:

Վերջապես, 4-րդ կետը վերապահում է, որ վերոհիշյալ գործողություններից մեկում մեղադրվող անձինք պետք է պատժվեն «անկախ այն բանից, թե նրանք սահմանադրորեն պատասխանատու դեկավարներ են, հասարակական գործիչներ, թե մասնավոր անձինք»:

Առյանը նկատի է առնում, որ այս կետերը պետք է ընդունվեն որպես որոշակի հանգամանքներ, որոնց հիման վրա ցեղասպանությունը պետք է պատժվի՝ համաձայն ազգերի իրավունքի, անկախ այն փաստից, թե գոյություն ունեն որոշակի ավելի լայն սահմանումներ:

Այս համաձայնագիրը պաշտոնապես ուժի մեջ է մտել 1951 թվի հունվարի 12-ին՝ իսկ Թուրքիայի կողմից վավերացվել էր 1950 թվի հուլիսի 31-ին: Սակայն սրանից չպետք է հետևեցնել, թե ցեղասպանության գործողություններն օրենքով չեն կարող դիտվել որպես մեղադրական ակտ, եթե նման գործողություններն իրագործվել են կամ նախքան համաձայնագիրը ուժի մեջ մտնելը կամ էլ՝ իրագործվել են համաձայնագիրը վավերացրած մի որևէ պետության տարածքում: Համաձայն համաձայնագրի՝ ստորագրյալ պետությունները պարտավոր են կանխել կամ պատժել ամեն մի ոճրագործություն, անկախ որևէ փաստաթղթի, որը կդիտվի որպես օրենքի դեկլարատիվ, քանի որ այդպես վարվելով դատապարտվում է ցեղասպանությունն ինքնին:

Փաստաթղթի այս դեկլարատիվ ուժը բխում է համաձայնագրի հենց անմիջական ձևակերպումից: Նախաբանում պայմանագիր կողմերը «ընդունում են, որ պատմության ընթացքում ցեղասպանությունը մարդկությանը ծանր կորուստներ է պատճառել» և «հաստատում են» 1-ին կետը առ այն, որ ցեղասպանությունը որակվում է որպես ոճիր՝ ըստ ազգերի իրավունքի կանոնակետերի: Այս սահմանումը անպայմանորեն նշանակում է, որ այս ոճիրն իրագործվել է նախքան 1948 թվի դեկտեմբերի 9-ը: Ավելին, դա ընդհանուր առմամբ ընդունված է միջազգային իրավական դոկտրինայում, որն արտացոլում է պետությունների միասնական խղճի անժխտելի իրողությունը: Այնքան էլ կարևոր չէ, թե ցեղասպանություն տերմինն ընդամենը վերջերս է ստեղծվել: Միակ տեղին կետն այն է, որ դրա նկարագրած գործողությունները վաղուց են դատապարտվել:

Քանի որ այդպիսի դեկլարատիվ ուժը ընդունված է, ապա հարկ չկա, որ Առյանը որոշի համաձայնագրով վավերացված ցեղասպանությունն արգելող կանոնի ծագման ճշգրիտ տարեթիվը: Առյանի նպատակների համար բավական է ապացուցել, որ այս կանոնակետը անվիճելիորեն ուժի մեջ էր այն ժամանակ,երբ վերոհիշյալ կոտորածներն իրագործվում էին: Դա պարզորեն ուրվագծվում է այն արարքներից, որոնք կատարվել են և այն հայտարարություններից, որ արվել են հայկական հարցի կապակցությամբ, և «մարդկության օրենքները» բազմաթիվ առիթներով մեղադրել են օսմանյան կառավարության հետապնդած սիստեմատիկ բնաջնջումների քաղաքականությունը:

Առյանը ցանկանում է շեշտել, որ այդպիսի օրենքները չեն արտացոլում անհրաժեշտ բարոյաէթիկական դրույթներ, նրանք նաև պարունակում են դրական իրավական պարտավորություններ, որոնք չեն կարող ան-

տեսվել պետությունների կողմից այն պատրվակով, թե դրանք պաշտոնապես չեն արձանագրվել պայմանագրում. ինչպես դա հաստատված է Մարտենսի օրինակով՝ որպես պատերազմի օրենքի նեղ շրջանակի: Ավելին, առաջին աշխարհամարտի ժամանակ իրագործված ոճիրների մեղադրանքը հաստատում է նույն այն բանի համոզմունքը, որ նման հանցանքները չի կարելի իրավականորեն հանդուրժել՝ անգամ եթե ոչ մի գրավոր օրենք որոշակիորեն չարգելի դրանք: Ատյանն այս առիթով հայտարարում է, որ նման դատապարտում հնչել է մարդկության դեմ գործած, ինչպես նաև պատերազմի հանցանքների առիթով: Բացի այդ, պետք է ընդգծվի, որ Սևրի պայմանագրի 230-րդ կետը հստակորեն կոչ էր անում Թուրքիային պատասխանատվության կանչել Թուրքիայի տարածքում իրագործված կոտորածների հանցապատճառով: Իհարկե, այս պայմանագիրը չի վավերացվել և նրա վերապահած պատժի պարտավորությունը երբեք չի գործադրվել: Այնուհանդերձ, այն ժամանակաշրջանի պետություններն անկասկած տեղյակ էին ոճրի անօրինությունից, որը մենք այսօր անվանում ենք ցեղասպանություն:

Այդ պատճառով ատյանը նկատում է, որ ցեղասպանությունը օրենքով արդեն արգելված էր հայ ժողովրդի առաջին կոտորածներից սկսած, մինչդեռ 1948 թվի համաձայնագիրը նպաստում էր ընդամենը դրա պաշտոնական արտահայտմանը և, անշուշտ, օրենքի այն կանոնի հարմար ձևակերպումը, որն անհրաժեշտ է այս Ատյանի առջև դրված դատական մեղադրանքների հիմնակազմ փաստերի համար:

2. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔԸ

Հետևյալ դիտումները, կարծում ենք, անհրաժեշտ կլինեն քննարկելու համար Ատյանին ներկայացված վկայությունները, որոնց բովանդակությունը բերվում է ստորև:

Կասկած լինել չի կարող, որ հայերը կազմում են ազգային խումբ՝ համաձայն ցեղասպանության օրենքից դուրս հայտարարող օրենքի: Այս եզրակացությունն ավելի ակնհայտ է, քանի որ հայերը կազմում են ինքնորոշման իրավունքով պաշտպանվող ժողովուրդ,որն անվերապահորեն ճշանակում է, որ նրանք նաև կազմում են մի խումբ, որի ոչնչացումը օրենքից դուրս է հայտարարված՝ ըստ ցեղասպանությանը վերաբերող օրենքի: Նկատի առնելով բռնությունների իրողությունը, կասկած չկա, որ դրանք կազմում են ցեղասպանություն: Խմբի անդամների սպանության, նրանց ֆիզիկական և մտավոր ամբողջության վրա կատարված ծանրագույն գրոհների փաստը, այդ խմբի ենթարկումն այնպիսի վիճակների, որ տանում են անպայման դեպի նրանց մահը, հստակորեն ապացուցվում են Ատյանին ներկայացված ամբողջական և աներկդիմի ապացույցներով: Դատավարության ընթացքում Ատյանը գլխավորապես հիմնվել է 1915-1917թթ. իրագործված կոտորածների վրա, որոնք ամենածայրահեղ օրինակն են այն քաղաքականության, որ պարզորեն ազդարարվել են 1894-1896 թվերի իրադարձություններով:

Այդպիսի խմբի ոչնչացման հատուկ մտադրությունը, որը ցեղասպանության ոճրի բնորոշ բնութագիր է՝ նույնպես ապացուցված է: Այդ

առնչությամբ տեղեկագրություններն ու փաստագրությունները հստակորեն վկայում են հայ ժողովրդի սիստեմատիկ բնաջնջման քաղաքականության մասին, որը մերկացնում է 1948 թվի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի 3-րդ կետին վերաբերվող հատուկ դիտավորությունը:

Այս քաղաքականությունն իրագործվել է այն գործողություններով, որ անտարակույս բնորոշ էին թուրքական կամ օսմանյան իշխանություններին՝ մասնավորապես 1915-1917 թվերին կոտորածների ընթացքում: Ատյանը որպես պաշտոնական իշխանությունների կողմից իրագործված գազանությունների լրացում, նշում է, որ նրանք օգտագործել են չարանենգ պրոպագանդա և այլ միջոցներ՝ քաջալերելու համար քաղաքային բնակչությանը՝ հայերի դեմ ցեղասպանական գործողություններ կատարելու համար: Բացի այդ, նկատվել է, որ իշխանությունները հիմնականում հրաժարվել են միջամտել արյունահեղությունները կանխելուն, որի իրավունքը նրանք ունեին կամ էլ հրաժարվել են հանցագործներին պատժել (բացառությամբ երիտթուրքերի դատավարությունից): Այս վերաբերմունքը հավասարվում է ոճրագործության հրահրմանը և հանցավոր զանցառությանը և պետք է դիտվի այնքան խիստ, որքան այն ոճիրները, որ ակտիվորեն իրագործվում էին, և մանավանդ քողարկվում էին ցեղասպանության դեմ պայքարի օրենքով:

Ելնելով բերված ապացույցներից, Ատյանը հայտարարում է, որ կոտորածներն արդարացնելու թուրքական կառավարության բերած բազմաբնույթ պնդումները (խոռվություն, դավաճանություն և այլն) անհիմն են: Ատյանը շեշտում է,որ անգամ, եթե այդպիսի պնդումներն հիմնավորված լինեին, նրանք դարձյալ ոչ մի ձևով չէին կարող արդարացնել իրագործված կոտորածները: Ցեղասպանությունը մի ոճիր է, որը արդարացման կամ ներման ոչ մի հիմք չի ընդունում:

Այս պատճառներով Ատյանը գտնում է, որ հայ ժողովրդի ցեղասպանության մեղադրանքը, որ դրված է թուրք ղեկավարների վրա՝ հիմնավորվում է փաստերով:

3. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ատյանը վկայում է, որ կատարված ոճիրն ու մյուս հանցանքները իրագործվել են ընդդեմ մարդկության: Ցեղասպանությունը մի հանցանք է,որին ոչ մի վերապահում լինել չի կարող՝ ինչպես հաստատված է 1968 թվի նոյեմբերի 26-ին Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Պատերազմի հանցանքների և մարդկության դեմ գործած ոճիրների նկատմամբ վաղեմություն չտարածվելու մասին» հայտարարագրով:

Կոտորածների համար պատասխանատու բոլոր անձինք՝ անկախ նրանից, թե նրանք, «սահմանադրորեն պատասխանատու ղեկավարներ են, հասարակական գործիչներ, թե անհատներ», ենթակա են պատժի, որոնց պետությունները պարտավոր են հանդես գալ այս երաշխիքների պարզաբանմամբ,որոնք տրվել են արդարությունը ճնշելու համար: Պատժի հարցից բացի, ցեղասպանությունն ազգերի իրավունքի կոպիտ ոտնահարում է, որի համար թուրքական պետությունը պետք է պատասխանատվու-

թյուն կրի: Այս դրությունից ելնելով, նրա առջև դրված առաջին հիմնական պարտականությունն է՝ ընդունել փաստերը, առանց ձգտելու կոծկել կամ ճեճգափոխել այդ իրողությունը: Սա ինքնին ճվազագույն հատուցում կհանդիսանա հայ ժողովրդի կրած բարոյական անհաշիվ կորուստների դիմաց: Ատյանը ցանկանում է հատուկ ուշադրություն դարձնել այն փաստին, որ միջազգային փորձը,որ վերաբերում է թուրքական պետությանը սկսած այս դեպքերից, տալիս է հիմնավոր իրավական հիմք՝ հաստատելու, որ այս պետության ինքնությունը և անընդհատությունը չի փոխվել երկրի պատմության մեջ եղած փոփոխություններից՝ Օսմանյան կայսրության վախճանից ի վեր: Ոչ նրա տարածքային կորուստները, ոչ էլ քաղաքական համակարգի վերակազմակերպումը չեն եղել այնպիսին, որ տուժվեր նրա շարունակվող ինքնությունը ազգերի իրավունքի տեսակետից: Հետևաբար չի կարելի համարել, թե թուրք հաջողակ կառավարությունները, որ հրաժարվել են պատասխանատվությունից, արդարացվել են: Նրանց պատասխանատվությունը մնում է այն պետության վրա, որը նրանք ներկայացնում են միջազգային հանրության մեջ:

Ատյանը նշում է, որ հայ ժողովրդի իրավունքների ապահովման պատասխանատվությունը կիսող պետությունների վարքագծում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես հանցավորների՝ իրենց մեղքից հրաժարվելու ակնարկ: Իր նախորդների նման ներկայիս Թուրքիայի կառավարությունն էլ պարտավոր է կրել այս պատասխանատվությունը:

Այս տիպի ոճիրը ոտնահարում է միջազգային հանրության համար շատ կարևոր պարտավորությունները: Պետությունների պատասխանատվությունների վերաբերյալ վերջերս կազմված հոդվածի հեղինակներն այն ճշտորեն բնութագրել են որպես «պետության միջազգային ոճիր»՝ վերոհիշյալ հոդվածի դրույթների առումով, այլ կերպ ասած, սովորական քրեական օրենքի շրջանակներում: Որպես արդյունք և, ինչպես հաստատված է հայ ժողովրդի հանդեպ միջազգային հանրության հատուկ պարտավորություններով, այս հանրության յուրաքանչյուր անդամ իրավունք ունի թուրքական պետությանը պատասխանատվության կանչել՝ նրա պարտականությունների առնչությամբ և մասնավորապես հասնել նրա կողմից ցեղասպանության ճանաչման՝ թեկուզ այդ պետությունը պնդի ոճրի ժխտումը, և բացի այդ, լիազորված է ցանկացած չափի օգնություն և աջակցություն ստանալ հոգուտ հայ ժողովրդի՝ ինչպես նախատեսված է ազգերի իրավունքի իրավակետերով և Ալժիրի դաշնագրով՝ առանց «ուրիշ պետության գործերին ապօրինի միջամտելու» մեղադրանքով մեղադրվելու:

Վերջապես միջազգային ողջ հանրությանը հանձնարարված է՝ մասնավորապես ՄԱԿ-ի միջոցով ճանաչել ցեղասպանությունը և աջակցել հայ ժողովրդին մինչև վերջ: Չի կարելի արդարացնել կամ հանդուրժել այն փաստը, որ ոճիր գործվի միջազգային հանրության անդամ ժողովուրդներից մեկի նկատմամբ, կամ էլ հանդուրժել, որ առ այսօր անարդարացիորեն ուրացվի նման ոճիրը:

Հայերի ցեղասպանությունը, որ իրագործվեց առաջին աշխարհամարտի ժամանակ, իր տեսակի մեջ դարի առաջին գործողությունն էր,որից հետո ցեղասպանությունը և նրան զուգակից սարսափը լայն տարածում ստացան:

Այսօրինակ գազանությունների իրագործումը չի սահմանափակվել այնպիսի հասարակություններով, որ որոշ մարդիկ կարողանային բնութագրել որպես թերզարգացած: Ընդհակառակը, որոշ դեպքերում դրանք իրագործվել են, ընդհանուր առմամբ, ամենազարգացած և գիտական տեսակետից առաջնակարգ համարվող ազգերի կողմից: Փաստորեն, 20-րդ դարի, ընդհանուր առմամբ, ամենանշանակալի օրինակը ներառյալ առաջնակարգ տեխնոլոգիայի կիրառումը և նացիստների կողմից իրագործված եվրոպական հրեաների ցեղասպանության փորձառու կազմակերպումը՝ մի ոճիր է,որը պատճառ հանդիսացավ հազիվ ըմբռնելի չափի մարդկային կորուստների և որը, վերջիվերջո, հասցրեց մոտ 6 միլիոն մարդու ոչնչացման:

Նախորդ համաժողովներում Ատյանն առիթ է ունեցել մեղադրել նաև Սալվադորի ժողովրդի (1981 թվի փետրվարի 11-ի որոշում), Արևելյան Թայմորի Մորերե ցեղի (1981 թվի հուլիսի 21-ի որոշում) և Գվատեմալայի հնդկացի ժողովրդի (1983 թվի հունվարի 31-ի որոշում) դեմ գործված ցեղասպանությունները:

ԱՅՍ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ

Ի պատասխան տրված հայցապահանջների, Ատյանը այսպիսով գտնում է, որ՝

Հայ ազգաբնակչությունը կազմել և կազմում է ժողովուրդ, որի թե՛ անհատական և թե՛ միասնական հիմնական իրավունքները պետք է հարգվեին և պետք է հարգվեն միջազգային իրավունքի տեսակետից:

Հայ ազգաբնակչության խմբերի բնաջնջումը կոտորածների և ջարդերի միջոցով սահմանվում է ցեղասպանություն՝ անկախ 1948 թվի դեկտեմբերի 9-ի ցեղասպանության ոճիրը կանխելու և պատժելու վերաբերյալ համաձայնագրի մեջ եղած սահմանափակումներից: Նկատի առնելով այս ոճրի դատապարտումը, վերոհիշյալ համաձայնագիրը գոյություն ունեցող այն օրենքի բացատրականն է, որը նկատի է առնում մեղադրական գործողությունների ժամանակ արդեն ուժի մեջ մտած կանոնները:

Երիտթուրքերի կառավարությունը մեղադրվում է այս ցեղասպանության մեջ՝ 1915-1917 թվերին կատարած մեղսագործությունների տեսակետից:

Հայերի ցեղասպանությունը նաև «միջազգային ոճիր է», որի համար թուրքական պետությունը պետք է ստանձնի պատասխանատվություն՝ առանց մեջտեղ բերելու պետության գոյության ընդհատության պատրվակը՝ այդ պատասխանատվությունից խուսափելու նպատակով:

Այս պատասխանատվությունը նախ և առաջ նշանակում է պարտավորվել պաշտոնապես ճանաչել կատարված ցեղասպանության իրողությունը և հայ ժողովրդի կրած կորուստները:

Միավորված Ազգերի Կազմակերպությունը և իր յուրաքանչյուր անդամ իրավունք ունի պահանջել այս ճանաչումը և նեցուկ կանգնել հայ ժողովրդին մինչև վերջ:

X. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ
Բ Ա Ն Ա Ձ Ե Վ Ը
1. «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ»
18 ՀՈՒՆԻՍԻ 1987Թ.

Եվրոպական խորհրդարանը նկատի ունենալով՝

- սոցիալիստների խմբի անունից պր. Սաբիի և մյուսների ներկայացրած առաջարկությունը Հայկական հարցի քաղաքական լուծման մասին (փաստաթուղթ 2-737/84թ.),

- պր. Կոլոկոտրոնիսի ներկայացրած առաջարկությունը Հայկական հարցի և ապրիլի 24-ը Հայկական ցեղասպանության հիշատակի օր հայտարարելու մասին (փաստաթուղթ 2-360/ 85թ.),

- Եվրոպական խորհրդարանի քաղաքական հանձնաժողովի զեկուցագիրը (փաստաթուղթ 2-33/ 87թ.),

ա) հաշվի առնելով՝

- պր. Ժակեի և նրա համախոհների ներկայացրած առաջարկությունը հայ ժողովրդի կացության մասին (փաստաթուղթ 1-782/ 81թ.),

- սոցիալիստների խմբի անունից տիկ. Դյուպորի և պրն. Գլինի ներկայացրած առաջարկությունը Հայկական հարցի քաղաքական լուծման մասին (փաստաթուղթ 1-735/ 83թ.),

- տիկ. Դյուպորի գրավոր հարցումը Հայկական հարցի մասին,

- Եվրոպական խորհրդի մշակութային գործերի մինիստրների խորհրդակցության 1986թ. նոյեմբերի 13-ին ընդունված որոշումը, որը վերաբերվում է եվրոպական ճարտարապետական ժառանգության պահպանությանը՝ ներառյալ եվրոպական տնտեսական համագործակցության երկրների տարածքից դուրս գտնվող հուշարձանները,

բ) համոզմունք հայտնելով, որ Թուրքիայում բնակվող հայ ժողովրդի ճանաչումն իսկ ենթադրում է նրա ճանաչումը որպես ինքնատիպ էթնիկական, մշակութային, լեզվական և կրոնական փոքրամասնություն,

գ) նկատի ունենալով, որ հայերը ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիայի համաձայն այդ իրադարձությունները (1915թ. կոտորածները) որակում են որպես կազմակերպված ցեղասպանություն,

դ) նկատի ունենալով,որ թուրքական պետությունը մերժում է ցեղասպանության մեղադրանքը որպես անհիմն,

ե) հաստատելով, որ թուրքական կառավարությունը, մերժելով մինչև օրս ճանաչել 1915թ. ցեղասպանությունը, շարունակում է այդպիսով զրկել հայ ժողովրդին իր սեփական պատմության իրավունքից,

զ) նկատի ունենալով, որ պատմականորեն ապացուցված Հայկական ցեղասպանությունը մինչև այժմ ոչ ենթարկվել է քաղաքական դատապարտման և ոչ էլ ստացել է համապատասխան հատուցում,

է) նկատի ունենալով, որ Թուրքիայի կողմից Հայկական ցեղասպանության ճանաչումը այսուհետև կդիտվի որպես հայերի նկատմամբ բարոյական իրավունքի վերականգնման խորապես մարդկային ակտ, որը միայն պատիվ կարող է բերել թուրքական կառավարությանը,

ը) խորապես ափսոսանք հայտնելով և դատապարտելով 1973-ից 1986թթ. ընթացքում հայկական խմբավորումների անհիմնաստ ահաբեկչությունը, ինչպես նաև բազմաթիվ մահափորձեր, որոնց հետևանքով զոհվե-

ցին կամ վիրավորվեցին բազմաթիվ անմեղ մարդիկ, ինչը դատապարտվեց հայ ժողովրդի ճնշող մեծամասնության կողմից,

բ) նկատի ունենալով, որ իրարահաջորդ թուրքական կառավարությունների անհաշտ դիրքորոշումը Հայկական հարցի նկատմամբ ոչ մի կերպ չի նպաստել լարվածության թուլացմանը՝

1.Այն կարծիքը է հայտնվում,որ Հայկական հարցը, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների հարցը պետք է քննարկվեն Թուրքիայի և Եվրոպական Տնտեսական Համագործակցության միջև գոյություն ունեցող հարաբերությունների շրջանակներում. ընդգծում է, որ ժողովրդավարությունը կարող է արմատապես հաստատվել երկրում (Թուրքիայում) այն պայմանով միայն, եթե այդ երկիրը ճանաչի և հարստացնի իր պատմությունը իր էթնիկական և մշակութային այլազանությամբ:

2. Գտնում է, որ ողբերգական իրադարձությունները, որ տեղի ունեցան 1915-1917թթ. Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ, հանդիսանում են ցեղասպանություն, համաձայն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «Ցեղասպանությունը կանխելու և դրա համար պատժելու մասին» կոնվենցիայի:

Նշում է միաժամանակ,որ ժամանակակից Թուրքիան պատասխանատու չի կարող համարվել Օսմանյան կայսրության հայ բնակչության ողբերգության համար և ամենայն հաստատակամությամբ ընդգծում է, որ պատմական այդ իրադարձությունների ճանաչումը որպես ցեղասպանություն առհիմ չի կարող հանդիսանալ քաղաքական, իրավական կամ նյութական որևէ պահանջի այսօրվա Թուրքիայի նկատմամբ:

3. Պահանջում է (Եվրոպական) խորհրդից ճնշում գործադրել ներկայիս կառավարության վրա,որպեսզի վերջինս ճանաչի 1915-1917թթ. հայերի հանդեպ կազմակերպված ցեղասպանությունը և այդպիսով նպաստի քաղաքական երկխոսության հաստատմանը Թուրքիայի և հայերի լիազոր պատվիրակների միջև:

4. Ելնում է նրանից, որ հայ ժողովրդի դեմ անցյալում երիտթուրքական կառավարության գործադրած ցեղասպանության ներկայիս ճանաչումից հրաժարումը թուրքական կառավարության կողմից, Հունաստանի հետ գոյություն ունեցող վիճելի հարցերում միջազգային իրավական նորմերի կիրառումից հրաժարումը, Կիպրոսում թուրքական օկուպացիոն զորքերի պահպանումը, ինչպես նաև քրդական իրադարձությունների ժխտումը, այդ երկրում (Թուրքիայում) իսկական պառլամենտական ժողովրդավարության բացակայությունը, անհատական, հասարակական ու հատկապես կրոնական ազատությունների ոտնահարումը՝ այս ամենը հանդիսանում են անհաղթահարելի արգելքներ Եվրոպական Տնտեսական Համագործակցության կազմի մեջ Թուրքիայի հնարավոր ընդունման հարցի քննարկման համար:

5. Նկատի ունենալով տեղի ունեցած (հայ ժողովրդի) ողբերգությունը, միանում է ազգային ինքնատիպությունը զարգացնելու նրա ցանկությանը, երաշխավորելու իր իրավունքը որպես փոքրամասնություն և անարգել օգտվելու մարդու և քաղաքացիների իրավունքներից, ինչպես որ դրանք սահմանված են մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի դրույթներում ու նրա համապատասխան արձանագրություններում:

6. Վճռականորեն պահանջում է,որ Թուրքիայում ապրող հայ փոքրամասնության ազգային ինքնության, նրա լեզվի, կրոնի, մշակույթի և կրթության համակարգի նկատմամբ ցուցաբերվի արդար վերաբերմունք, նաև հանդես է գալիս պատմական հուշարձանների պահպանության գործի բարելավման, այդ թվում նաև՝ թուրքահայերի կրոնական-ճարտարապետական ժառանգության պահպանման ու կոնսերվացման օգտին և ցանկություն է հայտնում, որպեսզի եվրոպական տնտեսական համագործակցությունն ուսումնասիրի այդ նպատակին օժանդակող հնարավոր միջոցներ ձեռնարկելու հարցը:

7. Այս կապակցությամբ կոչ է անում Թուրքիային անշեղորեն պահպանել իր երկրում ոչմահմեդական փոքրամասնությունների իրավունքները, ինչպես որ այդ պարտադրում են նրան 1923թ. Լոզանի պայմանագրի 37-45-րդ հոդվածները, ստորագրված եվրոպական տնտեսական համագործակցության անդամ պետությունների մեծամասնության կողմից:

8. Համարում է, որ հուշարձանների պահպանությունը, ինչպես նաև թուրքահայերի կրոնական ճարտարապետական ժառանգության պահպանումն ու կոնսերվացումը պետք է դիտել որպես ժամանակակից Թուրքիայի տարածքում դարերի ընթացքում զարգացում ապրած բոլոր քաղաքակրթությունների՝ մասնավորապես Օսմանյան կայսրությանը մաս կազմած քրիստոնյա փոքրամասնությունների մշակութային ժառանգության պահպանմանը ուղղված լայն քաղաքականության բաղկացուցիչ մաս:

9. Կոչ է անում, այսպիսով, Եվրոպական Տնտեսական Համագործակցությանը՝ տարածել Թուրքիայի հետ համագործակցության համաձայնությունը նաև մշակութային ասպարեզի՝ այդ երկրում քրիստոնեական կամ այլ ինչպես,օրինակ, դասական անտիկ շրջանի, խեթական, օսմանյան և այլն քաղաքակրկրթությունների ժառանգությունը պահպանելու նպատակով:

10. Իր մտահոգությունն է հայտնում այն դժվարությունների առթիվ, որոնց առնչվում է Իրանի հայ համայնքը մայրենի լեզվի գործածության և կրոնական կանոններին համապատասխան կրթության գործը կազմակերպելու հարցում:

11. Հանդես է գալիս ընդդեմ Խորհրդային Միությունում հայ ազգաբնակչության անհատական ազատությունների խախտումների:

12. Վճռականորեն դատապարտում է առանձին կազմակերպությունների կողմից ի գործ դրվող բոլոր բռնի գործողություններն ու ահաբեկչական ձևերը, որոնք հատկանշական չեն հայ ժողովրդի համար, և հաշտության կոչ է անում հայերին ու թուրքերին:

13. Կոչ է անում եվրոպական տնտեսական համագործակցության անդամ երկրներին հռչակելու «20-րդ դարում գործադրված ցեղասպանությունների և մարդկության դեմ ոճրագործությունների հիշատակի օր», մասնավորապես, այն ոճրագործությունների, որոնց զոհ գնացին հայերն ու հրեաները:

Վավերացնում է իր պարտավորությունը՝ իրապես նպաստելու հայ և թուրք ժողովուրդների միջև բանակցությունների իրականացման նպատակը հետապնդող նախաձեռնություններին:

14. Հանձնարարում է իր նախագահին՝ սույն բանաձևը փոխանցելու (Եվրոպական պառլամենտի քաղաքական) հանձնաժողովին, Եվ-

ըոպական հորիզոնին, Եվրոպական Տնտեսական Համագործակցության անդամ-երկրների արտաքին գործերի մինիստրների խորհրդակցությանը, «ԵՏՀ-Թուրքիա» ընկերակցության խորհրդին,ինչպես նաև թուրքական, իրանական և սովետական կառավարություններին և ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Փաստաթուղթ 8091
24 ապրիլի, 1998

2. 1915թ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գրավոր հռչակագիր թիվ 275

Այս գրավոր հռչակագրի պատասխանատուները միայն այն անդամներն են, որ ստորագրել են այն.

1. 1915թ. Ապրիլի 24-ը նշվում է իբրև Օսմանյան կայսրությունում ապրող հայերի ոչնչացման ծրագրերի իրագործման սկիզբ:

2. Այսօր մենք հիշատակում ենք այն տարելիցը, ինչը կոչվել է 20-րդ դարի առաջին ցեղասպանություն, և մենք ընդունում ենք հայ զոհերի հիշատակը իբրև հանցագործություն ընդդեմ մարդկության:

Ստորագրյալներ.
Ռուդի, Ֆրանսիա, SOC
Ջիմբրուն, Ֆրանսիա, LDR
Մաթթեի, Ֆրանսիա, LDR
Միշել, Ֆրանսիա, SOC
Սքրեյներ, Ֆրանսիա, EDG
Վրեթթոս, Հունաստան, SOC
Զիսսի, Հունաստաք, SOC
Կատսելի, Հունաստան, SOC
Մագինաս, Հունաստան, EPP/CD
Լոուլ, Հունաստան, UEL
Ստեռլեա, Ռումինիա, EDG
Լուկին, Ռուսաստան, LDR
Մարմագով, Ուկրաինա, UEL
Օլեյնիկ, Ուկրաինա, UEL
Զեբրովսկու, Ռուսաստան, NR
Սչայդեր, Ավստրիա, SOC
Քրիստոդուլիդես, Կիպրոս, UEL
Ֆրահմ, Դանիա, UEL
Կուլբակա, Ռուսաստան, UEL
Լազարեսկու, Ռումինիա, LDR
Վերսիագետ, Նիդեռլանդներ, SOC
Սիգմոն, Ֆրանսիա, EDG

Լենզագնե, Ֆրանսիա, SOC
Դիս, Նիդեռլանդներ, LDR
Վոլթջեր, Նիդեռլանդներ, SOC
Սլոբոդնիկ, Սլովակիա, SOC
Գոնգալես Լաքսե, Իսպանիա, SOC
Գրոս, Շվեկցարիա, SOC
Լորդ Ռասել-Ջոնսթոն, Միացյալ թագավարություն, LDR
Լաուրիսելա, Իտալիա, SOC
Թուրինի, Իտալիա, EDG
Ամորուստ, Իտալիա, EDG
Էլո, Ֆինլանդիա, SOC
Պերիերա Մարկիզ, Պորտուգալիա, SOC
Ստաս, Բելգիա, EPP/CD
Մոտա Ամարալ, Պորտուգալիա, EPP/CD
Վյուվադիլ, Չեխիայի Հանրապետություն, SOC
Փլեչաթա, Չեխիայի Հանրապետություն, EDG
Ստեպովա, Չեխիայի Հանրապետություն, SOC
Ջաճեսեք, Չեխիայի Հանրապետություն, EPP/CD
Սվոբոդա, Չեխիայի Հանրապետություն, SOC
Կալուս, Չեխիայի Հանրապետություն, EDG
Սքուիմեր, Ավստրիա, EPP/CD
Կուզմիկաս, Լիտվա, EDG
Ջինգերիս, Լիտվա, EDG
Գիլիս, Լիտվա, SOC
Ռասկինիս, Լիտվա, EPP/CD
Սյուփալիա, Լիտվա, LDR
Միրվոլլ, Նորվեգիա, UEL
Մաքսիմուս, Բելգիա, SOC
Նովակովա, Չեխիայի Հանրապետություն, EPP/CD[1]

[1] SOC – Սոցիալիստական խմբավորում
EPP/CD – Եվրոպական ժողովուրդների կուսակցության խմբավորում
EDG – Եվրոպական դեմոկրատական խմբավորում
LDR – Լիբերալ դեմոկրատական և բարեփոխիչների խմբավորում
UEL – Միացյալ եվրոպական ձախերի խմբավորում
NR – խմբակցությունում չգրանցված:

XI. ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՍԵՆԱՏԻ ԲԱՆԱՁԵՎԸ
5 մայիսի 1993թ.

Երկրի Սենատը հռչակում է՝

իր ամբողջական համերաշխությունը հայ համայնքի հետ, որը հանդիսանում է 20-րդ դարի առաջին ցեղասպանության զոհը, կրկին նշելով տարեդարձը մարդկության դեմ կատարված հանցագործության, որը շրջադարձային էր 1500000 հայերի ոչնչացման համար 1915-1917թթ. թուրքական կառավարության ձեռքերով:

Միաժամանակ հայտնում է իր խոր մտահոգությունը մարդու իրավունքների մշտական խախտումների համար, որոնք տեղի են ունենում Լեռնային Ղարաբաղի ինքնավարությունում հայ ազգաբնակչության նկատմամբ, որն այնտեղ կազմում է մեծամասնությունը:

Number of Resolution: 1554/92, S-92-1554.
Геноцид армян. Документы и комментарий, М., 2003, том 2, часть 1, стр. 723.

XII. ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 1915-1922ԹԹ. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ռուսաստանի Դաշնության Դաշնային Ժողովի Պետական Դումա

- հենվելով անհերքելի պատմական փաստերի վրա, որոնք վկայում են Արևմտահայաստանի տարածքում 1915-1922թթ. հայերի բնաջնջման մասին,

- հետևելով ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին 1948թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի ընդունած Հռչակագրի միջազգային ոգուն ու տառին,

- պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների վաղեմության ժամկետի մասին 1968թ. նոյեմբերի 26-ի միջազգագրին,

- ձգտելով վերածնել ռուսական պետության մարդասիրական ավանդութները, հիշեցնելով, որ Ռուսաստանի նախաձեռնությամբ եվրոպական մեծ տերությունները դեռ 1915թ. հայ ժողովրդի հանդեպ թուրքական կայսրության գործողությունները որակել են որպես «մարդկության դեմ ուղղված հանցագործություն»,

- նշելով, որ իր պատմական հայրենիքում եղբայրական հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը կատարվել է Ռուսաստանի քայքայման համար պայմաններ ստեղծելու նպատակով,

- դատապարտում է 1915-1922թթ. հայերի բնաջնջման կազմակերպիչներին,

- իր կարեկցանքն է հայտնում հայ ժողովրդին և ապրիլի 24-ը համարում ցեղասպանության զոհերի հիշատակի օր:

Собрание законодательств РФ, М., 1995, N 17, стр. 1497.
Ведомости Федерального Собрания РФ, М., 1995, N 14, стр. 1024.

XIII. ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
25 ապրիլի 1996թ.
ՕՐԱԿԱՐԳՈՒՄ - «ԱՊՐԻԼԻ 24-Ը ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՆԱԽԱԳԱՀ (Ապոստոլոս Կակլամանիս) – Տիկնայք և պարոնայք գործընկերներ, նիստը սկսվում է:

Քարտուղարուհի տիկ. Ֆոտինի Ստեֆանոպուլոսը, Իլիս մարզի պատգամավոր, ընթերցում է ստացված զեկույցներն ու դիմումները, որոնց թվում է նաև հունահայ երիտասարդական միությունն իր դիմումով, որով խնդրում է ապրիլի 24-ը հաստատել որպես թուրքերի կողմից հայերի ցեղասպանության հիշատակի օր:

Նախագահը հայտարարում է հրատապ հարցերը, որոնց պատասխանում են կառավարության անդամները, ապա նախագահում է խորհրդարանի փոխնախագահ պ. Նիկիտաս Վենիզելոսը:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկիտաս Վենիզելոս) – Տիկնայք և պարոնայք գործընկերներ: Անցնում ենք «Ապրիլի 24-ը հաստատվում է որպես թուրքական վարչակարգի կողմից հայերի ցեղասպանության հիշատակի օր» օրենքի առաջարկի, սկզբունքների ու հոդվածների քննարկմանը՝ ներքին գործերի, հանրային կառավարման և ապակենտրոնացման նախարարության իրավասությամբ: Պ. Օրեստիս Կոլոզովը հաստատվում է որպես հատուկ բանախոս Հունաստանի կոմունիստական կուսակցության կողմից:

Պարոնայք գործընկերներ, մեր նիստին արևմտյան կողմի ընդհանուր օթյակներում, նախապես «Էլեֆթերիոս Վենիզելոս» սրահի ցուցահանդեսն այցելելուց հետո, մասնակցում են Կիլկիս քաղաքի 2-րդ գիմնազիայի 65 աշակերտ-աշակերտուհիներ՝ ուղեկից հինգ պրոֆեսորների հետ:

(*Ծափահարություններ բոլոր թևերից*):

Խոսքը տրվում է «Քաղաքական գարունի» զեկուցող, Աթենքի պատգամավոր, պ. Մտեֆանոս Մտեֆանոպուլոսին:

ՍՏԵՖԱՆՈՍ ՍՏԵՖԱՆՈՊՈՒԼՈՍ – Տիկնայք և պարոնայք գործընկերներ: 1994թ. հոկտեմբերի 4-ին, այսինքն՝ մեկուկես տարի առաջ, «Քաղաքական գարունը» առաջարկել էր օրենքի նախագիծ՝ ապրիլի 24-ը թուրքական վարչակարգի կողմից հայերի ցեղասպանության հիշատակի օր հաստատելու մասին: Դարձյալ 1994թ. նոյեմբերի 22-ին մեր առաջարկն անցավ հանրային կառավարման, հանրային կարգի ու արդարադատության մշտական հանձնաժողովով և ընդունվեց բոլոր կուսակցությունների գործընկերների կողմից, բացի Հունաստանի կոմկուսի ներկայացուցչից, որին վերապահվեց դիրքորոշվել լիագումար նիստում:

Այդ ժամանակ պ. Սկիլլասկասը ժխտական դիրք չգրավեց: Վերապահվեց, որ իր կուսակցությունը կդիրքորոշվի լիագումար նիստում: Այդ օրվանից մինչև քիչ ժամանակ առաջ, արտգործնախարարության քաղաքական նախկին ղեկավարությունը, վախենալով, որ հանկարծ կխախտվեն Անկարայի հետ փխրուն հավասարակշռությունն ու հարաբերությունները, շարունակ միջամտում էր, որպեսզի մշտապես հետաձգվեր լիագումարում

հարցի քննարկումը: Միայն այժմ, իհարկե, Իմիայում կատարված դեպքերից հետո, դեպքեր, որոնք վերջին կույր ձևացողին անգամ համոզեցին, թե ինչպիսի մշտական նպատակներ ունի Անկարան, այսպես կոչված, Թրակիայի դատի հաստատումից հետո, որն այսօր ընթանում է Միացյալ Նահանգների սենատի և կոնգրեսի խառը խորհրդարանական հանձնաժողովում, կառավարությունը վճռեց, որ հասել է ժամը, որպեսզի հունական խորհրդարանը քննարկի մեր առաջարկը՝ 20-րդ դարի առաջին ցեղասպանության հիշատակի օր հաստատելու մասին: Լավ է ուշ, քան երբեք: Եվ վերջապես, 1915թ. ջարդից 81 տարի հետո այս քննարկումն ինքնին հարգանքի պարտադիր տուրք է մի ազնիվ եղբայր ժողովրդի, որը ոչնչացվեց, որպեսզի պարզապես ծառայություն մատուցվեր թուրք ղեկավարության սևած պանթուրանական զգացմունքներին:

Երկու միլիոն 26 հազար հայերից, որոնք մինչև 1914թ. ապրում էին թուրքական լծի տակ, հազիվ 100 հազար հոգի ողջ մնաց Թուրքիայի հողի վրա: Մեկուկես միլիոնը մորթվեց զորքի, չեթեների և ժանդարմների կողմից, թուրք ղեկավարության հրահանգով: Այդ ջարդերին մասնակցում էին նաև զինված թուրքերի խաժամուժ ամբոխներ:

Գուցե երբևէ Թուրքիան միջազգային հանրության կողմից ստիպված ճանաչի ոճիրը և հրապարակավ ներողություն խնդրի, գուցե թե խաժամուժի վրա գցի ցեղասպանության պատասխանատվությունը, ինչպես լկտիաբար փորձեց անել անհայտ կորած հույների և Գիպրոսի հույների դեպքում՝ Կիպրոսի շինծու թուրքական հանրապետության կեղծ նախագահ Ռաուֆ Դենկթաշը:

Սակայն, պարոնայք գործընկերներ, վերադառնանք մեր օրակարգին:

Մնացյալ հայերը, ովքեր փրկվեցին, թշվառ, անապաստան և հալածական, ապաստանեցին այսօրվա Հայաստանի Հանրապետության տարածքում, Միջին Արևելքի երկրներում, հատկապես Լիբանանում, Եվրոպայում, ու Ամերիկայում: Կանխածրագրված այդ ջարդը մի ընդհանուր թատերափորձ էր հաջորդող ցեղասպանությունների համար, ինչպես Պոմտոսի, Թրակիայի ու Փոքր Ասիայի հույների ցեղասպանությունը, քուրդ ժողովրդի ցեղասպանությունը, մեր կիպրացի եղբայրների ջարդը բռնազավթած հողերի վրա: Բայց այն դարձավ ընդհանրական թատերափորձ նաև այն ցեղասպանությունների համար, որոնք պիտի հետևեն: Չեմ ուզում չարիքի գուշակ լինել, սակայն հավատացած եմ, որ թուրքերը, իրենց հորջորջած ազգային մաքրությանը հասնելու համար, պիտի ձգտեն ունենալ ուրիշ զոհեր ևս:

Բարբարոսությունը, որ այդ ժամանակ դրսևորեց թուրքական պետությունը սահմռկեցուցիչ էր: Ջարդերը, բռնությունները, թալանը, սրբապղծությունները կազմում են անասելի սարսափի մի պատկեր, որն անկարող է ըմբռնել մարդկային միտքը և որը գերազանցում է ամեն տեսակ հիվանդ երևակայություն:

Ջարդից չփրկվեցին անգամ մանուկները: Արժե խորհրդարանին ներկայացնել հատված Երզնկայի մի բնակչի վկայությունից. «Քանի որ շատ երեխաներ ողջ էին մնացել և պտտվում էին իրենց սպանված ծնողների շուրջը, չեթեներին ուղարկում էին նրանց հավաքելու և սպանելու համար: Հավաքեցին հազարավոր երեխաների և բերեցին Եփրատի ափը:

Այնտեղ նրանց բռնում էին ոտքերից ու գլուխները խփում էին քարին: Եվ մինչ երեխաները թպրտում էին, նրանց նետում էին գետը»:

Այդուհանդերձ, միջազգային հանրությունը տակավին չի պարտադրել «քարեկամ ու դաշնակից», «ֆունդամենտալիզմի պատվար», «արևմտյան արժեքների առաջամարտիկ» Թուրքիային ճանաչելու ոճիրը և ներողություն խնդրելու ոչ միայն հայերից, այլև համայն մարդկությունից, քանզի ցեղասպանությունը որպես ոճիր ուղղված է համայն մարդկության դեմ: Սակայն կարծում եմ, որ դա կարվի, հենց որ Հայաստանում հայտնաբերվի նավթ և գոյություն ունենան նավթահորեր: Այսուամենայնիվ, ահավոր գործողության փաստերն անժխտելի են: Կան անձնական վկայություններ, անգամ թուրք զորավարների, որոնք դատվեցին ներքին հակասությունների շրջանակներում: Թուրքական փաստաթղթերը, դեսպանական և հյուպատոսական ծառայությունների զեկուցագրերը, անգամ այդ օրերին և մշտապես Թուրքիային դաշնակից գերմանացիների դատարանական վճիռները թուրքական գազանության անհերքելի ապացույցներն են:

Ես կկարդամ այդ ժամանակաշրջանի Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի միայն երկու հեռագիր, երկուսն էլ ուղղված Հալեպի նահանգապետարանին: Առաջինը թվագրված է 1915թ. սեպտեմբերի 9-ին: Ահա թե ինչ է հեռագրում նախարարը. «Հայերի համար Թուրքիայի հողի վրա ապրելու և աշխատելու իրավունքն ամբողջապես վերացված է: Կառավարությունը, այս առթիվ բովանդակ պատասխանատվությունը ստանձնելով, հրամայում է չխնայել անգամ օրորոցի երեխաներին»:

Սեպտեմբերի 13-ին Թալեաթը նորից հեռագրում է դարձյալ Հալեպի նահանգապետարան. «Նախապես տրված հրահանգի համաձայն, ձեզ հայտնում ենք, որ կառավարությունը ծրագրել է Թուրքիայում ապրող հայերի իսպառ ոչնչացումը: Ամեն ոք, ով կփորձի հակադրվել սույն հրամանին, չի կարող այսուհետ պետական պաշտոնյա լինել: Առանց կանանց, երեխաների և հաշմանդամների խտրության, որքան էլ ողբերգական լինեն ոչնչացման միջոցները, խղճի ձայնը խեղդելով՝ պետք է վերջ տրվի նրանց գոյությանը»: Այսպես էր հեռագրում ներքին գործերի նախարարը Հալեպի կուսակալին: Ինչպես և պոնտացիների ցեղասպանության պարագայում, այստեղ ևս ունենք բոլոր այն տվյալները, որոնք, 1948թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի՝ ցեղասպանության ոճրի կանխման և դատապարտման մասին ընդունած որոշման դրույթների համաձայն, կազմում են ցեղասպանության ոճիրը: Այդ ցեղասպանության համար Թուրքիան 1984թ. ապրիլի 14-ին Փարիզում դատապարտվեց ժողովուրդների մշտական դատարանի կողմից: Քարտուղարությանն եմ հանձնում հիշյալ արձանագրությունը:

Պատգամավոր պ. Ստեֆանոպուլոսը հանձնում է հիշյալ արձանագրությունը՝ The verdict of the Permanent peoples Tribunal on the Genocide of the Armenians: (Հետևում է ամբողջ տեքստն անգլերեն):

Բայց դրանից դեռ շատ առաջ Բեռլինի դատարաններն արդարացրին հայ հայրենասեր Սողոմոն Թեհլերյանին, որը հանուն հայ ժողովրդի սպանեց Թալեաթ փաշային: Մենք՝ հույներս ևս ինչ-որ բան գիտենք և հար-

գում ենք Արմոդիոսներին և Արիստոգիտոններին ոչ միայն Հունաստանում, այլև ամբողջ աշխարհում:

1984թ. ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատը, որն այսօր քննարկում է «Թրակիայի դատը», ապրիլի 24-ը ճանաչեց որպես հայերի ցեղասպանության հիշատակի օր:

(Պատգամավոր պ. Մ. Մտեֆանոպուլոսը հանձնում է նաև վերոհիշյալ արձանագրությունը):

ՍՏԵՖԱՆՈՍ ՍՏԵՖԱՆՈՊՈՒԼՈՍ – 1985թ. Ժնևում ՄԱԿ-ի ենթահանձնաժողովը, որն զբաղվում է խտրականության կանխման և ազգային փոքրամասնությունների պաշտպանության հարցերով, հայտարարեց, որ 1915թ. հայերի բնաջնջումը ցեղասպանության բնորոշ դրսևորում էր: Այսինքն՝ ուներ անարդարություն կազմող բոլոր տարրերը, առկա էին թե՛ առարկայական և թե՛ ենթակայական բոլոր տարրերը:

Այդ արձանագրությունը ևս հանձնում եմ հունական խորհրդարանին:

Պատգամավորը հանձնում է հիշյալ արձանագրությունը:

Հետևում է արձանագրության տեքստն անգլերեն:

ՍՏԵՖԱՆՈՍ ՍՏԵՖԱՆՈՊՈՒԼՈՍ - Բայց Եվրախորհրդարանը ևս, տիկնայք և պարոնայք գործընկերներ, 1987թ. հրապարակեց որոշում, որը ճանաչում է հայ ժողովրդի ցեղասպանությունը: Որոշումը կոչ է անում Միության անդամ պետություններին՝ հիշատակի օր հաստատել ցեղասպանությունների ու ոճիրների համար, որոնք կատարվել են 20-րդ դարի ընթացքում, և հատկապես հայերի ու հրեաների նկատմամբ:

Ուրեմն, մեզ համար նաև հասարակական պարտականություն է հիշատակի օր հաստատելը:

Պատգամավորը հանձնում է հիշյալ գրությունը.

«10. Հայկական հարց.
Գ-րություն A 2-33/87,

ՈՐՈՇՈՒՄ

Հայկական հարցին քաղաքական լուծում գտնելու համար, Եվրոպական խորհրդարանը՝

- նկատի ունենալով Հայկական հարցի քաղաքական լուծման համար սոցիալիստական խմբի անունից պ. SABY-Ի և այլոց ներկայացրած որոշման առաջարկը (գրություն 2-737/84),
- նկատի ունենալով Հայկական հարցի վերաբերյալ և ապրիլի 24-ը հայերի ցեղասպանության հիշատակի օր հռչակելու վերաբերյալ պ. Կոլոկոտրոնիի ներկայացրած որոշման առաջարկը (գրություն B 2-360/85),
- նկատի ունենալով Քաղաքական հանձնաժողովի զեկուցագիրը (գրություն A 2-33/87),

Ա. Հիշեցնելով

- պ. Jauet-ի և այլոց ներկայացրած որոշման առաջարկը հայ ժողովրդի վիճակի մասին (գրություն 3782/81),
- սոցիալիստական խմբի անունից տիկ. Duport-ի և պ. Glinne-ի ներկայացրած որոշման առաջարկը Հայկական հարցի վերաբերյալ (գրություն 1-735/83),
- տիկին Duport-ի գրավոր հարցումը Հայկական հարցի վերաբերյալ (1),

- մշակույթի նախարարների որոշումը, որոնք նիստ էին գումարել 1986թ. նոյեմբերի 13-ի խորհրդի շրջանակներում, եվրոպական ճարտարապետական ժառանգության պահպանման առնչությամբ, ներառյալ նաև այն, ինչը գտնվում է համայնքի տարածքից դուրս,

բ. համոզմունք հայտնելով, որ Թուրքիայում հայ ժողովրդի ինքնության ճանաչումը որպես ազգային, մշակութային, լեզվական և կրոնական փոքրամասնության, բխում է նրա պատմության ճանաչումից,

գ. հաստատած լինելով, որ հայկական կողմն այդ դեպքերը համարում է կանխամտածված ցեղասպանություն՝ 1984թ. ՄԱԿ-ի Խարտիայի իմաստից ելնելով,

դ. նկատի ունենալով, որ թուրքական պետությունը ժխտում է ցեղասպանության մեղադրանքը որպես անհիմն,

ե. հավաստելով, որ առ այսօր թուրքական կառավարությունը, մերժելով ճանաչել 1915թ. ցեղասպանությունը, շարունակում է զրկել հայ ժողովրդին իր պատմության իրավունքից,

զ. քանի որ պատմականորեն ապացուցված հայերի ցեղասպանությունն առ այսօր չի արժանացել քաղաքական դատապարտման և համապատասխան վնասի հատուցման,

է. նկատի առնելով, որ Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության ճանաչումը պետք է այսուհետև համարվի բարոյական վերականգնման խոր մարդասիրական արարք հայերի նկատմամբ, ինչը միայն պատիվ կբերեր թուրքական կառավարությանը,

ը. ցավ հայտնելով և դատապարտելով հայկական պատասխանատու խմբերի անմիտ ահաբեկչությունը 1973-1986թթ. ընթացքում, որի ժամանակ կատարվեցին սպանության շատ գործողություններ, որոնք դատապարտվեցին հայ ժողովրդի ճնշող մեծամասնության կողմից,

թ. քանի որ թուրքական բոլոր կառավարությունների բռնած կարծր դիրքը Հայկական հարցի նկատմամբ ոչ մի կերպ չի նպաստել լարվածության թուլացմանը.

1. Այն կարծիքին է, որ Հայկական հարցը և Թուրքիայում փոքրամասնությունների հարցը պետք է վերստին դրվեն Թուրքիայի ու Եվրահամայնքի հարաբերությունների շրջանակներում. ընդգծում է, որ իրական ժողովրդավարությունը որևէ երկրում կարող է կայանալ սոսկ այն նախապայմանով, որն այդ երկիրն ընդունում և հարստացնում է իր պատմությունն իր ազգային և մշակութային տարբերակումով:

2. Այն կարծիքին է, որ այն ողբերգական իրադարձությունները, որոնք տեղի ունեցան 1915-1917թթ. ի վնաս Օսմանյան կայսրության հողի վրա հաստատված հայերի, 1948թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի վավերացրած ցեղասպանության ոճրի կանխման և դատապարտման մասին ընդունված կոնվենցիայի համաձայն, հանդիսանում են ցեղասպանություն:

Ընդունում է, սակայն, որ այսօրվա Թուրքիան չպետք է պատասխանատու համարվի այն ողբերգության համար, որ ապրեցին Օսմանյան կայսրության հայերը և վճռականորեն ընդգծում է, որ պատմական այդ իրադարձությունների բնորոշումը որպես «ցեղասպանություն», չի նշանակում, որ կարող են ձևակերպվել որևէ տեսակի քաղաքական, իրավա-

կան կամ տնտեսական բնույթի պահանջներ այսօրվա Թուրքիայի նկատմամբ:
3. Պահանջում է խորհրդից հաջողացնել, որ Թուրքիայի այսօրվա կառավարությունը ճանաչի 1915-1917թթ. հայերի դեմ կատարված ցեղասպանությունը և ջանքեր գործադրի Թուրքիայի ու հայերի ներկայացուցիչների միջև քաղաքական երկխոսության հաստատման համար:
4. Այն կարծիքին է, որ այսօրվա թուրքական կառավարության մերժումը՝ ճանաչել երիտթուրքերի կառավարության կողմից իրագործված հայերի ցեղասպանությունը, Հունաստանի հետ ունեցած տարակարծությունների հարցում միջազգային իրավունքի կանոնների մտածված չկիրառումը, Կիպրոսում թուրքական զորքեր պահելը, քրդական հարցի գոյության մերժումը, ինչպես նաև իրական խորհրդարանական ժողովրդավարության բացակայությունը և անհատական ու ընկերակցական, հատկապես կրոնական ազատությունների ոտնահարումն այդ երկրում, կազմում են անհաղթահարելի արգելք Եվրահամայնքի մեջ Թուրքիայի հավանական ընդունման հարցը քննարկելու համար:
5. Պաշտպանում է՝ գիտակցելով այդ մարտիրոսական անցյալը, հայ ժողովրդի ցանկությունը՝ իր ինքնությունը ձեռք բերելու, որպես ազգային փոքրամասնություն իր իրավունքներն ապահովելու և մարդու, քաղաքացու իրավունքներն անարգել կիրառելու, ինչպես սահմանված է Մարդու իրավունքների հռչակագրում և համապատասխան արձանագրություններում:
6. Պահանջում է՝ պնդելով Թուրքիայում հայկական փոքրամասնության նկատմամբ արդարացի վերաբերմունք նրանց ինքնության, լեզվի, կրոնի, մշակութային ավանդույթների և կրթական համակարգի հարցերում և, դրան ավելացրած, հայերի պատմական հուշարձանների առավել լավ խնամքը և այդ ժողովրդի կրոնական ճարտարապետական ժառանգության պահպանումը Թուրքիայում, և մաղթում է, որ Եվրահամայնքը գտնի արդյունավետ միջոցներ այդ ջանքերին նպաստելու համար:
7. Այս առթիվ Թուրքիային կոչ է անում հավատարմությամբ հետևել ոչ մուսուլման փոքրամասնությունների պաշտպանության կանոնակարգին, որ նրան թելադրում են 1923թ. Լոզանի հաշտության 37-45-րդ հոդվածները, որոնք, ի դեպ, ստորագրել է Եվրահամայնքի անդամ պետությունների մեծագույն մասը:
8. Կարևորում է, որ պետք է ուշադրություն դարձվի հուշարձանների պահպանությանը, ինչպես նաև Թուրքիայի հայերի կրոնական ճարտարապետական ժառանգության պահպանությանն ու խնամքին, որպես առավել լայն քաղաքականության մաս, որի նպատակն է պահպանել մշակութային ժառանգությունը բոլոր այն քաղաքակրթությունների, որոնք դարերի ընթացքում առաջացան և իրենց պատմական ընթացքը շարունակեցին այսօրվա Թուրքիայի հողի վրա, և հատկապես քրիստոնյա փոքրամասնությունների քաղաքակրթությունների, այն ժողովուրդների, որոնց ընդգրկում էր Օսմանյան կայսրությունը:
9. Կոչ է անում Համայնքին՝ ընդլայնելու համագործակցությունը Թուրքիայի հետ նաև մշակույթի ոլորտում, այնպես, որ պահպանվեն ու արժեքավորվեն այդ երկրում քրիստոնյա և այլ մշակույթների մնացորդները, ինչպիսիք են դասական հնության, խեթերի քաղաքակրթության, օսմանյան քաղաքակրթության և այլն:

10. Հայտնում է իր մտահոգությունն այն դժվարությունների առիթով, որոնց հանդիպում է հայկական համայնքը Իրանում լեզվի հարցում և երիտասարդների դաստիարակության բնագավառում, որը պետք է հետևի հայոց կրոնի օրենքներին:
11. Քողոք է հայտնում անհատի ազատությունների խախտումների առթիվ, որոնք տեղի են ունենում Խորհրդային Միությունում հայ ժողովրդի դեմ:
12. Խիստ բողոք է հայտնում որևէ բռնության ու ամեն տեսակ ահաբեկչական գործողության դեմ առանձին անհատների և հայ ժողովրդի ոչ ներկայացուցչական կազմակերպությունների կողմից, և հայերին ու թուրքերին բարեկամության կոչ է անում:
13. Կոչ է անում Համայնքի անդամ պետություններին՝ սահմանելու 20-րդ դարում մարդկության, հատկապես հայերի և հրեաների դեմ կատարված ցեղասպանությունների ու ոճիրների հիշատակի օր:
14. Ստանձնում է պարտավորություն էապես նպաստելու հայ և թուրք ժողովուրդների միջև բանակցությունների նախաձեռնության առաջընթացին:
15. Հանձնարարում է իր նախագահին այս որոշումը փոխանցելու հանձնաժողովին, Եվրոպական խորհրդին, քաղաքական համագործակցության շրջանակներում գումարվող արտաքին գործերի նախարարների խորհրդին, ԵԱՀԿ-Թուրքիա կապի խորհրդին, Թուրքիայի, Իրանի և Խորհրդային Միության կառավարություններին, ինչպես նաև ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին»:

ՍՏԵՖԱՆՈՍ ՍՏԵՖԱՆՈՊՈՒԼՈՍ - Դժբախտ հրեա ժողովուրդը գոնե տեսավ կանցլեր Վիլլի Բրանդտին՝ ծնրադրած համակենտրոնացման մի ճամբարում, կարծեմ Առշվիցում, հրապարակավ ներողություն խնդրելիս համաշխարհային հասարակությունից, մարդկությունից:

Կա՞ որևէ մեկը, ոչ միայն այստեղ, ամբողջ աշխարհում, որ հավատա, թե Դեմիրելը կամ որևէ մեկ ուրիշ թուրք նախագահ կամ վարչապետ այդ նույն պատճառով երբևէ պիտի ծնրադրի Եփրատի ափին, Էրզրումի կիրճերում, Խարբերդի ձորերում և ներողություն պիտի խնդրի մարդկությունից՝ մեկուկես միլիոն հայերի ջարդի համար, երբ, մանավանդ, Թուրքիան ազգայնական, շովինիստական իր մի զառանցանքի մեջ, ենթգավիտելով պատմությունը և ծաղրելով իր իսկ զոհերին, հուշարձան ստեղծեց հայերի կողմից մորթված թուրքերի հիշատակին:

Սակայն, տիկնայք և պարոնայք գործընկերներ, երբ հեռավոր Լատինական Ամերիկայի որոշ երկրներ, ինչպիսին է Ուրուգվայը, ինչպիսին է Արգենտինան, ապրիլի 24-ը հաստատել են որպես հայերի ցեղասպանության հիշատակի օր, կարո՞ղ է Հունաստանը, ուր ապաստան գտան եղեռնից մազապուրծ 13 հազար որբեր, ինչ-ինչ նկատառումներով խուլ մնալ այս բարեկամ ժողովրդի խնդրանքին: Երբ Կիպրոսի խորհրդարանը, մի երկիր, որն անընդհատ թուրքական սպառնալիքի տակ է թե՛ իր հեռավորության պատճառով և թե՛ բոլորիս հայտնի այլ պատճառներով, որոշում է հրապարակել, որով իր զզվանքն է արտահայտում և անվերապահորեն դատապարտում է հայ ազգի ցեղասպանությունը, որ հայերին արմատախիլ արեց իրենց հայրենական հողերից, պաշտպանում է հայ ժողովրդի անհերքելի իրավունքների վերականգնումը, ընդգծում է երկարամյա ներդաշնակ համակեցությունը և եղբայրական համագործակցությունը Կիպրոսի հայերի հետ, նրանց ներդրումը երկրի քաղաքական, տնտեսական,

հասարակական ու մշակութային կյանքում և որոշում է, որպեսզի ապրիլի 24-ը հայտարարվի որպես հայ ժողովրդի ցեղասպանության հիշատակի ազգային օր, արդարացի՞ է, որ մենք, ազգային կենտրոնը, այն կենտրոնը, որ դրել է նաև միասնական պաշտպանության սկզբունքը, այսքան տարի չհայտնենք մեր կարծիքը:

Տիկնայք և պարոնայք գործընկերներ, բարոյականությունը, պատմությունը և քաղաքակրթության արժեքները պարտադրում են ճանաչել այդ ցեղասպանությունը, որով վերջ կդրվի անընդունելի մի առկախության, որ այսքան տարիներ պահպանվում է դարձյալ անընդունելի պատճառաբանություններով, մանավանդ որ հայ ժողովրդի հետ մեզ կապում են դարերի բարեկամությունը, նույն հավատքը, նույն կրոնը, նույն հավատամքը, նույն իդեալները: Քանի որ, բարեկամներ, չկա անվանականչ հանուն ազգի բոլոր մարտերում ընկածների, անգամ Կիպրոսում ներխուժման ժամանակ ընկավ Քարսեղ Քերբերյանը – չկա սպանվածների մի անվանականչ, որի ընթացքում հունական անունների կողքին չլսվեն նաև հայկական անուններ:

Ցեղասպանության 81-րդ տարելիցը ծայրահեղ պահն է, որպեսզի վերջապես վերականգնվի պատմական արդարությունը, որպեսզի չխամրի անմեղ զոհված մեկուկես միլիոն հայերի հիշատակը, բայց և որպեսզի ապագայում կանխվեն նման հանցագործություններն այլ ժողովուրդների դեմ:

Համոզված եմ, որ կառավարությունը կհամաձայնվի մեզ հետ և, որ հունական խորհրդարանի բոլոր խմբերը կորոշեն, վերջապես, ապրիլի 24-ը որպես հանիրավի նահատակված բոլոր հայերի հիշատակի օր:

Շնորհակալություն:

(*Ծափահարություններ*):

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկիտաս Վենիզելոս) – Խոսքը տրվում է ՊԱՍՕԿ-ի զեկուցող, Էվբիայի պատգամավոր պ. Սպիրիդոն Յատրասին:

ՍՊԻՐԻԴՈՆ ՅԱՏՐԱՍ – Տիկնայք և պարոնայք գործընկերներ: Նոր դարի արշալույսին քաղաքակիրթ աշխարհի ճնշող մեծամասնությունն է հեռացող դարի ընթացքում կատարված ցեղասպանությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների հիշատակի օր սահմանելը:

Թուրքական վարչակարգի կողմից հայոց եղեռնը ժամանակագրական տեսակետից 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն է: Թուրքական կառավարության հատուկ հրահանգը տեղական իշխանություններին՝ հայերի ոչնչացման մասին ոչ մի բացառություն չէր ընդունում: Երեխաներ, պատանիներ, ծերունիներ, վիրավորներ և հաշմանդամներ ոչնչացվեցին թուրքական ազգայնամոլության զոհասեղանի վրա: Ամբողջ մի ժողովուրդ կոտորվեց ամենաբարբարոս և անասնական եղանակով մի իշխանության կողմից, որը սառնասրտորեն ու նպատակադիր ծրագրեց նրա բնաջնջումը: Այս բնաջնջումը մի մեծ ոճիր էր:

Մյուս մեծ ոճիրն այն էր, որ այդ ցեղասպանությունն իրագործվեց քաղաքակիրթ ու քրիստոնյա Եվրոպայի աչքի առաջ և նրա հանցագործ հանդուրժողականությամբ: Մեր բարեկամների ու դաշնակիցների աչքի առաջ և նրանց հանդուրժողականությամբ այսօր էլ ապրում ենք Կիպրոսի բռնազավթման հետևանքները, դիմագրավում ենք թուրքական շարունակ-

վող սադրանքները մեր սուվերեն իրավունքների նկատմամբ, ամեն օր հավաստում ենք թուրքական վայրագությունները քրդերի նկատմամբ:

Դժվար է պատմության էջերում գտնել մեկ այլ օրինակ երկու ժողովուրդների, ինչպես հույներն ու հայերն են, որոնք դարեր շարունակ ընթացել են նույն արահետներով՝ երբեք առճակատման չդիմելով: Ընդհակառակը, նրանց ճակատագրերը համընկան միևնույն թշնամու բարբարոսության առաջ:

Ապրիլի 24-ը թուրքական վարչակարգի կողմից հայերի ցեղասպանության հիշատակի օր հաստատելու օրենքի առաջարկության ընդունումը և կիրառումը հանդիսանում է հարգանքի տուրքի ևվազագույն հատուցումը եղբայր ժողովրդի նկատմամբ: Հայ ժողովրդի հետ մեզ կապում է դարավոր բարեկամությունը: Մեզ կապում են ընդհանուր պայքարը և ընդհանուր տագնապը մեր ազգային, մշակութային, լեզվական ու կրոնական ինքնությունը հաստատելու համար: Մեզ շաղկապում է պատմության կեղծարարների միջազգային դատապարտման ընդհանուր պահանջը:

Հայ ազգը, Փոքր Ասիայի և Կովկասի առավել ընդարձակ շրջանի հնագույն ազգերից մեկը, քանկ է վճարել, ինչպես և հույները, ժամանակի մեծ ուժերի հակասությունների և թուրքական իշխանության ամբողջատիրական, ռասիստական քնույթի համար:

Շուրջ երկու միլիոն հայերից, որոնք մինչև 1914թ. ապրում էին Օսմանյան կայսրության արևելյան նահանգներում, միայն 100 հազարը վերապրեց թուրքական բռնազնակ տարածքի վրա: Ներքին գործերի նախարար Թալեաթի վայրագ հրահանգներով ոչնչացվեցին մեկուկես միլիոն հայեր: Մնացյալը, արհամարհված և անօթևան, ապաստան փնտրեցին ինչպես այսօրվա Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Մերձավոր Արևելքի, Եվրոպայի, Ամերիկայի այլ շրջաններում և Հունաստանում:

Այս կանխապես ծրագրված, լավագույնս կազմակերպված և իր չափերով հսկայական ջարդը հանդիսացավ գլխավոր թատերափորձը դրան հաջորդած ուրիշ ցեղասպանությունների՝ Պոնտոսի, Թրակիայի, Փոքր Ասիայի, ինչպես նաև քրդերի: Հայոց ցեղասպանությունը դարձավ նաև հրեաների ողջակիզման նախանմուշը, ինչպես լկտիաբար խոստովանել է ինքը՝ Հիտլերը: Այդ դեպքերի մասին ապացույցներն ու վկայությունները շատ են: 1915թ. թուրքական վարչակարգի կողմից հայ ժողովրդի դեմ կատարված ոճրի աներկբայելի ապացույցն է նաև հայկական սփյուռքի իրողությունը: Մեր առաջ է կենդանի վկայությունն այն իրադարձությունների, որոնք մի հնագույն և պատմական ժողովրդի դարձրին գաղթական ժողովուրդ: Բազմաթիվ անձնական վկայություններ, թուրքական պաշտոնական փաստաթղթեր, դեսպանական և հյուպատոսական զեկուցագրեր հավաստում են դարիս առաջին սրբապիղծ ցեղասպանության մասին:

Ես նույնպես կուզեմայի նշել Թուրքիայի արտգործնախարար Թալեաթի երկու հեռագրերը Հալեպի նահանգապետարան, որոնք ընթերցեց նախորդ բանախոսը: Կարող էի զանց առնել, բայց համոզված եմ, որ դրանք իրապես անհերքելի վկայություններ են: Եվ լավ կլինի դրանք կրկին շեշտվեն ու կրկնվեն նրանց համար, ովքեր տակավին փակում են իրենց աչքերն այդ մերկ իրականության առջև: «Հայերի համար Թուրքիայի հողի վրա ապրելու և աշխատելու իրավունքն ամբողջապես վերացված է»: Սա կառավարական հրահանգ է: «Կառավարությունը, այս մասին բռվանդակ

պատասխանատվությունը ստանձնելով, հրամայում է չբացառել անգամ օրորոցի երեխաներին»: Եվ անշուշտ, մի քանի օր անց ներքին գործերի նախարարը դիմում է նույնանման բովանդակության հեռագրով Հալեպի նահանգապետարան, շեշտելու համար, որ «նախապես տրված հրահանգի համաձայն, ձեզ հայտնում են, որ կառավարությունը ծրագրել է Թուրքիայում ապրող հայերի իսպառ ոչնչացումը: Ամեն ոք, ով կփորձի հակադրվել սույն հրամանին, չի կարող այսուհետ պետական պաշտոնյա լինել»: Եվ, իհարկե, որպեսզի տարընթերցում չծագի, շեշտում է, որ «առանց երեխաների, կանանց և հաշմանդամների խտրության, որքան էլ որ ողերգական լինեն ոչնչացման միջոցները, խղճի ծայնը խեղդելով՝ պետք է վերջ տրվի նրանց գոյությանը»:

Անշուշտ, նման պաշտոնական փաստաթղթերն առատ են, որոնց իսկությունը հաստատված է մասնագետ գիտնականների ու փորձագետների կողմից: Ի դեպ, այս փաստաթղթերն էլ կազմեցին հետագայում Թալեաթին սպանած հայ հայրենասեր Սողոմոն Թեհլերյանի՝ Բեռլինի դատարանի կողմից արդարացվելու հիմնական պատճառը: Ջանգվածային ջարդերը, բնակչության բռնի տեղաշարժերը և տարագրության ճանապարհին նրանց ոչնչացումը, հրկիզումները և ունեցվածքի թալանը, բռնաբարքները, անհետացումները, պաշտամունքային վայրերի պղծումներն ու երեխաների բռնի իսլամացումը կազմեցին մի որոշակի ազգային հավաքականության զանգվածային ոչնչացման ամբողջական ծրագրի գլուխները:

Ինչպես որ պոնտացիների ցեղասպանության պարագայում, այստեղ ևս առկա են բոլոր այն գործողությունները, որոնք, 1948թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի՝ ցեղասպանության ոճրի կանխման և դատապարտման համար ընդունած որոշման համաձայն, կազմում են ցեղասպանության ոճիրը: Մեր օրերում տեսնում ենք, որ նույն գործողությունները կրկնվում են գրավված Կիպրոսում և այսօր էլ՝ Քուրդիստանում: Մեր պարտքն է պահպանել հիշատակը և մատնանշել մեղավորին, որը ճշմարտության աղավաղման գագաթնակետում, նույնիսկ հուշարձան կանգնեցրեց հայերի կողմից թուրքերի ցեղասպանության համար. հանգամանք, որը ցույց է տալիս, թե թուրքական վարչակարգի զավթողական, շովինիստական և ռասիստական կորիզը նույնն է մնում, հակառակ ժամանակ առ ժամանակ նրա փոխակերպումներին:

Միջազգային հանրությունը պարտավոր է վերջապես ստանձնել իր պարտավորությունները, գիտակցելով, որ նման վերաբերմունքը հանդուրժելը նշանակում է հանցակից դառնալ:

Շատ կառավարություններ և խորհրդարաններ, այդ թվում նաև Եվրախորհրդարանը 1987թ. հունիսի 18-ին, ճանաչել են այս ցեղասպանությունը՝ ապրիլի 24-ը հայտարարելով որպես հիշատակի օր:

Եվրախորհրդարանի որոշումը, սակայն, մինչև օրս, ցեղասպանությունից 80 տարի անց, մնում առանց գործնական արձագանքի:

Միջազգային հանրությունը, ընտրողաբար վկայակոչելով ու կիրառելով միջազգային իրավունքի կանոնները և մարդու իրավունքների մասին համաձայնությունները, տակավին չի պարտավորեցրել թուրքական կառավարությանը՝ ճանաչել հայերի բնաջնջման պատմականորեն հավաստված փաստը: Ապրիլի 24-ը որպես թուրքական վարչակարգի կողմից մեկուկես միլիոն հայերի ցեղասպանության հիշատակի օր հաստատելը Հունաս-

տանի հայկական կազմակերպությունների հաստատուն պահանջն է, միաժամանակ նաև Հունաստանի նվազագույն պարտավորությունը պատմության հանդեպ: Արդար պահանջ, որի բավարարումը մի զենք կկազմի մոռացության դեմ, խղճի ընդարմացման դեմ, այլև, միաժամանակ, կդառնա նաև մի հնագույն ազգի, հույն ազգի հարգանքի տուրքի մատուցումը նույնպես մեկ ուրիշ հին, պատմական բարեկամի՝ հայ ազգին:

Ակնհայտ է, որ ճանաչումը և դատապարտումը պատմական դեպքերի, որոնք նվաստացնում են մարդկային արժանապատվությունը, և հարգանքի տուրքի մատուցումը վայրագ ու չարդարացվող բռնության զոհերին, ամեն մի քաղաքակիրթ հասարակական հանրության, յուրաքանչյուր մարդու պարտքն է: Եվ ոչ միայն: Այն հանդիսանում է նաև պատասխան անտարբերությանը և լկտիությանը: Հանդիսանում է պատասխան կատարված դեպքերի հանցավորությանը, մարդու իրավունքների ոտնահարմանը և խավարամտությանը: Վերջապես, հանդիսանում է անջնջելի խարանը մի գազանության, բայց միաժամանակ և պատգամը, որ հույների խորհրդարանը, հույն ժողովրդի ընտրած ներկայացուցիչների միջոցով, հղում է բոլոր ուղղություններով:

«Եթե ես չայրվեմ, եթե դու չայրվես, եթե մյուսը չայրվի, ինչպե՞ս խավարը լույս կդառնա», - նշել է քուրք բանաստեղծ Նազիմ Հիքմեթը: Հայերը, հույները, քրդերն ինքնազոհությամբ հաճախ են լուսավորել խավարը: Այսօրվա մեր որոշումը թող լինի հույսի պատգամ, որ մարդկությունն ապագայում չի վերապրի նման գազանություններ:

Շնորհակալություն:

(*Ծափեր բոլոր թևերից*):

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկիտաս Վենիզելոս) – Ձայնը տրվում է «Նոր ժողովրդավարության» բանախոս, Պիրեայի պատգամավոր պ. Անաստասիոս Ներանձիսին:

ԱՆԱՍՏԱՍԻՈՍ ՆԵՐԱՆՁԻՍ – Պարոն նախագահ, այսօր քննարկում ենք ապրիլի 24-ը քուրքերի կողմից հայերի ցեղասպանության հիշատակի օր հաստատելու հարցը: Այս խնդիրը շատ հին է: Թեման արծարծվեց նաև «Նոր ժողովրդավարության» նախորդ կառավարության կողմից, բայց չամբողջացավ: Ես նույնիսկ 1994թ. փետրվարի 24-ին պոնտացիներին նվիրված քննարկումից առաջ պատեհություն ունեցա հայտարարելու, թե որքան հրամայական է այդ խնդիրը: Այսօր, սակայն, առանձնակի կարևորություն ունի Ազգային ներկայացուցչության դիրքը սույն խնդրի հանդեպ:

Հունական պետությունը պարտք է Հայկական հարցին: Պարտք է, որովհետև մինչև հիմա այս դիրքից, այս կետից անցնել չի կարողացել: Բայց հունական պետությունը քննադատելի է նաև, որովհետև այն օրից, երբ այս առաջարկը մտավ հանձնաժողով, մինչև օրս անցել է ավելի քան 16 ամիս: Եթե հիշողությունս ինձ չի դավաճանում, հարցը հանձնաժողով է մտել 1994թ. նոյեմբերին, իսկ այժմ 1996-ի ապրիլին է: Այս բոլորն, իբր, հանուն նուրբ հավասարակշռությունների պահպանման, որոնք գոյություն ունեն կամ պետք է գոյություն ունենան Թուրքիայի հետ:

Չեմ հասկանում, թե ինչպե՞ս է հնարավոր ձեռք բերել որևէ հավասարակշռություն, երբ մի կողմից գազանությունն է, որը շարունակաբար

ցնութվում ու դրսևորվում է, իսկ մյուս կողմից անմեղ ժողովուրդներ: Այստեղ հայերն են, այլ դեպքում՝ ուրիշներ:

Հունական պետականությունը, պ. ճախագահ, այս առաջարկով այսօր իր պարտքն է հատուցում ճշմարտությանը: Իր պարտք է հատուցում ճշմարտությանը, որովհետև գոյություն ունի թուրքերի կողմից մի չարագործ փորձ՝ աղավաղելու այդ ճշմարտությունը ևս: Մտածել միայն, տեսեք, թե ուր են հասել, այդ մասին արդեն ասվեց, հուշարձան են կանգնեցրել՝ հարգելու այն զոհերին, ովքեր, իբր, կործանվել են հայ ժողովրդի պատճառով: Այսինքն, լկտիությունը հասել է գագաթնակետին, երբ դահիճը ներկայանում է որպես զոհ:

Այս քննարկումով հույն պետականությունը նաև իր պարտքն է կատարում քաղաքակրթության հանդեպ, որովհետև թուրքերն իրենց այս արարքով ցույց տվեցին, դժբախտաբար, որ քարի դարը և ատոմի դարը չունեն, այո, չունեն ոչ մի որակական տարբերություն: Ի դեպ, հայտնի է, որ գազանություններն ու ժամանակակից քաղաքակրթությունը հնարավոր չէ, որ գոյակցեն միևնույն հարկի տակ:

Ջուգահեռաբար, սակայն, այս առաջարկով հունական պետությունը միաժամանակ կատարում է բացարձակ քաղաքական արարք: Քաղաքական արարք է անցյալն արժեքավորելը, գազանությանը ժամանակին հակազդելը, որպեսզի ապագայում կանխվեն նման փորձերը: Մեկուկես միլիոն հայեր ձերբակալվեցին, եղեռնագործության ենթարկվեցին և բռնությամբ տարվեցին անգթության ուղիներով: Նրանց կեսը ոչնչացավ չարչարանքներից, սովից, զրկանքներից, Ասիայի կիզիչ արևից, տանջանքներից, իսկ մյուս կեսը չկարողացավ տեղ հասնել, որովհետև սպանվեց:

Սահմոկեցուցիչ են պահպանված նկարները, որոնք պատկերում են անմեղ մարդկանց կտրված գլուխների կույտեր, մարդիկ, որոնք ոչ մի հանցանք չունեին, որոնք այդ գազանությունն արդարացնող ոչ մի արարք չէին գործել: Նրանց միակ հանցանքն այն էր, որ հայ էին ծնվել, իսկ այդ բանը չէին կարող ընդունել դատողները, մարդկության գնահատողները, թուրքերի ազնվական ցեղը:

Տիկնայք և պարոնայք: Կարևոր է, որ մենք գնահատենք ժամանակը, երբ այս առաջարկը քննարկվում է խորհրդարանում: Այս տարին ձեռք է բերում մի կարևոր և նշանակալից առանձնահատկություն, որը հետևյալն է: Նախ՝ թուրքերն ընդամենը մի քանի ամիս առաջ, վերստին ոտք դրեցին հունական հողի վրա: Այս դեպքում սա արյունալի բռնության մի պատ չէ: Գերմանացիները ևս գարշելի դիակիզարաններ կանգնեցրին, դիակիզարաններ, որոնք, անկեղծ ասած, արատավորում են մեր քաղաքակրթությունը: Բայց նրանք արտահայտեցին իրենց զղջումը, ընդունեցին, ծունկի չոքեցին, արտասվեցին, ապաշխարանքի խոսքեր հայտնեցին, որոնց, կուզենայինք հավատալ, թե ճշմարիտ են: Իսկ այս դեպքում անգամ չեն ընդունում փաստը: Ընդհակառակը, առկա է մի հակադարձ շարժում, մի զզվելի փորձ՝ խեղաթյուրելու դեպքերը, դրանց իմաստը և չափերը:

Ուրիշ ժողովուրդներ նույնպես ստիպված եղան անցնելու սարսափի այդ ճանապարհները: Հրեաները ևս, ըստ Կտակարանի, հարկադրվեցին գաղթի և տարագրության: Սակայն այնտեղ կար Ավետյաց երկիրը: Իսկ այստեղ միակ ավետիսը մահն էր: Եվ այստեղ երկիրն այդ տարաբախտներին խնամելու և օգնելու համար չէր: Այն նրանց դիակներն իր

ընդերքում ընդունելու համար էր: Ահա թե ինչու հայերի ողջակիզումը մի առանձնակի նշանակություն ունի համայն մարդկության համար:

Ասացի, որ ներկա իրադարձությունները պետք է մեզ առավել զգույշ դարձնեն: Ուրեմն, թուրքերը հենց վերջերս ոտք դրեցին հունական հողի վրա: Մյուս կողմից, պանթուրանիզմն արտահայտվում է իր ամբողջ շուքով, ինչին էլ ակամայից նպաստեց հզոր Խորհրդային Միության կազմալուծումը, փոխարենը ստեղծվեցին մի ամբողջ խումբ պետություններ, որոնք սոսկ մուսուլմանական չեն, այլև թուրքալեզու են: Եվ դա մեծ նշանակություն ունի մեզ համար:

Եվ, վերջապես, որ Թուրքիան շարունակում է նույն մարտավարությունը, շարունակում է նույն գազանության արտահայտումը: Սկզբում Թագավորանիստի* բնակիչները քաղաքի անկումով, շարունակության մեջ 1922թ. Փոքր Ասիայի հույները և դրանից առաջ էլ Ցեղի, բայց և բալկանյան ժողովուրդների 400-ամյա ստրկությունը: Այնուհետև, 1955թ. Կոստանդնուպոլիսի դեպքերը, շարունակության մեջ՝ Կիպրոսը և ցայսօր նրա գրավված մնալը, և հիմա էլ, մեր օրերում՝ քրդերը:

Հարց է ծագում. երբ այս ամենը տեղի է ունենում քրիստոնյա Արևմուտքի աչքի առաջ, մինչդեռ բոլորս հանգիստ նստած ենք, ո՞վ պետք է արգելի Թուրքիային նորից ձեռնարկելու իր գործերը, և արդյոք ո՞վ է լինելու հաջորդ զոհը:

Հայտնի է, որ հայերը հանգիստ ժողովուրդ են, խաղաղասեր, ազնիվ ժողովուրդ, քաղաքակիրթ և բարձր հավատք ունեցող ժողովուրդ: Այստեղ եկան այրումաքամ, բայց կարողացան Դրապեզոնայի, Կոկինիայի, Դուրդուտիի** - այսօր Նեոս Կոսմոս – թիթեղածածկ խղճուկ բարաքներից հասնել նախանձելի մի աստիճանի: Շարունակեցին իրենց քաղաքակրթությունը, պահպանեցին ցեղային առանձնահատկությունները, աչքի լույսի պես պահում են իրենց լեզուն և կրոնը, և մինչև օրս ճշմարիտ հավատարմությամբ հոգածում են իրենց բարքերի, մշակույթի համար, մշտապես հեռվում են իրենց ցեղի արմատներին:

Ընութագրական է, որ Նիկեայում, որն իմ ընտրատարածքի խոշորագույն քաղաքապետարանն է և ընդգրկում է նաև առավել մեծ թվով հայերի, նորերս առանց պետական օգնության կառուցվել է մի հոյակապ շենք՝ հայկական ճարտարապետության ոճով, և ներառում է խաղադաշտ, դպրոց, մշակութային օջախներ:

Ուրեմն այս առաջարկի, այս քննարկման և մեր կայացնելիք որոշման նպատակն է արթնացնել և կենդանի պահել համաշխարհային հիշողությունը, գոնե վրդովել անտարբերությունը, որովհետև ոչ ոք չգիտի, թե հաջորդը ո՞ր ժողովուրդը կլինի:

Եվ վերջապես, այս առիթով և դիվանագիտական վերապահումներից դուրս, որ ի վերջո ցույց են տալիս մեր անզորությունը, մենք պետք է հուժկու ձայնով գոռանք՝ էլ ոչ մի ուրիշ ռասայականություն, էլ ոչ մի ուրիշ ցեղասպանություն, թուրքերի ոչ մի ուրիշ գազանություն:

«Նոր ժողովրդավարությունը» անվերապահորեն կանգնած է ապրիլի 24-ը թուրքերի կողմից հայերի ցեղասպանության օր հռչակելու դիրքերում:

---

* Նկատի ունի Կոստանդնուպոլիսը:

** Գաղթականների թաղամասեր Աթենքում:

Շնորհակալություն։

(*Ծափահարություններ «Մոր ժողովրդավարության» քևի կողմից*)։

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկիտաս Վենիզելոս) – Ձայնը տրվում է Հունաստանի կոմկուսի հատուկ բանախոս, Աթենքից պատգամավոր պ. Օրեստիս Կոլոզովին։

ՕՐԵՍՏԻՍ ԿՈԼՈԶՈՎ – Տիկնայք և պարոնայք պատգամավորներ։ Ոչ ոք չի կարող անտարբեր մնալ հայ ժողովրդի ապրած ողբերգության նկատմամբ։ Ոչ ոք չի ցանկանա իր հիշողությունից ջնջել ողբերգական բեռ ունեցող այնպիսի պատմական իրադարձությունները, ինչպիսիք 1915-1917թթ. կատարվել են այս ժողովրդի հետ։ Խոսքը սահմռկեցուցիչ մի արարքի մասին է, որն ընդգրկել է ցեղասպանության ծավալներ։ Նախորդ բանախոսները ցայտուն և պատկերավոր կերպով ներկայացրին այդ ողբերգության մանրամասները։ Խոսքը վերաբերում է մի ոճրի, որը թուրքական կառավարությունը ծրագրված և սառնասրտորեն գործադրեց հայ ժողովրդի նկատմամբ։ Հետևաբար արդարացված է ժողովրդի պահանջը, որն արդեն 80 տարի է, ինչ հետամուտ է պատմական արդարության, որպեսզի այդ ոճիրը ճանաչվի որպես ցեղասպանություն, դիմում է միջազգային բոլոր ֆորումներում, բոլոր բարեկամներին՝ խնդրելով աջակցություն և համերաշխություն։ Արդարացի է, և հույն ժողովրդի աջակցությունն է ստացել հայերի այդ ձգտումը, որոնք կարողացան փրկվել ու ապաստան գտան մեր երկրում՝ անմար պահելով այդ դեպքերի հիշատակը։

Դուք գիտեք, որ մեր կուսակցությունը միշտ ձգտում է, որ կենդանի մնա ժողովուրդների հիշատակը, որքան էլ այդ դեպքերը լինեն ողբերգական։ Բայց եթե հավատում ենք, որ ժողովուրդների հիշողությունը պետք է կենդանի լինի, պատճառն այն է, որ մեր երեխաները, այս մոլորակի ապագա սերունդները, քաղեն պատմական այն դասերը, որով պիտի կարողանան իրենց պաշտպանել նույնանման իրավիճակներից, նույնանման վտանգներից ու նույնանման ողբերգություններից։

Հայտնի է մեր դիրքը համապատասխան առաջարկների նկատմամբ, որոնք կատարվում են և որոնք վերաբերում են նաև հույն իրականությանը՝ պատմության այդ ողբերգական ժամանակաշրջանում։

Այո, հիշողությունը պետք է կենդանի մնա։ Ժողովուրդները պետք է իմանան, բայց պատմության այդ դասերը չպետք է իրենց մեջ կրեն վրեժի թույնը, ժողովուրդների միջև թշնամանքի թույնը։ Դրանք չեն կարող ազգայնամոլության կամ շովինիզմի կառքին նստելու պատճառ դառնալ։ Չեն կարող ռևանշիստական քաղաքականության փաստարկ դառնալ։

Դեպքերին այս տեսանկյունից նայելիս հարկ է խրախուսել թափվող ջանքերն ու միջազգային հանրության ընդունած որոշումները, չնայած վերջինիս կեղծավորությանը։ Նախորդ բանախոսները շեշտեցին այդ հանգամանքը։

Մենք հանձնաժողովում ձեռնպահ մնացինք։ Ձեռնպահ մնացինք դիրքորոշվելու այս առաջարկի առթիվ, որովհետև կուզեինայինք լսել, թե ինքը՝ կառավարությունը, ի՞նչ ոգով պիտի ընդուներ այդ որոշումը՝ այն կենսագործելու համար։ Նախարարը չդիրքորոշվեց հանձնաժողովում։ Նա հայտնեց իր որոշ վերապահումները, մտահոգությունները։ Մենք չենք կարող այս առաջարկին դեմ քվեարկել, բայց շատ լավ գիտենք, որ չենք կարող նաև ընդունել արտաքին քաղաքականության նման դիրքորոշում։

Չենք կարող նմանօրինակ ճնշումներ գործադրել: Չի կարելի հույն հասարակական կարծիքը նախապատրաստել, եթե այդպիսի միջոցառումների բովանդակությունը հստակ չէ: Եվ եթե ես լավ չհասկացա ինձանից առաջ այս ամբիոնից ելույթ ունեցողներին, թող ինձ ներեն: Դա դատապարտումը չէ ցեղասպանության, ինչին բոլորս համաձայն ենք, և՛ մենք, և՛ ամբողջ աշխարհը, բացի պատասխանատուներից: Մակերես են ելնում ուրիշ բաներ: Ատելության պատգամ ենք հղում մեր կողքի ժողովրդին:

ԿՈՆՍՏԱՆԴԻՆՈՍ ԽԱՉԻԴԻՄԻՏՐԻՈՒ – Շքանշան ուղարկենք նրանց...

ԱՆԱՍՏԱՍԻՈՍ ՆԵՐԱՆՉԻՍ – Ողջույններ հղենք...

ՕՐԵՍՏԻՍ ԿՈԼՈԶՈՎ – Ձեր հակազդեցությունը ցույց է տալիս, որ մեր մտահագությունն անտեղի չէ: Մենք բնավ չէինք կամենա, որ հունական խորհրդարանի, հունական կառավարության որևէ գործողություն սխալ մեկնաբանվեր:

ՖՈՏԻՆԻ ՍՏԵՖԱՆՈՊՈՒԼՈՒ – Մի՞թե ճիշտ չէ: Նրանց չմորթեցի՞ն:

ՎԱՍԻԼԻՍ ԲՐԱԿԱՅՈՒԼԱՍ – Հիշատակի պատգամ է: Ատելության պատգամ չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկիտաս Վենիզելոս) – Շարունակեք, պ. Կոլոզով:

ՕՐԵՍՏԻՍ ԿՈԼՈԶՈՎ – Շնորհակալ եմ, պ. նախագահ...

ԿՈՆՍՏԱՆԴԻՆՈՍ ԲԱՆՏՈՒՎԱՍ - Եվ Կիպրոսի նոր գերեզմանները, և Իմիայի դեպքերը նույնի վերարտադրությամբ:

ԱՆԱՍՏԱՍԻՈՍ ՆԵՐԱՆՉԻՍ – Պոնտացիների նկատմամբ ևս նույն դիրքն էիք գրավել:

ՕՐԵՍՏԻՍ ԿՈԼՈԶՈՎ – Կուզենայի խորհրդարանին հիշեցնել՝ ես դադար տվեցի, քանի որ սպասում էի այս հակազդեցությանը...

ԿՈՆՍՏԱՆԴԻՆՈՍ ԲԱՆՏՈՒՎԱՍ - Դուք խոսում եք հույների խորհրդարանում և ոչ թե Անկարայի խորհրդարանում:

ՕՐԵՍՏԻՍ ԿՈԼՈԶՈՎ – Նման ողջակիզումներ ունեցել են նաև այլ ժողովուրդներ՝ նույնպես մեզ սիրելի, ինչպես հրեաները: Ես նկատի ունեմ ոչ միայն քրդերին, այլև սերբերին, խորվաթներին, մուսուլմաններին: Մենք պետք է ուզենայինք, որ այս հիշողությունները, ես չգիտեմ, քե կառավարությունն ի վերջո ինչպե՞ս է հրամանագրով վավերացնելու այս ջանքերը, ունենան այնպիսի բովանդակություն, որ իրապես հնարավորություն ընձեռնեն ժողովուրդներին ապրելու եղբայրացած, և դատապարտվեն հենց նրանք, ովքեր պատասխանատու են ցեղասպանության, տվյալ դեպքում՝ հայերի ցեղասպանության համար, բայց և պատասխանատու են ժամանակ առ ժամանակ կատարվող մյուս բոլոր չահախնդիր ցեղասպանությունների համար: Ես նախապես էլ ասացի, որ մենք դեմ չենք քվեարկելու, բայց մեր վերջնական վճիռը կախված է նաև պ. նախարարի դիրքորոշումից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկիտաս Վենիզելոս) – Չայնը տրվում է Թեսալոնիկի պատգամավոր պ. Ակրիտիդիսին:

ՆԻԿԻՏԱՍ ԱԿՐԻՏԻԴԻՍ – Պարոն նախագահ, անտարակույս, այսօր հույն ժողովուրդն իր Ազգային ներկայացուցչության միջոցով, անդրադառնում է հայ ժողովրդի հանդեպ իր ունեցած խորը պարտքին. առա-

ջին հերթին՝ բարոյական պարտքին, որը բխում է այն սկզբունքից և արժեքներից, որոնք մեզ բնութագրում են որպես ազգ և երկրի, մարդու ազատության և արժանապատվության պահպանման իրավունքի արժեքներից, արժեքներ, որոնց համար մեր ազգը պայքարել է և զոհեր է տվել իր բազմադարյան պատմության ընթացքում. այնպիսիք, որ կարող ենք ասել, թե մեր պատմական ընթացքը նույնացված է պայքարների և զոհերի հետ:

Դա մեր կողմից պատմական պարտք է հայ ազգի հանդեպ, որովհետև, մեր պատմության գոնե վերջին շրջանում հույն ազգի մի խոշոր հատված, Պոնտոսի և Փոքր Ասիայի հելլենականությունը, ուներ մի զուգահեռ ընթացք քաղաքական ու հասարակական գործունեության իմաստով, և մի զուգահեռ ընթացք զոհաբերության, պայքարի ու իրավունքի զոհասեղանին՝ հանուն հայրենի օջախներում ազատ ապրելու:

Երիտթուրքերի պետությունն ընդհանուր դահիճ էր, և ոչ միայն նա, այլ, բնականաբար, նաև Քեմալ Աթաթուրքի պետությունը:

Սկիզբը 19-րդ դարի վերջին էր, 1877թ. ռուս-թուրքական պատերազմից հետո՝ Փոքր Ասիայի քրիստոնյա ժողովուրդների վրա բռնության զանգվածային հարձակումներով ու կոտորածներով: Բռնության մի ընթացք, սակայն, որն իր գագաթնակետին է հասնում մեր դարասկզբին: Սկիզբը 1913-1914թթ. հունական հալածանքներն էին, երբ հույն ազգը կատարեց Բալկանյան գաղթը, և որին հետևեց հայ ազգի նկատմամբ արյան, բռնության ու սարսափների անճախընթաց շրջանը՝ 1915-1916թթ. ցեղասպանությամբ:

1915թ. ապրիլի 24-ին սկսվում է բռնության և սարսափների այնպիսի մի շրջան համայն հայ ազգի դեմ, որն ապրում էր Փոքր Ասիայի արևելյան հատվածում, ինչը հանգեցրեց մեկ ամառվա ընթացքում մեկուկես միլիոն հայերի բնաջնջմանը և կանգ չառավ ոչ երեխաների, ոչ ծերերի ու անպաշտպանների, ոչ էլ կանանց առաջ: Բռնություն, որն, իմիջհայլոց, ստիպեց Հեների Մորգենթաուին, որն այդ ժամանակ Միացյալ Նահանգների դեսպանն էր Բարձր Դռանը, հայտարարելու. «Համոզված եմ, որ մարդկային ցեղի ամբողջ պատմությունը չի տեսել այսքան սարսափելի և անասելի ոճիր»: Երիտթուրքերի այս արյունալի արշավն ամբողջացավ 1916-1922թթ. Պոնտոսի հույների նմանօրինակ ոչնչացումով:

Մեր դարասկզբի նոր սուլթաններ, շահարկելով գերմանական օգնությունը, որը նրանց տրամադրվում էր ժամանակի օսմանյան պետության հետ համածայնության շրջանակներում, իբրև թե Օսմանյան պետության արդիականացման համար, կազմեցին Օսմանյան տերությունը համասեռ դարձնելու ռազմավարություն ամենասահմռկեցուցիչ ընկալումով՝ այլակրոնների ու այլազգիների բնաջնջումով ու բռնություններով, տերության սահմաններից նրանց բռնի տեղահանումով:

Սա առաջին միջոցառումներից մեկն էր, որոնք սկսեցին կիրառվել պանթուրքիզմի և պանթուրանիզմի շրջանակներում: Պոնտոսի հելլենական տարրի ցեղասպանությանն ու ոչնչացմանը հետևեց Կոնստանդնուպոլսի, Իմբրոսի, Տենդոսի հունական տարրի բնաջնջումը, հանցագործ ներխուժումը Կիպրոս և նրա բարբարոս գրավումը, իսկ այսօր էլ քուրդ ժողովրդի բնաջնջումը, Թուրքիայի սպառնալիքներն իր հարևանների դեմ, հողերի անօրինական զավթումները:

Հայ ազգը գտնվում է այս հարձակման ուղիղ կենտրոնում, հարձակում, որի սահմանները տակավին չեն ճշգրտված:

Այս իրական դեպքերը, պ. նախագահ և սիրելի գործընկերներ, բովանդակում են երկու քաղաքական մեծ դասեր, պատգամներ: Առաջինն այն է, թե ինչպես Թուրքիան օգտագործեց Արևմուտքի ուժերի, Գերմանիայի և Ավստրիայի օգնությունն ու դաշնակցությունը, և թե ինչպես հետագայում գնահատեց քաղաքական հարաբերությունները, որոնք առաջացան 1920-1921թթ. Մուստաֆա Քեմալ-Լենին համաձայնությամբ: Պատմական այս դասերը բացառիկ այժմեականություն ունեն, որովհետև գտնվում ենք զավթողականության մի նոր փուլի առաջ, հարևան երկրի պանթուրանական և պանթուրքական նպատակների սանձազերծման մի նոր փուլի առաջ:

Կարծում եմ, որ այսօրվա օրը ևս, Պոնտոսի հելլենականության ցեղասպանության օրը ճանաչելուց հետո, մի առիթ է, որպեսզի Ազգային խորհրդարանը և հելլենականությունը չափեն իրենց պատմական պատասխանատվությունը: Նախ և առաջ, անշուշտ, բոլորս պետք է ոտքի կանգնենք խորը հարգանք մատուցելու այդ մեծ, աներևակայելի մարդկային ոճրագործությանը գոհ դարձած մարտիրոսներին:

(*Նախագահական աթոռը գրավում է խորհրդարանի երկրորդ փոխնախագահ պ. Պավսանիաս Զակոլիկոսը*):

Սակայն չպետք է անտեսենք երկրորդ դասը: Այդ վայրագության զոհերի արդար հատուցումը, - ես դիմում եմ մեր գործընկերոջը, - չպետք է համարվի ազգայնական զգացմունքների բորբոքում: Ընդհակառակը, այն պետք է նկատվի որպես մի գործողություն, որով կարելի է վճռականորեն արգելք դնել քաղաքական, ռազմական նմանօրինակ բռնարարքների առաջ, որտեղ էլ որ դրանք լինեն:

Լիովին համաձայն եմ, որ եթե Թուրքիան միջազգային կազմակերպությունների կողմից դատապարտվեր և ստիպված լիներ ճանաչել ցեղասպանությունը, որ ինքը գործել է արևմտյան ուժերի օգնությամբ, գուցե այդ դեպքում Հիտլերը ևս չէր կարող հանգիստ ասել. «Ո՞վ է այսօր խոսում հայերի մասին»: Եվ, բացի այդ, Ստալինն այդքան հեշտությամբ չէր ձեռնարկելու 1947-ին Պոնտոսի հելլենականության ոչնչացումը, որը երիտթուրքերից ու քեմալական սրից ապաստանել էր նախկին Խորհրդային Միության այդ տարածքում: Հետևաբար, այդ ոճիրը պետք է դատապարտվի, և այդ դատապարտումը պետք է օրինակ ծառայի բոլոր նրանց համար, ովքեր կփորձեն կրկնել պատմականորեն անընդունելի ու սահմռկեցուցիչ նման արարքներ: Սակայն, պ. նապագահ, կա մի իրողություն ևս, որը կուզենայի համառոտ նշել: Այսօր Եվրոպայում գերիշխում է այն մտայնությունը, թե Եվրոպական միությունը կարող է լինել կայուն և ունենալ հստակ նպատակներ ու հեռանկար, եթե ազգայնականությունը փոխարինվի եվրոպական քաղաքական իրողության մի նոր ընկալումով: Եվրոպական միության մեջ ժողովրդավարության նոր իմաստը չի կարող այլ բան լինել, քան տարբեր մշակութային ներդրումներ և մշակութային առանձնահատկություններ ունեցող ժողովուրդների համակեցություն. հանդուրժելի մի համակեցություն՝ հիմնված մեր իրավունքների և քաղաքակրթության ու մշակութային ներդրումների տարբերության բացարձակ ճանաչման վրա:

Հիմնական հարցը հետևյալն է: Թուրքիան, որը ծեծում է Եվրոպական միության դռները, արդյո՞ք ցույց է տալիս օրինակներ, թե հարգում է, ընդունում այդ նոր իրողությունը:

Հետևաբար, քաղաքական պարտք է, - առաջինը և գլխավորը, - որպեսզի մենք մեր իրավասությունների ու իրավունքների սահմաններում դատապարտենք այս ոճիրը, մեր հարգանքի տուրքը հատուցենք զոհերին և ամրապնդենք մեր դիրքն ու մեր կամքն այդ զոհաբերության արդար ճանաչման համար և դատապարտենք այն միջոցները, որոնք դիմել է Թուրքիան և այսօր էլ շարունակում է գործադրել:

Շնորհակալություն:

(*Ծափահարություններ*):

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Պավսանիաս Ջակոլիկոս) – Ձայնը տրվում է պարոն Տրիարիդիսին:

ԿՈՆՍՏԱՆԴԻՆՈՍ ՏՐԻԱՐԻԴԻՍ – Պարոն նախագահ, հույների խորհրդարանում ներկայացնում եմ Կիլիկիսի ժողովրդին. մի ժողովուրդ, որն իր ամբողջության մեջ, լինի դա գաղթականական տարր, թե մակեդոնական-հունական տարր, յուրաքանչյուր ընտանիքում, իր պատմության մեջ արձանագրել է ճնշում և հալածանքներ:

Ուրախ եմ, որ այսօր հույների խորհրդարանը, 50 տարվա հակասություններից, հակաճառություններից և այլախոհության անհանդուրժողականությունից հետո, որոնք հաջորդեցին երկրորդ համաշխարհային պատերազմին ու քաղաքացիական կռիվներին, բարձրանում է այս մակարդակին և հրապարակավ դատապարտում է ցեղասպանությունը, ոչ միայն Պոնտոսի հույների, այլև հայերի և այլ ցանկացած ցեղասպանություն:

Հույս ունեմ, որ մեր այս նիստը մի փոքրիկ, գոնե կես րոպեի տեղ կգտնի տասնյակ րոպեներ զբաղեցնող՝ հանցագործությունների հաղորդումների ալիքներում, որպեսզի դաստիարակչական ներգործություն թողնի ներկա սերնդի վրա, որը չճանաչեց և չունի պատմական հիշողություն:

Ես նույնպես երջանիկ կլինեմ, եթե ուրիշ պարտավորություններ ևս, որ մենք անտեսել ենք, գտնեն իրենց տեղը, ինչպես այն, որ Թեսալոնիկ քաղաքը պետք է հուշարձան կանգնեցնի քաղաքի իսրայելցիների ցեղասպանության համար:

Համոզված եմ, որ եթե ժամանակի հզորները, որովհետև մենք այդ ժամանակ թույլ էինք և բայքայված, Փոքր Ասիայում ծայր առած ցեղասպանության ալիքները դատապարտեին, համաշխարհային հասարակական կարծիքն առավել դյուրազգաց կլիներ հաջորդած ցեղասպանությունների նկատմամբ:

Այս իմաստով, հարգելով հայերի և փոքրասիական մյուս բոլոր ազգությունների ցեղասպանության զոհերի հիշատակը, բայց և ավելի ընդհանրապես ցեղասպանության հիշատակը, որ երբեմն կատարվում է մեզանից հեռու, օրինակ, հեռավոր Աֆրիկայում, մի քանի տարի առաջ Բաֆրայում և այլ շրջաններում, խորհրդարանը դրանով հարգում է ինքն իրեն:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Պավսանիաս Ջակոլիկոս) – Ձայնը տրվում է պարոն Նիոտիսին:

ԳՐԻԳՈՐԻՍ ՆԻՈՏԻՍ – Պարոն նախագահ, պարոն նախարար, տիկնայք և պարոնայք գործընկերներ: Կարծում եմ՝ հունական խորհրդա-

րանը «Քաղաքական գարունի» պատգամավորների այսօրվա նախաձեռնությամբ հատուցում է, թեև ուշացումով, բայց պարտադիր հարգանքի տուրքը, հարգանքի նվազագույն տուրքը եղբայր մի ժողովրդի հանդեպ, որը գրեթե բնաջնջվեց բռնադատություններից, սարսափներից և ջարդերից, որոնց ենթարկվեց թուրքական վարչակարգի կողմից, հատկապես 1915թ.:

Այսօրվա քննարկումը և, հուսամ, մեր միաձայն որոշումը վերջ կտա մի անընդունելի առկախության՝ ոչ միայն եղբայր ժողովրդի նկատմամբ, այլև բուն իսկ պատմության, որն արձանագրված է և հաստատապես փաստված, այնպես, որ հակառակ նախորդ տասնամյակներում թուրքերի փորձերին, բացարձակ մանրամասնությամբ ու տվյալներով արձանագրել է վայրագություններն ու պատասխանատվությունը թուրքական վարչակարգի, որը կազմակերպեց, ծրագրեց և գործադրեց իր չափերով ու դաժանությամբ աննախադեպ՝ ավելի քան մեկուկես միլիոն հայերի ահավոր ջարդը:

Զեկուցման շարադրանքը շատ ճիշտ արձանագրում և նշում է, որ իր վայրագությամբ ու չափերով ահավոր այդ ջարդը մի փորձարկում էր դրան հաջորդած ուրիշ ցեղասպանությունների համար, Պոնտոսի, Թրակիայի, Փոքր Ասիայի, նաև Կիպրոսի հույների նկատմամբ: 1915թ. առաջին ամիսները խորհրդանշում են հայոց պատմության մեծ խավարը: Թուրքական վարչակարգը, որը ղեկավարում էին հռչակավոր Թալեաթը, Էնվերը և Ջեմալը, կազմակերպեց Թուրքիայի հայ բնակչության սիստեմատիկ բնաջնջումը: Այդ ժամանակվա Օսմանյան կայսրության երկու միլիոն 100 հազար հայ բնակիչներից մեկ միլիոն 800 հազարը տուժեցին այդ կազմակերպված ծրագրից, և մեկուկես միլիոնից ավելին կորստի մատնվեցին: Մի քանի հարյուր հազար հայեր կարողացան ապաստանել Անդրկովկասում կամ վերապրել Ասիայում ու Սիջագետքում:

Այդ ժամանակ «Իթթիհաթ վե թերաքքը» կուսակցության տեղական կառավարման մարմինները՝ Թալեաթ փաշայի գլխավորությամբ, ինչպես ճիշտ նշվեց, իրագործեցին բնաջնջման այս սահմռկեցուցիչ ծրագիրը, որը պետք է ստիպի քաղաքակիրթ մարդկությանը խորապես անհանգստանալ: Այդ ժամանակվա ներքին գործերի նախարար Թալեաթի՝ այստեղ հրապարակված հրամաններից բացի, ես ունեմ Հալեպի կուսակալությանն ուղղված մի փաստաթուղթ, որն իրոք բացարձակապես լկտի է և պերճախոս արտահայտում է այդ օրերի մթնոլորտը: 1915 սեպտեմբերի 13-ի թվակիր այդ հեռագիրը հայտնում է հետևյալը. «Հալեպի կուսակալությանը. Նախապես հաղորդվածի համաձայն, կառավարությունը որոշել է Թուրքիայում բնակվող հայերի ամբողջական բնաջնջումը: Ամեն ոք, ով կուզենա հակադրվել սույն հրամանին, այսուհետև չի կարող պետական պաշտոնյա լինել: Առանց կանանց, երեխաների և հաշմանդամների որևէ խտրության, բնաջնջման միջոցները որքան էլ ողբերգական լինեն՝ խեղդելով խղճի ձայնը», նկատի ունի դահիճներին, «պետք է վերջ տրվի նրանց գոյությանը»:

Գուցե մեկը հարցնի, թե ինչո՞ւ Թուրքիայի այդ ժամանակի վարչակարգը որոշեց ոչ թե պարզ տեղահանություն, այլ մի ժողովրդի լիակատար բնաջնջում: Ժամանակը չէ, բնականաբար, պատմական վերլուծություններ անելու, բայց կարող ենք վերագրել, որ պատճառը գլխավորապես այդ ժամանակաշրջանի հայերի առաջադիմական բնույթի ռեֆորմիստական

հայացքներն էին: Առաջադեմ ու դեմոկրատական մի ժողովուրդ հարցականի տակ էր դնում ժամանակի Օսմանյան կայսրության ինքնակալական կառույցը: Եվ, անշուշտ, երիտթուրքերի պանթուրանական ծրագրերն էին գլխավորապես, որ որոշեցին կոտորել ու բնաջնջել մի ժողովրդի, որը կանգնած էր օսմանյան թուրք բազմությունների ու Կովկասից անդին ապրող շրջանների թուրքալեզու և մուսուլման ժողովուրդների միջև, որոնց նկատմամբ Թուրքիան այդ ժամանակներից նկրտումներ ուներ ներառելու իր տիրապետության մեջ: Այսօր էլ մի կողմ չի նետված այսպես կոչված «մուսուլմանական աղեղի» տրամաբանությունը, թեև թվում է, թե այդ ծրագիրն առանձնապես հաջողություն չունի:

Բայց խիստ նշանակալից կլիներ այս քննարկման ընթացքում արձանագրել նաև ժամանակի բազմաթիվ մտավորականների կամ պաշտոնյաների պաշտոնական վկայությունները, ինչպես՝ լորդ Բրայսը, բրիտանացի քաղաքագետ և մտավորական, որը հայտնում է, թե «ամեն մի քաղաքի կամ գյուղի ամբողջ հայ բնակչությունը տարագրվեց բոլոր տների խուզարկությունից հետո: Բոլոր բնակիչները դուրս նետվեցին փողոց: Տղամարդկանց մի մասը բանտ նետվեց, որտեղ և սպանվեց, ոմանք տանջամահ արվեցին, մյուսները՝ տղամարդիկ, կանայք և երեխաներ, քաղաքից դուրս քշվեցին»: Եվ համառոտ պատմում է, թե ինչպես էր ծրագրված հարյուր հազարավոր հայերի ոչնչացումը: Իրոք սարսռազդու է այդ մանրամասը նկարագրություններին ծանոթանալը, թե ինչպես առանց հացի, առանց ջրի, օրերով ու շաբաթներով տանջանքների ենթարկվեցին ու լքվեցին, որպեսզի մահանան այդ դժվարություններից. գլխավորն այդ էր, կամ էլ տեղում գնդակահարվեցին հատուկ կազմակերպված ուժերի կողմից:

Պատմաբան Թոյնբին ևս փաստում է, թե Թալեաթը շարունակ ասում էր, որ ջարդերից հետո այլևս տասնյակ տարիներ Հայկական հարց գոյություն չի ունենա: Կոստանդնուպոլսում ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուն, որն արդեն հիշատակվեց, նույնպես նշել է, թե լիովին վստահելի ականատեսներից իր դեսպանատանը հասած զեկուցագրերում նկարագրված դեպքերը գերազանցում են ամենաանասնական ու սատանայական գազանություններին, որ երբևէ կատարվել կամ մտահղացվել են պատմության մեջ:

Այդ ժամանակ Ազգերի լիգայի գաղթականության գերագույն կոմիսար Նանսենն իր վկայություններում, բացի հիմնական հարցից, որպիսին, անկասկած, հարյուր հազարավոր հայերի սպանություններն էին, նկարագրում է նաև զուգահեռ մանրամասներ, թե ինչպես թուրքական իշխանությունները բռնագրավեցին այն ամենը, ինչը կարող էին թալանել՝ դրամ, ջարդեր, թանկարժեք իրեր, հագուստներ:

Անշուշտ, շատ են պատմական վկայությունները և նկարագրությունները, որոնք փաստում են մարդկության պատմության այդ սև էջը և մեր առաջ պարզում են այն մշտական սպառնալիքը, որ ծագել է դարեր առաջ և կրկնվում է մեր օրերում:

Գուցե ոմանք կարծում են, թե այս սարսափելի ցեղասպանությունն արտահայտվել է պատմական որոշակի ժամանակաշրջանում: Բայց հիշենք այն ջարդերը, որոնք տեղի էին ունեցել նախկինում և նորոգվել էին հատկապես 11-րդ դարում սելջուկների արշավանքներով ու Կոստանդնուպոլսի անկումով, կայսրության քրիստոնյա բոլոր բնակիչների ընդհանուր

ցեղասպանությունը, որ հղացել էր սուլթան Սելիմը, բնակչության անպատմելի նահատակությունները բալկանյան տարածքից մինչև Վիեննա, արաբական երկրներից մինչև Ատլանտյանի ափերը, հայոց սպանություններն ու ջարդերը, ինչպես նաև պոմտացիների և հելլենական տարրի ու փաքրաս-սիացիների հալածանքները: Այսօր, անշուշտ, հույների խորհրդարանը պարտավոր է վերջ դնել այս առկախությանը և այս որոշումով մեր վկայությունն ու մեր պատմական հիշողությունը շաղկապել մի եղբայր ժողովրդի հետ՝ միաժամանակ արձանագրելով մի բիրտ ներկայությունն ու մի սպառնալիքի առկայությունը քաղաքակրթության ու մարդկության դեմ:

(*Ծափահարություններ ՊԱՍՕԿ-ի թևից*):

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Պավսանիաս Ջակոլիկոս) – Ձայնը տրվում է պարոն Վունացոսին:

ԴԻՄԻՏՐԻՈՍ ՎՈՒՆԱՑՈՍ – Պարոն նախագահ, պարոնայք գործընկերներ, թեկուզև ուշացումով, հույների խորհրդարանն իր մեծամասնությամբ, այդպես եմ ասում, քանի որ չընկալեցի կոմունիստական կուսակցության դիրքորոշումը, կատարում է այն, ինչը պետք է աներ շատ տարիներ առաջ: Հատուցում է պատմական ճշմարտությանը, ոչ որպես փոխադարձ վրեժխնդրության և ատելության արարք, ինչպես ասաց բանախոսներից մեկը, ոչ էլ որպես վախխատուցում՝ «իմ ցավի պատճառով ցավում եմ նաև այլոց համար» սկզբունքով, այլ այն պատճառով, որ այս երկրում քաղաքակրթությունն ու արդարությունն աստվածացվել են: Եվ ճշմարտությանը ծառայելը միշտ էլ քաղաքական նկատառումներից բարձր է եղել:

Այսօր նա, ով պետք է դատապարտվի հույների խորհրդարանի կողմից, հին ու նոր Թուրքիան է, քանի որ այն միասնական հասարակական-քաղաքական կազմավորում է: Եվ պետք է դատապարտվի ոչ թե եվրոպացիների կեղծավորությամբ, որոնք Եվրախորհրդում դատապարտեցին օսմանյան պետությանը: Այսպիսի որոշում ընդունեց Եվրախորհրդարանը: Վերջապես այս անգամ անկեղծ լինենք, մեղավոր էին օսմանցիները և քրդերը, ինչպես պնդում են այսօրվա թուրքերը:

Եվ տարանջատում չկա վատ կառավարությունների և լավ ժողովուրդների միջև: Դա առրևույթ է, կեղծիք է: Ժողովուրդներն ունեն այն կառավարությունները, որ իրենք են ընտրում: Կա լավ ժողովուրդների հակադրության գործունեություն իրենց վատ կառավարությունների դեմ: Այս ամենը, որպեսզի վերջ դնենք նաև այն առասպելին, որին դիմում է որոշակի քաղաքական թև հարևան երկրի՝ Թուրքիայի նկատմամբ:

Ասում եմ, հետևաբար, որ այս բոլոր պատճառներով, եթե կուզեք, նույնպես հանցակից է արևմտյան կոչված քաղաքակրթությունը, և ոչ միայն այն պատճառով, որ այդ հանցագործությունը ծրագրվեց գերմանացիների մասնակցությամբ, այլև որ 1920-ին և դրանից հետո, նույն Անտանտի արևմտյան երկրները, որոնք իբր Հունաստանի կողքին էին, այն ժամանակ, երբ տեղի էին ունենում այդ դեպքերը, թեև այդպիսիք կատարվել էին նաև նախկինում: Մեծ ցեղասպանությունը 1915-ը կամ 1917-ը չէ: Եղել է ջարդերի, կողոպուտների գերեվարումների մի հաջորդական շղթա: Այս է թուրքական պետության պատմությունը՝ քալևող, մարդասպան, ժողովուրդների բնաջնջող և, մանավանդ, ոչ միայն մշակույթի, այլ նյութական մշակույթի գող:

Եվ այս եղանակով թալանվեց հսկայական հարստություն: Օրինակ, 1920թ. Թուրքիայում թուրք արդյունաբերող չկար: Արդյունաբերությունը, առևտուրը, արհեստները գտնվում էին հույների և հայերի ձեռքում: Սակայն զանգվածային բնաջնջումից, ցեղասպանությունից անմիջապես հետո, ինչպես շատ ճիշտ ասվեց, այդ ողջ հարստությունը, ջարդի և ցեղասպանության միջոցով, օրեցօր անցավ Թուրքիայի ձեռքը: Հետևաբար հանցակից է նաև եվրոպական կոչված քաղաքակրթությունը, որովհետև ճիշտ 1920-ականներին էր, որ դեռ երիտասարդ Խորհրդային Միությունը հատուկ կոչնուսով կոչում էր Քեմալ Աթաթուրքի կողքին՝ Փոքր Ասիայում հումանական զորքերի դեմ, - այս էլ պետք է ասվի, - իսկ Ամերիկան, Ֆրանսիան, Անգլիան շտապեցին ձեռք բերել այն արտոնությունները, որ Քեմալն առանց խնայելու տալիս էր, որպեսզի ավելի ուշ, անշուշտ, կատարվեր փոքրասիական աղետը, և դրան հաջորդեր բարյացակամությունն ու առ այսօր շարունակվող հանդուրժողականությունն այդ պետության, ընտրյալ պետության հանդեպ: Դա սակավատիրության իրավակարգ է, զինվորապետություն, գումարած պլուտոկրատիա, գումարած բյուրոկրատիա: Այդ նույն իրավակարգն էր, որը սելջուկների հետ առաջին անգամ հայտնվելով Փոքր Ասիայում, կատարեց այն, ինչ ավելի ուշ Անգլիան: Միայն երկու տերություններ կարողացան կայսրությունները կառավարել նույն այդ եղանակով: Պատկերացնում եմ, որ անգլիացիներն առավել եվրոպավարի կապկեցին այն, ինչն օսմանցիները կատարել էին անցյալում, կամ էլ զուգահեռաբար: Եվ մի՞թե միայն հայերի նկատմամբ: Սակայն ի՞նչ ելույթներ գիտենք Եվրոպայում: Պատմության ընթացքում ի՞նչ խորհրդարաններ գիտենք, որ ապրած լինեն այն, ինչ մենք այսքան հստակ կերպով անում ենք այսօր, իսկապես ոչ թե հանուն որևէ վրեժխնդրության պատգամի, այլ հանուն պատմական ճշմարտության, պատմական հիշողության: Շատ փոքրաթիվ: Ընդհակառակը, ունենք համալսարանների պրոֆեսորներ, հատկապես անգլիացիներ և ամերիկացիներ, - բայց արծաթով վաճառվածներ եղել են ու կլինեն միշտ և բոլոր ազգերի մեջ, - որոնք կվիճարկեն այդ ողբերգական դեպքերը, կտրված գլուխների, դիակների բուրգերը Տիգրիսի ու Եփրատի ափերին, որտեղ հայերի քայլերին 1940, 1941, 1942 թվերին հետևեցին ուրիշների քայլերը, Փոքր Ասիայի, Կոստանդնուպոլսի հույների քայլերը: Դրանք ամեն թաքուրուներն էին՝ հումանականությունը ոչնչացնելու աշխատանքի գումարտակները: Դա ձուլելու ծրագիրն էր (էրիթմե պրոգրամը): Նույնը 1953, 1954, 1955 թվերին թուրքական կառավարությունը ծրագրեց և իրագործեց Իմբրոսում, Տենեդոսում և Կոստանդնուպոլսում: Այդ նույն էրիթմե պրոգրամը, որն այսօր կիրառվում է այսպես կոչված Հյուսիսային Կիպրոսի հանրապետությունում: Դա նույն ծրագիրն է, որ կիրառվեց Ալեքսանդրետի (Իսկենդերում) վիլայեթում:

Բայց այս ամենից բացի, պատմական այն քայլերից բացի, որոնցով առաջնորդվեցինք մենք՝ Պոնտոսի, Փոքր Ասիայի, Իմբրոսի, Տենեդոսի, Կոստանդնուպոլսի հույները, հայերը, կան նաև ցեղասպանության այլ օրինակներ, այդ բառի իրավական իմաստով և ՄԱԿ-ի հռչակած սկզբունքներով, ցեղասպանություն, որին այսօր ենթարկվում է քրդական ցեղը, տարածաշրջանի մեկ ուրիշ պատմական ժողովուրդ՝ նույն թուրքական ազգի կողմից: Այդ պատճառով, եթե սա բարոյապես արևմտյան կոչված քաղաքակրթության սեփական արարքը չէ, ապա, իմ կարծիքով, նրա հանցակ-

ցությունն է, որովհետև Թուրքիան շարունակում է մնալ Արևմուտքի փայփայված երեխան, սոսկ հանուն այդ արևմտյան քաղաքակրթություն կոչվածի շահերի, արյան, կողոպուտի ու թալանի քաղաքականության շահերի: Արդեն շատ տարիներ է, ինչ ես այլևս չեմ պատկանում այդ քաղաքակրթությանը: Չգտել եմ ձերբազատվել գաղափարական ու քաղաքական ամբողջ այն աղբից, որ մանկուց, դպրոցի առաջին դասարանից թե՛ ուսուցիչները և թե՛ քաղաքագետները ջանացին բեռնել ինձ վրա, և տակավին տագնապի մեջ եմ՝ փնտրելով հելլենականության մշտական, դարավոր սկզբունքները: Չկան այդ սկզբունքներից առավել կատարյալները, որոնց մարդ հետևեր: Որովհետև մարդկայնությունը, «որքան հաճելի է մարդը, երբ մարդ է» սկզբունքը, բարի և ազնիվ մարդը որպես հելլեն դաստիարակության կատարյալ իդեալ, միայն հելլենական իդեալ է մեր պատմության հնագույն ժամանակներից: Եվ այդ իդեալները պետք է մեկ անգամ ևս, առանց Արևելքում և Արևմուտքում ավելորդ փնտրտուքների, հայտնաբերենք մեր երկրում:

Տիկնայք և պարոնայք գործընկերներ: Այդ պատգամը, որ մենք ընդունում ենք որպես որոշում, իսկապես պետք է ունենա մի հատուկ կիրառում որպես պետական օրենք: Ես չլսեցի, թե ինչ ենք մտածում և ինչպես ենք մտածում արժեվորել այս օրենքը: Ու թեև որոշ առումով հանպատրաստից եմ խոսում ու զգացմունքային լիցքով, և օրենքի առաջարկությունն էլ այսօր ոչ ըստ կարգի մտցվեց, չեմ կարծում, թե անհրաժեշտ էր հատուկ նախապատրաստություն՝ դիրքորոշվելու համար մեր գիտակցական հարցերի նկատմամբ, ազատության, ժողովրդավարության, ժողովուրդների ապագայի, բարեկամության, խաղաղության նկատմամբ: Ոչ նախապատրաստություն է պետք, ոչ էլ մեր անցյալի վկայակոչում: Միայն մեկ բան է պետք՝ համարձակություն ու լիակատար անկեղծություն: Մենք ապացուցեցինք և անկեղծությունը, ապացուցեցինք և համարձակությունը, թեկուզև ուշացումով: Կրկնում եմ, ներկա օրենքի, ինչպես նաև ավելի քան մեկ տարի առաջ պոնտացիների ցեղասպանության վերաբերյալ մեր ընդունած օրենքի արձանագրային մասը մնում է կառավարության մոտ, պիտի հարցնեի ներկա գտնվող նախարարներին, ոչ թե կողմնորոշվելու համար, թե ում տամ իմ ձայնը, իմ ձայնը տրված է անշուշտ, թե կառավարությունն ինչպե՞ս է մտածում կիրառել այս օրենքը: Ոչ թե, կասեի, որպես հուշարձան և թանգարանային պատկանելություն, այլ որպես հունական խորհրդարանի նախաձեռնություն և միջազգային ամբիոններում, և եվրոպական տարածքում, և անգամ ՄԱԿ-ում:

Շնորհակալություն:

(*Ծափահարություններ ՊԱՄՕԿ-ի թևից*):

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Պավսանիաս Զակոլիկոս) – Խոսք ունի պարոն Բանտուվասը:

ԿՈՆՍՏԱՆԴԻՆՈՍ ԲԱՆՏՈՒՎԱՍ – Պարոն նախագահ, տիկնայք և պարոնայք գործընկերներ: Մեծ ուշացումով, որն անպայման առնչվում է այն հիշողությանը, որ Հունաստանը, լինելով թուրքերի հանցագործության ամենաողբերգական զոհը, պետք է հատուցեր հարգանքի պատշաճ տուրք հայերի ջարդի եղերական զոհերին և դատապարտած լիներ այն ոճիրը, որն աննախադեպ է մարդկության պատմության մեջ և որը բնութագրում է թուրք ազգի ինքնությունն ու որակը:

Կկամենայի այս առաջարկությունը խմբագրողին նկատել, որ առաջին հոդվածում թուրքական վարչակարգին անդրադառնալը գուցե մեղմ է և թերարժեք: Պետք է ձևակերպենք՝ «Թուրքիայի» և որոշակի նշենք պատմական ժամանակը: Այդ կլինի պատմականորեն արդարացին, և այդ կլինի ճշմարիտը: Որովհետև, ինչպես ճիշտ կերպով ասացին նախորդ բանախոսները, այն միայն մեկ որոշակի վարչակարգի վճիռը և գործողությունը չէր, Թուրքիայում ոչ ոքի կողմից չդատապարտվեց, պատմական ճշմարտությունը վերականգնելու ոչ մի փորձ չեղավ, ներողամտություն հայցելու մի փորձ՝ ոչ միայն մարտիրոսացած հայ ժողովրդից, այլև համայն մարդկությունից: Հետևաբար, հոդվածն այսպես պետք է խմբագրվի:

ՍՏԵՖԱՆՈՍ ՍՏԵՖԱՆՈՊՈՒԼՈՍ – Ընդունում ենք, պ. Քանտուվաս: Եթե կառավարությունը ևս ընդունի, այդպես էլ առաջ կշարժվենք:

ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՍ ԲԱՆՏՈՒՎԱՍ - Եղավ մեծ հապաղում. հապաղում, ինչպես պոմտացիների ողբալի ջարդի տարելիցի դեպքում: Հունաստանը և նրա խորհրդարանը, մեծ հաշվով, միշտ արդարադատ են եղել Թուրքիայի հանդեպ թե՛ պատմության գնահատման և թե՛ ողբերգական զոհերին հարգանքի տուրք մատուցելու հարցում, անկախ այն բանից՝ հայե՞ր են, թե հույներ:

Տեսաք, թե այս հարցերի նկատմամբ պաշտոնական Հունաստանի անտարբերությունն ուր հասցրեց: Համաշխարհային հասարակական կարծիքը սվաղել են աղավաղված պատմական դեպքերով, չարաճճիգ կեղծիքներով: Եվ տեսաք թուրքական այս նոր ռազմավարության զարգացումը հենց Թրակիայի հարցում, երբ գալիս են Ամերիկա – մեր այդ չակերտավոր բարեկամների մոտ, լկտիությամբ արծարծելու գոյություն չունեցող մի թեմա, այն դեպքում, երբ նրանց չեն մտահոգել ոչ հայերի ջարդը, ոչ էլ Հոնիայի հույների ջարդը, Կոնստանդնուպոլսի ոճիրները, հունաթափումը, ժողովրդագրության կեղծումն Իմբրոս և Տենեդոս կղզիներում: Այն դեպքում, երբ դեռևս չի չորացել Աթիլայի արշավանքների ժամանակ հույն գերիների ջարդի մասին Դենկթաշի անմոռ հայտարարություններով Կիպրոսից ստացված բղթակցությունների քանաքը, գալիս են ու հարուցում գոյություն չունեցող մի թեմա՝ աղավաղելով պատմությունը, ժխտելով ճշմարտությունը, նույն պահին անգիտանալով Թուրքիայի կողմից լեռնային Քուրդիստանում կատարվող ջարդը, երեխաների ջարդը, ուխտավայրերի հողին հավասարեցնելը, դպրոցների ու հիվանդանոցների ռմբակոծումը, բնակիչների տեղահանումները, և միևնույն ժամանակ թույլ են տալիս նրանց բախելու Եվրոպական միության դռները, վիճարկելու և, դժբախտաբար, ստանալու աշխարհի այդ տագնապալի տարածաշրջանում ժանդարմի դեր կատարելու լիազորություն:

Կուզենայի վերջապես իմանալ, թե ե՞րբ պիտի դադարենք դյուրաթեք ողնաշար ունենալուց, և ե՞րբ պիտի հասկանանք, որ այդ մարդկանց քաղաքականությունը դիմագրավելու վատագույն մեթոդը զիջումն է ու նահանջը:

Պարտավոր եմ այս պաշտոնական ամբիոնից շնորհավորելու իմ գործընկերներին, որոնք մտցրին օրենքի այս առաջարկությունը: Այսօր խորհրդարանը կոչված է հատուցելու մի բարոյական պարտք ու մի բարոյական պարտավորություն մարտիրոսացած հայ ժողովրդի հանդեպ, այլև բարոյականության, մարդկային իդեալների, մարդկային արժեքների հան-

դեպ, միաժամանակ դատապարտելու և մերժելու հանցագործ միջոցներն ու դեղատոմսերը: Եվ այս հարցում Թուրքիան պետք է վիճարկի գյուտարարության միակ վկայականը, որովհետև առաջինը նրանք յուրացրին ցեղասպանության ու ժողովրդագրական խեղաթյուրման եղանակները, բարոյական ամեն մի հանդուրժողականության, բարոյական ամեն մի հարցի, եթե կուզեք, նման հանցագործությունների հանդեպ մարդկային հակազդեցության ոտնահարման ու ոչնչացման եղանակները:

Պարտավոր եմ այս նախաճեռնության համար շնորհավորել «Քաղաքական գարունի» իմ գործընկերներին, և սա մի առիթ է, որպեսզի հիշեցնենք մարդկությանը և, հատկապես ԱՄՆ-ին, որը վերջերս Թրակիայի գոյություն չունեցող հարցը քննարկելիս հանդես բերեց մեր հարևան երկրի մեթոդները: Մեծ լկտիություն, համաշխարհային հանրության նկատմամբ մեծ արհամարհանք է, քանի դեռ առկախ են մնացել նման հանցագործություններ, որոնք շարունակում են խաղարկվել մեր օրերում՝ հիմնված պատմության խեղաթյուրման վրա:

Ես ողբերգական արտոնությունն ունեցա, պ. նախագահ, այլ գործընկերների հետ վերջերս այցելելու Իմբրոս կղզի և հավաստիանալու, թե ի՞նչ է մնացել այդ վայրում, որ նույնպես եղավ Թուրքիայի քաղաքականության գործադրման վայր, ոչ թե այն վարչակարգի, որը հանգեց հայերի ջարդերին, այլ այսօրվա Թուրքիայի, ժամանակակից քաղաքակիրթ Թուրքիայի: Այնտեղ տեսանք քրիստոնյաների՝ փողոց նետված ոսկորներ, եկեղեցիների սուրբ սեղաններին կապված խոզեր, միզարաններ դարձած սրբավայրեր և ուրիշ բաներ, որոնք սարսափելի տպավորություն են գործում: Այդ ամենը մի՞թե չի սթափեցնում միջազգային հանրությանը: Չե՞ն սթափվում միջազգային ատյանները: Արդյո՞ք, մեր ձեռնարկումները չէին օգնի թարմացնելու միջազգային հանրության հիշողությունը, աշխարհն այսօր կառավարողների հիշողությունը: Եվ մի՞թե այդ ամենի մասին պետք չէ շարունակ հիշատակել, քանզի հիշողությունը կորցրած ժողովուրդը և ազգը դատապարտված են մահվան:

Ժամանակ առաջ, ՆԱՏՕ-ի հանձնաժողովի շրջանակներում, այցելել էինք Սան-Ֆրանցիսկո: Տեղի հունական գաղութը մեզ հայտնեց, թե ԱՄՆ-ի դպրոցներից ջնջվել է այն ամենը, ինչ վերաբերում է Թուրքիայի այդ գործունեությանը և Հունաստանի դերին: Հայտնի է, թե ինչ հսկայական միջոցներ են տրամադրվում, որպեսզի կարողանան բացառաբար ստությամբ ապակողմնորոշել միջազգային հասարակական կարծիքը, որի հետևանքն այն է, ինչը տեսանք, ինչն ապրում ենք, ինչին ենթարկվում ենք: Թուրքիան ծավալում է այսպիսի քաղաքականություն: Եվ ես զարմանում եմ, որ այստեղ ասվեց, թե պետք է զգուշանանք, ոչ չստացվի այլակարծությունը շրջանցող, հավանական ռևանշիզմի և վրեժխնդրության մի պատգամ: Բայց որտե՞ղ ենք այդպիսի բան նկատում: Կարծում եմ, նման բնութագրումների վայրն այս դահլիճը չէ, այլ մեկ ուրիշ դահլիճ: Այսպես կարող են թերևս դատել նրանք, ում վերաբերում է քննարկվող օրենքը:

Բալկաններում ծագած պատերազմի ընթացքում այցելեցինք Բոսնիա, ուղղափառների և մուսուլմանների շրջանը, և համոզվեցինք, որ այնտեղ կրկնվել են ժողովուրդների բնաջնջման այս նախօրինակները: Կրկնվեց նույն դեղատոմսը: Այնտեղ կան շրջաններ, լճեր, ավազաններ, ուր մուսուլմանների ձեռքով թաղված են հարյուրավոր ուղղափառներ.

նրանք կիրառում են, կրկնում եմ, նույն քաղաքականությունը, ինչ թուրքերն այն ժամանակաշրջանում, որին նվիրված է խորհրդարանի ներկա քննարկումը:

Ե՞րբ պիտի արթնանա միջազգային հասարակական կարծիքը, և ե՞րբ պիտի մենք հասկանանք, թե վերջապես պարտավոր ենք իրազեկ դարձնել միջազգային հանրությանը: Պե՞տք է մի օր վերջ տանք նոր թուրքական ծավալապաշտական քաղաքականությանը կրավորական եղանակով դիմագրավելուն:

Պարոն նախագահ, ես քվեարկում եմ այս առաջարկի օգտին և շնորհավորում եմ այն ներկայացնող իմ գործընկերներին:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Պավսանիաս Զակոլիկոս) – Ջայնը տրվում է պարոն Պապաթեմելիսին:

ՍՏԻԼԻԱՆՈՍ-ԱՆԳԵԼՈՍ ՊԱՊԱԹԵՄԵԼԻՍ – Պարոն նախագահ, ասված է, թե հիշողությամբ գոյություն ունես, մոռացությամբ անհետանում ես երկրի երեսից: Ցեղասպանության դեմ պատմության մեջ առաջին դատը, ինչպես հայտնի է, տեղի է ունեցել Ք. ա. 405թ.: Դա Լամպսակոսի դատն էր, Պելոպոնեսյան պատերազմի ավարտից մեկ տարի առաջ: Այդ ժամանակ աթենացիները հայտարարել էին, որ եթե սպարտացիները և նրանց դաշնակիցները պարտվեն, իրենք կտրելու են թշնամիներից յուրաքանչյուրի աջ ձեռքը, և ավելին՝ դրանից մի քանի շաբաթ առաջ էլ ջրասույզ էին արել, խեղդել Եգեյան ծովում սպարտացիների դաշնակիցներ կորնթացիներին ու Անդրոս կղզու բնակիչներին: Բայց երբ աթենական նավատորմի պարտությունից հետո ձերբակալվեց աթենացի ծովակալ Ֆիլոկլիսը, Լիսանդրոսը նրան հարցրեց, թե ի՞նչ պատիժ կկամենար, որ սահմանեն իրեն: Դիմելով Լիսանդրոսին՝ նա հստակ պատասխանում է. «Կկամենայի այն պատիժը, ինչ որ դու, եթե դու պարտված լիներ»: Սա պատմության առաջին Նյուրնբերգն է: Անշուշտ, հետևել են մարդկային քաղաքակրթության այսպիսի որոշակի դրական պահեր, որոնք, սակայն, հաճախ թաղված են այրան, ատելության և բարբարոսության, ավելի ճիշտ՝ բազմաբարբարոսության խավարի մեջ, ինչը մեր դարում բազմիցս կրկնվեց և այսօր էլ կրկնվում է հարևան երկրում, որն, այդուհանդերձ, շարունակում է մնալ Արևմուտքի վայելչասեր երեխան:

Այդ պատճառով Միացյալ Նահանգները վաղն առավոտյան մեր հարցը նորից կհղեն իրենց հանճնաժողովին քննարկման, մինչդեռ շատ լավ գիտեն, թե ինչ է կրել հելլենականությունը, մինչդեռ շատ լավ գիտեն, թե Հունաստանի մուսուլմանները Եվրոպայի ու Մերձավոր Արևելքի ամենահարուստ մուսուլմաններն են, թե Հունաստանի մուսուլմանները միակ մուսուլմաններն են, որոնք ապրում են ժողովրդավարական բացարձակ ազատության պայմաններում, մինչդեռ շատ լավ գիտեն, թե իսկապես ինչ է անում Թուրքիան, ինչ չի անում և չի էլ մտածում անել Հունաստանը:

Դրական է այն իրադարձությունը, որ մենք որոշում ենք ճանաչել և միաժամանակ հիշատակի օր հայտարարել հայերի ցեղասպանության տարելիցը: Բայց այս կետում, որտեղ գտնվում ենք թե՛ հույներս և թե՛ հայերը, և ոչ միայն մեր երկու ժողովուրդները, այլև սիրիացիները, իրանցիները, իրաքցիները և կամ որևէ ուրիշ ժողովուրդ, որը վերջին տասնամյակներում դարձել է թուրքական ծավալապաշտության զոհ, այդ ոճրի ամենանշանակալից ու ամենաարժանի ճանաչումը և այդ ցեղասպանությունների ու

խնդրո առարկա ցեղասպանության միլիոնավոր անմեղ զոհերի արդար հատուցումը կլինի այն, որ մի օր գիտակցենք, թե պարտավոր ենք, որպես թուրքական գւսզանության զոհ դարձած ժողովուրդներ, ներդաշնակել մեր գործունեությունը և կիրառել մի արդյունավետ կանխարգելիչ մարտավարություն այդ ոճրագործների դեմ, որոնք, հենց այն պատճառով, որ Արևմուտքը հանցակից է նրանց ոճիրներին՝ իր հանդուրժողականությամբ կամ թե գործնական մասնակցությամբ, կիրառեցին և շարունակում են այսօր էլ գործադրել ցեղասպանության ոճիրներ:

Եվ այստեղ չեմ կարող որևէ տարբերություն դնել ղեկավարության և հանցագործների միջև: Որովհետև ղեկավարությունը կարող է ծրագրեր հղանալ ու հրահանգներ տալ, բայց այդուհանդերձ պատասխանատվությունը, և՛ որպես բարոյական պատասխանատվություն, և՛ որպես քրեական պատասխանատվություն, և՛ որպես մարդկային բազմադեմ պատասխանատվություն, յուրաքանչյուր հանցագործի, յուրաքանչյուր չարագործի անհատական պատասխանատվություն է, և, հետևաբար, չեմ կարող որևէ մեկին առանձնացնել:

Ես նշանակալից իրադարձություն եմ համարում, որ այսօր, մեր այս նիստի պահին, Միացյալ Նահանգներում քննարկում են գերմանական ժողովրդի պատասխանատվությունը ժամանակին Գերմանիայի կատարած հանցագործությունների համար, որոնք, անշուշտ, պարզապես նացիստական հանցագործություններ չեն:

Կարծում եմ, որ մենք գործ ունենք մի վարչակարգի հետ, որն ըստ էության հանցագործ է և որի թիրախը հելլենականությունն է, նրա ոչնչացումը: Կուզենայի վկայակոչել շատ բնութագրական մի հարցազրույց, որն այսօր իր ժողովրդի ազատության համար պայքարող մի մարդ՝ քրդական շարժման առաջնորդը, հնարավորություն ունեցավ շաբաթներ առաջ ներկայացնել հույն ժողովրդին: Թույլ տվեք մեջբերել թերևս ամենակարևոր հատվածը, որ մեզ է վերաբերում, Պ. Օջալանն ասում է. «Ես հավաստում եմ հետևյալ թուլությունը Հունաստանում՝ թե՛ քաղաքական գործիչների և թե՛ հասարակական կարծիքի մեջ, Դավոշի ոգին խեղդեց հույների ոգին: Երևան են գալիս նորանոր սպառնալիքներ և բռնադատումներ:

(*Այս պահին նախագահական աթոռը զբաղեցնում է խորհրդարանի 4-րդ փոխնախագահ պ. Նիկոլաոս Կացարոսը*):

Թուրքերը հասկանում են միայն դիմադրության ու պայքարի լեզուն: Ես ձեզ կոչ չեմ անում հարձակվելու կամ ներխուժման զորք կազմակերպելու, բայց դուք ունեք սրբազան իրավունքներ»: Այս խոսքերը, տիկնայք և պարոնայք գործընկերներ, մեզ ասում է մի օտարական: «Կիպրոսը գրավված է. պատմականորեն ապացուցված է, որ ամբողջ Էգեյան ավազանը և Փոքր Ասիան բնակեցված են եղել հույներով, և նրանք բոլորը բնաջնջվել են: Թուրքերն այժմ ձգտում են հելլենականության փուլ առ փուլ բնաջնջմանը՝ սկսելով Էգեյան կղզիներից: Ջանք են թափում բարձրացնելու Արևմտյան Թրակիայում թուրքական փոքրամասնության հարց՝ ներխուժման նախադրյալներ ստեղծելու նպատակով: Եթե նահանջը շարունակվի, եզրափակում է օտարականը, ինչպես եղել է անցյալում, ապա վստահ եղեք, որ հելլենականության կորուստները մեծ կլինեն»:

Եվ իրոք, այս ահազանգությունը գուցե ամենակարևոր պատգամն է, որ կարող ենք ստանալ այսօր այստեղ մեր կատարած քննարկումից:

Բնականաբար, այս ամենը պետք է կատարվեր շատ տարիներ առաջ, բնականաբար, մենք պետք է շարժվեինք Դենկթաշի այն լկտի խոստովանությունից հետո, թե հոշոտվեցինք, տանջանքների ենթարկվելուց հետո մորթվեցինք մեր 1619 կիպրոսցի հույն եղբայրները, որոնք համարվում էին անհայտ կորածներ: Եվ տարօրինակ է, որ մեզանից ոչ մեկը չհուզվեց: Ումի՞ց ենք ապասում, տիկնայք և պարոնայք գործընկերներ, իտալացիների՞ց, գերմանացիների՞ց, ֆրանսիացիների՞ց, ամեն կարգի բարեկամներից ու դաշնակիցների՞ց: Ոչ ոք չի հուզվելու մեր չարչարանքներից և ոչ ոք չի պաշտպանելու մեր տարածքային ամբողջականությունն ու ազգային արժանապատվությունը, եթե մենք Էգեյանի մյուս ափի հանցագործներին չհասկացնենք, որ չեն կարող այսուհետև խաղալ, ինչպես ուզում են:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս) – Չայնը տրվում է պարոն Նիկոպուլոսին:

ԱՆԱՍՏԱՍԻՈՍ ՆԻԿՈՊՈՒԼՈՍ – Տիկնայք և պարոնայք գործընկերներ: Այսօր քննարկում ենք «Քաղաքական գարունի» նախաձեռնությունը, որն ունի նաև մեկ ուրիշ իմաստ, մեկ ուրիշ կերպարանք: Այն կարող է լինել քարոզչության գերազանց միջոց:

Թույլ տվեք ինձ այս առիթով երկու միտք արտահայտել: Մենք զարմանում ենք, թե ինչո՞ւ թուրքական պետությունը, թուրքական քաղաքականությունն իր այսքան ոճիրներով, որ պատմականորեն ծանրացած են նրա վրա, այսօր կատարվող հանցագործություններով, իր պետականությունը բնորոշող վարչակարգով, որովհետև այն ժողովրդավարական պետություն չէ, այն շատ առումներով երևութական ժողովրդավարական վարչակարգ է: Ինչո՞ւ, ուրեմն, կարողանում է համաշխարհային հասարակական կարծիքի աչքերին և հատկապես համաշխարհային բեմի ձեռնարկումներում ներկայանալ իր հարևաններից և ոչ հարևաններից հարվածներ կրողի դերում: Ինչպե՞ս, ուրեմն, այսքան պատմական ու քաղաքական բեռներ ունենալով հանդերձ, այդ ամենը հաջողեցնում է:

Հունաստանը պետք է դեռևս տարիներ առաջ մշակեր համակարգված մի մեխանիզմ, որը սովորաբար անվանում ենք քարոզչություն: Դժբախտաբար, սակայն, այսպիսի մեխանիզմի և այդպիսի գործելակերպի մենք չենք դիմում:

Միայն քաղաքական կամ գաղափարախոսական որոշ մղումներով օգտագործվել է քարոզչության սահմանափակ մի համակարգ: Համակարգ, սակայն, այնպիսին, ինչպիսին գրեթե բոլոր պետությունները, բոլոր կառավարությունները, բացի փոքրաթիվ բացառություններից, որոնց թվին պատկանում ենք նաև մենք, ժամանակ առ ժամանակ օգտագործեցին, իրենց ազգային շահերն առաջ մղելու համար, որը մենք երբեք չենք մտահղացել և երբեք չենք օգտագործել:

Ուստի Հայոց ցեղասպանության ճանաչումը, ինչը մեր առաջարկության նպատակն է, կարող է լինել այդպիսի մի միջոց նման նպատակի համար: Կատարելապես անհրաժեշտ է, ուրեմն, քարոզչությունը, որ պետք է ստեղծի և ծավալի մեր երկիրը, որպեսզի ծառայի իր ազգային շահերին մի աշխարհում, ինչպիսին այսօրվա աշխարհն է, այսքան իրարամերժ շահերի և այսպիսի կեղծավորության աշխարհը: Եվ վաղը, ինչպես նշեցինք նախորդ ելույթ ունեցած գործընկերները, Միացյալ Նահանգների կոնգրե-

սում և սենատում կտեսնենք, որ զարգանում է մի «պրամա»՝ կեղծավորություն տերմինի բուսնասիրական նշանակությամբ:

Մի՞թե կարելի է թողնել, որ այս ամենն անցնի մեր կողքով, ձեզ եմ դիմում, պ. նախարար, որ այստեղ եք որպես կառավարության ներկայացուցիչ: Մի՞թե պետք չէ, որ վերջապես մի օր ստեղծենք ազգային քարոզչության մի ամբողջական համակարգ: Ինչպե՞ս պիտի պաշտպանվենք այսքան սպառնալիքների դիմաց, այսքան վտանգների, և հատկապես սպառնալից կերպով մեր դեմ շարժվող օտար շահերի այսքան պահանջկոտ համակարգի դեմ:

Քանի դեռ Հունաստանը նման ավանդույթ չունի, մենք հարձակվող ուժ չենք, մեր արտաքին քաղաքականությունը երբեք հիմնված չի եղել սպառնալիքի վրա, այսուհետև նույնպես չի կարող հիմնվել: Նման իրավիճակում ի՞նչ կարող ենք ձեռնարկել: Միայն քարոզչության մի համակարգ: Այդ, սակայն, նախապես ենթադրում է որոշակի սկզբունքներ, որոշակի կանոններ: Այդ կանոնները պետք է լինեն հաստատուն և, ինչպես ասում ենք, անշեղ գիծ մեր արտաքին քաղաքականության մեջ, որը չպետք է վերանայվի անձերի փոփոխումից կարևոր աթոռների վրա, ինչպիսին արտգործնախարարությունն է և մամուլի նախարարությունը:

Եթե, ուրեմն, մենք չստեղծենք այսպիսի մի ամբողջական քաղաքականություն, մենք ոչ մի ազգային շահ չենք ունենա: Հետևաբար, ժամանակն է, որ մենք հանգենք մի համակարգի, որին պիտի ծառայենք միջկուսակցական, վերկառավարական եղանակով, համակարգ, որը պիտի ծառայի մեր ազգային շահերին, որին չեն սպառնալու ոչ ներքին փոփոխությունները և ոչ էլ արտաքին ճնշումները:

Ուրեմն, այս որոշակի առաջարկությունը, որի համար արտահայտում ենք մեր գոհունակությունը և գնահատանքը խորհրդարանի մյուս թևերին, որոնք այն ուղեկցում են իրենց վստահությամբ և գնահատում իրենց քվեով, կարող է լավագույն կերպով դառնալ այդպիսի մի միջոց նման մի նպատակի համար:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս) – Ձայնը տրվում է պարոն Ղայտանիդիսին:

ԴԻՄԻՏՐԻՈՍ ՂԱՅՏԱՆԻԴԻՍ – Պարոն նախագահ, տիկնայք և պարոնայք գործընկերներ: Թեկուզ հապաղումով, հայերի ցեղասպանության թեման մտնում է հունական խորհրդարան: Ես կողմ եմ այդ որոշմանը, բայց ուզում եմ մի քանի դիտողություն անել կառավարությանը:

Ազատության, հայրենիքի և արդարության համար մեկուկես միլիոն զոհ տված ժողովրդի ողբերգության քննարկմանը ներքին գործերի, ապակենտրոնացման և հանրային կառավարման նախարարը պետք է ներկա լիներ:

Երկրորդ, պետք է այստեղ լինեին նաև այն պատգամավորները, որոնք սերում են գաղթական ընտանիքներից, որպեսզի սատար կանգնենք այդ ժողովրդի խնդրանքին, ինչը պետք է ընդունվի հունական խորհրդարանի կողմից:

Պատմականորեն, պ. նախագահ, տիկնայք և պարոնայք գործընկերներ, ինչպես ասացի նաև նախորդ անգամ, երբ քննարկվում էր Պոնտոսի հելլենականության ցեղասպանությունը, 752թ. Տրապիզոնում հիմնվում է առաջին գաղութը՝ Արկադիայի Տրիպոլիսի քաղաքացիների կողմից, 712թ.

Սպարտայի գաղութը Սամսունտում, և 412թ. տեսնում ենք, որ հայերը և հույները համատեղ բնակվում են Սև ծովի ափերին: Երկու հնագույն և պատմական ժողովուրդներ: Ճակատագիրը պատմության ընթացքում չնորհեց, որ այդ վայրում նրանք ապրեն եղբայրաբար: Երկու ժողովուրդներն էլ, ինչպես և քուրդ ժողովուրդը, շատ բան են պարգևել մարդկության պատմությանը:

Հավաննաբար այս ժողովրդի ողբերգությունը հարց դրեց Փոքր Ասիայի, հատկապես Պոնտոսի հույների առաջ, և արթնացրեց նրանց խորը քնից: Երբ սկսվեց հայերի հալածանքը և ցեղասպանությունը, հույները կազմեցին առաջին պարտիզանական խմբերը՝ պաշտպանելու համար հելլենականության պատիվն ու ամբողջականությունը: Հետևաբար, մենք ևս պետք է երախտապարտ լինենք այն մարդկանց, որոնց ողբերգությունը հնարավորություն տվեց, որպեսզի մենք ոչ թե մեկ միլիոն զոհ տանք, այլ մնայինք 350 հազարի վրա:

Հայերն ունեն իրենց քաղաքակրթությունը և իրենց ընթացքը մարդկության պատմության մեջ: Իրենց նախնիների թողած գործերը: Եվ մենք պարտավոր ենք, թեկուզ ուշացումով, այս ժողովրդին, որը շատ ծառայություններ է մատուցել, մեր այսօրվա որոշումով գոնե հնարավորություն տալ պայքարելու և պահանջելու այն, ինչն իրեն է պատկանում:

Հայ ժողովուրդն այսօր դարձյալ հալածանքի է ենթարկվում իսլամական աշխարհի կողմից: Ոչ մի օգնություն և օժանդակություն չկա հայ ժողովրդին, մանավանդ գերտերություններից:

Պիտի ուզեի, սակայն, որոշ բաներ հիշեցնել ձեզ, որովհետև, ինչպես գիտեք, ոչ պատմաբան եմ, ոչ բանասեր, այլ գավառական մի հողագործ, և ասել հետևյալը: Երբ Պոնտոսի մեր ժողովուրդը մորթվում էր Քեմալ Աթաթուրքի հորդաների կողմից, ոչ ոք չէր խոսում ժողովրդի միասնության անունից: Եվ ես բացարձակապես համաձայն եմ, որ ժողովուրդներս ոչինչ չունենք կիսելու իրար միջև: Սակայն շահերի պատճառով ժողովուրդները մորթվում են: Չենք կարող անգիտանալ Լենին-Քեմալ Աթաթուրք համաձայնությանը: Եվ հետևանքը հայտնի է: 350 հազար պոնտացիների ջարդը, Պոլսի ու Փոքր Ասիայի հելլենականության հալածանքը և փոքրասիական մեծ աղետը:

Որոշ մարդկանց ձայնը չլսվեց: Հանուն ո՞ր տրամաբանության: 1938-1947թթ. հայերը և Վրաստանի հույները հալածվեցին մեկ ուրիշ բռնապետի կողմից: Սև ծովի հունական տարրի կորստի մատնված մարտիրոսների թիվը հասնում է 65-70 հազարի: Բայց հանուն ո՞ր տրամաբանության: Եվ ո՞րն էր որոշ մարդկանց, կուսակցությունների ձայնը մի ամբողջ ժողովրդի ողբերգության առիթով:

Այսօր, պ. նախագահ, վերջապես քննարկում ենք այս առաջարկությունը: Եվ ինչպես ասացի նաև իմ խոսքի սկզբում, շնորհավորում եմ նախաձեռնողներին: Հարկավոր էր, սակայն, ավելի իրազեկ պահել նաև հասարակական կարծիքը, նաև զանգվածային լրատվության միջոցներին այն սրբազան պարտականության վերաբերյալ, որ մենք տածում ենք եղբայր և ուղղափառ ժողովրդի հանդեպ, որովհետև մեր ուղին և մեր կրոնը միավորում են մեզ:

Այսօր մեկ ուրիշ, մարտիրոս ժողովուրդ՝ սերբերը, նույնպես ունի իր տառապանքները, իր հարցերը և իր ողբերգությունը: Հնարավոր է, որ նրա

ղեկավարությունը դավաճանել է իրեն: Դա իմ կարծիքն է, և տա Աստված, որ սխալված լինեմ, որովհետև Սերբիայի նախագահը կլինի ուղղափառ սերբ ժողովրդի կործանողը:

Այսօր մեկ ուրիշ ժողովուրդ մորթվում, հալածվում, սպանվում է: Դա հնագույն ժողովուրդ է այդ տարածքում՝ քուրդ ժողովուրդը: Որտե՞ղ է մեծ ուժերի գորեղ ձայնը: Բոլորը, սակայն, լռում են այս ողբերգության առաջ, որովհետև շատ լավ գիտեն, որ Թուրքիայի 60 միլիոնանոց շուկան առավել նախընտրելի է, քան այդ տարածքի ժողովուրդների կյանքը:

Մյուս դիտողությունը, որ կուզենայի անել կառավարությանը, հետևյալն է:

Այստեղ ներկա գտնվողներս, ճնշող մեծամասնությամբ, պարտավոր ենք այս առաջարկությանը կողմ քվեարկել և կքվեարկենք: Սակայն միայն դա բավական չէ: Պարոն վիոխնախարար, կառավարության պարտականությունը պետք է լինի՝ այս թեման հասցնել բոլոր միջազգային կազմակերպություններին, Եվրոպական միություն, Եվրախորհրդարան, ՄԱԿ, որտեղ էլ հաստատապես պետք է լսվի Հունաստանի խորհրդարանի որոշումը, թե՝ սատար է կանգնում հայ ժողովրդի ողբերգությանը: Պետք է համաշխարհային հասարակական կարծիքին տեղյակ պահենք համալսարանական հաստատությունների, համալսարանական հասարակության միջոցով:

Պարոն նախարար, պետք է, այսինքն, տեղ հասցնենք մի առաջարկություն, որ դպրոցական դասագրքերում, վերջապես հասկացեք բոլորդ, հասկանանք բոլորս, պետք չէ գրենք միայն պատմությունը և ճակատամարտերն, այդ էլ լավ ենք անում, որ տեղի ունեցան Պելոպոնեսի ազգային ազատագրական պայքարի ընթացքում, բայց անտեսվում է Փոքր Ասիայի, Պոնտոսի ու հայ ժողովրդի խոշոր ներդրումը և պատմությունը: Եթե կորցնենք մեր հիշողությունը, կկորցնենք այն, ինչը պարտավոր ենք ավանդել երիտասարդներին:

Պետք է գրվի Փոքր Ասիայի ու Պոնտոսի հելլենական տարրի և հայ ժողովրդի պատմությունը, որպեսզի երիտասարդները կարողանան դարձյալ տեսիլքներ ունենալ, որոնք այսօր վտանգված են Թուրքիայի հավակնությունների պատճառով: Թուրքական քաղաքականությունը երիտթուրքերից ու Քեմալ Աթաթուրքից մինչև օրս չի փոխվել: Թուրքիայում երբեք ժողովրդավարություն գոյություն չի ունեցել և չի էլ ունենա, քանի առկա է ռազմատնտեսական վարչակարգը:

Մեր նոր սերունդը, սակայն, պարտավոր է, ուր էլ որ գտնվի, հատկապես հելլեն սփյուռքը, որ ավելի քան յոթ միլիոն է, տեղյակ լինել հայ ժողովրդի ողբերգությանը: Պետք է, սակայն, սփյուռքի հույն ժողովրդին իրազեկ պահել նաև մեր խնդիրներին: Պետք չէ մոռանանք պատմությունը: Պետք չէ մոռանանք այն, ինչ կատարել են մեր նախնիները, մեր պապերը:

Գնացել էի Թիֆլիս ու Սոչի՝ որոնելու համար այն հույներին, որոնց աքսորել էր Ստալինը: Այնտեղ հանդիպեցի հույն ժողովրդի ողբերգությանը, այնտեղ հանդիպեցի հայ ժողովրդի ողբերգությանը, որոնց վիճակվել է հույների ճակատագիրը: Մեր պարտքն է այսօր, թեկուզև 80 տարի հետո, ասել «այո» մեր եղբայր և ուղղափառ հայ ժողովրդի խնդրանքին: Շնորհակալություն:

(*Ծափահարություններ*):

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս) – Ձայնը տրվում է պարոն Վեզդրեվանիսին:

ԻԼԻԱՍ ՎԵԶԴՐԵՎԱՆԻՍ – Պարոնայք գործընկերներ, ամենից առաջ ուզում եմ շնորհավորել «Քաղաքական գարունի» պատգամավորներին այս նախաձեռնության համար, որը, պարոն նախարար, պարտքն էր բոլոր կառավարությունների, սկսած այն օրից, երբ կատարվեց հայ ազգի այս սարսափելի ցեղասպանությունը:

Երկրորդ, ուզում եմ շնորհավորել խորհրդարանի նախագահությանը, որ այս քննարկումը որոշեց այսօր, ամերիկյան կոնգրեսում վաղը կայանալիք քննարկման նախօրյակին՝ Թրակիայում մուսուլմանական տարրի հանդեպ ունեցած վերաբերմունքի հարցով: Եվ մեր այս քննարկումը թող ուղերձ դառնա և՛ սենատորներին, և՛ ամերիկյան ժողովրդի կոնգրեսականներին, որպեսզի հասկանան հելլենականության ու թուրքականության միջև գոյություն ունեցող տարբերությունը:

Ժամանակն է, որ իրերը կոչենք իրենց անուններով:

Երրորդ, ուզում եմ կոչ անել Հունաստանի կոմկուսին, որն առայժմ տարբերակված է այս դահլիճում գտնվող ազգի ներկայացուցիչների միասնական կամքից, համակարծիք լինել մի հարցում, որի իսկությունը ոչ մի կասկած չի հարուցում: Դա մի ազգի ցեղասպանություն էր, ինչը վաղուց պետք է դատապարտված լիներ համաշխարհային հասարակության կողմից, որպեսզի ծառայեր իբրև կանխարգելիչ միջոց այն ամենին, ինչ հետագայում կրկնվեց ուրիշ շատերի կողմից՝ դրոշակակիր ունենալով թուրքականությունը:

Այս ամենից հետո կուզենայի հայտնել իմ համեստ մտորումները: Հանգամանալից էր մեր կուսակցության կողմից պարոն Ներաճձիսի զեկուցումը, ինչպես նաև մյուս բանախոսների ելույթները: Կուզենայի մի տարբերակում մտցնել, և թող ինձ ներեն: Մեզ առանձնապես հուզեց այն եղանակը, որով ներկայացավ գործընկեր պ. Ակրիտիդիսը: Ըստ իս, այս հարցում նրան չեն զիջում նաև պ. Վունացոսը և հարցը մանրամասն ու սրտի խորքից ներկայացրած պ. Բանտուվասը:

Մի քանի միտք հայտնեմ: Այս դահլիճում բոլորս ներկայացնում ենք հույն ազգը: Պատմության մեջ պայքարի և զոհաբերությունների ազգ: Եվ, մեր ազգային բանաստեղծ Կոստիս Պալամասի խոսքերով ասած. «Պարտք ենք բոլոր նրանց, որոնք անցան, նրանց, որոնք պիտի գան անցնեն, իբրև դատավորներ պիտի մեզ դատեն դեռ չծնվածները և մեռյալները»: Եվ եթե ուզում ենք լսել մեր բանաստեղծին, պետք է մեծ պատասխանատվությամբ կանգնենք հույն ազգի գոյատևման դիրքերում:

Վեց դար շարունակ սպառնալիք կրեց, վտանգվեց և սպառնալիք է կրում հույն ազգի ազատությունը նույն ժողովրդի կողմից, նույն ազգի կողմից, պարզ ասած՝ թուրք ազգից: Նույն ձևով, գուցեև ավելի մեծ չափերով, սպառնալիք կրեց հայ ազգի ազատությունը և նրա գոյությունը: 1915թ. ջարդով հայ ժողովրդին բնաջնջելու ձգտումը հասավ իր գագաթնակետին: Մենք՝ եվրոպացիներս, անտարբեր մնացինք: Եվրոպացիներից շատերը ոչ միայն անտարբեր մնացին, այլև օգնեցին, որովհետև այդ ոճիրներից հեռու էին գտնվում: Այդպես էին կարծում, իրերն իրենց անուններով կոչենք, գերմանացիները, և այսօր էլ անպատիժ են մնում...

Հետևաբար, մենք, պարոնայք գործընկերներ, որ գիտակցում ենք, թե նույն վերաբերմունքին ենթարկվեցինք նույն հանցագործի կողմից, չպետք է անտարբեր մնանք: Ու նաև, որ լավ գիտենք, թե ինչեր կրեց մեր ազգը, կարող ենք դառնալ լուսավորողները ուրիշ ազգերի, որոնք չեն ենթարկվել և չեն պատկերացնում, որ կենթարկվեն նման բաների:

Մեր այսօրվա որոշումը, պարոնայք գործընկերներ, ատելության ուղերձ չէ, փոխվրեժի ուղերձ չէ, որովհետև մեր ազգը հնագույն ժամանակներից եղել է մեծահոգի: Դա, սակայն, մի ուղերձ է՝ ուղղված համաշխարհային հասարակությանն առ այն, թե այդպիսի սարսափելի ոճիրները չեն կարող անպատիժ մնալ, գոնե բարոյապես: Այս պատգամն արդեն ասացին ուրիշ հարգարժան գործընկերներ ևս: Վստահ եմ, որ ճնշող մեծամասնությունն այն գործընկերների, որոնք այս պահին պատահաբար այստեղ չեն, նույն խոսքերով պիտի արտահայտվեին: Կարծում եմ, որ այս ուղերձը համապատասխանում է հույն ժողովրդի զգացումներին այն ձևով, ինչպես սկզբում ասացի, որ ձևակերպվել է մեր ազգային բանաստեղծի կողմից:

Ժամանակն է, որ մենք ապացուցենք, որ ոչինչ չի կարող մեզ ետ պահել մեր պարտքին ծառայելուց: Մեր պարտքն է՝ հարգել մեր քաղաքակրթության սկզբունքները: Հազարամյակների քաղաքակրթության: Քաղաքակրթություն, որն արտագրվեց մնացած բոլորի կողմից: Քաղաքակրթություն, որը սահմանելու է մարդկության ապագան, որովհետև հունական քաղաքակրթության սկզբունքներն անթակտելի են:

Ուստի մեր պարտքն է դատապարտել հայերի սահմոկեցուցիչ ցեղասպանությունը: Մենք ուղերձ կհղենք համաշխարհային հանրությանը, թե այդ (իմա՝ թուրք) ժողովուրդն անուղղելի է: Նրան ճանաչեցինք երկար դարերի մեր ստրկության տարիներին: Նրան ճանաչեցինք 1922-ին, նրան ճանաչեցինք 1955-ին, վերջերս նրան ճանաչեցինք Գիպրոսում, այսօր նրան ճանաչում է քուրդ ժողովուրդը: Թուրքական գազանությունը պետք է դատապարտվի համաշխարհային հասարակության գիտակցության մեջ: Մեր այս որոշումը թող լինի սկիզբը:

Պարոնայք գործընկերներ, հունական խորհրդարանը, թեկուզ և հապաղած, հատուցում է իր պարտքը:

Եվ քանի որ լսվեց մի աններդաշնակություն, ես կոչ եմ անում, դրանով էլ կվերջացնեմ, Հունաստանի կոմկուսի գործընկերներին, որ միանան բոլորի միասնական որոշմանը: Շնորհակալ եմ:

(*Ծափահարություններ*):

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս) – Ձայնը տրվում է պարոն Սղուրիդիսին:

ՊԱՆԱՅՈՏԻՍ ՍՂՈՒՐԻԴԻՍ (խորհրդարանի նախագահի երրորդ տեղակալ) – Պարոն նախագահ, պարոն փոխնախարար, տիկնայք և պարոնայք գործընկերներ: Հունական խորհրդարանի համար սա մեծափառ մի օր է: Նախ, որովհետև առավոտյան նիստին մեր հարգանքի տուրքը մատուցեցինք Խարիլաոս Տրիկուպիսին՝ երկրի քաղաքական կյանքը հիմնավորողին ու վերափոխողին:

Երկրորդ հանգամանքը, որի պատճառով ես սա համարում եմ Հունական խորհրդարանի համար մեծափառ մի օր, այն է, որ երեկոյան նիստում քննարկում ենք «Քաղաքական գարունի» առաջարկած օրենքը՝ Հայերի ցեղասպանությունը ճանաչելու մասին:

Հունական խորհրդարանի այս նախաձեռնությունը հարձակողական քայլ է դիվանագիտական շրջանակներում, որ պետք է վերջապես կիրառի մեր երկիրը: Մի դիվանագիտություն, որը չպետք է միայն պաշտպանվի, այլև իր ուղերձները հղի երկրի բոլոր անկյուններ:

Տարիներ առաջ, պարոնայք գործընկերներ, անհնար էր այս դահլիճում խոսել ողջակիզումների և ցեղասպանությունների մասին: Ինչո՞ւ: Որպեսզի չանհանգստացնեինք մեր հարևաններին, չանհանգստացնեինք մեր դաշնակիցներին, չանհանգստացնեինք մեր ընկերակիցներին:

Ինչի՞ հասանք: Ոչնչի: Մենք չէինք անհանգստացնում, իսկ նրանք, դժբախտաբար, առաջ էին մղում իրենց թեզերը և տեսակետները: Հետևաբար, ոչինչ չշահեցինք: Եվ ես կասեի, որ դիվանագիտության մեջ ազնվությունը շատ անգամ ընկալվում է որպես թուլություն: Լավ է, որ այսօր ճանաչում ենք հայերի ցեղասպանությունը: Լավ է, որ ճանաչեցինք պոնտացիների ցեղասպանությունը: Լավ է, որ պետք է ճանաչենք կոնստանդնուպոլսեցիների, իմբրոսցիների, տենեդոսցիների, փոքրասիացիների, արևելյան թրակիացիների ցեղասպանությունը: Լավ է, որ պետք է ճանաչենք ցեղասպանությունը, որին ենթարկվեցին կիպրոսցիները: Ուրեմն, ինչո՞ւ չճանաչենք ցեղասպանությունը, որին այսօր ենթարկվում են քրդերը:

Այդպիսի մի արարքի ճանաչումն ունի կրկնակի նշանակություն և նշանակետ: Առաջինը՝ մեր ներքին ճակատում, որովհետև նպաստում է ազգային միասնության գիտակցությանը: Պատմական հիշողության վերահաստատումը պատասխան է այն հարցերին, թե՝ ովքե՞ր ենք մենք, ինչո՞ւ կանք, ո՞ւր ենք գնում, ո՞րն է մեր տեսիլքը: Հիշողություն չունեցող ժողովուրդներն ունեցել են անցյալ և ներկա, երբեք չեն ունեցել ապագա: Նապոլեոնը, իրեն բնորոշ սուր մտքով, ասել է. «Առանց հիշողության գլուխը անպաշտպան դիրքում է»:

Արտաքին ճակատում այսպիսի ողջակիզումների ճանաչումը մեր երկրի համար ռազմական նշանակություն ունեցող մի շարժում է, որը զրահապատում է մեր երկիրն ապագայի համար: Մենք, պարոնայք գործընկերներ, համոզիչ չենք դառնում, երբ ասում ենք, որ Թուրքիան ունի բնածին մի ծավալապաշտություն, ու չենք կարողանում առաջադրել Թուրքիայի անցյալը և ցույց տալ Թուրքիայի ներկան:

Մենք թուրքերի ձեռքով ողջակիզված մեռյալներին հիշում ենք ոչ թե նրանց հարգանքի տուրք մատուցելու համար, այլ որպեսզի պաշտպանենք ապրողներին և տակավին չծնվածներին: Բայց պատմական հիշողության ձեռքբերումը, պարոնայք գործընկերներ, ծառայում է նաև այլ նպատակների: Տվյալ դեպքում հայերի ցեղասպանությունը, բացի մեկուկես միլիոն հայերի նկատմամբ կատարված հանցագործություններից, բացահայտում է նաև մեկ ուրիշ հանցագործություն, այն է՝ պատմությունը խեղաթյուրելու Թուրքիայի փորձը: Թուրքիան այսօր խեղաթյուրում է պատմությունը և ջանում է թաքցնել ճշմարտությունը: Նրանք ասում են, թե պարզապես եղել են ինչ-ինչ տեղահանություններ և ինչ-որ սահմանափակումներ, և թե ոմանք ինչ-որ վայրում կորել են: Մի՞թե սա է ճշմարտությունը:

Համաշխարհային առաջին պատերազմից հետո, երբ պարտված Թուրքիան ջանաց չքմեղանալ դաշնակիցների աչքերին, կազմակերպեց այդ ժամանակի ջարդերի պատասխանատուների դատ-պարողիաները: Բայց թեման չփակվեց: Մանավանդ, որ գրեթե բոլոր դատապարտված-

ներն արդարացվեցին և կամ, պարզապես, չդատվեցին: Այդ պահից սկսած և հետագայում, Թուրքիան այդ թեման մոռացության մատնեց: Այսօր ժխտում է, որ ողջակիզումների և ցեղասպանությունների գործողություններ է կատարել:

Իսկ ինչո՞ւ այդպես չանի, քանի որ այսօր աշխարհի բոլոր հզորները լռություն են պահպանում այն գործողությունների հանդեպ, որ այսօր էլ տակավին կատարում է Թուրքիան: Հիմնահատակ են արվում քրդական ամբողջ գյուղեր: Նրանց արգելվում է խոսել իրենց լեզվով և ունենալ իրենց բարքերն ու սովորույթները: Գրավված է Կիպրոսի մեկ երրորդը թուրքական զորքերի կողմից: Ոչ ոք այս ամենի մասին չի խոսում: Թուրքիան շահարկում է իր ռազմական ու աշխարհաքաղաքական դիրքը, որպեսզի կարողանա իր խաղը խաղալ և անարգել ընդառաջ գնալ հաջորդ ջարդերին:

Եվ մինչդեռ Գերմանիան, Թուրքիայի դաշնակիցը թե՛ Առաջին և թե՛ Երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակ, ներողության մեկ ժեստով ընդունեց հրեաների նկատմամբ իր կատարած ողջակիզումը, այսօր Թուրքիան դամբարանով մեծարում է Թալեաթ փաշային:

Ես կավարտեմ Հայկական ժողովրդական շարժման ողջույնի մի կոչով. «Վար առեք մեծ տերությունների ու ՄԱԿ-ի կեղծավորության շղարշը և պահանջեցեք, որ արդարության նժարը մեկը լինի, առանց երկու չափի ու երկու կշռի, նույնը փոքրերի և նույնը մեծերի համար, նույնը հարուստների և նույնն աղքատների համար: Չկան փոքր ժողովուրդներ և փոքր երկրներ: Կան միայն հաշտվածներ, և անհաշտներ: Կան մարտնչողներ և կան փնթփնթաններ»:

Այսօր, տիկնայք և պարոնայք գործընկերներ, հումանական խորհրդարանը ցույց է տալիս այն ճանապարհը, որին պետք է հետևեն բոլոր նրանք, ովքեր պետք է հասակով մեկ կանգնեն այն խաղերի դեմ, որ ուզում են և փորձում են խաղալ հզորները:

(*Ծափահարություններ բոլոր թևերից*):

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս) – Պարոն նախարար, ելույթի համար ցուցակագրվածները սպառվեցին: Խոսքը ձեզ է տրվում:

ԼԱՄՊՐՈՍ ՊԱՊԱԴԻՄԱՍ (Ներքին գործերի, հանրային կառավարման և ապակենտրոնացման նախարարի տեղակալ) – Պարոն նախագահ, պարոնայք գործընկերներ: Իրապես այսօրվա քննարկումը բարեբախտ էր: Մեզ բոլորիս, որպես հելլեննների, այն պատիվ է բերում: Այսպիսի պահերին առանձնապես ես երջանիկ եմ զգում, որ ներկայացնում եմ կառավարությունը:

Հավատացած եմ, որ մարդկության համար այդ ամոթալի դեպքերից մինչև այսօր եղած հումանական բոլոր կառավարություններին ոչինչ չի արգելել նման թեմա խորհրդարան մտցնելու: Դա մեր ազգին բնորոշ անհոգությունն է:

Բայց և ոչ մի նպատակադրում չթելադրեց «Քաղաքական գարունի» պատգամավորներին՝ ներկայացնելու օրենքի այս առաջարկը: Այն թելադրեց իրենց իսկ հոգին, իրենց պարտքը, և արժանացան խորհրդարանի բոլոր թևերի անմիջական ու ջերմ հավանությանը: Եվ այսօր այս միահամուռ քննարկման գործընթացը, այս գեղեցիկ ելույթները, որ ունեցան զեկուցողներն ու քննարկմանը մասնակցած բոլոր գործընկերները, դա իմ կարծիքն է, կազմում են լավագույն հոգեհանգիստը, որը կարող էր լինել

հայերի ցեղասպանության այդ սահմռկեցուցիչ շրջանի զոհերի համար, ինչպես նաև հաջորդած բոլոր ցեղասպանությունների զոհերի, որ կատարեց միշտ միևնույն դահիճը:

Ապրիլի 24-ը հայերի համար հիշատակի օր հաստատելը, կարծում եմ, միայն հիշատակի օր չի լինի: Այն, պարոնայք գործընկերներ, կլինի հարգանքի օր այն քաղաքակրթության, այն սկզբունքների համար, որոնց մենք ծառայում ենք: Արդարության համար, մեր պատմության համար: Այն միաժամանակ կդառնա նաև դատապարտման օր ամեն տեսակ բարբարոսական գործողություններին, անսանձ ազգայնամոլությանը, մարդկային արժեքների ոչնչացմանը:

Որոշ գործընկերներ հարցրին, թե կառավարությունն ինչպե՞ս պիտի արժեվորի այս օրենքը: Չեմ կարծում, որ կամ առաջարկությունը ներկայացնողները, կամ էլ ձեզանից որևէ մեկը դիտավորություն ունի սոսկ արժեքավորելու համար ընդունել մի օրենք, որը հարգեր ինչ-որ զոհերի հիշատակը:

Մենք, հույներս, դժբախտաբար թե բարեբախտաբար, տակավին չենք սովորել ծախել որոշ արժեքներ, դրանցով առևտուր անել: Մեկ ուրիշ հարգարժան գործընկեր հարցրեց, թե ինչպե՞ս և ե՞րբ պիտի արթնանա միջազգային հասարակական կարծիքը: Այնտեղ, դժբախտաբար, պարոնայք գործընկերներ, կան դիտավորություններ, և կուզենայի հավատալ, որ երբ համաշխարհային մակարդակով մարդկային արժեքները դրվեն դիտավորություններից առավել բարձր, այնժամ մենք կարող ենք վստահ լինել, որ այս պատգամները, որ ուզում ենք այսօր և հետագայում հղել մեր խորհրդարանից, կնդունվեն համայն աշխարհի հասարակական կարծիքի կողմից:

Ես չեմ ուզում հոգնեցնել խորհրդարանին: Կառավարությունն ընդունում է օրենքի առաջարկն այն ուղղումով, որ պ. Քանտուվասն առաջարկեց առաջին հոդվածի վերաբերյալ, և որն ընդունում են առաջարկը մտցնողները:

Կոնկրետ, առաջին հոդվածում և վերնագրում ջնջվում են «թուրքական վարչակարգի» բառերը, դրանք փոխարինվում են «Թուրքիայի» բառով:

ՍՏԵՖԱՆՈՍ ՍՏԵՖԱՆՈՊՈՒԼՈՍ - Եվ վերնագրում, և առաջին հոդվածում:

ԼԱՄՊՐՈՍ ՊԱՊԱԴԻՄԱՍ – Համաձայն եմ, պ. գործընկեր: Ես ավելացնելու ոչինչ չունեմ: Շնորհակալություն:

(*Ծափահարություններ բոլոր թևերից*):

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս) – Որևէ գործընկեր ուզո՞ւմ է երկրորդ անգամ ձայն վերցնել:

ՍՏԵՖԱՆՈՍ ՍՏԵՖԱՆՈՊՈՒԼՈՍ – Ուզում ենք, պ. նախագահ, շնորհակալություն հայտնել պ. նախարարին և ամբողջ խորհրդարանին:

ՕՐԵՍՏԻՍ ԿՈԼՈԶՎ – Ձայն եմ խնդրում, պ. նախագահ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաս Կացարոս) – Հրամեցեք, պ. Կոլոզով: Ձայնը տրվում է Ձեզ:

ՕՐԵՍՏԻՍ ԿՈԼՈԶՎ – Պարոն նախագահ, ես առկախ թողեցի մի հարց: Ուշադիր լսեցի պ. նախարարին: Այն իմ սպասածը չէր:

Մենք դեմ չենք քվեարկի, բայց պ. Ճախագահին խնդրում եմ, որ արձանագրության մեջ պարզ լինի, թե մենք քվեարկում ենք՝ «ներկա»:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս) – «Քաղաքական գարունի» առաջարկած «Ապրիլի 24-ը Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության հիշատակի օր հաստատելու մասին» օրենքի քննարկումը հայտարարվում է ավարտված:

Հարցնում ենք խորհրդարանին: Առաջարկված օրենքն ընդունվո՞ւմ է:

ԲՈԼՈՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ – Ընդունվում է, ընդունվում է:

(*Ծափահարություններ*):

ՕՐԵՍՏԻՍ ԿՈԼՈՋՈՎ – Ներկա:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս) – Հետևաբար, «Ապրիլի 24-ը Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության հիշատակի օր հաստատելու մասին» օրենքի առաջարկը միաձայն ընդունվում է, նշելով, որ պ. Կոլոզովը քվեարկում է՝ «ներկա»:

Անցնում ենք հոդվածների քննարկմանը:

Ոչ ոք չի ցուցակագրվել հոդվածների քննարկման առթիվ ելույթի համար:

Ուստի անցնում ենք դրանց քվեարկությանը:

Հարցնում ենք խորհրդարանին՝ ընդունելի՞ է առաջին հոդվածն այնպես, ինչպես վերափոխվեց պ. Ճախարարի կողմից:

ԲՈԼՈՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ – Ընդունելի է, ընդունելի է:

ՕՐԵՍՏԻՍ ԿՈԼՈՋՈՎ – Ներկա:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս) – Հետևաբար, առաջին հոդվածն ընդունվեց միաձայն, ինչպես որ այն վերափոխվեց պ. Ճախարարի կողմից, պ. Կոլոզովի նշումով:

Հարցնում ենք խորհրդարանին՝ երկրորդ հոդվածն ընդունելի՞ է ինչպես որ կա:

ԲՈԼՈՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ – Ընդունելի է, ընդունելի է:

ՕՐԵՍՏԻՍ ԿՈԼՈՋՈՎ – Ներկա:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս) – Հետևաբար, երկրորդ հոդվածն ընդունվեց միաձայն, պ. Կոլոզովի նշումով:

Հարցնում ենք խորհրդարանին՝ երրորդ հոդվածն ընդունելի՞ է:

ԲՈԼՈՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ – Ընդունելի է: Ընդունելի է:

ՕՐԵՍՏԻՍ ԿՈԼՈՋՈՎ – Ներկա:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս) – Հետևաբար, երրորդ հոդվածն ընդունվեց միաձայն, պ. Կոլոզովի նշումով:

Հարցնում ենք խորհրդարանին՝ օրենքի առաջարկն ամբողջությամբ ընդունելի՞ է:

ԲՈԼՈՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ – Ընդունելի է: Ընդունելի է:

ՕՐԵՍՏԻՍ ԿՈԼՈՋՈՎ – Ներկա:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս) – Օրենքն ամբողջությամբ ընդունվեց միաձայն, պ. Կոլոզովի նշումով:

Հետևաբար, «Ապրիլի 24-ը Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության հիշատակի օր հաստատելու մասին» օրենքը միաձայն ընդունվեց և ըստ հոդվածների, և ամբողջության մեջ, որն այսպիսին է. «Ապրիլի 24-ը

հաստատվում է որպես Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության հիշատակի օր»:

ՀՈԴՎԱԾ 1

Ապրիլի 24-ը սահմանվում է որպես Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության հիշատակի օր:

ՀՈԴՎԱԾ 2

Հիշատակի միջոցառումների բնույթը, բովանդակությունը, պատասխանատվությունը և դրանց կազմակերպման եղանակը որոշվում են նախագահական հրամանագրով, որը հրատարակվում է ներքին գործերի, հանրային կառավարման և ապակենտրոնացման նախարարի առաջարկությամբ, առավել ճանաչված հայկական միությունների ու կազմակերպությունների կարծիքից հետո:

ՀՈԴՎԱԾ 3

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Կառավարության թերթում» հրատարակման օրից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս) – Խնդրում եմ, որ խորհրդարանը լիազորի նախագահությանը, որպեսզի վավերացնի վերոհիշյալ օրենքի առաջարկության քննարկմանը և քվեարկությանը վերաբերող այսօրվա նիստի անճանագրությունը:

ԲԱԶՄԱԹԻՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ – Իհարկե, իհարկե:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս) – Պահանջված լիազորությունը տրվեց:

ՊԱՆԱՅՈՏԻՍ ԿՐԻՏԻԿՈՍ (Խորհրդարանի նախագահի առաջին տեղակալ) – Պ. նախագահ, անհետաձգելի պարտականություններն ինձ հեռու պահեցին այս դահլիճից, և ես չկարողացա մասնակցել բարոյական ու քաղաքական մեծագույն նշանակություն ունեցող մի թեմայի քննարկմանը, ինչպիսին է հայերի ցեղասպանությունը և թուրքական բարբարոսության թեման: Պ. նախագահ, պիտի խնդրեի մեկ րոպե լռությամբ հարգենք հայերի և բոլոր ցեղասպանությունների զոհերի հիշատակը:

ՆԱԽԱԳԱՀՈՂ (Նիկոլաոս Կացարոս) – Պ. Կրիտիկոսի առաջարկը նախագահությունն ընդունում է և խնդրում հոտնկայս պահպանել մեր րոպե լռություն:

(*Տիրում է մեկ րոպես լռություն*):

Հավերժ փառք նրանց հիշատակին:

XIV. ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՔԱՆԱՁԵՎԸ ԱՊՐԻԼԻ 24-Ը ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐ ՀՈՂԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ 3 ապրիլի 1997թ.

Լիբանանի պատգամավորների պալատը՝

- Զգալով 1915-1923թթ. լիբանանյան հայ ժողովրդի տառապանքի ու ցավի տարողությունը, որը հար և նման է լիբանանցի և այլ ժողովուրդների տառապանքներին, և որոնք շարունակվում են մինչև օրս,

- նշելով, այս դարասկզբին գաղութատիրոջ կողմից մեր ժողովուրդների դեմ կազմակերպված ցեղասպանությունը,

- նկատի ունենալով, որ յուրաքանչյուր տարվա Ապրիլի 24-ն առիթ է ոգեկոչելու հայ ժողովրդի դեմ իրագործված ջարդերի արհավիրքի հիշատակը,

- Լիբանանի խորհրդարանը կոչ է անում լիբանանցի ժողովրդին, որ այդ օրը հայտարարի հայ ժողովրդի հետ միասնականության օր:[1]

2. ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՔԱՆԱՁԵՎԸ 11 մայիսի 2000թ.

Օսմանյան իշխանության կողմից 1915 թվականին կազմակերպած ջարդերի 85-ամյակի առթիվ, որի հետևանքով ոչնչացվեցին 1,5 միլիոն հայեր, Լիբանանի պատգամավորների Պալատը ճանաչում է և դատապարտում հայ ժողովրդի դեմ իրականացված ցեղասպանությունը և հայտնում է իր ողջ համերաշխությունն իր երկրի հայ քաղաքացիներին:

Դրանից բացի, Պալատը գտնում է, որ ցեղասպանության միջազգային ճանաչումը հանդիսանում է անհրաժեշտ պայման նմանօրինակ հանցագործությունները կանխելու համար, որոնք կարող են ձեռնարկվել ապագայում:

Геноцид армян, ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий, М., 2003, том 2, часть 1, стр. 807.

[1] Լիբանանի խորհրդարանի քանաձևի մեկ օրինակը պահվում է Հայոց ցեղասպանության թանգարանում:

XV. ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ, ՆՈՐ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՈՒԵԼՍԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՕՐԵՆՍԴԻՐ ԱՍՍԱՓԼԵԱՅԻ ՆԻՍՏԸ 17 ապրիլի 1997թ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԸ ՆՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՊԱՐՈՆ ՔՈԼԻՆՋ (*Ուիլյոուբի – ընդդիմության առաջնորդ*). – Քանի որ 1997թ. ապրիլի 24-ին նշվում է 1915-1922թթ. թուրքական կառավարության իրականացրած հայերի ցեղասպանության 82-րդ տարեդարձը, առաջարկում եմ.

ա) հավաքել Նոր Հարավային Ուելսի հայկական համայնքի անդամներին՝ հարգելու համար 20-րդ դարի առաջին ցեղասպանությանը զոհ դարձած 1,5 միլիոն տղամարդկանց, կանանց և երեխաների հիշատակը,

բ) դատապարտել հայերի եղեռնը և մեր դարում իրագործված բոլոր հետագա ցեղասպանությունները՝ որպես ռասսայական, մշակութային և կրոնական ծայրահեղ անհանդուրժողության դրսևորումներ,

գ) խոստովանել անհրաժեշտությունն այն բանի, որ հարկավոր է ճանաչել ու հիշել մարդկային պատմության սև փուլանիշերը՝ համոզված լինելու համար մարդկության հանդեպ նման հանցագործությունների կրկնության անհանդուրժելիության մեջ,

դ) դատապարտել և կանխարգելել տարիների վաղեմության ներքո հայերի ցեղասպանության, ինչպես նաև նույն դարում իրագործված ցեղասպանության այլ գործողությունների՝ պատմական ճշմարտության փաստը ժխտելու և խեղաթյուրելու բոլոր փորձերը,

ե) համայն Նոր Հարավային Ուելսում ապրիլի 24-ը հայտարարել 20-րդ դարի առաջին ցեղասպանության զոհ դարձած 1,5 միլիոն հայերի հիշատակի օր,

զ) դիմել Դաշնության կառավարությանը՝ հայերի ցեղասպանությունը պաշտոնապես դատապարտելու, ինչպես նաև՝ մարդկության հանդեպ նման հանցագործությունները ժխտելու ցանկացած փորձ խափանելու կոչով:

Ապրիլի 25-ին Ավստրալիան նշում է իր մարտական մկրտության տարեդարձը: Մենք հիշում ենք այն օրը, երբ 1915թ. երիտասարդ ավստրալիացիներն ափ էին իջնում Գալլիպիլիի ոլորապտույտ լանջերով՝ Դարդանելի հեռավոր կողմում: Այդ օրը մենք համարում ենք վճռական մեր ազգային պատմության մեջ և մեր ազգային ինքնագիտակցության համար որոշիչ: Բայց միևնույն ժամանակ, երբ դաշնակիցները հավաքվեցին Անզակի մոտ, անցնող գիշերվա մեջ ուրիշ կարևոր իրադարձություն տեղի ունեցավ ոչ հեռու գտնվող Կոստանդնուպոլսում: Անզակյան արմադան լուսավորող նույն արևը չարագուշակ ստվերներ գցեց թուրքական կառավարության կողմից այն օրն սպանված հայկական համայնքի հարյուրավոր առաջնորդների մարմինների վրա: Նրանք հայերի քաղաքական, հոգևոր, մշակութային առաջնորդներն էին, և նրանց մահը դարձավ 20-րդ դարի առաջին, սահմռկեցուցիչ ցեղասպանության սկիզբը:

Այս երկու պատմական իրադարձությունները բնույթով ու դաժանությամբ տարբեր են. մեկը խլեց հարյուրավոր ավստրալիացիների կյանքը, մյուսը՝ 1,5 միլիոն հայերի, սակայն այս իրադարձություններն անչափ կարևոր ու բախտորոշ էին այդ ժողովուրդների համար: Այն, որ հայ և ավստրալիացի ժողովուրդները ՉՀՈՒ են իրենց անվիճելիորեն ամենաճշանակալի ազգային իրադարձությունները մեկ օրվա տարբերությամբ, շատ հետաքրքիր պատմական փաստ է: Բայց մարդիկ ճակատագրական նշանակություն ունեցող ազգային ողբերգությունների համար օրեր չեն ընտրում: 1915թ. երիտթուրքական կառավարության իրագործած 1,5 միլիոն հայերի ցեղասպանությունը հայ ժողովրդին բնաջնջելու կանխամտածված, դիտավորյալ փորձ էր:

Դարեր ի վեր ապրելով իր հնամենի հայրենիքում, որ Օսմանյան կայսրության արևելյան գավառ էր դարձել, հայերը մշակութային, տնտեսական, հոգևոր վտանգ էին ներկայացնում թուրքական կայսրության համար: Ցեղասպանության կազմակերպիչները՝ Իսմայիլ Էնվեր փաշան, Մահմեդ փաշան, Թալեաթ փաշան և Ահմեդ Ջեմալ փաշան, ոգևորված էին տարէբնիկ ու տարակրոն Օսմանյան կայսրությունը Բոսֆորից մինչև Կենտրոնական Ասիա տարածված պանթուրքական կայսրության վերափոխելու ցանկությամբ: Այդ ժամանակ հետևողականորեն ոչնչացվել էր հայ ազգի ավելի քան կեսը՝ մոտավորապես 1,5 միլիոն: Հայերը ոչնչացվում էին հրեշավոր կամպանիայի կոորդինացման ու կատարման համար կիրառված հնարավոր բոլոր միջոցներով: Ծածկագրված հեռագրերը օգտագործվում էին ցուցումներ ու հրամաններ փոխանցելու, իսկ ժամանակակից տրանսպորտը՝ Սիրիայի անապատների համակենտրոնացման ճամբարներ բնակչության խմբեր տեղափոխելու նպատակով: Շատ մարդիկ են սպանվել իրենց գյուղերում ու քաղաքներում, սիրիական Դել-Էլ-Զոր անապատի համակենտրոնացման ճամբարներ տանող մահվան երթերի ժամանակ: Կենդանի մնացած հայ տղամարդիկ զորակոչվում էին թուրքական բանակ, զինաթափ արվում ու ոչնչացվում աշխատանքային հատուկ գումարտակներում: Նրանց կա՛մ ստիպում էին աշխատել բառացիորեն մինչև մեռնելը, կա՛մ սպանում էին, երբ կորցնում էին աշխատունակությունը:

Գրեթե բոլոր հայ մշակութային, հոգևոր և քաղաքական առաջնորդները, 1915թ. ապրիլի 24-ից սկսած, ձեռբակալվել են ու սպանվել: Մնացած բնակչությունը՝ ծերեր, կանայք ու երեխաներ, հատուկ ջոկատների կողմից տեղահանվել է կամ բռնի իսլամացվել, բռնաբարվել, մորթվել: Ողջ մնացածները ստիպված են եղել լքել իրենց հայրենիքը՝ ցրվելով աշխարհով մեկ: Գրեթե բոլոր մեծ տերությունները դատապարտել են թուրքական կառավարությանն այդ պատժիչ կամպանիայի համար: Բայց և այնպես, դատավճիռը մնում է չկայացված: Ընդմիշտ կմնա պատմության մեջ այդ հրեշավոր փաստը, ինչպես նաև աշխարհի անտարբերությունը Գերմանիայում, Կամբոջայում, Էրիթրեում, նախկին Հարավսլավիայում, Աֆրիկայի ջունգլիներում կատարված ցեղասպանությունների նկատմամբ:

Թուրքիայի հետագա բոլոր կառավարությունները, բացառությամբ Դամադ Ֆարիդ փաշայի կառավարության, որ իշխանության գլուխ էր անցել համաշխարհային առաջին պատերազմից հետո, ժխտել են հայերի ցեղասպանության փաստը՝ պնդելով, որ հայ բնակչությունը, գտնվելով պատերազմի գոտում, պարզապես վերաբնակեցվել է իր իսկ ապահովության

համար: Այսօր Անկարայում նույնիսկ դամբարան կա ի պատիվ Թալեաթ փաշայի՝ ցեղասպանության գլխավոր կազմակերպչի: Պատմությունը կարող է խեղաթյուրվել, բայց մոռացվել՝ երբե՛ք: Այդ ողբերգական իրադարձությունները տասնամյակների վաղեմություն ունեն, բայց հայ ժողովրդի հիշողության մեջ ժամանակի ընթացքում չեն խամրել: Այսօր Ավստրալիայի հայ համայնքում 30000-35000 մարդ կա ավելի քան 20 երկրներից:

Վերջին երեք տասնամյակների ընթացքում հայ համայնքը կարևոր դեր է խաղացել մեր երկրի մշակույթի ձևավորման գործում: Որպես Ուիլլոուբիի անդամ, ես երջանիկ եմ, որ ականատեսն եմ այն ամենի, ինչին հասել է համայնքն այս ընթացքում, հատկապես վերջին 16 տարիներին: Լքելով պատերազմից ավերված երկրները՝ շատ հայեր հիմնել են այստեղ ոչ մեծ ձեռնարկություններ, որոնք տասնամյակներ անց, չնայած մրցակցությանը, սկսեցին ծաղկել: Հասարակական կյանքում, ինչպես նաև կոմերցիայում, հայ համայնքն անգնահատելի է մեր ազգի համար: Ես գիտեմ, որ նրա առաջնորդներն ամեն հնարավոր բան արել են՝ համայնքի երիտասարդ անդամներին քաղաքացիության նշանակությունը ներշնչելու համար:

Ավստրալիայի հայերին իրենց ծնողներն ու ուսուցիչները սովորեցնում են ակտիվ լինել և մասնակցել համայնքի գործունեությանը: Նրանց ուսուցանում են այնպիսի հասարակության ստեղծման կարևորությունը, ուր տքնաջան աշխատանքը պարգևատրվում է և ուր մարդուն հնարավորություն է ընձեռվում լրիվությամբ օգտագործել իր կարողությունները: Ոչինչ չի կարող ավելի ավստրալիական լինել, քան հայկական հիասքանչ միտքը: Հատկապես աղետների ժամանակ, երբ հայ համայնքը մոբիլիզացվում է ու գործում ի շահ ընդհանուրի: Ինչպես ասամբլեայի շատ հարգելի անդամներ, ես էլ պարզորոշ հիշում եմ 1988թ. դեկտեմբերի 7-ը, երբ տեղեկություններ հասան Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած սոսկալի երկրաշարժի մասին, ուր կային տասնյակ հազարավոր զոհեր:

Լավ հիշում եմ այդ օրն իմ այցը հայկական մշակույթի կենտրոն, ուր աշխատակիցների մի մեծ խումբ արդեն ուղարկելու համար հավաքել էր անհրաժեշտ ամեն բան: Ես բախտ եմ ունեցել նախարար լինել այն կառավարության օրոք, որի համագործակցությամբ դա կազմակերպվում էր: Զարմանալի չէ, որ հայ համայնքը օգնության նետվեց այդպես արագ ու նպատակամղված:

Իր ողջ պատմության ընթացքում հայ ժողովուրդը շատ դժվարություններ է տարել, ցեղասպանություն է տեսել և այլն: Բայց հայ ժողովրդի բնութագրական գիծը վերապրել ու ծաղկելն է, և այստեղ ծնված շատ հայեր երեխաներն ու թոռներն են նրանց, ովքեր ողջ մնացին եղեռնից հետո: Ցեղասպանությունից մազապուրծ մի բուռ մարդիկ ևս այստեղ են ապրում: Ու թեև նրանք, ինչպես նաև մեր անզակցիները, մոտ ապագայում մեկը մյուսի ետևից կլքեն մեզ, մենք հարգելու ենք նրանց հիշատակը, համարելով նրանց ժամապահներ, որ հիշեցնում են մեզ այն, ինչը երբեք չպետք է մոռանանք:

ՊԱՐՈՆ ՔԱՐՐ *(Մարաուբրա - վարչապետ, մշակույթի և էթնիկական գործերի նախարար).* – Կառավարության անունից ես պաշտպանում եմ առաջարկությունը: 1988թ. երբ ընդդիմության առաջնորդ էի, առաջին անգամ այցելեցի հայոց եղեռնի հուշարձանին, մի օր, որը պարզորոշ հի-

չում եմ: Երբեք չեմ մոռանա այն յուրահատուկ մթնոլորտը, որ տիրում էր օպերային թատրոնի համերգային դահլիճում. սգո մթնոլորտ և միաժամանակ՝ սրտահույզ: Հուզիչ, որպես ծոն հայկական եզակի մշակույթին, գրականությանը, երաժտությանն ու պարին, ողբերգական՝ այս դարում հայերի ապրած սարսափների կենդանի հիշողություններից:

Ինչո՞ւ է անհրաժեշտ, որպեսզի Նոր Հարավային Ուելսի պառլամենտը ճշի հայերի ցեղասպանությունը: Նախ, որովհետև այն 20-րդ դարի առաջին հայտնի ցեղասպանությունն է: Այս դարը կճանաչվի ողբերգական, քանի որ ավելի վաղ սկսված հանցագործությունը չի դադարեցվել: Առաջին մեծ ցեղասպանությունն էր դա, որը վիճակվեց հայ ժողովրդին: Երկրորդ՝ որովհետև հայ համայնքը ավստրալիական ժողովրդի մասն է կազմում: Հայերն Ավստրալիայում հասկանում են, որ մենք սրտաբաց ենք ընդունել նրանց, իբրև աշխարհում իր տեսակի մեջ եզակի մշակույթի ներկայացուցիչների, և նրանք ավստրալիական քաղաքակրթությունը կրում են հպարտությամբ:

Ահա թե ինչ նկատի ունենք մեր բազմամշակութայնությունը ճշելով: Ահա պատճառները, որ անհրաժեշտ են պառլամենտի կողմից այս առաջարկության ճշանակության գնահատումը և ընդունումը՝ բոլոր անդամների հավանությամբ: Հայոց կաթողիկոսի փետրվարյան այցը հիշեցրեց մեզ հայ քաղաքակրթության հնամեծի լինելու մասին: Հայերի հետքերը կարելի է գտնել հռոմեացիների ժամանակներում: Դրանք քրիստոնեական համայնքներ էին, որոնք իրենց հինավուրց պատմության ողջ ընթացքում հսկայական ներդրում են արել քրիստոնեական կրոնի զարգացման գործում: Ավանդապահությունը հսկայական դեր է խաղացել պատմական իրադարձությունների ձևավորման մեջ և այդ կրոնի, այդ մշակույթի, այդ պատմության պահապանն է:

Մտորենք հայ ժողովրդի ցեղասպանության իրական չափերի և ճշանակության շուրջ: Ցեղասպանությունն սկսվեց 1915թ. ապրիլի 24-ին Կոստանդնուպոլսի 200-ից ավելի հայ առաջնորդների սպանդով ու տարածվեց ողջ Օսմանյան կայսրությունում և Միջին Ասիայում: 1918թ. հայ բնակչության գրեթե երեք քառորդը ոչնչացված էր: Գրանցված է, որ Ադոլֆ Հիտլերը հաստատել է եվրոպական հրեաների ցեղասպանությունը: Նա համոզված է եղել, որ ջրից չոր դուրս կգա, քանի որ 1940թ. ոչ ոք, վերջ ի վերջո, չէր հիշում հայերի հետ տեղի ունեցածը:

Հայկական ցեղասպանությունը 20-րդ դար բերեց մարդկության դեմ մեծագույն հանցագործությունը, այն առաջինն էր դարի հանցագործությունների շղթայում: Մոտ կես միլիոն ողջ մնացածներ փախուստով փրկվեցին, փախան Թուրքիայից, Ասիայից, Միջին Արևելքից, որպեսզի նոր կյանք սկսեն իրենց ապաստան տվող երկրներում, այդ թվում և Ավստրալիայում: Մեր երկիրը մեկ անգամ ևս կարող էր առաջարկել իր մեծահոգի ու սրտաբաց ափերը երկրագնդի ապերջանիկ մասերում հրեշավոր, ողբերգական փորձություններ կրած, գազանային վերաբերմունք ապրած մարդկանց: Այսօր ավելի շատ հայեր ապրում են Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս:

Մենք խոստովանում ենք, որ կատարվել է նաև մշակութային ցեղասպանություն: Մեր մոլորակի մշակույթը տարբեր մշակույթների համակեցությունն է: Եկեղեցիներ քանդելն ու մարդկանց ոչնչացնելը մոլորակի

վրա մշակույթների բազմազանության խաթարում է: Այդ նկատի ունեինք մենք, երբ խոսում էինք Բալկանների մասին, Ռումինիայում հունգարական փոքրամասնության, Հարավ-արևելյան Ասիայի ցեղերի, Ավստրալիայի ու Հյուսիսային Ամերիկայի տեղաբնիկների մասին, Աֆրիկայի մի քանի ցեղասպանությունների մասին: Այդ իրադարձությունների վկաները լինելով՝ մենք բախվում ենք երկրագնդի մշակութային բազմազանության ոչնչացման հետ, և մեր առաջ որպես օրինակ հառնում է այն, ինչ տեղի ունեցավ հայերի հետ:

Հայկական քաղաքակրթության պահպանվող հուշարձաններն ու նյութական մշակույթի մնացորդները վկայություններ են այդ ազգի գոյության, ինչպես նաև 301թ. նրա կողմից քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու մասին: Կանգուն մնացած եկեղեցիներն իրենց տեսակի մեջ մշակութային և ճարտարապետական եզակի ոճ ունեն և արտացոլում են հայկական մշակույթի հարստությունը:

Այսօր աշխարհով մեկ, ներառելով Ավստրալիան և Միացյալ Նահանգները, հայերի գործունեության արդյունքն է այն մարդկանց աճող քանակը, որոնք գիտակցում են, նախ՝ թե ինչ բարդ ու հակասական է եղել Հայաստանի պատմությունը, և երկրորդ՝ 1915-ից սկսած հայերի դեմ կատարված հանցագործությունների մասշտաբայնությունը: Թուրքիան, ինչպես Գերմանիան, պատասխան պետք է տա գործած հանցագործության համար:

Հայ ժողովուրդն իրավացի է՝ պնդելով, որ իր ժողովրդի, իր մշակույթի և մարդու համընդհանուր իրավունքների դեմ կատարված մեծագույն հանցագործությունը պետք է ճանաչվի: Այսօր կա անկախ Հայաստանի Հանրապետություն, որը միավորում է իր ժողովրդի մշակութային նվաճումները, պատմությունը, կրոնական հավատամքը: Այդ հայրենիքը մարդկանց տալիս է անվտանգության և միաբանության զգացում, որից նրանք զրկվեցին 1915 թվականին: Ելույթ ունենալով Նոր Հարավային Ուելսի պառլամենտում՝ բազմամշակույթ ու ժողովրդավարական նահանգի ժողովրդի անունից մենք ճանաչում ենք այդ ողբերգությունը: Պաշտպանում ենք մեր նահանգում բնակվող հայ ժողովրդի ներկայացուցիչներին, հաստատելով, որ աշխարհը պետք է ճանաչի ողբերգությունը, որի մասին այսօր մենք խոսում ենք:

ՊԱՐՈՆ ՖՈՏԻՈՍ *(Իրմինգտոն)*. – Որպես Ավստրալիայի քաղաքացի, որի նախնիները փախուստով փրկվել են Միջերկրական ծովի Կաստելլորիզո կղզու թուրքական օկուպացիայից, ես ընկալում եմ սարսափելի ցեղասպանության սահմռկեցնող ողբերգության սոցիալական և մարդկային ողջ հրեշավորությունը անձնական և ընտանեկան մակարդակով: Պառլամենտի հարգելի անդամները կարող են վկայակոչել ողբերգությունը համայնքի մակարդակով, բայց ավելի հաճոզիչ մի բան կա Ավստրալիայի ժամանակակից հայերի օգտին: Համաձայնում քննարկումները համայն աշխարհի պառլամենտներում հանդիսավոր նշում են աշխարհի ամենասարսափելի ցեղասպանություններից մեկի նշանակությունը:

Ոչպես Իրմինգտոնի պատգամավոր, Ռայդի նախկին անդամ, նախկին կառավարության մշակույթի և էթնիկական գործերի նախարար, ես, ինչպես նաև երկկուսակցական հիմքերի վրա ձևավորված այդ պալատի երկու կողմերի անդամներից շատերը, բախտ ենք ունեցել ավստրալիա-

ցի հայ բարեկամներ ունենալ: Զարմանալի է, որ այդ աշխատասեր, իրենց անձնական ու ընտանեկան շահերին հավատարիմ, իրենց ժողովրդին ու շրջապատին նվիրված մարդիկ, ժամանակի և տարածության մեջ գտնվելով սոսկալի իրադարձություններից այդչափ հեռու, ցեղասպանության այդ հետևորդները, ընդմիշտ հիշեցին 1915թ. ապրիլի 24-ը:

Այն մարդկանց սրտերում, մտքերում և հոգիներում, ում Ավստրալիան ապաստան է հատկացրել, պահպանվում է հիշողությունը 1,5 միլիոն հայերին բաժին հասած ողբերգության, թալանի, սարսափելի դժվարությունների:

Չեմբերում գտնվող ոչ մեծ թվով հայերի, ինչպես նաև մեր ազգաբնակչության մաս կազմող 35000 ավստրալիացի հայերի համար պարտավորություն է հիշել այդ ողբերգությունը և գիտակցել դրա նշանակությունը: Ինչպես համայնքը, այպես էլ համայն աշխարհը չպետք է մոռանան կատարված ոճիրը: Նրանք արժանի են մեր հարգանքին ու լիարժեք աջակցությանը:

1915թ. ապրիլի 24-ից մինչև 1924թ. պարբերաբար վայրագ, անմարդկային, սոսկալի ողբերգություններ են իրագործվել բռնակալների կողմից փոքրամասնությունների նկատմամբ: Թուրքերին չպետք է ներվի այն, ինչ նրանք պատճառել են հայերին: Եվ թուրքական կառավարությունն այսօր ծայրահեղ դեպքում պետք է վերանայի իր մոտեցումը, հիշի ու ճանաչի ցեղասպանությունն այնպես, ինչպես Գերմանիան ընդունեց Ադոլֆ Հիտլերի իրագործած հրեական ցեղասպանության փաստերի իսկությունը: Մարդկանց հոգիներում դատարկություն է ձևավորվել այդ խոստովանության բացակայությունից, և հետևաբար՝ ներում չկա: Ես, որպես ընդդիմության առաջնորդ և վարչապետ, ինչպես նաև որպես Գլադեսվիլի պատվավոր անդամ, որը շուտով ելույթ կունենա այդ համեստ, բայց շատ կարևոր քննարկման ժամանակ, հայկական շատ իրադարձությունների մասնակից եմ եղել, և շատ լավ գիտեմ, որ բոլոր նրանց սրտում ու մտքում, ով եղել է հայերի կողքին ու նրանց հետ վերապրել է ողբերգությունը, ճշմարիտ հարգանք կա նրանց պահանջի նկատմամբ՝ ճանաչել թուրքական կառավարության իրականացրած ցեղասպանությունը:

1996թ. մայիսի 2-ին ես ասացի.«Նույնիսկ այսօր և՛ ես, և՛ շատ ուրիշներ համայն աշխարհում նկատել են, որ ցեղասպանության մեղավորները շարունակում են ժխտել իրենց սարսափելի հանցագործությունը»: Երկկուսակցական հիմքի վրա ես ուզում եմ նորից արձանագրել փաստերը, ես ուզում եմ նաև ուղղակի հետևորդներ հայտարարել նրանց, ով կրել է ողբերգությունը, թալանը, կորուստները: Մեր բացարձակ մտադրությունն է այժմ և ապագայում հիշել և նշել 1,5 միլիոն հայերի զոհվելու տարեդարձը:

Ամո՛թ ցեղասպանության մեղավորներին:

ՊԱՐՈՆ ՈՒՈՒԹ-ՔԻՆԶ *(Գլադեսվիլ)*. – Ինձ համար, որպես ընդդիմության առաջնորդի, մեծ պատիվ է հանդես գալ այս հարցի շուրջ: Կարևոր է նշել, որ Նոր Հարավային Ուելսում այս հարցի հանդեպ գոյություն ունի երկկուսակցական մոտեցում, և հաճելի է տեսնել, որ և՛ վարչապետը, և՛ ընդդիմության առաջնորդը Հայկական հարցի պաշտպաններն են: Ես հատկապես ուրախ եմ, որ վարչապետը հաջորդ շաբաթ հյուր է լինելու Հայկական ցեղասպանության հիշատակի օրվա արարողությանը: Ընդդիմության առաջնորդն ու ես մասնակցում ենք այս քննարկումներին,

որովհետև մեր ընտրողների մեջ շատ հայեր կան, որ ապրում են Սիդնեյում:

Այս քննարկմանը հանդես գալը ծանր, բայց սուրբ պարտականություն է, քանի որ այն զանազանում է կյանքն ու 1,5 միլիոն մարդու ողբերգական մահը: Այդ ցեղասպանությունը, որ հայտնի է որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն, խորապես թաքցված է եղել միջազգային մեծ հակասության՝ համաշխարհային պատերազմի քողի տակ: Ինչպես մեզ հայտի է, այն սկսվել է ապրիլի 24-ին Ստամբուլում հայ մտավորականության սպանդով, և հայերի ջարդի ալիքը շուտով տարածվել է ողջ Թուրքահայաստանով և Միջին Ասիայով: 1915-1918թթ. և հաջորդող տարիներին սպանվել է մոտ 1,5-ը 2,5 միլիոն հայերից: Տեղահանված, փախուստով փրկված, հաշմված ու ծանր վիրավորված մարդիկ ստիպված էին փախչել՝ ձևավորելով Սփյուռքը, որը առաջինը դարձավ դարի նման շարժումների ցանկում:

Չնայած գոյություն ունեցող պաշտոնական տվյալներին և ականատեսների ցուցումներին, հայկական ցեղասպանությունը մոռացված էր համարվում: Բայց վերջին ժամանակներս հետաքրքրությունն աճեց: Սիդնեյում այն քաջալերվում է պրոֆեսոր Քոլին Թաքզի գործունեությամբ՝ Մանվագի համալսարանին կից ցեղասպանությունների ուսումնասիրման կենտրոնում: Այդ ողբերգությունը կենդանի է և պետք է ապրի բոլոր հայերի հիշողության մեջ: Ավստրալիան ապաստան է տվել այդ ողբերգության զոհերից շատերին, և այսօր մոտ 35000 հայ է ապրում այստեղ: Զոհեր ու նրանց հետնորդներ, որոնք նույնպես իրենց հայրերի ապրած ողբերգության կրողներն են: Նշելով այդ ողբերգական իրադարձությունների հիշատակի օրը՝ նրանք հիշեցնում են բոլորիս այն մասին,որ ցեղասպանության ակցիաները հարկավոր է կանխել: Դրանք սանձելու սուրբ գործը պետք է վերաբերի յուրաքանչյուրիս: Հիշատակը, որ նրանք պահպանում են, պետք է մեր հիշողության մասը դառնա: Ես համակրում եմ Ավստրալիայի հայ ժողովրդի իր քաջության, կենսունակության, արվեստի և կորովի համար: Ավստրալիայում նրանք ուժ ու համարձակություն դրսևորեցին իրենց կյանքը վերականգնելու համար, և արեցին այդ մեծ հաջողությամբ: Հայ համայնքը հպարտանալու շատ բան ունի: Այն զարգացրել է սոցիալական գերկառուցվածք, որը սատարում և աջակցում է իր ժողովրդի կարիքներին ու ձգտումներին:

Կրթությունը հատկապես կարևոր է հայերի համար. նրանք բացել են երեք շատ առաջադիմող դպրոցներ Սիդնեյում, ունեն մանկապարտեզ փոքրիկների և ծերանոց՝ մեծահասակների համար, նրանք ծաղկում են բիզնեսում և մասնագիտական ասպարեզներում, ակտիվորեն մասնակցում են երկրի տնտեսական ու քաղաքական կյանքին:

Ավստրալիայի համայնքի վերջին տարիների կարևոր իրադարձություններից էր Գարեգին I-ի՝ համայն հայության կաթողիկոսի այցը: Վեհափառը նշանավոր մարդ է և ոգեշունչ հոետոր: Նա՝ աշխարհի մեծագույն հոգևորական գործիչներից մեկը, սփոփիչ և միաժամանակ մարտահրավեր նետող բառեր ասաց Ավստրալիայի հայկական համայնքին: Նրա բառերն արտացոլում էին հայերի հայրենիքի գեղեցկությունը, հայերի պայքարելու վճռականությունը և հայկական ապրումների թախիծը: Առանձնապես հուզիչ էին նրա բառերն այն մասին, թե ինչ է նշանակում հայ լինել այսօր

Ավստրալիայում, փախստականի կարգավիճակից հասնել լիարժեք ճանաչման և հաստատման իրենց կողմից ընտրված հասարակության մեջ, որպեսզի ապրեն, աշխատեն ու բարգավաճեն: Հայաստանը, անկախություն ձեռք բերելով, վերականգնման նոր շրջան մտավ, և նրան պայծառ ապագա է սպասում: Վեհափառն ընդգծեց Հայաստան հայրենիքի անկախ գոյության, ինչպես նաև՝ հայոց հին մշակույթի ու կրոնի կարևորությունը Ավստրալիայի բոլոր հայերի համար: Ես համոզված եմ, որ նրա այցը երկար կմնա և՛ իր, և՛ տեղի հայերի հիշողության մեջ:

Տվյալ առաջարկությունը արդարացիորեն կոչ է անում պալատին հարգել հիշատակը, դատապարտել ցեղասպանությունը, ճանաչել այն ուսումնասիրելու և հիշելու անհրաժեշտությունը, ինչպես նաև կանխել պատմական ճշմարտության խեղաթյուրման փորձերը և Նոր Հարավային Ուելսում ապրիլի 24-ը համարել հիշատակի օր: Այն միաժամանակ կոչ է անում Դաշնության կառավարությանը ընդունել ցեղասպանության փաստը:

Ես թախանձագին խնդրում եմ, որ կառավարությունն այն ընդունի: Եվ նա միայնակ չի լինի: Եվրոպառլամենտը 1987թ., Ռուսաստանի Պետական դուման 1994թ., կանադական պառլամենտը 1996թ. և շատ ուրիշներ դատապարտել են հայերի ցեղասպանությունը: Ավստրալիայի կառավարությունը նույն պես պետք է այդպես վարվի: Մեծ պատիվ է՝ հանդես գալ ի պաշտպանություն նման առաջարկության:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ Է:

2. ԱՎՍՏՐԱԼԻԱԿԱՆ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱԼԱՏ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ԱՄԵՆՕՐՅԱ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 9 ՄԱՐՏԻ, 1998Թ.

ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱՊՆԴՈՒՄՆԵՐ

ՊՐՆ. ՀՈՔԵՑ *(Հյուսիսային Սիրելի* - 15[24]*)*: Առաջարկում եմ այս Պալատին՝

1. Դատապարտել աշխարհի բոլոր կրոնական փոքրամասնությունների հետապնդումները:

2. Ցավալ Թուրքիայում քրիստոնյա փոքրամասնությունների երկարատև ծանր վիճակի համար, ներառյալ այն փոքրամասնությունների հանդեպ խտրականության համար, որոնց կրոնը և մշակույթը լայն տարածում են ունեցել:

3. Խնդրել թուրքական կառավարությանը՝ ի շահ աշխարհի և ի հարգանք փոքրամասնությունների՝

ա) բոլոր քրիստոնյա հավատքի եկեղեցիների համար հեշտացնել դրանց որպես պաշտոնական եկեղեցու ճանաչումը և հստակ, օրինական իրավունքների վերապահումը.

բ) թույլ տալ բացելու հունական օրթոդոքս և հայ առաքելական ճեմարաններ, որոնք բռնի կերպով փակվել են 1971թ. և թույլ տալ նաև ուրիշ

քրիստոնյա հավատքների, ինչպես օրինակ՝ սիրիական օրթոդոքս ճեմարանների բացումը.

գ) պարզեցնել քրիստոնյա կառույցների վրա դրված հատուկ հարկերը.

դ) պահպանել քրիստոնեական շինությունները և դադարեցնել քրիստոնեական եկեղեցիների, վանքերի և այլ կրոնական հուշարձանների ոչնչացումը կամ սրբապղծումը.

ե) իսլամական էքստրեմիստների հետագա հնարավոր հարձակումներից առավել պաշտպանության տակ առնել օրթոդոքս եկեղեցին Ստամբուլում և հայկական ու հունական քրիստոնեական եկեղեցիները Թուրքիայում.

զ) հայ բողոքական եկեղեցուն վերադարձնել ամբողջ ունեցվածքը, որ վերցվել էր նրանից, ներառյալ՝ նկուղը, որոնք հայերը ստիպված էին չվճարել.

է) չխառնվել եկեղեցու պարագլուխների ընտրություններին կամ քրիստոնյա համայնքների գործերին, մասնավորապես՝ դպրոցների աշխատանքներին:

Ես ցանկանում եմ սրանով Պալատի ուշադրությունը հրավիրել Թուրքիայի Հանրապետությունում քրիստոնյա փոքրամասնությունների հանդեպ խտրականության և նրանց հետապնդումների վրա:

Մարդկային իրավունքների նման մեծ մասշտաբի շարունակական ոտնահարումը սարսափելի մեղադրական ակտ է՝ ուղղված թուրքական կառավարությանը, կառավարություն, որ մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիայի ստորագրողներից է և ՄԱԿ-ի անդամ է հանդիսանում:

Փոքրամասնություններին հարգելու և պաշտպանելու միջազգային համաձայնագրերը Թուրքիայի կողմից կատարվում են անամոթաբար և աներեսաբար: Պատմականորեն սա կապակցվում է դարասկզբին երբևէ տեղի ունեցած 1,5 մլն հայերի ցեղասպանության հետ, որն անհասկանալիորեն մերժվում է թուրքական կառավարության կողմից՝ չնայած հակառակ ակներևությանը: Ներառյալ նաև 1,5 մլն հույների սպանությունն ու արտաքսումը, մարդկային և քաղաքացիական հիմնական իրավունքների պաշտպանումը Թուրքիայի կողմից դառնում է ամոթալի և ցավալի:

Մինչև 1920թ. լինելով աշխարհիկ պետություն, թուրքական կառավարությունն յուրացրեց ոչ մուսուլման փոքրամասնության ունեցվածքը: Դարասկզբին Թուրքիայում ապրում էին 12 մլն քրիստոնյաներ: Այսօր միայն՝ 100000 քրիստոնյա է մնացել: 1922թ. մոտավոր հաշվարկով շուրջ 60000 օրթոդոքս հայեր և 3500 օրթոդոքս հույներ են մնացել:

Բարտոնի պատվավոր անդամը (պրն. Մ. Քլելանդը), որը երկկուսակցական ոգով հարել է այս շարժմանը, համաձայնվել է մանրամասն խոսել Թուրքիայում հունական համայնքի ծանր վիճակի մասին:

Ես ցանկանում եմ կենտրոնանալ Թուրքիայում հայ համայնքի ճնշումների և ստորացումների շարունակության վրա: Հայ համայնքը տեղակայված էր Թուրքիայի հեռավոր և գյուղական շրջաններում:

Աշխարհից նման մեկուսացումը հետագայում նրան իրական, պետական կախվածության մեջ էր դրել հարևան Թուրքիայից:

Դարավերջին 2,5 մլն հայ էր ապրում արևելյան Թուրքիայում՝ իրենց պապենական հողերում, ուր նրանք հիմնել էին հարուստ և ծաղկող մշակույթ: Այս ամենը ոչնչացվեց 1915-1922թթ. հայոց սարսափելի ցեղասպանությամբ: Հայկական համայնքները ամբողջությամբ քշվեցին Սիրիական անապատի մահվան ճամբարները: Շատ հայեր, որոնք չոչնչացվեցին իրենց տներում և գյուղերում՝ հարկադրաբար քայլեցին դեպի մահը:

Հայ տղամարդիկ զորակոչվեցին Օսմանյան բանակ և կենտրոնացվեցին աշխատանքային գումարտակներում, որտեղ նրանք բառացիորեն աշխատեցվում էին մինչև մահ: Կանայք, երեխաները և ծերերը հավաքվում և քշվում էին՝ ենթարկվելով ահավոր տանջանքների:

Ոմանք ենթարկվում էին բռնությունների, ոմանք ոչնչացվում, ոմանք էլ բռնությամբ իսլամ ընդունում: Հրաշքով փրկվածներից շատերը արտաքսվեցին իրենց հայրենի հողերից: Ցեղասպանության ավարտից հետո 1,5 մլն հայեր ոչնչացվել էին և հազարավորներ տեղահան արվել: Յուրաքանչյուր հաջորդող թուրքական կառավարություն մերժել է ցեղասպանության երբևէ առկայությունը: Անկարայում անգամ կա պատվավոր մի մուսուլման, որ կասկածելի պատիվ է ունեցել զանգվածային կոտորածները և գաղթը կոորդինացնելու: Սպանություններն ու գաղթը կարելի եղավ կանգնեցնել, բայց անհանգստացումներն ու խտրականությունները շարունակվում են մինչև այսօր մնալ չուղղված:

1920-ական թվականներին, հատկապես 1923թ. Լոզանի միջազգային պայմանագրով թուրքական կառավարությունը վրդովեցուցիչ անտարբերությամբ ընդունեց փոքրամասնությունները պաշտպանելու հատկապես հայ համայնքի իրավունքները: Ովքեր ստիպված էին եղել Առաջին աշխարհամարտի ընթացքում թողնել իրենց գյուղերը, նրանց արգելվեց վերադառնալ կամ պահանջել իրենց սեփականությունը:

1930-ականներից բառացիորեն հարյուրավոր կրոնական և մշակութային կոթողներ արևելյան Թուրքիայի՝ պատմական Հայաստանի նահանգներում ավերվեցին, իսկ մնացորդների՝ իբրև սիմվոլիկ մշակութային արժեքների պահպանումը արգելված է:

Չնայած մասնավոր սեփականության թույլտվությանը, 1942թ. օրենք ընդունվեց, որով դրա դիմաց մայրաքաղաքում հարկ էր տրվում:

Չափից դուրս ուռճացված գներով իրենց սեփականության համար հարկեր վճարելուց հետո, շատ հայեր ստիպված էին իրենց գործը թողնել, իսկ մյուսներին էլ հարկերի վճարումը բերում էր սնանկացման: Ովքեր չէին կարողանում բավականաչափ գումար վճարել, նրանց սպասվում էր համակենտրոնացման ճամբարը, որտեղ շատերը դառնում էին հիվանդ կամ մահանում էին:

Այսօր փոքրամասնությունների սեփականատերերը վճարում են 5% վերահսկիչ հարկ՝ թեպետ 1980թ-ին օրենքը պետականորեն վերափոխվել է:

1970-ականներին կարգավորումները իրականում արգելք էին ոչթուրքական կառույցների համար, որոնք իրենց սեփականությունը ձեռք չէին բերել 1936թ. հետո: Սա բերում է եկեղեցիների և դպրոցների բռնագրավման՝ առանց փոխհատուցման:

Հայ երեխան չի կարող հաճախել հայկական դպրոց, եթե նախորդ տարի նա չի ավարտել հայկական դպրոց: Շարունակվող հաճախումները

պատճառ էին դառնում վտարման, և երեխան պետք է ավարտեր կրթությունը թուրքական դպրոցում: Միայն հայոց լեզվի դասերն են տարվում հայերեն, իսկ մնացած դասաժամերին գրությունը թուրքերեն է: Ճշտախոս հայերը չեն կարող դառնալ ուսուցիչներ կամ դպրոցների վարչականներ:

Բացի այդ, յուրաքանչյուր դպրոցում փոխտնօրեն է նշանակվում ծագումով թուրք անձնավորություն և հայ տնօրենը յուրաքանչյուր առաջարկության դիմաց պետք է ստանա նրա համաձայնությունը:

1980-ականների վերջում հայկական եկեղեցիները փակվեցին՝ ապահովության պատրվակով՝ հենց նույն պաշտոնյաների կողմից, որոնք մերժեցին շինությունների վերականգնման դիմումները: Հայկական եկեղեցին զրկվել է ճեմարանից, ուր դաստիարակվում էին քահանաներ, իսկ թուրք պաշտոնյաները խառնվում են հայ եկեղեցու պարագլուխների ընտրություններին: Էքմիկ զտման մեկ այլ նենգության ձև էր այն, որ Էրզրումի գյուղերից մեկում նախկին հայկական եկեղեցին հիմնովին վերածվել է մզկիթի: Միայն անցած ուրբաթ բռնազավթված հյուսիսային Կիպրոսից զեկույցներ ստացվեցին, որ թուրքական կառավարությունը մտադիր է նախկին հայկական եկեղեցին հիմնովին վերածել հյուրանոցի:

1970-1980-ականներին Թուրքիայից դուրս համակված անհատ հայերի և կազմակերպությունների անջատ ահաբեկչական գործողությունները պատճառ դարձան, որ թուրքական կառավարությունը ուժեղացնի իր հակահայկական տրամադրվածությունը: Երկրում հայկական համայնքի դեմ թշնամության ալիք բարձրացավ: Մեծ տարածում գտան հայկական պատրիարքարանի, եկեղեցիների, դպրոցների վրա գազանային հարձակումները:

Թուրքական կառավարության կողմից կազմակերպված այս ահաբեկչական գործողությունները ունեին նպատակ՝ թուլացնել հայ և մյուս քրիստոնյա փոքրամասնությունների հիմնային համակարգերը:

Համայնքների վիճակը անկայուն էր շարունակվող հարձակումների հետևանքով, որոնք հիմքից խախտում էին եկեղեցիների, դպրոցների նորմալ գործելու հնարավորությունը: Դժվարության և անհանգստության օդ է իջել այս մարդկանց վրա: Այս հարկադրումները՝ մարդկային իրավունքների հիմքի վրա իրենց գագաթնակետին են հասել հատկապես համայնական և ընտանեկան կյանքում: Եվ թեպետ 1,5 մլն հայեր էլ երբեք չեն կարող ետ վերադառնալ, այնուհանդերձ, միջազգային կոմիտեն պարտավորվածություն է կրում՝ պաշտպանել Թուրքիայում քրիստոնյա փոքրամասնությունների կյանքը և երաշխիք լինել, որ նման կոտորածների վտանգ երբեք չի լինի:

Պրն. փոխխոսնակ, այսօր միջանցքում մեզ են միացել իմ ընտրատարածքի հայ և ամբողջ Ավստրալիայի հույն համայնքների ներկայացուցիչներ: Ես կցանկանայի նրանց այսօր հրավիրել այստեղ, քանզի նրանք նույնպես այն բողոքի մի մասն են կազմում, ինչը այսօր անում է թուրքական կառավարությունը: Իբրև այս Պալատում Ավստրալիայի հայկական մեծ համայնքի ներկայացուցիչ, ես կարող եմ վավերացնել այս համայնքի որոշումը, այն է՝ շարունակել միջազգային ուշադրությունը սևեռել մարդկային իրավունքների հանդեպ թուրքական բռնությունների վրա: Այսօր մենք ներկայացուցիչների պալատում միանում ենք աշխարհում բոլոր մյուսներին՝ ներառյալ ՄԱԿ-ի Անվտանգության հանձնաժողովին և Եվրոպական

համագործակցությանը՝ դատապարտելով Թուրքիայում քրիստոնյա փոքրամասնությունների նկատմամբ շարունակվող խտրականությունները:

Հայկական սփյուռքը, որ սփռվել է ամբողջ աշխարհով մեկ, ապրում է վարկաբեկելով Օսմանյան կայսրությանը, որը բնաջինջ արեց հայ ժողովրդին: Ես կոչ եմ անում իմ գործընկերներին նկատի ունենալ այս պարտավորությունը, որ մենք ունենք բոլոր այն համայնքների նկատմամբ, որոնք տառապել են Թուրքիայում այնպես, ինչպես հայերը և հույները, և միանալ ինձ հետ այս աղմկարար առաջարկությանը:

ՊՐՆ. ՓՈԽԽՈՍՆԱԿ (*պրն. ՆԵՀԼ*) - Առաջարկությունը պաշտպանություն է գտնո՞ւմ:

ՊՐՆ. ՍԻՔԼԵԼԱՆԴ (*Բարթոն - 15[32]*): Ես պատվով եմ պաշտպանում առաջարկությունը: Ես միանում եմ Հյուսիսային Սիդնեյի անդամին (պրն. Հոքեյին)՝ հրավիրելով հայ և հույն համայնքների ներկայացուցիչներին այս պալատ: Սա կարևոր հանգամանք է ոչ միայն այս համայնքների, այլ, ինչպես ցույց կտամ իմ քննարկումներում, ամբողջ աշխարհի համար: Իրոք, ես պետք է ավելացնեմ, որ ոչ միայն 1,5մլն հայ է սպանվել դարասկզբին, այլ նրանց մեջ նաև 400 հազար հույներ, որոնք անհայտ կորան ցեղասպանության ընթացքում:

Սրանք այնպիսի բաներ են, որ թուրքական կառավարությունը պետք է պատասխան տա անցյալի արարքների համար:

Այսօր մենք ուզում ենք պարզել, թե այսուհետ ինչ են պատրաստվում անել նրանք:

Երկրորդ աշխարհամարտից հետո միջազգային հասարակայնությունը հասկացավ, որ մարդկային իրավունքները տարածվում են ազգային սահմանների ետևում: Իրոք, միջազգային հանրությունը հասկացավ, որ աշխարհում չի կարող խաղաղություն լինել, մինչև չհարգվեն մարդու հիմնական իրավունքները: Ուստի և այն ազգերը, որ ձևավորվեցին ՄԱԿ-ը, շատ կարևոր ուշադրություն սևեռեցին այն միջազգային պայմանագրերին, ուր ողջունվում էին Մարդու իրավունքների հիմունքները: Մենք ունենք մարդու Իրավունքների Համընդհանուր համաձայնագիր, Քաղաքացիական և քաղաքական Իրավունքների միջազգային կոնվենցիա և բավական վերջերս՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա: Կան նաև այս ոլորտը շոշափող շատ ուրիշները, սակայն, ընդհանուր առմամբ, դրանք կենտրոնանում են փոքրամասնությունների իրավունքների վրա: Այս իրավունքները ներառում են կրոնական ազատությունը, կարծիքի ազատությունը և պաշտպանում են մշակութային ինքնուրույնությունը:

Թուրքիայում հույների բնակության ընթացքում մեկ անգամ չէ, որ դիմումներ են ներկայացվել: 1923թ. Լոզանի պայմանագիրը բազում հիմնային իրավունքների երաշխիք էր հանդիսանում: Ցավոք, մի վիթխարի անդունդ կար այս ստորագրված նշանավոր փաստաթղթի և չկատարված քայլերի միջև: Վերջերս Թուրքիայի վարչապետը հայտարարեց, որ մտադիր է վերջ դնելու Թուրքիայում մարդու իրավունքների չարաշահումներին: Նմանատիպ մտադրություններին, իսկ դրանք աշխարհում լայն տարածում ունեն, միջազգային հանրությունը վերաբերվում է անհանդուրժողաբար, ինչը գնալով արագորեն աճում է, քանի որ Թուրքիայի գրիչի և իր իսկ երկրում գործողությունների միջև կա ահռելի տարբերություն:

Այս շարժումն իր հետ բերում է բազում հետևանքներ, որոնց ես կարճ կանդրադառնամ: Թուրքական կառավարությունը խուսափում է ճանաչել քրիստոնյա հավատքի առկայությունը, և իբրև հետևանք նրանք էլ ի վիճակի չեն իրական սեփականություն ապահովել: Իրոք, հաճախ եկեղեցիների իրական սեփականությունը անորոշ ճակատագիր է ունենում: Շինությունները հաճախակի ինքնակամորեն բռնագրավվում են՝ առանց փոխհատուցման վճարի: Անկասկած, անհրաժեշտ է, որ թուրքական կառավարությունը ճանաչի բոլոր քրիստոնյա հավատքները և երաշխիք լինի նրանց՝ սեփականություն ունենալու համար:

1971թ. թուրքական կառավարությունը՝ հայկականի հետ մեկտեղ փակեց Հալքիի պատրիարքարանի աստվածաբանական դպրոցը, որ բացվել էր դեռևս 1844թ., քանի որ համաձայն թուրքական օրենքի պատրիարքը և հունական օրթոդոքս եկեղեցու հոգևորականները պետք է լինեն Թուրքիայի քաղաքացի, ինչը իրոք, մեծ խնդիր էր պատրիարքարանի համար: Քանի որ երկար ժամանակ չի եղել հոգևորականների ուսուցում, ուստի և հոգևորական չկար, որին պատրիարքարանը առաջ քաշեր: Այս ստրատեգիական թաքնված քայլի նպատակն էր դադարեցնել հունական օրթոդոքս հավատքի ուսուցումը Թուրքիայում: Այս շարժումը, սակայն, արդարացիորեն առաջ բերեց այն առաքելական ճեմարանների վերաբացումը, որոնք բռնությամբ փակվել էին 1971թ.:

Հյուսիսային Սիրենեյի ներկայացուցիչը խոսեց այն հատուկ 5%-անոց հարկի մասին, որ վճարում են քրիստոնեական կառույցները, հարկեր, որ չեն արդարացվում ոչ մի կոնտեքստով, քան այն, որ հարկվում են քրիստոնեական կառույցներից: Տարիների ընթացքում այս հարկերի չվճարելն անհամար չարաշահումների պատճառ է դարձել: Այն նաև պատճառ է հանդիսացել սեփականության բռնագրավման այն կառույցներից, որոնք ի վիճակի չեն եղել վճարել հարկերը, իսկ իբրև հետևանք բռնաճնշումների և ահաբեկությունների, եկեղեցին հաճախող բնակչության թիվը գնալով պակասում է, ինչով էլ հարկային բեռը էլ ավելի է ծանրանում:

Վերջին շրջանի պատմությունը ցույց է տալիս ամենաքիչը՝ անտարբերությունը, ամենավատը՝ դրական խրախուսանքը քրիստոնեական եկեղեցիների, վանքերի և այլ կրոնական հուշարձանների ավերման և պղծման հանդեպ: Ինչ վերաբերվում է հունական օրթոդոքս հավատքին, կան սրբապղծված արձաններ և անգամ գերեզմանատներ: Թեպետ սա կարող է չնչին բան թվալ, սակայն փաստն այն է, որ հունական օրթոդոքս, և չեմ կասկածում նաև քրիստոնեական այլ հավատքների եկեղեցիական շինությունների սրբազան կառույցներն օգտագործվում են անհամապատասխան արարողությունների համար: Դա շատ վիրավորական է նրանց համար, ովքեր ունեն հունական օրթոդոքս հավատք:

Մյուս կողմից մերժելով կրոնական համակարգերի կարևորությունը, կառավարությունը դիտավորյալ կերպով սահմանափակում է այս շինությունների պահպանությունը: Ինչպես մենք Ավստրալիայի շատ քաղաքներում պահպանում ենք պատմական արժեք ունեցող շինությունները, այնպես էլ նրանք այդ ամենը «կատարում են» պաշտպանության քողի ներքո: Բայց այս որոշումները այնպես են կազմվում, որ խոչընդոտում են շինությունների հիմնարար նորոգումներին, վերակառուցումներին և պահպանությանը: Ուստի և վրա է հասնում դրանց քայքայումը: Առաջարկությամբ

կոչ է արվում քայլեր ձեռնարկել՝ պաշտպանելու և հաստատելու քրիստոնեական հուշարձանները ու շինությունները:

Տարիներ շարունակ թուրքական կառավարությունը պարծենում էր, որ օրթոդոքս եկեղեցու պատրիարքարանի առկայությունը Ստամբուլում խոսում է Թուրքիայի՝ ազգային և կրոնական հանդուրժողականության մասին:

Բայց իրականությունն այն է, որ այն խուսափել է պատշաճ հարգանք մատուցել պատրիարքարանին և իրականում համապատասխան պաշտպանություն չի ցուցաբերել: Իրոք, 1993թ. վարձ կատարվեց պայթեցնել պատրիարքարանը: Թեպետ փորձերը ձախողվեցին, այնուհանդերձ պարզ էր, որ բավականաչափ պաշտպանություն չի ձեռնարկվել այն կոնտեքստով, որտեղ թուրքական կառավարությունն իր քարոզչությամբ հունական օրթոդոքս հավատքի դեմ տրամադրություններ էր ստեղծում: Այս շարժումը կոչ է անում քրիստոնեական կառույցների նկատմամբ համապատասխան հոգածություն ցուցաբերել:

Կան նաև օրինակներ սեփականության և փողի բռնագրավման մասին, որի մասին ակնարկեց Հյուսիսային Սիդնեյի անդամ պրն. Հոքեյը: Այն հաճախ արվում է առավել խելացի քողի ներքո, օրինակի համար ասելով, որ ճանապարհների ընդարձակման հատակագծերն անցնում են այս տարածքներով, ուստի և այդ սեփականությունները բռնագրավվում են: Իրականում պատմությունը ցույց է տալիս, որ դրանք շինծու պատրվակներ էին, քանի որ ճանապարհների ընդարձակում տեղի չի ունեցել: Նորից ձեռքբերման մեկ այլ մեթոդ:

Կառավարությունն ինքն է զբաղվում մասնավոր ադմինիստրացիաների ստուգումներով և սահմանափակումներով: Հյուսիսային Սիդնեյի ներկայացուցիչը դարձյալ խոսեց հասարակական դպրոցներում երկու անօրինակ համագործակցության մասին, որոնցից մեկին ճշանակում է թուրքական կառավարությունը և որ ուսանողների գրքերը խստագույնս քննության են առվում, ինչով և սահմանափակվում է հունական պատմության և նաև հունարենի դասավանդումը: Ստուգումների է ենթարկվում յուրաքանչյուր քերթ, որը փորձում է պաշտպանել հունական օրթոդոքս հավատքը: Շատ ավստրալիացիներ կարող են զարմանալ, իմանալով, որ թուրքական կառավարությունը անգամ մերժելու իրավունք ունի պատրիարքի թեկնածուների նկատմամբ:

Սա մի իրավիճակ է, ինչը միանգամայն անբավարար է գնահատվում ժամանակակից աշխարհում, երբ երկու տարի է մնացել 21-րդ դար թևակոխելուն:

Թուրքական կառավարությունը դիտակետում է: Այն չի կարող հույս ունենալ՝ ամբողջությամբ ընդունվելու միջազգային հանրության կողմից, մինչև իր տանը կարգի չբերի մարդկային չարաշահումների խնդիրը:

ՊՐՆ. ԴՈՆԴԱՍ (*Հյուսիսային տարածք* - 15[41])- Այսօր ես բարձրացել եմ՝ խոսելու Թուրքիայում քրիստոնյա փոքրամասնությունների շարունակվող հետապնդումների մասին:

Ես կցանկանայի շնորհավորել Հյուսիսային Սիդնեյի անդամին (պրն. Հոքեյին) այս առաջարկության առիթով: Սա շատ կարևոր և տեղին առաջարկություն էր, և ես ինքս նման բովանդակությամբ մի շարք նամակներ եմ ստացել Ավստրալիայում ապրող հույն ու հայ համայնքի բազմա-

թիվ ներկայացուցիչներից: Ես կցանկանայի հանդիպել նաև Ավստրալիայի հույն և հայ համայնքի ներկայացուցիչներին, որոնք այժմ միջանցքում են: Սա շատ երկարատև խնդիր է և մի քանի րոպեից ես ցավով ստիպված կլինեմ անդրադառնալ դրան:

Շատ հաճախ մենք համարում ենք, որ Ավստրալիայում մեր ազատությունները հենց այդպիսին էլ պետք է լինեին: Մենք ապրում ենք մեր առօրյա կյանքով՝ առանց կառավարության միջամտության:

Մենք ազատորեն մեր երեխաների համար ընտրում ենք դպրոցներ, որոնք նրանք պետք է հաճախեն: Մենք ունենք կրոնական ազատություն: Մենք ունենք մասնավոր սեփականություն և այն ավելի ենք ընդարձակում՝ մեր ունակություններից ելնելով: Ունենք հարգանք մեր էթնիկ անցյալի և կրոնական հավատքի նկատմամբ: Սակայն Թուրքիայում ապրող քրիստոնյաների համար դա այդպես չէ: Թուրքական կառավարության կողմից քրիստոնեական համայնքի գործերին խառնվելը նորություն չէ: Այն եղել է դարեր շարունակ:

Պրն. փոխխոսնակ Նեհլ, դուք երևի տեղյակ եք ,որ ես հունական ծագում ունեմ: Ես երկրորդ սերունդն եմ, որ ապրում եմ Ավստրալիայում:

Բայց վաղ պատանեկության տարիներին ես Թուրքիայում մեծանում և սովորում էի թուրքերի կողմից հույների հանդեպ մշտական գազանությունների միջավայրում: Փաստորեն, Ավստրալիայի հույների մեծ մասը, որ այստեղ է եկել 1900-ականների սկզբներին, ստիպված են եկել, փոխելով իրենց անունները, որպեսզի ճանապարհորդական փաստաթղթեր ստանան և իրավունք ունենան Փոքր Ասիայից անցնել Ավստրալիա կամ Ամերիկա, Անգլիա կամ ուրիշ տեղեր: Օրինակի համար, նրանք կրճատում էին իրենց անունները՝ անձնագիր ստանալու համար:

Երբ Կաստելորիզո կղզին, որտեղից եկել են իմ նախնիները, գտնվում էր Թուրքիայի տիրապետության ներքո, երեխաները ստիպված էին գաղտնի հաճախել դպրոցներ՝ վանքերում: Կաստելորիզոյի լեռան գագաթին գտնվող վանքն էր տանում մի փոքրիկ արահետ՝ մեկ մարդկային մարմնի չափից ոչ մեծ, որով հնարավոր էր լինում հասնել մի շատ մեծ քարանձավի, որտեղ էլ նրանք ուսանում էին հունական հավատքը և մեր մշակույթը:

Քրիստոնեական համայնքի գործերին թուրքական կառավարության խոչնդոտները նորություն չէին: 1914-1922թթ. շուրջ 2 մլն հայերի և հույների կոտորածներով թուրքական կառավարությունը կարողացավ կերտել «Թուրքիան՝ թուրքերի համար»: 1974թ., երբ թուրքերը գրավեցին Կիպրոսը, մի կողմ շպրտվեցին կիպրահույների կրոնական և մշակութային արժեքները, որին որոշակիորեն արձագանքեց ՄԱԿ-ը՝ դատապարտելով այն:

Ցավոք, 21 տարի է անցել այս իրադարձություններից, սակայն թուրքական հանրությունը շարունակում է հետևել այս խայտառակությանը:

Քրիստոնյաները այսօր կազմում են Թուրքիայի բնակչության մոտ 0,2%-ը: Քանի որ քրիստոնյաների թիվը Թուրքիայում կրճատվել է, դժբախտաբար, ավելի հեշտ է դարձել կառավարության համար՝ սահմանափակել նրանց իրավունքները: Կան այս սահմանափակումների բազում արդի օրինակներ:

1970թ. կրթության նախարարությունը արգելեց փոքրամասնությունների դպրոցներում աղոթելը: 1984թ. օրենք ընդունվեց, որով արգելվում էր այնպիսի դպրոցների հիմնումը, որտեղ կրոնական ուսուցում էր տարվելու: Կրոնական կրթության համար նախատեսված ժամանակը նույնպես խստորեն վերահսկվում է: Ես տեղեկացել եմ, որ նշանակվում են թուրք մուսուլման տնօրեններ՝ յուրաքանչյուր «քրիստոնեականի» վրա, քանի որ միայն թուրք մուսուլմանները և ոչ թե քրիստոնյաները կարող են ճանաչվել իբրև կառավարության պաշտոնյաներ:

Թուրք քրիստոնյաների ծանր վիճակը հաճախ աչքից վրիպում է, քանի որ աշխարհը հայացքը կենտրոնացնում է թուրքական քրդերի հետապնդումների վրա, որոնք պայքարում են երկրի հարավ-արևմուտքում իրենց անկախությունը հաստատելու համար: Թուրքիայի քրիստոնյաներն ուզում են խաղաղ ապրել այդ սահմանների ներսում: Նրանք չեն խնդրում տապալել թուրքական կառավարությունը: Նրանք չեն փնտրում քաղաքական ինքնուրույնություն: Կրոնական ազատություն և անվտանգություն՝ ահա ինչ են խնդրում նրանք: Ազատության երաշխիքը հանդիսանալու էր 1923թ. Լոզանի պայմանագիրը, պայմանագիր որ ամբողջությամբ անտեսվեց թուրքական կառավարության կողմից: 1998թ. փետրվարի 24-ին, Անվտանգության խորհուրդը և Եվրոհամագործակցությունն այն բանից հետո, երբ պատգամավորությունը այցելեց Թուրքիա, Հունաստան և Կիպրոս՝ տարածաշրջանում մարդու իրավունքները ուսումնասիրելու համար, գրեցին Թուրքիայի վարչապետ Մեսութ Յելմազին:

Հանճնաժողովը իր անհանգստությունն էր արտահայտում Հայքի ճեմարանի շարունակվող փակման առիթով: Ես մեջբերում եմ նրանց նամակից.

«... մյուս փոքրամասնությունների, ներառյալ հայկական և սիրիական օրթոդոքս, ինչպես նաև հռոմեական կաթոլիկ, հայկական, հույն քաղդեական և սիրիական կաթոլիկ ու բողոքական կրոնն ու հավատալիքները, ենթարկվում են հալածանքների ու խտրականությունների»:

Ես միանում եմ միջազգային հանրությանը՝ կոչ անելով պաշտպանել քրիստոնեական եկեղեցիները և կառույցները Թուրքիայում: Ես ողջունում եմ Պալատի առաջարկությունը:

ՊՐՆ. ԼԵՈ ՄՔԼԵՅ (*Վաթսուն* - 15[46]) - Այն առաջարկությունը որ այսօր քննարկվում է Պալատում, մեծ կարևորություն է ներկայացնում, որովհետև այն խոսում է թե՛ մեր երկրի և թե՛ այն երկրի մասին, որի անունը Թուրքիա է: Այն իրապես պահանջում է դատապարտել աշխարհի երեսին կրոնական փոքրամասնությունների հետապնդումները և հատկապես Թուրքիայում քրիստոնյա փոքրամասնությունների դեմ թուրքական կառավարության քայլերը: Շատերը այս երկիր են եկել Թուրքիայից և հարակից երկրներից և այստեղ նրանք ի վիճակի են կիսել իրենց քաղաքական և կրոնական ազատությունները աշխարհի ամենատարբեր մարդկանց հետ: Թուրքիայում դա այդպես չէ: Թուրքական կառավարությունը այս ասպարեզում ակտիվորեն գործում է քրիստոնյաների դեմ: Դարասկզբին այն իրագործեց իր ամենաանմարդկային արարքը՝ 2մլն մարդու սպանելով, տեղահանելով և բոլոր համայնքները արմատախիլ անելով: Համայնքները, որոնք հարյուր-հազարավոր տարիներ ապրում էին Բոսֆորի և Սև ծովի շրջաններում, պարզապես ոչնչացվեցին: Մի ամբողջ մշակույթ ոչնչացվեց,

և դա արվեց թուրքական կառավարության կողմից: Թուրքիան, ինչպես նշեց իմ գործընկերը՝ Հյուսիսային Տարածքի անդամը (պրն. Դոնդաս) ոչինչ չի մոռացել և ոչինչ չի սովորել:

Ինչպես նա ասաց, 1974թ. նրանք գրավեցին Կիպրոս կղզին և սկսեցին գործել նույն կերպ՝ տեղահանել, սպանել մարդկանց,պղծել եկեղեցիները: Մինչև օրս միջազգային շուկայում վաճառվում են սրբապատկերներ, որոնք գողացվել են հյուսիսային Կիպրոսի եկեղեցիներից: Դրանք այսօր վերածվել են բարաքների կամ բնակարանների:

Այն ինչ թուրքական կառավարությունն արել է Թուրքիայում, այսօր անում է հյուսիսային Կիպրոսում, և սա մի պետություն է, որ շուտով ակնկալում է դառնալ Եվրոմիության մի մասը: Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է: Թուրքիան մի երկիր է, որ արտաքուստ իրեն ներկայացնում է իբրև Արևմտյան լիբերալ-դեմոկրատական երկիր, սակայն ներքուստ այն մարդասպան, հակահասարակական և հակաքրիստոնեական պետություն է:

Պետք չէ ակնկալել, որ Թուրքիան կդառնա քրիստոնեամետ երկիր, պետք է պարզապես ակնկալել, որ Թուրքիայում քրիստոնյաները կունենան նույն իրավունքները, ինչպիսին մուսուլմանները՝ արևմտյան երկրներում: Այն ինչ մենք խնդրում ենք, այն է, որ մարդիկ հավասար իրավունքներ ունենան, որ Թուրքիայի քրիստոնյաները հարկ է, որ նույն իրավունքներն ունենան, ինչպես թուրքերը՝ այստեղ՝ Ավստրալիայում: Ավելին չի խնդրվում:

Ես, կարծում եմ նաև իմ գործընկերները, համոզված եմ, որ այս խորհրդարանը իր տեսակետը պետք է հայտնի այն ավստրալիացիներին, որոնք իրենց ներկայացուցիչներին են ուղարկել այստեղ: Թեպետ հարմար չէ, որ մենք քվեարկենք մասնավոր անձանց գործերը, այնուհանդերձ, կարծում եմ, որ այսօր մենք պետք է դա անենք: Այսպիսով, այն ինչ պետք է անենք, ես առաջարկում եմ հարցը այժմ դնել քննարկման:

ՊՐՆ. ՓՈԽԽՈՍՆԱԿ (*պրն. Ներսէս*) Մեկից ավելի տարածայնության դեպքում, ելնելով 193-րդ հոդվածից, հարցի քննարկումը հետաձգվում է մինչև բողոքարկված քննարկումների ամփոփումը:

3. ՕՐԵՆՍԴԻՐ ԺՈՂՈՎ

ՕՐԵՆՍԴԻՐ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՋԵԿՈՒՅՑՆԵՐԻ ԱՄԵՆՕՐՅԱ ՏԵՂԵԿԱԳԻՐ
29 ԱՊՐԻԼԻ 1998Թ.

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԼԻՑԸ

ՊՐՆ. ՎԱՏԿԻՆՍ (*Գլադեսվիլ* - 19[32]) - Ես առաջարկում եմ որ այս պալատը.

1. Ճանաչի Օրենսդիր ժողովի կողմից ընդունված պատմական առաջարկության մեկ տարին, որով դատապարտվում է 1915թ. հայկական ցեղասպանությունը:

2. Խնդրի նախագահող պաշտոնյաներին ընդունել հայկական համայնքների կողմից ներկայացված հիշատակը հավերժացնող հուշարձանը

կառուցելու առաջարկը, որը կտեղադրվի խորհրդարանին ենթակա տարածքում:

3. Ուղերձներ հղի այլ վայրեր՝ ընդունելու նմանատիպ առաջարկությունը. 1997թ. ապրիլի 17-ին խորհրդարանն ընդունեց պատմական առաջարկություն՝ դատապարտելով 1915թ. ցեղասպանությունը:

Այդ առաջարկը, որով նշվում է եղեռնի 82-ամյա տարելիցը, կարևոր քայլ է՝ արագացնելու այդ հրեշավոր արարքի ճանաչումը: Սա մի սուրբ քայլ էր՝ ի հիշատակ 1,5 մլն տղամարդկանց, կանանց և երեխաների, որոնք ոչնչացվեցին ցեղասպանության ժամանակ: Սա կարևոր է, որ մենք, օգտագործելով առիթը, այդ պատմական առաջարկության մեկամյա տարելիցի կապակցությամբ, դարձյալ նշենք ապրիլի 24-ը իբրև հիշատակի օր:

Ի հիշատակ այս շարժման, կոչ ենք անում խորհրդարանի տարածքում կանգնեցնել հավերժական հուշակոթող: Սրանով մեկ անգամ ևս պետք է ներկայացվի հայկական ցեղասպանության իրողությունը:

Այս գազանային դարաշրջանի առաջին՝ հայկական ցեղասպանության հիմքը դրվել էր նախորդ դարի վերջում, երբ օսմանյան ռեժիմի կողմից սկսեցին իրագործվել հակահայկական ծրագրեր:

Սակայն այն չշարունակվեց մինչև ապրիլի 24-ը, այլ Առաջին աշխարհամարտի միջազգային կոնֆլիկտի վարագույրի ներքո, այդ ահասարսուռ իրականության մեջ սկսվեց հայտնի ցեղասպանության լավ մշակված քաղաքականությունը: Այն սկսվեց ապրիլի 24-ին ավելի քան 200 քաղաքագետների, հոգևորականների և մշակութային գործիչների ձերբակալումով ու սպանությամբ: Ապա այրավի թիրախն ուղղվեց հասարակ հայ տղամարդկանց, կանանց, երեխաների վրա, որոնք ապրում էին Օսմանյան կայսրությունում:

Հաջորդ տարիների ընթացքում 2,5 մլն. հայ բնակչությունից 1,5 միլիոն կոտորվեց: Շատերը սպանվեցին Օսմանյան կայսրությունում գտնվող իրենց տներում, շատերը բռնի տեղահանվեցին Սիրիայի անապատներ, և շատ ուրիշներ կենտրոնացվեցին ճամբարներում, որտեղ նրանք աշխատում էին մինչև մահ: Հայ ժողովրդի կոտորածի և տեղահանության այլ պատճառ չկար, քան իրենց ռասան: Ջանգվածային տեղահանված, վշտահար և վնասվածքներով մազապուրծները ստիպված էին թողնել իրենց նախնիների հողերը և հուսահատ փախչել թուրքական սարսափելի կոտորածներից: Շուրջ 500 հազար փրկվածներ փախան սփյուռք և տարբեր ժողովուրդներ սրտաբացորեն ընդունեցին նրանց:

Դա նաև Ավստրալիայի շնորքն էր, որ հազարավոր մարդիկ կարողացան իրենց ուղին կերտել այս ափերում: Այսօր ավելի քան 35 հազար հայ բնակություն է հաստատել Ավստրալիայում: Նրանց մեջ ներառվում են ցեղասպանությունից փրկվածները և նրանց զավակները: Կարևոր է, որ մենք, օգտվելով առիթից, դարձյալ հիշում ենք այդ սարսափելի իրողությունը՝ սկսած ցեղասպանության կազմակերպիչ Օսմանյան կայսրությունից, շարունակելով թուրքական կառավարություններով, որոնք երբեք չեն ճանաչել ցեղասպանության իրողությունը: Այս մերժումը դեմառդեմ կանգնած է պետության և ականատեսի հաշիվների միջև:

Չափազանց երկար է մի կողմ դրվել հայկական համայնքի մոռացված ողբերգությունը: Համենայն դեպս հայ ժողովուրդը երբեք չի մոռացել: Ինչպե՞ս կարող էր: Նրանք պայքարել են, որ ճանաչվի իրենց ժողովրդի,

տարածքի և մշակույթի հանդեպ ոճրագործությունը: Վերջին տարիներին ճանաչման համար պայքարը հաջողություն է ունեցել: Այժմ հերթը Նոր Հարավային Ուելսի խորհրդարանինն է: Խնդիրը, որ բարձրացվեց այսօր, առաջարկում է նաև պատրաստել Հայկական խաչքար, վերևում հուշատախտակ, որի վրա կգրվի Նոր Հարավային Ուելսի խորհրդարանի կողմից միացյալ կերպով հայկական ցեղասպանության հիշատակին նվիրված ամբողջական տեքստը՝ որն ընդունվել էր անցյալ տարվա ապրիլին:

Այդ հուշարձանի կառուցումը Նոր Հարավային Ուելսի խորհրդարանի շենքի տարածքում կծառայի իբրև մնայուն հիշատակ Օրենսդիր ժողովի կողմից կազմակերպված այս շարժման: Այն կգրավի հայկական ցեղասպանության ողբերգության վրա բոլոր նրանց ուշադրությունը, ովքեր կայցելեն խորհրդարանի շենք: Այն կծառայի իբրև հայ ժողովրդի կենսունակության, խիզախության և ոգու խորհրդանիշ: Ի վերջո, այն կծառայի իբրև Պալատի որոշման մշտական հիշեցում, որով արտահայտվեցին Նոր Հարավային Ուելսի բնակչության զգացմունքները և աշխարհը ցեղասպանության սարսափից ազատելու ցանկությունը: Ես կցանկանայի եզրափակել՝ իմ երախտագիտությունը հայտնելով հայկական համայնքի ղեկավարներին, որոնք այս երեկո հավաքվել են միջանցքում: Շատ հաճելի է, որ այս պատմական իրադարձությունների ժամանակ նրանք ի վիճակի են եղել միանալ մեզ: Ես ողջունում եմ Պալատի նման առաջարկությունը և ակնկալում եմ, որ ընդդիմության ղեկավարները ևս կմիանան դրան:

ՊՐՆ. ՔՈԼԻՆՉ (*Վիլոզբայ – ընդդիմության առաջնորդ* - 19[41]):

Քանի որ Գլադեսվիլի հարգարժան ներկայացուցչի կողմից բարձրացված առաջարկությունը Պալատի կողմից միասնաբար ընդունվեց անցած տարի, ես նորից պատիվ ունեմ միանալ հայկական գործին: Ես նաև ուրախ եմ 1998թ. հայկական ցեղասպանության հիշատակումից հետո միանալ այս շարժմանը, Հայկական ազգային կոմիտեի ղեկավարներին, որոնք այսօր միջանցքում են: Այս պալատի բազմաթիվ անդամներ, ներառյալ պատվարժան ներկայացուցիչը, որը հենց նոր խոսեց, նաև ներկաներ են: Ես անձամբ շատ հպարտ եմ, որ մեկ տարի առաջ բարձրացրեցի այս առաջարկությունը: Տեղին է ասել, որ սա միակ հիշատակությունն էր, որ խորհրդարանը նման ձևով ընդունեց: Այս առաջարկությամբ տրված եզակի արտոնությունը շատ բան է ասում ոչ միայն հայ ժողովրդի, այլև ցեղասպանության նկատմամբ խորհրդարանի ատելության մասին, և մեր կարծիքով այն պետք է արմատախիլ արվի մարդկային վարքագծից: Անհանդուրժելի է, թե երբ, որտեղ և ում հանդեպ է այն տեղի ունեցել: Թեման, որ ես զեկուցեցի անցյալ տարի, այն էր, որ պատմությունը, անշուշտ, կարող է հերքվել, սակայն այն երբեք չի կարող մոռացվել: Համառոտակիորեն կրկնում եմ. այս երեկո դարձյալ ճանաչելով այս հիշատակի առաջարկությունը, մենք նշում ենք նաև այն արտառոց զուգադիպությունները, որ կան ավստրալացիների և հեռավոր, տարբեր ու հնագույն ազգի՝ հայերի միջև: Մեր երկու մշակույթները միասին դեն շպրտվեցին 1915թ. ապրիլի 24-ին և 25-ին, քանի որ դաշնակցային նավատորմը Անզակյան ծովածոցին մոտեցավ հենց նույն գիշերը:

Ամեն ինչ սկսվեց հայ համայնքի ղեկավարներից. քաղաքագետներ, մշակութային գործիչներ, գործարարներ, պրոֆեսիոնալ հոգևոր գործիչներ և հայ ժողովրդի համար սկսվեց մղձավանջ: Այս մղձավանջը կարող է վե-

րացվել միայն այն ժամանակ, երբ աշխարհը ճանաչի այն, ինչ տեղի է ունեցել հայ ժողովրդի հետ, մասնավորապես՝ ճանաչում թուրքական կառավարության կողմից հայ ժողովրդի հանդեպ կատարվածի համար սկսելով 1915թ. Անզակի նախօրյակից, որը պատճառ դարձավ 1,5 մլն հայերի կյանքի կորստի: Այսօր այս պալատում կատարվում է դատավճիռ, պատմական դատավճիռ, որը իմ գործունեության ընթացքում երբեք չի եղել այս խորհրդարանում: Իմ տասնվեց տարիների ընթացքում չեմ հիշում մի դեպք, երբ խորհրդարանը այսպես պաշտպաներ իր վճիռը: Մենք մեկս մյուսին և համայնքին հիշեցնում ենք, որ հայկական ցեղասպանության վերաբերյալ մեր կոլեկտիվ հիշողությունը ժամանակի հետ մեկտեղ երբեք չի մթագնի: Պալատի երկու թևերը մեծահոգաբար և միահամուռ ընդունեցին այդ վճիռը, որով վառ է պահվում 1,5 մլն հայերի հիշատակը, որոնք ոչնչացան ցեղասպանության ընթացքում:

Մենք ողջունում ենք այն հրաշալի լուրերը, որոնց համաձայն մեկ այլ նշանավոր որոշում է կայացվել Բելգիայի խորհրդարանի կողմից վերջերս: Սա մենք միասին ողջունեցինք անցած շաբաթ իմ ընտրատարածքում՝ ի հիշատակ ցեղասպանության, որն իրոք, հանդիսանում է հայ համայնքի տունը Նոր Հարավային Ուելսում, շատ հայ ընտանիքների համար կարևոր վայր, ուր նրանք տեղավորվել են վերջին երկու կամ երեք տասնամյակների ընթացքում: Ես հպարտ եմ ասելու, որ թե՛ կառավարությունը և թե՛ ընդդիմության անդամները միասին խորհրդարանում վառ կպահեն հիշատակը՝ մշտական հուշատախտակով: Նմանատիպ հուշարձան պետք է տեղավորվի Ավստրալիական խորհրդարանի առջևում՝ տեսանելի մի վայրում, իբրև հիշեցում յուրաքանչյուր այցելուի, որը կանցնի այս շինության մուտով:

Հայտնի է, որ Սիդնեյը Ավստրալիայի ամենամեծ քաղաքն է և ճանաչվել է վերջին երկու տարիներին՝ աշխարհում ամենացանկալի այցելության վայրը: Խորհրդարանում հայ ժողովրդի ճանաչումը, թույլ տվեք ասել, մեծ նշանակություն ունի, քանի որ այս խորհրդարան այցելողների թիվն ավելի մեծ է, քան անշուշտ մեկ այլ վայր: Սա հիշեցում կլինի բոլոր դպրոցական խմբերին և նահանգի քաղաքացիներին, որոնք կգան տեսնելու իրենց խորհրդարանը աշխատանքի ժամանակ: Հատկանշականորեն այն հիշեցում կլինի մեզ՝ բոլորիս համար, որ իրենց պարտականություններն են կատարում խորհրդարանի ընտաշրջաններում, կամ որոշումներ են կայացնում՝ կառավարելու համար նահանգը և նրա մարդկանց: Այս խորհրդարանում հանդիպում են նահանգի ղեկավարները օրենքներ մշակելու համար: Խորհրդարանում հանդիպում են քաղաքագետներ, մշակութային, կրոնական գործիչներ, մասնագետներ, գործարարներ, նույնատիպ մարդիկ, որոնք առաջինը զոհվեցին թուրքական կառավարության ձեռքով Կ. Պոլսում 1915թ. ապրիլի այն օրը:

Սա մի բան է, որ մենք, իբրև քաղաքագետներ, պետք է հասկանանք, բայց առավել կարևոր է, որ սա ամբողջականությամբ ընդունվի մարդկային տեսանկյունով: Եվ ուստի ճիշտ է, որ խորհրդարանը իր հայացքը կենտրոնացնում է ցեղասպանության զոհերի հիշատակի և, իրոք, յուրաքանչյուր ցեղասպանության վրա: Հիշելով և թերթելով անցյալը, մենք ճիշտ ենք անում նաև, որ արժանին ենք մատուցում այսօր Ավստրալիայում գտնվող հայ համայնքին՝ աշխարհի 20 երկրներից 30-35 հազար մարդու,

որ միացել են մեր երկրում՝ նոր կյանք սկսելով: Ավելի քան երեսուն տարի հայկական համայնքը ձևավորել է յուրօրինակ, կոսմոպոլիտիկ մշակույթ, որը հպարտությամբ պետք է ասել, բնորոշում է Ավստրալիային: Ես հատկապես հպարտ եմ ասելու, որ դա բնորոշ է Վիլոգբայի՝ իմ ընտրատարածքին: Լինելով 16 տարի Վիլոգբայի ընտրատարածքի անդամ, ես նկատել եմ, թե ինչպես է ծաղկում, բարգավաճում և ակտիվ մասնակցություն ցուցաբերում հայ համայնքը: Ես տեսնում եմ, թե ինչպես են շատ հայեր այստեղ գալիս իրենց պատերազմող հայրենիքներից: Ավստրալիայում նրանք կառուցում են իրենց կյանքը և բարգավաճող գործը: Նրանք կրթել են համայնքի ղեկավարներին, նրանք իրենց թարմ մտքերն են ներմուծել գիտության բնագավառում, և նրանք մեզ ուսուցանել են այն արժեքները, որոնք այսօր յուրաքանչյուր ավստրալիացու և ավստրալահայի մեջ են՝ համբերատարություն, քաջություն և պահի օգտագործում:

Ես ողջունում եմ այս առաջարկությունը:

Առաջարկությունը համաձայնության գտավ:

4. ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆՁԱՆՑ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 21 ՄԱՅԻՍԻ 1998Թ.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՊՐՆ. ԼԻՆՉ (*Լիվերպուլ* - 16[27]): Ես ցանկանում եմ Պալատի ուշադրությունը հրավիրել Թուրքիայի անցյալի վերաբերյալ իմ մտահոգությունների վրա, ոչ միայն այս խորհրդարանում հայկական ցեղասպանության հիշատակման առիթով, այլ նաև որոշ մեկնաբանություններ անել այս քննարկումների վերաբերյալ: Ես բազմաթիվ ներկայացուցչական խմբեր եմ ընդունել, որոնք մտահոգված են այս առիթով:

Շատ կարևոր եմ համարում այն, որ քննարկումներ ունեցա իմ ընտրողների հետ, որոնք նույնպես շահագրգռված են այս խնդիրներով:

Անցյալ կիրակի կեսօրին ես երկար զրույց ունեցա Երքան Քասաֆաքանի հետ, որն իմ համայնքում նշանավոր անձնավորություն է և կապեր ունի Ֆեզայի հիմնադրամի և Պրեստոնի Սուլի վարժարանի հետ: Երքանը նաև իմ ընկերն է: Մեծ անհանգստություն է բարձրացել՝ կապված Օսմանյան կայսրությունում 1915թ. դեպքերի մեր պահանջների հետ: Անհանգստությունը նրանում է, որ Պալատը լսել է ընդամենը մեկ կողմին և բազում մարդիկ, որ ձևացել են իբրև պատմաբաններ, պարզապես եղել են լրագրողներ և քաղաքագետներ: Ես չեմ ասում, որ մի կողմը ճիշտ է, մյուսը՝ սխալ: Այստեղ քննարկումները պետք է պարզել ոչ թե պատմական դեպքերի վրա մեկ կողմից լույս գցելով, այլ հանգամանորեն, պատշաճ կերպով ներկայացնել այն, ինչ տեղի է ունեցել: Իմ ընտրողների անհանգստությունն ակնհայտորեն արտահայտվել է մայիսի 13-ի նամակով: Այն ինձ էր ուղարկել «Ավստրալիայի թուրք կանանց օգնության ձեռքի միության» նախագահ Նուրհամ Կուրանգիլը: Դրանում ասվում է. «Ես ստիպված եմ գրել՝ լսելով, որ 1997թ. ապրիլի 17-ին ՆՀՈՒ խորհրդարանի Օրենսդիր ժողովը համաձայնվել է ճանաչել ապրիլի 24-ը իբրև այսպես կոչված «հայկական ցեղասպանության օր» և վարչապետ Քոր Քարը նախագիծ է առա-

ջարկել ՆՀՈՒ խորհրդարանի շենքում կառուցել Հայկական ցեղասպանության հուշարձան»:

Սա ցնցող էր Ավստրալիայի թուրք համայնքի համար, որի անդամը պատիվ ունեմ լինելու:

11-19-րդ դարի կեսերը թուրքերը և Ավստրալիայի հայերը խաղաղությամբ ապրում էին համատեղ: Ոչ մի խռովություն կամ զինված հարձակումներ տեղի չէին ունենում այս համայնքների միջև:

Համենայն դեպս, 1914-1922թթ. տասնմեկ հայտնի պատերազմներ եղան հայերի և օսմանցիների, վրացիների, աղրբեջանցիների և ռուսների միջև: Քաղաքացիական պատերազմներ եղան հենց Հայաստանում: Այս համատարած թշնամության մեջ, հայերը մի կողմից էլ տառապանք էին պատճառում իրենց՝ կորցնելով իրենց կյանքը: Առաջին աշխարհամարտը նույնպես շատ տառապանքներ պատճառեց նրանց: Թիկունքից հարձակվելու պատճառով թուրքական կառավարությունը ստիպված էր հայերին տեղահանել արևելյան Անատոլիայից՝ պատերազմի, վատ եղանակի, հիվանդությունների, սովի պայմաններում: Հարյուր հազարավոր կյանքեր կորցվեցին երկու կողմերից էլ:

Սա իրոք, ողբերգություն է, սակայն այն չի կարող կոչվել ցեղասպանություն: Ցավալի դեպքերը տեղի ունեցան տարրական էլեմենտների բացակայության պատճառով: Այն չպետք է համարվի ցեղասպանության ոճիր, որով իբրև դիտավորյալ կերպով ոչնչացվեց էթնիկ խումբն ամբողջությամբ կամ մասամբ, ինչպես ձևակերպվեց 1948թ.՝ «Ցեղասպանության ոճիրը կանխելու և պատժելու կոնվենցիայում»:

Այսօր սփյուռքի հայերը փորձում են աղավաղել պատմությունը: Նրանք ատելություն են սերմանում հայ երեխաների սրտերում և մտքերում: Հայ ահաբեկիչները 1987թ. սկսած ավելի քան 50 թուրք են սպանել, մեծ մասամբ դիվանագետների և նրանց ընտանիքի անմեղ անդամների:

Հակառակ դրան, Թուրքիայում հայերն այսօր ապրում են ներդաշնակ վիճակում: Թուրքիան ունիտար պետություն է, որի քաղաքացիները օրենքի առաջ հավասար են՝ առանց ազգային, կրոնական, լեզվական խտրականության: Ավելին՝ նրանց իրավունքների պաշտպանման երաշխիք է հանդիսացել Լոզանի միջազգային պայմանագիրը, որը ստորագրվել է 1923թ. հուլիսի 24-ին: Ներկայումս Թուրքիայում կան ավելի քան քսան հայկական մանկապարտեզներ, տարրական, միջնակարգ և բարձրագույն դպրոցներ, որոնք ուսուցանում են հայերեն: Հայերն ունեն չորս երեսուն գործող եկեղեցիներ, որոնցից յուրաքանչյուրում տարվում է ազատ ծառայություն: Նրանք ունեն իրենց անձնական հիվանդանոցները: Հրատարակվում են հայկական երկու օրաթերթ և մի քանի պարբերականներ: Հայ համայնքի անդամները տնտեսապես շատ ավելի լավ մակարդակի վրա են, քան առաջավոր թուրք շատ քաղաքացիներ՝ Ստամբուլում, Իզմիրում և, ընդհանրապես, Թուրքիայում ամբողջությամբ:

Ուստի ընդունել հայկական ցեղասպանությունը համարժեք կլինի ընդունել ոչ ճիշտը՝ վիրավորելով թուրք ժողովրդին, որը լինելով աշխարհի ամենահանդուրժող ազգերից մեկը, ինքնին տառապել է, և չդիմադրելով այս քարոզչությանը, գազանությանն ու ահաբեկչությանը սույնով խրախուսում ենք ատելությունը, թշնամանքը Ավստրալիայում ապրող թուրքերի և հայերի միջև: Ինձ թվում է, որ կողմերին պաշտպանելու գործը Պալատին

չի վերաբերվում: Ես կարիք չունեմ ընդունել կամ չհամաձայնվել Պալատում կարդացածիս հետ, բայց կարևոր է, որ այս քննարկումների ժամանակ երկու կողմերն էլ լսվեն: Սա, անշուշտ, միակ նամակը չէր, որ ես ստացել եմ: Ես նաև ընդունել եմ շատ ներկայացուցիչներ: Ես մայիսի 11-ին ստացել եմ ՆՀՈՒ թուրքական միությունների խորհրդի նախագահի նամակը, որը թեպետ չի պարունակում իր մտահոգության վերաբերյալ մանրամասն նյութեր, սակայն հայտնում է, որ ցավալի է այնպիսի բաներ լսել, որոնց հետ խորհուրդը երբեք չի համաձայնվի: Սրանք նյութեր են, որոնց ծանոթացել եմ շատ տարիներ առաջ՝ նախքան պալատի անդամ դառնալը: Մեկ դրական բան, որ կարող եմ ասել, այն է, որ թեպետ այս դեպքերը պարզորոշ պատմում են, որ զանգվածային ողբերգություն է տեղի ունեցել, որով բազմաթիվ մարդկանց կյանք է խլվել, այնուհանդերձ նրանց իսկական ակունքները պարզելու համար պետք է պատմական քննարկումներ տանել և Պալատը լավ կաներ փաստարկները ուշադրությամբ քննել՝ նախքան դրանց ընդունումը:

ՊՐՆ. ՖԵԶՍ (*Չարլսթոն - կապի և տրանսպորտի նախարար և Հանքերի զարգացման վարչության պետի օգնական*) - Լիվերպուլի մեծարգո ներկայացուցիչը խոսեց հայ և թուրք համայնքների հիմնային խնդիրների մասին և ես հանձնարարում եմ նրան հարց բարձրացնել Պալատի առաջ:

5. ԱՆՀԱՏ ԱՆՁԱՆՑ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
18 ՀՈՒԼԻՍԻ 1998Թ.

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՊՐՆ. ՆԱԳԼ (*Սուրբտոն* - 12[01]) - 1997թ. ապրիլի 17-ին ընդդիմության ղեկավարը հայկական ցեղասպանության մասին հարց բարձրացրեց, նա միացավ Նոր Հարավային Ուելսի հայկական համայնքի անդամներին՝ հիշելու համար 1,5 մլն տղամարդկանց, կանանց և երեխաների հիշատակը, որոնք զոհ դարձան 20-րդ դարի առաջին ցեղասպանությանը: Նա դատապարտեց հայերի և ընդհանրապես ցեղասպանության յուրաքանչյուր գործունեություն: Հարկ է, որ Պալատը դատապարտի ցեղասպանության յուրաքանչյուր գործողություն, սակայն ոչ այդ մեկը: Ես առաջին անգամ 1969թ. հանդիպեցի իմ ընտրատարածքի թուրքական մեծ համայքի հետ: Նրանք այն ժամանակներից ապրում են այդ տարածքում և նրանք պատվարժան, ազնիվ, աշխատասեր մարդիկ են: Եթե որևէ պատվանդան դրվի խորհրդարանի շենքում, ապա այն պետք է լինի ցեղասպանության վերաբերյալ ընդհանրապես: Մեկը նայելով Իռլանդական մեծ սովի հուշարձանին, կարող է հասկանալ, որ դա անգլիական հարձակման արդյունք չէր, իսկ մեկ ուրիշն էլ կարող է ասել, որ դա ցեղասպանություն է: Ես բազում նամակներ և ներկայացուցչական խմբեր եմ ընդունել՝ թուրքական համայնքից, և ես խորհրդարանին կներկայացնեմ պատմության այս կողմը: Անցյալ կիրակի ՆՀՈՒ-ի թուրքական միությունների խորհրդի նախագահ Մուզաֆեթ Օրելի Սան-Հերալդ ուղղված նամակում ասվում էր.

«1915թ. մայիսի 15-ին Օսմանյան կառավարությունը որոշում ընդունեց հայերին վերաբնակեցնելու մասին՝ կանխելու համար նրանց օգնությունը ռուսներին և հարձակումը անպաշտպան թուրք քաղաքացիների վրա: Համաձայն այս որոշման, հայերը պետք է ուղարկվեին գլխավորապես Հալեպ և Մոսուլ: Ապա նահանգների կառավարիչները գալիս էին՝ տեղում համոզվելու համար, որ նրանք ժամանել են:

Մարդիկ քայլում էին: Եղանակը դաժան էր: Պատերազմ էր գնում: Սովը, համաճարակները և ավազակախմբերը շատերի կյանքը խլեցին: Համաձայն թուրքական արխիվների՝ հաշվվել է, որ վերաբնակեցման ընթացքում շուրջ 50000 հայ է մահացել:

Սինևույն ժամանակ արևելյան Թուրքիայում, երբ տեղի էին ունենում այս դեպքերը, նաև 2,5մլն թուրք մահացավ: Համենայն դեպս դա օսմանցիների կողմից կազմակերպված կոտորածի հետևանք չի եղել: Ուստի և չի կարելի դա համարել ցեղասպանություն»:

Մայիսի 7-ին Ավստրալիայի թուրքական սոցիալական և մշակութային տրեստի նախագահի կողմից ինձ ուղարկված նամակում ասվում է.

«Ցեղասպանության վերաբերյալ հիմնարար, ռասիստական հայեցակետը չի կարող վերագրվել օսմանցիներին: Իրոք, երբ Եվրոպայում մոլեգնում էին կրոնական պատերազմները և կրոնական անհանդուրժողականությունը, Օսմանյան կայսրությունում մարդիկ կողք-կողքի ապրում էին ներդաշնակորեն՝ կրոնական և ռասիստական հետապնդումներից ազատ: Բավական է նշել, որ հազարավոր հրեաներ 500 տարի առաջ փախչելով Եվրոպայի ճնշումներից, խաղաղություն գտան Թուրքիայում»:

Մայիսի 11-ին ՆՀՈՒ-ի թուրքական միությունների խորհրդի նախագահի կողմից ինձ հասցեագրված նամակում ասվում է.

«Թուրքական ծագումով շատ մարդիկ ապրում են այն ընտրատարածքում որ ներկայացնում եք դուք: Նրանք մտահոգված են, որ խորհրդարանում այս քննարկումներն արվել են՝ լսելով միայն հայկական տեսակետը: Պատմական շատ սխալներ կան այն տեղեկատվության մեջ, որը ներկայացվել է խորհրդարանին: Մենք հավաքում ենք պատմական իրադարձությունների վերաբերյալ Անգլիայում կատարված ուսումնասիրությունները և ապա դրանք կուղարկենք ձեզ: Ուսումնասիրելով երկու կողմերը միայն՝ կարող եք արդար վճիռ կայացնել»:

Ես ճանաչում եմ պրն. Օրելին իբրև ազնիվ, համեստ մարդ և ընդունում եմ այն, ինչ նա ասում է թուրքերի մասին: Ես բազմաթիվ նամակներ և էլեկտրոնային փոստեր եմ ստացել թուրքական համայնքից: Դժբախտաբար, ՆՀՈՒ-ի թուրքական միությունների խորհուրդը մերժեց 2000 դոլար տրամադրել Ավստրալիայի թուրքերին՝ փառատոնի համար: Հունիսի 15-ին պրն. Օրելի կողմից ինձ ուղարկված նամակում հայտնվում է.

«Հունիսի 10-ին փառատոնի կոմիտեի հետ հանդիպման ժամանակ, որին ներկա էին 34 կազմակերպություններ ՆՀՈՒ-ից, միաձայն որոշվեց չտալ գումարը: Մենք այս որոշմամբ ցանկանում ենք ձեզ ցույց տալ, թե որքան ցավ է պատճառվում թուրքական համայնքին՝ հայկական հիշատակը հրապարակելով»:

Ես նամակ եմ գրել քաղաքապետին տարբեր առիթներով: Վերջերս տեղեկատվության տեխնոլոգիայի նախարարը, Լիվերպուլի պատվարժան անդամը, Հեֆֆրոնի պատվարժան անդամը, Լամբկայի պատվարժան ան-

դամը և ես միացյալ նամակ գրեցինք վարչապետին, քննարկելով հետևյալը՝

«Մենք գրում ենք հատկապես՝ մասնավորապես.

1. Այն դեպքերը, որ որակավորվեցին իբրև «Հայկական ցեղասպանություն» բուռն քննարկումների տեղիք տվեցին մեր ընտրատարածքի թուրք համայնքների շրջանում.

2. Խորհրդարանում քննարկումները, թվում է, տարվել են միայն մեկ ուղղությամբ: Թուրքական համայնքը իրեն արհամարված է զգում: Ավստրալիայի թուրքերը հիանալի և աշխատասեր մարդիկ են»:

Ես հինգ անգամ այցելել եմ Թուրքիա և տեսել եմ նրանց բայրացակամ, պարտքի զգացումով լի, ազնիվ և համեստ մարդկանց: Նրանք պատասխանատու չեն այն ամենի համար ինչ տեղի է ունեցել 80 տարի առաջ: Նույնն առնչվում է իմ ընտանիքի պատմությանը: Նրանք Անգլիայից ուղարկվել են այստեղ՝ մի մասը շղթայակապ, մյուսը կախվելու սպառնալիքի տակ: Ես չեմ դատապարտում անգլիացիներին դրա համար: Դա երեկվա նյութերն են: Եկեք շարժվենք դեպի վաղը և հիշենք թուրքական համայնքը իբրև մի փայլուն համայնք:

6. ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ 13 ՄԱՅԻՍԻ 1999Թ.

ՊՐՆ. ՎԱՏԿԻՆՍ (*Ռայդե - ազատ առևտրի նախարար, սպորտի և հանգստի նախարար*): Ես առաջարկում եմ Պալատին՝

1. Ճանաչել 1915թ. հայկական ցեղասպանության դատապարտման երկրորդ տարին, որ դատապարտվել է Պալատի կողմից՝ պատմական առաջարկությամբ:

2. Ճանաչել 1999թ. ապրիլի 24-ը իբրև հիշողության օր և իբրև հայկական ցեղասպանության 84-րդ տարեդարձ:

3. Միանալ Նոր Հարավային Ուելսի հայկական համայնքին՝ հարգելու 1,5 մլն մարդկանց հիշատակը, որոնք սպանվեցին 20-րդ դարի առաջին կեսին:

Ես ցանկանում եմ հստակեցնել, որ այս շարժումը ամեն դեպքում պետք է մեկնաբանվի երիտասարդ ավստրալացիներին՝ լույս գցելու համար Թուրքիայի անցյալի վրա, և հպարտ եմ, որ Նոր Հարավային Ուելսի և Ավստրալիայի Պալատի անդամները մեծ ավանդ են ներդրել, այս հարցը ճանաչելու համար: Երկու տարի առաջ ապրիլի 1-ին այս պալատը որոշում կայացրեց՝ դատապարտելով բոլոր ցեղասպանությունները մասնավորապես՝ 1915թ. հայկական ցեղասպանությունը և յուրաքանչյուր ապրիլի 24-ը ճանաչեց այս աղբերգական իրադարձությունների հիշատակի օր: Կարևոր է այն, որ օգտվելով առիթից, այս տարի ևս մենք հիշում և դատապարտում ենք ցեղասպանության բոլոր դրսևորումները, այնպես որ երբեք չմոռացվի դրանց վտանգը:

Վերջին կրոնական և էթնիկ տարաձայնությունները Ինդոնեզիայում հարկ է, որ դարձյալ մեր ուշադրությունը սևեռեն այն փաստի վրա, որ ցեղասպանությունը ցայսօր էլ հանդիսանում է մարդկային փորձառության մի մասը: Շարժումը հատկապես նկատելի էր այս տարի Կոսովոյում տեղի

ունեցող դեպքերով, երբ ալբանացիները բռնի կերպով տեղահանվում էին իրենց տներից:

Ինձ հաճելի է, որ Ավստրալիան ևս մեկ անգամ բացեց իր գիրկը պատերազմից մազապուրծ եղած ընտանիքների համար: Սա մեր մարդկության չափանիշն է, երբ մենք հրավիրեցինք 4000 տղամարդ, կին, երեխաներ, որոնք ապրում էին Մակեդոնիայի գաղթականների ճամբարներում: Ես միանում եմ մեր համայնքի մնացած մասին, որոնք հրավիրեցին այստեղ նրանց և հույս ունեմ, որ ապագայում նրանք ի վիճակի կլինեն վերադառնալ իրենց ընտանիքների, ընկերների մոտ և ազատ ապրել հայրենիքում:

Նմանատիպ իրադարձությունները հիշեցնում են մեզ, որ պետք է համընդհանուր կերպով կանգնել նման դաժանությունների առաջ, որ կիրառվում են ընդդեմ մարդկանց ընտանիքների, երբ էլ որ, որտեղ էլ որ դրանք տեղի ունենան: Այս տարի ես առիթ ունեցա խոսք ասել ապրիլի 24-ին՝ հայկական ցեղասպանությանը նվիրված ամենամյա հիշատակի օրը Վիլոգբայ Թաուն Հոլում: Քաղաքական, սոցիալական և կրոնական մի քանի օղակներ միավորում են այս համայնքները: Սա մի մեծաշուք հիշատակի արարողություն է, բայց դա նաև նվիրված է հայ մշակույթին և ոգուն: Այս արարողությանը ինձ բախտ վիճակվեց լսել պրոֆեսոր Քոլին Թատզին: Նա աշխատում և ուսումնասիրություններ է կատարում Մաքուարիեի համալսարանում՝ Ցեղասպանության հետազոտությունների կենտրոնում, և կարևորում է ավստրալիացիների նոր սերնդին ցեղասպանության իրողությանն իրազեկ պահելը: Նրա դիտողություններն անձայն հիշեցնում են այն ամենը, ինչ տեղի է ունեցել այս դարում: Նա սկսում է այսպես.

«Ապրիլը լավագույն ամիսներից չէ: 1915թ. ապրիլին սկսվեցին հայկական կոտորածները: 1945թ. ապրիլին Բուխենվալդի և Աուշվիցի երկու ճամբարներից ազատվեցին շուրջ 73 հազար մազապուրծներ, սակայն մինչ այդ շուրջ 5,9 մլն մարդ սպանվել էր նացիստների ձեռքով: 1994թ. ապրիլին ցեղասպանություն սկսվեց Ռուանդայում: 1999թ. ապրիլին կոսովոցիների մաքրումը տարվում էր հենց նույն ճանապարհով: Այս ամենը ասում է, որ եթե 19-րդ դարը եղավ բարբարոսության դարաշրջան, երբ թե միտքը և թե տեխնոլոգիան զարգացավ, ապա 20-րդ դարը դարձավ զանգվածային մահերի և ցեղասպանություն դարաշրջան»:

Ես շնորհակալ եմ պրոֆ. Թատզից նման վճռի համար: Նա ցեղասպանությունից ուշեզրկված և ականատես մարդկանց իրավունքների կիրք և ջերմ պաշտպանն է, և հիմնովին պահանջում է այս դարի ցեղասպանությունների մասին մարդկանց հանգամանորեն սովորեցնել: Հայկական ցեղասպանությունը տեղի ունեցավ Առաջին աշխարհամարտի բոցի ներքո և սկսվեց 1915թ. ապրիլի 24-ին, ավելի քան 200 հայ քաղաքագետների, կրոնավորների և մշակութային գործիչների բանտարկումով, ապա՝ սպանությամբ: Հաջորդ մի քանի տարիների ընթացքում 2,5 մլն հայերի կեսից ավելին կոտորվեցին:

Շատերը կոտորվեցին իրենց տներում: Մյուսները ստիպողաբար մահվան ուղիներով քշվեցին Սիրիայի անապատներ և շատերին էլ մինչև մահ աշխատեցնում էին համակենտրոնացված ճամբարներում: Այս տղամարդիկ, կանայք և երեխաները չունեին ոչ մի իշխանություն և դաժանաբար սպանվում էին իրենց ռասայի պատճառով:

Տեղահանվածներից շատերը վնասվածքներով, չունենալով այլընտրանք, ստիպված թողնում էին իրենց նախնիների հողերը՝ փրկվելու հատագա հետապնդումներից: Նրանցից ավելի քան 500 հազարը ստիպված էր փախչել ցանկացած երկիր, որը նրանց կընդուներ: Ավստրալիան, ի վստահություն և ի շահ մեր համայնքի, նրանցից հազարավորներին ընդունեց: Այսօր ավելի քան 35000 ավստրալահայեր են ապրում այստեղ՝ ներառյալ փրկվածների ժառանգները:

Ես ուրախ եմ, որ նրանցից շատերն ապրում են Ռիդեի իմ ընտրատարածքում: Նրանք մեծ օգուտ են բերել իմ տեղական համայնքին: Ավստրալահայերը ներառվել են այս ազգի և նրա ապագայի մեջ: Նրանք ներդրումներ են ունենում թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական կյանքում, և ակտիվ գործունեություն ծավալում գործարար և մասնագիտական ոլորտներում:

Երկար ժամանակ 20-րդ դարի այս ցեղասպանությունը մնում էր մոռացված: 1997թ. այս Պալատը ճանաչեց ողբերգությունը՝ դատապարտելով հայկական ցեղասպանությունը, հարգելով զոհերի հիշատակը, հասկանալով, որ պետք է հիշել և դասեր քաղել դրանից, դատապարտելով պատմական ճշմարտության կեղծումը և ապրիլի 24-ը հայտարարելով հիշատակի օր: Այս տարվա սկզբներին հավերժական հիշատակի հուշարձան դրվեց խորհրդարանի այգում: Դա մի հայկական խաչքար է, որի վրա գրված է 1997թ. խորհրդարանի կողմից հայկական ցեղասպանության հիշատակի համընդհանուր կերպով ընդունումը:

Հուշարձանը կծառայի, որպես մշտական հիշեցում այն բանին, որ այս խորհրդարանը դատապարտում է ցեղասպանությունն իր յուրաքանչյուր ձևի մեջ: Այս հուշատախտակը նաև հայ ժողովրդի խիզախության և ոգու խորհրդանիշն է: Ավստրալահայերի համար սա մի լուռ հիշեցում է, որ ցեղասպանության երևույթը այլևս երբեք չպետք է կրկնվի: Այն, իրոք, սուրբ և հատուկ հուշարձան է: Վիլոգբայի պատվարժան ներկայացուցիչները կխոսեն այս մասին: Տարիների ընթացքում նա խստորեն դատապարտել է ցեղասպանության դրսևորումները և իր ընտրատարածքի հայերի հետ կապված է եղել ամուր շղթաներով: Ես ակնկալում եմ լսել նրա ելույթը: Ես ողջունում եմ պալատի առաջարկությունը:

ՊՐՆ. ՔՈԼԼԻՆՋ (*Վիլոգբայ*): Ես պաշպանում եմ Սպորտի և ժամանցի նախարարի մեկնաբանությունները ընդդիմության անունից, և հանդես գալիս որպես Վիլոգբայի ներկայացուցիչ և հայ ժողովրդի ու Ավստրալական համայնքի մեծ ընկեր: Ես ցանկանում եմ շեշտել այս առաջարկության առաջադեմ լինելը:

Երկու տարի առաջ ես առաջարկություն ներկայացրեցի՝ ճանաչելու 1915թ. հայկական ցեղասպանությունը և ապրիլի 24-ը հայտարարել իբրև 20-րդ դարի առաջին ցեղասպանության հիշատակի օր: Ապա դրան միացավ Գլադեսվիլի ներկայացուցիչը և մեր համատեղ գործողություններս շարունակվում են առ այսօր: Գլադեսվիլի ներկայացուցիչն այսօր հանդիսանում է Ռիդեի ներկայացուցիչ և նախարար: Ես շնորհավորում եմ նրան նախարար ընտրվելու կապակցությամբ և հայ ժողովրդին իր օգնությունը շարունակելու առիթով:

Որևէ տարակուսանք կամ ընդդիմություն այս հարցի կապակցությամբ չի կարող լինել: Ինչպե՞ս կարելի է: Սրանով ոչ միայն ճանաչվում է

հայ համայնքի և նրա ժողովրդի տառապանքները, որ սկսվեցին 1915թ. ապրիլի 24-ին, այլ նաև այն, որ սա 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն էր, մի բան, որ հարկ է հիշել: Ես տեղակացա, որ կառավարությունը հավանություն է տվել խորհրդարանի շենքի բակում հուշարձանի կառուցմանը: Հուշարձանն ունի ընդհանուր իմաստ: Թեպետ այն առնչվում է հայկական ցեղասպանությանը, հայ ժողովուրդը առաջինը պետք է հիշի, որ նա միակը չի եղել, որ այս դարաշրջանում տառապել է այդ արհավիրքից:

Այս լուսավորյալ և տեղեկատվացված դարաշրջանի ամենամեղադրական ակտը ցեղասպանությունն է: Սա այն դարն է, որի ընթացքում ցեղասպանություն է կատարվել շատ ազգերի նկատմամբ, և շատ ազգեր իրենց պատմության էջերում արձանագրել են սա: Սա չի նշանակում, որ ես դատապարտում եմ թուրք ժողովրդին, և տեղյակ եմ, որ միջանցքում ներկա է գլխավոր հյուպատոսը: Բոլոր ավստրալացիները գիտեն, որ թուրքերը խիզախ ժողովուրդ են: Նրանք Գալիպոլիում խիզախորեն կռվում էին ավստրալացիների դեմ: Այս առաջարկությունը նպատակ ունի ճանաչել, որ 1915թ. թուրքական կառավարությունը մի գործընթաց սկսեց, որը դարձավ ավերիչ սխալ: Եթե մեկը իրականում չընդունի սխալը, ցանկացած բնույթի, նա երբեք չի կարող առաջ շարժվել:

Մարդկային կապերով մեզ բոլորիս միավորող հանգամանքները հնարավոր կդարձնեն դրա ճանաչումը:

Առաջարկությունը նպատակ ունի ճանաչել 1915թ. հայ ժողովրդի և, ընդհանրապես, աշխարհի տարբեր էթնիկ և կրոնական խմբերի տառապանքները: Տարբեր ռասաներ և տարբեր կրոնական խմբեր մաս-մաս զատվում են: Նրանք սպանվում են իրենց մաշկի գույնի, կրոնական պատկանելիության կամ պարզապես, իրենց մշակույթի համար: Նրանց միակ հանցանքն այն է, որ նրանք այն են, ինչ որ կան: Սա կարևոր հարց է: Խորհրդարանի որոշ անդամներ հարցնում են, թե մենք ինչու ենք ճանաչում հայկական ցեղասպանությունը մասնավորապես: Մենք ճանաչում ենք այն մասնավորապես, քանզի սրանով սկսվեց դարի ցեղասպանությունը:

Քանի որ մենք հասել ենք դարավերջին, հարկ է, որ հիշենք բոլոր նրանց, ովքեր տառապել են և այնպես անենք, որ հաջորդ դարաշրջանը լինի ավելի լավը, իսկ ցեղասպանությունը դառնա անցյալի երևույթ: Սա է այս առաջարկության կենտրոնական առանցքը: Ես այժմ նույն զգացմունքն ունեմ, ինչ որ երկու տարի առաջ, երբ իբրև խորհրդարանի ներկայացուցիչ կառավարության առջև դրեցի այս հարցը:

Այդ ժամանակ իմ ընտրատարածքի մեծ մասը կազմում էր հայ համայնքը, և կարծում եմ, որ դա որոշակի դեր խաղաց: Նախարարը, որ քիչ առաջ խոսեց, հավանաբար իր ընտրատարածքում ունի հաջորդ մեծ հայկական համայնքը: Այս փաստը մեզ միավորում է, և այս առաջարկը պետք է կապի յուրաքանչյուր մարդկային արարածի՝ ամենատարբեր հավատքի և ամենատարբեր ազգության՝ բոլոր ժամանակների ընթացքում: Ես ողջունում եմ Պալատի այս առաջարկը:

ՊՐՆ. ԱՐՍՍԹՐՈՆԳ (*Լանկլան*): Առաջ քաշելով այս կարևոր առաջարկությունը, նախարարն ասաց, որ անցած տարի բարձրացված խնդրի նպատակն է հիմնովին ճանաչել այս հարցը: Առաջին առաջարկության ընթացքում, երբ նաև խորհուրդ էր տրվում հիմնել հուշարձան այս վայրում՝ ի հիշատակ թուրքերի կողմից հայերի ցեղասպանության, ես գրե-

ցի Չեզ, պարոն խոսնակ, այս վայրում հուշարձան կառուցելու իմ ծայրահեղ անհանգստության և դժկամության մասին: Ավստրալիան երիտասարդ երկիր է, երկիր, որն ունի ամենատարբեր ռասայի տիպի մարդիկ: Վերջին տասներկու ամիսների ընթացքում մեր սեփական պատմությունը բուռն քննարկումների առարկա դարձավ, և դրանք դեռ կշարունակվեն՝ պարզելու, արդյո՞ք մենք կդառնանք հանրապետություն, թե կմնանք միապետական համակարգում: Մեր երկիրը հպարտ է, որ այն պատմականորեն ազատ է եղել ռասայական բռնություններից և խտրականություններից այն մարդկանց հանդեպ, որոնք եկել են մեր ափերը՝ օթևան գտնելու:

Այս խորհրդարանը, որն ամենահինն է Ավստրալիայում և ամենաերկարակյացը Բրիտանական համագործակցություններում, իր համար վտանգավոր դրություն է ստեղծում՝ վեճեր հարուցելով այս ազգերի միջև և իր երկրի առջև: Ես չեմ հասկանում, թե ինչո՞ւ են այս քննարկումները տեղի ունենում ընդհանրապես: Քանի որ պատերազմական, կրոնական, գունային և յուրաքանչյուր նմանատիպ կոնֆլիկտ ունենում է ամենաքիչը երկու տեսակետ: Սա պրոբլեմներից մեկն է, որ բարձրացվել է այս խորհրդարանում: Այստեղ սևի և սպիտակի խնդիր չկա: Ես մեծարգո անդամներին հիշեցնում եմ 1998թ. հունիսի 18-ի Աուբոտնի պատվարժան ներկայացուցչի ելույթը, որում նա ասում էր, որ վերջնական ոչ մի զեկույց, ոչ մի պատմական եզրակացություն չի արվել՝ պնդելու համար, որ այս ցեղասպանությունը տեղի է ունեցել այն կարևորությամբ և ձևով, ինչն այսօր ներկայացվում է: Ես չեմ ուզում վեճի բռնվել ցեղասպանության հավաստիության մասին: Ես գործնականում միանում եմ մյուս անդամներին, որոնք դատապարտում են ցեղասպանությունը, բայց ես հայտնում եմ, որ չեմ պատրաստվում մի բան պաշտպանել, որը պաշտոնապես ապացուցված չէ:

Ուստի և ես խնդրում եմ Պալատին, որ մերժի այս առաջարկը, այն հիմքի վրա, որ անկարևոր և անպատշաճ է նման հարցը բարձրացնել այս վայրում: Համաձայնվելով այս առաջարկին, հիմք կդրվի մի բանի, որ հետագայում խորհրդարանի անդամներին կստիպի զղջալ: Ես կարծում եմ, որ նրանք, որոնք գալիս են այլ երկրներից մեր ափերը և ընդունում են մեր քաղաքացիությունը, մեր դրոշը, մեր օրենքը և մեր Սահմանադրությունը հարկ է, որ ունենան իրենց ուրույն պատմությունը: Մենք չպետք է փորձենք ապացուցել պատմական դեպքերի ճշմարտությունները: Ուստի և առաջարկում եմ այս առաջարկը հանել օրակարգից: Ես՝ Յան Արմսթրոնգս, այս խնդրի վերաբերյալ հայտնեցի իմ կարծիքը: Ես դեմ եմ առաջարկին:

ՊՐՆ. ՀԱՐԹՉԵՐ (*Դոսֆորդ*): Ես պաշտպանում եմ առաջարկությունը: Ես իմ գնահատականն անում եմ հենվելով Նոր Հարավային Ուելսի հայկական համայնքի կողմից այս պետությունում երկար տարիներ արված ավանդի վրա, և ես ծանոթ եմ 1915թ. սարսափելի դեպքերին, որ տեղի ունեցան հայ ժողովրդի կյանքում: 1915թ. ապրիլի 25-ը Անզակյան օրն է, որ կարևոր է ավստրալիացիների և էլ կարևոր հայերի համար: Սա այն օրն է, երբ սկսվեց ցեղասպանությունը: Ավելի քան 1,5մլն հայեր զոհվեցին անհանելի պայմաններում. տղամարդիկ, կանայք, երեխաներ ստորացվեցին և ամեն ինչ արվեց նրանց ոչնչացնելու համար: Սա առաջին գլխավոր ցեղասպանությունն էր ժամանակակից աշխարհում և պատմական նախադեպ դարձավ հետագայում՝ Երկրորդ աշխարհամարտի ընթացքում հրեա ժողովրդին կոտորելու համար: Ադոլֆ Հիտլերի նշանավոր խոսքը, որ աս-

վեց հրեաների ցեղասպանության քննարկումների ժամանակ, հաճախ է մեջբերվում: Նա ասաց. «Ո՞վ է այսօր խոսում հայերի կոտորածի մասին»:

Հայ ժողովուրդը հանդիսանում է հնագույն քաղաքակրթություններից մեկի կրողը: Նրանք առաջինն էին որ ընդունեցին քրիստոնեական հավատքը, հայոց թագավորն էր, որ ավելի վաղ ընդունեց քրիստոնեությունը, քան Հռոմեական կայսրությունը, հայ ժողովուրդն էր, որ բարձր մակարդակի քաղաքակրթություն հիմնեց Միջին Արևելքում՝ նախքան բյուզանդացիների, ապա օսմանցիների կողմից նվաճվելը: Չնայած դարերի ընթացքում օտար լծի տակ գտնվելուն, նրանք պահպանեցին իրենց մշակույթը, հավատքը և լեզուն: Նրանք իբրև սփյուռք սփռվեցին Օսմանյան կայսրությունում մեկ և դարձան հիանալի և հայտնի առևտրականներ, գործարարներ և հիմնասյուներ՝ իրենց համայնքներում: Առևտրում նրանց միասնությունն ու ունակությունը էլ առաջ բերեց թշնամանք և ատելություն օսմանցիների կողմից:

Երբ 1914թ. Ռուսական կայսրությունը պատերազմի մեջ մտավ Թուրքիայի հետ, թուրքերը դրանով հնարավորություն ունեցան ոչնչացնելու այն ժողովրդին, որին նրանք մշտապես ստորացրել և արհամարհել են, ժողովուրդ, որին չեն կարողացել ընկճել 500 տարիների ընթացքում: Այն ժամանակ, երբ Դարդանելում պատերազմը հասավ գագաթնակետին, ապրիլի 24-ին թուրքերը սկսեցին հայկական ցեղասպանությունը, հենց նույն օրը, երբ դաշնակիցները որոշել էին ափ իջնել Անզակյան ծովածոցում: Օսմանցիները երբեք չեն ճանաչել այդ ցեղասպանությունը: Այս ամենը կազմակերպող փաշայի արձանը այսօր էլ դեռ կանգնած է մնում Ստամբուլում: Աշխարհում ոչ մի ուրիշ տեղ չկա այն անձի արձանը, որ կազմակերպել և պլանավորել է ցեղասպանությունը:

Հայ ժողովուրդը բոլոր իրավունքներն ունի, և պարտավոր է իրոք պահել այդ ահավոր օրերի հիշատակը: Նրանք իրավունք ունեն ասելու, որ ցեղասպանության ականատեսները, կազմակերպիչները և հենց ինքը՝ ցեղասպանությունը միշտ պետք է բարձրացվեն արդարության սեղանին: Եթե մենք ինչ-որ ձևով հարգում ենք հրեաների և 1997թ. կոտորած թութսիների հիշատակը, ապա այս ամենը նախ և առաջ պետք է արվի 1915թ. հայ ժողովրդի դեմ կիրառված սարսափելի դեպքերը ճանաչելով:

Յուրաքանչյուր մեկը, որ հավատում է մարդկային իրավունքներին և արժանապատվությանը, պետք է ճանաչի այս դեպքերը և ընդունի այն ավանդը, որ ներդրել են հայերն այստեղ: Ավստրալիայում հայերն իրենց շատ լավ են դրսևորում: Նրանք առաջ են քաշվել ավստրալիական համայնքի կողմից և իրենց ընտանիքներով ներգրավվել են աշխատանքային ամենատարբեր ոլորտներում: Լիբերալների կուսակցության անունից ես ողջունում և ճանաչում եմ նրանց: Ես հպարտ եմ ասելու, որ հայերն այս երկրի ամենափայլուն էթնիկ ներկայացուցչական համայնքն են:

Ես վերադառնում եմ հարցի էությանը, որ առաջ է քաշվել Ազատ առևտրի նախարարի և Սպորտի և հանգստի նախարարի կողմից և ես միանում եմ գործընկերներին՝ Վիլոգբայի մեծարգո ներկայացուցչին, որը երկար զեկույց ունեցավ հայ ժողովրդի մասին, որոնցից շատերն ապրում են Վիլոգբայի ընտրատարածքում և իրենց եկեղեցին են կառուցել Չաթսվուդ-Վիլոգբայ շրջանում: Նրանց կապվածությունը իրենց հավատքին, որին նրանք ամուր կառչեցին շուրջ 1700 տարի առաջ աշխարհում առա-

ջինն ընդունելով քրիստոնեական հավատքը, նրանց պահեց միասին: Հայոց եկեղեցին նրանց հիմնասյունն է եղել ահավոր երկար ժամանակ: Յուրաքանչյուր մեկը պետք է ողջունի նրանց և դատապարտի 1915թ., սարսափելի դեպքերը: Բոլոր մեծարգո անդամները հարկ է, որ արտահայտեն իրենց որոշումը հայ ժողովրդի այս հարցի շուրջ, որպեսզի նման բան այլևս երբեք տեղի չունենա: Սա կարող է համոզիչ լինել միայն, եթե մարդիկ որոշեն կանգնեցնել հուշարձան այս դեպքերի վերաբերյալ՝ պարսավելու նրանց, ովքեր սա արեցին և ողջունելու փրկվածներին՝ այսօրվա հայ ժողովրդին:

Պրն. Անդերսոնի առաջարկությամբ քննարկումը հետաձգվեց:

XVI. ԲԵԼԳԻԱՅԻ ՍԵՆԱՏԸ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. ԲԵԼԳԻԱՅԻ ՍԵՆԱՏ
1996-1997ԹԹ. ՆՍՏԱՇՐՋԱՆ
8 հոկտեմբերի 1997թ.
ՈՐՈՇՈՒՄ 1-736/1
ԲԱՆԱՁԵՎԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 1915Թ. ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Ներկայացված սենատոր Մ. Մահուի և սենատի մյուս անդամների կողմից)

ԲԱՆԱՁԵՎԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Սենատը,

Հաշվի առնելով դարասկզբին Թուրքիայի հայ ազգաբնակչության վիճակի մասին բազմաթիվ ուսումնասիրությունները,

Նկատի ունենալով ցեղասպանության ոճրագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին ՄԱԿ-ի համաձայնագիրը, որը հաստատում է ցեղասպանության ոճրագործությունը,

Հաշվի առնելով դատական այն վճիռները, որոնցում կիրառվել է տվյալ դրույթը 1915թ. Թուրքիայում հայերի վիճակը որակելու համար և, մասնավորապես, 1995թ. հունիսի 21-ին Փարիզի Գերագույն դատական ատյանի կայացրած որոշումը,

Հաշվի առնելով «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» Եվրոխորհրդարանի 1987թ. հունիսի 18-ի բանաձևը, որը գտնում է, որ 1915թ. Թուրքիայում հայերը զոհ գնացին դարի օսմանյան ղեկավարության կողմից իրագործված ցեղասպանության,

Հաշվի առնելով հայերի նկատմամբ նախապես կազմակերպված և պարբերաբար կրկնվող ջարդերի ճշմարտացի լինելու փաստը և որ պատմական ապացույցները չեն կարող կասկածի տակ առնվել,

Հաշվի առնելով, որ անցյալ գործած սխալների և ոճրագործությունների ճանաչումը նախապայման է ժողովուրդների միջև հաշտության և որ խաղաղություն չի կարող հաստատվել առանց արդարության, ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուր,

Հաշվի առնելով նաև, որ նախկին վարչակարգերի գործած ոճրագործությունների ճանաչումը միայն թույլ կտա հրաժարվել և կարևորել նպատակները և քաղաքական ճանապարհով հաշտություն կնքել,

Հաշվի առնելով, որ կորուստներ կրած հայ ժողովրդի և թուրք ժողովրդի միջև տարաձայնությունները խորանում են, որ առ այսօր էլ խլում են մարդկային կյանքեր, մի տեղից մեկ այլ տեղ է տեղափոխվում ազգաբնակչությունը և որ տարածաշրջանում ոտնահարվում են մարդու բազմաթիվ իրավունքները,

Հաշվի առնելով, որ հայ և թուրք ժողովուրդներն ի վերջո դատապարտված են հաշտության,

Հաշվի առնելով մի կողմից Եվրամիության, Բելգիայի և Թուրքիայի և մյուս կողմից Եվրամիության, Բելգիայի և Հայաստանի միջև ակտիվ համագործակցությունը և բարեկամական հարաբերությունները,

Հաշվի առնելով, որ 1987թ. Եվրոխորհրդարանի ընդունած բանաձևը դեռևս չի հանգեցրել այն բանին, որ թուրքական կառավարությունը ճանաչի 1915թ. ցեղասպանությունը,

Կոչ է անում թուրքական կառավարությանը՝ ճանաչել 1915թ. Օսմանյան կայսրության վերջին կառավարության կողմից իրականացված ցեղասպանության փաստը,

Կոչ է անում Եվրամիության անդամ պետությունների խորհրդարաններին՝ նպաստել հայ և թուրք ժողովուրդների միջև հաշտությանը,

Կոչ է անում Եվրամիությանը և նրա անդամ երկրներին՝ նախաձեռնություն ցուցաբերել նպաստելու հայ և թուրք ժողովուրդների միջև բանակցությունների կայացմանը՝ բոլոր բնագավառներում,

Դիմում է կառավարությանը սույն բանաձևը հանձնելու Թուրքիայի վարչապետին, Եվրոխորհրդարանի նախագահին, Եվրոպական հանձնաժողովի նախագահին, Եվրամիության անդամ պետությունների խորհրդարանների նախագահներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին:

Ֆիլիպ Մահու
Պոլ Ստայս
Գի Վեռոֆստադտ
Պատրիկ Հոստեկինտ
Ալեն Դեստեքս
Ջոյլ Միլքե
Բերտ Անսոյո
Պիեռ Ջոնկխեռե
Էդդի Բուտմանս
Էրիկա Թիջս

Senat de Belgique, Session de 1996-1997, 8 Octobre, 1997, N 1-736/1.

2. ԲԵԼԳԻԱՅԻ ՍԵՆԱՏ
1997-1998ԹԹ. ՆՍՏԱՇՐՋԱՆ
26 մարտի 1998թ.
ՈՐՈՇՈՒՄ 1-736/3
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԱՊՐՈՂ ՀԱՅԵՐԻ 1915Թ. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սենատը,

Նկատի ունենալով 20-րդ դարի սկզբին Թուրքիայում հայ ազգաբնակչության իրավիճակին նվիրված բազմաթիվ ուսումնասիրությունները,

Նկատի ունենալով Միացյալ Ազգերի կոնվենցիան՝ կանխելու և դատապարտելու ցեղասպանությունը,

Նկատի ունենալով դատական այն վճիռները, որոնք վերաբերում են 1915թ. Թուրքիայում ապրող հայերին, մասնավորապես, 1995թ. հունիսի 21-ին Փարիզում գերագույն դատական ատյանի կայացրած որոշումը,

Նկատի ունենալով, որ չպետք է կասկածել այն պատմական ակնհայտության վրա՝ ինչ վերաբերում է հայերի կազմակերպված և համակարգված սպանություններին,

Նկատի ունենալով, որ անցյալի սխալների և ոճիրների ճանաչումը հաշտություն կստեղծի ժողովուրդների միջև, և որ առանց արդարության չի կարող խաղաղություն լինել ոչ Հայաստանում և ոչ էլ այլ վայրում,

Նկատի ունենալով նաև, որ միայն անցյալի ոճիրների ճանաչումով կարելի է հասնել քաղաքական հաշտության,

Նկատի ունենալով, որ թուրք և հայ ժողովուրդների միջև տարաձայնությունները շարունակվում են խորանալ և նույնիսկ այսօր այդ տարածաշրջանում տեղիք է տալիս մարդկային կյանքի կորուստների,

Նկատի ունենալով, որ թուրք և հայ ժողովուրդներն այլ ընտրություն չունեն, քան երկար ժամանակ խաղաղ գոյակցելը,

Նկատի ունենալով, որ բարեկամական կապերը և համագործակցությունը, որ առկա է մի կողմից Թուրքիայի, Բելգիայի և Եվրամիության, և մյուս կողմից՝ Հայաստանի, Բելգիայի և Եվրամիության միջև,

Նշելով, որ 1987թ. Եվրոխորհրդարանի բանաձևը չստիպեց թուրքական կառավարությանը ճանաչել 1915թ. ցեղասպանության պատմական իրողությունը,

Կոչ է անում թուրքական կառավարությանը ճանաչել Օսմանյան կայսրության վերջին կառավարության կողմից 1915թ. կազմակերպված ցեղասպանության պատմական ճշմարտությունը,

Կոչ է անում Եվրամիության անդամ պետությունների խորհրդարաններին՝ նպաստել թուրք և հայ ժողովուրդների միջև համաձայնությանը,

Կոչ է անում Եվրամիությանը և նրա անդամ պետություններին՝ նպաստել և սկսել երկխոսություններ հայ և թուրք ժողովուրդների միջև,

Խնդրում է կառավարությանը՝ փոխանցել այս բանաձևը թուրքական կառավարության վարչապետին և Եվրոխորհրդարանի նախագահին Եվրամիության անդամ պետությունների խորհրդարանների նախագահներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության խորհրդարանի նախագահին:

Senat de Belgique, Session de 1996-1997, 26 Marte, 19987, Resolution, N 1-736/3.

XVII. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ ԵՎ ՃԱՆԱՉՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1. ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
29 մայիսի 1998թ.

Մայիսի 29-ն է, ժամը ուղիղ 9.00-ը: Ֆրանսիայի Ազգային ժողովի փոխնախագահ Ժիլ դը Ռոբիենը հերթական նիստը հայտարարում է բացված: Օրակարգում հայերի ցեղասպանության օրենքի նախագծի քննարկումն է:

ՆԱԽԱԳԱՀ – Նիստը հայտարարում եմ բացված:

Ըստ օրակարգի, մենք քննարկելու ենք պարոն Դիդիե Միգոյի և իր մի շարք գործընկերների օրենքի նախագիծը՝ հայերի 1915 թվականի ցեղասպանությունն ընդունելու վերաբերյալ:

Խոսքը տրվում է արտաքին գործերի հանձնաժողովի խոսնակին:

ՌԸՆԵ ՌՈՒՔԵ (*արտաքին գործերի հանձնաժողովի խոսնակ*) - Պարոն նախագահ, պարոն նախկին մարտիկների պետական քարտուղար, սիրելի գործընկերներ, ազգի ներկայացուցիչներն այսօր սեփական նախաձեռնությամբ հավաքվել են, որպեսզի առաջին անգամ հրապարակայնորեն քննարկեն հայերի՝ 1915 թվականի ցեղասպանության օրենքի ընդունման առաջարկը:

Շատերն են կիսում մեր հուզմունքը այն վճռական քայլի պահին, որ Ֆրանսիան պարտավոր է ձեռնարկել դարի առաջին ցեղասպանության զոհերի հանդեպ: Մենք բոլորս կանխազգում ենք մեզ շնորհված պատմական բարեբախտությունը՝ ներքին համոզվածությամբ ցեղասպանություն ենք որակելու քսաներորդ դարի պատմության ամենամռայլ էջերից մեկը և հենց դրանով գոհացում ենք տալու հայ ժողովրդի սպասումներին, որի հիշողությունն արդեն ութսուներեք տարի ոտնահարման, մոռացման, ուրացման պատճառով վիրավորված է:

Այս պահին ես մտածում եմ այն բարեկամ ժողովրդի մասին, որը մարդկային բարբարոսության հետևանքով տարտղնված է, որը պահանջում է, որ վերջ տրվի իր նկատմամբ գործադրվող անարդարությանը և այդպիսով փակվի դարասկզբին բացված վերքը, երբ Օսմանյան կայսրության հայ ազգաբնակչության երկու երրորդը երիտթուրքերի կառավարության հրամանով բնաջնջվեց կամ բռնագաղթեց:

Ես մտածում եմ նաև նրանց մասին, ովքեր նվիրվել են Հայ դատի պաշտպանությանը, ծանոթացել համայնքի պատմությանը, հայերի հետ շփվել, հայերին հարգել ու սիրել, ջանք չեն խնայել նրանց բարգավաճման, այն բանի համար, որ ամրապնդվի մեզ Հայաստանին միացնող եղբայրության կամուրջը:

Նրանք բոլորն այսօր ցեղասպանության ընդունմամբ ականատես կլինե՞ն իրենց պայքարի բարեհաջող ավարտին՝ ցեղասպանության ընդու-

նում, որը բազմիցս արծարծվել է նման սրահներում, որի կապակցությամբ հաճախ խոստումներ են տրվել, բայց երբեք չեն կատարվել:

Ուստի թե՛ ցեղասպանություն բառի ոգեկոչումը, որը մենք պարտական ենք ինչպես երեկվա մեռածներին, այնպես էլ այսօրվա ողջերին, թե՛ ոճրի հրապարակային ընդունումը, սիրելի գործընկերներ, կախված է մեզնից:

Բայց մինչ այդ, խոսնակ լինելու հանգամանքն ինձ դրդում է պատմաբանների աշխատությունների օգնությամբ լուսաբանել Օսմանյան կայսրության հայերի բնաջնջումը:

Իմ գրավոր զեկուցագիրը ներկայացնում է պատմական միջավայրը, ուր տեղի է ունեցել ողբերգությունը, որն սկսվել է դեռևս 1894 թվականից, երբ սուլթանի հրամանով ավելի քան երկու հարյուր հազար հայ սպանվեց, ավելի քան հարյուր հազարն աքսորվեց:

1908 թվականին, վճռաճելով իշխանությունը, «Միություն և առաջադիմություն» կոմիտեի երիտթուրքերը շարունակեցին բռնությունները, որոնք 1915 թվականի դեպքերի նախափորձերը դարձան. 1909-ին նրանց հրամանով Կիլիկիայում երեսուն հազար հայ կոտորվեց:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրությունը հայերին է վերագրում 1914 թվականի ձմեռվա իր ծանր պարտությունն ու նախաձեռնում է նրանց ջարդը, բռնագաղթը, բնաջնջումը: Հայ մտավորականության շուրջկալը, որին միջազգային հանրային կարծիքն արթնացնելու միտում էին վերագրում, տեղի ունեցավ 1915 թվականի ապրիլի 24-ին, ըստ էության, ցեղասպանության սկիզբը դարձավ:

Անկախ բնակավայրից, իրադարձությունները միակերպ էին զարգանում. բռնագաղթը հանգամանորեն նախապատրաստվում է, քարավանները հետզհետե նվազում են թալանի ու համընդհանուր ջարդերի միջոցով: Ովքեր հասնում են գաղթակայանները, ասենք, Հալեպ, կուտակվում են՝ մինչև քաղցից ու ուժասպառությունից մեռնելը:

Ըստ տարբեր աղբյուրների՝ 1916 թվականի վերջին ցեղասպանության զոհերի թիվը հասել է մեկուկես միլիոնի, որը կազմում է հայ ազգաբնակչության երկու երրորդը:

Ինքներդ էլ կարող եք ծանոթանալ՝ պատմաբանների աշխատությունները, վերապրողների, այլազգիների, ռազմական թղթակիցների, դիվանագետների վկայությունները ներկայացնում են միևնույն՝ հետևողական, կազմակերպված և ծրագրված բնաջնջման իրողությունը: Ամերիկյան դիվանագետ Մորգենթաուն դեռևս 1915-ին գրել է. «Թվում է, թե գոյություն ունի հայ ցեղը բնաջնջելուն միտված որոշակի ծրագիր»:

Ունիոնիստների դատավարության փաստաթղթերը, դատավարությունը, որը տեղի ունեցավ Կոստանդնուպոլսում, 1919-ին և հետևյալ կարգով մահվան դատապարտեց հայերի նախճիրի գլխավոր պատասխանատուներին, հաստատում են ցեղասպանության փաստը: Դատավճիռն ութ հարյուր հազար զոհ է նշում և ընդունում, որ «բռնագաղթը սոսկ ջարդերի պատրվակ էր»:

Այս դեպքերի մասին Ուինստոն Չերչիլն իր հուշերում կգրի. «1915-ին թուրքական կառավարությունը սկսեց և վերջնական ավարտին հասցրեց մի նողկալի մտահղացում՝ Փոքր Ասիայի հայերի սպանդն ու համընդհանուր բռնագաղթը»:

Նման փաստերի լույսի ներքո է, որ «ցեղասպանություն» որակումը, այնպես, ինչպես 1943 թվականին բնորոշել է Լեմկինը, այսինքն՝ «կանխամտածված ձևով մի ժողովրդի կամ էթնիկական խմբի բնաջնջումը», կարելի է վերագրել 1915-ին հայերի դեմ գործադրված ոճրագործությանը:

Հենց այս ամենից ելնելով է, որ միջազգային հանրությունը կարողացավ, ես դրան անդրադարձել եմ իմ զեկուցագրի երկրորդ մասում, ցեղասպանություն կոչել Օսմանյան կայսրության իրադարձությունները և հետամուտ լինել ընդունմանը: Եվ այսպես, 1984 թվականի ապրիլին ժողովուրդների մշտական ատյանը փաստեց ցեղասպանության իրողությունը: Նույն կերպ վարվեցին ՄԱԿ-ի մարդու իրավունքների ենթահանձնաժողովը՝ 1985-ին և Եվրախորհրդարանը՝ 1987-ի հունիսին:

Իմ սիրելի գործընկերներ, եկել է ժամանակը, որ Ֆրանսիան նույնպես հրապարակայնորեն, պատմության և օրենքի տեսանկյուններից, ընդունի 1915 թվականի հայերի ցեղասպանությունը:

Ֆրանսիան մինչև այժմ անփոփոխ արտահայտել է իր համերաշխությունը զոհերի հետնորդների նկատմամբ, որոնց ընդունել է և ամեն տարի, ապրիլի 24-ին, վերադաս մարմինների ներկայությամբ բազմաթիվ քաղաքներում կամ Հաղթականամարի ներքո տեղի ունեցող արարողություններով հարգում է նահատակների հիշատակը:

1996 թվականի հարցաթերթիկի արդյունքները ցույց տվեցին, որ մեր քաղաքացիները գիտեն Հայոց ցեղասպանության մասին և ցանկանում են, որ Ֆրանսիան պաշտոնապես ընդունի: Ցեղասպանությունը դատապարտել են ամենաբարձրաստիճան պաշտոնյաները, բայց ոչ մի կառավարական որոշում կամ օրենսդրական փաստաթուղթ չի վավերացրել արդարամիտ հայտարարությունները:

Ֆրանսուա Միտերանը ֆրանսիական առաջին պետական գործիչն էր, որը 1915 թվականի նախճիրը բնորոշելու համար 1984-ին օգտագործեց ցեղասպանություն բառը: Մեջբերում եմ. «Անհնար է սրբել ձեզ պատուհասած ցեղասպանության հետքը: Այն պետք է արձանագրվի մարդկանց հիշողություններում, ձեր զոհողություններն օրհնակ հանդիսանան երիտասարդությանը, այնպես, ինչպես վերապրելու կամքը, որպեսզի ժամանակի ընթացքում ամենքն իմանան, որ այս ժողովուրդը չի պատկանում անցյալին, այլ ապրում է ներկայում և ունի ապագա»:

Հանրապետության նախագահ Ժակ Շիրակը նախագահական վերջին ընտրությունների նախօրյակին, 1915 թվականի նախճիրներին անդրադառնալով, հաստատեց իր կամքը՝ «արժանի հատուցել ցեղասպանության զոհերին, որը դեռևս մերժում են վերապրողներին»:

Ինչ վերաբերում է վարչապետ Լիոնել Ժոսպենին, նա 1995 թվականի ապրիլին որոշակիորեն հայտարարեց, որ «ցեղասպանության ընդունումը կվկայի թուրքերի և հայերի միջև երկարատև խաղաղություն հաստատելու ցանկությունը»:

Ամեն նստաշրջանի հանրապետական տարբեր քաղաքական խմբակցության մեծ թվով պատգամավորներ հանդես են գալիս օրենքի նախագծի առաջադրմամբ կամ հարցապնդում են ուղղում կառավարությանը:

Ի վերջո, այս ապրիլի 22-ին ընկերվարականների խմբի անունից Ժան-Պոլ Բրետոն ազդարարեց պատմական նախաձեռնության գործադրումը, իսկ մի քանի օր անց, օգտվելով մեր օրենսդրական հնարավորու-

թյուններից, ներկայացրինք սույն նախագիծը, որի քննությունը վճռել ենք հասցնել մինչև վերջ:

Հեղինակները պարզության, հստակության և արդյունավետության համար այդ նուրբ ու բարդ նյութին առնչվող նախագիծն օժտել են կշռադատված, տրամաբանված բնագրով, որը հավաստիորեն պարզաբանում է պատմական ճշմարտությունը:

Ֆրանսիան՝ մարդու իրավունքների հայրենիքը, այսօր հնարավորություն ունի իրագործել այդ առաջընթացը, ցուցաբերել իր վերաբերմունքը համաշխարհային արժեքների նկատմամբ, որոնց գնահատմանը միշտ նպաստել է:

Այսպիսով, սիրելի՛ գործընկերներ, հանուն նրանց, ովքեր այդ պահին են սպասում մեր սրահում և նրա պատերից դուրս, ես ցանկանում եմ, որ առաջադրված օրենքի քվեարկությանը բացարձակ միասնականություն ուղեկցի: Քվեարկությունն օրինակ հանդիսանալու դեր կխաղա և հույս կխորհրդանշի: Հայերի ցեղասպանության Ֆրանսիայի ընդունման, միջազգային ասպարեզում արձագանք գտնելու, այսինքն՝ մեր նախաձեռնած հանդուգն քայլին այլ երկրների ևս միացած տեսնելու հույսը: Վերջապես, թուրքերի և հայերի միջև երկարատև խաղաղության հաստատմանը նպաստելու, փոխադարձաբար նրանց երկրների ժողովրդավարությունն ամրապնդելու, մարդու իրավունքներն արմատավորելու հույսը:

Ցեղասպանությունն ընդունելով, Ֆրանսիան ոչ թե Թուրքիայի դեմ, այլ հանուն նրա, նրա հետ հանդես կգա, կնպաստի մեր բարեկամական կապերի ու համագործակցության շարունակմանը, որոնք, իմ կարծիքով, կարող են ամրապնդվել միայն այն դեպքում, եթե ունենան կայուն հիմք, որը հարգում է այդ կոչմանն արժանի իսկական ժողովրդավարությունն ու մղում տեղ գրավել եվրոպական ժողովուրդների համանվագում:

Այս պահին ես ակամա հիշում եմ բազում բարեկամական դեմքեր, բազմապիսի փոխադարձ խոստումներ, որոնք հավաստում էին, որ մի օր մեր ընդհանուր պայքարը պիտի հասնի իր նպատակին:

Ես մտածում եմ Գ-եղեցիկի մասին, որը 1939 թվականին Սենայի ու Մարնի գետախառնարանը՝ Փարիզի արվարձանային քաղաքը հասավ և դռները լայնորեն բացված գտավ, ընդ որում, այն բանից հետո, երբ ինքը, ինչպես իրենից առաջ շատ-շատերը, Սիրիայի անապատում տարիներով գաղթականի դժոխային կյանք էր վարել: Այո, չենգիլերցի փոքրիկ աղջիկ, դու, որ ապրել ես մեր դարը, ընդմիշտ չամոքվող վերքի պես պահելով «Առանց հետ դառնալու իրավունքի» մակագրությունը կրող փաստաթուղթը, այս օրը նաև քո օրն է:

Սիրելի գործընկերներ, ես կուզեի ձեզ համար կրկնել այն բառերը, որ Ժան Ժորեսն արտասանել է դարասկզբին. «Այն անձանց հետ, ովքեր հավատում են մարդուն, արժե մտածել ու գործել, մարդկային ջանքերը, որոնք արդարության ու իրավունքի են ձգտում, երբեք զուր չեն անցնում: Պատմությունը մարդկանց ուսուցանում է մեծ նպատակների դժվարությունը, իրագործման երկարատևությունը, բայց և ամրապնդում է հույսի անհաղթահարելիությունը»:

Այսօր այդ հույսը մեր իրավասությանն է պատկանում:

Միասին գրենք, ուրեմն, 1915 թվականի հայկական ցեղասպանության Ֆրանսիայի հրապարակային ընդունման պատմությունը (*ծափահարություններ բոլոր տեղերից*):

ՆԱԽԱԳԱՀ – Խոսքը տրվում է նախկին մարտիկների պետական քարտուղարին:

ԺԱՆ-ՊԻԵՌ ՄԱՍԵՐԵ (*նախկին մարտիկների պետական քարտուղար*) – Պարոն նախագահ, պարոն խոսնակ, տիկնայք և պարոնայք պատգամավորներ, կառավարությունը միանում է ջարդերի զոհերի հիշատակին տրված հարգանքին:

Հայերի բռնագաղթն ու կոտորածները, որոնք Օսմանյան կայսրությունը գործադրեց 1915 և 1916 թվականներին՝ հոգեվարքի վերջին պահին և որի պատասխանատվությունը ներկա Թուրքիան չի կարող կրել, մեր դարի ամենաահավոր ողբերգություններն են: Փաստերը կան, փաստերն անժխտելի են: Ձեր խոսնակը հիշատակեց: Դրանք մեզ բոլորիս են ուղղված:

Մենք պետք է մեր մտքերում այդ ազգաբնակչության ճանապարհների դեգերման, դժվար պայմաններում կտտանքների ենթարկման, սպանդի պատկերները պահպանենք: Մենք չպետք է մոռանանք այդ ամենը, «Մուսա լեռան քառասուն օրը», որ նկարագրել է ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելը, որի վերապրողներին ի վերջո ֆրանսիական նավատորմիղն է փրկել:

Կառավարությունն առանձնահատուկ վերաբերմունք ունի խնդրի նկատմամբ այն պատճառով նաև, որ ֆրանսիացի ժողովուրդն էլ է ներքուստ պահպանում ողբերգության հիշատակը: Հիրավի, Ֆրանսիան նախճիրի ենթարկված ժողովրդին ընդունող ամենամեծ երկրներից մեկն է: Մենք մեր տարածքներում տեղ ենք տվել դեպքերի զոհերին և զոհերի զավակներին, որոնց, հավանաբար, մինչ այժմ էլ հետապնդում են անցյալի հուշերը:

Ֆրանսիայի՝ ծագումով հայ համայնքը մեր երկրին շնորհել է ունեցած լավագույնը: Նրա ներկայացուցիչներն անձնազոհաբար պայքարել են ազատության և մարդկային արժանապատվության համար, որոնք մեր հանրապետության գլխավոր արժեքներն են:

Եվ քանի որ ես զբաղեցնում եմ պաշտպանության նախարարության պետքարտուղարի պաշտոնը և զբաղվում եմ նախկին մարտիկներով, շատ լավ գիտեմ այն նպաստը, որ իր սեփական արյան գնով ծագումով հայ համայնքը ներդրել է նման պայքարում:

Դեռևս Առաջին աշխարհամարտի ընթացքում նախճիրից վերապրած հայերը զինվորագրվեցին ֆրանսիական բանակին, որպեսզի ազատագրեն հայրենի տարածքները: Պեր-Լաշեզի հուշակոթողը, ինչպես շատ ուրիշներ, մեզ հիշեցնում է այդ մասին:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ծագումով հայ ֆրանսիացիները դարձյալ առաջին շարքերում էին և դիմագրավում էին բռնազավթիչներին: Ուզում եմ այստեղ հիշատակել, բազմաթիվ այլ անձանց թվում, Միսաք Մանուշյանին՝ Կարմիր ազդագրի Մանուշյանին:

Ծագումով հայ համայնքին հաջողվել է կարողությունները ծավալել բոլոր բնագավառներում, մեր երկրի զարգացմանն ու առաջընթացին այն-

պիսի անուրալի մասնակցություն ունենալ, որը ձեզ բոլորիդ հայտնի է, որին չեմ անդրադառնա:

Տիկնայք, պարոնայք պատգամավորներ, կառավարությունը գիտակցում է ձեր ժողովի քաղաքական միտումը: Նախածեռնությունը ձերն է: Պատասխանատվությունը դուք եք ստանձնել: Կառավարությունը պատկերացնում է այն խորունկ զգացումները, որ համակել են ձեզ:

Բոլոր դեպքերում, ամենամեծ հարգանքը տածելով հանդերձ այդ զգացումների նկատմամբ, մտքով ու սրտով ընկալելով դրանք հարուցող ողբերգության չափերն ու արհավիրքը, ելնելով մեր Սահմանադրությունից, ուզում եմ հարցնել, թե արդյո՞ք օրենքն իրավասու է պատմական գնահատումներ կատարել:

Կառավարությունը, ելնելով Սահմանադրության 20-րդ և 34-րդ հոդվածներից, որոշակիացնում և իրագործում է Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը: Սա իր բացառիկ իրավասությունն է, չնայած գործունեությամբ պատասխանատու է խորհրդարանի առջև:

1915, 1916 թվականների ջարդերին կառավարությունն անդրադարձել է բազմիցս, որոնք, ինչպես արդեն ասացի, առնչվում են վշտին ու հիշողությանը:

Դուք չեք մոռացել նաև, որ նախագահ Միտերանը, 1980 թվականի սկզբին, մի իրավիճակում, որը ձեզ քաջ հայտնի է, որը խոսնակը հիշատակեց, արտահայտել է իր վերաբերմունքը ցեղասպանության նկատմամբ:

Արտաքին քաղաքականության ուղղվածությունը, կառավարության պատասխանատվությունն իրենց առանձնահատուկ պարտադրանքներն ունեն: Սա վերաբերում է ինչպես Ֆրանսիայի, այնպես էլ մյուս երկրներին: Այդ քաղաքականությունն, անշուշտ, պետք է նկատի ունենա պատմությունը, նրա ողբերգություններն ու պատգամը, բայց ճգնաժամերը հաջողությամբ հաղթահարելու համար նաև հաշվի առնի ներկա իրականության բոլոր բաղադրատարրերը:

Պարոն խոսնակ, դուք կոտորածների, նրանց բնորոշման կապակցությամբ հիշատակեցիք պատգամավորների կամ պատգամավորական խմբակցությունների մի ամբողջ շարք զեկուցումներ, եզրահանգումներ, առաջարկներ, արձանագրություններ, բայց մեծ մասամբ, մասնավորապես Միացյալ Նահանգներում, Ռուսաստանում, նույնիսկ մեզ ամենամոտիկ երկրում՝ Բելգիայում, գործադրողն է ստանձնում ամբողջ պատասխանատվությունը:

Պարոն նախագահ, պարոն խոսնակ, տիկնայք և պարոնայք պատգամավորներ, երկրի արտաքին քաղաքականությունը վարելիս Ֆրանսիան առաջնորդվում է երկու սկզբունքով՝ խաղաղության ու կայունության հաստել ժողովուրդների, պետությունների միջև համերաշխությունն ամրապնդելու միջոցով և երբեք այնպիսի ներքին երևույթների չմիջամտել, որոնք ուղղակիորեն մեզ չեն առնչվում:

Հենց այդպես ենք մենք վարվում աշխարհի այն մասում, որը տարածվում է Միջերկրական և Կասպից ծովերի միջև, տարածաշրջան, որը դեռևս ցնցվում է ճգնաժամերից, որտեղ դեռևս արյուն է հոսում, և ուր ողբերգություններ միշտ էլ կարող են վերսկսել:

Մեր այսօրվա բանավեճը նման համայնապատկերում պիտի դիտարկել:

Ուզո՞ւմ եք արդյոք նպաստել այդ երկրների կայունությանը, Թուրքիայի և Հայաստանի և մյուս հարևանների հաշտեցմանը: Եթե մենք ձգտում ենք աջակցել այդ գործընթացին, պետք է ուշադիր լինենք՝ չդիմելու համար լարվածություն, անցյալի վերարծարծում, դիմադարձություն հրահրելու ռիսկին:

Ֆրանսիան Հայաստանի բարեկամն է: Ֆրանսիան Թուրքիայի, տարածաշրջանի մյուս երկրների բարեկամն է: Հենց այդ պատճառով նա խաղում է, կոչված է խաղալու ծավալվող ճգնաժամերը կարգավորողի դեր:

Ձեզ հայտնի է Հայաստանի հետ մեր կապերի բազմազանությունն ու տարողունակությունը: Ֆրանսիան առաջիններից մեկը ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը: Մեր երկիրն ամեն միջոցի դիմում է այդ երկրի խաղաղությանը, ապահովությանը, կայունությանը, զարգացմանը սատարելու համար: Մինչև վերջերս, ինչպես դուք գիտեք, Հայաստանը չէր հավակնում, որ կոտորածները ցեղասպանություն որակվեն: Երկար ժամանակ ի վեր այդ երկրին անհրաժեշտ է հարևանների հետ հաստատել համագործակցության և փոխըմբռնման կապեր, որոնց շնորհիվ միայն հնարավոր կդառնա ժողովուրդների մերձեցումն ու տնտեսության, ժողովրդավարության զարգացման ապահովումը:

Ինչ վերաբերում է Թուրքիային, մեր բոլորի շահերը պահանջում են, որ Բալկանների, Մերձավոր և Միջին Արևելքի, Կովկասի ճգնաժամային աղեղի խաչմերուկում գտնվող այս երկիրը շարունակի իր բարեփոխումներն արդիականացման ու կայունացման ասպարեզներում: Մեր բոլորի շահերը դրդում են խթանել մարդու իրավունքների ապահովման, ժողովրդավարության զարգացումը: Դարասկզբի ջարդերը վիճարկելի չեն, և նրանց պատմական իրողությունը չենք վիճարկել ոչ մենք, ոչ Թուրքիան...

ՄԱՐՏԻՆ ԴԱՎԻԹ – Թուրքիան վիճարկում է:

ՆԱԽԿԻՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ – ... Ինչ խոսք, այդ դեպքերը ձեռք են բերել որոշակի զգացմունքային բեռ: Մեր պարտքն է անհրաժեշտ ժամանակ ըմծեռել, որպեսզի թուրք ժողովուրդը համակերպվի իր իսկ պատմության հետ: Մենք երբեք չենք դադարել ժամանակակից Թուրքիայի ղեկավարներին քելաղրել, որ ավելի ու ավելի ծավալեն այն սահմանափակումների վերացումը, որ սկսել են գործադրել՝ պատմաբաններին թույլ տալով կատարել իրենց աշխատանքը, անկողմնակալ ու ճշմարտացի աշխատանքը վերոհիշյալ իրադարձությունների լուսաբանման վերաբերյալ: Թուրքական արխիվները, բացի պաշտպանության նախարարության տնօրինածներից, այժմ բաց են:

Թուրքերեն լեզվով սկսում են հրատարակվել աշխատություններ, որոնք ենթարկվում են արդարության այդ պարտադրանքին: Վերջերս Թուրքիայում առաջին անգամ լույս տեսավ Վերֆելի գիրքը: Անկարան դրական որոշումներ է կայացրել, որոնց նպատակը Հայաստանի հետ հարաբերությունների կանոնավորումն է: Դա մասնավորապես վերաբերում է հաղորդակցությանը՝ օրինակ, օդային միջանցքին, գործարար շրջանների կապերին, բարձրաստիճան պաշտոնյաների առաքելություններին: Անհրաժեշտ է խթանել այն շարժումը, որը դեպի ապագա է միտվում, և ոչ թե խոչընդոտել: Դրանից ո՞վ կշահի:

Պարոն նախագահ, պարոն խոսնակ, տիկնայք և պարոնայք պատգամավորներ, գործունեությունը, որ մենք ծավալում ենք ի նպաստ այդ

տարածաշրջանի կայունացման, ինչպես արդեն ասացի, կախված է բարեկամական կապերից, որոնք նախաձեռնում ենք ինչպես մեկ, այնպես էլ մյուս կողմի հետ: Դրա արդյունքն է հենց ամերիկացիների ու ռուսների հետ մեկտեղ, այսպես կոչված, «Մինսկի խմբում» համաձախագահելը, որը ստեղծված է ԵԱՀԽ՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության շրջանակներում ու պարտականություն ունի կանոնավորելու Կովկասի, առաջին հերթին՝ Լեռնային Ղարաբաղի ողբերգական հակամարտությունը:

Այս տարածաշրջանում հնարավոր են նոր ողբերգություններ: Ազգայնականության դևը խաղում է իր դերը: Փոխվրեժի մտայնությունը վերացած չէ:

Աշխարհամասի հավասարակշռությունը նույնպես դեռևս կայուն չէ: Հյուսիսային և Հարավային Կովկասում վեց հարյուր կիլոմետր լայնությամբ ձգվող տարածության վրա տեղական հզոր պետություններով շրջապատված երկու հարյուր ժողովուրդ է ապրում, որն իրենից ներկայացնում է անկախ պետականությունների, ավելի կամ պակաս չափով պառակտված ինքնավարությունների, չճանաչված անջատողական խմբավորումների խառնուրդ՝ բախումների բազմազանությամբ, պատմական հակամարտություններով:

Չգտենք ամեն ինչ անել, որպեսզի խուսափենք այնպիսի քայլերից, որոնք, որքան էլ հիանալի նկատառումներով առաջնորդվեն, կարող են անկանխատեսելի հետևանքների հասցնել, շիկացնել լարվածությունը: Զորակցենք ՄԱԿ-ի և ԵԱՀԽ-ի նախաձեռնություններին:

Պարոն նախագահ, պարոն խոսնակ, տիկնայք և պարոնայք պատգամավորներ, ահա՛ կառավարության նկատառումները: Մեկտեղենք մեր ջանքերը, որպեսզի պահպանենք տարածաշրջանի խաղաղությանն անհրաժեշտ առկա հնարավորությունները: Ինձ թվում է, այդ մտահոգությունը բոլորդ էլ կիսում եք: Դա նաև Ֆրանսիայի արտաքին քաղաքականության պարտադրանքն է, որի կառավարությունը հնարավոր բոլոր միջոցներով հավատարիմ կմնա:

ՊԻԵՌ ԼԵԼՈՒՇ – Ուրեմն՝ համարձակ գործի անցնենք:

Սկսվում է մտքերի փոխանակությունը:

ՆԱԽԱԳԱՀ – Սկսում ենք մտքերի փոխանակությունը, ձայնը տրվում է պարոն Ժան-Պոլ Բրետին:

ԺԱՆ-ՊՈԼ ԲՐԵՏ – Պարոն նախագահ, պարոն պետքարտուղար, սիրելի գործընկերներ, 1948 թվականի դեկտեմբերի 9-ին մարդկությունը պաշտոնապես ընդունել է «ցեղասպանություն» բառը, որպեսզի բնորոշի ինչպես պատերազմի, այնպես էլ խաղաղ ժամանակ մի խումբ անձանց՝ ազգային, ցեղային կամ կրոնական հավաքականությունների ոչնչացնելու միտումը:

Այդ օրը Միավորված ազգերի կազմակերպության լիագումար նիստը միաձայն ընդունել է ցեղասպանության ոճիրը կանխելու և դատապարտելու համաձայնագիրը և բացառիկ ճշգրտությամբ սահմանել է գործողությունները, որոնցով որակվում է չարագործությունը:

Սահմանումը կազմված է հինգ կետից՝ սպանություն, ֆիզիկական կամ մտավոր առումով անհատի վրա ծանր հարձակում, միտումնավոր այնպիսի պայմանների ստեղծում, որոնք ընդհանուր կամ մասնակի

ոչնչացման են հասցնում, ձեռնարկումներ, որոնց հետևանքով խոչընդոտվում է ծննդաբերությունը, երեխաները բռնությամբ տեղահանվում են:

Հայերի ցեղասպանությունը համընկնում է այս բոլոր կետերին: Փաստերն անվիճելի են, կասկածի տեղիք ամենևին չեն տալիս: Մի ազգային փոքրամասնություն բնաջնջելու համար գոյություն է ունեցել կանխամտածված ծրագիր, ոճրածին միտում, ստեղծվել է հատուկ կազմակերպություն:

Մինչդեռ արդեն ութսուներեք տարի է, որ այս փաստերը լռության են մատնվում: Առկա են դահիճների լռությունը, որոնք երբեք չեն ընդունել իրենց հանցանքը, պետությունների լռությունը, որոնք հանուն դիվանագիտության չեն դրել մարդու իրավունքների պաշտպանության և որպես նախապայման՝ հիշողության պարտքի խնդիրները, զոհերի լռությունը, որոնք տարիներ շարունակ չեն ցանկացել պատմել իրենց ողիսականը:

Դահիճները, պետությունները, զոհերը, յուրաքանչյուրը յուրովի ցեղասպանությունն անուշադրության են մատնել:

Դահիճներն ու նրանց հետնորդները ժխտում են՝ Թուրքիայում տեղի է ունենում այն, ինչն ընդունված է կոչել պետական ուրացում:

Կառավարությունները թուրքական իշխանություններից չեն պահանջում, որ դիրքորոշումը հայկական հարցի նկատմամբ վերանայվի:

Զոհերը նախընտրում են համր մնալ, որպեսզի շարունակեն ապրել:

Ըստ էության լռությունն է այս ցեղասպանության առանձնահատկությունը: Մեր խորհրդարանն այսօր հենց այդ լռությունը պիտի պաշտոնապես խզի:

Այո, հայերի ցեղասպանությունը պետք է ընդունել:

Հայերը, որոնք Ֆրանսիա հասան քսանական թվականներին, 1915-ի ցեղասպանությունից անմիջապես հետո, ուզում էին անցյալը մոռանալ: Նրանք տեղավորվեցին Փարիզից Մարսել ձգվող աշխարհագրական գծի վրա և սկսեցին աշխատել: Շատերը ընտանիք ստեղծեցին, քիչ խոսեցին հեռվում՝ պատմական Հայաստանում իրենց հետ կատարվածի մասին, նրանց մասին, որոնց ընդմիշտ թողել էին այստեղ-այնտեղ՝ սպանդանոցում, Եփրատի ջրերում, սիրիական Դեր Զոր անապատի ողջակիզման խարույկներում:

Հայ համայնքն ասես ուզում էր ամեն ինչ մոռանալ, որ խաղաղ ապրի:

Իրականում, սակայն, ոչինչ էլ չէր մոռանում: Տներում պահպանվում էր մահվան հիշողությունը, չնայած այդ մասին կամ խոսում, կամ լռում էին: Բոլոր դեպքերում հուշը կար, մնում էր. նման անցյալը հեշտությամբ չի մոռացվում: Այն դիմադրում է երկար, ծանրանում է բեռի նման, փոխանցվում է հորից որդուն, մորից՝ դստերը:

Ժամանակ անցավ, ծնվեց երկրորդ սերունդը, հետո՝ երրորդը, որն ընդվզեց: Եվրոպայում և Միացյալ Նահանգներում ծագումով հայ տղամարդիկ ու կանայք գենը վերցրին, սպանություն կատարեցին, որպեսզի ցեղասպանությունը, որին զոհ էր գնացել իրենց ժողովուրդը, ընդունվի: Սառնասրտորեն նրանք պատուհասեցին դահիճների հետնորդներին, քանի որ լռությունն անտանելի էր դարձել:

Թուրքական պետության ներկայացուցիչները բռնաբարքների զոհ էին դառնում:

Ութսունական թվականների սկզբին էր՝ 1983-ին: Օռլիում, թուրքական օդագնացության ընկերության հաշվառման սեղանի առջև ոումք պայթեց, անմեղ զոհեր եղան:

Յոթանասուն տարի անց բռնության պատասխանը բռնությունը եղավ, որն ասես նախազգուշացնում էր մեզ, թե ինչի կարող է հասցնել ցեղասպանության լռությունը:

Բոլոր դեպքերում զենքի կրակոցն, ըստ երևույթին, դիպել էր միջազգային հանրության սրտին ու մտքին: Միավորված ազգերի կազմակերպությունը, այնուհետև Եվրախորհրդարանն ընդունեցին Հայոց ցեղասպանությունը:

Այդ ամենը, սակայն, դեռևս բավական չէ: Պետք է ավելի առաջ գնալ:

Այն պահին, երբ Թուրքիան ցանկանում էր անդամակցել Եվրոպական Միությանը, յուրաքանչյուր պետություն պետք է ընդունի ցեղասպանությունը, որովհետև Եվրոպան արժեքներ ունի, որովհետև ամեն մեկը, այսինքն ամեն պետություն պարտավոր է դրանք իմաստավորել ու տարածել: Խոսքը մարդու նկատմամբ հարգանքի, ցեղասպանության ոճրի դատապարտման ու անժամկետանցության, ուրացման դեմ պայքարի մասին է:

Չի կարելի թույլ տալ, որ թուրք, այսպես կոչված, պատմաբաններն ու դիվանագետները վերածեն իրենց պատմությունը:

Ընդամենը մի քանի օր առաջ էր, որ նահանգային մի լրագիր որպես հայերի ցեղասպանությանն ի նպաստ իմ հրատարակած հոդվածի պատասխան, տպագրեց Լիոնում Թուրքիայի գլխավոր հյուպատոսի արձագանքը: Այն, ըստ էության, ճարպկորեն քողարկված ուրացում էր: Ինչ ձևով էլ որ ցեղասպանությունը ժխտեն, ուրացողները շատ շուտ են բացահայտվում, որովհետև նույնն են կրկնում:

Նրանք միշտ ասում են, որ զոհերը զոհեր չեն, այլ նախահարձակներ, որոնք փորձել են տապալել տվյալ ժամանակվա օրինական իշխանությունը:

Նրանք միշտ ասում են, որ բռնագաղթը ոչնչացման նպատակ չի հետապնդել, ամեն ինչ արվել է խիստ մարդասիրաբար:

Նրանք միշտ ասում են, որ զոհերի թիվը չափազանցված է: Եվ չնայած ակնհայտ իրողություններին, ավելի ու ավելի շատ փաստեր են վկայակոչում:

Ոչ անհատները, ոչ էլ ժողովուրդները ցեղասպանությունից չեն ապաքինվում, չեն ձերբազատվում: Չէ՞ որ ընդմիշտ ոչնչացված է մշակութային մի շերտ. ճարտարապետական կոթողներ, գրքեր:

Ցեղասպանությունն անշիրիմ մեռելներն են, բացակա ու այնքան ներկա մեռելները: Անուղղելիի գործված է մեկընդմիշտ:

Այժմ Թուրքիայում կանայք ու տղամարդիկ, մտավորականներ, հետազոտողներ, հրատարակիչներ ու գրողներ հայտարարում են ճշմարտությունը: Նրանք թուրք են և հետևողականորեն հակադրվում են հայերի պատմության կեղծումներին:

Մի քանի շաբաթ առաջ մի երիտասարդ թուրք կին, որն անցնում էր մեր երկրով, հատուցում պահանջեց իր հայ եղբայրների համար, մինչդեռ

այն նույն պահին Ֆրանսիայում նրանք, ովքեր թուրքամետ են համարվում, հանուն ժողովուրդների բարեկամության ոչինչ չեն ուզում անել:

Քանի որ բարեկամության զգացումն իր պարտադրանքներն ունի, որոնց թվում է բարեկամներին դեպի արդարություն և իրավունքի պաշտպանություն առաջնորդել կարողանալը, ուստի չի կարելի հանդուրժել պատմության աղավաղումները:

Հայերի ցեղասպանությունն ընդունել՝ նշանակում է ոչ թե թուրքերի դեմ,՝այլ նրանց ընդառաջ գնալ, ովքեր Թուրքիայում պայքարում են հիշողության, արդարության, իրավունքի համար:

ԴԻԴԻԵ ՄԻԳՈ – Շատ ճիշտ է:

ԺԱՆ-ՊՈԼ ԲՐԵՏ – Ոմանք ուզում են մեզ հավատացնել, որ հայերի ցեղասպանության ընդունումը կարող է վնասել Կովկասի խաղաղությանը: Բայց արդյո՞ք այն պահպանելու համար անհրաժեշտ է լռության դատապարտել ճշմարտությունը: Խաղաղությունը ոչ թե համրության, այլ այնպիսի տարածքում է հաստատվում, ուր յուրաքանչյուրը գտնում է իր իսկական տեղը:

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԲԼՈՒԱՆ – Շատ լավ ասացիք:

ՇԱՆ-ՊՈԼ ԲՐԵՏ – Կեղծիքի վրա կառուցված խաղաղությունը խիստ անկայուն է…

ԺԱՆ-ՊԻԵՌ ԲԼԱԶԻ – Իհարկե:

ԺԱՆ-ՊՈԼ ԲՐԵՏ – … քանի որ այն ժողովուրդը, որի պատմությունը քողարկված է, անընդհատ ձգտում է բացահայտման, այդ դեպքում է հաճախ պատերազմին խաղաղությունը հաջորդում: (*Ընկերվարականների խմբի բազմաթիվ բազկաթոռներից բացականչում են՝ «Շատ ճիշտ է»*):

Տարիներ շարունակ Ազգային ժողովի բոլոր բազկաթոռներից հայերի ցեղասպանությունն ընդունել տալու բազմաթիվ առաջարկներ են եղել, որոնք ուղեկցել են Ֆրանսիայի հայ համայնքի պահանջատիրությանը:

Այսօր պատգամավորների քվեարկմանն է ներկայացվում ընկերվարականների խմբի օրենքի առաջարկությունը: Մարտին Դավիթ ու Դիդիե Միգոն քիչ անց կխոսեն այդ մասին: Ես կուզեի հիշատակել նաև Միշել Ռիվագին, Ժան-Պիեռ Բլազին և Դանիել Մարկովիչին, որոնք տարբեր փուլերում մասնակցել են նախագծի մշակմանն ու հասել այն բանին, որ տեղ գտնի մեր խորհրդարանի օրակարգում:

Նման գաղափարի իրագործումը նախադեպ չունի: Այն ազգային ու միջազգային ասպարեզում չափազանց լայն արձագանք կգտնի: Մենք Արևմտյան Եվրոպայի մեծ տերություններից միակ այդպիսի քայլ կատարած երկիրը կլինենք: Անտարակույս, շատ-շատերը մեզ կհետևեն:

Մի քանի տարի առաջ «Երկիր և մշակույթ» ընկերակցությունը Փարիզում՝ Դեֆանսի սրահում, այնուհետև նահանգներում հայերի պատմության և ցեղասպանության վերաբերյալ լուսանկարների ցուցահանդես էր կազմակերպել: Ես ուզում եմ տպավորությունների գրքից մեջբերում կատարել, հիշատակել Լիոնել Ժոսպենի խոսքերը. «Ճշմարտությունը պետք է միշտ փնտրել ու արտահայտել»: Մեր խորհրդարանը և խորհրդարանի միջոցով Ֆրանսիան հենց դա այսօր պիտի անեն՝ մեկընդմիշտ արտահայտեն ճշմարտությունը (*ծափահարություններ բոլոր բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Ձայնը տրվում է պարոն Ռոլան Բլյումին:

ՌՈԼԱՆ ԲԼՅՈՒՄ – 1915 թվականի ապրիլի 24-ին Երիտթուրքերի կառավարությունը ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի դրդմամբ իրագործում է քսաներորդ դարի առաջին ցեղասպանությունը, որի ահազանգը հայ մտավորականության գլխատումն է դառնում: Այնուհետև, Օսմանյան կայսրության՝ հայերով բնակեցված բոլոր նահանգներում կրկնվում է նույն սցենարը՝ աքսոր, կոտտանք, զանգվածային բնաջնջում և բռնագաղթ դեպի Միջագետք ու Սիրիայի անապատներ, ուր իր վախճանին է հասնում դեպի մահ ընթացող երկար ուղին: Այսպիսով, ամենադաժան պայմաններում ոչնչանում է մեկ ու կես միլիոն տղամարդ, կին ու երեխա:

Երիտթուրքերի կառավարությունն ի վերջո հասնում է իր նպատակին, որի բուն էությունը կանխամտածված, կազմակերպված և ծրագրված ձևով Արևելյան Անատոլիան հայաթափ անելը, այսինքն՝ այդ քրիստոնյա ցեղը վերացնելն է:

Ամեն տեսակ վկայությունների համընկնումը, որին դժվար է հակադրվելը, հավաստում է թուրք ոճրագործների՝ ցեղասպանություն իրականացնելու փաստը:

1915 թվականից ութսուներեք տարի է անցել և մինչև այժմ հայ ժողովրդին չի վերադարձվել ճշմարտությունը: Ինչ խոսք Վիտակերի՝ ՄԱԿ-ի 1985-ի զեկուցագիրը, ինչպես նաև Եվրախորհրդարանի 1987-ի որոշումը անդրադարձել են հայերի՝ 1915-ի ցեղասպանությանը, օտարերկրյա մի շարք խորհրդարաններ պաշտոնապես ընդունել են, բայց Ֆրանսիան՝ մարդու իրավունքների պաշտպանության, բազմաթիվ վերապրողներ հյուրընկալած երկիրը, դեռևս դիրքորոշումը չի հստակեցրել: Ուստի, չի կարող չուրախացնել այն հանգամանքը, որ անուշադրության մատնված բազմաթիվ առաջարկներից հետո, ի վերջո, սկսում ենք քննարկել «Հայերի՝ 1915 թվականի ցեղասպանության ընդունումը» կոչվող օրենքի նախագիծը, որը կրում է 895 համարը:

Ինչ խոսք, մենք ընդունում ենք օրենքի առաջարկի միակ հոդվածի բառակապակցությունների բուն արժեքը, օրենք, որը խորհրդանշական մեծ իմաստ ունի. «Ֆրանսիան հրապարակայնորեն ընդունում է 1915-ի ցեղասպանությունը»: Այնուամենայնիվ, եթե ձևակերպումը հավանության արժանանա, կուզեինք, որ օրենքի նախագծի ընդունումից հետո համապատասխան հետևանքներ ունենար:

Դա է այն բարեփոխումների նպատակը, որոնք իմ բարեկամ Ֆրանսուա Ռոշեբլուան ու անձամբ ես ներկայացրել ենք արտաքին գործերի հանձնաժողովին: Հենց այդ մտայնությամբ էլ, ընդ որում առանց վիճաբանության ու լարվածության տեղի տալու, դիմում եմ գործընկերներիս, մանավանդ կառավարությանը: Իմ կարծիքով, հայկական դատն այնպիսի վեհություն ունի, որ անհնար է ամբոխավարությամբ տարվելը:

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԲԼՈՒԱՆ – Շատ ճիշտ է:

ՌՈԼԱՆ ԲԼՅՈՒՄ – Քվեարկության հետևանքները, որոնք հրապարակելու ենք, անհրաժեշտ է վերլուծել ինչպես դիվանագիտական, այնպես էլ իրավաբանական առումով: Եվ իրոք, միջազգային ասպարեզում մեր կառավարությունը Թուրքիայի նկատմամբ պիտի այնպիսի դիրք գրավի, որպեսզի վերջինս ցեղասպանությունն ընդունի, վերջ տա ուրացման քաղաքականությանը: Եթե այդ երկիրն ուզում է անդամակցել Եվրոպա-

կան միությանը, անհրաժեշտ է, որ 1915-ի ցեղասպանության պատասխանատվությունն ստանձնի, ընդունի իր անցյալը:

ԺԱՆ-ՊԻԵՌ ԲԼԱԶԻ – Շատ ճիշտ է:

ՌՈԼԱՆ ԲԼՅՈՒՄ – Գերմանիան իսկույն ևեթ խոստովանեց հրեական ողջակիզման մեղսակցությունը և, եթե այդպես չվարվեր, Եվրոպան այնպիսին, ինչպիսին այսօր է, չէր կայանա. այդ աստիճանի նշանակալի էին ֆրանս-գերմանական հաշտության հետևանքները: Նույնը կարող է Թուրքիայի հետ կատարվել, եթե, իհարկե, ապագայում ձգտում է լիարժեք խաղալ աշխարհառազմավարական այն դերը, որին հավակնում է:

Ինչ վերաբերում է իրավաբանական ուղղվածությանը, լավ կլինի, եթե օրենքի նախագիծը կարողանայ դիմադարձել հայերի ցեղասպանությունը վիճարկող դրույթներին: Իսկ մինչ այդ անհրաժեշտ է, որ կառավարությունն առաջարկի վերափոխել 1990-ի հուլիսի 13-ի օրենքը, որը, դժբախտաբար, խիստ սահմանափակ է, քանի որ առնչվում է միմիայն Երկրորդ աշխարհամարտի ընթացքում մարդկության դեմ գործադրված ոճիրներին: Այս օրենքը պետք է շատ արագ տարածել հայերի ցեղասպանության վրա ևս, որպեսզի Բեռնար Լևիսի նման ուրացման դրույթների հեղինակներին քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորություն ընձեռի, թույլ չտա ածպարարությունների դիմել, որոնք քաղաքացիական օրենսգրքի 1382-րդ հոդվածի պատճառով, դատական գործ հարուցելիս, սոսկ քաղաքացիական պատիժներով են սահմանափակվում:

Որպես եզրահանգում պետք է ավելացնել, որ սույն օրենքի անգամ ոչ կատարյալ նախագիծը նպաստում է պատմական ճշմարտության բացահայտմանը և հենց դրանով Ֆրանսիայի հարգանքն է ներկայացնում ցեղասպանության զոհերին, վերապրողներին և նրանց զավակներին, որոնք այսօր մեր հասարակության անդամներն են: Այս ամենի պատճառով «ժողովրդավարական միության» խմբակցությունն օրենքին կողմ կքվեարկի (*ծափահարություններ բոլոր բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Խորապես հասկանալով հանդերձ զգացումը, որը կարող է համակել ամբիոն բարձրացած անձանց, հարկ եմ համարում հիշեցնել, որ ներկաները պետք է ձեռնպահ մնան վերաբերմունքի բացահայտ դրսևորումներից: Խոսքը տրվում է պարոն Գի Հերմիեին:

ԳԻ ՀԵՐՄԻԵ - Պարոն նախագահ, պարոն քարտուղար, տիկնայք և պարոնայք պատգամավորներ, մեր խորհրդարանում լինում են բացառիկ կարևոր պահեր և որոշումներ, որոնք պատիվ են բերում ոչ միայն մեզ, այլև մեր ամբողջ երկրին:

1998 թվականի մայիսի 29-ի այս ուրբաթն, առանց որևէ կասկածի, հենց այդպիսի պահերից մեկը կդառնա, քանի որ ութսուներեք տարիներ երկար, չափազանց երկար և, պետք է հատուկ նշել, երեսպաշտ լռությունից հետո մեր խորհրդարանը վերջապես կկարողանա քվեարկությամբ պաշտոնապես ընդունել և դատապարտել այն ցեղասպանությունը, որի զոհը 1915-ից մինչև 1922 թվականը դարձել է հայ ժողովուրդը: Հիրավի, պատմությունն անուղղելի է: Մայրամուտն ապրող Օսմանյան կայսրությունում, որտեղ հայերի ազգային ինքնագիտակցությունը թուրքական ազգայնականության վերելքին զուգընթաց ամրապնդվում էր, ժամանակի երիտթուրքերի կառավարությունը սանձազերծում է մի ամբողջ ժողովրդի սպանդ:

Դեռևս XIX դարի վերջին ահավոր կոտորածները 300000 զոհ են խլում, սկզբնավորում արտագաղթի անդրանիկ ալիքը: 1915 թվականին, Առաջին աշխարհամարտի հենց սկզբնական շրջանում, երիտթուրքերի կառավարությունը կատարում է անուղղելին: Ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը ձերբակալվում է Կոստանդնուպոլսի հայության ընտրանին: Դրան հաջորդում են զանգվածային բռնագաղթն ու ազգաբնակչության ջարդը:

Ուրացողները պնդում են, որ հայ ժողովրդին բնաջնջելու միտումնավոր ցանկություն չի եղել, որը նշանակում է փոքր-ինչ շուտ մոռանալ 1915-ի մայիսի 27-ի հրամանը, որն օրինականացնում էր բռնագաղթը: Այն մեծ ընդգրկումներով, հետևողականորեն կազմակերպվում էր Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում և հնարավորություն ընձեռեց ակնհայտորեն կանխամտածված, միտումնավոր կերպով համընդհանուր ոչնչի-րի ենթարկել հարյուր-հազարավոր հայերի: Ահա ահավոր հանրագումարը, որը, եթե հարկ լինի, կարող է պարզաբանել վերոհիշյալ փաստը: Ըստ հայկական աղբյուրների, մեկ ու կես միլիոն մարդ է զոհվել բռնագաղթի ընթացքում կամ վերջնական հանգրվանում: Միայն ութ հարյուր հազարն է փրկվել, որի մեծ մասն արտաքսվել է: Դրանով է բացատրվում հայկական սփյուռքի զանգվածայնությունը: Վեց-յոթ միլիոն հայության կեսից ավելին Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս է ապրում, որի մոտ կեսը նախկին ԽՍՀՄ երկրներում է, մոտ երկու միլիոնը սփռված է հինգ աշխարհամասերում, մասնավորապես Հյուսիսային Ամերիկայում, Մերձավոր և Միջին Արևելքում, Եվրոպական միության երկրներում: Այսպիսով, երեք հարյուր հիսունից չորս հարյուր հազար ծագումով հայ ֆրանսիացի քաղաքացի է ապրում փարիզյան շրջանում, Լիոնում, Մարսելում, Նիցցայում, մեր երկրի այն բնակավայրերում, որոնք 1915-ից ի վեր ջարդերից խույս տված, բռնությամբ աքսորի դատապարտվածների հիմնական հյուրընկալողների շարքն անցան:

Ցեղասպանության ոճիրը կանխելու և դատապարտելու Միավորված ազգերի կազմակերպության լիագումար նիստի 1948 թվականի դեկտեմբերի 9-ի միաձայն ընդունած համաձայնագրի, ինչպես նաև ֆրանսիական օրենսդրության՝ ցեղասպանությունը բնորոշող օրենսգրքի 211-1 հոդվածի դրույթները ոչ մի կասկած չեն թողնում, որ 1915-ին հայ ժողովուրդը դարձել է նոր ժամանակների առաջին ցեղասպանության զոհը: Այս ամենով հանդերձ, անցել է արդեն ութսուներեք տարի, բայց Ֆրանսիան պաշտոնապես ցեղասպանությունը չի ընդունել: Ավելի վատթարը կա, չպետք է ճշմարտությունը թաքցնել, տարիներ, տասնամյակներ շարունակ, չնայած բոլոր կողմերից ուղղված կոչերին, իրար հաջորդող կառավարությունները, ասես ամաչելով, համապատասխան նախագիծը մերժել են: Մինչդեռ հակառակը պիտի լիներ, նպաստեր համարձակություն, արդարամտություն դրսևորելուն:

Նախ և առաջ, դա իհարկե, հարգանք է այդ ողբերգության անթիվ զոհերի, ինչպես նաև նրանց հանդեպ, ովքեր, ճիշտ է կարողացել էին փախչելով փրկվել, բայց ամեն ինչ կորցրել էին: Ցեղասպանությունն ամենադաժան ձևերով կորստի մատնեց որոշակի հասարակություն, կենսաձև, մշակույթ, քաղաքակրթություն: Բոլոր վերջնական լուծումների հետևում թաքնված էր մի աշխարհ ու հիշողություն, մարդկության որոշակի մաս ոչնչացնելու ցանկությունը, որը նաև մերն է, չնայած պաշտոնական Ֆրան-

սիան երկար ժամանակ մոռացել էր: Ապա հաջորդում է մեր երկրի՝ մարդու իրավունքների պաշտպանության հայրենիքի՝ քսաներորդ դարի առաջին ցեղասպանության հանդեպ հիշատակի պարտքը կատարելու պարտականությունը: Ընդունել, հիրավի, ճշանակում է ամեն ինչ անել, որպեսզի մարդկության դեմ գործված այդ ոճիրը գրվի մեր հանրության խղճի մատյանում և դաս դառնա նման ոճրտումները կանխելու համար: Հիշողության այդ պարտքը հրատապ անհրաժեշտություն է, քանի որ մեր ավարտվող դարը մինչև օրս ուրիշ ցեղասպանությունների էլ է ականատես եղել: Հայտնի է, որ նույնիսկ հինավուրց Եվրոպայի շեմին մենք բարբարոսության վերադարձից ապահովված չենք:

Ի վերջո, այն դերի ընդունումը, որ հայ համայնքը խաղացել է մեր երկրում: 1915 թվականի կոտորածներից փախչողները, ապա նրանց հետնորդները կարողացան լիովին միաձուլվել մեր ազգային համայնքին՝ շարունակելով հանդերձ ապրեցնել իրենց լեզուն, մշակույթը, «հայկականությունը»: Այն Ֆրանսիայի համար եղել և մնում է հարաշարժության ազդակ, ընկերային, մշակութային հարստության աղբյուր: Չմոռանաքը, իհարկե, նաև ծագումով, հայ բազում ֆրանսիացիներին, ովքեր պատմության ամենամռայլ պահերին մեր ազատության համար մղվող պայքարին իրենց մասնակցությունը բերեցին՝ հանձին, օրինակ, Միսաք Մանուշյանի և իր Կարմիր ազդագրի մարտախմբի, որի անդամները, ինչպես Արագոնն է երգել. «Ժամանակից առաջ իրենց սիրտը» տվեցին, «Ֆրանսիա գոչելով» մարտնչեցին:

Հիրավի, մի՞թե կարելի է անտարբեր մնալ հայ ժողովրդի ողբերգական ճակատագրի հանդեպ, որն այս դարում ցեղասպանություն, աքսոր, ստալինյան փորձություններ տեսավ, ԽՍՀՄ փլուզումից հետո ապրեց Ղարաբաղի արյունոտ հակամարտությունը, շրջափակումը, չխոսելով արդեն 1988-ի սարսափելի երկրաշարժի մասին:

Ուրեմն երկար ժամանակ ի վեր Ֆրանսիան հայ ժողովրդի ցեղասպանությունն ընդունելու ծանրակշիռ պատճառներ ուներ: Հենց դրա համար համայնավարների խումբը, պետք է նշել նրանց հետևողականությունը, մասնավորապես Գի Դյուքոլոնեի միջոցով, ամեն տարի պահանջել է ընդունումը, բայց արդյունքի չի հասել: Ուրիշները Ֆրանսիայից առաջ են անցել: Խոսքը Միավորված ազգերի կազմակերպության 1985 թվականի օգոստոսի 29-ի որոշման, Եվրախորհրդարանի 1987-ի հունիսի 18-ի բանաձևի, ազգային բազմաթիվ խորհրդարանների մասին է: Ճիշտ է, 80-ական թվականներին մեր պետության ու կառավարության ամենաբարձր պաշտոնյաները որոշակիորեն անդրադարձել են ցեղասպանությանը, բայց խորհրդարանին թույլ չեն տվել քննարկման դնել և ընդունումն արձանագրել հանրապետության օրենսգրքում:

Հասկանալի է, որ անհրաժեշտությունը մեծացել է վերջին տարիներին՝ մասնավորապես այս ապրիլի 24-ին, հանձին այն արարողությունների, որոնցով նշվեց ցեղասպանության 83-րդ տարեդարձը: Սրան գումարվում է հարցապնդումը, որը 1996 թվականին Հարրիսի ինստիտուտը կատարել է «Լե նուվել դԱրմենի» պարբերականի համար, որով և բացահայտվել է, որ ֆրանսիացիների մոտ 70 տոկոսը գիտի հայերի ցեղասպանության մասին, և բացարձակ մեծամասնությունը ցանկանում է, որ Ֆրանսիան պաշտոնապես ընդունի որպես մարդկության դեմ գործված ոճիր:

Վերջերս, ապրիլի 23-ին, Մարսելում հայ համայնքի նախաձեռնած հանրահավաք-բանավեճի ժամանակ, որին մասնակցում էին քաղաքական բոլոր կուսակցությունների պատգամավորները կամ ներկայացուցիչները, մեզ շատ հարցեր տվեցին: «Ինչո՞ւ, - ասում էին հայերը, - այդքան խորհրդարանական արտահայտվում է ցեղասպանության ընդունմանն ի նպաստ, սակայն Ազգային ժողովում գործը քվեարկության չի հասնում»: Բնականաբար, արծարծվեց նաև կառավարության դիրքորոշման խնդիրը: Ես, ինչպես ուրիշները, նկատել տվեցի, որ խորհրդարանականների կազմած նախագիծը կարող է քննարկվել ու քվեարկվել Ազգային ժողովում: «Խորհրդարանականների ատյանի» նման հնարավորության բացահայտումը բուռն հետաքրքրություն հարուցեց: Ահա թե ինչու համայնավարների խմբի անունից ես մայիսի սկզբին դիմեցի բոլոր պատգամավորներին, առաջարկելով այն օրենքի օգտին քվեարկելու պարտականությունն ստանձնել, որը պատրաստ էինք ձևակերպել մեր «ատյանում»:

Մենք շնորհավորում ենք ընկերվարների խմբին այն բանի համար, որ հեռց այսօրվանից մեզ ընձեռում է այդ հնարավորությունը: Ինչ խոսք, մենք կքվեարկենք հայ ժողովրդի ցեղասպանությունը Ֆրանսիայի կողմից ճանաչելու օգտին, ձգտելով նպաստել վճռի ընդունմանը, որին այդքան երկար սպասում է հայ համայնքը: Եվ ոչ միայն հայ համայնքը: Ուստի ցանկանում ենք, որ որոշումը լինի լիարժեք, ազդեցիկ, միանշանակ, դրա համար էլ հարկ ենք համարում վիճարկման ներկայացվող առաջարկը հարստացնել երեք հիմնական լրացումներով:

Առաջին հերթին, մեր Ազգային ժողովը ոչ միայն պիտի ընդունի, այլև դատապարտի այն ցեղասպանությունը, որին զոհ գնաց հայ ժողովուրդը:

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԼՈՒԱՆ – Շատ ճիշտ է…

ԳԻ ՀԵՐՄԻԵ – Եվ մանավանդ՝ անհրաժեշտ է որոշակիորեն մատնանշել մարդկության դեմ գործված այդ ոճրի պատասխանատուներին…

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԼՈՒԱՆ – Իհարկե:

ԳԻ ՀԵՐՄԻԵ – … Այսինքն, Օսմանյան կայսրության օրոք այդ տարիներին իշխանությունը նվաճած երիտթուրքերի կառավարությանը: Ես այն տպավորությունն ստացա, որ արտաքին գործերի հանձնաժողովը դեմ է դրան, այն պատճառաբանությամբ, որ նման մոտեցումը կարող է խանգարել ինչպես Ֆրանսիայի և Թուրքիայի ներկա, այնպես էլ Թուրքիայի և Հայաստանի ապագա փոխհարաբերություններին:

ԺԱՆ-ՊՈԼ ԲՐԵՏ – Ամենևին:

ԳԻ ՀԵՐՄԻԵ – Հակառակն է հավանականը: Ճշմարտությունն աղավաղելը Թուրքիային ծառայություն մատուցել չի նշանակում: Իսկ ճշմարտությունն այն է, որ 1915 թվականից մինչև մեր օրերը թուրքական բոլոր կառավարությունները չեն ընդունում ցեղասպանությունը: Ավելին, տարիների ընթացքում նրանք հետևողականորեն ձգտում են վերացնել Թուրքիայի հայկական պատմական տարածքների հայկականության բոլոր հետքերը: Այս կապակցությամբ անկյուններ հարթեցնել նշանակում է պարզապես ավելի խորացնել պատճառները, որոնք Թուրքիային խանգարում են եվրոպական միասնականությանն անդամակցելուն…

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԼՈՒԱՆ – Շատ ճիշտ է…

ԳԻ ՀԵՐՍԻԵ – ... և հայերի, թուրքերի միջև տևական խաղաղություն հաստատելուն, ինչպես նաև, իհարկե, ժողովրդավարությունն ու մարդու իրավունքների պաշտպանությունն ամրապնդելուն, ինչին 1995 թվականի ապրիլի 4-ին, նախագահական ընտրարշավի ժամանակ հայ համայնքին ուղղած նամակում անդրադարձել էր Լիոնել Ժոսպենը: Բացի դրանից, անկյուններ հարթեցնելը չի բխում Ֆրանսիայի շահերից:

Երկրորդ՝ բանաձևը, որ մենք ընդունելու ենք, պիտի որոշակիորեն պարտավորեցնի կառավարությանը, մեր եկրում ամեն տարի նշել ցեղասպանության տարեդարձն ու նպաստել միջազգային ընդունմանը:

Ուրեմն, մեր խորհրդարանի վճիռը ոչ թե անհետևանք քայլ պիտի լինի, այլ պարտականությունների ստանձնում: Ստանձնում հանուն այն բանի, որ մարդկության դեմ գործված հանցանքը դրոշմվի հիշողություններում, որին նպաստում են, մասնավորապես,ամեն տարի ապրիլի 24-ի կապակցությամբ ձեռնարկված միջոցառումները: Ստանձնում հանուն նաև այն բանի, որ միջազգային հանրությունն ընդունի ցեղասպանությունը: Այս հանգամանքն առանձնահատուկ կարևորություն է ստանում, որովհետև քարոզչական ծավալուն արշավ է սկսվել՝ հակադրվելու համար ցեղասպանության ընդունմանը հակված ազգային ու միջազգային կարծիքին: Նամակները, որ մեր քվեարկության վրա ճնշում գործադրելու համար մեզնից շատերին ուղարկել են ուրացողները, երկար բանախոսություններից ավելի դիպուկ են հավաստում Ֆրանսիայի՝ հստակ ու որոշակի գործունեություն ծավալելու անհրաժեշտությունը:

Ի վերջո, հայ համայնքի օրինական պահանջին գոհացում տալու համար լավ կլիներ, եթե Գեյսոյի 1990 թվականի հուլիսի 13-ի օրենքն ամբողջացվեր ու ուղղված լիներ ամեն տեսակի ցեղապաշտական, հակահրեական, օտարատյացության դրսևորումների դեմ:

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԼՈՒԱՆ – Շատ ճիշտ է...

ԳԻ ՀԵՐՄԻԵ – Նախ և առաջ այն բանի համար, որ նույն դատապարտությանն արժանանան բոլոր նրանք, ովքեր վիճարկում են որևէ այլ ցեղասպանության գոյությունը: Լիոնել Ժոսպենն արդեն հիշատակված նամակում նշում է, որ օրենքի նախագիծ է ներկայացնելու, և որ «ինքն անծամբ հետևելու է, որ քննարկման դրվի, ընդունվի լավագույն տարբերակը»: Այսօր դա անելու առիթն է, ինչո՞ւ հետաձգել: Հենց այդ նույն մտայնությամբ էլ կարելի է ընդարձակել Գեյսոյի օրենքի նախնական ընդգրկման սահմանները ու պաշտպանել ամեն տեսակ ցեղասպանության վերապրողների, Դրմադրության շարժման մասնակիցների բարոյական շահերը:

Ի սրտե ցանկանում եմ, որ այս առաջարկներն անուշադրության չմատնվեն, մեր խորհրդարանը քվեարկի հայ ժողովրդի ցեղասպանությունն ընդունելու և դատապարտելու օրենքի լավագույն ձևակերպման օգտին: Մենք հանուն հայ համայնքի, որի նկատմամբ տածում ենք բարեկամական համակրական զգացումներ, պարտավոր ենք կատարել այդ պատմական քայլն ու հենց դրանով ամրապնդել Ֆրանսիայի, Հայաստանի համագործակցությունը, խաղաղությունը: (*Արմատականների, Քաղաքացիների, Կանաչների խմբակցությունների բազմաթիվ բազկաթոռներից ծափահարություններ են լսվում*):

ՆԱԽԱԳԱՀ – Ձայնը տրվում է պարոն Պատրիկ Դևեջյանին:

ՊԱՏՐԻԿ ԴԵՎԵՋՅԱՆ – Ճիշտն ասած, ես երկար տատանվում էի նախքան քննարկմանը մասնակցելու որոշում կայացնելս: Նախ, որովհետև խորը, նույնիսկ չափազանց խորն են զգացումները, որ համակել են ինձ, բացի դրանից, ես հասկանում եմ, որ իմ ելույթը դժվարությամբ կիմաստավորվի, որն անխուսափելիորեն անհրաժեշտ է օրենքի բանաձև ընդունելիս: Ամենակարևորը՝ ես չէի ուզի, որ բարոյական բարձր ոգին, որ մեզ առաջնորդում է ցեղասպանությունն ընդունելիս՝ ազդեցությունների եռաթարկվելու պատճառաբանությամբ ճղճիմ մեղադրանքների արժանանա:

Ինչ խոսք, վերջին երկու օրերին, ելնելով այն բանից, ինչ թուրքական մամուլը գրում է մեր բոլորի մասին, ֆրանսիական բազմաթիվ ընկերակցություններ ձեռնարկում են, զգացի, որ իմ մտավախությունն անհիմն չէ: Այնուամենայնիվ, կարծում եմ, գոյություն ունի գերագույն պատճառաբանություն, որը վեր է ինձնից, որն ստիպում է, որ վերապրողների զավակների դյուրաբեկ ձայնն այս ամբիոնից լավի: Ճիշտ է, իմ անձը սոսկ պատահականություն կարող է համարվել, բայց առայժմ մեր խորհրդարանում ծագումով հայ ուրիշ ֆրանսիացի պատգամավոր չկա: Դրա պատճառներին կաշխատեմ անդրադառնալ:

Այս առավոտ, այս քննարկման պահին ինձ համար աջեր ու ձախեր չկան, կա հավերժական Ֆրանսիան (*ծափահարություններ*): Հենց այդ մասին եմ ես ուզում խոսել: Ես ուզում եմ խոսել Թուլուզի արքեպիսկոպոսի՝ կարդինալ Սալիեժի մասին, որի քարոզը գերմանական բռնազավթիչներն արգելեցին, որովհետև պնդել էր. «Հրեաները տղամարդ են, հրեաները կին են»: Ըստ էության, սովորական արտահայտություն է, բայց բարձրաձայն ձևակերպելն արգելված է եղել:

Այն մի քանի տողերը, որ մեզնից պահանջվում է քվեարկել այսօր, նույնպես շատ սովորական են, ինչպես հաճախ լինում է պարզ ճշմարտությունը: Բայց դրանք այստեղ արտաբերելու համար որքա՞ն երկար հարկ եղավ սպասել: Անգամ այս պատերից դուրս արտասանելու համար, չնայած շատ-շատերին, օրինակ Ֆրանսպրես գործակալությանը, դեռևս ահաբեկում են:

Երեկ քննարկվող օրենքի նախագծի կապակցությամբ մեր ազգային գործակալությունը պատմական իրադարձությունները հիշեցնելու համար երեսունվեց տողանոց հեռագրալուր էր տարածել, որտեղ նշված էր. «1915-ի ապրիլին ազգայնամոլ երիտթուրքերի կառավարությունը գործադրում է հայ ժողովրդին բնաջնջելու քաղաքականություն...»: Որոշ ժամանակ անց Ֆրանսպրեսը հեռագրալուրը փոխարինում է նորով, նշելով, որ նախկինը «սխալմամբ է ուղարկված եղել»: Խմբագրված տարբերակը նման է նախորդին, փոփոխված մոտավորապես երեք բառ՝ բնաջնջման քաղաքականությունը դարձել է «բռնի ձուլման քաղաքականություն»:

Մնում է դրվատել նման մեղմասացությունն ու շնորհակալություններ հղել Օրսեյի առափնյան:

Հա՞րկ կար, իրոք, ամոթը մի կողմ դնել այնպիսի պահին, երբ մենք մեր ֆրանսիացի լինելուց այնքան հպարտ ենք, որ երջանկությամբ ենք համակվում: Նրանք, ովքեր դեռևս երեկ հարցնում էին, թե ինչ օգուտ է տալու օրենքի նախագիծը, այսօր արդեն գիտեն և հասկանալու համար նոր, հիանալի հնարավորություն ունեն:

Ջուր են ձեռնարկվում խղճուկ, միտումնավոր մեքենայություններ, զուր են Քոլեժ դը Ֆրանսի թուրքագիտության ամբիոնը վստահում ժխտողականի՝ մեր երկրում ճշմարտությունն անընկճելի է: Այն երբեմն երկար ճանապարհ է կտրում, բայց, ի վերջո, աղբյուրի նման ժայթքում է այնպիսի տեղ և այնպիսի ժամանակ, որ ոչ ոք չէր սպասում: Ամեն դեպքում նա հագեցնում է բոլորի ծարավը, մի բան, որ այս առավոտ տեղի է ունենում մեզնից շատերի հետ:

Ֆրանսիան առանձնահատուկ երկիր է, դրա համար է նրա հողը հարազատ դարձել իմ ընտանիքին: Արևելքի քրիստոնյաների, ինչպես նաև բոլոր փաքրամասնությունների, հալածանքների համար Ֆրանսիան երկար ժամանակ մեծագույն հովանավոր է եղել:

Մարդու իրավահավասարության հռչակագիրն ամբողջ XIX դարի ընթացքում բոլոր վայրերում, որտեղ խտրականությունն էր իշխում, լայն արձագանք գտավ: Այն մշակույթի շողարձակումը, որը նպաստում էր ընկալել ընդհանրականը, շատ ընտանիքների դրդեց բարձր գնահատել ֆրանսերեն լեզուն, հետևողականորեն տանը գործածել: Այո, Ֆրանսիան մեծ հույս է եղել աշխարհում, այդ պատճառով է, որ նրա զավակներից շատերը դժվար արտասանվող անուններ ունեն:

Հենց Ֆրանսիան սիրելու, Ֆրանսիայի խոսքին հավատալու համար է նաև, որ հայերը հալածվել են իրենց արյանը ծարավի արևելյան աշխարհում:

Ցեղասպանությանը նախորդել են բազում նախճիրներ, որոնք սանձազերծելու համար պատերազմի պատրվակն անհրաժեշտ չի եղել: Մեծ տերությունները հանդես էին գալիս որպես միջնորդներ, և դիվանագիտական խաղը, միշտ նույն խաղը, հանգում էր որոշ զիջումների, որոնց վերամբարձ արտահայտությամբ «հաշտություն» էին կոչում: Ջոհերի հաճախ այնպիսի շահերի բախման պատրվակ էին դառնում, որ իրենք էլ չեն հասկանում:

Այն աստիճանի, որ Օսմանյան կայսրությունն ի վերջո վճռեց վերացնել նրանց, ովքեր միջազգային միջամտությունների մշտական առիթներ էին ստեղծում:

Առաջին աշխարհամարտի վերջում Ֆրանսիան Ազգերի լիգայից նախկին Օսմանյան կայսրության երեք տարածքների՝ Սիրիայի, Լիբանանի ու Կիլիկիայի կառավարման հանձնագիրն ստացավ, որոնք իր բանակը գրավել էր 1916 թվականից ի վեր: Ըստ էության, Կիլիկիան, որը բառարանները նաև «Փոքր Հայաստան» էին կոչում որովհետև մեծ թվով հայեր էին հաստատվել այնտեղ, շատ-շատ մոռացել էին: Այս ժամանակ հայերի մեծ մասը հավատաց ազատագրությանն ու Ֆրանսիայի դրոշին ապավինեց: Նախճիրի ընթացքում ֆրանսիական նավատորմիղը, երբեմն ի հեճուկս կառավարական հրամանների, խարիսխ էր նետում, փրկում հազարավոր հայերի: Դուք արդեն նշեցիք, պարոն պետքարտուղար, Ֆրանց Վերֆելն այդ դեպքերը ոգեկոչել է հռչակավոր, հրեաների ցեղասպանությանն ախտանշող «Մուսա լեռան քառասուն օրը» վեպում:

Սակայն բոլշևիկյան հեղափոխությունը, Վերսալի հաշտության պայմանագիրը չվավերացնելը, ինչպես նաև միջազգային քաղաքականության առանձնահատկությունները ստիպեցին Ֆրանսիային 1921 թվականին լքել Կիլիկիան և ազգաբնակչությանը:

Ես այդ ամենն ասում եմ առանց դառնության, ստեղծված իրավիճակը համաշխարհային ողբերգության հետևանքն էր, չնայած հայկական ցեղասպանության օրենքն ընդունելիս մեր երկիրը չպետք է մոռանա, որ մոտիկից առնչվել է այդ իրադարձություններին, որ այնտեղ զենքի եղբայրակցություն է գոյություն ունեցել՝ այլ կերպ ասած, ութսուներեք տարի անց, որոշ իմաստով, ուղղի անցյալի սխալները:

Ես այդ մասին ասում եմ նաև առանց Թուրքիայի նկատմամբ որևէ քշնամական մտայնության, քանի որ լավ գիտեմ՝ ներկա ղեկավարներն անցյալի ոճրի հետ կապ չունեն: Բայց երբ կարդում եմ Թուրքիայի արտաքին գործերի նախարարության խոսնակի վերջին հայտարարությունները մեր քննարկման կապակցությամբ, որոնցով սպառնում է Ֆրանսիային ու արդարացնում է հայկական ցեղասպանությունը, այն տպավորությունն եմ ունենում, որ այդ ղեկավարները ոչինչ չեն յուրացրել:

Ուզում եմ հիշեցնել, որ անցյալից ձերբազատվում են միմիայն նրան շիտակ նայելուց հետո, և որևէ ազգ զարգանում է սեփական սխալները ընդունելով:

Ճիշտ է, որ հարկ եղավ սպասել 1995-ին, որպեսզի մեր հանրապետության նախագահը վերջապես ճշգրիտ բառեր ասի Վիլ դ'Իվի շուրջկալի մասին: Բայց այդ օրը Ֆրանսիան անհամեմատ լավը, անհամեմատ մեծ դարձավ:

Իսկ Թուրքիային ես ամենայն լրջությամբ ուզում եմ ասել՝ անսացեք Ֆրանսիայի խոսքին, դա խաղաղության խոսքն է, որը հնչում է նաև ձեր ինքնաքուժման համար: Հայկական ցեղասպանությունն ընդունելով դուք կձերբազատվեք ուրիշի նկատմամբ էլ նույն կերպ վարվելու գայթակղությունից: Ես նկատի ունեմ քրդերին, նկատի ունեմ Կիպրոսն ու ամոթի վերջին պատը, որը, ինչպես Բեռլինում, երկու մասի է բաժանում եվրոպական մայրաքաղաքը: Եթե Թուրքիան ուզում է մուտք գործել Եվրոպա, թող սկսի արժեքները որդեգրելուց:

Հայկական ցեղասպանության ընդունումը Թուրքիայի համար փրկություն կլինի, որովհետև միայն այդ կերպ կսրբի ձեռքերի արյունը: Ինչ վերաբերում է Ֆրանսիային, այսուհետև բոլոր ճնշվածներին կարելի է ասել, որ վերածնունդ է ապրում և նրանց ձայները կխլացնեն առևտրականների և փերեզակների ձայները:

Դիվանագիտական կյանքի ինչպիսի պարզեցում, պարոն պետքարտուղար: Ֆրանսիայի բոլոր գալիք կառավարությունները պետք է մեկընդմիշտ վերջ տան մանվածապատությանը, այլախոսությանն ու համանունությանը:

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԼՈՒԱՆ – Շատ ճիշտ է:

ՊԱՏՐԻԿ ԴԵՎԵՋՅԱՆ – Այլապես բոլոր ցեղասպանությունները կարելի է վկայակոչել, բացի հայկականից:

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԼՈՒԱՆ – Այո, այդպես է:

ՊԱՏՐԻԿ ԴԵՎԵՋՅԱՆ – Միջազգային հարաբերություններն էլ պետք է պարզեցվեն: Մինչդեռ ձեզ լսելիս, պարոն պետքարտուղար, ես դա ասում եմ բարյացակամությամբ, որովհետև ձեզ ճանաչում ու հարգում եմ, այն զգացողությունն ունեցա, որ կառավարությունը չի ցանկացել ըստ արժանվույն գնահատել մեր այս քննարկումն ու ուղարկել է կառավարական պաշտոնակարգության ամենացածր աստիճանի ներկայացուցչին: Ես չեմ

դժգոհում, պարոն պետքարտուղար, ձեր տաղանդը կարողացավ լրացնել այդ բացը: Բոլոր դեպքերում առաջին անգամ է, որ մենք տեսնում ենք, թե ինչպես է նախարարն առանց ծավահարությունների իջնում ամբիոնից: Դրա պատճառն այն էր, որ դուք ստիպված եղաք այնպիսի զգուշավորությամբ պատրաստված մի տեքստ ընթերցել, ուր տեղ չէր գտել «ցեղասպանություն» բառը: Մենք բոլորս դա նկատեցինք ու ունկնդրեցինք, պարոն պետքարտուղար, այնպես որ չենք մոռանա:

(«Համախմբում հանուն հանրապետության» խմբակցության բազմաթիվ պատգամավորներ – Ճիշտ է, այդպես է):

ՄԱՐՏԻՆ ԴԱՎԻԹ – Իսկ առա՞ջ ինչպես էր:

ՊԱՏՐԻԿ ԴԵՎԵՋՅԱՆ - Դուք բավարարվեցիք սոսկ Ազգային ժողովի նկատմամբ կամքի դրսևորումով: Իրականում դուք ոչ թե մեզ, այլ Թուրքիայի հետ էիք խոսում: Ձեր ելույթը խորհրդարանին ուղղված չէր, նպատակ ուներ թուրքական պետության նկատառումների հանդեպ կառավարության ներողամտությունն արտահայտել: (*Ծափահարություններ «Համախմբում հանուն հանրապետության» և «Միություն հանուն ֆրանսիական ժողովրդավարության» խմբակցությունների մի քանի բազկաթոռներից*):

Պարոն պետքարտուղար, մենք սպասում ենք, որ բանաձևը մեր խորհրդարանում քվեարկելուց հետո անցնի սենատ: Հույս ունենք, որ այն չի կորչի Ունիվերսիտե և Վոժիրար փողոցների արանքում: Դա կախված է ձեզնից, ձեր կառավարությունից:

Մենք հույս ունենք նաև, որ կառավարությունն ի վերջո համարձակություն կունենա: Համարձակություն, որը համենայն դեպս, երկու հոգի գոնե արդեն ունեցել են: Խոսքը Ռընե Ռուբեի և Ժան-Պոլ Բրետի մասին է, ես լավ եմ հասկանում, թե ինչ վճռակամություն, գիտակցակամություն են դրսևորել նրանք, որպեսզի վիճարկեն ակնհայտորեն կառավարությանը դեմ այս բանաձևը: Ես մեծ հարգանք ու ակնածանք եմ տածում նրանց աթոռի նկատմամբ:

Նկատի ունեցեք մանավանդ, որ ցեղասպանության ընդունումը ձերբազատում է ծագումով հայ ֆրանսիացի քաղաքացիների համար: Այն նրանց ինքնության ընդունումն է, նրանք ցեղասպանության զավակներ են և այդպիսի համարում ունեն: Ու նաև հարազատների բարոյական վերջին շիրիմը, որովհետև ուրիշը երբեք չեն տեսել, պարոն պետքարտուղար: Այն նրանց թերևս ի վերջո թույլ տա բուժվել չհասկացված լինելու ծանր բարդույթից, որովհետև ողբերգությունը, որ ապրել են նրանք, անհնար է մեկուսացված կրելը: Այն իմաստով հայկական ցեղասպանության ընդունումը համակեցության և, ես չեմ վարանում բառն օգտագործելուց, սիրո վերջին դրսևորումն է, որը Ֆրանսիան կարող է ուղղել իր որոշ դժբախտ զավակների տառապանքները մեղմելուն:

Այս առավոտ ես «Համախմբում հանուն հանրապետության» խմբի պատգամավորների հետ, որոնք կողմ են քվեարկելու օրենքի նախագծին, ուզում եմ երկու կարճ բառ արտաբերել, որ հաճախ չի հնչում այս ամբիոնից և այսօր վերստանում է իր ամբողջական արժեքը. «Կեցցե՛ Ֆրանսիան»: (*Ծափահարություններ բազմաթիվ բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Ձայնը տրվում է պարոն Ժորժ Սարրիին:

ԺՈՐԺ ՍԱՐՐ – Պարոն նախագահ, պարոն պետքարտուղար, սիրելի գործընկերներ, այսօր ելույթ ունենալով այս ամբիոնից, Ազգային ժողովի կիսաբոլոր սրահում ակամա հիշում եմ Մելինե Մանուշյանին, որն ապրում էր 11-րդ թաղամասում, որտեղ ընտրվել եմ ես ու ճանաչել նրան, ում հետ եղել եմ բազմաթիվ ցույցերի, Իվրիի գերեզմանատանը, Վալերիենի բարձունքում, մի շարք ժողովների, խնջույքների: Այո, ես նրա մասին եմ մտածում, ում կորցրինք մի քանի տարի առաջ, ինչպես նաև քրոջը, որը նույնպես ինձնից հեռու չէր ապրում և ընդամենը մի քանի օր առաջ մահացավ: Ես մտածում եմ այդ կանանց մասին, որովհետև արտաքուստ դյուրաբեկ, բայց միաժամանակ ուժեղ ու համարձակ էին: Եվ իհարկե, մտածում եմ Մանուշյանի, Կարմիր ազդագրի հերոսների մասին: Ես մտածում եմ այն բոլոր կանանց ու տղամարդկանց մասին, որոնք, ինչպես քիչ առաջ ասում էր Պատրիկ Դևեջյանը, Ֆրանսիա եկան, որովհետև ազատության երկիր էր, և որոնք, չնայած դժվարություններին, տառապանքներին, ցավոք, նաև բախումներին, մեր կողքին, մեզ հետ իրենց տանն զգացին:

Ուրեմն առանց չափազանցության կարելի է ասել, որ այս օրը նշանակալից է:

Ի՞նչ իմաստ է ստանում, սակայն, Ֆրանսիայի՝ 1915 թվականի հայերի ցեղասպանության հանդիսավոր ընդունումը, որի կապակցությամբ այսօր բոլորս էլ մեր կարծիքն ենք արտահայտելու:

Խոսքն ամենից առաջ վերաբերում է պատմական ճշմարտության վերականգնմանը:

Երբ ես Կրեոզում, Գերեի Պիեռ-Բուրդան լիցեյում սովորում էի, մեր փոքրիկ դասընկերներից մեկը, որը ծագումով հայ էր, մի օր մեզ պատմեց պատմական հակամարտության՝ հայկական ցեղասպանության մասին: Երբ նա բացատրեց, որ այդ ցեղասպանությունը դեռևս ընդունված չէ, մենք ոչ միայն անհավանական, այլև անհնարին համարեցինք: Մանավանդ պատմական փաստերը համառ են, փաստերը միշտ էլ փաստ են մնում:

Հրապարակայնորեն ընդունելով 1915 թվականի դեպքերը, ըստ էության նրանց տալով պատշաճ ձևակերպում, ինչպես, մասնավորապես, վարվել են 80-ական թվականներին ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության ենթահանձնաժողովը և Եվրախորհրդարանը, մենք այսօր հնարավորություն ունենք միանշանակ ցուցաբերելու մեր կապվածության ուժը հիշողության հրամայական պարտքին, որը բացահայտում է ժողովրդավարությունների, հանրապետությունների, եթե նրանք իրոք այդպիսին են, և մանավանդ, ժողովուրդների մեծությունը:

Այսպիսով, խորհրդանշականորեն արտահայտելով մեր նվիրվածության խորությունը մարդու և քաղաքացու իրավունքների, ինչպես նաև համընդհանուր արժեքների նկատմամբ, որի, ավելի քան որևէ այլ բանի կրողն է անկասկած, մեր Հանրապետությունը, մենք կարող ենք նշանակալի նպաստ բերել հանրային մոռացման և ուրացման դեմ անընդհատ վերսկսվող պայքարին: Ցեղասպանությո՞ւն, այո՛, բնականաբար, և սա պետք է ասել առանց ողջակիզման բացառիկությունը չնչին չափով իսկ նվազեցնելու:

Հայերի՝ 1915 թվականի ցեղասպանությունն Ազգային ժողովում ընդունելով, մենք ծագումով հայ մեր հայրենակիցներին հանդիսավորու-

թյամբ հավաստած կլինենք մեր բարեկամությունը, համագործակցությունը, եղբայրությունն ու երախտագիտությունը: Այդ ընդունելով Ֆրանսիան կնպաստի հայերի և թուրքերի միջև երկարատև խաղաղության հաստատմանը, հավաստելով փոխադարձ ժողովրդավարության ամրապնդմանը մասնակցություն բերելու իր վճռականությունը:

Այս բնագավառներում անցյալի քողարկումը պարզապես կարգելակի առաջընթացի իրագործումը, որին մենք անդրադառնում ենք մեր ցանկությունները ձևակերպելիս:

Հայացքը, որ ժամանակակից Թուրքիան ուղղում է իր իսկ պատմությանը, բավականաչափ բարեփոխված չէ: Պետք է էլ ավելի բարեփոխվի: Թուրքիան գտնվում է Եվրոպայում, եվրոպական կառույցներում: Մենք ցանկանում ենք, որ երբ պահը հասնի, նա մեզ միանա Եվրոպական միությունում:

Թուրքիայի և Հայաստանին կապված լինելով բարեկամության, համագործակցության պատմական կապերով, որոնք ամրապնդելու հեռանկար ունեն, Ֆրանսիան, կարծում եմ, այս նկատառումով ընդունելով հայերի 1915-ի ցեղասպանությունը, կարող է նպաստել երկու երկրների հարաբերությունները նոր հիմքերի վրա կառուցելուն, որը Եվրոպայի հարավ-արևելքում, ալեբախվող Կովկասից ոչ հեռու գտնվող տարածաշրջանի կայունացման կարևոր գործոնն է:

Ահա նման մտայնությամբ է, որ ես, սիրելի՛ գործընկերներ, ցանկանում եմ, որ մենք միաձայն ընդունենք հայերի՝ 1915 թվականի ցեղասպանությունը:

Այն խմբակցությունը, որի մաս եմ կազմում «Քաղաքացիական շարժման» պատգամավորները, մեծագույն վճռականությամբ միանում է ընկերվարականների խմբի նախաձեռնությանը, չնայած ինքն էլ, այլ խմբավորումների հետ, համանման օրենքի նախագիծ ներկայացրել էր:

Սակայն, քանի որ ես արտահայտվում եմ ներքին բացարձակ ազատությամբ, ուզում եմ կառավարությանն էլ ողջունել, որովհետև գաղտնիք չէ՝ եթե մենք ուզում ենք օգտվել մեր պատգամավորական իրավունքից, որպեսզի կյանքի կոչենք մոգական դարձվածքը, կառավարությունը պետք է մեզ համամիտ լինի: Եվ ես չեմ պատկերացնում, այս մասին Պատրիկ Դևեջյանին ասում եմ ամենայն անկեղծությամբ ու սրտաբացությամբ, որ քննարկումն Ազգային ժողովում կսահմանափակվի:

ՊԻԵՌ ԼԵԼՈՒՇ – Երանի ձեր ձայնը լսելի դառնա:

ԺՈՐԺ ՍԱՐ – Կառավարությունը երկու երես չունի: Ես համոզված եմ, որ այս դեպքում խաբկանք չի կարող լինել:

Այո՛, սիրելի՛ գործընկերներ, մենք հանդիսավորությամբ ընդունում ենք պատմական հակամարտությունը՝ ցեղասպանությունը, որպեսզի վաղը թուրքերի ու հայերի հարաբերությունները նույնքան պարզ ու բնական լինեն, որքան մերն են, օրինակի համար, մեր անգլիացի կամ գերմանացի բարեկամների հետ:

Հետևաբար մենք քվեարկում ենք ներքին համոզմունով և միևնույն ապրումներով:

Այսօր առավոտյան, ձայնասփյուռով, Շարլ Ազնավուրը մի միտք արտահայտեց, որն ուզում եմ հիշատակել: Համառոտ նա հետևյալն ասաց. «Ամեն ինչ լավ է, իհարկե, բայց ես ցանկանում եմ, որ մի օր որևէ պաշտո-

նյայի, ասենք, Փարիզում Թուրքիայի դեսպանի հետ ինչ-որ բան կարողանայինք անել, որպեսզի ընդունվեր պատմական հակամարտությունը»:

Ես քվեարկում եմ, ուրեմն, այս մտայնության օգտին: Եվ ես քվեարկում եմ, որովհետև, այլափոխելով Լեոն Բլումի դարձվածքը, ուզում եմ ասել՝ հավատում եմ, հույս եմ փայփայում, իսկ հույս փայփայում եմ, քանի որ հավատում եմ (*ծափահարություններ բազմաթիվ բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Չայնը տրվում է պարոն Դիդիե Միգոյին:

ԴԻԴԻԵ ՄԻԳՈ – Պարոն նախագահ, պարոն պետքարտուղար, սիրելի գործընկերներ, «Ֆրանսիան հրապարակայնորեն ընդունում է հայերի 1915 թվականի ցեղասպանությունը»: Ես ուզում եմ արտահայտել պատիվը, հպարտությունը, հաճույքը, որ զգում եմ Ազգային ժողովի ամբիոնից այդ բառերն արտասանելիս, և պաշտպանել ընկերվարականների խմբի, հարողների օրենքի նախագիծը:

Երկար տարիներ հայերի ցեղասպանությունն ընդունել տալու նպատակ ունեցող բազմաթիվ առաջարկներ են ներկայացվել մեր ժողովին, բայց առաջին անգամ և դա, շնորհիվ ընկերվարականների խմբի և հարողների հետևողականության, մեկը հրապարակայնորեն քննարկվում է: Այս կապակցությամբ ես խիստ բարեկամաբար, բայց նույնքան վճռական կուզեի ասել Պատրիկ Դևեջյանին, որ սիրով կպաշտպանեմ այն կառավարությանը, որը մեզ լռության չի դատապարտում և ձգտում է, ինչպես նշեց Ժան-Պոլ Բրետը, որ ճշմարտությունը բացահայտվի ու վերահաստատվի: Ի վերջո խորհրդարանական բանավեճերը բավական երկար ժամանակ է արդեն նախաձեռնվում են հենց այն բանի համար, որ որոշ տարաձայնություններ սպառիչ ճշգրտումներ ստանան (*ծափահարություններ ընկերվարականների խմբի բազմաթիվ բազկաթոռներից*):

Ի՞նչ է մեզ մղել նման քննարկման: Նախ՝ պատմական փաստերը բացահայտելու ցանկությունը: Փաստը մնում է փաստ՝ դեռևս 1981-ին ասում էր Կլոդ Շեյսոնը: Իսկ տվյալ դեպքում փաստն այն է, որ Օսմանյան կայսրությունում ապրող հայերն իսկական ցեղասպանության զոհ են դարձել: Այս նույն ճշմարտությունը 1984թ. Իզեր կատարած ուղևորության ժամանակ Վիեննում, ուր գտնվում էր Լուի Սերմազի հրավերով, արտահայտել է Ֆրանսուա Միտերանը: Ֆրանսիայի՝ եվրոպական առաջին խոշոր երկրի ցեղասպանության ընդունումը Հունաստանի խորհրդարանից, Բելգիայի սենատից, Եվրախորհրդարանից հետո համահունչ է մեր պատմությանը, մարդու և քաղաքացու համընդհանուր իրավունքների հռչակագրի երկիրը մնալու ձգտմանը, որի գլխավոր նախապայմանը հարգանքն է անձի նկատմամբ:

Դրան հաջորդում է մեզ վրա ծանրացած հիշողության պարտքը դրսևորելու ցանկությունը: Ցեղասպանության ընդունումը մոռացման դեմ ուղղված քայլ է: Հիրավի այդ ահավոր ոճիրը մոռանալ նշանակում է յուրովի շարունակել և ըստ էության վիրավորանք է զոհերի, նրանց ընտանիքների հիշատակին:

Վերջապես այն մարդկային բանականությանն ուղղված կոչ է, որպեսզի նման նախճիրները, ցեղասպանությունները չկրկնվեն: Պատմությունը հավաստում է մեզ, որ ունակ է նաև շաղակրատանքի, այնպես որ ուրացման փորձերն ու ճիգերը չափազանց բացահայտ են, մենք իրավունք չունենք մեր համոզմունքները չարտահայտել:

Եթե դիվանագիտությունն օգտակար է, չափից ավելի դիվանագիտությունը մեղսակից է դառնում այն պահից, երբ սկսում է հասարակացնել արհավիրքն ու ոճիրը:

ՄԻՇԵԼ ՌԻՎԱԶԻ – Շատ ճիշտ է:

ԴԻԴԻԵ ՄԻԳՈ – Այս ասպարեզում էլ պետք է կարողանալ պատմությունից դասեր քաղել և դրանք բացատրել ամբողջ աշխարհի դիվանագետներին: Նախագիծը, որ ներկայացված է ձեզ, ենթարկվում է քննադատության. այն ներկա Թուրքիայի դեմ ուղղված բռնաճնշում է համարվում: Արդեն ասվեց՝ նման մտայնությունը բացարձակապես անհիմն է:

Մենք ցանկանում ենք մասնակցել, մեր նպաստը բերել թուրքերի և հայերի միջև երկարատև խաղաղության հաստատմանը: Մենք արժևորում ենք այն կապերը, որ մեզ միացնում են Թուրքիային և նրա ժողովրդին, քույլ ենք տալիս հուսալ, որ վաղը դրանք ավելի ամուր կլինեն, այնպես, ինչպես ուզում ենք մի անգամ ևս ի ցույց դնել առնչակցությունները, որ մեզ միավորում են Հայաստանին, հայ ժողովրդին:

Ձեզ ներկայացված օրենքի նախագծի հեղինակներից ոչ մեկը որևէ ձևով չի հավակնում պատասխանատվության ենթարկել այսօրվա թուրք ժողովրդին կամ պաշտոնեությանը, վիճարկել պայմանագրերով, միջազգային օրենսդրությամբ ընդունված սահմանները: Պարզապես մենք ուզում ենք Թուրքիային, նրա ներկա կառավարողներին ասել, որ տվյալ դեպքում երկրի նկարագիրը բնութագրվում է նաև Օսմանյան կայսրության հրահրած պատմականորեն ապացուցված փաստերն ընդունելու կարողությամբ, որի դեմ ընդվզել է նույնիսկ թուրքական հանրապետությունը: Մենք ձգտում ենք որոշակիորեն նշել, որ պատմությունը ժխտել նշանակում է ինքն իրեն չհարգել (*ծափահարություններ ընկերվարականների խմբի բազմաթիվ բազկաթոռներից*):

Ճշմարտությունը միշտ էլ ի վերջո հաստատում է իրեն, այնպես որ ավելի լավ է հնարավորին չափ արագ այն ընդունել:

ՄԻՇԵԼ ՌԻՎԱԶԻ – Շատ ճիշտ է:

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԲԼՈՒԱՆ – Այո, այդպես է:

ԴԻԴԻԵ ՄԻԳՈ – Ցեղասպանությունն ընդունելով՝ մենք փորձում ենք հասնել այն բանին, որ ներկա Թուրքիայի կառավարությունը փոխի իր պաշտոնական դիրքորոշումը:

Օրենքի նախագիծը ոմանք էլ այլ տեսակետից են քննադատում՝ բավարար չեն համարում: Մինչդեռ այն հսկայական քայլ կլինի հայ ժողովրդի՝ ոճիրներն ու ցեղասպանությունն ընդունել տալու համար մղած պայքարի պատմության մեջ, ոճիրներ ու ցեղասպանություն, որոնց զոհն է եղել ինքը:

ԺՈՐԺ ՍԱՐՐ – Շատ ճիշտ է:

ԴԻԴԻԵ ՄԻԳՈ – Իհարկե, լրացումներ կարող են լինել, բայց քույլ տվեք ինձ նկատել տալ, որ պարզ ձևակերպումները երբեմն լավագույնն ու ամենաազդեցիկն են:

ԱԼԵՆ ԿԱԼՄԱ – Անշուշտ:

ԴԻԴԻԵ ՄԻԳՈ – Ուրեմն այնպես չանենք, որ օրենքի նախագիծը խճողվի: Ամենակարևորը՝ պահը բաց չթողնենք: Այս դահլիճում բոլորս էլ լի ենք հայկական ցեղասպանությունն ընդունելու ցանկությամբ ու անհրաժեշտության գիտակցումով: Աշխատենք պահպանել այն վավերական

հայտարարության անկողմնակալ բնույթը, որը քվեարկման է ներկայացված մեզ: Այն է՝ «Ֆրանսիան հրապարակայնորեն ընդունում է հայերի 1915 թվականի ցեղասպանությունը» (*ծափահարություններ բազմաթիվ բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Ձայնը տրվում է պարոն Ֆրանսուա Ռոշեբլուանին:

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԲԼՈՒԱՆ – Պարոն նախագահ, պարոն պետքարտուղար, սիրելի գործընկերներ, ակնհայտ գոհունակությամբ ու խոր հուզմունքով ենք մենք այսօր ձեռնամուխ լինում ընկերվարականների խմբի ներկայացրած՝ հայերի ցեղասպանությունն ընդունելու օրենքի նախագծի քննությանը: Իրոք, բանաձևի ընդունումը, ինչպես վկայում են վերջին տարիների ընթացքում ներկայացված տարբեր առաջարկները, ցանկալի է խորհրդարանի բոլոր պատգամավորների համար: Այն մեր մեծ թվով հայրենակիցների սպասումին արձագանքող առաջին դրական պատասխանը կլինի:

Թող թույլ տրվի ինձ, ուրեմն, իմ ելույթի սկզբում հարգանքի տուրք մատուցել նախճիրի հարյուր-հազարավոր զոհերի հիշատակին, որը XX դարի առաջին ցեղասպանությունը պիտի դառնար:

Ես միանում եմ այն ապրումներին, որ այսօր զգում են մեր՝ ծագումով հայ հայրենակիցները, որոնց համար 1915 թվականի ջարդերի սկզբից 83 տարի անց կայանալիք ընդունումն աննախադեպ և ներհուն իրադարձություն է: Օրացուցային պատահականությամբ այն ժամերի տարբերությամբ համընկնում է 1918-ի մայիսի 28-ի Հայաստանի առաջին անկախության տարեդարձի օրվան: Մեր կառավարությունը համաձայնելով, որ բանաձևի քննարկումը տեղ կգտնի խորհրդարանի՝ նիստի լրացուցիչ օրակարգում, կարևոր և, հարկ է խոստովանել, փոքր-ինչ անսպասելի քայլ կատարեց, մասնավորապես, եթե դատելու լինենք պարոն վարչապետի վերջին՝ ապրիլի 24-ի հայտարարության ձևակերպումներից կամ մեր գործընկերներին՝ Ժանին Ժամբուի, Ժան-Պոլ Բրետի և Գի Թեյսիեի, իմիջիայլոց, վերջինս ներողություն է խնդրում արտասահմանում գտնվելու համար, հարցապնդումների՝ հենց իրենց կառավարության անդամների այստեղ տրված պատասխաններից:

Իհարկե, չի կարելի ասել, որ ներկա կառավարության դիրքորոշումը զգալիորեն տարբերվում է նախորդներից, մանավանդ որ քննարկվող հարցի կապակցությամբ մենք երկարատև սպասումներ ենք ունեցել…

ՊԻԵՌ ԼԵԼՈՒՇ – Ցավալի է, բայց այդպես է:

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԲԼՈՒԱՆ – Ի վերջո, բոլորն էլ հետևողականորեն ու համառորեն խուսափել են «ցեղասպանություն» բառն օգտագործելուց:

Ֆրանսիան Հայաստանին կապված է պատմական առնչություններով ու դարավոր բարեկամությամբ, մանավանդ 1915-ի ողբերգությունից հետո, երբ տասնյակ հազարավոր հայեր այս երկիրը ապաստարան դարձրին և մեծապես նպաստեցին, որ մեր հայրենակիցները չափազանց զգայուն դառնան ցեղասպանության ընդունման նկատմամբ:

Ուստի Ֆրանսիան՝ մարդու իրավունքների օրրանը, կարող էր երկար ժամանակ լռություն պահպանել, կարող էր չանսալ մի ամբողջ ժողովրդի ձայնին, այն դեպքում, երբ աշխարհով մեկ ուրիշ ժողովուրդներ արձագանքում էին: Ֆրանսիայի հայ համայնքը, որի այս դահլիճում գտնվող

ներկայացուցիչներին ուզում եմ ողջունել այս առավոտ, բացի իր օրինակելի միաձուլումից, մեզ մասնակից դարձրեց ցեղասպանության միջազգային ընդունման պայքարին, որն արտահայտվում է չափազանց ծավալուն, պատմականորեն վիճարկելի հարցի հեռավոր հետապնդմանն անհամեմատ գերազանցող գործունեությամբ:

Խոսքը, եկեք չխաբվենք, վերաբերում է համընդհանուր ընդգրկմամբ պայքարին, քանի որ XX դարի ցեղասպանություններն անքակտելի ամբողջության են դարձել:

Ես հասկանում եմ արտաքին գործերի հանձնաժողովի տարակուսանքը, քանի որ, ինչպես իր հիանալի զեկուցագրում ընդգծեց Ռընե Ռուքեն, նախնական ձևակերպումը երկար ժամանակ մի կողմ էր դրվել, հետո ենթարկվել կամայական խմբագրման: Ակնհայտորեն յուրաքանչյուր բառ «կշռադատվել» ու «հիմնավորվել» էր:

Հիրավի, չի կարող կասկած չհարուցել այն բանաձևի ներգործությունը, որ կանոնակարգող նշանակություն չունի, սահմանափակվում է սոսկ խորհրդանիմաստային բնույթի սովորական հայտարարությամբ, որի խմբագրողները, հենց թեկուզ ըստ արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Ժակ Լանգի խոստովանության, առաջնորդվել են դիվանագիտական նկատառումներով:

Բայց Ֆրանսիան կարո՞ղ է արդյոք երկար ժամանակ այսպես քողարկել հայկական ցեղասպանությունն իրագործած մեղապարտ պետության պատասխանատվության հարցը: Պատասխանատվության հասկացությունն ընդհանուր է իրավաբանական բոլոր համակարգերում, և առնվազն տարօրինակ կլիներ մի այնպիսի ուղի գտնել, որն այն շրջանցեր:

Ակս առումով էլ հնարավո՞ր է անընդհատ հրաժարվել ոճրագործության հեղինակներին մատնացույց անելուց:

Տասը տարի է արդեն, ես այս ամբիոնից իմ տարբեր ելույթների ընթացքում պարբերաբար անդրադառնում եմ հայկական ցեղասպանությանը մասնավորապես, մարդկության դեմ գործված մյուս ոճիրներն ընդհանրապես ընդունելու անհրաժեշտությանը, ինչպես նաև այնպիսի կազմակերպություն ստեղծելու անխուսափելիությանը, որն ուրացման նկրտումներից պաշտպանի այդ հանցագործությունների բոլոր զոհերի հիշատակը:

Ինչպես XX դարի ցեղասպանության ըմբռնման իր հիանալի վերլուծականում շատ ճիշտ բացահայտել է դոկտոր Իվ Տերնոնը, հայկական ցեղասպանության բոլոր փուլերը կրում են ուրացման դրոշմը: Մինչդեռ փաստերն ուրանալ նշանակում է ուրանալ նույնիսկ զոհերի գոյությունը: Սա ընդհանրական ուրացում է, որը միաժամանակ հիմնված է պատասխանատվությունը թոթափելու, ինչպես նաև ցեղասպանության նպատակները ժխտելու վրա: Այս դեպքում զոհը հանցավոր է դառնում, նա պիտի ապացուցի, որ բռնության է ենթարկվել, այլապես ջարդերը պատերազմի պատահականության հետևանք կարող են համարվել:

Ահա այդպես, արդեն ութսուներեք տարի է, որ Թուրքիան, հույսը դնելով ժամանակի մոռացկոտության, ներողամտության, անտարբերության ներգործության վրա, հետևողականորեն ու բացահայտորեն ձգտում է վերացնել 1915-ից մինչև 1922 թվականը պատմականորեն իրագործված

ոճրի բոլոր հետքերն ու վկայությունները: Մեզնից ամեն ոք, ելնելով վերջին օրերին ստացած փոստից, կարող է պատկերացնել անբարեխղճությունն ու ապատեղեկատվության ծավալը, որ տիրում է այդ ասպարեզում: Հնարավո՞ր է անտարբեր մնալ նման ահաբեկչական նկրտումների նկատմամբ:

Իրոք, եթե ոչ մի խորհրդարան պատմությունը սրբագրելու, պատմաբանների ճշգրտելու վճռականությունը չունի, արդարադատ երկրում, ճիշտ հակառակը, օրենսդրի պարտքը պետք է լինի ամեն ինչ անել զոհերին, նրանց հիշատակը պահպանելու, նման ոճիրները կանխարգելու համար: Ի վերջո, հենց դա է այն բանաձևի իմաստը, որը քննարկվող հարցի առնչությամբ իմ գործընկերներս Ռոլան Բլյումի և Պատրիկ Դևեջյանի հետ ձևակերպել ենք, այս առավոտ ներկայացրել ձեր ուշադրությանը:

Պարոն պետքարտուղար, բանաձևի ընդունումը, այսպիսով, առաջին փուլն է, պիտի հաջորդի մեր իրավունքի վերահաստումը և հնարավորություն ընձեռի այսօր դեռևս անտեսվող իրավաբանական սկզբունքի իրագործման համար: Բանաձևը մեզ պարտադրում է մոռացության չմատնել այս ցեղասպանությունը և միջազգային ատյանների միջոցով նպաստել Հայաստանի ու Թուրքիայի մերձեցմանը, խաղաղության հաստատմանը:

Այն պահին, երբ մեր Ազգային ժողովը Ռուսաստանի Դումայից, Հունաստանի խորհրդարանից ու Բելգիայի սենատից հետո հանդիսավոր կերպով արտահայտվելու է ի նպաստ հայերի ցեղասպանության ընդունման, պետք է նկատի ունենանք, որ մենք միշտ ենք հետևողականորեն ձգտել դրան և, մի կողմ դնելով քաղաքական տարակարծությունները, միակամ հաստատենք օրենքի բանաձևը, չնայած այն ունի ակնհայտ թերություններ, մասնավորապես՝ քսաներորդ դարի առաջին ցեղասպանության սանձազերծողներին չհիշատակելու առումով:

Ահա թե ինչու ես պիտի քվեարկեմ ի նպաստ այն նախագծի, որը մեզ է ներկայացված այսօր (*ծափահարություններ բազմաթիվ բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Ձայնը տրվում է պարոն Պիեռ Լելուշին:

ՊԻԵՌ ԼԵԼՈՒՇ – Պարոն նախագահ, պարոն պետքարտուղար, սիրելի գործընկերներ, հարցը, որ խորհրդարանական նախաձեռնությամբ մեզ զբաղեցնում է այս առավոտ, այնքան հիմնարար է պատմության, արդի իրադարձությունների՝ ես մտածում եմ Ռուանդայի, Կոսովոյի մասին, միջուկային մրցավազքի, որին այս օրերին մենք ականատես ենք լինում Հնդկական մայրցամաքում, ազգային ու կրոնական հակամարտությունների, որոնք առկա են մեր հաստատություններում, վերջապես, մեր արժեքների, ժամանակակից Թուրքիայի և Հայաստանի հարաբերությունների առումով, որ ինձ հատկացված մի քանի րոպեները ճշմարտությունն ըստ էության բացահայտելուն չեն բավականացնի:

Թույլ տվեք ուրեմն ինձ, առանց անդրադառնալու ցեղասպանության և այն իրադարձությունների բնութագրմանը, որ տեղի են ունեցել դարասկզբում, որոնք արդեն արծարծեցին բազմաթիվ գործընկերներ, կարճ, բայց իմ կարծիքով ոչ ծեծված մտահանգումներով բացատրել են մեր քվեարկության իմաստը:

Այս քվեարկությունը, սիրելի պարոն Միգո, Պատրիկ Դևեջյանը հենց նոր շատ ճիշտ նշեց, ոչ աջակողմյան է, ոչ էլ ձախակողմյան: Այն մի

ամբողջ ժողովրդի հիշողության նկատմամբ սրբազան պարտականության հիմնավոր արտահայտություն է, ժողովուրդ, որին մենք ներկայացնում ենք այստեղ: Ես նկատի ունեմ թե՛ հայերին և թե՛ մեր արժեքներն ու ազգային պատմությունը:

Քվեարկելիս ես, կարծում եմ նաև անկախ կուսակցական պատկանելությունից դուք բոլորդ, այն ներհուն գիտակցությունը պիտի ունենաք, որ մեր հանրապետության հիմնաքարը հանդիսացող ընդհանրական գաղափարների պաստառին, գաղափարներ, որոնք արդեն երկու դար է իմաստավորում են Ֆրանսիայի կարգախոսը, գրում ենք ազատության, խաղաղության, ժողովուրդների իրավահավասարության բացառիկ պատգամը:

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵՖԼՈՒԱՆ – Լավ ասացիք:

ՊԻԵՌ ԼԵԼՈՒՇ – Մեր քվեարկությունը չպետք է թշնամանքի, առավել ևս դատապարտման արտահայտություն համարվի 1998 թվականի Թուրքիայի նկատմամբ:

Այս հանգամանքը պարզ է ու որոշակի: Ես բավական ծանոթ եմ ներկա Հայաստանին, Թուրքիային և սառը պատերազմի ավարտից հետո մեր աշխարհամասի ապագան չեմ կարողանում պատկերացնել առանց Թուրքիայի ու Եվրոպական միության սերտ, բարեկամական կապերի:

Ժամանակակից Թուրքիան, որը մահմեդական, բայց աշխարհիկ երկիր է, որը վաղը, չեմ կասկածում, ազատ ու ժողովրդավարական կդառնա, ըստ իս, արժանի է եվրոպական մեծ ընտանիքի անդամը դառնալու: Մենք բոլորս ճակատագրական սխալ գործած կլինենք, եթե մեր խաղաղասիրության ու ժողովրդավարության սկզբունքներին հավատարիմ մնալով հանդերձ, ելնելով ցեղային, կրոնական պատճառաբանություններից, Թուրքիայի առջև փակենք Եվրոպական միության դռները:

Դրա փոխարեն մենք Թուրքիայից, ինչպես անդամակցել ցանկացող մյուս երկրներից, իրավունք ունենք պահանջելու, որ իրագործի որոշ տնտեսական սկզբունքներ, այնպիսի հիմնական քաղաքական պայմաններ, ինչպիսիք են հարգանքը ժողովրդավարության և ազգային փոքրամասնությունների նկատմամբ, խաղաղության պահպանումը, այդ թվում և մանավանդ՝ Հայաստանի հետ, որը, ինչպես հայտնի է, շրջափակման զոհ է:

Հայաստանի հետ խաղաղության հաստատումը անխուսափելիորեն պիտի իրականացնի հիշողության վերարժարժմամբ, որը թուրքերն ու հայերը միասին պիտի կատարեն այն ամենի նկատմամբ, ինչ տեղի է ունեցել 1915-ին:

Հնարավո՞ր է մի պահ նույնիսկ պատկերացնել, որ ֆրանս-գերմանական հաշտությունը կկայանար, Եվրոպական միությունը որպես այդպիսին գոյություն կունենար, եթե հետ-պատերազմյան Գերմանիան հիշողության հիմնարար աշխատանք չկատարեր Երկրորդ աշխարհամարտում գործված ոճիրների ընդունման ուղղությամբ:

Ահա այս է մեր քվեարկության իմաստը:

Եվ վերջապես երրորդը՝ ես գիտեմ, մեզ նման մեղադրանքներ կուղղվեն, քվեարկությունը ֆրանսիական պատգամավորների քաղաքական նպատակներ հետապնդող շնորհը, նվերը չէ որևէ՝ տվյալ դեպքում Ֆրանսիայի հայ համայնքին: Սիրելի գործընկերներ, մեր երկրում, իր օրինակելի միաձուլումով, ազգի ու հանրապետության նկատմամբ ցուցաբե-

րած ևվիրվածությամբ, այստեղ հասնելուց առաջ ապրած ողբերգական պատմությամբ այս համայնքը վաղուց ի վեր արժանացել է մեր ժողովրդի հագանքին ու մեծարանքին:

Բայց գոնե, ըստ իս, դա չէր մեր այսօրվա քվեարկության գլխավոր պատճառը: Նույնը հանրապետության նախագահի 1995 թվականի հունիսին Վել դ'Իվում արտասանած ճառին է վերաբերում, որով իր հարգանքն էր մատուցում Ֆրանսիայի հրեական համայնքին՝ Վիշիի վարչակարգի ոճիրների, մեր երկրում իրագործված ցեղասպանության մեղսակցության համար:

Ժողովուրդների հիշողության պահպանման դժվարին աշխատանքը չի կատարում այս կամ այն համայնքին «հաճույք» պատճառելու կամ բարոյական օրինակելի վարքագիծը բարձր գնահատականների արժանացնելու միտումով: Պետական այրերը դա արել են, օրենսդիրն այսօր անում է, որովհետև անհնար է կիսաճշմարտության կամ կեղծիքի վրա խաղաղություն, ժողովուրդների ապագա կերտել: Քարեբախտաբար քաղաքականությունը երբեմն միանում է բարոյականությանը: Այս առավոտ հենց դա է տեղի ունենում: Սիրելի գործընկերներ, մի ուրիշ ժողովրդի մատյան, որը շատ է տանջվել պատմության ընթացքում, ավետում է «Հետ նայել՝ նշանակում է նախքան ապրելն ապագան տեսնել»:

Սառը պատերազմն ավարտվեց և նրա հետ անցնող դարի գաղափարական երկու համակարգերի թշնամանքը, ընդ որում, երկուսն էլ եվրոպական էին: Աշխարհը բուժում է իր հին վերքերը՝ ցեղային ատելությունն ու կրոնական մոլեռանդությունը, ուժային հավակնոտությունները, հասարակական-տնտեսական հակամարտությունները, և այս ամենը, ցավոք, փոխարինում է զանգվածային ոչնչացման զենքի ծավալումով...

Ասիայում Բալկաններից մինչև Հնդկական մայրցամաքը, Աֆրիկայից Մերձավոր Արևելք մենք անընդհատ պատերազմների, ցեղային զտումների ու նույնիսկ ցեղասպանությունների ենք ականատես լինում: Կոֆի Անանը վերջերս, հունիսի 11-ին, հայտարարում էր. «Ամբողջ մի ժողովրդի բնաջնջումը ցեղային, ազգային պատճառներով մեր օրերի երևույթ է և այնպիսի դաժան իրողություն, որը պատմական պատասխան է ակնկալում»: Միրելի գործընկերներ, ասվածին վճռականորեն կավելացնեի՝ այդ իրողությունն ակնկալում է նաև Ֆրանսիայի պատասխանը, որը և մենք ձևակերպում ենք այսօր, ուստի, ես ինձ, որպես պատգամավոր, հպարտ եմ զգում, որ նպաստում եմ ճշմարտության ընդունմանը (*ծափահարություններ բազմաթիվ բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Ձայնը տրվում է տիկին Մարտին Դավթին:

ՄԱՐՏԻՆ ԴԱՎԹԻ – 1915 թվականի ապրիլի 24-ի Կոստանդնուպոլսի շուրջկալը հայ ժողովրդի համար՝ տարիներ տևած, մանրամասնորեն նախապատրաստված բնաջնջման, բռնագաղթի, կոտորածների սկիզբը դարձավ, որոնք շարունակվեցին մինչև 1922-ը և մի ամբողջ ազգության երկու սպանդի պատճառը դարձան: Սակայն դարի առաջին ցեղասպանությունն աննկատ անցավ Եվրոպայի հզոր պետությունների համար, քանի որ նրանք ամբողջովին կլանված էին համաշխարհային առաջին հակամարտությամբ: Ուրեմն՝ ի սկզբանե հիշողության՝ տարտղնված ու անդամահատված ժողովրդի, համայն մարդկությանը ցնցած բարբարոսության, բայց նաև այպանված հիշողության խնդիրը, քանի որ ոմանք ձգտում էին

ժխտել բացահայտ իրողությունը, այն «պատմության հայկական վարկած» կոչել, ծառացած էր:

Հայերը, երբ քսաներկու քվականներին Ֆրանսիա հասան, ամեն ինչ կորցրել էին՝ իրենց ընտանիքը, ունեցվածքը, արմատների մեծ մասը: Նրանցից շատերը վերջնականապես հաստատվեցին մեր երկրում, վերակառուցեցին իրենց կյանքը: Սա հատկապես վերաբերում է երրորդ սերնդին, որը հանդես եկավ այդ ժամանակաշրջանի վրա ծանրացած լռության քողը բարձրացնելու վճռակամությամբ:

Այժմ Ֆրանսիայի հայ համայնքը միաձուլման օրինակ է, որն աչքի է ընկնում մեր հասարակության բոլոր բնագավառներում ի հայտ եկած գործուն ակտիվությամբ, միաժամանակ հարուստ ու հիանալի մշակույթը պահպանելու համար ներդրած նկատելի ջանքերով:

Ուստի, կարելի է ցավել, որ Ֆրանսիան, որը նման հյուրընկալություն է ցուցաբերել վերապրողների և նրանց հետնորդների նկատմամբ, ցեղասպանությունն ընդունելն այնքան ուշացրել է: Երկար ժամանակ դա բացատրում էին դիվանագիտական անխուսափելի պարտադրանքներով, չնայած ժամանակին երիտթուրքերի իշխանության սանձազերծած ցեղասպանությունն ընդունելը չի նշանակում մեղադրել թուրք ժողովրդին կամ նրա ներկա կառավարությանը, ճիշտ այնպես, ինչպես նացիզմը դատապարտել չի նշանակում գերմանացիներին փնովել:

Ընդհակառակը, ժողովուրդները և պետությունները մեծապես կշահեն, եթե իրենց հարաբերությունները կառուցեն որոշակիության և անցյալի համարձակ վերլուծման հիմքի վրա: Այդ է վկայում ֆրանս-գերմանական ներկա անկեղծ բարեկամությունը: Բացի դրանից, ինչպես 1984թ. հունվարից ի վեր նշում էր Ֆրանսուա Միտերանը, պատմությունն ուսուցողական բնույթ պիտի կրի: Ցեղասպանությունը, ովքեր էլ լինեն հեղինակները, ինչպիսին էլ եղած լինի իրավիճակը, ժամանակաշրջանը, անընդունելի է: Նրանք, ովքեր ժխտում են նման ոճիրներ, ոչ թե մեղմում, այլ ընդհակառակը՝ բորբոքում են ատելության կրակը: «Պատմության հայկական վարկած» գոյություն չունի: Փաստերն անժխտելի են, ողբերգական:

Հայերի ցեղասպանությունն առաջինն էր մեր դարում, որը, դժբախտաբար, պատմության ընթացքում հրեաներից մինչև գնչուները, Կամբոջայից Հարավսլավիա ու իննսունական քվականներ Ռուանդան ծգվող ահավոր շարունակությունն ունեցավ: Ուստի և մենք մեզ թույլ ենք տալիս մտածել, որ եթե 1919-ից ի վեր միջազգային հանրությունը վճռակամորեն պահանջեր դահիճների դատապարտումն ու պատժումը, թերևս այսօր ստիպված չլինենք այդ արհավիրքին անդրադառնալ, կեղծիքի դեմ պայքարել:

Ուրեմն Ֆրանսիան պիտի վերջնականապես վճռակամություն ի հայտ բերի, պաշտոնապես ընդունի հայկական ցեղասպանության իրողությունը: Շուտով դա, իհարկե, տեղի կունենա, և մեզնից յուրաքանչյուրն օրինական հպարտություն կզգա, քանի որ քայլը, որ մենք կատարելու ենք այսօր, որքան կարևոր, նույնքան էլ անխուսափելի, ավելին՝ արժանապատվության խնդիր է: Ես չեմ կասկածում՝ Ֆրանսիան, քանի որ ամենից շատ է ջատագովում ազատությունը, իր նման, համարձակ կեցվածքին հետևող բազմաթիվ երկրներ կունենա:

Ցեղասպանության ընդունումը, մի քանի առումով, բարոյական պարտականություն է՝, նախ մարդկության հանդեպ, որպեսզի, ինչպես արդեն ասացի, նման ոճիրներ այլևս չկրկնվեն, և ապա՝ Ֆրանսիայի հայ համայնքի, որը չտրվելով հիշաչարության կամ համակերպության, համբերատար, հետևողականորեն նշանակալի աշխատանք է կատարում, որպեսզի մարդկության հիշողությունն այն շիրիմը դառնա, որն ինքը հաճախ չի կարողացել շնորհել իր նախնիներին: Այլ կերպ ասած, այսօր ես ներքին խռովքով ուզում եմ հարգանքս մատուցել մի համայնքի՝ կանանց ու տղամարդկանց խիստ օրինակելի, համախմբված միասնականությանը, որը տպավորիչ պայքար է մղում, մաքառում հանուն արժանապատվության:

Սիրելի գործընկերներ, բանաձևը քվեարկելիս ինքներս մեզ հպարտ զգանք, որ մարդկային իրավունքների պաշտպանության երկրի քաղաքացիներն ու ընտրյալներն ենք (*ծափահարություններ բազմաթիվ բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Ձայնը տրվում է պարոն Ժան-Պիեռ Ֆուշեին:

ԺԱՆ-ՊԻԵՌ ՖՈՒՇԵ – Պարոն նախագահ, պարոն պետքարտուղար, սիրելի գործընկերներ, երկար տարիներ ի վեր ես ու գործընկերս՝ Անդրե Սանտինին չենք կարողանում անտարբեր մնալ ծագումով հայ ֆրանսիացիների այն կոտորածները ցեղասպանություն համարելու ձգտման նկատմամբ, որոնց 1915 թվականին զոհ գնացին իրենց հարազատները: Այսօր մենք բախտավոր ենք մեզ զգում, որ վերջապես այս պատերի ներսում այդ թեման քննարկելու հնարավորություն ունենք:

Ես պատկանում եմ սրահում նստած բավական մեծաքանակ անձանց թվին, ովքեր ծանոթ են հայ ժողովրդի կրած տառապանքներին: Մեզնից շատերն են ունկնդիր եղել ծերունիների, ովքեր պատմել են իրենց ապրած ամենաճակատագրական դրվագները՝ հալածված, կոտորակված, աքսորի ճամփաները քշված ամբողջական գերդաստանների մասին, որոնց յուրաքանչյուր անդամ վերապրել է այնպես, ինչպես կարողացել է՝ փրկելու համար իր սեփական կյանքն ու իր ժողովրդին: Բայց եթե մենք բոլորս պատկերացնում ենք նման իրավիճակի ծանրությունը, պիտի գիտակցենք նաև, որ հայերը, որոնք տառապել են իրենց մարմինների, այժմ մտքով են տառապում, որովհետև արդարության չեն հասնում: Հիրավի շատ քչերն են բարձրաձայն պնդում, որ այն, ինչի զոհ են նրանք դարձել, ցեղասպանություն է:

Այսօր հնարավորություն տանք, ուրեմն, հայերին, որպեսզի վերագտնեն հոգեկան անդորրը, քանի որ նրանք Թյուրքիայից, այն երկրից, որը բնակության համար ընտրել են իրենք կամ իրենց հայրերը, ակնկալում են, որ ընդունի Օսմանյան կայսրության օրոք տեղի ունեցած ցեղասպանությունը և ոչ թե, պարոն պետքարտուղար, ուզում են ծանոթանալ Ազգային ժողովի ներքին գործունեությանը:

ԱՆԴՐԵ ՍԱՆՏԻՆԻ, ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԼՈՒԱՆ – Շատ ճիշտ է:

ԺԱՆ-ՊԻԵՌ ՖՈՒՇԵ - Այժմ, երբ Եվրոպայում խաղաղություն է տիրում, և եվրոպական կազմակերպությունն իրավացիորեն ձգտում է տևական խաղաղության ապահովման, ցեղասպանության բնորոշումը, որը նշանակում է որոշակի ժողովրդի հետևողականորեն կազմակերպված բնաջնջում, մեր գիտակցությանը գրեթե անհասանելի է: Մենք ավելի հեշտությամբ հակվում ենք անցյալն անտեսելուն, որովհետև հույս ենք փայ-

փայում, որ նման երևույթ այլևս տեղի չի ունենա ո՛չ հայերի, ո՛չ էլ որևէ այլ ժողովրդի կյանքում:

Ծագումով հայ ֆրանսիացիներն ամեն օր հավաստում են, որ հաջողությամբ միաձուլվում են ֆրանսիական իրականությանը: Նման միաձուլումն իրավացիորեն օրինակելի կարելի է համարել: Բայց դա նշանակում է նաև, որ մենք պետք է հասկանանք, ընդունենք, իմանանք նրանց պատմությունը: Հենց այդ պիտի անենք այսօր՝ առանց ամբոխավարության ընդունելով փաստերը, միաժամանակ այն, որ աշխարհը, կառավարությունները, մտայնությունները փոխվում են, և այսօրվա մարդիկ երեկվանները չեն:

1915 թվականի ողբերգական իրադարձություններից ցեղասպանության երևույթն առավել քան անհրաժեշտ է դատապարտել, և, ըստ իս, դատապարտումը պետք է կատարվի անկախ պատմական իրավիճակից, զոհից, այլ տարբեր պատճառաբանություններից:

Ահա թե ինչու Կլամարի, որի քաղաքապետն եմ ես, քաղաքային խորհուրդը հայերի ցեղասպանությունն ընդունելու ցանկություն որդեգրեց: Եվ եթե որևէ քաղաքային խորհուրդ է նման ձգտում արտահայտում, կարելի՞ է պատկերացնել, որ մի ամբողջ երկիր, տվյալ դեպքում Ֆրանսիան՝ մարդկային իրավունքների և ազատության հայրենիքը, անտարբեր մնա:

Հենց այդ պատճառով ես մեկն եմ նրանցից, ովքեր ամեն ապրիլի 24-ի հայ համայնքի հետ ոգեկոչում են ողբերգական իրադարձությունները: Այդ պատճառով նաև 1996 թվականի ապրիլին, իմ բազմաթիվ գործընկերների նման, ստորագրել եմ ցեղասպանության ընդունման ֆրանսիական կոմիտեի կոչը:

Այս ընդունումն արտասահմանում դանդաղ է առաջ ընթանում: Միայն մի քանի կառավարություններ կամ խորհրդարաններ են քննարկվող հարցի նկատմամբ հստակ դիրքորոշում դրսևորել, ընդ որում, տարբեր ձևերով, սովորական հայտարարությունից սկսած, մինչև բանաձևի ընդունումը: Ուստի, Ֆրանսիայի համար պատվի խնդիր է ոչ միայն պատկանել այդ ոճիրը պաշտոնապես ընդունած փոքրաքանակ երկրների թվին, այլև ազգային օրենսգրքում արձանագրել ընդունումը:

ՄՈՐԻՍ ԱԴԵՎԱ-ՊԵՌՈՖ – Շատ ճիշտ է:

ԺԱՆ-ՊԻԵՌ ՖՈՒՇԵ – Հայերի երկար սպասումը զուր չի անցնի, և բոլոր ցեղասպանությունները, անհանդուրժողականությունները, մի ժողովրդի՝ մի ուրիշի բռնաճնշելու, բնաջնջելու փորձ կատարելու իրողությունները նկատի ունենալով է, որ ես «Ֆրանսիական ժողովրդավարական միություն» խմբակցության հետ քվեարկելու եմ բանաձևի օգտին (*ծափահարություններ բազմաթիվ բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Ձայնը տրվում է պարոն պետքարտուղարին:

ՆԱԽԿԻՆ ՍԱՐՏԻԿՆԵՐԻ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ – Դուք նախաձեռնություն եք հանդես բերել, բանավիճել, վերլուծել, ձեր պահանջները ձևակերպել և այժմ քվերակելու եք: Սա է ժողովրդավարությունը: Բնականաբար, կառավարությունը նույնպես հավատարիմ կմնա ընդունված ընթացակարգին՝ սենատի նախագահական նիստում կքննարկվեն բանաձևը բարձրագույն ժողովի աշխատանքային օրակարգ մտցնելու պայմանները: Այն, ինչ սկսվեց այս առավոտ, պետք է շարունակվի:

ՌԸՆԵ ՌՈՒՔԵ (*խոսնակ*) – Շատ ճիշտ է:

ՆԱԽԿԻՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ – Սա նույնպես ժողովրդավարություն է:

ԴԻԴԻԵ ՄԻԳՈ – Իրավացի եք:

ՆԱԽԿԻՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ – Ժողովրդի ինքնիշխան լինելու իրավունքն իրականություն է մեր երկրում: Հիշողության պարտքն անհրաժեշտություն է: Մենք դա գիտակցում ենք Հաղթակամարի ներքո տեղի ունեցած ոգեկոչման տարբեր արարողությունների ժամանակ կամ երբ մեր համայնքների հետ որոշակի իրադարձությունների մասնակցելու անհատական նախաձեռնություն ենք հանդես բերում:

Ձեր նպատակը պատմական ճշմարտությունը խաղաղության գործոն դարձնելն է մի տարածաշրջանում, որտեղ լարվածությունը բարձր է: Կառավարության նպատակն էլ է այնտեղ խաղաղություն հաստատելը: Սակայն մենք կարծում ենք, որ օրենքի քվեարկությունը բավական չի լինի դրան հասնելու համար: Ես ներկայացրի իրավիճակը, ներդրված ջանքերը, հավասարակշռության, խաղաղության համար ջանքեր ներդնելու կամքի անհրաժեշտությունը: Մենք, բոլորս միասին, նախ պիտի ձգտենք, որ թուրքական կառավարությունը, երկրի բոլոր կուսակցությունները, ազգաբնակչությունը վերահարմարվեն իրենց պատմությանը: Միայն այդ ձևով հնարավոր կլինի հաղթահարել առկա դժվարությունները:

Հանրապետության նախագահն այդպես վարվեց 1995 թվականի հուլիսին՝ Վել դ'Իվի շուրջկալի կապակցությամբ: Ձեր նախաձեռնությամբ, ձեր ջանքերով ամբողջ երկիրը հասավ դրան: Երկար ժամանակ մենք խոսում էինք Հյուսիսային Աֆրիկայի դեպքերի մասին, ձեր շնորհիվ, այսինքն՝ նաև մեր շնորհիվ այսօր այն կոչում ենք ալժիրյան պատերազմ (*ծափահարություններ բազմաթիվ բազկաթոռներից*):

ՄԱՐՏԻՆ ԴԱՎԻԹ – Այո՛, իրավացի եք, ձեր շնորհիվ էլ:

ՆԱԽԿԻՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ – Հանուն հիշողության տարվող աշխատանքն ավելի անկուն է դարձնում անհատին:

Ուստի և բոլորս միասին պետք է հետևողական աշխատանք ծավալենք թուրքական կառավարության, քաղաքական կուսակցությունների, ազգաբնակչության հետ: Այս, ժողովուրդը պիտի վարժվի իր պատմությանը: Բայց դրա համար միայն խորհուրդներ տալը բավական չէ: Փաստերը մատնացույց անելով, որոնք թերևս նպաստեն անցյալի իրավիճակների վերականգնմանը, մենք մեր նպատակին հասնել չենք կարող:

Այս առավոտվա քննարկումը ձեր նախաձեռնության արդյունքն է, որին պիտի քվեարկությունը հաջորդի: Բայց ամեն ինչ դրանով չի ավարտվում: Ինքներդ էլ եք երևի ընդունում, որ բանաձևի սոսկ քվեարկությամբ հարաբերություններ չեն կարգավորվում: Այլ պարտականություններ են դրան հաջորդելու: Ֆրանսիայի ձայնը պիտի շարունակվի լսելի դառնալ ամբողջ տարածաշրջանում: Մեր երկրի դերը մեծ տերությունների համակարգում, մասնավորապես Մինսկի խմբի հետ Եվրոպայի անվտանգության ու համագործակցության կազմակերպության ծիրում որոշակի է, այդ թվում նաև ստանձնած երկկողմ նախաձեռնությունների առումով:

Ուրեմն Ֆրանսիայի կամքն անբեկանելի է: Համոզված եղեք, որ հանուն խաղաղության և ապահովության ձեր ներդրած ջանքերը համընկնում են Ֆրանսիայի կառավարության նպատակների, որոնք հիմնված են

արդարության սկզբունքների, հանրապետության գլխավոր դրույթների պահպանման վրա:

Այս ճանապարհով միայն, հիրավի, Ֆրանսիան ավելի հզոր կդառնա (*ծափահարություններ բազմաթիվ բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Ընդհանուր քննարկումը հայտարարում եմ ավարտված:

Այժմ, ելնելով մեր կանոնակարգի 91-րդ հոդվածի 9-րդ կետի դրույթներից, հրապարակում եմ հանճնաժողովի զեկուցագրի՝ օրենքի նախագծի միակ հոդվածը:

ՆԱԽԱԳԱՀ – Ահա միակ հոդվածը՝ «Ֆրանսիան հրապարակայնորեն ընդունում է հայերի՝ 1915 թվականի ցեղասպանությունը»:

Բազմաթիվ ելույթ ունեցողներ ստորագրել են այս հոդվածի տակ:

Խոսքը տրվում է Ժան-Քեռնար Ռեմոնին:

ԺԱՆ-ԲԵՌՆԱՐ ՌԵՄՈՆ – Պարոն նախագահ, պարոն պետքարտուղար, սիրելի գործընկերներ, հայերի՝ 1915 թվականի ցեղասպանությունը Թուրքիայում մնում է մարդկային պատմության մեծագույն ողբերգություններից մեկը: Բնական է, մեր դարավերջին հայ ժողովուրդն ամբողջ հոգով ձգտում է, որպեսզի բազմաթիվ սերունդների անսահման տառապանքն ի վերջո Ֆրանսիան ընդունի: Թերևս ավելորդ չէ հիշեցնել, որ հայ ժողովուրդը, չնայած հոգեկան վեհությանը, հինավուրց քաղաքակրթությանը, դարավոր պատմությանը, հաճախ է զոհ գնացել կամ հալածանքների, կամ ճակատագրական սխալների:

Չմոռանանք, որ Երկրորդ աշխարհամարտից անմիջապես հետո Ֆրանսիայում բնակվող բազմաթիվ հայեր, հավատալով քարոզչական տեղեկատվությանը, մեկնեցին Խորհրդային Հայաստան: Պատահականության բերումով, մասնավորապես, Մոսկվայում հաջողվել է օգնել նրանց մի մասին, նրանց, ովքեր ցանկանում էին վերադառնալ իրենց երկրորդ հայրենիքը, այսինքն՝ Ֆրանսիա:

Բայց ինչպիսի տառապանքներ էլ, որ հայերը կրած լինեն Կովկասում, 1915 թվականի ցեղասպանությունը չեն կարող մոռանալ: Նրանցից շատ-շատերը ամեն տարի ապրիլի 24-ին հայրենակիցներով կամ բարեկամներով հավաքվում են, որպեսզի ոգեկոչեն ողբերգական օրերը, եթե ոչ տարիները: Ահա թե ինչու ամբողջ հոգով ես իմ ձայնն եմ տալիս օրենքի նախագծի օգտին, որը բոլոր խմբավորումների համառ ջանքերի արդյունքն է:

Ինքնին հասկանալի է, որ ժամանակակից Թուրքիան ոչ մի պատասխանատվություն չի կրում ութսուն տարի առաջ գործադրված բռնությունների համար: Ընդհակառակը, ես նույնիսկ համոզված եմ, որ եթե երբևէ համաձայնվի ընդունել իր անցյալի ահավոր ոճիրը, ինչպես, օրինակ, վարվում են ամենաբարձրաստիճան պաշտոնյաները՝ մի ժամանակաշրջանում, երբ զղջումը դառնում է պատմության վերագնահատման ձև, բազմաթիվ դռներ կբացվեն այնպիսի մեծ երկրի առջև, ինչպիսին կլինի 2000 թվականին Թուրքիան (*ծափահարություններ բազմաթիվ բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Խոսքը տրվում է պարոն Ֆրանսուա Ռոշեբլուանին:

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԲԼՈՒԱՆ - Ես ելույթի համար արձանագրվեցի, որպեսզի անդրադառնամ օրենքի նախագծի ձևակերպման թերությու-

ներին: Ինքս, իմ գործընկերների ու բարեկամների՝ Ռոլան Քլյումի, Ժան-Պիեռ Ֆուշէի, Մորիս Լերուայի, Անդրե Սանտինիի և Գի Թեյսիեի հետ, արտաքին գործերի հանճնաժողովին եմ ներկայացրել վեց բարեփոխություն, որոնք, գոյություն ունեցող կարգին հակառակ, համատեղ քննարկվել ու մերժվել են, քանի որ զեկուցողը՝ Ռընե Ռուքեն, որոշակիորեն նշեց՝ չի ցանկանում փոփոխություն մտցնել առաջարկված բանաձևում:

Բարեփոխություններից երեքն առնչվում են Ռոլան Քլյումի օրենքի նախագծի հոդվածներին: Առաջինը որոշակիացնում է հայկական ցեղասպանության հեղինակներին, ժամանակաշրջանն ու ընդգրկած տարածքները: Երկրորդը՝ պատմական իրողությունը հարգելու առումով, վերաբերում է ապրիլի 24-ը ցեղասպանության պաշտոնական ոգեկոչման օր համարելուն, երրորդը՝ կառավարությանն առաջարկվում է միջազգային գործունեություն ծավալել ի նպաստ ցեղասպանության ընդունման ու մարդկության դեմ գործված այդ ոճրի հատուցման:

Մյուս երկու փոփոխությունները վերաբերում են օրենքի հենց այն առաջարկին, որը ներկայացրել ենք Պատրիկ Դևեջյանն ու ես և միտում ունենք ծավալել Գեյսոյի օրենքի ընդգրկման շրջանակները, որպեսզի առնչվի բոլոր ցեղասպանություններին, մարդկության դեմ գործված ոճիրներին (ուստի և հայերի ցեղասպանությանը), լրացնի այդ ցեղասպանությունների ու ոճիրների վիճարկման դեմ ուղղված պաշտպանականի դրույթները՝ այլ ընկերակցություններ ևս շնորհելով քաղաքացիական հայցվորի իրավասություն:

Վեցերորդ բարեփոխությունը Թուրքիայի Հանրապետության՝ Եվրոպական միություն ընդունելը պայմանավորվում է հայկական ցեղասպանության փաստի ընդունմամբ:

Ելնելով Խորհրդարանի արարողակարգից, մենք կարող էինք դարձյալ ներկայացնել այդ նույն բարեփոխումները, բայց առաջնորդվելով փոխադարձ համաձայնողականությամբ, իմ գործընկերներն ու ես որոշեցինք ձեր ուշադրությունը հրավիրել միայն մեկի՝ նորի վրա, որը, մեզ թվում է, թե ընդհանուր հավանության պիտի արժանանա, որովհետև սահմանափակում է ընդունման «պաշտոնական» բնույթը և ժամանակը որոշակիացնելով (*ծափահարություններ «Միություն հանուն ֆրանսիական ժողովրդավարության» և «Համախմբում հանուն Հանրապետության» խմբակցությունների բազմաթիվ բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Խոսքը տրվում է պարոն Քրիստիան Էստրոզիին:

ՔՐԻՍՏԻԱՆ ԷՍՏՐՈԶԻ – Ճիշտ է, հայերը դեռևս XIV դարից էին գտնվում աշխարհագրական վտանգավոր շրջանում, սակայն XVIII դարում Բալկանների տարանջատումը, այնուհետև XIX դարում Օսմանյան կայսրության անկումն ավելի մեծացրին նրանց անապահովությունը:

Այդ ժամանակ Օսմանյան կայսրությունում հայը երկրորդ կարգի քաղաքացի էր համարվում, և այս իրավիճակը, ինչպես ամենուր, ազգայնականության անակնկալ ի հայտ գալու համար բարենպաստ հող էր ստեղծել: Օսմանյան լուծն անտանելի էր դառնում: Սակայն, եթե առաջին ջարդերը տեղի էին ունենում 1894 և 1896 թվականներին, վճռական դերը 1914-ից խաղում է երիտթուրքերի բռնատիրական կառավարությունը: Գործի է դրվում այն ծրագիրը, որը գաղթի, ջարդերի, բնաջնջման է հասցնում մի ամբողջ ժողովրդի:

Ահա փաստերը:

Ի՞նչն է այսօր մեզ այնքան զգայուն դարձնում, խորհրդարանին դրդում նման որոշման հանգել: Մի՞թե ֆրանսիացի ժողովրդի ներկայացուցիչներին սոսկ պատմության ուսումնասիրությունն է ստիպում ընդունել, որ 1915 թվականին ցեղային, կրոնական, մշակութային տարբերությունների պատճառով տեղի է ունեցել հայերի ցեղասպանությունը:

Պատմական ճշմարտությունը, ինչ խոսք, ի վերջո ի հայտ է գալիս, սակայն տվյալ դեպքում առկա է մի ժողովուրդ, որն իր գոյության ամենահուսահատական պահին Ֆրանսիան իր ասպնջական երկիրը, ապաստանն էր դարձրել, որտեղ պիտի փորձեր բուժել վերքերը, բայց երբեք չմոռանար:

Վերապրողների առաջին սերունդներն իրենց հոգիներում, որքան էլ ահավոր լիներ, խորը, չափազանց խորը փորագրանկարել էին յուրայինների բնաջնջումը, միաժամանակ այդ ամենը փոխանցել էին հետնորդներին, ակնկալելով, որ իրենց նոր հայրենիքը՝ Ֆրանսիան, թերևս միակ կարող ուժը, հանդես գա Թուրքիայի և Հայաստանի միջև հաշտություն կնքելու, երկարատև, փոխշահավետ խաղաղություն կայացնելու համաձայնությամբ: Մի բան, որը, մենք միասին փորձում ենք անել այսօր:

Ես պատահականորեն չասացի «իրենց հայրենիքը՝ Ֆրանսիան», որովհետև բոլորս էլ հետզհետե ավելի ու ավելի լավ ենք պատկերացնում այն խորհրդանշանը, որն ստեղծում է հիշողության սուրբ պարտականությունը, քանի որ հայերը մեր հողը ոտք դրած առաջին սերնդից եղել են համաձուլման տիպար և չափազանց նպաստել են մեր հայրենիքի մտավոր ներուժի զարգացմանը, առաջընթացին ու բարեփոխումներին: Մենք մեր քաղաքներում, մարզերում, նահանգներում դրա բազմաթիվ օրինակներն ունենք:

Հայերն ամենուր համեստորեն, պարկեշտորեն, անաղմուկ, անկնկատ, անպահանջկոտ են հաստատվել: Նրանք նախ ստիպված են եղել ապացուցել, որ ի վիճակի են օջախ ստեղծել, հանրապետության կրթական ոգով արժանի դաստիարակություն տալ զավակներին, ձեռնարկություններ, եկեղեցիներ, մշակութային կենտրոններ, ընկերակցություններ հիմնել: Համայնքը վերջին տասնամյակների ընթացքում Ֆրանսիայի առաջընթացին իր լուրջ ներդրումն է բերել:

Այժմ արդեն հայ ժողովրդի պատմությունը միախառնվում է մերին: Ահա թե ինչու առաջադրվող նախագծին ի նպաստ քվեարկելիս մենք ֆրանսիացի լինելու համար ավելի հպարտ պիտի զգանք մեզ: Միաժամանակ իմ շրջանի՝ Պրովանս-Ալպեր-Երկնագույն լողափի համայնքը նկատի ունենալով է, որ հաճախակի, հյուրընկալելիս, փոխադարձաբար հայ լինելու զգացողությունն է հաղորդվում ինձ, որ ես այսօր չափազանց հպարտ եմ ինձ զգում, այդ ժողովրդի ցեղասպանության ընդունմանն ի նպաստ քվեարկելու համար (*ծափահարություններ «Համախմբում հանուն Հանրապետության» և «Միություն հանուն ֆրանսիական ժողովրդավարության» խմբակցությունների բազմաթիվ բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Խոսքը տրվում է պարոն Անդրե Սանտինիին:

ԱՆԴՐԵ ՍԱՆՏԻՆԻ – Պարոն նախագահ, պարոն պետքարտուղար, սիրելի բարեկամներ, ինձ բախտ վիճակվեց այս պատմական պահին ներկա գտնվել, որովհետև սրահում որոշակի թիվ են կազմում հին ճամփըն-

կերները, չեմ համարձակվում նախկին մարտիկներ կոչել, պարոն պետքարտուղար (*ծիծաղ*), որոնք տարիներ ի վեր պայքարում են հանուն այն բանի, որ Ֆրանսիան ցեղասպանությունն ընդունի: Ես նկատի ունեմ իմ բարեկամներ Ռոշեբլուանին, Բլյումին, Ֆուշեին, Լելուշին, Կազճավին, Էստրոզիին, Դյուպոն-Էնյանին, բայց նաև Ռուբեին, Ադեվահ-Պեոֆին և Հերմիեին:

Չեմ ուզում այս ամբիոնից քաղաքականությամբ զբաղվել, թեկուզ այն պարզ պատճառով, որ երկար ժամանակ ի վեր առաջինն անգամ ես հույս ունեմ, որ բանաձևն ընդունվելու է միաձայն, սիրելի գործընկերներ, մեր հայ բարեկամներին, որոնց ճանաչում ենք, հավանում ու սիրում, նոր տվայտանքների չենք մատնելու:

Պարոն պետքարտուղար, ես զարմացա, երբ դուք հայտարարեցիք, որ կառավարությունը խորհրդարանական այս նախաձեռնության նկատմամբ «կորոշակիացնի իր վերաբերմունքը»: Դա ինձ մտահոգում է: Ասում են, որ Պատրիկ Դևեջյանն այնքան էլ հարգալից չի արտահայտվել ձեր նկատմամբ: Ես ինքս էլ նախարար եմ եղել, այն էլ ճիշտ մի աստիճանով ձեզնից բարձր: Ինչպես տեսնում եք, վերջիններից չէի, ամենամեծն էլ փոքրերի մեջ, որից հետո տրեզ ստացա, որը և ձեզ եմ ցանկանում: Այլ կերպ ասած, երբ ինձ որևէ տեղ էին ուղարկում, իմ աստիճանակարգը որոշակի արժեք ներկայացնում էր: Ակնհայտ է, որ կառավարությունը կարող էր ավելի լուրջ վերաբերմունք դրսևորել այն քայլի նկատմամբ, որ նախաձեռնել է ընկերվարականների խմբակցությունը, պաշտպանել մեր ժողովը:

Ժամանակն է արդեն, որ վերջ տանք ձևականություններին, պարոն պետքարտուղար: Թող մեզ հեքիաթներ չպատմեն, թե բանաձևն օրակարգ մտցնելիս սենատի նախագահությունում կարող են խնդիրներ ծագել: Մենք, չնայած ընդդիմություն ենք, ունակ ենք ձեզ օգնել, քանի որ վերինս պալատի հետ այնպիսի հարաբերություններ ունենք, որոնք երբեմն ձեզ նույնիսկ գրգռում են: Մենք ի վիճակի ենք Սենատում, որի հեռատեսությունը երբեմն դրվատում ենք, միջամտելու հանձնառություն ստանձնել, որպեսզի մեր «վճիռը» հնարավորին չափ արագ տեղ հասնի:

ՄԱՐՏԻՆ ԴԱՎԻԹ – Շատ ճիշտ է:

ԱՆԴՐԵ ՍԱՆՏԻՆԻ – Պարոն պետքարտուղար, մնացածը կառավարության գործն է: Մենք չնայած զանազան խմբակցությունների անդամներ ենք, բայց անկեղծորեն զինվորագրվել ենք Հայոց դատի ճանաչման գործին: Այդ դատը մեզ ներկայացել է տարբեր տեսանկյուններով, մեր խմբակցությունների միջև փոխադարձաբար, որոշ անհասկացողություն է ստեղծել՝ արդի քաղաքականության, գերագույն շահերի, Եվրոպայի ընդհանուր և այլ այնպիսի պատճառաբանություններով, որոնք մինչև այժմ «արգելակել» են մեր ջանքերը:

Այս պահից արդեն մենք ուզում ենք, որ մեզ չմիամտացնեք, չմիամտացնեք հանրությանն այն հայտարարությամբ, որ մենք ենք նախաձեռնել խորհրդարանական այս քննարկումը, որ կառավարությունը հարգում է իշխանությունների ինքնուրույնությունն ու խորհրդարանի անկախությունը: Ես վստահ եմ, որ բարիկամեցողության պահը հասել է: Մենք այնքան հիասթափություններ ենք ապրել, այնպիսի խոստումներ լսել, որոնք հիմարներին միայն կարող էին ուրախացնել: Այժմ արդեն մի շատ կարևոր նախաձեռնություն պիտի իրագործվի: Խորհրդարանը, որը քվեարկելու է

առաջարկը, կառավարությունից պահանջում է այդ պահից իր քարգմանը հանդիսանալ: Սենատը, ամենայն հավանականությամբ, շատ արագ կողմ կքվեարկի: Այս անգամ գոնե մենք չենք հիասթափեցնի Հայ դատի բարեկամներին: Դա արդարամտության տարրական խնդիր է (*ծափահարություններ բազմաթիվ բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Խոսքը տրվում է պարոն Ռիշար Կազնավին:

ՌԻՇԱՐ ԿԱԶՆԱՎ - Անդրե Սաճտիճիից առաջ, որը կավարտի հոդվածի քննարկումը, թույլ տվեք, սիրելի գործընկերներ, բոլորիդ շնորհակալություն հայտնել, որ այս առավոտ, Ֆրանսիայի համար մի գեղեցիկ օր, երանության զգացողությունը վայելելու հնարավորությունը տվեցիք, որն այնքան հազվադեպ է մեր խորհրդարանական առօրյայում, որի շնորհիվ միասնականության ոգին համակեց բոլորիս և բացահայտեց այն լավագույնը, որ կար մեր մեջ: Մենք երկար կմտապահենք այն ամենը, ինչ այս առավոտ ապրել ենք միասին:

Օրեր կան, երբ մենք կարող ենք հիշել, որ Ֆրանսիան անկրկնելի է, երբ հավատարիմ է իր արժեքներին և պատմությանը. արժեքներ ու պատմություն, որոնք ցեղասպանության վերապրողներին մեր երկիրը առաջնորդեցին, որպեսզի մեզ մոտ ազատություն, հյուրընկալություն և հույս գտնեն:

Այս ընդունման՝ հայերի ցեղասպանության ընդունման համար մենք պարտական ենք նաև ինքներս մեզ՝ հավատարմությանը, մեր ազգի մեծությանը, հայրենիքին՝ Ֆրանսիային, որն առանձնահատուկ տեղ է գրավում ժողովուրդների համանվագում, որի ձայնն աշխարհում ընդմիշտ պահպանում է յուրօրինակ արձագանքը:

«Քարեկամություն» խմբակցության անդամները, որոնք զանգվածաբար ներկա են այսօր, իրենք իրենց խոստացել են հասնել ճշմարտության պարտադրանքի հաղթանակին, առանց որի կայուն ոչինչ չի կարելի կառուցել, առանց որի հայելու մեր արտացոլումը դառնության տխուր արտահայտություն կունենար:

Ես շնորհակալություն եմ հայտնում ընկերվարների և «Քարեկամություն» խմբակցության գործընկերներիս, ովքեր այս հոդվածն օրակարգ մտցնելու նախաձեռնությունը հանդես բերեցին: Նրանք գիտեն իհարկե, որ կարողացան հասնել դրան, որովհետև տարբեր բազկաթոռներից համանման օրենքների առաջարկները նպաստեցին, որ իրենց նպատակին հասնեն, խույս տան մերժումից, որին կբախվեին, թերևս, եթե Ժան-Լուի Դեբրեն, օրինակ, այս առավոտ մեր կողքին չլիներ:

Բաց չթողնենք պահը, կարողանանք միասին այն ապրել, հավատություն տանք մեր քվեարկելիք նախագծի բոլոր հետևանքներին, նախագիծ, որի միակ հոդվածն այսուհետև հանրապետության օրենքը կդառնա, պարտադիր կլինի բոլորի համար, մի կողմից կիակադրվի անհանդուրժելի, զոհերի տառապանքը վիրավորող ողբերգական պատմության վերափոխությանը, մյուս կողմից պաշտոնական բնույթ կհաղորդի ոգեկոչմանը՝ միջազգային հարաբերությունների սերտացմամբ հանդերձ:

Եթե օրենքի սովորական նախադասությունն այդպիսի տարողունակություն չունենար, մինչև վերջերս նման ճշումների կենթարկվե՞ր:

Ճշմարտության նման պարտադրանքը Հայաստանի և Թուրքիայի հաշտության ճանապարհին խոչընդոտ չի կարող դառնալ: Հայաստանը

մի պահ ուներ այդ մտավախությունը, բայց այսօր արդեն ի դերև է եղել: Մենք դա նույնպես պիտի նկատի ունենանք:

Ճշմարտության պարտադրանքը, այդ մասին արդեն ասվեց, առավել ևս ուղղված չէ ներկա Թուրքիայի դեմ, որը պետք է ընդունի Եվրոպայի բուն արժեքները, մանավանդ որ մեր շարքերն է հավակնում անցնել:

Հիրավի, այսօր էական, ճշանակալի քայլ ենք կատարում: Մենք բոլորս միասին կարող ենք հպարտանալ դրանով, իսկ ամենից ավելի հպարտ կլինեն հայկական համայնքի մեր բարեկամների զավակները, որոնց ճշմարտության ծարավը թերևս ամենախորն է: Այսօրվանից նրանք առավել կհպարտանան իրենց երկրով՝ Ֆրանսիայով:

ՆԱԽԱԳԱՀ – Խոսքը տրվում է պարոն պետքարտուղարին:

ՆԱԽԿԻՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ – Պարոն նախագահ, ես այս ամբիոնից հայտարարեցի, որ կառավարությունն ընթացք կտա Ազգային ժողովի քվեարկած բանաձևին: Այսինքն՝ նախաձեռնությունն իր շարունակությունը կգտնի Սենատում: Ես խոսել եմ Սենատի նախագահների խորհրդակցության մասին, քանի որ այդ ատյանն է կազմում օրակարգը: Ամեն պարագայի, կառավարության դիրքորոշումն ավելի քան հստակ է: Բանաձևի քննարկումը պետք է իր տրամաբանական ավարտին հասնի: Վստահ եղեք և համոզվեք, որ մեր միջև տիամ տարակարծություններ չեն կարող լինել (*ծափահարություններ ընկերվարների խմբակցության բազմաթիվ, «Համախմբում հանուն Հանրապետության» խմբակցության մի քանի բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Իմ տրամադրության տակ են երկու՝ թիվ 1 և թիվ 2 լրացումները, որոնք քանի որ վավերացված են, կարող են ընդհանուր քննարկման դրվել:

Թիվ 1 լրացումը, որը ներկայացրել են տիկին Ժամբուն, պարոնայք Հերմիեն, Լեֆորը, Մեյը և համայնավարական խմբակցության անդամները, ձևակերպված է այսպես.

«Միակ հոդվածը խմբագրել հետևյալ ձևով. «Ֆրանսիայի Հանրապետությունը պաշտոնապես ընդունում և դատապարտում է 1915-ից 1922-ը Օսմանյան կայսրության ժամանակի թուրքական կառավարության օրոք՝ հայ ժողովրդի դեմ գործադրած ցեղասպանությունը»:

Թիվ 8 վավերացված լրացումը, որը ներկայացրել են պարոնայք Բլումն ու Ռոշեբլուան, ձևակերպված է այսպես.

«Միակ հոդվածը խմբագրել հետևյալ կերպ. «Ֆրանսիան պաշտոնապես ընդունում է 1915-ից 1922-ը հայերի դեմ գործադրած ցեղասպանությունը»:

Թիվ 1 լրացումը հիմնավորելու համար խոսքը տրվում է պարոն Ռոժե Մեյին:

ՌՈԺԵ ՄԵՅ – Մեր առաջարկած խմբագրումը բխում է նախորդ ելույթների տրամաբանությունից:

Ֆրանսիայի կողմից ցեղասպանության պաշտոնական ընդունումը, որը մի մեծ քայլ է դեպի առաջ, պետք է ուղեկցվի տվյալ ժամանակվա թուրքական կառավարության պատասխանատվության ամրագրմամբ, ինչպես նացիստական Գերմանիան է պատասխանատու 1939-1945 թվականների ցեղասպանության համար:

Շարունակենք մինչև վերջ: Թուրք ժողովրդի համար օգտակար կլիներ, եթե ժողովրդավարության առաջընթացի ճանապարհին դասեր քաղեր իր պատմությունից: Հանուն մարդու իրավունքների նա ամենից շահագրգռված պիտի լինի ընդունելու տվյալ ժամանակվա թուրքական կառավարության պատասխանատվությունը ցեղասպանության հանցանքում, այնպես, ինչպես ամեն ժողովուրդ պիտի կարողանա եզրահանգումներ կատարել իր պատմության ճակատագրական իրադարձություններից:

Նա, ով բացահայտում է տվյալ ժամանակվա գերմանական կառավարության նացիստական ոճիրները, գերմանատյաց չէ, այնպես, ինչպես թրքատյաց չէ նա, ով մատնանշում է մեր դարի առաջին ցեղասպանության պատասխանատուներին: Ի՞նչ եք կարծում, եթե կառավարությունը և թուրք ժողովուրդը յուրացնեին այս դասերը, թուրքական ծագում ունեցող մերօրյա ջարդերը տեղի կունենայի՞ն, կամ թուրքական բանակը կբռնազավթե՞ր Կիպրոսը:

Ութսուներեք տարի անց ժամանակն է, իսկական ժամանակն է, որ հանուն հայ ժողովրդի իրավունքների, հանուն նրա հիշողության, հայտնի դառնան և՛ ցեղասպանությունը, և՛ թուրքական կառավարության պատասխանատվությունը:

ՆԱԽԱԳԱՀ – Ի՞նչ կարծիք ունի հանճնաժողովը:

ՌԸՆԵ ՌՈՒՔԵ (*խոսնակ*) - Արտաքին գործերի հանճնաժողովը չի ցանկացել որևէ փոփոխություն ընդունել, քանի որ օրենքի առաջարկությունը ստորագրողները, ինչպես նշեցի իմ զեկուցումը ներկայացնելիս, ձգտել են, որ բանաձևն անխաթար մնա:

Ահա այդ պատճառով է, որ հանճնաժողովը, նախագահի՝ Ժակ Լանգի պնդմամբ, որին ցանկանում եմ ողջունել բանաձևն անառարկելիորեն ընդունելու համար, վճռել է մերժել բոլոր փոփոխությունները:

Անշուշտ, ըստ էության ես համաձայն եմ լրացումների հետ, բայց քանի որ օրենքի նախագծի հեղինակները, նկատի ունենալով խնդրի բարդությունը, ձգտել են հստակ, բոլորի համար էլ դյուրըմբռնելի բանաձև ստեղծել, որը բավական երկար ժամանակ քննարկման նյութ է դարձել, դեմ եմ արտահայտվում վերախմբագրումներին:

ՆԱԽԱԳԱՀ – Թիվ 8, վավերացված լրացումը հիմնավորելու համար խոսքը տրվում է պարոն Ռոլան Բլյումին:

ՌՈԼԱՆ ԲԼՅՈՒՄ – Պարոն Ռոշեբլուան և ես գտանք, որ «պաշտոնապես» արտահայտությունը «հրապարակայնորեն»-ից ավելի համապատասխան է, իսկ տարեթվերը պատմական իրականությունն անհամեմատ ճշգրիտ են ներկայացնում, քանի որ ցեղասպանությունը, որն սկսել է 1915-ից, դժբախտաբար տևել է մինչև 1922-ը:

ՆԱԽԱԳԱՀ – Ի՞նչ կարծիքի է կառավարությունը:

ՆԱԽԿԻՆ ՍՄԲՏԻԿՆԵՐԻ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ – Քիչ առաջ ես ներկայացրի կառավարության դիրքորոշումը, որը գտնում է, որ այդ իրադարձության որակումը ֆրանսիական օրենսդրության խնդիր չէ, որքան էլ որ մենք համամիտ լինենք և ընդունենք պատմական փաստերի անառարկելիությունը: Անհրաժեշտ է հետևողական աշխատանք կատարել, որպեսզի թուրք ժողովուրդը վարժվի իր իսկ պատմությանը, ընդունի այնպես, ինչպես այն կա: Ֆրանսիայի խնդիրն է տարբեր միջազգային կազմակերպությունների, այդ թվում և ԵԱՀԽ-ի միջոցով, որոնց անդամակցում ենք,

մասնակցել հիշատակված գործընթացին, նպաստելով ժողովրդավարության զարգացմանն ամենուր, որտեղ որ անհրաժեշտ է:

Ուստի, պարոն նախագահ, կարծում եմ, դուք հասկանում եմ, թե ինչու ես չեմ մասնակցելու լրացումների քննարկմանը: Ուղղակի չեմ ցանկանում այդ կապակցությամբ ձևակերպումների մանրամասների մեջ մտնել: Բայց քանի որ ի պաշտոնե ինձ հարց եք ուղղում, պատասխանում եմ՝ բացասական կարծիքի եմ:

Կառավարության դիրքը որոշակի է: Ամբամբ ես գտնում եմ, որ ներկայացված բանաձևն ինքնին բավարար է և լիովին արտահայտում է այն միտքը, որն այս առավոտ ձգտում է Ազգային ժողովը հաստատել:

ՆԱԽԱԳԱՀ – Խոսքը տրվում է պարոն Դանիել Մարկովիչին:

ԴԱՆԻԵԼ ՄԱՐԿՈՎԻՉ – Իմ ձեռքին է 43 էջանոց մի զեկուցագիր, որը պատմական հանգամանալից հետազոտության արդյունք է: Ինչպես զեկուցողը նշեց, արտաքին հանձնաժողովի նիստի ժամանակ համաձայնություն կայացավ, որովհետև հանձնաժողովի նախագահ Ժակ Լանգը Ժակ-Բեռնար Ռեմոնի օգնությամբ բոլոր մասնակիցներին համոզեց, որ որևէ լրացում չկատարվի, քանի որ, ըստ նրա, բանաձևի ուժը պարզության մեջ է:

Այս ամենով հանդերձ հարկ է նշել, որ բանաձևն ուղղակի բխում է հիշատակված զեկուցագրից, որն, իմ կարծիքով, խիստ որոշակի է ներկայացնում ցեղասպանության նախապայմանները, ցեղասպանության տարեթվերը, ցեղասպանության պատճառներն ու նրանց, ովքեր ցեղասպանություն իրահրել են: Ես դիտմամբ եմ բառը չորս անգամ կրկնում, որպեսզի տարրմբռնում չառաջանա: Իրոք, զեկուցագիրը հավաստում է, որ 1915-ից մինչև 1922-ը թուրքական կառավարությունը, եթե ուզում ենք ավելի ճշգրիտ լինել՝ նրա մի թևն անառարկելիորեն հայ ժողովրդի դեմ ցեղասպանություն է գործադրել:

Հասկանալի է, մեկ-երկու բառի ավելացումը բանաձևի իմաստը չի փոխի, բայց ազդեցությունը կթուլացնի: Սի՞թե ճշմարիտ չէ, որ մենք այդ հայտարարությունն այսօր հրապարակայնորեն ենք կատարում: Խորհրդարանական որևէ քննարկման ժամանակ մեր Ազգային ժողովի օթյակներն այսքան լեցուն չէին եղել: Բոլոր պատգամավորները և հայերը, ինչպես նաև ամբողջ աշխարհի ժողովրդավարները ուշի-ուշով հետևում են, թե ինչ է կատարվում այստեղ այս առավոտ:

Եթե բանաձևի «հրապարակայնորեն» արտահայտությունը փոխարինենք «պաշտոնապես»-ով, լրացուցիչ իմա՞ստ կհաղորդենք: Չէ՞ որ այն, իրոք, հրապարակային ճշմարտություն ունի, մենք ուզում ենք, որ համաշխարհային հասարակայնությունը մեզ լսի, դրա համար ենք ձգտելու բառը պահպանել:

Ես թույլ եմ տալիս նաև նախօրոք պատասխանել այն լրացման հեղինակներին, ովքեր ցանկանում են, որ կառավարությունը պաշտոնապես ոգեկոչի ապրիլի 24-ը: Ինձ թվում է, և կարծում եմ, որ չեմ սխալվում, ֆրանսիական կառավարությունը պաշտոնապես ոգեկոչում է միայն այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել իր տարածքում, որոնց Ֆրանսիան ուղղակիորեն առնչվել է: Մենք բոլորս էլ գիտենք, որ նահանգներում և նույնիսկ մայրաքաղաքում տարին առնվազն մեկ անգամ կիսապաշտոնական ցույց է այդ կապակցությամբ տեղի ունենում, բայց չի

կարելի ֆրանսիական կառավարությունից պահանջել, որ վավերացնի ամսաթիվը, մի բան, որ չի արվել մյուս ազգերի, օրինակ, հրեական ցեղասպանության առնչությամբ:

Մենք ունենք հատուկ բռնագաղթի օր, որի ընթացքում ոգեկոչում ենք բռնադատված ֆրանսիացիներին, հրեաներին, դիմադրության շարժման մասնակիցներին, համայնավարներին, այլոց: Ունենք նաև այնպիսի օր, որն ուղղված է Վիշիի ազգայնամոլների հակահրեական ու հակագնչուական հանցագործությունների դեմ: Սակայն Ֆրանսիայում Ողջակիզմանը նվիրված պաշտոնական օր չկա: Այն նշում են հրեական հաստատություններն ու համայնքը, բայց ոչ կառավարությունը, որից չի կարելի պահանջել, որ նման առիթներով համազգային ցույցեր կազմակերպի, չնայած այս կամ այն չափով, գրեթե ամենուր, տեղի են ունենում:

Ինչ վերաբերում է ինձ, ես կարծում եմ, որ քննարկվող բանաձևի ուժը պարզության և մանավանդ այն իրողության մեջ է, որն ուղեկցվում է 43 էջանոց զեկուցագրով: Վերջինս պարունակում է առաջարկվող բոլոր լրացումները (*ծափահարություններ ընկերվարների խմբակցության բազմաթիվ բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Խոսքը տրվում է պարոն Ռոբեր Պանդրոյին:

ՌՈԲԵՐ ՊԱՆԴՐՈ – Ինչպես նախորդ հռետորը, ես էլ եմ զգնում, որ օրենսդրական բազմաթիվ բանաձևերի ուժը պարզության մեջ է: Խոստովանենք, որ շատ հաճախ ընդունելուց հետո անգամ մենք չենք կարողանում մեր ընտրողներին պատասխանել, թե ի՞նչ բանաձև ենք քվեարկել: Այդ մասին ինքներս էլ ըստ էության իմանում ենք մանրամասների հրապարակումից հետո միայն:

Այսօր մենք հպարտ ենք զգում, որ այնպիսի պարզ բանաձև պիտի քվեարկենք, որի մասին սրահից ելնելուն պես կարող ենք խոսել:

Անշուշտ, նրա ձևակերպումները որոշ խորհրդածությունների տեղիք տալիս են, այլապես, պարոն նախարար, Ձեզ պատասխանելու կարիք չէր զգացվի:

«Հրապարակայնորեն» բառն ինքնին ինձ դուր է գալիս: «Պաշտոնապես»-ը այնքան էլ տեղին չի թվում, մանավանդ որ մենք միշտ, ըստ էության, պաշտոնական աշխատանքն ենք կատարում: Եթե որևէ մակդիրի կարիք զգացվեր, մի բան, որ առանձնապես չեմ էլ սիրում, նախապատվությունը կտայի «հանդիսավորապես»-ին, որը բանաձևն ավելի տարողունակ կդարձներ: Եվ եթե շատ ենք ուզում մանրակրկիտ լինել, քանի որ բոլորս էլ դրան կողմնակից ենք, «հայերի ցեղասպանությունը» արտահայտությանը կուզեի ավելացնել այն, ինչ առաջարկում է մեր գործընկեր Հերմիեն՝ «Հայ ժողովրդի դեմ գործադրված ցեղասպանությունը», որն ավելի հստակ է:

ՆԱԽԱԳԱՀ – Խոսքը տրվում է պարոն Պիեռ Լելուշին:

ՊԻԵՌ ԼԵԼՈՒՇ – Ես չեմ ցանկանում վիճաբանության ստվեր ձետել մեր սկզբունքային քննարկման ընթացքի վրա, և ոչ էլ այն պատճառներով, որոնց արդեն անդրադարձան պարոնայք Պանդրոն և Մարկովիչը, մեկնաբանել լրացումների բովանդակությունը, որոնց հետ, ըստ էության, համաձայն եմ: Խորհրդարանն, անկասկած, խելամիտ վճիռ կկայացնի:

Ինձ ավելի հուզում է այն ամենի իմաստավորումը, ինչ այս առավոտ տեղի է ունենում մեր նիստերի դահլիճում: Բացի «պաշտոնապես» և «հրապարակայնորեն» բառերի միջև կատարվելիք ընտրությունից, հարկ է

պարզել, թե արդյո՞ք Ազգային ժողովը կարող է կանոնակարգում մտցնել, որպեսզի պատմական իմաստ հաղորդի ութսուներեք տարի առաջ տեղի ունեցած իրադարձություններին: Սա քաղաքական, բայց նույնքան էլ իրավաբանական հարց է, որը բացառիկ կարևորություն ունի հենց մեր հաստատությունների դիրքորոշման առումով:

Ես ուշադրություն դարձրի, թե ինչպես պետքարտուղարն իր ելույթում օգտագործեց «նկատի կունենամ» արտահայտությունը: Այլ կերպ դա նշանակում է, որ նկատի կունենա, բայց հարցն իրեն առանձնապես չի զբաղեցնի: Բացի դրանից, նա Անդրե Սանտինիին շատ որոշակի պատասխանեց, որ Ազգային ժողովը նման քննարկումների կապակցությամբ օրինակարգումներ չի կարող կատարել: Մինչդեռ մենք հենց դրան ենք ձգտում՝ ելնելով մեր Սահմանադրության երրորդ հոդվածից, հավաստում ենք ֆրանսիացի ժողովրդի ինքնիշխանությունը: Այդ առումով այն, ինչ տեղի է ունենում այս առավոտ, միանգամայն պաշտոնական է:

ԱԼԵՆ ԿԱԼՄԱ – Խնարկե:

ՊԻԵՌ ԼԵԼՈՒՇ – Ես խոսք վերցրի հենց այն բանի համար, որ ամեն ինչ հստակ լինի: Ըստ էության մենք պարտավորեցնում ենք ֆրանսիական կառավարությանը, որովհետև ազգային ինքնիշխանությունը մեր միջոցով է իրագործվում: Նույն ձևով էլ, դարձյալ ըստ Սահմանադրության, եթե գործադիր մարմինը պայմանագրեր է վավերացման ներկայացնում, որի հաստատման իրավասությունը բաժանված է կառավարության և հանրապետության նախագահի միջև, ու այդ պայմանագրերն այնուհետև օրենքի, նույնիսկ օրենքը գերազանցող ուժ են ստանում, նշանակում է վավերացվել են կամ հանրաքվեի միջոցով կամ Ազգային ժողովում:

ԺԱՆ-ՊԻԵՌ ԲԼԱԶԻ – Ճիշտ է:

ՊԻԵՌ ԼԵԼՈՒՇ – Սիրելի գործընկերներ, որպեսզի հետագայում տարակարծություններ չծագեն, խիստ որոշակի արտահայտենք՝ այն, ինչ մենք ընդունում ենք այս առավոտ օրենք, որն ուղղակիորեն առնչվում է ֆրանսիական կառավարությանը (*ընկերվարների խմբակցության բազկաթոռներից բացականչություններ են լսվում՝ «ճիշտ է»*):

Ուստի, պարոն պետքարտուղար, ես կարծում եմ, որ դուք կհրաժարվեք այն արտահայտություններից, որոնք քիչ առաջ արեցիք (*ծափահարություններ «Համախմբում հանուն Հանրապետության» և «Միություն հանուն ֆրանսիական ժողովրդավարության» խմբակցությունների բազմաթիվ բազկաթոռներից*):

ՍԱՐՏԻՆ ԴԱՎԻԹ – Օրենքը պարտավորեցնում է ազգին, օրենքը պարտավորեցնում է պետությանը:

ՆԱԽԱԳԱՀ – Ձայնը տրվում է պարոն Ժորժ Սարբին:

ԺՈՐԺ ՍԱՐԲ – Պարոն նախագահ, ես կուզեի ներկայացնել մեր խմբակցության դիրքորոշումը: Ինքնին, գոնե մեզ համար, հասկանալի է, որ արտաքին գործերի հանձնաժողովի կայացրած որոշումը խելամիտ է ու օրինական: Ռոբեր Պանդրոյին հարկ եմ համարում անկեղծորեն նկատել տալ, որ անկախ օգտագործված բառից՝ «պաշտոնապես» լինի, «հրապարակայնորեն», թե «հանդիսավոր կերպով», կարևորն այն է, որ Ֆրանսիան այսօր օրենսդրորեն ընդունում է ցեղասպանությունը (*ծափահարություններ ընկերվարների խմբակցության բազմաթիվ բազկաթոռներից*): Սա որոշակի է:

ՄԱՐՏԻՆ ԴԱՎԻԹ – Եվ կարևորն էլ հենց դա է:

ԺՈՐԺ ՍԱՐՐ – Մակբայի կցումը նույնիսկ կարող է ստվեր նետել մեր ազգային դիմագծի վրա, որովհետև, եթե այն, ինչ մենք անում ենք այստեղ, պաշտոնական չէ, հրապարակային չէ, հանդիսավոր չէ, հապա ի՞նչ է:

ՌԻՇԱՐ ԿԱԶՆԱՎ – Ճիշտ է:

ԺՈՐԺ ՍԱՐՐ – Սիդելի գործընկերներ, հիշեցնեմ, որ մենք գտնվում ենք Ազգային ժողովում: Ահա թե ինչու բոլորիդ առաջարկում եմ պաշտպանել արտաքին գործերի հանճնաժողովի ներկայացրած միակ բանաձևը (*ծափահարություններ բազմաթիվ բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Ձայնը տրվում է պարոն Գի Հերմիեին:

ԳԻ ՀԵՐՄԻԵ – Ես ընդունում եմ պարզությունը պաշտպանող փաստարկները: Ինքնին, որքան էլ էական թվա, մենք սոսկ մակբայ ենք քննարկում, չնայած անձամբ ես սիրով կքվեարկեի «հանդիսավոր»-ի օգտին, նկատի ունենալով վճռի պատմական կարևորությունը, որը, բնականաբար, կարծիքների փոխանակությունից հետո կայացնելու ենք նիստի վերջում:

Մենք ցանկանում ենք միայն որոշակիացվի, թե ո՞վ է այդ ցեղասպանության պատասխանատուն, դա՛ է մեր լրացման նպատակը:

ԺԱՆ-ՊՈԼ ԲՐԵՏ, ԱԼԵՆ ԿԱԼՄԱ – Ձեկուցագրում որոշակի է:

ԳԻ ՀԵՐՄԻԵ – Առավել ևս: Այդ դեպքում ինչո՞ւ չարտացոլել օրենքում, մանավանդ, որ հենց այդ պատճառով ութսուներեք տարի ի վեր Ազգային ժողովը քննարկման նյութ չի դարձել:

Եթե պարզությունն, անկասկած, որոշ ձևակերպումների ուժ է հաղորդում, ճշգրտումներ կան, որոնք հնարավորություն են տալիս խզել ութսուներեք տարվա լռությունն ու հասնել այն բանին, որ մեր քվեարկությունը անցյալի և ապագայի նկատմամբ որոշակիություն ունենա (*ծափահարություններ համայնավարների խմբակցության բազկաթոռներից*):

ՖՐԱՆՍՈՒԱ ՌՈՇԵԲԼՈՒՆ – Շատ ճիշտ է:

ՆԱԽԱԳԱՀ – Ձայնը տրվում է պարոն Ռոժե Մեյին:

ՌՈԺԵ ՄԵՅ – Երբ խոսում են 1939-1945 թվականների ցեղասպանության մասին, նացիստական Գերմանիան միշտ հիշատակվում է: Այդ դեպքում ինչո՞ւ չնշել տվյալ ժամանակվա թուրքական կառավարության պատասխանատվությունը: Ցեղասպանություններն ու սանձազերծողներին միաժամանակ վկայակոչելը տրամաբանական է:

ՆԱԽԱԳԱՀ – Ձայնը տրվում է պարոն Ժան-Պոլ Բրետին:

ԺԱՆ-ՊՈԼ ԲՐԵՏ – Բոլոր փաստարկները քննարկելուց հետո մենք որոշեցինք պայզ ու որոշակի ձևակերպմանը նախապատվություն տալ, որովհետև ազդեցիկությունը դրանով է պայմանավորված:

Այս շենքի դիմաց, վաղ առավոտից ի վեր խորհրդարանականներին սատարող հայ համայնքի ցուցարարները մի պաստառ են ծածանում, որի վրա գրված է՝ «Ֆրանսիան պետք է ընդունի հայերի ցեղասպանությունը»:

Ինչ-որ տեղ մենք այդ ձևակերպումից ենք բխեցնում մեր ընդունելիք օրենքը: Ահա էականը (*ծափահարություններ ընկերվարների խմբակցության բազմաթիվ բազկաթոռներից*):

ՆԱԽԱԳԱՀ – Ես քվեարկման են դնում թիվ մեկ լրացումը: (*Լրացումը չի ընդունվում*):

ՆԱԽԱԳԱՀ – Քվեարկման են դնում թիվ ութ վավերացված լրացումը: (*Լրացումը չի ընդունվում*):

ՆԱԽԱԳԱՀ – Տիկին Ժամբուն, պարոնաք Հերմիեն, Լեֆորը, համայնավարների խմբակցության անդամները ներկայացրել են մի այլ թիվ 2 լրացումը, որը ձևակերպված է այսպես. «Միակ հոդվածն ամբողջացնել հետևյալ պարբերությամբ. «Կառավարությունը հանձն է առնում մեր երկրում ամեն տարի ապահովել ոգեկոչումն ու ջանք չխնայել, որ միջազգային հանրությունն էլ ընդունի ցեղասպանությունը»:

Չայնը տրվում է Ռոժե Մեյին:

ՌՈԺԵ ՄԵՅ – Ընդունել ցեղասպանությունը, որի զոհն է դարձել հայ ժողովուրդը, նշանակում է հասնել այն բանին, որ մարդկության դեմ գործված այդ ոճիրը արձանագրվի հիշողություններում, նոր դրսևորումները խոչնդոտելու դաս դառնա: Այդ պատճառով է անհրաժեշտ, որ կառավարությունն ամեն տարի ապահովի ոգեկոչումը:

Բացի դրանից, քանի որ թուրքական բոլոր կառավարությունները հրաժարվել են ընդունել հայ ժողովրդի ցեղասպանությունը, այդ ընդունմանը նպաստող ազգային և համաշխարհային հանրային կարծիքի վրա ներազդելու լայն քարոզարշավ են ծավալել, շատ կարևոր է, որ Ֆրանսիան քսաներորդ դարի առաջին ցեղասպանության ընդունման համար միջազգային տարբեր ոլորտներում հանդես գա գործնական նախաձեռնություններով:

ՆԱԽԱԳԱՀ – Հանճնաժողովը և կառավարությունն այս լրացման կապակցությամբ արդեն արտահայտել են իրենց տեսակետը:

ՆԱԽԱԳԱՀ – Ես քվեարկման եմ դնում թիվ 2 լրացումը: (*Լրացումը չի ընդունվում*):

ՆԱԽԱԳԱՀ – Քվեարկման եմ դնում օրենքի նախագծի միակ հոդվածը: (*Օրենքի նախագծի միակ հոդվածն ընդունվում է*):

(*Տիկնայք և պարոնայք պատգամավորները ծափահարում են*):

Նիստ ավարտվում է ժամը 11-ն անց 45 րոպեին:

2. ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՆԱՏԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ 2000-2001ԹԹ. ԱՌՕՐՅԱ ՆՍՏԱՇՐՋԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԵԿՈՒՅԱԳԻՐ 2000Թ-Ի ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-Ի, ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՐՎԱ ՆԻՍՏ (ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԻ 15-ՐԴ ՕՐ)

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ՕՐԵՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՇՈՒՏԱՓՈՒԹ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Պարոն նախագահ – Հիշեցնում եմ, որ Սենատի օրակարգով նախատեսված 30-րդ հոդվածի առաջին և չորրորդ պարբերությամբ, պրն. Ժակ Պելլըտիեն և նրա հիսունինը գործընկերները առաջարկում են պրն. Ժակ Պելլըտիեի, Ռոբերտ Բրետի, Ժան-Կլոդ Գոդենի, Բեռնար Պիրասի, Միշել Մերսիեի և Ժակ Ուդենի կողից ներկայացված 1915թ. Հայոց ցեղա-

սպանության ճանաչման վերաբերյալ օրենքի առաջարկը դնել շուտափույթ քննարկման:

Օրակարգի 30-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետը լրացել է, և Սենատը ավարտել է օրակարգային առաջնահերթ քննարկումը:

Հետևաբար, ես կոչ եմ անում Սենատին շուտափույթ քննարկման առաջարկի կապակցությամբ որոշում ընդունել:

Հիշեցնեմ, որ օրակարգի 30-րդ հոդվածի վեցերորդ պարբերությամբ այս առաջարկը երբեք չի կարող քննարկվել իր ողջ խորությամբ: Խոսքի իրավունք ունեն միայն առաջարկի հեղինակը, ընդդիմախոսը, հանճնաժողովի նախագահը կամ զեկուցողը և կառավարության ներկայացուցիչը: Քվեարկության ոչ մի մեկնաբանություն ընդունված չէ:

Խոսքը տրվում է պրն. Պելլըտիեին, շուտափույթ քննարկման առաջարկի հեղինակին: (Ծափահարություններ):

Պրն. Ժակ Պելլըտիե - պրն. նախագահ, պրն. նախարար, հարգելի գործընկերներ, 1998թ. մայիսի 29-ին Ազգային ժողովը միաձայն ճանաչեց 1915թ. Հայոց ցեղասպանությունը: Այդ օրվանից ոչ մի հարց մեր ասամբլեայի օրակարգ չի մտել: Ոմանք պատճառաբանեցին, որ պատմությունը որակելը խորհրդարանի գործը չէ, որ այս խնդրի քննարկումը պատկանում է Ֆրանսիայի գործադիր իշխանությանը, որպես արտաքին քաղաքականության պատասխանատուի:

Որ խորհրդարանականները պատմաբաններ չեն, ես դա շատ լավ գիտեմ, բայց համոզված եմ, որ այն, ինչ մենք անում ենք հիմնված է կատարված ուսումնասիրությունների վրա: Իսկ ինչպե՞ս վարվել այն դեպքում, երբ գիտնականները միանշանակորեն պատրաստ են որակել այս ցեղասպանությունը: Կարծում եմ, որ մենք՝ որպես Ֆրանսիայի ժողովրդի ներկայացուցիչներ պարտավոր ենք ճանաչել այն, ինչ վաղուց արդեն գիտականորեն ապացուցված է:

Ազգային ժողովի քվեարկությունից 1,5 տարի անց, Սենատը վերջապես կարող է իր կարծիքը հայտնել այս հարցի շուրջ, և ես ցանկանում եմ ողջունել նրանց, ովքեր երբեք ձեռքերը վայր չեն դրել, ընդ որում, ես նույնպես, միանում եմ բոլոր նրանց այն կարծիքին, որ օրենքի այս առաջարկը քննարկվի Սենատում: Վճռական այս քայլը ի վերջո իր գնահատականին կարժանանա:

Հայոց ցեղասպանության ճանաչումը խորհրդանշական քայլ է, որի միակ նպատակն է հաստատել հետևյալը. «Այո՛, գիտնականների կարծիքները, բազմաթիվ վկայությունները և ճշգրտված փաստերի մանրակրկիտ ուսումնասիրությունները, ցույց են տալիս, որ 1915թ. Փոքր Ասիայում տեղի ունեցած իրադարձությունները, որոնց զոհ գնաց հայ ժողովուրդը, միանշանակորեն որակվում են որպես XX դարի առաջին ցեղասպանություն»:

«Ցեղասպանություն» տերմինը առաջին անգամ ներկայացվել է Լեմկեի կողմից 1943թ.: Ըստ նրա՝ այն կանխամտածված և պլանավորված մի ծրագիր է, որը ժխտում է ազգային խմբերի ապրելու իրավունքը՝ վերջնականապես նրանց ոչնչացնելու նկատառումով: Ցեղասպանությունն ուղղված է ազգային խմբերի դեմ, և որպես այդպիսին նրանում կիրառված գործողություններն ուղղված են ոչ թե անհատների, առանձին որակների

դեմ, այլ դրանով ոչնչացման տակ է դրվում նրանց, որպես ազգային խմբի անդամների գոյությունը:

Ելնելով դրանից 1948թ. դեկտեմբերի 9-ին Միացյալ Ազգերի Գլխավոր ասամբլեան ընդունեց առաջին հայեցակարգը, որում ներառված էին հինգ հիմնական տարրեր. սպանությունը, ֆիզիկական կամ հոգեկան լուրջ վնաս հասցնելը, կյանքի անբարենպաստ պայմանների դիտավորյալ ստեղծելը, որը հետապնդում է ֆիզիկական լրիվ կամ մասնակի ոչնչացում, այնպիսի միջոցների ձեռնարկում, որոնք նպատակ ունեն խոչընդոտել ազգի շարունակելիությունը և երեխաների բռնի տեղափոխումը մի խմբից մյուս խումբ:

Ցեղասպանությունը բնութագրվում է որպես կրոնական կամ ռասայական, էթնիկ և ազգային խմբի, նրա անդամների ոչնչացման մտադրություն:

1915թ. իրադարձությունները բոլոր կետերով համապատասխանում են ցեղասպանության ինչպես իրավական, այնպես էլ կոնցեպտուալ բովանդակությանը:

Հայոց ցեղասպանությունը իր արմատներով գնում է դեպի Օսմանյան կայսրության ժամանակաշրջան, որտեղ մեծ ճնշումներ էին գործադրվում փոքրամասնությունների նկատմամբ: 1895-1896թթ. կազմակերպվեցին առաջին հայկական ջարդերը: 1909թ. «համառ թուրքացման» դոկտրինաև, որը պարբերաբար իրականացվեց դրան նախորդած տարում իշխանության գլուխ անցած երիտթուրքերի կողմից, խլեց 20000 հայերի կյանք: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, թուրքական պետությունը այդ ժամանակվա իր անհաջողությունների պատճառը վերագրեց հայ փոքրամասնությանը և ձեռնարկեց նշանավոր մարդկանց, թուրքական բանակում ծառայող հայ զինվորների զանգվածային կոտորածները:

1915թ. մայիսի 30-ի ժամանակավոր օրենքը տեղահանությունների մասին, որը 1918թ. թուրքական խորհրդարանի կողմից հռչակվեց որպես հակասահմանադրական քայլ և այնուհետև տեղահանվողների ունեցվածքի գրանցման մասին 1915թ. հունիսի 10-ի օրենքը միակ թուրքական օրենսդրական փաստերն են, որ արդեն վկայում են ցեղասպանության մասին:

Արդյունքում, շուրջ մեկ տարվա ընթացքում ոչնչացան 800000-ից մինչև 1500000 հայեր: Ողջ մնացածները պարբերաբար իսլամացվեցին:

1919թ. թուրքական կառավարությունը, ի վերջո, ցեղասպանության հեղինակների՝ երիտթուրքերի նկատմամբ դատավարություն սկսեց և հեռակա մահապատժի դատավճիռ կայացրեց:

Ոչինչ չի կարող կասկածի տակ դնել ցեղասպանության պատմական իրողությունը:

Ֆրանսիայի խորհրդարանը, ճանաչելով 1915թ. Հայոց ցեղասպանությունը, ցանկանում է ավելի շատ լսելի դարձնել ցեղասպանության զոհերի ժառանգորդների ձայնը, քան այն պետության, որը թույլ է տվել այս ոճիրը և ցանկանում է այսօր միանալ եվրոպական հզոր ծրագրին:

Սիրելի գործընկերներ, այն ինչ թույլ է տվել Գերմանիան հիսուն տարի առաջ, որակվել է ժամանակին որպես «անուղղելի»: Մինչդեռ, իրենց ողջ ժողովրդի ցանկությամբ և լիակատար խաղաղության հասնելու ան-

կոտրում հավատով մեր հարևան և բարեկամ գերմանացիները ցույց տվեցին աշխարհին, որ որքան էլ այն սարսափելի լինի, պատմությունը մնում է պատմություն, և որ անցյալն է որոշում ներկան և ավելի հուսալի ապագայի ստեղծումը:

Պրն. Ջան-Կլոդ Գոդրեն – Շատ լավ:

Պրն. Ժակ Պելլետիե - 1915թ. Հայոց ցեղասպանության ճանաչումը չի նշանակում, որ այսօրվա Թուրքիան բարբարոս ազգ է: Աշխարհում ոչ մի ազգ չի կարող գնահատվել իր ժողովրդի անցած պատմության օրինակով: Մենք բոլորս էլ շատ լավ գիտենք, որ մեր ազգը, որի սերունդներն ու ժառանգորդներն ենք մենք, նույնպես ինչ-որ ժամանակ թույլ է տվել անուղղելիներ: Բայց չէ որ մենք բարբարոսներ չենք: Մենք չէ, որ պետք է դատապարտենք անցյալի դեպքերը, բայց փոխարենը պետք է վերլուծենք ավելի ճիշտ հասկանալու համար դրանք, որպեսզի այն ինչի համար մենք այսօր ամաչում ենք, երբեք չկրկնվի:

Պրն. Լուի Բոյե - Հավատա՛նք դրան:

Պրն. Ժակ Պելլետիե - Թուրքիան ցանկանում է Եվրամիության մեջ մտնել: Ինձ թվում է, որ մենք՝ Ֆրանսիայի քաղաքացիների ներկայացուցիչներս իրավունք ունենք պահանջել ընդունել այն և հավերժացնել այդ հիշողությունը:

Այս քայլը միանգամայն բնական է, ի հարգանք նրանց հիշողության: Կարո՞ղ ենք մենք ընդունել մի պետության, որը չի ընդունում իր անցյալը: Ակնհայտ է, որ ոչ:

Թուրքիան պետք է ցանկություն հայտնի ճանաչելու այս ցեղասպանությունը և ցույց տա Թուրքիայի հայ բնակչությանը և Սփյուռքին, որ ժամանակն է հաշտվել և ներողություն խնդրել:

Անկասկած հայերի սերունդները կհիշեն այդ սարսափները, բայց վրեժխնդրության ժամանակն անցել է, եկել է լավ ապագայի կառուցման ժամը, որտեղ խաղաղությունը և ներդաշնակությունը պետք է հաղթեն անցյալի ցավերին:

Այսօր այլևս չկա հրեաների ցեղասպանության մասսայական դատապարտման հարցը: Եվ դա միանշանակ է, քանզի գերմանական կառավարողները պատերազմից հետո պատասխանատվության գաղափարն, այնուամենայնիվ, ընդունեցին:

Եթե թույլ կտաք, մեջ բերեմ Պոլ Ռիքյորի խոսքը.

«Ներումը, եթե իհարկե այն կա և իմաստ ունի, կազմում է մարդկային հիշողության հիմքը»:

Ո՞րն է Ֆրանսիայի խորհրդարանի էական նշանակությունը ութսունհինգ տարի առաջ մի այլ երկրում կատարված իրադարձությունների ճանաչման գործում: Այդ նշանակությունը միայն խորհրդանշական է, որովհետև այն ոչ մի դեպքում չի արվում ներկայիս Թուրքիային դատապարտելու համար, այլ ճիշտ հակառակը, այն արվում է Թուրքիայի առաջ ճանապարհ բացելու նպատակով:

Այս քայլը հույս կներշնչի այն առումով, որ հայ և թուրք ժողովուրդների միջև հարատև խաղաղության, ժողովրդավարության ամրապնդման և մարդու իրավունքների կայացման գործում մեր անմիջական մասնակցությունը կունենանք:

Ես շատ եմ ցանկանում, որ Թուրքիան նույնպես ճանաչի 1915թ. ցեղասպանությունը. դրանով նա մասամբ կկատարի ողջ աշխարհի հայության հանդեպ ունեցած իր պարտքը: Մեր խորհրդարանի կայունության մեջ է ոճրագործությունների հրապարակային ճանաչումն ու ժողովրդավարական նոր օրենքների ընդունումը:

Հայերը, եթե հիշողության պարտքը կատարված է, կկարողանան ներման նոր ճանապարհով քայլել նրանց հետ, ովքեր կընդունեն իրենց սխալները:

Ֆրանսիայի խորհրդարանը ցանկանում է օգնել Թուրքիային, և այսուհետ վերջիններիս մնում է ընդունել այն՝ առանց երբևիցե թույլ տալու կարծել, որ ցանկանում է նրան խեղդել մեղադրանքների ալիքների մեջ:

Քայց խոսել անցյալի մասին և հերքել այն, շատ ավելի ահավոր է, քան մահը կամ տանջանքը: Ժխտել ցեղասպանության փաստը, նշանակում է կրկնակի հարված հասցնել այս ժողովրդին; նրա հիշողությանը, ազգային այն ունեցվածքին, որով հայերը ներկայանում են մարդկությանը:

Փաստերը մնում են փաստեր, ոչ ոք չի կարող դրանք կեղծել կամ մոռացության տալ:

Այսօր զրջման խոստովանությունը հարգանքի է արժանի. ինչպես այն դիրքորոշումը, որ գրավեց եկեղեցին հրեաների նկատմամբ, Ֆրանսիան Ալժիրի սարսափների նկատմամբ, 1995թ. հանրապետության նախագահը Վել դ'իվի հարձակումների նկատմամբ...

Ազգը բարգավաճում է ի դեմս իր անցյալի և սա է, որ մենք ցանկանում ենք ասել Թուրքիային:

Ոչ ոք կասկածի տակ չի դնում ներկայիս թուրք ժողովրդի կամ ղեկավարության մեղավորությունը: Ցեղասպանությունը կատարվել է ութսունհինգ տարի առաջ, և այսօրվա Թուրքիայի քաղաքական համակարգը ոչ մի կապ չունի Օսմանյան կայսրության վարած քաղաքականության հետ:

Խնդիրը Թուրքիային կամ մյուսներին համոզելը չէ, որովհետև, նա ով ներթափանցում է այս ցավոտ խնդրի մեջ, գիտի, որ անկասկած ցեղասպանություն եղել է: Խոսքը Թուրքիային հասկացնելն է, որ ներկայումս նրա համառ ժխտումը նրա համար ավելի շատ խոչընդոտներ կառաջացնի, քան նա դրանից կշահի:

Այլ կերպ ասած, միջազգային կոնտեքստը պետք է լինի այնպիսին, որ ճնշումը առաջ անցնի քննադատության շեմից: Անկարայի եվրոպական ձգտումները ճիշտ և ճիշտ նման կոնտեքստ են պահանջում: Մենք ցանկանում ենք, որ գիտակցական մակարդակը հասունանա:

Ֆրանսիայի խորհրդարանը հանդես գալով որպես ազատության և մարդու իրավունքների պաշտպան, այսօր պետք է ճանաչի 1915թ. Փոքր Ասիայում կատարված իրադարձությունները՝ որպես այս ավարտվող դարի առաջին ցեղասպանություն: Քանի որ խոսք է գնում հիշողության պարտքի մասին, ապա պետք է գործել այնպես, որ այդ ոճրագործությունը մնա մեր համընդհանուր հիշողության մեջ և արգելի ու դաս ծառայի, որ այլևս այն չկրկնվի: Մենք բոլորս էլ գիտենք, որ երբեք ապահովագրված չենք նման արհավիրքներից: Հիշենք բոլորովին վերջերս Կամբոջայի, Ռուանդայի, Կոսովոյի և այլ վայրերի դեպքերը:

Եվ որպես վերջաբան կցանկանայի նշել փիլիսոփա Պոլ Ռիքյորի ևս մեկ նախադասություն, որն այս հրամայականով որակում է անցյալը՝ որպես ապագան կերտելու բաղկացուցիչ մաս:

«Պատմություն ասելով հասկանում ենք հիշողություն և մոռացություն: Հիշողություն ասելով՝ մոռացություն և կյանք: Բայց կյանքն արարելն այլ պատմություն է»: (Ծափահարություններ):

Պրն. Ժան-Կլոդ Գոդեմ – Հիանալի է:

Պրն. Նախագահ – Խոսքը տրվում է պրն. Դ-ղոնին, որը դեմ է առաջարկի շուտափույթ քննարկմանը:

Պրն. Ժակ-Ռիշար Դ-ղոն – պրն. նախագահ, պրն. նախարար, սիրելի գործընկերներ: Իմ՝ օրենքի այս առաջարկի քննարկմանը դեմ հանդես գալը խոսում է ոչ թե դաժանության, այլ սկզբունքայնության մասին:

Օրենքի այս առաջարկի քննարկմանը դեմ հանդես գալ չի նշանակում ժխտել Առաջին համաշխարհային պատերազմի և Օսմանյան կայսրության վերջին ժամանակաշրջանի խառը իրավիճակում կազմակերպված հարյուր հազարավոր հայերի ցեղասպանությունը, այլ նշանակում է, որ տեղին չէ նման օրենքի ընդունումը և որ Խորհրդարանը անկարող է այս հարցում: Օրենքի այս առաջարկի քննարկմանը դեմ հանդես գալ չի նշանակում մոռացության մատնել այս հիշողությունը, այլ որպեսզի հիշողության պարտքի քողի տակ չշահարկվեն գործող հետաքրքրությունները: Դեմ հանդես գալ օրենքի այս առաջարկի քննարկմանը չի նշանակում անարդարություն ցուցաբերել, այլ այն ծառայում է խաղաղության հաստատմանը:

Կարելի է մեծապես կասկածել օրենքի այս առաջարկի սահմանադրական լինելու մեջ: Ընդունված չէ փաստերը ճանաչելու համար օրենք կիրառել: Պրոֆեսոր Գ-ի Կարկասոնը, այն բանից հետո, երբ Ազգային ժողովում արդեն ընդունված այս նույն օրենքի առաջարկը, նախագահների կոնֆերանսում որոշվեց հանել օրակարգից, «Le Point»-ում 1999թ. ապրիլի 30-ին գրում էր.

«Այս առաջարկը ճիշտն ասած մի անհեթեթ կարգ է մտցնում մեր իրավական դաշտում, այսինքն ճշմարտությունը որոշվում է օրենքով: Խորհրդարանից կպահանջվի ասել ճշմարտությունը, փոխանակ տարբերելու օրինականը անօրինականից: Օրենսդրական կարգը կզրկվի իր իսկական ֆունկցիայից»:

Օրենքը պետք է ներքին կարգի նշանակություն ունենա: Օրենքի առաջարկը սահմանափակվում է միայն հաստատելով արտաքին այն երևույթները, որոնք Ֆրանսիայի խորհրդարանի իրավասության տակ են: Այն ոչ մի հետևանք չի ունենա ներքին իրավական կարգում:

Եթե հնարավոր լիներ նշել օրենքի այս առաջարկի գոնե մեկ հակադարձ ազդեցություն, այն կընդունվեր և հանրապետության կառավարությունը կկարողանար հրաման տալ և գործել համաձայն օրենքի այս առաջարկի հեղինակների կողմից առաջարկված ակզբունքների, հատկապես միջազգային ատյաններում:

Ուստի, ես հաստատում եմ, որ Խորհրդարանը սահմանադրության համաձայն, չի կարող կարգադրել կառավարությանը, հատկապես դիվանագիտական ասպարեզում: Սահմանադրությունն է որոշում յուրաքանչյուր մարմնի հնարավորությունները: Դիվանագիտական ասպարեզում

Խորհրդարանը կարող է հաստատել միջազգային համաձայնագրերը և ոչ թե դրանք քննարկել կամ դրանց քննարկման համար նշել գործադիր իշխանության հնարավորությունները:

Ես զարմանում եմ, որ վարչապետը լինելով Ազգային ժողովում՝ չի բարձրացրել այս տեքստի սահմանադրական անընդունելիությունը: Զգուշանանք, որ նախադեպ չստեղծվի, որը այլ ժամանակներում և այլ թեմաների շուրջ կարող է հանգեցնել Հանրապետության նախագահի և Կառավարության դիվանագիտական գործունեության անկարողությանը:

Խորհրդարանը պետք է հետևեր, որպեսզի չվոխարիներ պատմաբաններին և իրավաբաններին: Եթե խոսքը ոճրագործությունների մասին է, ապա փաստերի հաստատումը և դրանց գնահատումը Խորհրդարանի գործը չէ: Ոճրագործությունների բնույթը և դրանց կանխման ձևերը որոշելու համար Խարհրդարանը, ներքին կարգ ընդունելով, սահմանափակում է իր կարողությունները: Երբևիցե այն չի փոխարինի որևէ ատյանի: Եթե ոճրագործությունների հեղինակները դեռևս ապրում են, նրանք հետապնդվում են միջազգային և ազգային ատյաններով, մինչ դեռ մարդկության դեմ ոճրագործությունների համար վաղեմության ժամկետ չկա: Երբ փաստերը հեռու անցյալին են վերաբերում, դրանք պատկանում են պատմությանը և Խորհրդարանը չի կարող ուղղություն տալ հիշողության այդ աշխատանքին: Նա պետք է հավանություն տա և ոչ թե առաջնորդվի: Հակառակ դեպքում հնարավոր են ամեն տեսակի շահարկումներ:

Պատկերացնենք, որ մեր ասամբլեան դատապարտում է Գերմանիային 1946թ. Կատինի ոճրագործության համար և երեսուն տարի անց, բազմաթիվ քննարկումներից հետո, երբ քաղաքականությունը մեծ դժվարությամբ իր տեղն է զիջում պատմական իրականությանը, ստիպված հրաժարվում է այդ քայլից: Չմտնենք մի այնպիսի դրության մեջ, ուր վտանգն ակնհայտ է և որի հորիզոնում ուրվագծվում է Բիգ Բրոթերը, Ժորժ Օրվելի 1984թ-ից. «Նա, ով հրամայում է անցյալը, հրամայում է ապագան, նա ով հրամայում է ներկան, հրամայում է անցյալը»:

Հրամայելով ներկան նշանակում է հրամայել միաժամանակ և՛ անցյալը և՛ ապագան:

Ի վերջո. ո՞րն է մեզ առաջարկված տեքստի նպատակը: Հաստատե՞լ. դա պատմաբանների գործն է, դատե՞լ. դա իրավաբանների գործն է: Մեղմե՞լ ցա՞վը: Քայց վերջինս հնարավոր է միայն հայ և թուրք ժողովուրդների փոխադարձ հաշտեցման և ներման ճանապարհով տարվող աշխատանքի շնորհիվ, ինչպես ոմանք արդեն այս երկու համայնքներում այս ճանապարհով են գնում:

Ո՛չ, իսկական պատճառը, որ նշված չէ, ներքոհիշյալ կոնֆլիկտում մի կողմի ճնշման գործադրումն է մյուսի նկատմամբ: Դա կովկասյան կոնֆլիկտն է Ադրբեջանի և Հայաստանի միջև, որի հիմքում ընկած է բացահայտ պատերազմը և ադրբեջանական տարածքի կարևորագույն մի հատվածի օկուպացումը, որտեղ գերակշիռ մաս է կազմում հայ բնակչությունը, և դրա հետևում տարածայնությունները Թուրքիայի և Ռուսաստանի՛ միջև, երեկ ծովային ճանապարհ ունենալու և այսօր Կենտրոնական Ասիայից նավթի պաշարները դեպի արևմուտք դուրս բերելու համար:

Բացի այդ հաշվի առնենք այն, թե ո՞ր պետությունների կողմից են ներկայացվել այս առաջարկությունները և ինչպիսի հասարակական կարծիքի վրա է այն հիմնված:

Ֆրանսիայում և ԱՄՆ-ում, ուր գերակշռող մեծամասնություն է կազմում հայ համայնքը, որտեղ հայերը քաղաքների տեղական ընտրություններում մեծ ազդեցություն ունեն, ամենից առաջ նրանց առջև դրված է այս հիշողության պարտքը:

Իտալիայում, Բելգիայում, Գերմանիայում, Թուրքիայի՝ Եվրամիության անդամակցության դեպքում, թուրքերը վտանգված կլինեն և կվախենան արտագաղթել և զարմանալի չի լինի այնես, եթե նման առաջարկ ներկայացվի պրն. Բոսի և Հյուսիսային Լիգայի կողմից. այս տեքստերը արդեն քվեարկվել են Ռուսաստանում և Հունաստանում:

Արդյոք անհրաժե՞շտ է, որ Ֆրանսիան մասնակից դառնա թշնամական այս հարաբերություններին: Եթե այո, ապա ի՞նչ դիրք պետք է գրավի: Քվեարկության դնելով օրենքի այս առաջարկը նա անպայման դրանց մասնակից կդառնա: Քվեարկելով նա հանդես կգա հօգուտ Հայաստանի, հակառակ դեպքում՝ Ադրբեջանի և Թուրքիայի, և վերջին դեպքում կխեղաթյուրի և կժխտի այն փաստերը, որ պատմաբանների մեծ մասն արդեն գնահատել է:

Բացի այդ, ճանաչելով միայն այս իրադարձությունները, չի՞ նշանակում արդյոք, որ մենք ժխտում և չենք գնահատում մյուս ցեղասպանությունները:

Դրանք մարդկության ողջ պատմության ընթացքում եղել և այսօր էլ շարունակվում են: Ինչպիսի՞ փաստերով մենք կհակառակվենք դրանց պաշտպաններին: Երբ վաղը, այսօր արդեն, մեծ թիվ են կազմում նրանք, ովքեր օրենքի առաջարկներ և փոփոխություններ կառաջարկեն ճանաչելու 1959 թվականից տիբեթցիների, ռուանդացիների, Բոսնիայի մուսուլմանների, Կոսովոյի ալբանացիների, Պոլ Պոտի ժամանակ կամբոջացիների, վերջին դարում Ամերիկայի հնդիկների, Ավստրալիայի բնիկների, չհաշված ԽՍՀՄ-ի նախկին տարածքներում տեղի ունեցած ցեղասպանությունները կամ էլ Պաղեստինում ծայրահեղ ուժի գործադրումը:

Պե՞տք է սպասել, որ ԱՄՆ-ի սենատը, Բունդեստագը, Դուման կամ Թուրքիայի Ազգային Մեծ ժողովը ճանաչեն 1793-1795թ. Վանդեի և Նանտի կողմից սեփական տարածքում կամ ֆրանսիական կայսրության գաղութներում տեղի ունեցած կոտորածները: Ես գիտեմ, որ այն ձեզ հաճույք չի պատճառում, բայց այնուամենայնիվ ստիպված կլինենք լսել, ինչպես նաև Վիշիի վարչակարգի ժամանակ մեր պատմության սև էջերը, որպեսզի մաքրազարդվի մեր հանրապետության մաքուր և անբասիր մուտքը:

Ինչպես գրում էր Հենրի Ամուռուն ակադեմիականներին ուղղված մի հայտարարության մեջ. «պետք չէ, իսկապես, որ ոմանց նկատմամբ կիրառված ոճրագործությունների հիշողության պարտքն անպայման համապատասխանի մյուսների հանդեպ ոճրագործությունների մոռացության պարտքին»:

Նման տեքստի քննարկումը ոչ խաղաղություն է ապահովում, ոչ էլ բխում է Ֆրանսիայի շահերից: Ֆրանսիան շահագրգռված է Կովկասյան տարածաշրջանում խաղաղության հաստատմանը: Նա ջանքեր է գործադրում այդ ուղղությամբ Մինսկի խմբի շրջանակներում: Սենատի նախա-

գահն անձամբ իր մասնակցությունն է ցուցաբերում այս գործում՝ կազմակերպելով հանդիպումներ Հյուսիսային Կովկասի խորհրդարանների նախագահների միջև:

Պրն. Ռնե-Պիեռ Սիմյե - Դա ոչ մի կապ չունի:

Պրն. Ժակ-Ռիշար Դլոմ – Նույնիսկ եթե այս աշխատանքները չեն հանգեցրել խաղաղության համաձայնագրի հաստատմանը, գոնե դրանք թույլ տվեցին դադարեցնել բացահայտ պատերազմը: Օրենքի այս առաջարկի վերաբերյալ հանդես գալով՝ Ֆրանսիան կկորցնի իր վստահությունը կողմերից մեկի հանդեպ և այլևս արդար դատավոր չի լինի: Ֆրանսիան ցանկություն ունի զարգացնել Թուրքիայի հետ լավ հարաբերություններ, կարևոր չէ, թե դա ինչպես կընդունվի, բայց ոչ ոք չի կարող հերքել, որ քվեարկությունը կազդի Թուրքիայի հետ ունեցած հարաբերությունների վրա: Հիմա արագ նշեմ Թուրքիայի և Ֆրանսիայի միջև արտաքին առևտրի կարևոր նշանակությունը: Փորձենք հասկանալ, թե նման որոշումները ինչպես կազդեն Թուրքիայի ներքին քաղաքական իրավիճակի վրա:

Ավելի քան վաթսուն տարվա ընթացքում նրա տարածքում տեղի ունեցած իրադարձությունները, խոսքը նախկին վարչակարգի մասին է, դուրս են եկել թուրք հասարակության հիշողությունից: Հայերի նկատմամբ անհաշտությունը թուրք հասարակական կարծիքում դրսևորվեց հատկապես Ֆրանսիայում ASALA-ի կողմից 70-ական թվականներին կազմակերպված մահափորձերից հետո: Հիշողության պարտքի մասին «շշուկով» խոսում էին միայն գիտական ոլորտներում: Քաղաքական գործիչները այդ մասին չէին խոսում, որովհետև կուսակցական խմբերի տարածայնությունները և անկայունությունը անմիջապես մեղադրում էին նրան, ով փորձում էր առաջ անցնել այդ վտանգավոր սահմանից:

Ես անձամբ այս խնդրի շուրջ մոտ երեք ամիս առաջ խոսակցություն եմ ունեցել Թուրքիայի նախագահի, վարչապետի՝ պրն. Բյուլենթ Էջևիթի և արտաքին գործերի նախարարի հետ:

Պրն. Ռնե-Պիեռ Սիմյե - Նա արդեն որոշակիորեն արտահայտվեց:

Պրն. Ժակ-Ռիշար Դլոմ – Չմոռանանք, որ հիսուն տարի պահանջվեց մինչև Ֆրանսիան ճանաչեց Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Վիշիի ոճրագործությունները: Զգույշ լինենք, որպեսզի մեր քայլերով չոչնչացնենք հիշողության պարտքի գաղափարն առաջինը բարբրացնողներին և չկատաղեցնենք այդ երկրի դեռևս քնած ազգայնամոլ հրեշին: Թուրքիան պետք է շահագրգռված լինի խաղաղության հաստատումով, ինչից կախված է նրա զարգացումը և նրա մուտքը եվրոպական ասպարեզ: Եթե Ֆրանսիան պաշտպանել է Թուրքիայի թեկնածությունը Եվրամիությանն անդամակցելու գործում, սա արվել է ոչ միայն առևտրական շուկայում հարաբերությունների ընդլայնման հեռանկարով, այլ նաև որպեսզի հաճախակի բախումներ արձանագրող Միջին Արևելքում և Կենտրոնական Ասիայում Եվրոպան մի կայուն երկրի միջոցով, հնարավորություն ստանա օգտվել ազդեցություն ունենալու հնարավորությունից:

Այս քայլն արվում է նաև Թուրքիային մարդու իրավունքների և ժողովրդավարության ճանապարհով առաջ գնալու, համաշխարհային գործընթացի մեջ ներգրավվելու համար, թույլ տալով նրան իրականացնել անհրաժեշտ մշակութային զարգացում: Եթե Թուրքիան ընտրել է Եվրոպայի ճանապարհը և պատրաստ է մտնել նրա մեջ, դրանով նա ռիսկի է դիմում

մտնել մշակութային այդ արկածախնդրության մեջ, ահա սա է պատճառը: Խաղաղության հաստատման երաշխիքը Հայաստանի և Թուրքիայի մերձեցման մեջ է: Ինչն էլ արվում է այս երկու պետությունների միջև՝ ազգային խնդիրների լարվածությունն ուժեղացնելու նպատակով: Չմոռանանք Թուրքիայում ապրող այն 80000-անոց հայ համայնքին, որը չնայած շատ լավ հարմարվել է այնտեղ, բայց նրանք այսօր անհամբերությամբ սպասում են, թե մեր այս նախաձեռնությունից հետո իրավիճակը ինչպես կփոխվի:

Ես պարզապես մեջ բերեմ այս տարվա հոկտեմբերի 8-ին Ստամբուլի պատրիարք Մեսրոպ 2-րդի ասված խոսքը. «Ճիշտ չէ, որ մի երրորդ պետության խորհրդարան զբաղվի այս հարցով»: Կամ «Ակոս» երկլեզու շաբաթաթերթի հրատարակչության տնօրեն և հայ համայնքային մարմնի ղեկավար՝ Հրանտ Դինկի խոսքերը. «Ես գիտեմ, թե ինչ մահով են մահացել իմ նախնիները և ինձ համար միևնույն է՝ դա ցեղասպանություն է, ջարդ թե՞ տեղահանություն»:

Չմոռանանք նաև նրանց, ովքեր ապրում են հայրենիքից դուրս՝ առևտուր անելով, բազմաթիվ հայաստանաբնակ այն հայերին, որոնք ապրում են Թուրքիայում, շատ հաճախ առանց փաստաթղթի, որովհետև «սա տարածաշրջանի միակ երկիրն է, ուր կարելի է ապրուստի միջոց վաստակել»:

Չմոռանանք, որ Հայաստանը ծովային ճանապարհ չունի, և նրա զարգացումը կախված է Թուրքիայի հետ սահմանի բացմամբ:

Ուրեմն, զարգացնելով մեր բարեկամական հարաբերությունները այս երկու պետությունների հետ, կնպաստենք այդ երկրներում կամ Ֆրանսիայում նոր քայլեր ձեռնարկելուն և ավելի նպաստավոր մթնոլորտում քննարկել ու հասկանալ այս ողբերգությունը, և հիշողության այդ աշխատանքը երկկողմանի պետք է լինի՝ հիմնված լինելով, ինչպես գրում է Պոլ Ռիքյորը, ներման և ոչ թե թշնամանք ստեղծելու ցանկության վրա:

Տիկին Նիկոլ Բորվո – Չհիմնավորված ձևով մեջ մի բերեք Պոլ Ռիքյորի խոսքերը:

Պրն. Ռենե Պիեռ Միշել – Նա նրան չհասկացավ:

Պրն. Ժակ-Ռիշար Դյոմ – Որպես վերջաբան նշեմ, որ նույն դիրքորոշումներից ելնելով, արդեն արտահայտվեցին կամ գուցե դեռ ոչ, ինչպես արդեն երեք անգամ Ֆրանսիայի կառավորության արտաքին գործերի նախարարի, եվրոպական հարցերով նախարարի, մեր նախագահների կոնֆերանսի, որն ի դեպ մերժել է այս տեքստը Սենատի օրակարգ մտցնել, այնպես էլ ամերիկյան գործադիր իշխանության կողմից, ուր հարկ է հիշատակել նախագահ Քլինթոնի նամակը՝ ուղղված Ներկայացուցիչների պալատին. «ամերիկացիները կարգապահ են» մեջբերումով:

Տիկին Էլեն Լյուկ - Դուք առանց փաստերի եք խոսում:

Պրն. Ժակ-Ռիշար Դյոմ - ... որին հետևեցին այս հոկտեմբերի 19-ի հրամանները, ես մեկ անգամ ևս հիշեցնեմ, որ ֆրանսիացիները ապասում են Սենատի կողմից վճռական և խելամիտ որոշմանը, հարգելի գործընկերներ, ես կոչ եմ անում չքվեարկել նույն պատճառներով, ինչպես դա եղավ մարտի 21-ին, օրենքի այս առաջարկի շուտափույթ քննարկման ժամանակ:

Պրն. Նախագահ – Խոսքը տրվում է հանձնաժողովի նախագահին:

Պրն. Խավիեր դը Վիլպեն (զինված ուժերի, պաշտպանության և արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ) - Պրն. նախագահ, պրն. նախարար, հարգելի գործընկերներ, գործընթացային այս փուլում ես, որպես զինված ուժերի, պաշտպանության և արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ, լիովին վստահում եմ Գլխավոր ասամբլեային:

Կան կարծիքներ, որ քվեարկության համար անհրաժեշտ կլինի խորությամբ քննարկել մեզ առաջարկվող տեքստը, փորձեմ այս հարցի շուրջ իմ կարծիքն արտահայտել, որին ձեզնից շատերն արդեն ծանոթ են:

Պրն. նախագահ – Խոսքը տրվում է պրն. նախարարին:

Պրն. Ժան-Ժակ Քեյրոն (Խորհրդարանի հետ կապերի նախարար) - Պրն. նախագահ, տիկին և պարոն սենատորներ, 1915թ. Օսմանյան կայսրությունում իրագործված հայկական կոտորածները ցավալիորեն ազդարարում են 20-րդ դարի սկիզբը: Ֆրանսիան միշտ հետևել է, որպեսզի հավերժացնի այդ կանխամտածված բարբարոսության զոհ գնացածների հիշատակը, որն անջնջելի հետք է թողել մեր համընդհանուր հիշողության մեջ:

Մեր երկիրը, հավատարիմ մնալով օտարներին ապաստան տալու իր սովորույթին, պատիվ է համարում այն, որ իր հողում ընդունել է իրենց հայրենիքում ստեղծված անտանելի պայմաններից ու սարսափներից մազապուրծ եղածներին, որոնք այստեղ էին եկել ծայրաստիճան կարիքից ելնելով: Սակայն նրանք կարողացել են իրենց արժեքներով, աշխատանքով և ընտանիքներով բնակություն հաստատել մեր երկրում և այստեղ կառուցել իրենց ապագան: Նրանց սերունդները այսօր ամբողջովին ներգրավված են մեր ազգային հասարակական կյանքում, որտեղ նրանք իրենց տաղանդն ու ունակություններն են ներդրել:

Նրանք հավատարիմ են իրենց ծնողների հիշատակին և մշակույթին, որ կարողացել են կենդանի պահել անգամ իրենց հայրենիքից շատ հեռու:

Որպես փոխհատուցման նշան, մեր ազգին նրանք այսօր առաջարկում են հանդես գալ սկզբունքային մի հայտարարությամբ: Ինչ վերաբերում է մեզ, մենք չենք կարող մոռանալ, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ֆրանսահայերը արյան գնով պայքարեցին իրենց որդեգրած հայրենիքի ազատության համար: Մարդկային արժանապատվության համար մղված այդ պայքարում հայ երիտասարդների զոհաբերությունը մեր կողմից միայն հարգանքի է արժանի:

Տիկին, պարոն սենատորներ, 1998թ. մայիսի 28-ին Ազգային ժողովը միաձայն ընդունեց օրենքի մի առաջարկ, որում շարադրված յուրօրինակ հոդվածում նշվում է. «Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է 1915թ. Հայոց ցեղասպանությունը»:

Կառավարությունը արձանագրեց այն: Ձեր ասամբլեան ցանկություն է հայտնել նույնպես հանդես գալ այդ նույն առաջարկի վերաբերյալ: Ձեր նախաձեռնությամբ կառավարությունը հաշվի է առնում ազգային այս հարցի քննարկմանն ընթացք տալու մեծաթիվ ցանկությունները: Հարգելով այդ ցանկությունները և հիշելով այդ սարսափելի ողբերգությունը՝ այնուամենայնիվ հարց է ծագում՝ համաձայն սահմանադրության, արդյո՞ք օրենքի սահմաններում է պատմություն որակելը:

Արտաքին գործերի նախարար պրն. Հյուբեր Վեդրինը 1999թ. մարտի 17-ին զինված ուժերի, պաշտպանության և արտաքին գործերի ձեր հանճնաժողովի առաջ այդ առիթով ելույթ ունեցավ:

Հոկտեմբերի 4-ին կրկին հարցման ենթարկվելով այս նույն հանճնաժողովի կողմից, ես հաստատեց իր այն դիրքորոշումը, որ նման քայլը օրենսդրական է և անցանկալի հետևանքներ չի ունենա Ֆրանսիայի դիվանագիտության համար: Դուք գիտեք, որ նման դիրքորոշման կողմնակից են նաև Ֆրանսիայի իշխանությունները: 1915թ. ջարդերի մասին խոսելիս, ես դա ասում եմ բարձրաձայն ու հուզմունքով, կառավարությունը հասկանում է պատիժ և հիշողություն: Բարբարոսությանը զոհ գնացածների հանդեպ հիշողության պարտքը թանկ է:

Դուք գիտեք նաև, որ արտաքին քաղաքականությունը ունի իր իսկ պարտավորությունները: Այն պետք է տարվի հաշվի նստելով պատմության և կատարված դժբախտությունների հետ, բայց միևնույն ժամանակ հաշվի առնելով այսօրվա աշխարհի իրականությունը: Ես ցանկանում եմ կրկին նշել, որ Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը խաղաղություն ձեռք բերելու քաղաքականություն է: Նման վերաբերմունքով կառավարությունը աշխատում է կայունություն հաստատել պետությունների միջև, խրախուսում է ժողովուրդների միջև հաշտեցումը, առանց երբևիցե ետ կանգնելու մարդկային արժեքներից: Այդ նպատակին է ուղղված այն աշխատանքը, որ նա տանում է Կասպից ծովի և Միջերկրականի միջև ընկած տարածաշրջանում, փորձություններ որդեգրած մի տարածաշրջան, ուր մշտապես ազգամիջյան բախումներ են տեղի ունենում: Նրանց միջև երկխոսություն փնտրելով՝ Ֆրանսիան նպատակ ունի վերացնել կոնֆլիկտների պատճառները, հաղթահարել հակասությունները և զարգացնել նշված տարածքի բոլոր ժողովուրդների միջև համագործակցությունը: Ֆրանսիան ցանկանում է հաշտություն ստեղծել Թուրքիայի և Հայաստանի միջև: Նա ցանկանում է նաև հաշտեցնել Հայաստանին և մյուս հարևան պետություններին: Եթե ցանկանում են նպաստել այս գործընթացին, պետք է խուսափել սխալներից և լարվածություն ստեղծելու վտանգից: Ֆրանսիան Հայաստանի բարեկամն է: Նա նաև այսօրվա Թուրքիայի բարեկամն է, որը չի կարող պատասխանատվություն կրել Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած իրադարձությունների համար: Տարածաշրջանի երկրների միջև բարեկամական հարաբերությունների հաստատելը այն դերն է, որ Ֆրանսիան ստանձնել է այս ճգնաժամի կարգավորման համար, որ տարածվում է աշխարհագրական այս տարածքում՝ շահագործվելով ազգայնամոլության հրեշների կողմից: Ֆրանսիան, ես կրկին ցանկանում եմ հիշեցնել, այն առաջին պետություններից է, որ ճանաչել է Հայաստանի Հանրապետությունը: Այս նոր ինքնավար պետության հետ մենք պահպանում ենք մարդկային խոր հարաբերություններ: Մենք ողջ ուժերը կներդնենք այս նորաստեղծ հանրապետության կայունացման համար: Հայաստանի լայն հետաքրքրությունները ուղղված են իր հարևան պետությունների հետ փոխադարձ փոխըմբռնման և համագործակցության կապեր հաստատելուն: Այդ կապերը պետք է նպաստեն ժողովուրդների մերձեցմանը և տնտեսության և ժողովրդավարության զարգացմանը:

Թուրքիայի հետ արդեն երկար ժամանակ է, ինչ Ֆրանսիան խոր կապեր է պահպանում ամենատարբեր բնագավառներում: Այս հզոր պե-

տությունը, որին մենք հարգում ենք, պետք է ընդունի իր անցյալի սև և ցավալի էջերը: Դա բարդ խնդիր է, մենք դա գիտենք: Անցյալին ուղղված մի հստակ հայացքը կարող է հանգեցնել դրան: Ֆրանսիայի և Եվրոպայի շահերից է բխում Թուրքիայի զարգացման կայունացումը ժամանակակից ճանապարհով: Ֆրանսիան կշարունակի Եվրամիության հետ Թուրքիայի մերձեցման աշխատանքներ տանել՝ նախորդ տարվա վերջին Հելսինկիում կայացած Եվրոպական Խորհրդի շրջանակներում: Ղեկավար պետությունների և միության կառավարության կողմից ընդունված այդ որոշումն ուղղված է Թուրքիայի դեմ, որպեսզի նա անկեղծորեն և վճռականորեն գործի մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության ճանապարհին:

Պայմանավորվածության համար Ֆրանսիան պետք է պահպանի փոխըմբռնման և նրա առաջ ճանապարհ բացելու դիրքորոշումը, որն ընդունվել է մյուս անդամ պետությունների կողմից: Դիվանագիտական այս ազդեցությունը թույլ է տալիս նրան կարևոր դեր խաղալ «Մինսկի» խմբի շրջանակներում, որը եվրոպական համագործակցության և անվտանգության կազմակերպության շրջանակներում զբաղվում է Լեռնային Ղարաբաղի խնդրով:

Տիկին, պարոն սենատորներ, այսօր քվեարկության դրվող հարցը վերաբերում է ցավոտ անցյալին: Այն ոչ ներկայի, և ոչ էլ ապագայի հետ չի առնչվում: Սակայն որոշում կայացնելիս պետք է գիտակցենք, որ Ֆրանսիայի ձայնը լսվելու է այդ ռոջ տարածաշրջանում և առանց անարգանք հասցնելու, այն պետք է հանգեցնի խաղաղության հաստատմանը: Անվտանգության և խաղաղության հաստատման համար մեր երկրի տարվող ուշադիր և համբերատար աշխատանքը պետք է շարունակվի:

Մեր բարեկամական հարաբերությունները ինչպես հայ, այնպես էլ թուրք ժողովրդի հետ պետք է ամբողջովին շարունակվեն:

Պրն. նախագահ - Ես քվեարկության եմ դնում շուտափույթ քննարկման առաջարկությունը, որի համար հանձնաժողովը իր վստահությունն է արտահայտում Սենատին:

(Շուտափույթ քննարկման առաջարկությունը ընդունված է):

ՇՈՒՏԱՓՈՒՅԹ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ՕՐԵՆՔԻ ԱՌԱՋԱՐԿԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Պրն. նախագահ – Օրակարգը հրավիրում է պրն. Ժակ Պելլըտիեի, Ռոբերտ Բրետի, Ժան-Կլոդ Գոդենի, Բեռնար Պիռասի, Միշել Մերսիեի և Ժակ Ուդենի կողմից առաջարկված 1915թ. Հայոց ցեղասպանության ճանաչման մասին օրենքի առաջարկը (թիվ 60, 2000-2001) դնել շուտափույթ քննարկման:

Ընդհանուր քննարկման համար ձայնը տրվում է հանձնաժողովի նախագահին:

Պրն. Խավիեր դը Վիլպեն (զինված ուժերի, պաշտպանության և արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ) - Պրն. նախագահ, պրն. նախարար, հարգելի գործընկերներ, օրենքի այս առաջարկը, որ պետք է քննարկենք, 1998թ. մայիսի 29-ին ընդունվել է Ազգային ժողովի կողմից, և որը ոչ կառավարությունը և ոչ էլ նախագահների կոնֆերանսը չեն ցանկացել ինչպես

առաջնահերթ, այնպես էլ երկրորդական քննարկումով մտցնել Գերագույն ասամբլեայի օրակարգ, արդյունքում Սենատի պաշտպանության զինված ուժերի, արտաքին գործերի հանձնաժողովը ստիպված չի քննարկել, միևչդեռ վերջերս ես միշտ էլ ցանկացել եմ իմ անձնական կարծիքը հայտնել այս հարցի շուրջը:

Սենատը հենց նոր որոշեց քննարկել շուտափույթ քննարկման առաջարկը և արդեն ընթացող քննարկման մեջ ցանկանում եմ ներկայացնել այն պատճառները, որ ստիպեցին ինձ մեզ առաջարկված տեքստի ընդունմանը դեմ հանդես գալ:

Ամենից առաջ, կարևոր է հստակ պարզաբանել թե ո՞րն է այս պահին քննարկման առարկան. խոսքը կոտորածների պատմական ճշմարտությա՞ն մասին է, թե՞ դրանց իրավական տեսանկյունից որակելու մասին: Ո՛չ, ես չեմ կարծում, թե 1915թ. պատերազմական իրավիճակում Օսմանյան կայսրության կողմից հայերի նկատմամբ իրագործված ջարդերի մասին մեր գործընկերներից որևէ մեկի կարծիքը էականորեն կտարբերվի մյուսների կարծիքից:

Տիկին Էլեն Լյուկ – Ուրեմն, պետք է այն ճանաչել:

Պրն. Խավիեր դը Վիպլեն (հանձնաժողովի նախագահ) - Այդ առաջնայնությունը կարևոր է: Ահա թե ինչու 1998թ. մայիսի 29-ի Ազգային ժողովի կողմից քվեարկված տեքստը հզոր քաղաքական քայլ է, որով քաղաքական խմբակցությունները պատասխանում են մեր երկրում ապրող հայ համայնքի օրինականությանը, հարգանքին և բարոյականությանը վերաբերող հարցերին: Բայց ինչո՞ւ են դրանից հետո համառորեն ցանկանում, որ լրացուցիչ փուլ ընթանա և խորհրդարանը այս հարցի շուրջ օրենք ընդունի, չէ որ երկու ժողովներում այս տեքստը քաղաքական պարտավորվածությունից վերածվելով հանրապետության օրենքի, իրավական և դիվանագիտական տեսանկյունից կունենա միանգամայն այլ նշանակություն:

Իրավական փաստը առաջնային է և կկարողանա բացատրել Սենատի նման քայլը: 1958թ. հոկտեմբերի 4-ի Սահմանադրության 34-րդ հոդվածում նշվում է օրենքի ոլորտը և պարզաբանվում նրանում ցանկացած օրենսդրական տեքստի նորմատիվ բնույթը. օրենքը կանոններ է հաստատում և որոշում այն հիմնական սկզբունքները, որոնք առաջ են բերում իրավունքներ և պարտականություններ, և որոշում է Սահմանադրության մեջ նշված նյութերի չափանիշները: Ուստի, օրենքի այս առաջարկը նորմատիվ բնույթ չի կրում և նրա հեղինակները ինձ հետ կհամաձայնվեն, որ այն միայն խորհրդանշական նշանակություն ունի: Ուրեմն հարց է առաջանում, թե արդյո՞ք կիրառվող օրենսդրական ձևը համապատասխանում է Սահմանադրությանը:

Մեզ ներկայացված տեքստը կապված է ավելի շատ բանաձևային գործընթացի հետ, և Սահմանադրությամբ, բացառությամբ հասարակական մի բնագավառի, որը ավելի կոնկրետ նշված է 88-4 հոդվածում, Խորհրդարանը զրկված է այդ հնարավորություններից: Ինչպես ասում էր հանձնաժողովում օրենքի այս առաջարկի քննարկման ժամանակ Ազգային ժողովի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ պրն. Ջեյկ Լանգը. «Այս տեքստի ընդունումը հետաքրքիր նախադեպ է խորհրդարա-

նական համակարգի համար, որը երևում է զրկված է բանաձևեր քվեարկելու հնարավորությունից»:

Սինչդեռ, հա՞րկ է արդյոք, որ մենք՝ ընտրողներս, խախտենք օրենքի կանոնները, որոնք առաջ են բերում իրավունքներ, դա այդքան լուրջ խնդի՞ր է, չեմ կարծում:

Նման օրենքի քվեարկությունն առաջ կբերի ինչպես իրավական դժվարություններ, որոնք արդեն նշվեցին, այնպես էլ կունենան դիվանագիտական հետևանքներ, նույնիսկ, ես կասեի, բավականաչափ մարդկային: Այս առաջարկի քննարկումը, նրա վաղ թե ուշ հանրապետության օրենքի վերածումը բացասական հետևանք կունենա այն դիվանագիտության համար, որ տարվում է միմյանց հաջորդած Ֆրանսիայի ղեկավարների կողմից Թուրքիային նոր կառուցվող Եվրոպային մերձեցնելու համար:

Բոլորը իրավական կոչվող այս պետությունից զգալի առաջխաղացումներ են ակնկալում փոքրամասնությունների և մարդու իրավունքների հարգման հարցում:

Այս համբերատար և պրոգրեսիվ աշխատանքը, թուլացնելով լարվածությունը, կհանգեցնի մի օր այն բանին, որ Թուրքիան խաղաղ աչքերով կնայի իր անցյալին: Այս տեքստի ընդունումը, վախենում եմ, որ հակառակ ազդեցությունը կունենա: Դիվանագիտական առումով, այն վտանգավոր անդրադարձ կարող է ունենալ, եթե մեր ուշադրությունը բևեռենք Հարավային Կովկասի վրա, ուր Հայաստանի և Ադրբեջանի միջև լուրջ կոնֆլիկտը արդեն երկար տարիներ քննադատական դիվանագիտության փուլում է, որտեղ «Մինսկի» խմբի շրջանակներում Ֆրանսիան Ռուսաստանի և ԱՄՆ-ի հետ փորձում է ամեն կերպ երկարատև խաղաղ լուծման ճանապարհ գտնել: Հավանաբար, նման պատասխանատվությունը ենթադրում է, որ մեր պետությունը կողմերի նկատմամբ անհրաժեշտ չեզոքություն պահպանի, ինչպես և այն բոլոր կոնֆլիկտներում, որտեղ նա ջանում է խաղաղության միջնորդ հանդես գալ: Այս քվեարկությանը դեմ հանդես գալը քույլ չի տա, որ այս խնդիրները չշարունակվեն Թուրքիայից շատ հեռու, նախկին սովետական միության Կենտրոնական Ասիայի թուրքախոս պետություններում:

Ուստի պե՞տք է, որ Ֆրանսիան այս մերձարևելյան ընդարձակ գոտում կրկին վրեժխնդրության հող ստեղծի:

Վերջապես այս տեքստի քվեարկությունը տեղին կլինի և դիվանագիտական դրական հետևանքներ կունենա, եթե հայ և թուրք ղեկավարները, նայելով ապագային, իրենք քայլեր ձեռնարկեն, որը մեծ հույսեր առաջ կբերի: Բայց Թուրքիան, իրավացի լինի, թե ոչ, բոլոր իր կոնֆլիկտների հիմքում տեսնում է Հայաստանին, որը աշխարհի տարբեր պետությունների խորհրդարանների միջոցով ցանկանում է օրենքով ճանաչել տալ ցեղասպանությունը: Զգուշանանք, ուրեմն, որ չլինենք այդ կողմնակի, միջնորդ պետությունը և չներգրավվենք նման երկիմաստ, ճնշող տրամաբանության մեջ:

Պրն. նախագահ, պրն. նախարար, սիրելի գործընկերներ, խուսափելով քաղաքական օրինական պարտավորվածությունը վերածել հանրապետության օրենքի, մենք կարող ենք պահպանել Ազգային ժողովի կողմից ընդունված տեքստի չափազանց խորհրդանշական նշանակությունը: Արդեն ընդունելի է, որ 85 տարի առաջ մեր պետությունը, հարգանք ցուցաբե-

լելով, եղեռնի ողբերգությունից փրկվածներին ապաստան տվեց իր երկրում:

Պրն. Նախագահ, պրն. Նախարար, հարգելի գործընկերներ, նշված պատճառներով, ինչպես նշեցի իմ ելույթի սկզբում, ես դեմ եմ քվեարկում մեզ առաջարկված տեքստին:

Պրն. Նախագահ – Խոսքը տրվում է պրն. Պեյոային:

Պրն. Ժակ Պեյռա - Պրն. Նախագահ, պրն. Նախարար, հարգելի գործընկերներ, մենք կրկին հավաքվել ենք հանդիսավորությամբ քննարկելու Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը:

Ոչ ոք չի կարող հակառակվել գոյություն ունեցող փաստերին. 1915թ. Օսմանյան կայսրության ցնցումների ժամանակ հայ ժողովուրդը սարսափելի պայմաններում տեղահանվեց և կոտորվեց, որը և դարձավ 20-րդ դարի առաջին մեծ ողբերգությունը:

Մազապուրծ եղածների մի հսկայական մասը ընտրեց Ֆրանսիան: Նրանք հաստատվեցին ավելի հաճախ այնպիսի քաղաքներում, ինչպիսիք են Մարսելը, Վալանսը, Նիցան և էլի ուրիշ քաղաքներում, որոնց ես այդքան մոտիկից չեմ ճանաչում, որքան նշված երեքին:

Ֆրանսիան հարստացավ այնպիսի կենսունակ մի ժողովրդով, որը լիովին պահպանելով իր ինքնությունը, կարողացավ պատմության ամենադժվարին պահերին արյուն թափել մեր ժողովրդի համար: Ֆրանսահայ համայնքն այսօր, սերված այդ տանջված ժողովրդից, հեռացած լինելով իր արմատներից, մեզնից արդարություն է պահանջում: Եվ մենք չենք կարող չարձագանքել այդ ճիչին, այդ կոչին և մի կողմ ենք դնում այն, թե ինչպիսի խղճի զգացումով այն կորակվի իրավական տեսանկյունից և թե ի՞նչ որոշում կընդունեն մյուսները,իրենց հարց տալով, թե արդյո՞ք Խորհրդարանի գործն է պատմությունը որակելը և կարելի՞ է ընդունել մի տեքստ, որն ավելի շատ խորհրդանշական քան նորմատիվ նշանակություն ունի:

Բայց նշեմ, որ այս ցեղասպանությունը ճանաչվել է միջազգային կազմակերպությունների կողմից՝ ՄԱԿ-ի, Եվրոպառլամենտի, երկու տարի առաջ մեր Ազգային ժողովի կողմից, Նիցայի քաղաքային խորհրդի կողմից, որը միաձայն քվեարկել է Հայոց ցեղասպանության ճանաչման օգտին:

Ինչպես կարելի է չհասկանալ, թե ի՞նչ է մեզնից սպասում Ֆրանսահայ նոր սերունդը, որը թեև չի տեսել իր նախնիների ողբերգությունը, բայց գոնե տեսել է, թե ինչպես են նրանք այդ առիթով ձայն բարձրացնում, որովհետև անցյալի ծանր ապրումները ու հիշողությունները դեռևս հետապնդում են նրանց: Միանգամայն օրինական է, որ Ֆրանսիայի հայերի և ողջ հայության այդ ողբերգությունը ճանաչվի Ֆրանսիայի կողմից: Ինձ թվում է, անվիճելի է այն, որ հայ ժողովուրդը կանխամտածված և կազմակերպված ջարդերի զոհ է դարձել, որը համապատասխանում է ցեղասպանության բովանդակությանը. «այն ազգային, էթնիկ, կրոնական մարդկային խմբերի հետևողական բնաջնջում է»:

Սա նողկալի մի ոճրագործություն է ինչպես իր բովանդակությամբ, այնպես էլ պատճառած հետևանքներով, ահա թե ինչու այն վաղեմություն չի ճանաչում: Ցեղասպանություն ասելով չենք հասկանում միայն զոհեր կամ ֆիզիկական մեծ տառապանք, դա միևնույն ժամանակ մշակութային ոճրագործություն է և այստեղ արդեն, երբ մարդկային կոտորածները ա-

ռաջնորդվում են նաև մշակութային արժեքների ոչնչացմամբ, բացահայտ է դառնում պատմության ասպարեզից այդ ազգի հետքերը անհայտացնելու մտադրությունը:

Հայերի ցեղասպանության հետևանքով քարտեզի վրայից անհայտացան, ջնջվեցին հայկական քաղաքներն ու դրանց անունները, հուշարձանները ավերվեցին ամբողջովին. սա նյութական, ֆիզիկական, հոգևոր ոչնչացում է, մարդկային կենսակերպի, մշակույթի, քաղաքակրթության բնաջնջում, որը պետք է դատապարտվի:

Ֆրանսիան՝ մարդու իրավունքները հարգող այս երկիրը, ունի այնպիսի բարձր արժեքներ, որոնք նրան թույլ չեն տալիս երկար ժամանակ չարտահայտվել հիշողության սուրբ պարտքի առաջ: Մեր պարտքն ենք համարում լռության չմատնել ճշմարտությունը, որը ոմանք փորձում են հերքել, մենք նույնպես ընդունենք «Մուսա լեռան 40 օրում» փառաբանված ժամերի կողքին, այն օրերը, երբ 1921թ. Կիլիկիան հանձնվեց, այդ մասին Ազգային ժողովում հիշեցրեց Պատրիկ Դևեջյանը:

Չի կարելի, ի վերջո, լռության մեջ խեղդել իր կիրառված մեթոդներով նմանը չունեցող այդ ցեղասպանությունը:

Սա արժանավայել գործ է: Արդարության խոսք ասելն անհրաժեշտություն է, չնայած, որ դժբախտաբար մենք երբեք էլ պաշտպանված չենք հնարավոր բարբարոսություններից: Հայոց ցեղասպանության հրապարակային ճանաչումը կարևորագույն գործոն է հանդիսանում արտաքին քաղաքականության մեջ: Այս ցեղասպանությունը ճանաչելով՝ հարգվում է մարդու իրավունքների հռչակագիրը և դրանով կանխվում մարդկության հանդեպ նոր ոճրագործությունների իրագործումը: Ֆրանսիան Հայաստանի և նաև Թուրքիայի, ինչպես նաև այս տարածաշրջանի մյուս պետությունների բարեկամն է և նրանց է ուղղում խաղաղության և արդարության իր խոսքը:

Թուրքիան հզոր պետություն է՝ խոստումներով լի, այնպիսի կոնֆլիկտային սահմաններում, ինչպիսիք են Բալկանները, Մերձավոր Արևելքը, Կովկասը: Թուրքիան ցանկանում է միանալ Եվրոպային, բայց դա հնարավոր կլինի միայն այն ժամանակ, երբ նա համարձակություն կունենա ճանաչել իր անցյալը:

Թուրքիայի դեսպանից ստացած նամակը, ինչպես շատերին, այնպես էլ ինձ շփոթեցրեց, երբ իմացա, որ 1919թ. Կոստանդնուպոլսում կայացած երիտթուրքերի դատավարությունը ավարտվեց նրանց կազմակերպիչների մահվան դատապարտմամբ, փաստ, որ հաստատում է կոտորածները:

Խոսքն այն մասին չէ, որ արգելվի Թուրքիայի մուտքը Եվրամիություն: Մենք կարող ենք հույս դնել այնպիսի թեկնածուների վրա, որոնք կկարողանան բավարարել ոչ միայն տնտեսական զարգացման որոշ չափանիշներ, այլ նաև քաղաքական, ինչպես նաև ժողովրդավարական արժեքների հարգում:

Այնուամենայնիվ, նման դիրքորոշումը չպետք է ազդի այն դերակատարման վրա, որ Ֆրանսիան պետք է ունենա տարածաշրջանում խաղաղության գործընթացում: Դա պետք է ապահովվի: Ֆրանսիան պետք է նպաստի Հայաստանի և Թուրքիայի միջև երկխոսության կայացմանը, մասնավորապես որպեսզի դադարի Հայաստանի նկատմամբ շրջափակու-

մը: Իմ կարծիքով ժամանակն է ինչպես պատմության, այնպես էլ իրավական տեսանկյունից ճանաչել 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը: Ընդհանուր զղջման կոչն արդեն արված է: Ֆրանսիան ինքն է համաձայնվել հետաքրքրվել այդ անցյալով: Թող որ պատմության մեր այս օրինակին հետևեն մյուսները և քաղաքականությունը կարողանա վերագտնել էթնիկական այն հիմքերը, որ բխում են մարդու իրավունքների հռչակագրից:

Սենատը, ճանաչելով ստրկատիրությունը, ցույց տվեց 19-րդ դարի ուղին և կարողացավ բարոյականությունը տեղափոխել քաղաքականության մեջ: Ինձ համար այս քվեարկությունը անհրաժեշտ է, իմ կարծիքով այն խոսում է Ֆրանսիայի պատվի մասին, նրա հավատարմության մասին ինչպես պատմությանը, այնպես էլ իր գաղափարներին:

Պրն. հանձնաժողովի նախագահ, ես լավ հասկանում եմ քոլոր կառուցվածքային խնդիրները, հիմնահարցերը, քաղաքական, տնտեսական և ցանկացած այլ բնույթի շահերը: Բայց այն ինչ մեր աչքով է անցել, անհրաժեշտ է ի վերջո արտահայտել, ապաստան տալով եղեռնից մազապուրծ եղածների մի հսկայական հատվածին, պետք է նաև գերեզմանատուն կառուցել զոհվածների հիշատակին:

Պրն. նախագահ – Խոսքը տրվում է պրն. դը Բրուասային:

Պրն. Լուի դը Բրուասա - Պրն. նախագահ, պրն. նախարար, սիրելի գործընկերներ, օրենսդրական այս թեման, որի համար մենք այս երեկո հավաքվել ենք այստեղ, սովորական չէ, այն իր կարևորությամբ մեծ ուշադրություն կունենա և՛ մեր ազգի և՛ ողջ աշխարհի համար:

Ուստի այս թեման անհրաժեշտ է քննարկել բացառիկ և յուրահատուկ լրջությամբ, որպես արտակարգ մի թեմա, որի համար մենք հավաքվել ենք Ազգային ժողովից հետո Սենատում ճանաչելու 1915թ. իրագործված Հայոց ցեղասպանության փաստը:

Ես կքվեարկեմ այս նախագծի օգտին, որովհետև այն հիմնված է անվիճելի փաստերի վրա և որովհետև մենք պարտավորվածություն ենք զգում հանդեպ այդ հպարտ, ճանաչված ազգը, որը ազգերի միությունում ավելի մեծ հարգանքի է արժանի: Այնուամենայնիվ, սիրելի գործընկերներ, թույլ տվեք մինչ պրն. Հյուռիեն, ամենայն լրջությամբ ասել, որ իմ կարծիքով այս տեքստը բավականաչափ և աղետալիորեն մեղմ է:

Այսպիսով, Ազգային ժողովը միաձայն հանդես է եկել, որը միշտ չէ, որ օրենսդրական լավ նշան է: Նա չի խորացել քննարկման մեջ, ձախակողմյաններն աջակողմյանների հետ վիճաբանության մեջ չեն մտել, ընդդիմադիր կողմը և հավանություն տվողները չեն հակադրվել, դա Ազգային Ժողովի պատիվն է, այնուամենայնիվ, նա շտապեց, որպեսզի ազատվի ժամանակին օրենսդրական քննարկումներից:

Պրն. Դոմինիկ Բրեյ – Շատ բարի:

Պրն. Լուի դը Բրուասա - Գերագույն ասամբլեան առիթ և պատիվ ունի քննարկել այս հարցը, իսկ հայտնի ելույթ ունեցողները մեկը մյուսի ետևից իրենց կարծիքն են հայտնում, թե պե՞տք է արդյոք քննարկել այս արտակարգ թեման, քանի որ Ֆրանսիան ոչ մի կապ չի ունեցել Հայաստանում 1915թ. տեղի ունեցածի հետ և այն ինչ մենք անում ենք պրն. նախարար, զղջումով ենք անում, որովհետև այն չափազանց մեծ օրինախախտում է: Ես հիշում եմ, որ Ազգային ժողովում եղած ժամանակ նախարարի

հետ արծարծվեց ստրկատերերի սերունդների հարցը, որի մասին դաժան հիշողությունը դեռ ապրում է իմ մեջ:

Բայց հարգելի գործընկերներ, հաշվի առնենք այն, որ այս տեքստը միջազգային և ազգային իրավունքով հաստատված է և հնարավոր քայլերն արված են, և ես համոզմունք եմ հայտնում իմ ընկերոջ՝ Կլոդ Հյուռիեի և մյուսների կողմից, որ ութսունհինգ տարի առաջ հայ ժողովրդի նկատմամբ իրագործված ցեղասպանության միակ ճանաչումը կնշանակի, ես կշռադատում եմ խոսքերս, բարոյական խտրականություն դնել, այն օրենսդրական չմանրամասնված քայլ է և ժամանակակից ցեղասպանությունները մոռացության տալու ցանկություն: Ես լսեցի, թե ինչպես էր նախորդ զեկուցողը խոսում 20-րդ դարի առաջին ցեղասպանությունից: Բայց, չէ որ դրանք շատ են եղել: Ես իհարկե չեմ օտարում այն միտքը, որ այս տեքստը կարելի է քվեարկել բարոյական կամ ընտրական հարմարավետության տեսանկյունից, հաշվի առնելով մեր քաղաքի, դեպարտամենտի միանգամայն հարգանքի արժանի ֆրանսահայ ներկայացուցիչներին: Իսկ ի՞նչ պետք է պատասխանենք Ֆրանսիայի քրդերին, կամբոջացիներին, տիբեթցիներին, թութսիներին, ես կարող եմ էլի թվել, որոնք, օրինական կերպով վառ են պահում իրենց անցյալի հիշողությունները:

Բայց սիրելի գործընկերներ, մեր իրավունքը, մեր օրենքները Սենատում, ուր մեր թիվը զգալի է, ստացվում է համընդհանուր չեն: Երբ ես ինտերնետով նայում եմ տարեկան ցեղասպանությունների սարսափելի թիվը, հրապարակված անգլերեն լեզվով, ես կարդում եմ, թե ի՞նչ ցեղասպանություն է տեսել Հայաստանը – սա անժխտելի է: Իսկ ի՞նչ ասենք խեղճ Քուրդիստանի մասին, իմիջայլոց այն մինչև օրս էլ շարունակվում է, Տիբեթի ժողովրդի նկատմամբ կիրառվող գործողությունները, որ դարձյալ շարունակվում են, Կամբոջայի դեպքերը, որոնցից շատ ժամանակ չի անցել, Ռուանդայի թութսիների մասին - դեռ այսօր էլ շարունակվում է: Այս ցեղասպանություններից որևէ մեկը կասկած հարուցո՞ւմ է: Ո՛չ: Իսկ խորհրդարանը բոլորովին վերջերս օրենք է ընդունել Շոահի մասին, մասնավորապես դատապարտելով հիմար ռևիզիոնիզմը: Մեր երկիրը ընդունել է նաև Միացյալ Ազգերի Լիգան: 1948թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան որակել է ցեղասպանությունը, այդ մասին մեր գործընկեր պրն. Պելլետիեն արդեն նշեց:

Կարելի՞ է արդյոք հարգելի գործընկերներ տարբերություն դնել 20-րդ դարի ցեղասպանությունների միջև, այն դեպքում, երբ դրանք բոլորն էլ սարսափելի են, որոնց զոհ են գնացել 1,5 մլն հայեր, 6 մլն Եվրոպայի հրեաներ, 800000 գնչուներ, 1,2 մլն տիբեթցիներ, 1,7 մլն քխմերներ և 1,5 մլն թութսիներ: Ինչպես կարելի է, սիրելի գործընկերներ, այսօր օրենքով հիշելով Հայոց ցեղասպանությունը, տիբեթցի, քուրդ, հրեա, գնչու, թութսի ժողովուրդներին ասել, որ իրենց մասին չենք հիշել:

Պրն. Դոմինիկ Բրեյ - Ամենևին:

Պրն. Լուի դը Բրուասա - Մենք խղճի զգացումով և գիտակցորեն ենք մոտենում բոլոր ժողովուրդներին, որոնք մինչև օրս էլ տառապում են և նշված պատճառներով ցանկանում ենք փոփոխության ենթարկել տեքստը:

Պրն. Դոմինիկ Բրեյ - Բրա՛վո:

Պրն.Լուի դը Բրուասա - Ինչ է, պետք է սպասել, մինչև որ նրանք հիմնովին ոչնչանա՞ն երկրագնդի երեսից, որպեսզի խոսվի այդ մասին:

Դ-ուք ցանկանում եք, որ նրանց երեխաները, կամ վերջիններիս երեխաները՞րը 22-րդ դարում իրենց բողոքի ձայնը բարձրացնեն մեր ազգային պալատների առաջ: Չե՞ք կարծում, որ այսօր մենք Սենատում Ֆրանսիայի ժողովրդի պարտականությունների միայն մի մասն ենք կատարում: Ի՞նչ պետք է այդ դեպքում վաղը պատասխանենք տիբեթցի, թութսի, քուրդ ժողովուրդների սերունդներին. «Նման հարցերով մեզ դիմեք 50, 85 տարի հետո՞»:

Այդ դեպքում ավելի ուշ նրանք, ինչպես գրում էր Վիկտոր Հյուգոն, աղմուկ բարձրացնելով այն մեզնից կպահանջեն: Սիրելի գործընկերներ, ես ձեզ հավաստիացնում եմ, այս առաջացած պատնեշի հաղթահարումը կախված է մեզնից յուրաքանչյուրի մասնակցությունից և հարգանքի ցուցաբերումից:

Ես բարեխղճորեն կքվեարկեմ Հայաստանում իրագործված XX դարի առաջին ցեղասպանության ճանաչման օգտին, բայց չեմ մոռանա մյուս ցեղասպանությունները: Այս բոլոր ոճրագործությունների դեմ քվեարկությամբ, և ոչ թե միայն մեկի, Սենատը ցույց կտա, որ Ֆրանսիան դարի մի նոր էջ կշրջի, որ ավաղ կոչված է «ցեղասպանությունների դար»:

Պրն. նախագահ – Խոսքը տրվում է պրն. Պելշային:

Պրն. Միշել Պելշա - Պրն. նախագահ, պրն. նախարար, սիրելի գործընկերներ, ո՞րն է այսօր մեզ առաջարկված տեքստի նպատակը: Մեզնից պահանջվում է մեր կարծիքը հայտնել 1915թ. կոտորածների իրականությա՞ն, թե դրանց իրավական որակման մասին: Ուստի, չեմ կարծում, թե 1915թ. Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության մասին մեր գործընկերների կարծիքները տարբերվեն, ինչպես ասաց արտաքին գործերի հանճնաժողովի նախագահը. «Մենք բոլորս էլ այն համոզման ենք, որ խոսքը նողկալի ոճրագործություններից մեկի՝ ցեղասպանության մասին է»:

Այսօր քննարկվում է պատմությունը որակելու փաստն օրենսդրական կարգով, որը հատկապես օրենսդրական կարգով չի համապատասխանում մեր սահմանադրության ո՛չ տառին, ո՛չ ոգուն: Արդյոք, մենք՝ օրենսդիրներս չէ՞, որ առաջինը պետք է հարգենք կարևորագույն տեքստը, որ բխում է մեր հնարավորություններից:

Այդ առումով, այս տեքստի օրենսդրական կարգը մի այլ կարևոր հարց է առաջ բերում. որոշումը իսկապե՞ս օրենքին է պատկանում: Իրականում, 1958թ. հոկտեմբերի 4-ի սահմանադրության 34-րդ հոդվածը սահմանում է օրենքի բնագավառը և նշում այդ բնագավառում ցանկացած օրենսդրական փաստաթղթի նորմատիվ բնույթը: Օրենքն առաջ է բերում իրավունքներ և պարտականություններ և որոշում է սահմանադրությամբ այդ նյութերի նորմերը:

Ուրեմն, օրենքի այս առաջարկությունը նորմատիվ նշանակություն չունի, այն կապված է բանաձևային գործընթացի հետ, որի խնդիրը կլինի տեղեկացնել կառավարությանը, թե ինչպիսի՞ վերաբերմունք է դրսևորել ասամբլեայի մեծամասնությունը այս հարցի շուրջ: Սակայն բացառություն է կազմում հասարակական մի բնագավառ, որի մասին ավելի որոշակիորեն նշված է 88-4 հոդվածում: Մեր Սահմանադրությունը հստակորեն զրկել է խորհրդարանին գործադիր իշխանության նկատմամբ այս գործընթացում իրավունքներ բանեցնելու հնարավորությունից: Ահա թե ինչու Ազգա-

յին ժողովի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահը, որը հայտնի իրավաբան է, օրենքի այս առաջարկի քննարկման ժամանակ ասաց. «Այս տեքստի ընդունումը հետաքրքիր նախադեպ կհանդիսանա խորհրդարանի սահմանադրական համակարգում, որը երևում է զրկված է բանաձևեր քվեարկելու իրավունքից»:

Սինչղեռ, բացի այն, որ այս տեքստը կարող է խորհրդանշական արժեք ունենալ, ես պարզապես կհիշեցնեի, որ համաձայն մեր սահմանադրության՝ օրենքի սահմաններից դուրս չէ որակել պատմությունը:

Բացի այդ, խորհրդարանները՝ Եվրամիությունը, Եվրախորհրդարանը կամ մյուս ազգային խորհրդարանները, որոնք 1915թ. Հայոց ցեղասպանության մասին որոշում են ընդունել, այն ընդունել են ոչ թե օրենքի քվեարկությամբ, այլ որպես բանաձև կամ առաջարկ, որոնք միանգամայն թույլ են տալիս հանդիսավոր կերպով համոզվել այն բանում, որ այն զրկված է նորմատիվային արժեքից:

Այդ մասին խոսեցին նախորդ ելույթ ունեցողները, բայց ես այն կրկնում եմ, որովհետև դա ճշմարտություն է և որպես այդպիսին պետք է քննարկվի:

Բոլորովին այլ է այս երեկո Սենատի քննարկմանը ներկայացված տեքստի դեպքը, որովհետև խորհրդարանի կողմից դրա քվեարկումով այն կդառնա հանրապետության օրենք: Այդ տեսանկյունից, պրն. նախարար, Ֆրանսիան հանդիսավոր քայլ կկատարի, որի աշխարհառազմավարական և դիվանագիտական առաջխաղացումը չի կարող չգնահատվել:

Այսպիսով, գալով սահմանադրական կարգի մյուս հակադրությանը, որը կարող է առաջ գալ հետագա գործընթացի ժամանակ, այն է, որ բացի կառավարության ձեռնարկված այս կամ այն միջոցառումից, արդյո՞ք հատկապես Խորհրդարանը Ֆրանսիայի անունից պետք է, թույլ տվեք ասել պրն. նախարար, նման քայլ անի, որը բացի այն, որ անվիճելի է բարոյական տեսանկյունից, որպես հակառակ ազդեցություն դիվանագիտական հետևանք կունենա կամ գոնե անպայմանորեն այդպես կմեկնաբանվի: Յուրաքանչյուրը մեզնից գիտի, որ Ֆրանսիայի արտաքին քաղաքականության ղեկավարման պատասխանատվության հարցում սահմանադրությունը բացահայտ կերպով և լիովին վստահել է Հանրապետության նախագահին և կառավարությանը՝ հետևելով ճիշտ սահմանադրական կարգին և դրա կիրառմանը: Խորհրդարանը լիովին իրավունք ունի հետևելու և ղեկավարելու միջազգային համաձայնագրերի վավերացումը, բայց վերջիններիս քննարկումը և ավելի շուտ պետության ցանկացած դիվանագիտական քայլ պատկանում է միայն գործադիր իշխանությանը, որը այս երեկո քննարկմանը չի մասնակցում:

Կասկածելով օրենսդրական իշխանության ֆունկցիայի փոփոխման մեջ, պրոֆեսոր Գ-ի Կարկասոնը, որը սահմանադրական իրավունքի հայտնի մասնագետ է, 1999թ. ապրիլի 30-ին մամուլին տրված հոդվածներից մեկում գրեց, դրա մասին արդեն նշվեց, բայց ես նորից նշում եմ…

Պրն. Ժան-Կլոդ Գոդեմ – Նա շատ է գրել:

Պրն. Միշել Պելշա - …ափսոսաց, որ «մեր օրենքով պետք է որոշվի պատմական իրականությունը»:

Կարծում եմ, մինչև իրավական նման առաջընթացի մեջ խորանալը, մեր՝ օրենսդիրներիս պարտքն է դրան անդրադառնալ երկու անգամ: Ի-

միջհայլոց, որպես լրացում ես կհարցնեի, թե ինչո՞ւ Ֆրանսիայի Խորհրդարանը պետք է որակի հատկապես 1915թ. ջարդերը, որին զոհ գնացին տասնյակ հազարավոր հայեր, և ոչ թե, ինչպես ասում էր մեր գործընկեր պրն. Դ. Քրուասան, այն ջարդերը, որոնց Ֆրանկոյի ղեկավարության տարիներին զոհ գնացին հանրապետականները, չմոռանանք Կատինի անտառում հազարավոր լեհ զինվորների անմարդկային տանջանքները, երբ վերջիններս եկել էին միանալու նրանց, ում դաշնակիցներ էին կարծում նացիստների դեմ կռվում կամ Ֆրանսիայից Ալժիրի ազատագրման հաջորդ օրը 150000 հարկիսների կոտորածը:

Կարելի՞ է արդյոք նախապատվություններ տալ, երբ խոսքը ոճրագործության մասին է, մի՞թե այս կոտորածները բոլորն էլ նողկալի չեն եղել: Ինչո՞ւ մեր խորհրդարանը չի խոսում նմանապես 1975թ. 200000 վիետնամցի սպաների անմարդկային պայմաններում կալանավորման մասին՝ կազմակերպված հյուսիս-վիետնամյան բանակի կողմից: Այս ամենն ուղեկցվում էր այնպիսի բռնությամբ, որ նրանց մեկ քառորդից ավելին ետ չվերադարձավ (այդ մասին նշվում է պատերազմի գերիների մասին Ժենևի կոնվենցիայում): Իսկ Ֆրանսիան պաշտոնապես ընդունեց Վիետնամի կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Լը Խա Ֆիոյին, որը մեղադրվում է Վիետնամի պատերազմի ժամանակ ջարդերի կազմակերպման մեջ և որը շարունակում է ճնշում գործադրել վիետնամցի ժողովրդի նկատմամբ: Ֆրանկիզմի ժամանակ ես անկասկած կլինեի հանրապետականների կողմը: Դա չէ պատճառը, որ այսօր իմ մտքով անցավ պահանջել դատապարտել Իսպանիային Ֆրանկոյի ժամանակ զազրելի ոճրագործությունների համար, որովհետև ես գտնում եմ, որ նման դատապարտումը միայն հակառակ ազդեցությունը կունենա այդ պետության և ֆրանս-իսպանական հարաբերությունների վրա, ուրեմն թողնենք, որ իսպանացիները իրենց վրա վերցնեն իրենց պատմությունը որակելու հոգսը, ինչպես ի միջի այլոց, դա շատ լավ այսօր անում է Չիլիի ժողովուրդը Պինոչետի հետ՝ առանց որևէ արտաքին միջամտության: Մինչդեռ այսօր նույնիսկ, միջազգային հասարակայնությունը դժվարությամբ է փորձում վերացնել Իսրայելի և Պաղեստինցի ժողովուրդների կոնֆլիկտները, երբ աշխարհի մի հատվածում ատելությունը չի վերանում, որպեսզի խաղաղություն ստեղծվի:

Պատասխանատվություն չվերցնենք մեզ վրա և ատելություն չառաջացնենք, մի բան որ անկասկած եղել է Օսմանյան կայսրությունում հայերի և թուրքերի միջև:

Բացահայտ նախագահական ընտրարշավի ժամանակ իրենք՝ ամերիկացիները նույնպես հրահրված նախագահ Քլինթոնի անծնական միջամտությունից չցանկացան ռիսկի դիմել:

Ես կարծում եմ, որ իսկական մարդասիրությունը չպետք է հանդես գա ընդդեմ խաղաղության և ժողովուրդների միջև բարեկամության: Ուրեմն, թողնենք, որ հայերը և թուրքերը հոգան իրենց անցյալի, իրենց պատմության մասին, և չդառնանք նոր չարագործներ:

Ահա պատճառները, որ ինձ ստիպեցին, չնայած ողբերգության խորությանը, որի մասին հիշում է մեզնից յուրաքանչյուրը, դեմ քվեարկել օրենքի այս առաջարկին:

Պրն. նախագահ – Խոսքը տրվում է պրն. Քրեին:

Պրն. Ռոբերտ Բրե - Պրն. նախագահ, նախ և առաջ կցանկանայի իմ զարմանքը հայտնել և ասել, որ հավանություն չեմ տալիս մեր քննարկման կազմակերպման ոճին: Ինձ մոտ նույնիսկ հարց է առաջանում, թե արդյոք այս պահին մեր Գերագույն ասամբլեայի կանոնակարգը հարգվո՞ւմ է:

Պրն. Նախագահ – Պրն. Բրե, ներեցեք, որ ձեզ ընդհատում եմ, բայց ուզում եմ ասել, որ կանոնակարգը խստագույնս վերահսկվում է:

Պրն. Ռոբերտ Բրե - Այն չափով, որ չգիտեն, որ ներկայացված տեքստի շուտափույթ քննարկման առաջարկը պետք է ընդունված լիներ, ինձ թվում է, որ հարկավոր է հարցնել, թե ո՞վ է ցանկանում մասնակցել քննարկմանը:

Ուրեմն մասնակցում ենք ընթացող քննարկմանը: Ինչպե՞ս է ընտրվել ելույթ ունեցողների ցուցակը:

Պրն. Նախագահ – Պրն. Բրե, ձեր ելույթ ունենալու առաջարկը գրանցված է նիստի հանձնաժողովում:

Պրն. Ռոբերտ Բրե - Վստա՞հ եք, որ ուրիշ ելույթ ունեցողներ չեն լինի:

Պրն. Նախագահ - Ես նշել եմ բոլոր նրանց անունները, ովքեր ցանկություն են հայտնել ելույթ ունենալ, առանց նախօրոք գրանցվելու նիստի հանձնաժողովում: Այսպես գրանցվեցին պրն. Կլոդ Հյուրլեն, Բեռնար Պիրասը, Ժերար Կոլոմբը և այս ցուցակը սահմանափակ չէ, եթե պրն. Ֆիշերը ցանկանում է գրանցվել, նա նույնպես կգրանցվի:

Դուք կասկածո՞ւմ եք գործընթացի կանոնավոր ընթացքի վրա…

Պրն. Ռոբերտ Բրե - Ես վարանում եմ:

Պրն. Նախագահ - Այո, բայց դուք վարանում եք մեղադրելով:

Պրն. Հենրի դը Ռենկուր – Սա տհաճ է:

Պրն. Դոմինիկ Բրեյ - Այս ինչ վիճաբանություն է:

Պրն. Նախագահ – Մենք խստագույնս պահպանում ենք Սենատի օրակարգը:

Պրն. Ռոբերտ Բրե - Ո՞րն է ապացույցը:

Պրն. Դոմինիկ Բրեյ – Այս ի՞նչ խայտառակություն է, ի՞նչ է նշանակում նման պահվածքը:

Պրն. Ժակ-Ռիշար Դլոնգ – Սա ԿԳԲ-ի օրակա՞րգն է:

Պրն. Նախագահ – Պրն. Բրե, տեքստը ներկայացված է և այդ պահից ցանկացած սենատոր կարող է գրանցվել քննարկման համար. ևս երեքը ելույթի համար ձայն խնդրեցին: Այս պահին գրանցվեցին ևս չորսը՝ չհաշված նիստի հանձնաժողովում գրանցվածներին: Եվ ես պատրաստ եմ գրանցել բոլոր նրանց, ովքեր մտադիր են հանդես գալ և չեմ պատրաստվում հակառակվել որևէ մեկի ցանկությանը: Մենք դեռևս ժամանակ ունենք:

Պրն. Դոմինիկ Բրեյ – Սա հուսահատեցնող է:

Պրն. Պատրիկ Լառուս – Իսկ կոմունիզմի հասցեին խոսքե՞ր:

Պրն. Նախագահ – Շարունակեք խնդրում եմ, պրն. Բրե:

Պրն. Ռոբերտ Բրե - Պրն. նախագահ, այսօր ես ելույթ եմ ունենում հանդիսավորությամբ, բայց և մեծ հուզմունքով…

Պրն. Դոմինիկ Բրեյ – Պետք չէր այդպես սկսել:

Պրն. Ռոբերտ Բրե - ...մտածելով հայերի մասին, բոլոր այն հայերի, ովքեր եկել են Ֆրանսիա՝ մարդու իրավունքների այս հայրենիք, որը նաև նրանց սերունդների հայրենիքն է:

Ինչո՞ւ են նրանք լքել հայրենի երկիրը: Ինչո՞ւ են նրանք թողել իրենց ունեցվածքը: Ինչո՞ւ են նրանք ութսունհինգ տարի առաջ եկել Մարսել՝ ընդմիշտ, դարերով իրենց հետ տանելով հիշողությունները:

Պրն. Դոմինիկ Բրեյ - Եվ այդ նա՞ է ասում:

Պրն. Պատրիկ Լառուս – Իսկ Ստալինի խոսքե՞րը:

Տիկին Էլեն Լյուկ – Մի քիչ հարգանք ունեցեք, խնդրում եմ:

Պրն. Նախագահ – Հարգելի գործընկերներ, ես հիանում եմ առավոտյան այս վաղ ժամին ձեր աշխուժությամբ և ոգևորությամբ, բայց թույլ տվեք ելույթ ունեցողին արտահայտվել:

Պրն. Դոմինիկ Բրեյ – Պրն. Բրեի ասածը խայտառակություն է:

Պրն. Ռոբերտ Բրե - Սա՞ է կամավոր ընտրության արդյունքը: Պատասխանը շատ պարզ է. նրանք եկել են Մարսել, որովհետև նրանց հաջողվել է, ի տարբերություն իրենց շատ ընկերների և բարեկամների՝ մի կերպ փրկվել եղեռնից: Ստիպված լինելով լքել իրենց հայրենի հողը՝ նրանք փրկվեցին տանջանքներից և մահից:

Այո, սա պետք է ասվի. հայ ժողովրդի բնաջնջումը ՄԱԿ-ի 1948թ. Կոնվենցիայով վաղեմություն չճանաչող ցեղասպանություն է:

Այս ցեղասպանությունը 1985թ. ճանաչվել է ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից:

1987թ. նմանատիպ բանաձևով հանդես եկավ Եվրախորհրդարանը, որը Եվրամիությանը Թուրքիայի անդամակցումը պայմանավորեց այս ցեղասպանության ճանաչումով, որը Թուրքիան այսօր էլ շարունակում է ժխտել՝ վերագրելով այն անցյալին: Վերջին մեր ստացած նամակները պարզորոշ վկայում են այդ մասին, ամենավերջինը ստացել ենք Թուրքիայի դեսպանի կողմից:

Իսկ 1998թ. մայիսի 29-ին պատգամավորները նիստերի դահլիճում հոտնկայս, միաձայն ընդունեցին միակ այս հոդվածը. «Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է 1915թ. Հայոց ցեղասպանությունը»:

Չի կարելի, որ այս ողբերգությունն անընդունելի մնա Սենատի կողմից:

Վերջապես Սենատը իր կարծիքը կհայտնի հայ ժողովրդի ողբերգության վերաբերյալ՝ նրանց հարազատների, զոհերի հիշատակը հավերժացնելու համար:

Պահանջվեց երկու տարի, որ վերջապես այն քննարկման դրվի: Երկու տարի շարունակ այն քննարկվեց և հանվեց: Կառավարությունը և Գերագույն ասամբլեայի նախագահների կոնֆերանսը հրաժարվում էին Ազգային ժողովում քվեարկված օրենքի այս առաջարկը օրակարգ մտցնել:

Պրն. Դոմինիկ Բրեյ – Կառավարությունը ստիպված մտցրեց այն:

Պրն. Բեռնար Պիրաս – Մի փոքր հարգանք ունեցեք:

Պրն. Ռոբերտ Բրե – 1999թ. փետրվարին Բեռնար Պիրասի, Ժիլբեր Շաբրուի, Գի Ֆիշերի, Մարի-Կլոդ Բոդայի և Էլեն Լյուկի հետ նախագահների կոնֆերանսի ժամանակ բազմիցս առաջ քաշեցինք օրենքի այս առաջարկը օրակարգ մտցնելու հարցը, բացի այդ մեր բազմաթիվ սոցիալիստ և

կոմունիստ գործընկերների հետ ներկայացրեցինք Ազգային ժողովում ընդունված այս նույն օրենքի առաջարկը:

Այս տարվա մարտի 21-ին այս առաջարկի շուտափույթ քննարկման առաջարկի ժամանակ, որտեղ ես առաջինն էի, որ ստորագրեցի, մենք չկարողացանք խորությամբ քննարկել այն, որովհետև առաջարկությանը դեմ հանդես եկողները՝ կառավարությունը և արտաքին գործերի հանձնաժողովի նախագահը մեզ վստահեցրեցին, որ «ցեղասպանության ճանաչումը օրենքի սահմաններից դուրս է, և որ Խորհրդարանը չի կարող որակել ութսունհինգ տարի առաջ մեկ այլ երկրում տեղի ունեցած պատմական իրադարձությունները»:

Պրն. Հիլեր Յլաննդր - Դա այդպես էլ կա:

Պրն. Ռոբերտ Քրե - Այսօր այդ նույն ապացույցները կրկին ներկայացվեցին: Չնայած այդ ժամանակ Սենատում հավանություն տվող գործընկերների մեծամասնությանը՝ շուտափույթ քննարկման առաջարկը մերժվեց:

Շատ լավ հասկանալով, որ ազգային հարցերում դժվարին պահերին պետք է դիմել ազգային և միջազգային հասարակական կարծիքին, մենք չէինք կարող այս հարցը թողնել այդպես:

Քանի որ Սահմանադրությամբ Խորհրդարանը չի կարող բանաձևեր քվեարկել, անհրաժեշտ մակարդակով արտահայտվելու միակ միջոցը մնում է օրենքի քվեարկումը: Այլ միջոց չկա:

Պրն. Դոմինիկ Քրեյ – Սխալ է:

Պրն. Ռոբերտ Քրե - «Մարդու իրավունքները» տեսական հասկացություն չէ, և չի կարելի անտեսել պատմական իրողությունը:

Հայոց ցեղասպանությունը պատմության տարեգրության մեջ նշված և գրքերում ուղղակիորեն տեղ գտած հիշողություն չէ, այն որպես կենդանի և կոնկրետ իրականություն, խորապես արմատացած է հայ հասարակայնության համընդհանուր հիշողության մեջ:

Սի՞թե Ֆրանսիան, որպես մարդու իրավունքները հարգող երկիր, և նրա Խորհրդարանն իրավունք չունեն նոր սերունդներին՝ այդ հիշողության առաջին փոխանցողները լինել:

Ի տարբերություն ոմանց, մյուսները կցանկանան (Հայոց ցեղասպանության ճանաչումը այն քույլ կտա, ես համոզված եմ) արդյունավետ երկխոսություն փնտրել հայ և թուրք նոր սերունդների միջև:

Ապագայի կառուցումը անհնար է, եթե կեղծված կամ ժխտված է անցյալը:

Իսկապես, ինչպես կարելի է հերքել նմանատիպ ցեղասպանությունը, որի կոտորածներին, սկսած 1894թ. մինչև 1915թ. ողբերգական գիշերը, զոհ գնաց 1,5 մլն հայ և որը հավերժ կմնա մարդկության հիշողության մեջ:

Պրն. Դոմինիկ Քրեյ – Իսկ այն ութսուն միլիոնը Ռուսաստանո՞ւմ:

Պրն. Ռոբերտ Քրե - Թուրք ժողովուրդը կարող է դիմակայել անցյալի ողբերգական այդ պատմությանը: Նա ի վիճակի է վերլուծություն անել և ընդունել սարսափելի այս իրադարձությունները: Ես գտնում եմ, որ այսօրվա մեր այս քայլը ոչ թե մարտահրավեր է ուղղված այդ ժողովրդին, այլ ճիշտ հակառակը, հիմք է հանդիսանում առերես առճակատելու անցյալին և նայելու դեպի ապագան: Այո՛, պետք է հույսեր կապել երկխոսության հետ: Հայոց ցեղասպանության ճանաչումը ուղի է հարթում երկու

ժողովուրդների հաշտեցման համար: Բոլոր այս պատճառներով Ժակ Պելլետիեի, Ժան-Կլոդ Գոդենի, Քեռնար Պիրասի, Միշել Մերսիեի և Ժակ Ուդենի հետ, որոնցից յուրաքանչյուրը Գերագույն ասամբլեայի տարբեր խմբակցությունների ներկայացուցիչ է, ես ընդունել եմ այսօր ձեզ ներկայացված օրենքի այս առաջարկը:

Շնորհակալ եմ Ժակ Պելլետիեին, որը համաձայնվեց առաջինը ստորագրել իմ առաջարկը:

Աշխատելով, որ հենց այսօր էլ ընդունվի օրենքի այս առաջարկը և թողնելով սովորույթ դարձած քաղաքական տարաձայնությունները, որոնք անընդհատ մեզ հակադրվում են, մենք հանդիսավորությամբ կոչ ենք անում հարգելի գործընկերներ քվեարկել և ետ կանգնել փոփոխություններ մտցնելուց, որ մեզ կներկայացվեն յուրօրինակ այս հոդվածի քննարկման ժամանակ: Իմացեք, որ 1915թ. կոտորածներին զոհ գնացած 1,5 միլիոն մարդկանց ընտանիքները այսօր լսում են ձեզ:

Պրն. Դոմինիկ Բրեյ – Իսկ այն ութսուն միլիոնը նախկին Խորհրդային Միությունում:

Պրն. Ռոբերտ Բրե - Քվեարկության դնելով օրենքի այս առաջարկը՝ մենք կանք և կլինենք նրանց կողքին, ովքեր ցանկանում են, որ լռությունը երբեք չիջնի մեր եղբայրների գերեզմաններին:

Քվեարկության դնելով օրենքի այս առաջարկը՝ Գերագույն ասամբլեան կբարձրացնի իր հեղինակությունը:

Պրն. Նախագահ – Խոսքը տրվում է պրն. Պոլ Ժիրոդին:

Պրն. Պոլ Ժիրոդ - Պրն. նախագահ, պրն. նախարար, հարգելի գործընկերներ: Կարծում եմ վճռորոշ պահ ենք ապրում, որը նաև խոսում է մեր խորհրդարանի արդարացի լինելու մասին: Մենք քննարկում ենք պատմական այնպիսի իրադարձություններ, որոնք մեզնից յուրաքանչյուրի հիշողության մեջ են և ոչ ոք չի պատրաստվում այն հերքել: Ճիշտ է, որպես քաղաքացի՝ ես ճանաչում եմ, որ 1915թ. տեղի է ունեցել ցեղասպանություն: Այնուամենայնիվ, արդյո՞ք Ֆրանսիայի խորհրդարանի գործն է ընդունել այն որպես նորմատիվ օրենք: Քաղաքացիների կողմից դրա ճանաչումը մի բան է, խորհրդարանի կողմից օրենքի ընդունումը՝ այլ բան:

Մեր պարտքն է այսօր բացատրել մեր համաերկրացիներին սարսափելի այս իրողության ճշմարտությունը, որն ապրել է մի ժողովուրդ, որից կենդանի մնացածներին մենք ընդունեցինք մեր երկրում այդ դժվարին ողբերգությունից հետո: Մենք պետք է օգնենք մեր համաքաղաքացիներին գիտակցելու 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը, ավաղ ասվեց, որ դրանք շատ են եղել: Սինչդեռ, ես համոզված եմ, որ մենք չէ, որ այն պետք է ընդունենք որպես հանրապետության նորմատիվ օրենք:

Մենք այն ընդունեցինք, քիչ առաջ արդեն ասվեց, Շոահի դեպքում և բանը հասավ նրան, որ համաքաղաքացիներից ոմանք իրենց թույլ տվեցին անցնել այն ժխտողների կողմը, նույնիսկ հայհոյեցին զոհերին, բայց խոսքը մեր համաքաղաքացիների մասին է: Ստիպված ենք ընդունել նաև, որ Ֆրանսիան որպես հասարակայնության ներկայացուցիչ, ցավոք, տեսել է, թե ինչպես է իրագործվել զանգվածային բնույթ կրող այդ ողբերգությունը: Բայց մենք այդպես չենք մոտենում Հայոց ցեղասպանության հարցին: Կարծում եմ, որ Սահմանադրության ճիշտ ընթերցումը թույլ չի տալիս բանաձևեր քվեարկել և մեզ իրավունք չի վերապահում դրանք ընդունել որպես

օրենք: Բացի այդ, ես համոզված եմ, որ եթե օրենքը քվեարկության դրվեր և այն հանձնվեր սահմանադրական խորհուրդ, վերջինս կհաստատեր, որ Խորհրդարանի իրավասությունից վեր է այս կարգի հանրապետական օրենք ընդունելը: Սա է պատճառներից առաջինը, որը ինձ թույլ կտա քվեարկելու այս առաջարկը, որպեսզի ժխտեմ նրա բացարձակ անընդունելիությունը և եթե այն չընդունվի, ես ձեռնպահ կլինեմ հետագա քննարկումների ժամանակ, այն պատճառով, որ զրկված կլինեմ օրենսդրի իմ իրավունքից:

Մյուս պատճառը ինձ ստիպում է բավականաչափ շրջահայաց լինել այս հարցում: Մարդկային ամենագեղեցիկ խոսքերից մեկը հետևյալն է. «Ես քեզ չեմ հարցնում ոչ քո երկրի անունը, ոչ քո ազգությունը, ես հարցնում եմ՝ ո՞րն է քո վիշտը»:

Ֆրանսիայի հասարակայնությունը այս հարցը տվեց, երբ հայերը եկան իրենց երկրում ապաստան գտնելու, և մենք նրանց չհարցրեցինք, թե ո՞վքեր են: Մենք պարզապես նկատեցինք նրանց տանջանքները և միացյալ ուժերով կարողացանք դիմագրավել դրան:

Ես կասեի նույնիսկ համընդհանուր ձևով արդյո՞ք մեր հանրապետության սովորույթներին է պատկանում հետևել, թե ինչպես են զարգանում գործողությունները:

Պրն. Դոմինիկ Բրեյ - Բացարձակապես:

Պրն. Պոլ Ժիրոդ - Արդյոք մեր երկրի սովորույթների մե՞ջ է մտնում տեսնել, թե ինչպես են մեր հասարակության մեջ նոր խավեր առաջանում: Ես դրանում նույնպես համոզված չեմ: Սա է մյուս պատճառը, ես կարծում եմ, որ մեր խորհրդարանական պարտքը կատարելով և նիստերի դահլիճում՝ մեր համաքաղաքացիների կողքին հայտնելով մեր կարեկցանքն ու համերաշխությունը ֆրանսահայ համայնքին, չեմ կարծում, որ մենք դրանով առանձնահատուկ ծառայություն կմատուցենք այդ նույն համաերկրացիներին և մեր ողջ երկրին՝ նրանց առանձնացնելով որպես համայնք: Ես սա ասում եմ ամենայն լրջությամբ և հուզմունքով, որովհետև ես, ինչպես և մեզնից շատերը, պատկանում ենք մի սերնդի, որն իր քաղաքակիրթ հասարակության հետ 1939-1945թթ. մեծաթիվ աղետների է ենթարկվել: Եվ հիմա մեր այս օժանդակող քայլով մեր պարտքն ենք համարում մեկս մյուսի նկատմամբ համերաշխություն ստեղծել, ինչպես դա պետք է անեինք 1915թ. հետո: Ես չեմ կարծում, որ որպես օրենսդիրներ, մենք ցանկություն կունենանք այս կարգի տարածայնություններ ստեղծել, ուստի մեր ֆրանսահայ համայնքի ներկայացուցիչներին ասում եմ, որ ձեր ցավը ես լավ հասկանում եմ, ես ձեզ չեմ հարցնում, թե որտեղի՞ց եք և ո՞վ եք, ես փորձում եմ սփոփել այդ տառապանքը, ես դա անում եմ ելնելով իմ քաղաքացիական պարտքից, բայց չեմ կարծում, որ մեր պարտքը և ավելի քիչ իրավունքը կլինի վերափոխել այս կարգի գործողությամբ մեր ժողովրդի ամուր միասնությունը և մեր հանրապետության ներքին սահմանադրությունը: Ես սա ասում եմ, մեծ հուզմունքով: Այս պահին մտքովս չի անցնում արտաքին քաղաքականության նկատմամբ շրջահայացություն ցուցաբերել: Առաջին հերթին ես մտածում եմ մեր ժողովրդի հզորության և միասնության մասին:

Պրն. Նախագահ – Խոսքը տրվում է պրն. Հյուռիեին:

Պրն. Կլոդ Հյուռիե - Պրն. նախագահ, պրն. նախարար, հարգելի գործընկերներ, 1948թ. դեկտեմբերի 9-ի Միացյալ Ազգերի Գլխավոր ասամ-

բլեայի ընդունած ցեղասպանության ոճրագործության կանխարգելման և պատժի մասին 260-A կոնվենցիայով՝ ցանկացած ցեղասպանություն մեծ հարված է ուղղված մեր համընդհանուր գիտակցությանը: Ոչ ոք չի կարող անտարբեր նայել այն ողբերգություններին, որ ողջ պատմության ընթացքում կրեց մի ողջ ժողովուրդ՝ տղամարդիկ, կանայք, երեխաները, որոնց ծրագրավորված բնաջնջումը պայմանավորված էր նրանց մեկ այլ՝ ռասայական, կրոնական և էթնիկ պատկանելությամբ:

Այդ իսկ պատճառով մենք պետք է մեր կարեկցանքը հայտնենք հայ ժողովրդին ութսունհինգ տարի առաջ ապրած ողբերգության համար: Արդեն ասվեց, որ Ֆրանսիան մասնակից չի եղել այդ ողբերգությանը և նրա կողմից այս ցեղասպանության ճանաչումը երեք լուրջ հարց է առաջ քաշում:

Արդյո՞ք մեր ազգային խորհրդարանի հնարավորությունների մեջ է մտնում մեկ այլ երկրում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների օրենքով ճանաչումը:

Նման քայլը, ձեզնից շատերն այդ մասին հիշատակեցին, առաջ կբերի «զղջման» տարբեր խոստովանություններ, այդ մասին նշվեց նաև պետական իշխանությունների կողմից, որոնք խոսեցին պատմության այդ դառը ժամանակաշրջանի մասին:

Որո՞նք են այն բուն պատճառները, որ դրդեցին օրենքի առաջարկի հեղինակներին դիմել բացառիկ մի քայլի, որպեսզի Գերագույն ասամբլեան որոշի այն քննարկել: Իսկ ինչո՞ւ հատկապես հիմա:

Վերջապես, ինչո՞ւ են առաջարկում պաշտոնապես ճանաչել միայն Հայոց ցեղասպանությունը: Բոլոր այս խճճված հարցերը, ճիշտն ասած, պետք է, որ հստակ պատասխան ստանան: Եթե մեր ասամբլեան, հաշվի չառնի բազմաթիվ մեր գործընկերների այն կարծիքը, որ այս առաջարկն անընդունելի է և դրական պատասխան տա առաջին հարցին, այդ դեպքում մեր քվեարկությունը կախված կլինի այն մեկնաբանություններից, որոնց մենք կարող ենք ակնկալել. ինչո՞ւ Ֆրանսիան պետք է ճանաչի միայն հայերի ցեղասպանությունը: Արդյոք սա չի՞ նշանակում, որ առաջարկի հեղինակները տարբերություն են դնում ցեղասպանության սարսափների միջև:

Մեր կարծիքով և խորը գիտակցությամբ մենք չենք կարող դա ընդունել, ճիշտ այնպես, ինչպես և չենք կարող անարգանքի սյունին գամել այն պետությանը, որն անկասկած, ինքը պետք է հաշտվի իր անցյալի հետ, ինչը նրան կազատի մեղավորության պատասխանատվությունից, որը պակաս ծանր չէ այն պատասխանատվությունից, որ կրում են մյուս պետությունները, որոնցում իրագործված ոճրագործությունները նույնպես նողկալի են:

Բազմաթիվ են անցած դարի ընթացքում միմյանց հաջորդած ցեղասպանության դեպքերը, որոնց զոհ են դարձել միլիոնավոր մարդիկ և մեր համընդհանուր հիշողությունը չպետք է մոռանա դրանք:

Այդ պատճառով ես, իմ որոշ գործընկերների հետ միասին, որոշեցինք փոփոխության առաջարկ ներկայացնել, առանց խորանալու պատմության անցած դարաշրջանների մեջ, որով Ֆրանսիան կճանաչի 1915 թվականից ի վեր աշխարհի տարբեր երկրներում տեղի ունեցած բոլոր ցեղասպանությունները:

Հարգելի գործընկերներ, եթե Ֆրանսիան խորհրդարանի քվեարկությամբ ճանաչի միայն Հայոց ցեղասպանությունը, ապա նաև խտրականություն դնելը տարօրինակ կթվա և շատերի մոտ հարց կառաջանա, թե որո՞նք են «ընտրական» նման վերաբերմունքի թաքնված պատճառները: Եթե հակառակը, Ֆրանսիան, որ համարվում է մարդու իրավունքները հարգող պետություն, ճանաչի երբեմն «ցեղասպանությունների դար» կոչվող 20-րդ դարի բոլոր ողբերգությունները, նա դրանով հարգանք ձեռք կբերի և մեր համընդհանուր գիտակցությունը կկարողանա պատասխան տալ առաջ քաշվող բոլոր հարցերին:

Պրն. Նախագահ – Խոսքը տրվում է պրն. Պիրասին:

Պրն. Բեռնար Պիրաս – Պրն. նախագահ, պրն. նախարար, հարգելի գործընկերներ, ես երկար եմ սպասել այս պահին և փոքր-ինչ հուզմունքով եմ այսօր ելույթ ունենում սոցիալիստական խմբակցության իմ գործընկերների անունից: Վերջիններիս և քաղաքացիական և հանրապետական կոմունիստական խմբակցության անդամների և էլի որոշ այլ խմբակցությունների մի քանի անծանց հետ միասին արդեն ամիսներ շարունակ աշխատանք ենք տանում, որ վերջնականապես ընդունվի 1915թ. Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ օրենքի այս առաջարկը: Ելույթիս մեջ կուզեի նշել նաև թիվ 238 օրենքի առաջարկը ստորագրողներին, ինչպես նաև բոլոր սենատորներին, ովքեր կողմ են քվեարկել առաջարկի շուտափույթ քննարկմանը:

Իրականում, դուք գիտեք, որ մարտի 21-ին թիվ 238 օրենքի նախագիծը, որը շուտափույթ քննարկման առաջարկի ընթացակարգի առարկա էր դարձել, մերժվել էր: Անկասկած մեր խղճի գիտակցումը թույլ տվեց, որ այսօր այդ անցած նախաձեռնությունը կրկնվի և քննարկվի այս հարցը:

Այն, որ ես հնարավորություն ունեմ այս բեմից արտահայտվել, խոսում է այն մասին, որ երկրորդ ընթացակարգի առաջին փուլը հաջողությամբ է ընթացել: Ես չեմ կասկածում, որ այն այս անգամ իր ավարտին կհասնի: Երկար կանգ չառնելով բարդ ու ծավալուն այս տեքստի վրա՝ բավարարվեմ միայն նշելով, որ փաստերը և խիղճը ի վերջո կհանգեցնեն այն բանին, որ այն ճանաչվի: Խնդիրը, որ մենք պաշտպանում ենք, արդարացի է: Փորձենք հասնակալ, թե որքան ցավալի կլիներ, եթե խորհրդարանական այս նախաձեռնությունը մոռացվեր, այնպես ինչպես շատ երկար ժամանակ մոռացության էին մատնված 1915թ. դեպքերը՝ առանց վերջնական լուծում ստանալու: Որո՞նք են այն պատճառները, որոնք մեզ ստիպում են քննարկել օրենքի այս առաջարկը, որը շարադրված է հետևյալ կերպ. «Ֆրանսիան պաշտոնապես ճանաչում է 1915թ. Հայոց ցեղասպանությունը»: Իսկապես, ութսունհինգ տարի առաջ Օսմանյան կայսրությունում հայ ժողովուրդը ողբերգական ժամանակաշրջան է ապրել, որի արդյունքում ազգի 2/3 կամ 1,5 միլիոնը ոչնչացվել է, մինչդեռ փրկվածների մեծամասնությունը, ավելի կոնկրետ 800000 հայեր արտագաղթել են դեպի աշխարհի տարբեր ծայրեր, մասնավորապես Ֆրանսիա:

Մինչդեռ, այս իրադարձությունների հաստատումը բավական չէ մեկնաբանելու մեր այսօրվա քննարկումը: Մենք այստեղ ենք, որովհետև այս կոտորածները անուշադրության են մատնվել: Նրանք միջազգային օրենքով ճանաչման չեն արժանացել, մինչդեռ արժանի էին, որն էլ կհանգեցներ նրան, որ կդատապարտվեին և կորակվեին բարբարոսական այս

գործողությունները և կարող է պատահի, ո՞վ գիտի, կկանխեին 20-րդ դարի ընթացքում իրար հաջորդած սարսափները:

Այս հոդվածով մենք որակում ենք ցեղասպանության այս իրադարձությունները՝ համաձայն ՄԱԿ-ի ընդունած որոշման:

Օբյեկտիվորեն ոչ ոք չի կարող մերժել գործողությունների նման որակումը, որոնք հանգեցրին այն բանին, որ կանխամտածված, ծրագրավորված, կազմակերպված պլանի համաձայն հայերից դատարկվեց Արևելյան Անատոլիան: Ուրեմն, ժամանակն է, որ մենք մեր կարծիքը հայտնենք այդ դեպքերի մասին, քանի որ դարի առաջին ցեղասպանությունը ոմանց համար մոռացության առարկա է դարձել և որ առավել վատ, ժխտվում է ոմանց կողմից: Ուստի մեր այս քայլը որքան իրավական նույնքան էլ պատմական նշանակություն ունի: Բայց ի՞նչ նշանակություն կունենա պաշտոնական այս ճանաչումը: Իմ կարծիքով, հուսով եմ շատերը կկիսեն իմ տեսակետը, խորհրդարանական այս քայլը խորհրդանշական կարևորություն կունենա, որը պետք է պարզաբանվի: Առաջին հերթին այս նախաձեռնությունը առիթ է Ֆրանսիայի համար հիշեցնելու և ցույց տալու, որ նա մարդու իրավունքները հարգող երկիր է: Ճանաչման վերջնական ընդունումն ապացուցում է, որ Ֆրանսիայի ժողովուրդը օրենսդիրների միջոցով հարգել է համամարդկային արժեքները՝ առանց առաջնություն տալու ենթադրվող դիվանագիտական և տնտեսական հետաքրքրություններին:

Կարելի է զղջալ, որ Ֆրանսիան առաջին պետությունը չէ, որ ճանաչել և որակել է այս ողբերգությունը, թեկետ նա այսօր Արևմտյան Եվրոպայի առաջին հզոր պետությունն է, որ ընդունում է: Բացի այդ, Ֆրանսիան ապացուցել է, որ նմանատիպ վերաբերմունք ունի թե անցյալի և թե ներկայի նկատմամբ: Օրինակ, ստրկատիրության հարցում, Վել դ'Իվի և վերջերս Ալժիրի պատերազմի նկատմամբ:

Եթե պատմական ճշմարտությունը դժվար է ընդունել, այն անպայմանորեն դժվարացնում է փայլուն ապագայի կառուցումը: Անցյալի սխալների ճանաչումն առաջընթացի միակ ճանապարհն է, լինի դա քաղաքակրթությունների, թե ամբողջ մարդկության համար:

Մյուս կողմից, հակառակ այս նախաձեռնության ընդդիմադիրների առաջ քաշած վիաստերին՝ նման ճանաչումը Հայաստանի և Թուրքիայի միջև երկարատև խաղաղության հաստատման արգելք չի հանդիսանա: Հակառակը, սա նպաստող գործոն է: Այս քայլով բացարձակապես մեղադրանքներ չի հասցվում ժամանակակից Թուրքիային, այլ բոլորովին այլ կերպով է մոտենում պատմությանը: Դա արվում է միայն առաջ ընթանալու, հատկապես Թուրքիայի՝ Եվրամիությանը անդամակցելու գործընթացին նպաստելու համար:

Պատմական դեպքերի նոր պարզաբանումը, ճշմարտության բացահայտումը միայն կթուլացնի վրեժխնդրության զգացումը և ոչ թե այն կսրի, և եթե այն առաջանա, սա միայն զոհեր ունեցած ժողովրդի՝ հայերի մոտ կլինի: Միակ զգացումը, որ Թուրքիան կարող է ունենալ, դա «վիրավորված հպարտության» զգացումն է, ինչպես նման զգացում ունենք մենք՝ ֆրանսիացիներս, Վիշիի օրոք տեղի ունեցած դեպքերի նկատմամբ:

Եվ երրորդ, այս ցեղասպանության ճանաչումը մեզ՝ ֆրանսիացիներիս համար առիթ է ցույց տալու մեր կապվածությունն ու բարեկամությունը

Հայաստանի հետ, մասնավորապես մեր երկրում ապրող մեծ հայ համայնքի հետ:

Արդեն հայերի երեք սերունդ ապրում է մեր երկրում, որը մեզ մեծ վստահություն է ներշնչել, ցույց տվել մեզ միանձնալու իր կարողությունն ու ցանկությունը, մեզ հետ միասին ակտիվորեն մասնակցել է Առաջին, իսկ այնուհետև Երկրորդ համաշխարհային պատերազմներին և նրա մեծ թվով զավակներ զոհվել են մեր հանրապետության, մեր հայրենիքի համար:

Սիրելի գործընկերներ, հիշո՞ւմ եք Լուի Արագոնի տեքստի հիման վրա գրված և Լեո Ֆերեի կատարմամբ «Կարմիր հայտարարություն» կոչվող այն հիասքանչ և հուզիչ երգը, որում խոսվում է Միսաք Մանուշյանի խմբի մարտիկների սխրանքների մասին:

Այս համայնքը, իրեն բնորոշ հնարամիտ խելքով միաժամանակ նպաստել է մեր երկրի մշակութային և տնտեսական զարգացմանը:

Ընդունել, ինչպես շատերը, որ խորհրդարանական այս նախաձեռնությունը միանգամայն ընտրական կլինի, կնշանակի հարցականի տակ դնել մեր քաղաքական գիտակցությունը: Նման ձևով շարունակելը անհեթեթություն կլինի, քանի որ օրենքի այս առաջարկը խորհրդարանականների մեծ մասի կողմից համաձայնեցվել է:

Տարբեր քաղաքական խմբակցությունների նկատելի տարաձայնությունները, որոնք ստորագրել են թիվ 60 օրենքի այս առաջարկը, պետք է վերջ տան նման վիճաբանություններին:

Օրենքի այս առաջարկի վերջնական ընդունումը ցույց կտա վեհ գաղափարների ուժը: Ֆրանսիան մնում է այն երկիրը, որը հարգում է մարդու իրավունքները և երկարատև խաղաղությունը չի կարող հիմնված լինել պատմական ճշմարտության հերքման կամ չընդունման վրա: Ֆրանսիան ցույց է տալիս իր սերտ կապվածությունը հայ համայնքի հետ:

1915թ. իրադարձությունները չեն կարող վոխադարձ վստահություն ներշնչել երկու պետությունների երկկողմանի պատմությանը: Նրանք պետք է ամեն գնով ներթափանցեն մեր համընդհանուր գիտակցության մեջ, որպեսզի առաջ ընթանան: Այսօրվա մեր աշխատանքը այդ նպատակն է հետապնդում: Մենք, օրենքով, պետք է հպարտ լինենք դրանով:

Պրն. Նախագահ – Խոսքը տրվում է պրն. Կոլոմբին:

Պրն. Ժեռար Կոլոմբ - Չկա այսօր մի ժողովուրդ կամ ղեկավար, որ չկարողանա համընդհանուր գիտակցությամբ դիմակայել իր պատմությանը:

Միակ անհրաժեշտ հարցը, որ այս երեկո մեզ պետք է մտահոգի այն է, որ մենք խորապես համոզված լինենք, որ իսկապես 1915թ. տեղի է ունեցել հայերի ցեղասպանությունը:

Սիրելի գործընկերներ, եթե յուրաքանչյուրս մեզ տանք այս հարցը, որը ամենակարևոր հարցն է, ապա այս երեկո մենք միաձայն կքվեարկենք Հայոց ցեղասպանության ճանաչման օգտին:

Դարի վերապրողների հուզիչ վկայությունները և բոլոր պատմաբանների՝ այդ ժամանակաշրջանի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ իսկապես 1915թ. տեղի է ունեցել XX դարի առաջին ցեղասպանությունը:

Պրն. Պատրիկ Լուսառ – Ոչ ոք դա չի ժխտում:

Պրն. Ժեռար Կոլոմբ - Այդ դեպքում, ո՞ր փաստերը մեզ կստիպեն լռելյայն ընդունել հայ ժողովրդի այս ցեղասպանությունը:

Իրավական հիմքե՞րը: Մենք շատ լավ գիտենք, որ իրավունքի հաստատումը կարող է քող գցել ամենամեծ անարդարությունների վրա: Մենք գիտենք ասույթը. Summum jus, summa injuria! («Քարձրագույն իրավունքը բարձրագույն անարդարությունն է»):

Սահմանադրության համաձայն, ելնելով այն փաստից, որ օրենսդիրն արտակարգ իրավունքներ ունի գործադիր իշխանության համեմատությամբ, մենք կհամաձայնվենք լռելայն ընդունել XX դարի առաջին ցեղասպանությունը: Ինչպես չեք նկատում, որ մենք բոլորովին չենք կարող թաքնվել իրավական հիմքերի ետևում:

Պրն. Հիլեր Ֆլանդր – Սա քվեատուփերի է նման:

Պրն. Ժեռար Կոլոմբ - Ինչ վերաբերում է Թուրքիայի հետ հարաբերությունների պահպանմանը, գործընկերների մեծամասնությունը, որոնք կքվեարկեն այս երեկո Հայոց ցեղասպանության ճանաչման օգտին, Թուրքիային չեն ընդունում որպես իրենց թշնամի, այլ ճիշտ հակառակը: Մենք կարծում ենք, որ օգնելով Թուրքիային ճանաչել հայերի ցեղասպանությունը և դիմակայել իր պատմության ամենասև էջերին, մենք օգնում ենք նրան առաջ գնալ ժողովրդավարության ճանապարհով: Եվ այս երեկո, մենք գիտակցում ենք, որ իրագործելով այս ակտը՝ օգնում ենք Թուրքիայի այն ուժերին, որոնք պայքարում են իրենց երկրում խորացնելու ժողովրդավարությունը: Ինչպես չնկատել, որ պատերազմից հետո Գերմանիայի ամենահայտնի ղեկավարները կարողացան ճանաչել անցյալի այն ոճրագործությունները, որ ավելի ուշ տեղի ունեցան, և միացան ժողովրդավարական պետությունների միությանը և բարեկամական կապեր հաստատեցին մեր երկրի հետ: Ուստի սխալ է ասել, թե մոռանալով անցյալը, կարելի է նոր հարաբերություններ հաստատել Թուրքիայի և Հայաստանի միջև: Հակառակը, օգնելով Թուրքիային ճանաչել իր անցյալը, կկարողանանք այս տարածաշրջանում նոր հարաբերություններ հաստատել, որոնք հիմնված կլինեն խաղաղության և համագործակցության վրա: Ուրեմն, ասում են, որ մեր պատմության մեջ այլ ցեղասպանություններ էլ են եղել:

RPR-ի մի խումբ սենատորներ - Դրանք եղել են:

Պրն. Ժեռար Կոլոմբ - Ճիշտ է, ուրիշ ցեղասպանություններ էլ են եղել: Բայց ինչպես չեք նկատում, որ մարդկության պատմության սև էջերը մեկը մյուսի ետևից դարձել են նոր ուսումնասիրությունների և հետաքննությունների առարկա:

Հակառակը, ես կարծում եմ, որ համընդհանուր գիտակցության մի նոր առաջընթաց կարելի է համարել այն, որ այս կամ այն թեման քննարկվում է ոչ թե միայն այն պատճառով, որ դա ամենից հաճախ պետական կամ գաղափարախոսական կարգի խնդիր է: Այսօր դա այլևս գոյություն չունի, սա մի հսկայական առաջխաղացում է, որը մինչ այդ արգելված էր: Ժամանակակից պատմության բոլոր ոճրագործությունները մինչ մեղադրանքին արժանանալը և դատապարտվելը, քննարկվում են: Հավանաբար այսպես է առաջանում մարդկային հարաբերությունների նոր ընկալումը՝ հիմնված ոչ թե ծայրահեղ ուժի և բռնության, այլ իրավունքի վրա:

Հարգելի գործընկերներ, նրանք ովքեր թվարկում են ժամանակակից պատմության ոճրագործությունները, կարող են համոզված լինել, որ մեր պատմության մանրազնին քննարկումը չի խնայի ոչինչ և ոչ ոքի: Կարծում եմ, որ այսուհետ ավելի ու ավելի շատ կլինի նրանց թիվը, ովքեր

կցանկանան գաղափարախոսական համերաշխությամբ քողարկել կատարված ոճրագործությունները, անկախ այն բանից, թե ովքեր են դրանք թույլ տվել:

Հարգելի գործընկերներ, այս երեկո Հայոց ցեղասպանության ճանաչումը վճռորոշ քայլ է մարդկային գիտակցության առաջխաղացման համար:

Պրն. Ռոլանդ Կուտո – Շատ լավ:

Պրն. Ժեռար Կոլոմբ - Ահա թե ինչու, ինչպես Ազգային ժողովի մեր գործընկերները, մենք պետք է միաձայն ընդունենք Հայոց ցեղասպանությունը:

Պրն. նախագահ – Խոսքը տրվում է պրն. Սեիեին:

Պրն. Քեռնար Սեիե - 1915թ. Հայոց ցեղասպանությունը պատմական ճշմարտություն է, որն անկասկած իր արժանի գնահատականը չի ստացել, բայց արդեն մի քանի ամիս առաջքաշված այն կարծիքը, որ քննարկվի մարդկային այս ողբերգության պաշտոնական և հասարակական ճանաչումը, արդեն իսկ մասամբ պայքար է չիմացության դեմ, որը կարող է ընթացք ստանալ:

Հասկանալի է, որ 1915թ. կոտորածներին զոհ գնացածների սերունդները չեն բավարարվի պատմական հիշողության ուղղակի մեջբերումով: Նրանք ցանկանում են տեսնել Ֆրանսիայի հանրապետության հանդիսավոր այն ակտի իրականացումը որն առնչվում է օրենքի հետ:

Բայց արդյո՞ք օրենքը կարող է նման պարագայում այդ նպատակին ծառայել: Ես այդպես չեմ կարծում երեք պատճառներով:

Առանձնացնեմ նախ և առաջ առաջին պատճառը, որը շատ ավելի վիճահարույց է. արդյոք տեղի՞ն է այս առաջարկը կամ բխո՞ւմ է տնտեսական շահերից և ստիպում լռել, որպեսզի բախումներ և տարաձայնություններ չլինեն մեր միջև: Իմ կարծիքով նյութական շահերը պետք է սկզբունքորեն իրենց տեղը զիջեն արդարության հրամայականին: Ուստի, դա ոչ միայն իմ կարծիքն է, որ թողնելով մի կողմ շահերը, Հայոց ցեղասպանության ճանաչման համար ընտրվի օրենսդրական ուղին: Հետո գալիս է սահմանադրական փաստը. իրավական պետությունում այն հզոր արժեք ունի, որովհետև օրենքի հարգումը միակ կարևոր միջոցն է մարդկային ճշմարտության հաստատման համար, մինչդեռ դրա ոտնահարումը անբուժելիորեն և արագ տանում է դեպի անարդարություն և իրականում այս ճանապարհով ավելի շուտ ցած են իջնում, քան թե այն հաղթահարում են: Ուրեմն մեր Սահմանադրությունը օրենքին չի վստահում այն ֆունկցիան, որ նրան է պատկանում: Օրենքի առաջարկը, որ մենք քննարկում ենք, իսկապես վտանգում է Սահմանադրական խորհրդի գրաքննությունը: Բայց ես չեմ համառում այս հարցի շուրջ, որովհետև շատերն այն կարող են չափազանց ճնշական համարեն մարդկային այնպիսի մեծ ողբերգության համար, որի առաջ ես հուզմունքով խոնարհվում եմ: Իրականում, ամենալուրջ հարցն իմ կարծիքով կապված է այն երկիմաստության հետ, որն անկասկած վերաբերում է օրենքով և ձայների մեծամասնությամբ պատմական այս ճշմարտության ընդունմանը: Օրենքի հիմքն իրականում ավելի քիչ վստահելի է, քան ճշմարտությունը, որ ցանկանում են օրինականացնել:

Հայոց ցեղասպանության պատմական ճշմարտությունը անվիճելի է և անխախտ: Դրան հակառակ, օրենքի ճշմարտությունը ձևականորեն

կախված է միայն թե ինչպիսի ձայների մեծամասնությամբ այն կքվեարկվի: Նրա հաստատումը կախված է ձայների մեծամասնությունից և միայն արժեք ունի այն դեպքում, երբ չի հակադրվում ձայների մնացած մեծամասնությանը: Ահա թե ինչու մինչև այսօր Ֆրանսիան ձեռնպահ է հանդես եկել պատմության օրենքով ճանաչմանը: Ընդունված պաշտոնական ճշմարտությունները, եթե անգամ դրանք համընկնում են իմ զգացմունքներին, իմ հավատությանը չեն արժանանում, որովհետև այն ինչ անում է խիղճը հանուն եղբայրության, հավատարիմ կլինի և կպաշտպանի նաև հավասարությունը և ազատությունը:

Հայ ժողովրդի նկատմամբ տածած իմ բարեկամական զգացմունքները և ամենախոր համոզմունքները շատ բարձր են: Մինչդեռ, վերին աստիճանի բարեկրթություն և բանականություն պետք է ցուցաբերել, առանց որի հնարավոր չէ ճշմարտությունն արտահայտելը և արդարություն ակնկալելը:

Հենց այս պատճառով, որ հայ ժողովրդի շահերից է նաև բխում և, որն էլ դժվարին ճանապարհով պայքարում է այն նողկալի անարդարության դեմ և պաշտպանում Ֆրանսիայի օրենսդրական այս շարունակելիությունը, ես դեմ եմ քվեարկում օրենքի այս առաջարկությանը: Նման օրենքի ընդունումը հայերին անկասկած հոգեբանական բավարարվածություն կտա, բայց այն որևէ իրավական նշանակություն չի ունենա և ոչ մի արդյունավետ, կոնկրետ փոխհատուցում չի լինի: Փոխարենը հաշվի առնենք, թե ինչ նշանակություն ձեռք կբերի նման օրենքով մեր օրենսդրական գործունեությունը: Հանրապետության ոգին վեհ զգացմունքների վրա չէ հիմնված: Ես ցավում եմ, որ նրանք, ովքեր պաշտպանում են մեր հանրապետությունը, չկարողացան դա բացահայտ ասել, մինչև Ազգային ժողովը իրավական փակուղում կհայտնվի: Սա է պատճառը, որ այս երեկո Սենատը մեծ երկընտրանքի առաջ է կանգնել:

Պրն. նախագահ – Խոսքը տրվում է պրն. Դյուռան-Շաստելին:

Պրն. Հյուբեր Դյուռան-Շաստել – Պրն. նախագահ, պրն. նախարար, հարգելի գործընկերներ: Այս երեկո քննարկվող օրենքի առաջարկը կարևոր նշանակություն ունի: Ակնհայտ է, որ այստեղ գոյություն ունի զուտ անձնական ազգային շահերի կոնֆլիկտ, անկասկած օրինական, և բոլորովին այլ ծավալի՝ միջազգային մակարդակի նպատակներ:

Կառավարությունը հստակ որոշել է իր դիրքորոշումը Ազգային ժողովի քվեարկության ժամանակ, արտաքին գործերի նախարար պրն. Հյուբեր Վեդրինի ելույթից հետո, մի դիրքորոշում որ վերջինս կրկնեց վերջերս զինված ուժերի և պաշտպանության և արտաքին գործերի հանձնաժողովի առաջ, իսկ ավելի կոնկրետ, որ Խորհրդարանը, լինելով օրենսդրական մարմին, իրավունք չունի որակել պատմությունը: Խորհրդարանի հետ կապերի նախարարը, ի վերջո, քիչ առաջ հիշեցրեց այդ մասին:

Այս նույն խնդրով, նախագահ Քլինթոնը հոկտեմբերի 19-ին ընդունեց Ներկայացուցիչների Պալատի օրակարգից այս բանաձևը հանելու առաջարկը, որը նպատակ ուներ ճանաչել Հայոց ցեղասպանությունը, նախագահին տեղեկացնելով, թե ինչպիսի վտանգ կարող է ներկայացնել այս բանաձևը Միջին Արևելքում Ամերիկայի շահերին:

Նաև, ինչպես արդեն նշվեց, թե ի՞նչ դիրքորոշում ընտրեց Թուրքիայում հայոց պատրիարքը. «Այս հարցը քաղաքագետների կողմից չպետք է շահարկվի անձնական հետաքրքրություններից ելնելով»:

Ֆրանսիան, որը պաշտպանել է Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության հարցում և որը ի միջի այլոց հիանալի հարաբերություններ ունի Հայաստանի հետ, չի կարող օրենսդրական ճանապարհով միջամտել ութսունհինգ տարի առաջ կատարված այդ իրադարձություններին, որքան էլ դրանք սարսափելի լինեն, քանի որ դա պատկանում է պատմությանը:

Ավարտելուց առաջ ավելացնեմ, որ օրենքի այս առաջարկի ընդունումն անկասկած ավելի շատ խնդիրներ առաջ կբերի քան դրանց լուծում կտա:

Բոլոր նշված պատճառներով ես դեմ եմ քվեարկելու առաջարկված տեքստին:

Պրն. նախագահ – Խոսքը տրվում է պրն. Ֆիշերին:

Պրն. Գի Ֆիշեր – Պրն. նախագահ, պրն. նախարար, հարգելի գործընկերներ: Լուի Արագոնի շատ հայտնի «Կարմիր հայտարարություն» պոեմի քիչ հայտնի բանաստեղծության մեջ հիշատակվում է հայ ժողովրդի վերածնվելու հույսի և Ֆրանսիայի ժողովրդի հանդեպ ունեցած անխախտ բարեկամության մասին: Այս երեկո ես իմ ուշադրությունը հրավիրեցի այդ մի քանի տողի վրա: Ահա, թե ինչպես է հեղինակը ներկայացնում Մանուշյանի խմբի մեղադրյալներից մեկին, հենց իր՝ Միսաք Մանուշյանի խոսքերը.

Ջմեռային հզոր արևը լուսավորում է բլուրը,
Որքա՜ն գեղեցիկ է բնությունը, և ինչպես է սիրտս խոցվում,
Մեր հաղթական քայլերից հետո արդարություն կգա
Ի՛մ Մելինե, իմ սե՛ր, իմ ո՛րբ
Եվ ես քեզ ասում եմ, ապրի՛ր և երեխա լույս աշխարհ բե՛ր:

Ֆրանսիայի ժողովրդի արդարության նկատմամբ ունեցած հույսը, վերածնունդը, ապրելու հույսը, մահվան վիշտը դարձնում է էլի ավելի թեթև:

Ինչպե՞ս եք պատկերացնում մահվանից առաջ թեթևացած մարդու հոգին, նույն այն մարդկանց, հայ եղբայրներին, որոնք այդպես էլ չտեսան, որ իրենց տանջանքներից ութսունհինգ տարի հետո կգա արդարության գնահատման պահը:

Այսօր, երբ մեր ասամբլեան հավաքվել է քննարկելու օրենքի մի առաջարկ, որը ստորագրվել է մի շարք քաղաքական խմբակցությունների կողմից, ընդամենը մի քանի քայլ է մնում, որ վերջապես ճանաչվի 1915թ. Հայոց ցեղասպանությունը: Ես ուզում եմ հավատալ, որ բարեկրթությունը, հաղթելով ամեն տեսակի տարաձայնություններին, թույլ կտա մեզնից յուրաքանչյուրին ընտրել այնպիսի դիրք, ինչպիսին թելադրում է նրա հոգին և գիտակցությունը՝ հօգուտ արդարության:

Սիրելի գործընկերներ, ասեմ նաև, որ հուզմունքով եմ մտածում այն մասին, թե մեր ասամբլեայի կողմից օրենքի այս առաջարկի քվեարկությունից հետո երջանկության ինչպիսի պահեր է ապրելու հայ համայնքը, մասնավորապես Ռոն Ալպի շրջանում:

Ես ծնվել եմ Դեսինում, որը գտնվում է Ռոնում՝ մետաքսի արտադրության քաղաքում, ուր ես իմ կյանքի քսան տարիները անցկացրել եմ հայերի կողքին: Դեռ երեխա ժամանակ նրանց հետ կիսել եմ իմ դժբախ-

տությունները և ուրախությունները, ուստի նրանց սպասումները նաև իմ սպասումներն են:

Հատկապես հիշում եմ 1975թ. մի օր, երբ ցեղասպանության զոհերի հիշատակին կառուցված կոթողի առաջ Դեսինի քաղաքապետի օգնական Արսեն Մարկոսյանը հավաքված ամբոխի առաջ ասում էր.

«Ա՜խ, 1915թ. զոհե՜ր, աննիրիմ մեր սիրելի՛ զոհեր, մենք տեսնում ենք ձեր տանջահար մարմինները այս հուշարձանի միջով, քնեցե՛ք խաղաղ»:

Իմ անձնական կյանքից ես վստահ եմ, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը շատ ավելին է, քան ուղղակի պատմական ճշմարտության վերականգնումը: Որովհետև տանջված ժողովուրդը չի կարող անտարբեր լինել իր եղբայրների կյանքի նկատմամբ, այդ է վկայում Ֆրանսիայում ֆաշիզմի դեմ պատերազմի ժամանակ հայերի մասնակցությունը: Որովհետև տանջանքներ ու ցեղասպանություն ապրած մի ազգի համար մոռացությունը երբեք չի ամոքի նրա վերքերը, այլ հակառակը, նա պարտավորված կլինի պայքարել դրա դեմ, որը կլինի մարդկության ապագայի նպատակը:

Պրն. Ժան-Կլոդ Գոդեմ – Մասնավորապես մերը:

Պրն. Գի Ֆիշեր - Այս երեկո, ես չեմ ցանկանա, որ մենք անցնենք շուտափույթ քննարկման գործընթացին:

Մենք արդեն իսկ պատասխանը գիտենք:

Հարգելի գործընկերներ, այսօրվա մեր քվեարկությունը խաղաղության և հաշտության ակտ է: Կոտորածների, տանջանքների պաշտոնապես ճանաչումը ժողովորդավարական իրավունքների կայունացման քայլ է: Դրան հակառակ, անպատժելիությունը միշտ բացասական է և ընդունակ վտանգելու ժողովուրդների ժողովրդավարության ճանապարհը, ինչպիսին էլ որ դրանք լինեն: Այսպիսով, մի ժողովրդի ցեղասպանության ճանաչումը ողջ մարդկության տանջանքների և պահանջների ճանաչում է: Ահա թե ինչու, ես մեծապես հավատում եմ այն բանին, որ վերջապես պատմության մի լուրջ սխալ ուղղվելու վրա է, որ մի ժողովուրդ իրեն կտեսնի իր իրավունքների մեջ և կկարողանա շարունակել իր ճանապարհը՝ ձերբազատվելով երկու ծանր բեռից՝ սխալից և չճանաչումից, քանի որ ինչպես ասում էր խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր Էլի Վիզելը. «Մոռանալ ցեղասպանության զոհերին, նշանակում է երկրորդ անգամ սպանել նրանց»:

Պրն. Նախագահ – Ոչ ոք այլևս ձայն չի՞ խնդրում ընդհանուր քննարկման համար:

Ընդհանուր քննարկումը ավարտված է:

ԲԱՑԱՐՁԱԿ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Պրն. Նախագահ - Ես ներկայացնում եմ պրն. Ժակ-Ռիշար Դլոնգի և Միշել Պելշայի թիվ 3 առաջարկը, որով այն բացարձակ անընդունելի է համարվում:

Ահա թե ինչպես է այն շարադրված.

«Օրակարգի 44-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ Սենատը անընդունելի է համարում 1915թ. Հայոց ցեղասպանության ճանաչմանը վերաբերող օրենքի առաջարկը (թիվ 60, 2000-2001)»:

Հիշեցնեմ, որ Սենատի օրակարգի 44-րդ հոդվածի վերջին պարբերությամբ՝ այս առաջարկի վերաբերյալ խոսքի իրավունք ունեն միայն այս նախաձեռնության հեղինակը կամ նրա ներկայացուցիչը (15 րոպե), ընդդիմադիր ներկայացուցիչը (15 րոպե), նախագահը կամ հանճնաժողովի զեկուցողը և կառավարությունը: Խոսքը տրվում է պրն. Դ-ոնցիի՝ առաջարկի հեղինակին:

Պրն. Ժակ-Ռիշար Դլոնգ - Պրն. նախագահ, պրն. նախարար, հարգելի գործընկերներ, ես կաշխատեմ, որ իմ խոսքերը վեճ չառաջացնեն:

Պրն. Մարսել Շարման - Դժվար կլինի այդ:

Պրն. Ժակ-Ռիշար Դլոնգ - Մենք որոշեցինք քննարկել Հայոց ցեղասպանության վերաբերյալ օրենքի առաջարկը, և ես հավատում եմ, որ մեծամասնությունը ցանկություն կունենա իր դիրքորոշումը ներկայացնել այս ողբերգության շուրջ: Քննարկումը կայացավ և արտահայտվեցին տարբեր կարծիքներ: Ուրեմն, հարկավո՞ր է մանրամասնորեն խոսել օրենքի այս առաջարկի մասին, որոշում ընդունել, այն դարձնել մեր հաստատուն իրավունքը և կիրառել սահմանադրական կասկածելի մի գործընթաց: Օրենքը պետք է ներքին կարգի նշանակություն ունենա: Օրենքի առաջարկության մեջ մտնում են արտաքին փաստերը, որը մտնում է Ֆրանսիայի խորհրդարանի իրավունքների մեջ: Այն ներքին իրավական կարգը ոչ մի նշանակություն ձեռք չի բերի:

Պրն. Վիլպենը ներկայացրեց փաստեր, որոնք հիմնված են 1958թ. հոկտեմբերի 4-ի Սահմանադրության 34-րդ հոդվածի վրա և նշվել Ազգային ժողովի արտաքին գործերի հանճնաժողովի նախագահի կողմից հանճնաժողովում առաջարկի քննարկման ժամանակ, որը նույն իմաստն էր արտահայտում. «Այս տեքստը կունենա հատկապես խորհրդանշական նշանակություն»:

Նախկին ազատամարտիկների պետքարտուղարն ինքն իրեն հարց տվեց այս առիթով 1998թ. մայիսի 28-ին Ազգային ժողովի քննարկման ժամանակ:

«Սահմանադրության տեսանկյունից հարց է ծագում, թե արդյո՞ք օրենքի սահմաններում է պատմությունը որակելը»: Նույն վերապահումներով 1999թ. մարտի 17-ին հանդես եկավ արտաքին գործերի նախարարը Սենատի արտաքին գործերի հանճնաժողովի առաջ: Այս խնդիրն այսօր էլ հարցականի տակ է:

Արտերկրի հետ փախհարաբերությունները չեն մտնում Խորհրդարանի օրենսդրական իրավունքների մեջ: Սահմանադրության 34-րդ կամ մյուս հոդվածների և ոչ մեկի կանոնադրության մեջ օրենսդրին իրավունք չի վերապահվում միջամտել դիվանագիտական ասպարեզում:

Սահմանադրության 37-րդ հոդվածում նշված է, որ օրենքի մեջ մտնող թեմաները օրակարգային բնույթ ունեն:

Ուրեմն, մենք գործադիր իրավասության տակ ենք և ոչ թե օրենսդիր: Խորհրդարանը չի կարող այս հարցին միջամտել օրենսդրական ճանապարհով: Ուստի Ֆրանսիայի խորհրդարանը դրանում անկարող է. ratione materiae et ratione locci («Նյութի էությունը տեղի էության մեջ է»):

Ինչպես այս մասին արդեն հիշեցրեց պրն. Վիլպենը, տեքստը նախ և առաջ կապված է բանաձևային գործընթացի հետ՝ նպատակ ունենալով կառավարության նախաձեռնությամբ արտահայտել այն դիրքորոշումը, որ այս կամ այն թեմայի շուրջ կընտրի ասամբլեայի մեծամասնությունը, գործընթաց, որ մեր Սահմանադրությունը, բացառությամբ հասարակական մի բնագավառի, որի մասին ավելի կոնկրետ նշվում է 88-4 հոդվածում, պարզորոշ առանձնացրել է խորհրդարանական իրավունքները, ինչպես որ հաստատել է Սահմանադիր խորհուրդը 1959թ. հունիսի 17,18 և 24-ի որոշումներում, որը վերաբերում է Ազգային ժողովի օրակարգային ծրագրին:

Քանի որ օրենքի առաջարկը սահմանադրությամբ անընդունելի է, Ազգային ժողովի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահը առաջարկեց դրա բանաձևային գործընթացի կիրառումը: Նա շատ լավ գիտեր գործընթացի փոփոխության մասին, որը նա իր վրա էր վերցնում և իր քաղաքականության վերջում հայտնելով իր հանձնաժողովի ցանկությունները՝ կառավարությանը հնարավորություն տվեց դուրս գալու խճճված այդ իրավիճակից:

Եթե հակառակը, ճանաչենք օրենքի այս առաջարկը, ապա այն ընդունելուց հետո հրամանի ուժ կտա հանրապետության կառավարությանը գործելու հատկապես միջազգային ատյաններում՝ համաձայն օրենքի առաջարկը ներկայացրած հեղինակների սկզբունքների: Ուրեմն ես հաստատում եմ, որ Սահմանադրությամբ խորհրդարանը իրավունք չունի հրամաններ ներկայացնել կառավարությանը, հատկապես դիվանագիտական հարցերի դեպքում: Սահմանադրությունն է որոշում յուրաքանչյուր ղեկավար մարմնի իրավունքները: Դիվանագիտության ասպարեզում Խորհրդարանն իրավունք ունի միայն հետևել միջազգային համաձայնագրերի վավերացմանը և ոչ թե դրանց քննարկմանը, որն էլ գործադիր իշխանության հնարավորությունները հասսաստելը այդ քննարկման համար: Խոսքը հանրապետության նախագահի բացառիկ իրավունքների մասին է:

Երբ խորհրդարանը իր մասնակցությունը ցուցաբերեց այս հարցում, սկզբից նա փոփոխեց սահմանադրությունը, այնտեղ սկզբունքորեն չներկայացնելով 88-4 հոդվածը, որը Եվրամիության իրավասության տակ է: Այս հոդվածում նշվո՞ւմ է, որ խոսքը «հասարակական գործողությունների առաջարկությունների մասին է, որոնց մեջ մտնում են օրենսդրային կարգի որոշումներ» և արդյո՞ք այդ հոդվածը բավարարվում է խորհրդարանական ժողովներին իրավունք տալով ոչ թե օրենսդրական այլ բանաձևերի տեսքով տեսակետներ արտահայտել: Խորհրդարանի միանգամից գործելու այս անկարողությունը կարծես հրամայող նշանակություն ունի, որը դիվանագիտական առումով պատկանում է գործադիր մարմնին:

Բազմագործունեությունը դիվանագիտության համար հարմար չէ: Խորհրդարանը որոշումներ է ընդունում մյուսներից հետո, նա հաստատում է համաձայնագրերը, իսկ կառավարությունը պատասխանատու է Ազգային ժողովի առաջ: Նա հսկում է, բայց ուղղակիորեն չի գործում: Նա մանդատ չի տալիս կառավարությանը: Զգույշ լինենք, որ օրենքի այս առաջարկի քննարկման շրջապտույտում նախադեպ չստեղծվի, սահմանադրական գործածվող օրենքի աղբյուր, որը այլ խնդիրների վերաբերյալ և ուրիշ ժամանակներում կհանգեցնի կառավարության և հանրապետության նախագահի դիվանագիտական գործունեության լճացմանը: Խոսքը այստեղ

սկզբունքային հարցի մասին է: Ուստի ես հաստատում եմ, որ առանց հստակ սահմանադրական վճիռների Խորհրդարանը իրավասու չէ այս հարցում օրենսդրական ճանապարհով օրենք ընդունել: Պրն. նախագահ, ես զարմանում եմ, որ վարչապետը Ազգային ժողովի ընդունելուց հետո առաջ չի քաշել այս տեքստի սահմանադրական անընդունելիությունը: Հիշեցնեմ, որ սահմանադրության գործող 41-րդ հոդվածով «եթե այն ի հայտ է գալիս օրենսդրական գործընթացի ժամանակ, խոսքը չի վերաբերում նրա օրակարգ մտնելու պահին, այլ վերաբերում է գործընթացի ցանկացած պահին, և եթե առաջարկը կամ դրա փոփոխության առաջարկը օրենքի սահմաններում չէ (...), կառավարությունը կարող է այն անընդունելի համարել»: Դեռևս ուշ չէ այդ մասին խոսել: Բացի այդ ես համոզված եմ, որ սահմանադրական խորհուրդը կկարողանա ճիշտ գնահատել այս վիճելի հարցը:

Սիրելի գործընկերներ, ես առաջարկում եմ խոհեմություն ցուցաբերել և հարգել յուրաքանչյուր ղեկավար մարմնի իրավունքները, ինչպես դրանք ընդունված են սահմանադրությամբ, և քվեարկել ներկայացված առաջարկությունը՝ ցույց տալով դրա բացարձակ անընդունելիությունը: Սա ամենաքիչն է, որ ես ձեզնից կխնդրեմ:

Պրն. նախագահ – Խոսքը տրվում է պրն. Գոդենին, որը դեմ է այս առաջարկին:

Պրն. Ժան-Կլոդ Գոդեն – Պրն. նախագահ, պրն. նախարար, հարգելի գործընկերներ, դուք հենց նոր լսեցիք մեր գործընկերոջ՝ Ժակ-Ռիշար Դլոնգի առաջ քաշված ապացույցները, որոնցով նա ցանկացավ ցույց տալ առաջարկի բացարձակ անընդունելիությունը: Դա նրա իրավունքն է: Եթե ես այսօր ցանկանում եմ դեմ հանդես գալ այս առաջարկի գործընթացին, դա նշանակում է, որ հենց նոր ներկայացված ապացույցները համոզիչ չեն ինձ համար: Ես դեմ եմ դրանց, ես չեմ բավարարվում այս ասելով և կփորձեմ այն ձեզ ապացուցել:

Օրենքի մի առաջարկ է ձեզ ներկայացվել հանրապետության փորձառու միջնորդ՝ մեր հայտնի գործընկեր Ժակ Պելլետիեի կողմից, որը լինելով հանրապետությունում փորձառու միջնորդ, հուսով եմ, իր մտքերը մեզ հետ կկիսի: Օրենքի այս առաջարկը համաձայնեցված է այնքանով, որ մեր ասամբլեայի քաղաքական տարբեր խմբակցությունների սենատորներ համաձայնվել են այն ստորագրել:

Այս դեպքը բավականին հազվագյուտ է, որը հանդիսավորությամբ նշվում է այս բեմից:

Այս տեքստը բացարձակապես միտում չունի, ես այն շեշտում եմ, մեղադրել ներկայիս Թուրքական կառավարությանը 1915թ. իրագործված սարսափների համար: Մենք հեռու ենք այդ մտքից և ես ցանկանում եմ սա ասել մեր գործընկեր պրն. Դլոնգին:

Խոսքը Ֆրանսիայի խորհրդարանի գործողության և այս ճանաչումով պատմության առաջ հարգանք ձեռք բերելու մասին է: Իսկապես, եթե նույնիսկ համընդհանուր օրենքի այս առաջարկը իրավաբանորեն նույնը չէ, որը քվեարկվել է 1998թ. Ազգային ժողովում, միևնույն է այն նույն իմաստն ունի: Թեման լրիվ նույնն է, ճիշտ նույն կերպով շարադրված նույն յուրօրինակ հոդվածն է: Եթե այսօր Սենատը պաշտոնապես ճանաչի 1915թ. Հայոց ցեղասպանությունը, ինչպես դա արեցին երկու տարի առաջ Պալե-

Բուլղոնում պատգամավորները, ֆրանսիական խորհրդարանը ամբողջությամբ կճանաչի 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը: Մինչդեռ, ես նորից կրկնում եմ, նման քայլը բոլորովին նպատակ չունի հակառակվել Թուրքիային:

Ոմանք կասեն, թե պահը հարմար չէ ընտրված: Արդեն տարիներ շարունակ նույն թեման է հոշափվում: Իրավիճակը Մերձավոր Արևելքում պայթյունավտանգ է: Իսկապես դա այդպես է, նույնիսկ ցավոք այն երբեմն լուրջ քննույթ է կրում: Կարելի՞ է արդյոք դա պատճառաբանելով՝ օրինականորեն չճանաչել այն ցեղասպանությունը, որի պատմական ճշմարտությունն ապացուցված է: Ոմանք էլ կասեն, թե Թուրքիայի հետ առևտրատնտեսական շահերը շատ կարևոր են: Բայց մի քիչ անբարոյականություն չի՞ լինի դա նշել որպես փաստ, երբ քննարկվում է այնպիսի մի լուրջ թեմա, ինչպիսին հարյուր հազարավոր զոհերի և ցեղասպանության ճանաչումն է: Մյուսներն էլ կասեն, արդեն այս մասին խոսվեց այս ամբիոնից, որ օրենքը չի կարող որակել պատմությունը: Սա լրացուցիչ ապացույց համարվեց, երբ նախորդ նիստի ժամանակ ես առաջարկեցի 1915թ. Հայոց ցեղասպանության ճանաչմանը վերաբերող օրենքի առաջարկը օրակարգ մտցնել: Մինչդեռ սիրելի գործընկերներ, Սենատը բազմիցս արդեն առիթ է ունեցել նիստերի այս դահլիճում որակել պատմությունը, նշելով Իսրայելի պետության արդարության մասին, հատկապես երկար ժամանակ չի անցել Ալժիրի թեմային վերաբերող քննարկումից: Ուստի, մի՞թե սա այլ դեպք է: Ինձ թվում է, որ այո, դժբախտաբար:

Ոմանք էլ կասեն, ինչպես արդեն նշեցին որոշ ելույթ ունեցողներ, որ Միացյալ Նահանգների Կոնգրեսի Ներկայացուցիչների Պալատը, որ պատրաստվում էր բոլորովին վերջերս քվեարկել Հայոց ցեղասպանության ճանաչման օգտին, նախագահ Բիլ Քլինթոնի միջամտությամբ, հուսով եմ ժամանակավորապես, մերժեց: Արդյո՞ք պետք է հետևել այս օրինակին: Թույլ տվեք, սիրելի գործընկերներ չհամաձայնվել: Ազգային անկախությունը մեզ էլ է վերաբերում, եթե անգամ մենք գալիացիներից չենք սերվել: Բազմաթիվ պատճառներ և ապացույցներ դեռ էլի կառաջարկվեն՝ պահանջելով մեզ հրաժարվել, լռել ու լռեցնել ժողովրդի ձայնը: Բայց վերջինս չի լռի մինչև որ հայ համայնքի ներկայացուցիչները բավարարված չլինեն: Ի վերջո, հավաքված տարբեր փաստերը, լինեն դրանք Կոսովոյի կամ կովկասյան իրավիճակին վերաբերող, ցույց են տալիս, որ դրանցից և ոչ մեկը իրականում այնքան արժեք և արդարացուցիչ փաստեր չեն ներկայացնում, որքան 1915թ. դեպքերը:

Միգուցե ես մի փոքր միամտություն ցուցաբերեցի՝ առաջարկելով ճանաչել Հայոց ցեղասպանությունը, դեռևս 22 տարի առաջ, երբ երիտասարդ պատգամավոր էի: Բայց ես այն մարդկանցից եմ, ովքեր երբեք չեն համեմատում մեր երկրի դիվանագիտական կամ տնտեսական շահերը և բոլոր այս զոհերի հիշատակի ճանաչումը: Իհարկե, մենք գիտենք, և մեր գործընկերներից շատերը հուզմունքով շեշտեցին, որ մարդկության պատմության մեջ այլ ցեղասպանություններ էլ են եղել: Անմիջապես հիշում եմ Շոահի դեպքը, ուրիշ ցեղասպանություններ էլ են եղել, 1915թ. հետո էլ և բոլորովին վերջերս էլ:

Պրն. Լուի դը Բըռուսա - Դրանք այսօր էլ կան:

Պրն. Ժան-Կլոդ Գոդեճ - Անկասկած պատմական ճշմարտությունը վերականգնելու համար պետք է դրանք էլ ճանաչվեն...

Պրն. Լուի դը Բրուասա - Ե՞րբ:

Պրն. Ժան-Կլոդ Գոդեճ - ... որպեսզի ապագա սերունդները զգան այդ արհավիրքների վնասները, որոնք տեղի են ունեցել անցյալում, որպեսզի դրանք այլևս չկրկնվեն: Բայց այսօր, պրն. Բրուասա մենք խոսում ենք Հայոց ցեղասպանության մասին: Եկեք չխառնենք ողբերգական դեպքերը, որոնք, կարծում եմ, տարբեր մոտեցումներ են պահանջում:

Ես լսեցի, որ ոմանք ցանկանում են ընդարձակել մեր այսօրվա քննարկումը՝ խոսելով նաև տարբեր ժամանակներում այլ տեղերում իրագործված ցեղասպանությունների մասին: Դա միանգամայն հարգանքի է արժանի և մենք բոլորս միանում ենք այդ վերլուծությանը: Բայց չպետք է այսօր դա քննարկել: Թող որ այսօր խոսենք միայն հայ ժողովրդի մասին: Նա արժանի է դրան: Ես այստեղ ցանկանում եմ հիշեցնել հարգելի գործընկերներս, ձեզնից շատերն արդեն ասացին, որ ֆրանսահայ համայնքը ամբողջովին կապվել է մեր ժողովրդին: Հայերից շատերը, օրինակ, քաղաքական ասպարեզում, ղեկավար պաշտոններ են զբաղեցնում, մենք հարկ է, որ խոսենք այդ մասին կամ էլ տնտեսության կամ մշակույթի ասպարեզում, որտեղ նրանք նպաստել են դրանց զարգացմանը: Դուք արդեն դրանցից շատերին նշեցիք, հատկապես տաղանդավոր և հանրահայտ կինոռեժիսոր Անրի Վեռնոյը: Բոլորն էլ համառորեն պահանջում են, որ Ցրանսիան ճանաչի այս ողբերգությունը, որին զոհ են գնացել նրանց նախնիները: Ես անկեղծորեն և փոքր-ինչ հանդիսավորությամբ եմ ասում, սիրելի գործընկերներս, եկել է ժամանակը: Եկել է ժամանակը, որպեսզի իմ կարծիքով չպատճառաբանված երկար լռությունից հետո մեր ասամբլեան պաշտոնապես ճանաչի այս ցեղասպանությունը, քանի որ Թուրքիան ինքն էլ, ընդունելով մեր սկզբունքային այս քայլը, հարգանք ձեռք կբերի:

Վերջապես, եթե Թուրքիան ցանկանում է մտնել Եվրամիություն, և մենք բոլորս էլ գիտենք, որ նա ցանկանում է մեզ միանալ, պետք է ընդունակ լինի ճանաչել իր անցյալը: Նա պետք է օրինակ վերցնի Գերմանիայից, որն անմիջապես Հոլոքոստի պատասխանատվությունը իր վրա վերցրեց: Ոչ մի ազգի համար էլ ոչ ամոթ և ոչ էլ նվաստացում չէ ընդունել նման պատասխանատվությունը, դա պատմության հանդեպ հիշողության պարտքն է: Հարգելով հայ ժողովրդին՝ ես խորապես այն կարծիքին եմ, որ Թուրքիան մեկընդմիշտ պետք է հրաժարվի մերժողական իր դիրքորոշումից:

Եթե նա ցանկանում է ապագայի հանդեպ իր դերը կատարել Եվրոպայում, նա պետք է ընդունի իր պատմությունը, նույնիսկ եթե այն ցավալի ու դաժան է: Գերագույն ասամբլեան պաշտպանում է մարդու իրավունքների հռչակագիրը, նա բազմիցս ցույց է տվել դա: Ասամբլեան կարևորում է ազատության վեհ գաղափարները և դատապարտում է գաղափարախոսական տեսությունները, որոնք տարբեր ժամանակներում, ինչպես նոր նշեցին մեր հարգելի գործընկերներս Հյուռեեն և Բրուասան, հանգեցրին մարդկության ահռելի աղբերգությունների: Այսօր, Սենատի մի շարք քաղաքական խմբակցությունների անդամների կողմից ստորագրված օրենքի առաջարկը պետք է շարունակվի այս ճանապարհով մինչև վերջ քննարկվել:

1985թ. ՄԱԿ-ը Ուայտեկերի զեկույցից հետո մարդու իրավունքների հանձնաժողովը կողմնակի ճանապարհով ճանաչել է այս ցեղասպանությունը: Երկու տարի հետո Եվրախորհրդարանը պայմանական բանաձևի տեսքով նույնպես ճանաչեց այս ցեղասպանությունը: 1998թ. հերթը Ազգային ժողովինն էր, երբ բոլոր մեր ընկերները, հետո մեր հակառակորդները միաձայն քվեարկեցին այն: Այսօր մենք պետք է շարունակենք ճանաչման գործընթացը, Սենատի արդյունավետ քվեարկությամբ, և նույնիսկ եթե օրենքի մեր առաջարկը այսօր իրավաբանորեն չդառնա հանրապետության օրենք, հարգելի նախագահ Ժիրոն, միևնույն է, թույլ կտա հայտնել, որ ֆրանսիական երկու պալատներն էլ ճանաչել են 1915թ. Հայոց ցեղասպանությունը: Մեր նպատակն այն է, որ 2000թ. նոյեմբերի 8-ը պատմական օր լինի հայ համայնքի համար: Բոլոր այս պատճառներով ես գտնում եմ, որ պետք է ոչ թե ընդունել այս առաջարկի բացարձակ անընդունելիությունը, ինչպես մեզ ներկայացրեց մեր հայտնի գործընկերը՝ պրն. Դլոնգը, այլ ճիշտ հակառակը՝ մերժել այն:

Ինչ վերաբերում է ինձ, ես, մեծապես ներշնչված մեր գործընկերոջ՝ պրն. Պելլետիեի համեստ հայտարարությամբ, որով նա նշեց իսկապես մեր բոլորի պայտականության զգացման մասին, կոչ եմ անում ճանաչել պատմականորեն ապացուցված այս ցեղասպանությունը: Սա պատմություն է: Եվ Խորհրդարանը պետք է խոսի այդ մասին:

Ես համոզված եմ, որ մեր գործընկերոջ՝ պրն. Պելլետիեի առաջարկի ճիշտ քվեարկումը պատիվ կբերի հանրապետության Սենատին:

Պրն. Նախագահ – Հիշեցնեմ, որ համաձայն Սենատի օրակարգի 44-րդ հոդվածի վերջին պարբերության՝ քվեարկության համար հինգ րոպե ձայնի իրավունք ունի յուրաքանչյուր խմբակցությունից մեկ ներկայացուցիչ:

Խոսքը տրվում է տիկին Բոդոյին:

Տիկին Մարի-Կլոդ Բոդո – Պրն. նախագահ, պրն. նախարար, հարգելի գործընկերներ: Զարմանում եմ և ապշում՝ լսելով, որ դեմ են հանդես գալիս շուտափույթ քննարկման այս առաջարկին, հետո արգելում են այս առաջարկը՝ ցույց տալով դրա բացարձակ անընդունելիությունը և այս ամենը խուսափելու համար 1915թ. հայ ժողովրդի հանդեպ իրագործված ցեղասպանության ճանաչումից:

Պրն. Ալեն Դյուֆո – Նա ոչինչ չի հասկացել:

Պրն. Ժակ-Ռիշար Դլոնգ - Դուք ոչինչ չեք հասկացել և ճիշտ չեք ասում, տիկի՛ն:

Տիկին Մարի-Կլոդ Բոդո - Այս առաջարկը երևում է ամբողջովին հակասում է Ազգային ժողովում միաձայն ընդունված առաջարկին, որտեղ բոլոր խմբակցությունները, առանց բացառության, քվեարկեցին օրենքի այս առաջարկը: Չեր առաջարկը թվում է ժխտում է պատմությունը, որին զոհ գնացին 1,5 միլիոն հայեր, որովհետև այն հենց հայերինն է:

Պրն. Հենրի դը Ռենկուր – Ճիշտ չէ, բավական է ստեք:

Պրն. Ժակ-Ռիշար Դլոնգ - Ճիշտ չէ:

Տիկին Մարի-Կլոդ Բոդո - Զարմանալի է, այո՞, որովհետև ապրիլի 27-ին, սենատում, կառավարության առօրյա խնդիրների նիստի ժամանակ, որին ես ներկա էին, պրն. Ադրիեն Գուտեյռոնը, իր խմբի անունից հանդես գալով, ասաց.

«Ֆրանսահայ համայնքի ցույցերը մեր շարքերում պետք է առաջ բերեն ոչ միայն հասկացողություն այլ նաև հարգանք: Այս 450000 մեր համերկրացիները իրենց առաջ հիշողության պարտք ունեն կատարելու, պարտք, որ նրանց հետ միասին պետք է կատարենք նաև մենք՝ մոռացության չտալու ողբերգական այդ դեպքերի հիշողությունը»:

Պաշտոնաթերթը նույնիսկ նշում է. «Ծափահարություններ մի շարք կուսակցական խմբակցությունների շարքերում»:

Պրն. Ռնե-Պիեռ Մինյե - Հետաքրքիր է:

Պրն. Հենրի դը Ռենկուր – Իսկ ձախակողմյաննե՞րը:

Տիկին Մարի-Կլոդ Բոդր – Ձեր առաջարկը, պրն. Դլոնգ, բարոյական տեսանկյունից դատապարտելի է, ինչպես ոմանք էլ հենց նոր նշեցին: Այն ժխտում է պատմական այն փաստի ընդունումը, որը ուղեկցվել է 1,5 միլիոն մարդկային ջարդերով, պե՞տք է կրկնել, որի արդյունքում 600000 մարդ փրկվեց և նրանցից շատերը եկան մեր երկիր և որոնց սերունդները ֆրանսիացիներ են:

Պրն. Դոմինիկ Բրեյ – Նրանք հաստատ Մրսկվա չեն գնացել:

Տիկին Մարի-Կլոդ Բոդր - Այս առաջարկը քաղաքական խեղաթյուրում և մոլորություն է: Ինչպե՞ս կարելի է ընդունել, որ Հայոց ցեղասպանության չընդունումը պատիվ կբերի թուրքական կառավարությանը և թույլ կտա նրան ժողովրդավարական ճանապարհով Եվրամիություն մտնել: Այս ցեղասպանության ճանաչումը կապված է նրա հիշողության պարտքի հետ, որը Թուրքիային հնարավորություն կտա հիմնվել ժողովրդավարական արժեքների վրա:

Պրն. Ժակ-Ռիշար Դլոնգ - Տիկին, մի խոսեք ժողովրդավարությունից, դուք չգիտեք, թե ինչ է դա:

Տիկին Մարի-Կլոդ Բոդր - Եթե ձեր առաջարկն ընդունվեր, դուք պատասխանատվություն կզգայիք առանձնացնել Ֆրանսիային միջազգային համատեքստից:

Պետք է կրկին հիշեցնել, որ բազմաթիվ պետություններ նույնպես ճանաչել են այս ցեղասպանությունը:

Պրն. Հիլեր Ֆլանդր – Ռուսաստա՞նը:

Տիկին Մարի-Կլոդ Բոդր - Ես կնշեի միայն վերջին ժամանակաշրջանում Ուրուգվային և Իտալիային և հիշեցնեմ, որ շատ շատերը պատրաստվում են ճանաչել:

Պրն. Ժակ-Ռիշար Դլոնգ - Իսկ ԿԳՔ-ն: Եթե դուք գոհ չեք, դա նույնն է:

Պրն. Հիլեր Ֆլանդր – Իսկ Չինաստա՞նը:

Տիկին Մարի-Կլոդ Բոդր - Եթե ձեր առաջարկն ընդունվեր, դուք էլի նոր բարդություններ կստեղծեիք, որը չէր նպաստի Հարավային Կովկասի հաշտության և կարգավորման գործընթացին:

Ձեր առաջարկությամբ դուք ցանկանում եք հավատացնել այն միտքը, որ սահմանադրությունը խորհրդարանին իրավունք չի ընձեռում որակել պատմությունը:

Պրն. Հենրի դը Ռենկուր – Ճիշտ է:

Պրն. Հիլեր Ֆլանդր - Դա փաստ է:

Տիկին Մարի-Կլոդ Բոդր – Հիշեցնե՞մ, որ եթե իսկապես պատմական ճշմարտությունը չի կարող որոշվել օրենքով, սահմանադրական

խորհուրդը թույլ է տալիս, որ խորհրդարանականները իրենց իրավունք ընձեռեն ճանաչելու պատմությունը: Անընդունելիության փաստումը, որը պատճառաբանված է հակասահմանադրությամբ, անհիմն է թվում, այնքանով, որ 1958թ. սահմանադրությունը 1946թ. և 1948թ. մարդու իրավունքների Հռչակագրի համալրման համաձայն այն թույլ է տալիս: Սահմանադրության 34-րդ հոդվածն իրավունք է տալիս խորհրդարանին որոշել իր միջամտության հիմնական սկզբունքները: Եվ միայն ես չեմ ասում, մի շարք գործընկերներ ինձնից առաջ նշեցին այդ մասին, որ Սենատը, ինչպես Ազգային ժողովը նման օրենսդրական որոշմանը կվերագրի պատմական նշանակություն: Օրինակ, 2000թ. հուլիսի 10-ի օրենքով, այդ օրը դարձավ Ֆրանսիայի պետության և նրա արդարադատության ազգային օր՝ ի հիշատակ հրեաության և ռասիստական ոճրագործությունների զոհերի: Պե՞տք է արդյոք, առաջարկի հեղինակների սկզբունքով հրամանագիր հրապարակել՝ ժխտելու օրենքի նման առաջարկությունը: Կարծում եմ, քչերը կհամաձայնվեն:

Մենք նաև կարևոր քննարկում անցկացրեցինք ստրկատիրության վերացման վերաբերյալ՝ մեր երկրի 150-րդ տարեդարձի առիթով: Պե՞տք էր այդ ժամանակ այն ժխտել:

Ցեղասպանության ճանաչումը մարդկային արժանապատվության պահպանման սկզբունքներին առաջնություն տալն է: Դուք չեք կարող հիմնվել իրավական արգելքների վրա:

Ձեր առաջարկը քաղաքական նկատառումների արտահայտում է: Կարծում եմ, որ կկարողանամ հաստատել այն, որ երկրի նախագահը, նույնիսկ եթե ցանկալի չի համարում Սենատի օրակարգ մտցնել օրենքի այս առաջարկը, չի բացառում այս հարցում օրենսդրական միջամտության հնարավորությունը: Գործադիր իշխանությունը բոլորովին միջոցների չի դիմել պատժելու կամ կանխելու օրենսդրական այդ միջնորդությունը: Այս երեկո նախարարը մեզ այդ մասին ասաց: Ազգային ժողովը խաղաղ մի դատողություն արեց նշելով, որ ցեղասպանության ճանաչումը այս տարածաշրջանում խաղաղության հաստատման նախապայմանն է հանդիսանում: Մի՞թե ձեր առաջարկն իսկապես միտում չունի օբյեկտիվորեն հանդարտել Թուրքիայի կողմից ուղղված տնտեսական սպառնալիքները:

Դուք հասկացաք հարգելի գործընկերներ, որ քաղաքացիական և հանրապետական կոմունիստական խմբակցությունը չի քվեարկի այս առաջարկը՝ որը ձգտում է ցույց տալ օրենքի առաջարկության բացարձակ անընդունելիությունը, և ցանկանում է, որ Սենատը այն մերժի՝ պատասխան տալով 400000 ֆրանսահայերի սպասումներին, որոնք հավատում են պատմական ճշմարտությանը և կոչ անում հարգել իրենց երկրի վեհ արժեքները:

Պրն. նախագահ – Խոսքը տրվում է պրն. Շաբրուին:

Պրն. Ժիլբեր Շաբրու – Հանդես գալով իմ սոցիալիստ գործընկերների անունից՝ ես կցանկանայի ասել, որ մենք դեմ ենք պրն. Ժակ-Ռիշար Դլոնգի կողմից ներկայացված անընդունելիության առաջարկին և կքվեարկենք Հայոց ցեղասպանության ճանաչման օգտին:

Մարտի 21-ին, ներկայացնելով օրենքի այս առաջարկության շուտափույթ քննարկման առաջարկը, ես, ինչպես և մեզնից շատերը, հուզ-

մունքով էինք մտածում մեր համերկրացիների մասին, ովքեր հույսեր էին կապում, որ վերջապես մենք կճանաչենք 1915թ. ցեղասպանությունը:

Այս երեկո ես նույն հուզմունքն եմ ապրում:

Մենք արդեն մի քայլ արեցինք՝ քննարկելով օրենքի այս առաջարկությունը: Առաջընթաց քայլն արված է: Թվում է, խոչընդոտները հաղթահարված են: Հույսն ամենամեծն է: Վերջապես մենք պետք է ավարտենք և միասին ընդունենք այս տեքստը: Ինչո՞ւ Գերագույն ասամբլեան չի կարող անել այն, ինչ միաձայն արեց Ազգային ժողովը:

Այս հարցի շուրջ քաղաքական տարաձայնություններն ավելորդ են: Խոսքը գիտակցության խնդրի մասին է, և մեզնից յուրաքանչյուրը գիտի ճշմարտությունը, պատմական իրականությունը: Մենք անտարբեր չենք եղել ֆրանսահայերի, նրանց հիմնած կազմակերպությունների, և ծավալած գործունեությանը՝ մարդու իրավունքները պաշտպանողների նկատմամբ: Ոչ թե ատելության, այլ ճշմարտության անընկճելի ուժով են նրանք պայքարել և պայքարում արդարության և իրենց պատվի համար: Այդ պայքարն անժխտելի է ցեղասպանության զոհերի հիշատակի առաջ իրենց պարտքը կատարելու համար: Հայոց ցեղասպանության ճանաչման համար առաջ քաշված երկու հիմնական պատճառները չափազանց անզոր են թվում մեր ներկայացված բարոյական պատասխանատվության համեմատությամբ: Առաջինը, որ օրենքը չէ, որ պիտի «որակի» պատմությունը: Բայց սահմանադրությամբ դա արգելված չէ: Մարտի 23-ին Սենատը միաձայն օրենք ընդունեց՝ ճանաչելով սևամորթների շահագործումն և ստրկատիրությունը որպես մարդկության դեմ ուղղված ոճրագործություն: Կարելի է նշել նաև Գեյսոտի օրենքը, որը թույլ է տալիս պայքարել նացիստական բարբարոսության ոճրագործության ժխտման դեմ: Ցավալի կլինի, եթե այս օրենքը չընդունվի հայերի, ինչպես նաև մյուս ցեղասպանությունների համար…

RPR-ի սենատոր – Խորհրդարանի համա՛ր:

Պրն. Ժիլբեր Շաբրու - …ինչպես և մյուս ցեղասպանությունների համար: Ամեն դեպքում ցեղասպանության ճանաչումը ժխտողականության պատասխանն է: Ինչ վերաբերում է այն ապացույցին, թե Հայոց ցեղասպանության քննարկումը էլ ավելի կուժեղացնի ատելությունը և բացասաբար կանդրադառնա Հարավային Կովկասի պետությունների հաշտության գործընթացին, մենք բոլորս էլ գիտենք, որ դա այդպես չէ, այլ ընդհակառակը: Հենց ցեղասպանության ճանաչումը թույլ կտա իրականացնել իսկական խաղաղության գործընթացը: Ես կցանկանայի կրկնել այս ամբիոնից հնչած պրն. Ժան-Ժակ Քեյռանի խոսքերը ստրկատիրության օրենքի ընդունման մասին. «Անհնար է ապագա կառուցել այն ժողովուրդների հետ, որոնք ճնշել են ազգին իրենց հողում, ոչնչացրել մշակույթով հարղերձ, քանի դեռ չեն համարձակվել ընդունել պատմությունը: Չկա արդարություն, ոչ էլ խաղաղություն, առանց ճշմարտության»:

Ճիշտ է, մենք չէ, որ պետք է ճանաչենք և քվեարկենք մեզ առաջարկված տեքստը, քանի դեռ Հայոց ցեղասպանության պատասխանատուները կամ նրանց սերունդները այն ճանաչելու փոխարեն ներփակվել են լռության կամ ժխտման մեջ:

Հայոց ցեղասպանության ճանաչումը պետք է ուղեկցվի այն ժամանակվա թուրք կառավարության անընդունելիությամբ, ինչպես մենք անում

ենք Շոահում նացիստական Գերմանիայի պատասխանատվություն կրելու դեպքում: Պետք չէ հալածել թուրք ժողովրդին, այլ ընդհակառակն, օգնել նրան առաջ ընթանալու միանգամայն ժողովրդավարական պետության ճանապարհով: Ժողովրդավարությունը չի կարող ընդունել անցյալի ժխտումը: Եվ քանի որ Ֆրանսիան իր վրա է վերցնում Եվրամիության նախագահությունը, մենք պետք է հասկացնենք Թուրքիային, որ Եվրոպան նախ և առաջ մարդկային արժեքների ամբողջություն է՝ հիմնված հզոր հարաբերությունների վրա և դրան մասնակցելու համար պետք է ճանաչել իր պատմությունը:

Հարգելի գործընկերներ, XX դարն ավարտվում է: Մենք պետք է ընդհանուր եզրակացություններ ունենանք: Մի կողմից այն սարսափելի է. երկու համաշխարհային պատերազմներ, ռասիզմի և ֆաշիզմի պատճառած սարսափները...

Պրն. Հեների դը Ռենկուր – Իսկ կոմունի՞զմը:

Պրն. Դոմինիկ Բրեյ – Կոմունիզմը ութսուն միլիոն կյանք է խլել:

Պրն. Ժիլբեր Շաբրու - ... ցեղասպանություններ, որոնցից առաջինը եղել է Հայոց ցեղասպանությունը, քսաներեք տարի հետո դրան հաջորդեց հրեաների ցեղասպանությունը, Շոահինը և էլի ուրիշ ցեղասպանություններ, որոնց մասին ասվեց: Ճիշտ ժամանակն է նոր դար թևակոխելուց առաջ ճանաչել սարսափները, որ կիրառվել են: Հայոց ցեղասպանության ճանաչումը դրանք կանխող արժեք ունի: Դեռ երկար ճանապարհ կա անցնելու խաղաղության, համերաշխության և եղբայրության երկիր կառուցելու համար: Բայց 2000թ., նոյեմբերի 8-ը Սենատի համար կմնա, ինչպես նշեց պրն. Ժան-Կլոդ Գոդենը, կարևոր ժամանակաշրջան: Նախ պետք է մերժել այս առաջարկության բացարձակ անընդունելիության առաջարկը: Հետո հուզմունքով և հույսով ես և սոցիալիստական խմբի իմ գործընկերները կքվեարկենք Հայոց ցեղասպանության ճանաչման մասին օրենքի առաջարկը:

Պրն. Նախագահ – Ոչ ոք այլևս ձայն չի՞ խնդրում:

Ես քվեարկության եմ դնում թիվ 3 առաջարկը, որով բացարձակ անընդունելի է համարվում օրենքի առաջարկությունը:

Հիշեցնեմ, որ եթե այս առաջարկը ընդունվի, օրենքի առաջարկությունը կմերժվի: Բաց քվեարկության է դրվում զինված ուժերի և պաշտպանության և արտաքին գործերի հանձնաժողովի ներկայացրած առաջարկությունը: Այն քվեարկվում է օրակարգային պայմաններում:

(Քվեարկությունը կայացավ):

Պրն. Նախագահ – Ոչ ոք էլ չի՞ քվեարկում:

Քվեարկությունը ավարտված է:

(Նա անցնում է քվեների հաշվմանը):

Պրն. Նախագահ - Ահա թիվ 14 հանրաքվեի արդյունքները:

Քվեարկողների թիվը – 234

Չայն տվողների թիվը – 229

Չայն տվողների բացարձակ մեծամասնությունը – 115

Կողմ – 58

Դեմ – 171

Սենատը չընդունեց:

Անցնենք յուրօրինակ հոդվածի քննարկմանը:

«Յուրօրինակ հոդված. – Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է 1915թ. Հայոց ցեղասպանությունը»:

Պարոններ Հյուռիեն, դր Բրուասան, Օտենը, Քաղրեն, Դարկոսը, Էսնյոն, Հենելը, Հերմանը, Լոռեն, Լանիեն, Մատիոն, Պուառեն և Վասելն առաջարկում են երեք անգամ փոփոխված թիվ 1 հոդվածում ավելացնել հետևյալ բառերը «ինչպես նաև այդ ժամանակվանից ի վեր տեղի ունեցած ցեղասպանությունները»:

Այս փոփոխությունը տարբերվում է պարոններ Բրեի, Վիալի, Մարտինի, Սեզարի, Ժելարի, Ֆլանդրի և Լասուռի կողմից ներկայացված թիվ 4 հոդվածից, որում առաջարկվում է երեք անգամ փոփոխված թիվ 1 հոդվածում փոփոխել հետևյալ բառերը. «ինչպես նաև»-ի փոխարեն մտցնել «բոլոր» բառերը:

Երեք անգամ փոփոխված թիվ 1 հոդվածի փոփոխման համար ձայնը տրվում է պրն. Հյուռիեին:

Պրն. Կլոդ Հյուռիե - Ես ներկայացնում եմ այս փոփոխության առաջարկը պաշտպանողների տարբերությունը. այն անդրադառնում է մեր գործընկերոջ՝ պրն. Ժակ Պելլետիեի կողմից ներկայացված օրենքի առաջարկության համաձայնեցման խնդրին: Ես կարևորում եմ նաև շարադրանքի պարզությունը և խնդրի հստակությունը: Ի վերջո, հարգելի գործընկերներ, այս փոփոխությունը նպատակ ունի քիչ հետո ընդունվող տեքստը համաձայնեցնել այս երեկո հնչած հայտարարությունների հետ:

Իսկապես ձեզնից շատերը խոսեցին XX դարի առաջին ցեղասպանությունից, որը մենք պետք է ճանաչենք օրենքի այս առաջարկությամբ, բայց մեծամասնությունը հանդես եկավ այն դիտողությամբ, որ դարի առաջին ցեղասպանությանը հաջորդել են, ցավոք, այլ ցեղասպանություններ, ինչի հետ ոչ ոք այսօր չի կարող չհամաձայնվել: Միանգամայն օրինական են նկատողությունները, որոնք վերաբերում են Հայոց ցեղասպանությանը և XX դարում իրագործված մյուս ցեղասպանությունները հարգելուն և զոհերի հանդեպ պարտքը կատարելուն: Սա է փոփոխության նպատակը, որը մենք ցանկանում ենք ընդունված տեսնել: Պրն. Գոդեն, ձեր առաջարկված այն կարծիքը, որ կարելի է հաջորդաբար քննարկել մյուս ցեղասպանությունները, իրական չէ: Դուք ասացիք և այն ինձ փոքր-ինչ վշտացրեց, որ այսօր ուշադրությունը պետք է բևեռել ութսունհինգ տարի առաջ հայ ժողովրդի նկատմամբ կիրառված ողբերգության մասին: Թույլ տվեք ասել, հարգելի գործընկերներ, որ վերջին տարիների ընթացքում նույնքան ահավոր ցեղասպանություններին զոհ գնացած մյուս ժողովուրդները նույնպես արժանի են մեր ուշադրությանը և հարգանքին:

Պրն. Նախագահ – Թիվ 4 հոդվածի փոփոխությունը պաշտպանելու համար ձայնը տրվում է պրն. Բրեյին:

Պրն. Դոմինիկ Բրեյ - Այս երեկո, հատկապես մենք կարևոր և հանդիսավոր պահ ենք ապրում և մեզնից յուրաքանչյուրին կոչ է արվում ըմբռնումով մոտենալ, բացի այդ դահլիճում այս ուշ ժամին ներկաների թիվը արդեն խոսում է այդ կարևորության մասին: Ձեզ ներկայացվող փոփոխության առաջարկի նպատակն է երեք անգամ փոփոխված թիվ 1 հոդվածում ավելացնել «բոլոր» բառը և ճանաչել XX դարի ընթացքում իրագործված բոլոր ցեղասպանությունները: Ինչո՞ւ նման ճշգրտում: Որովհետև կարծում եմ՝ անհնար է ճանաչման համար ընտրություն անել և բացահայ-

տորեն քննադատել մի ցեղասպանությունը և ոչ մյուսները: Ակնհայտ է, որ 1915թ. Հայոց ցեղասպանությունը մենք չէ, որ պիտի ճանաչենք: Ֆրանսիական խորհրդարանի խնդիրը չէ օրենքներ ընդունել՝ նպատակ ունենալով ճանաչել օտար երկրներում տեղի ունեցած ողբերգությունները...

Պրն. Ռնե-Պիեռ Սիմյե - Արդեն այդ մասին ասվեց:

Պրն. Դոմինիկ Բրեյ - ... և ոչ մի դեպքում Ֆրանսիան պատասխանատվություն չպետք է կրի, ինչպես մենք գիտենք, այն նաև հակասահմանադրական է: Այդ է պատճառը, որ ես քվեարկության դրեցի այս տեքստի բացարձակ անընդունելիության առաջարկը՝ ներկայացված մեր գործընկերոջ՝ պրն. Ժակ-Ռիշար Դլոնգի կողմից: Դա անքաղաքավարություն կլինի և անկասկած չի նշանակում, որ ես ժխտում եմ 1915թ. ցեղասպանության ժամանակ հայ ժողովրդի կրած տառապանքները:

Տիկին Էլեն Լյուկ – Ուրեմն քվեարկենք օրենքի այս առաջարկը:

Պրն. Դոմինիկ Բրեյ – Մեր ասամբլեայում բազմաթիվ ելույթ ունեցողներ այս ամբիոնից ասացին, որ ոչ ոք չի ժխտում այդ իրադությունը: Այս ժամանակաշրջանում հայերի զանգվածային հոսքը դեպի Ֆրանսիա և այլ երկրներ ոչ այլ ինչ էր, եթե ոչ հայերի զանգվածային արտագաղթ, որոնք փախան իրենց իսկ հայրենի երկրում իրագործվող տանջանքներից:

Պրն. Ռնե-Պիեռ Սիմյե - Այդ մասին ասվեց:

Պրն. Դոմինիկ Բրեյ - Բայց ես համառորեն այն մտքին եմ, որ հայերն իրենք պետք է պահպանեն ցեղասպանության հիշողությունը, որ նաև պատմաբանների գործն է քննարկել պատմության այս սև էջը, ինչպես նաև ՄԱԿ-ի խնդիրն է դատապարտել նման ոճրագործությունը:

Իսկապես, էլի եմ ասում, ինչո՞ւ պետք է ֆրանսիական խորհրդարանը օրենք ընդունի ճանաչելու ամբողջ աշխարհի պատմության ցեղասպանությունները: Այս գործընթացը ընթացքի մեջ է, և մենք հիմա պետք է գործնական և խելամիտ որոշում կայացնենք: Քանի որ օրենքի այս առաջարկն այսուհետ քննարկման մեջ է, և հավանականությունը մեծ է, որ այն կընդունվի, մենք պետք է արդար, միասնական, խելամիտ և հատկապես հարգալից վերաբերմունք արտահայտենք: Ի՞նչ է, Հայոց ցեղասպանության ճանաչումից հետո մենք հերթականորեն պետք է ճանաչենք մեր գործընկերոջ՝ պրն. Գոդենի կողմից առաջարկված կրոնական կամ ռասայական փոքրամասնությունների, էթնիկ խմբերի, ժողովուրդների և ազգերի նկատմամբ երկրագնդի վրա իրագործված XX դարի բոլոր սարսափելի ցեղասպանություննե՞րը: Հասկանալի է, որ դա անհնար է և անիրական: Քանի որ Գերագույն ասամբլեան ցանկանում է ճանաչել Հայոց ցեղեսպանությունը, անհնար է չճանաչել 1915թ. ի վեր թույլ տրված բոլոր մյուս ցեղասպանությունները: Բացի այդ, ես չեմ կարծում, թե հայերից որևէ մեկը մեզ կհանդիմանի այն բանում, որ մենք մտահոգվում ենք մյուս ցեղասպանություններով: Ինչպես քիչ առաջ ասում էի, սարսափները չեն տարբերվում, հարգելի գործընկերներ և բոլոր այս ոճրագործություններին զոհ գնացածները նույն բարբարոսությունների են ենթարկվել: Իսկապես, եթե նացիստների կողմից հրեաների և գնչուների բնաջնջումը, չինացիների կողմից՝ տիբեթցիներինը, հյուտուսների կողմից թութսիների և քխմերների ոչնչացումը սարսափելի և ողբերգական դեպքեր են, մենք չպետք է մոռանանք, որ մարդկային խմբերի նկատմամբ իրագործված այս հրեշագործու-

թյուններն անուզնիվ գաղափարախոսությունների կամ կույր ֆանատիկոսությունների հետևանք են:

Ինչպես կարելի է մոռանալ Խորհրդային Միությունում գաղափարախոսությանը զոհ գնացած ութսուն միլիոն մարդկանց...

Պրն. Ռոնե-Պիեռ Սինյե - Արդեն հինգ րոպե է, ինչ նա խոսում է:

Տիկին Էլեն Լյուկ – Իսկապես:

Պրն. Դոմինիկ Բրեյ - ... և այն քառասուն միլիոնը Չինաստանում:

Պրն. Նախագահ – Պրն. Բրեյ, խնդրում եմ ավարտեք ձեր խոսքը:

Պրն. Մարսել Շարման - Արդեն հինգ րոպեից ավելի է, նա խոսում:

Պրն. Դոմինիկ Բրեյ - Ես վերջացնում եմ պրն. նախագահ:

Ուրեմն, ես խնդրում եմ, սիրելի գործընկերներ, քվեարկել փոփոխության իմ առաջարկը, որպեսզի դատապարտենք այդքան սարսափներ և կորուստներ պատճառած բոլոր ցեղասպանությունները: Ես գիտեմ, որ մեզնից նրանք, ովքեր ցանկանում են, որ Գերագույն ասամբլեան ճանաչի 1915թ. Հայոց ցեղասպանությունը, մեծահոգությամբ և կարեկցանքով են լցված այդ սարսափելի ողբերգության վերապրողների և նրանց ժառանգների նկատմամբ, ես դա հիանալի հասկանում եմ: Բայց ես հանդիսավորությամբ խնդրում եմ, սիրելի գործընկերներ, ամենայն բարեխղճությամբ, ճի՞շտ կլինի արդյոք պաշտոնապես ճանաչել այս ցեղասպանությունը՝ անտեսելով մյուսներին:

Եթե մենք այդպես վարվենք, մենք մեծ վիրավորանք կհասցնենք մյուս ցեղասպանությունների հարյուր հազարավոր զոհերի հիշատակին և նրանց ժառանգների տառապանքներին:

Պրն. Նախագահ - Բարի եղեք ավարտել, պրն. Բրեյ:

Պրն. Դոմինիկ Բրեյ - Եթե մենք ճանաչենք, ինչպես Հայոց, այնպես էլ մյուս ցեղասպանությունները, սիրելի գործընկերներ, դրանով կքարձրանա մեր ասամբլեայի պատիվը, հակառակ դեպքում այն կպատվազրկվի: Այդ իսկ պատճառով, ես խնդրում եմ քվերակել փոփոխության իմ առաջարկը:

Պրն. Նախագահ – Ինչպիսի՞ն է հանձնաժողովի կարծիքը երեք անգամ փոփոխված թիվ 4 հոդվածի վերաբերյալ:

Պրն. Խավիեր դը Վիլպեն (հանձնաժողովի նախագահ) - Երեք անգամ փոփոխված թիվ 4 և թիվ 1 փոփոխության առաջարկները, որոնք ակտիվացնում են քննարկվող օրենքի առաջարկի հեղինակներին, հանգեցնում են տրամաբանական նույն մտքին:

Որքան էլ դա կարևոր լինի, ոչ ոք այստեղ չի հերքում փոփոխության առաջարկում նշված մարդկային ողբերգությունները, և ես կարծում եմ, որ դրանք պետք է կիրառվեն՝ համաձայն իրավական նույն հիմքերի, ինչպես հենց նոր խոսված օրենքի առաջարկը. ինչպես նշված է սահմանադրությամբ՝ այն ոչ մի դեպքում օրենքից չի բխում: Ուստի, փոփոխության և փոփոխության ենթակա առաջարկը ներկայացնող իմ գործընկերներից ներողություն պետք է խնդրեմ, բայց քիչ առաջ նշված պատճառով չեմ կարող քվերակել այս փոփոխությունը և փոփոխության առաջարկը:

Պրն. Ռոնե-Պիեռ Սինյե - Շատ լավ:

Պրն. Նախագահ – Ինչպիսի՞ն է կառավարության կարծիքը:

Պրն. Ժան-Ժակ Քեյռան (խորհրդարանի հետ կապերի նախարար) - Կառավարությունն այս հարցում լիովին վստահում է Գերագույն ասամբլեային:

Պրն. Ժեռար Կոլոմբ - Ես դեմ եմ փոփոխության այս առաջարկին և ձայն եմ խնդրում:

Պրն. Նախագահ – Ձայնը տրվում է պրն. Կոլոմբին:

Պրն. Ժեռար Կոլոմբ - Մեր գործընկեր պրն. Քրեյը ճիշտ հանդես եկավ փոփոխության այս հարցի շուրջ և ցույց տվեց, թե փոփոխության քվեարկումով ինչպիսի որակի կդիմենք մենք: Իսկապես, պրն. Քրեյը հարգալից գտնվեց՝ մեզ բացատրելով իր դիրքորոշումը. նա դեմ է Հայոց ցեղասպանության ճանաչմանը: Նշելով, որ այս թեման պարտված է, նա առաջարկում է այլ ընթացք տալ փոփոխությանը, որպեսզի այս գիշեր քվեարկությունը չկայանա:

Պրն. Դոմինիկ Քրեյ - Դա սխալ և կեղծ պատճառաբանություն է:

Պրն. Հիլեր Ֆլանդր - Ամոթ է:

Պրն. Ժեռար Կոլոմբ - Իսկապես, որ այլևս իմաստ չունի այս երեկո քվերակելը: Ահա թե ինչու, ես դեմ եմ այս փոփոխությանը և նրա առաջարկին:

Պրն. Յան Գայառ – Քվեարկության շուրջ մեկնաբանության համար ես ձայն եմ խնդրում:

Պրն. Նախագահ – Խոսքը տրվում է պրն. Գայառին:

Պրն. Յան Գայառ – Ինձ թվում է, որ մենք շատ վճռական պահ ենք ապրում: Մեզնից ոմանք մեծ նշանակություն տվեցին իրավական փաստերին, որոնք, ըստ իս, հիմնավորված են:

Բայց այդ հարցը այժմ փակված է, որովհետև Սենատն այս հարցում հետևողական չի եղել: Ուրեմն մենք ավելի շատ ոչ թե իրավական, թող ինձ ների արտաքին գործերի հանձնաժողովի նախագահը, այլ պատմության և բարոյականության ոլորտում ենք: Սենատը ցանկություն է հայտնել այս որոշումն ընդունելու պահից մտնել պատմության մեջ և պատճառ չկա սահմանափակվել մեկ ցեղասպանությամբ և չխոսել մյուսների մասին: Ես իսկապես չեմ հասկանում,երբ խոսում են այլ ընթացք տալուց, երբ խոսքը գնում է կարևորագույն իրադարձությունների ճանաչման մասին, որոնք պատվազրկել են այս դարի մարդկությանը: Դա նույն բանն է: Ես անձամբ, միանգամայն պատրաստ եմ այս պահին ճանաչել Հայոց ցեղասպանությունը պայմանով, որ մյուս ցեղասպանությունները, որոնք նշված են պրն. Բրուասայի առաջարկված փոփոխության մեջ, նույնպես ճանաչվեն և չեմ հասկանում մեր այն գործընկերներին, որոնք այսօր առաջ են քաշել այդքան հուզիչ փաստեր և չեն ցանկանում կատարել պատմության հանդեպ իրենց քաղաքակիրթ պարտքը և խոսել այս հարցի շուրջ:

Տիկին Նիկոլ Բոուվո - Դա անընդունելի է:

Պրն. Յան Գայառ - Ես հավատացնում եմ, որ անկեղծորեն վրդովված եմ այդ առումով: Քանի որ Սենատը գտնում է, որ իրավական փաստերը, որի շուրջ այդքան վիճեցինք, հիմնավորված չեն, ես պատրաստ եմ այժմ ճանաչել Հայոց ցեղասպանությունը, բայց ոչ միայն այս մեկը, մյուսները նույնպես: Այդ իսկ պատճառով, ես կքվեարկեմ երեք անգամ փոփոխված թիվ 1 և թիվ 4 փոփոխությունների առաջարկի օգտին:

RPR-ի սենատոր – Շատ լավ:

Պրն. Լուի դը Բրուասա - Ես ձայն եմ խնդրում քվեարկության շուրջ մեկնաբանության համար:

Պրն. Նախագահ – Խոսքը տրվում է պրն. դը Բրուասային:

Պրն. Լուի դը Բրուասա - Ես մեծ հետաքրքրությամբ լսեցի մեր գործընկերոջ՝ պրն. Կոլոմբի խոսքերը: Նա ինձ չի հանդիմանի փոփոխության առաջարկի համար, և ես հստակ ասացի իմ ելույթում և մինչև վերջ էլ այն համոզմանը կլինեմ, որ պաշտպանում եմ սարսափներով ողողված Հայոց ցեղասպանության ճանաչումը և մտածում, թե ինչպես կարելի է մոռացության տալ Հայոց ցեղասպանությանը հաջորդած XX դարի մյուս ցեղասպանությունները, որով, իմ տրամաբանությամբ, Սենատի առաջ քաշած փաստերի գերակայությունը կորցնում է իր ուժը: Այն ճանաչվել է ՄԱԿ-ի կողմից և ունի իր նկարագիրը: Մեր հերթն է, օգտվելով առիթից, ճանաչել այն փոփոխության առաջարկի միջոցով, որի դիվանագիտական նշանակությունը պրն. Կլոդ Հյուռեհի հետ կշռադատում ենք: Չցանկանալով Ֆրանսիային ներքաշել միջազգային կոնֆլիկտների մեջ, որովհետև մենք նույնպես աշխարհում մեր պատասխանատվության զգացումն ունենք: Մենք մեր ցանկությամբ մեր առաջարկված փոփոխության տեքստում առանձնացրել ենք ցեղասպանությունները, որոնք մեր օրերում էլ իրագործվում են. մենք գիտենք, ապացուցված և ակնհայտ է այն, որ XX դարի ընթացքում այլ ցեղասպանություններ նույնպես եղել են, տիբեթցիների, թութսիների և այլոց նկատմամբ:

Այս փոփոխությունը Սենատի կողմից քիչ առաջ կայացած քվեարկության ուղղակի հաստատումն է: Պետք չէ ասել կողմ թե՞ դեմ ենք քվեարկել: Սենատը քվեարկել է Հայոց ցեղասպանության ճանաչումը և դա շատ լավ է: Ես ուրախ եմ դրա համար և կարծում եմ, որ մենք՝ սենատորներս ընդլայնելով այն տեքստը, որի քննարկմանը մենք ավելի շատ ժամանակ հատկացրեցինք, քան Ազգային ժողովը, ցանկանում ենք հաշվի առնել այն, որ ավարտվող XX դարը ցեղասպանությունների դար է և մենք հաշտվելով դրանց հետ, պատմականորեն ընդունելով, ճանաչում ենք դրանք:

Տիկին Նիկոլ Բոուֆո – Խոսքը դրա մասին չէ:

Պրն. Լուի դը Բրուասա - Հայոց ցեղասպանությունից հետո շատ ուրիշ ցեղասպանություններ եղան: Մենք ենթադրում ենք, որ կպայքարենք, որպեսզի XXI դարում դրանք այլևս չկրկնվեն:

Տիկին Նիկոլ Բոուֆո – Խոսքը դրա մասին չէ:

Պրն. Լուի դը Բրուասա - Ես կարծում եմ, որ երեք անգամ փոփոխված իմ և Կլոդ Հյուռեհի կողմից առաջարկված թիվ 1 փոփոխության առաջարկը համապատասխանում է Սենատի պարտականությանը:

Տիկին Նիկոլ Բոուֆո – Խոսքը դրա մասին չէ:

Պրն. Լուի դը Բրուասա - Շարժառիթը մեզ ներկայացված է:

Պրն. Ռենե-Պիեռ Սիմյե - Այն ամբողջովին ձևափոխված է:

Պրն. Լուի դը Բրուասա - Ես կարող եմ ասել, որ կքվեարկեմ այն և կցանկանամ, որ նրանք ովքեր չեն քվեարկի, մի օր չամաչեն, որ այդպես են վարվել:

Պրն. Ռենե-Պիեռ Սիմյե - Այն ամբողջովին ձևափոխված է:

Պրն. Ֆիլիպ Ադնո - Ես ձայն եմ խնդրում քվեարկության շուրջ մեկնաբանության համար:

Պրն. Նախագահ – Խոսքը տրվում է պրն. Ադնոյին:

Պրն. Ֆիլիպ Ազնո – Տրամադրված լինելով ճանաչել Հայոց ցեղասպանությունը ես կքվեարկեմ փոփոխությունը և նրա առաջարկը:

Պրն. Ռոնե-Պիեռ Միլյե - Նա չհասկացավ:

Տիկին Նիկոլ Քոռվո - Դա ոչ մի կապ չունի:

Պրն. Ֆիլիպ Ազնո – Իսկապես, ես ցանկանում եմ, որ մենք միաձգամից կողմ քվեարկենք Հայոց ցեղասպանության ճանաչմանը և դեմ մյուս անցած, ներկա և դժբախտաբար, կարող է պատահի, սպասվող ցեղասպանություններին: Կարծում եմ, որ այս գիշեր աշխատանքն ավարտելու համար, մենք պետք է միայն դեմ հանդես գանք բոլոր ցեղասպանություններին:

Տիկին Նիկոլ Քոռվո – Ի՞նչ է նշանակում մենք դեմ ենք ցեղասպանությունների՛ն: Խոսքը դրա մասին չէ՛: Դա ոչ մի կապ չունի՛:

Պրն. Նախագահ – Ոչ ոք այլևս ձայն չի՞ խնդրում...

Ես քվեարկության եմ դնում թիվ 4 փոփոխության առաջարկը, որը հավանության չարժանացավ հանձնաժողովի կողմից, իսկ կառավարությունն ամբողջովին վստահում է Սենատին:

(Փոփոխության առաջարկը չընդունվեց):

Պրն. Նախագահ – Ոչ ոք ձայն չի՞ խնդրում...

Ես քվեարկության եմ դնում երեք անգամ փոփոխված թիվ 1 փոփոխությունը, որը հավանության չարժանացավ հանձնաժողովի կողմից, իսկ կառավարությունը լիովին վստահում է Սենատին:

(Փոփոխությունը չընդունվեց):

Պրն. Նախագահ - Երկու անգամ փոփոխված թիվ 2 փոփոխության առաջարկով պարոններ Հյուրիեն, դը Բոուասան, Օտենը, Քաղրեն, Դարկոսը, Էսկյոն, Հենելը, Հերմանը, Լոռեն, Լանիեն, Մատիոն, Պուառիեն և Վասելն առաջարկում են օրենքի առաջարկը շարադրել հետևյալ կերպ.

«XX դարի ցեղասպանությունների ճանաչման օրենքի առաջարկ»:

Այս փոփոխությունը տարբերվում է թիվ 5 փոփոխության առաջարկից, որը ներկայացվել է պարոններ Բրեի, Վիալի, Մարտինի, Սեզարի, Ժելառի, Ֆլանդրի և Լասուրդի կողմից, նրանով, որ այն նպատակ ունի օրենքի առաջարկության տեքստի թիվ 2 փոփոխության առաջարկում «ճանաչումը» բառից հետո մտցնել «բոլոր» բառը:

Այս փոփոխությունը և փոփոխության առաջարկը այլևս խնդիր չունեն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Պրն. Նախագահ – Օրենքի առաջարկի միակ հոդվածը քվեարկության դնելուց առաջ քվեարկության շուրջ մեկնաբանության համար խոսքը տրվում է տիկին Լյուկին:

Տիկին Էլեն Լյուկ – Պրն. նախագահ, պրն. նախարար, հարգելի գործընկերներ: Խորհրդարանի կյանքում կայացվող այս վճիռները մեկընդմիշտ գրանցվում են մարդկության պատմության մեջ:

Պրն. Դոմինիկ Բրեյ - Այո, պետք է քննադատել բոլոր ցեղասպանությունները:

Տիկին Էլեն Լյուկ - Ազգային ժողովից երկու ու կես տարի անց, այսօր Սենատը...

Պրն. Դոմինիկ Բրեյ - Դուք խրատ եք կարդում, երբ ԽՍՀՄ-ում ութսուն միլիոն մարդ է զոհվե՛լ:

Պրն. Հիլեր Ֆլանդր – Սա ամոթալի է:

Պրն. Նախագահ – Թույլ տվեք տիկին Լյուկին խոսել:

Տիկին Էլեն Լյուկ - ... ես կասեի, որ Սենատը, իր հերթին, այս քվեարկությամբ արդարության և հիշողության կարևոր քայլ կկատարի:

Պրն. Դոմինիկ Բրեյ – Ուրեմն, առաջ գնանք:

Տիկին Էլեն Լյուկ – Մենք իսկապես, մեր՝ Ֆրանսիայի քաղաքացիների անունից կարող ենք լինել այն պետությունը, որը օրինականորեն և հանդիսավորությամբ վերջ կդնի ութսունհինգ տարվա հիշողության այդ մոռացությանը:

Պրն. Պատրիկ Լաստա – ԽՍՀՄ-ում ութսուն միլիոն մարդ է զոհվել:

Տիկին Էլեն Լյուկ - ... և ժխտմանը, որը XX դարի պատմության ամենաողբերգական դեպքերից է:

1915թ. ապրիլի 24-ի գիշերը սկիզբ դրվեց հայ ժողովրդի բնաջնջման հսկայական ծրագրին:

Պրն. Դոմինիկ Բրեյ – Իսկ Կարմիրների ոչնչացո՞ւմը...

Տիկին Էլեն Լյուկ – ութսունհինգ տարի տանջվել և այսօր էլ տանջվում են մեծ կորուստներ կրած հայ համայնքի ընտանիքները, նրանց հաջորդած սերունդները, որոնք մեծ խոչընդոտներ են ունեցել իրենց ազգային, ընտանեկան, անձնական հաստատման և վշտի արդարության, այս ողբերգության ճանաչման և լուսաբանման գործում:

Ես համոզված եմ, որ մեզնից շատերը, չհաշված այս վերջին երկու տարիների հակասությունները և արգելքները, որոնք ուղեկցում էին Սենատում այս հարցի քննարկման կազմակերպմանը, զգացել են այն մեծ տառապանքը, որն ապրում է մեր երկրում բնակվող հայ քաղաքացիներից յուրաքանչյուրի հիշողության մեջ:

Չմոռանանք, որ այս երկիրը այն երկիրն է, ուր ֆրանսահայերը, որոնց մենք այդքան պարտական ենք, հայտնի Միսաք Մանուշյանը՝ «Կարմիր հայտարարության» հեղինակներից մեկը, կամ մյուսները, ավելի քիչ հայտնի, իրենց արյունը թափեցին Ֆրանսիայի վերածննդի, նրա համընդհանուր արժեքների, մարդասիրության և ազատության համար, մի երկիր, ուր հայերը մեծ թիվ են կազմում և նպաստել են Ֆրանսիայի հարստացմանը մշակութային, բժշկության, արհեստների բնագավառներում և հայտնի են որակյալ բանվորներով:

Իրենց ներկայանալի կազմակերպությունների համառ և հզոր շարժմամբ, մեզ հասցված իրենց արժեքավոր հետազոտություններով և հուզիչ վկայություններով՝ հայ համայնքի ներկայացուցիչները կարողացան ներկայացնել 1915թ. ցեղասպանության պաշտոնական ճանաչման անխուսափելի պահանջն ու արդար գործը:

Նրանք կարողացան մեզ հիշեցնել, որ մի այնպիսի հզոր պետության արդարության և հիշողության հանդեպ պարտքը, ինչպիսին մերն է, ոչ թե նրանց կթուլացնի, այլ ճիշտ հակառակը, կհաստատի նրանց հավատարմությունը դեպի իրենց արժեքները, ավելի ուժեղ կդարձնի պայքարելը, ինչը թույլ կտա պաշտպանել մարդու իրավունքները:

Պրն. Հյուբեր Ֆալկո - Դե, ավարտե՛ք:

Տիկին Էլեն Լյուկ – Հենց որ Ֆրանսիան կհարգի պատմությունը՝ ձեռնարկելով այս կարևոր քայլը, լավ կլինի, որ հետագայում շարժիչ դեր

խաղա հայ և թուրք ժողովուրդների միջև տևական և խաղաղ հարաբերությունների փնտրման մեջ:

Պրն. Հյուբեր Ֆալկո – Ընդհատեք նրան:

Տիկին Էլեն Լյուկ - Այդ ժամանակ միջազգային հասարակայնությունը, ես դրանում համոզված եմ, հաշվի կառնի այն կառուցողական վերաբերմունքը, որ մենք կցուցաբերենք 1915թ. ողբերգության նկատմամբ:

Այսօրվա քննարկումը արդեն հնչած ելույթներով, իմ ընկերներ՝ Ռոբերտ Բրետի, Գի Ֆիշերի, քաղաքացիական և հանրապետական կոմունիստական խմբակցության օրինակով հիշեցրեց օրենքի այս առաջարկի անժխտելիությունը և այն հիմնավորված պատմական փաստերը, որ մենք պետք է քվեարկենք:

Այս երեկո ես ցանկանում եմ հիշել միայն հնչած այն ազդեցիկ խոսքերը, որոնք ինչպես ինձ, այնպես էլ քաղաքացիական և հանրապետական կոմունիստական խմբակցության բոլոր սենատորների համար առանձնահատուկ պատասխան էին և ես չեմ կասկածում, որ նրանք, ովքեր այս ասամբլեայի շարքերում չխնայեցին իրենց ջանքերն ու պատրաստակամությունը, կարողացան հասնել այն բանին, որ համոզեն, և մեծամասնության հավանությանը արժանացնեն այս տեքստը:

Պրն. Նախագահ – Տիկին նախագահ, բարի եղեք ավարտել: Ձեզ հատկացված ժամանակն արդեն սպառվել է:

Տիկին Էլեն Լյուկ – Շարունակելով Օ դը Սենի պատգամավոր Գի Դյուկոլոնեի համառ աշխատանքը, որը 1965թ. ներկայացրեց օրենքի մի առաջարկ, ես, որպես քաղաքացիական և հանրապետական կոմունիստական խմբակցության նախագահ, և մյուս սենատորները հայերի հետ միասին, մասնավորապես ապրիլի 24-ի կոմիտեի և նրա նախագահ պրն. Գովսյանի և մյուս կազմակերպությունների հետ կարևոր և համառ աշխատանք ենք տանում:

Պրն. Հյուբեր Ֆալկո – Պրն. նախագահ, ընդհատեք նրան:

Պրն. Նախագահ – Տիկին Լյուկ, խնդրում եմ եզրափակել ձեր խոսքը:

Տիկին Էլեն Լյուկ - Ես հատկապես հիշում եմ մարտի 11-ի մեծ ցույցերը, ապրիլի 24-ի կազմակերպված երթն Ալֆորվիլում, ինչպես նաև այս տարվա հունիսի 18-ի Մատինյոնի երթը Սենատ, որին մենք ներկա էինք:

Չնայած վերջին պահին գործադրված ճնշումներին և խորամանկ քայլերին, ցեղասպանության ճանաչման ձեռնարկված միջոցառումը հասցվեց իր ավարտին:

Պրն. Հյուբեր Ֆալկո – Նույնիսկ ձեր գործընկերներն այլևս չեն կարող դիմանալ, ընդհատե՛ք:

Տիկին Էլեն Լյուկ - Ես նախագահների տասնմեկ կոնֆերանսներում աշխատանք եմ տարել…

Պրն. Նախագահ – Տիկին Լյուկ, վե՛րջ:

Տիկին Էլեն Լյուկ - …որպեսզի տեքստը մեր ասամբլեայի օրակարգ մտցվի:

Պրն. Հյուբեր Ֆալկո – Պրն. նախագահ, ընդհատեք նրան, սա արդեն անտանելի է:

Տիկին Էլեն Լյուկ - Եվս մի քանի րոպե:

Պրն. Հյուբեր Ֆալկո - Ոչ:

Տիկին Էլեն Լյուկ – Թողեք արժանապատիվ ձևով ավարտենք:

Պրն. Նախագահ - Դուք պետք է ավարտեք, տիկին:

Պրն. Հյուբեր Ֆալկո - Դուք արդեն ծիծաղելի եք ձեր ձեռքի թղթերով:

Տիկին Էլեն Լյուկ - Ես ցանկանում եմ, որ Թուրքիան նույնպես մի օր ճանաչի ւսյս ցեղասպանությունը և ողջունում եմ մեր շարքերում ներկա գտնվող հայերին և նրանց ներկայացուցիչներին:

Պրն. Նախագահ – Շնորհակալություն, տիկին Լյուկ, վե՛րջ:

Պրն. Հյուբեր Ֆալկո – Չեզ այլևս չեն լսում:

Տիկին Էլեն Լյուկ - Եվ վերջում. այսօր կոչ եմ անում, հանդիսավոր կերպով տիկին և պրն. սենատորներին քվեարկել քաղաքական հինգ խմբակցությունների կողմից ստորագրված օրենքի այս առաջարկը:

Պրն. Հյուբեր Ֆալկո - Այնպես եք անում, որ մենք զղջանք, որ քվեարկում ենք, վերջացրե՛ք:

Տիկին Էլեն Լյուկ - Այս դիրքորոշումը պատիվ կբերի Սենատին և ցույց կտա հայերի ցավի հանդեպ տածած մեր հարգանքը:

Պրն. Կլոդ Հյուտին - Ես ձայն եմ խնդրում քվեարկության շուրջ մեկնաբանության համար:

Պրն. Նախագահ – Խոսքը տրվում է պրն. Հյուտինին:

Պրն. Կլոդ Հյուտին - Ես կցանկանայի նշել այն պատճառները, որոնք ինձ ցավոք ստիպում են դեմ քվեարկել օրենքի այս առաջարկին: Բացի այն, որ ես հիասթափություն եմ զգում, որ չընդունվեց իմ առաջարկը, որ կարող է զգալ ամեն մի փոփոխության առաջարկի հեղինակ, պայմանները, որոնցում կայացել է քվեարկությունը, ակնհայտորեն ցույց են տալիս, սիրելի գործընկերներ, որ համաձայնության գալը մեր հիմնական մտահոգությունը չէ...

Պրն. Հյուբեր Ֆալկո – Շատ լա՛վ:

Պրն. Կլոդ Հյուտին - ... չճանաչելով մյուս ցեղասպանությունները, դուք կարծես խտրականություն եք դնում, որը հանգեցնում է հաստատելու այն միտքը, որ համընդհանուր գիտակցության համար կան ընդունելի և չընդունելի ցեղասպանություններ: Այս կարճ քաղաքական վերլուծությամբ էլ ես դեմ եմ քվեարկելու առաջարկին:

Պրն. Նախագահ – Ոչ ոք այլևս ձայն չի՞ խնդրում: Ես քվերակության եմ դնում օրենքի առաջարկի այս միակ հոդվածը: Հանձնաժողովի առաջարկությամբ ես անցնում եմ բաց քվեարկության:

Քվեարկությունը անց է կացվում օրակարգային պայմաններում:

(Քվեարկությունը կայացավ):

Պրն. Նախագահ – Ոչ ոք այլևս չի՞ քվեարկում:

Քվեարկությունը փակված է:

(Անցնում է քվեների հաշվառմանը):

Պրն. Նախագահ - Ահա թիվ 15 քվեարկության վերլուծության արդյունքները:

Քվեարկողների թիվը – 208

Ձայն տվողների թիվը - 204

Ձայների բացարձակ մեծամասնություն – 103

Կողմ – 164

Դեմ – 40

Սենատը ընդունեց:

(Ծափահարություններ):

XVIII. ՇՎԵԴԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՂԶՄԻՑ ԵՐԿՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ

29 մարտի 2000թ.

Հայերը

1999-2000: U 651 բազմակուսակցական բանաձևն արձանագրում է, որ 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության հարավում, որն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Գերմանիայի հետ միության մեջ էր, հայերը կազմում էին քրիստոնեական փոքրամասնությունը: Օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմից, այնտեղ իրականացվեցին հայ ժողովրդի զանգվածային սպանությունները: Զանգվածային ոչնչացումները տեղի ունեցան 1915թ.: Այդ ողբերգության վերաբերյալ չկա ոչ մի ճշգրիտ վիճակագրություն: Սովորաբար ընդունված է համարել, որ ուղղակի ոչնչացման արդյունքում կամ էլ տեղահանության ժամանակ կենցաղային սարսափելի պայմանների հետևանքով, որին ենթարկվեցին նրանք, զոհվեցին մեկից մինչև մեկուկես միլիոն հայեր: 250000 հայերի հաջողվեց ապաստան գտնել Ռուսաստանում, 200000 ստիպված դարձան մուսուլմաններ և 40000 հայտնվեցին Սիրիայում: Երբ Թուրքիան 1918թ. ներխուժեց Կովկաս, սպանվեցին ևս 50000 մինչ 100000 հայեր:

Բանաձևի մշակմանը մասնակցողները ենթադրում են, որ հավանաբար թուրքական ժամանակակից կառավարությունը և քաղաքական կարգը չեն կարող պատասխանատվություն կրել այն բանի համար, որ տեղի ունեցավ այդ ժամանակ, երբ տեղի ունեցան հայերի զանգվածային սպանությունները, սակայն գտնում են, որ ծայրահեղ դեպքում թուրքական պետությունը պիտի որ հատուցի կենդանի մնացածների (կամ ժառանգորդների) վնասները:

Հանձնաժողովի եզրահանգումները.

Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է հայ ժողովրդի ցեղասպանության պաշտոնական ճանաչումը: 1985թ. ՄԱԿ-ում և Եվրոխորհրդարանում արձանագրվեց, որ Օսմանյան կայսրությունն այդ դարասկզբին իրականացրել է հայ ժողովրդի ցեղասպանությունը: Հանձնաժողովը պաշտպանում է այն կարծիքը, որ եթե Թուրքիան հանդես բերի իր անցյալի նկատմամբ մեծ բացահայտում, դրանով իսկ այն կնպաստի ժողովրդավարության ամրապնդմանը Թուրքիայում:

Այդ կապակցությամբ անհրաժեշտ է անցկացնել հայ ժողովրդին պատահած ցեղասպանության անկախ, անկողմնակալ միջազգային հետաքննություն, որպեսզի լինի մեծ բացահայտություն և հասնել 1915թ. և հետագայի պատմական դեպքերի ըմբռնմանը: Այդ բնագավառում առաջխաղացումը կարող էր նույնիսկ ընդհանուր առմամբ նշանակություն ունենալ Կովկասյան տարածաշրջանի կայունության և զարգացման համար:

Utrikesutskotte betänkande, 1999-2000: uu. 11.

XIX. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄՆ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՓՈՔՐ ՊԱԼԱՏՈՒՄ 2000Թ. ԱՊՐԻԼԻ 3-ԻՆ

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ ԱԼԲԵՐՏՈ ԲԻՈՆԴԻ - Նախագծի ընդհանուր դրույթների քննարկումը հայտարարում եմ բացված:

Առաջինը խոսք է խնդրել պատգամավոր Ջանկարլո Պալյարինին, որը կներկայացնի նաև հ. 1-00303 նախագիծը: Խնդրեմ:

ՋԱՆԿԱՐԼՈ ՊԱԼՅԱՐԻՆԻ - Պարոն նախագահ, պարոնայք պատգամավորներ, մի քանի օր առաջ՝ մարտի 6-ին, Հռոմի Քաղաքային խորհուրդը միաձայն որոշում է ընդունել, որով «համարում է անհրաժեշտ, որպեսզի միջազգային հանրությունը հանդես գա հանուն հայ ժողովրդի շահերի, ինչպես դա տեղի ունեցավ հրեաների Հոլոքոսթի դեպքում»: Բացի այդ, Քաղաքային խորհրդի անդամները դիմել են իտալական կառավարությանը՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու կոչով:

Նախկինում նման փաստաթղթեր են ընդունել նաև Միլանի, Ֆլորենցիայի և շատ այլ մեծ և փոքր քաղաքների խորհուրդներ, Պադովայից մինչև Բանյակավալլո: Հայոց ցեղասպանությունը ճանաչած քաղաքների թիվն արդեն 33 է, վերջինը Բելունոն էր՝ ուղիղ մեկ շաբաթ առաջ: Մեր երկրի սահմաններից դուրս Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչվել է ՄԱԿ-ի մարդու իրավունքների ենթահանձնաժողովի, Եվրախորհրդի, շատ պետությունների և հաստատությունների կողմից: Վերջինն ըստ ժամանակագրության Շվեդիայի խորհրդարանն էր, որը պաշտոնապես ճանաչեց ցեղասպանությունը մի քանի օր առաջ՝ մարտի 29-ին:

Բոլոր նրանց թվարկումը, ովքեր պաշտոնապես ճանաչել են այս ցեղասպանությունը, շատ ժամանակ կխլի: Ես նախագահությանն եմ ներկայացրել այդ ցանկը և խնդրել եմ կցել այն քննարկման սղագրված տեքստին:

ՆԱԽԱԳԱՀ - Նախագահությունը համաձայն է:

ՋԱՆԿԱՐԼՈ ՊԱԼՅԱՐԻՆԻ - Իտալիայի խորհրդարանը, սակայն, դեռ դյուրազգացություն և համարձակություն չի ունեցել ճանաչելու այս ողբերգական պատմական ճշմարտությունը: Մինչ օրս այդ ցեղասպանության բնութագիրն է եղել լռությունը: Մարդասպանների լռությանը գումարվեց պետությունների, գոհերի, դիվանագիտության և մարդկային խղճի լռությունը: Քիչ թվով հայերի է հաջողվել խուսափել սպանդից, փախել են աշխարհի բոլոր քաղաքակիրթ երկիրները և անմիջապես սկսել են աշխատել:

Հարգել են իրենց հյուրընկալող երկիրների օրենքները, ընտանիքներ են ստեղծել, չեն խոսել մահից ազատվելու համար հարկադրաբար թողած իրենց հողերի մասին: Եվ չեն խոսել իրենց մեռյալների մասին:

Սկզբից ընտրել են լռությունը՝ վերապրելու համար, կարծես փորձել են մոռանալ՝ խաղաղություն գտնելու համար նոր կյանքում: Սակայն լքված տան հիշողությունը հավերժ է, և սպանված բարեկամներիդ ու ազգականներիդ հիշատակը հնարավոր չէ մոռանալ՝ կարող ես լռելյայն կրել այդ բեռը, բայց հիշողությունը փոխանցվում է հայրերից որդիներին, և ժամանակի ընթացքում մարդու խղճի լռությունը հետզհետե դառնում է ան-

տանելի: Մենք և Եվրամիության մաս կազմող մյուս 14 երկրների խորհրդարանի անդամ մեր գործընկերները պարտավոր ենք ընդմիջել խղճի այդ լռությունը և մեր ձայնը բերել, որպեսզի Եվրամիության անդամ բոլոր երկրները հաստատակամորեն ազդարարեն և հիշեն պատմական այդ ճշմարտությունը:

Ճանաչելով հայ ժողովրդի ցեղասպանությունը, Իտալիան և եվրոպական պետությունները, որոնք ապաստան են տվել սակավաթիվ վերապրածների, կճանաչեն նրանց ինքնությունը և վերջապես բարոյական հոգեհանգիստ կմատուցեն ցեղասպանության զոհերին:

Այսօր իմ պարտքն է փորձել խիստ հակիրճ ներկայացնել ձեզ փաստերը: Մեծարգո պատգամավորներ, խնդրում եմ հաշվի առնել հետևյալ կետերը.

Հայերն ու թուրքերն ավելի քան ութ դար ապրել են կողք-կողքի փափկանկատ հավասարակշռության և փոխադարձ հանդուրժողականության պայմաններում: Օսմանյան կայսրությունը քրիստոնյա փոքրամասնություններին կրոնի և լեզվի ազատություն էր շնորհել: Սակայն Օսմանյան կայսրությունում բոլոր «անհավատները», այսինքն քրիստոնյաներն ու բոլոր ոչ մահմեդականները երկրորդ կարգի քաղաքացիներ էին համարվում. չէին կարող զենք կրել, չնչին իրավունքներ ունեին և հարկադրված էին հատուկ հարկեր վճարել:

1914թ. Օսմանյան կայսրությունը Ավստրիայի և Գերմանիայի կողքին պատերազմի մեջ մտավ: Հայերը, որ ապրում էին Օսմանյան կայսրության կովկասյան շրջաններում, հայտնվեցին երկու ճակատում: 1914 և 1915թթ. թուրքական բանակը Կովկասում, Սարիղամիշի տակ, կործանարար պարտություն կրեց, և մեղքը բարդվեց հայերի վրա, որոնք մեղադրվեցին դավադրության մեջ:

1915թ. փետրվարի 25-ին օսմանյան գլխավոր շտաբը բոլոր հայ զինվորներին զինաթափելու հրաման արձակեց:

1915թ. ապրիլի 24-ի գիշերը Կոստանդնուպոլսում ապրող հայերը բանտարկվեցին: Կոտորածն սկսվել էր, և Արևմուտքի պետությունները գիտեին այդ մասին:

1915թ. մայիսի 27-ին մի օրենք ընդունվեց, որը լիազորում էր կասկածյալ անձանց բռնի տեղահանությունը: Այդ օրենքը լիազորություններ էր տալիս զինվորական հրամանատարներին՝ բռնի տեղահանել դավաճանության և լրտեսության մեջ կասկածվող քաղաքացիներին: Իրականում այդ օրենքը հավանություն էր տալիս կանխամտածված և նպատակաուղղված մի ողջ ժողովրդի զանգվածային տեղահանություններին և սպանություններին: Հաստատող բազմաթիվ վկայություններ կան, որ գործ ունենք սիստեմատիկ և կազմակերպված ոչնչացման մի գործընթացի հետ:

Եթե չէին էլ սպանում, հայերին շարքերով, հետիոտն, բռնի քշում էին դեպի Սիրիա՝ Դեր Էլ Զորի անապատը: Այնքան էին ստիպում քայլել, մինչև բոլորը մեռնեն:

Այս է, դժբախտաբար, պատմությունը: Ահա ոչ վաղ անցյալի թվերը, որոնք պետք է իմանալ: Դարասկզբին Թուրքիայում ապրում էր 1800000 հայ: Մոտ 700000-ը սպանվեցին իրենց բնակության վայրերում և մոտ 600000-ը մահացան բռնագաղթի ժամանակ: 200000-ն էլ փախան Կովկաս: 150000-ը կարողացան փախչել Եվրոպա: Թուրքիայում վերապ-

րեց 150000-ից պակաս հայ: Անատոլիայում 3000 տարի ապրող հայության 70 տոկոսից ավելին ոչնչացված էր:

Սրանք են Հայոց ցեղասպանության հաշվեկշիռը ներկայացնող թվերը: Ոչ շատ տարիներ առաջ է պատահել՝ դարասկզբին: Նացիստները դեռ իշխանության չէին եկել, և բազմաթիվ հրեաներ դեռ խաղաղ ապրում էին Գեմանիայում և Իտալիայում: Հիտլերը, 1939թ. օգոստոսի 22-ին, Լեհաստան մտնելուց առաջ, Օբերզալցբերգում մի ժողովի ժամանակ հայտարարել է.

«Ո՞վ է այդքանից հետո խոսում այսօր հայերի ոչնչացման մասին»:

Մարդկության պատմության այս սև էջին վերաբերող վկայությունները շատ-շատ են: Գերմանացի Արմին Վեգների ողբերգական լուսանկարներից բացի բազմաթիվ փաստաթղթեր գոյություն ունեն, որոնցից մեջբերեմ միայն երեքը. «Բռնագաղթի կատարման ձևն ապացուցում է, որ կառավարությունն իրապես հետապնդում է Օսմանյան կայսրությունում հայկական ցեղի ոչնչացման նպատակ»:

Սա Թուրքիայում Գերմանիայի դեսպան Հանս Ֆոն Վանգենհայմի 1915թ. հուլիսի 7-ի նամակից է:

«Գաղտնիք չէ, որ նախատեսված ծրագիրը պարունակում է հայոց, իբրև ցեղի, ոչնչացումը»:

Սա Անատոլիայում ԱՄՆ հյուպատոս Լեսլի Դևիսի վկայությունն է՝ գրված 24 հուլիսի 1915թ.:

«Մեզ մեղադրում են մեղավոր և անմեղ հայերի միջև տարբերություն չդնելու մեջ. դա բացարձակապես անհնար է, քանի որ այսօրվա անմեղները գուցե վաղվա մեղավորներն են դառնալու»:

Այսպիսի հրաման է տալիս ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան 1915թ.:

Ինձ հայտնի է, որ 1919թ., Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո, երբ ընկնում է երիտթուրքերի կառավարությունը, Թուրքիայի նոր կառավարության զինվորական դատարանը մահվան է դատապարտում ցեղասպանության երեք գլխավոր պատասխանատուներին: 1919թ. դատարանի մեղադրանքն էր կոտորածը և ոչ ցեղասպանությունը: Հետագայում Թուրքիայի պետությունը միշտ ժխտել է ցեղասպանություն իրագործելու փաստը: Պաշտոնական վարկածն այն է, որ բռնի տեղահանումները հրահանգվել են ապստամբությունը զսպելու նպատակով: Դժվար է այս թեզն ընդունել նաև այն պատճառով, որ բռնագաղթը կատարվել է դեպի Սիրիա՝ Դեր Էլ Զորի անապատ, ուր քչերն են տեղ հասել և ուր անիմաստ է կարծել, որ մարդ արարածը կկարողանար վերապրել առանց ջրի և առանց սննդի՝ բուսականությունից զուրկ չոր անապատում:

Եվրախորհրդարանը հաստատում է, որ Թուրքիայի պետությունը, հրաժարվելով ճանաչել 1915թ. ցեղասպանությունը, մինչ օրս զրկել է և շարունակում է զրկել հայ ժողովրդին սեփական պատմության իրավունքից:

Ձեզ պետք է տեղեկացնեմ նաև մեկ այլ բան: 1998թ. մայիսի 29-ին Ֆրանսիայի Ազգային ժողովի մեր գործընկերները միաձայն օրենք են ընդունել Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու մասին: Դա մարդասիրական և քաղաքացիական խիզախության արտակարգ դրսևորում է Ֆրանսիական խորհրդարանի կողմից: Անկարայի կառավարությունը շատ կոշտ արձագանքեց դրան՝ սպառնալով Փարիզի դեմ առևտրական

սանկցիաներ կիրառել: Այսպես ուրեմն, գործընկերներ, համարյա երկու տարի է անցել, սակայն այդ օրենքը մինչ օրս չի քննարկվել Ֆրանսիայի Հանրապետության Սենատում, և այսօր առավոտյան տեսա, որ պատգամավորներին, Կամերայի բոլոր անդամներին էլեկտրոնային փոստով նամակներ են ուղարկվել, որոնցում ասվում է, որ Ֆրանսիական Սենատը, ի տարբերություն Ազգային ժողովի, հրաժարվել է քննարկել այս նյութը՝ պատճառաբանությամբ, որ սահմանադրությամբ Սենատին նման բան արտոնված չէ:

Ահա մի քաղվածք այդ օրերի տեղեկատվություններից.

29 մայիսի, Թուրքիայի ԱԳ նախարար Իսմայիլ Ջեմ. «Դատապարտում եմ այդ որոշման ընդունումը, որը Թուրքիայի և Ֆրանսիայի միջև հարաբերությունների վրա բացարձակ աղետաբեր ազդեցություն կունենա»:

30 մայիսի. «Թուրքիան վերանայում է իր հարաբերությունները Ֆրանսիայի հետ և պատժամիջոցներ է պատրաստում Փարիզի դեմ /.../ սպառնալով դիմել այնպիսի հակադարձ քայլերի, ինչպիսին է Ֆրանսիայի ընդգրկումը «կարմիր ցուցակում»՝ բոլոր այն երկրների ցանկում, որոնց հետ բացառվում է առևտուրը ռազմական բնագավառում»:

2 հունիսի. «Թուրքիայի խորհրդարանն այսօր դատապարտեց ֆրանսիական խորհրդարանին...»:

5 հունիսի. «Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հետևանքով խափանվեց ֆրանսիական Aerospatiale-ի և թուրքական արդյունաբերության միջև Eryx հրթիռների արտադրության վերաբերյալ 2,7 միլիարդ ֆրանկ արժողությամբ պայմանագրի ստորագրումը»:

Այս հակազդեցության դրդապատճառները կարող են բազմաթիվ լինել: Մենք և ոչ երկրորդականն, այն է, որ սկսելով Հայոց ցեղասպանության ճանաչումով, միջազգային հանրային կարծիքը կարող էր ճանապարհ ընկնել, հասնելով մինչև մեր օրերը և Քրդստանում խաղաղություն հաստատելու անհրաժեշտության գաղափարին:

Կարծում եմ, իմ պարտքն էր անել այս մեջբերումները, հաղորդել ձեզ այն ամենը, ինչ ես գիտեմ, որպեսզի դուք կարողանաք լիիրավ գիտակցությամբ քվեարկել: Հայոց ցեղասպանությունը ճանաչած քաղաքների շարքում է նաև Իմոլան, և ես ստեղ 1998թ. մայիսի 18-ի տեղեկատվություն ունեմ, ուր գրված է. «Թուրքիան, սակայն, չի սահմանափակվում բողոքելով և պահանջում է այն, ինչը Իմոլայում համարում են Խորհրդի բոլոր անդամների, սկսած նախագահից, «ցուցակավորում»՝ քանիսն են, ինչ քաղաքական խմբերի են պատկանում և այլն»:

Կարող եմ բազմաթիվ նման այլ դեպքեր բերել, ընդհուպ անցյալ երեքշաբթի՝ մարտի 28-ի «Լա Ստամպա» օրաթերթը, ուր կարելի է կարդալ. «Մի քանի շաբաթ առաջ Հռոմի Քաղաքային խորհուրդը քվեարկել է 1915թ. թուրքերի կողմից իրագործված Հայոց ցեղասպանության ճանաչման օգտին: Նախաձեռնողները չէին թաքցնում իրենց մտադրությունը՝ նույնը կրկնել նաև խորհրդարանում: Նույնիսկ միայն ցեղասպանության ճանաչման օգտին վերջինիս քվեարկելու հնարավորության ենթադրությունից ծնունդ առավ Ֆարնեզինայի դեմ Անկարայի դիվանագիտական եռանդուն

միջամտությունը՝ զգուշացնելու համար, թե որքան ծանր հետևանքներ կարող է ունենալ նման որոշումը»:

Անցած շաբաթ հեռաձայնեցի Ֆարնեզինա (Իտալիայի ԱԳՆ) և ինձ ասացին, որ «պահը հարմար չէ»: Այսինքն, գործընկերներ, կառավարությունն ու դիվանագիտությունը քաջ գիտակցում են, որ պետք է որոշակի հակազդեցության սպասենք: Բոլորս պետք է դա գիտակցենք: Այս նյութի շուրջ խնդրում եմ նախ և առաջ սա հաշվի առնել, 1997թ. հունիսին մեր գործընկերներ Լեոնին, Չենտոն և Տարադաշը հարցապնդում էին ներկայացրել, որով դիմում էին կառավարությանը՝ ճանաչել Հայոց ցեղասպանությունը, ինչպես դա առաջարկվում է Եվրախորհրդարանի 1987թ. որոշմամբ: Կառավարության պատասխանը ստորագրված այն ժամանակվա ԱԳՆ փոխնախարար Պատրիցիա Տոյայի կողմից, հետևյալն էր. «Տարածաշրջանում տևական լարվածությունների առկայության պատճառով նպատակահարմար չէ, համենայն դեպս այս պահին, կառավարական մակարդակով պաշտոնական դիրքորոշում արտահայտել 1915թ. կոտորածների վերաբերյալ: Առանց կասկածի տակ առնելու հայերի կոտորածի փաստը պատմականորեն, կառավարության կողմից դրա ճանաչման քաղաքական ակտը կարող է, մտադրությունները մի կողմ դրած, հնչել իբրև անուղղակի պաշտպանություն Հայաստանին՝ Ադրբեջանի հետ ունեցած իր հակամարտության հարցում, ինչը կհակասեր միջազգային հանրության ցուցումներին համապատասխան մեր չեզոքության և հավասարակշռության քաղաքականությանը»:

Այս պատասխանը պատմաբան Մարչելո Ֆլորեսը մեկնաբանել է հետևյալ կերպ. «Դիվանագիտական նպատակահարմարությանը պատմական ճշմարտությունը ենթարկելը սակավ զգայունության դրսևորում է ոչ միայն պատմության, այլև ճշմարտության հանդեպ: Դա բարոյական անկման արտահայտություն է, որը անցյալում քիչ չէ նպաստել, հանուն ցանկալի արդյունքների, պաշտպանության չդիմացող արարքների արդարացմանը»:

Այս տեսակետը ես լիովին ընդունում եմ և ներկայացնում ձեր գնահատմանը: Ինձ անհավատալի են թվում ավելի քան ութսուն տարի առաջ Օսմանյան կայսրության ժամանակների պատմական ճշմարտությունը ճանաչել թույլ չտալու այս փորձերը: Եվրոպայում շատ են նրանք, ովքեր համարում են, որ Թուրքիայի կողմից այս պատասխանատվության ամբողջությամբ և լրիվ ստանձնումը պետք է լինի Թուրքիայից՝ Եվրամիությանն անդամակցության դիմումի քննարկման անցնելու առաջին և անհրաժեշտ պայմանը: Այս սկզբունքը պարզորոշ արտահայտված է Եվրամիության 18 հունիսի 1987թ. որոշման մեջ, ուր ասվում է, որ անցյալում երիտթուրքերի կառավարության կողմից հայ ժողովրդի հանդեպ իրականացված ցեղասպանությունը ճանաչելու մերժումը ներկայիս թուրքական կառավարության կողմից անհաղթահարելի արգելք է Եվրամիությանը Թուրքիայի անդամակցելու ճանապարհին: Կարծում եմ, խոսքը բացարձակապես ընդունելի մի սկզբունքի մասին է, որը շատերն են որդեգրել:

Գործընկերներ, եթե մենք այստեղ՝ Մոնտեչիտորիոյում, քննարկենք և ընդունենք Հայոց ցեղասպանությունը ճանաչող մի փաստաթուղթ, այն կարող է «դոմինոյի ներգործություն» առաջացնել, ընդգրկելով Եվրամիության մյուս երկրները (Իսպանիան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան և

այլն): Այս խնդիրը չի կարող տարբեր մոտեցման արժանանալ ձախերի կամ աջերի կողմից: Խոսքը գաղափարախոսության կամ տնտեսական շահերի մասին չէ, այլ մարդու ազատության և արժանապատվության մասին, և, անկասկած արժե, որ այս հարցերում Եվրամիությունը համախմբված լինի և խոսի մեկ ընդհանուր ձայնով միայն: Բացի այդ, մենք օգնած կլինենք նաև չափավոր թուրքերին, քանի որ Անկարան այդ դեպքում այլ ելք չի ունենա, քան Եվրամիության կամքն ընդունելը: Տեղեկացնեմ ձեզ, որ Գերմանիայում մի Կոմիտե է կազմվել, որն իրենց կառավարությունից Հայոց ցեղասպանությունը ճանաչելու պահանջով 17 հազար թուրքերի ստորագրություն է հավաքել:

Պատմությունն ու ճշմարտությունը հնարավոր է մի կողմ դնել, կամ աշխատել սքողել քիչ թե շատ երկար ժամանակահատվածում, սակայն հնարավոր չէ ջնջել:

Խնդրում եմ ձեզ կոտրել այդ լռությունը և բոլոր այն միջոցներով, որոնք նպատակահարմար կգտնեք, զգայունացնել Եվրամիության մյուս երկրների մեր գործընկերներին, որպեսզի սա առիթ դառնա նաև ինքներս մեզ ցույց տալու, որ Մաաստրիխտի Եվրոպայից վեր գոյություն ունի նաև քաղաքական Եվրոպա:

Իմ կարծիքով, հետևելով Հունաստանի օրինակին (որի Խորհրդարանը պաշտոնապես ճանաչել է ցեղասպանությունը 25 ապրիլի 1996թ.), Բելգիայի (որի Սենատը այն ճանաչել է 22 մարտի 1998թ.), Ֆրանսիայի (որը ճանաչել է 29 մայիսի 1998թ. Ազգային ժողովի ընդունած օրենքով և դեռ չի անցել Սենատով), Շվեդիայի (որն, ինչպես ասացի, ճանաչել է մի քանի օր առաջ՝ մարտի 29-ին), ինչպես նաև Իտալիայի օրինակին, որը հույսով եմ, կկամենա ճանաչել՝ քվեարկելով նախագիծը, որի քննարկումն սկսեցինք այսօր, մեր կառավարությունը պետք է առաջարկությամբ հանդես գա, որպեսզի մինչև 2000թ. վերջը Եվրամիության անդամ բոլոր երկրները պաշտոնապես ճանաչեն Հայոց ցեղասպանությունը և համերաշխություն հայտնեն դժբախտ այդ ժողովրդին՝ պատմական ճշմարտության ու մարդու իրավունքների պաշտպանության համար մղած իր պայքարում: Դա կլինի ազդանշան առ այն, որ Եվրոպան կա, որ գոյություն ունի քաղաքակիրթ ժողովուրդների մի Եվրոպա, տարբեր այն պետություններից, որոնք մինչ օրս հանուն դիվանագիտական և այլ շահերի գերադասել են չհիշել այն, ինչ կատարվել է Հայաստանում և, դժբախտաբար, գերադասել են շատ չմտածել, թե ինչ է կատարվում բուրդ ժողովրդի հետ: Ահա թե ինչու է քննարկվող նախագծով, որը ստորագրել եմ այս սրահում ներկայացված բոլոր կուսակցությունները ներկայացնող 145 պատգամավորներ, և որը, ես հույսով եմ, կընդունվի միաձայն, հանձնարարվում է մեր կառավարությանը՝ պաշտոնապես ճանաչել հայ ժողովրդի ցեղասպանությունը:

Դա մեր մարդկային պարտքն է, մեր պարտքը մարդկության հանդեպ, վերապրածների և նրանց սերունդների առջև, որոնցից շատերը մեր՝ իտալացիներիս և եվրոպացիներիս համաքաղաքացիներն են, քանզի, գործընկերներ, ինչպես գրված է 29 մայիսի 1998թ. ֆրանսիական Ազգային ժողովում ծավալված իսկապես բարձր մակարդակի քննարկման սղագրության էջերում, «մեկ այլ ժողովրդի ցեղասպանության եղելությունը չճանաչելը ոչ միայն դիպչում է անմիջապես վերապրածներին, այլև վիրավորում է

զոհերի հիշատակը և այդպիսով սպանում նրանց մեկ անգամ ևս» («Պադանիա Հյուսիսային դաշինք» և «Հառաջ, Իտալիա» խմբակցությունների պատգամավորների ծափահարություններ, շնորհավորանքներ):

ՆԱԽԱԳԱՀ - Շնորհակալ եմ, մեծարգո Պալյարինի, նաև մարդասիրական այն զգացմունքի համար, որով հագեցած էր այս կարևորագույն զեկույցը:

Ելույթի հայտ է ներկայացրել պատգամավոր Նիկոլինին: Խնդրեմ:

ԳՈՒԱԼԲԵՐՏՈ ՆԻԿՈԼԻՆԻ - Պարոն նախագահ, հեշտ չէ ելույթ ունենալ այսպիսի կարևոր և ողբերգականորեն այսքան լուրջ թեմայով՝ ինչպես միշտ դատարկ լսարանում:

ՆԱԽԱԳԱՀ - Մեծարգո Նիկոլինի, միշտ հաշվի առեք, որ լսարանները երբեք դատարկ չեն: Լսարանները ներկայացուցչական են նրանցով, ովքեր ներկա են, ովքեր իրենց հերթին ներկայացնում են ողջ ազգությունը և երբեմն շատ ավելի ուժեղ արձագանք են ունենում այն դեպքում, երբ առաջին հայացքից թվում է, թե անուշադրության են մատնված, մինչդեռ որևէ արձագանք չեն ստանում, երբ աղմուկը գերազանցում է այն գաղափարներն ու հուզմունքը, որոնք արտահայտվեցին այստեղ:

ԳՈՒԱԼԲԵՐՏՈ ՆԻԿՈԼԻՆԻ - Շնորհակալ եմ, պարոն նախագահ և ընդունում եմ Ձեր հորդորանքը:

ՆԱԽԱԳԱՀ - Դա հորդորանք չէ:

ԳՈՒԱԼԲԵՐՏՈ ՆԻԿՈԼԻՆԻ - Այնուամենայնիվ, ես պետք է բողոքեմ, որ շատ հաճախ մեծագույն իմաստ և կարևորության ունեցող նյութերը դրվում են նախընտրական շաբաթվա, որն ամեն դեպքում մի քիչ դատարկ է լինում, երկուշաբթի կամ ուրբաթ օրվա օրակարգում: Կարծում եմ, այսպիսի կարևորության նախագիծը պետք է ներկայացվի և քննարկվի այլ լսարանում: Ինչևէ, ողջունենք դահլիճում մեզ ունկնդրող հայ բարեկամներին և այս նիստի հաղորդումը լսողներին: Խոսում ենք դարասկզբի մի ողբերգության մասին, մի դարի, որ տեսավ ամենամեծ գիտական առաջընթացներից մեկը և դեպի բարբարոսություն ամենամեծ հետդարձերից մեկը: Կարծում եմ, եթե իննհարյուրականները զննենք մարդկային բարբարոսության տեսանկյունից, իսկապես պետք է ամաչենք, իբրև մարդ արարած: Սա բազմաթիվ այն ողբերգություններից է, որ իննհարյուրականները մեզ հրամցրին և որոնք, գուցե, 2000 թվականով, կարող ենք փորձել վերջակետ դնել այնպես, որ 2001-ով՝ նոր դարի առաջին տարով, հնարավոր լինի եղելությունը ճանաչելով՝ փակել այս էջը:

Մեր գործընկեր Պալյարինին խոսեց սարսափների և լռության սարսափի մասին: Կարծում եմ՝ լռությունը իննհարյուրականների երկրորդ մեծ սարսափն է եղել: Գրեթե բոլոր այդ սարսափները, գրեթե բոլոր ողբերգությունները, գրեթե բոլոր կոտորածները լռության իրենց բաժինն են ունեցել: Մեզ հաջողվեց խոսել Հոլոքոսթի մասին, ինչը արեցինք միայն, որովհետև հաղթողները ուրիշներն էին: Եթե Հոլոքոսթի հեղինակները հաղթած լինեին, հավանորեն մինչ օրս այդ մասին չէինք խոսի: Շատ ուրիշ հոլոքոսթներ են եղել: Կուզեի շատ սեղմ հիշել, բացի հրեաներից, նաև այն, ինչ կատարվեց Ռուանդայում, ավելի ճիշտ, ստալինյան ԽՍՀՄ-ում, հետո, թույլ տվեք հիշել իմ հողը, թույլ տվեք հիշել իստրիացի ժողովրդի հոլոքոսթը: Այսպիսով հասնում ենք հայ ժողովրդին և վստահաբար ուրիշներ և ուրիշներ էլ դեռ այսօր ընթացքի մեջ են: Ուզում ենք խոսել Չեչնիայի մա-

սին, թե ձևացնենք, որ գոյություն չունի: Ուզում ենք հիշել, թե ինչ կատարվեց Տիբեթում ոչ վաղ անցյալում, թե ուզում ենք ձևացնել, որ ոչինչ էլ չի կատարվել: Ուրեմն, այս տեսանկյունից, իննհարյուրականները մի հարյուրամյակ էր, որ պետք է պատմագրվեր ու մոռացվեր, հուսալով, որ որոշ ողբերգություններ էլ չեն կրկնվի:

Ինչ վերաբերում է հայ ժողովրդի խնդրին, կարծում եմ, կասկած չկա, որ տեղի է ունեցել ցեղասպանություն: Ապացույցներն այնպիսին են և այնքան շատ են, որ անընդունելի է վիճել՝ եղե՞լ է, թե՞ ոչ. ցեղասպանությունը եղել է: Քաջություն ունենանք ընդունել դա: Ինձ համար տարօրինակ էր էլեկտրոնային փոստով Իտալիա-Թուրքիա ընկերակցության նամակն ստանալը, ասես ես թուրքերի թշնամի լինեմ, ասես Թուրքիայի թշնամի լինեմ: Ո՛չ, ես թուրք ժողովրդի մեծ բարեկամն եմ, մեծ բարեկամն եմ այն ժողովրդի, որն այսօր Եվրոպայի համար հատուկ և շատ կարևոր պատմական դեր է կատարում, չպետք է դա մոռանանք: Սակայն, պետք է դիմենք թուրք բարեկամներին, դրսեսզի բարոյական, քաղաքացիական և քաղաքական քաջություն ունենան ասելու. «Այո, 85 տարի առաջ արել ենք դա», կարծում եմ ոչ մի վատ բան չի կատարվի:

Երբ Վիլի Բրանդտը գնաց Ռուխենվալդի առջև ծնկի եկավ, ոչ մի գերմանացի չամաչեց. ամաչեց կատարվածից, այլ ոչ թե հրեաներից ներողություն խնդրելու փաստից: Ավելին, նրանք, ովքեր գնում էին ծնկի գալու, այդ հանցագործությունների հեղինակները չէին, այլ նրանք էին, ովքեր գերազանցել էին նրանց, ովքեր հասկացել էին, թե ինչ են այդ հանցագործությունները, ովքեր հասկացել էին, որ աշխարհն ուրիշ է, և որ անհրաժեշտ է ջնջել այդ հանցագործությունները, ջնջել ոչ թե մոռանալով, այլ հիշելով, ընդունելով և պարտավորվելով, որ էլ երբեք չկրկնվեն:

Երբ Իտալիայի հարավ-արևելքը Հարավսլավիայի բարեկամներից պահանջում է ճանաչել իստրիացիների փոքր, բայց սոսկալի ցեղասպանությունը, այդ դեպքում էլ դա նշանակում է՝ թշնամություն չենք ուզում, ուզում ենք բարեկամ լինել, սակայն բարեկամությունը ծնվում է այն պահին, երբ կողմերից յուրաքանչյուրն ընդունում է, որ իր պատմության էջերում որևէ սև էջ կա: Պապը ներողություն է խնդրում ինկվիզիցիայի համար, և դրանում ոչ մի վատ բան չկա, ավելին, ներկայիս պապը չէր Ջորդանո Բրունոյին և նրա ընկերներին այրողը: Ուրեմն ճիշտ է, որ եկեղեցին ընդունի, որ սխալների խավար շրջան է ունեցել:

Սա ենք խնդրում մեր բարեկամ թուրքերից, սակայն խնդրում ենք բարեկամաբար, մեծ հարգանքով, քանզի քաջ գիտակցում ենք, որ Եվրոպան Թուրքիայի կարիքն ունի, ինչպես և Թուրքիան Եվրոպայի կարիքն ունի: Եթե Թուրքիան վահան չհանդիսանար այսօր Արևմուտքի համար իսլամական արմատականության մեծ վտանգի դեմ, Եվրոպային մեկ վտանգ ավելի կսպառնար, ուստի տրամաբանական է, որ մենք նրա կարիքն ունենք, այնպես, ինչպես նա՝ մերը:

Համաձայն եմ, որ Իտալիայի կառավարությունը պետք է ինչ որ բան անի: Սակայն պետք է անի ավելին, քան ցեղասպանության ճանաչումը, ինչպես ասաց Պալյարինին իր ելույթի վերջում: Ոչ թե Իտալիայի, Ֆրանսիայի կամ Գերմանիայի ճանաչումով է լուծվելու խնդիրը, այլ միացյալ Եվրոպան պետք է պահանջի դա Թուրքիայից: Միացյալ Եվրոպան պետք է պայմանագրային, բարոյական և քաղաքական իր ուժն օգ-

տագործի՝ պահանջելու Թուրքիայից ճանաչել այդ ողբերգությունը, ասել թուրքերին. «Ճանաչեք, անգամ եթե հեղինակները դուք չեք եղել»: Պետք է խուսափենք այն բանից, որ հայկական հարցը դառնա հակաեվրոպական կամ հակաթուրքական շահարկության առարկա: Պետք է բացատրենք, որ ճիշտ հակառակը՝ ցեղասպանության ճանաչումը թուրքերին հնարավորություն կտա մեծ արժանապատվությամբ մեզ պես եվրոպացի լինելու: Սա է խնդիրը:

Մեր առջև դրված խնդիրը անհրաժեշտաբար պահանջում է, որ Իտալիան ճանաչի այս հարցը, սակայն հատկապես, որ Եվրոպայում դրան օժանդակող առաջատարը լինի: Թանկագին Պալյարինի, քանի դեռ գործ ունենք Հունաստանի խորհրդարանի որոշման հետ, ամեն ինչ փոքր-ինչ կասկածելի է թվում: Քանի դեռ գործ ունենք Կիպրոսի խորհրդարանի որոշման հետ, այս դեպքում էլ ամեն ինչ փոքր-ինչ կասկածելի է թվում: Միակը, որ կասկած չի հարուցում այս պահին, Ֆրանսիայի Ազգային ժողովն է, սակայն այս էլ բավական չէ, քանի որ Սենատը դեռևս չի ընդունել որևէ որոշում:

Եվրոպական մյուս երկրները մինչ այժմ քաջություն չեն ունեցել խոսելու այս հարցի մասին, բացառությամբ Շվեդիայի, քանզի արի ու տես, որ ամերիկյան ժողովուրդները եվրոպացիներից շատ ավելի են խոսել: Իրոք, այս խնդրով զբաղվել են ԱՄՆ-ի 9 նահանգներ, ինչպես նաև Ավստրալիան և Բուլղարիան (որը, դժբախտաբար, դեռ կապ չունի Եվրոպայի հետ): Արտահայտվել է նաև Ռուսաստանի Դուման, սակայն ռուսների և թուրքերի միջև վաղեմի հաշիվներ կան: Այս ամենը գալիս է ինձ ասելու, որ հայկական հարցով հետաքրքրվածներից շատերը քաղաքական տեսանկյունից կասկածելի են, իսկապես շատերը կուզեին շահարկել այս խնդիրը: Դա չի վերաբերում, բարեբախտաբար, ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովին և ԱՄՆ Սենատին, թեև վերջինիս արտահայտվելը խնդրո առարկայի մասին շատ վաղուց է եղել (Սենատը պետք է, ուրեմն, վերանայի իր դիրքորոշումը): Ընդգծենք նաև Ուրուգվայն ու Արգենտինան, որոնք արտահայտվել են այս հարցի վերաբերյալ:

Այս խնդրով զբաղվել են հեռավոր երկրներ, մինչդեռ պետք է զբաղվեր Եվրոպան, սակայն Եվրոպան պետք է մեկ ձայնով խոսի, չենք կարող մի կողմից խոսել մենք՝ իտալացիներս, և մյուս կողմից գերմանացիները: Գերմանացիները, բացի այդ, շատ խնդիրներ ունեն, քանի որ նշանակալի թուրք համայնքն են հյուրընկալում: Դա Գերմանիայի վախն է առաջացնում ներքին խնդիրների ծագման իմաստով, ինչը հաստատվեց նաև Օջալանի ողբերգական հարցում: Մեկ անգամ ևս պնդում եմ, որ եթե Եվրոպան չխոսի մեկ ձայնով, եթե բոլորը միասին չասեն Թուրքիային. «Ուզում ենք, որ մեզ հետ լինեք, քաջություն ունեցեք, սակայն, ընդունել ձեր մեղքը, ինչպես մենք ընդունեցինք մեր մեղքերը և ինչպես նույնն արեց ամեն մի երկիր», ոչ մի կոնկրետ արդյունք չի լինի: Ի դեպ, պատմությունը լի է ողբերգական սխալներով: Իտալիան, օրինակ, ընդունել է իր մեղքը ֆաշիզմի համար, Գերմանիան՝ նացիզմի, Ֆրանսիան՝ ընդունել է իր մեղքը նացիզմի հետ համագործակցողների համար, նույնը արել են Բելգիան և Հոլանդիան: Ռուսաստանը վաղ թե ուշ կընդունի Ստալինի գործած մեղքերը…

ՆԱԽԱԳԱՀ - Արդեն ընդունել է:

ԳՈՒԱԼԲԵՐՏՈ ՆԻԿՈԼԻՆԻ - Նույնիսկ եթե մասամբ դա արել է: Նախկին Հարավսլավիան կընդունի մեղքը, որ դեռ Տիտոյի և նրա մարդասպանների խղճի վրա է: Այսպիսով, կարծում եմ, ամեն երկիր պետք է ճանաչի իր պատասխանատվությունը անցյալի հանդեպ:

Դժբախտաբար, ողբերգությունները հնարավոր չէ ո՛չ ջնջել սպունգի մեկ հարվածով, ո՛չ էլ կարող են ընդունվել արդարացումները, որոնք ներկայացվում են Իտալիա-Թուրքիա բարեկամության ընկերակցության կողմից: Չգիտեմ, թե որքանով եք Թուրքիայի բարեկամները, որովհետև փախանակ բացատրելու թուրքերին, որ ճշմարտությունն ամեն դեպքում շահավետ է, գալիս եք այստեղ՝ բերելով արդարացումներ, որ չեն դիմանում ո՛չ պատմության, և ո՛չ եղելության դատին:

Այդ պատճառով, կուզեի դիմել թուրք բարեկամներին (որոնց իսկապես բարեկամն եմ ինձ համարում և, Եվրոպայի առջև մի կողմից տնտեսական, մյուս կողմից քաղաքական բնույթի վտանգների ներկայության պայմաններում մեծ կառույցներով զբաղված լինելով հանդերձ, ինձ զգում եմ նաև համաեվրոպացի)՝ չվախենալ սեփական մեղքերն ընդունելուց, քանզի դա, հաստատ, անդրադարձ կունենա հօգուտ ձեզ, Եվրոպայի, վերջապես, հօգուտ հայերի, որոնք կստանան այն արդարացի ճանաչումը, որը պատմությունը պարտք է նրանց («Պաղանիա Հյուսիսային դաշինք» և «Հառաջ, Իտալիա» խմբերի պատգամավորների ծափահարություններ, շնորհավորանքներ):

ՆԱԽԱԳԱՀ - Այլ ելույթների հայտեր չկան, ուստի նախագծի ընդհանուր դրույթների քննարկումը հայտարարում եմ փակված:

Քննարկումը կշարունակվի մեկ այլ նիստում, հուսալով, մեծարգո Նիկոլինի, որ այս նյութի հետաքրքրությունը համարժեք կլինի դահլիճում այն ներկաների քանակին, որոնք պետք է մեծ նշանակություն տան այս հարցին:

XX. ԺՆԵՎԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ 1915Թ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 10 դեկտեմբերի 2001թ.

1998թ. հունիսի 25-ին Մեծ խորհուրդը միաձայն բանաձև ընդունեց՝ կոչ անելով Պետական խորհրդին հանդիսավոր մի հռչակագրով ճանաչել 1915թ. Օսմանյան կառավարության կողմից հայ ժողովրդի հանդեպ իրագործված ցեղասպանությունը:

Ցեղասպանության իրողությունը ճանաչելը բոլորի պարտականությունն է, քանի որ նման աննախադեպ ոճրագործությունն իր ծայրն է բարձրացնում համայն մարդկության առաջ: Ժխտել դրա գոյությունը, նշանակում է վիրավորանք հասցնել զոհերի հիշատակին, գռեհկացնել այդ սարսափը, կեղծել պատմությունը: Պատմաբանների աշխատությունները համընկնում են այն աստիճան, որ թույլ են տալիս հանգել այն եզրակացությանը, որ հայերին զանգվածաբար ոչնչացրել են. զոհերի թվաքանակի մասին տարբեր գնահատականները, կապված լինելով այդ ողբերգության հանգամանքներին, կասկածի տակ անգամ չեն դնում կոտորածի իրական լինելը, և որ նրանց ոչնչացրել են հայ լինելու պատճառով: Ժամանակի բոլոր ականատեսները՝ դիվանագետները, զինվորականները, քաղաքացիները վկայում են Կոստանդնուպոլսի կառավարության համարձակ մտադրության մասին, և հետագա բոլոր փաստաթղթերն այնպես հաստատեցին այդ դիտավորությունը, որ այդ փաստերը քննարկման առարկա չեն կարող դառնալ:

Ժնևը ցանկանում է, որ երկարատև խաղաղություն հաստատվի հայ և թուրք ժողովուրդների միջև, խաղաղություն, որը չի կարող հաստատվել հիշաղության մոռացության վրա, որը մեծապես դժվարացնում է հայերի և թուրքերի միջև հարաբերությունների ստեղծումը: 1915թ. ցեղասպանության ճանաչման մասին ներկա հռչակագիրը բոլորովին ուղղված չէ Թուրքիայի դեմ, որն ինչպես Գերմանիան վարվեց հրեաների նկատմամբ, կարող է ճանաչել անցյալ ոճրագործությունները, որպեսզի պատմական ճշմարտության վրա հիմնվեն հայ և թուրք ժողովուրդների փոխհարաբերությունները:

Ժնևը, հարգելով ցեղասպանության մասին միջազգային համաձայնագրերը, ճանաչում է 1915թ. Հայոց ցեղասպանությունը և դասվում այս ոճրագործությունը ճանաչող բազմաթիվ պետությունների, Միացյալ Ազգերի Կազմակերպության, Եվրոխորհրդարանի մեծ շարքին:

XXI. ՇՎԵՅՑԱՐԻԱ (ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱ) ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԲԱՆԱՁԵՎԸ

1915Թ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ

Առաջարկված	Վոդրոզ Ժան-Կլոդի կողմից
Վերանայված	դե Բյուման Դոմինիկի կողմից
Ներմուծման ամսաթիվը	18-03-2002
Առաջարկված	Ազգային խորհրդին
Արդի վիճակը	լուծարված

Առաջարկված տեքստը

Ազգային խորհուրդը ճանաչում է 1915թ. Հայոց ցեղասպանությունը: Նա Դաշնային խորհրդից պահանջում է արձանագրություն կազմել և իր դիրքորոշումը փոխանցել ընդունված դիվանագիտական ուղիներով:

Շարադրանք

1.Օսմանյան կայսրության հայերի բնաջնջումն առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ոչնչացրեց ավելի քան մեկ միլիոն մարդ, որոնք տեղահանվեցին և կոտորվեցին օսմանյան իշխանության հրամանով: Իրենց նշանակությամբ և մասշտաբով անհերքելի այս փաստերը սկզբնաղբյուր հանդիսացան Ռաֆայել Լեմկենի համար՝ իրավաբան, որը սահմանեց ցեղասպանություն հասկացությունը: ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիայում նշված նորմերը ճիշտ կելպով համապատասխանում են հայերի ոչնչացման գործընթացին:

2. Հայոց ցեղասպանության ճանաչմամբ՝ Շվեյցարիան արդարություն կվերադարձնի զոհերին, փրկվածներին և նրանց հետնորդներին ու կնպաստի մարդկության դեմ այլ հանցագործությունների կանխմանը: Սա մի որոշիչ քայլ է, որով Շվեյցարիան պատրաստակամություն կցուցաբերի մարդու իրավունքների պաշտպանությանը, ազգային փոքրամասնությունների հարգման և միջազգային քրեական արդարադատության նկատմամբ: Այն, բացի այդ հիշատակում է մարդկության դեմ հանցագործությունների վաղեմություն չունենալու բնույթը և նպատակ ունի նպաստել մերժողականության դեմ պայքարին:

3. Հայոց ցեղասպանությունը ճանաչվեց 1985թ. ՄԱԿ-ի կողմից իր փորձագիտական հանձնաժողովներից մեկի՝ դիսկրիմինացիաների կանխման և ազգային փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողովի զեկույցի ընդունմամբ, ապա Եվրոխորհրդարանի կողմից՝ 1987թ. բանաձևում: Այս վերջին տարիների ընթացքում Ֆրանսիայի, Շվեդիայի և Իտալիայի խորհրդարանները նույնկերպ վարվեցին, ինչպես բազմաթիվ խորհրդարաններ Եվրոպայում և այլուր: Ժնևի կանտոնն այդ արեց երկու անգամ. Մեծ խորհուրդը 1998թ. և Պետական խորհուրդը՝ անցյալ դեկտեմբերին: Ի վերջո, կարելի է նշել Եկեղեցիների տիեզերական խորհրդի դիրքորոշումը 1983թ. ընդունված հռչակագրով:

4. 2001թ. մարտի 13-ին Ազգային խորհուրդը, երկու պալատների արտաքին քաղաքական հանձնաժողովների միաձայն որոշումից հետո,

Դաշնային խորհրդին փոխանցեց Ցեղասպանության ընդդիմախոսների ասոցիացիայի հայցը (Ֆրանկֆորտ-սյուր-լը-Մեն), որպեսզի նա հաշվի առնի և նրան հրավիրի քննարկել Հայոց ցեղասպանության հարցը Շվեյցարիայի և Թուրքիայի միջև քաղաքական երկխոսության շրջանակում: Ուրեմն քնական է, որ Ազգային խորհուրդը վավերացնի այդ դիրքորոշումը հանդիսավոր հռչակագրով:

5. Սույն պոստուլատի ընդունմամբ Ազգային խորհուրդը ցանկանում է նպաստել թուրքերի և հայերի միջև տևական խաղաղության հաստատմանը. խաղաղություն, որը կարող է հաստատվել միայն պատմական իրականությանը համապատասխան և համընդհանուր ընկալմամբ:

Դաշնային խորհրդի դիրքորոշումը. 15-05-2002

Դաշնային խորհուրդն այդեն բազմիցս իր պատասխաններում խորհրդարանական միջամտություններ է արել, որոնցից վերջերս 2000թ. հունիսի 6-ին Ջիսյադիս պոստուլատն է 00.3245 «Հայոց ցեղասպանության ճանաչումը Շվեյցարիայի կողմից», որն ափսոսանք է հայտնում և դատապարտում մասսայական ողբերգական տեղահանությունները և կոտորածները, որոնք նշանավորեցին Օսմանյան կայսրության ավարտը և մեծ զոհեր պատճառեցին հայ ազգաբնակչությանը: Թուրքիան չի հերքում այդ կոտորածները, բայց բազմաթիվ պատմաբաններից տարբերվող գնահատական է տալիս այն ժամանակաշրջանի իշխանությունների մտածված քաղաքականության վերաբերյալ: Դաշնային խորհուրդը համարում է, որ այդ հարցը բխում է պատմական հետազոտությունից:

Շվեյցարիայի արտաքին քաղաքականությունը նպատակ ունի հաստատել տևական հավասարակշռություն Կովկասում, հատկապես Թուրքիայի և Հայաստանի միջև:

Այս համատեքստում կարևոր է, որ երկխոսություն հաստատվի հենց տարածաշրջանում: Հայ-թուրքական հարցը բազմիցս բարձրացվել է Թուրքիայի հետ երկկողմանի պաշտոնական շփումների ընթացքում:

Այն, օրինակ, դարձել է հայ-թուրքական հաշտեցման հանձնախմբի գործունեության և արխիվներում որոնողների մուտքի հարց: Համոզմունքը տանում է այն բանին, որ վերաբերելով պատմության տխուր դրվագներ, հավաքական հիշողության ջանքը պետք է իրականացվի տեղում և ամենից առաջ շահագրգիռ երկրների կողմից: Շվեյցարիայի արտաքին քաղաքականությունը ցանկանում է նպաստել թուրք-հայկական համաձայնությանը քաղաքական երկխոսությամբ, որը հաստատվել է Շվեյցարիայի և Թուրքիայի միջև 2000թ. և որը վերաբերում է հատկապես մարդու իրավունքներին:

Պոստուլատի ընդունումը հնարավոր է, որ վտանգ հասցնի հաստատված պաշտոնական և կանոնավոր երկխոսությանը:

Պոստուլատի ստորագրողները կցանկանային, որ իրենց քայլը նպաստեր Թուրքիայի և Հայաստանի միջև տևական խաղաղությանը՝ արդարության պատգամ հղելով հայ զոհերի հետնորդներին: Բայց այս պոստուլատի ընդունումը կարող է նաև հակառակ ազդեցություն ունենալ և ծանրացնել դեռևս այն զգացական բեռը, որն ազդում է Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների վրա:

Դաշնային խորհրդի հռչակագիր 15-05-2002
Դաշնային խորհուրդն առաջարկում է հետաձգել պոստուլատը

Ժամանակագրություն
08-12-2003 միջամտությունն արված է պարոն դե Բյումանի կողմից
16-12-2003 Ազգային խորհուրդն ընդունեց

Պաշտոնական թերթիկ - արձանագրությունները
Իրավասու մարմին՝ Արտաքին գործերի դեպարտամենտ (DFAE)

http://www.parlament.ch/afs/data/f/gesch/2002/f_gesch_20023069.htm 19/12/03

XXII. ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴԱՍԱՊԱՐՏՄԱՆ ԵՎ ՃԱՆԱՉՄԱՆ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1914

- *Նոյեմբերի 21-ին* Ռուսական կայսր Նիկոլայ երկրորդը Ֆրանսիայի դեսպան Պալեոլոգի հետ զրույցի ժամանակ հայտնել էր իր հետևյալ կարծիքը. «Անատոլիայում ես, իհարկե կզբաղվեմ հայերի վիճակով: Ես չեմ կարող նորից նրանց թողնել թուրքական լծի տակ: Պե՞տք է արդյոք ես բռնագրավեմ Հայաստանը: Ես այդ կարող եմ կատարել միայն նրանց խնդրանքով: Այլապես, ես պատրաստվում եմ նրանց առաջարկել ինքնավար կառավարում»:

1915

- *Հունվարի 13-ին* Ռուսաստանի Պետական Դումայի անդամ Ա. Ֆ. Կերենսկին «Ազատ տնտեսական ընկերությունում» հանդես եկավ զեկուցմամբ, որտեղ նկարագրեց հայ փախստականների ցնցող վիճակը: Նա հայտարարեց՝ «Հենց որ սկսվեց թուրքական հարձակումը, որն անցավ ռուսական տարածք, դեպի հյուսիս ճգվեցին փախստականների գետերը... Դա փախստականություն չէ, ոչ, դա մի ողջ ժողովրդի մեծ վախճանն է...»:
- *Մայիսի 24-ին* Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունները միացյալ հանդես եկան հրապարակային նախազգուշացմամբ՝ ուղղված Թուրքիայի կառավարությանը: Այդ հայտարարությունը այսօր կարելի է համարել Հայոց ցեղասպանությունը դատապարտող առաջին միջազգային փաստաթուղթը, որը հրատարակվելով աշխարհի գրեթե բոլոր երկրներում, ազդարարեց, որ «Հայաստանում տեղի են ունեցել հայերի կոտորածներ՝ քրդերի և թուրքերի կողմից, օսմանյան իշխանությունների բացահայտ թողտվությամբ, իսկ հաճախ էլ ուղղակի համագործակցությամբ»: Առաջին անգամ միջազգային ասպարեզում երեք խոշոր տերությունները հայերի դեմ կատարված ոճրագործությունը որակեցին որպես «մարդկության և քաղաքակրթության դեմ» Թուրքիայի կողմից կատարած նոր հանցագործություններ, որոնց համար «...անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա՝ տեղական այն իշխանությունների վրա, ովքեր մասնակից են դարձել նման կոտորածներին»:
- *Ապրիլի 27-ին* ԱՄՆ-ի պետական քարտուղար Բրայենը հեռագիր հղեց Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուին, նրան հանձնարարելով թուրքական կառավարությանը ներկայացնել հարցապնդում բռնություններից հայերին պաշտպանելու համար:
- *Ապրիլի 30-ին* Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուն ԱՄՆ-ի պետքարտուղարին հղած իր հեռագրում հայտնեց, որ Օսմանյան կայսրության որոշ շրջաններում հայերի նկատմամբ ձեռնարկվել են հետապնդումների, թալանի և կոտորածների գործողություններ: Հեռագրում ասվում էր. «... Հալեպի հյուպատոսից ստացված զեկուցագրից պարզվում է, որ թուր-

քական իշխանությունները Զեյթունի և Մարաշի հայ բնակչության նկատմամբ վարվում են անհավատալի դաժանությամբ և պատճառաբանելով մի քանի հայ դասալիքների գործողությունները, տարագրում և ցիրուցան են անում բազմաքանակ անմեղ բնակչությանը»:

- *Հուլիսի 10-ին* Կոստանդնուպոլսից ԱՄՆ-ի պետական քարտուղարին ուղարկված հեռագրով Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուն զեկուցում է, որ «Հայերի կոտորածներն ընդունում են աննախադեպ չափեր:

Ամենատարբեր շրջաններից զեկուցագրերը վկայում են, որ փորձ է արվում արմատախիլ անել խաղաղ հայ բնակչությանը և նրանց ավերածության ու չքավորության մատնել կամայական ձերբակալությունների, սարսափելի տանջամիջոցների, զանգվածային բռնագաղթերի և կայսրության մի ծայրից մյուսը տեղահանումների միջոցով, որոնք ուղեկցվում են բռնաբարությունների, կողոպուտի և կոտորածի վերածվող սպանությունների հաճախակի դեպքերով... Միակ դեսպանությունը, որն ի վիճակի է նպաստելու այս վայրագությունների մեղմացմանը, Գերմանիայինն է, բայց ես կարծում եմ, այն պարզապես կբավարարվի խորհուրդ տալով և ձևական բողոքով, որ հավանաբար նախատեսված է արձանագրելու և հետագայում պատասխանատվությունից խուսափելու համար... Թուրքական իշխանությունները ինձ հստակորեն տեղեկացրին, որ ես որևէ իրավունք չունեմ խառնվելու իրենց ներքին գործերին»:

- *Հուլիսի 28-ին* Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատում պատասխանելով վիկոնտ Զեյմս Բրայսի Հայաստանում թուրքերի կողմից քրիստոնյաների սպանության վերաբերյալ հարցին, Պատերազմական խորհրդի նախագահ կոմս Գրյուն հայտարարեց, որ Արտաքին գործերի նախարարությունում ստացված տեղեկությունները ցույց են տալիս, որ այդ ոճրագործությունները գնալով և թվաքանակով, և վայրագության աստիճանով աճում են: Այդ գործողությունները, հայտարարեց լորդ Գրյուն «և զանգվածային կոտորածը, և բռնագաղթը իրագործվել են հարկադրված վերաբնակեցման պատրվակի ներքո»:

- *Օգոստոսի 11-ին* Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուն ԱՄՆ-ի պետական քարտուղարին հղած հեռագրում հայտնում է. «Թուրքերի հակահայկական գործունեությունն անշեղորեն շարունակվում է: Դժվարանում եմ ինձ հետ պահել մի ազգ ոչնչացնելու այս փորձը կասեցնելու համար որևէ գործողության դիմելուց, բայց ես գիտակցում եմ, որ ես այստեղ եմ իբրև դեսպան և պետք է խստորեն հետևեմ ուրիշ երկրի ներքին գործերի չմիջամտելու սկզբունքին: Եթե Դուք այս իրադրությունը համարեք արտակարգ, թող դեպարտամենտը հանձնարարի ինձ մեր կառավարության անունից միանշանակ բողոք հայտարարել»:

- *Օգոստոսի 12-ին* Օսմանյան կայսրությունում Գերմանիայի դեսպանի ժամանակավոր պաշտոնակատարը Գերմանիայի ռեյխսկանցլեր Բետման-Հոլվեգին ուղղված իր զեկուցագրում հայտնում է. «Իրենց բնակության վայրերից տեղահանված հայ ժողովրդի սիստեմատիկ կոտորածները վերջին մի քանի շաբաթում ընդունել են այնպիսի չափեր, որը թվում է մենք կրկին անգամ հանդես պետք է գանք այդ գործողությունների դեմ վճռական առաջարկությամբ... Ի լրումն վերոհիշյալի, պետք է իմանալ, որ ներքին շրջանների թուրք բնակչության միջավայրում շատերը գտնում են, որ

Գերմանիայի կառավարությունը համաձայն է հայերի ոչնչացմանը և հանդիսանում է նույնիսկ այդ միջոցառումների հրահրողը»:

- *Օգոստոսի 13-ին* Օսմանյան կայսրությունում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալլավիչինին կենտրոն հղած իր զեկուցագիրը ավարտեց հետևյալ խոսքերով. «Կգա ժամանակը, երբ Թուրքիան ստիպված կլինի պատասխան տալ իր ոչնչացման քաղաքականության համար»:

- *Սեպտեմբերի 10-ին* Հռոմի Բենեդիկտոս XV Պապը հատուկ նամակով դիմեց Թուրքիայի սուլթան Մոհամեդ 5-րդին, որտեղ ասվում էր. «... մեծագույն տխրությամբ լսում ենք Օսմանյան ընդարձակ տարածքների վրա աննկարագրելի խոշտանգումների ենթարկված մի ողջ ժողովրդի հառաչանքների արձագանքը: Հայ ժողովուրդն արդեն իսկ տեսել է բանտարկություն և տեղահանություն, իր բազմաթիվ զավակների ջարդը և նրանցից բացի ավելի շատ ուրիշների, որոնց մեջ կան բազմաթիվ եկեղեցականներ և նույնիսկ եպիսկոպոսներ: Այժմ լուր ստացանք, որ գյուղերի և քաղաքների ողջ բնակչությանը պատրաստվում է քողնել իրենց տները, աներևակայելի տանջանքներով և չարչարանքներով ուղարկելու համար դեպի հեռավոր արգելափակման վայրերը, որտեղ նրանք ենթարկվելու են ոչ միայն բարոյական անձկության, այլ նաև ամենասոսկալի նյութական թշվառության և անօթության տանջանքներին»:

Բենեդիկտոս XV Պապը Թուրքիայի սուլթանին խնդրում է իր անձնական միջամտությամբ դադարեցնել վայրագությունները:

- *Սեպտեմբերի 30-ին* Օսմանյան կայսրությունում Ավստրո-Հունգարիայի դեսպանի ժամանակավոր պաշտոնակատար Տրաուտմանսդորֆ-Վեյնսբերգն իր զեկուցագրում հայտնում է. «... Այլևս չի կարելի ժխտել, որ թուրքերը ձեռնարկել են հայ ժողովրդի ոչնչացումը և նման է, որ նրանք նշանակալի չափով առաջ անցան այդ բանում: Վերջերս Թալեաթը որոշակի հրճվանքով ինձ ասաց, որ Էրզրումում, օրինակ չպետք է ոչ մի հայ մնա... Թուրքիան այսօր բավարարված է զգում այն բանից, որ նա անպատիժ իրականացրել է հայ ժողովրդի ոչնչացումը...»

- *Սեպտեմբերի 30-ին և հոկտեմբերի 7-ին* Բեռնի (Շվեյցարիա) «Կենտրոնական սրահում» կազմակերպվեցին հրապարակային դասախոսություններ նվիրված հայ ժողովրդի ողբերգությանը:

- *Հոկտեմբերին* ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով հրատարակվեց շվեյցարացի 110 նշանավոր քաղաքացիների՝ Շվեյցարիայի գերմանական և ռոմանական կանտոնների ճանաչված գիտնականների, լրագրողների ու հասարակական գործիչների հանրահայտ «Կոչը» ի պաշտպանություն հայ ժողովրդի:

- *Հոկտեմբերի 6-ին* Բեռնում (Շվեյցարիա) տեղի ունեցավ Եվրոպայում գործող հայասիրական կազմակերպությունների հիմնադիր առաջին համագումարը:

- *Հոկտեմբերի 6-ին* Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատում հանդես եկավ լորդ Ջեյմս Բրայսը: Նա հայտարարեց. «Անցել է այն ժամանակը, երբ որևէ վնաս կարող է հասցվել հրապարակայնությամբ և որքան ամբողջական հրապարակայնություն տրվի այն իրադարձություններին, որոնք տեղի են ունեցել, այնքան ավելի լավ կլինի, որովհետև այն ձեռք է բերում այն կոտորածների, եթե դրանք չեն ավարտվել, խափանման գոյություն ունեցող միակ հավանականությունը: Վշտացած եմ ասելու, որ նման կարգի տեղե-

կությունը, քանի որ հասել է ինձ մի շարք երկրամասերից, գալիս է ցույց տալու, որ բազմաթիվ եղանակներով զոհվածների քանակությունը, որոնց վրա ես կհենվեմ, շատ մեծ է: Այդ թիվը ընդունված է համարել 800000:

...Գոյություն չունի որևէ պատվիրան իսլամում, որն արդարացնում է այն արյունահեղությունը, որը ոճրագործվեց:

... Ամբողջ ազգը դեռևս բնաջինջ եղած չէ, որքանով վերաբերում է լեռների այս փախստականներին և նրանց, ովքեր փախել են Անդրկովկաս, և ես հուսով եմ, որ մենք բոլորս անկեղծորեն համաձայն ենք, որ ցանկացած ջանք պետք է թափել, որը կարող է թափվել՝ ուղարկելու համար օգնություն այս դժբախտ վերապրածներին, որոնցից հարյուրավորները ամեն օր տանջամահ են լինում կարիքից և հիվանդությունից: Դա այն ամենն է, ինչ մենք այժմ կարող ենք անել Անգլիայում, թույլ տվեք անել այդ և անել արագորեն»:

- *Հոկտեմբերի 12-ին* Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատում Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Էդվարդ Գրեյը հայտարարեց՝ «Թուրքիայում հայերի կոտորածների և բռնագաղթի խնդրի վերաբերյալ բրիտանական կառավարության տնօրինած ողջ տեղեկատվությունը դարձել է հրապարակային: Այդ ամենի վերաբերյալ կարող է լինել մեկ զգացում՝ սարսափի և վրդովմունքի»:

- *Հոկտեմբերի 29-ին* Բեռլինում կայացած Գերմանիայի կաթոլիկների համաժողովի կենտրոնական կոմիտեի միսիոներական հանձնաժողովի նիստը հատուկ դիմում հղեց Գերմանիայի կանցլերին ի պաշտպանություն հայ քրիստոնյաների: Դիմումում ասվում էր, որը հանձնաժողովը «իր անուրանալի պարտքն է համարում իր ձայնը բարձրացնելու, որ անհապաղ վերջ տրվի հայերի դեմ թուրքական կառավարության կողմից կիրառվող արտակարգ դաժան միջոցառումների գործադրմանը»:

- *Նոյեմբերի 16-ին* հանդես գալով որպես կառավարության կողմից Համայնքների պալատի անդամների հարցապնդումների պատասխանող, Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարի տեղակալ լորդ Ռ. Սեսիլը հայտարարեց, որ Թուրքիայի կողմից «ոճիրը կշռադատված է ոչ թե հայ ազգը պատժելու, այլ ոչնչացնելու համար: Դա միակ նպատակն էր, դրա միակ պատճառը»:

- *Նոյեմբերի 18-ին* Փարիզի «Ամերիկյան ակումբում» կազմակերպվեց հավաք նվիրված հայերի ողբերգության դատապարտմանը:

- *Նոյեմբերի 18-ին* Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուն ԱՄՆ-ի պետական քարտուղար Ռ. Լանսինգին հասցեագրված իր նամակում ցավով նշում է. «... որ հզոր քրիստոնեական տերությունները հանցագործներին թույլ տվեցին անպատիժ մնալ նախկինում կատարած հայերի կոտորածների համար. և այդ մարդիկ գտնում են, քանի որ այդ հանցագործությունների վրա նախկինում նայել են մատների արանքից, հավանաբար, նրանց նորից կներեն»:

1916

- *Հունվարի 11-ին* Գերմանիայի Ռայխստագում ելույթ ունեցավ պատգամավոր, միջազգային սոցիալիստական շարժման ականավոր գործիչ Կարլ Լիբկնեխտը, որը դիմելով ռայխսկանցլերին հարցրեց, արդյո՞ք նա

տեղյակ է այն մասին, որ դաշնակից թուրքական կայսրությունում հարյուրավոր և հազարավոր հայ բնակչությունը տեղահանվեց իր բնակության վայրերից և ոչնչացվեց: Նա պահանջեց գերմանական կառավարությունից արգելել նման սարսափների կրկնությունը կենդանի մնացած հայ բնակչության նկատմամբ:

- *Հունվարի 18-ին* Ֆրանսիայի նախարարների խորհրդի նախագահ, արտաքին գործերի նախարար Արիստիդ Բրիանը Փարիզում գործող Հայկական կոմիտեի նախագահին ուղղված իր նամակում տեղյակ էր պահում, որ «Հանրապետության կառավարությունը չի մոռանա այն դաժան փորձությունները, որոնց կրկին անգամ ենթարկվեց հայ ազգաբնակչությունը: Նա (կառավարությունը – Լ. Բ.) կհիշի այդ մասին, երբ կգա օրինական փոխհատուցման ժամանակը»:

- *Փետրվարի 9-ին* ԱՄՆ-ի Սենատը ընդունեց թիվ 12 բանաձևը, որով միջնորդում էր ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին՝ հատուկ օր սահմանել հայերի օգնության հիմնադրամներին հանգանակության միջոցով ամերիկացիների կարեկցանքը արտահայտելու համար: Բանաձևում ասվում է՝

«... Նկատի ունենալով, որ պատերազմի մեջ ներգրաված երկրներում այժմ կան մի քանի հարյուր հազարավոր սննդի, հագուստի և օթևանի կարիք ունեցող հայեր,

Նկատի ունենալով, որ նրանցից շատերը ելնելով պետության պատերազմի մեջ գտնվելու հանգամանքից, ստիպված էին թողնել իրենց տները և ունեցվածքը՝ զրկված լինելով տարրական կարիքները հոգալու հնարավորությունից, որը պատճառ էր դառնում քաղցի, հիվանդությունների և անասելի տառապանքների,

Նկատի ունենալով, որ Ամերիկյան Միացյալ Նահանգների ժողովուրդը ցավով ընկալել է այս բազմաթիվ մարդկային էակների սարսափելի իրավիճակը և գրկաբաց պատասխանել է նրանց օգնության խնդրանքին, երբ էլ որ նման խնդրանք հասել է նրանց,

Ուստի և Սենատը որոշում է (Ներկայացուցիչների պալատի համաձայնությամբ)... Միացյալ Նահանգների նախագահին հարգալից խնդրել՝ օր սահմանել, որի ընթացքում այս երկրի քաղաքացիները կարող են իրենց կարեկցանքը արտահայտել հանգանակություն կատարելով պատերազմող երկրներում այժմ բացված հայ օգնության հիմնադրամներին»:

- *Փետրվարի 9-ին* Ռուսաստանի Պետական Դումայում հանդես եկավ Արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովը, որը հայտարարեց. «Փետրվարի 3-ին ընկավ Էրզրումը... Ինձ դեռևս նախկինում վիճակվել էր ձեր առջև հիշատակել այդ դժբախտ ժողովրդի չլսված տանջանքների մասին: Դաշնակցային Գերմանիայի բարեհաճ աչքի առջև թուրքերը ըստ երևույթին մտադիր են իրագործել հայ բնակչության լիակատար բնաջնջման մասին իրենց վաղեմի երազանքը...»

- *Մարտի 11-ին* Հանդես գալով Ռուսաստանի Պետական Դումայում, պատգամավոր Պ. Ն. Միլյուկովը դատապարտելով Օսմանյան կայսրության քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ, հայտարարեց, որ այդ քաղաքականության նպատակն է հայ ժողովրդի ամբողջական ֆիզիկական ոչնչացումը, որ «միջազգային դիվանագիտության զգուշացման և կանխարգելման բազմաթիվ փորձերից հետո, թուրքերին թվում էր, որ իրենց համար վերջապես եկավ բարենպաստ պահը»:

- *Ապրիլի 9-ին* Փարիզի Սորբոնի համալսարանի դահլիճում կայացավ «Մեծարանք Հայաստանին» բազմահազարանոց հավաքը: Ելույթ ունենալով հավաքում, Ֆրանսիայի լուսավորության նախարար Պենլվեն հայտարարեց, որ «... մեկ տարուց ի վեր Հայաստանն արյունաներկ դարձնող կոտորածները գերազանցում են նախորդ ոճիրները՝ թե իրենց չափերով, թե իրենց վայրենությամբ: Գերմանիան կարող է հպարտանալ իր գործով, որն իր քստմնելիությամբ մոռացնել տվեց Լենկ Թեմուրի փառքը»: Նույն հանդեսում, իր բացման խոսքում Ֆրանսիայի Ազգային ժողովի նախագահ Պոլ Դեշանելը խստորեն դատապարտեց թուրք դահիճների կողմից իրականացվող հայ ժողովրդի սպանդը:
- *Մայիսին (օրը հայտնի չէ)* Գերմանական ավետարանչական առաքելության կոմիտեն արտակարգ խնդրագիր ներկայացրեց Գերմանիայի ռեյխսկանցլերին, որտեղ ասվում էր. «Մենք ցնցված կանգնած ենք ամենասարսափելի արհավիրքներից մեկի առաջ, որը երբևէ չի տեսել պատմությունը և որպես քրիստոնյաներ ճգտում ենք օգնել մեռնող քրիստոնյա ժողովրդին:

Մարտական գործողությունների ընթացքում հայ բնակչությունը, այսինքն ավելի քան մեկ միլիոն մարդ, բռնի տեղահանվել է Արևելյան և Արևմտյան Անատոլիայի շրջաններից: Ինչպես շարադրված է բազմաթիվ անվիճարկելի և բովանդակությամբ մեկը մյուսին համապատասխան ականատեսների հաշվետվություններում, այդ տեղահանության ժամանակ զոհվել են հարյուր հազարավոր մարդիկ և մինչև օրս կարիքը կյանքից հեռացնում է մարդկանց անթիվ բազմություն, հատկապես կանանց և երեխաների: Ամենահին քրիստոնյա եկեղեցուն և ժողովրդին, որի նկատմամբ վաղուց կարեկցանքով են վերաբերվում գերմանացի քրիստոնյաները, մահ է սպառնում»: Կոմիտեն խնդրում էր միանվագ ողիրատվության ձևով օգնություն ցույց տալ հայերին:
- *Հուլիսի 29-ին* Փարիզում իր գործունեությունը սկսեց «Ֆրանսիա-Հայաստան» ընկերակցությունը, որի վարչության անդամներն էին Ֆրանսիայի կառավարության երկու նախարարներ, սենատորներ և դեպուտատներ: Ընկերակցության պատվավոր նախագահներ ընտրվեցին Ֆրանսիայի նախկին վարչապետ, Սենատի Արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Ժորժ Կլեմանսոն, Ֆրանսիայի պետական նախարար Դենի Քոշենը, Ֆրանսիայի ակադեմիայի անդամ, գրող Անատոլ Ֆրանսը:
- *Օգոստոսի 31-ին* Վաշինգտոնում ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնը հանդես եկավ մի առանձին հայտարարությամբ այն մասին, որ ընդունելով Սենատի առաջարկությունը՝ 1916թ. հոկտեմբերի 21-ի շաբաթ և հոկտեմբերի 22-ի կիրակի օրերը նշանակում է հատուկ օրեր, որի ժամանակ Միացյալ Նահանգների քաղաքացիները կարող են իրենց ցանկացած հանգանակությունը կատարել՝ օգնելու սիրիացի և հայ հալածված ժողովուրդներին:
- *Նոյեմբերի 16-ին* «Բեռլինի միսիոներական Միության» նախագահ դոկտոր Կարլ Ակսենֆելդը «Դիմում» հղեց Գերմանիայի կանցլեր Բետմանն-Հոլվեգին, որտեղ ասվում էր, որ «չեզոք երկրներում Գերմանիայի հասցեին լայնորեն տարածվում են մեղադրանքներն այն մասին, որ նա ոչ միայն անվրդով դիտում է, այլև աջակցում է քրիստոնյա մի ողջ ժողովրդի եղեռնի իրագործմանը»:

- *Փետրվարի 16-ին* Օսմանյան կայսրությունում Գերմանիայի դեսպանի ժամանակավոր պաշտոնակատար Ֆոն Կյուլմանը Գերմանիայի ռեյխսկանցլեր Բետման-Հոլվեգին ուղղված իր զեկուցագրում հայտնում է. «Ես գտնում եմ, որ վերջնական արդյունքում (հայերի) ոչնչացման քաղաքականությունը վնաս կհասցնի թուրքական պետությանը: Գազանությունները, որոնցով ուղեկցվում էր հայերի դեմ տարվող արշավը, ծանր բեռի նման կնստի թուրքերի հեղինակության վրա շատ երկար ժամանակ և երկարատև ժամանակ այդ գազանությունները կծառայեն որպես թունավոր զենք նրանց ձեռքերում, ով հրաժարվում է Թուրքիային իրավ համարել կրթված պետություն և կպահանջի թուրքերին բացառել Եվրոպայից...»
- *Մարտի 29-ին* Ստոկհոլմում տեղի ունեցավ բազմամարդ միտինգ, որը նվիրված էր Հայոց ցեղասպանության դատապարտմանը: Միտինգի մասնակիցները դատապարտեցին Շվեդիայի կառավարության անտարբեր վերաբերմունքը հայերի նկատմամբ:
- *Ապրիլի 18-ին* Արաբական երկրների և Մեքքայի առաջնորդ Ալ-Հուսեյն Իբն Ալին հրովարտակ արձակեց, որով կոչ էր անում բոլոր հավատացյալներին պաշտպանել ու հոգ տանել իրենց տարածքներում ապաստան գտած հայ համայնքների յուրաքանչյուր անդամի, օգնել նրանց բոլոր գործերում, այնպես, ինչպես արաբները կանեին իրենց ունեցվածքի և երեխաների համար, հայերին տալ այն ամենը, ինչի կարիքը նրանք կունենան, անկախ այն բանից, թե նրանք կմնան նույն տեղում, թե կգնան տեղից-տեղ, քանի որ նրանք մուսուլմանների կողմից պաշտպանվող մարդիկ են:
- *Նոյեմբերի 6-ին* հանդես գալով Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատում, Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Արթուր Բալֆուրը հայտարարեց. «Պե՞տք է արդյոք մեզ համար անտարբերության փաստ դառնա այն, որ Հայաստանը պետք է ետ վերադարձվի, ինչպես հարգարժան ջենտլմենները ցանկանում են վերադարձնել նրան իրենց բանաձևով՝ Թուրքիայի իշխանության ներքո: Ես չեմ ցանկանում քանդել իսկական թուրքական համայնքը՝ կազմված թուրքերից, թուրքերին սազական ձևով, թուրքերին կառավարող: Հակառակը, մեր հաստատուն նպատակը ոչ թուրք ազգերին թուրքական իշխանությունից ազատագրելն է: ...Ի՞նչն է իմպերիալիստական, ցանկության մեջ՝ տեսնելու Լեհաստանն անկախ, Հայաստանն ազատագրված թուրքերից, Էլզաս Լոթարինգիան՝ վերամիացած Ֆրանսիային, տեսնելու, որ Իտալիան ունենալու է իր սեփական ազգը, լեզուն և քաղաքակրթությունն ընդգրկող տարածությունը»:
- *Դեկտեմբերի 4-ին* հանդես գալով ԱՄՆ-ի կոնգրեսում, նախագահ Վ. Վիլսոնը հայտարարեց, որ «Մենք հույս ունենք թուրքական կայսրության ժողովուրդների համար ապահովել իրավունք և հնարավորություն՝ իրենց կյանքը դարձնելու անվտանգ, իսկ իրենց ճակատագիրը՝ ապահով ագրեսիաներից ու անարդարությունից, օտարերկրյա արբունիքների ու կուսակցությունների կարգադրություններից»:
- *Դեկտեմբերի 22-ին* նախագահ Վ. Վիլսոնը հատուկ հանձնարարական տվեց ԱՄՆ-ի կառավարությանը՝ ուսումնասիրել Հայաստանի հետագա ճակատագրի հետ կապված դաշնակից պետությունների կարծիքը և

այդ կապակցությամբ մշակել ԱՄՆ-ի դիրքորոշման հիմնական ուղղությունները:

1918

- *Հունվարի 6-ին* «Գերմանա-հայկական միության» անունից Պաուլ Ռորբախը, Էդվարդ Կիրը և Մարտին Ռադեն դիմում հղեցին Գերմանիայի կառավարությանը՝ առաջարկելով Հայաստանի համար ավտոնոմիա:
- *Հունվարի 6-ին* «Գերմանա-հայկական ընկերությունը» հատուկ նամակով, ուղղված Գերմանիայի կանցլերին, կոչ արեց աջակցել հայերին ինքնավարություն տրամադրելու հարցում:
- *Հունվարի 8-ին* հրապարակվեց ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի տասնչորս կետերից բաղկացած հայտարարությունը, որոնցից տասներկուերորդը վերաբերում էր հայերին: ՙ
- *Փետրվարի 1-ին* Ամերիկայի Միացյալ Նահանգների Ներկայացուցիչների պալատում զեկուցումով հանդես եկավ Քանզաս նահանգի ներկայացուցիչ լեյտենանտ-գնդապետ Էդուարդ Ս. Լիտլը: Ներկայացված ընդարձակ զեկուցումը կրում էր «Հայկական հարցը» խորագիրը: Ներկայացուցիչների պալատի անդամներին կոչ անելով սատար կանգնել հայերին՝ Էդ. Լիտլը հայտարարեց. «Հինգ-վեց հարյուր տարի այս ժողովուրդը ճնշվել ու ոտնակոխ է եղել: Աշխարհում ոչ մի ժողովուրդ չի տոկացել այնքան, որքան հայ ժողովուրդը, և այն փաստը, որ նրանք մինչև օրս էլ ապրում են, որտեղ ապրել են դարեր շարունակ, ապացույց է, որ ունեն կամքի ուժ, կայունություն և հայրենասիրություն, ինչը մարդկության տարեգրության մեջ իր զուգահեռը չունի»:
- *Ապրիլի 2-ին* Պաղեստինի գերմանական միության նախագահ Կարլ Հորտմանը խնդրագիր ներկայացրեց կայզերական կառավարության ղեկավար կոմս Հերտլինգին, որտեղ ասվում էր. «Թուրքիայից ստացվում են բավականին տագնապալի տեղեկություններ, որոնք ստիպում են անհանգստանալ, որ հանցագործությունները հայերի նկատմամբ կարող են կրկնվել... Այդ իսկ պատճառով խնդրում ենք Ձերդ գերազանցությանը վճռական քայլեր ձեռնարկել, որպեսզի հեռացնեք հայերից նոր հետապնդումների վտանգը և անել ամեն հնարավորը, որ աղաղակող չարագործությունները, որոնք կատարվել են առաջին հետապնդման ժամանակ, չկրկնվեն»:
- *Ապրիլի 12-ին* Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Չիչերինի ստորագրությամբ ուղերձ ներկայացվեց Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանը, որտեղ Գերմանիայի կառավարության ուշադրությունը հրավիրվում էր այն փաստի վրա, որ «Կովկասյան ճակատում թուրքական զորքերի առաջխաղացմանը հետևում է հայ բնակչության զանգվածային բնաջնջումը: Խաղաղ ազգաբնակչությունը, հազարավոր կանայք և երեխաներ են սպանվում, նրանց ունեցվածքը կողոպտվում և հրկիզվում է: Հայ ժողովրդի բնաջնջումն այժմ էլ է շարունակվում: Գազանությունների պատասխանատվությունը, որոնց ենթարկվում է հայ ազգաբնակչությունը թուրքական զորքերի կողմից գրավված շրջաններում, ընկնում է գերմանական կառավարության վրա, որի օգնությամբ Թուրքիան այդ շրջանները ձեռք բերեց»:

- *Մայիսի 17-ին* «Հայաստանի համար 1915թ. մարդասիրական օգնության շվեյցարական կոմիտեն» հատուկ դիմում հղեց Գերմանիայի ռեյխսկանցլեր կոմս ֆոն Հերտլինգին, որտեղ ասվում էր. «... թույլ տվեք կրկին Ձեզ դիմել դժբախտ հայ ժողովրդին պաշտպանելու համոզիչ խնդրանքով: 1915թ. Թուրքիայի ասիական մասում սկսվեցին հայ ժողովրդի հետապնդումները, որոնց զոհը դարձավ նրա մեծ մասը: Տղամարդիկ հիմնականում կոտորված են, կանայք, երեխաները և ծերերը Միջագետքի անապատներ տեղափոխության հետևանքով դատապարտված են աննկարագրելի տառապանքների և անկասկած՝ մահվան: Թուրքիայի ասիական մասի ամբողջ հայկական բնակչության միայն չնչին մասն է մնացել... Մեզ համար միայն կարևոր է, որ կրկին տեղի չունենա այն, ինչ վերապրեցինք 1915 թվականին: Իբրև քրիստոնյաներ, որոնք լի են վստահությամբ դեպի քրիստոնյա Գերմանական կայսրությունը, դիմում ենք խնդրանքով՝ կանխարգելել քրիստոնյա հայ ժողովրդի ամբողջական ոչնչացումը»:
- *Հունիսի 4-ին* Բաթում քաղաքում հաշտության և բարեկամության պայմանագիր կնքվեց Օսմանյան կայսերական կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև: Պայմանագրի կարևոր բաժիններից էր հոդված 10-ը, որտեղ ասվում էր. «Պայմանավորվող կողմերից մեկի տարածքի բնակիչները կամ համայնքները, որոնք ունեն սեփականություն և օգտագործման իրավունք սահմանի մյուս կողմում գտնվող անշարժ գույքի նկատմամբ, կարող են օգտագործել դրանք, շահագործել կամ վարձակալության տալ, վարել կամ վաճառել անձամբ կամ վստահված անձանց միջոցով:

Ոչ ոք չի կարող զրկվել այդ անշարժ գույքի նկատմամբ իրեն պատկանող սեփականության իրավունքից այլ կերպ, քան նկատի ունենալով հասարակական շահը և միշտ փոխհատուցմամբ: Ոչ մի արգելք չպետք է հարուցվի բնակիչներին կամ նշված համայնքների ներկայացուցիչներին, երբ նրանք սահմանը կանցնեն՝ ներկայացնելով ճանապարհային թերթիկները, որոնք կտրվեն ըստ բնակավայրի համապատասխան իշխանությունների կողմից և որոնք կօրինականացվեն մյուս կողմի իշխանությունների կողմից: Թեթևացումներ ու հատուկ արտոնություններ կտրվեն սահմանն անցնելու և սահմանային բնակավայրում առևտուր անելու համար»:
- *Հունիսի 24-25-ին* տեղի ունեցան Գերմանիայի խորհրդարանի նիստերը, որտեղ հատուկ քննարկման հարց դարձավ Վրաստանում և Կովկասում տիրող վիճակը: Ելույթ ունենալով՝ պատգամավոր դոկտոր Շտրեզեմանը (Ազգային-լիբերալ կուսակցությունից), դատապարտեց Թուրքիայի կողմից Բրեստ-Լիտովսկի պայմանագրի խախտումը, երբ վերջինս պայմանագրով հաստատված տարածքային սահմաններից ավելի հեռու է թափանցել, փորձելով առաջ խաղալ դեպի հայկական տարածքները: «Մենք մեծագույն ջանքեր ենք ծախսել հայերի համար՝ հոգ տանելու առումով: Այստեղ խոսքն այլ բանի մասին չէ, քան այսուհետ ևս գյուղերը բոցերով բռնկված լինելու մասին վերստին հազարավորներն իրենց կյանքից պիտի զրկվեն»:

Թուրքիայի հասցեին խիստ քննադատությամբ հանդես եկավ նաև պատգամավոր Հաազը (անկախ սոցիալիստ), որը դիմելով կառավարությանը, շեշտեց, որ նրա պատասխանատվությունից է կախված ամբողջապես հայերի բնաջնջման դատապարտված լինելը: «Հայերի օգնության ցնցող կանչը գրեթե ոչ ոք, ով լսել է այն, իր ողջ կյանքի ընթացքում չի կա-

լող մոռանալ: Պատերազմի ընթացքում Թուրքիան մոտ 800 հազար հայ ոչնչացրեց... այստեղ նկարագրվեց այն անմալդկային ճակատագիրը, որ բաժին ընկավ այդ ցեղին և գազանային այն ձևը, որով իրականացվել է բնաջնջումը, խարանվեցին»:

- *Հուլիսի 19-ին* Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը Բեռլինում հուշագիր ներկայացրեց Ավստրո-Հունգարիայի դեսպանին՝ իր երկրի կառավարությանը հանձնելու համար: Հուշագրում ասվում էր. «Սարսափելի է տառապանքների այն չափը, որ այս պատերազմի թոհուբոհին մեր ազգին բաժին վիճակվեց: Թուրքիայում երկու միլիոն թիվ կազմող մեր հայրենակիցների երեք քառորդը զոհ դարձավ համաշխարհային պատմության մեջ նախադեպը չունեցող հալածանքների. տղամարդիկ սպանվեցին, աղջիկները պղծվել են և գետվել հարեմներ, կանայք և երեխաները մերկ ու քաղցած ամիսներ շարունակ տեղից տեղ են քշվել, մինչև որ նրանք ճվազելով ու պակասելով հասան Միջագետքի և Արաբիայի անապատները, այնտեղի սպանիչ կլիմայի պայմաններում, անասելի զրկանքներից, սովից և տարափոխիկ հիվանդություններից թշվառորեն կործանվեցին... Սակայն Բրեստի պայմանագրով սահմանված Անդրկովկասի սահմանները ևս նրանք չհարգեցին, նրանք ներխուժեցին ավելի, մինչև Կովկասյան Հայաստանի խորքը, ամենուրեք սարսափ և թշվառություն, վախուստ և հուսալքություն իրենց շուրջը սփռելով: Ներկայումս նրանք, իրավունքին և արդարությանը հակառակ զավթել են Կովկասյան Հայաստանի կեսը, 600 հազարից ավելի հայեր ստիպված էին իրենց տունն ու տեղը, ունեցվածքը և ինչքը թողնել բախտի քմահաճույքին, միայն իրենց կյանքը փրկելու համար փախել են լեռներն ու անտառները, որտեղ ամեն տեսակի զրկանքների, վարակիչ հիվանդությունների, որոնք տարածվում են նրանց շուրջը, տարվա մոտալուտ ցուրտ ժամանակի անախորժությունների պայմաններում, ենթակա են կյանքի և առողջության համար չարաղետ վտանգների, այն ժամանակ, երբ իրենց անտերունչ թողնված ինչքը մատնված է կողոպուտի և ավերման... մենք հույս ենք դնում նաև Ավստրո-Հունգարիայի վրա, որը նույնպես ստորագրել է Բրեստի պայմանագիրը և քրիստոնյաներին պաշտպանելն Արևելքում մշտապես իր հածելի պարտքն է համարել...»:

- *Հուլիսի 31-ին* Սայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանեց գերմանա-ավստրոհունգարական պատվիրակությունը՝ գեներալ Ֆոն Կրեսի և Կովկասում Ավստրո-Հունգարիայի դեսպան, բարոն Ֆրանկենշտայնի գլխավորությամբ: Հանդիպման ժամանակ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն նրանց փոխանցեց Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի կայսրերին ուղղված իր կոնդակները՝ հայերին օգնելու նպատակով:

- *Հոկտեմբերի կեսերին* ԱՄՆ-ի կոնգրեսական Էդուարդ Լիթլը կոնգրես ներկայացրեց թիվ 336 բանաձևը, որի նախագծում ասված էր. «Հայ ժողովուրդն իրավունք ունի ազատ և անկախ լինելու, ելք ունենալով դեպի ծով և տերը լինելու այն քրիստոնեական մշակույթի, որի համար նրա զավակները նահատակվեցին»:

- *Հոկտեմբերի 30-ին* Կայսերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության պետական քարտուղար Զոլֆը ծածկագիր հեռագրով Թուրքիայում գտնվող գերմանական դեսպանին հաղորդեց կառավարության

պատրաստակամությունը Թալեաթ և Էնվեր փաշաներին ապաստան տալու մասին, եթե նրանք ստիպված կլինեն փախչել Թուրքիայից:

Հեռագրում ասվում էր. «Թալեաթ փաշայի և Էնվեր փաշայի համար, որոնք մեզ հետ դաշինք են կնքել և հավատարիմ մնացել մեզ, մեր երկիրը բաց է: Խնդրում եմ ամեն կերպ օգնել նրանց, եթե նրանք կմտադրվեն փախչել Թուրքիայից քաղաքական հետապնդումների պատճառով»:

- *Նոյեմբերի 4-ին* Ստամբուլում բացվեց Թուրքիայի խորհրդարանի հետպատերազմյան գումարման չորրորդ նիստը (առաջին նիստը տեղի ունեցավ 1918թ. հոկտեմբերի 10-ին): Առաջին անգամ խորհրդարանի ամբիոնից Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո հնչեցին հույն, հայ և թուրք պատգամավորների պաշտոնական հարցադրումները Օսմանյան Թուրքիայում բնակվող հայերի և հույների կոտորածների և խորհրդարանի հայ պատգամավորներ Զոհրապի և Վարդգեսի սպանության հետ կապված մեղավորներին պատժելու մասին: Խորհրդարանի նիստին մասնակցող յոթ հայ պատգամավորները՝ Մատթեոս Նալպանդյանը, Օննիկ Իհսանը, Հովսեփ Մատաթյանը, Արթին Պոշկեզենյանը, Հակոբ Խրլաքյանը, Գեղամ Տեր-Կարապետյանը և Տիգրան Պարսամյանը հանդես եկան Թուրքիայի կառավարությանն ուղղված հարցապնդմամբ, պահանջելով բացատրություն տալ թե ևս ինչ վերաբերմունք ունի 1915թ. մայիսի 14-ի՝ տեղահանության մասին և 1915թ. սեպտեմբերի 13-ի՝ Լքյալ գույքերի մասին կառավարության կողմից ընդունված օրենքների նկատմամբ, և ովքեր են այդ ոճրագործությունների կազմակերպիչներն ու պատասխանատուները:

Հանդես գալով խորհրդարանում՝ Տրապիզոնից պատգամավոր թուրք Մեհմետ Էմինն իր ելույթի վերջում հայտարարեց. «Այո՛, պարոննե՛ր, ես նույնպես ասում եմ, որ մեր կառավարական անձերը շատ ընտանիքների կանանցով և երեխաներով կոտորեցին և նրանց ունեցվածքը կողոպտեցին: Որքան հայեր, որ այսօր պակասում են, եթե նկատի ունենանք նրանց բնակչության նախապատերազմյան մեկ միլիոն երկու հարյուր հազար թիվը, որից և պետք է պակասեցնել վերապրողների թիվը, այդ բոլորը ոչնչացվեցին և սպանվեցին, և նրանց ունեցվածքն էլ ավարի մատնվեց: Այս մասին և ոչ մի կասկած: Ես էլ նույնպես փափագում եմ և պահանջում պատժել հանցավորներին»:

- *Նոյեմբերի 13-ին* Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատում Հայաստանի և Կիլիկիայի շրջաններում տեղի ունեցող իրադարձությունների կապակցությամբ ընդարձակ ելույթ ունեցավ Ջեյմս Բրայսը, որը խիստ քննադատության ենթարկեց Թուրքիայի կառավարությանը: Նա առանձնահատուկ նշեց. «Ինչպես իրազեկ են Ձերդ պայծառափայլ լորդերը, ներկայիս թուրքական կառավարությունն ընդգրկում է որոշ քանակությամբ մարդիկ, որոնք եղել են այն ցնցող կոտորածների (որոնք տեղի ունեցան 1915 թվականին) մեղսակիցները: Ձերդ պայծառափայլ լորդերից նրանք, ովքեր ցանկանում են թարմացնել իրենց հիշողությունը, կարող են դիմել Կապույտ գրքին, որը հրատարակվել է Արտաքին գործերի նախարարության կողմից 1916 թվականին, որի մեջ դուք կգտնեք արձանագրությունն այն սարսափելի կոտորածների, որոնք ամենուրեք ծանուցվում են պատմության մեջ, որքան էլ փորձ է արվել հավանություն չտալ կամ արդարացնել:

Ո՛չ միայն Թալեաթ փաշան, ոճրագործների մեջ, որոնք այդ պահին ստեղծեցին «Միություն և առաջադիմություն կոմիտեն», ամենաակաևավորը, այլև մի շարք անձինք, որոնք դեռևս գոյություն ունեցող թուրքական կառավարության անդամ են, պետք է կրեն այդ կոտորածների մեղքը»:

- *Նոյեմբերի 18-ին* շարունակվեց Թուրքիայի խորհրդարանի նոյեմբերի 4-ին սկսված նիստը: Ընդարձակ ճառով հանդես գալով խորհրդարանում, Հալեպից հայ պատգամավոր Արթին Պոշկեզենյանը հայտարարեց. «Իմ գրավոր դիմումը հետևյալ նպատակներն է հետապնդում. առաջին՝ հանցագործ պաշտոնյաներին և անհատներին պատժելու եղանակների հաստատումը: Երկրորդ. այսուայնտեղ մոտ գտնվող առևանգված և ստրկացված կանանց և որբերի հավաքագրում: Երրորդ. կառավարության կողմից նրանց կերակրելու կազմակերպում: Չորրորդ. նրանց գույքի և ունեցվածքի վերադարձնելը: Հինգերորդ. նրանց կրած վնասների հատուցումը»:

- *Դեկտեմբերի 9-ին, 11-ին և 12-ին* իր նիստերը շարունակեց և դրանով իսկ աշխատանքներն ավարտեց Օսմանյան Թուրքիայի վերջին գումարման խորհրդարանը:

- *Դեկտեմբերի 10-ին* ԱՄՆ սենատոր Հենրի Կաբոտ Լոջը Սենատ ներկայացրեց թիվ 378 բանաձևը, որտեղ առաջարկվում էր Սենատին կարծիք հայտնել, որ «... Հայաստանը, ներառյալ Թուրքահայաստանի վեց վիլայեթներն ու Կիլիկիան, Ռուսաստանը, պարսկական, աղրբեջանական նահանգների հյուսիսային մասի գավառները պետք է անկախ լինեն, և Խաղաղության կոնգրեսը միջոցներ կձեռնարկի Հայաստանին օգնելու և անկախ հանրապետություն ստեղծելու համար»:

1919

- *Հունվարի 8-ին* սուլթան Մուհամեդ 6-րդ Վահիդեդդինի հրամանագրով Կոստանդնուպոլսում կազմվեցին Առաջին, Երկրորդ և Երրորդ ռազմական արտակարգ ատյանները, որոնց քննությանն էին հանձնվելու երիտթուրքական կուսակցության պարագլուխները և կառավարության անդամները:

- *Հունվարի 18-ին* Կոնստանդնուպոլսում Մեծ Բրիտանիայի Գերագույն կոմիսար ադմիրալ Կալտորպը հանդիպելով Թուրքիայի արտաքին գործերի նախարարին, հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ. «Նորին Գերազանցության կառավարությունը լի է վճռակնճռությամբ համապատասխան պատժի ենթարկել նրանց, ովքեր պատասխանատվություն են կրում հայերի կոտորածների համար»:

- *Հունվարի 28-ին* Թուրքիայում Մեծ Բրիտանիայի Գերագույն կոմիսար ադմիրալ Կալտորպը Բրիտանիայի արտաքին գործերի նախարարությանը հեռագիր հղեց, որտեղ ասվում էր. «Թուրքական կառավարությանն ի ցույց տրվեց, որ երբ Անգլիային հայտնի դարձավ հայերի կոտորածների մասին, բրիտանական պետական գործիչները քաղաքակիրթ աշխարհին խոստացան, որ դրա հետ կապված մարդիկ պետք է անձնական պատասխանատվություն կրեն և Նորին Մեծության կառավարությունն ամուր մտադիր է կատարել այդ խոստումը»:

- *Հունվարի 30-ին* Փարիզի խաղաղության վեհաժողովի Տասի խորհուրդը որոշում կայացրեց ընդունել Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջի կողմից 1919թ. հունվարի 29-ին ներկայացրած փաստաթուղթը, որի երկ-

րորդ հոդվածում ասվում էր. «Ելնելով հատկապես թուրքերի կողմից ևլաճված ժողովուրդների նկատմամբ պատմականորեն չարաշահած իշխանության և նախորդ տարիներին հայերի սարսափելի ջարդերի ճշմարտացի հիմնավորումներով՝ Դաշնակից և Միավորված տերությունները համաձայնվեցին, որ Հայաստանը, Սիրիան, Միջագետքը, Պաղեստինը և Արաբիան պետք է ամբողջովին առանձնացվեն թուրքական կայսրությունից...»

- *Փետրվարի 24-ին* հանդես գալով Բոստոնում՝ ԱՄՆ-ի պրեզիդենտ Վ. Վիլսոնը հայտարարեց. «Դուք մտածե՞լ եք երբևէ Հայաստանի տառապանքների մասին: Դուք շռայլորեն ձեր փողերը բաժանում էիք, որպեսզի ծանր պահին տուժած հայերին օգնություն ցույց տայիք: Այժմ ուժ հավաքեք, օգնեցե՛ք, որպեսզի նրանք այլևս կրկին անգամ չտառապեն»:

- *Փետրվարին* հանդես գալով Հանրապետական կուսակցության կողմից ԱՄՆ-ի նախագահի թեկնածուի ընտրարշավում՝ Չարլզ Էվանս Հյուզն ընտրողների առջև հայտարարեց. «Թուրքերի անսահման մոլեգնությունն ամեն տեղ խաղարկվեց Հայաստանում: Մենք կարդացել էինք հայերի հետապնդումների և կոտորածների մասին նախորդ տարիներին, սակայն իրականում նրանք թոշնեցին վերջին օրերին տեղի ունեցած դաժանությունների և զանգվածային կոտորածների համեմատ»:

- *Մարտի 4-ին* հանդես գալով Նյու Յորքի Մետրոպոլիտեն օպերայի տանը կազմակերպված հանրային միտինգում՝ ԱՄՆ-ի պրեզիդենտ Վ. Վիլսոնն իր ելույթում նշեց. «... Ժողովուրդները, որոնք երկարատև ենթարկվել են աննկարագրելի տառապանքների, այն բանի համար, որ գտնվել են թուրքական տիրապետության տակ, սերնդե սերունդ խաղաղության, արդարության, անկախության և աջակցության, կոչ են արել, բայց աշխարհում և ոչ մի կառավարություն նրանց չլսեց»:

- *Ապրիլի 3-ին* Մեծ Բրիտանիայի Գերագույն կոմիսարի տեղակալ Վեբբը Փարիզի Խաղաղության վեհաժողովին ուղղված հեռագրում նշել էր. «Հայերի նկատմամբ գազանություններ ցույց տված բոլոր մարդկանց, ովքեր մեղավորներ են, անհրաժեշտություն է առաջացել բոլոր թուրքերին անխտիր ենթարկել մահապատժի, և այդ կապակցությամբ ես առաջարկում եմ, որպեսզի պատիժն ավելի շուտ կրի մասնատման ձև՝ ըստ նախկին թուրքական կայսրության ազգային պատկանելիության և անհատական կարգով որպես բարձր պաշտոնատար անձանց դատավարման ձև, ովքեր տեղ են գտել իմ ցուցակում, որոնց ճակատագիրը կարող է մյուսների համար օրինակ ծառայել»:

- *Ապրիլի 8-ին* ռազմական արտակարգ ատյանը դատավճիռ կայացրեց Յոզղաթի գավառում հայության տեղահանության և կոտորածի գլխավոր կազմակերպիչներ՝ գավառապետի տեղակալ և Բողազլյանի կայմակամ Քեմալ բեյի և Յոզղաթի ոստիկանության պետ մայոր Թեվֆիկ բեյի նկատմամբ: Դատավճռում բերված մեղադրական ապացույցները վկայում են, որ Քեմալ բեյը ոտքի է հանել գավառի բոլոր մահմեդականներին և կոչ արել իսպառ ոչնչացնել տեղի հայ բանկչությանը: Դատարանը միաձայն մեղավոր ճանաչեց նրան և կայսերական քրեական օրենսգրքի 170 և171 հոդվածների հիման վրա վճիռ արձակեց մահապատժի ենթարկել:

- *Ապրիլի 27-ին* Կոնստանդնուպոլսում սկսվեց Երիտթուրքական կառավարության ղեկավարների և «Միություն և առաջադիմություն» կուսակցու-

թյան կենտրոնական կոմիտեի անդամների դատավարությունը, որը տևեց մինչև 1919թ. հունիսի 26-ը:

- *Մայիսի 22-ին* ռազմական արտակարգ ատյանը դատավճիռ կայացրեց Տրապիզոնի հայերի տեղահանության և կոտորածների կազմակերպիչների բակատմամբ և դատապարտեց ութ հանցագործների:

Առավել ծանր հանցագործությունների համար դատարանը հեռակա կարգով մահվան դատապարտեց Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմի բեյին և կուսակցության Տրապիզոնի կազմակերպության պատասխանատու քարտուղար Նայիլ բեյին:

- *Մայիսի 28-ին* անգլիական ռազմական հրամանատարության գաղտնի հրամանով դատաքննության մեջ գտնվող 77 մեղադրյալներ Կ. Պոլսի բանտից տեղափոխվեցին Մալթա կղզի և ընդհատվեց նրանց դատավարությունը:

- *Հունիսի 17-ին* հանդես գալով Փարիզի Խաղաղության վեհաժողովում, Օսմանյան կայսրության Մեծ վեզիր Դամադ Ֆերիդ փաշան, փորձելով արդարացնել Թուրքիայի հպատակ ժողովուրդների բնաջնջման կառավարության կողմից ձեռնարկած հանցագործ քաղաքականությունը, որի հետևանքով ոչնչացավ հարյուր հազարավոր մարդ, այնուամենայնիվ ստիպված էր խոստովանել, որ «... պատերազմի տարիներին ողջ քաղաքակիրթ աշխարհը ցնցված էր հանցագործությունների մասին հաղորդագրություններով՝ իբրև կատարված թուրքերի կողմից: Ես հեռու եմ այն բանից, որպեսզի ծածկող գցեմ կատարվածի վրա, որը ստիպել էր ողջ մարդկությանը ցնցվել սարսափից. նաև քիչ հակված եմ այդ մեծ դրամայի մասնակիցների մեղավորության աստիճանը նվազեցնել: Ես իմ առջև դնում եմ այլ նպատակ. ձեռքերիս փաստերով ցույց տալ աշխարհին, թե ում վրա է իրականում ընկած այդ սարսափելի ոճրագործությունների պատասխանատվությունը»:

- *Հուլիսի 5-ին* կայացվեց երիտթուրքական կառավարության ղեկավարների և կուսակցական գործիչների բնաջնջման ռազմական արտակարգ ատյանի դատավճիռը:

Դատաքննությունների ընթացքում հեռակա կարգով մեղադրվում էին տասնմեկ և դատավարությանը ներկա քսան կուսակցական և պետական բարձրաստիճան գործիչներ:

Դատարանը պաշտոնատար անձանց մեղավոր ճանաչեց կոտորածների և բռնությունների դեմ գործնական քայլերի չդիմելու և կանխելու գործում:

Դատավճռում շեշտը դրվեց արևմտահայության կոտորածների և ունեցվածքի կողոպտման մանրամասնությունների վրա:

Քաղաքացիական քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի առաջին մասով դատարանը մահապատժի վճիռ կայացրեց Թուրքիայի ներքին գործերի նախարար, մեծ վեզիր Թալեաթ փաշայի, ռազմական նախարար Էնվեր փաշայի, ծովային նախարար Ջեմալ փաշայի, «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, հանրային կրթության նախարար դոկտոր Նազըմ բեյի բնակատմամբ:

- *Օգոստոսի 16-ին* ԱՄՆ-ի պլենիպոտենտ հանձնաժողովի ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

պետական քարտուղար Ռ. Լանսինգը հեռագրով հայտնել է Փարիզի Խաղաղության վեհաժողովին մասնակցող ԱՄՆ-ի հանձնաժողովին, որ «պլե-

զիղենտը ցանկանում է նախազգուշացնել թուրքական իշխանություններին, որ եթե նրանք չձեռնարկեն շուտափույթ և արդյունավետ միջոցառումներ, կանխելու թուրքերի, քրդերի կամ ուրիշ մուսուլմանների կողմից Կովկասում կամ այլ վայրերում հայերի նկատմամբ ձեռնարկվող ցանկացած ջարդեր կամ ուրիշ գազանություններ, ապա նրանք կզրկվեն ցանկացած աջակցությունից, որը կվերաբերի ինքնուրույնության պահպանմանը ներկայիս Օսմանյան կայսրության թուրքական հատվածում, որը նախատեսվում է խաղաղության պայմանների 12-րդ հոդվածով, և որ այսպիսի լուծումը կարող է բերել թուրքական կայսրության ամբողջովին վերացմանը և խաղաղության նվաճման պայմանների ամբողջական փոփոխությանը»:

- *Օգոստոսի 26-ին* Լոնդոնում գտնվող ԱՄՆ-ի դեսպան Դևիսին հղած հեռագրում ԱՄՆ-ի պետական քարտուղար Ռ. Լանսինգը հայտնում էր «... 1915 և 1916թթ. հայերի կոտորածները և տեղահանությունը գլխավորապես տեղի ունեցան ուժով՝ միատարր Թուրքիա ստեղծելու երիտթուրքերի ցանկությամբ: Պանթուրանական և պանիսլամական ձգտումները թուրքերի կողմից դեռևս գոյություն ունեն... Հայերը և Հայկական պետության ստեղծումը թուրքերը դիտել են որպես լուրջ արգելք այդ ձգտումների իրագործման ճանապարհին, հատկապես պանթուրանական: Թվում է՝ այդ պատճառով էլ Մեծ Բրիտանիայի և մյուս դաշնակիցների շահերից է բխում հայերին օգնելը և նրանց ոչնչացնելուց պաշտպանելը...»:

- *Օգոստոսի 28-ին* Փարիզի Խաղաղության վեհաժողովին ներկայացվեց Թուրքիայում մանդատներ սահմանելու միջազգային հանձնաժողովի ամերիկյան կողմի անդամներ Չարլզ Կրեյնի և Հենրի Կինգի զեկուցագիրը, որտեղ ասվում էր, որ հայերի «... կոտորածները կառավարության կանխամտածված և ուղղակի ակցիայի արդյունք էր, որին իրենք թուրքերը մասնակցեցին մեծ պատրաստակամությամբ: Դա ոճրագործություն չէր, որը իրականացավ ցասումի պոռթկումով: Այդ կոտորածն ուղեկցվում էր նկարագրմանը չենթարկվող սարսափելի դաժանություններով... Անհնարին է փորձել ժխտել այդ ոճրագործությունը կամ էլ գիտակցաբար նվազեցնել նրա մասշտաբները»:

1920

- *Հունվարի 8-ին* Կ. Պոլսի ռազմական Առաջին արտակարգ ատյանի դատավճռով դատապարտվեցին «Միություն և առաջադիմություն» կուսակցության մի խումբ շրջանային պատասխանատու քարտուղարներ և պաշտոնատար այլ անձինք, թվով երեսունվեց մարդ: Դատավճռում նշվում է, որ մեղադրյալները հավաքագրել են մարդասպանների և հանցագործների խմբեր, որոնց միջոցով կազմակերպել են հայերի կոտորածը և նրանց ունեցվածքի կողոպուտը:

- *Հունվարի 13-ին* ռազմական արտակարգ դատարանի վճռով հեռակա կարգով մահվան դատապարտվեց «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, «Թեշքիլաթ-ը մահուսե» հատուկ կազմակերպության ղեկավար Բեհաէդդին Շաքիր բեյը, որպես արևմտահայության տեղահանության և կոտորածների մտահղացման ու հիմնական կազմակերպիչներից մեկը՝ Խարբերդի նահանգում:

- *Մայիսի 13-ին* ԱՄՆ-ի Սենատը ընդունեց թիվ 359 բանաձևը, որտեղ ասվում էր, որ Սենատում կազմակերպված լսումների վկայություններով հստակորեն հաստատվեցին կոտորածների և այլ դաժանությունների մասին զեկուցումների հավաստի լինելը, որից տառապել է հայ ժողովուրդը: Սենատը միաժամանակ ի սրտե շնորհավորել է հայ ժողովրդին անկախ հանրապետություն ունենալու առթիվ:
- *Մայիսի 24-ին* ԱՄՆ-ի պրեզիդենտ Վ. Վիլսոնը դիմեց կոնգրեսին, առաջարկելով իրեն համապատասխան լիազորություններ տալ՝ Հայաստանի մանդատը ստանձնելու և այնտեղ զորք ուղարկելու համար:
- *Օգոստոսի 10-ին* Ֆրանսիայի Սևր քաղաքում մի կողմից բրիտանական թագավորությունը, Ֆրանսիան, Իտալիան և Ճապոնիան՝ որպես գլխավոր դաշնակից տերություններ, Հայաստանը, Բելգիան, Հունաստանը, Հեջասը, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Սերբա-Խորվաթա-Սլովենական պետությունը և Չեխոսլովակիան, որոնք գլխավոր տերությունների հետ կազմավորում են դաշնակից տերություններ և մյուս կողմից՝ Թուրքիան, կնքեցին Հաշտության պայմանագիր, որով ավարտվելու էր պատերազմական վիճակը:

Պայմանագրի երրորդ՝ քաղաքական դրույթների մասին վեցերորդ բաժինը վերաբերում է Հայաստանին: Պայմանագրի 88 հոդվածի համաձայն Թուրքիան հայտարարում է, որ «ճանաչում է Հայաստանը որպես ազատ և անկախ պետություն, ինչպես այդ բանն արդեն արել են Դաշնակից տերությունները»: Պայմանագրի հաջորդ՝ 89 հոդվածը արձանագրում է, որ «Թուրքիան և Հայաստանը, ինչպես և Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանազատումը թողնել Ամերիկայի Միացյալ Նահանգների որոշմանը և ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես և այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու և հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տարածքների ապառազմականացման վերաբերյալ»:

Պայմանագրի համաձայն, Թուրքիայի և Հայաստանի սահմանները որոշելիս, եթե վիլայեթների ամբողջ տարածքը կամ նրա մի մասը հանձնվում է Հայաստանին, ապա Թուրքիան պատրաստ է հայտարարել, որ որոշումը կայացնելու օրվանից սկսած ինքը հրաժարվում է հանձնված տարածքի նկատմամբ բոլոր իրավունքներից և իրավահիմունքներից:

Պայմանագրի չորրորդ մասը, որը կրում էր «Փոքրամասնությունների պաշտպանությունը» խորագիրը, հստակ ձևակերպեց հայ ժողովրդի նկատմամբ Թուրքիայում իրականացված հանցագործության փաստը: Պայմանագրի 144 հոդվածի համաձայն «Օսմանյան կառավարությունն ընդունում է լքված սեփականության վերաբերյալ 1915 թվականի օրենքի, ինչպես նաև այդ օրենքի լրացումների անհրաժեշտությունը և հայտարարում է, որ դրանք վերացված են և ուժը կորցրած ինչպես անցյալում, նույնպես և ապագայում: Օսմանյան կառավարությունը հանդիսավոր կերպով պարտավորվում է ձեռնարկության սահմաններում նպաստել, որպեսզի իրենց օջախները վերադառնան և իրենց գործերը վերսկսեն օսմանյան այլազգի այն քաղաքացիները, որոնք 1914թ. հունվարի 1-ից հետո գաղթել են գազանությունների հանդեպ ունեցած վախից դրդված կամ արտաքսվել են բռնադատման որևէ այլ եղանակով: Օսմանյան կառավարությունն ըն-

դունում է, որ օսմանյան հիշյալ քաղաքացիներին կամ նրանց համայնքներին պատկանող այն անշարժ և շարժական գույքերը, որոնք կարող են որոնելով գտնվել, ում ձեռքում էլ դրանք լինեն, պետք է որքան հնարավոր է շուտ վերադարձվեն (իրենց տերերին)»:

Դժբախտաբար քաղաքական իրավիճակը Թուրքիայի օգտին էր և Սևրի պայմանագիրը չվավերացվեց: Նրան 1923թ. հուլիսի 24-ին փոխարինելու եկավ Լոզանի պայմանագիրը, որտեղ ընդհանրապես չհիշատակվեցին հայ ժողովուրդը և Հայաստանը:

- *Նոյեմբերի 25-ին* Ազգերի Լիգայի Խորհրդի նախագահ Գիմանսը «Հայաստանի պաշտպանությունը» խորագրով հեռագիր հղեց Լիգայի անդամ բոլոր պետությունների կառավարություններին: Հեռագրում ասվում էր, որ Ազգերի Լիգայի Ասամբլեան նոյեմբերի 22-ին ներքոհիշյալ բանաձևն է ընդունել. «Ասամբլեան, ցանկանալով համագործակցել խորհրդի հետ, որպեսզի որքան հնարավոր է արագ վերջ դնել Հայաստանում կատարվող սարսափելի ողբերգությանը, Խորհուրդը կառավարություններին առաջարկում է հանճնարարել տերություններից որևէ մեկին ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ Հայաստանի և քեմալականների միջև ռազմական գործողությունները դադարեցնելու նպատակով»:
- *Նոյեմբերի 29-ին* Պերուի վարչապետ Լեգուայի Մարտինեսը հեռագիր հղեց Ազգերի Լիգայի խորհրդի նախագահ Պ. Գիմանսին, ի պատասխան Ազգերի Լիգայի Ասամբլեայի կողմից 1920թ. նոյեմբերի 22-ի ընդունած բանաձևի, որը կոչ էր անում աշխարհի երկրներին համագործակցել հայկական ողբերգության սարսափները վերջ տալու գործում: Պերուի կառավարությունն իր պատրաստակամությունն էր հայտնում բանաձևի իրականացմանը մասնակցելու համար:
- *Նոյեմբերի 29-ին* Բոլիվիայի արտաքին գործերի նախարար Էսկալլերն Ազգերի Լիգայի խորհրդի նախագահին հեռագրով հաստատեց իր կառավարության պատրաստակամությունը՝ մասնակցել «հայերի ծանր վիճակին վերջ տալու» խնդրի կարգավորմանը:
- *Նոյեմբերի 30-ին* Իսպանիայի վարչապետ և արտաքին գործերի նախարար Մ. Դատոն Ազգերի Լիգայի խորհրդի նախագահին հասցեագրված իր պատասխան հեռագրում հայտնեց, որ չնայած Իսպանիայի քաղաքական կառավարությունն անմիջապես կապ չունի և շահագրգռված չէ Հայաստանի ծանր վիճակի իրադարձություններով, խորը ցավակցում է բազմաթիվ դժբախտությունների զոհ դարձած ժողովրդին:
- *Նոյեմբերի 30-ին* Բրազիլիայի արտաքին գործերի նախարար Աժեվեդո Մարկեշն Ազգերի Լիգայի խորհրդի նախագահին ուղղված իր պատասխան հեռագրում հայտնում է, որ «Բրազիլիայի կառավարությունը պատրաստ է ինչպես ինքնուրույն, այնպես էլ մյուս տերությունների հետ» վերջ տալ Հայաստանի ծանր վիճակին:
- *Դեկտեմբերի 2-ին* Վենեսուելայի արտաքին գործերի նախարար Բորգեսն Ազգերի Լիգայի խորհրդի նախագահին ուղղված պատասխան հեռագրում հայտնում էր, որ Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները ցավով է ընդունում, իր պատրաստակամությունն է հայտնում համագործակցելու հարցում, սակայն ելնելով իր երկրի աշխարհագրական դիրքից, չի կարող ինչպես անհատապես, այնպես էլ համատեղ իրականացնել այն առաքելությունը, որն առաջարկում է Ազգերի Լիգան:

- *Դեկտեմբերի 3-ին* Ազգերի Լիգայի խորհրդի նախագահին ուղղված իր պատասխան հեռագրում Սալվադորի արտաքին գործերի նախարարը հայտնում է, որ Սալվադորի կառավարությունն անհրաժեշտ է համարում վերջ տալ հայկական ողբերգությանը և պատրաստ է բարոյական աջակցություն ցույց տալ:
- *Դեկտեմբերի 3-ին* Ավստրալիայի վարչապետ Հյուզն Ազգերի Լիգայի խորհրդի նախագահին հղած պատասխան հեռագրում խնդրում է իրեն հայտնել, թե ինչ ձևերով է նախատեսվում Հայաստանում տեղի ունեցած սարսափներին վերջ տալը:
- *Դեկտեմբերի 4-ին* Բելգիայի վարչապետ Ժասպարն Ազգերի Լիգային ուղղված իր հեռագրում հայտնում է, որ Բելգիայի կառավարությունը, որը բազմիցս արտահայտել է իր վերաբերմունքը դեպի Հայաստանը, լի է վճռակամությամբ անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել, որպեսզի հայերը խաղաղության բարիքներից օգտվեն:
- *Դեկտեմբերի 5-ին* Նորվեգիայի արտաքին գործերի նախարար Միչելետն Ազգերի Լիգայի խորհրդի նախագահին հասցեագրված իր հեռագրում հայտնում է, որ խորն է ընկալում Հայաստանի վիճակը և մեծ հետաքրքրություն է դրսևորում հայ ժողովրդի անվտանգության և վշտի թեթևացման ուղղությամբ, որը ցավագին է ընդունվում Նորվեգիայում:
- *Դեկտեմբերի 5-ին* Շվեդիայի կառավարության նախագահ և արտաքին գործերի նախարար Դե Գիրն Ազգերի Լիգային ուղղված հեռագրում հայտնում է, որ իր կառավարությունը խորը կարեկցանք է հայտնում հայ ժողովրդի վշտի թեթևացման ուղղությամբ դրսևորվող բոլոր տեսակի միջոցառումների կազմակերպման նկատմամբ:
- *Դեկտեմբերի 5-ին* Դանիայի պետական նախարար Նեեգաարդը, պատասխանելով Ազգերի Լիգայի խորհրդի նախագահի հեռագրին, հայտնում է, որ հայկական ողբերգությունը համակել է Դանիային ցավակցության զգացումով, դժբախտ ժողովրդի փրկության համար:
- *Դեկտեմբերի 5-ին* Ուրուգվայի արտաքին գործերի նախարար Մուերոն տեղյակ պահեց Ազգերի Լիգային, որ իր կառավարությունն Իսպանիայի և Բրազիլիայի նման կողմնակից է հայերին ցույց տրվող բարոյական օգնությանը:
- *Դեկտեմբերի 6-ին* Նիկարագուայի արտաքին գործերի նախարար Ումբերտո Պասոս Դիասն Ազգերի Լիգային հասցեագրված իր հեռագրում հայտնում է, որ Նիկարագուան նույնպես նպատակ է հետապնդում վերջ տալ հայկական ողբերգությանը:
- *Դեկտեմբերի 9-ին* Հոնդուրասի արտաքին գործերի նախարարն Ազգերի Լիգային հղած պատասխան հեռագրում հայտնեց, որ Հոնդուրասի կառավարությունը ցավակցում է Հայաստանին՝ սարսափելի ողբերգության համար և առաջարկում է իր բարոյական աջակցությունը:
- *Դեկտեմբերի 10-ին* Չիլիի արտաքին գործերի նախարար Լ. Ալդունատեն Ազգերի Լիգային պաշտոնապես տեղյակ պահեց, որ պաշտպանում է Հայաստանին հուսահատ վիճակից դուրս բերելու առաջարկությունը:
- *Դեկտեմբեր* - Գվատեմալայի արտաքին գործերի նախարար Ագիրրան տեղյակ պահեց Ազգերի Լիգայի նախագահին, որ իր երկրի կառավարությունը գտնում է, որ անհրաժեշտ քայլերի պետք է դիմել՝ Հայաստանին օգնելու համար:

- *Դեկտեմբեր* - Պանամայի արտաքին գործերի նախարարն իր երկրի կառավարության անունից հայտնեց Ազգերի Լիգային, որ, առաջնորդվելով մարդասիրության ոգով Հայաստանի ողբերգական վիճակի կապակցությամբ, պատրաստակամություն է դրսևորում անմիջական մասնակցություն ունենալ բոլոր միջոցառումներին, ընդհուպ ծածկելով յուրաքանչյուր, դեպի Հայաստան մեկնող արշավախմբի ծախսերը:

1946

- *Ապրիլի 4-ին* Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության հետազոտությունների բաժինը երկրի ղեկավարությանը ներկայացրեց տեղեկանք «Թուրքիայի տարածքների նկատմամբ հայկական և վրացական պահանջների մասին»: Տեղեկանքը, որի առաջին տարբերակը ներկայացվել է 1945թ. հոկտեմբերի 5-ին, իսկ երկրորդը՝ 1945թ. դեկտեմբերի 22-ին, ներկայացվեց վերջնական խմբագրված ու լրամշակված տեսքով: Տեղեկանքը կազմվել էր այն բանից հետո, երբ Բեռլինում (Պոտսդամում) Դաշնակից տերությունների ղեկավարների 1945թ. հուլիսի 22-ին տեղի ունեցած խորհրդակցությունում Ի. Ստալինի հանձնարարությամբ ՍՍՀՄ արտաքին գործերի նախարար Վ. Մոլոտովը հանդես եկավ հայտարարությամբ, ըստ որի ՍՍՀՄ-ի և Թուրքիայի պետական սահմանները ճիշտ չեն կազմված, և, ինչպես Սովետական Հայաստանից, այնպես էլ Սովետական Վրաստանից անարդարացի տարածքներ են գրավվել:

Հուլիսի 23-ին՝ Դաշնակից տերությունների ղեկավարների կոնֆերանսի հաջորդ՝ յոթերորդ նիստում վերոհիշյալ հարցը կրկին անգամ բարձրացվեց Ի. Ստալինի կողմից, որը հայտարարեց, թե «սահմանների ճշտման մասին առաջարկությունը կարող է պատահել կվախեցնի թուրքերին: Սակայն խոսքը սահմանների վերականգնման մասին է, որոնք գոյություն ունեին մինչև Առաջին համաշխարհային պատերազմը: Ես նկատի ունեմ Կարսի շրջանը, որը մինչև պատերազմը Հայաստանի կազմում էր, և Արդահանի շրջանը, որը մինչև պատերազմը գտնվում էր Վրաստանի կազմում... Բայց մենք գտնում ենք, որ սահմանը Կարսի և Արդահանի շրջանում ճիշտ չէ և մենք հայտարարեցինք Թուրքիային, որ եթե նա ցանկանում է մեզ հետ միություն կազմել, պետք է ուղղի այդ սահմանը, եթե նա չի ցանկանում ուղղել սահմանը, ապա միության հարցը վերանում է...»

Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության հետազոտական բաժինը, կատարելով երկրի վարչապետի հանձնարարությունը սահմանների մասին պատմական հավաստի տեղեկանք ներկայացնելու կապակցությամբ, տեղեկանքում զգալի տեղ հատկացրեց հայերի նկատմամբ Օսմանյան Թուրքիայում 1896, 1909 և 1915-1916 թվականներին ձեռնարկած ոճրագործություններին, որոնց հետևանքով բնաջնջվեց համարյա ողջ հայ ժողովուրդը և, փաստորեն, Անատոլիան մաքրվեց հայերից:

1948

- *Մայիսի 28-ին* Միացյալ ազգերի կազմակերպության մարդու իրավունքների խորհրդի տնտեսական և սոցիալական հարցերի հանձնաժողովը քննարկեց «Թուրքիայում հայերի կոտորածները» զեկույցը, որը գտնում էր,

որ Սևրի 1920թ. օգոստոսի 10-ի պայմանագրի համաձայն, Թուրքիան պատասխանատվություն է կրում իր իսկ տարածքում կատարված կոտորածների համար:

- *Մայիսի 28-ին* Միավորված Ազգերի Կազմակերպության ռազմական հանցագործությունների հանձնաժողովը հաստատեց թուրքական կառավարության գործողությունները որպես «մարդկության դեմ հանցագործություն» որակումը, Անտանտի պետությունների 1915թ. մայիսի 24-ի Հայտարարության հիման վրա:

Հանձնաժողովի կողմից ներկայացված փաստաթղթերում հստակ ձևակերպվեց Հայտարարության բուն էությունը որպես «հանցագործություն մարդկության և քաղաքակրթության դեմ, որի համար անձնական պատասխանատվություն են կրում թուրքական կառավարության բոլոր անդամները, ինչպես և տեղական այն ներկայացուցիչները, ովքեր այդ կոտորածների մասնակիցն են եղել»:

1964

- *Նոյեմբերի 1-ին* Քենտերբերիի արքեպիսկոպոս և Համայն Անգլիայի մետրոպոլիտ Մայքլ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ին ուղղված նամակում հավաստիացրեց, որ 1965թ. ապրիլի 24-ի՝ ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա կապակցությամբ աննձամբ կոչ կուղղի իր երկրի բնակչությանը՝ միանալու և աղոթելու այդ օրը՝ հանուն հայերի հիշատակի:

- *Նոյեմբերի 7-ին* Հռոմի Պողոս 6-րդ պապը, պատասխանելով Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի նամակին, տեղյակ պահեց, որ հրավիրել է կաթոլիկ եկեղեցու բոլոր թեմերի առաջնորդների համահավաք և նրանց կոչ է արել միանալ Հայ առաքելական եկեղեցու առաջարկությանը՝ 1965թ. ապրիլի 24-ին հարգել ու նշել հայ ժողովրդի անմեղ զոհերի հիշատակը:

1965

- *Հունվարի 25-ին և 27-ին* Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի լիագումար նիստերում երկու անգամ իր ելույթում 1915թ. Թուրքիայում բնակվող մեկ և կես միլիոն անմեղ հայերի կոտորածներին անդրադարձավ Կիպրոսի արտաքին գործերի նախարար Կիպրիանուն, որը խիստ քննադատելով Ասամբլեայում ելույթ ունեցած Թուրքիայի դեսպանին, երբ վերջինս հայերի կոտորածները համարեց «այսպես կոչված կոտորածներ», ափսոսանք հայտնեց, որ աշխարհում միայն հայերը նշեցին բնաջնջված զոհերի հիշատակի հիսնամյակը:

- *Ապրիլի կեսերին* ԱՄՆ-ի Կալիֆորնիայի նահանգային խորհրդարանը իր հերթական նստաշրջանում ընդունեց թիվ 274 բանաձևը, որը կրում էր «Հայերի զոհերի հիշատակի օրվա մասին» խորագիրը: Դատապարտելով հայերի կոտորածների ժամանակ մեծ տերությունների ցուցաբերած անտարբեր վերաբերմունքը՝ թուրքական պետության վայրագ ոճրագործությունը, որին զոհ դարձան մեկ և կես միլիոն անմեղ հայեր, խորհրդարանն իր գոհունակությունը հայտնեց եղեռնից փրկված 140 հազար այն հայերին, ովքեր բնակություն հաստատեցին Կալիֆորնիայի նահանգում և ի-

րենց ներդրումն ունեցան տնտեսության, կրթության և մշակույթի բնագավառում: Ելնելով վերոհիշյալից՝ նահանգի խորհրդարանը Ապրիլի 24-ը սահմանեց հայ զոհերի հիշատակի օր:

- *Ապրիլի 20-ին* Ուրուգվայի Սենատը և Ներկայացուցիչների պալատը գլխավոր ասամբլեայի համատեղ նիստում որոշում կայացրեցին «Հայ նահատակների հիշատակի օրվա» առթիվ, որով սահմանում էր Ապրիլի 24-ը որպես 1915թ. ազգային կոտորածին զոհ գնացած մարդկանց հիշատակի օր:

Որոշումը Ուրուգվայում բնակվող և հասարակական ծառայության մեջ գտնվող հայ վերաբնակների համար Ապրիլի 24-ը համարեց ոչ աշխատանքային օր:

Ընդունված օրենքը միաժամանակ Ուրուգվայի մայրաքաղաքի թիվ 156 դպրոցին շնորհեց «Արմենիա» անունը:

- *Ապրիլի 23-ին* հռչակագրով հանդես եկավ ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի Սան-Ֆրանցիսկո քաղաքի քաղաքագլուխ Ջոն Շելլին, որով 1965թ. սկսած Ապրիլի 24-ը սահմանվում է «Հայ զոհերի հիշատակի օր»:

- *Ապրիլի 24-ին* Մեծ Եղեռնի 50-ամյա տարելիցի առթիվ Երևանում 24 ժամ տևողությամբ, առաջին անգամ խորհրդային հասարակարգում, տեղի ունեցավ հայ ժողովրդի միասնությունն արտահայտող բողոքի ցույց, որին մասնակցեց շուրջ մեկ միլիոն մարդ: Ցուցարարները Խորհրդային Միության կառավարությունից պահանջում էին ճանաչել և դատապարտել հայ ժողովրդի նկատմամբ Թուրքիայի կողմից իրագործված ցեղասպանությունը, Հայաստանի մայրաքաղաքում կառուցել Մեծ Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթող:

- *Ապրիլի 29-ին* ելույթ ունենալով ԱՄՆ-ի կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում, կոնգրեսական, ԱՄՆ-ի ապագա պրեզիդենտ Ջ. Ֆորդը (1974-1977թթ.) հայտարարեց, որ, հիշելով 1915թ. իրադարձությունները, խորը վշտով է նշում թուրքերի կողմից հայերի նկատմամբ իրագործված ցեղասպանության 50-րդ տարելիցը և կոչ արեց լռությամբ հարգել այն՝ արտահայտելով հազարավոր ամերիկացիների ցավակցությունը:

- *Հուլիսի 15-ին* Ֆինլանդիայի մայրաքաղաք Հելսինկիում տեղի ունեցած խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսը դատապարտեց Հայոց ցեղասպանությունը, արձանագրելով, որ «ընթացիկ տարին 50-րդ տարելիցն է հայկական ջարդերի, որոնք Օսմանյան Թուրքիան կազմակերպել էր մի ամբողջ ժողովրդի բնաջնջման միջոցով ազգային հարցը լուծելու նպատակով: Այդ ցեղասպանությունն արժեցավ ավելի քան մեկուկես միլիոն ազատատենչ հայերի, այսինքն՝ հայ ժողովրդի երկու երրորդի կյանքը»:

1973

- ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի ազգային փոքրամասնությունների հանդեպ կիրառվող խտրականության կանխման և պաշտպանության ենթահանձնախմբի 26-րդ նստաշրջանում քննարկվեց և միաժամանակ ընդունվեց Ռուանդայի ներկայացուցիչ Նիկոդեմ Ռուխաշիանկիկոյի՝ ցեղասպանությունը կանխելու և դրա համար պատժելու հարցին նվիրված նախնական զեկուցումը, որի 30-րդ ենթակետում Օսմանյան

կայսրությունում հայերի ջարդը որակվում էր որպես «20-րդ դարի առաջին ցեղասպանություն»:
- Ներկայացված այդ նույն զեկուցումը քննարկվեց ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի 30-րդ նստաշրջանում: Թուրքիայի և մի շարք այլ երկրների ներկայացուցիչները պահանջեցին հանել 30-րդ ենթակետը: Զեկուցումը վերադարձավ ենթահանձնախումբ՝ վերամշակման:

1974

- *Հունիսի 5-ին* Վաշինգտոնում տեղի ունեցավ Հայ հեղափոխական դաշնակցության Ամերիկայի Միացյալ Նահանգների 81-րդ պատգամավորական ժողովի կողմից հիսուն հոգուց կազմված պատվիրակության հանդիպումը ԱՄՆ-ի պետական քարտուղարության ղեկավարության ներկայացուցիչների հետ, որի ժամանակ քննարկվեցին Հայկական հարցի հետ առնչվող բազմաթիվ հարցեր:

1975

- *Ապրիլի 9-ին* ԱՄՆ-ի կոնգրեսի ներկայացուցիչների պալատը բանաձև (թիվ 148) ընդունեց 1975թ. ապրիլի 24-ը «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման ազգային օր» հայտարարելու մասին: Բանաձևը մերժվեց:

1976

- *Մայիսի 11-ին* Ամերիկայի Հայկական համագումարի պատվիրակությունը (մասնակցությամբ Վահագն Տատրյանի, Դենիս Փափազյանի, Լևոն Սարգսյանի, Տիգրան Ամսարյանի, Ռիչարդ Հովհաննիսյանի, Ավետիս Սաճճյանի և Շավարշ Թորիկյանի) ընդունելության արժանացավ ԱՄՆ-ի Կոնգրեսի մի ենթահանձնաժողովի կողմից, որը քննարկում էր ցեղասպանության հարցը՝ կապված ԱՄՆ-ի ապագա արտաքին քաղաքականության հետ:

Ունկնդրությունից հետո կազմվեց մի փաստաթուղթ, որն առանձին գրքույկով հրատարակվեց և ներկայացվեց Կոնգրեսի անդամներին:
- *Հոկտեմբերի 21-ին* ԱՄՆ-ի պրեզիդենտի թեկնածու Ջիմի Կարտերը, նախագահական ընտրություններից առաջ, ամերիկահայերին ուղղեց իր հետևյալ ուղերձը. «Հայաստանի պատմությունը, որն ընդգրկում է երեք հազար տարիներ, պատմություն է, ճնշող դժվարությունների դեմ գոյատևման, տիրապետողների դեմ հաղթանակի, ինչպես նաև մարդկային ողբերգական տառապանքի վկայություն: Մոտավորապես մեկ և կես միլիոն մարդ զոհվեց «20-րդ դարի առաջին ցեղասպանության ժամանակ», այսուհանդերձ, հակառակ նրան, որ պատմական ողբերգությունը դեռևս չի սրբագրվել, հայերը որտեղ էլ որ գտնվելիս լինեն, շարունակում են պահպանել իրենց մշակույթը և ազատության ձգտումը... Ես համակրում եմ հայ ժողովրդի ձգտումներին և ըմբռնում եմ իրենց հայրենիքը կրկին ազատ տեսնելու նրանց մղմանը: Ավելին, ես խիստ կողմնակից եմ Ցեղասպանության միջազգային համաձայնագիրը բարեփոխելու պահանջին...»:

Փաստորեն, նախընտրական քարոզարշավին մասնակցող Ջ. Կարտերի հայտարարությունը լոկ հայերի համակրանքը շահելու մի խորամանկ քայլ էր, որովհետև ԱՄՆ-ի պրեզիդենտ ընտրվելուց հետո ամերիկահայերին ապրիլյան օրերին հղած իր ուղերձներում ոչ մի անգամ չօգտագործեց ցեղասպանություն բառը:

1978

- ՄԱԿ-ի ենթահանձնախումբը կրկին անդրադառնալով դեռևս 1973 թվականի 30-րդ նստաշրջանին ներկայացված բանաձևի նախագծին՝ ամբողջությամբ զեկուցումից հանեց ցեղասպանության մասին արձանագրված պատմական մասը, որտեղ հիշատակվում էր նաև հայերի ցեղասպանության մասին:
- *Մայիսի 16-ին* ԱՄՆ-ի նախագահ Ջիմի Կարտերը հայտարարեց, որ «... ընդհանուր առմամբ աշխարհում չգիտեն, որ 1916թ. նախորդած տարիներին ստույգ քայլեր կատարվեցին ողջ հայ ժողովրդին ոչնչացնելու համար, որը հավանաբար որևէ խմբի հետ երբևէ կատարված ամենամեծ ողբերգություններից մեկն էր: Եվ որևէ Նյուրնբերգյան դատավարություն տեղի չունեցավ»:

1979

- ՄԱԿ-ի ենթահանձնախումբը նույն բանաձևը ներկայացրեց ՄԱԿ-ի հանձնաժողովի 35-րդ նստաշրջանի քննարկմանը: Ձայների մեծամասնությամբ որոշվեց վերականգնել 30-րդ ենթակետը:

1980

- *Մարտի 27-ին* Կանադայի Օնտարիո նահանգի օրենսդրական ժողովը միաձայն որոշում ընդունեց խնդրել Կանադայի կառավարությանը պաշտոնապես ճանաչել և դատապարտել այն գազանությունները, որոնք Թուրքիայի կառավարությունն իրականացրել է հայ ժողովրդի նկատմամբ, որը հետապնդումների և ցեղասպանության զոհ դարձավ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Օրենսդրական ժողովը միաժամանակ երաշխավորում է Կանադայի կառավարությանը ողջ Կանադայում յուրաքանչյուր տարի Ապրիլի 24-ը հայտարարել Հիշատակի օր ողջ հայ համայնքի համար:
- *Ապրիլի 10-ին* Կանադայի Քվեբեկ նահանգի Ազգային Ասամբլեան հայտարարություն ընդունեց Թուրքիայում հայերի ցեղասպանության դատապարտման մասին:

1981

- *Ապրիլի 22-ին*՝ Մեծ եղեռնի հիշատակի օրվա նախօրյակին, ամերիկահայերին ուղղված իր ուղերձում ԱՄՆ-ի նախագահ Ռոնալդ Ռեյգանը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ ասվում էր. «Ինչպես վաղօրոք կատարված հայկական ցեղասպանությունը, ապա դրան հետևած Կամբոջա-

յի ցեղասպանությունը և այլ բազմաթիվ ժողովուրդների բազմաթիվ կոտորածները, Հոլոքոստի դասերը երբեք չպետք է մոռացվեն»:

1982

- Թել-Ավիվում (Իսրայել) տեղի ունեցավ բնաջնջման և ցեղասպանության հարցերին նվիրված միջազգային գիտական կոնֆերանս:
- *Ապրիլի 29-ին* Կիպրոսի հանրապետության Ներկայացուցիչների պալատը Հայոց ցեղասպանության տարելիցի առթիվ որոշում ընդունեց, որտեղ ասվում էր, որ ներկայացուցիչների պալատը «... սարսափով ընդունում և դատապարտում է հայ ժողովրդի հանդեպ կատարված ոճիրը, որը բնորոշվում է որպես ցեղասպանություն և, որն արմատախիլ արեց հայերին իրենց նախնիների հողերից»:

1983

- *Հուլիսի 24-ից օգոստոսի 10-ը* Կանադայի Վանկուվեր քաղաքում Եկեղեցիների Համաշխարհային խորհուրդը քննարկեց «Հայոց ցեղասպանության մասին» զեկույցը և ընդունած որոշման մեջ արձանագրեց. «...մենք ևս մեկ անգամ պետք է հիշեցնք դարասկզբին Թուրքիայում մեկուկես միլիոն հայերի ողբերգական կոտորածները և մյուս կես միլիոնի բռնագաղթն իրենց պատմական հայրենիքից»:

1984

- *Հունվարի 6-ին* Վեննի քաղաքի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ Ֆրանսիայի պրեզիդենտ Ֆրանսուա Միտերանը հրապարակային իր ելույթում դատապարտեց Հայոց ցեղասպանությունը:
- *Ապրիլի 13-ից 16-ը* Փարիզում տեղի ունեցավ հասարակական հիմունքներով գործող Ժողովուրդների մշտական դատարանի հատուկ նստաշրջանը, որը քննարկեց հայերի ցեղասպանության հարցը: Ընդունվեց հայերի ցեղասպանությունը դատապարտող որոշում, որտեղ ասվում է՝

ա. հայ ազգաբնակչությունը հանդիսացել է ու հանդիսանում է մի ժողովուրդ, որի, ինչպես անհատական, այնպես էլ հավաքական հիմնական իրավունքները միջազգային իրավունքի հիման վրա, պարտավոր էին և պարտավոր են հարգել.

բ. հայ ազգաբնակչության բնաջնջումը տեղահանությամբ ու ջարդով, 1948 թվականի դեկտեմբերի 9-ին ցեղասպանության ոճրի կանխարգելման ու պատժելիության Համաձայնագրի համապատասխան, կազմում է վաղեմության ժամկետը չունեցող մի ոճիր...

գ. երիտթուրքերի կառավարությունը հանցավոր է որպես այս ցեղասպանության հեղինակ, 1915-1917 թվականներին կատարված արարքների տեսանկյունից.

դ. հայկական ցեղասպանությունը նաև «միջազգային ոճիր» է, և թուրքական պետությունը պարտավոր է ստանձնել նրա պատասխանատվությունը՝ առանց փորձելու պատրվակներ ներկայացնել իր գոյության

ընթացքում տեղի ունեցած որևէ ընդհարման համար այդ պատասխանատվությունից խուսափելու նպատակով.

ե. այս պատասխանատվությունից հետևում է գլխավոր պարտավորությունը՝ պաշտոնապես ճանաչել այս ցեղասպանության իրողությունը, դրանով իսկ նաև հայ ժողովրդի կրած վնասները.

զ. Միացյալ Ազգերի Կազմակերպությունը և նրա անդամներից յուրաքանչյուրը իրավասու են պահանջել այս ճանաչումը և հայ ժողովրդին օժանդակել այս նպատակի համար:

- *Սեպտեմբերի 10-ին* ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը ընդունեց բանաձև (թիվ 247), որը պահանջեց կառավարությունից 1985թ. ապրիլի 24-ը հայտարարել «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման ազգային օր»:

- ԱՄՆ-ի Սենատ ներկայացվեց թիվ 241 բանաձևը, որը կոչ էր անում կառավարությանը արտաքին քաղաքականության ծրագրման և իրականացման ընթացքում հաշվի առնել հայոց եղեռնի հիշողությունը: Բանաձևը քննարկվեց և ընդունվեց Սենատի արտաքին գործերի հանձնաժողովի կողմից, սակայն, հետագայում, կառավարության ճնշման տակ, այն կասեցվեց:

1985

- *Ապրիլի 23-ին* Արգենտինայի Ազգային կոնգրեսը միաձայն որոշում ընդունեց հայերի ցեղասպանությունը դատապարտելու մասին: Արգենտինայի արտաքին գործերի մինիստրությանը հանձնարարվեց հայկական ցեղասպանության միջազգային ճանաչմանը և դատապարտմանը նպաստող քաղաքական կուրս վարել:

- *Ապրիլի 23-ին* հայերի ցեղասպանությունը դատապարտելու մասին որոշում ընդունեց Ուրուգվայի Ազգային համագումարը:

- *Հունիսի 4-ին* ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատ ներկայացվեց թիվ 192 բանաձևը, որը պահանջում էր կառավարությունից 1985թ. ապրիլի 24-ը երկրում հայտարարել որպես «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման օր»: Բանաձևը քննարկվեց, սակայն մերժվեց ձայների մեծամասնությամբ:

- Նույն բովանդակությամբ բանաձև (թիվ 102) ներկայացվեց ԱՄՆ-ի Սենատ և նույնպես մերժվեց:

- *Հուլիսի 2-ին* ՄԱԿ-ի ենթահանձնախմբի 38-րդ նստաշրջանում քննարկվեց և հաստատվեց Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Բենջամեն Ռեյտեկերի զեկուցումը, որի 24-րդ ենթակետում «1915-1916թթ. հայերի օսմանյան ջարդը» որակվում էր որպես ցեղասպանության օրինակ:

1986

- *Փետրվարի 19-ին* ԱՄՆ-ի Մասսաչուսետս նահանգի նահանգապետ Մայքլ Դուկակիսը 1986թ. ապրիլի 24-ը հռչակեց որպես հայ նահատակների հիշատակի օր:

- *Մարտի 13-ին* ԱՄՆ-ի Միչիգան նահանգի նահանգապետ Ջեյմս Բլեն-չարդը 1986թ. ապրիլի 24-ը հայտարարեց որպես հայ նահատակների հի-շատակի օր:
- *Ապրիլի 3-ին* ԱՄՆ-ի Կոլորադո նահանգի նահանգապետ Ռիչարդ Դ. Լեմմը 1986թ. ապրիլի 24-ը հռչակեց որպես հայ նահատակների հիշատա-կի օր:
- *Ապրիլի 4-ին* ԱՄՆ-ի Նյու Յորք նահանգի Ասսամբլեան բանաձև ընդու-նեց ապագայում հատուկ քննարկման հարց դարձնել Օսմանյան կայսրու-թյունում հայերի կոտորածներին ճիշտ գնահատական տալու հարցը:
- *Ապրիլի 24-ին* ԱՄՆ-ի Նյու-Ջերսի նահանգի նահանգապետ Թոմաս Խ. Քինը 1986թ. ապրիլի 24-ը հռչակեց հայ նահատակների հիշատակի օր:
- *Մայիսի 6-ին* ԱՄՆ-ի Նյու Յորք նահանգի Սենատը կրկին անգամ, նույն բովանդակությամբ, ինչ ներկայացվել էր 1986թ. ապրիլի 4-ի նիստի քննարկմանը, ընդունեց բանաձև՝ նախապատրաստելու և քննարկելու Հայերի ցեղասպանությանը ճիշտ գնահատական տալու հարցը:

1987

- *Ապրիլ ամսին* ԱՄՆ-ի Սենատ ներկայացվեց թիվ 241 բանաձևը, որը պահանջում էր կառավարությունից արտաքին քաղաքականության ծրագրման և իրականացման ընթացքում հաշվի առնել հայոց եղեռնի իրա-կանությունը: Սակայն այն մերժվեց:
- Նույն բովանդակությամբ բանաձև (թիվ 247) ներկայացվեց ԱՄՆ-ի կոն-գրեսի Ներկայացուցիչների պալատ և ձայների մեծամասնությամբ մերժ-վեց:
- *Ապրիլի 10-ին* ԱՄՆ-ի Կոլորադո նահանգի նահանգապետ Ռոյ Ռոմերը 1987թ. ապրիլի 24-ը նահանգում հռչակեց որպես հայ նահատակների հի-շատակի օր:
- *Ապրիլի 15-ին* «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» Եվրախորհրդարանի քաղաքական հարցերի կոմիտեի կողմից նախա-պատրաստված զեկուցումը ներկայացվեց նախնական քննարկման: Հիմնական զեկուցողը պարոն Ջ. Վանդեմյուլբրուկն էր: Կոմիտեն որոշում կայացրեց հարցի քննարկումը տեղափոխել Եվրախորհրդարան:
- *Ապրիլի 21-ին* ԱՄՆ-ի Նյու Յորք նահանգի նահանգապետ Մարիո Մ. Կուոմոն նահանգում 1987թ. ապրիլի 24-ը հայտարարեց հայ նահատակնե-րի հիշատակի օր:
- *Ապրիլի 24-ին* ԱՄՆ-ի Մերիլենդ նահանգի նահանգապետ Վիլյամ Դո-նալդ Շեֆերը 1987թ. ապրիլի 24-ը նահանգում հռչակեց որպես հայերի ցե-ղասպանության զոհերի հիշատակի օր:
- *Մայիսի 5-ին* ԱՄՆ-ի Նյու Յորք նահանգի օրենսդրական ժողովը որոշում կայացրեց նահանգում 1987թ. ապրիլի 24-ը հայերի ցեղասպանության զո-հերի հիշատակի օր հայտարարելու մասին:
- *Հունիսի 18-ին* Եվրախորհրդարանն ընդունեց հատուկ բանաձև «Հայ-կական հարցի քաղաքական լուծման մասին»: Ինչպես արձանագրված է բանաձևի ներածական մասում, Եվրոպայի խորհրդարանը բանաձևն ըն-դունելիս հաշվի էր առել նաև ներքոհիշյալ հանգամանքները, ըստ որոնց.

1. Թուրքիայում բնակվող հայ ժողովրդի պատմության ճանաչումը ենթադրում է նրա ճանաչումը որպես ինքնատիպ էթնիկական, մշակութային, լեզվական և կրոնական փոքրամասնություն.

2. Հայերը, ելնելով Միավորված Ազգերի Կազմակերպության 1948թ. ընդունած կոնվենցիայի հիմնադրույթներից, 1915թ. կոտորածները որակում են որպես կազմակերպված ցեղասպանություն:

3. Թուրքական պետությունը մերժում է ցեղասպանության մեղադրանքը և դրանով իսկ զրկում է հայ ժողովրդին իր սեփական պատմության իրավունքից:

4. Մինչև այժմ պատմականորեն ապացուցված հայկական ցեղասպանությունը չի ենթարկվել քաղաքական դատապարտման և չի ստացել իր համապատասխան հատուցումը:

5. Թուրքիայի կողմից հայկական ցեղասպանության ճանաչումն այսուհետև պետք է դիտվի որպես հայերի նկատմամբ բարոյական իրավունքի վերականգնման խորապես մարդկային ակտ, որը միայն պատիվ կարող է բերել թուրքական կառավարությանը:

6. Թուրքիայի՝ իրար հաջորդող կառավարությունների անհաշտ դիրքորոշումը հայկական հարցի նկատմամբ ոչ մի կերպ չի նպաստել լարվածության թուլացմանը:

Եվրոպայի խորհրդարանի որոշումը հիմնականում ներառում է հետևյալ հարցադրումները.

ա. հայկական հարցը, ինչպես նաև Թուրքիայում ազգային փոքրամասնությունների հարցը, պետք է քննարկվեն Թուրքիայի և Եվրոպական տնտեսական համագործակցության միջև գոյություն ունեցող հարաբերությունների շրջանակներում, և Թուրքիայում ժողովրդավարությունը կարող է արմատապես հաստատվել միայն այն պայմանով, երբ նա ճանաչի և հարստացնի իր պատմությունը իր իսկ երկրում առկա էթնիկական և մշակութային այլազանությամբ:

բ. 1915-1917թթ. Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 1948թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «Ցեղասանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին» կոնվենցիայի համաձայն, հանդիսանում են ցեղասպանություն:

գ. ժամանակակից Թուրքիան պատասխանատու չի կարող համարվել Օսմանյան կայսրության հայ բնակչության ողբերգության համար և գտնում է, որ պատմական այդ իրադարձությունների ճանաչումը որպես ցեղասպանություն, առիթ չի կարող հանդիսանալ քաղաքական, իրավական կամ նյութական որևէ պահանջի այսօրվա Թուրքիայի նկատմամբ:

դ. Եվրոպական խորհուրդը պետք է ճշում գործադրի ներկայիս թուրքական կառավարության վրա, որպեսզի նա ճանաչի 1915-1917թթ. հայերի հանդեպ կազմակերպված ցեղասպանությունը և դրանով նպաստի քաղաքական երկխոսության հաստատմանը Թուրքիայի և հայերի լիազոր պատվիրակների միջև:

ե. ներկայումս Թուրքիայի կառավարության կողմից հայ ժողովրդի դեմ անցյալում երիտթուրքական կառավարության գործադրած ցեղասպանության ճանաչումից հրաժարվելը, Հունաստանի հետ գոյություն ունեցող վիճելի հարցերում միջազգային իրավական նորմերի կիրառումից հրա-

ժարվելը, Կիպրոսում թուրքական օկուպացիոն զորքերի պահպանումը, ինչպես նաև քրդական իրադարձությունների ժխտումը, Թուրքիայում իսկական պառլամենտական ժողովրդավարության բացակայությունը, անհատական, հասարակական ու հատկապես կրոնական ազատությունների ոտնահարումը հանդիսանում են անհաղթահարելի արգելքներ եվրոպական տնտեսական համագործակցության կազմի մեջ Թուրքիայի հնարավոր ընդունման հարցի քննարկման համար:

զ. Եվրոպական խորհրդարանը, նկատի ունենալով հայ ժողովրդի ողբերգությունը, միանում է ազգային ինքնատիպությունը զարգացնելու նրա ցանկությանը՝ որպես փոքրամասնություն իր իրավունքները պահպանելու և անարգել օգտվելու մարդու և քաղաքացիների իրավունքներից:

է. Խորհրդարանը վճռականորեն պահանջում է, որ Թուրքիայում ապրող հայ փոքրամասնության ազգային ինքնության, նրա լեզվի, կրոնի, մշակույթի և կրթության համակարգի նկատմամբ ցուցաբերվի արդար վերաբերմունք և հանդես է գալիս պատմական հուշարձանների պահպանության գործի բարելավման, այդ թվում նաև թուրքահայերի կրոնական-ճարտարապետական ժառանգության պահպանման ու կոնսերվացման օգտին, ցանկություն է հայտնում, որպեսզի եվրոպական տնտեսական համագործակցությունն ուսումնասիրի այդ նպատակին օժանդակող հնարավոր միջոցներ ձեռնարկելու հարցը:

ը. Թուրքիան պետք է անշեղորեն պահպանի իր երկրում ոչ մահմեդական փոքրամասնությունների իրավունքները, ինչպես որ այդ պարտադրում են նրան 1923թ. Լոզանի պայմանագրի 37-45-րդ հոդվածները:

թ. ժամանակակից Թուրքիայի տարածքում հուշարձանների պահպանությունը, ինչպես նաև թուրքահայերի կրոնական ճարտարապետական ժառանգության պահպանումն ու կոնսերվացումը պետք է դիտել որպես դարերի ընթացքում զարգացում ապրած բոլոր քաղաքակրթությունների, մասնավորապես, Օսմանյան կայսրության մաս կազմած քրիստոնյա փոքրամասնությունների մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված լայն քաղաքականության բաղկացուցիչ մաս:

ժ. կոչ անել եվրոպական տնտեսական համագործակցությանը՝ Թուրքիայի հետ համագործակցել նաև մշակույթի ասպարեզում, նրա տարածքում գտնվող քրիստոնեական կամ այլ, ինչպես օրինակ՝ դասական անտիկ շրջանի, խեթական, օսմանյան և ուրիշ քաղաքակրթությունների ժառանգությունը պահպանելու նպատակով:

ժա. վճռականորեն դատապարտում է առանձին կազմակերպությունների կողմից ի գործ դրվող բոլոր բռնի գործողություններն ու ահաբեկչական ձևերը, որոնք հատկանշական չեն հայ ժողովրդի համար և հաշտության կոչ է անում հայերին ու թուրքերին:

ժբ. կոչ է անում Եվրոպական տնտեսական համագործակցության անդամ երկրներին հռչակելու «20-րդ դարում գործադրված ցեղասպանությունների և մարդկության դեմ ոճրագործությունների հիշատակի օր», մասնավորապես, այն ոճրագործությունների, որոնց զոհ գնացին հայերն ու հրեաները:

ժգ. վավերացնում է իր պարտավորությունը՝ իրապես նպաստելու հայ և թուրք ժողովուրդների առջև բանակցությունների իրականացման նպատակը հետապնդող նախաձեռնություններին:

Թուրքիան, փաստորեն, ելնելով այն իրողությունից, որ, ինչպես Եվրոպական խորհրդարանը, այնպես էլ Միավորած Ազգերի Կազմակերպությունն իրավաբանական տեսանկյունից սանկցիաների կիրառման իրավունքներով օժտված չեն, ընդհանրապես հրաժարվեց բանաձևի գոյության փաստն ընդունելուց:
- Աթենքում (Հունաստան) հրավիրվեց միջազգային գիտական կոնֆերանս՝ նվիրված «Հայկական հարցը և թուրքական ծավալապաշտությունը» թեմային:

1988

- *Նոյեմբերի 22-ին* Հայկական ՍՍՀ Գերագույն խորհուրդն օրենք ընդունեց «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թվականի ցեղասպանության դատապարտման մասին»: Դատապարտելով 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն՝ ընդունված օրենքը Ապրիլի 24-ը հայտարարեց հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր: Առաջարկություն ներկայացվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը 1915 թվականի ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու մասին:
- Օքսֆորդում (Անգլիա) հրավիրվեց «Հիշել հանուն ապագայի» թեմայով միջազգային գիտական նստաշրջան, որտեղ բազմիցս հիշատակվեց Հայոց ցեղասպանությունը:
- Կալիֆորնիայի (ԱՄՆ) համալսարանում հրավիրվեց միջազգային գիտական նստաշրջան «Հայերի ցեղասպանություն. պատմություն, քաղաքականություն, բարոյագիտություն» թեմայով:
- Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի Սան-Անտոնիոյում կայացած համագումարը հատուկ որոշում ընդունեց հայերի ցեղասպանության մասին, կոչ անելով խորհրդի բոլոր անդամներին «դիմել իրենց երկրների կառավարություններին՝ ճնշում գործադրելու Թուրքիայի վրա՝ հայերի ցեղասպանության փաստը ճանաչելու նպատակով»:
- *Սեպտեմբերին* սենատոր Ռոբերտ Դոուլը կրկին անգամ Հայոց ցեղասպանության 75-րդ տարելիցը նշելու պատրվակով Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևի նախագիծ ներկայացրեց ԱՄՆ-ի կոնգրեսին: Հարցը օրակարգ չմտավ, չնայած բանաձևի նախագծի տակ իրենց ստորագրություններն էին դրել վաթսունից ավելի սենատորներ:

1989

- *Նոյեմբերի 7-ին* ԱՄՆ-ի հրեաների համայնքների միությունն ընդունեց բանաձև «Մեկ միլիոն հայերի 1915թ. ցեղասպանությունը» խորագրով, որտեղ ասվում էր. «Մեկ և կես միլիոն հայերի 1915թ. ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում արդի պատմության ամենաամոթալի էջերից է: Մենք հասկանում ենք, որ այսօրվա Թուրքիան միանգամայն տարբերվում է 1915թ. Օսմանյան Թուրքիայից: Մենք ակնկալում ենք, որ ժամանակակից Թուրքիան դասեր պետք է քաղի անցյալի սխալներից: Ուստի և Ամերիկյան հրեաների համայնքների միությունը որոշում է.

1. ԱՄՆ-ի հրեաների Ողջակիզման թանգարաններում ներառել հայոց և այլ ցեղասպանությունների մասին բաժիններ...

2. Դաստիարակել այս ողբերգության փաստերով և դասեր քաղել»:

1990

- *Հունվարի 30-ին* ԱՄՆ-ի Վիսկոնսին նահանգի օրենսդրական ժողովը բանաձև ընդունեց 1915-1923թթ. հայերի ցեղասպանության յոթանասունհինգ ամյակի առթիվ նահանգում 1990թ. ապրիլի 24-ը Հիշատակի օր հայտարարելու մասին:

- *Փետրվարի 20-ին և 27-ին* ԱՄՆ-ի Կոնգրեսը կրկին անդրադարձավ սենատոր Ռ. Դոուլի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելու վերաբերյալ ներկայացրած բանաձևի քննարկմանը: Բուռն քննարկումներից հետո Սենատը մերժեց բանաձևի ընդունումը:

- *Մարտի 13-ին* ԱՄՆ-ի Կալիֆորնիայի նահանգի օրենսդրական ժողովը բանաձև ընդունեց 1990թ. ապրիլի 24-ը նահանգում հայերի ցեղասպանության հիշատակի օր հայտարարելու մասին:

- *Մարտի 14-ին* ԱՄՆ-ի Կոլորադո նահանգի նահանգապետ Ռոյ Ռոմերը հռչակագիր հրապարակեց 1990թ. ապրիլի 24-ը նահանգում հայ նահատակների հիշատակի օր սահմանելու մասին:

- *Մարտի 23-ին* ԱՄՆ-ի Մասսաչուսետս նահանգի նահանգապետ Մայկլ Ս. Դուկակիսը Հռչակագիր ստորագրեց 1990թ. ապրիլի 24-ը հայ նահատակների հիշատակի օր հայտարարելու մասին և կոչով դիմեց նահանգի բնակչությանն ակտիվորեն մասնակցել այդ առթիվ կազմակերպվող միջոցառումներին:

- *Մարտի 26-ին* ԱՄՆ-ի Օկլախոմա նահանգի օրենսդրական ժողովը բանաձև ընդունեց 1990թ. ապրիլի 24-ին հայերի ցեղասպանության 75-րդ տարելիցի առթիվ նահանգում հայտարարել հայերի հիշատակի օր:

- *Մարտի 27-ին* ԱՄՆ-ի Միչիգան նահանգի Ներկայացուցիչների պալատը, Սենատի հետ համաձայնեցված, ընդունեց բանաձև, որով 1990թ. ապրիլի 24-ը սահմանվում է Հիշատակի օր և կոչ է արվում նահանգի բնակչությանը մասնակցել հայերի ցեղասպանությանը նվիրված միջոցառումներին:

- *Ապրիլի 3-ին* ԱՄՆ-ի Իլլինոյս նահանգի Ներկայացուցիչների պալատը որոշում կայացրեց 1990թ. ապրիլի 24-ը հայտարարել հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր:

- *Ապրիլի 4-ին* ԱՄՆ-ի Ռոդ-Այլենդ նահանգի Սենատը որոշում ընդունեց նահանգում ապրիլի 24-ի օրը նշել որպես հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր:

- *Ապրիլի 5-ին* ԱՄՆ-ի Նյու-Ջերսի նահանգի Գլխավոր ասամբլեան, հիմք ընդունելով ԱՄՆ-ի Սենատի թիվ 212 և Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի թիվ 417 բանաձևը, 1990թ. ապրիլի 24-ը հռչակեց որպես հայ նահատակների հիշատակի օր: Միաժամանակ Գլխավոր ասամբլեան հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որով կոչ էր անում ԱՄՆ-ի կոնգրեսին հավանություն տալ, իսկ ԱՄՆ-ի պրեզիդենտին՝ ստորագրել բանաձևը և ապրիլի 24-ը հռչակել հայ նահատակների հիշատակի օր:

- *Ապրիլի 5-ին* ԱՄՆ-ի Իլլինոյս նահանգի Սենատը որոշում կայացրեց և դիմեց նահանգապետ Ջեյմս Թոմպսոնին 1990թ. ապրիլի 24-ը հայտարարել 1915-1923թթ. հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր:
- *Ապրիլի 16-ին* ԱՄՆ-ի Միչիգան նահագի նահանգապետ Ջեյմս Բլենչարդը 1990թ. ապրիլի 24-ը հռչակեց որպես հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր:
- *Ապրիլի 17-21-ը* Երևանում կայացավ միջազգային գիտական նստաշրջան «Հայերի ցեղասպանություն. պատմություն, տեսություն, քաղաքական պատասխանատվություն» թեմայով, նվիրված հայերի ցեղասպանության 75-րդ տարելիցին:
- *Ապրիլի 18-ին* ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի նահանգապետ Ջորջ Դյուկմեջյանը նահանգում 1990թ. ապրիլի 24-ը հռչակեց որպես Հիշատակի օր:
- *Ապրիլի 19-ին* Կիպրոսի խորհրդարանը հատուկ բանաձև ընդունեց հայերի ցեղասպանությունը դատապարտելու մասին:
- *Ապրիլի 19-ին* ԱՄՆ-ի Մասսաչուսետս նահանգի օրենսդրական ժողովը որոշում կայացրեց նահանգում 1990թ. ապրիլի 24-ը հռչակել որպես 1915-1923թթ. ցեղասպանության հետևանքով զոհ գնացած մեկ միլիոն հինգ հարյուր հազար հայերի Հիշատակի օր:
- *Ապրիլի 19-ին* ԱՄՆ-ի Իլլինոյս նահանգի նահանգապետ Ջեյմս Ռ. Թոմպսոնը ստորագրեց հռչակագիր նահանգում 1990թ. ապրիլի 24-ը հայերի ցեղասպանության յոթանասունհինգ ամյակի առթիվ Հիշատակի օր հայտարարելու մասին:
- *Ապրիլի 19-ին* ԱՄՆ-ի Ալյասկա նահանգի նահանգապետ Ստիվ Կոուպերը նահանգում ապրիլի 24-ը հռչակեց որպես մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունք դրսևորելու հետևանքով զոհերի հիշատակի օր:
- *Ապրիլի 19-ին* ԱՄՆ-ի Պենսիլվանիայի նահանգի նահանգապետ Ռոբերտ Պ. Քեյսին ստորագրեց հռչակագիր 1990թ. ապրիլի 24-ը հայ նահատակների հիշատակի օր սահմանելու մասին:
- *Ապրիլի 20-ին* ԱՄՆ-ի Վաշինգտոն նահանգի նահանգապետ Բուռւ Գարդները ստորագրեց հռչակագիր 1990թ. ապրիլի 24-ը հիշատակի օր հայտարարելու մասին:
- *Ապրիլի 20-ին* ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը հանդես եկավ ամերիկահայերին ուղղված հայտարարությամբ, որտեղ ասվում էր. «... Կոտորածների 75-ամյակին ես կցանկանայի միանալ հայերին և բոլոր ժողովուրդներին, որոնք 1990թ. ապրիլի 24-ը ընդունում են իբրև հայ ժողովրդի 1,5 միլիոնից ավել զոհերի հիշատակի օր»:
- *Ապրիլի 23-ին* ԱՄՆ-ի Ալյասկա նահանգի Սենատը բանաձև ընդունեց հայերի ցեղասպանության 75-րդ տարելիցի կապակցությամբ 1990թ. ապրիլի 24-ը նահանգում հայտարարել հիշատակի օր:
- *Ապրիլի 23-ին* ԱՄՆ-ի Արիզոնա նահանգի նահանգապետ Ռոուզ Մոֆֆորդը հռչակագիր ստորագրեց 1990թ. ապրիլի 24-ը հայերի Հիշատակի օր հայտարարելու մասին:
- *Ապրիլի 23-ին* ԱՄՆ-ի Օրեգոն նահանգի նահանգապետ Նիլ Գոլդշմիդտը հանդես եկավ հռչակագրով և 1990թ. ապրիլի 24-ը նահագում հայտարարեց հայերի հիշատակի օր:

- *Ապրիլի 24-ին* ԱՄՆ-ի Վիսկոնսին նահանգի նահանգապետ Թոմմի Դ. Թոմպսոնը 1990թ. ապրիլի 24-ը հայտարարեց որպես հայ նահատակների հիշատակի օր:
- *Ապրիլի 24-ին* ԱՄՆ-ի Մերիլենդ նահանգի նահանգապետ Վիլյամ Դոնալդ Շեֆերը նահանգում 1990թ. ապրիլի 24-ը հռչակեց որպես հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր:
- *Ապրիլի 24-ին* ԱՄՆ-ի Կոննեկտիկուտ նահանգի նահանգապետը 1990թ. ապրիլի 24-ը հայտարարեց նահանգում որպես Հայաստանի գործերի օր:
- *Ապրիլի 24-ին* ԱՄՆ-ի Վիրջինիայի նահանգի նահանգապետ Լոուրենս Դուգլաս Ուայլդերը ստորագրեց հռչակագիր, որը 1990թ. ապրիլի 24-ը հայտարարեց հայ նահատակների հիշատակի օր:
- *Ապրիլի 24-ին* ԱՄՆ-ի Նյու-Խեմպշիր նահանգի Սենատը կոչ արեց նահանգի բնակչությանը հարգել 1915-1923թթ. ցեղասպանությանը զոհ դարձած մեկ և կես միլիոն հայերի հիշատակը և 1990թ. ապրիլի 24-ը հայտարարեց Հիշատակի օր:
- *Ապրիլի 27-ին* ԱՄՆ-ի Ռոդ-Այլենդ նահանգի Ներկայացուցիչների պալատը բանաձև ընդունեց Հայոց ցեղասպանության 75-րդ տարելիցը նշելու և 1990թ. ապրիլի 24-ը զոհերի հիշատակի օր հայտարարելու մասին:
- *Ապրիլի 27-ին* ԱՄՆ-ի Ֆլորիդա նահանգի նահանգապետ Բոբ Մարտինեսը հանդես եկավ հռչակագրով և 1990թ. ապրիլի 24-ը նահանգում հայտարարեց հայ նահատակների հիշատակի օր:
- *Հունիսի 29-ին* ԱՄՆ-ի Ռոդ-Այլենդ նահանգի նահանգապետ Էդվարդ Դ. Դիպրետը ստորագրեց Հռչակագիր 1990թ. ապրիլի 24-ը նահանգում հայ նահատակների հիշատակի օր հայտարարելու մասին:

1993

- *Մայիսի 5-ին* Արգենտինայի Սենատը բանաձև ընդունեց, ըստ որի Սենատը հռչակում է. «Իր ողջ համերաշխությունը հայկական համայնքի հետ, որը հանդիսանում է 20-րդ դարի առաջին ցեղասպանության զոհը, կրկին նշելով մարդկության դեմ կատարված հանցագործության տարելիցը, որը 1 միլիոն 500 հազար հայերի կործանումն էր 1915-1917թթ. թուրքական կառավարության ձեռքերով»:

1994

- *Ապրիլի 21-ին* ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի օրենսդրական ժողովը բանաձև ընդունեց ապրիլի 24-ը հիշատակի Ազգային Օր հռչակելու մասին:
- *Ապրիլի 22-ին* Ֆրանսիայի Ազգային ժողովի կոմունիստական պատգամավորական խմբակցությունը հանդես եկավ օրենսդրական առաջարկությամբ, որտեղ ասվում էր. «Ֆրանսիայի Հանրապետությունը, ճանաչելով ցեղասպանությունը, որին 1915-1922թթ Օսմանյան կառավարության որոշմամբ զոհ գնաց հայ ժողովուրդը, պարտավորվում է յուրաքանչյուր տարի նշել նրա հիշատակը և միջազգային հանրությանը ճանաչել տալ մարդկության դեմ գործադրված այդ ոճիրը»:

- *Ապրիլի 20-ին և ապրիլի 22-ին* Ռուսաստանի Պետական Դումայի նստաշրջանում պատգամավորական տարբեր խմբակցություններ հանդես եկան Հայոց ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու առաջարկությամբ: Երկօրյա քննարկումներից հետո՝ ապրիլի 22-ին, Ռուսաստանի Պետական Դուման ընդունեց հայտարարություն, որտեղ ասվում էր. «... Ռուսաստանի Դաշնության Պետական Դումայի նստաշրջանը այդ ողբերգության հիշատակության 79-րդ տարելիցի նախօրեին դատապարտելով հայերի ցեղասպանությունը, արտահայտում է իր խորը ցավակցությունները հայ ժողովրդին և կիսում է իր կարեկցանքը ցեղասպանության զոհ գնացած վերապրողների հետ, որոնք ապրում են Ռուսական Դաշնությունում և կամ ամբողջ աշխարհում: Հիշատակը և խղճմտանքը մնալու է մեզ հետ առահավետ»:
- *Ապրիլի 24-ին* ԱՄՆ-ի պրեզիդենտ Բիլլ Քլինտոնը հռչակագիր ստորագրեց, որտեղ ասվում էր, որ ինքն այս հանդիսավոր օրը միանում է աշխարհի բոլոր հայերին՝ 1915թ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հայերի կոտորածների զոհերի հիշատակի օրը նշելու համար:
- *Ապրիլի 24-ին* Ուրուգվայի Հանրապետության մայրաքաղաք Մոնտեվիդեոյի Անկախության հրապարակում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված բազմահազարանոց միտինգում արտասանած իր ճառում Ուրուգվայի նախագահ Լուիս Ալբերտո Լագաժեն հայտարարեց. «Հայ ժողովրդի դեմ գործադրված ցեղասպանության ոգեկոչման այս միջոցառմանը մենք մասնակցում ենք հանրապետության կառավարության անունից: Մասնակցում ենք ոչ միայն այն պատճառով, որ ազգովին դատապարտում ենք ողջ 20-րդ դարի ընթացքում տեղի ունեցած և տակավին այսօր մեզ տառապանք պատճառող նմանօրինակ գործողությունները, որոնք շարունակվում են Եվրոպայում, Աֆրիկայում և այլուր, այլ մեծարելու համար հայ համայնքին, որին այնքան պարտական է մեր երկիրը: Այն համայնքին, որը մեր երկրին տվել է իր ժողովրդի տաղանդն ու աշխատանքը»:
- *Ապրիլի 27-ին* Իսրայելի խորհրդարանի թիվ 209-րդ նիստում ելույթ ունեցավ Իսրայելի արտաքին գործերի վիոխնախարար Յոսի Բեյլին, որը, պատասխանելով Հայոց ցեղասպանության ճանաչման հարցապնդումին, հայտարարեց, որ հայերի նկատմամբ թուրքերի կողմից ութսուն տարի առաջ գործադրած ջարդերը իրոք ցեղասպանություն էր, և «մենք պետք է քաջալերենք հիշատակությունը, որովհետև այս դեպքը այնպիսի մի պարագա է, որ ամբողջ աշխարհը պարտավոր է հիշել»:

1995

- *Մարտի 6-ին* հրապարակվեց Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը՝ Հայոց ցեղասպանության 80-ամյակի կապակցությամբ ցեղասպանությունը վերապրած հայերին պետական աջակցություն ցուցաբերելու մասին: Այդ հրամանագրի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես բնակվող ցեղասպանությունը վերապրած քաղաքացիների համար նախատեսվեցին սոցիալական պաշտպանությունն ապահովող միջոցառումներ:

- *Մարտի 7-ին* Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում կայացրեց Հայոց ցեղասպանության թանգարանի ստեղծման մասին:
- *Մարտի 18-ից 20-ը* Գերմանիայի Մյուլհայմ քաղաքում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության 80-ամյակին նվիրված գիտաժողով, որտեղ զեկուցումներով հանդես եկան Վ. Տատրյանը, Թաներ Աքչամը և ուրիշներ:
- *Մարտի 23-ին* ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատին կոնգրեսականներ Դեյվիդ Բանիորը և Պիտեր Բլյուտը ներկայացրեցին թիվ 47 բանաձևի նախագիծը Հայոց ցեղասպանության դատապարտման և Ապրիլի 24-ը մշտապես որպես ցեղասպանության զոհերի հիշատակի օր սահմանելու մասին:
- *Մարտի 23-ին* Լոս-Անջելեսում Հայոց ցեղասպանության 80-ամյակի առթիվ կազմակերպված բազմամարդ հավաքում հանդես եկավ Կալիֆորնիայի նահանգապետ Պիտ Ուիլսոնը, որը խստագույնս դատապարտեց 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը:
- *Ապրիլի 3-ին* Կանադայի խորհրդարանը քննարկեց Տորոնտոյից պատգամավոր, հայազգի Սարգիս Ասատուրյանի կողմից ներկայացված բանաձևի նախագիծը մարդկության դեմ ոճիրների դատապարտման մասին՝ նկատի ունենալով Հայոց ցեղասպանության իրողությունը: Խորհրդարանում Կանադայի կառավարության ներկայացուցչի ելույթից հետո հարցի քննարկումը մերժվեց և օրակարգ չմտավ:
- *Ապրիլի 7-ին* Լոս-Անջելեսում Հայոց ցեղասպանության 80-ամյակի ոգեկոչման հանձնախմբի նախաձեռնությամբ Միացյալ Հայ Ավետարանչական եկեղեցու սրահում կազմակերպվեց երկօրյա միջազգային գիտաժողով, որտեղ զեկուցումներով հանդես եկան Ռ. Հովհաննիսյանը, Ի. Չառնին, Հ. Սիմոնյանը, Մ. Նշանյանը, Ռ. Փիրումյանը, Իվ Տերնոնը, Ա. Փափազյանը և ուրիշներ:
- *Ապրիլի 14-ին* Ռուսաստանի դաշնության Պետական Դուման ընդունեց հայտարարություն «1915-1922թթ. հայ ժողովրդի ցեղասպանության դատապարտման մասին», որտեղ ասվում է.

«Հենվելով անհերքելի պատմական փաստերի վրա, որոնք վկայում են Արևմտահայաստանի տարածքում 1915-1922թթ. հայերի բնաջնջման մասին,

- հետևելով ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին 1948թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի ընդունած միջազգային ոգուն ու տառին,

- պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների վաղեմության ժամկետի մասին 1968թ. նոյեմբերի 26-ի միջազգագրին,

- ձգտելով վերածնել ռուսական պետության մարդասիրական ավանդույթները՝ հիշեցնելով, որ Ռուսաստանի նախաձեռնությամբ եվրոպական մեծ տերությունները դեռ 1915թ. հայ ժողովրդի հանդեպ թուրքական կայսրության գործողությունները որակել են որպես «մարդկության դեմ ուղղված հանցագործություն»,

- նշելով, որ իր պատմական հայրենիքում եղբայրական հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը կատարվել է Ռուսաստանի քայքայման համար պայմաններ ստեղծելու նպատակով,

- ՌԴ Պետդուման դատապարտում է 1915-1922թթ. հայերի բնաջնջման կազմակերպիչներին,

- իր կարեկցանքն է հայտնում հայ ժողովրդին և ապրիլի 24-ը համարում ցեղասպանության զոհերի հիշատակի օր»:

- *Ապրիլի 21-ին* տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի արտահերթ նիստը՝ նվիրված Հայոց ցեղասպանության 80-ամյակին: Գերագույն խորհուրդն ընդունեց հայտարարություն Հայոց ցեղասպանության 80-ամյակի առթիվ և իր հաստատակամությունը հայտնեց 1915թ. Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանը:

- *Ապրիլի 22-ին* ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնը Հայոց ցեղասպանության 80-ամյակի կապակցությամբ հանդես եկավ հայտարարությամբ:

- *Ապրիլի 24-ին* հարյուրից ավելի հայ երիտասարդներ Երուսաղեմում վարչապետ Իցհակ Ռաբինի նստատեղի առջև հանդես եկան բողոքի ցույցով՝ պահանջելով, որպեսզի երկրի դպրոցական դասագրքերում, իրեական ողջակիզման պատմության հետ նշվի նաև Հայոց ցեղասպանությունը:

- *Ապրիլի 24-ին* Երևանում գտնվող Ռուսաստանի Պետական Դումայի պատվիրակությունը ծաղիկներ դրեց Եղեռնի զոհերի հուշարձանին և մասնակցեց Հայոց ցեղասպանության թանգարանի բացման արարողությանը:

- *Մայիսի 2-ին* ԱՄՆ-ի Կոնգրեսի շենքում Հայաստանի Հանրապետության դեսպանատան նախաձեռնությամբ հրավիրվեց ցերեկույթ՝ նվիրված Հայոց ցեղասպանության 80-ամյակին: Հանդես եկան սենատորներ Էդվարդ Քենեդին և Պոլ Սայմոնը, ինչպես նաև մի խումբ կոնգրեսականներ:

- *Մայիսի 4-ին* ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի օրենսդրական ժողովը բանաձև ընդունեց Հայոց ցեղասպանության 80-րդ տարելիցը նշելու համար:

- *Սեպտեմբերի 21-ին* ավարտվեց Երևանում կառուցվող Հայոց ցեղասպանության թանգարանի շենքի շինարարության երկրորդ փուլը: Թանգարանի շենքի նախագծի հեղինակներն են ճարտարապետներ Սաշուր Քալաշյանը և Լյուդմիլա Մկրտչյանը: Ցուցադրության գեղարվեստական-կոնստրուկտորական մշակման հեղինակն է ճարտարապետ Հայկազ Քոչարը: Թանգարանի գիտական ցուցադրության հեղինակն է պատմաբան Լավրենտի Բարսեղյանը:

Թանգարանը, որպես գիտահետազոտական հաստատություն, գործում է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում:

1996

- *Ապրիլի 8-ին* ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի նահանգապետ Ջորջ Դյուկմեջյանը 1996թ. սպրիլի 24-ը հռչակեց որպես Հիշատակի օր՝ հայերի ցեղասպանության 81-րդ տարելիցի կապակցությամբ:

- *Ապրիլի 22-ին* ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի օրենսդրական ժողովը որոշում ընդունեց 1996թ. ապրիլի 24-ը նահանգում 1915-1923թթ. հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր հայտարարելու մասին:

- *Ապրիլի 23-ին* Կանադայի համայնքների պալատը քննարկեց «Մարդու կողմից իր մերձավորին ցույց տրվող անմարդկային վերաբերմունքի» հարցը: Առաջարկություն է ներկայացվել հայերի՝ 1915թ. ցեղասպանության 81-րդ տարեդարձի կապակցությամբ սահմանելու և յուրաքանչյուր տարի

ապրիլի 20-ից 27-ը նշելու որպես մարդու կողմից իր մերձավորի նկատմամբ թույլատրված հանցագործության հիշողության շաբաթ:

Այդ օրը համայնքների պալատը բոլոր կանադացիների անունից միաձայն ընդունեց հետևյալ բանաձևը .«Հայկական ողբերգության 81-րդ տարելիցի կապակցությամբ, որը տեղի էր ունեցել 1915 թվականի ապրիլի 24-ին և խլեց 1,5 միլիոն կյանք, պալատը ճանաչում է մարդկության դեմ կատարված այդ հանցագործությունը և յուրաքանչյուր տարվա ապրիլի 20-ից 24-ը հայտարարում է մարդկանց՝ մեկը մյուսի նկատմամբ կատարած դաժանության հիշողության շաբաթ»:

- *Ապրիլի 24-ին* Կանադայի վարչապետ Ժան Կրետյենը հայտարարությամբ դիմեց Կանադայի հայ համայնքի անդամներին Հայոց ցեղասպանության 81-րդ տարելիցի առթիվ և իր համերաշխությունը հայտնեց:

- *Ապրիլի 24-ին* ԱՄՆ-ի պրեզիդենտ Բիլլ Քլինտոնը հանդես եկավ հռչակագրով և հայտնեց իր ցավակցությունը ջարդերին զոհ գնացած մեկ և կես միլիոն հայերի հիշատակի առթիվ:

- *Ապրիլի 24-ին* ԱՄՆ-ի Ռոդ-Այլենդ նահանգի Ներկայացուցիչների պալատը բանաձև ընդունեց 1996թ. ապրիլի 24-ին նահանգում հայերի ցեղասպանության 81-րդ տարելիցը նշելու մասին:

- *Ապրիլի 24-ին* ԱՄՆ-ի Վիրջինիա նահանգի նահանգապետ Ջորջ Ալլենը ստորագրեց հռչակագիր ապրիլի 24-ը հայ նահատակների հիշատակի օր հայտարարելու մասին:

- *Ապրիլի 25-ին* Հունաստանի խորհրդարանը միաձայն օրենք ընդունեց «Ապրիլի 24-ը Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության հիշատակի օր հաստատելու մասին», որտեղ ասվում է.

«Հոդված առաջին. Ապրիլի 24-ը սահմանվում է որպես Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության հիշատակի օր:

Հոդված երկրորդ. հիշատակի միջոցառումների բնույթը, բովանդակությունը, պատասխանատվությունը և դրանց կազմակերպման եղանակը որոշվում են նախագահական հրամանագրով, որը հրատարակվում է ներքին գործերի, հանրային կառավարման և ապակենտրոնացման նախարարի առաջարկությամբ, առավել ճանաչված հայկական միությունների և կազմակերպությունների կարծիքից հետո»:

- *Մայիսի 2-ին* Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց Ռուսական ուղղափառ եկեղեցու պատվիրակությունը Մոսկվայի և Համայց Ռուսիայի պատրիարք Ալեքսի երկրորդի գլխավորությամբ: Հուշահամալիրում՝ հավերժության ջահի մոտ, տեղի ունեցավ հատուկ արարողություն՝ ծվիրված զոհերի հիշատակին: Թանգարանի այցելուների մատյանում Ալեքսի երկրորդը գրեց. «Հավերժ հիշատակ ցեղասպանության զոհերին»:

- *Մայիսի 7-ին* Մեծ եղեռնի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց Ռուսաստանի Պետական Դումայի պատվիրակությունը՝ Դումայի նախագահ Գ. Ն. Սելեզնևի գլխավորությամբ:

- *Մայիսի 15-ին* ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի միջազգային հարաբերությունների հանձնախմբի նախաձեռնությամբ վերջին քսան տարիների ընթացքում առաջին անգամ ԱՄՆ-ի կոնգրեսում տեղի ունեցան լսումներ Օսմանյան Թուրքիայում Հայոց ցեղասպանության պատմական փաստի ճանաչման խնդրի շուրջ: Ներկայացվեց մի բանաձև, որը Թուրքի-

ային կոչ էր անում ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Այդ բանաձևը պաշտպանում էին 165 կոնգրեսականներ: Քննարկումներին մասնակցող ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի խոսնակ Գլեն Դևիսը ներկայացրեց կառավարության դիրքորոշումը, որի համաձայն հավանության չէր արժանանում Հայոց ցեղասպանությունը ճանաչելու նախաձեռնությունը՝ նկատի ունենալով Թուրքիայի հետ ԱՄՆ-ի համագործակցությունը: Բանաձևի քննարկումն օրակարգ չմտավ:

- ***Մայիսի 31-ին*** Մեծ եղեռնի հուշահամալիր այցելեց Ֆրանսիայի Սենատի «Հայաստան-Ֆրանսիա» պատգամավորական խմբակցության պատվիրակությունը:

- ***Հունիսի 11-ին*** ԱՄՆ-ի կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը երկրի վարչակազմին կոչ արեց սահմանափակել Թուրքիային ցույց տրվող տնտեսական օգնության չափերը, քանի դեռ վերջինս չի ընդունում հայ ժողովրդի նկատմամբ Օսմանյան կայսրությունում 1915-1923թթ. իրականացված գազանությունները և ձեռնարկի համապատասխան քայլեր հայերի ցեղասպանության զոհերի հիշատակը հարգելու ուղղությամբ:

- ***Հուլիսի 11-ին*** Հունաստանի պրեզիդենտ Կ. Ստեֆանոպուլոսը ստորագրեց դեկրետ յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ը հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր սահմանելու մասին:

- ***Սեպտեմբերի 2-ին*** Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց Բուլղարիայի Հանրապետության զինվորական պատվիրակությունը՝ պաշտպանության նախարարի գլխավորությամբ:

- ***Նոյեմբերի 6-ին*** Իտալիայի խորհրդարանում հրավիրվեց գիտաժողով և կլոր սեղան՝ նվիրված Հայոց ցեղասպանության ճանաչման հարցին:

1997

- ***Ապրիլի 2-ին*** ԱՄՆ-ի Կալիֆորնիայի նահանգի նահանգապետ Ջորջ Դ-յուկմեջյանը ստորագրեց Հռչակագիր 1997թ. ապրիլի 24-ը Հիշատակի օր հայտարարելու մասին:

- ***Ապրիլի 8-ին*** ԱՄՆ-ի կոնգրեսականներ Ջորջ Ռադանովիչը և Դեյվիդ Բոնիները կոնգրեսին ներկայացրեցին օրենսդրական նախագիծ՝ կոչ անելով կոնգրեսին հատուկ բանաձև ընդունել Հայոց ցեղասպանությունը դատապարտելու մասին: Ներկայացված բանաձևում մասնավորապես առաջարկվում է արձանագրել.

«ա. Կոնգրեսը ամերիկահայության հետ հարգում է հայերի ցեղասպանության զոհերի հիշատակը:

բ. ԱՄՆ-ը պետք է Թուրքիային ստիպի, որպեսզի վերջինս կատարի բոլոր պատշաճ քայլերը՝ Օսմանյան կայսրության կողմից հայ բնակչության դեմ 1915-23թթ. գործադրված բռնությունները ճանաչելու և ոգեկոչելու համար»:

- ***Ապրիլի 17-ին*** Նոր Հարավային Ուելսի (Ավստրալիա) խորհրդարանի օրենսդիր համագումարը որոշում կայացրեց Ապրիլի 24-ը սահմանել հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր և առաջարկություն ներկայացրեց Ավստրալիայի դաշնային կառավարությանն ընդունել նույնանման որոշում:

- *Ապրիլի 17-ին* ԱՄՆ-ի Կալիֆորնիայի նահանգային խորհրդարանը բանաձև ընդունեց Ապրիլի 24-ի օրը նահանգում «Հայերի ցեղասպանության ոգեկոչման օր» սահմանելու մասին:
- *Ապրիլի 22-ին* ԱՄՆ-ի Սենատի հայկական համախմբման դահլիճում նշվեց հայոց Մեծ եղեռնի 82-րդ տարելիցը, որը կազմակերպել էր սենատոր Ջեկ Ռիդի, կոնգրեսականներ Ջոն Նոլենբերգի, Մարտին Նիհենի, Դեյվիդ Բոնիերի և Ջորջ Ռադանովիչի մասնակցությամբ ստեղծված հանձնախումբը:
- *Ապրիլի 22-ին* Երևան ժամանած Վրաստանի կառավարական պատվիրակությունը հանրապետության նախագահ Ասկար Ականի գլխավորությամբ ծաղկեպսակ դրեց Ծիծեռնակաբերդի Մեծ Եղեռնի հուշարձանին: Հաջորդ օրը Բաքվում Ադրբեջանի Միլի Մեջլիսում Ա. Ականը հայտարարեց, որ 1915թ. Թուրքիայում հայերի դեմ ցեղասպանություն է գործադրվել: Վրաստանի նախագահը դրանում համոզվել էր, երբ այցելության ժամանակ դիտել էր Հայոց ցեղասպանության թանգարանի գիտական ցուցադրությունը:

Բաքվում կատարած հայտարարության առթիվ Թուրքիայի կառավարությունն իր գրավոր բողոքը ներկայացրեց Ա. Ականին:
- *Ապրիլի 22-ին* ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ ասվում էր. «Ամեն տարի հիշատակի օրը մենք միանում ենք ամերիկահայերին և աշխարհով մեկ սփռված հայկական համայնքներին՝ հանդիսավորությամբ հիշելով 20-րդ դարի պատմության ամենասև էջերը, աճքիվ հայերի սպանդը Օսմանյան կայսրությունում 1915-1923 թվականին...»:
- *Ապրիլի 22-ին* Հայկական Համազգային Ընկերակցության պատվիրակությունը Կանադայի մայրաքաղաք Օտտավայում հանդիպում ունեցավ Ազատական կուսակցության Օնթարիայի նահանգի լիազոր ներկայացուցիչների հետ: Ներկայացված հուշագրի մեջ շեշտվում էր, որ Կանադայի դաշնության խորհրդարանը պետք է ճանաչի Հայոց ցեղասպանությունը: Այսօր միայն Կանադայի Օնթարիա և Քվեբեկ նահանգների խորհրդարաններն են ճանաչել և դատապարտել Հայոց ցեղասպանությունը:
- *Ապրիլի 23-ին* Վաշինգտոնում ԱՄՆ-ի կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում կոնգրեսական Ֆրենկ Փալոնեի (Նյու-Ջերսի նահանգից) նախաձեռնությամբ և նախագահությամբ տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված նիստ:
- *Ապրիլ ամսին* հերթական ռմբահարման ենթարկվեց Ստամբուլի Էյուր թաղամասում գտնվող Սուրբ Եղիա հայկական եկեղեցին: Մինչ այդ, փետրվարի 13-ին և 15-ին ռմբահարվել էր նաև շրջանում գտնվող Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին:
- *Ապրիլի 24-ին* առավոտից մինչև ուշ գիշեր Երևան քաղաքի և շրջակա քաղաքների ու բնակավայրերի հարյուր հազարավոր բնակիչներ անվերջանալի թափորներով այցելեցին Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին կառուցված հուշահամալիրը:
- *Ապրիլի 24-ին* Կալիֆորնիայի նահանգապետ Պիտ Ուիլսոնը Մեծ Եղեռնի 82-րդ տարելիցի առթիվ հրապարակեց ցավակցական հայտարարություն:

- *Ապրիլի 24-ին* Բելգիայի մայրաքաղաք Բրյուսելում տեղակայված Քրդստանի վտարանդի խորհրդարանի Գործադիր հանձնաժողովը հատուկ հայտարարությամբ դատապարտեց Թուրքիային՝ այլազգիների նկատմամբ վարած քաղաքականության համար, որին զոհ դարձան հազարավոր հայեր, հույներ, քրդեր և ասորիներ:
- *Ապրիլի 24-ին* Հռոմի հայկական վարժարանում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված երեկո, որտեղ ելույթներով հանդես եկած Իտալիայի նշանավոր քաղաքական գործիչները դատապարտեցին Օսմանյան Թուրքիային:
- *Ապրիլի 24-ին* Ավստրալիայի Նյու Սաութ Վեյլզ նահանգի խորհրդարանը հատուկ բանաձև ընդունեց և միաձայն դատապարտեց 1915թ. Հայոց ցեղասպանությունը: Խորհրդարանը Ապրիլի 24-ը հռչակեց 20-րդ դարի առաջին ցեղասպանության զոհ դարձած հայերի հիշատակի օր:
- *Ապրիլի 24-ին* ԱՄՆ-ի Ռոդ-Այլենդ նահանգի Ներկայացուցիչների պալատը բանաձև ընդունեց 1997թ. ապրիլի 24-ը նահանգում նշելու մասին:

Բանաձևում խիստ քննարդատության էր ենթարկվում Թուրքիան՝ ա) մեկ և կես միլիոն հայերի կոտորածների, բ) հայերի տեղահանության, գ) ներկայումս էլ ցեղասպանությունը ժխտելու և փաստերը ենթագիտակցությունից դուրս մղելու, դ) հայերին սեփական պատմությունից զրկելու, ե) հայերին հասցված վնասները չհատուցելու, զ) հին հայկական տարածքները հայ ժողովրդին չվերադարձնելու համար:
- *Ապրիլի 30-ին* Վաշինգտոնի Կապիտոլ Հոլում կազմակերպվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հանդիսավոր գիտաժողով, որին մասնակցեցին շուրջ երեսուն կոնգրեսականներ, ԱՄՆ-ի հասարակայնության ներկայացուցիչներ: Ելույթներով հանդես եկող գործիչները առանձնապես ընդգծեցին, որ Հայոց ցեղասպանությունը իր ճանաչումը պետք է գտնի Միացյալ Նահանգների և միջազգային հանրության կողմից:
- *Մայիսի 3-ին* Լիբանանի հանրապետության խորհրդարանը, նկատի ունենալով, որ ամեն տարվա Ապրիլի 24-ը առիթ է՝ ոգեկոչելու հայ ժողովրդի դեմ կատարված ջարդերի արհավիրքի հիշատակը, բանաձև ընդունեց ամեն տարի այդ օրը հայ ժողովրդի հետ միասնականության օր հայտարարելու մասին:
- *Մայիսի կեսերին* Կալիֆորնիայի նահանգային վարչության և ԱՄՆ-ի դաշնային կառավարության կողմից որոշում կայացվեց Լոս-Անջելեսում կառուցվող Հայոց ցեղասպանության ոգեկոչման թանգարանի հողահատկացման մասին: Թանգարանը կառուցվելու է Սան-Ֆերնանդո հովտում գտնվող Ռեստ Հիլզի շրջանում, բլրի վրա:
- *Մայիսի 17-ից 18-ը* Կալիֆորնիայի համալսարանում (Լոս-Անջելես) տեղի ունեցավ Վան-Վասպուրականին նվիրված միջազգային գիտաժողով, որը կազմակերպել էր համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը:
- *Մայիսի 25-ին* Մեծ եղեռնի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց Ուկրաինայի կառավարական պատվիրակությունը՝ Ուկրաինայի խորհրդարանի նախագահ Օ. Մորոզի գլխավորությամբ:
- *Մայիսի 28-ին* Հայոց ցեղասպանության թանգարանի պատվավոր հյուրերի մատյանում գրառում կատարեց Վրաստանի ուղղափառ եկեղեցու

կաթողիկոս Իլյա Երկրորդը, որը Մեծ եղեռնի հուշահամալիրում հատուկ արարողություն կատարեց զոհերի հիշատակին:

- *Հունիսի 11-ից 13-ը* Մոնրեալի (Կանադա) Կոնկորդիա համալսարանում տեղի ունեցավ ցեղասպանության հարցերով զբաղվող գիտնականների միջազգային ընկերակցության երկրորդ համաժողովը, որի նշանաբանն էր «Ցեղասպանությունը և ժամանակակից աշխարհը»: Համաժողովի որոշումներից մեկը վերաբերում էր Հայոց ցեղասպանությանը, որտեղ ասվում էր՝ «Համաժողովը վերահաստատում է 1915թ. Թուրքիայում հայերի զանգվածային սպանությունը որպես ցեղասպանական պարագա, որը համապատասխանում է ՄԱԿ-ի Ցեղասպանության կանխարգելման և պատժի կոնվենցիայի դրույթներին»:

- *Հունիսի 23-ին* Ստամբուլում հրատարակվող «Հյուրիեթ» թերթը տեղեկացրեց, որ Ռեյօղլուի քաղաքապետարանը հիմնահատակ քանդել է տվել Խասգյուղի և Օդմեյդանի հայ բողոքականների եկեղեցին:

- *Հուլիսի 14-ին* Հայ հեղափոխական դաշնակցության Հայ դատի հանձնախմբերը և Թել-Ավիվի հայկական համայնքը միահամուռ դեմ դուրս եկան քաղաքային խորհրդի այն որոշմանը, որն առաջարկում էր Ռեոնար Լևիսին տալ Թել-Ավիվի պատվավոր քաղաքացու կոչում: Այդ որոշման դեմ բողոքեցին նաև մի խումբ հրեա գիտնականներ: Ինչպես հայտնի է, Ռեոնար Լևիսը ժխտում էր հայոց ցեղասպանության իրողությունը և, փաստորեն, կատարում էր Թուրքիայի կառավարության պատվերը:

- *Օգոստոսի 19-ին* Մեծ եղեռնի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության քանգարան այցելեց Չինաստանի Հանրապետության ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովի փոխնախագահ Վան Բինցյանը, որը թողեց հետևյալ գրառումը. «Խորը համակրանք եմ տածում հայ ժողովրդի ցավերի նկատմամբ, որոնք նա ունեցավ անցյալում: Թող այսուհետև այլևս չկրկնվի պատմության նման ողբերգությունը»:

- *Սեպտեմբերի կեսերին* ԱՄՆ-ի Չիկագո քաղաքի Դ. Պոլ համալսարանի իրավագիտության պրոֆեսոր, Մարդկային իրավունքների միջազգային կազմակերպության նախագահ Մ. Պասիուսը Հարվարդի համալսարանի կողմից հրատարակվող հանդեսներից մեկում հանդես եկավ մի հոդվածով, ուր առաջարկեց հիմնել «Միջազգային ոճիրների մշտական դատարան»՝ ցեղասպանությունները դատապարտելու համար: Հոդվածում առանձնահատուկ ընդգծվում էր Հայոց ցեղասպանությունը դատապարտելու անհրաժեշտությունը:

- *Սեպտեմբերի վերջերին* Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ համայնքների համառ պայքարի արդյունքում Նյու-Յորքի Էլիս Այլենդ քանգարանի ցուցասրահներից մեկում վերականգնվեց նախկինում գործող ցուցադրությունը, երբ անհիմն կերպով ցուցադրությունից հանվել էին 1915թ. կատարված հայերի ցեղասպանությանը վերաբերող լուսանկարները:

- *Հոկտեմբերի 4-ին* Հայ հեղափոխական դաշնակցության Արևելյան Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը բողոքի ցույց կազմակերպեց Չիկագոյի հյուրանոցներից մեկի առջև, ուր տեղի էր ունենում «Թուրք-ամերիկյան ընկերակցությունների» 18-րդ հերթական համագումարը՝ պահանջելով չուրանալ Հայոց ցեղասպանությունը:

- *Հոկտեմբերի 8-ին* Բելգիայի Սենատի անդամ Մ. Մահուն և նրա հետ միասին Սենատի ինն այլ անդամներ Սենատի քննարկմանը ներկայացրին

«1915թ. Թուրքիայի հայերի ցեղասպանության մասին» խորագիրը կրող մի ընդարձակ բանաձևի նախագիծ: Բանաձևը կոչ էր անում թուրքական կառավարությանը ճանաչել 1915թ. Օսմանյան կայսրության վերջին կառավարության կողմից իրականացրած ցեղասպանության փաստը կոչ էր անում Եվրամիության անդամ պետությունների խորհրդարաններին՝ նպաստել հայ և թուրք ժողովուրդների միջև հաշտությանը, դիմում էր Եվրամիությանը և նրա անդամ երկրներին նախաձեռնություն ցուցաբերել՝ նպաստելու հայ և թուրք ժողովուրդների միջև բոլոր բնագավառներում բանակցությունների կայացմանը:

- *Հոկտեմբերի 23-ին* Բելգիայի հայ համայնքի վարչության նախաձեռնությամբ և Բրյուսելի քաղաքապետարանի նյութական օժանդակությամբ Բրյուսել քաղաքի հրապարակներից մեկում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված խաչքար-հուշարձանի պաշտոնական բացումը:

- *Հոկտեմբերի 29-ին* ՅՈՒՆԵՍԿՕ-ի տնօրինությունը, նկատի ունենալով միջազգային հանրության և հայկական կազմակերպությունների բողոքները, հատուկ որոշում կայացրեց Օսմանյան կայսրության հիմնադրման 700-ամյակը նշել միմիայն մշակութային բնույթ կրող միջոցառումներով:

- *Հոկտեմբերի 31-ին* Մոնրեալի (Կանադա) քաղաքապետ Պիեռ Ռուրքը պաշտոնապես թույլատրեց կառուցել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձան՝ համապատասխան արձանագրությամբ:

- *Նոյեմբերի 8-ին* Մեծ եղեռնի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց Բուլղարիայի հանրապետության արտաքին գործերի նախարար Նադեժդա Միխայլովան: Ի նշան զոհերի հիշատակի՝ նա հուշահամալիրի բարեկամության ճեմուղում ծառ տնկեց:

- *Նոյեմբերի 22-ին* Կալիֆորնիայի համալսարանում (Լոս-Անջելես) «Պատմական Հայաստանի քաղաքները և նահանգները» նշանաբանով տեղի ունեցավ միջազգային երկրորդ գիտաժողովը: Զեկուցումները նվիրված էին պատմական Հայաստանի Տարոն, Մուշ և Բիթլիս նահանգներին ու քաղաքներին: Գիտաժողովը կազմակերպել էր համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը:

- *Նոյեմբերի 28-ին* լրացավ Երևանի Ծիծեռնակաբերդի բարձրունքում Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրի հանդիսավոր բացման երեսնամյակը:

- *Դեկտեմբերի 6-ից 13-ը* Բրյուսելի (Բելգիա) համալսարանի Միջազգային հարաբերությունների ուսումնասիրման կենտրոնի նախաձեռնությամբ Առուշվից գյուղաքաղաքում կազմակերպվեց միջազգային գիտաժողով՝ նվիրված հրեական ողջակիզմանը: Գիտաժողովում քննարկման նյութ դարձավ նաև Հայոց ցեղասպանության դատապարտման հարցը:

1998

- *Փետրվարի 27-ին* Սումգայիթի ողբերգության տասներորդ տարելիցի առթիվ Ստեփանակերտի և Երևանի Ծիծեռնակաբերդի հուշահամալիրներում զոհերի հիշատակին կանգնեցված հուշարձանների մոտ տեղի ունե-

ցան սգո հանդիսություններ: Սգո հանդիսությունների մասնակիցներն իրենց հայտարարություններում պահանջեցին պաշտոնապես դատապարտել Սումգայիթում, Բաքվում, Գանձակում և Ադրբեջանի այլ քաղաքներում հայ բնակչության կոտորածները:

- *Մարտի 5-ին* Կիպրոսի խորհրդարանը դատապարտեց Թուրքիայի կողմից կղզու գրավված տարածքում գտնվող հայկական Սուրբ Մակարի վանքը կիպրացի թուրքերի կողմից հյուրանոցի վերածելու որոշումը: Դեռևս 1974թ., Թուրքիայի կողմից Կիպրոս ներխուժելու ժամանակ, թուրքական զորքերը թալանել և ավերել էին վանքը:

- *Մարտի 9-ին* Ավստրալիայի խորհրդարանի Ներկայացուցիչների պալատի խորհրդարանական քննարկումների ժամանակ պատգամավոր Հոքեյն առաջարկեց հատուկ որոշում կայացնել կրոնական փոքրամասնությունների հետապնդումները դադարեցնելու մասին՝ նկատի ունենալով Թուրքիայում քրիստոնյա փոքրամասնությունների՝ առաջին հերթին ցեղասպանության հետևանքով Թուրքիայում ողջ մնացած հայ ժողովրդի մի փոքր հատվածի երկարատև ծանր վիճակը: Բուռն քննարկումներից հետո հարցի քննարկումը հետաձգվեց:

- *Մարտ ամսին* թուրքական և հայկական մամուլում հաղորդագրություններ եղան այն մասին, որ Ուրֆայում (Եդեսիա) գտնվող հայկական և ասորական չորս եկեղեցիներից երեքը վերածվել են մզկիթների, իսկ մեկն էլ՝ գորգագործական արհեստանոցի:

- *Մարտի 26-ին* Միավորված Ազգերի Կազմակերպությունում Կիպրոսի դեսպանը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանին ներկայացրեց բողոքագիր՝ Թուրքիայի կողմից Կիպրոսի մշակութային կոթողները ոչնչացնելու կապակցությամբ: Բողոքագրում տեղ էր գտել նաև հայկական Սուրբ Մակարի վանքի փաստը, ինչպես նաև հունական երեք եկեղեցիների մասին, որոնք վերածվել էին մզկիթների, իսկ մեկ այլ եկեղեցի օգտագործվում էր որպես ախոռ:

- *Մարտի 26-ին* Բելգիայի Սենատը իր 1997-1998թթ. նստաշրջանում որոշում ընդունեց «Թուրքիայում ապրող հայերի 1915թ. ցեղասպանության մասին», որով դիմում էր Թուրքիայի կառավարությանը՝ ճանաչել Օսմանյան կայսրության վերջին կառավարության կողմից 1915թ. կազմակերպված ցեղասպանության պատմական ճշմարտությունը:

- *Մարտ ամսվա կեսերին*՝ ըստ Ուրուգվայի մամուլի հաղորդագրությունների, Ուրուգվայի կրթության նախարարության որոշմամբ, դպրոցական երկրորդ և երրորդ դասարանների պատմության դասագրքերում տեղ է հատկացվելու նաև հայերի ցեղասպանության վերաբերյալ նյութերին:

Դասագրքերում տեղ գտած նյութերի հեղինակն է Անահիտ Պալյան-Չեքմեյանը:

- *Ապրիլի 1-ին* «Ջորջ Վաշինգտոն» համալսարանում իր հերթական ելույթն ունեցավ ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Նուզհեթ Կանտեմիրը: Լսարանում գտնվող հայ, հույն և քուրդ ուսանողները բազմաթիվ հարցերով և ելույթներով դատապարտեցին Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ուրացման քաղաքականությունը:

- *Ապրիլի 3-ին* Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ի կողմից ցեղասպանության հանցանքը կանխարգելելու և պատժելու հռչակագրի ընդունման հիսնամյակի առթիվ հատուկ բանաձև ներկայացրեց Ժնևում տեղի

ունեցող ՄԱԿ-ի Մարդկային իրավունքների հանձնաժողովի 54-րդ նստաշրջանին, որը մասնակից քառասուն երկրների ներկայացուցիչների կողմից ընդունվեց միաձայն:

- *Ապրիլի 10-ին* Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության որոշմամբ, ակադեմիայի պրեզիդենտ Ֆաղեյ Սարգսյանի գլխավորությամբ, ստեղծվեց հանձնաժողով՝ 2000 թվականի ապրիլին Հայոց ցեղասպանության 85-ամյակին նվիրված միջոցառումները կազմակերպելու համար:

- *Ապրիլի 16-ից 18-ը* Փարիզի Սորբոնի համալսարանում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության հիմնախնդիրներին նվիրված միջազգային գիտաժողով, որը կազմակերպել էր Հայ հեղափոխական դաշնակցության Ֆրանսիայի Հայ Դատի հանձնախումբը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի հովանավորությամբ:

- *Ապրիլի 16-ին* Ժնևում տեղի ունեցող ՄԱԿ-ի Մարդկային իրավունքների հանձնաժողովի նիստում ելույթ ունեցավ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Կարեն Նազարյանը, որը պահանջեց ճանաչել Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական չափանիշներով: Նա իր ելույթում խստագույնս դատապարտեց Ադրբեջանի նախագահի կողմից ստորագրված օրենքը, որը յուրաքանչյուր տարվա մարտի 31-ը սահմանել է ադրբեջանցիների ցեղասպանության օր:

- *Ապրիլի 17-ին* Արևմտյան Ամերիկայի Հայ երիտասարդ դաշնակցության կենտրոնական վարչության պատվիրակությունը Թուրքիայի Լոս-Անջելեսի հյուպատոս Հայրի Հայրեթ Եալավին հանձնեց Հայոց ցեղասպանությունը ճանաչելու վերաբերյալ մի նամակ՝ հասցեագրված Թուրքիայի կառավարությանը:

- *Ապրիլի 17-ին, 22-ին, 24-ին և 25-ին* Ֆրանսիայում գործող Սփյուռքահայության հետազոտությունների կենտրոնը Փարիզում, Լիոնում և Ֆրանկֆուրտում, համապատասխանաբար կազմակերպեց Հայոց ցեղասպանությանը նվիրված հավաքներ, որոնց մասնակցում էին հայեր, թուրքեր, քյուրեր, ֆրանսիացիներ և գերմանացիներ:

- *Ապրիլի 18-ից* Լոս-Անջելեսի (ԱՄՆ) մի շարք արվարձաններում, գեղանկարիչ Զավեն Մկրտչյանի նախաձեռնությամբ և գեղարվեստական ձևավորմամբ, սկսեց շրջել մի ձեռնասայլակ, որի վրա դրված էր կարմիր գույնի հեղուկով լցված մի մեծ ապակյա կաթսա՝ որի մեջ լողում էին մարդկային ոսկորների մնացորդներ: Այն մարմնավորում էր 1915թ. Մեծ եղեռնի զոհ հայերի արյամբ պատրաստված ապուրը: Ձեռնասայլակի չորս պատերի վրա անգլերեն լեզվով գրված էր. «Թուրքական ապուր հայկական ոսկորներից»:

- *Ապրիլի 20-ին* ԱՄՆ-ի Կալիֆորնիայի նահանգային խորհրդարանը միաձայն որոշում ընդունեց հայերի ցեղասպանության վերաբերյալ՝ Ապրիլի 24-ը հռչակելով Կալիֆորնիայի նահանգում որպես հայերի ցեղասպանության զոհերի ոգեկոչման օր:

- *Ապրիլի 22-ին* Երևանում, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի դահլիճում, տեղի ունեցավ հայ ժողովրդի մեծ բարեկամ, գերմանացի նշանավոր հասարակական գործիչ, աստվածաբան Յոհաննես Լեփսիուսի (1858-1926) ծննդյան 140-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով Հայաստանի, Գերմանիայի, Իտալիայի և

Ավստրիայի գիտնականների մասնակցությամբ: Յոհաննես Լեփսիուսը Բեռլինում 1916թ. կազմակերպված հայ-գերմանական ընկերության նախագահն էր և հեղինակն էր Օսմանյան Թուրքիայում հայերի կոտորածները կանխելուն նվիրված բազմաթիվ աշխատությունների:

- *Ապրիլի 22-ին* Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խորհրդարանը ընդունեց Հայոց ցեղասպանությունը դատապարտող որոշում և կոչով դիմեց Միավորված Ազգերի Կազմակերպությանը ճանաչել և դատապարտել Օսմանյան Թուրքիայում 1915 թվականին տեղի ունեցած հայոց ցեղասպանությունը:

- *Ապրիլի 22-ին* Վաշինգտոնում Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի ավելի քան քառասուն կոնգրեսականների մասնակցությամբ Կապիտոլիումի շենքում կազմակերպվեց բաց նիստ, որին ներկա էին ԱՄՆ-ում հավատարմագրված բազմաթիվ երկրների դեսպաններ, հասարակական և պետական գործիչներ:

«Մենք նմանվում ենք անբարոյական ցինիկների, երբ մեր ռազմավարական դաշնակիցն ենք համարում մի երկիր, որը հրաժարվում է իրեն մեղավոր ճանաչել այդ աղաղակող հանցագործության իրականացման մեջ», - իր ելույթում շեշտեց կոնգրեսական Ջոն Փորտերը:

- *Ապրիլի 23-ին* Ամերիկայի Հայկական Համագումարը հանդես եկավ մի հայտարարությամբ, տեղյակ պահելով միջազգային հանրությանը, որ մտադիր է հետևողականորեն հետապնդել օրենսդրական բանաձև ընդունել տալու համար Միացյալ Նահանգներում գործող թուրքական բանկերում պահվող, սակայն փակի տակ գտնվող հայկական հաշիվների ցուցակները և պահանջել փոխհատուցում 1915 թվականի ցեղասպանության դիմաց:

Ամերիկայի Հայկական Համագումարի հայտարարության մեջ ասվում է. «Այն բանկերին, որոնք հրաժարվում են հրապարակել իրենց հայկական հաշիվները և ակտիվները վերադարձնել օրինական տերերին կամ ժառանգորդներին, չպետք է թույլատրել գործել Միացյալ Նահանգներում»:

- *Ապրիլի 23-ին* Երևանի քաղաքապետարանի որոշմամբ Երևան քաղաքի միջնակարգ դպրոցներից մեկին շնորհվեց Յոհաննես Լեփսիուսի անունը, Երևան քաղաքում երկու փողոցներ կոչվեցին Յ. Լեփսիուսի և Ջ. Բրայսի անուններով:

- *Ապրիլի 23-ին* Երևանում՝ Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրի հուշապատի մեջ, ամփոփվեցին Իտալիայում թաղված Յոհաննես Լեփսիուսի, Շոտլանդիայի Էդինբուրգ քաղաքում թաղված անգլիացի պետական և քաղաքական ականավոր գործիչ, հայ ժողովրդի մեծ բարեկամ լորդ Ջեյմս Բրայսի, Վիեննայում քաղաքային պանթեոնում ամփոփված, հայ ժողովրդի մեծ բարեկամ, «Մուսա լեռան քառասուն օրերը» վեպի հեղինակ Ֆրանց Վերֆելի շիրիմներից բերված հողը պարունակող սափորները: Արարողությանը մասնակցեցին նաև Գերմանիայից ժամանած Յ. Լեփսիուսի ազգականները:

- *Ապրիլի 23-ին* ԱՄՆ-ի Կալիֆորնիայի նահանգի օրենսդրական ժողովը բանաձև ընդունեց 1998թ. ապրիլի 24-ը Կալիֆորնիայում 1915-1923թթ. հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր հայտարարելու մասին:

- *Ապրիլի 23-ին* ԱՄՆ-ի Ռոդ-Այլենդ նահանգի Ներկայացուցիչների պալատը որոշում ընդունեց 1998թ. ապրիլի 24-ին նահանգում նշել Հայոց ցեղասպանության 83-րդ տարելիցը:
- *Ապրիլի 24-ին* Երևան քաղաքում վեց հարյուր հազար մարդ Հայոց ցեղասպանության 83-րդ տարելիցի առթիվ այցելեց Ծիծեռնակաբերդում կառուցված Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիր և իր հարգանքի տուրքը մատուցեց նահատակների հիշատակին:

Այդ նույն օրը հուշահամալիրում գտնվող Հայոց ցեղասպանության թանգարանի ցուցադրությունը դիտեց շուրջ 150 հազար մարդ:
- *Ապրիլի 24-ին* Լոս-Անջելեսում Թուրքիայի հյուպատոսության շենքի առջև տեղի ունեցավ ամերիկահայերի բազմաձեռամ բողոքի ցույցը, որը պահանջում էր Թուրքիայի կառավարությունից ճանաչել Հայոց ցեղասպանությունը:
- *Ապրիլի 24-ին* ԱՄՆ-ի Սան-Ֆրանցիսկո քաղաքի ծայրամասում բարձրացող Դեվիդսոն լեռան վրա գտնվող պուրակի մեջ տեղադրված քարե հսկայական խաչարձանը, որը ձեռք էր բերել տեղի հայ բնակչությունը, դարձավ և վերակոչվեց որպես Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձան, որտեղ տեղի ունեցավ առաջին սգո հանդիսությունը:
- *Ապրիլի 24-ին* Նյու-Յորքի քաղաքապետարանում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված ցերեկույթ, որտեղ քաղաքապետարանը որոշում կայացրեց Ապրիլի 24-ը պաշտոնապես սահմանել Հայերի ցեղասպանության հիշատակի օր:
- *Ապրիլի 24-ին* Եվրոպայի խորհրդի խորհրդարանական ժողովը 1915թ. հայերի ցեղասպանության հիշատակի կապակցությամբ հրապարակեց թիվ 275 հռչակագիրը, որը ստորագրել էին հիսունմեկ անդամներ:

Հռչակագիրը բաղկացած էր երկու կետից, որտեղ ասվում էր.

«1. 1915թ. ապրիլի 24-ը սահմանվում է որպես Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի բնաջնջման ծրագրի սկիզբ:

2. Այսօր մենք հիշատակում ենք 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը և խոնարհվում ենք ընդդեմ մարդկության կատարված հանցագործության զոհ հայերի հիշատակի առջև»:
- *Ապրիլի 24-ին* Օտտավայում կանադահայությունը նշեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի 83-րդ տարելիցը: Շուրջ երեք հազար հայեր Կանադայի տարբեր քաղաքներից ժամանելով Օտտավա՝ մայրաքաղաքի խորհրդարանի շենքի առջև կազմակերպեցին սգո միտինգ, որի մասնակիցները վերածեցին ցույցի: Ցույցն ավարտվեց Կանադայում Թուրքիայի դեսպանատան առջև:
- *Ապրիլի 24-ին* ԱՄՆ-ում «Մտահոգված գիտնականները և գրողները» միավորումը ցեղասպանության մասին Միավորված Ազգերի Կազմակերպության հռչակագրի 50-ամյակի կապակցությամբ հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ խիստ դատապարտվում էր Թուրքիայի ներկայիս կառավարության ժխտողական քաղաքականությունը 1915թ. Հայոց ցեղասպանության նկատմամբ: Հայտարարության տակ ստորագրել էին 150 նշանավոր գիտնականներ և գրողներ աշխարհի տարբեր երկրներից:
- *Ապրիլի 24-ին* հայտարարությամբ հանդես եկավ ԱՄՆ-ի պրեզիդենտ Բիլլ Քլինթոնը՝ կապված Օսմանյան կայսրությունում 1915-1923թթ. մեկ և

կես միլիոն հայերի տեղահանության և կոտորածների 83-րդ տարելիցի հետ:

- *Ապրիլի 29-ին* Ավստրալիայի խորհրդարանի Օրենսդիր ժողովը քննարկեց հայերի ցեղասպանության տարելիցը նշելու հարցը: Պատգամավոր Վատկինսը ժողովի քննարկմանը ներկայացրեց բանաձևի մի նախագիծ, որտեղ ասվում էր. «Ես առաջարկում եմ, որ այս պալատը. 1) ճանաչի Օրենսդիր ժողովի կողմից ընդունված պատմական առաջարկության մեկ տարին, որով դատապարտվում է 1915թ. հայերի ցեղասպանությունը: 2) Խնդրի նախագահող պաշտոնյաներին ընդունել հայկական համայնքների կողմից ներկայացված հիշատակը հավերժացնող հուշարձանը կառուցելու առաջարկը, որը կտեղադրվի խորհրդարանին ենթակա տարածքում: 3) Ուղերձներ հղի այլ վայրեր՝ ընդունելու նմանատիպ առաջարկությունը, որը 1997թ. ապրիլի 17-ին ընդունեց խորհրդարանը՝ դատապարտելով 1915թ. ցեղասպանությունը»: Առաջարկությունը համաձայնության արժանացավ:

- *Մայիսի 16-ին* Լոս-Անջելեսի համալսարանում իր աշխատանքները սկսեց «Պատմական Հայաստանի քաղաքներն ու նահանգները» նշանաբանով երրորդ միջազգային գիտաժողովը, որտեղ ներկայացված զեկուցումները նվիրված էին պատմական Հայաստանի Խարբերդ-Ծովք շրջանին: Գիտաժողովի նախաձեռնողը և կազմակերպիչն էր Կալիֆորնիայի համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը:

- *Մայիսի 18-ին* Ավստրալիայի Նյու-Սաութ Վեյլս նահանգի խորհրդարանը պաշտոնապես ճանաչեց Հայոց ցեղասպանությունը՝ Ապրիլի 24-ը սահմանելով «Հայերի ցեղասպանության հիշատակի օր»:

- *Մայիսի 21-ին* Ավստրալիայի խորհրդարանում կրկին քննարկման առիթ դարձավ Հայոց ցեղասպանության հիշատակման հարցը, որը հիմնականում վերաբերում էր Ավստրալիայի հայ և թուրք համայնքների փոխհարաբերությանը:

- *Մայիսի 29-30-ը* Լիբանանի Հայ Դատի հանձնաժողովը և Քուրդիստանի աքսորական խորհրդարանը համատեղ կազմակերպեցին միջազգային գիտաժողով՝ «Թուրքիայի ծավալապաշտական քաղաքականության վտանգները» թեմայով: Գիտաժողովը ընդունեց մի բանաձև, որտեղ Թուրքիայի կառավարությունից պահանջում էր պաշտոնապես ճանաչել հայերի ցեղասպանությունը, փոխհատուցել հայերին հասցրած վնասների դիմաց և վերադարձնել պատմական տարածքները:

- *Մայիսի 29-ին* Ֆրանսիայի Հանրապետության Ազգային ժողովը պաշտոնապես ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, միաձայն ընդունած բանաձևում արձանագրելով, որ «Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է 1915 թվականի հայերի ցեղասպանությունը»:

- *Հունիսի 13-ին* ԱՄՆ-ի Օրեկոն նահանգի Պորտլանդ քաղաքի համալսարանի շրջանավարտներին նվիրված հանդիսության ժամանակ, որին մասնակցում էր նաև ԱՄՆ-ի նախագահ Քիլ Քլինթոնը, հայ ուսանողները կազմակերպեցին բողոքի ցույց՝ համալսարանում թուրքական ամբիոն ստեղծելու դեմ:

- *Հունիսի 16-ին* Եվրախորհրդարանի լիագումար նիստում ֆրանսիացի և հույն պատգամավորները առաջարկեցին օրակարգ մտցնել հայերի ցեղա-

սպանության ճանաչման հարցը: Ձայների մեծամասնությունը չապահովելու պատճառով առաջարկը չանցավ:

- *Հունիսի 25-ին* Շվեյցարիայի հայկական համայնքի ջանքերով սոցիալիստ պատգամավոր Ժան Զիկլերը խորհրդարանի քննարկմանը ներկայացրեց հատուկ բանաձևի նախագիծ՝ հայերի ցեղասպանությունը ճանաչելու մասին:

- *Հունիսի 31-ին* պաշտոնական այցով Հայաստան ժամանած Արգենտինայի նախագահ Կարլոս Մենեմը ծաղկեպսակ դրեց Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրում և մեկ րոպե լռությամբ հարգեց զոհերի հիշատակը:

- *Հուլիսի 15-ին* Մեծ եղեռնի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց Ռուսաստանի Դաշնության զինվորական պատվիրակությունը՝ պաշտպանության նախարար մարշալ Իգոր Սերգեևի գլխավորությամբ:

- *Օգոստոսի 1-ին* ԱՄՆ-ի Միչիգանի համալսարանի Հայկական ուսումնասիրությունների կենտրոնը Սաութֆիլտ շրջանի սուրբ Հովհաննեսի եկեղեցում կազմակերպեց խրոհրդաժողով «Հայերի ցեղասպանությունը և Թուրքիայի ուրացումները» նշանաբանով:

- *Օգոստոսի 10-ին* ԱՄՆ-ի Մասսաչուսետս նահանգի նահանգապետի պաշտոնակատար Պոլ Սելուչին ստորագրեց մի օրենք, որը նախատեսում է նահանգի դպրոցական ուսումնական ծրագրերի մեջ մտցնել Հոլանդիայի մեծ սովի, հայերի ցեղասպանության և հրեական ողջակիզման պատմության դասավանդումը:

- *Օգոստոսի 12-ին* Սիավորված Ազգերի Կազմակերպության անդամ Հայաստանի, Կիպրոսի, Բուրունդիի, Ուրուգվայի և Ռուանդայի ներկայացուցիչները գլխավոր քարտուղար Քոֆի Աննանին հատուկ նամակ ուղղեցին՝ առաջարկելով սեպտեմբերի 9-ին ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովում նշել 1948թ. ՄԱԿ-ի կողմից ընդունված ցեղասպանության մասին հռչակագրի հիսնամյակը:

- *Օգոստոսի 21-ին* Երևանում կայացած մամուլի ասուլիսում Մեծ Բրիտանիայի խորհրդարանի Լորդերի Պալատի փոխխոսնակ բարոնուհի Քեռլայն Քոքսը հայտատարեց, որ իր կողմից Մեծ Բրիտանիայի կառավարության առջև բարձրացվել է Հայոց ցեղասպանության հարցը:

- *Սեպտեմբերի 11-ին* Մեծ Եղեռնի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց Կիպրոսի արտաքին գործերի նախարարը:

- *Սեպտեմբերի 25-ին* ելույթ ունենալով Միավորված Ազգերի Կազմակերպության 53-րդ նստաշրջանում՝ Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը կոչով դիմեց միջազգային հանրությանը՝ ճանաչելու Հայոց ցեղասպանությունը, խուսափելու համար աշխարհում նման ողբերգությունների կրկնությունից:

- *Հոկտեմբերի 1-ին* ԱՄՆ-ի Տեխասի նահանգի Էլ Պասո քաղաքի հրեական ողջակիզման թանգարանում Հայկական ազգային ինստիտուտի (ԱՆԻ) նախաձեռնությամբ ստեղծվեց Հայոց ցեղասպանությանը նվիրված մշտական գործող ցուցադրական բաժին, որը կրում է «Աշխարհը չի մոռացել» խորագիրը:

- *Հոկտեմբերի 4-ին* Մոնրեալի (Կանադա) «Մարսելեն Վիլսոն» պուրակում տեղադրվեց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշակոթո-

ղը: Հուշարձանի վրա արձանագրված է. «1915-ի Հայոց ցեղասպանության 83-րդ տարելիցի առթիվ, որին զոհ դարձան 1,5 միլիոն հայեր...»:
- *Հոկտեմբերի 9-ին* Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայի Շիլլերի անվան հրապարակում տեղի ունեցավ հայ ժողովրդի մեծ բարեկամ, «Մուսա Լեռան քառասուն օրերը» վեպի հեղինակ Ֆրանց Վերֆելի հուշարձանի բացման արարողությունը: Հուշարձանը ևվեր էր Հայաստանի Հանրապետության և ողջ հայ ժողովրդի կողմից:
- *Հոկտեմբերի 25-ին* ԱՄՆ-ի Լոս-Անջելես քաղաքում Արարատ-Էսքիճյան թանգարանի հովանավորությամբ հոգեհանգստյան արարողություն տեղի ունեցավ Արարատ Տաճ մատուռի մեջ, որտեղ հողին հանձնվեցին 1915-ի ցեղասպանության զոհերի աճյունները, որոնք Սիրիայի Տեր-Զոր անապատից հավաքել էր հայ ուխտագնացների խումբը Արմեն Արոյանի գլխավորությամբ:
- *Նոյեմբերի 14-ին* Լոս-Անջելեսում իր աշխատանքները սկսեց «Պատմական Հայաստանի քաղաքներն ու ճահանգները» խորագիրը կրող միջազգային չորրորդ գիտաժողովը, որը նվիրված էր Կարին-Էրզրում նահանգին: Գիտաժողովը կազմակերպել էր Կալիֆորնիայի համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը:
- *Դեկտեմբերի 2-ին* ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի 53-րդ նստաշրջանը միաձայն ընդունեց «Ցեղասպանության կանխարգելման և պատժելիության հռչակագրի ընդունման 50-ամյակի մասին» Հայաստանի ներկայացրած՝ ցեղասպանության դատապարտման բանաձևը:
- *Դեկտեմբերի 7-ին* Լոս-Անջելես քաղաքի նորընծա ոստիկանապետ Լի Պաքսն իր երդման արարողությունից անմիջապես հետո այցելեց Մոթե-պելլոյի հայ նահատակների հուշարձան և իր հարգանքի տուրքը մատուցեց զոհերի հիշատակին:

1999

- *Հունվարի 7-ին* Նյու-Յորքի գերեզմանոցներից մեկում, որտեղ թաղված է հայ ժողովրդի մեծ բարեկամ, 1913-1916թթ. Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն, տեղի ունեցավ հանդիսավոր արարողություն, որի ժամանակ գերեզմանից մի բուռ հող վերցվեց Երևանում Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրում ապրիլի 23-ին ամփոփելու համար:
- *Հունվարի 30-ին* Իրանի Իսլամական հանրապետության խորհրդարանի նիստում հանդես եկան խորհրդարանի հայ պատգամավորներ Վարդան Վարդանյանը և Արտավազդ Բաղումյանը՝ բողոքելով խորհրդարանի նիստին թուրքական պատվիրակության մասնակցության դեմ և լքեցին դահլիճը: Նրանք իրենց ելույթում պատճառաբանեցին, որ ներկայիս թուրքական պետությունը հանդիսանում է հայ ժողովրդի նկատմամբ ցեղասպանություն իրականացրած երիտթուրքերի պետության ժառանգորդը:
- *Փետրվարի 8-ին* ԱՄՆ-ի Ջորջիա նահանգի Սենատը բանաձև ընդունեց ապրիլի 24-ը հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օրը սահմանելու մասին:
- *Փետրվարի 15-ին* Կանադայի խորհրդարանի պատգամավոր Ջիմ Լարիկիանինիսը խորհրդարանի նիստում հանդես եկավ Հայոց ցեղասպա-

նությունը ճանաչելու հարցը քննարկելու առաջարկությամբ: Հարցը օրակարգ չմտավ:

- *Փետրվարի 17-ին* ամերիկահայ կազմակերպությունների խորհրդի ներկայացուցիչները Սպիտակ տանը հանդիպում ունեցան ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնի հետ: Զրույցի ընթացքում առանձնահատուկ նշվեց Հայոց ցեղասպանության և Լեռնային Ղարաբաղի հանրապետության ճանաչման մասին:

- *Մարտի 1-ին* Կանադայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Լևոն Քարխուդարյանը հանդիպում ունեցավ Կանադայի արտգործնախարարության ներկայացուցիչ Ջեյմս Ռայթի հետ Կանադայի խորհրդարանում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը քննարկելու կապակցությամբ և հույս հայտնեց, որ Կանադան ևս կզորակցի Հայոց ցեղասպանության միջազգային հանրության կողմից պաշտոնական ճանաչումի գործընթացին:

- *Մարտի 1-ին* Շվեյցարիայի խորհրդարանի Ազգային խորհրդի ճստաշրջանի օրակարգ մտավ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը: Ներկայացված բանաձևի հեղինակն էր պատգամավոր Ժան Զիկլերը, որը դեռևս 1998թ. հունիսի 11-ին 37 պատգամավորների ստորագրությամբ այն ներկայացրել էր խորհրդարան: 1998թ. հոկտեմբերի 21-ին Շվեյցարիայի դաշնային կառավարությունն այդ բանաձևի կապակցությամբ խորհրդարանին էր դիմել բացասական եզրակացությամբ, որը և վճռորոշ նշանակություն ունեցավ մերժելու հարցապնդումը:

- *Մարտի 5-ին* Ավստրալիայի Նյու-Սաութ Վեյլզ նահանգի խորհրդարանի բակում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի բացումը, որը կատարեց նահանգի վարչապետ Պապ Քարը:

- *Մարտի 10-ին* ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի Բերքլիի համալսարանի հայ ուսանողների խորհուրդը հատուկ մի նամակով դիմեց համալսարանի հոգաբարձուների խորհրդին՝ պահանջելով, որպեսզի թուրք դասախոս Համիդ Ալկարեն հրապարակային ներողություն խնդրի 1998թ. ապրիլի 24-ին Մեծ եղեռնի ոգեկոչման երեկոյին հայ ուսանողների հասցեին անարգանքի արտահայտություններ թույլ տալու համար:

- *Մարտի 16-ին* Երևանում Հայաստանի Հանրապետությունում Ռումինիայի դեսպան Պավել Պլատոնյան ծաղկեպսակ դրեց Մեծ եղեռնի հուշակոթողին:

- *Մարտի 17-ին* Հարավային Կարոլինայի սենատը որոշում ընդունեց 1999թ. Ապրիլի 24-ը որպես 1915-1923թթ. Հայոց ցեղասպանության հիշատակի օր սահմանելու մասին:

- *Մարտի 23-ին* Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնության Հանրապետության դեսպան տիկին Կարոլա Մյուլլեր Հոլտկեմպերը Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանին հանձնեց Գերմանիայի արտաքին գործերի նախարարության արխիվում պահվող 1889-1920թթ. վերաբերող փաստաթղթերի և վավերագրերի ֆոտոմանրապատճենները, որոնք խիստ արժեքավոր են հայերի ցեղասպանության ուսումնասիրման խնդրում: Ֆոտոմանրապատճենները ներկայումս պահվում են Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում:

- *Մարտի 23-ին* ԱՄՆ-ի Իլլինոյս նահանգի նահանգապետ Ջորջ Գ. Ռաիհյան նահանգում 1999թ. ապրիլի 24-ը հայտարարեց որպես հայ նահատակների հիշատակի օր:
- *Մարտի 24-ին* Վատիկանի թանգարանի «Սիքստինյան» սրահում բացվեց «Հայաստան-Հռոմ. 2000 տարվա հարաբերություններ» թեմայով ցուցահանդեսը: Ցուցահանդեսի բացման իր խոսքում Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանն անդրադարձավ նաև Հայոց ցեղասպանության դատապարտման խնդրին:
- *Մարտի 24-ին* Ֆրանսիայի Սենատի նախագահական խորհուրդը որոշեց առաջիկա նիստերի օրակարգ մտցնել և քննարկել 1998թ. մայիսի 29-ին Ազգային ժողովի կողմից միաձայն ընդունված 1915թ. հայերի ցեղասպանության ճանաչման վերաբերյալ օրինագիծը:
- *Ապրիլի 11-ին* Գերմանիայի Դաշնային Հանրապետության Ֆրանկֆուրտ քաղաքում գործող թուրքական «Միություն ընդդեմ ցեղասպանության» կազմակերպությունը հատուկ նամակ հղեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովին, Եվրամիության անդամ պետությունների խորհրդարաններին և մի շարք միջազգային կազմակերպություններին՝ կոչ անելով դատապարտել և ճանաչել օսմանյան «Միություն և առաջադիմություն» կուսակցության իշխանության տարիներին իրականացված Հայոց ցեղասպանությունը: Նամակին կցվել էր նաև Գերմանիայում բնակվող Թուրքիայի 11247 քաղաքացիների ստորագրությունները, որով պահանջվում էր Թուրքիայի կառավարությունից ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Միության կոչը և ստորագրությունների բնագրերը պահվում են Հայոց ցեղասպանության թանգարանում:
- *Ապրիլի 12-ին* ԱՄՆ-ի Պենսիլվանիա նահանգի Գլխավոր ասամբլեայի Ներկայացուցիչների պալատը 1999թ. ապրիլի 24-ը սահմանեց հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր:
- *Ապրիլի 14-ին* Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի օրակարգ մտավ «Հայկական ջարդ, 1915թ.» հարցը, որն առաջադրել էր բարոնուհի Քերոլայն Քոքսն այն բանից հետո, երբ Մեծ Բրիտանիայի կառավարությունը մերժել էր 1915 թվականին Թուրքիայի կողմից հայ ժողովրդի նկատմամբ կատարած գործողությունները ճանաչել որպես ցեղասպանություն: Լորդերի պալատի փոխխոսնակ Ք. Քոքսին քննարկման ժամանակ իրենց ելույթներում պաշտպանեցին մի խումբ լորդեր: Քննարկման արդյունքում Մեծ Բրիտանիայի կառավարության ներկայացուցչի ելույթից հետո կրկին Լորդերի պալատը մերժեց Ք. Քոքսի հարցապնդումը:
- *Ապրիլի 15-ին* ԱՄՆ-ի Կալիֆորնիայի նահանգի օրենսդրական ժողովը բանաձև ընդունեց ապրիլի 24-ին ողջ նահանգում 1915-1923թթ. Հայոց ցեղասպանության զոհերի, ինչպես նաև Սումգայիթում 1988թ. և Բաքվում 1990թ. տեղի ունեցած ջարդերի զոհերի հիշատակի օր սահմանելու մասին:
- *Ապրիլի 19-ին* ԱՄՆ-ի նախագահը Հայոց ցեղասպանության տարելիցի առթիվ հանդես եկավ հայտարարությամբ՝ ուղղված ամերիկահայերին, որտեղ սակայն, ինչպես միշտ չօգտագործվեց ցեղասպանություն բառը: Բիլլ Քլինտոնը մեկ և կես միլիոն հայերի տեղահանությունը և ջարդերը համարեց այս հարյուրամյակի պատմության ամենատխուր գլուխներից մեկը:

- *Ապրիլի 22-ին* ԱՄՆ-ի կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի վաթսուն անդամների ստորագրությամբ կոնգրեսի քննարկմանը ներկայացվեց մի բանաձևի նախագիծ, որը նվիրված էր Հայոց ցեղասպանության դատապարտմանը և կոչ էր անում ԱՄՆ-ի նախագահին բանաձևի ընդունման դեպքում Միացյալ Նահանգների արխիվներում Հայոց ցեղասպանությանը վերաբերող նյութերը Ներկայացուցիչների պալատի միջազգային հարաբերությունների կոմիտեին, ԱՄՆ-ի հրեական ողջակիզման զոհերի հիշատակի թանգարանին և Հայաստանի Հայոց ցեղասպանության թանգարանին հանձնելու համար:
- *Ապրիլի 22-ին* ԱՄՆ-ի Միչիգան նահանգի Ներկայացուցիչների պալատը բանաձև ընդունեց 1915-1923թթ. Հայոց ցեղասպանության 84-րդ տարելիցը նշելու մասին:
- *Ապրիլի 23-ին* Լոս-Անջելեսի թուրքական հյուպատոսարանի շենքի առջև ցույց կազմակերպեցին հայ երիտասարդները՝ պահանջելով թուրքական կառավարությունից ճանաչել Հայոց ցեղասպանությունը:
- *Ապրիլի 24-ին* Երևան ժամանեց և Մեծ Եղեռնի հուշահամալիրում ծաղկեպսակ դրեց Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում գործող «Ընդդեմ ցեղասպանության» միության պատվիրակությունը միության նախագահ, ազգությամբ թուրք Ալի Էրթեմի գլխավորությամբ: Տասներկու հոգուց բաղկացած պատվիրակության կազմում թուրքերից բացի ընդգրկված էին նաև քրդեր և ասորիներ:
- *Ապրիլի 24-ին* Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, հարյուր հազարավոր մտավորականներ, ուսանողներ, աշակերտներ, օտարերկրացիներ այցելեցին Ծիծեռնակաբերդի Մեծ Եղեռնի զոհերի հուշահամալիր և իրենց հարգանքի տուրքը մատուցեցին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:
- *Ապրիլի 24-ին* ցույցեր տեղի ունեցան Աթենքի և Սալոնիկի թուրքական հյուպատոսությունների առջև, որտեղ ցուցարարները հրկիզեցին Թուրքիայի դրոշը:
- *Ապրիլի 24-ին* Պրահայում չեխ-հայկական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպվեց երեկո՝ նվիրված Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:
- *Ապրիլի 24-ին* Թեհրանի Սուրբ Սարգիս եկեղեցում Եղեռնի զոհերի հիշատակին կատարված արարողությունից հետո թեհրանաբնակ հայերը թափորով շարժվեցին դեպի ՄԱԿ-ի ներկայացուցչատուն և հանդես եկան հակաթուրքական հայտարարություններով:
- *Ապրիլի 24-ին* Մոսկվայում տեղի իշխանությունների արտոնությունը ստանալով՝ հայերը ցույց կազմակերպեցին Թուրքիայի դեսպանության առջև:
- *Ապրիլի 24-ին* ԱՄՆ-ի Նյու Յորք նահանգի նահանգապետ Ջորջ Պատակին հրապարակեց հռչակագիր, որով 1999թ. ապրիլի 24-ը հայտարարում է հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր:
- *Ապրիլի 28-ին* ԱՄՆ-ի Ռոդ-Այլենդ նահանգի Ներկայացուցիչների պալատը բանաձև ընդունեց, որտեղ խորը ցավակցություն էր հայտնում 1915թ. ցեղասպանության զոհերի ընտանիքներին և ԱՄՆ-ի հայկական համայնքին:

- *Մայիսի 13-ին* Ավստրալիայի խորհրդարանի Ներկայացուցիչների պալատը կրկին անդրադարձավ Հայոց ցեղասպանության դատապարտման և 1999թ. ապրիլի 24-ը իբրև հիշողության օր սահմանելու հարցերին:
- *Հուլիսի 20-ին* Երևանում գտնվող Ֆրանսիայի Սենատի նախագահ Քրիստիան Պոնսլեն այցելեց Մեծ եղեռնի հուշահամալիր, ծաղկեպսակ դրեց ցեղասպանության զոհերի հուշակոթողին: Ուշադրությամբ դիտելով Հայոց ցեղասպանության թանգարանի գիտական ցուցադրությունը, Ք. Պոնսլեն թանգարանի այցելուների տպավորությունների մատյանում գրեց՝ «Ավարտվում է այս դարը, որի ընթացքում տեղի են ունեցել այսքան տառապանքներ և չարչարանքներ: Նկատի ունեմ 1915թ. ցեղասպանությունը, բայց համոզված եմ Անատոլ Ֆրանսի այն համոզմանը, որ վերածնվելու է ազատ և անկախ Հայաստանի Հանրապետությունը: Ես և իմ սենատոր ընկերներս իղձ ենք հայտնում, որ նոր հազարամյակը կբերի խաղաղություն, կայունություն, հաշտություն և եղբայրություն կայունացված Եվրոպայում»:
- *Սեպտեմբերի 3-ին* Երևանում գտնվող Ռուսաստանի Դաշնության Արտաքին գործերի նախարար Իգոր Իվանովը այցելեց Մեծ եղեռնի հուշահամալիր և ծաղկեպսակ դրեց զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողին: Հայոց ցեղասպանության թանգարանի ցուցադրությունը դիտելուց հետո Ի. Իվանովը կատարեց հետևյալ գրառումը. «Անհրաժեշտ է պատմությունն իմանալ և հիշել, որպեսզի այլևս չկրկնվեն նման ողբերգությունները: Սա հատկապես կարևոր է երիտասարդների և ապագա սերունդների համար»:
- *Սեպտեմբերի 4-ին* Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց և գրառում կատարեց Միավորված Ազգերի Կազմակերպության գլխավոր քարտուղարի փախստականների հարցերով տեղակալ տիկին Սադուկո Օգաթան: Նա գրեց՝ «Ծող ցեղասպանության զոհերի հոգիները խաղաղություն ու հանգիստ գտնեն և անխախտ երաշխիք դառնան խաղաղության ու մարդկային արժանապատվության հարգանքի, քանզի մենք գնում ենք դեպի 21-րդ դար»:
- *Սեպտեմբերի 11-ին* Հայոց ցեղասպանության թանգարան և Մեծ եղեռնի հուշահամալիր այցելեց Եվրախորհրդարանի նախագահ Ռասել Ջոնքսոնը: «Տխուր և սրտաշարժ փորձառություն էր: Երբեք հնարավոր չի դադարեցնել մարդու գազանային և սարսափելի ընդունակությունները, սակայն պետք է նաև հիշել, որ կան լավ մարդիկ» - գրեց նա այցելուների տպավորությունների մատյանում:
- *Սեպտեմբերի 15-ին* դիտելով Հայոց ցեղասպանության թանգարանի ցուցադրությունը՝ Նորվեգիայի արտաքին գործերի նախարարը կատարեց հետևյալ գրառումը. «Հայ ժողովրդի տառապանքները երբեք չպետք է մոռացվեն: Ֆրիտյոֆ Նանսենի ոգով մենք միշտ մեր առջև պետք է ունենանք անխախտ արժանապատվություն և յուրաքանչյուր մարդկային արարածի հանդեպ հարգանք»:
- *Սեպտեմբերի 16-ին* Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի դահլիճում իր աշխատանքները սկսեց. «Ֆրանց Վերֆելը և հայ ժողովուրդը» երկօրյա միջազգային գիտաժողովը, որը կազմակերպել էին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը և Վիեննայում գործող «Ֆրանց Վերֆել» կոմիտեն:

- *Սեպտեմբերի 23-ին* Գերմանիայի Դաշնային Հանրապետության Վիսբադեն քաղաքում գտնվող «Ասորիների-սիրիացիների ազգային խնդիրների կոորդինավորման կոմիտեն» հանդես եկավ հայ ժողովրդին ուղղված մի հայտարարությամբ, որը կրում էր «Հայերի աշխարհահռչակ ցեղասպանությունը ճանաչելու մասին համերաշխության և համաձայնության ասորական հռչակագիրը» խորագիրը:

Հռչակագրում ասվում էր, որ «Մենք ցանկանում ենք կանխել մարդկության դեմ ուղղված այս գազանային ակնծքը, որ կատարվում է ողջ պատմական ճշմարտությունը կեղծելու և լռեցնելու ճանապարհով: Սույնով մենք ցանկանում ենք հարգել բոլոր զոհերի հիշատակը, որ զոհ են դարձել այդ բարբարոսությանը և ասել, որ մեր անդուլ ջանքերով կփորձենք հաստատել արդարությունը և զոհերի հավերժական հիշատակը, կանխել նմանատիպ հետագա սարսափները, մարդկանց կրթելով մարդասիրական և համաձայնության գաղափարներով»:

- *Սեպտեմբերի 28-ին* Երևանի «Մոսկվա» կինոթատրոնում առաջին անգամ ներկայացվեց հոլանդուհի ռեժիսոր Դորոթի Ֆորմանի «Լռության պատ» վավերագրական ֆիլմը՝ նվիրված Հայոց ցեղասպանությունն ուսումնասիրող երկու գիտնականների՝ թուրք պատմաբան Թաներ Ակչամի և ամերիկահայ պրոֆեսոր Վահագն Տատրյանի անձնական կյանքի ու գիտական գործունեությանը:

- *Նոյեմբերի 26-ին* Ռուսաստանի Դաշնության Հանրապետության Ատոմային էներգետիկայի նախարար Ե. Ադամովը, դիտելով Հայոց ցեղասպանության թանգարանի ցուցադրությունը, կատարեց հետևյալ գրառումը. «Ռուսաստանը ցավով է հիշում և՛ իր, և՛ եղբայրական հայ ժողովրդի պատմությունը, և այդ պատմության այն էջերը, որ ստացել են ցեղասպանություն անվանումը: Մենք կանենք ամեն հնարավոր բան, որպեսզի աջակցենք Հայաստանի հզորացմանը»:

- *Դեկտեմբերի 1-ին* Բուլղարիայի Հանրապետության նախագահ Պ. Ստոյանովը Մեծ եղեռնի զոհերի հիշատակին ծառ տնկեց Հայոց ցեղասպանության թանգարանի ճեմուղում, ծաղկեպսակ դրեց հուշարձանին և թանգարանի ցուցադրությունը դիտելուց հետո ներքոհիշյալ գրառումը կատարեց. «Խորապես խոնարհվում եմ ժողովրդի պատմության հիմքում ընկած տառապանքի և հերոսության առջև: Հպարտ եմ, որ իմ ժողովուրդը ասպնջականություն և հովանավորություն տվեց իր հայրենիքից հալածված հայերին և բուլղար մեծ բանաստեղծը երգեց Հայաստանի և հայերի մասին՝ «Միշտ խիզախ ու մարտիրոս մի ժողովուրդ»:

2000

- *Հունվարի 20-ին* Ստոկհոլմի (Շվեդիա) համալսարանի ազգագիտության ինստիտուտում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանությանը նվիրված գիտաժողով, որին մասնակցեցին նաև Ուփսալայի և Լյունդի համալսարանի դասախոսներ, կովկասագետներ, Շվեդիայի խորհրդարանի անդամներ:

- *Հունվարին* Ստամբուլում ԵԱՀԿ գագաթաժողովի օրերին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի ելույթը, որտեղ ցեղասպանության ակնարկներ կային, ցուցադրվեց թուրքական հեռուստատեսությամբ: Գերմանիայում բնակվող 11247 թուրք քաղաքացիներ Թուրքիայի Ազգային մեծ ժողովին դիմեցին

Հայոց ցեղասպանությունը ճանաչելու խնդրանքով: Դիմումի պատճեները ուղարկվեցին միջազգային կազմակերպություններ և ԱՄՆ-ի Կոնգրես: Ֆրանկֆուրտի «Միություն ընդդեմ ցեղասպանության» հաստատության նախագահ Ալի Էրթեմը որպես փոխհատուցում 300 դոլար հատկացրեց Հայոց ցեղասպանության թանգարանին և խոստացավ մինչև իր կյանքի վերջն ամսական 25 դոլար նվիրել, որպեսզի օրինակ ծառայի մյուս թուրքերին:

- *Հունվարի 26-ից 28-ը* Ստոկհոլմում տեղի ունեցավ միջազգային վեհաժողով՝ նվիրված հրեաների ցեղասպանությանը, որին չհրավիրվեցին Հայաստանի Հանրապետության և սփյուռքահայ ներկայացուցիչները:

Վեհաժողովում ելույթ ունեցած Գերմանիայի պետական նախարար Սիքայել Նաումանը, Բուլղարիայի նախագահ Պիտեր Ստոյանովը, Հոլանդիայի ցեղասպանության ուսումնասիրման ծրագրի տնօրեն Քրիստիան Շչեռերը և Շվեդիայի վարչապետ Գորան Պերսոնը մասնակիցներին հիշեցրեցին Հայոց ցեղասպանության մասին՝ դատապարտելով Օսմանյան Թուրքիայի կառավարությանը:

- *Փետրվարի 3-ին* պաշտոնական այցով Երևանում գտնվելու ժամանակ Մեծ եղեռնի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան այցելեցին Սլովակիայի Հանրապետության Արտաքին գործերի նախարար Էդուարդ Կուկան և Սլովակիայի Հանրապետության Էկոնոմիկայի նախարար Լյուբոմիր Հարավը: Արտաքին գործերի նախարարը թանգարանի այցելուների տպավորությունների մատյանում կատարեց հետևյալ գրառումը. «Սլովակիայի Հանրապետության կառավարության անունից երաշխավորված եմ հարգանքի տուրք մատուցել 1915 թվականի Հայոց ցեղասպանության բոլոր զոհերին: Ես հավատում եմ, որ բոլոր ժողովուրդներն ապագայում կունենան մի ընդհանուր լեզու բոլոր էթնիկական խնդիրները լուծելու համար, որ ոչ մի դեպքում նման իրադարձությունները երբեք չեն կրկնվի»:

- *Փետրվարի 20-ին* ԱՄՆ-ի նախագահական ընտրարշավից առաջ ամերիկահայ համախոհներին ուղղված իր նամակում Տեխասի նահանգապետ, հանրապետական Ջորջ Բուշ կրտսերը գրել է. «Ծնորհակալություն, որ հետաքրքրվում եք իմ ընտրարշավի ամերիկահայերի մտահոգությունների հետ կապված հարցերով:

Քսաներորդ դարը ապականված է եղել աներևակայելի պատերազմներով, զանգվածային սպանություններով և ցեղասպանություններով: Պատմությունն արձանագրել է, որ անցած դարաշրջանի այդ բոլոր դաժանությունների առաջին կրողը եղել է հայ ժողովուրդը: Հայերը ենթարկվել են ցեղասպանական այնպիսի մի արշավի, որն անընդունելի է և պահանջում է բոլոր պարկեշտ մարդկանցից, որ հիշեն և ճանաչեն ընդհանրապես մարդկության դեմ գործված արյունալի ոճրագործությունների դարաշրջանում կատարված սարսափելի այդ ոճրի փաստերն ու դասերը: Նախագահ ընտրվելու դեպքում վստահեցնում եմ, որ որպես ազգ պատշաճորեն կճանաչենք հայ ժողովրդի ողբերգական տառապանքը:

Հայկական սփյուռքն ու Հայաստանի անկախ հանրապետությունը հայ ժողովրդի անընկճելի ոգու վկայություններն են:

Այս նոր դարաշրջանում Միացյալ Նահանգները պարտավոր են ակտիվորեն պաշտպանել Կովկասի բոլոր ազգությունների անկախությունը՝ խոստանալով շրջանային տարածայնությունների խաղաղ կարգավորում

և տարաշրջանի տնտեսական վերելք: Հայաստանում ժողովրդավարության զարգացումը, օրինականության հաստատմանն ու համբերատար բաց հասարակության կառուցմանը նպաստող ամերիկյան օժանդակությունը խիստ կենսական է և իմ լիակատար պաշտպանությունն է վայելում: Քաջալերվում եմ Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների միջև վերջին շրջանում կատարված քննարկումներից: Միացյալ Նահանգները պետք է ակտիվորեն աջակցեն տարածաշրջանում խաղաղության հաստատմանը և ցանկանան հանդես գալ որպես միջնորդ: Բայց ի վերջո խաղաղության շուրջ պետք է բանակցեն և կարողանան պահպանել այն շահագրգիռ կողմերը: Երկարատև խաղաղությունը կարող է հաստատվել միայն նրանց շահերից բխող համաձայնագրերից:

Ես գնահատում եմ Միացյալ Նահանգներին տրված ամերիկահայ համայնքի նպաստը, ամերիկահայ համայնքը հավատի և ընտանիքի արժեքներին հավատարիմ մնալու օրինակ է ծառայել ցարդ, և հավատացած եմ, այդպիսին կշարունակի մնալ ապագայում:

Անկեղծորեն՝ ՋՈՐՋ ԲՈՒՇ»

- *Մարտի 3-ից 7-ը* ԱՄՆ-ի Ֆիլադելֆիա քաղաքում տեղի ունեցավ աշխարհի և եկեղեցական 126 գիտնականների մասնակցությամբ հրեաների ողջակիզմանը նվիրված գիտական նստաշրջանը, որի մասնակիցները ստորագրեցին մի հայտարարություն՝ կոչ անելով միջազգային հանրությանը ճանաչել Հայոց ցեղասպանությունը որպես անհերքելի պատմական փաստ: Միաժամանակ կոչ արվեց նաև Թուրքիայի կառավարությանը և խորհրդարանին ճանաչել Հայոց ցեղասպանությունը, որը մի նոր անգնահատելի քայլ կարող էր լինել Թուրքիայում ժողովրդավարության ճանապարհին:
- *Մարտի 9-ին* Հռոմի քաղաքապետարանը որոշում կայացրեց 1915 թվականին հայերի նկատմամբ Թուրքիայում իրականացված զանգվածային սպանությունները որակել իբրև ցեղասպանություն և պահանջեց երկրի իշխանություններից արգելել Թուրքիայի մուտքը Եվրամիություն:
- *Մարտի 9-ին* ԱՄՆ-ի Վիրջինիա նահանգի Գլխավոր ասամբլեան բանաձև ընդունեց 2000թ. ապրիլի 24-ը 1915-1923թթ. հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր հայտարարելու մասին:
- *Մարտի 11-ին* Ֆրանսիայի Սենատի շենքի առջև հավաքվեցին 15-20 հազար ցուցարարներ: Բացի փարիզահայերից, ցույցին մասնակցեցին Նիցցա, Մարսել, Լիոն, Վալաս քաղաքներից Փարիզ ժամանած հայերը և ֆրանսիացիները: Ցուցարարները պահանջեցին Ֆրանսիայի Սենատում քննել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը:
- *Մարտի 21-ին* երկրորդ անգամ Ֆրանսիայի Սենատի քննարկմանը ներկայացվեց հայերի 1915թ. ցեղասպանության ճանաչման օրինագիծը, որը մերժվեց 172 դեմ, 130 կողմ և 4 ձեռնպահ քվեարկությամբ:
- *Մարտի 26-ին* Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում գործող թուրքական «Ընդդեմ ցեղասպանության» միության կողմից Մայնի-Ֆրանկֆուրտ քաղաքում բացվեց ցուցահանդես-հավաք՝ նվիրված 1955թ. սեպտեմբերի 6-7-ին Ստամբուլում տեղի ունեցած վայրագ իրադարձություններին, որի ժամանակ թուրք ազգայնամոլները, հարձակվելով հայերի, հույների, հրեաների և ասորիների առևտրական ու մշակութային հաստատությունների վրա, թալանեցին ու քարուքանդ արեցին ամեն ինչ:

- *Մարտի 26-ից ապրիլի 29-ը* Մեծ Բրիտանիայում գործող «Հայոց ցեղասպանության ճանաչման կոմիտեն» ձեռնարկեց միջոցառումների մի ընդարձակ շարք՝ նվիրված Մեծ եղեռնի 85-րդ տարելիցին: Մարտի 26-ին Լոնդոնի թատրոններից մեկում ցուցադրվեց Լոս-Անջելեսից Միքայել Հակոբյանի «Հայոց ցեղասպանություն» փաստավավերագրական ֆիլմը: Ապրիլի 16-ին նույն թատրոնում դասախոսություններով հանդես եկան հայ պատմաբաններ Արա Սարաֆյանը և Գրեգորի Թոփալյանը: Ապրիլի 19-ին դասախոսությամբ հանդես եկավ Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը: Ապրիլի 24-ին լոնդոնահայերը մասնակցեցին Սուրբ Սարգիս եկեղեցում կայացած պատարագին, որից հետո ցույց կազմակերպեցին Թուրքիայի դեսպանատան առջև:
- *Մարտի 29-ին* Շվեդիայի Ռիքսդագը հաստատեց Հայոց ցեղասպանության ճանաչմանը և դատապարտմանը նվիրված բանաձևը: Դեռևս 1999թ. դեկտեմբերի 4-ին Ուփսալա քաղաքում կայացավ շվեդ գործիչներից և շվեդահայերից կազմված «Համադրող կենտրոնի» առաջին ընդլայնված խորհրդակցությունը, որը ձեռնարկեց Շվեդիայի խորհրդարանում Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու ուղղությամբ համապատասխան փաստաթղթերի կազմման և բանաձևի քննարկման գործը:

Այդ գործընթացին անգնահատելի անձնական մասնակցություն բերեց Շվեդիայի «Ձախ կուսակցության» կողմից խորհրդարանի անդամ ընտրված մեր հայրենակից Մուրադ Արքինը:
- *Ապրիլի 3-ին* Իտալիայի Կամերային (փոքր) խորհրդարանը քննարկեց Իտալիայի խորհրդարանի քննարկմանը ներկայացվող Հայոց ցեղասպանության դատապարտման բանաձևի նախագիծը:
- *Ապրիլի 7-ին* ԱՄՆ-ի Մեն նահանգի օրենսդրական ժողովը պաշտոնական կարծիք հայտնեց այն մասին, որ նահանգի Սենատի և Ներկայացուցիչների պալատի անդամները համատեղ միանում են նահանգի հայ բնակչությանը 2000թ. ապրիլի 24-ին ցեղասպանության զոհերի հիշատակի 85-րդ տարելիցը նշելու միջոցառումներին:
- *Ապրիլի 9-ին* Բեռլինի ժողովրդավարության տանը կլոր սեղանի շուրջ ծավալվեց բանավեճ՝ նվիրված «Քեռնավորված անցյալով Թուրքիան Եվրոպա կմտնի՞» թեմային:

Բանավեճը վարում էր «Վտանգված ազգերի կազմակերպության» նախագահ դոկտոր Թեսսա Հոֆմանը: Միջոցառմանը մասնակցում էին մեծ թվով գերմանացիներ, թուրքեր և հայեր, որոնք հիմնականում դատապարտեցին Հայոց ցեղասպանությունը և կոչ արեցին Գերմանիայի Բունդեսթագին՝ ճանաչել Հայոց ցեղասպանությունը:
- *Ապրիլի 11-ին* ԱՄՆ-ի Նեվադա նահանգի նահանգապետ Քեննի Գուիննին 2000թ. ապրիլի 24-ը հռչակեց 20-րդ դարի առաջին ցեղասպանության զոհերի հիշատակի օր:
- *Ապրիլի 12-ին* ԱՄՆ-ի կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի ավելի քան քառասուն անդամներ հանդես եկան մի շարք ելույթներով՝ ոգեկոչելով Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակը: Կոնգրեսականների՝ ուղիղ եթեր հեռարձակված ելույթները կազմակերպել էին կոնգրեսի հայկական հարցերի հանձնախմբի համանախագահներ Ֆրենկ Փալոնի և Ջոն Փորթերի նախաձեռնությամբ: Հանձնախումբը մշակել էր թիվ 298 բանաձևը, որն ԱՄՆ-ի նախագահին կոչ էր անում Հայոց ցեղասպանության շուրջ համա-

պատասխան նյութեր և ուսումնասիրություն ապահովել արտաքին գործերի նախարարության և արտաքին կապերի ծառայությունների բոլոր պաշտոնյաների համար:

- *Ապրիլի 12-ին* ԱՄՆ-ի Ռոդ-Այլենդ նահանգի Ներկայացուցիչների պալատը բանաձև ընդունեց 2000թ. ապրիլի 24-ը հայերի ցեղասպանության զոհերի օր հռչակելու մասին:

- *Ապրիլի13-ին* Գերմանիայի Վուպերթալ քաղաքի Հին սինագոգում կազմակերպվեց Հայոց ցեղասպանության 85-ամյակին նվիրված հուշ-երեկո, որի նախաձեռնողն էր դոկտոր Սիհրան Դաբաղի գլխավորած «Սփյուռք և ցեղասպանություն» հաստատությունը: Երեկոյին Հայոց ցեղասպանության դատապարտմանը նվիրված խոսքով հանդես եկավ Վուպերթալի քաղաքագլուխ Ուլրիխ Յոլդանը:

- *Ապրիլի 13-ին* ԱՄՆ-ի Ռոդ-Այլենդ նահանգի Սենատը որոշում կայացրեց 2000թ. ապրիլի 24-ին հայերի ցեղասպանության 85-րդ տարելիցը նշելու մասին:

- *Ապրիլի 14-ին* Վարշավայում գործող «Հայաստան» և «Լեհ-հայկական» ընկերությունները համատեղ հուշ-երեկո կազմակերպեցին՝ նվիրված Հայոց ցեղասպանության 85-րդ տարելիցին:

- *Ապրիլի 17-ին* ԱՄՆ-ի Նյու Յորք նահանգի նահանգապետ Ջորջ Պատակին 2000թ. ապրիլի 24-ը հռչակեց որպես Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր:

- *Ապրիլի 17-ին* Մեծ եղեռնի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց Ֆրանսիայի Սենատի «Ֆրանսիա-Հայաստան» բարեկամության խմբի հինգ անդամներից բաղկացած պատվիրակությունը, որի անդամները թանգարանի այցելուների տպավորությունների մատյանում առանձին-առանձին հարկ համարեցին գրառել իրենց հետևյալ մտորումները.

1. «Եթե կա մի նախաձեռնություն, որի համար ես հպարտ եմ, դա Ազգային ժողովում 1915թ. Հայոց ցեղասպանության ճանաչման ակունքներում լինելն է: 1998թ. մայիսի 29-ին այդ օրը իմ քաղաքական պայքարը և անձնական մաքառումները հատուկ իմաստավորում գտան: Այսօր Երևանում, ցեղասպանության այս թանգարանում, ես ավելի եմ համոզվում, թե որքանով է կարևոր պատմությունը ըմբռնելու աշխատանքը: Նա, ով հիշողության գործն է կատարում, հույս է ավետում:

Ժան Պոլ Բրեա,
Ազգային ժողովի բարեկամության խմբի նախագահ:

2. «Երկրորդ անգամ այցելելով ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված այս հուշահամալիրը՝ զգացումները նույն են, քանի որ «ճշմարտությունը» վեր է ժամանակից: Այն կպարտադրի բոլորին:

Ռ. Կազանով,
Ազգային ժողովի պատգամավոր:

3. «Զգացմունքներ, ճանաչում, վշտակցում... Ձեր ցեղասպանությունը մեր ցեղասպանությունն է: Մենք կպայքարենք համընդհանուր ճանաչման համար:

Ազգային ժողովի պատգամավոր Դրոմից:

4. «Ես երջանիկ եմ, որ երկրորդ անգամ գտնվում եմ հիշողության այս վայրում, որը զոհերին հիշեցնում է մի ազգի տառապանքները, որոնք

արժանի են ավելիին, քան այն լուությունը, որին ցանկանում են նրան դատապարտել:

Գի Տեսիեն, Ազգային ժողովի պատգամավոր,
բարեկամության խմբի փոխնախագահ:

5. «Գլուխս խոնարհում եմ հայ ժողովրդի տառապանքների առջև: Ես մեկն էի կոմունիստական խմբակցության խոսնակներից 1998թ. մայիսի 28-ի այդ օրը: Պայքարը շարունակվում է:

Ռոժե Մեի, պատգամավոր Բուշ դյու Ռոնից,
բարեկամության խմբի փոխնախագահ»:

- *Ապրիլի 18-ին* ԱՄՆ-ի Պենսիլվանիա նահանգի Գլխավոր ասամբլեան 2000թ. ապրիլի 24-ը հայտարարեց հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր:
- *Ապրիլի 18-ից 21-ը* Երևանում Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան կազմակերպեց «21-րդ դարը առանց ցեղասպանությունների» նշանաբանով գիտաժողով, որին զեկուցումներով հանդես եկան 43 գիտնականներ: Գիտաժողովում ընթերցվեց Հայաստանի Հանրապետության նախագահ Ռ. Քոչարյանի ուղերձը գիտաժողովի մասնակիցներին: Գիտաժողովի մասնակիցների առջև բարեմաղթանքի խոսքով հանդես եկավ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ:
- *Ապրիլի 20-ին* ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի նահանգապետ Գրեյ Դեյվիսն իր հռչակագրով 2000թ. ապրիլի 24-ը հայտարարեց հայերի ցեղասպանության հիշատակի օր:
- *Ապրիլի 22-ին* Երևանում իր աշխատանքները սկսեց հայ ժողովրդի մեծ բարեկամ, նշանավոր գրող և հրապարակախոս Անատոլ Ֆրանսի հիշատակին նվիրված «Անատոլ Ֆրանսը և հայ ժողովուրդը» նշանաբանով միջազգային գիտաժողովը, որի աշխատանքներին մասնակցեցին նաև իտալացի գիտնականներ:
- *Ապրիլի 22-ին* Մոսկվայում Ֆրանսիայի դեսպանատան առջև Մոսկվայի հայ բնակիչները, թվով քսան մարդ, հավաք-նստացույցով իրենց բողոքը հայտնեցին Ֆրանսիայի Սենատի որդեգրած դիրքորոշման կապակցությամբ:
- *Ապրիլի 23-ին և 24-ին* Աթենքի հունահայ համայնքը կազմակերպեց Հայոց Մեծ եղեռնի 85-ամյակին նվիրված միջոցառումների շարք: Ապրիլի 23-ին Աթենքի «Ատիկոն» թատերասրահում տեղի ունեցավ հանդիսավոր ցերեկույթ, որին մասնակցեցին հունահայ համայնքային հասարակական-քաղաքական, բարեգործական, եկեղեցական, կրթամշակութային բոլոր կազմակերպությունները, Հունաստանի կառավարության, խորհրդարանի, կուսակցությունների, Աթենքի նահանգապետարանի և քաղաքապետարանների ներկայացուցիչները: Ելույթ ունեցողների թվում էր Հունաստանի խորհրդարանի նախագահ Ապոստոլոս Կակլամանիսը:
- *Ապրիլի 23-ին* Հայոց ցեղասպանության թանգարանում տեղի ունեցավ Անատոլ Ֆրանսի հիշատակի մեծարման հանդիսավոր արարողություն: Թանգարանում բացվեց ժամանակավոր ցուցահանդես նվիրված Անատոլ Ֆրանսի կյանքին և գործին:

Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրի հուշապատի մեջ ամփոփվեց Փարիզում թաղված Անատոլ Ֆրանսի գերեզմանից բերված հողով սափորը:

- *Ապրիլի 23-ին* Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում կայացավ հիշատակի համերգ: Համերգից առաջ ներկաների առջև հանդես եկան Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը և Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Լավրնտի Բարսեղյանը:
- *Ապրիլի 24-ին* Ծիծեռնակաբերդի Մեծ Եղեռնի հուշահամալիր այցելեց շուրջ չորս հարյուր հազար մարդ, որոնք հարգանքի տուրք մատուցեցին ցեղասպանության զոհերի հիշատակին:
- *Ապրիլի 23-ին և 24-ին* Մեծ եղեռնի 85-րդ տարելիցին նվիրված հանդիսություններ տեղի ունեցան Հունաստանի Սալոնիկ քաղաքում: Քաղաքի «Էթերիա Մակեդոնիկոս Աբուտոն» սրահում կազմակերպվեց մեծ հավաք, որտեղ ելույթներով հանդես եկան հույն քաղաքական գործիչներ և հայ համայնքի ակտիվիստներ: Այնուհետև մասնակիցների երթը հանգրվանեց 3-րդ Զորաբանակի հուշարձանի մոտ, որտեղ Հունաստանի և Հայաստանի օրհներգերի կատարմամբ ծաղկեպսակներ դրվեցին:
- *Ապրիլի 24-ին* քսան հազար հայեր Փարիզում Ֆրանսիայի Սենատի հրապարակում հավաքվելուց հետո ցույց-երթ կազմակերպեցին դեպի կառավարության շենքը՝ պահանջելով ընդունել Ազգային ժողովի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման մասին կայացրած որոշումը:
- *Ապրիլի 24-ին* Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի օրը նշվեց Շվեդիայի Վեստերոս քաղաքում, որին մասնակցեցին շվեդահայ տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ:
- *Ապրիլի 24-ին* Պրահայի (Չեխիա) հայերը Թուրքիայի դեսպանատան առջև կազմակերպեցին ցույց՝ «Պահանջում ենք ճանաչել 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը», «Թուրքիա, մաքուր ձեռքերով մտի՛ր 21-րդ դար և Եվրոպա», «Թուրքիա, ընդունիր 85 տարի առաջ գործած հանցանքդ» կոչերով: Ելույթներով հանդես եկան չեխերն ու հայերը: Նույն օրը երեկոյան Պրահայի Միջազգային արվեստի սրահում բացվեց Պրահայում ստեղծագործող տասնյոթ հայ նկարիչների ցուցահանդեսը՝ նվիրված Մեծ եղեռնի 85-րդ տարելիցին:
- *Ապրիլի 24-ին* Ուրուգվայի բազմամիութենական կազմակերպության կողմից Մոնտեվիդեոյի «Արմենիա» հրապարակում կազմակերպվեց Հայոց ցեղասպանության 85-րդ տարելիցին նվիրված արարողություն, որին բացի հայ համայնքի ներկայացուցիչներից մասնակցում էին պետական նախարարներ, խորհրդարանի և կառավարության անդամներ, սենատորներ:

Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանին դրվեցին ծաղկեպսակներ, կատարվեցին Ուրուգվայի և Հայաստանի հիմները: Այնուհետև ելույթ ունեցավ օրվա միակ բանախոսը՝ Ուրուգվայի արտաքին գործերի նախարար Դիդիեռ Օպերտիը:
- *Ապրիլի24-ին* Բուենոս-Այրեսի (Արգենտինա) հայ համայնքի երիտասարդները քաղաքի կենտրոնական փողոցներից մեկում համաքաղաքացիներին բաժանեցին գեղարվեստական հայտագիր: Հատուկ տեղադրված վրանում այցելուներին տեղեկությունների և տեսաֆիլմերի միջոցով ծանոթացնում էին հայերի ցեղասպանության մասին բազմաթիվ նյութերի հետ: Նույն օրը Բուենոս-Այրեսի Մայր տաճարում կազմակերպվեց միջեկեղեցական արարողություն, որը գլխավորեց Արգենտինայի հոգևոր առաջնորդ եպիսկոպոս Խորխե Մարիո Բերգոգլիոն:

- *Ապրիլի 24-ին* հարյուրավոր բուլղարահայեր հավաքներ կազմակերպեցին Սոֆիայում, Պլովդիվում, Սլիվենում, Պազարջիկում: Սոֆիայում Համազգային կոմիտեն ծաղկեպսակներ դրեց Անհայտ զինվորի գերեզմանին և հայ ժողովրդի մեծ բարեկամ, բուլղարացի ճշաճավոր պոետ Պեյու Յավորովի տուն-թանգարանի շենքի առջև: 1915թ. զոհերի հիշատակին կառուցված հուշարձանի մոտ կազմակերպվեց սգո հանդես:
- *Ապրիլի 24-ին* Սալոնիկի հայկական եկեղեցում տեղի ունեցավ Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հոգեհանգստի արարողություն: Հոգեհանգստից հետո եկեղեցում հակիրճ ելույթով հանդես եկավ Սալոնիկի նահանգապետ Պ. Պապադոպուլոսը, որը կոչ արեց Թուրքիային «Ներողություն խնդրել հայերից»: Նույն օրը հայ երիտասարդները բողոքի երթ կազմակերպեցին դեպի Սալոնիկում տեղակայված Թուրքիայի հյուպատոսարան:
- *Ապրիլի 24-ին* Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիայում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության 85-ամյակի ոգեկոչման հանդիսավոր արարողություն: Համառոտ խոսքով հանդես եկավ Կիպրոսի Հանրապետության խորհրդարանի նախագահ Սպիրոս Կիպրիանուն:
- *Ապրիլի 24-ին* Մոսկվայի Սուրբ Հարություն Եկեղեցու բակում կայացավ սգո և հիշատակի հանրահավաք՝ Մոսկվայի հայ բնակչության մասնակցությամբ: Հանրահավաքի մասնակիցներից կազմված մի խումբ եկեղեցու բակից կազմակերպված մեկնեց Թուրքիայի դեսպանատան ուղղությամբ, որտեղ և տեղի ունեցավ բողոքի ցույց:

Նույն օրը երեկոյան Մոսկվայի ամենաառաջնակարգ սրահներից մեկում՝ Միությունների տան սյունազարդ դահլիճում, տեղի ունեցավ հավաքույթ:
- *Ապրիլի 24-ին* Ծիծեռնակաբերդ այցելեց Գերմանիայում գործող «Ընդդեմ ցեղասպանության» միության թուրք կանանց պատվիրակությունը, որը ծաղկեպսակ դրեց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:
- *Ապրիլի 24-ին* Երուսաղեմում հայ համայնքի առջև հայտարարությամբ հանդես եկավ Իսրայելի կրթության նախարար Յոսի Սարիդը, որը 1915-ին հայերի դեմ իրագործած կոտորածը համարեց արդի ժամանակների ամենասարսափելի գործողություններից մեկը:

Նախարարի հայտարարությունը մեծ աղմուկ բարձրացրեց Թուրքիայում: Յոսի Սարիդը կառավարության ճնշումների տակ ստիպված հրաժարական տվեց:
- *Ապրիլի 24-ին* Սիրիայի Տեր-Զոր քաղաքում կառուցված Սուրբ Նահատակների վանք այցելեցին երեսուն հազար ուխտագնացներ, որոնք դիտեցին եկեղեցում բացված Մեծ եղեռնի զոհերի հուշասրահի նոր ցուցադրությունը:
- *Ապրիլի 24-ին* ԱՄՆ-ի պրեզիդենտ Բիլլ Քլինտոնը հանդես եկավ հայտարարությամբ՝ ցավակցություն հայտնելով ամերիկահայերին 20-րդ դարի մեծ ողբերգության՝ Օսմանյան կայսրությունում հայերի տեղահանության և մեկ և կես միլիոն հայերի կոտորածների համար:
- *Ապրիլի 25-ին* Ավստրիայի խորհրդարանական հանձնաժողովը քննարկեց «Կանաչների միության» խորհրդարանական խմբի առաջարկությունը խորհրդարանի նիստի օրակարգում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը մտցնելու մասին: Հանձնաժողովը մերժեց առաջարկությունը:

- *Ապրիլի 25-ին* Պրահայի Սուրբ Սալվադոր եկեղեցում տեղի ունեցավ Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշ-երեկո, որին կազմակերպիչներն էին չեխական «Մարդը կարիքի մեջ», «Կարիտաս», «Համագոյություն 21» կազմակերպությունները և Յիհլավայի հայ համայնքը: Մասնակիցները կոչ արեցին Չեխիայի խորհրդարանին ընդունել մի օրենք, որը կդատապարտեր 1915 թվականին Թուրքիայի կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունը:
- *Ապրիլի 27-ին* ԱՄՆ-ի Իլլինոյս նահանգի նահանգապետը հանդես եկավ Հռչակագրով, 2000թ. ապրիլի 24-ը հայերի ցեղասպանության 85-րդ տարելիցի կապակցությամբ հայ նահատակների հիշատակի օր հայտարարելու մասին:
- *Ապրիլի 29-ին* Կրակովում (Լեհաստան) տեղի Հայկական մշակութային միության ջանքերով կազմակերպվեց պատարագ, որի արարողությանը ներկա էին երեք հարյուրից ավելի լեհահայեր: Այնուհետև ծաղկեպսակ դրվեց Կատինում կանգնեցված խաչի տակ՝ ի նշանավորումն մարդկության դեմ կատարված բոլոր ոճրագործությունների զոհերի հիշատակի:
- *Ապրիլի 29-ին* Գերմանիայում բնակվող հայերը կազմակերպեցին ցույց նվիրված Հայոց ցեղասպանության ճանաչմանը: Մեկուկես ժամ Բեռլինի կենտրոնում կանգ էր առել տրանսպորտի երթևեկությունը: Ավելի քան 300 ցուցարարներ քայլելով անցել են Քուրֆյուրշտենդամ փողոցով մինչև Թուրքիայի դեսպանատուն, որտեղ հանդես են եկել ելույթներով և հայրենասիրական երգերով:
- *Մայիսի 2-ին* ԱՄՆ-ի Վիսկոնսին նահանգի Ասամբլեան որոշում կայացրեց յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ը նահանգում հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր սահմանելու մասին:
- *Մայիսի 5-ին* Մեծ եղեռնի զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցեց Իրաքի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության պատվիրակությունը, որը դիտելով Հայոց ցեղասպանության թանգարանի ցուցադրությունը՝ այցելուների տպավորությունների մատյանում գրառեց. «Իրաքի պատվիրակությունն այցելեց նահատակների հուշարձանին և հայերի ջարդերի թանգարան: Այն, ինչ տեսանք, ցույց է տալիս, որ հայ ժողովրդի իրավունքի հանդեպ կատարվել է գարշելի մի ոճիր... Ողորմի նահատակներին»:
- *Մայիսի 11-ին* Հայոց ցեղասպանության 85-րդ տարեդարձի առթիվ Լիբանանի պատգամավորների Պալատը բանաձև ընդունեց, որտեղ ճանաչեց և դատապարտեց հայ ժողովրդի նկատմամբ ձեռնարկված ցեղասպանությունը և իր համերաշխությունը հայտնեց իր երկրի հայ քաղաքացիներին:
- *Մայիսի 17-ին* լինելով թանգարանում՝ Իրանի Իսլամական Հանրապետության Պաշտպանության նախարարության պատվիրակության ղեկավար, փոխնախարար, ծովակալ Հուսեյին Ալի Ալբատսին տպավորությունների մատյանում գրեց. «Ցավում ենք հայերի հետ պատահածի համար, բոլորս Աղամից և Եվայից ենք սերվել... Ցանկանում ենք, որ հայ ժողովուրդը վերականգնի և շարունակի իր կյանքի առաջընթացը»:
- *Մայիսի կեսերին* Շառլ Ազնավուրը մերժեց Ֆրանսիայի Սենատի նախագահ Քրիստիան Պոնսլեի առաջարկը՝ ապահովել հուլիսի14-ին երկրի ազգային տոնի առթիվ կազմակերպվելիք հանդիսության գեղարվեստա-

կան մասը: Դրանով նա իր բողոքն արտահայտեց երկու անգամ Սենատի օրակարգից Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևի հանման դեմ: «Եթե հուլիսի 14-ին Սենատի համար երգեի, պիտի նշանակեր ուրանալ ծագումս: Մյուս կողմից, դա պիտի նշանակեր կտրել ինձ սփյուռքից, նաև՝ վավերացնել այն, ինչ տեղի ունեցավ նիստում: Երբեք հակաթուրք չեմ եղել: Թուրք ժողովուրդը չգիտի ճշմարտությունը: Թուրքիան սպառնաց Ֆրանսիային: Արդյոք Ֆրանսիան այն երկի՞րն է, որին կարեի է սպառնալ: Մի քիչ տարօրինակ է թվում: Ամերիկայի պատճառով է, որ չի ընդունվում ցեղասպանության վաստը» - հայտարարեց Ազնավուրը:

- *Մայիսի 15-ին* Լիբանանի խորհրդարանը ճանաչեց Օսմանյան կայսրությունում 1,5 մլն հայերի ցեղասպանությունը՝ նշելով, որ դրա միջազգային ճանաչումն ապագայում կօգնի նման ոճիրների կանխմանը:

- *Մայիսի վերջին* Իսրայելի արտգործնախարար Դեվիդ Լեվին իր թուրք պաշտոնակիցներին հղած նամակում փորձեց մեղմել թուրք-իսրայելական հարաբերություններում ծագած լարվածությունը՝ նշելով, որ 1915-1923թթ. Հայոց ցեղասպանության հարցը պետք է քննեն պատմաբանները, և որ իսրայելցի երկու նախարարների ավելի վաղ արած հայտարարությունները «չեն արտացոլում Իսրայելի կառավարության դիրքորոշումը»:

- *Հունիսի 7-ին* Ամերիկայի հայկական 19 կազմակերպություններ դիմեցին ԱՄՆ-ի կոնգրեսի միջազգային հարաբերությունների կոմիտեին՝ կոչ անելով օրակարգ մտցնել Օսմանյան Թուրքիայում 20-րդ դարի սկզբին տեղի ունեցած Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ բանաձևի քվեարկությունը:

- *Հունիսի 16-ին* Իտալիայի Հռոմ նահանգի խորհուրդը բանաձև ընդունեց՝ խնդրելով Իտալիայի խորհրդարանին՝ ճանաչել Հայոց ցեղասպանությունը և իր համերաշխությունը հայտնեց հայ ժողովրդին:

- *Հունիսի 17-ին* Փարիզում Ֆրանսիայի Սենատի «Մեդիցիս» դահլիճում տեղի ունեցավ համաժողով «Հայ-թուրքական երկխոսությունն այսօր Հայկական հարցի մասին» նշանաբանով, որին զեկուցումներով մասնակցեցին մտավորականներ Հայաստանի Հանրապետությունից, Թուրքիայի Հանրապետությունից և ԱՄՆ-ից: Համաժողովի աշխատանքներին լեփ-լեցուն դահլիճում ներկա էին մտավորականներ Ֆրանսիայից, Գերմանիայից, Բելգիայից, Շվեյցարիայից, Շվեդիայից, Թուրքիայից:

- *Հունիսի 18-ին* Փարիզում գործող «Ապրիլի 24» հանձնախումբը շուրջ տասը հազար մասնակիցներով ցույց կազմակերպեց՝ Փարիզի փողոցներով շարժվելով մինչև Սենատի հրապարակ: Ցուցարարները պահանջեցին Հայոց ցեղասպանության ճանաչման մասին բանաձևը Սենատի օրակարգ մտցնել: Ցույցի ժամանակ ելույթ ունեցան Սենատի կոմունիստական և սոցիալիստական կուսակցությունների խմբակցությունների ղեկավարները:

- *Հուլիսի 14-ին* Մեծ եղեռնի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց Իրանի Իսլամական Հանրապետության Պաշտպանության նախարարության պատվիրակությունը՝ փոխնախարարի գլխավորությամբ: Թանգարանի այցելուների տպավորությունների մատյանում պատվիրակության ղեկավարը կատարեց հետևյալ գրառումը. «... Հայաստանի ժողովրդի զանգվածային սպանդի մասին պատմող նյութերի դիտումը, որոնք Հայաստանի պետության և ժողովրդի պատմության ցավալի մի հատվածի վկայություն են, մեծ ցավ և վիշտ առաջացրեց: Անշուշտ զանգ-

վածային այս սպանդը միջազգային իրավունքի և նորմերի տեսակետից դատապարտելի է: Հուսով ենք, որ Հայաստանի ժողովուրդն ու կառավարությունը, վառ պահելով այս տարեթիվը, ճիշտ ու իրապես փոխանցելով այն գալիք սերունդներին, պայմաններ կստեղծեն, որպեսզի միշտ ուշադիր լինեն իրենց շուրջը ստեղծվող սպառնալիքներին և դավադրություններին ու թույլ չեն տա, որ պատմությունը այլ տեսքով և ձևով կրկնի իրադարձությունները»:

- *Հուլիսի* ՄԱԿ-ի հովանավորությամբ և CNN հեռուստաընկերության սեփականատեր Թեդ Թեռների ֆինանսավորմամբ ու պատվո նախագահությամբ Նյու Յորքում անցկացվեց «Կրոնապետերի և հոգևոր առաջնորդների հազարամյակի համաշխարհային խաղաղության համաժողով»: 4-օրյա հանդիպման ընթացքում 1000-ից ավելի բարձրաստիճան հոգևորականներ աղոթեցին և խաղաղության ուղիներ որոնեցին: Համաժողովին ներկա չէին Հռոմի պապը, Դալայլաման և Երուսաղեմի մուֆթին: Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն ՄԱԿ-ի ամբիոնից մասնավորապես հայտարարեց. «հինգ տարի հետո Հայաստանը դեռևս սպասում է Ցեղասպանության համաշխարհային ճանաչմանը»:

- *Հուլիսի վերջին* Կալիֆորնիայի Սենատը միաձայն վավերացրեց սենատորներ Ադամ Շիֆի և Ժակ Փուչիկյանի օրինագիծը 1915թ. ցեղասպանության զոհերի ապահովագրական պահանջների և հատուցման վերաբերյալ: Խոսքը 1890-1915թթ. ամերիկյան ապահովագրական ընկերություններում գույք ապահովագրած անձանց և նրանց ժառանգների փոխհատուցման իրավունքի մասին է:

- *Հուլիսի 28-ին* Հայոց ցեղասպանության թանգարանի ցուցադրությունը դիտեց և Մեծ եղեռնի հուշահամալիրում ցեղասպանության զոհերին հարգանքի տուրք մատուցեց Ուկրաինայի Օդեսա քաղաքի պատվիրակությունը: Օդեսայի քաղաքապետ Ռ. Բոդեպանը թանգարանի այցելուների տպավորությունների մատյանում գրառեց. «Հայ ժողովրդի հերոսական կայունության և ողբերգության օրինակը պետք է բոլորին հիշեցնի, որ յուրաքանչյուր ժողովուրդ ազատության և ապրելու իրավունք ունի: Մենք գլուխ ենք խոնարհում զոհերի հիշատակի առջև և համոզված ենք, որ Հայաստանը միշտ կլինի Հզոր և Ազատ երկիր»:

- *Օգոստոսի 10-ին* Արգենտինայի Բուենոս-Այրես նահանգի կառավարության հրավերով քաղաքային խորհրդարանի «Դորադո հոլ» օրենսդրական դահլիճում կլոր սեղանի շուրջ տեղի ունեցան քննարկումներ Հայոց ցեղասպանության պատմական փաստի շուրջ: Զեկուցումներով հանդես եկան պրոֆեսոր Վահագն Տատրյանը, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, դոկտոր Լավրենտի Քարսեղյանը և արգենտինահայ իրավաբան, դոկտոր Պասկուալ Օհանյանը:

- *Օգոստոսի 29-ին* Հայոց ցեղասպանության թանգարան և Մեծ եղեռնի հուշահամալիր այցելեց Հունաստանի Ազգային պաշտպանության պատվիրակությունը Գլխավոր շտաբի պետ գեներալ Մանուսոս Պարայուդակիսի գլխավորությամբ:

- *Օգոստոսի 30-ին* Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց և գրառում կատարեց Սիրիայի Արաբական Հանրապետության մշակույթի նախարար Միա Քանուտը:

- *Սեպտեմբերի 6-ին* Հայոց ցեղասպանության թանգարանի այցելուների տպավորությունների մատյանում գրառում կատարեց Իսպանիայի Սահմանադրական դատարանի նախագահը:
- *Սեպտեմբերի 7-ին* Հայոց ցեղասպանության թանգարանի այցելուների տպավորությունների մատյանում գրառում կատարեց Լեհաստանի հանրապետության փոխվարչապետ, էկոնոմիկայի նախարարը:
- *Սեպտեմբերի 21-ին* ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի Միջազգային հարաբերությունների և մարդու իրավունքների ենթահանձնաժողովը հավանություն տվեց Կոնգրես ներկայցվող թիվ 398 բանաձևին, որը սահմանում էր Միացյալ Նահանգների դիրքորոշումը Հայոց ցեղասպանության վերաբերյալ, մասնավորապես՝ «Կոչ է անում Միացյալ Նահանգների նախագահին՝ ապահովելու մարդու իրավունքների հարցերով զբաղվող ամերիկյան դիվանագետների կրթական ծրագրերի շրջանակներում Հայոց եղեռնի վերաբերյալ ուսուցումը: Կոչ է անում Միացյալ Նահանգների նախագահին Ապրիլի 24-ի իր ամենամյա ելույթում հստակորեն բնութագրել Հայոց եղեռնը որպես ցեղասպանություն»:

Այս բանաձևը ներկայացված էր Ներկայացուցիչների պալատի անդամներ Ջորջ Ռադանովիչի և Դեվիդ Բոնիորի կողմից, որը հովանավորում էին 140 այլ կոնգրեսականներ:
- *Սեմտեմբերի 27-28-ին* Վաշինգտոնում ԱՄՆ-ի Կոնգրեսի գրադարանի Մեդիսոնի անվան մասնաշենքում տեղի ունեցավ «Հայոց ցեղասպանության ամերկյան արձագանքը» խորագիրը կրող համաժողովը, որը կազմակերպել էին Կոնգրեսի գրադարանը և Հայկական ազգային ինստիտուտը:
- *Սեպտեմբերի 28-ին* ԱՄՆ Կոնգրեսի Միջազգային հարաբերությունների հանձնաժողովը քննարկեց սեպտեմբերի 21-ին իր ենթահանձնաժողովի կողմից ընդունված թիվ 398 բանաձևը և հետաձգեց այն:
- *Սեպտեմբերի 28-ին* Ծիծեռնակաբերդի հուշահամալիր այցելեց Բելգրութի (Լիբանան) քաղաքապետ Աբդել Մունեմ Արիսը, որը միաժամանակ թանգարանի մուտքի մոտ տնկեց Բեյրութից բերված եղևնին:
- *Հոկտեմբերի 3-ին* ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի Միջազգային հարաբերությունների կոմիտեն քննարկեց թիվ 398 բանաձևի նախագիծը և այն ընդունեց ձայների մեծամասնությամբ (թեր՝ 24, դեմ՝ 11, ձեռնպահ՝ 2):
- *Հոկտեմբերի 3-ին* Կոնգրեսի միջազգային հարաբերությունների հանձնաժողովի կողմից օրինագիծն ընդունելուց անմիջապես հետո Թուրքիայի հանրապետության Արտաքին գործերի նախարարությունը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ ասվում էր, որ օրինագիծը չի համապատասխանում պատմական իրողություններին:

Նույն օրը երեկոյան Թուրքիայի Հանրապետության նախագահ Սեզերը հեռախոսազրույց ունեցավ ԱՄՆ-ի նախագահ Քլինթոնի հետ և խնդրեց նրան անձնական մանակցություն ցուցաբերել հարցի քննարկումը մերժելու գործում:
- *Հոկտեմբերի 3-ին* Մեծ եղեռնի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց Թայիլանդի դեսպան Ռանգսան Ֆահոլյոթինին, որը կատարեց հետևյալ գրառումը. «Շատ ցանկալի է լսել հայոց պատմության այս ողբերգական շրջանի մասին: Ես ցանկանում եմ կարեկցել աշխարհի բոլոր այն մարդկանց, ովքեր կորցրել են իրենց ընտանիքները»:

- *Հոկտեմբերի 5-ին* Թուրքիայի կառավարությունը որոշեց Հայաստանի դեմ կիրառել առաջնային պատժամիջոցներ՝ արգելելով Հայաստանի քաղաքացիներին մուտքի վիզաներ տալը և փակեց օդային միջանցքը:
- *Հոկտեմբերի 12-ին* ԱՄՆ-ի Կոնգրեսում հետաձգվեց Հայկական բանաձևի քննարկումը մինչև հոկտեմբերի 17-ը:
- *Հոկտեմբերի 18-ին* ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնը հատուկ ուղերձով դիմեց Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի նախագահ Դենիս Հասթերթին և խնդրեց օրակարգից հանել թիվ 398 օրինագծի քննարկումը:
- *Հոկտեմբերի 19-ին* Ներկայացուցիչների պալատի նիստից մի քանի րոպե առաջ պալատի նախագահը, ընդառաջելով ԱՄՆ-ի նախագահի ուղերձին, օրակարգից հանեց Հայկական բանաձևը:
- *Հոկտեմբերի 21-ին* Թուրքիայի Հանրապետության նախագահ Սեզերը շնորհակալական ճամակ հղեց ԱՄՆ-ի նախագահին՝ ցեղասպանության օրինագիծը տապալելու համար:

Նամակում ասվում էր. «Դուք ընդմիշտ կարևոր տեղ կգրավեք թուրքերի սրտում որպես իսկական բարեկամի, որը մեծ ներդրում ունեցավ այս օրինագծի կասեցման համար»:

- *Հոկտեմբերի 24-ին* Երևանում գտնվող Միավորված Ազգերի Կազմակերպության միգրացիայի միջազգային կազմակերպության նախագահ Բրանսոն Մակ Քինլին այցելեց Մեծ եղեռնի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան: Թանգարանի տպավորությունների մատյանում նա գրառեց. «... Այսօր մեր մտքերը ուղղված են դեպի հայ ժողովրդի տառապանքները, բայց նաև հուսով ենք, որ իրենց անկախ Հայրենիքում նրանք կունենան ավելի լավ կյանք: Միգրացիայի միջազգային կազմակերպության իմ բոլոր գործընկերներին ցանկանում եմ, որ իրենց ջանքերի գնով վառ պահեն հայ ժողովրդի պատմությունը»:
- *Հոկտեմբերի 27-ին* գումարվեց Թուրքիայի Ազգային Անվտանգության խորհրդի հերթական նիստը, որը որոշում կայացրեց կազմել և գործողության մեջ դնել հակահայկական միջոցառումների ծրագիր:
- *Հոկտեմբերի 27-ին* Թուրքիայի Ազգային Մեծ ժողովը որոշում կայացրեց նախագահության առընթեր գիտական խորհուրդ հիմնել Հայոց ցեղասպանության պնդումներն ուսումնասիրելու նպատակով: Գիտական խորհրդի ղեկավար է նշանակվել Ազգային ժողովի քարտուղար Վահիթ Էրդեմին:
- *Հոկտեմբերի 31-ին* Մեծ եղեռնի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց Բելառուսի Հանրապետության վարչապետ Վ. Երմոշինը: Թանգարանի մատյանում նա թողեց հետևյալ գրառումը. «Հայ ժողովրդի անմեղ զոհերի նկատմամբ ցավի և խոր վշտի զգացում է առաջ բերում այս թանգարանի այցելությունը: Հայրենական Մեծ պատերազմի տարիներին յուրաքանչյուր չորրորդ բնակչին կորցրած բելառուսական ժողովրդին հատկապես հասկանալի է անմեղ մարդկանց ոչնչացման ողբերգությունը... Թող Հայաստանի հողում ծաղկի խաղաղությունը և բարեկամությունը»:
- *Նոյեմբերի 2-ին* Երևանում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության նախագահ Ռ. Քոչարյանի բացառիկ հարցազրույցն Ազգային հեռուստատեսությամբ, որտեղ նա հայտարարեց, որ ԱՄՆ-ի Կոնգրեսի օրակարգից բանաձևի քննարկման հետաձգումը չի կարող պարտություն համարվել, ընդհակառակը, այն մեծ նվաճում էր այն առումով, որ նման մա-

կարդակով նախկինում Հայոց ցեղասպանության հարցը երբեք չի քննարկվել Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

- *Նոյեմբերի 5-ին* Չեխիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարը, լինելով Հայոց ցեղասպանության թանգարանում, գրառեց. «Իմ պատվիրակության անունից ցանկանում եմ իմ անկեղծ ցավակցությունը հայտնել հայ ժողովրդին, որ նման ձևով տառապել է իր պատմության ընթացքում: Եկեք հուսանք, որ նրա ապագան իրեն կտա միայն հաջողություն և արդար քաղաքագետներ»:

- *Նոյեմբերի 8-ին* Ֆրանսիայի Սենատն ընդունեց Մարսելի քաղաքագլուխ Ժան Կլող Գոդենի ներկայացրած օրինագիծը (164 կողմ, 40 դեմ, 4 ձեռնպահ) 1915թ. Հայոց ցեղասխանությունը հրապարակավ ճանաչելու մասին: Ներկաները այդ իրադարձությունն ընդունեցին ծափահարություններով և հոտնկայս «Մարսելյեզ» երգելով:

- *Նոյեմբերի 10-ին* Հռոմի պապ Հովհաննես-Պողոս Բ-ն ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: Պապի և Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի համատեղ հայտարարության մեջ առաջին անգամ նշվում էր «ցեղասպանություն» բառը: Վատիկանում հրապարակված փաստաթղթում մասնավորապես ասվում էր. «20-րդ դարը նշանավորվեց ծայրահեղ մի դաժանությամբ: Դարասկզբի Հայոց ցեղասպանությունը նախաբանը եղավ հետագա սարսափների»:

- *Նոյեմբերի 15-ին* Եվրախորհրդարանն ընդունեց (234 կողմ և 213 դեմ) Թուրքիայի վերաբերյալ հատուկ զեկույց՝ «Թուրքիայի առաջընթացը անդամակցության ճանապարհին» խորագրով, որի մեջ ներառնվել էին Հայաստանի և հայերին վերաբերող դրույթներ: Եվրախորհրդարանը կոչ է անում Թուրքիային երկխոսություն սկսել Հայաստանի հետ, վերացնել շրջափակումը, հաստատել դիվանագիտական և առևտրատնտեսական հարաբերություններ երկու երկրների միջև:

- *Նոյեմբերի 17-ին* Իտալիայի խորհրդարանի ստորին պալատը ձայների ճնշող մեծամասնությամբ որոշում ընդունեց, որտեղ հորդորում է ճանաչել ներկայիս թուրքական հանրապետության հիմնադրումից առաջ հայ փոքրամասնության դեմ իրագործված ցեղասպանությունը (հոդված 10), բարելավել հարաբերությունները կովկասյան բոլոր հարևանների հետ (հոդված 20) և կոչ է անում թուրքական կառավարությանը երկխոսություն սկսել Հայաստանի հետ (հոդված 21):

- *Նոյեմբերի 20-ին* Թուրքիայի նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերը Արտաքին տնտեսական հարաբերությունների կազմակերպության 14-րդ ընդլայնված նիստում հայտարարեց, որ Եվրամիության առաջարկությունները չեն կարող ընդունվել երկրի իշխանությունների կողմից:

- *Նոյեմբերի 21-ին* Թուրքիայի Անտալիա քաղաքում ելույթ ունենալով Թուրքիա-Եվրախորհրդարան խորհրդարանական համատեղ հանձնաժողովի նիստում՝ Թուրքիայի Արտաքին գործերի նախարար Ջեմը խիստ արտահայտություններով հանդես եկավ Եվրախորհրդարանի և Եվրամիության դեմ Հայոց ցեղասպանության վերաբերյալ Եվրախորհրդարանի ընդունած Ձեկույցի կապակցությամբ:

- *Նոյեմբերի 23-ին* Մեծ Բրիտանիայի կառավարությունը ետ ուղարկեց իր խորհրդարանի առաջարկը, որը նախատեսում էր նոյեմբերի 27-ին կառավարության կողմից հայտարարվելիք «Ցեղասպանության զոհերի հիշա-

տակի օրվա» կապակցությամբ հրեաների ողջակիզման հետ նշել նաև 1915թ. հայերի կոտորածի մասին:

- *Նոյեմբերի 29-ին* Մեծ եղեռնի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց Ռուսաստանի Դաշնության անվտանգության ծառայության պատվիրակությունը ծառայության տնօրեն գեներալ-գնդապետ Պատրուշևի գլխավորությամբ: Այցելուների տպավորությունների մատյանում պատվիրակության ղեկավարը գրառեց. «Մարդկային երևակայությունը խոցում են այն իրադարձությունները, որոնք տեղի ունեցավ 1915 թվականին և դրանից առաջ հայ ժողովրդի պատմության ընթացքում: Բայց կարևորը պատմությունն իմանալն է այնպես, ինչպես նա կար, ճշմարտացի և օբյեկտիվ: Մենք համոզված ենք, որ հայ ժողովրդի ապագան լուսավոր է, և Հայաստանն ու Ռուսաստանը միշտ միասին կլինեն»:

- *Դեկտեմբերի 6-ին* այցելելով Մեծ եղեռնի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան, Իսրայելի արտաքին գործերի փոխնախարար Նավաֆ Մասալահը կատարեց հետևյալ գրառումը. «Այն, ինչ-որ մենք նոր տեսանք, սարսափելի է և ցնցող: Ոչ ոք չի կարող անտարբեր մնալ՝ դեմ առ դեմ կանգնելով դրան: Ես ինձ զգացի հայ ժողովրդի հետ տառապելիս և ցանկանում եմ, որ նա շարունակի ապրել իբրև ուժեղ, անկախ և ազատ ժողովուրդ, որը գոյատևել և կերտել է իր հոյակապ մշակույթը: Հայտնելով մեր անկեղծ ցավակցանքը, մենք կոչ ենք անում աշխարհին, նույնիսկ այսօր, պատշաճ դասեր քաղել անցյալից և ամեն ինչ անել, որ նման բաներ երբեք չկրկնվեն»:

- *Դեկտեմբերի 12-ին* Մեծ եղեռնի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության խորհրդարանի պատգամավորների մի պատվիրակություն, որի ամդամները ստորագրեցին հետևյալ գրառման տակ. «Մահացածները կոչված են առ Աստված: Ողջերը պիտի հանապազ գթություն աղերսեն և համատեղ ձգտեն, որ այլևս երբեք չկրկնվեն այդօրինակ իրադարձությունները»:

- *Դեկտեմբերի 13-ին* Մեծ եղեռնի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց ԱՄՆ-ի Պաշտպանության նախարարության պատվիրակությունը նախարարության Եվրոպայում ամերիկյան զորքերի ծրագրավորման և քաղաքականության դեպարտամենտի տնօրեն գեներալ-մայոր Չարլզ Սիմպսոնի գլխավորությամբ: Գեներալը թանգարանի այցելուների տպավորությունների մատյանում կատարեց հետևյալ գրառումը. «Եկեք չմոռանանք այն ողբերգությունը, որը ներկայացված է այստեղ: Մենք չպետք է մոռանանք, որպեսզի չթողնենք այն նորից կրկնվի»:

- *Դեկտեմբերի 20-ին* ԱՄՆ-ի Ատլանտա քաղաքի թուրք-ամերիկյան ընկերակցության նախագահ Վուրալ Չենգիզը Թուրքիայի վարչապետ Բյուլենթ Էջևիթի հետ հանդիպելուց հետո հայտարարեց, որ Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը պատրաստ է պաշտպանել ամերիկյան ապահովագրական ընկերությունների շահերը, որոնց դեմ ազգությամբ հայ երեք հազար ԱՄՆ-ի քաղաքացի հայցեր են ներկայացրել՝ պահանջելով վճարել գումարներ, որոնցով ապահովագրված է եղել 1915-1923թթ. Օսմանյան Թուրքիայում ցեղասպանության հետևանքով զոհված իրենց պապերի և նախապապերի կյանքը: Վ. Չենգիզի խոսքերով հայերի հայցերի բավարարումը կարող է նախադեպ ստեղծել ԱՄՆ-ի այլ կազմակերպությունների

կողմից հայերի ցեղասպանության ճանաչման համար: «Այս անգամ մեզ չի կարելի ուշանալ», - հայտարարել է Չենգիզը թուրք լրագրողներին:

2001

- *Հունվարի 24-ին* «Ազգ» թերթում լույս տեսավ ճանաչված ցեղասպանագետ պրոֆեսոր Վահագն Տատրյանի «Թուրք ջարդարարների մահվան դատապարտումը իթթիհատականների և քեմալականների կողմից» ընդարձակ հոդվածը: Թուրքական «Ենի Գյունդեմ» ծայրահեղ լիբերալ թերթի 2000թ. նոյեմբերի 2-ի և 3-ի համարներում նախապես լույս տեսավ վերոհիշյալ հոդվածի թուրքերեն տարբերակը, որը միաժամանակ մեծ հետաքրքրություն և հուզում առաջացրեց ընթերցողների շրջանում:
- *Հունվարի 27-ին* Լոնդոնում նշվեց հրեաների Ողջակիզման զոհերի հիշատակի օրը: Չնայած այն բանին, որ Անգլիայի հրեական կոնգրեսը նախապես գրավոր դիմել էր երկրի ներքին գործերի նախարարությանը՝ հայերին արգելելու մասնակցելու միջոցառմանը, այդ օրը հիշատակվեց Հայոց ցեղասպանությունը և միջոցառմանը ներկա գտնվեցի Անգլիայի հայկական համայնքի ներկայացուցիչները:
- *Հունվարի 28-ին* Թուրքական մամուլը դժգոհություն հայտնեց Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության ճանաչման առնչությամբ Աղրբեջանի արձագանքից, նկատի ունենալով, որ Բաքուն հանդես չեկավ որևէ պաշտոնական հայտարարությամբ: Այս կապակցությամբ թուրքական «Հյուրիեթ» թերթն իր հոդվածում մի ասացվածք է մեջ բերում. «Թշնամին տնից է լինում»:
- *Հունվարի 29-ին* Փարիզի քաղաքապետարանը որոշում ընդունեց մայրաքաղաքում տեղադրել Հայոց ցեղասպանությունը խորհրդանշող հուշարձան: Հունվարի 30-ին, երբ Ֆրանսիայի պրեզիդենտ Ժակ Շիրակը մեկ օր առաջ արդեն վավերացրել է ցեղասպանության ճանաչման օրինագիծը, պաշտոնապես հայտարարվեց հուշարձանի կառուցման մասին: Կոմիտասի վեց մետրանոց բրոնզածույլ արձանը, որի հեղինակն է քանդակագործ Դավիթ Երևանցին, նախատեսվում է զետեղել Փարիզի կենտրոնական հրապարակներից մեկին հարող ծառուղում՝ հարևանությամբ Սիմոն Բոլիվարի, Ուինստոն Չերչիլի և Շառլ դը Գոլի արձանների:

«Փարիզ քաղաքը նույնպես ուզում է իր հարգանքի տուրքը մատուցել ամբողջ հայ ժողովրդին, ինչպես նաև ֆրանսահայ համայնքին և փարիզահայերին», հայտարարել է Փարիզի քաղաքապետ Ժան Տիբերին:
- *Հունվարի 29-ին* Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ժակ Շիրակը և վարչապետ Լիոնել Ժոսպենը ստորագրեցին Օրենք Հայոց ցեղասպանության ճանաչման մասին, որն ընդունել էր Ֆրանսիայի Ազգային ժողովը: Ֆրանսիան փաստորեն դեռևս աշխարհում միակ երկիրն է, որն օրենսդրորեն ճանաչում է Հայոց ցեղասպանությունը: Այդ օրենքը բաղկացած է ընդամենը մեկ հոդվածից, որն ազդարարում է՝ «Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է հայերի 1915թ. ցեղասպանությունը: Ներկա օրենքը պետք է կատարվի որպես պետության օրենք»:
- *Փետրվարի 1-ին* Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը Երևանում հարցազրույց ունեցավ թուրքական «Սի-Էն-Էն Թյուրք» հեռուստաընկերության լրագրող Մեհմեդ Ալի Բիրանդի հետ:

Հարցազրույցի ժամանակ Ռ. Քոչարյանն ասել էր. «Ցեղասպանության ճանաչումից հետո Հայաստանը Թուրքիայի հանդեպ որևէ իրավական պահանջ չի ներկայացնի: Այլ հարց է, որ հնարավոր է ցեղասպանությունից տուժածների-սերունդների կողմից այս խնդրի վիճարկում դատարանում: Դա այսօր էլ կարող են անել, դա առանձնապես կապ չունի ցեղասպանության ընդունման հետ: Եթե մի որևէ սփյուռքահայ դիմի դատարան և փաստաթղթերով ապացուցի, որ այդ տարիներին բանկում դրամ է ունեցել, նա կդիտվի իբրև իրավական ժառանգորդ: Իմ կարծիքով Թուրքիայում բավարար չափով չեն հասկանում ցեղասպանության ընդունման հետևանքները: Դուք կարող եք դա չանվանել «ցեղասպանություն»: Բայց պետք է ընդունել, որ զանգվածային սպանություններն են եղել, մարդիկ տեղահան են արվել, և որ այսօրվա Սփյուռքը 1915-ի հետևանքն է: Այսօրինակ պարզ քայլով դուք հարցը հիմնավորապես կլուծեք և մեր հարաբերությունների ապագան կփոխվի»:

- *Փետրվարի 3-ին* Թուրքական հեռուստատեսությունը հանդես եկավ վեց ժամ տևողությամբ այսպես կոչված «քննարկմամբ»՝ նվիրված ցեղասպանության թեմային: Հաղորդումը սկսվեց տասնհինգ րոպե տևողությամբ փաստավավերագրական ֆիլմի ցուցադրությամբ, որտեղ պատմվում էր, թե ինչպես հայերը Թուրքիայում կազմակերպել էին մահմեդականների կոտորածները: Հաղորդման մասնակիցները՝ մի խումբ պետական գործիչներ և գիտնականներ, հաջորդաբար հանդես գալով, մեղադրում էին հայերին: Հեռուստաէկրանից բացառություն կազմեց թուրք գիտնական դոկտոր Թաներ Աքչամը, որը հակադրվելով բոլորին, հայտարարեց, որ Հայոց ցեղասպանությունն իրողություն է:

- *Փետրվարի 12-ին* Ֆրանսիական «Ֆիգարո» թերթին Երևանում տված հարցազրույցում ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը հայտարարեց. «Մենք չենք կարծում, որ ցեղասպանության ճանաչումը միայն Սփյուռքի հարցն է:

Հայաստանն իբրև պետություն, ուղղակի պարտավոր էր այդ հարցի վերաբերյալ իր տեսակետը հստակ ձևակերպել: Կարելի է ասել, որ սա ոչ միայն հայ ժողովրդի, այլև քաղաքակիրթ աշխարհի խնդիրն է՝ ելնելով նաև ՄԱԿ-ի կողմից ընդունված տարբեր բանաձևներից: Հայոց ցեղասպանությունը՝ 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն էր, և համոզված եմ, որ միջազգային հանրությունն իր գնահատականը կարող էր տալ դեռ այն ժամանակ:

- *Փետրվարի 17-ին* Քեռլինում Թուրքիայի դեսպանատան առջև կազմակերպվեց բողոքի ցույց, որին մասնակցեց շուրջ 700 մարդ: Ցույցի առիթն ասորի հոգևորական Յուսուֆ Աքպուլութի՝ Թուրքիայում տնային կալանքի ենթարկելն էր: Հոգևորականը, թուրքական «Հյուրիեթ» լրագրի հարցերին պատասխանելով, ոչ միայն հաստատել է Հայոց ցեղասպանության իրողությունը, այլև հավելել, թե ասորիները նույնպես գոհ են գնացել թուրքերի իրականացրած ցեղասպանության: Ցույցին մասնակցել են նաև բեռլինահայերը:

- *Փետրվարի 21-ին* Հայտարարությամբ հանդես եկավ «Վասպուրական» հայրենակցական միությունը, որը գտնում է, որ Թուրքիայի նկատմամբ պահանջատերն են ոչ միայն սփյուռքի, այլև Մայր Հայրենիքում ապրող հայերը, մասնավորապես նրանք, ովքեր վերապրել են Եղեռնը:

- *Փետրվարի 21-22-ը* Երևանում տեղի ունեցավ Ուղղափառության եվրոպական միջխորհրդարանական վեհաժողովին մասնակից երկրների միջազգային կոնֆերանսը, որը դատապարտեց Օսմանյան կայսրությունում 1915թ. իրականացված Հայոց ցեղասպանությունը և այդ կապակցությամբ ընդունեց հատուկ հայտարարություն:
- *Փետրվարի 28-ին* «Նոյան տապան» լրատվական գործակալությանն ի պատասխան Սլովակիայի արտաքին գործերի նախարարությանը հայտարարեց. «Սլովակիայի հանրապետությունը, որպես Ցեղասպանության կանխարգելման և պատժման միջազգային տարբեր պայմանագրերի մասնակից, դեմ է Ցեղասպանության ցանկացած դրսևորմանը: Միաժամանակ կողմնակից է անցյալի փաստեր մասնագիտական վերագնահատմանը, ինչպես տեղի ունեցավ Գերմանիայում և Ճապոնիայում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Փոքր Ասիայի արևելյան շրջաններից հայկական բնակչությունը դուրս հանվեց թուրքերի կողմից դեպի Սիրիայի անապատները (Ռուսաստանի նկատմամբ համակրանքի կասկածանքով): Այդ ժամանակ շուրջ 1-1,5 միլիոն հայեր զոհ գնացին: Սակայն որակել այդ իրադարձությունների իրավասու են միայն պատմաբանները»:
- *Մարտի 3-ին* Ֆրանսիայի Սկր քաղաքում, ճիշտ այն շենքի դիմաց, որտեղ 83 տարի առաջ ստորագրվեց Սկրի դաշնագիրը, կանգնեցվեց Հայաստանից բերված խաչքարը՝ որպես Հայոց ցեղասպանության զոհերի և հանուն Ֆրանսիայի ընկած հայ մարտիկների հիշատակը հավերժացնող հուշարձան: Հուշարձանի բացման արարողությանը մասնակցել են սենատորներ, Ազգային ժողովի պատգամավորներ, բազմաթիվ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հնչել են Ֆրանսիայի և Հայաստանի օրհներգերը, խոնարհվել են մարտական դրոշները:
- *Մարտի 10-ին* Ամերիկայի Միացյալ Նահանգների Նյու-Մեքսիկո նահանգի օրենսդրական ժողովը բանաձև ընդունեց, որի համաձայն 2001թ. ապրիլի 24-ը հայտարարվում է հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր:
- *Մարտի 13-ին* Շվեյցարիայի խորհրդարանը 73 «դեմ» և 70 «կողմ» ձայներով հրաժարվեց ընդունել Հայոց ցեղասպանությունը ճանաչող օրինագիծ:
- *Մարտի 16-ին* ԱՄՆ-ի Մինեսոտա նահանգի նահանգապետ Ջեսսի Վենտուրան ապրիլի 24-ը հայտարարեց «Հայերի հիշատակի օր»:

Մինեսոտայի նահանգապետի, Մինեապոլիս և Սեյն Պոլ քաղաքների քաղաքապետերի հայտարարության մեջ ասվում էր. «1915-1923թթ. Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանությունը հանգեցրեց երկու միլիոն հայերի տեղահանմանը, որոնցից 1,5 միլիոնը զոհվեցին»:
- *Մարտի 17-ին* Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիր այցելեց Կիպրոսի Հանրապետության Ներկայացուցիչների պալատի նահագահ Սպիրոս Կիպրիանուն, որը Հայոց ցեղասպանության թանգարանին ի պահ հանձնեց Կիպրոսի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության դատապարտման ու ճանաչման մասին տարբեր տարիներին ընդունած բանաձևերի բնօրինակները:

- *Մարտի 19-ին* Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց Եգիպտոսի Արաբական հանրապետության արտաքին գործերի փոխնախարար Մահդի Ֆաթհալլան, որը գրառում կատարեց այցելուների տպավորությունների մատյանում:
- *Մարտի 23-25-ը* Գերմանիայի Մյուլհայմ քաղաքի ավետարանչական ակադեմիայում կազմակերպվեց հայ-թուրքական երկխոսություն, որտեղ հիմնականում հանդես եկան թուրք և սփյուռքահայ պատմաբանները: Հայաստանից ներկա էր մեկ պատմաբան:
- *Մարտի 26-ին* ԱՄՆ-ի Մերիլենդ նահանգի Սենատը բանաձև ընդունեց ապրիլի 24-ը որպես «Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր» հռչակելու մասին:
- *Մարտի 27-ին* ԱՄՆ-ի Արկանզաս նահանգի նահանգապետ Մայկ Խաբակին հանդես եկավ Հռչակագրով 2001թ. ապրիլի 24-ը որպես «Հայոց ցեղասպանության հիշատակի օր» ճանաչելու մասին: Հռչակագրում ասվում է, որ «իր տանջանքների դիմաց հայ ժողովուրդը փոխհատուցում չի ստացել, իսկ ներկայիս թուրքական կառավարությունը ժխտում է Հայոց ցեղասպանության փաստը»:
- *Մարտի 29-ին* Կանադայի Սենատում սենատոր Շիրլի Մեյխյուն Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի նախագիծ ներկայացրեց, որով կոչ էր արվում երկրի կառավարությանը դատապարտել հանցագործության հերքման փորձերը և ապրիլի 24-ը հայտարարել 20-րդ դարի առաջին ցեղասպանության զոհ դարձած 1,5 միլիոն հայերի հիշատակի օր: Հարցը Սենատի օրակարգ չմտավ:
- *Ապրիլի 8-ին* ԱՄՆ-ի Պիտսբուրգ քաղաքի աստվածաբանական ճեմարանում «Անտարբերություն: Հիշելով Հայոց ցեղասպանությունը և Հոլոքոսքը» ընդհանուր խորագրի տակ տեղի ունեցավ գիտական նստաշրջան:
- *Ապրիլի 9-ին* ԱՄՆ-ի Մերիլենդ նահանգի խորհրդարանի պալատների պատգամավորները համատեղ բանաձև ընդունեցին Մերիլենդ նահանգում 2001թ. ապրիլի 24-ը հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր հայտարարելու մասին:
- *Ապրիլի 12-ին* Երուսաղեմի Ողջակիզման և ցեղասպանության ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Իսրայել Չարնին բաց նամակով դիմեց Իսրայելի արտաքին գործերի նախարար Շիմոն Պերեսին թուրքական «Թերկիշ դեյլի նյուս» թերթում լույս տեսած նրա հայտարարության կապակցությամբ:

Իսրայելի արտաքին գործերի նախարարը թերթում հրապարակված իր հայտարարության մեջ ասել էր, որ «մենք հերքում ենք ողջակիզման և հայերի միջև նույնացնելու սահմանման փորձերը:

Ողջակիզման նման ուրիշ որևէ բան տեղի չի ունեցել: Հայերն ապրել են ողբերգություն, բայց ոչ ցեղասպանություն»: Իր զայրույթն արտահայտելով վերոհիշյալ հայտարարության կապակցությամբ, պրոֆեսոր Չարնին նախարարին ուղղված նամակում գրել էր. «... Շատ տարիների ընթացքում ես չեմ բաժանել Ձեր դիրքորոշումը հայերի ցեղասպանության նկատմամբ: Ինձ թվում է, ելնելով Անկարայի թերթի հաղորդումից, որ Դուք անցաք բարոյական այն գծից, որը և ոչ մի հրեա չէր կարող իրեն թույլ տալ անցնել»:

- *Ապրիլի 14-ին* ԱՄՆ-ի Կալիֆորնիայի նահանգի նահանգապետ Գրեյ Դեյվիսը հատուկ հռչակագրով 2001թ. ապրիլի 24-ը նահանգում հայտարարեց հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր:
- *Ապրիլի 18-ին* Թեհրանում իրանահայերի ջանքերով Հայոց ցեղասպանության 86-րդ տարելիցի առիթով «1915թ. ապրիլ, հայացք դրսից» թեմայով սեմինար կազմակերպվեց, իսկ ապրիլի 20-ին նույն թեմայով՝ «կլոր սեղան»:
- *Ապրիլի 21-ին* Գերմանիայի Մայնի Ֆրանկֆուրտ քաղաքում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշ-երեկո, որը՝ կազմակերպել էր Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը և Հեսսենի երկրամասի հայ մշակութային միությունը:
- *Ապրիլի 23-ին* ԱՄՆ-ի Կալիֆորնիայի նահանգի Սենատը միաձայն ընդունեց բանաձև ապրիլի 24-ը որպես «Հայոց ցեղասպանության հիշատակի օր» ճանաչելու մասին, միաժամանակ դիմելով ԱՄՆ-ի կոնգրեսին՝ արտահայտել իր վերաբերմունքն Օսմանյան Թուրքիայում հայ ժողովրդի նկատմամբ կատարված ցեղասպանության վերաբերյալ:
- *Ապրիլի 23-ին* Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը հանդես եկավ ուղերձով՝ նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան: Ուղերձում ասվում էր. «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հետապնդումը շարունակվում է մնալ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության օրակարգում, իբրև արտահայտություն հայ ժողովրդի բոլոր հատվածների արդարացի և օրինական սպասումների: 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրությունում կատարվածն առաջին հերթին ոճրագործություն է մարդկության դեմ և ենթադրում է միջազգային հանրության միասնական ու ամբողջական գնահատական»:
- *Ապրիլի 24-ին* Ծիծեռնակաբերդի հուշահամալիր այցելեց ավելի քան կես միլիոն մարդ: Լրագրողներին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Լ. Բարսեղյանը հայտնել է, որ «... այցելուները հիմնականում երիտասարդներ էին, դպրոցահասակ երեխաներ, ինչը վկայում է, որ Հայոց ցեղասպանության պայքարը «սերնդափոխություն» է ապրել»:
- *Ապրիլի 24-ին* Գերմանիայի Քյոլն քաղաքի Սուրբ Սահակ Մեսրոպ առաջնորդանիստ եկեղեցում կազմակերպվեց հուշահանդես, ԳԴՀ-ում ՀՀ դեսպանի մասնակցությամբ:
- *Ապրիլի 24-ին* Գերմանիայի Քյոլն քաղաքի Սուրբ Սահակ Մեսրոպ եկեղեցի երեկոյան ժամը 20-ին այցելեցին մի խումբ Քյոլնում բնակվող թուրքեր, որոնք եկել էին դիմավորելու Բեռլինից ժամանող, Գերմանիայի խորհրդարանի՝ Բունդեսթագի պատգամավոր, Կանաչների խմբակցության ներքաղաքական խոսնակ, խորհրդարանական գերմանաթուրքական խմբի նախագահ Ջեմ Էոզդեմիրին: Եկեղեցուն հարող հրապարակում հայերը չմերժեցին թուրք պատգամավորին ելույթ ունենալ դրսում և համբերությամբ լսեցին նրա կարեկցանքի խոսքերը դեպի հայերը: Սակայն պատասխանելով լրագրողների հարցերին, նա հայտարարեց, որ «Բունդեսթագը չպետք է Ֆրանսիայի Սենատի նման բանաձև ընդունի, որովհետև չեմ կարծում, թե այն կօգնի Հայաստանին ու Թուրքիային»:
- *Ապրիլի 24-ին* Ուրուգվահայ բազմամիութենական կազմակերպությունը մայրաքաղաքի «Արմենիա» հրապարակում կազմակերպեց Հայոց ցեղա-

սպանության 86-րդ տարելիցին նվիրված առաջին ձեռնարկը, որին ներկա էին երկրի փոխնախագահ, նախագահի պաշտոնակատար Լուիս Իերո Լոփեսը, ներքին գործերի նախարար Կիժերմո Սդիրլինկը, սպորտի և երիտասարդության նախարար Խաիմե Տրոպոն, Ուրուգվայի նախկին նախագահ Խուլիո Սանկինեդին, սենատորներ, խորհրդականներ, Հայաստանի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Հունաստանի, Իրանի և Սիրիայի դեսպանները, ինչպես նաև հայ համայնքի հարյուրավոր ներկայացուցիչներ: Ելույթներ ունեցան ՀՀ դեսպան Արա Այվազյանը, Ֆրանսիայի դեսպան Ռեյնարտ Դիերին և Ուրուգվայի նախագահի պաշտոնակատարը:

- *Ապրիլի 24-ին* Հիշատակի օրը Փարիզում սկսվեց քաղաքապետարանում տրված ընդունելությամբ, որին մասնակցեցին շուրջ 1500 հրավիրյալներ՝ պատգամավորներ, սենատորներ, քաղաքական և մշակութային գործիչներ: Քաղաքապետարանից հայերը մեկնեցին Հայ առաքելական եկեղեցի, որտեղ մատուցվեց Սուրբ պատարագ և հոգեհանգիստ՝ զոհերի հիշատակին:

Ժամը 4-ին հայկական տարբեր կազմակերպություններ ծաղկեպսակ դրեցին Հաղթանակի կամարի տակ, իսկ մեկ ժամ անց սկսվեց ֆրանսահայերի երթը դեպի Թուրքիայի դեսպանատուն՝ պահանջելով ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

- *Ապրիլի 24-ին* Ռուսաստանի Տոլյատի քաղաքի Ազատության հրապարակում կայացավ հավաք՝ նվիրված Հայոց ցեղասպանության 86-րդ տարելիցին: Տեղի հայերը ծաղկեպսակներ դրեցին Մեծ եղեռնի զոհերի հիշատակին քաղաքում կառուցված հուշակոթողին:

- *Ապրիլի 24-ին* ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջորջ Բուշը հռչակագրով հանդես եկավ, դիմելով ամերիկահայերին և արտասահմանյան հայկական համայնքներին, հայտնելով իր խորը ցավակցությունները մեկ և կես միլիոն հայերի ոչնչացման համար: Հետևելով ԱՄՆ-ի նախորդ պրեզիդենտների օրինակին, Ջ. Բուշը խուսափեց հայերի կոտորածները համարել ցեղասպանություն:

- *Ապրիլի 24-ին* Իտալիայում Հայոց ցեղասպանության նահատակների ոգեկոչման արարողությունների շարքում Հովհաննես-Պողոս Երկրորդ Հռոմի Պապը դեկրետ ընդունց 1915թ. թուրքերի կողմից գլխավորված Մարդինի հայ կաթողիկե եկեղեցու առաջնորդ, արքեպիսկոպոս Իգնատիոս Մալոյանին երանելի հայտարարելու մասին, որով սկսվեց նահատակի սրբացման գործընթացը:

- *Ապրիլի 24-ին* ՀՀ նախագահը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա կապակցությամբ հանդես եկավ ուղերձով:

- *Ապրիլի 25-ին* ԱՄՆ-ի Պենսիլվանիա նահանգի Գլխավոր ասամբլեան պալատների համատեղ բանաձև ընդունեց նահանգում 2001թ. ապրիլի 24-ը հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր սահմանելու մասին:

- *Մայիսի 1-ին* ԱՄՆ-ի Պենսիլվանիա նահանգի Գլխավոր ասամբլեան երկրորդ անգամ համատեղ բանաձև ընդունեց նահանգում 2001թ. ապրիլի 24-ը 1915-1923թթ. հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր սահմանելու մասին:

- *Մայիսի 5-ին* Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց Հայաստանում պաշտոնական այցով գտնվող Լիբանանի Հանրապետության նախագահ գեներալ Էմիլ Լահու-

դը: Նա պատվավոր այցելուների մատյանում գրեց. «Այն ազգերը, որոնք գրել են իրենց պատմությունը զոհաբերություններով, մեծ առաքելություն ունեն մարդասիրություն փնտրելու ճանապարհին, և ամայության, անհանգստության և կորուստների կենտրոնում ապացուցվում է, որ իր ներկան պայծառ է և նրա բոլոր ուրախությունները կիրականանան, նա կվերկվի, դա նրա ուժն է և այդպես կլինի»:

- *Մայիսի 8-ին* Վաշինգտոնում կայացավ ԱՄՆ-ի Կոնգրեսի և Ներկայացուցիչների պալատի ամենամյա ավանդական հանդիպումն ԱՄՆ-ի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Սենատոր Բոբ Դոուլն իր ելույթում ընդգծել է, որ ԱՄՆ-ի Կոնգրեսը բավական երկար ժամանակ կատաղի մարտեր է մղում Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման ուղղությամբ և ներկայումս Սենատը տրոհված է 50-ը 50-ի հարաբերությամբ:

«Այնուամենայնիվ, ես հույս ունեմ, որ Ամերիկայի հայ համայնքի համառությունն անպատճառ կպսակվի հաղթանակով և թե՛ ԱՄՆ-ը, թե՛ Թուրքիան, թե՛ քաղաքակիրթ ամբողջ աշխարհը արժանավորապես կճանաչեն Ցեղասպանության փաստը», - ասել է նա:

Սենատոր Ջոզեֆ Լիբերմանը, ընդգծել է ԱՄՆ-ի հայերի և անձամբ իր՝ ամերիկյան հրեայի նմանությունը, կոչ անելով «երբեք չմոռանալ և թույլ չտալ ուրիշներին մոռանալու Եղեռնի բոլոր զոհերին և պատմության դասերը»:

- *Մայիսի 26-ին* Դիտելով Հայոց ցեղասպանության թանգարանի գիտական ցուցադրությունը, թանգարանի պատվավոր այցելուների մատյանում Բելառուսի Հանրապետության նախագահ Ա. Լուկաշենկոն գրառեց. «Իր պատմության ընթացքում ծանր փորձություններ կրած բելառուսներին հասկանալի և մոտ են հայ ժողովրդին պատճառած վշտերը: Միջազգային հանրությունը պետք է ամեն հնարավորն անի այն բանի համար, որպեսզի թույլ չտրվեն ապագայում նման ողբերգությունները»:

- *Հունիսի 1-ին* Կանադայի խորհրդարանին ներկայացված Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևը մեկ ձայնի անբավարարության պատճառով տապալվեց:

Բանաձևը խորհրդարան էր ներկայացրել պատգամավոր Սարգիս Ասատուրյանը:

- *Հունիսի 1-ին* Կանադայի խորհրդարանի պատգամավորներ Մադլեն Դելֆոն-Ժիրալը և Բիլլ Բլեյկին խորհրդարանական քննարկումների ժամանակ կոչով դիմեցին Թուրքիային հրաժարվել Հայոց ցեղասպանությունը ժխտելու քաղաքականությունից:

- *Հունիսի 8-ին* Մեծ եղեռնի զոհերի հիշատակին իր հարգանքի տուրքը մոտուցեց Երևանում գտնվող Ռուսաստանի Դաշնության Պետական Դումայի նախագահ Գ. Սելեզնյովը:

- *Հունիսի 13-ին* ԱՄՆ-ի Մեն նահանգի Սահմանադրական ժողովի պալատների 120-րդ նստաշրջանի անդամները համատեղ բանաձև ընդունեցին հանդիսավոր լռությամբ նշել հայերի ցեղասպանության զոհերի հիշատակը:

- *Հուլիսի 5-ին* Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրի Հիշողության պուրակում 1915թ. զոհերի հիշատակին արծաթափայլ եղևնի տնկեց Կանադայի Մոնրեալ քաղաքի քաղաքապետ Պիեռ Բուրգը, որը թանգարանի այցե-

լուների տպավորությունների մատյանում գրառեց. «Այցելելով այս վայրը՝ ես ցավով հիշեցի հայ ժողովրդի ապրած ողբերգությունը և նրա նկատմամբ կիրառված ցեղասպանությունը: Թող ապրի հայ ժողովուրդը հանուն իր ապագայի: Մյուս կողմից, թող չմոռանա զոհ գնացած իր զավակներին»:

- *Հուլիսի 7-ին* Ծիծեռնակաբերդ այցելեց Սիրիայի Խորհրդարանի Հայաստանում գտնվող պատվիրակությունը Խորհրդարանի նախագահ Աբդ ալ Կադեր Կադդուրայի գլխավորությամբ: Պատվիրակության ղեկավարը ծաղկեպսակ դրեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակն հավերժացնող հուշակոթողին: Հայոց ցեղասպանության թանգարանի ցուղադրությունը ղիտելուց հետո, դիմելով լրագրողներին, խորհրդարանի նախագահն ասաց. «Այս թանգարանը հիշեցրեց անկախության ձգտող ժողովուրդների պայքարը և գալիք սերունդները պետք է հիշեն՝ ինչպիսի զոհեր են տվել իրենց հայրերն ու պապերը՝ հանուն այսօրվա անկախության»:

- *Հուլիսի 9-ին* Ժնև քաղաքում կայացավ իրեն «Հայ թուրքական հաշտության հանձնաժողով» հռչակած խմբի նիստը, որը չվարանեց նաև իր անվանը կցել «բարձր մակարդակ» ունենալու հանգամանքը:

- *Հուլիսի 14-ին* Հայաստան-Թուրքիա հաշտեցման հանձնաժողովի ստեղծման կապակցությամբ պաշտոնական հայտարարությամբ հանդես եկավ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը, որ տեղյակ էր պահում, որ նախարարությունը բացարձակապես առնչություն չունի հանձնաժողովի ստեղծման և նրա գործունեության հետ: Հայտարարության մեջ ասվում էր, որ «Հայաստանը միշտ էլ դրական է վերաբերվել և ողջունել ցանկացած հասարակական շփում և երկխոսություն հայ և թուրք ժողովուրդների միջև, ինչը կնպաստի հասարակական քննարկումների ծավալմանն առկա խնդիրների շուրջ»:

- *Օգոստոսի 24-ին* Հայաստանում գտնվող ԱՄՆ-ի կոնգրեսական Ա. Շիֆն այցելեց Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան: Այցելուների տպավորությունների մատյանում նա կատարեց հետևյալ գրառումը. «Մեր այցելությունը չափազանց սրտաշարժ էր: Այս կերպ վկան դառնալ ցեղասպանության անհերքելի փաստին՝ տղամարդկանց, կանանց, երեխաների հայացքների միջով... և հատկապես երեխաների, լուրջ փորձություն էր: Մենք պետք է հասնենք վերջնական անվերապահ ճանաչման և արդար խաղաղության»:

- *Սեպտեմբերի 2-ին* Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը ելույթով հանդես եկավ Դուրբան քաղաքում հրավիրված Ռասիզմի, ռասայական խտրականության, Գենոֆոբիայի և հարակից անհանդուրժողականության դեմ պայքարի համաշխարհային խորհրդաժողովում:

- *Սեպտեմբերի 15-ին* Ռուսաստանի Դաշնության պրեզիդենտ Վ. Վ. Պուտինը գտնվելով Երևանում, այցելեց Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիր և իր հարգանքի տուրքը մատուցեց նրանց հիշատակին:

Հայոց ցեղասպանության թանգարանի պատվավոր այցելուների մատյանում նա թողեց հետևյալ գրառումը. «Ռուսաստանը մշտապես հայ ժողովրդի ցավը և ողբերգությունը ընդունել է որպես իր սեփականը: Խոնարհում ենք մեր գլուխը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի առջև»:

- *Սեպտեմբերի 15-ին* Ռուսաստանի Դաշնության պետական պատվիրակության կազմում Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության քանգարան այցելած Ռուսաստանի կառավարության նախագահի տեղակալ Կլեբաճովը քանգարանի պատվավոր այցելուների մատյանում գրեց. «Հայ ժողովրդի այս ցավը ողջ մարդկության ցավն է: Հայ ժողովրդի այս վիշտը մշտապես մեր սրտերում է: Լինենք միասին ուրախության և վշտի րոպեներին»:

- *Սեպտեմբերի 20-ին* Հայոց ցեղասպանության քանգարան այցելեց և զոհերի հիշատակի հարգանքի տուրք մատուցեց Կիպրոսի Հանրապետության պաշտպանության նախարար Ս. Հասիկոսը:

- *Սեպտեմբերի 25-ին* Հայոց ցեղասպանության քանգարան այցելեց Սլովակիայի Հանրապետության արդարադատության նախարար Յան Չառնոգորսկին:

- *Սեպտեմբերի 26-ին* Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին կառուցված հուշահամալիրում ոգեկոչման աղոթքի ժամանակ Հռոմի Հովհաննես-Պողոս երկրորդ պապն արտասանեց. «Ո՛վ Դատավոր ողջերի և մեռյալների, ողորմիր մեզ: Լսի՛ր, ո՛վ Տեր, ողբը, որ բարձրանում է այս վայրից, Մեծ Եղեռնի վկաներից՝ կոչը մեռյալներին, անմեղ արյան աղաղակը, որ աղերսում է Աբելի արյան պես, ինչպես Հոաքելը, որ լալիս է իր որդիների համար, որովհետև այլևս չկան: Լսի՛ր, ո՛վ Տեր, Հռոմի եպիսկոպոսի ձայնը, որ արձագանքում է իր նախորդներից մեկի՝ Բենեդիկտոս XV Պապի աղաչանքին, երբ 1915 թվականին ձայն բարձրացրեց ի պաշտպանություն «ծանրորեն վշտահար ու բնաջնջման սեմին հասած հայ ժողովրդի»: Նայի՛ր այս երկրի ժողովրդին, որ այսքա՜ան երկար ժամանակից ի վեր իր վստահությունը քո վրա դրեց, որ անցավ մեծ տանջանքների միջով և քո հանդեպ հավատարմության մեջ երբեք չթերացավ: Սրբի՛ր ամեն արտասուք նրա աչքերից և այնպես արա՛, որ քսաներորդ դարի իր օրհասը տեղի տա կյանքի հունձքին, որը տևի առհավետ: Հայ ժողովրդին հասցված զարհուրելի բռնությունից խորապես խռոված, մենք մեզ սարսափահար հարց ենք տալիս, թե ինչպե՞ս աշխարհը տակավին կարողանում է ճանաչել այսքան անմարդկային խոտորումներ: Բայց քո խոստման հանդեպ մեր հույսը վերանորոգելով, ո՛վ Տեր, ննջեցյալների համար հայցում ենք հանգիստ, խաղաղության մեջ, որ անվախճան է, և տակավին քաց վերքերի համար՝ բժշկություն, շնորհիվ սիրուդ զորության:

Մեր հոգին աճձկագին փափագում է քեզ, Տե՛ր, ավելի քան գիշերապահն այգաբացին, մինչ սպասում ենք Խաչի վրա իրագործված փրկության լրմանը, Զատկի լույսին, որն արշալույսն է անհաղթելի մի կյանքի, նոր Երուսաղեմի փառքին, ուր մահն այլևս չի լինի:

Ո՛վ Դատավոր ողջերի և մեռյալների, ողորմի՛ր մեզ:

Տեր ողորմեա, Քրիստոս, ողորմեա, Տեր ողորմեա»:

- *Սեպտեմբերի 27-ին* Սայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Հռոմի պապ Հովհաննես Պողոս երկրորդը և Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդը հանդես եկան համատեղ հայտարարությամբ՝ դատապարտելով 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը, որի հետևանքով ոչնչացվեցին մեկ և կես միլիոն հայ քրիստոնյաներ:

- *Հոկտեմբերի 5-ին* Հայոց ցեղասպանության քանգարան և Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիր այցելեց Գերմանիայի Բունդեստագի պատվիրա-

կությունը՝ Բունդեստագի փոխնախագահ Անտե Ֆոլմերի գլխավորությամբ: Տիկին Ֆոլմերը հուշահամալիրի մոտ հանդես եկավ լրագրողների առջև և հայտարարեց. «Ես ծաղկեպսակ դրեցի Բունդեստագի և Գերմանիայի ողջ ժողովրդի անունից: Մենք գիտենք, որ ժամանակակից պատմության մեջ դա առաջին ցեղասպանությունն էր և որ հայ ժողովուրդը շատ մեծ վիշտ կրեց: Մենք չենք ցանկանում երբեք այդ մոռանալ և մենք հույս ունենք ապագան և նոր հարյուրամյակը կառուցել առանց այդպիսի բռնությունների:

Գերմանիայում յուրաքանչյուրը գիտի այդ ցեղասպանության մասին: Գերմանիան երկար տարիների ընթացքում վիճարկում է իր սեփական հանցանքների առիթով: Ես հույս ունեմ, որ Հայաստանի և Թուրքիայի միջև կկայանա երկխոսություն անցած հանցագործությունների մասին»:

- *Հոկտեմբերի 24-ին* Ծիծեռնակաբերդ այցելեց Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեն: Վերջին երկու տարվա ընթացքում սա Շևարդնաձեի երրորդ այցն էր Մեծ եղեռնի զոհերի հիշատակին կառուցված հուշահամալիր:

- *Հոկտեմբերի 25-ին* Եվրախորհրդարանը ձայների 149 կողմ, 275 դեմ հարաբերությամբ մերժեց Հայոց ցեղասպանության Թուրքիայի կողմից ճանաչումն իբրև այդ երկրի Եվրամիությանն անդամակցելու նախապայման դիտելու դրույթը: Պահպանողականների անունից ելույթ ունեցած Շարլ Պասկուան պահանջեց Թուրքիային պարտադրել ճանաչել ցեղասպանությունը, նշելով, որ «իրենք դեմ են Թուրքիայի Եվրոպային ինտեգրմանը, եթե Անկարան չճանաչի Հայոց ցեղասպանությունը»:

- *Հոկտեմբերի 28-ին* Մեծ եղեռնի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց Մարսելի քաղաքապետ, Ֆրանսիայի Սենատի փոխնախագահ Ժան-Կլոդ Գոդենի գլխավորած պաշտոնական պատվիրակությունը:

- *Հոկտեմբերի 31-ին* Հայոց ցեղասպանության թանգարանի ցուցադրությունը դիտեցին Ֆինլանդիայի խորհրդարանի անդամները, խորհրդարանի առաջին փոխխոսնակ տիկին Անտիլայի գլխավորությամբ:

- *Նոյեմբերի 1-ին* Մեծ եղեռնի հուշահամալիրի հիշողության պուրակում 1915թ. հայերի ցեղասպանության զոհերի հիշատակին արծաթափայլ եղևնի տնկեց Ռումինիայի Հանրապետության նախագահ Իոն Իլիեսկոն, որն այցելուների մատյանում գրեց. «Ի հիշատակ հայ ժողովրդի զոհերի և հերոսության»:

- *Նոյեմբերի 15-ին* Լեհաստանի պրեզիդենտ Ա. Կվասնևսկին Երևանի պետական համալսարանի դասախոսական կազմի և ուսանողության հետ հանդիպման ժամանակ հայտարարեց. «Այսօր ես այցելեցի Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի Հուշահամալիր և դա համարում եմ իմ այցելության բոլորից կարևոր մասը: Ոչ ոք աշխարհում չի կարող ժխտել փաստերը: Տեղի է ունեցել ցեղասպանություն, կայացել է ողբերգություն: Ոչ մեկը չի կարող ժխտել այդ փաստը: Հայերի 1915թ. ցեղասպանությունը հանդիսանում է իրողություն և այն, ինչ մենք տեսանք այսօր - դա ճշմարտություն է... Ես խորհուրդ եմ տալիս իմ քույրք գործընկերներին ընդունել իրողությունը»:

- *Նոյեմբերի 21-ին* ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Կոիչիրո Մացուուրան Հայաստան կատարած այցի շրջանակներում այցելեց Հայոց ցեղա-

սպանության թանգարան և Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիր: Հուշապուրակում կայացավ ավանդույթ դարձած ծառատունկը, որի ավարտից հետո նա հայտարարեց. «Այս ծառը, որ ես տնկեցի, պարզապես մի փոքր նշան է, որ մենք ընդունում ենք ցեղասպանության փաստը, իսկ թանգարանի հուշամատյանում ստորագրեցի և անգլերենով, և իմ մայրենի լեզվով՝ ցավակցելով ցեղասպանության զոհերին»:

- *Դեկտեմբերի 10-ին* Ժնևի (Շվեյցարիա) պետական խորհուրդը հանդես եկավ Հռչակագրով, որը ճանաչում է 1915թ. Հայոց ցեղասպանությունը: Հռչակագրում ասվում է, որ Ժնևը, հարգելով ցեղասպանության մասին միջազգային համաձայնագրերը, ճանաչում է 1915թ. Հայոց ցեղասպանությունը և դասվում է այս ոճրագործությունը ճանաչող բազմաթիվ պետությունների՝ Սիացյալ Ազգերի Կազմակերպության, Եվրոխորհրդարանի մեծ շարքին:

- *Դեկտեմբերի 12-ին* – Մեծ եղեռնի հուշահամալիր այցելեց Վրաստանի խորհրդարանի նախագահ տիկին Նինո Բուրջանաձեն: Նա պատվավոր հյուրերի մատյանում գրեց. «Անհնար է առանց ցնցվելու նայել անմեղ մարդկանց տառապանքներին: Այդ սարսափը երբեք ոչ մի տեղ աշխարհում չպետք է կրկնվի: Հայ ժողովուրդն իր պատմության ընթացքում շատ տառապանքներ է կրել:

Հուսով եմ, որ այդ ողբերգությունը կմնա անցյալում: Համոզված եմ՝ ձեր ժողովրդի ապագան կլինի արժանի և լուսավոր»:

2002

- *Հունվարի 9-ին* Ինչպես հաղորդում է «Ազգ» թերթը, «Մի նկարն արժե հազար բառ», նշանաբանով, Հոլանդիայում բնակվող Ռուբեն Մալայանը նախաձեռնել է միջազգային մրցույթ՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված պլակատների ստեղծման: Մրցույթի նպատակն է ազդեցություն գործել, ճանաչել տալ և հիշեցնել համաշխարհային հասարակական կարծիքին և ապահովել մարդկանց զգոնությունն ու պատրաստակամությունը՝ օգնելու Ցեղասպանության համաշխարհային ճանաչման գործին:

- *Հունվարի 27-ին* Մեծ Բրիտանիայի կառավարությունը հրեաների Ողջակիզման հիշատակի օրը նշելու կապակցությամբ Մանչեստրում կազմակերպված հանդիսության ժամանակ հարգանքի տուրք է մատուցել նաև 1915թ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

- *Հունվարի 31-ին* Բրիտանիայի կառավարությունը Հոլոքոստի հիշատակի օրվա ոգեկոչման արարողության ժամանակ այս տարի առաջին անգամ հիշատակեց Հայոց ցեղասպանությունն ի նշան այն ճանաչելուն ուղղված իր ուշադրության:

- *Փետրվարի 3-ին* Լոնդոնում հայ-թուրքական հարաբերությունների ապագան թեմայով քննարկումներին զեկուցումներով հանդես եկան Ստոկհոլմից Նիկոլա Դավիթյանը («Քաղաքականությունը և թուրք-հայկական հարաբերությունների ապագան») և Նյու Ջերսիից՝ Վինսենտ Լիման («Հայ-թուրքական հարաբերությունների ապագան գիտական տեսանկյունից»):

- *Փետրվարի 7-ին* Հայոց ցեղասպանության թանգարան այցելած Հունաստանի խորհրդարանի պատգամավոր, ՆԱՏՕ-ի անդամ երկրների միջ-

խորհրդարանական ասամբլեայի անդամ Սոֆիա Կալանճակոսը թանգարանի տպավորությունների մատյանում գրառեց. «Շատ անմարդկային ապարքի շատ հուզիչ պատկեր էր: Մենք չափից դուրս հուզվեցինք»:

- *Փետրվարի 8-ին* Գերմանիայի Մայնի Ֆրանկֆուրտ քաղաքի Սուրբ Կատարինե եկեղեցում բացվեց Հայոց ցեղասպանությունը փաստող պատմական լուսանկարների ցուցահանդես, որը կրում էր «Տարագրություն. Հետապնդում. Բնաջնջում» խորագիրը: Միջոցառման կազմակերպիչներն էին տեղի Ավետարանչական եկեղեցին և գերմանաբնակ թուրք մտավորականների «Միություն ընդդեմ ցեղասպանության» կազմակերպությունը, որոնք հիմնականում նպատակ էին հետապնդում մեկ անգամ ևս գերմանական կառավարության ուշադրությունը բևեռել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի վրա:

Կազմակերպված «Կլոր սեղանի» շուրջը ելույթ ունեցան դոկտոր Հանս Քրիստոֆ Շտուդը, դոկտոր Թեսա Հոֆմանը, դոկտոր Լավրենտի Բարսեղյանը, քուրդ Յորջան Այբոկան, Հեսենի հայկական մշակութային միության նախագահ Մասիս Նահապետյանը և Ալի Էրթեմը:

- *Փետրվարի 8-ին* Վրաստանում և Հայաստանում Իսրայելի դեսպան Ռիվկա Կոհենը Երևանում զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների համար կազմակերպած ասուլիսում ըստ էության ժխտեց Հայոց ցեղասպանության փաստը՝ հրաժարվելով որևէ զուգահեռ անցկացնել Հայոց ցեղասպանության և հրեական Հոլոքոստի միջև: Պարզապես Հայոց ցեղասպանությունը մերժելը պաշտոնական Իսրայելի դիրքորոշումն է:

- *Փետրվարի 15-ին* Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը բողոքի նոտա հղեց Իսրայելի արտգործնախարարությանը՝ կապված դեսպան Ռ-իկվա Կոհենի Երևանում Հայոց ցեղասպանության մասին արած հայտարարության հետ:

Բողոքում նշվում է, որ Հայաստանն անընդունելի է համարում Հայոց ցեղասպանության իրողությունը հերքելու կամ նսեմացնելու ցանկացած փորձ, ինչ պատճառաբանությամբ էլ դա արվի, «ավելին, Հայաստանը երբեք նպատակ չի ունեցել զուգահեռներ անցկացնելու Հայոց ցեղասպանության և հրեական Ողջակիզման միջև, համարելով, որ մարդկության հանդեպ գործած ցանկացած հանցագործություն «եզակի» է՝ իր ուրույն քաղաքական, իրավական, պատմական և բարոյական հետևանքներով»:

- *Փետրվարի 18-ին* Ի պատասխան Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության բողոքի նոտայի, Իսրայելի արտաքին գործերի նախարարությունը տվեց հետևյալ պատասխանը. «Իբրև հրեաներ և իսրայելցիներ՝ մենք ցավում ենք հատկապես 1915-1916թթ. տեղի ունեցած սպանությունների և դժբախտությունների համար... Իսրայելը ճանաչում է հայերի ողբերգությունը և հայ ժողովրդի սպանդը, սակայն, այդուհանդերձ, պետք չէ այն համեմատել ցեղասպանության հետ, և դա բնավ էլ չի նվազեցնում ողբերգության մեծությունը»: Անկասկած Իսրայելի արտաքին գործերի նախարարությունը երկակի խաղ է խաղում, մի կողմից՝ շեշտում է, որ «այս թեմայի հետազոտությունը պահանջում է հասարակության լայն խավերի մասնակցությամբ մեծ քննարկում, պատմաբանների երկխոսություն, որոնք հիմնված կլինեն փաստերի և վկայություն-

ների վրա», մյուս կողմից՝ սիրաշահելով Թուրքիային՝ մերժում ցեղասպանություն անվանելը:

- *Փետրվարի 28-ին* Ստրասբուրգում Եվրախորհրդարանը հաստատեց «Կանաչների» խմբի շվեդացի պատգամավոր Պեր Գարտոնի պատրաստած «Կովկասյան զեկուցագիրը», որի 15-րդ պարագրաֆը կոչ է անում թուրքական իշխանություններին ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Եվրախորհրդարանը Թուրքիային նաև հիշեցնում էր 1987թ. հունիսի 18-ին իր կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ ընդունված բանաձևի մասին: Խորհրդարանը միաժամանակ քննարկեց լիբերալ-ժողովրդավարական խմբակցության անդամ, բրիտանացի պատգամավոր Էնդրյու Դաֆի և Եվրամիություն-Թուրքիա հարաբերությունների նախկին համակարգող Ալան Լամասուրի «Հայոց ցեղասպանություն» ձևակերպումը շրջանցող թուրքամետ այլընտրանքային նախագիծը, որը մերժվեց 96 կողմ, 391 դեմ, 15 ձեռնպահ հարաբերակցությամբ:

- *Մարտի 4-ին* Հայտնի ցեղասպանագետ, Երուսաղեմի Ողջակիզման և ցեղասպանության ինստիտուտի տնօրեն, «Ցեղասպանության հանրագիտարանի» գլխավոր խմբագիր, պրոֆեսոր Իսրայել Չարնին հատուկ նամակով դիմեց Իսրայելի արտաքին գործերի նախարար Շիմոն Պերեսին, արտաքին գործերի փոխնախարար Մայկլ Մեչիորին և Իսրայելի Հայաստանում դեսպան տիկին Ռիվկե Կոենին, որտեղ ասվում էր. «Որպես հրեա և իսրայելցի, ես խորապես ամոթ եմ զգում մեր դեսպանի և նախարարության գրավոր դիրքորոշման համար, որոնք ժխտում են, թե հայ ժողովրդի ցեղասպանությունը փաստորեն չի եղել ցեղասպանություն: Այդպիսի դիրքորոշումը հավասարազոր է մեր ժողովրդի ողջակիզման ժխտելուն»:

- *Մարտի 7-ին* Լոսանջելեսաբնակ հայերը բողոքի խաղաղ ցույց կազմակերպեցին Իսրայելի հյուպատոսության շենքի առջև՝ իրենց մտահոգությունն ու զայրույթն արտահայտելով Հայաստանում և Վրաստանում Իսրայելի դեսպան Ռիվկա Կոհենի Երևանում արած հայտարարության առիթով:

Երկու ժամ տևած խաղաղ բողոքի ակցիային մասնակցել են շուրջ 500 ցուցարարներ, որոնց ղեկավարները հանդիպել են Իսրայելի հյուպատոսին և նրան հանձնել հուշագիր:

- *Մարտի 7-10-ը* ԱՄՆ-ի Սիչիգանի համալսարանի նախաձեռնությամբ գումարվեց միջազգային գիտաժողով, որի եռօրյա նիստերն անցկացվեցին դռնփակ պայմաններում: Գիտաժողովին չհրավիրվեցին ու մասնակից չդարձան Հայաստանից և ոչ մի գիտնական ու լրագրող:

- *Մարտի 8-ին* Չիկագոյի «Բիկոն Սթրիթ» պատկերասրահում բացվեց «Ժառանգություն: Պատկերներ լռեցված ցեղասպանությունից այն կողմ» խորագիրը կրող ցուցահանդեսը, որը գործեց մինչև ապրիլի 26-ը: Ցուցահանդեսին ներկայացվել էին ամերիկահայ ինը նկարիչներ՝ Թինա Բաստաջյանի, Նառմի Փրիջյանի, Էյլին Շահպազյանի, Էլիզա Խաչյանի, Ջոն Մահդեսյանի, Ջին Մարի Գասպարյանի, Էյլին Կլավելու, Ժակլին Դումանյանի և Դահլիա Էլսայեդի ստեղծագործությունները, տարբեր ժանրերով (գեղանկարչություն, եռաչափ կոլաժներ, քանդակներ և լուսանկարներ):

Ցուցահանդեսին ներկայացված արվեստագետները զավակներն են և թոռները Եղեռնը վերապրած մեր հայրենակիցների: Ցուցահանդեսի կազմակերպման ծրագրի հեղինակ Նառմի Փրիջյանը հարցազրույցի ժա-

մանակ ասել էր. «Ցուցահանդեսը պատկերում է աշխ...յհից լռության մատնված այդ ողբերգության անցումը մի սերնդից մյուսին»:
- *Մարտի 22-ին* Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարար Բ. Գրիզլովը լինելով Հայոց ցեղասպանության թանգարանում, հուզմունքով այցելուների տպավորությունների մատյանում գրանցեց. «Ցնցված եմ տեսածիս և լսածիս սարսափից: Սակայն պատմությունն անհրաժեշտ է վերականգնել և պահպանել»:
- *Մարտի 23-ին* Ֆրանսիայում երկրի պրեզիդենտի ընտրություններից առաջ պրեզիդենտի թեկնածուներին ուղղված հարցերի մեջ շոշափվեցին նաև Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության փաստի ժխտման քաղաքականությանը վերաբերող հարցեր: Հարցերին պատասխանող Ժակ Շիրակը, Յու. Ռոբերը, Կորին Լեպաժը, Ժան-Մարի Լեպենը և Լիոնել Ժոսպեն հանդես եկան Հայոց ցեղասպանության դատապարտման ու ճանաչման օգտին:
- *Մարտի 27-ին* ԱՄՆ-ի Վիսկոնսին նահանգի Սենատը բանաձև ընդունեց նահանգում այսուհետև յուրաքանչյուր տարվա Ապրիլի 24-ը սահմանել որպես հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր:
- *Ապրիլի 3-ին* Կալիֆորնիայի նահանգի Սակրամենտո քաղաքում նահանգային ասամբլեայի կրթության կոմիտեի անդամների հետ հանդիպման ժամանակ ԱՄՆ-ի Հայ դատի (արևմտյան շրջանի) ներկայացուցիչները, համայնքի մտահոգությունները ու ցանկությունները արտահայտելով, կոչ են արել ընդունել ցեղասպանության թեման կրթական ծրագրերում ընդգրկելուն ուղղված «Ասամբլեայի բանաձև 2003»-ը:
- *Ապրիլի 6-ին* Մեծ եղեռնի հուշահամալիր այցելեց Կորեայի Ժողովրդական Դեմոկրատական հանրապետության մշակութային գործիչների պատվիրակությունը, որի ղեկավար՝ հանրապետության մշակույթի փոխնախարար Խոն Սեն Օկը թանգարանի այցելուների մատյանում գրեց. «Հայ ժողովրդի թափած արյան պատմությունը չպետք է կրկնվի: Կեցցե՛ բարեկամությունը Հայաստանի և Կորեայի միջև»:
- *Ապրիլի 12-ին* Թուրքական «Ակօս» թերթը «Թուրքիան հայկական պնդումների դեմ նոր պայքարի սեմին» խորագրով հոդվածում տեղեկացնում է Հայոց ցեղասպանության հարցի առնչությամբ թուրքերի ձեռնարկած նոր գրոհի մասին: Թուրքական կառավարությունում տիրող տեսակետին համապատասխան, նախատեսվում է հայկական հարցը տարրական դպրոցներից սկսած դասավանդել աշակերտներին և այդ թեման տեղ է գտնելու ինչպես հասարակագիտության, այնպես էլ պատմության դասագրքերում: Մինչև դասագրքերի հրապարակումը թուրքական դպրոցների ուսուցիչները պետք է հետևեն Հայոց ցեղասպանության թեմայով հատուկ դասընթացների և մասնակցելու են սեմինար պարապմունքների:
- *Ապրիլի 12-ին* ԱՄՆ-ի 163 կոնգրեսականներ ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշին ուղղված նամակով պահանջել են, որ նա ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության հիշատակման օրը, մարդկության դեմ գործած այդ հանցագործությունը բնորոշի որպես ցեղասպանություն:

Նամակում ասվում էր. «Մենք պետք է ապահովենք Հայոց ցեղասպանության պատմական դասերի ճիշտ ըմբռնումը՝ ապագա ցեղասպանություններն ու անհիմնաստ սպանությունները կանխելու համար: Ուստի, դիմում ենք Ձեզ՝ կոչելով կատարել 2000թ. Ձեր տված խոստումը և ըստ

արժանվույն ճանաչել Հայոց ցեղասպանությունը որպես ցեղասպանություն Ձեր ապրիլի 24-ի հիշատակման ուղերձում... Հուսով ենք, որ այս տարի Դուք մեկ քայլ առաջ կգնաք անցյալ տարվա ուղերձի համեմատ և հատկապես կօգտագործեք «ցեղասպանություն» բառը»:

- *Ապրիլի 18-ին* Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց Սլովենիայի արտաքին գործերի նախարար Դմիտրի Ռուպելը: Հանդես գալով Հայաստանի արտաքին գործերի նախարարության կազմակերպած մամլո ասուլիսում, նա հայտարարեց. «Ես այցելեցի Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր և թանգարան-ինստիտուտ: Շատ տպավորված եմ այն ամենով, ինչին ծանոթացա թանգարանում: Իմ երկիր հասնելուն պես պիտի զեկուցեմ այս մասին ու պիտի մեր մասնագետներն ուսումնասիրեն, թե մենք ինչպես կարող ենք մասնակցել խնդրին»:

- *Ապրիլի 18-ին* ԱՄՆ-ի կոնգրեսի՝ մայրաքաղաք Վաշինգտոնի Ռեյբորնի անվան համալիրի սրահներից մեկում տեղի ունեցավ Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի կողմից կազմակերպված Հայոց ցեղասպանության 87-րդ տարելիցին նվիրված ամենամյա ութերորդ միջոցառումը, որին մասնակցեցին ԱՄՆ-ի կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի բազմաթիվ անդամներ, սենատորներ, դիվանագետներ, ԱՄՆ-ի տարբեր նահանգներից ժամանած հայ համայնքների ներկայացուցիչներ, ցեղասպանությունը վերապրողներ, լրագրողներ: Ելույթ են ունեցան կոնգրեսականներ Անրյուզին, Մարկ Քըրքը, Ջո Նոլեմբերգը, Դեյվիթ Բոնիերը, Էդ Ռոյսը, Ջեյմ Մակգովերնը, Ջոզեֆ Քրաուլին, Քոնի Մորելան, Ֆրենկ Փալոունը, սենատոր Ջեկ Ռիդը և ուրիշներ: Կոնգրեսականները ներկաներին հավաստիացրեցին, որ ԱՄՆ-ի կոնգրեսը վերջ ի վերջո ճանաչելու է Հայոց ցեղասպանությունը:

- *Ապրիլի 20-ին* Մայնի Ֆրանկֆուրտում գերմանահայերի կենտրոնական խորհրդի կազմակերպած ապրիլքսանչորսյան հիշատակի երեկոյին մասնակցած Գերմանիայի Բրանդենբուրգ երկրամասի կրթության, երիտասարդության և սպորտի նախարար Շտեֆան Ռայխեն համարձակ ելույթ ունեցավ և հայտարարեց, թե Բրանդեսբուրգի ուսումնական հաստատություններում պիտի անցնեն 20-րդ դարասկզբին Օսմանյան հայերի նկատմամբ կիրառած զանգվածային տեղահանության, բռնության, ցեղասպանության մասին, պիտի ծանոթանան Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպին, Յոհաննես Լեփսիուսի վկայություններին: Երկու օր անց Բրանդենբուրգի այս նույն քաղաքական գործիչը հայտարարեց, թե հրեաներին ջարդելը Հիտլերը թուրքերից է սովորել:

Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը վերոհիշյալ ելույթների առթիվ բողոքի նոտա ներկայացրեց Անկարայում Գերմանիայի դեսպանին, իսկ մայիսի 2-ին Գերմանիայում Թուրքիայի դեսպանն իր երկրի բողոքին անձնապես ծանոթացրեց Բրանդենբուրգի նախարարին՝ նրա հետ հանդիպելով Բեռլինում:

- *Ապրիլի 20-ին* Մայնի Ֆրանկֆուրտի Փաուլսքիրշեում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի երեկո, որը սկիզբ դրեց ապրիլքսանչորսյան տարբեր միջոցառումների կազմակերպմանը ողջ Գերմանիայում:

- *Ապրիլի 20-ից 21-ը* Անկարայում Թուրքիայի նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերի հովանավորությամբ տեղի ունեցավ Հայկական ուսումնասիրությունների կոնգրեսը, որը տարածեց եզրափակիչ հայտարարություն՝ կոչ անելով Հայաստանին «գիտական ուսումնասիրությունների» նպատակով պատմաբանների և հետազոտողների առաջ բացել հայկական արխիվները:
- *Ապրիլի 21-ին* Փարիզի Աստվածամոր տաճարում պատարագ մատուցվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, որին մասնակցեցին Ֆրանսիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Էդ. Նալբանդյանը, Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանչական եկեղեցիների առաջնորդները:
- *Ապրիլի 21-ին* Սիրիայի Դեր-Զոր քաղաքում տեղի ունեցավ սփյուռքահայ երիտասարդության հավաք: Ապրիլի 22-ին հավաքի մասնակիցները Դեր-Զորից շարժվեցին դեպի անապատի խորքում, Մարկատե վայրում կառուցված Սուրբ Հարություն մատուռը, որտեղ Քերիոյ թեմի առաջնորդ Սուրեն արքեպիսկոպոս Գաբարոյանի գլխավորությամբ կայացավ հոգեհանգստյան արարողություն:
- *Ապրիլի 21-ին* Աթենքի «Ատտիկոն» սրահում նահանգապետարանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ Օսմանյան Թուրքիայում 1915թ. Հայոց Մեծ եղեռնի 87-ամյակին նվիրված կենտրոնական քաղաքական ձեռնարկ՝ Հունաստանում գործող հայ քաղաքական կուսակցությունների մասնակցությամբ:

Հանդիսավոր արարողությանը ելույթով հանդես եկան Հունաստանի խորհրդարանի նախագահ Ա. Կակլամանիսը, Հունաստանի մամուլի նախարար Խ. Փրոթափափասը, Հունաստանում ՀՀ դեսպան Վ. Կաժոյանը և այլ պաշտոնական անձինք:
- *Ապրիլի 21-ին* Սալոնիկի «Էթերիա Մակեդոնիկոն» սրահում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության 87-րդ տարելիցին նվիրված հանդիսավոր նիստ, որտեղ ելույթներով հանդես եկան Մակեդոնիայի և Թրակիայի նախարար Գ. Պասխալիդիսը, Սալոնիկի քաղաքապետ Վ. Պապագեորգոպուլիսը, Սալոնիկի նահանգապետ Կ. Պապադոպուլոսը:
- *Ապրիլի 21-ից 24-ը* Լոս Անջելեսի արվարձաններում և բուն քաղաքում բնակվող հայերը հանդես եկան բազմաթիվ ոգեկոչման ձեռնարկներով, որոնց մասնակից դարձավ շուրջ 80 հազար մարդ: Հոլիվուդում 40 հազարից ավելի հայեր դուրս եկան քայլարշավի: Մոնթեբելլոյի Մեծ եղեռնի հուշարձանը դարձավ կարևոր հավաքատեղի: Առանձին միջոցառումներ կազմակերպվեցին Գլենդելում: Երիտասարդ հայերի ցույց կազմակերպվեց Թուրքիայի հյուպատոսարանի առջև:
- *Ապրիլի 22-ին* Կանադայի վարչապետ Ժան Կրետյենն իր ուղերձը հղեց Կանադայի հայ համայնքին՝ Հայոց ցեղասպանության 87-րդ տարելիցի կապակցությամբ, որում մասնավորապես նշվում է. «Դա մի դժբախտություն էր, որից տուժել է ողջ հայությունը... կանադացիներն անկեղծորեն կիսում են հայերի մեծագույն վիշտը: Օսմանյան կայսրության պատերազմի հետևանքով նրանցից յուրաքանչյուրը դատապարտվեց դաժան ճակատագրի: Շատերը փրկվեցին՝ ապաստան գտնելով Կանադայում: Այսօր նրանց, ինչպես և նրանց ժառանգների մեծ ներդրումը մեր երկրի զարգաց-

ման գործընթացին պարտավորեցնում է մեզ ճանաչել և դատապարտել այդ ոճրագործությունը»:

- *Ապրիլի 23-ին* Փարիզում՝ Բաստիլի հրապարակում, ֆրանսահայ երիտասարդական կազմակերպությունների անդամները կազմակերպեցին մոմավառության արարողություն:

- *Ապրիլի 24-ին* Փարիզի քաղաքապետարանը կազմակերպեց ընդունելություն ի հիշատակ եղեռնի զոհերի: Երեկոյան Փարիզի Հաղթական կամարի տակ այրվող անմար կրակի մոտ և Անհայտ զինվորի գերեզմանին դրվեցին հարյուրավոր ծաղկեպսակներ:

- *Ապրիլի 24-ին* ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջ. Բուշը Հայոց ցեղասպանության տարելիցի իր ուղերձում կրկին խուսափեց գործածել «ցեղասպանություն» բառը: ԱՄՆ-ի նախագահը հաշվի առնելով անցյալի դասերը, ձգտելով ապագան կառուցել «ճշմարտության և հաշտեցման հիմքով», Թուրքիային կոչ է արել Հայաստանի հետ հաստատել տնտեսական, քաղաքական և մշակութային հարաբերություններ:

- *Ապրիլի 24-ին* ԱՄՆ-ի Նյու-Ջերսի նահանգի նահանգապետ Ջեյմս Ե. Մակգրիվին հանդես եկավ Հռչակագրով և հայտարարեց 2002թ. Ապրիլի 24-ը հայ նահատակների օր հռչակելու մասին:

- *Ապրիլի 24-ին* Վարշավայում գործող «Լեհաստան-Արևելք» ընկերության ջանքերով անցկացվեց հիշատակի երեկո, նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

- *Ապրիլի 24-ին* ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում մի խումբ կոնգրեսականներ (Փալոունը, Նոլլենբերգը, Լանճեվեն, Խոյերը, Քերքը, Մէլոնին, Վիները, Քիլիրակիսը, Կրոուլին, Խինչին, Ռոտմանը, Շոուն, Օլիվերը, Գեկասը, Լինչը, Դուլին, Կոստելլոն, Թոմանը, Լևին, Սոլիսը, Տիրնին, Ռադանովիչը, Վիսկլոսկին, Քեննեդին, Կապուանոն և ուրիշներ) հանդես գալով կազմակերպված հիշատակի օրվան նվիրված միջոցառմանը, իրենց ելույթներում կրկին անգամ դատապարտեցին Հայոց ցեղասպանությունը:

- *Ապրիլի 24-ին* ԱՄՆ-ի Նյու-Յորք նահանգի նահանգապետ Ջորջ Պատակին հանդես եկավ Հռչակագրով և 2002թ. Ապրիլի 24-ը հռչակեց հայերի հիշատակի օր:

- *Ապրիլի 24-ին* ԱՄՆ-ի Կոլորադո նահանգի Սենատը համատեղ բանաձև ընդունեց Ապրիլի 24-ը նահանգում հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր սահմանելու մասին:

- *Ապրիլի 24-ին* ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա կապակցությամբ ուղերձով դիմեց հայ ժողովրդին, համոզմունք հայտնելով, որ հայությունն ակնկալում է ոճրագործության ճանաչումն ու դատապարտումը:

- *Ապրիլի 24-ին* Վաղ առավոտից երևանցիները Ծիծեռնակաբերդի բարձրունքը տանող բոլոր ճամփաներով շարժվեցին դեպի 1915թ. Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձան՝ իրենց հարգանքի տուրքը մատուցել Եղեռնի զոհերի հիշատակին: Նրանց հետ հավերժական ջահի մոտ գլուխ խոնարհեցին նաև աշխարհի տարբեր կողմերից ժամանած հյուրեր, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ, միջազգային կազմակերպությունների, տարբեր երկրների լրատվական ծառայությունների ներկայացուցիչներ:

- *Ապրիլի 24-ին* Վրաստանի խորհրդարանի պատգամավոր, «Վրաստան» հայալեզու թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանը խորհրդարանի նիստում դիմելով իր գործընկերներին, առաջարկեց հարգանքի տուրք մատուցել Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին:

Առաջարկությունն առաջացրեց խորհրդարանի անդամ ադրբեջանցիների դժգոհությունը: Ադրբեջանցի պատգամավոր Ռամիզ Բաքիրովը հարձակվելով Վան Բայբուրթյանի վրա, նրան մեղադրեց Վրաստանի պետական հիմքերը խախտելու փորձերի մեջ, իրեն ներկայացնելով և անվանելով թուրք և Թուրքիայի մի մասնիկը: Հայ պատգամավորի առաջարկությունը չհարգվեց իր գործընկերների կողմից:

- *Ապրիլի 24-ին* Դեր-Զորի Սուրբ Նահատակաց վանքում տեղի ունեցավ Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված պատարագ, որին մասնակցեցին Սիրիայից, Լիբանանից և աշխարհի այլ վայրերից ժամանակ բազմահազար հայ ուխտավորներ:

- *Ապրիլի 24-ին* Մոսկվայում Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայ եկեղեցու առաջնորդ Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը հոգեհանգստյան պատարագ անցկացրեց Մոսկվայում Սուրբ Փրկչի տաճարի մոտ տեղակայված հայկական խաչքարի մոտ:

- *Ապրիլի 24-ին* Մոսկվայի հայ համայնքի ներկայացուցիչները բողոքի ցույց կազմակերպեցին Թուրքիայի դեսպանատան առջև:

- *Ապրիլի 24-ին* Թբիլիսիի հայկական թատրոնի շենքում կազմակերպվեց հիշատակի հանդիսություն:

- *Ապրիլի 24-ին* Կրասնոդար քաղաքի հայկական եկեղեցուն հարակից հրապարակում տեղի ունեցավ հանրահավաք, որին մասնակցեց շուրջ 3000 մարդ՝ հարգելով Թուրքիայում իրականացված հայերի ցեղասպանության զոհերի հիշատակը:

- *Ապրիլի 24-ին* Պրահայի կենտրոնական հրապարակներից մեկում՝ Խաղաղության հրապարակում գտնվող Սուրբ Լյուդմիլա տաճարում կաթոլիկ պատարագի ընթացքում հիշատակվեց 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը և աղոթք հնչեցվեց զոհերի հիշատակի համար:

- *Ապրիլի 24-ին* Փարիզում, Գրենոպլում, Ալֆորվիլում, Լիոն-Վիեննում, Մարսելում և Լիոնում տեղի ունեցան Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի ոգեկոչման միջոցառումներ: Տեղի հայկական եկեղեցիներում մատուցվել են հոգեհանգստյան պատարագներ, բացվել են ցուցահանդեսներ, անցկացվել գիտաժողովներ:

- *Ապրիլի 24-ին* Հուշահանդեսներ կազմակերպվեցին Բեռլինում և Քյոլնում:

- *Ապրիլի 24-ին* Հայոց ցեղասպանության թանգարանում բացվեց ֆրանսահայ ականավոր գեղանկարիչ Ժանսեմի (Հովհաննես Սեմիրջյան) Հայոց ցեղասպանությանը նվիրված, 34 գեղանկարչական աշխատանքներից բաղկացած «Եղեռն» թեմատիկ ցուցահանդեսը: Ցուցահանդեսին ներկա էր նաև 82-ամյա Ժանսեմը, որն իր նկարաշարը նվիրեց Հայաստանի Հանրապետությանը: Ցուցահանդեսի բացման պաշտոնական արարողությունը կատարեցին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը և Ժանսեմը:

- *Ապրիլի 24-ին* ՀՀ նախագահը, ՀՀ Ազգային ժողովի նախագահը, ՀՀ վարչապետը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահը և Ամենայն Հայոց կաթողիկոսն այցելեցին Ծիծեռնակաբերդ և Մեծ եղեռնի զոհերի հիշատակին կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

- *Ապրիլի 24-ին* Անթիլասի (Լիբանան) Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարում տեղի ունեցավ Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հոգեհանգստյան պատարագ և աղոթք: Հանդիսությունը գլխավորեց Կիլիկիայի Հայոց կաթողիկոս Արամ Առաջինը:
- *Ապրիլի 25-ին* Երևանում Հայկական ժողովրդային շարժում կազմակերպության և Հայկական ճարտարապետության ուսումնասիրությունների կենտրոնի ուժերով բացվեց «Քաղաքակրթությունների մերձեցումը որպես համամարդկային արժեքների պահպանման գրավական» նշանաբանով միջազգային գիտաժողովը, որը քննարկեց Հայոց ցեղասպանության մի շարք հիմնախնդիրներ, դատապարտելով Թուրքիայի տարածքում իրականացվող մշակութային եղեռնը:
- *Ապրիլի 25-ին* Լոնդոնում Թուրքիայի դեսպանատան առաջ տեղի ունեցավ մի ցույց, որի կազմակերպիչ հայերը մոմերով ու պաստառներով լռելայն, բայց արժանապատվությամբ ցանկացել են իրենց «ձայնը լսելի դարձնել»: Ի հակադրություն հայերի, թուրք երիտասարդների մի խումբ, դրոշները ծածանելով, սկսել են ռազմաշունչ երգեր երգել:
- *Ապրիլի 26-ին* Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց Ռուսաստանի Դաշնության նախագահի տիկինը՝ Լ. Պուտինան: Ռուսաստանի նախագահի հուզված տիկինը մատյանում թողեց հետևյալ գրառումը. «Ցնցված եմ տեսածովս և լսածովս: Թող ցեղասպանության դրսևորումը կորչի երկրի երեսից և թող նույնիսկ ինքը՝ բառը, ջնջվի աշխարհի բոլոր լեզուներով եղած բառարաններից: Սակայն թող այլևս մոռացության չտրվի նրանց մասին հիշողությունը, ովքեր ապրեցին ցեղասպանությունը և ով ենթարկվեց ոչնչացմանն ու հետապնդմանը»:
- *Ապրիլի 27-ին* Լոնդոնի կենտրոնական փողոցներով անցան հայ և անգլիացի խաղաղ ցուցարարներ, որոնք կոչ էին անում հայերի կոտորածները ճանաչել որպես Ցեղասպանություն: Ցույցը տևել է մոտ երկու ժամ և սկիզբ է առել «Մարբլ Արչից»:
- *Ապրիլի 27-ին* Լեհաստանի Կրակով քաղաքի Սուրբ Նիկոլայ եկեղեցում մատուցվեց պատարագ՝ նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:
- *Ապրիլի 27-ին* Բեռլինի թուրքական հյուպատոսության շենքի առջև իրենց ամենամյա բողոքի ցույցը կազմակերպեցին Գերմանիայում ապրող հայերը:
- *Ապրիլի 28-ին* Ֆրանսիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Էդ. Նալբանդյանը և Ֆրանսիական Կլամար քաղաքի քաղաքապետ Ֆիլիպ Կալտենբակը հանդիսավոր պայմաններում կատարեցին Կլամարի կենտրոնական հրապարակներից մեկի բացումը, որը վերանվանել է 1915թ. Հայոց ցեղասպանության զոհերի անունով:

Արարողությանը ներկա էին ֆրանսիացի սենատորներ, պատգամավորներ, քաղաքապետեր և այլ պաշտոնատար անձինք:
- *Ապրիլի 28-ին* Ֆրանսիայի Մեյզիո քաղաքում բացվեց Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան:
- *Ապրիլի 30-ին* Հայոց ցեղասպանության թանգարան այցելած Չինաստանի Ժողովրդական Հանրապետության պաշտոնական պատվիրակության ղեկավար, մշակույթի փոխնախարար Չոն Կեժենը թանգարանի պատվավոր այցելուների մատյանում գրառեց. «Հուսով եմ, որ այսպիսի ողբեր-

գություն այլևս չի կրկնվի: Պետք է նայել ապագային: Այն կլինի լուսավոր և հիանալի»:

- *Մայիսի 6-ին* Ամերիկայի Միացյալ Նահանգների Կոլորադո նահանգի Սենատն իր որոշումով ճանաչել է 1915թ. Հայոց ցեղասպանությունը և նահանգի տարածքում Ապրիլի 24-ը հայտարարել է ցեղասպանության զոհերի հիշատակի օր: Կոլորադոն դարձավ Հայոց ցեղասպանությունը ճանաչած 27-րդ նահանգն ԱՄՆ-ում:

- *Մայիսի 10-11-ը* Դանիայում թուրք և սփյուռքահայ պատմաբանների մասնակցությամբ տեղի ունեցավ «Հայկական հարց. պնդումներ և մերժումներ» նշանաբանով միջազգային գիտաժողովը: Հայկական կողմից գիտաժողովին մասնակցել են պրոֆեսորներ Վահագն Տատրյանը և Ռիչարդ Հովհաննիսյանը, իսկ թուրքական կողմից՝ Թուրքիայի խորհրդարանի պատգամավորներ Բյուլենթ Աքաբջալընը, Քայրամ Ֆըրաթ Յաքիլին և պաշտոնաթող դիվանագետ Փուլաթ Թաջարը:

- *Մայիսի 14-ին* Հայոց ցեղասպանության թանգարան այցելած ՆԱՏՕ-ի խորհրդարանական ժողովի նախագահ Ռաֆայել Էստրելլան գրանցեց թանգարանային մատյանում. «Այն սարսափը, ավերածությունը և մարդկանց կանխամտածված ոչնչացումը, որ ներկայացված է այս թանգարանում, մեր պատմության մշտական սոսկում է, որը այլևս չպետք է կրկնվի, և ոչ էլ՝ մոռացվի:

Մեր ընդհանուր քաղաքակրթության պատմության մեջ մարդկության դեմ կատարված նման ոչ քաղաքակիրթ հանցանքի օրինակներ դժվար է գտնել: Որպես քաղաքական ներկայացուցիչներ, ժողովրդավարությունը և ժողովրդավարական խորհրդարանները պետք է միահամուռ դուրս գան դրա դեմ:

Ցեղասպանությունն իր տարբեր դրսևորումներով պետք է ընդմիշտ արմատախիլ արվի մեր քաղաքակրթությունից: Սա պետք է լինի մեր ընդհանուր պարտքը»:

- *Մայիսի 15-ին* Իսլանդիայի մայրաքաղաք Ռեկյավիկում հանդիպեցին Հայաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի արտաքին գործերի նախարարները: Անկարա վերադառնալուց հետո Թուրքիայի արտաքին գործերի նախարար Իսմայիլ Ջեմը հայտարարեց, որ Թուրքիան պատրաստ է դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ, եթե վերջինս ընդունի Թուրքիայի չորս հիմնական պահանջները՝ «Առաջին. Հայաստանը պիտի հրաժարվի պատմությունով թշնամանք սերմանելու սովորությունից, թողնելով ցեղասպանության խնդիրը պատմաբանների ուսումնասիրությանը: Երկրորդ. Հայաստանը պիտի իր Սահմանադրությունից վերացնի տարածքային պահանջների հոդվածները: Երրորդ. պիտի լուծվի Լեռնային Ղարաբաղի հարցը, Ղարաբաղի տարածքն Ադրբեջանին վերադարձնելու պայմանով: Չորրորդ. Հայաստանը պիտի միջանցք տրամադրի Ադրբեջանի և Նախիջևանի միջև կապն ապահովելու համար»:

- *Մայիսի 22-ին* Լինելով Մեծ եղեռնի զոհերի հիշատակին կառուցված հուշահամալիրում և դիտելով թանգարանային ցուցադրությունը, Ռուսաստանի Դաշնության դաշնային խորհրդի ժողովի նախագահ Ս. Միրոնովը տպավորությունների մատյանում գրեց հետևյալը. «Հայ ժողովրդի հետ միասին վշտակցում եմ 1915-1922թթ. ցեղասպանության զոհերին: Մարդկության դեմ գործած հանցագործությունները մոռացության ենթակա չեն»:

- *Հունիսի 13-ին* Ձայների գերակշռող մեծամասնությամբ Կանադայի Սենատը բանաձև ընդունեց Հայոց ցեղասպանության վերաբերյալ, որով դատապարտում է և մյուս կողմից կառավարությունից պահանջում է ճանաչել այն որպես «20-րդ դարի առաջին ցեղասպանությունը» ու Ապրիլի 24-ը յուրաքանչյուր տարի Կանադայի ողջ տարածքում հռչակել «1,5 միլիոն զոհերի հիշատակի օր»:

Բանաձևի նախագիծը Սենատ էին ներկայացրել սենատորներ՝ տիկին Շըրլի Մահյոն և Ռայմոնդ Սետլաքուն:

Սենատի կողմից ընդունված բանաձևն օրենքի ուժ կարող է ստանալ նաև Ներկայացուցիչների պալատի կողմից, որը նախորդ տարի ձայների ճնշող մեծամասնությամբ ձախողեց բանաձևի ընդունումը:

Երկու պալատների կողմից ընդունվելու դեպքում օրինագիծը ներկայացվում է կառավարություն՝ ի վավերացում:

- *Հունիսի 23-ին* Ֆրանսիայի Լիոն քաղաքի քաղաքապետ Ժերար Կոլոմբը Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրի հիշողության պուրակում արձաթափայլ եղևնի տնկելուց հետո թանգարանի այցելուների տպավորություններ մատյանում գրեց. «Հուզիչ մի այցելություն էր, որը հիշեցրեց պատմության ամենասարսափելի էջերից մեկը՝ պատմության մեջ առաջին Հայոց ցեղասպանությունը»:

- *Հուլիսի 8-ին* Լոնդոնում իր աշխատանքներն սկսեց «Օսմանյան տիրապետությունից առաջ և օսմանյան շրջանի ուսումնասիրման միջազգային կոմիտեի» 15-րդ նստաշրջանը, որի ընթացքում, ըստ թուրքական լրատվամիջոցների, թուրք գիտնականները «մեծ հարված հասցրին Հայոց ցեղասպանության մասին պնդումներին»: Միջազգային կոմիտեի նստաշրջանին ներկա էին շուրջ 160 գիտնականներ:

- *Հուլիսի 11-ից 15-ը* Մադրիդի համալսարանը կազմակերպեց ցեղասպանություններին ձվիրված միջազգային համաժողով, որին մասնակցած շուրջ երեք տասնյակ գիտնականների ելույթների կենտրոնում են եղել 20-րդ դարի չորս ցեղասպանությունները՝ Հայոց, հրեաների, Կամբոջայի և Ռուանդայի: Գիտնականներն անդրադարձել են նաև Սերբիայի և Արևելյան Թիմորի կոտորածներին:

Համաժողովին մասնակցած միակ հայ գիտնականը պրոֆեսոր Վահագն Տատրյանն է, որը ներկայացնում էր «Զորյան» հաստատությունը:

- *Օգոստոսի 12-ին* ԱՄՆ-ի մի խումբ կոնգրեսականներ, գտնվելով Հայաստանում, այցելեցին Մեծ եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշահամալիրը և Հայոց ցեղասպանության թանգարանը, որտեղ և թողեցին ներքոհիշյալ գրառումները.

1. ՖՐԵՆԿ ՓԱԼՈՆ, ԿՈՆԳՐԵՍԱԿԱՆ ՆՅՈՒ-ՋԵՐՍԻՅԻ.

«Թանգարանն ամենաարդյունավետ կերպով շարունակում է իր հսկայական ջանքերը Հայոց ցեղասպանությունը փաստագրելու և ներկայացնելու ուղղությամբ: Մի օր ես կվերադառնամ և Միացյալ Նահանգների կոնգրեսն արդեն ճանաչած կլինի հայերի ցեղասպանությունը»

2. ԼԼՈՅԴ ԴՈԳԵԹ, ԿՈՆԳՐԵՍԱԿԱՆ ՏԵԽԱՍԻՑ

«Շնորհակալ եմ, որ պահպանում եք պատմության մի ողբերգական էջ, որն աշխարհը երբեք չպետք է մոռանա»:

- *Օգոստոսի 21-ին* Թուրքական «Թըրքիշ դեյլի նյուս» օրաթերթը տեղեկացրեց, որ հրեական թանգարան է կառուցվելու Իզմիր քաղաքի Հավրա փողոցում՝ «Կեմերալթի բազար» կոչվող պատմական վայրում: Այս մասին հաղորդել էր Թուրքիայի մշակույթի նախարարը, նշելով, որ այդ վայրը մշտապես արժանացել է օտարերկրացի զբոսաշրջիկների մեծ ուշադրությանը:

«Մենք պարտական ենք ինչպես Թուրքիայում, այնպես էլ ամբողջ աշխարհում հրեաներին: Չպետք է մոռանանք, որ եթե մեզ հաջողվում է ստիպել Միացյալ Նահանգների կառավարությանը միջոցներ ձեռք առնել հայերի դեմ և կանխել ամերիկահայերի լայնածավալ ջանքերը, ապա՝ Ամերիկայում հրեական քարոզչության շնորհիվ է միայն: Նրանք Թուրքիային պաշտպանում են ամբողջ հոգով ու սրտով: Նրանք 500 տարի վճարում են իրենց հավատարմության պարտքը թուրքերին: Ուստի մենք ևս պարտավոր ենք փոխադարձաբար նույն զգացումները տածել նրանց հանդեպ», - ասել է Թուրքիայի մշակույթի նախարար Սուատ Սաղլայան:

- *Օգոստոսի 27-ին* ԱՄՆ-ի Միչիգան նահանգի նահանգապետ Ջոն Էնգլերը ստորագրեց օրենք (թիվ 588), ըստ որի յուրաքանչյուր տարի Ապրիլի 24-ը սահմանվում է հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր:

Այդ օրենքի նախագիծը դեռևս ներկայացվել էր Միչիգանի նահանգի Սենատին 2001 թվականին: 2002թ. սկզբին այդ բանաձևին հավանություն տվեց նաև Ներկայացուցիչների պալատը:

- *Սեպտեմբերի 9-ին* Տուրիզմի Համաշխարհային խորհրդի նախագահ Ֆրանսուա Ֆրաժուլին լինելով Հայոց ցեղասպանության թանգարանում, թողեց հետևյալ գրառումը. «Կարելի է միայն խորապես ցնցվել՝ մարդկության պատմության այս ամենամեծ արհավիրքը հիշատակելով: Անհրաժեշտ է, իրոք, հիշատակը վառ պահել»:

- *Սեպտեմբերի 14-ին* Ֆրանսիայի Կանն քաղաքի Կրուազետ պողոտայի մերձակա Վերդեն պուրակում տեղի ունեցավ զույգ կոթողներից կազմված հուշարձանի բացումը: Կոթողներից յուրաքանչյուրի վրա փորագրված էր. «1915թ. երիտթուրքերի կառավարության իրականացրած ցեղասպանության 1,5 միլիոն հայ զոհերի հիշատակին» և «Ի փառս 1914-18 և 1935-45թթ. Ֆրանսիայի համար զոհված հայ մարտիկների»: Հուշարձանի հեղինակն է Ալբերտ Սխիթարյանը:

- *Սեպտեմբերի 17-ին* Մեծ եղեռնի հուշահամալիր այցելեց Վրաստանի պաշտպանության նախարարության պատվիրակությունը նախարար, գեներալ-լեյտենանտ Դ. Թևզադեի գլխավորությամբ: Նախարարը քանգարանը դիտելուց հետո տպավորությունների մատյանում գրեց. «Գլուխս խոնարհում եմ զոհվածների հիշատակի առջև: Աստված ոգեկոչի նրանց հոգիները»:

- *Հոկտեմբերի 10-ին* Գտնվելով Հայաստանում, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցեց Ուկրաինայի Հանրապետության նախագահ Լ. Կուչման, որը թանգարանի պատվավոր հյուրերի մատյանում թողեց հետևյալ գրառումը. «Գլուխս եմ խոնարհում անմեղ զոհվածների վառ հիշատակի առաջ: Թող բազմաչարչար հայ ժողովրդի տառապանքները և նրա զոհերը դառնան նախազգուշացում ներկա և ապագա սերունդների համար, որպեսզի երբեք չկրկնվի արյունոտ ողբերգությունը»:

- *Հոկտեմբերի 12-ին* Հայոց ցեղասպանության թանգարան և Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիր այցելեց Ռուսաստանի Դաշնության առաջին նախագահ Բ. Ն. Ելցինը, որը թանգարանի հուշամատյանում գրառեց. «1915-1922թթ. հայ ժողովրդի ցեղասպանությունը համաշխարհային ամոթանք է: Դրան ներում չկա և չի էլ լինի: Դա ճանաչել է Ռուսաստանը, աշխարհի շատ երկրներ: Ժամանակն է, որ Թուրքիան նույնպես ապաշխարի: Ես երկար տարիներ հետևում եմ և տեսնում՝ Հայաստանը վերածնվում է:

Շնորհակալություն, որ պահպանում եք հիշողությունը և ճշմարտությունը»:

- *Հոկտեմբերի 18-ին* Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի ուղեկցությամբ Ծիծեռնակաբերդ այցելեց Անտիոքի և համայն Արևելքի Ասորի ուղղափառ քույր եկեղեցու գահակալ Մար Իգնատիոս Զաքքա Իվաս Ա պատրիարքը:

Մեծ եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանին դրվեցին ծաղկեպսակներ և կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

- *Հոկտեմբերի 30-ին* Մեծ Բրիտանիայի Ուելսի մայրաքաղաք Կարդիֆում անդամների մեծամասնության կողմից ստորագրվեց թիվ 2000-0029 թվակիր փաստաթուղթը, որով Ուելսի գլխավոր օրենսդիր մարմինը ճանաչեց 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը և կոչ արեց Թուրքիայի կառավարությանը ճանաչելու Հայոց ցեղասպանությունը, ինչպես նաև դադարեցնել Հայաստանի Հանրապետության շրջափակումը:

Փաստաթուղթը նաև կոչ էր անում Մեծ Բրիտանիայի կառավարությանը ձեռնպահ մնալ Եվրամիությանը Թուրքիայի անդամակցությանն աջակցելուց մինչև վերջինս չճանաչի Հայոց ցեղասպանությունը:

Ուելսի Ազգային ժողովն առաջին բրիտանական օրենսդիր մարմինն է, որ բանաձև ընդունեց Հայոց ցեղասպանության վերաբերյալ:

- *Նոյեմբերի 5-ին* Հայոց ցեղասպանության թանգարան և Մեծ եղեռնի հուշահամալիր այցելեց Ռուսաստանի Դաշնության կառավարական պատվիրակությունը վարչապետ Մ. Կասյանովի գլխավորությամբ:

Թանգարանի ցուցադրությունը դիտելուց հետո Մ. Կասյանովն այցելուների մատյանում կատարեց հետևյալ գրառումը. «Շնորհակալ եմ հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական ժամանակաշրջանի հետ ծանոթանալու հնարավորության համար: Ցնցված եմ ցեղասպանության կազմակերպիչների և մասնակիցների սարսափից ու բարբարոսությունից: Նաև մեծ չափով հիացած եմ հայ ժողովրդի արիությամբ և տոկունությամբ: Մենք ձեզ հետ ենք»:

- *Նոյեմբերի 12-ին* Մարսելի քաղաքագլուխ, սենատոր Ժան-Կլոդ Գոդենն իր կարծիքը հայտնելով Եվրամիությանը Թուրքիայի հնարավոր անդամակցության հարցում, Ֆրանսիայի նախկին նախագահ Վալերի Ժիսկար դ Էստենի բացասական դիրքորոշման առթիվ, հայտարարել է. «Նա շատ ճիշտ է վարվել: Նրան համամիտ եմ: Սեզ ոչինչ չի կապում Թուրքիային՝ ոչ պատմությունը, որն աշխարհագրությունը, ոչ էլ կրոնը: Ավելին, ես նրանցից եմ, ովքեր Սենատին հնարավորություն տվեցին ճանաչելու Թուրքիայի կազմակերպված Հայոց ցեղասպանությունը: Ես չեմ կարող կշեռքի միևնույն ճաշարի վրա դնել երկու միլիոն զոհերին և ոմանց տնտեսական ու դիվանագիտական շահերը: Քանի դեռ Թուրքիան չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը, ես կտրականապես դեմ կլինեմ նրա անդամակցությանը»:

- *Դեկտեմբերի 4-ին* Կանադայի համայնքների պալատի արտաքին հարաբերությունների և միջազգային առևտրի կոմիտեն մեկ ձայնի տարբերությամբ մերժեց 1915թ. Հայոց ցեղասպանության դատապարտման բանաձևը, որը ներկայացվեց կոմիտեի անդամ Սվենդ Ռոբինսոնի կողմից: Բանաձևի տեքստը կազմել էր Կանադայի խորհրդարանի հայազգի պատգամավոր Սարգիս Ասատուրյանը, որը մասնավորապես սահմանում էր. «Կոմիտեն կոչ է անում համայնքների պալատին ճանաչել Հայոց ցեղասպանությունը, որ տեղի ունեցավ նախորդ դարասկզբին Օսմանյան թուրքերի կողմից Առաջին աշխարհամարտի ընթացքում»:

Բանաձևի մերժումը նշանակում էր, որ այն չի ներկայացվի համայնքների պալատի քննարկմանը:

- *Դեկտեմբերի 22-ին* Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարի տեղակալ Ռենո Մյուսելյեն «Ջեյ» ռադիոկայանին տված հարցազրույցում հայտարարել է, որ Թուրքիան պիտի ընդունի, որ 1915-1917 թվականների հայերի զանգվածային սպանությունը ցեղասպանություն էր: «Առաջ շարժվելու համար անհրաժեշտ է ճանաչել և ընդունել անցյալը, և կարծում եմ, որ այդ որոշումը կանոր է թե խելամտության, և թե հավասարակշռության տեսակետից», - ավելացրել է նա:

2003

- *Հունվարի 14-ին* Իսրայելի պատմական հետազոտությունների ընկերության «Հիստորիա» պարբերականը Երուսաղեմի «Զալման Չազան» կենտրոնում գիտական նստաշրջան կազմակերպեց ցեղասպանության թեմայի շուրջ: Տեղի ունեցավ երկու նիստ՝ չորսուկես ժամ ընդհանուր տևողությամբ: Ցեղասպանագետ, դոկտոր Յաիր Աուրոն հանդես գալով գիտաժողովում, հստակորեն շեշտեց Հայոց ցեղասպանության կանխամտածված լինելը, բերելով բազում վկայություններ: Դոկտոր Աուրոնը դատապարտել է Իսրայելի արտգործնախարարության դիրքորոշումը, անվանելով այն «պասիվ ժխտում»:

Երուսաղեմի հրեաների ցեղասպանության՝ «Յաշ Վաղեմ» թանգարանի տնօրեն պրոֆեսոր Եհուդա Բաուերն իր ելույթում նշել է, որ Հոլոքոստը չպետք է համարել եզակի իրադարձություն և կենսական անհրաժեշտություն է ցեղասպանությունների համեմատությունը: Ելույթ ունեցողներից պրոֆեսոր Չլոմո Սվիներին, որը նախկինում լեյբորիստանական կառավարության արտգործնախարարության տնօրենն էր, պարզապես հայտարարեց. «Թույլ տվեք նշել, որ ես Հայկական հարցը համարում եմ ցեղասպանություն»:

- *Հունվարի 19-ին* Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց Մեծ Բրիտանիայի լորդերի պալատի անդամ լորդ Մակլովսկին, որը տպավորությունների մատյանում թողեց հետևյալ գրառումը. «Միայն, եթե հիշենք անցյալը և ասենք ճշմարտությունը, այնժամ կարող ենք հույս ունենալ ապագայի հանդեպ»:

- *Հունվարի 19-ին* Ծիծեռնաբերդում Բաքվի 1990թ. զոհերի հիշատակի խաչքարի մոտ տեղի ունեցավ հանրահավաք: Ծաղկեպսակներ դրվեցին Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի նախագահների կողմից: Բաքվեցի, սումգայիթցի փախստականները և Երևանի հասարակայնության ներկա-

յացուցիչներն իրենց հարգանքի տուրքը մատուցեցին մեր օրերում տեղի ունեցած ցեղասպանության զոհերին:

- Հունվարի 20-ին Հայոց ցեղասպանության քանգարան այցելեց Իսրայելի արտաքին գործերի նախարարության վիրտուօրեն Դավիթ Պելեգը: «Ես ընբռնում եմ հայ ժողովրդի ցավը և զգացումները, - իրեն շրջապատած լրագրողների հարցին պատասխանելով, ասաց նա, ապա շարունակեց՝ ես ինքս զգացի այդ ցավը, երբ այցելեցի Ցեղասպանության քանգարան: Այն, ինչ որ տեսա քանգարանում, դա սովորական մարդկային ընկալում էր, որը ինձ օգնեց հասկանալ հայ ժողովրդի զգացումներն այդ հարցում»:

- Փետրվարի 1-ին Փարիզում Ֆրանսիայի Սենատի «Գլեմանսո» սրահում իր աշխատանքները սկսեց «Պրո-Արմենիա» միջազգային վեհաժողովը, որը կազմակերպել է Հայ Հեղափոխական Դաշնակցությունը:

Վեհաժողովին մասնակցեցին 22 երկրներից ժամանած պատվիրակներ, Արգենտինայի նախկին նախագահը, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խորհրդարանների նախագահները, Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսը, ՀՀ արտգործնախարարը: Վեհաժողովի առաջին նիստը նվիրված էր Հայ դատի և Ցեղասպանության ճանաչման հարցերին:

Վեհաժողովում ներկաների առջև հանդես եկավ ֆրանսիացի գիտնական, Հայոց ցեղասպանության նշանավոր մասնագետ Իվ Տերնոնը, որը մասնակիցներին ներկայացրեց ճանաչված իրեա ցեղասպանագետ, պրոֆեսոր Յաիր Աուրոնի բողոքի բաց նամակը, որտեղ իր դժգոհությունն էր հայտնել այն կապակցությամբ, որ «Հունվարի 31-ին, երբ ես պատրաստվում էի ինքնաթիռ բարձրանալ Փարիզ ուղևորվելու և «Պրո-Արմենիա» վեհաժողովին մասնակցելու (հրավերը ստացել էի անցյալ նոյեմբերին) հանկարծ կազմակերպիչները հեռախոսազանգով ինձ հաղորդեցին, որ չմեկնեմ: Պատճառաբանությունը, որ ներկայացրին ինձ, զայրացուցիչ էր: Ինձ հայտնեցին, որ Լիբանանից և մյուս արաբական երկրներից վեհաժողովին մասնակցող քաղաքացիներին իբրև այդ երկրների կառավարությունները կարգադրել են իսրայելցիների ներկայությամբ որևէ միջոցառման չմասնակցել: ... Ես հաստատ կանգնած եմ Հայոց ցեղասպանությունը ժխտողների դեմ պայքարելու իմ վճռական դիրքում: Դա իմ պարտականությունն է որպես մարդ, որպես հրեա և որպես Հալոքոստի հետևանք ստեղծված պետության՝ Իսրայելի քաղաքացի: Եթե մեկն ու մեկը ժխտում է Հայոց ցեղասպանությունը, ապա նա մթնոլորտ է ստեղծում նաև ժխտել Հոլոքոսթը: Յուրաքանչյուր ցեղասպանության ժխտումը ճշմարտության և մարդկային արժանապատվության վրա կատարված գրոհ է: Որպես մարդ, հրեա և իսրայելցի, ես պետք է հետևողական լինեմ: Մենք բոլորս պարտավոր ենք հետևողական լինել»:

- Փետրվարի 12-ին Կանադայի խորհրդարանի համայնքների պալատում խորհրդարանի մի խումբ անդամների առաջարկությամբ քննարկվեց Հայաստանին վերաբերող օրակարգում տեղ գտած հարցը: Պատգամավոր Սվենդ Ռոբինսոնը ներկայացրեց թիվ 137 բանաձևը, որտեղ ասվում էր. «Համայնքների պալատը գտնում է, որ կառավարությունը պետք է՝ ա) ճանաչի հայերի ցեղասպանությունը և դատապարտի պատմական ճշմարտության ժխտման կամ աղավաղման յուրաքանչյուր փորձ, երբ հայերի նկատմամբ իրագործված ոճրագործությունը հանդիսանում է ցեղասպա-

նություն և հանցագործություն մարդկության դեմ: բ) Սահմանել, որ այսուհետև յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ը ողջ Կանադայում պետք է նշվի 20-րդ դարի առաջին ցեղասպանության զոհ դարձած մեկ և կես միլիոն հայերի հիշատակի օր»: Ներկայացված բանաձևը հավանության չարժանացավ կառավարության ներկայացուցչի մերժողական ելույթից հետո:

- *Փետրվարի 28-ին* Երևանում կազմակերպվեց սումգայիթյան զոհերի հիշատակին նվիրված հանրահավաք:

Տասնհինգհազարանոց բազմության երթը սկսվեց Երևանի Կիևյան կամրջի սկզբնամասից: Երթին մասնակցում էին մայրաքաղաքի բուհերի հազարավոր ուսանողներ, սումգայիթյան ոճրագործությունը դատապարտող բազմաթիվ պաստառներով: Մինչև սգո հանրահավաքի բացումը, Ծիծեռնակաբերդում սումգայիթյան զոհերի հիշատակին կանգնեցված խաչքարի մոտ անձամբ ծաղկեպսակ դրեց Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Հանրահավաքը կազմակերպել էին Երևանի քաղաքապետարանը և Հայաստանի գրողների միությունը:

Հանրահավաքի մասնակիցներն անցան Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրով՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելով 1915թ. զոհերի հիշատակին:

- *Մարտի 3-ին* «Թղրքիշ դեյլի նյուս» օրաթերթը հրապարակեց Թուրքիայի ազգային մեծ ժողովում (խորհրդարանում) ներկայացված բոլոր քաղաքական կուսակցությունների համատեղ հայտարարությունը, որը դատապարտում է Եվրախորհրդարանի որոշումը Հայոց ցեղասպանության վերաբերյալ:

Ելույթ ունենալով պատգամավորների առաջ, փոխնախագահ Յուքսել Յալովան կարդացել է համատեղ հայտատարությունը, որտեղ ասվում էր. «Տասնհինգ երկրների խորհրդարանականներից բաղկացած Եվրախորհրդարանը հարգարժան կառույց է, բայց պատմական հայտնի վկաստերն անտեսելով, հայկական անհիմն պնդումների վերաբերյալ Թուրքիայի պատմությանը, պետությանն ու ազգությանը վնասող որոշում ընդունելը նրա կողմից պարզապես արատավորում է այդ որոշումը ընդունողների հեղինակությունը:

... Եվ այս ամոթալի քայլը կատարված է Թուրքիայի դեմ այն հույսով, որ Թուրքիան հրաժարվի Եվրամիությանն անդամակցելու իր մտադրությունից, ապա մեր պարտականությունն ենք համարում հայտարարելու, որ չարաչար սխալվում եք... Հուսով ենք, որ մի օր արխիվները կբացվեն պատմաբանների առաջ և նրանք այնպիսի փաստեր կհայտնաբերեն, որ ամոթանքի սյունին կգամեն այս որոշումը ընդունողներին:

Եվրախորհրդարանի այս քմահաճ որոշմանը Թուրքիայի ազգային մեծ ժողովի պատասխանը լինելու է պատմական փաստերի հրապարակումը: Իսկ այդ փաստերը մեր օգտին են»:

- *Մարտի 26-ին* Մեծ եղեռնի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց Կուբայի արտաքին գործերի նախարար Ֆիլիպ Պերես Ռոկեն:

- *Ապրիլի 9-ին* ԱՄՆ-ի կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի 168 անդամների ստորագրությամբ նամակ հղվեց ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջորջ Բուշին, որտեղ կոչ էր արվում պրեզիդենտին ապրիլի 24-ին ամերիկահայ հա-

մայնքին ներկայացվող ուղերձում հայ ժողովրդի նկատմամբ ձեռնարկված ոճրագործությունը որակել որպես ցեղասպանություն:

- *Ապրիլի 21-ին* Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում կայացավ տեղի հայ մտավորականության, կրթական հաստատությունների, երիտասարդության, հիմնադրամների և կանանց կազմակերպությունների, մամուլի հասարակայնության ներկայացուցիչների ինչպես նաև Վրաստանի տարածաշրջաններից ժամանած հայերի հանդիպումը:

Թբիլիսիի հայ համայնքի ղեկավար Առնոլդ Ստեփանյանն անհրաժեշտ համարեց ակտիվացնել Վրաստանի խորհրդարանի կողմից հայերի ցեղասպանությունը ճանաչելու գործընթացը:

Հանդիպմանն ընդունվեց նամակ՝ ուղղված Վրաստանի խորհրդարանի նախագահ Նինո Բուրջանաձեին: 677 ստորագրություններով նամակում մասնավորապես ասված էր, որ «Վրաստանի խորհրդարանի կողմից հայերի 1915 թվականի ցեղասպանության ճանաչումը կլիներ լուրջ քայլ առաջ, և դրան բարձր գնահատական կտային ոչ միայն Վրաստանի, այլև մյուս երկրների հայերը»:

- *Ապրիլի 22-ին* «Բարեգործությունն իրական քաղաքականություն է»՝ այս մտածելակերպով է գործել մարդու իրավունքների և մարդկային արժանապատվության համար պայքարող նորվեգացի մարդասեր, հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենը, որի հիշատակին էր նվիրված Երևանում Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի, Նանսենի միջազգային հիմնադրամի և «Ճշմարիտները հայերի համար» միջազգային կոմիտեի կողմից կազմակերպված միջազգային կլոր սեղանը: Ամենայն հայոց կաթողիկոսի անունից ողջույնի և բարեմաղթանքի խոսք ասաց Շահե արքեպիսկոպոս Ածեմյանը, հիշեցնելով Նանսենի հետևյալ արտահայտությունը. «Դժվարանում եմ հավատալ, որ որևէ մեկն ընդունակ է ծանոթանալու այդ նշանավոր ժողովրդի պատմությանը՝ առանց խորապես ցնցվելու նրա մեծ ողբերգությունից»:

Ողջույնի խոսքում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը շեշտեց Նանսենի բացառիկ ունակությունը, որով նա խորապես ըմբռնեց Թուրքիայի կողմից իրագործած Հայոց ցեղասպանության քաղաքականության էությունը:

- *Ապրիլի 23-ին* Ծիծեռնակաբերդում, Մեծ եղեռնի հուշահամալիրի հուշապատի մեջ ամփոփվեց Նորվեգիայի մայրաքաղաքում թաղված մեծ հումանիստ Ֆ. Նանսենի գերեզմանից բերված հողը:

- *Ապրիլի 23-ին* Թբիլիսիի Կինոյի տանը ցուցադրվեց Ատոմ Էգոյանի «Արարատ» ֆիլմը:

- *Ապրիլի 24-ին* ԱՄՆ-ի Նյու Յորք նահանգի նահանգապետ Ջորջ Պատակին հանդես եկավ Հռչակագրով, որով 2003թ. Ապրիլի 24-ը հայտարարվեց զոհված հայերի հիշատակի օր:

- *Ապրիլի 24-ին* Թբիլիսիի Հավլաբար թաղամասի Սուրբ Էջմիածին եկեղեցում անցկացվեց Սուրբ պատարագ, ապա եկեղեցական թափորը շարժվեց Խոջիվանքի գերեզմանատուն: Հարյուրավոր մասնակիցների թվում էին Վրաստանի խորհրդարանի փոխնախագահը, վրաց խորհրդարանականներ, թբիլիսահայ մտավորականներ, Վրաստանում Հայաստանի Հանրապետության դեսպան Գեորգի Խոսրոևը:

Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանը վրացերենով կարդաց Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեին ուղղված նամակը, որում նշվում էր Հայոց ցեղասպանությունը ճանաչելու անհրաժեշտությունը:

Ախալքալաքում, Նինոծմինդայում և Վրաստանի մյուս հայաբնակ վայրերում հայերը կազմակերպեցին սգո հանդիսահավաքներ, եկեղեցիներում տեղի ունեցան հոգեհանգստյան արարողություններ:

- *Ապրիլի 24-ին* Հայտարարությամբ հանդես եկավ Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ Ջորջ Բուշը, որը կրկին անգամ հայերի կոտորածները Օսմանյան Թուրքիայում որպես ցեղասպանություն չհամարելով իր համերաշխությունը հայտնեց Ապրիլի 24-ի կապակցությամբ:

- *Ապրիլի 24-ին* Վրաստանի խորհրդարանի Ախալքալաքից ընտրված պատգամավոր Համլետ Մովսիսյանը խորհրդարանի առավոտյան նիստում պատգամավորներին կոչ արեց մեկ րոպե լռությամբ հարգել Օսմանյան կայսրությունում 1915թ. իրականացված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը, ինչն առաջացրեց ադրբեջանցի պատգամավորների զայրույթը:

Իրավիճակի հետագա սրումը կանխելու նպատակով խորհրդարանի նախագահ տիկին Նինո Բուրջանաձեն ստիպված էր դադարեցնել խորհրդարանի լիագումար նիստը. նա թողեց խորհրդարանի ամբիոնը և իջավ դահլիճ: Քիչ հետո Բուրջանաձեն վերադարձավ իր տեղը, պաշտպանեց հայ պատգամավորի հայտարարությունը՝ ավելացնելով, որ ապրիլի 24-ը հայ ժողովրդի ողբերգության հիշատակի օրն է: Խորհրդարանի նախագահը Վրաստանի խորհրդարանականներին հորդորեց մեկ րոպե լռությամբ հարգել 1915թ. Հայոց ցեղասպանության զոհերի, ինչպես նաև վրաց-աբխազական, վրաց-օսական և ղարաբաղյան հակամարտությունների զոհերի հիշատակը: Պատգամավորները, բացառությամբ ադրբեջանցի պատգամավորների, մեկ րոպե ոտքի կանգնեցին: Ադրբեջանցիները շարունակեցին բղավել՝ ասելով. «Այս ամենը սադրանք է, սա Վրաստանի և ոչ թե Հայաստանի խորհրդարանն է»:

- *Ապրիլի 24-ին* Հայոց մեծ եղեռնի տարելիցը Ֆրանսիայի մայրաքաղաքում նշվեց Կոմիտասի արձանի բացումով: Կոմպոզիտոր, երգահան Կոմիտասի և 1915-ին Օսմանյան կայսրությունում իրականացված 20-րդ դարի առաջին ցեղասպանության 1500000 հայերի հիշատակին» մակագրությամբ արձանը տեղադրվեց Փարիզի «Կանադա» հրապարակի մի ծառուղում՝ Էյֆելյան աշտարակից 500 մետր հեռու:

Քանդակագործ, Փարիզում բնակվող Դավիթ Երևանցու կերտած բրոնզե արձանը գտնվում է դը Գոլի, Չերչիլի, Կլեմանսոյի արձանների հարևանությամբ:

Չորս մետրանոց բրոնզե արձանի բացմանը մասնակցեցին Փարիզի քաղաքապետ Բեռնար Դլանոեն, Ֆրանսիայի տեղական ազատությունների նախարար Պատրիկ Դևեջյանը, Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Էդվարդ Նալբանդյանը:

- *Ապրիլի 24-ին* Կիպրոսի խորհրդարանի նախագահ Դիմիտրիս Խրիստոֆիասը կոչ է արել Թուրքիային ճանաչել հայերի 1915թ. ցեղասպանությունը: Նա հայտարարեց, որ Թուրքիայի կողմից այդ փաստի ընդունումը

կարևոր քայլ կլիներ միջազգային իրավունքի սկզբունքները հարգելու ուղղությամբ:

- *Ապրիլի 24-ին* Առավոտյան Մոսկվայի Քրիստոս Ամենափրկիչ եկեղեցու բակում տեղադրված խաչքարի մոտ էին հավաքվել հայ համայնքի անդամների մի զգալի հատված՝ հարգանքի տուրք մատուցելու համար 1915թ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Սատուցվեց հոգեհանգստյան պատարագ, որի ժամանակ դողդողջեցին ռուս ուղղափառ երեկեցու զանգերը:

- *Ապրիլի 24-ին* Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը և Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը այցելեցին Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիր, որտեղ Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Մեծ եղեռնի բյուրավոր նահատակների:

- *Ապրիլի 24-ին* ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը հանդես է եկել Հայոց ցեղասպանության վերաբերյալ ամենամյա հայտարարությամբ, որտեղ ասված է. «Այսօր լրանում է սարսափելի մի ողբերգության՝ Օսմանյան կայսրության վերջին օրերին անհամար թվով հայերի բռնի տեղահանման և սպանությունների տարելիցը: Շատ հայեր այս զարհուրելի իրադարձությունն անվանում են Մեծ եղեռն, ինչն արտացոլում է նրանց և իրենց հարևանների՝ թուրք ժողովրդի միջև շարունակվող խոր հուսահատությունը: Տառապանքները, որ հայերին բաժին հասան 1915 թվականին, ողբերգություն են ամբողջ մարդկության համար, ինչն աշխարհը չպետք է մոռանա: Ես միանում եմ ԱՄՆ-ի հայ համայնքին և աշխարհի բոլոր հայերին՝ սգալու համար մարդկանց կյանքի սոսկալի կրոստի համար...»

- *Ապրիլի 24-ին* Գերմանիայում գործող «Խոսենք նույն լեզվով» հանձնախումբն ապրիլի 24-ը հայտարարելով միջազգային ցեղասպանության օր՝ քայլարշավ կազմակերպեց Բեռլինի Քուրֆուստդամ փողոցում, որտեղ գտնվում է թուրքական հյուպատոսությունը: Հյուպատոսության առջև երթին մասնակից կազմակերպությունները՝ Փոքր Ասիայի հույների ցեղասպանության ճանաչման հանձնախումբը, Ասորական միությունը, Արամեացիների դաշնակցությունը Գերմանիայում, Բեռլինի հայ եկեղեցականների համայնքը, Վտանգված ազգերի համար ընկերակցության հայկական համագործակցության հանձնախումբը, Բեռլինի հայկական տեղեկատվության և փաստագրության կենտրոնը, Հայկական հարցերի հաստատությունը, Բեռլինի պոնտացիների միության ներկայացուցիչներն իրենց ելույթներում դատապարտեցին Թուրքիայի ցեղասպան անցյալը տեղաբնակ ժողովուրդների նկատմամբ: Երթին մասնակից հազարից ավելի ցուցարարները, որոնք ժամանել էին Գերմանիայի տարբեր քաղաքներից ու այլ երկրներից, ցեղասպանությունը դատապարտող պաստառներով ու դրոշներով շարունակեցին իրենց երթը դեպի Հարդերգշտրասսե, այն վայրը, որտեղ 1921թ. մարտի 15-ին Սողոմոն Թեհլերյանը սպանեց Թալեաթ փաշային: Մի խումբ երիտասարդ ասորիներ շուրջպար բռնեցին երիտթուրք ոճրագործի պատժման վայրում:

- *Ապրիլի 30-ին* Երուսաղեմի եբրայական համալսարանի Ջիվատ Ռեմ ֆակուլտետի գրադարանի դահլիճում հայերը և հրեաները ոգեկոչեցին Հայոց եղեռնի 88-րդ տարելիցը: Միջոցառմանը ներկա են գտնվել Հայոց պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը, Ասիա-Աֆրիկայան ու-

սումնասիրությունների ինստիտուտի նախագահ պրոֆեսոր Ռյուվեն Ամիտայը և Հայկական ուսումնասիրությունների ծրագրի տնօրեն Մայքլ Սթոունը:

- *Մայիսի 6-ին* Երևանում մեկնարկվեց Հայ Հեղափոխական Դաշնակցության Հայ դատի հանձնախմբերի խորհրդաժողովը, որը մատնանշեց այն մարտահրավերները, որոնց առջև կանգնած են Հայաստանը և հայությունը:

- *Մայիսի 8-ին* Համայն Վրաստանի Իլիա Բ կաթողիկոս-պատրիարքը Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի և բարձրաստիճան հոգևորականների ուղեկցությամբ այցելեց Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր և ծաղկեպսակ դրեց՝ հարգելով անմեղ զոհերի հիշատակը:

- *Մայիսի 22-ին* ԱՄՆ-ի կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում իրավաբանական կոմիտեի կողմից ներկայացված տեղեկանքի հիման վրա տեղի ունեցավ քննարկում, որի ժամանակ հայտարարությամբ հանդես եկավ կոնգրեսական Կոնյերսը, որը կոնգրեսականներ Շիֆֆի, Ռադանովիչի, Փալոնեի և Նոլենբերգի հետ Ներկայացուցիչների պալատին էր ներկայացրել բանաձևի նախագիծ Հայոց ցեղասպանությունը դատապարտելու և ճանաչելու մասին: Քննարկումը սակայն բավարարվեց միայն հայտարարությունները լսելով:

- *Մայիսի 30-ին* Այցելելով Հայոց ցեղասպանության թանգարան, Ֆրանսիայի Բուշ-Դյու-Ռոնի ֆեդերալ խորհրդի նախագահ, սենատոր Ժան Նոել Գերինին այցելուների մատյանում գրառեց. «Ներե՞լ, հնարավոր է, մոռանա՞լ, երբե՛ք: Այս վայրում, որտեղ բացահայտվում է անհավատալին, կատարվում է հիշողության հրամայական գործը»:

- *Հունիսի 14-ից 15-ը* Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում կայացավ Սոցիալիստական ինտերնացիոնալի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների հանձնախմբերի ժողովը, որի եզրափակման նիստն ամփոփելիս Իտալիայի ծախ ժողովրդական կուսակցության ղեկավար Պիեռո Ֆասինոն հայտարարեց. «Անհրաժեշտ է, որ Թուրքիան ընդունի Հայոց ցեղասպանության փաստը»:

- *Հունիսի 18-ին* Բրյուսելում կայացավ «Հայոց ցեղասպանություն՝ կենդանի պատմություն» խորագիրը կրող լուսանկարների ցուցահանդեսի բացումը:

Այն կազմակերպվել էր Եվրախորհրդարանի անդամներ Յոնաս Շյոստեդի, Լենարտ Սակրեդեուսի և Շվեդիայի հայկական միությունները համադրող կենտրոնի նախաձեռնությամբ:

Ցուցահանդեսը բացվեց Բրյուսելի Միջազգային միությունների տանը, որին ներկա էին բազմաթիվ հյուրեր տարբեր կազմակերպություններից: Մինչ այդ ցուցահանդեսը նախատեսված էր կազմակերպել Եվրախորհրդարանի շենքում, սակայն մերժվեց վարչական պատասխանատուի կողմից՝ «ցուցահանդեսի վիճահարույց բնույթի» պատճառաբանությամբ:

Ներկայացված վավերագրական լուսանկարների հավաքածուն պատկանում է Բեռլինում գործող Հայկական տեղեկատվության և փաստագրության կենտրոնին, որը հիմնվել է 1985-ին Թեսա Հոֆմանի և Ժիրայր Քոչարյանի կողմից: Չնայած մերժմանը, նախաձեռնողներն իրականացրին ցուցահանդեսի բացումը մեկ այլ շենքում:

- *Հունիսի 25-ին* Փարիզում գտնվող Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան Թուրքիային կոչ արեց ճանաչել 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը: Այս մասին էր ասվում Թուքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանին ֆեդերացիայի հղած ուղերձում:
- *Հունիսի 28-ից 29-ը* Գերմանիայում գործող Ցեղասպանության ճանաչման հանճնախումբը Բեռլինում հրավիրած խորհրդաժողովում քննարկել է Գերմանիայի խորհրդարանում Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնահարցը, ինչպես նաև այդ կապակցությամբ հանճնախմբի որդեգրած հետագա մարտավարությունը:

Հանճնախմբի ղեկավարները (Թեսա Հոֆման, Ժիրայր Քոչարյան) խորհրդաժողովին մասնակցող տարբեր երկրներից եկած հյուրերին հայտնել են, որ դեռևս 2000թ. ապրիլի 13-ին՝ 5000 և Ֆրանկֆուրտի «Ընդդեմ ցեղասպանության միությունը» Թուրքիայի ավելի քան 10 հազար քաղաքացիների ստորագրություններ են հանճնել Բունդեսթագի խնդրագրերի հանճնախմբին: 2001թ. ապրիլի 5-ին Բունդեսթագը որոշեց խնդրագրի նկատմամբ դիրքորոշման իրավունքը փոխանցել Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանը, որպեսզի Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտության հարցը պարզաբանվի «Գերմանիայի և Թուրքիայի դիվանագիտական հարաբերությունների շրջանակում, որը Գերմանիայի ժողովի պատկառելի մասի տեսակետն է»: Գերմանիայի կառավարության եզրակացության հիման վրա, 2001թ. հոկտեմբերին Բունդեսթագը քննարկելով դիմումը, հրաժարվեց պաոլամենտական որևէ որոշումից և հստակ դիրքորոշումից:

Բունդեսթագում Ցեղասպանության ճանաչումը ձախողելու հիմնական պատճառներն էին 2001թ. հունիսին պաշտոնապես հիմնված «Թուրքհայկական հաշտեցման հանճնաժողովի» ծավալած անպտուղ կարճատև գործունեությունը և 2001թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում կատարված ահաբեկչությունը:
- *Հուլիսի 27-ին* Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց ՆԱՏՕ-ի զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմից բաղկացած պատվիրակությունը, որի ղեկավարը թանգարանի այցելուների տպավորությունների մատյանում թողեց հետևյալ գրառումը. «Պատմությունը պետք է լինի ճիշտ խորհուրդ սերունդների և աշխարհի համար»:
- *Հուլիսի 27-ին* Գերմանահայերի կենտրոնական խորհրդի և Քյոլնի հայ համայնքի հովանավորությամբ «Հայ դատը, Սևրի և Լոզանի դաշնագրերը» թեմայով տեղեկատվական երեկո կազմակերպվեց Քյոլնի Սուրբ Սահակ-Մեսրոպ եկեղեցում կից սրահում:

Պատմական և քաղաքական բաժինը ներկայացրեց Եվրոպայի Հայ դատի հանճնախմբի նախագահ տիկին Հիլդա Չոբոյանը, իրավաբանական բաժինը՝ Ալֆրեդ Նավասարդյանը:
- *Օգոստոսի 15-ին* Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց Հնդկաստանի արտաքին գործերի պետական նախարարը: «Չպետք է երբեք հանդուրժել մարդկության դեմ որևէ բռնություն: Ամեն առումով սա անմարդկային վերաբերմունք է», - թամգարանի ցուցաղրությունը դիտելուց հետո հայտարարեց նախարարը:
- *Օգոստոսի 20-ին* Արգենտինայի Հանրապետության Սենատը հայտարարություն ընդունեց Հայոց ցեղասպանության տարելիցի առթիվ: Նրա-

նում ասված է. «Արգենտինայի Հանրապետության Սենատը հայտարարում է.

1. Իր խոր վիշտը՝ 1915-1923 թվականներին թուրքական պետության կողմից գործադրված 1500000 հայերի ցեղասպանության 88-րդ տարելիցի հիշատակման առիթով:

2. որ մերժում է ազգային, էթնիկ, ցեղային կամ կրոնական խմբերի ցեղասպանության բոլոր ձևերը, ինչպես նաև դատապարտում է մարդկության դեմ անպատիժ մնացած հանցագործությունները.

3. որ հաստատում է համաշխարհային ներկայիս համատեքստում մարդու իրավունքների ունիվերսալ սկզբունքների լիարժեքությունը և ուժը՝ իբրև ժողովուրդների միջև խաղաղության և համերաշխության ապահովման երաշխիք, գիտակցելով, որ անպատիժ մնացած մարդկության դեմ հանցագործությունների անժամանցելիությունն արգելք է հանդիսանում հակամարտությունների խաղաղ լուծման ճանապարհին»:

- ***Սեպտեմբերի 16-ին*** Մեծ եղեռնի հուշահամալիրի հիշողության պուրակում արձաթափայլ եղևնի տնկելուց և Հայոց ցեղասպանության թանգարանի ցուցադրությանը ծանոթանալուց հետո Ֆրանսիայի Իսի լե Մուլինոյի քաղաքապետ Գերեմի Դելվինիին տպավորությունների մատյանում գրեց. «Այն ինչ որ պատահեց, թող նորից չկրկնվի: Թող մոխիրները կյանք թողնեն: Հիշատակված սարսափներով թող որ հայ ժողովուրդը կյանք տոնի իր զոհերի համար երկար ողբալուց հետո... Թող սա լինի վերջին ցեղասպանությունը»:

- ***Սեպտեմբերի 23-ին*** Շվեյցարիայի Դաշնային Հանրապետության Վո կանտոնը քննարկեց պատգամավոր Մասսիմո Սանդրիի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին նախագիծը՝ կառավարությունը հաստատմանը ներկայացնելու պահանջով:

Քվեարկությունը մասնակցել է պատգամավորների գերակշռող մասը և հաստատվել է նախագիծը:

- ***Նոյեմբերի 26-ին*** Մեծ եղեռնի հուշահամալիր այցելեց Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռախմոնովը: Թանգարանի ցուցադրությունը դիտելուց հետո նա տպավորությունների մատյանում գրառեց. «Ազգը, որն իր մեջ այսպիսի արհավիրքից հետո գտավ վերածննդի ուժ, արժանի է հիացմունքի: Այսպիսի ազգն ունի հզոր ապագա»:

- ***Դեկեմբերի 15-ին*** Շվեյցարիայի Ազգային խորհուրդը 107 կողմ, 67 դեմ և 11 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ ընդունեց Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ բանաձև, որի նախաբանում արձանագրված էր, որ Շվեյցարիայի Ազգային խորհուրդը ճանաչում է 1915թ. Հայոց ցեղասպանությունը և խնդրում Դաշնային խորհրդին՝ Շվեյցարիայի կառավարությանը, դիվանագիտական խողովակներով տեղյակ պահել մյուս պետություններին:

1999-2003թթ. շրջանառության մեջ գտնվող բանաձևի նախագծի հեղինակն է քրիստոնեա-դեմոկրատ Ժան-Կլոդ Վաղրոն, որին Ազգային խորհրդում համահեղինակ դարձավ Դոմինիկ Բումանը:

- *Մարտի 12-ին* Փասադենայի (ԱՄՆ) Հայ Դատի Հանձնախումբը, համագործակցելով Կալիֆորնիայի ներկայացուցիչների պալատի անդամ Կարոլ Լուի հետ, կազմակերպեց պետական վարժարանների պատմության ուսուցիչների մեկօրյա աշխատանքային խորհրդակցություն՝ նվիրված ցեղասպանության թեմայի դասավանդման հարցերին: Զեկուցումով հանդես եկավ պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը: Քննարկվեցին վարժարաններում ցեղասպանության առարկայի դասավանդման մեթոդների խնդիրները:
- *Ապրիլի 14-ին* Քվեբեկի նահանգապետ տիկին Լիզ Տիպոն այցելեց Մոնրեալի Հայ կենտրոն և Հայ դատի հանձնախմբին հանձնեց նահանգում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր հայտարարելու մասին նահանգի ասամբլեայի թիվ 194 օրենքի տպագիր օրինակը:
- *Ապրիլի 21-ին* Կանադայի խորհրդարանը 153 թեր և 68 դեմ քվեներով վավերացրեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող M-380 բանաձևը, որտեղ ասվում է. «Կանադայի խորհրդարանը ճանաչում է 1915-ի Հայոց ցեղասպանությունը և դատապարտում է այն որպես մարդկության դեմ իրագործված ոճիր»:
- *Ապրիլի 21-ին* Հռոմի հայկական Սուրբ Նիկողայոս եկեղեցում կազմակերպվեց հանդիպում Հայոց ցեղասպանության մասին պատմող գրքերի հեղինակների հետ:
- *Ապրիլի 21-ին* Իտալիայի Լիվորնո քաղաքում կազմակերպվեց երկօրյա գիտական նստաշրջան՝ «Հայկական հիշողությունը և մշակույթը Լիվորնոյի և Արևելքի միջև» թեմայով: Նույն օրը Լիվորնոյում բացվեցին «Արմին Վեգները և հայերը», «Հայաստանի աղաղակող քարերը» և «Հայերը Լիվորնոյում» ցուցահանդեսները:
- *Ապրիլի 23-ին* Լոնդոնում Սուրբ Հովհաննեսի տաճարում կայացավ հիշատակի արարողություն՝ «Մենք չենք մահանա» նշանաբանով, ի հիշատակ Հայոց ցեղասպանության զոհերի:
- *Ապրիլի 23-ից 25-ը* Ֆրանսիայի Մարսել, Լիոն, Գրենոբոլ, Տուլոն, Կաննա քաղաքներում տեղի ունեցան սգո հանդիսություններ:
- *Ապրիլի 23-ին* Ռամկավար ազատական կուսակցության Արևմտյան շրջանի Հայ Դատի խորհուրդը հովանավորությամբ թեմի առաջնորդ Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի, Հայ բարեգործական ընդհանուր միության Փասադենայի կենտրոնի հանդիսասրահում կազմակերպեց Հայոց ցեղասպանության 89-րդ տարելիցի ոգեկոչման հանդիսություն:
- *Ապրիլի 23-ին* Երեկոյան Փարիզում տեղի ունեցավ երթ դեպի Հաղթանակի կամարը, որտեղ Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Էդվարդ Նալբանդյանը և Ֆրանսիայի նահագահ Ժակ Շիրակի հատուկ ներկայացուցիչը Ֆրանսիայի ռազմական բարձրագույն ղեկավարության ուղեկցությամբ, ծաղկեպսակ դրեցին անհայտ զինվորի Գերեզմանին ի նշան 1915թ. Ցեղասպանության զոհ դարձած 1,5 միլիոն հայերի հիշատակի: Նույն օրը Սեն-Ժան եկեղեցում տեղի ունեցավ հիշատակի պատարագ:
- *Ապրիլի 24-ին* Ղազախստանի Կարագանդա քաղաքում տեղի հայ համայնքի միջոցներով Սպասսկի հուշահամալիրի տարածքում Հայոց ցեղա-

սպանության զոհերի հիշատակին կանգնեցվեց խաչքար-հուշաքար: Քանդակի հեղինակն է Խ. Գևանդյանը: Արարողությանը մասնակցում էին նաև Ռուսական Ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչները:

- *Ապրիլի 24-ին* Մինսկի Նեսկի եկեղեցու բակում կանգնեցված խաչքարի մոտ Բելառուսի հայ համայնքի ներկայացուցիչները նշեցին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը: Նույն օրը Բելառուսական հեռուստատեսությունը ցուցադրեց Հայոց ցեղասպանությանը նվիրված տեսանյութեր:

- *Ապրիլի 24-ին* Լոնդոնի հայկական Սուրբ Սարգիս եղեկեցում տեղի ունեցավ ցեղասպանության զոհերի հիշատակի արարողություն: Նույն օրը Լոնդոնում հայկական համայնքի ներկայացուցիչները և հայերի բարեկամները մասնակցեցին Հայոց ցեղասպանության ճանաչման հանճնաժողովի կողմից դեպի զոհերի հուշահամալիր կազմակերպված արշավին:

- *Ապրիլի 24-ին* Բուխարեստի հայկական գերեզմանատանը տեղի ունեցավ սգո արարողություն, որտեղ կանգնեցված խաչքար հուշարձանի մոտ արքեպիսկոպոս Մարտիքյանը գլխավորեց այն:

- *Ապրիլի 24-ին* Հիշատակի արարողություններ տեղի ունեցան Հռոմի հայկական և տեղի Սանտա-Կլարա եկեղեցում:

- *Ապրիլի 24-ին* Հիշատակի արարողություն տեղի ունեցավ Միլանի հայկական եկեղեցում:

- *Ապրիլի 24-ին* Լոս-Անջելեսի Հունական թատրոնում կայացավ ամերիկյան System of a Down «Souls 2004» ռոկ խմբի համերգը նվիրված Հայոց ցեղասպանության 89-րդ տարելիցին: Համերգի նպատակն էր հանգանակություն կազմակերպել Վաշինգտոնում Ցեղասպանության ճանաչման համար ձեռնարկված արշավի պաշտպանությանը:

- *Ապրիլի 24-ին* Կալիֆորնիայի նահանգապետ Առնոլդ Շվարցենեգգերը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ մասնավորապես ասվում էր, որ 1915թ. ապրիլի 24-ին Կոստանդնուպոլսում տեղի ունեցած հայ մտավորականների ձերբակալությունները հայերի ցեղասպանության սկիզբը դրեցին:

- *Ապրիլի 25-ին* Փարիզի Աստվածամոր տաճարում տեղի ունեցավ սգո արարողություն, որի ժամանակ հարգանքի տուրք մատուցվեց ցեղասպանության զոհերի հիշատակին:

- *Ապրիլի 25-ին* Բուխարեստի հայկական եկեղեցում կազմակերպվեց ժամերգություն, որի ավարտից հետո հայկական մշակութային «Դուդյան» կենտրոնում «20-րդ դարի առաջին ցեղասպանությունը» թեմայով զեկուցումով հանդես եկավ ռումին գրող Միխայա Ռադուլեսկուն:

- *Ապրիլի 25-ին* Իտալիայի Վենետիկ քաղաքի Մուրադ Ռաֆայելյան վարժարանում բացվեց ցուցահանդես և տեղի ունեցավ գիտական նստաշրջան «Հայերի ցեղասպանությունը» թեմաներով:

- *Նոյեմբերի 30-ին* Սլովակիայի խորհրդարանը միաձայն որոշում ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին: Հայոց ցեղասպանության ճանաչման հարցն առաջ էր քաշել Քրիստոնյա-դեմոկրատական կուսակցության խորհրդարանական խմբակցությունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 3

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ 13

Ի. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1915-1917ԹԹ.) 13

№ 1 Պետական Դումայում արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովի ճառից (27 հունվարի 1915թ.) 13

№ 2 Ռուսաստանի Պետական Դումայի պատգամավոր Պապաջանովի ելույթն արտաքին գործերի նախարարի հայտարարության կապակցությամբ (27 հունվարի 1915) 13

№ 3 Ռուսաստանի Պետական Դումայի պատգամավոր Կովալևսկու ելույթն արտաքին գործերի նախարարի հայտարարության կապակցությամբ (27 հունվարի 1915) 15

№ 4 Ռուսաստանի Պետական Դումայի պատգամավոր Միլյուկովի ելույթից արտաքին գործերի նախարարի հայտարարության կապակցությամբ (27 հունվարի 1915) 16

№ 5 Ռուսաստանի Պետական Դումայի որոշումը «Արտաքին գործերի նախարարությանը կից գերմանացիների, ավստրիացիների և թուրքերի կողմից միջազգային իրավունքի, պատերազմի կանոնների և սովորույթների խախտման և պետությանը, հասարակական հաստատություններին, մասնավոր միություններին և անձանց հասցված վնասի ու կորուստների պարզման քննիչ հանձնաժողով ստեղծելու մասին» (29 հունվարի 1915) 16

№ 6 Պետրոգրադի հեռագրային գործակալության հաղորդագրությունը (24 մայիսի 1915) 17

№ 7 Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովի դիմումը Պետական Դումային (19 հուլիսի 1915) 18

№ 8 Պետական Դումայի պատգամավոր Պապաջանովի ելույթն արտաքին գործերի նախարարի հայտարարության կապակցությամբ (20 հուլիսի 1915) 18

№ 9 Պետական Դումայի պատգամավոր Մ. Ի. Պապաջանովի գրությունն արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովին (8 օգոստոսի 1915) 21

№ 10 Պետական Դումայի պատգամավոր Մ. Ի. Պապաջանովի ճառից (հունվար 1916) 23

№ 11 Արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովի ելույթը պետական Դումայի բացման օրը (9 փետրվարի 1916) 24

№ 12 Պետական Դումայի պատգամավոր Չխեիձեի ելույթից (հունվար 1916) 25

№ 13 Պատգամավոր Մ. Ի. Պապաջանովի ճառը Պետական Դումայում (8 մարտի 1916) 25

№ 14 Պ. Ն. Միլյուկովի ելույթը Ռուսաստանի Պետական Դումայում (11 մարտի 1916) 27

№ 15 Պետական Դումայի պատգամավոր Մ. Ի. Պապաջանովի ճառից (հունվար 1916) 28

№ 16 Ռուսաստանի կառավարության հատուկ խորհրդակցություն (17 մարտի 1916) 32
№ 17 Հայկական հարցը Պետական Դումայում (20 մարտի 1916) 34
№ 18 Պետական Դումայի պատգամավոր Ն. Շչեպկինի հոդվածը Թուրքիայի հայկական գավառներում ժամանակավոր կառավարման կազմակերպման մասին (մարտ 1916) 36
№ 19 Գեներալ Յանուշկևիչի պատասխանը Պետական Դումայի պատգամավոր Մ. Ի. Պապաջանովին (10 ապրիլի 1916) 38
№ 20 Պետական Դումայի պատգամավոր Պապաջանովի և գեներալ Յանուշկևիչի մասին (ապրիլ 1916) 39
№ 21 Պետական Դումայի պատգամավոր Մ. Ի. Պապաջանովի հեռագիրը նախարարների խորհրդի նախագահ Բորիս Վլադիմիրի Շտյուրմերին (28 սեպտեմբերի 1916) 39
№ 22 Պետական Դուման և հայերը (13 նոյեմբերի 1916) 40
№ 23 Ժամանակավոր կառավարության նիստերի մատյանից (26 ապրիլի 1917) 41
№ 24 Ժամանակավոր կառավարության նիստերի հատուկ մատյան (15 մայիսի 1917) 42
№ 25 Ա. Կ. Ջիվիլեգովի ճառը Ռուսաստանի Խորհրդային Հանրապետության խորհրդարանում (20 նոյեմբերի 1917) 45
№ 26 Ժողովրդական կոմիսարների խորհրդի դեկրետը «Թուրքահայաստանի» մասին (29 դեկտեմբերի 1917) 49

II. ՀԱՅՈՑ ՑԵղԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅՈՒՄ 51
Ա. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԼՈՐԴԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ (1915-1918ԹԹ.) 51
1. Զեկուցումներ Հայաստանում տեղի ունեցած կոտորածների մասին (28 հուլիսի, 1915) 51
2. Հայերի կոտորածները (6 հոկտեմբերի, 1915) 55
3. Թուրքիա (հայերի կոտորածներ) (12 հոկտեմբերի, 1915) 64
4. Հայաստան (կոտորածներ) (21 հոկտեմբերի, 1915) 64
5. Հայերի արհավիրքները (16 նոյեմբերի, 1915) 65
6. Հայերի կոտորածները (21 դեկտեմբերի, 1916) 78
7. Համայնքների պալատ (6 նոյեմբերի, 1917) 79
8. Հետաձգում. պատերազմական իրավիճակ, վարչապետի մեկնաբանությունը (20 դեկտեմբերի, 1917) 81
9. Համայնքների պալատ (11 հուլիսի, 1918) 82
10. Բաքվի հանճնումը (հայկական ուժը) (24 հոկտեմբերի, 1918) 82
11. Զինադադարի պայմաններ – Թուրքիա (7 նոյեմբերի, 1918) 83
12. Հայաստան (12 նոյեմբերի, 1918) 84
13. Լորդերի պալատ. Հայաստան և Կիլիկիա (13 նոյեմբերի, 1918) 84
14. Միավորված ֆոնդային նախագիծ (18 նոյեմբերի, 1918) 92
Բ. ԼՈՐԴԵՐԻ ՊԱԼԱՏ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ 120
15. Հայկական ջարդ, 1915 (14 ապրիլի, 1999) 120
III. ՄԵՔԵՔԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԱԼ-ՀՈՒՍԵՅՆ ԻԲՆ ԱԼԻԻ ՀՐՈՎԱՐՏԱԿՆ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԻ (18 ապրիլի, 1917թ.) 145

IV. ՀԱՅ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐԻ ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ 146
1. 4 նոյեմբերի 1918թ. 146
2. 18 նոյեմբերի 1918թ. 150
3. 9 դեկտեմբերի 1918թ. 155
4. 12 դեկտեմբերի 1918թ. 156

V. ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ «ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 160
1. Նորին մեծություն փադիշահի 1335թ. (1919) մարտի 8-ի կայսերական հրամանով կազմված ռազմական արտակարգ ատյանի դատավարության արձանագրությունը 160
2. Նորին մեծություն փադիշահի 1335թ. (1919) մարտի 8-ի կայսերական հրամանով կազմված ռազմական արտակարգ ատյանի դատավարության արձանագրությունը 174
3. Նորին մեծություն փադիշահի 1335թ. (1919) մարտի 8-ի կայսերական հրամանով կազմված ռազմական արտակարգ ատյանի դատավարության արձանագրությունը 179
4. Ռազմական առաջին արտակարգ ատյանի արձանագրությունը 187
5. Յոզղաթի, Տրապիզոնի, Բյույուք Դերեի և Խարբերդի տեղահանության և կոտորածների դատավարությունները 193
6. Ռազմական արտակարգ ատյանի դատավարության արձանագրությունը: Տրապիզոնի տեղահանության և կոտորածի դատավարությունը 195
7. Նորին մեծություն փադիշահի 1335թ. (1919) մարտի 8-ի կայսերական հրամանով կազմված ռազմական արտակարգ ատյանի դատավարության արձանագրությունը: Բյույուք Դերեի տեղահանության դատավարությունը 201
8. Ռազմական առաջին արտակարգ ատյանի դատավարության արձանագրությունը: Խարբերդի կոտորածի դատավարությունը 203

VI. ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ 208
1. Ուրուգվայի Արևելյան Հանրապետության Սենատի և Ներկայացուցիչների պալատի բանաձևը հայ նահատակների հիշատակի օրվա մասին (20 ապրիլի 1965թ.) 208
2. Ուրուգվայի Արևելյան Հանրապետության Ներկայացուցիչների պալատի նստաշրջան (10 նոյեմբերի 1970թ.) 208
3. Ուրուգվայի Արևելյան Հանրապետության սենատի բանաձևը (9 օգոստոսի 1972թ.) 215

VII. ԿԻՊՐՈՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ 221
1. Բանաձև 36 (24 ապրիլի 1975թ.) 221
2. Բանաձև 74 (29 ապրիլի 1982թ.) 221
3. Բանաձև 103 (19 ապրիլի 1990թ.) 222

VIII. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱԴԱՅՈՒՄ 223
1. Կանադայի Օնտարիո նահանգի օրենսդրական ժողովի որոշումը (27 մարտի 1980թ.) 223
2. Առաջարկություն ընդունված Կանադայի Քվեբեկ նահանգի ազգային ժողովում (10 ապրիլի 1980թ.). Թուրքիայում հայերի ցեղասպանության դատապարտման մասին 223
3. Կանադայի խորհրդարանի համայնքների պալատի քննարկումները (23 ապրիլի 1996թ.) 225
4. Կանադայի Սենատի նիստ (29 մարտի 2001թ.) 296
5. Կանադայի խորհրդարանի պատգամավորների ելույթներից (1 հունիսի 2001թ.). Կոչեր Թուրքիային հրաժարվելու հայերի ցեղասպանությունը ժխտելու քաղաքականությունից 297
6. Կանադայի Սենատի բանաձևը հայերի ցեղասպանության ճանաչման մասին (13 հունիսի 2002թ.) 298
7. Կանադայի խորհրդարանի համայնքների պալատի նիստ (12 փետրվարի 2003թ.). Ելույթներ հայերի ցեղասպանության կապակցությամբ .. 299
8. Կանադայի համայնքների պալատ. M-380 առաջարկությունը (20-21 ապրիլի 2004թ.) 311

IX. ՄՇՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՏՅԱՆ 331
1. Նախաբան 334
2. Փաստեր 336
3. Ըստ օրենքի 344

X. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԸ 351
1. «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» (18 հունիսի 1987թ.) ... 351
2. 1915թ. Հայոց ցեղասպանության հիշատակությունը 354

XI. ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՍԵՆԱՏԻ ԲԱՆԱՁԵՎԸ 356

XII. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ «1915-1922ԹԹ. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏԱՆ ՄԱՍԻՆ» 357

XIII. ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ 1996Թ. ԱՊՐԻԼԻ 25-Ի ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 358

XIV. ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 396
1. Լիբանանի խորհրդարանի բանաձևն Ապրիլի 24-ը հայության հետ միասնականության օր հռչակելու մասին (3 ապրիլի 1997թ.) 396
2. Լիբանանի պատգամավորների պալատի բանաձևը (11 մայիսի 2000թ.) 396

XV. ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 397
1. Ավստրալիայի, Նոր Հարավային Ուելսի խորհրդարանի օրենսդիր ասամբլեայի նիստի քննարկումը Հայոց ցեղասպանության հիշատակի օրը նշելու մասին 397

2. Ներկայացուցիչների պալատի խորհրդարանական զեկույցների ամեն-օրյա տեղեկագիր 404
3. Օրենսդիր ժողով. Հայերի ցեղասպանության տարելիցը 413
4. Մասնավոր անձանց հաղորդագրություններ. Հայոց ցեղասպանության հիշատակությունը (21 մայիսի 1998թ.) 417
5. Հայերի ցեղասպանության հիշատակությունը (18 հուլիսի 1998թ.) 419
6. Հայերի ցեղասպանության հիշատակությունը (13 մայիսի 1999թ.) 421

XVI. ԲԵԼԳԻԱՅԻ ՍԵՆԱՏԸ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 428
1. Բելգիայի սենատի 1996-1997թթ. նստաշրջան (8 հոկտեմբերի 1997թ.) 428
2. Բելգիայի սենատի 1997-1998թթ. նստաշրջան (26 մարտի 1998թ.) 429

XVII. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԸ ԵՎ ՃԱՆԱՉՈՒԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 431
1. Ֆրանսիայի հանրապետության Ազգային ժողովի նիստի արձանագրություն (29 մայիսի 1998թ.) 431
2. Ֆրանսիայի հանրապետության Սենատի խորհրդարանական քննարկումները (7 նոյեմբերի 2000թ.). Հայոց ցեղասպանության ճանաչումը 476

XVIII. ՇՎԵԴԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ ԿՈՂՄԻՑ ԵՐԿՐԻ ՕՐԵՍԴՐԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՋԵԿՈՒՑԱԳԻՐԸ (29 մարտի 2000թ.) 531

XIX. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՆ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՓՈՔՐ ՊԱԼԱՏՈՒՄ (3 ապրիլի 2000թ.) 532

XX. ԺՆԵՎԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ 1915Թ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (10 դեկտեմբերի 2001թ.) 542

XXI. ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԲԱՆԱՁԵՎԸ (18 մարտի 2001թ.) 543

XXII. ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴԱՏԱՊԱՐՏԱՆ ԵՎ ՃԱՆԱՉՄԱՆ 546
- 1914 546
- 1915 546
- 1916 549
- 1917 552
- 1918 553
- 1919 557
- 1920 560
- 1946 564
- 1948 564
- 1964 565
- 1965 565
- 1973 566
- 1974 567
- 1975 567

- 1976 567
- 1978 568
- 1979 568
- 1980 568
- 1981 568
- 1982 569
- 1983 569
- 1984 569
- 1985 570
- 1986 570
- 1987 571
- 1988 574
- 1989 574
- 1990 575
- 1993 577
- 1994 577
- 1995 578
- 1996 580
- 1997 582
- 1998 586
- 1999 593
- 2000 598
- 2001 613
- 2002 623
- 2003 636
- 2004 645

ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՆ ԵՎ ՃԱՆԱՉՈՒՄ

(Նյութերի ժողովածու)

Կազմող, պատասխանատու խմբագիր և առաջաբանի հեղինակ
պատմական գիտությունների դոկտոր՝ ԼԱՎՐԵՆՏԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Չափսը՝ 70x100 1/16: Թուղթ՝ օֆսեթ,
40.5 տպ. մամուլ: Տպաքանակ՝ 500: Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան,
Մ. Բաղրամյան պող. 24:

[50000nm]

ԳԱԱՍ Հիմնադրամի Գիտ. Գրադ.

230007307

A π 7307